ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 1

ՎԵՄ
Մատենաշար
Թիւ 4

ՌՈՍՏՈՄԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԵՐԵՒԱՆ
2022

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 2

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ռ- 748

ՌՈՍՏՈՄԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ/
Ռ- 748 Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն
եւ ծանօթագրութիւններ՝ **Երուանդ Փամպուքեանի:**
Եր., «Լուսակն» հրատ., 2022, 732 էջ.- («Վէմ» մատենաշար, թիւ 4):

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-899-07-7

© Փամպուքեան Երուանդ, 2022
yervantpamboukian@gmail.com

© «Լուսակն», 2022

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 3

Հատորը կը տպագրուի հովանաւորութեամբ
ընկեր ՅԱԿՈԲ ԽԱՉԵՐԵԱՆի,
Ի յիշատակ
Արցախեան 44-օրեայ պատերազմի
ինչպէս դաշնակցական նահատակներու,
նոյնպէս եւ բոլոր հայ զոհեալներու:

ՌՈՍՏՈՄԻ «ՆԱՄԱԿԱՆԻ»Ի ԱՄԲՈՂՋԱՑՈՒՄԸ

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներից Ռոստոմի (Ստեփան Զօրեան) կեանքի ու գործունէութեան մասին անցած հարիւրամեակում Սփիւռքում մեծ թիւով արխիւային վաւերագրեր ու յիշողութիւններ են հրապարակուել, իսկ վերջին տասնամեակներին Հայաստանում տպագրուած ակադեմիական ուսումնասիրութիւններում հիմնարար գնահատականներ են տրուել հայ ազատամարտի պատմութեան մէջ ու Հայաստանի Հանրապետութեան ստեղծման գործում նրա խաղացած առանձնայատուկ դերին:

Դրանց հիմնական ուրուագծերը պարառում են հետեւեալ հաստատումներն ու եզրակացութիւնները.

– Ռոստոմը Հ.Յ.Դ. հիմնադիր ու անկախութեան սերունդների իւրօրինակ կապող օղակն էր, որի վառ անհատականութեան տիպական գծերի մէջ մարմնաւորուել ու ամբողջացել էր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

– Ռոստոմը դարաշրջանի հայ իրականութեան մէջ միակ ունիվերսալ քաղաքական գործիչն էր, ով տիրական ներկայութիւն էր ոչ միայն Հ.Յ.Դ. բոլոր գործերում, այլեւ գործունէութեան կոնկրետ ոլորտներում:

– Ռոստոմը որպէս քաղաքական գործիչ որքան ազգային էր, նոյնքան էլ միջազգայնական՝ այդ բառի համամարդկային իմաստով, ուստի նա եզակի բացառութիւն էր Հայաստանը շրջապատող ողջ տարածաշրջանի ընդգծուած ազգայնական, մասամբ էլ ծայրայեղօրէն միջազգայնական առաջնորդների շարքում:

– Եւ վերջապէս՝ Ռոստոմը ամէնօրեայ պայքարի հեռանկարներն ուր-

ւագծելու եւ դրանց համապատասխան մարտավարական խնդիրներ առաջադրելու կարողութեամբ, ռազմավարական մտածողութեամբ օժտուած առաջնորդ էր, որն աչքի էր ընկնում կանխատեսելու ու տարբերակներ հաշուարկելու բացառիկ ունակութեամբ:

Թւում է թէ Հ.Յ.Դ. հիմնադիրներից մէկի մասին այսքան գիտելիքներ կուտակած ցանկացած հետազօտող կարող է համակուել ինտելեկտուալ բաւարարուածութեան զգացումով: Սակայն ներկայ բարդ ու հակասական ժամանակը ստիպում է ոչ միայն *իմանալ* անցեալն ու *գնահատել* նրա ականաւոր դէմքերի գործը, այլեւ *հասկանալ* նրանց առաքելութեան իմաստը մերօրեայ իրողութիւնների լոյսի ներքոյ: Այսօր, երբ Արամ Մանուկեանի, Ռոստոմի եւ մեր միւս մեծերի 1918 թ. անօրինակ սխրանքի շնորհիւ ստեղծուած հայոց անկախ պետականութիւնը յայտնուել է արտաքին ու ներքին լրջագոյն մարտահրաւէրների առջեւ, բոլորս ենք արձանագրում, որ մեր սերունդը նոյնպէս Ռոստոմի նման *քաղաքական կամք, առաջադէմ միտք* ու հայրենիքի հանդէպ *պարտքի գիտակցում* ունեցող անհատականութիւնների սուր կարիքն է զգում: Նման պայմաններում եկել է Ռոստոմի մասին նախորդ սերունդների կողմից ասուածը նոր փաստերին ու գիտելիքներին զումարելու, յայտնի ու անյայտ իրողութիւններն ամբողջացնելու եւ համադրելու ժամանակը:

Ռոստոմից մնացած նամակների ու գրութիւնների հրապարակումն արդէն գրեթէ 100 տարուայ պատմութիւն ունի, բայց մինչեւ օրս իրականում դրանց մի մասն է միայն դրուել գիտական շրջանառութեան մէջ: Այդ վաւերագրերը տեղ են գտել դեռեւս Ռոստոմի մահուան 10-րդ տարելիցի առթիւ «Դրօշակ»ի հրատարակած հարուստ նիւթերում[1] եւ ապա՝ 1930-ական թուականներին, Սիմոն Վրացեանի խմբագրութեամբ լոյս տեսած «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» ժողովածուի զոյգ հատորներում[2]: Այնուհետեւ դրանց մի մասը վերահրատարակուել է Հ. Տասնապետեանի եւ ապա Ե. Փամպուքեանի կազմած «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» բազմահատորեակի տարբեր հատորներում: Իսկ վերջում էլ այդ ամէնն ամփոփուել է եւ ի մի է բերուել Հրաչ Տասնապետեանի կողմից Ռոստոմի մահուան 60-րդ տարելիցի առթիւ տպագրուած հատորում[3] եւ 80-րդ տարելիցի կապակցութեամբ լոյս տեսած «Նամականի»ում[4]:

Մանաւանդ այս վերջին ստուարածաւալ հատորի տպագրութիւնից յետոյ, թւում էր, թէ տասնամեակներ ձգուած աղբիւրագիտական մեծածաւալ

1.- Տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1929, No 1-2 (284-285), Յունուար-Փետրուար:

2.- Տե՛ս «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», յաւելուած «Հայրենիք» ամսագրի, խմբ. Ս. Վրացեան, հատ. Ա., Պոսթըն, հրատ. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի, 1934, հատ. Բ., 1938:

3.- Տե՛ս «Ռոստոմ», մահուան վաթսունամեակին առթիւ, խմբ. Հ. Տասնապետեան, Պէյրութ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Համազգայինի Վահէ Սէթեան տպ., 1979:

4.- Տե՛ս Ռոստոմ, «Նամականի», մահուան ութսունամեակին առթիւ, խմբ. Հ. Տասնապետեան, Պէյրութ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Համազգայինի Վահէ Սէթեան տպ., 1999:

աշխատանքների արդիւնքում ոչինչ չի մնացել Ռոստոմի հարուստ ժառանգութիւնից, որն արժանի է ուշադրութեան: Սակայն Հ.Յ.Դ. պատմութեան անխոնջ հետազօտող ու կուսակցութեան արխիւների լաւագոյն գիտակ *Երուանդ Փամպուքեանը* այլ կարծիքի էր: Վերջին տասնամեակներին նա շարունակում էր իր յամառ պրպտումները Հ. Յ. Դաշնակցութեան Կենտրոնական արխիւում, ինչից պարզ էր դառնում, որ «Դրօշակ»ի խմբագրութեան ու Հ.Յ.Դ. տարբեր ղեկավար մարմինների անունից Ռոստոմի գրած նամակների պատճէնների, Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիւի մատեաններում պահուող սեւագիր գաղտնի հրահանգների եւ այլ փաստաթղթերի ուսումնասիրութեան միջոցով Ե. Փամպուքեանը կուսակցութեան պատմութեան խորքային կողմը բացայայտելու դժուարին աշխատանքների սկիզբն է դնում: Որովհետեւ Ռոստոմի գործունէութիւնն այնքան էր միաձուլուել հարազատ կուսակցութեան քաղաքական պայքարին, որ այսօր խիստ դժուար է որեւէ մարմնի անունից գրուած նրա նամակները կամ գաղտնի հրահանգները տարանջատել կուսակցական կեանքի յարահոսին վերաբերող միւս փաստաթղթերից: Ընդհակառակը՝ հէնց նման իւրայատուկ *ռոստոմեան գործելաոճի* ուսումնասիրութեամբ է հնարաւոր բացայայտել Հ.Յ.Դ. յեղափոխական պայքարի իրական պատմութիւնը:

Ուստի վերջին տարիներին իրար յետեւից «Վէմ»ում հրատարակուեցին հայ-թաթարական կռիւների շրջանում Ռոստոմի գործունէութեան անյայտ էջերը ներկայացնող՝ Հ. Յ. Դաշնակցութեան Կենտրոնական արխիւի No 89ա թղթածրարի թիւ 2 տետրն ամփոփող վաւերագրերը[5], կուսակցութեան տարբեր մարմիններին գաղտնի մելանով գրուած նրա նամակ-հրահանգների սեւագրութիւնները[6] եւ բազմաթիւ այլ նիւթեր: Եւ թւում էր, թէ դրանք բաւարար են Ռոստոմի անտիպ նամակների երկրորդ հատորը տպագրելու միջոցով Հրաչ Տասնապետեանի կազմած հարուստ «Նամականի»ն լրացնելու համար: Հատորը գրեթէ պատրաստ էր տպագրութեան, բայց Ե. Փամպուքեանը կրկին մեկնեց Բոստոն՝ Ռոստոմից մնացած ինչ-ինչ թղթածրարներ հետազօտելու համար: Դրանք նոյնպէս ներառելու հետեւանքով ծաւալով բաւականին մեծացած Ռոստոմի անտիպ նամակների հատորը դարձաւ առանձին, *ծանրակշիռ ուսումնասիրութիւն*, որն այսօր ներկայացւում է ընթերցողի դատին:

Ռոստոմի անտիպ նամակների ու գաղտնագրութիւնների յայտնաբերման ու ամբողջացման գործընթացը յանգեցրել է նրան, որ ամենեւին էլ չկրկնելով Հրաչ Տասնապետեանի կազմած «Նամականի»ի բովանդակութիւնը, Ե. Փամպուքեանն անգամ գերազանցել է վերջինիս հսկայական՝

5.- Տե՛ս «Ինչպէ՞ս կանխուեց արեւելահայութեան բնաջնջումը 1905-1906 թթ.», Ռոստոմի ծածկագիր նամակ-հրահանգները, «Վէմ» հանդէս, Երեւան, 2009, թիւ 2 (27), էջ 125-143:

6.- Տե՛ս «Ռոստոմի նամակ-հրահանգների սեւագրութիւնները», մահուան 100-ամեակի առթիւ, «Վէմ» հանդէս, Երեւան, 2019, թիւ 1 (65), էջ 297-352:

670 էջանոց ծաւալը՝ կազմելով եւս մէկ ստուար հատոր: Այս երկու ծաւալուն հատորների սկզբունքային տարբերութիւնը միայն այն է, որ առաջինը հիմնականում ներառում է Ռոստոմի գործունէութեան հրապարակային կողմը ներկայացնող նամակները, իսկ երկրորդը բացայայտում է ստուերում գործող եւ տարբեր մարմինների անունից հանդէս գալով յեղափոխական ընդյատակից նրանց քայլերն ուղղորդող *իրական Ռոստոմի* կերպարը: Դրանով հանդերձ՝ հարկաւոր է եւս մէկ վերապահում անել, թէեւ ներկայ «Նամականի»ն 1999-ի հրատարակուած «Նամականի»ի ամբողջացումն է, բայց *«ամբողջացում»* դեռեւս չի նշանակում *«սպառում»:*

Թէ որքանո՞վ է յաջողուել Ե. Փամպուքեանին սպառել Ռոստոմից մնացած անտիպ վաւերագրերը, այսօր դժուար է անգամ եզրակացնել, քանի որ Ռոստոմի նման գործիչների ժառանգութեան արտակարգ ճոխութիւնը միշտ էլ կարող է անակնկալի բերել անգամ ամենափորձառու հետազօտողին: Ռոստոմը իբրեւ ազգային-յեղափոխական գործչի կամային որակների ու անսահման եռանդի մարմնաւորում, յիրաւի անսպառ էր իր ձեռնարկած մեծ ու փոքր գործերի մանրամասներում: Ուստի որքան էլ բարեխիղճ ու մանրակրկիտ աշխատանք է այսօր ընթերցողի դատին յանձնուող անտիպ նամակների ու գրութիւնների ստուարածաւալ հատորը, մեր կարծիքով՝ այս ժողովածուն նոյնպէս չի կարող սպառել Ռոստոմի հարուստ ժառանգութիւնը: Յետագայում եւս Ռոստոմի նամակներն ու գրութիւններն ամփոփող հատորները թարմացումների ու լրացումների կարիք են զգալու տարբեր երկրների արխիւներում նորանոր գրութիւնների յայտնաբերման պատճառով: Զարմանալու ոչինչ չկայ, քանի որ *որքան անսպառ էր Ռոստոմը՝ որպէս Հ.Յ.Դ. կենդանի գործի մարմնաւորում, նոյնքան անսպառ է նաեւ նրա հարուստ ժառանգութիւնը:*

Ռոստոմի անտիպ նամակներն ու գրութիւնները պարառող ներկայ ժողովածուի բովանդակութիւնը Ե. Փամպուքեանը պայմանականօրէն բաժանել է երեք խմբերի, բայց դրանց մաս կազմող փաստաթղթերը հրապարակուել են ժամանակագրական յաջորդականութեամբ: *Առաջինը* Ռոստոմի գրած ու նրա ստորագրութեամբ այն փոքրաթիւ նամակներն են, որոնք տեղ չեն գտել նախորդ ժողովածուներում: *Երկրորդը* Ռոստոմի կողմից Հ.Յ.Դ. երկու բիւրոների ու «Դրօշակ»ի խմբագրութեան անունից տարբեր մարմիններին ու անհատ գործիչներին ուղարկուած, ուստիեւ Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիւի, այսպէս կոչուած, «Պատճէնների մատեանում» մնացած պաշտօնական գրութիւններն են, որոնց հեղինակի ով լինելը բացայայտւում է Ռոստոմի ձեռագրի միջոցով: Եւ վերջապէս՝ *երրորդը* Ռոստոմի գաղտնի թանաքով գրուած խորհրդապահական նամակ-հրահանգների «Սեւագիր մատեաններում» պահպանուած ու Ե. Փամպուքեանի ջանքերով անյայտութեան մէջ մնալու վտանգից փրկուած տեքստերն են, որոնց հարուստ բովանդակութիւնը առաջիկայում ուղղակի ստիպելու է ու-

սումնասիրողներին վերանայել Հ. Յ. Դաշնակցութեան ու հայ ազատամարտի պատմութեան մասին նախորդ պատկերացումների ու տեսակէտների մի մասը:

1890-ական թուականների երկրորդ կէսի հայ ազատամարտի պատմութեան բուռն իրադարձութիւնների շատ աւելի հարուստ պատկեր ենք յայտնաբերում «Դրօշակ»ի խմբագրութեան անունից Ժընեւից Ռոստոմի գրած նամակների ուսումնասիրութեան պարագայում: Դրանց պատճէնները պահւում են Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիւի թիւ 82, 83, 84 եւ այլ մատեաններում: Այս մի քանի հարիւր էջ ընդգրկող՝ լիովին թարմ նիւթերի փաթեթը վկայում է, որ Ռոստոմն ստանձնել էր դեռեւս չձեւաւորուած Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի գործառոյթներից շատերը: «Դրօշակ»ի խմբագրութեան ցուցանակի տակ նա, փաստօրէն, միանձնեայ կատարում էր ապագայ Արեւմտեան բիւրոյի դերը նախքան այդ մարմնի ձեւաւորումը: Դա ակնյայտ է դառնում Ռոստոմի ուղարկած նամակների հասցէատէրերի բնակութեան աշխարհագրական շրջագծից՝ Բուլղարիա, Եգիպտոս, Կ. Պոլիս, Իզմիր եւ անգամ Բոստոն (ԱՄՆ): Անշուշտ, 1890-ականների երկրորդ կէսին կայացած Հ.Յ.Դ. Կովկասեան ռայոնական ժողովների որոշումները նախատեսում էին «Դրօշակ»ի խմբագրութեանը տրուած ընդարձակ լիազօրութիւններ, բայց Ռոստոմի նման կազմակերպական հզօր ուժի շնորհիւ էր, որ թափ էր հաւաքում յետագայում Արեւմտեան բիւրոյի տնօրինութեանը յանձնուած՝ մի հսկայական շրջանի կուսակցական կեանքը: Ու թէեւ այդ օրերին Ռոստոմն ինքը երբեմն վերապահութեամբ էր մօտենում նման «Արտասահմանեան բիւրո»ի[7] ձեւաւորման խնդրին, բայց, փաստօրէն, հէնց ինքն էլ կատարում էր դրա գործառոյթները:

Ներկայ ժողովածուի արժանիքներից մէկը Ռոստոմի գործունէութեան թերեւս ամենամութ շրջանի՝ 1903 թ. վերջերին նրա բանտարկութեան, Օդեսա[8] աքսորուելու եւ շուրջ կէս տարի՝ մինչեւ 1904 թ. կէսերը, իր ընկերներից կտրուած մնալու պատմութեան վերաբերեալ նորայայտ վաւերագրերի առկայութիւնն է: Հասկանալի է, որ այդ ամէնը 1903 թ. Հայաստանեայց եկեղեցու ունեցուածքի բռնագրաւման ու հայկական դպրոցների փակման դէմ պայքարը գլխաւորելու արդիւնքն էր, որը չէր կարող աննկատ մնալ ցարական Պահնորդական բաժանմունքի (Օխրանայի) սրատես աչքից: Բայց նման պայմաններում անգամ Ռոստոմը կարողանում էր միջնորդաւորուած կապ պահպանել կուսակցական ընկերների հետ, ուստի բանտից ստացուած նրա նամակները յաճախ ուրիշի ձեռագրով են գրուած, բայց

7.- Տե՛ս 1897-ի Մարտի 24-ին Արշակ Վռամեանին Ռոստոմի ուղարկած ընդարձակ նամակի յետ գրութեանը (Յ. Գ.), էջ 110:

8.- Այս պատմաշրջանում Ռուսաստանի «հարաւային մայրաքաղաքի» համարում ունեցող Օդեսայում են պահւում արտասահմանում գործող յեղափոխական կազմակերպութիւններին հետեւող ցարական Պահնորդական բաժանմունքի համապատասխան բաժնի արխիւները, որոնց հարուստ բովանդակութիւնը մինչ օրս անհասանելի է Հ.Յ.Դ. պատմութեան հետազօտողներին:

դա Ե. Փամպուքեանին չի խանգարել բացայայտելու դրանց իրական հեղինակին:

1904–1905 թթ. բուռն իրադարձութիւններին վերաբերող փաստաթղթերից սկսած՝ Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիւի «Սեւագիր մատեաններում» ամփոփուած Ռոստոմի գրութիւնները, որոնք պահւում են 89ա, 48, 52 թղթածրարների տարբեր տետրերում, յաճախ զուգորդւում են «Պատճէնների մատեանի» 88 եւ 89 թղթածրարների պարունակութեան հետ՝ ժամանակագրական յաջորդականութիւնը պահպանելու համար: Դրանց թուաքանակի աւելացումն ու հարուստ բովանդակութիւնը պայմանաւորուած էին սկիզբ առած Ռուսական առաջին յեղափոխութեան պայմաններում կուսակցութեան գործունէութեան զգալի աշխուժացմամբ: Այդ շրջանում ծաւալւում է նաեւ Հ.Յ.Դ. ակտիւ համագործակցութիւնը Ռուսաստանի յեղափոխական ու սոցիալիստական կուսակցութիւնների հետ, ուստի դեռեւս Ժընեւում գտնուող Ռոստոմը նամակագրութիւն է սկսում ռուսական Սոցիալիստ-յեղափոխականների (էսէռների), Լեհական սոցիալիստական կուսակցութեան, Վրաստանի սոցիալիստ-ֆեդերալիստների յեղափոխական կուսակցութեան, Ֆինլանդական Դիմադրութեան կուսակցութեան եւ այլեւայլ ուժերի ղեկավար դէմքերի հետ՝ փորձելով նրանց աջակցութեամբ կազմակերպել նաեւ զէնքի ու զինամթերքի տեղափոխումը հայ-թաթարական կռիւների թատերաբեմ դարձած Անդրկովկաս:

Նախաեղեռնեան շրջանի Հ.Յ.Դ. պատմութեան լուսաբանման տեսանկիւնից խիստ կարեւոր է 1910-1914 թթ. Արեւմտեան Հայաստանից, հիմնականում՝ Կարինից, Ռոստոմի գրած նամակների եւ ուղարկած գաղտնի հրահանգների ամբողջացումը: Դրանց մի մասը տեղ է գտել Հրաչ Տասնապետեանի հրատարակած Ռոստոմի «Նամականի»ում, իսկ Ե. Փամպուքեանը շարունակել է այդ գործը: Ռոստոմի՝ որպէս տուեալ պատմաշրջանում կուսակցութեան առանցքային դէմքի «Նամականի»ի ամբողջացումը թոյլ է տալիս բացայայտել «Իթթիհատ»ի հետ Հ.Յ.Դ. յարաբերութիւնների այն գաղտնի կողմերը, որոնք այդպէս էլ անծանօթ են մնացել հայ պատմաբաններին ու լայն հասարակայնութեանը, ուստիեւ տարաբնոյթ անհիմն ենթադրութիւնների տեղիք են տուել:

Առաջին աշխարհամարտի տարիներին՝ Մեծ եղեռնի շրջանում, Ռոստոմի ծաւալած գործունէութեան բազմաթիւ դրուագների համակողմանի բացայայտման համար լրացուցիչ տեղեկութիւններ են պարունակում 1915 թ. սկզբներին Փարիզից, Ժընեւից ու Լոնդոնից եւ 1915 թ. կէսերին Վանից ու Թիֆլիսից նրա գրած ուշագրաւ նամակները: Դրանք հաստատում են Վանի 1915 թ. ազատագրմանը յաջորդած ամիսներին ցարական վարչակազմի ձեռնարկած հակահայ քայլերի եւ որպէս դրանց արդիւնք՝ 1915 թ. յուլիսեան տարօրինակ նահանջի վերաբերեալ Հայաստանի անկախացումից յետոյ հայ պատմագիտութեան կատարած վերջին բացայայտում-

ներն ու հիմնարար եզրայանգումները: Ակնյայտ է, որ ցարական իշխանութիւնները իրենց դաւադիր քայլերով նպատակ են ունեցել նախ հայերի աջակցութեամբ տիրելու Արեւմտեան Հայաստանին, իսկ այնուհետեւ շարունակական նահանջների միջոցով խիստ կրճատելու նրա առանց այդ էլ նօսրացած հայ բնակչութիւնը: Մերօրեայ հնչեղութիւն ունեցող նման ցաւալի իրողութիւնները չէին կարող վրիպել Ռոստոմի սրատես հայեացքից: Այդ ողբերգական իրադարձութիւնների օրերին Ռոստոմը հարազատ ժողովրդի հերոսական պայքարի առաջին գծում էր: Նա ոգեւորիչ ճառ էր արտասանում Վանի փրկութեան նպատակով կազմաւորուած Արարատեան գնդի մարտիկների առաջ, փորձում էր ուղիներ գտնել Տարօնի հայութեան փրկութեան համար, Էջմիածնի պատերի տակ օգնութիւն էր ցոյց տալիս Արարատեան դաշտավայր հասած գաղթականներին, իսկ 1916 թ. Մարտի սկզբներին գտնուելով աւերակ դարձած Կարինում՝ մտածում էր Արեւմըտեան Հայաստանի վերաշինութեան մասին:

Այս շրջանից Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիւում Ռոստոմից խիստ սահմանափակ քանակութեամբ նիւթեր են պահպանուել: Դրանք աւելի շատ են Հայաստանի եւ նրա հարեւան երկրների արխիւներում, ուստի մասամբ արդէն հրատարակուել են մեր պատմաբանների կողմից: Նոյնը վերաբերում է նաեւ 1917 թ. Փետրուարեան յեղափոխութեան շրջանում ողջ Անդրկովկասում, իսկ 1918 թ. հերոսամարտերի օրերին Բաքւում նրա ծաւալած գործունէութեանը, որը, յիրաւի, ճակատագրական նշանակութիւն ունեցաւ նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան գործում: Այս առումով միակ բացառութիւնը 1917 թ. ամռանն ու աշնանը Սոցիալիստական ինտերնացիոնալի Ստոկհոլմի խորհրդաժողովում Հայկական հարցի արդարացի լուծման համար Ռոստոմի ծաւալած եռանդուն գործունէութեան մասին վկայող վաւերագրերն են, որոնք տեղ են գտել ներկայ ծաւալուն ժողովածուի վերջում:

Յատկանշական է այն, որ Ե. Փամպուքեանն այդ փաստաթղթերը զետեղել է աշխատութեան յաւելուածում, իսկ բուն տեքստում առկայ վաւերագրերը եզրափակել է Բաքւի հերոսամարտից յետոյ՝ 1918 թ. Նոյեմբերի 5-ին, Իրանի Ղազուին քաղաքից գրուած մի ուշագրաւ նամակով: Երբ արդէն պարզ էր Առաջին աշխարհամարտի աւարտը, Ռոստոմը տոգորուել էր Հայաստանի Հանրապետութեան վերաշինութեան ու պաշտպանութեան գործը սկսելու բուռն ցանկութեամբ, ուստի հայրենիքի ապագայի հանդէպ անսահման հաւատով լցուած նրա վերջին տողերն աւարտւում էին հետեւեալ մարգարէական խօսքերով՝

«Մեզ սպասում է մեծ պայքար, գուցէ եւ նոր կռիւներ: Մխիթարականը այն է, որ կը կռուենք աւելի ամփոփ ուժերով: Յոյս ունինք առաջիկայում ունենալ մի մեծ ընդհանուր ժողով, Հայաստանի կենտրոնում, մշակելու համար Հայաստանի վերաշինութեան հիմնական ուղիները: … Մի քանի օր

Թեհրան մնալուց կը վերադառնամ Էնզելի եւ այնտեղից, յուսով եմ, Բաքու-Թիֆլիս-*Երեւան* (ընդգծումը մերն է – Գ. Խ.)»[9]:

Ընթերցողի դատին ներկայացուող Ռոստոմի անտիպ նամակների ներկայ ստուարածաւալ հատորը եզրափակող նրա վերջին նամակի ամենավերջին *Երեւան* բառը յաջորդական սերունդների երկխօսութեան յիրաւի մոգական հարթակ է՝ Հայաստանի Հանրապետութեան *վերաշինութեան* ու *պաշտպանութեան* փոխկապակցուած առաջադրանքների շուրջ: Դա նաեւ Ռոստոմի կտակն է գալիք սերունդներին, որը *բացելու* առաքելութիւնն է իրականացրել Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան արխիւների անխոնջ հետազօտող *Երուանդ Փամպուքեանը:*

ԳԷՈՐԳ Ս. ԽՈՒԴԻՆԵԱՆ
Պատմագիտութեան դոկտոր
«Վէմ» հանդէսի խմբագիր

9.- Տե՛ս ներկայ ժողովածուի 665-րդ էջը:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՏՈՐԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պէյրութի մէջ 1999 թուականին, Հրաչ Տասնապետեանի խնամոտ ջանքերով լոյս տեսաւ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն Ռոստոմի (Ստեփան Զօրեան) Նամականին: Ռոստոմի մահուան 80-ամեակին առթիւ պատրաստուած եւ 670 էջերէ բաղկացած այդ հատորը կը բովանդակէ 478 փոքր ու մեծ նամակներ: Խմբագրական յառաջաբանով հանգուցեալ ընկերը հարկ տեսած էր արձանագրել, որ Պոսթընի Հ.Յ.Դ. կեդրոնական արխիւներուն մէջ յետագային կրնան գտնուիլ նոր նամակներ կամ Ռոստոմի գրչին պատկանող ժողովական արձանագրութիւններ:

Արդարեւ, տարիներու վրայ երկարող մեր պրպտումներուն իբր արդիւնք կարելի եղաւ երեւան բերել ենթադրուածէն շատ աւելին, այնքան՝ որ անհրաժեշտ նկատուեցաւ խմբագրել եւ հրատարակութեան պատրաստել Ռոստոմի անտիպ նամակները պարփակող ներկայ ծաւալուն հատորը: Նախընտրելի պիտի ըլլար, անշուշտ, երկու հատորներու նիւթերը միաձուլել մէկ ամբողջութեան մէջ, յարգելով բնականաբար անոնց ժամանակագրական կարգը, որպէսզի մութ մնացած շարք մը հարցեր գտնէին իրենց տրամաբանական բացատրութիւնը: Այդ աշխատանքը, առ այժմ, կը թողունք ապագայ ուսումնասիրողին:

Համաձայն իրենց բնոյթին եւ բովանդակութեան, Ռոստոմի նորայայտ նամակները կարելի է բաժնել պայմանական երեք դասակարգումներու.–

1) Պոսթընի Հ.Յ.Դ. պահոցներու զանազան թղթածրարներուն մէջ գտնուող փաստաթուղթեր, որոնք կը կրեն իր ստորագրութիւնը, Ռոստոմ կամ պարզապէս Ռ.: Այս նամակները կը կրեն իրենց արխիւային համապատասխան համարները. օրինակ՝ 882-6, 107-180, 101-44 եւայլն:

2) Կուսակցական տարբեր մարմիններու անունով, բայց Ռոստոմի ձեռագրով շարադրուած նամակներ: Ռոստոմ ուր ալ գտնուէր, անկախաբար իր պաշտօնական հանգամանքէն, կը գրէր տեղւոյն մարմնին անունով. այսպէս Ժընեւի մէջ ան կը ստորագրէր Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրօ կամ «Դրօշակ»ի խմբագրութիւն, Թիֆլիսի մէջ՝ Արեւելեան բիւրօ, Կարնոյ մէջ՝ Արեւելեան բիւրոյի Թուրքիոյ հատուած, Պոլսոյ մէջ՝ Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուած: Մէկ խօսքով, Ռոստոմը ամէն տեղ… Ռոստոմ էր, Դաշնակցութեան բարոյական եւ գործնական վերին հեղինակութիւնը, որ իրաւունք ունէր արտայայտուելու տեղւոյն բարձրագոյն մարմնի անունով: Այս նամակներու մեծամասնութիւնը քաղած ենք «Պատճէններու մատեան» կոչուող եւ հարիւրաւոր էջեր պարփակող տետրակներէ, որոնց խիստ բարակ էջերուն վրայ դրոշմուած են Ժընեւէն առաքուող նամակներու պատճէնները: Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի կամ «Դրօշակ»ի խմբագրութեան կողմէ ուղղուած հազարաւոր գրութիւններու շարքին մեծ թիւ կը կազմեն Ռոստոմի ձեռագրով շարադրուածները: Այդպիսին են No 82, 83, 84, 88 եւ 89 թուահամարները կրող «Պատճէններու մատեանները»*:

3) Առանձնայատուկ կարեւորութիւն ունին այն գրութիւնները, զորս յայտնաբերած ենք «Սեւագրութիւններ» պիտակը կրող մատեաններու մէջ, ուր կը գտնուին, այլոց կարգին, նաեւ բուն Ռոստոմի գրչին պատկանող նամակներ:

Սեւագրութեան տետրերը կը բովանդակեն առ հասարակ այն նամակները, որ գաղտնի թանաքով արտագրուելէ ետք պէտք է ղրկուէին Թուրքիոյ եւ Ռուսիոյ մէջ գործող կուսակցական մարմիններու կամ ղեկավար ընկերներու: Անգոյն մելանով գրելու միջոցը կ՚օգտագործուէր գաղտնապահութեան նկատումով՝ շրջանցելու համար վերեւ յիշուած երկիրներու մէջ կիրարկուող պետական խիստ գրաքննութիւնը: Բիւրոներու հրահանգին անսալով, այս կարգի նամակները կարդացուելէ ետք պէտք է փճացուէին: Այդպէս ալ եղած է. բայց եւ այնպէս Հ.Յ.Դ. պահոցներուն մէջ գոյութիւն ունին, բարեբախտաբար, սեւագրութեան մատեանները, որոնց մէջ պահպանուած են նման հազարաւոր նամակներու բնագիր օրինակները, գրուած Ժընեւ գտնուող պատասխանատու ընկերներու կողմէ: Անոնց շարքին է Ռոստոմ, որուն ձեռքով շարադրուած են գաղտնի մելանով արտագրելի հարիւրաւոր նամակներ: Այս վերջինները կը գտնուին No 89ա-1, 89ա-2, 48-3, 52-3 մատեաններուն մէջ:

Յայտնենք որ իւրաքանչիւր նամակի վերեւ նշած ենք փաստաթուղթին թղթածրարի թիւը եւ գրութեան համարակալումը տուեալ թղթածրարին մէջ, ինչպէս նաեւ փաստաթուղթին ծագման վայրն ու հասցէատէրը: Սեւագրութիւններու եւ Պատճէններու մատեաններու պարագային, նշած ենք համապատասխան տետրերու համարն ու փաստաթուղթին գրաւած էջաթիւերը: Ընթերցողի դիւրութեան համար, փաստաթուղթերուն աւելցուցած ենք նաեւ հարկ տեսնուած ծանօթագրութիւններ: Վերոյիշեալ մատեաններուն մէջ յաճախ կը պակսի տարեթիւերու նշումը. այս պարագային մեր կողմէ իւրաքանչիւր ամսեթուի առաջին նամակին անկիւնաւոր փակագիծերով յիշած ենք նաեւ տարեթիւը:

Եւ վերջապէս, կարեւորութեամբ պէտք է նշենք, որ բացի աննշան շրջումներէ՝ բծախնդրութեամբ պահած-պահպանած ենք հեղինակին լեզուական, ուղղակգրական եւ այլ առանձնայատկութիւնները:

Ե. Փ.

---

*) Հետաքրքրութեան համար արձանագրենք, որ սկզբունքով կուսակցական մարմիններուն եւ անհատ ընկերներուն ուղղուած գրութիւնները, որոշ ժամանակ անց, պէտք է վերադարձուէին Հ.Յ.Դ. Ժընեւի արխիւին: Իրողութիւնը սակայն, բոլորովին այլ է. «Պատճէններու մատեաններուն» մէջ գոյութիւն ունեցող գրութիւններուն միայն 10-15 տոկոսը հասած է կեդրոնական արխիւ. մնացեալը պէտք է համարուի ընդմիշտ կորսուած, եւ կամ փնտռել զանոնք հայ եւ օտար հասցէատէրերու անձնական արխիւներուն մէջ, եթէ, անշուշտ, գոյութիւն ունին անոնք: Ուստիեւ ներկայիս Պոսթընի (Ուաթրթաուն) կեդրոնական արխիւներուն մէջ պահպանուած այս «Պատճէններու մատեանները» կը ներկայացնեն ամբողջական մէկ պատկերը Ժընեւէն՝ «Դրօշակ»ի խմբագրութեան, ապա Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի կողմէ առաքուած նամակ-հրահանգներուն:

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:2[illegible]PM Page 14

№ 1740.

VIII/4 20

пока оставить
безъ послѣдствій

Его Превосходительству
Господину Директору Пет-
ровской Академіи

Уволеннаго сту-
дента Степана
Абраамянца

Прошеніе

Находясь въ неопредѣленномъ
положеніи, покорнѣйше прошу
Ваше Превосходительство
увѣдомить, исключенъ ли
я навсегда изъ Академіи или
уволенъ на время; а если на
время, то на сколько.

Степанъ Абраамянцъ

23е Іюня 1890 г.

Мѣстожительство имѣю:
Верхніе Акулисы. сел. Чананабъ,
Эриванской Губерніи

ՌՈՍՏՈՄԻ ԴԻՄՈՒՄԸ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՊԵՏՐՈՎՍԿԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ

(Անպատասխան մնացած այս խնդրագիրը որոշեց Ռոստոմ-յեղափոխականի ճակատագիրը):

Պետրովսկի ակադեմիայի տնօրէն
Նորին գերազանցութիւն Է.[?] Եունգէին,

Ազատուած(1) ուսանող Ստեփան Աբրահամեանցից(2)

ԽՆԴՐԱԳԻՐ

Գտնուելով անորոշ դրութեան մէջ՝ խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Գերազանցութեանը տեղեկացնել՝ ընդմի՞շտ եմ ես հեռացուել Ակադեմիայից, թէ՞ ժամանակաւորապէս եմ ազատուել, իսկ եթէ ժամանակաւորապէս, ապա որքա՞ն ժամանակով:

Ստեփան Աբրահամեանց

23-ը յունիսի 1890 թ.

Բնակութեան վայր ունեմ՝ Էրիվանի նահանգի Վերին Ագուլիս, գիւղ Չանանաբ(3):

1.- Ազատուած բառի տակ օտար ձեռագրով դրուած գիծը վկայում է, որ ճշգրիտ գիտութիւնների ասպարէզում փայլուն ընդունակութիւններ դրսեւորած Ռոստոմը ոչ թէ ազատուել, այլ հեռացուել էր Պետրովսկի ակադեմիայից 1890 թ. փետրուարեան ուսանողական յուզումներին մասնակցելու համար:

2.- Պետրովսկի ակադեմիայում ուսանելու համար Ռոստոմը Մոսկուա էր մեկնել Ստեփան Աբրահամեանց կեղծ անուն ազգանունը կրող անձնագրով:

3.- Չանանաբը Ռոստոմի հայրենի Ցղնա գիւղն է:

Խնդրագրի վերեւի ձախ անկիւնում առկայ է Պետրովսկի ակադեմիայի տնօրէն Եունգէի մակագրութիւնը՝ *առայժմ թողնել առանց հետեւանքների:*



1

Փաստ. 34-7

«Դրօշակ»ի խմբագրութեան պաշտօնաթուղթի վրայ գրուած նամակ է՝ ուղղուած Ատրպատականի ընկերներուն կամ Վրէժի (Թաւրիզի) Կ. կոմիտէին: Անթուակիր է եւ առանց ստորագրութեան, բայց ձեռագիրը Ռոստոմին է. առաջին էջին վերեւ տարբեր ձեռագրով նշուած է ստացման թուականը,– 20 մարտ [18]95 թ.:

Վերջին պարբերութիւնը, ձեռագրի չորրորդ էջին (շեղագիր), յաւելուած է եւ ստորագրուած՝ Յոնան: Այս պարագան երեւի պատճառ եղած է, որ Խաժակ Տէր Գրիգորեան նամակին ամբողջութիւնը թիւրիմացաբար վերագրէ Հ.Յ.Դ. առաջին սերունդին պատկանող դէմքերէն Յոնան Դաւթեանին, եւ իբրեւ այդպիսին հրատարակէ Յոնանի նամակներու շարքին (Տես Յոնան Դաւթեան, Բ. հատոր, 2004, Երեւան, էջ 27-28):

Սիրելիք,

Դարձեալ գանգատւում էք մեր նամակագրութեան թուլութեան վրայ: Սա առաջին անգամը չէ, երկրորդը չէ: Արիստակէսն(1) *էլ տարին մի երկու անգամ զարթնում է քնից, մի խիստ յանդիմանական նամակ գրում եւ դարձեալ քնում: Համաձայնէք, որ նամակագրութեան կանոնաւորութիւնը ձեզանից է կախւած աւելի, որովհետեւ դուք աւելի բան ունէք հաղորդելու մեզ, քան թէ մենք ձեզ: Փոխանակ «Ֆիլիպիկաներ»*(2) *արձակելու Արիսը եւ միւսները թող կանոնաւոր նամակներ գրեն եւ հաւատացած լինեն, որ անպատասխան չեն մնալ: Զարմանալի մարդիկ էք. միթէ՞ դուք բոլորովին կտրուած էք բուն երկրից, միթէ՞ ձեզ ոչ մի տեղեկութիւն չի հասնում այս կամ այն միջոցով, ինչո՞ւ ոչինչ չէք հաղորդում, ինչո՞ւ մի թեթեւ թղթակցութիւն չէք գրում: Բացի այդ՝ մեծ խմբով անցել, գնացել էք, բաւական ժամանակ այնտեղ մնացել էք*(3)*, նոր նոր մարդիկ, նոր նոր տեղեր էք տեսել, միթէ՞ մի հետաքրքիր բան չը գտաք մեզ հաղորդելու: Եթէ տեսել, լսել էք եւ չէք հաղորդում ծուլութեան պատճառով, շատ վատ էք անում, իսկ եթէ իսկապէս ոչինչ չունէք հաղորդելու, եթէ երկիր էք մտել եւ այնտեղից դուրս եկել աչքներդ փակած, ականջներդ խլացած, այդ աւելի վատ: Երկուսից ո՞րն է: Բա, մի Երանդի*(4) *չափ էլ չկա՞ք. իր ճանապարհորդութեան ժամանակ մի ահագին յիշատակարան է կազմել, որը առատ նիւթ տւեց «Դրօշակին»*(5)*:*

Այսպէս էլ խայտառակութիւն կը լինի՞. ահա տարին լրանում է, ինչ Վանից ոչ մի թղթակցութիւն, ոչ մի լուր չենք ստացել։ Գոնէ կենդանութեան մի փոքր նշոյլ ցոյց տանք, որ ասեն էլ ա «չահ բու դաղըն բաղի վար»(6)։ Անհամբերութեամբ սպասում ենք ձեր ուղարկած(?) սուրհանդակի բերած լուրերին։

«Դրօշ[ակ]» կ'ուղարկւի ինչպէս գրել էիք. մաս մաս էր ուղարկւում ուշադրութիւն չգրաւելու համար, որովհետեւ Ռուսաստանով է անցնում։ Ի նկատի ունեցէք, որ Պարսկ[աստանի] ուրիշ կէտեր եւս ուղարկւում են։ Կարդացինք, որ պարսից կառավ[արութիւնը] արգելքներ է մտցնելու, ճի՞շդ է։

Ծաղիկը(7) խոստանում է Բիւրոյի կազմակերպման մանրամասնութիւնները գրելու(8)։ Իսկապէս դա շատ հետաքրքիր պէտք է լինի, որովհետեւ մենք այստեղ երեւակայել չենք կարողանում, թէ ինչ վիճաբանութիւններ կարող են ծագել, ինչ հարցեր կարող են բարձրանալ մի այնպիսի մարմնի կազմելու ժամանակ, որի նպատակն է յարաբերութիւններ պահպանել զանազան խմբերի մէջ, այսինքն նամակներ, տեղեկութիւններ ստանալ եւ ուղարկել այդ ուր հարկն է։

Հնչակի(9) մասին արդէն կարդացած կը լինէք։ Շատ յիմար դրութեան մէջ է ընկել, ահա երրորդ ամիսն է իր սպառնալիքը չի կատարել դեռ. երեւի փաստերի է ման գալիս եւ չի գտնում եւ ի հարկէ չի էլ գտնի. իսկ մեր ձեռքին լաւ դոկումենտներ կան, որոնք ի հարկին կը հրատարակենք, թող միայն մի բան ասի։ Այնքանը լաւ է, որ իրենք հնչակեանները զզւում են իրենց «պետից», «կենտրոնից»։ Ահագին շփոթութիւն է տիրում Ամերիկայում։ Հէնց այսօր ստացանք Նիւ-Եորքի հնչակեան մասնաճիւղի մի պաշտօնական յայտարարութիւնը, որով իրեն հրաժարած է համարում «կենտրոնից», անւանելով դրա անդամներին «խաչագող մարքսիստներ»։

Ալլահա սովա[ղ]սըզ(10), Վանից մի տեղեկութիւն։ Սուքիասի մասին, եթէ կապ ունի յեղափոխական գործի հետ, գրիր տեսնենք։ Բիւրոյի կազմակերպումը տեսական խնդիր չէ. գործնական է - եթէ դրանով զբաղւում էք, ժամանակ էք կորցնում։

Բարեւ եւ համբոյր
ՅՈՆԱՆ

1.- Արիստակէս կամ Արիս, Ռոստոմի կրտսեր եղբայրն է (Կարս), որ պիտի նահատակուէր Խանասորի արշաւանքի ընթացքին (1897 թ.)։

2.- Ֆիլիպիկաներ – յոյն ծանօթ իմաստասէր Դեմոսթենէսի երկը - բուռն պարսաւանքի ճառեր իմաստով։

3.- Խօսքը զինեալ խումբով Վան-Վասպուրականի շրջան անցնելու մասին է։

4.- Երուանդը ծածկանունն էր Իշխան Յովսէփ Արղութեանի։

5.- «Դրօշակ» – պաշտօնաթերթ Հ. Յ. Դաշնակցութեան (Ժընեւ)։

6.- Տաճկերէն՝ Շահ Բուդաղը պարտէզ ունի։

7.- Ծաղիկը՝ ծածկանունն էր օր. Սաթենիկ Մատինեանի, ապագայ կինը Յովսէփ Արղութեանի։

8.- Ակնարկութիւն է կարճատեւ կեանք ունեցող «Թաւրիզի Բիւրոյին», որ 1894-5 տարիներուն կը գործէր իբրեւ այդպիսին Ատրպատականն ու Վասպուրականը ունենալով գործունէութեան դաշտ։

9.- «Հնչակ» – պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան։

10.- Թրքերէն՝ Աստուած սիրէք։ Վերջին պարբերութիւնը, շեղագիր, Յոնան Դաւթեանի յաւելուածն է։

2

Փաստ. 5-28

Ռոստոմի այս նամակը ըստ երեւոյթին ուղղուած է Ժընեւ, «Դրօշակ»ի խմբագրութեան: Գրուած պէտք է ըլլայ Ռոստոմի Ժընեւէն դէպի Կովկաս մեկնելէ ետք, ճանապարհին: Կը գտնուի Արեւելեան բիւրոյի 1895 թ. թղթածրարին մէջ:

Շեղագիր բառերը ծածկագրով են (շիֆրէ). կը բացուին «Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ» ոտանաւորի շարքով: Այսուհետեւ բոլոր թուագիր (շիֆրէ) ծածկագրերը կը տրուին շեղագիր տառերով:

Սիրելիք

Չգիտեմ, Լագլագը(1) *ձեզ ինչ է գրել, ինչ չէ գրել, կամ գուցէ բոլորովին բան չի գրել, այնպէս որ ես իմ գրելիքը չըգիտեմ։*

Ձեզ ընկեր մի երկուսը ի նկատի ունենք։ Կ՚աշխատենք շուտով ուղարկել, որպէսզի մենակ չմնաք. եկողները լաւ կ՚անեն իմ եկած ճանապարհով գան, աւելի հետաքրքրական է։

Պէտք է որ փողի պակասութիւն չզգաք։ Որոշէք ձեր ամսականը եւ գրէք որ մշտապէս ուղարկեն։ Արտակարգ ծախսերի համար առանձին պահանջէք։ Երկու շաբաթից աւելը, կարծենք, աւելորդ է։

Մի երկու օրից յետոյ ես էլ գնում եմ։ Գնալուց առաջ կ՚աշխատեմ նամակ գրել։ Յովհաննէսին(2) *ուղարկէք մի* կնիք, կենտրոնական կասսա. *այստեղի համար։ Հիւանդ, ես քո սիրելի Սարգսի հէրն անիծեմ*(3)։ *Կարող ես երեւակայել, այդ քո պարոնը, որ այդպէս տաք-տաք խօսել գիտէ, վճռել է վերադառնալ Ռուսաստան ուսուցչութիւն անելու եւ դրա համար դիմել է Թոփալին*(4) *խնդրելով նրան պարապել իր հետ ցենզ ձեռք բերելու համար։ Մի լաւ կը հայհոյես չէ՞։ Մեր պարոն* հնչակեանը *բոլորովին խայտառակուեց իր առաջին փորձով։ Արդէն լսած կը լինէք։ Ամօթ եւ մերոնց համար...*

Շատ բան կար միտս, բայց գրուելու կարգի չէ։ Մի այլ անգամ...

Ձեր Ռ.

27-ին մայիսի 95 *թ.*

1.- Լագլագը ծածկանունն է Դաշնակցութեան առաջին գործադիր մարմնի՝ Կենտ. վարչութեան անդամ Տէր Թադէոսեան Արշակի:

2.- Իւսուֆեան Յովհաննէս:

3.- Հիւանդը՝ ծածկանուններէն մէկն է Յոնան Դաւթեանի: Սարգիսը թերեւս հնչակեան Աղամիրզեան Սարգիսն է:

4.- Թոփալը՝ ծածկանուններէն մէկն էր Քր. Միքայէլեանի:

3

Փաստ. 5-27

Ռոստոմի այս նամակը, Թիֆլիսէն գրուած, ուղղուած է Ժընեւ, «Դրօշակ»ի խմբագրութեան: Վերջին նախադասութիւնները գրուած են էջերու լուսանցքներուն վրայ: Շեղագիր բառերը ծածկագիր են (շիֆրէ) եւ կը բացուին «Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ» ոտանաւորի շարքով:

[*Թիֆլիզ*] 1-*ին յունիսի* 95 *թ.*

Սիրելիք,

Այսօր մի հեռագիր ուղարկեցի Լիզի անունով(1), *որ աշխատեն շուտ գալ եւ եթէ կարելի է Լուսնթագին էլ հետները վերցնեն: Դրա մայրը շատ է ուզում տեսնել, իսկապէս, ի՞նչ նշանակութիւն ունի միայն դրա մնալը, երբ բոլորեքեան գալիս են: Նամակս այդտեղ հասած ժամանակ մեր աղջիկ պարոնները դուրս եկած կը լինեն անպատճառ, իսկ եթէ, բան է, Լուսնթագը մնացել է, նրան էլ աշխատէք ճանապարհ գցել:*

Արմենակի(2) *նամակի կտորը մեզ շատ զայրացրեց. գրուած է շատ կրքոտ: Նրան արդէն դիմեցինք բացատրութիւնների համար: Շուտով ես էլ հետը գուցէ տեսնուեմ: Ուրեմն դեռ սպասէք:*

Ձեր ցանկացած մարդ - այստեղ յարմարը գտանք: Գրեցինք Բագու, որ շուտով ճանապարհ գցեն: Գուցէ էգուց էլ որ գայ:

Ձեզ դիմողներին ասէք, եթէ կարող են իրենք իրենց միջոցներով գնալ, թող գնան, թէ չէ անձամբ անծանօթ լինելով, ինչպէ՞ս կարելի է հաւատալ:

Հիւանդի [3] *նամակը շատ էր խրթին, շատ բան անհասկանալի մնաց: Այդ ի՞նչ Թոյբալու մասին է խօսքը* (*նամակը դժբախտաբար ձեռքիս չէ*): *Իսկ ընդհակառակը Արմենակի նամակը շատ պարզ էր կարդացուում, թանաքը լաւ թունդ էր: Առհասարակ ուշադրութիւն դարձրէք:*

Եթէ Արմենակն ինքը բացատրութիւն չտայ, որ շատ հաւանական է, այդ ոչինչ. հէնց իր նամակի հիման վրայ կարելի է վերականգնել ճշմարտութիւնը եւ իրեն մի լաւ հայհոյել:

Բայց Հնչակի մասին գրել եմ, պատրաստ է. մի քանի կէտեր են մնացել, այդտեղ կը լրացնէք: Վերադառնալուց յետոյ կ՚ուղարկեմ:

Բարսեղից(4) *այստեղ մի կարճ նամակ ստացուեց եւ մի երկար նամակ* Մշակին: *Ձեզ ես ուղարկե՞լ է, թէ չէ: Ցիմար բան կարող է դուրս գալ: Աշոտն*(5) *էլ է յիմարացել. մի երկար նամակ է ուղարկել դարձեալ նրան յանձնելու համար: Մենք մեր գիտեցածը կ՚անենք:*

Լսում ենք, որ նա հիւանդացած է եղել, բայց ազատուել է: Դուք գիտէք նրա կազմուածքը: Հիւանդացաւ, մէկ էլ թէ չէ, նա իսկոյն կը մեռնի: Դրա գործը բաւական յաջող է գնում:

Ախր այսպէս խայտառակութիւն կը լինի՞. ձեր 4-*դ նամակը դեռեւս չենք ստացել...*

Իմ գնալը յետաձգուեց մինչեւ երկու շաբաթ: Այդ ժամանակում ես պէտք է ծա-

նօթանամ անձամբ այն մարդկանց հետ, որոնց հետ մօտիկ ապագայում գործ պէտք է ունենամ։ Հետեւանքի մասին կը գրեմ։

Զգիտեմ, ձեզ այս օրերս փող ուղարկել է եղբայրս Վարդանը(6)*, թէ ոչ։ Եթէ ուղարկի, նրանից մի* 50 *ռուբ*[*լի*] *կը տաք* Վօյնիչին։ *Այստեղ որքան աշխատեցայ (ասենք շատ էլ չաշխատեցայ) իր բարեկամներից, ազգակիցներից ոչինչ չկարողացայ հաւաքել։ Նրանք միայն խոստանում էին... ուրիշ ոչինչ։ Մինչեւ որ նրանք գլուխ կը բերեն իրենց խոստումը, մեր կողմից տուէք* 50 *ռ.։*

Մշակի խմբագրութիւն աւելորդ համարեցի մտնել (այսինքն մտայ, բայց ոչինչ չասեցի դրա մասին, մոռացայ)։ Ի՞նչ հարցնել է հարկաւոր։ Բայց միթէ՞ այն եւրոպացիների համար աւելի հետաքրքիր բան չկարողացաք գտնել թարգմանելու համար բացի էվոլիւցիայից եւ «Ով է մեղաւորը...»։ Ինչո՞ւ չէք թարգմանում օր[*ինակ*] *Կայծերի Ա. գլուխը։ Խենթից, Ջալալէդին լաւ լաւ կտորներ։ Աղայեանցին*(7) *չարժէ տեսնել, իրեն շատ վատ է պահում վերջին ժամանակներս։ Կարելի է միամիտ լինել, բայց ոչ այդքան...*

Գրելու նոր բան ունեմ...

Բայց... Տիկ. Լալայեանցին շատ բարեւ. կ'ասէք, իր հայրենիքն էլ եմ գնալու։

Բոլղարացին(8) *դեռ եւս չկայ. ...ոսից*(9) *էլ ոչինչ չենք ստացել։*

Բարեւէք իմ կողմից Օրտանսին(10)*, տանտիկնոջ եւ նրա աղջկան եւայլն... Յտեսութիւն։*

1.- Լիզը՝ Լիզա Մելիք Շահնազարեան, Ռոստոմի ապագայ կինն է:

2.- Արմենակը (Ղազարեան) Հրայր-Դժոխքն է, որ այդ օրերուն Կարս եկած էր եւ կը տատանէր՝ Հնչակեան կուսակցութեան կամ Դաշնակցութեան յարելու միջեւ: Ի վերջոյ պիտի միանար Հ. Յ. Դաշնակցութեան:

3.- Հիւանդ – գործածուած է Դաւթեան Յոնանի համար, որ կը պատկանէր Հ.Յ.Դ. առաջին սերունդին. այդ օրերուն Ժընեւ էր եւ կը վարէր «Դրօշակ»ի խմբագրութիւնը:

4.- Բարսեղ (Մելիք-Գրիգորեան), աւելի ծանօթ Ղարա-Մելիք ծածկանունով:

5.- Աշոտ, Աշոտ Թաքուլ – յեղափոխական առաջին մարտիկներէն Արամեան Արամ (1870-1899):

6.- Վարդան անունով եղբայր չունէր Ռոստոմ. հաւանաբար խօսքը կը վերաբերի Խանասորի Վարդանին, իսկական անունով Մեհրաբեան Սարգիս (1867-1943):

7.- Յայտնի գրող Ղազարոս Աղայեանցը:

8.- Բոլղարացին՝ Պետրոս Սերեմճեանն է, Պուլկարիոյ զին. վարժարանէն սպայ, մասնակցած Վասպուրականի մէջ մղուած ֆետայական կռիւներուն, հետագային (1901) հայ-մակեդոնական խումբի հետ կռուած թուրքերու դէմ, ձերբակալուած եւ կախաղան բարձրացուած («Վէրքերով լի» երգին մէջ յիշատակուած հերոսը):

9.- Անընթեռնելի անուն:

10.- Օրտանսը՝ Յոնան Դաւթեանի զուիցերուհի կինն է:

4

Փաստ. 264-1

[*Կարս*] 11 *յունիսի* 95 *թ.*[?]

Սիրելի Յոնան,

Մի խնդիրք ունեմ, ներողութիւն անհանգստութիւն պատճառելուս համար, բայց յուսով եմ չէք ձանձրանայ ինձ մի կարճ պատասխան գրել։

Բանը նրանումն է, որ ահա 3-4 ամիս կը լինի մեր Լուսնթագից ոչ մի լուր չունենք։ Չգիտենք, թէ ինչ է պատճառը նրա լռութեան։

Լսել եմ, որ ամառը գալու է, ճի՞շտ է արդեօք, դուրս է եկել թէ ոչ։ Խնդրեմ մի կերպ հանգստացնէք մեզ, վասն զի երկար ժամանակ է ոչ ես, ոչ նրա քոյրը ոչ մի տեղեկութիւն չունենք։

Խորին յարգանօք՝
Ձեր Ռ.

5

Փաստ. 5-29

1895

Սիրելիք

Զաքարիայի պապանձում է եկել ձեզ վրայ։ Այսպէս էլ լռել կը լինի՞։ Ահա մի ամիս է, ինչ դուրս եմ եկել եւ ձեզանից ոչ մի լուր չկայ։ Մինչդեռ ես ձեզ գրել եմ 4 *նամակ։ Ստացել է՞ք, թէ ոչ։ Խնդրեմ անմիջապէս հանգստացնէք մեզ, շատ չուտով նամակ գրէք։*

Ձեր Ռ.

27-*ին*, 8, 9, 7, 4(1)

1.- Ռոստոմէն Ժընեւ ուղարկուած այս երկտողը տարեթիւ չունի. միայն վերջաւորութեան գրուած է 27-ին, ապա աւելցուած 8, 9, 7, 4 թուանշանները, զորս ոչ մէկ ձեւով կարելի եղաւ վերծանել: Այլ ձեռագրով մը գրութեան վերեւ արձանագրուած է 1895: Կը գտնուի Արեւելեան բիւրոյի 1895 թ. թղթածրարին մէջ:

6

Փաստ. 37Ա-37

Ռոստոմի հետաքրքրական եւ հանելուկային ոճով գրուած նամակներէն մէկը, որ «սիրելի բարեկամ» անուան տակ ուղղուած պիտի ըլլար կուս. մարմիններէն մէկուն, հաւանաբար Ժրնեւ՝ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյին: Ծանօթագրութիւններու ճամբով, ճշդած ենք ծածկանուններով յիշատակուած անձնաւորութիւններու ինքնութիւնը, իսկ թուանշային ծածկագրով (շիֆրէ) նշուած բառերը տրուած են շեղագիր:

Սիրելի բարեկամ,

Ահա 3-դ օրն է ինչ այստեղ եմ։ Դեռ չգիտեմ, թէ երբ կարող եմ հեռանալ այստեղից։

Երկար գրելու յարմարութիւն ու տրամադրութիւն չունեմ. կը գրեմ մի քանի կարեւոր կէտերի մասին։

Ես ձեզանից ուզել էի բաւականաչափ ապրանք հետեւեալ համարներով կնիք, թէ ինձ համար եւ թէ շատ ուրիշ տեղերի։

Միթէ՛ Կարմրաթշիկի հայրենիքից(1) գրած նամակս չէք ստացած։ Եթէ չէք ստացած, խնդրեմ շատ շուտով գտնէք եւ ուղարկէք առայժմ

I *Կարնոյ*
II *Կենտրոնական*
III *Կոմիտէ*(2)

Նոյն բանը հարկաւոր է Պետոյի եւ Աշոտի համար։ Պետոյինը ուղարկէք Նիկոլին, իսկ իմը ու Աշոտինը(3) այստեղ։

Վրթանէսի(4) կնոջ միջոցով մի երկար նամակ եմ ուղարկել Ձեզ. ստացած կը լինէք, ի հարկէ, նամակի շարունակութիւնը չկայ. բայց տեսնենք, ինչո՞ւ Ձեր նամակներին թւական չէք դնում։ Մէկ էլ դեռ մինչեւ այժմ նամակների թերթերը (ամսոյս Դրօշակ) լաւ չէք կարողանում ծալել եւ յետոյ ուղարկել. հէնց թերթերը գլորում էք ուղարկում։ Ձէք յիշում, ես ինչպէս էի իւրաքանչիւր թերթը առանձին ծալում. հէնց այդպէս էլ արէք։

Անտանելի շոգեր են անում։

Գոհ է՞ք նոր ընկերոջից. նրա մասին, կարծեմ, մոռացել եմ գրել. խստապահանջ տղայ չի երեւում. եօլա գնացող է եւ աշխատասէր։ Ամէն ծախս հոգալուց՝ ամսական մի քանի ռուբլի գրպանի ծախս կը տաք, պրծաւ գնաց։

Ձեր վերջին նամակը ստացած է, բայց ես դեռ չեմ կարդացել։

Արմենակի(5) նամակը կարդացի։ Աւելորդ էր երեւան հանել. ոճը բոլորովին յեղափոխական էր։ Դուք ինձ յիշեցրիք այն զինուորին, որին առաջարկւում է վարձատրութիւն միայն այն պայմանով, որ իր թշնամուն կրկնակին տրւի։ Զինուորը առաջարկում է իր մի աչքը հանել, միայն թէ իր թշնամու երկու աչքը հանւի։

Բարեւներս եւ համբոյրներս բոլորին, ում ինչ կը պատշաճի։

Ձեր Ռ.

29-ին յուլ. 95 թ.

1.- Կարմրաթշիկ – կուսակցական ծածկանունն էր Մարգարեան Մարտիրոսի, աւելի ծանօթ Սաֆօ կեղծանունով, Դաշնակցութեան առաջին սերունդի գործիչներէն, որ աւելի ուշ, Քր. Միքայէլեանի մահէն ետք, պիտի փոխարինէր այս վերջինը Սուլթան Համիտի մահափորձին ատեն: Կարմրաթշիկի հայրենիքը պէտք է հասկնալ անոր գործելավայր՝ Կարս քաղաքը:

2.- Շեղագիր երեք բառերը թուանշային (շիֆրէ) ծածկագրութիւն են. կը նշանակէ այդ անունով պատուիրուած էր պաշտօնական կնիք պատրաստել եւ ուղարկել:

3.- Յիշուած անունները կը պատկանին մարտական շատ ծանօթ դէմքերու: Պետոն՝ Ալեքսանդր Պետրոսեանն է (1870-1896), Վանի 1896 թ. ինքնապաշտպանութեան դաշնակցական հերոսը, որ դէպի Ատրպատական նահանջի ճամբուն վրայ պիտի նահատակուէր արմենական Աւետիսեանի եւ հնչակեան Մարտիկի հետ: Աշոտը կամ Աշոտ Թաթուլը Արամեան Արամն է (1870-1899), որ Կարսի, Բասենի, Կարնոյ եւ Սասունի մէջ յեղափոխական բեղուն գործունէութիւն ունենալէ ետք կը ձերբակալուի, ապա 1899 թ. Օգոստոս 9-ին Կարնոյ մէջ կախաղանի վրայ կը մահանայ «Կեցցէ Յեղափոխութիւնը» գոչելով: Յիշուածներէն երրորդը Նիկոլ Դումանն էր, որուն պէտք է յանձնուէր Ատրպատականի Կ. կոմիտէին համար պատրաստուելիք կնիքը:

4.- Խօսքը կը վերաբերի հաւանաբար Մարսէյլ քաղաքի ընկերներէն Վրթանէս Ղազարեանի, որ կը զբաղէր դէպի Պաթում նաւային ճամբով նամակներու, դաշնակցական մամուլի եւ զէնք-զինամթերքի առաքման գործով:

5.- Արմենակ – ծածկանուն Հրայր-Դժոխքի, իսկական անունը՝ Արմենակ Ղազարեան:

7

Փաստ. 862-6

Գաղտնի մելանով գրուած նամակ, յայտնապէս Կովկասէն է եւ ուղղուած Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան: Գրութեան մէջ յիշուած Անտոնը, որուն հիւանդութեան մասին կը խօսի Ռոստոմ, Սիմոն Զաւարեանն է: Ռուսերէն բառերը տրուած են շեղագիր:

21ին սեպտ. 95 թ.

Սիրելիք,

Ստացել եմ ձեր ուղարկած նամակը. ներողութիւն, որ մինչեւ այսօր չեմ կարողացել պատասխանել: Անցեալ շաբաթ կ՚ուզէի գրել, բայց հազիւ հազ աւարտեցի իմ մի ուրիշ նամակը: Հարցնում էք Անտոնի առողջութեան մասին: Ճիշտը խոստովանած այդ մարդու դրութիւնը շատ վտանգաւոր է: Առաջ ենթադրում էին, որ գողովայա չախոտկա(1) *կարող է ստանալ եւ կարծում էին, որ ոտի ցաւը յօդացաւ* ռեւմատիզմ(2) *պէտք է լինի. սակայն միւս բժիշկները այդ վերագրեցին նրա ժառանգական հիւանդութեան, համարելով այդ բոլորը՝ թէ կոկորդացաւը եւ թէ ոտի ցաւը* զոլոտուխա-*ի*(3) *հետեւանք. յամենայն դէպս նրա դրութիւնը պահանջում է խիստ մեծ հոգատարութիւն, մարմնական հանգստութիւն եւ շատ լաւ սնունդ: Սակայն հանգամանքները այնպէս են, որ դժուարութեամբ կարող է այդ բոլորը կատարել: Խնդրեմ այս մասին չտարածէք, թէ չէ կարող է թէ նրան եւ թէ նրա բարեկամների ականջը հասնել:*

Ձեզ արդէն խնդրել էի ուղարկել մի քանի գրքեր. կրկնում եմ խնդիրքս, գուցէ առաջի նամակս ձեռք հասած չլինի:

1) Ֆոգտ, Զողոգիա (օբշչայա)(4) (*ճիշտ անունը չգիտեմ*). 2) Եունգ-*ի*(5) *դարձրած գրքոյկները աւելացնում եմ.* 3) *Կենդանիների խելքը. պէտք է Էսպինոսի*(6) *լինի.*

4) Կենդանիների հասարակական կեանքը, կարծեմ դարձեալ Էսպինոսի. 5) Տեղւոյդ տարրական դպրոցներում աւանդւող դասագրքերը, բնակ[ան] պատմութիւնից։ Ուղարկէք ուղղակի իմ հասցէին (Պարիզից), միայն իւրաքանչիւր գիրքը առանձին բանդերոլով։

Բարեւներս եւ համբոյրներս բոլորին.
Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

Ծանօթ. Սիմոն Վրացեանի.–

Այս նոյն նամակի թղթի վրայ, գրած է նաեւ հետեւեալը գաղտնի թանաքով. խմբ.:

Դուք ինձանից երկար նամակի էք սպասում: Ես էլ շատ բան ունեմ գրելու, միայն հաւատացէք, որ պատճառը ծուլութիւնը չէ, այլ այսօր դժուարանում եմ ամէն ինչի հաւատալ մինչեւ իսկ գաղտնի թանաքին, թէեւ իմ չգրելուց դուք մի առանձին վնաս չէք ունենայ, որովհետեւ դրանք ըստ մեծի մասի անձնական տպաւորութիւններ են եւ անմիջապէս գործին չեն վերաբերւում:

1.- Ռուսատառ՝ կոկորդային հազ:
2.- Ռուսատառ՝ ռեւմատիզմ (հիւանդութիւն):
3.- Ռուսատառ՝ զոլոտուխա-ի հիւանդութիւն:
4.- Ռուսատառ՝ Ֆոգտ, Կենդանաբանութիւն (ընդհանուր):
5.- Թոմաս Եունգ (1773-1829), անգլիացի բժիշկ եւ բնագէտ:
6.- Ալֆրէդ Էսպինաս (1844-1921), ֆրանսացի իմաստասէր, ընկերաբան եւ հոգեբան, ծանօթ յատկապէս մարդկային ընկերութեանց եւ կենդանական աշխարհի մասին իր կատարած ուսումնասիրութիւններով:

8

Փաստ. 750-12

Ռոստոմի կողմէ գաղտնի թանաքով գրուած Ստեփան (Զօրեան) ստորագրութեամբ: Հաւանաբար գրուած է Կարինէն եւ հասցէագրուած Թիֆլիս:

23-ին նոյեմբ. 95 թ.

Սիրելի քոյրիկ,

Անցեալ անգամ քեզ մի նամակ գրեցի, բայց մոռացայ յիշել մի բան։ Այստեղ իմ ծանօթ երիտասարդներից մէկը ցանկանում է գալ այդտեղ գիտութիւն ձեռք բերելու, բայց բոլորովին անծանօթ է տեղւոյն պայմաններին։ Խնդրեմ գրես, կարո՞ղ է արդեօք նա այստեղի դպրոցի վկայականով մտնել համալսարան եթէ ոչ իբր իսկական ուսանող, այլ գոնէ ազատ ունկնդիր։ Գրիր նոյնպէս կենսական պայմանների մասին։ Հաղորդելով այդ երիտասարդի անկեղծ շնորհակալութիւնը նախօրէն, մնամ քո

ՍՏԵՓԱՆ

Հաղորդիր իմ հիւանդ ապոր իմ բարեւները։

9

Փաստ. 457-62

Գաղտնի թանաքով գրուած նամակ, 4 էջ: Ռոստոմ իբրեւ սամովարի վաճառական՝ Տրապիզոնէն անցած էր Կարին, ուր հրաւիրուեցաւ Ազգ. վարժարանի մէջ ուսուցչական պաշտօնի. հազիւ սկսած՝ վրայ հասաւ համիտեան կոտորածներու ալիքը մինչեւ Կարին, ուր ձերբակալուեցաւ Ռոստոմ եւ իբրեւ օտարահպատակ, Ղարա-Մելիքի հետ (Մելիք-Գրիգորեան Բարսեղ), արտաքսուեցաւ Պարսկաստան, ուրկէ հաւանաբար այս նամակը գրած է Ժընեւ:

Նամակը ուղղուած է Ժընեւ, բայց կը գտնուի Հ.Յ.Դ. Ատրպատականի (Թաւրիզ) 1895 թ. թղթածրարին մէջ:

18 *դեկտ.-ին* 1895

Սիրելիք,

Անշուշտ իմացած կը լինէք մեզ դուրս քշելու մասին: Այսպէս թէ այնպէս մենք ընկանք այստեղ: Թէ ինչ կը լինի, այդ դեռ յայտնի, պարզ չէ ոչ մէկիս համար: Գլուխներս դեռ բոլորովին չենք ժողովել:

Դրօշակները տեսայ մինչեւ 19 No *: Կարծես թէ շատ բան մեր ուղարկածներից ձեր ձեռքը չի հասել: Ի միջի այլոց հանգանակուած գումարների ցուցակի մի մասն էլ էինք ուղարկել: Միւս մասն այրել են դէպքից յետոյ: Վաղը կամ ես, կամ Բարսեղը*(1) *կը գնանք Թաւրիզ խորհրդակցելու համար: Տեսնենք, թէ ուր ենք գնում, ինչ ենք անում: Նիկոլն էլ, իր քրոջ հետ արդէն այնտեղ են. այնտեղ է եւ Յովսէփը*(2)*:*

Այստեղ չգտանք մեր Նիկոլին(3)*: Արդէն անշուշտ ինքն էլ գրած կը լինի իր գալու մասին: Ընկերները եղել են ըստ մեծի մասին խամ մարդիկ: Նրա մասին ոչ մի դրական բան յայտնի չի: Զարմանալի բաներ են պատմում նրա քաջագործութեան մասին: Պատմում են քրդերը, որ մի երկարահասակ, սեւ միրուքով մի երիտասարդ թոյլ չէր տալիս քրդերին գլուխ բարձրացնելու, որ նա* 10 *մարդ է գլորել, բոլորին գլխից խփելով: Շատ ափսոս որ հանգամանքների բերմամբ հմուտ փորձուած տղերք, ինչպէս Սարգիսը, Վարդանը*(4)*, չեն եղել նրա հետ:*

Նոր բան իմանալուն պէս իսկոյն կը հաղորդենք:

Այնտեղից էլ էի գրել հեռագրի մասին: Գտէք մի հասցէ կամ Փարիզ, կամ այդտեղ, որին, իբր մի եւրոպական լրագրի աշխատակցի, կարելի լինէր հեռագիրներ ուղարկել Ռուսաստանից: Աւելի լաւ է մի խմբագրութեան հասցէ: Հաղորդէք չուտով այդ հասցէն եւ դուք կանոնաւորապէս կը ստանաք հեռագիրներ:

Վերջին ժամանակներս ահագին քանակութեամբ նիւթեր էինք ուղարկում. ամէն մի փոստի երկու երկու հաստ ծրարներ էինք ճանապարհ ձգում: Հասնում է՞ արդեօք տեղ. չգիտենք:

Միւս փոստով կը պատրաստեմ (եթէ միայն Թաւրիզ չգնամ) մի քանի յօդուածներ: Մի երկար յօդուած եմ ուզում պատրաստել եւ ռուս մամուլի համար: Տեսնեմ, կարող եմ գլուխ բերել: Ճանապարհորդութեան ժամանակ բաւականաչափ հետաքրքիր բաներ իմացանք. ի միջի այլոց Ալաշկերտը եւ մանաւանդ Բասենը շատ են պարտական Դաշնակցութեան, իրենց ապահով մնալուն համար: Հիանալի է պաշտպանուել Դալի-Բաբան, ուր այդ ժամանակ հասնում է Դժոխքը իւր խմբով: Քրդերը հեռանում են Դէլի-Բաբայից մի մեծ ցաւ սրտերում, որ 2000*ից աւել քրդեր* 2 *օր շարունակ ոչ թէ միայն անկարող եղան այդ գիւղը ընկճել, այլ եւս ստիպւած եղան փախուստ տալ:*

Սրանց մասին միւս անգամ։

Ուղարկում եմ ճանապարհին լսածներս խմբի գործունէութեան մասին(5)։

Ճանապարհից շատ էինք երկիւղ կրում։ Մեզ թւում էր, որ մեզ տանում են «ոչնչացնելու» համար։ Բայց այսպէս կամ այնպէս, մենք էլ չգիտենք ինչպէս սաղ սալամաթ տեղ հասանք շատ ապահով կերպով։

Համբոյրներս ձեզ բոլորիդ
Ձեր Ռ.

1.- Բարսեղը (Մելիք-Գրիգորեան) Ռոստոմի հետ արտաքսուած էր Պարսկաստան թրքական իշխանութեանց կողմէ:

2.- Նիկոլը՝ Մատինեանն է, եւ Յովսէփը՝ Արղութեան:

3.- «Մեր Նիկոլը» Տէր Յովհաննիսեանն է. ակնարկուած կռիւը 1895ի Բողազ-Քեասանի կռիւն է, որու ընթացքին իր գործած սխրանքներուն համար Նիկոլ քիւրտերէն ստացաւ մրրիկ – Դուման անուանակոչումը:

4.- Խօսքը կը վերաբերի Ֆար-Հատ ծածկանունով ծանօթ Օհանջանեան Սարգիսի (1869-1918) եւ Խանասորի Վարդանին (Մեհրաբեան Սարգիս):

5.- Տես յաջորդ՝ թիւ 10 նամակը:

10

Փաստ. 458-95

Ռոստոմի այս անթուակիր նամակը՝ ուղղուած Արեւմտեան բիւրոյին՝ Ժընեւ, գրուած է Պարսկաստանէն, հաւանաբար Սալմաստէն: Գրութեան թուականը դիւրաւ կը ճշդուի, որովհետեւ նամակի վերջաւորութեան Ռոստոմ կը գրէ «այս երեկոյ միայն իմացայ, որ Նոր Տարի է», ուրեմն՝ 31 Դեկտ. 1895: 1895-ի Մեպտեմբերին իբրեւ «Սամովարի վաճառական» (պարսկահպատակ Արտաշէս Ռոստոմեանց անունով) Ռոստոմ իջած էր Տրապիզոնի նաւահանգիստ եւ իր հետ բերած ատրճանակները յանձնելով տեղւոյն մարմնին՝ անցած էր Կարին: Հոս ան մնաց շուրջ երկու ամիս եւ հրաւիրուեցաւ Ազգ. վարժարանի մէջ ուսուցչական պաշտօնի: Ճիշդ այդ օրերուն Համիտեան կոտորածներու ալիքը հասաւ Կարնոյ նահանգ, ուր հայութիւնը համեմատաբար քիչ վնասներով դուրս եկաւ արհաւիրքէն, շնորհիւ Ռոստոմի եւ Արամ Արամեանի կազմակերպած ինքնապաշտպանական խումբերուն ցոյց տուած զինեալ դիմադրութեան: Բայց Ռոստոմ իբրեւ օտարահպատակ ձերբակալուեցաւ եւ արտաքսուեցաւ Թուրքիայէն դէպի Պարսկաստան, ուրկէ եւ կը գրէ այս նամակը Ժընեւի ընկերներուն, բնականաբար, համիտեան համատարած կոտորածներու ծանր տպաւորութեան տակ: Ս. Վրացեանի վկայութեամբ «Թէ Կարնից եւ թէ թուրք-պարսկական սահմանագլխից Ռոստոմը հետաքրքրական թղթակցութիւններ ուղարկեց «Դրօշակ»ին («Յուշամատեան Հ. Յ. Դաշնակցութեան» 1890-1950, Բոստոն, էջ 108):

Արդարեւ, «Դրօշակ»ի 1895 թ. վերջին եւ 1896 թ. առաջին թիւերուն մէջ լոյս կը տեսնեն «Նամակ Կարինից» եւ «Նամակներ պարսկա-տաճկական սահմանագլխից» խորագիրներով յօդուածաշարքերը, որոնցմէ ոմանց տակ «Դրօշակ»ի տպագիր օրինակներուն տակ ձեռագրով աւելցուած է Ռոստոմի անունը:

Նամակի սկիզբը «հէնց այս բոպէիս տեսայ 21-ը» խօսքերը կը վերաբերին «Դրօշակ»ի 21-րդ թիւին (15 Դեկտ. 1895), ուր իբրեւ թղթակցութիւն լոյս տեսած էր

Կարինէն ուղարկած նամակը, որուն համար զարմանք կը յայտնէ Ռոստոմ.– «Այդ ի՞նչ էք արել, ինչո՞ւ էք մասնաւոր նամակը զետեղել»:

Սիրելիք,

Հէնց այս րոպէիս տեսայ 21-*ը։ Այդ ի՞նչ էք արել, ինչո՞ւ էք մասնաւոր նամակը զետեղել։ Ասենք, բաւականաչափ զգոյշ է գրուած, որովհետեւ երկիւղ կար ռուսական կառավարութիւնից, բայց եւ այնպէս հարկաւոր չէր տպագրել։ Գոնէ մի քանի բաներ, որոնք բոլորովին մասնաւոր կերպարանք ունին, թողնէիք։ Դրանից առաջ ուղարկուածները աւելի հետաքրքիր են եւ լիակատար։ Զլինի թէ չէք ստացել։ Շատ ցաւալի կը լինի, եթէ ստացած չլինէք. նոյնպէս Աշոտի*(1) *գրած շատ լաւ թղթակցութիւնը, բաղկացած* 5 *թերթից։ Դա ուղարկուած է մօտաւորապէս Նոյեմբ.* 20-*ին։*

Հիւանդը(2) *մի շաբաթ է գնացել է։ Այժմ քաղաքում կը լինի եւ մի քանի օրից յետոյ Ռուսաստան կ՚անցնի։ Երէկուայ նամակից (Յովսէփի) երեւաց, որ տղերքը հարսանիք*(3) *ունեն, մեզանից մէկին էլ հրաւիրել են հեռագրով. պատրաստուել է գնալ Քրիստը*(4)*։ Շատ ափսոս, ուշ են իմաց արել, թէ չէ ես էլ կ՚երթայի...*

Դրութիւնս, մասնաւորապէս հոգեկան դրութիւնը շատ անորոշ է. վերջին դէպքերի սոսկալի տպաւորութիւնների տակից դեռ չեմ կարողացել գլուխ հանել։ Մի ինչ որ բան զգում եմ, մի ինչ որ բան եմ ուզում հաղորդել ուրիշներին, բայց երբ բերանս եմ բանում, կամ գրիչ եմ առնում ձեռս, մնում եմ շուարած, պարզ տեսնում եմ որ մի որոշ բան չունեմ յայտնելու, որ գլուխս լիքն է զանազան տեսակ եզրակացութիւններով, շատ անգամ իրար հակասող։ Դեռ դէպքից առաջ, ես սկսել էի բաժանուել երկու մասի։ Խելքս ասում էր. «եթէ անպատճառ կոտորած է լինելու, թող ուրեմն մենք լինենք նախայարձակները, թող մի նշանաւոր քայլ անենք, այնուհետ թող կոտորում են, կոտորեն։ Եթէ, ընդհակառակը, կոտորած չի լինիլ, եթէ ինքը, կառավարութիւնը հակառակ է, նշանակում է կոտորածը կարող է իր համար աննպաստ, իսկ մեզ համար նպաստաւոր լինել, ուրեմն այսպէս, թէ այնպէս, հարկաւոր [է] մի բան անել»։ Այսպէս էր թելադրում ինձ խելքս։ Բայց երբ նայում էի շուրջս, երեւակայում էի կոտորածի պատկերը, երեւակայում էի մօտիկ անձնաւորութիւններին, վարժուհիներին, աշակերտուհիներին, աշակերտներին — որոնք ամէն մի րոպէ իմ առաջ արտայայտում էին իրենց սարսափը,— արդէն սրի անցկացրած, ես իսկապէս սարսափում էի, ես ինձ ոճրագործ էի համարում։ Խելքս յաղթանակը տարաւ, սկսել էինք ծրագիրներ կազմել մեր ցոյցի ձեւի եւ եղանակի մասին. հէնց այդ օրը Աշոտը փակւած էր մնացել սենեակումս, որ ես գամ եւ վերջնականապէս խօսենք. յանկարծ պայթեց այդ անիծած կոտորուելը եւ ամէն ինչ տակն ու վրայ արաւ։ Ի՞նչ էինք սպասում եւ ինչ դուրս եկաւ։ Այսպէս էլ անմխիթար դրութիւն...

Այդ օրւանից յետոյ իւրաքանչիւր օր տրամադրութիւնս եւ կարծիքս փոխւում էր. մի յիմար լուր անսպասելի կերպով բարձրացնում էր մեր հոգին, մենք լցւում էինք կատաղի վրէժխնդրութեամբ, բայց յանկարծ մի աւելի յիմար լուր մեզ սառեցնում, անզգայ փայտ էր շինում։ Այդ ժամանակ մեզ համար գոյութիւն չունէր ոչ պատիւ, ոչ նամուս, պատրաստ էինք կրել նորանոր վիրաւորանքներ։ Մենք մեր գլուխները կորցրել էինք եւ իւրաքանչիւր մի օր իր հետ բերում էր մի առանձին տրամադրութիւն։ Մենք թողինք «ղեկավարողի» դերը եւ ամբողջովին ընկանք հանգամանքների հոսանքի մէջ. գնում էինք, ուր մեզ տանում էին։

Ինչպէս ասացի, դեռ մինչեւ այժմ էլ չեմ որոշել իմ դրութիւնը. դեռ չեմ եկել մի վճռի, որին տրւեմ հոգով սրտով, ամբողջ իմ էութեամբ։ Դարձեալ խելքս ներկայ

պարագաների մէջ ինձ ասում է. «Ազատ» անկիւն է մնացել միայն Վան քաղաքը եւ մասամբ Բասենը Ալաշկերտի հետ։ Այս դարունը պէտք է օրհասական համարել մեր հարցի համար։ Թող շարժում առաջ բերենք այդ անկիւններումն էլ։ Եթէ ամէն տեղ կոտորուել են, թող այդտեղ էլ կոտորուեն. դրանք, երեւի մէկ է, չեն կարող այլեւս կենդանի պահել հայոց հարցը։ Բայց իրենց շարժումով, ով գիտէ, գուցէ լուծեն վերջնականապէս այդ կնճռոտ հարցը։ Մի խօսքով, իմ կարծիքով մեր գործը շատ շուտով այս կամ այն կողմը կը վճռուի - Տես Դրօշակ - իսկ դրա լուծումը կախւած է Վանայ եւ Բասենի շարժումներից։

Բայց երբ դարձեալ երեւակայութեանս մէջ պատկերանում են այլանդակւած դիակներ, քարուքանդ արած տներ, սոված, ծարաւ, մերկ թափառաշրջիկ մուրացկաններ... Աստւած վկայ, բերանս չի բացւում։ Երէկ միայն համարձակութիւն ստացայ այդ միտքը արտայայտել եւ շատ լաւ էի զգում, որ եթէ մէկը ինձ յիշեցնէր կոտորածի հետեւանքները, ես կը լսէի եւ իսկոյն կը համաձայնէի հետը, որ «կոտորածը աննպատակ է»։ Բայց բարեբախտաբար ոչ ոք չհակառակեց։ Այնպէս որ այժմ վստահանում եմ այս կարծիքը հաղորդել թէ ձեզ եւ թէ միւս ընկերներին։ Որքան երջանիկ էք դուք հեռւում նստած...

Նիկոլից(5) *դեռ լուր չկայ։ Երեք կողմից փորձել ենք նրան նամակ հասցնելու, բայց բոլորն էլ անյաջող։ Այդ մարդը զարմանալի է իրեն պահել այստեղ եւ ահագին սէր ու յարգանք ձեռք բերել ժողովրդի բոլոր խաւերից։ Բոլորն էլ սաստիկ հետաքրքրւում են նրա վիճակով։ «Նիկոլից ի՞նչ խաբար» լսում ես ամէն քայլափոխիդ։ Նրան գրած Յոնանի նամակը ես բաց արի այստեղ։ Երւանդը, Ծաղիկը, Նիկոլը*(6) *Թաւրիզ են. հանգանակութիւն են բաց արել եւ ներկայացում տւել բաւականին յաջող։*

Դարձեալ Պարսկաստանը լցւեց պարապ-սարապ մարդկանցով, որոնք ապրում են մեր հաշւով։ Ե՞րբ ենք դէն ձգելու այդ բուրժուազական յեղափոխական տաքտիկան։ Ամբողջ մի տարի ապրել ընկերութեան հաշւով, թէ ինչ է մի օր պէտք է գալու։

Այստեղ է եւ բոլղարացին(7)*. հիւանդութեան պատճառաւ չի կարողացել անցնել խմբի հետ։ Բաւականին համակրելի երիտասարդ է։ Ի միջի այլոց մի ինչ որ անպատւաբեր բան են հաղորդում մեր խմբի մասին. ասում են, որ մի ինչ որ տմարդի վարմունք են ունեցել դէպի իրենց ընկերները, իսկ թէ ինչ, դեռ յայտնի չէ...*

Այս երեկոյ միայն իմացայ, որ Նոր Տարի է։ Հիմա դուք ինչո՞վ է[ք] զբաղւած, որտե՞ղ էք քէֆ անում...

Համբոյրներս եւ բարեւներս ձեզ բոլորիդ։
Ձեր Ռ.

Մի յօդ[ւած] էի ուզում գրել, թողնում եմ միւս անգամին։
ՆՈՅՆ

1.- Աշոտ, Թաքուլ: Արամեան Արամն է, առաջին սերունդի դաշնակցական անուանի մարտիկներէն, որ գործած է Կարին, Բասեն, Կարս եւ Սասնոյ մէջ: 1896-ին ձերբակալուեցաւ եւ բանտ մնաց մինչեւ 1899, Օգոստոս 9, երբ կախաղան հանուեցաւ:

2.- Հիւանդ - գործածուած է Դաւթեան Յոնանի համար, որ կը պատկանէր Հ.Յ.Դ. առաջին սերունդին. այդ օրերուն Ժընեւ էր եւ կը վարէր «Դրօշակ»ի խմբագրութիւնը:

3.- Հարսանիք – փոխաբերական իմաստով գործածուած – կը նշանակէ ժողով:

4.- Քրիստափոր Միքայէլեան:

5.- Նիկոլ Դուման:

6.- Երուանդը՝ Իշխան Յովսէփ Արղութեանն է. Ծաղիկը՝ Սաթենիկ Մատինեան՝ Յ. Արղութեանի ապագայ կինը. Նիկոլը՝ Մատինեան:

7.- Շատ հաւանաբար Պետրոս Սերեմճեանը:

11

Փաստ. 457-65

Դեկտ. [18]95 *թ.*

Սիրելիք,

Ահա մի շաբաթ է այստեղ եմ. անցեալ փոստայով ուզում էի նամակ գրել Շէյխի(1) *նամակի առթիւ, բայց մի քանիսը խորհուրդ տուին հեռագիր ուղարկել, վերջ ի վերջոյ ոչ նամակ գրուեց, ոչ էլ հեռագիր։*

Այսօր երկուսն էլ անում ենք։

Զարմանալի մարդիկ էք, նամակ էք գրում, պահանջում էք առանց յետաձգելու կատարել եւ ոչ մի խօսք, թէ ինչո՞ւ էք պահանջում, ի՞նչ գործի համար, որպէսզի իմ անելիքը լաւ իմանամ։

Գնում եմ Արտաբիլ պ. Անտոնի հետ. այնտեղ կը խօսինք եւ կ՚որոշենք։ Յուսով ենք ձեր հեռագիրն էլ եկած կը լինի Նատալին(2) *մինչեւ այդ ժամանակ։*

Կարնոյ մասին առանձին գրքոյկ էի պատրաստում. սպասէք Տէր Գարեգնի(1) *կենսագրութեան, որ միւս փոստայով կ՚ուղարկուի։*

Լուսիկից շատ դժգոհ են, որ նամակ չի գրում Ծաղիկին. Ծաղիկն ասում է, չի՞նի թէ անցեալ տարւայ տրամադրութիւնը նորոգւել է։ Եղբայր Վահանը(3) *օրէց օր հաստանում է. ոչինչ քէֆը լաւ է։ Սակայն ինքը սաստիկ բողոքում է գրածիս դէմ, ասելով, որ սիրտը սուփրա չի, որ ամէնի առաջ բաց անուի։*

Տաշօն(5) *էլ շատ է պնդում, որ իր մասին էլ մի բան գրեմ. ես էլ պարտքս կատարեցի։*

Եթէ Շէյխի գրածը անհրաժեշտ է, թող Յովհաննէսը(6) *սպասի։*

Ձեր Ռ.

Յովհաննէսը 50 *ոսկին ստացել է, թէ ոչ (պատրիարքից)։*

ՆՈՅՆ

Բարեւներս եւ համբոյրներս։

Քեարիմը(7) ներողութիւն է խնդրում, որ անկարող է երկար գրել, փոստը աճապարեցնում է: Իմ կողմից մի համեստ հարց, արդեօք Լ-ն ինչպէս է մտածում Ք-ի գալը անհրաժեշտ է թէ ոչ (հանաք է):

Բարեւներս ՁՆԾԱՂԻԿ(4)

Լուսօ ջան, գրիր իմ նամակիս պատասխանը:

1.- Շխեան Սիմոն (1865-1947):

2.- Մատինեան Նատալիա:

3.- Տէր Գարեգին քահանայ, աշխարհական անունով՝ Վէմեան Աւետիս, նահատակուած Կարնոյ մէջ 1895-ի համիտեան կոտորածներուն:

4.- Ծաղիկ, Ձնծաղիկ – Մատինեան Սաթենիկ, Իշխան Յովսէփ Արղութեանի ապագայ կինը: Նատալիա եւ Սաթենիկ քոյրեր են, իրենց եղբայրը՝ Նիկոլ Մատինեան՝ (Վահան) կը պատկանի Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր սերունդին:

5.- Տաշօ՝ ծածկանուններէն մէկն է՝ Իշխան Յովսէփ Արղութեանի:

6.- Իւսուֆեան Յովհաննէս (1850-1920) – Կ. Պոլսոյ եւ Ամերիկայի մէջ Հ.Յ.Դ. կազմակերպութեան հիմնադիր: Շխեան Սիմոնը եւս նոյն առաքելութեամբ պիտի մեկնէր Մ. Նահանգներ:

7.- Քեարիմէն ետք, փակագծերու մէջ այլ ձեռագրով մը գրուած է՝ Ռոստոմի կեղծանունը:

12

Փաստ. 35-11

Յոնան Դաւթեանի կողմէ Թաւրիզի ընկերներուն ուղղուած նամակի մը յաւելուած Ռոստոմի կողմէ:

[*Ժընեւ*] 1896, *մայիս* 15

Զը գիտեմ, ճանապարհի որ կէտից մի նամակ եմ գրել ձեզ։ Այն միայն կ'ուզեմ աւելացնել, որ 3-4 օրից յետոյ գնալու եմ, շատ եմ ուշացել։ Տեղիս գործերը շատացել են, տեղացիք էլ դադրել են ու հիւանդացել։ Հարկաւոր է մի նոր մարդ։ Գրելու ենք Սիմոնին, որ վեր կենայ գայ։

Բարեւներս եւ համբոյրներս
ՌՈՍՏՈՄ

Այն կոչը, որի համար խօսում էինք Երւանդի հետ, այդտեղ կը պատրաստէ՞ք, թէ այստեղից ուղարկենք։ Շտապեցէք չուտով իմաց անել։

13

Փաստ. 35-57

Այս եւ յաջորդ բազմաթիւ նամակներ, գրուած Ռոստոմի կողմէ, ստորագրուած են «Խմբագրութիւն Դրօշակի»: Արդարեւ 1896 թ. Ապրիլ ամսուն Ռոստոմ վերադարձած էր Ժընեւ, ուրկէ խմբագրութեան անունով կը գրէր առ հասարակ կուսակցական մարմիններուն:

Յարգելի պարոններ,

Ստացանք ձեր ուղարկած նւիրատոմսը։ Ինչո՞ւ էք ուղարկում այստեղ։ Ուր որ փողը ուղարկել էք, այնտեղ էլ հաշւի մէջ կը մտցնեն։

Ծրագիրները կ'ուղարկւեն չուտով թէ ձեզ եւ թէ միւսներին։ Տպագրւում է նորը՝ արեւմտեան բարբառով։

Պատրաստած դրօշակը պահէք ցպահանջ։ Իսկ նորերը պատրաստելու կարիք չկայ, որովհետեւ Ռուսաստանում եւ Պարսկաստանում էլ բաւականին պատրաստում են։

Դրա ծախքը կարելի է աւելի նպատակայարմար կերպով գործածել։

Երկու երիտասարդների մասին կը գրենք, ուր հարկն է։

Եթէ պահանջ լինի, կը յայտնենք ձեզ։

ԽՄԲ. ԴՐՕՇԱԿԻ

22-*ին օգ.* 96 *թ.*

ԾԱՆՕԹ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

No 82 Պատճէններու մատեանը կազմուած է շուրջ 500 էջերէ եւ կը բովանդակէ մեծ մասամբ Ռոստոմի գրչին պատկանող նամակներ, ստորագրուած «Խմբագրութիւն Դրօշակի»: Գրութիւնները կը սկսին 1897 թ. Յունուարէն մինչեւ նոյն տարուան Յունիս ամիսը եւ կը գրաւեն ներկայ հատորին 31-171 էջերը:

No 83 Պատճէններու մատեանը նոյնպէս կը բաղկանայ 500 էջերէ, նոյնպէս Ռոստոմի ձեռագրով նամակներ, միշտ ստորագրուած «Խմբագրութիւն Դրօշակի»: Ռոստոմի նամակները կը կրեն 1898 Մարտ ամիսը, 11-28: Ժամանակագրական կարգը յարգելու համար՝ այս բաժնին մէջ եւս ներառած ենք No 81-1-ի գաղտնի թանաքով շարադրուած քանի մը նամակներու բնագիրները: Այս գրութիւնները ներկայ հատորին մէջ կը գրաւեն 172-236 էջերը:

No 84 Պատճէններու մատեանը ունի Ռոստոմի գրչին պատկանող ընդամէնը 6 նամակ, թուագրուած 1898 թ. Մարտ 16 – 1899 թ. Ապրիլ 4: Այս բաժնին մէջ եւս ներառած ենք, միշտ ժամանակագրական կարգով, առանձին համարակալում ունեցող եւ վերոյիշեալ մատեաններէն դուրս գտնուող Ռոստոմի շարք մը այլ նամակներ:



14

Պատճէններու մատեան No 82, *էջ* 6

Docteur Zarifian
23 Southhampton st. 23,
London, W
(Angleterre)

7-ին յունու[ար] 97 *թ.*

Յարգելի ընկեր(1),

Ամերիկայի մեր ներկայացուցչից մի նոր հեռագիր ստացանք, որով դարձեալ հարցնում է հերոսների մասին։ Խնդրենք հանգստացնելու համար ուղարկէք մի հեռագիր երբ տղայքը տեղ կը հասնեն հետեւեալ հասցէով՝
Vahanian. Lowell. Mass.
P.O.Box 520

Եթէ որոշ ժամանակին չեկան, դարձեալ հեռագրէք, թէ չեկան։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Մեզ էլ , յուսով ենք, շուտով կը յայտնէք(2)։

1.- Յարգելի ընկերը Զարիֆեանն է, որ ծածկանուն է. իսկական անունը՝ Լոռու-Մելիքեան Յովհաննէս (1862-1931):
2.- Հարցը կը վերաբերի Պանք Օթոմանի գրաւման մասնակից տղոց, որոնք նաւով փոխադրուած էին իբր թէ Ամերիկայի Միացեալ Նահանգներ, բայց իրականին մէջ նաւը ուղղուած էր դէպի Պուէնոս Այրէս, Արժանթին:

15

Պատճէններու մատեան No 82, *էջ* 10-13

8-ին յունուարի 97 *թ.*

Վահապին(1)

Յարգելի ընկեր,

Հրաչը(2) *գուցէ նամակիս հետ միասին գայ։ Ի՞նչ եղաւ Յոնանը*(3)։ *Այսօր եկան մեզ մօտ տաճիկները*(4) *եւ առանց երկար ու բարակ խօսելու կտրուկ կերպով ռում-*

բեր պահանջեցին, առարկելով թէ շատ, շատ է հարկաւոր եւ թէ անպատճառ պէտք է մի քանի բարձրաստիճան մարդկանց գլորել։ Նրանց կրկնեցի[ն]ք ձեր առարկութիւնները, շեշտելով գլխաւորապէս այն հանգամանքի վրայ, որ հաւատ չկայ դէպի տաճիկ յեղափոխականները եւ թէ մեր ընկերներին ցանկալի է, որ տաճիկներն որեւէ կերպով ապացուցանեն, թէ ընդունակ են յեղափոխական ձեռնարկների, անձնազոհութեան եւայլն։ Հարկաւոր է, աւելացրինք, որ նախ այս կամ այն ձեւով յայտնի լինի պարզ կերպով իրենց կուսակցութեան դոյութիւնը, որպէսզի կառավարութիւնը չկարողանայ իրենց արածը ձգելու հայերիս վրայ եւ նոր խստութիւններ առաջ չբերի մեր դէմ։

«Հաւատի» վերաբերմամբ նրանք ասացին, թէ ամէն ինչ պատրաստ են անել, ինչպէս մենք կ'ուզենք, միայն թէ ռումբ տրւի իրենց։ Իսկ առաջին քայլը ցանկանում են ռմբերով սկսել, որպէսզի ցոյց տան միանգամից իրենց ոյժը եւ սարսափ առաջ բերեն կառավարչական շրջաններում։ Այնուհետեւ կարող են նաեւ ատրճանակներ գործածել։ Ինչ վերաբերում է այն հարցին, թէ չլինի թէ կառավարութիւնը հայերի վրայ ձգի այդ բանը, նրանք ամէն պատրաստականութիւն յայտնեցին դրա առաջն առնելու. բացի անմիջական յայտարարութիւնից, լրագրի (որ կ'ունենան շուտով), մէջ գրելուց եւ տալու են թուղթ այն մարդու ձեռը, որ պէտք է գնայ .....(5)։

Մանրամասնութիւնները թողնում եմ։ Կասկած չկայ այժմ, որ դոքա սաստիկ ցանկութիւն ունին մի գործ կատարելու։ Միեւնոյն ժամանակ պարզ է, որ յեղափոխական պատրաստ տարրեր չունին. այդ է պատճառը, որ չեն վստահանում հասարակ զէնքերով ասպարէզ գալ, յարձակումներ գործել, այլ դիմում են մի զէնքի, որ իրենց երեւակայութեան մէջ գերբնական ոյժ են համարում։ Եւ այդ գերբնական ոյժն է, որ նրանց առաջ է քաշում։ Մենք կարծում ենք, որ այժմ մենք առանց տատանւելու կարող ենք դրանց պահանջը կատարել։ Թող մինչեւ իսկ չյաջողի, սպանել չկարողանան, թող ռումբը միայն պայթի տաճկի ձեռքում, թող միայն բռնւի մինչեւ իսկ, դարձեալ դա ահագին նշանակութիւն կ'ունենայ։ Մինչեւ այժմ եթէ մենք ձգձգում էինք, դրա պատճառն այն էր, որ համոզւենք դրանց ցանկութեան հաստատութեան մէջ։ Այդ կասկածը այժմ վերացած կարելի է համարել։ Պէտք է տալ այժմ մանաւանդ նրա համար, որ դոքա սկսել են կասկածանքով վերաբերւել դէպի մեզ, կարծելով, թէ մենք բնաւ միտք չունենք երբեք դրանց բան տալու։ Յայտնեցինք իրենց, որ նորից կը գրենք մեր Պոլսոյ ընկերներին, եւ կը սպասենք նրանց պատասխանին, որ կստացւի 10 օրից յետոյ։ Այժմ լաւ մտածէք եւ շուտով պատասխանէք։ Քանի այդ տրամադրութիւնը կայ, պէտք է օգտւել, պահպանել, որպէսզի հաստատւեն եւ ոյժ, նշանակութիւն ձեռք բերեն, թէ չէ կարող են թուլանալ, յոյսը մեզանից կտրելով։ Ի միջի այլոց նրանք շատ են ցանկանում անպատճառ Պոլսում ստանալ եւ բոլորովին պատրաստ, ապա թէ ոչ՝ Աթէնքում։ Իրենց յայտնեցինք, որ մեզ համար աւելի դիւրին է Բոլղարիայում յանձնել։ Եթէ համաձայնւէք Պոլսում յանձնել, այն ժամանակ թող գրեն մերոնք, թէ ինչ միջոցներով պէտք է այդ կատարել։ Նրանք իրենց դնում են մեր բացարձակ տրամադրութեան տակ։ Մոռացայ ասել, որ նրանք ցանկանում են ոչ աւել, քան 5 հատ ընդամէնը։ Սպասում ենք ձեր նամակին։

Վարնայից գրած նամակներից երեւում է, որ կոմիտէից հեռացած, թէ հեռացրած Վահագն անունով մի գործիչ մի տեսակ սեպարիստական(6) ձգտումներ է արտայայտում։ Գրեցինք, որ այդ տեսակ խնդիրներով առհասարակ չզբաղւեն, իսկ

եթէ զբաղուելու են, ձեզ դիմեն։ Տուինք ձեր հասցէն։ Օր. Էսմերեանին դրամ տուէք։ Նեղութեան մէջ է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԴՐՕՇԱԿԻ

1.- Վահապ – ծածկանուն դաշնակցական յայտնի գործիչ Վռամեան Արշակի, որուն իսկական անունն էր Օննիկ Դերձակեան եւ որ Պուլկարիոյ մէջ կը վարէր կուսակցութեան գործերը:
2.- Հրաչ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի:
3.- Յոնան Դաւթեան:
4.- Հարցը կը վերաբերի Եւրոպա ապաստանած թուրք ընդդիմադիր տարրերու, որոնք կը դիմէին Հ. Յ. Դաշնակցութեան զինական աջակցութեան՝ օգնելու համար Պոլսոյ մէջ սուլթանական պաշտօնատարներու դէմ ահաբեկչական եւ խափանարարական արարքներ գործելու իրենց ծրագիրներուն:
5.- Անընթեռնելի երկու բառ:
6.- Անջատողական:

16

Պատճէններու մատեան No 82, *էջ* 14-15

Յարգելի ընկեր, (*Նանսի*)(1)

Ուղարկում ենք Իւսուֆեանի նամակը։

Զգիտեմ, Հրաչը(2) *գրել է ձեզ թէ ոչ հետեւեալ հասցէն, որ արտագրում եմ բառ առ բառ.—*

Pervoi Vahani, dom Bourhajov Peharni
Pour Monsieur Lifi Nilolaeff
Russie

Առաջ էլ գրած է Nikolaeff-*ի համար մի հասցէ. փոփոխակի պէտք է ուղարկել կամ սրանով կամ նրանով։*

Ձեր ձեռնարկութեան մասին լաւ մտածէք. իրագործելը դժւար չէ. դրա մասին արդէն ձեզ գրւած է քիչ առաջ։ Հիմա մի բան կ՚ուզենք աւելացնել՝ հարկաւոր է լուրջ պատրաստականութիւն այդ տեսակ ձեռնարկութիւն գլուխ բերելու համար։ Իսկ որքան մեզ յայտնի է, ձեզանից ոչ ոք յատկապէս հասարակական գիտութիւններով չի զբաղուել։ Այդպիսի դէպքում դուք շատ դժւարութիւններ կը կրէք ընտրողութեան մէջ։ Ինչ որ է, լաւ բան է, չպէտք է թողնել այդ միտքը։

Հրաչը գնաց։ Սահմանագլխից դեռ լուր չունինք։ Վաղը միւս օրը գուցէ ունենանք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

8-*ին յունուարի* 97 *թ.*
Ժընեւ

1.- Նանսիի ընկերը՝ Միսակ Բաղդասարեանն է, ուսանող:
2.- Հրաչ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի (1871-1915):

17

Պատճէններու մատեան No 82, *էջ* 16

George Roopen
822 Park ave.
Worcester, Mass. U.S.A.

Յարգելի Պարոն,

Ձեր գրած խնդիրների մասին, ինչպէս նաեւ թերթերի, բրոշիւրների, ծրագրի, խնդրենք դիմել մեր ներկայացուցչին, որ ծանօթ է Ձեզ։
Ահա նրա հասցէն՝
G. Vahanian(1)
520 P. O. Box
Lowell, Mass.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

8-*ին յունու*[*արի*] 1897 *թ.*

1.- Վահանեան – ծածկանուններէն մէկը Յովհաննէս Իւսուֆեանի (1850-1920):

18

Պատճէններու մատեան No 82, *էջ* 17-18

Յարգելի ընկեր Եդուարդ(1), (*Սոֆիա*)

Նոր Հնչակ ստանալու համար դիմեցէք ուղղակի իրենց հասցէով. անպատճառ կ՚ուղարկեն։ Իսկ մեր հրատարակութիւններից եղածները կ՚ուղարկենք։
Այսուհետեւ Իզմիր գնալու անցաթուղթի մասին դիմեցէք հետեւեալ հասցէով՝

Monsieur A. Erganian
Kutchuk Bezestene, *յանձնել Վ.-ին*
Philippoli (Bulgarie)

Մեր ընկեր Վարազ-Վահանը(2) *ամէն տնօրինութիւն կ՚անի։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

9-*ին յունուարի* 1897 *թ.*
Ժընեւ

1.- Եդուարդ կամ Էդուարդ – ծածկանուն Պոյաճեան Սմբատի:
2.- Վարազ-Վահան – հին ծածկանուններէն մէկը Վռամեան Արշակիի, իսկական անունով՝ Դերձակեան Օննիկ:

19

Պատճէններու մատեան No 82, *էջ* 29
(*Փաստ.* 36*բ*-19)

13 *յուն.* 1897 *թ.*
Ժընեւ

(*Աղեքսանդրիա*)

Յարգելի ընկերներ,

Գուցէ Աղեքսանդրիա գայ մեր վստահելի ընկերներից մէկը։ Նրան գտնելու համար դիմեցէք «Կարապետ Էլէքճեան» անուն ոսկերչին։ Կրկնում ենք, նրան կարելի է վստահել ամէն կերպ։ Երիտասարդի անունը Արսէն է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Ներփակեալ նամակս խնդրենք յանձնել իրեն։
Նաւի վրայ արդեօք մարդ գտա՞ք Իզմիրի հետ հաղորդակցութիւնը դիւրացնելու համար։

ՆՈՅՆ

20

Պատճէններու մատեան No 82, *էջ* 21-22

Օր. Իւստիւկին, Վառնա

Յարգելի օրիորդ,

Ստացանք ձեր նամակը։
Ցաւում ենք, որ երկպառակութիւններ են ծագել տեղւոյդ կազմակերպութեան մէջ։ Դրա մասին իրենք էլ էին հաղորդել։ Ձեր բռնած դիրքը շատ լաւ է։ Ամսականն ուղղակի այստեղից ստանալը ունի իր անյարմարութիւնները. խնդրենք այդ հարցի մասին դիմել մեր ընկերոջ՝ Վարազ-Վահանին. ահա նրա հասցէն՝
A. Erganian, Kutchuk Bezestene, Philippopoli, *յանձնել Վ.-ին։*
Խնդրենք հաղորդել Օր. Էսմերեանին մեր բարեւները եւ յայտնել իրեն, որ խառնաշփոթութիւն առաջ չբերելու համար մեր հաշիւների մէջ, աւելի լաւ է իր հանգանակած գումարը հրատարակութեան տալ կոմիտէի ընդհանուր հաշւին հետ միասին։
Պ. Վարազ-Վահանին գրւած է օրիորդի մասին. թող միամիտ լինի։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

11-*ին յունու*[*արի*] 97 *թ.*
Ժընեւ

21

Պատճէններու մատեան No 82, *էջ* 23-24

Dalan et Cie à Londre

Messieurs,

Nous continuerons de Vous envoyer les No No de notre journal.

Quant au prix, nous le répétons encore une fois, cela dépend de la bonne volonté de chacun. Nous ne pouvons rien fixer.

On vous enverra également "L'Esprit révolutionnaire" avec les autres brochures, publiés par notre organisation.

Les proclamations de nos comités en Turquie sont très rares en ce moment. Les plus importantes de celles-ci sont reproduites dans les No No de notre journal.

Agréez nos salutations distinguées.

RÉDACTION DE "DROSCHAK"

11e Janv. 1897
Genève

Թարգմանութիւնը.—

Dalan *եւ ընկ.*, *Լոնդոն*,

Պարոններ,

Պիտի շարունակենք Ձեզի ուղարկել մեր թերթին համարները։

Ինչ կը վերաբերի արժեքինին, այդ մէկը կախում ունի իւրաքանչիւրի բարի կամեցողութենէն։ Ոչինչ կրնանք ճշդել։

Ձեզի պիտի ղրկենք նոյնպէս "L'Esprit révolutionnaire"*-ը, միւս բրոշիւրներով, որոնք կը հրատարակուին մեր կազմակերպութեան կողմէ։*

Թուրքիոյ մեր կոմիտէներուն յայտարարագրերը շատ հազուագիւտ են այս պահուն։ Անոնցմէ ամէնէն կարեւորները հրատարակուած են մեր թերթի համարներուն մէջ։

Ընդունեցէք մեր յարգալից բարեւները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

11-*ին յունուար* 1897
Ժընեւ

22

Պատճէններու մատեան No 82, *էջ* 25-26

Վարագ-Վահանին, ի Ֆիլիպպոպոլ

Յարգելի ընկեր,

Երէկ տաճիկներից երկուսը նորից եկան. մէկը, Շէֆիկ բէյը (Աքիայից փախածը Տօնապետեանի հետ) գնում էր Պարիզ, այնտեղ կոմիտէ կազմելու։ Մի առանձին խօսակցութիւն չեղաւ. եկել էր «մնաս բարեաւ» ասելու։

Հրաչին ասէք Արվախի(1) *անցագիրն անմիջապէս ուղարկի։ Թիֆլիզից հեռագրով խնդրել են ժողովին ներկայանալ. Արվախը գնում է։*

Stepan Taslarian (peintre, Café Zeitoun) *անունով մէկ[ը] թնդանօթ տեղափոխելու (մաս-մաս) եւ «թորփիլով» նաւեր խորտակելու ծրագիրներ է ուղակել այստեղ։ Տեսէք թէ ինչ մարդ է։*

Բուրգասից(2) *խնդրում են, որ մեր ընկերներից մէկը, մի լուրջ մարդ, գայ բանակցելու Տատեան*(3) *եղբայրների հետ կամ թղթակցի նրանց հետ. իսկ թէ ինչու համար, յայտնի չէ։ Փորձեցէք։*

Վարնայի կոմիտէից դժգոհ Վահագնը, կարծենք, խելօք չի մնում։ Զանազան տեսակ նամակներ են գալիս։ Պէտք է շուտ առաջն առնել, թէ չէ յիմար բան դուրս կը գայ։ Տւել ենք ձեր հասցէն, որ ձեզ դիմեն։ Ի միջի այլոց օր. Իւստիւկը ցանկանում է ուղղակի խմբագրութիւնից ստանալ իր ամսականը։

Կահիրէ այժմ կայ Խոսրով Զոպանեան անունով մի երիտասարդ։ Նրա մասին տեղեկութիւն են ուզում։ Պոլիս եղել է «արիասէր» խմբի ներկայացուցիչը։ Եթէ դուք գիտէք, գրեցէք, թէ չէ հարցրէք Պոլիս։ Նոյն տեղը կան 2-3 տերրօրիստներ մեր տրամադրութեան տակ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

12-*ին յունու*[*ար*] 97 *թ.*

1.- Արվախի – ծածկանուն Յակոբ Վարդ-Պատրիկեանի: Հրաչը՝ Թիրեաքեան Հայկն է:
2.- Բուրգաս – քաղաք Պուլկարիոյ մէջ:
3.- Արքին փաշա Տատեանի որդին եւ եղբօրորդին:

23

Պատճէններու մատեան No 82, *էջ* 27-28

Յարգելի ընկեր Զարիֆեան(1), *Լոնդոն*

Շատ ուրախ ենք տղայոց հասնելուն մասին։ Ամերիկայի մեր ներկայացուցիչը անսպասելի կերպով է իմանում տղայոց Լոնդոն մեկնելու մասին(2), *այն էլ ուրիշ շոգենաւով, ուրիշ ընկերութեան միջոցով։ Այս հանգամանքը նրան շատ կասկածելի է թուել. ահա թէ ինչու ինչ որ դաւեր է ենթադրել։ Բայց եւ այնպէս՝ մեզ համար մի հանելուկ է մնում. ի՞նչ միջոցներով են տղայքը Լոնդոն հասել եւ կամ ինչպէս է Զարեհը մնացել։ Ներկայացուցչի կարգադրութեամբ տղայքը Միացեալ Նահանգները պէտք է մտնէին երկրորդ կարգով, որպէսզի ազատ մուտք ունենան — բայց յանկարծ հեռագիր է ստանում այն ընկերութեան գործակալից, որի հետ պայմանաւորուած է եղել, թէ տղայքը, բացի Զարեհից, ուրիշ ընկերութեան միջոցով Լոնդոն են մեկնել։*

Զէք գրում, հեռագրեցիք արդեօք իսկոյն մեր ներկայացուցչին, ինչպէս խնդրել էինք, թէ ոչ։ Հեռագիրն անհրաժեշտ էր, մանաւանդ հանգանակած 6-7000 *ֆր*[*ը*] *ստանալու համար։*

Ամերիկա գնալը մեր կարծիքով բոլորովին անհրաժեշտութիւն չէ. չարժէ դրամ մսխել եւ այնտեղ ուղարկել։ Մեր կարծիքով հարկաւոր է դրանց առժամանակ այդտեղ պահել։ Աւելի մօտ են։

Ի՞նչ միջոցներով պիտի ապրին նոքա այդտեղ։ Ո՞վ է խնամելու դրանց ծախքը։

Ձեր պահանջած No 22-*ը*(3) *կ՚ուղարկենք։*

Թէեւ յոյս չունինք, որ բոլոր համարներից կարելի լինի 10-10 *հատ ուղարկել, կ՚աշխատենք։*

Վերջին No-*ից արդէն ուղարկուել է։*

Վերջին ժամանակներս մենք չարունակ հին Հնչակ ենք ստանում։ Ո՞վ է դրա ուղարկողը. չէի՞ք կարող իմանալ։

Տղայոց մասին կը գրենք, ուր հարկն է։ Բարեւներ իրենց։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

12-*ին Յունուար*[*ար*] 1897
Ժընեւ

1.- Զարիֆեան – ծածկանուն Յովհաննէս (Ժան) Լոռու-Մելիքեանի:

2.- Հարցը կը վերաբերի Պանք Օթոմանի գրաւման մասնակից տղոց, որոնք կը կարծուէր թէ նաւով կ՚ուղարկուէին Միացեալ Նահանգներ, մինչ անոնք ղրկուած են Լոնտոն:

3.- Հարցը կը վերաբերի «Դրօշակ»ի համարին:

24

Պատճէններու մատեան No 82, *էջ* 30

13-*ին Յունու*[*ար*] 1897

Վարագ-Վահանին

Յարգելի ընկեր,

Դարձեալ գանգատներ։ Այս անգամ էլ գանգատողը «բիճ Լեւոնն» է, որի հետաքրքիր նամակը (Գարօին գրած)(1) *ներփակեալ ուղարկում ենք։ Կարծենք, աւելի լաւ կը լինի Վահագնին գործով մի ուրիշ քաղաք ուղարկել, իսկ Վարնայի կոմիտէն մի ուրիշին ընտրի արտաքին յարաբերութեանց համար եւ ոչ Կոզմային, որի դէմ են մասնաւորապէս բոլոր գանգատները։*

Տրապիզոնի ընկերներն ազատ Իզմիր են գտնւում։ Մ.ը ցանկանում է Պոլիս մեկնիլ խորհրդակցելու համար եւ գրում է մեզ, որ յանձնարարենք։ Եգիպտացին(2) *պէտք է դրան շատ լաւ ճանաչի. այլեւս ի՞նչ յանձնարարութիւն։ Յամենայն դէպս գրեցէք Եգիպտացուն։ Միւսը (կարծենք Վրէն)*(3) *ցանկանում է մի առժամանակ Ալէքսանդրիա գալ։ Այստեղից գրւած է, որ մէկն ու մէկը մնայ Իզմիր։ Հազիւ հազ են ընկել, էլ ո՛ւր են գնում դէս ու դէն։ Ի՞նչ եղան* proclamation-*ները. գրւեցա՞ն. խնդրենք չուտով գրել։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Երկրորդն էլ են հրատարակել։ Բայց դեռ առաջինի գրելու լուրը չստացած, երկրորդին ձեռք չենք տալ։

ՆՈՅՆ

1.- Խօսքը՝ Օսմանեան դրամատան գրաման ղեկավարներէն Արմէն Գարոյի մասին է, բուն անունով Գարեգին Փաստրմաճեան։ Վարազ-Վահանը, ինչպէս գիտենք, ծածկանունն է Արշակ Վռամեանի։

2.- Եգիպտացի – ծածկանուն Մինասեան-Դեւեան Արտաշէսի։

3.- Վրէն Գասպարեան (1870-1915), Տրապիզոնի պատասխանատու ընկերներէն։

25

Պատճէններու մասեան No 82, *էջ* 31

15 Janv. 1897, Genève

Messieurs,

Nous nous empressons de vous envoyer la proclamation que nous venons de recevoir de Constantinople. C'est la première proclamation, publiée par le "Parti Révolutionnaire Ottoman" récemment organisé.

Agréez, Messieurs, nos considérations distinguées.

LA REDACTION

Թարգմանութիւնը.—

Ծանօթ Խմբ.– գրութեան վերեւ Ռոստոմ մատիտով նշած է Unabbaenglief Polit. corresp. ապա աւելցուցած՝ տպագրուեցաւ Neue Frei Presse-ի մէջ:

15 *Յունուար* 1897, *Ժընեւ*

Պարոններ,

Կը փութանք Ձեզի ուղարկելու Յայտարարութիւնը, զոր նոր ստացանք Կոստանդնուպոլիսէն։ Ասիկա առաջին յայտարարութիւնն է՝ հրատարակուած վերջերս կազմուած «Օտտոմանեան Յեղափոխական կուսակցութեան» կողմէ։

Ընդունեցէք, պարոններ, մեր յարգալից բարեւները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

26

Պատճէններու մատեան No 82, *էջ* 35-36

17 *Յունու*[*ար*] 1897 *թ.*

Յարգելի ընկեր Զարիֆեան (Լոնդոն)

Շտապում ենք պատասխանել Ձեր վերջին նամակին։

Մենք էլ ենք զարմացած մնացել։ Վաղուց էր մեր ներկայացուցիչը գրում, թէ ահագին քանակութեամբ դրամ է հանգանակուած (6.000– 7.000 *ֆր.*) *լսելով տղերանց գալու լուրը։ Հեռագրեցինք, որ հանգանակուած դրամից չուտով փոխադրեն։ Պատասխան եկաւ, թէ մինչեւ տղայոց գալու լուրը չառնեն, տեղացիք ոչ մի սէնթ չեն տալ։ Տղայոց գալու լուրն էլ առին, սակայն դարձեալ բան չկայ։ Ենթադրում ենք, որ տեղացիք իմացել են մէկի միջոցով, որ տղայոց դրութիւնը արդէն ապահով է, ուստի աւելորդ են համարում դրամ հասցնել։*

Տղայոց դրութիւնը աւելի լաւ չէր կարող կարգադրուիլ, մանաւանդ որ երբ հարկ լինի, կարող են ձրիապէս էլ Ամերիկա մեկնիլ։ Իրենց ուզածն էլ այդ կը լինի։

Ցաւում ենք միայն, որ չենք կարող քեզ դրամ փոխադրել, որպէսզի տղայքը գրպանի ծախք ունենային։ Եթէ հնարաւոր լինի, կը խօսինք։

Այնտեղ կոմիտէ կազմելիս ի նկատի ունեցէք, որ Լոնդոնից հարկաւոր է լինում Տաճկաստան թերթ ուղարկել։ Եթէ կոմիտէին չկարողանաք վստահանալ, գոնէ մի գաղտնապահ մարդ գտէք, որին կարելի լինի յանձնարարութիւններ անել։

Նազարբէկի բռնած ներկայ դիրքը մեզ զարմացնում է։ «Նազարբէկ» եւ «միութիւն» խօսքերը բնաւ իրար չեն համապատասխանում։ Դժբախտաբար դուք չէք գրած, թէ նա ինչ էր խօսում «միութեան» մասին։ Ինչ որ էլ լինի, դա շատ բնորոշ փաստ է «ժամանակին» համար։

Սակայն դուք ոչինչ չէք գրում, թէ ինչ արդիւնք ունեցաւ Ձեր աշխատանքը՝ անգլիացիներից հանգանակութիւն անել։

Ինչպէս երեւում է, վերջին նամակը գրելիս, դուք ստացած չէք եղել carte-postale-*ից յետոյ գրած մի նամակս։*

Բարեւներ մեր նորակազմ կոմիտէին։
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

27

Պատճէններու մատեան No 82, *էջ* 37

Monsieur Zarifian
1Claude Bernard. 1
Paris

Յարգելի ընկեր,

Մոռացած էիք գրել տղայոց հասցէն։ Այժմ դրամ կարելի է ուղարկել. յայտնի չէ թէ որտեղից քեզ դրամ եկաւ։ Յայտնէք որոշ հասցէն (անունը եւ մականունը պարզ) որպէսզի անմիջապէս փոխադրենք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

20 *Յունու*[*ար*] 97 *թ.*

28

Պատճէններու մատեան No 82, *էջ* 37

Monsieur Tchobanian
Rue…
Caire (Egypte)

Ձեր մասին գրուած է մեր ընկերներին. նրանց տուել ենք Ձեր հասցէն։
Աշխատեցէք միացեալ ուժերով առաջ բերել կազմակերպութիւններ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

20-*ին Յունու*[*ար*] 1897 *թ.*

29

Պատճէններու մատեան No 82, *էջ* 38

Monsieur Léon Sarkissian
Philippopoli (Bulgarie)

Խնդրենք յայտնել Ձեր իսկական հասցէն, որպէս զի մեր ընկերները կարողանան Ձեզ գտնել եւ խօսել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

20-*ին Յունուար* 1897 *թ.*
Ժընեւ

30

Պատճէններու մատեան No 82, *էջ* 38

Monsieur le Docteur Zarifian
23 Southhampton St. 23, Fitzray Square
W. London

Մի նամակ գրեցի Պարիզ, ենթադրելով, որ կարող էք Պարիզ վերադարձած լինել։ Գրում եմ յամենայն դէպս Լոնդոն էլ։ Շուտով յայտնէք տղայոց պարզ, որոշ հասցէն (անունով ու մականունով), որպէսզի անմիջապէս փող փոխադրենք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

20-*ին Յունուար* 97 *թ.*

31

Պատճէններու մատեան No 82, *էջ* 39

(*Փաստ*. 35-58)

Իսլիմայի «Օժանդակ» ընկերութեան

Յարգելի ընկերներ,

Ձեր ուղարկած դրամը չնորհակալութեամբ ստացանք։ Ներկայ համարում հրատարակւած կը տեսնէք այդ գումարը։

Ձեր յիշած երիտասարդը մեզ անծանօթ է. մենք չենք կարող իմանալ, ճանաչել մեր կազմակերպութեան բոլոր անդամներին։ Իսկ եթէ շատ անհրաժեշտ է այդ անձնաւորութեան մասին ստոյգ տեղեկութիւնները, այն ժամանակ կարող ենք հաւաքել։

Նոր Հնչակեան(1) *վարչութիւնը դիմել էր մեզ միութեան կամ համերաշխ գործունէութեան խնդրի վերաբերմամբ։ Դաշնակցութիւնը միշտ իր գոյութեան հէնց առաջին օրից պատրաստ գտնւելով գործել եւ այն անկեղծ գործիչների հետ, որոնք տարբեր կուսակցութիւնների են պատկանում, այս անգամ էլ սիրով կ՚ընդունի նոր հնչակեանների առաջարկութիւնը, եթէ միայն այդ կուսակցութեան կողմից որոշ խոչընդոտները վերանան։*

Այս հարցի առթիւ մանրամասը կը հրապարակւի իր ժամանակին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

20-*ին յունւ*[*ար*] 1897 *թ*.
Ժընեւ

1.- Խօսքը կը վերաբերի Վերակազմեալ հնչակեաններուն։

32

Պատճէններու մատեան No 82, *էջ* 41

(*Բրաիլա*)
Արժանապատիւ Տէր հայր

Այսօր ստացանք Բրայիլայից Դրօշակի մի համար. կնքւած պ. Պրուսալեանի կնիքով. այդ առթիւ ուղարկողը՝ պ. Համբարձում Պետրոսեանը խիստ բողոքում է եւ սպառնում Դրօշակն այժմս չընդունիլ, եթէ այդպէս կնքւած միշտ լինի։

Ցաւում ենք, որ այսպիսի մի չնչին հարց նամակագրութեան նիւթ է դառնում։

Առաջինը մենք չենք հասկանում թէ ինչ հարց կայ համարները անպատճառ կընքելուն եւ այն էլ անձնական կնիքով։ Դա միայն կարող է դժգոհութիւնների առիթ լինել, ուրիշ ոչինչ։

Երկրորդ չենք հասկանում, թէ ինչպէս այդ չնչին փաստը՝ համարը կնքելը, կարող է այնպէս ազդել պ. Պետրոսեանի վրայ, որ նա հրաժարւի համարն ընդունելուց։

Խնդրենք յայտնել երկու պարոններին էլ, որ այդպիսի չնչին խնդիրներով աշխատին մեզ չզբաղեցնել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

20-*ին Յունու*[*ար*] 1897 *թ.*

33

Պատճէններու մատեան No 82, *էջ* 42

[*Ատրպատականի Կ. Կ.ին*] *Դաւրիզ*

Սիրելիք,

Կարծեմ ուղարկւած է դքթ. Փաշայեանի վէպը։ Եթէ ուղարկւած չլինի, վաղը կ'ուղարկւի։ Յայտնէք իրեն մեր կողմից մեր ցաւակցութիւնը, որ վէպը չենք կարող ոչ թէ 6 *ամսից, այլ մի տարուց յետոյ էլ տպագրել։ Հազիւ հազ ենք կարողանում համարը եւ աւելի անհրաժեշտ պրոշիւրները հասցնել։ Այնպէս որ, աւելի շուտ կարող է լոյս տեսնել տեղւոյդ տպարանում։*

Մէկ բան էլ. գրւածը անմշակ է. դա միայն նիւթ է եւ շատ հարուստ նիւթ կարող է լինել վէպի համար։ Թող կամ ինքը մշակի, կամ տայ մի ուրիշին մշակելու։

Ներփակ նամակս կը յանձնէք Բուլգարացուն եւ կ'ասէք, որ պատասխանը շուտով գրի։

Առայժմ այս է միտս։ Բարեւներս եւ համբոյրներս։

Յոնանից դեռ լուր չկայ, ապահով տեղ է հասել, թէ ոչ։ Այսօր գնում են Վարդը եւ Լեւոնը։ Հրաչը 5 *շաբաթ առաջ է մեկնել։*

Ձեր ՌՈՍՏՈՄ

[20 *Յունւար* 1897]

34

Պատճէններու մատեան No 82, *էջ* 43

20-*ին Յունու*[*ար*] 1897 *թ.*, *Ժընեւ*

Ֆօլ. Ռիվըրի կոմիտէին

Յարգելի ընկերներ,

Որպէսզի դժգոհութեան առիթ չլինի, մենք կ'աւելացնենք Դրօշակի ձեզ ուղարկելիք համարների թիւը։

Եթէ ցանկանում էք օգտւել հերոսների պատկերներից, կարող էք վերցնել Դրօշակի համարներից։ Բաբկէնի պատկերը պէտք է նորոգւի. նոր լուսանկար է

գտնուած։ Այդ պատկերը, ինչպէս նաեւ Պետօ-ինը առանձին թերթի վրայ էլ կը պատրաստուի։

«Դրօշակի» ամբողջ թուերը չկան. կարելի է ուղարկել միայն 95 եւ 96 թ. համարները։ (Կը պատրաստենք հաւաքածոներ եւ ձեզ էլ կ՚ուղարկենք)։ Յուսով ենք, 96 թ. համարները արդէն պահած կը լինէք։

Պաշտօնական թղթեր եւս կ՚ուղարկուեն։

Պ. Սուրէնին կարելի է դիմել խմբագրութեանս հասցէով։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

35

Պատճէններու մատեան No 82, էջ 44-51

21-ին Յունու[ար] 1897 թ., Ժընեւ

Ֆիլիպպոպոլ
Յարգելի ընկերներ,

Նախ մեր ստացած մի քանի նամակների մասին։

Օր. Իսկուհին Վարնայից յայտնում է, թէ հող կայ խմբեր կազմելու եւ հանգանակութիւններ սկսելու. ինչ որ թղթեր է ուզում, որ երեւի Պոլիս է տեսել։ Ինչ հարկաւորն է, դուք ուղարկեցէք։

Léon Sarkissian անունով մի երիտասարդ ձեր քաղաքից (poste restante) ցանկանում է մտնել կազմակերպութեան մէջ։ Իրեն գրուած է որ իսկական հասցէն ուղարկի. գուցէ դուք նրան գտնէք առանց այն էլ։

Այժմ պարզ է կատարելապէս, որ Վարնայում անիշխանութիւն է տիրում։ Գաբրիէլ Քաջունի անունով մէկը, որ իր գրելով կոմիտեի անդամ է եղել, անհրաժեշտ է համարում անպատճառ Արվախի(1) կամ մի ուրիշի գալը։ Մենք արդէն յայտնել ենք, որ մեր ընկերներից մէկը չուտով գալու է։ Վահապը(2) լաւ կանի, եթէ մինչեւ գնալը նամակներով յուզած մտքերը խաղաղացնի։ Այսքան նամակներ են թափւում, դարձեալ անհասկանալի է մնում, թէ իսկապէս այդ Կոզման ինչով է մեղաւոր։ Կարծենք, ամէն ինչ բղխում է դրամի պակասութիւնից եւ պարապ մարդկանց կուտակուելուց։

Վարնայից Զատիկ Սրապեան անունով մէկը խնդրում է բանկ մտնող հերոսների ողջ թէ ողջ մնացածների եւ թէ մեռածների ցուցակը։ Այդ ցուցակը Հրաչի(3) մօտն է. չենք հասկանում, ինչ է մտածել, որ վերցրել է հետը տարել։ Թող անպատճառ գրի մեզ եւ եթէ հարկաւոր է՝ Վարնա եւս։ Սրապեանի հասցէն՝ Ճաշարան Արագած, Մուսուլլա թիւ 882։

Վարդը եւ Լեւոնը այս գիշեր ճանապարհ ընկան։ Հրաչի անունով բաւական նամակներ էին ստացել որ Լեւոնից կստանայ։ Հիմա զգո՞ւմ է արդեօք Հրաչը, թէ ինչ անյարմարութիւններ ունի մասնաւոր նամակագրութիւնը ընդհանուր խնդիրների վերաբերմամբ։

Հրաչը գրում է, թէ Եդւարդը(4) գերադասում է ներքին գաւառներում գործել։ Մեր ամենամեծ սխալը մինչեւ այժմ կայացել է մեր ուժերի ցիր ու ցան լինելու մէջ։ Այժմ եթէ նորից ցիր ու ցան լինենք, կարեւոր ուժերից մի քանիսը ուղարկենք ներքին գաւառները, միւսներին «դրսի», մի քանի նապաստակների ետեւից կ՚ընկնենք,

ոչ մէկին չենք կարող բռնել։

Առայժմ մեր նիւթական միջոցները չեն ներում մեզ շատ տեղեր կենտրոնացնել մեր ուժերը։ Եղւարդը լաւ կանի, եթէ դարձեալ Զմիւռնայի համար պատրաստուի։ Ծերուկների[?] *վրայ յոյս դնել չի կարելի։ Տրապիզոնցիները Վահէի գրելով արդէն Եգիպտոս են անցել. մենք դեռ նամակ չունինք։ Իրենց մասին գրւած է Աղէքսանդրիա։*

900 fr. *կարող էք չուղարկել. շնորհակալ ենք Հրաչի հոգատարութեան համար։ Այժմ մենք քիչ ունինք։*

5.000 *ոսկին բարով տեսնէք։ Զուր տեղից ծախքի տակ ընկանք վաւերաթղթի համար։*

Տաճիկների վերաբերմամբ, կարծում ենք, մենք չպէտք է ղեկավարւենք նրանց գաղտնի «ցանկութիւններով»։ Մեզ ինչ, թէ Շէֆիզ բէյը ինչ է մտածում անել։ Մենք ինքներս ինչ ե՛նք կարծում. լաւ կը լինի՞,— պէտք է անել։ Եթէ ոչ՝ պէտք է մերժել։ Նրանք իրենց հաշիւներն ունին, մենք մերը կունենանք։

Վահապի յուն. 3 *եւ* 4 *նամակներն ստացւած են։ Թէ ինչպէս կարելի է Պոլսոյ մէջ ռումբեր յանձնել, դրա մասին դեռ հարկաւոր խօսակցութիւն տեղի չէ ունեցել, քանի որ յայտնի չէ եղել՝ կը յանձնւի իրենց թէ ոչ»։ Եթէ Պոլսից բաւարար պատասխան ստանանք, այն ժամանակ մենք կարող ենք օրինակ այս ձեւով յանձնել։ Թող իրենք տան մի հասցէ կամ եւրոպական, կամ հայկական թաղերում, յամենայն դէպս ո՛չ տաճկական։ Թող որոնեն մի այնպիսի մարդ, որ իր դիրքով քիչ թէ շատ վստահելի լինի։ Մեր մարդը կը տանի, կը յանձնի եւ ցոյց կը տայ գործածելու ձեւը։ Երբ մենք անվստահութեան խնդիր էինք առաջ բերում, նրանք մեզ դիւրութիւններ տալու համար առաջարկում էին տանիլ դնել մի խարաբա տեղ եւ հեռանալ։ Իրենց մարդիկը կը գան յետոյ եւ կը վերցնեն։ Իրենց առարկեցինք որ բացատրութիւն անպատճառ հարկաւոր է, թէ չէ վերցնողը չի կարող իմանալ պահելու ու գործածելու ձեւը, կապսիւլի դնելը, հանելը եւ այլն։ Այս պատճառաւ մենք պնդում էինք, թէ յամենայն դէպս մեզ ձեռնտու է յանձնել Պոլսից դուրս, Բոլգարիայում, ուր դրութիւնը այնքան էլ վտանգաւոր չէ, ուր աւելի մեծ վստահութեամբ կարելի է գործ ունենալ անծանօթ մարդկանց հետ։ Նրանց տրամադրութիւնից երեւում է, որ համաձայն են Բոլգարիայում էլ ստանալ։ Միայն չգիտենք, կարող են արդեօք տեղափոխել։ Պէտք է նկատել, որ դրանք,— ինչպէս նշանները ցոյց են տալիս,— դեռ կազմակերպութիւն չունին. դուցէ կան մի քանի անհատներ, որոնց միջոցով ցանկանում են գործ տեսնել։ Միայն մի համարձակ քայլից յետոյ, մի ռումբ պայթելուց յետոյ, կարող է ցնցում առաջ գայ եւ քիչ թէ շատ լուրջ կազմակերպութիւն ծագի։ Այժմ պէտք է աշխատել այդ ցնցումն առաջ բերել։*

Յանձնելու պայմանները դրանք ամբողջովին մեզ են թողնում։ Թող մտածեն Պոլսում, եթէ միայն համաձայն են, դուք էլ մտածէք, մի նպատակայարմար միջոց գտէք, որպէս զի հաղորդենք իրենց։

Պոլիս ուղարկւած յայտարարութիւնները յետ ստացւեցան Janice[?] *հասցէով։ Հրաչին ասացի, որ Մարտիրոսեանի հասցէով եւս ուղարկի, չը գիտենք, ուղարկւած է, թէ ոչ։ Բայց տաճիկներին հասկացնելու համար յայտնեցի, որ միւս մասը ստացւած է, թէեւ հաստատ չգիտէի։ Տեղւոյդ տաճիկների եւ հիւպատոսի տարածած լուրերը հաղորդեցի. խոստացան իսկոյն աշխատել միջոցներ ձեռք առնել. միայն տաճկական լրագիրները՝ Մեշւ*[երէթ]*, Հուրիէթ ... եւ այլն չեն կարող հերքել այդ լուրերը, որովհետեւ իրենք էլ չգիտեն դեռ եւս պրօկլամ*[ասիոնի]* մասին. Պոլսից պէտք է ուղարկւէր դրանց հասցէին մի մի օրինակ, բայց չի ուղարկւած։ Գրէք, որ անպատճառ դրանց հասցէին ուղարկւեն։ Ի միջի այլոց, Պոլիս ուղարկւելիք բան շատ*

կայ։ Եթէ յաճախ յաճախ ուղարկենք, դա առանձին ուշադրութիւն չի՞ գրաւիլ արդեօք։ Խնդրենք պատասխանել շուտով։ Պրոկլամասիոնն տպագրուած է արդէն Դրօշակում։ Ուղարկուած է նոյնպէս Վիէննայի մի agence-ին՝ տարածելու համար։

Շահպազի(5) խնդրի մասին հարցրէք Հրաչից. նա է մեզ ծանօթացրել դրա հետ եւ զանազան կարգադրութիւններ արել։

Բաբկէնի ուղարկած նոր լուսանկարը(6) պատրաստել կը տանք մեծ դիրքով եւ կը բաժանէք առանձին, հաստ թղթի վրայ տպուած, ինչպէս նաեւ Պետոինը։

Պոլսոյ մասին բրօշիւրը դեռ չի սկսուած տպագրուել։ Զբաղած ենք առայժմ միւս բրօշիւրով։ Այդ բրօշիւրի առաջին թերթը պատրաստ է այն վաղուց։ Մոռանում եմ տպարանը գնալիս վերցնել մի թերթ ձեզ ուղարկելու համար։ Տեսէք, եթէ պակաս բաներ կան, կարող էք լրացնել։ Մի բան, որ անհրաժեշտ է մտցնել.— դա հանրային պարտուց վարչութեան մասին է։ Տաճկաստանի համար այդ բացառիկ կազմակերպութիւնը մեծ դեր է խաղում, մինչդեռ դրա մասին ոչ մի խօսք չկայ։ Այդտեղ դուք արդէն դիւրութիւն կ՚ունենաք տեղեկութիւններ հաւաքելու եւ մի ամփոփ բան կազմելու այդ վարչութեան ծագման պատմութեան, նրա կազմութեան եւ դերի մասին։

Վահապը մի քանի նկատողութիւն է անում կազմուած բրօշիւրի առթիւ։ Հարկաւ աւելի լաւ կը լինի սպասել նրա նկատողութիւններին, երբ տպագրուած թերթերն ստացուած կը լինին (երկրորդը շուտով լոյս կը տեսնի, երկուսի միասին կ՚ուղարկենք)։ Իսկ ընդհանրապէս նրա նկատողութիւններին կը պատասխանենք, թէ այդ բոլորը հարկաւոր էր անել հարցի տաք ժամանակը։ Այժմ դա կը լինի բաւականի ուշ։ «Ասողին էլ լսող պիտի». բաւական չէ, որ մենք ասենք. հարկաւոր է, որ մեզ լսելու տրամադրութիւն էլ ունենան, իսկ այդ տրամադրութեան ժամանակ մենք շատ «նշանաւոր» խնդիրներով էինք զբաղուած չնորհիւ «օգնութեան հասած» մեր ընկերներին։

«Ծրագիր» արդէն ուղարկուած է. «Կուկունեանի արշաւանքը» սպառուել է, իսկ «Ուսանողի» գրածը չարժէ մանաւանդ ներկայ պարագաներում։

Կարծենք Վահապը կարծում է, թէ բրօշիւրը նախ լոյս է տեսնում Ֆրանսերէն. այս հիման վրայ ցանկանում է թարգմանութիւնը տեսնել արեւմտեան բարբառով։ Լոյս է տեսնում նախ հայերէն, իսկ Ֆրանսերէն յետոյ պէտք է թարգմանի, գուցէ եւ որոշ փոփոխութիւններով, կրճատումներով։

Եթէ հնարաւորութիւն կայ, ի սէր Աստուծոյ, աշխատէք ուղարկել Գնունու, Միսաքեանների(7) լուսանկարները ու կենսագրութիւնները առաջիկայ համարի համար. բառիս բուն նշանակութեամբ համարի համար <u>նիւթ չկայ</u>։ Արտաշէսի լուսանկարը պատրաստել կը տանք։ Կարծում էինք, թէ կորել է։ Գրեցէք Պոլիս, որ <u>անպատճառ</u> մեզ նիւթ ուղարկեն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Նամակը բաւական երկար եղաւ. Հրաչի չնորհքը անպակաս մնայ սենեակիցս։

1.- Արվախի – ծածկանուն Յակոբ Վարդ-Պատրիկեանի:
2.- Վահապ – ծածկանուն Արշակ Վռամեանի:
3.- Հրաչ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի:
4.- Եդուարդ կամ Էդուարդ – ծածկանուն Պոյաճեան Սմբատի:
5.- Վարդան Շահպազն է, Պանք Օթոմանի գրաւման մասնակիցներէն:
6.- Իմա՝ Բաբկէն Սիւնիի լուսանկարը:
7.- Խաչիկ Գնունի, Միսաքեան Արտաշէս եւ միւս Արտաշէսը (Անդրէասեան), երեքն ալ զոհուած՝ Պանք Օթոմանի գրաւման զուգահեռ՝ 1896 թ. Օգոստոս 14–15-ին, Պոլսոյ Սամաթիա թաղամասին մէջ մղուած կռիւներու ընթացքին:

36

Պատճէններու մատեան No 82, *էջ* 52

22-ին Յունուարի 97, *Ժընեւ*

Յարգելի պարոն Մինասեան, Լոնդոն

Պ. Զարիֆեանը հաղորդել էր Ձեր հասցէն, սակայն Ձեր անունը չկար մէջը։ Իսկ դրամ ուղարկելու համար տեղւոյս փոստատունը պահանջում է բացի մականունից անունն եւս։ Խնդրենք չուտափոյթ ուղարկել մեզ Ձեր ամբողջ հասցէն, որպէսզի տղայոց համար ձեզ դրամ փոխադրենք։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

37

Պատճէններու մատեան No 82, *էջ* 53

[*Պանքայի տղոց, Լոնդոն*]

Ընկերներ,

Ձեր Յունուար 18-*ին գրած նամակն ստացուած է իր ժամանակին, որով կը հաղորդէիք ձեր դրութեան ապահովութեան մասին։ Արդէն պ. Զարիֆեանը եւս հաղորդած էր։*

Սպասում ենք պ. Մինասեանի ճիշդ հասցէին, որպէսզի ձեր մանր ծախքերու համար դրամ փոխադրենք. այդ մասին կարող էք անհոգ մնալ։

Աշխատէք միայն անգործ չմնալ եւ ձեր մէջ խառնակութիւններ չյարուցանել, որ հետեւանք է գլխաւորապէս պարապութեան։ Եղէք սիրով, ինչպէս մինչեւ այժմ էք եղել. ժամանակը կը գայ, դուք նորից ասպարէզ կը նետուիք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

22-ին Յունու[ար] 1897 *թ.*

38

Պատճէններու մատեան No 82, *էջ* 58

23-ին Յունու[ար] 1897 *թ.*, *Ժընեւ*

(Բուկարեստ)

Յարգելի պարոն Բիբերջեան,

Վաղուց է, դուք լռած էք եւ ոչինչ չէք գրում Ձեր գործունէութեան մասին։ Մեր վերջին նամակն եւս անպատասխան թողիք։

Արդ դիմում ենք վերջին անգամ ապահովագրած նամակով եւ խնդրում՝

1) *Բացատրել Ձեր լռութեան պատճառը.*

2) *Յայտնել մեզ, ցանկանում էք արդեօք շարունակել մեզ հետ յարաբերութիւնները, թէ ոչ։ Եւ եթէ ոչ, խնդրե[ն]ք անյապաղ վերադարձնել մեզ մեր ուղարկած վկայագիրը եւ նուիրատուութեան տոմսերը։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ «ԴՐՕՇԱԿԻ»

39

Պատճէններու մատեան No 82, *էջ* 59

Ռոստոմի ձեռքով, Կարապ. ստորագրութեամբ գրութիւն, ուր կը յիշուի Սեպուհի (Թիրեաքեան Հայկ) «լաւ գորգեր» ունենալուն մասին: Արդարեւ ծրագիր կար որ ան իբրեւ գորգավաճառ անցնի Իզմիր, անկէ Պոլիս: Տես այս մասին Ռոստոմի 25 Յունուարի նամակը Վռամեանին (Վարազ-Վահան):

Զմիւռնիա

Յարգելի բարեկամ,

Ստացայ այսօր Ձեր նամակը, պ. Սեպուհին կը յայտնէք, ինչ հարկաւորն է. շատ լաւ գորգեր ունի. հաւանական է, որ նա էլ ձեր պատասխանը առած լինի, որովհետեւ Վահանի քովը կը գտնուի, որի հետ նամակագրութիւն ունիք։

Շատ շնորհակալ ենք հնդկաստանցու հասցէին համար. միայն առեւտուր սկսելու համար չգիտենք, թէ ինչ ձեւով նամակ պէտք է գրել։ Որովհետեւ դուք անձնապէս լաւ կը ճանչնաք այդ անձնաւորութիւնը, անոր զարգացման աստիճանը եւ այլն... Խմբագրեցէք մօտաւորապէս անոր գրուելիք նամակի ձեւը եւ շատ շուտով մեզի ղրկեցէք։

Ձեր յիշած պարոնների հետ մեր տունը դեռ կապ չունի եւ զարմանալի էլ կը լինէր ներկայ պարագաներում, եթէ կապ ունենայինք։ Եթէ մեր դրած պայմաններին անոնք համաձայնին, այն ժամանակ կարող կը լինինք հետները գործ ունենալ։

Նամակիս պատասխանեցէք նախկին հասցէով, բայց շուտ։

Ձեր ԿԱՐԱՊ.

24-ին Յունս. 97 թ.

40

Պատճէններու մատեան No 82, *էջ* 60-61

25-ին Յունս. 97 թ.

Վառնայի կոմիտէին

Յարգելի ընկերներ,

Ուղարկուած ցուցակը լոյս կը տեսնի առաջիկայ համարում։ Իսկ ինչ վերաբերում է այս տողերին,

— Բացի այս «թիւ 25 Գեղամից ստացած 40, 80 ֆրանքի կամ ֆրանք ոսկի 40ի գումարն ... դեռ չտեսանք հրատարակուած». մենք չհասկացանք իսկապէս, թէ ինչ պէտք է հրատարակել։ Խնդրենք պարզ գրել, որպէսզի մէկ էլ ստիպուած չլինենք վրիպակներ դնել։

Նախորդ նամակով դուք ոչինչ չէիք գրած թերթերի թիւը աւելացնելու մասին։ Խնդրենք մի անգամ լաւ որոշէք թիւը, որպէսզի ստիպուած չլինենք ամէն անգամ տետրակները փոխել, որ շատ խառնաշփոթութիւն է յառաջ բերում։ Ուրեմն սրանից յետոյ ձեզ միշտ կ՝ուղարկուի 150 *օրինակ, իսկ Շումլա՝* 30։

Կ՝ուղարկուեն նոյնպէս բրօշիւրներ եւ Ծրագիր իւրաքանչիւրից 10 *հատ։ Բացի Կուկուսեանի արշաւանքից, որ սպառուած է։*

Կնիքի մասին արդէն ձեզ գրուած է։ Իսկ ինչ վերաբերում է պաշտօնական կնքուած թղթերին, առայժմ մտադիր ենք միայն Բիւրօների համար պատրաստել տալ կամ կենտրոնական կոմիտէների, իսկ կոմիտէներն իրենց փոխադարձ յարաբերութեանց համար արդէն կնիք ունին։ Եթէ որոշուի Բոլգարիայի Կենտրոնական կոմիտէն, նրա անունով կ՝ուղարկենք այդպիսի թղթեր։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Ի՞նչ ելք ստացան այդտեղի դժգոհութիւնները։ Պրաիլա ինչպէ՞ս է այժմ։
ՆՈՅՆ

41

Պատճէններու մատեան No 82, *էջ* 62-67

25-*ին Յունուար* 97 *թ.*
Ժընեւ

Յարգելի ընկեր Վարագ-Վահան(1),

Հր[*աչ*]*ի մասին ստացանք Իզմիրից մի նամակ, որով նրա գալը շատ լաւ են համարում. առաջարկում են անցնել իբր պարսկահպատակ գորգավաճառ։ Ենթադրելով, որ դուք էլ ստացած կը լինէք պատասխանը, աւելորդ ենք համարում ուղարկել այդ նամակը։ Հր*[*աչ*]*ը լաւ կ'անի, եթէ առհասարակ քիչ երեւայ, որովհետեւ արդէն տարածւել* [*է*], *թէ նա* (*Գարօի հետ*) *Պոլիս են մտել եւ այլն...*

Վաղը կ'աշխատենք ուղածներդ ուղարկել եւ միւսները պատւիրել, իսկ եթէ չանենք, չնեղանաք, կը նշանակի ժամանակ չի եղել։ Մի բան էլ. որովհետեւ բոլոր կոմիտէները ցանկանում են ունենալ զինանշանով պաշտօնական թղթեր.— Իսկ դա շատ ծանր կը լինի մեզ համար եւ անյարմար,— ուստի աւելի լաւ ենք համարում այդ թղթերն ուղարկել միայն կենտրոնական կոմիտէներին։ Ի՞նչ էք կարծում դուք։ Եթէ համաձայն էք, մենք պատրաստ ենք եւ ձեզ ուղարկենք կենտրոնական կոմիտէի անունով. միայն պէտք է որոշել յարմար քաղաք[?]։

Արվախին ընծայւած[?] *գրքի մասին մեզ ոչինչ չի յայտնի. Մրկոիից*(2) *հարցրէք։*

Զերբքճեանին մենք առաջւանից հաւատ չէինք ընծայում։ Հայդուկային խմբերու մէջ մտնել ցանկացողներին որոշ կերպով կարելի է պատասխանել, երբ իմանանք Թիֆլիզի խորհրդաժողովի արդիւնքները։

Ռումանիա թերթ ուղարկւում է, Պուքրէշ, Կալաց, Բրաիլա եւ այլն... Մի պարապ օր կարելի է ձեզ ուղարկել այդ մարդկանց ցուցակը, որ շատ երկար է։ Բրաիլա կարելի է դիմել տեղական քահանային Rev. père Stepan Kulumian, prêtre arménien։

Պուքրէշի ուսուցչի պատմութիւնը քիչ երկար է։ Այդ անպիտանին ուղարկւած է սրանից մի տարի առաջ մի ներկայացուցչական թուղթ, կարծենք եւ տոմսեր նւիրատւութիւնների համար։ Բայց ոչ մի լուր մինչեւ այսօր։ Երկու ամիս առաջ գրեցինք եւ պահանջեցինք, որ գրի, թէ ինչ է առել. դարձեալ լռութիւն։ Երկու շաբաթ առաջ ստացանք մի նամակ պ. Թերզեանից (*Կոստանցա*), *որտեղ նա յիշում էր Պիպերճեանին* (*այդպէս է այդ անպիտանի անունը*)։ *Գրեցէք Թերզեանին, որ եթէ մէկ էլ պատահի Պիպերճեանին, բացատրութիւն պահանջի իր յամառ եւ կասկածելի լռութեան համար։ Պ. Պիպերճեանը Թերզեանի նամակը եւս թողել է անպատասխան։ Այս անգամ <u>վերջին</u> նամակը գրեցինք այստեղից <u>ապահովագրած</u>։ Տեսնենք, թէ այս անգամ ինչ է լինելու։*

Պ. Թերզեանը ուղարկել էր մեզ Պուքրէշ գտնւող երկու հնչակեանների նամակները, որտեղ այդ հնչակեանները յայտնում են, իբր թէ Պիպերճեանը անձնական հակառակութիւնից դրդւած սովորեցրել է մի քանի մարդկանց, որ յարձակւեն եւ հնչակեաններին ծեծեն։ Կարծենք այս եղելութիւնը աղմուկ է հանել մինչեւ իսկ ռումինական մամուլում։ Սպասում ենք Պիպերճեանի պատասխանին. հակառակ դէպքում խիստ պէտք է վարւել այդպիսիների հետ։

Ահա յամենայն դէպս նրա հասցէն
Tatoul Biberdjian, Eglise arménienne.

Սարգսին դեռ չեմ տեսել, որ հարցնեմ Շերանեանի մասին։

Մեզ յայտնի չէ, թէ ինչ յանձնարարութիւններ ունի պ. Գնթունին։

Յոհաննն արդէն տեղ է հասել(3), նամակ կար, որի մէջ նա տաճիկներին ռումբ տալու հարցը առայժմ փակւած է համարում, մինչեւ որ նրանք իրենց գոյութիւնը չապացուցանեն։

Բանկի տղայքը առայժմ լաւ տեղաւորւած են Լոնդոնում պ. Զարիֆեանի շնորհիւ։ Armée du Salut-*ի հաշւով են ապրում։ Երկուսը արդէն գործ են գտել։ Մենք էլ այսօր* 300 fr. *ուղարկեցինք մանր մունր ծախքերի համար։*

Բոլորն էլ պատրաստ են, իրենց գրելով, ամէն րոպէ գործի մէջ մտնելու։

Վկայագիր կ՚ուղարկւի ձեր ցանկացած ձեւով։ Ուղարկում ենք տաճկական երկրորդ proclamation*ը, խնդրենք ներփակեալ հասցէներով ուղարկել մի մի օրինակ։*

Յոհանին այստեղից էլ կը գրենք ռումբերի խնդրի մասին։ Նա երեք պատճառաբանութիւն է բերում.

1) *որ նրանք պարզ, որոշ, դրական կերպով երեւան գան։ Այդ մասամբ արւել է* proclamation*-ներով, իսկ վերջնականապէս կ՚անւի իրենց օրգանով։*

2) *որ նրանք ասեն եւ կրկնեն, թէ ասպարէզ պիտի դուրս գան ամէն միջոցներով, թւեն մի առ մի միջոցների անունները։ Արդէն առաջին պրոկլամ[ասիոնի] մէջ ասւած է, թէ տինամիտով են ասպարէզ դուրս գալու։*

3) *որ գործնականապէս իրենց գոյութիւնը ապացուցանեն։ Հարցն էլ հէնց նրանումն է, որ գործով ապացուցանելու համար դինամիտ են խնդրում, միջոց տանք եւ նրանք ցոյց կը տան։ Իսկ թէ ինչու մենք կարելի ենք համարում դինամիտ տալ, դրա մասին երկար գրել էինք առաջւայ նամակում։*

Իսկ եթէ մենք երկիւղ կրենք, թէ կառավարութիւնը կարող է հայերին էլ ձերբակալել եւ այդ պատճառաւ չտալ, դա նշանակում է հարցը փակել. այն ժամանակ բանակցութիւններին հէնց սկզբից պէտք էր ուրիշ ձեւ տալ։ Երեւակայեցէք, որ տաճիկներին ռումբ չենք տալիս, այլ ուզում ենք, որ նրանք ատրճանակով գործեն։ Եթէ ատրճանակով նոքա մի մարդ սպանեն, այդ չե՞ն կարող արդեօք վերագրել հայերիս եւ մեր մէջ ձերբակալութիւններ սկսել։ Եթէ նրանց կուսակցութիւնը proclamation*-ներով արդէն քիչ յայտնի է եղել եւ պաշտօնական կերպարանք կը ստանայ, երբ օրգանով ասպարէզ դուրս գան, եթէ նրանք ամէն պատրաստականութիւն են յայտնում ամէն ինչ անել, որպէսզի իրենց արածը հայերին չվերագրւի (այս բանը անում են հէնց իրենց կուսակցական տեսակէտից), այն ժամանակը մենք ոչ մի իրաւունք չունինք մերժելու։ Դուրս կը գայ, իսկապէս, որ մենք առաջւանից ցանկացել ենք դրանց խաբել, հարցը ձգձգել։*

Ի նկատի ունեցէք նոյնպէս, որ ձեր խօսքերի հիման վրայ արդէն յայտնել ենք, թէ Բոլգարիայի կոմիտէն համաձայն է տալու եւ թէ սպասում ենք Պոլսոյ կոմիտէի կարծիքին։ Կարծեմ այլ եւս բան չմնաց գրելու, գլուխս խառնւել է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Որովհետեւ վաղ թէ ուշ Բոլգարիան ունենալու է իր Բիւրօն (այդ մասին մեր կարծիքը հաղորդեցինք Թիֆլիզի ժողովին), աւելի լաւ չէր լինիլ, եթէ ուղղակի պատրաստէինք եւ ուղարկէինք պաշտօնական թղթեր Բիւրօի անունով։ Սա մեզ աւելի նպատակայարմար է թւում։ Շուտով պատասխանէք։

ՆՈՅՆ

Այսօր տեսնուեցայ տաճկի հետ եւ հաղորդեցի Պոլսոյ պատասխանը, նա կը գրի այդ մասին Պարիզ։

Յայտնեցի, թէ թող չկարծեն, թէ մենք յետին մտքեր ունինք. պոլսեցիք երկիւղ են կրում միայն, որ չլինի թէ իրենց արածը հայերիս վրայ ձգեն, եւ մեր մէջ ձերբակալութիւններ առաջ գան եւ մեր պատրաստութիւնները կանգ առնեն։ Աւելացրի, որ արդէն իրենց պարտքն է այս հանգամանքի վրայ մտածել եւ զուր տեղը մեր գործունէութեան արգելք չհանդիսանալ։ Ուրեմն պէտք է որ ամէն տեսակ միջոցներով ճանաչնել տալ իրենց կուսակցութեան իսկական գոյութիւնը նախ քան որեւէ գործ տեսնելը, մանաւանդ ռումբով։

ՆՈՅՆ

1.- Վարազ-Վահան – ծածկանուն Արշակ Վռամեանի:
2.- Մրկо – ծածկանուն Լեւոն Նեւրուզի (Թորոսեան): Արվախին՝ Յակոբ Վարդ-Պատրիկեանն է:
3.- Յոնան Դաւթեան: «Տեղ է հասել», այսինքն Պոլիս մտած է:

42

Պատճէններու մատեան No 82, *էջ* 68

Monsieur M. Ferahian
269 … 28th st.
New York city, U.S.A.

Յարգելի պարոն,

Շնորհակալ ենք ձեր ուղարկած թարգմանութեան համար։ Տպագրել չարժէ, որովհետեւ Ռուսաստանի մասին գրածները հիմնովին սխալ են։

Ծրագիրը տաճկերէն թարգմանւած ունինք։ Երիտասարդ Թիւրքիոյ անդամները կարդացել եւ ծանօթ են հետը։

Իսկ հայ տառերով, բայց տաճկերէն լեզուով թարգմանութեան մասին մենք ոչինչ չգիտենք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

26-*ին Յունւ.* 97 *թ.*

43

Պատճէններու մատեան No 82, *էջ* 68

Missak Baghdassarian
Ecole Normale
Nancy (France)

26 *Յուն. 97ի, Ժընեւ*

Յարգելի ընկեր,

Տղայքը սխալւեել են եւ ծրարը փոստն են ձգել առանց timbre-*ի*(1), *այս պատճառաւ դուք չէք ստացել։ Որոշ յայտարարութիւն տւինք փոստին։ Տեսնենք։ Յամենայն դէպս ձեզ կ՚ուղարկենք մի քանի համար։*

Ձեր եղբօր մահւան լուրը վաղուց յայտնի էր, միայն չէին ուզում ձեզ յայտնել։

Ուղարկւածներից մի քանի համար Տրապիզոն եւս ուղարկէք։ Այստեղից երկու անգամ նամակ ենք ուղարկել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Ֆրանսերէն՝ դրոշմաթուղթ։

44

Պատճէններու մատեան No 82, *էջ* 76-77

(Վարնայի ընկերներին)

Յարգելի ընկերներ,

Արդէն բաւական ժամանակ է խմբագրութիւնս ստանում է բազմաթիւ նամակներ, որոնցով դժգոհութիւն են յայտնում Վարնայի ներկայ կոմիտէի եւ մասնաւորապէս նրա մի անդամի՝ պ. Թոքաթլեանի դէմ։ Նամակների մի մասն անստորագիր, իսկ միւս մասը առանց հասցէի է եղել. բնականաբար չէինք կարող պատասխանել։ Արդ, խնդրում ենք ի նկատի առնել հետեւեալ հանգամանքները եւ հաղորդել ձեր ծանօթ բոլոր դժգոհներին։

Այդ բոլոր անախորժութիւնների մասին մենք անկարող ենք որոշ գաղափար կազմել, մանաւանդ որ գանգատ գրողները չկարողացան պարզել մեզ, թէ ինչումն են կայանում իսկապէս Վարնայի կոմիտէի բուն պակասութիւնները։ Մենք իր ժամանակին գրել ենք մեր ամենավստահելի ընկերներից մէկին՝ պ. Վարազ-Վահանին, որ ներկայումս Բօլգարիայում է գտնւում։ Նա կը գայ շուտով Վարնա եւ կարգի կը բերի տեղւոյդ գործերը։ Եւ եթէ մինչեւ այժմ չի եկել, կը նշանակի ուրիշ կարեւոր գործեր նրան պահել են։

Պ. Արվախը բացակայ է այստեղից, ուստի չի կարող ձեր դիմումին բաւականութիւն տալ։

Եթէ մեր ընկեր Վարազ-Վահանը եկած չլինի այդտեղ, խնդրենք դիմել նրան հետեւեալ հասցէով՝

A. K. Erganian, Kutchuk Bezestène, 32. *յանձնել պ. Վ-ին*, Philippopoli։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

45

Պատճէններու մատեան No 82, *էջ* 78

30-*ին Յունւ.* 97 *թ.*

(Ռուսչուկի կոմիտէին)
Յարգելի ընկերներ,

Ձեր ուղարկած հաշիւը լոյս կը տեսնի առաջիկայ համարում։ Պատրաստէք ձեր կոմիտէի 1896-97 *թւականի ընդհանուր հաշիւը եւ ուղարկէք պ. Վարազ-Վահանին։ Նա կը կազմի բոլգարական կոմիտէների ընդհանուր հաշիւը։ Ատրպատականինն արդէն ստացել ենք։ Շուտով կը ստանանք եւ Ռուսաստանինը։ Բոլորը միասին կը ցրւենք մեր կոմիտէներին։*

Ձեր աջակցութեամբ կազմած Վարնայի կոմիտէն բազմաթիւ գանգատների տեղիք է տալիս, որոնց բուն պատճառները դեռ պարզ չեն մեզ համար։

Դրօշակի 95 *եւ* 96 *թւակ. հաւաքածուները կ'ուղարկենք միայն կոմիտէին։ Դրանից կարող են օգտուել ցանկացողները։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

46

Պատճէններու մատեան No 82, *էջ* 79-80

30-*ին Յունւ.* 97 *թ.*

Վառնայի կոմիտէին
Յարգելի ընկերներ,

Խնդրենք պատրաստել մինչեւ 1897 *թւականի ընդհանուր հաշիւը եւ յանձնել պ. Վարազ-Վահանին, որը շուտով կը գայ Վառնա։ Հարկաւոր է ընդհանուր հաշուետուութիւն։ Կ'ուղարկենք մեր ձեռքի տակ ունեցածները, երբ ստանանք Ռուսաստանի Բիւրօի հաշիւները։*

Մի քանի ժամանակ առաջ, ստանալով Վահագնի գրութիւնները, նկատում էինք այդ իբր անձնական անբաւականութիւնների հետեւանք եւ առանձին կարեւորութիւն չէինք տալիս. այդ մտքով էլ գրել ենք ձեզ։ Բայց վերջին ժամանակներս գանգատները շատ յաճախ են տեղում եւ այն էլ զանազան անձնաւորութիւններից, թէեւ մինչեւ այժմ չկարողացանք հասկանալ այդ բոլոր աղմուկների բուն պատճառը։

Ինչպէս արդէն վերը յիշած ենք, Վարնա է գալու պ. Վարազ-Վահանը, որ մեր ամենավստահելի ընկերներից մէկն է։ Յուսով ենք, որ նրա աջակցութեամբ կարող կը լինէք վերջ տալ բոլոր անախորժութիւններին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Թերթ պահանջել էիք 150 *օրինակ։ Այս համարից կ'ուղարկենք* 200 *օրինակ, միայն թէ գանգատուող չլինի թերթ չստանալու համար։ Խնդրենք* 30 *օրինակ յանձնել օր. Յուստինէին, որ պահանջում է մեզանից իր խմբի համար։*

ՆՈՅՆ

47

Պատճէններու մատեան No 82, *էջ* 82-85

(*Ֆիլիպպոպոլ*)

Յարգելի ընկեր Վարազ-Վահան,

Այսօր հեռագիր ստացանք Սեպուհից, որով ներկայացուցչական վկայագիր էր ուզում։ Ուղարկեցինք միայն չփոթելով միւս նամակների հետ, մոռացանք ուղարկել ապահովագրած։ Գրէք իրեն, որ ստանալուն պէս անմիջապէս մեզ ապահովացնի։

Արդէն գրել ենք Ռուսչուք եւ Վարնա, որ հաշիւներ պատրաստեն եւ ձեզ յանձնեն, դուք էլ կը կազմէք բոլգարական բոլոր կոմիտէների ընդհանուր հաշիւը եւ մեզ կ'ուղարկէք։ Ատրպատականի հաշիւը ստացած է, սպասում ենք Ռուսաստանինը։ Բոլորը միասին կ'ուղարկենք մեր բոլոր կոմիտէներին։

Պ. Լեւոն Սարգսեանին, որ իրեն առաջարկել էր մտնել մեր կազմակերպութեան մէջ, կարող էք գտնել հետեւեալ հասցէով՝

Ազնիւ Գարակէօզեանի խանութ, Hôtel de Plovdiv-*ի դիմացից* 8-9 *խանութ աւելի վար, իսկ Վահան Մամիկոնեան անուանեալը, իր գրելով արդէն մտել է տեղւոյդ կազմակերպութեան մէջ, նւիրատու անդամ գրւելով։ Սաստիկ փափագ է ունեցել ձեր գործունէութեանց մէջ թափանցել, բայց առաջին անդամ ներկայացուցած լինելով, «զիջանել է այս անդամ»։ Խնդրում է զգուշութեամբ տեղեկութիւն հաւաքել իր մասին, մի գուցէ ծնողները իմանան, որոնք «կարելի է, որ զիս խոստումներով համոզեն»։ Շատ շուտ պատասխան է ուզում։ Գրողը կամ երեխայ պէտք է լինի, կամ իրական աշխարհից դուրս, աւելի երեւակայութեամբ ապրող մարդ։ Իրեն մենք չենք պատասխանում։*

Ձեր Վարնա գնալը աւելի քան անհրաժեշտ է, սաստիկ խառնակութիւններ են սկսւել. շունը տիրոջ չի ճանաչում, ինչպէս ասում են։ Առանձին առանձին խմբեր են կազմւում, մի քանիսն էլ պատրաստւում են անցնել հնչակեանների կողմը (օր[ինակ] փիճ Լեւոնը իր խմբերով), միւսները սպառնում են (օր[ինակ] Գաբրիէլ Քաջբերունի, թէ Քաջունին)։ Գրեցինք, որ սպասեն քիչ եւս եւ դիմեն ձեզ։ Յայտնեցինք նոյնպէս, որ դուք շուտով այնտեղ էք լինելու։ Կոմիտէին եւս գրեցինք, թէ մեր ընկեր Վարազ-Վահանը գալու է, եւ թէ նրա աջակցութեամբ աշխատեն վերջ տալ տեղի ունեցած անախորժութիւններին։

Շտապեցէք գնալ, կամ ինչպէս առաջ էլ գրել էինք, նախ քան գնալը, նամակներով աշխատէք համոզել, որ զուր աղմուկներ չհանեն եւ սպասեն ձեր գալուն։

Ամէնից վատը այն է, որ առանձին խմբեր են կազմւել, որոնք չեն ուզում ոչ մի կապ ունենալ կոմիտէի հետ եւ պահանջում են առանձին յարաբերութիւններ խմբագրութեան հետ, առանձնապէս թերթեր են պահանջում եւ այլն։ Երէկ մի այդպիսի նամակ եկաւ օր. Յիւստուկից, որ մի առանձին խումբ է կազմել «Արշալոյս» անունով։ Հէնց այդ արշալոյսներին ու վերջալոյսներին կարգի ձգելու համար պէտք է շտապել։

Տաճիկներին դեռ չենք տեսել այն օրից ի վեր։ Երեւի միջոցներ են փնտրում։ Յո-

նանին երկար նամակ գրեցինք նրա առաջ բերած պատճառաբանութիւնների դէմ։ Սպասում ենք պատասխանի։

Վարդը յաջողութեամբ անցել է սահմանը։ Վարնայից դժգոհները պնդում են, որ Վարդը գնայ այնտեղ։

Ի վերջոյ մի ուրախալի լուր, որ կը հաղորդէք Սեպուհին եւս։ Հիւանդանոցում պառկած 5 տղաներից 3-ը առողջացած ուղարկուել են Աթէնք եւ այնտեղից ուղեւորուել են Աղէքսանդրիա։ Մնացեալ երկուսը դուրս կը գան։ Հաւանական է, 2-3 ամսից յետոյ։ Անմիջապէս ուղարկեցինք 100 *ֆֆր. նրանց անմիջական կարիքները հոգալու։*

Դուրս եկածներն են.

1.- *Գէորգ Մուրադեան, Խարբերդի Վերիխոխ*[?] *գիւղ, բոլորովին լաւ*

2.- *Զաքէոս Կիւրեղեան, Բաբերդի Ռումէլ գիւղէն, նոյնպէս բոլորովին լաւ*

3.- *Միհրան Թահանճեան, պրուսացի։ Այս վերջինի ոտքի թաթից ոսկորներ շատ են հանել, կաղում է եւ առայժմ աշխատել չի կարող։*

Արտաշէսի կենսագրութիւնը լոյս կը տեսնի ներկայ համարում։ Գնունու մասին կը յայտարարենք, որ ծանօթները գտնեն եւ ուղարկեն նրա լուսանկարը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

31-*ին Յունուար*[*ար*] 97 *թ.*
Ժընեւ

48

Պատճէններու մատեան No 82, *էջ* 87-88

1-*ին փետր.* 97 *թ.*
Ժընեւ

Յարգելի ընկերներ,
Ի Նանսի

Տրապիզոնի հասցէն պարզ չէր. կարծենք Simavonian *է ազգանունը։ Այս անգամ առանձին գրելիք չունինք, միայն յայտնեցէք իրենց որ այստեղից ձեր տւած հասցէով եւ* via Marseille *վերնագրով* 3 *նամակ ենք ուղարկել։ Մէկը ընդհանուր նամակ էր ուղղուած բոլոր Տաճկաստանի կոմիտէներին եւ վերաբերում էր հնչակեանների հետ ունեցած յարաբերութեանց։ Երկրորդով* [*անընթեռնելի մէկ տող*] .....*ցինք եւ երրորդը մի նամակ էր Վան ուղարկելու համար։ Եթէ այս վերջին նամակը բաց են արել, թող նորից արտագրեն եւ ուղարկեն։ Յայտնէք նոյնպէս, որ գաղտնի թանաքով գրածը բանալու համար հարկաւոր է շատ թոյլ լուծւածք երկաթի բաղադրութիւն* (solution faible)։ *Որքան թոյլ լինի, այնքան լաւ կը կարդացւի։ Երգնկայի նամակը անհնար է բոլորը պարզ կարդալ։*

Թող գրեն, թէ ինչ արդիւնք ունեցաւ վերջին տաճկական յեղափոխական proclam[ation]*ը, եթէ ի հարկէ հնարաւոր է բան իմանալ։*

No 1-ը գուր չէք բոլորին ուղարկել։ Ի՞նչ վնաս։ Ռուսաստան շատ համարներ 2-3 ամսից յետոյ են ստանում։

Եթէ No 22-ը ցանկանում են Պետո-ի պատկերի համար, թող սպասեն քիչ։ Շուտով առանձին լոյս է տեսնելու նրա եւ Բաբկէնի մեծադիր պատկերները առանձին թերթերի վրայ(1)։ Իսկ յետոյ լոյս կը տեսնի մի յեղափոխական ալբոմ։

Եթէ անիշխանական գրուածքներ կան կ՚ասենք ուղարկեն։

Իւսուֆեանի հասցէն՝

Tigran Vahanian
520 P. O. Box
Lowell, Mass., U.S.A.

Դրամ վաղը կ՚ուղարկենք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Մոռացայ գրել, որ յայտնէք Տրապիզոն անպատճառ թղթակցութիւններ հասցընել։ Նիւթ բոլորովին չկայ։ Համարը չգիտենք, ինչպէս լոյս ընծայել։

ՆՈՅՆ

1.- Պետոն՝ Աղեքսանդր Պետրոսեանն է, նահատակուած 1896 թ. Վանայ ինքնապաշտպանութեան կռիւներէն ետք Պարսկաստան նահանջի ճանապարհին՝ արմենական Աւետիսեանի եւ հընչակեան Մարտիկի հետ։ Բաբկէնը՝ Բաբկէն Սիւնին է (Պետրոս Փարեան), Պանք Օթոմանի նահատակը։

49

Պատճէններու մատեան No 82, էջ 88

1-ին փետր. 97 թ.

Յարգելի օրիորդ,

Նեղութիւն մի կրէք պ. Արտաշէսի լուսանկարն ուղարկելու։ Մոռացել էինք, որ այստեղինը յանձնուած է եղել ում հարկն էր, ի գուր տեղը միւս լուսանկարների մէջ կը փնտրէինք։

Միւս խնդիրների մասին խնդրենք դիմել Վարագ-Վահանին, որի հասցէն արդէն գրած ենք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Mademoiselle Shoushanik Akopian,
Poste restante
Varna
(Bulgarie)

50

Պատճէններու մատեան No 82, *էջ* 89-90

1-*ին փետր.* 97 *թ.*, *Ժընեւ*

Յարգելի ընկեր,
պ. Փափկունի(1),

Թիւրքերու յայտարարութեան մասին մենք էլ գիտէինք, որ յարձակումներ են տեղի ունենալու. մենք շատ լաւ գիտենք, որ հասարակական ասպարէզի վրայ անպակաս են մարդիկ, որոնք միշտ առիթներ են փնտրում իրենց գոյութեան raison d'être-*ը*(2) *պահպանելու։ Ցաւալի է, բայց անխուսափելի։*

Հանգանակութիւնը կը տպագրուի Ձեր հաղորդածին համեմատ։

Ո՞վ է Գէորգ Ազատեանը. մի ընկեր ունէինք այստեղ, որ ժամանակաւոր անուն էր վերցրել վրան — Գէորգ։ Գուցէ նրա մասին է խօսքը։ Տէր-Մարուքեանին նոյնպէս չենք ճանաչում եւ չգիտենք, հարկաւոր է արդեօք կամ կարելի է յայտնել նրան, թէ որտեղ է գտնւում այս կամ այն անձնաւորութիւնը։

Ներփակեալ ուղարկում ենք Կիմօնի նամակը, որ իր տարօրինակ բնաւորութեամբ մեզ զարմանք եւ ծիծաղ պատճառեց։ Ահա եղելութիւնը։

Իր գիրքը մեզ ուղարկելուց յետոյ պ. Կիմօնը մեզ դիմեց մի carte-*ով, խնդրելով ուղարկել Դրօշակի այն համարը, որտեղ* compte rendu(3) *ենք հրատարակել նրա գրքոյկի մասին։ Մենք յայտնեցինք իրեն մեր շնորհակալութիւնը գիրքը մեզ ուղարկելուն համար եւ միաժամանակ ցաւ յայտնեցինք, որ չենք կարող բաւականութիւն տալ իրեն, որովհետեւ մենք առհասարակ ոչ մի գրքի մասին նոր* compte rendu-*ներ չենք տալիս։ Ներփակ* carte postale-*ը այդ գրութեան պատասխանն է։*

Խնդրենք տեսէք այդ պսիխոզուտին(4), *հասկացրէք իր յիմարութիւնները եւ երեսովը տուէք իր գրքի արժէքը.* (*գիրքը չենք կարող յետ ուղարկել, որովհետեւ թերթերը կտրուած են*)։ *Այդ անամօթ նամակին այլապէս պէտք էր պատասխանել, եթէ միայն գրողը պսիխոզուտ չլինէր, կամ թէ խաբուած չլինէր ուրիշներից։ Նրա խօսքերից՝* «Je viens d'etre renseigné……»(5) *երեւում է, որ նա ներշնչուած է։ Հետաքրքիր է, թէ ո՛վ է ներշնչողը…*

Եթէ այդ պայմանով էր ուղարկում իր գիրքը, ինչո՞ւ Ձեզ չէր յայտնել։ Այն ժամանակ մենք հէնց սկզբից կարող էինք մերժել։

Սպասում ենք Ձեր եւ Նազարբէկեանի տեսակցութեան մանրամասնութիւններին։

Գրէք նոյնպէս, թէ ինչ փորձեր արիք անգլիացիներից օգտուելու եւ թէ ինչու չյաջողուեց։

Ինչպէս արդէն գրած էինք, տղայոց համար փոխադրեցինք 300 fr.։ *Շուտով նրանց մաս մաս Բոլգարիա կ՚ուղարկենք։*

Մեզ համար դարձեալ մութ մնաց, թէ ինչ միջոցներով են տղերքը Բ[*ուէնոս*] *Այրէսից տեղափոխուել Լոնդոն։ Ո՞վ է այդ ծախքը հոգացել։*

Շէֆիգ-բէյը(6) *Պարիզ է գտնւում. տեսնո՞ւմ էք արդեօք իրարու հետ։*

Ի միջի այլոց կարծենք նոր-հնչակեաններից ոմանք Պարիզի տաճկական բանկէտում ճառեր են խօսացել։ Այդ ինչո՛վ բացատրել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Փափկունի – ծածկանուն Յովհ. Լոռու-Մելիքեանի, այլապէս նաեւ Զարիֆեան:
2.- Ֆրանսերէն՝ գոյութեան իմաստը:
3.- Ֆրանսերէն՝ համարատուութիւն:
4.- Հոգեկան հիւանդ:
5.- Ֆրանսերէն՝ նոր իմացայ:
6.- Թուրք ընդդիմադիր ղեկավար:

51

Պատճէններու մատեան No 82, *էջ* 86

Սիրելի Սեպուհ(1),

Քո վերջին երկու նամակները ստացած են։ Քո հարցերին արդէն նախ քան քո նամակները ստանալը պատասխան են գրուած։ Յամենայն դէպս ներփակ ուղարկում ենք Ղալօ-ի նամակը, խնդրելով կարդալուց յետ ուղարկես։

Առայժմ եկող չկայ, որ ժամացոյց ուղարկենք։ Կարիք էլ չկայ, որովհետեւ պարզ ժամացոյցները այստեղ աւելի սուղ են, քան թէ ուրիշ տեղ։ Այդտեղ գնիր մէկը։

[*Անընթեռնելի մէկ տող*] *վնաս չունի, թող հատ ու կտոր լինին։ Վահագից նամակ կայ այսօր։*

Տրապիզոնից գրում են, որ տաճկական թերթերը մեծ յաջողութեամբ են տարածւում։ Ահա Ռուբէնի նոր հասցէն՝ միայն անպատճառ recommandée(2):

Monsieur Boghos Si*mavonian

(*) i-*ի գլխին կէտը* m-*ի վրայ է դրուած. գուցէ սխալւում ենք*

Յանձնել Ագապի Բարսեղեանին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

2-ին փետր. 97 *թ.*(3)

1.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի:
2.- Ապահովագրած:
3.- Պատճէնին մէջ սխալմամբ թուականը 2 Յունուար է:

52

Պատճէններու մատեան No 82, *էջ* 91-94

2ին փետր. 97 թ.

Յարգելի ընկեր,
Վարազ-Վահան

(Ֆիլիպպոպոլ)

Ձեր միակ բաց նամակը գրւած է Յունւար 8/20-*ին։ Նրանից յետոյ եթէ դարձեալ բաց նամակ էք գրել, մեր ձեռքը չի հասել։ Ձենք ստացել նոյնպէս Միսաքեանի լուսանկարը։ Անշուշտ ապահովագրած ուղարկած կը լինէք. դիմէք փոստատանը։*

Արվախի մասին հարց այլեւս չի կարող լինել, որովհետեւ արդէն Ռուսաստանում է։ Վահագնի հասցէն մենք եւս չգիտենք, հարցրէք Հրաչից։ Ահա օր. Յիւստիւկի հասցէն՝ Vartouhi Chavarchane, poste restante, Varna։

Օր. Խմերեանինը՝
Shoushanik Hagopian, poste restante

Այս երկուսն էլ առանձին առանձին խմբեր են կազմել եւ առանձնապէս ցանկանում են թերթեր, ծրագիրներ ստանալ։

Սրանց տւել ենք Ձեր հասցէն։

Յաւալին այն է, որ դիմողներից շատերը հասցէները չեն գրում, ենթադրելով, որ խմբագրութիւնն արդէն պիտի իմանայ։ Ահա մի հասցէ էլ՝
Simpade Antréassian, [*անընթեռնելի*]. 5ème [*անընթեռնելի*]. 318

Տղայքը, ինչպէս արդէն յայտնել էինք, բոլորովին ապահով են նիւթական կողմից։ Եթէ անմիջական կարիք կայ, գրէք, թէ ում էք ցանկանում, իսկոյն ճանապարհ կը ձգենք։

Պոլսից մի այնպիսի բան չեն գրել, որ անպատասխան մնայ. մի քանի բան Ձեզ ենք գրել, միւսներն էլ իրենց։

Թող շուտով հասցէների հարցը կանոնաւորւի, հաղորդակցութիւնն էլ կը կանոնաւորւի։ Անցեալներում չգիտէինք, թէ ինչ ճանապարհով աւելի ապահով է նամակ ուղարկել. Mlle Berchier-*ին տւած հասցէից օգտւեցինք, այն էլ սխալ. ծրարի երեսին գրեցինք* pour A....,*մինչդեռ հարկաւոր է եղել «միւս» միջին ծրարի վրայ գրել։ Դուք գրում էք, թէ հարկաւոր է ուղարկել Բերլինի գծով։ Այնտեղից էլ մէկի անունով հասցէն էին տւել, սակայն այն էլ ոչնչացրին։ Հիմա չգիտենք, ուղարկել, թէ ոչ։ Խնդրենք նորից կրկնել բոլոր հասցէները թէ թերթերի եւ թէ նամակների համար։*

Կրկնում ենք, Միսաքեանի պատկերները ստացւած չէ։ Ձեր ունեցածներն ուղարկէք, այստեղ կորչել չեն կարող։ Սուրէնինը(1) *յանձնւած է եղել առաջւանից ում հարկն էր, միայն մոռացել էինք եւ խմբագրատան մէջ էինք փնտրում միւս լուսանկարների շարքում։*

Ձեր առաջարկութիւնը Բաբկէնի, Գնունու, Սուրէնի ... լուսանկարների մասին լաւ չհասկացանք։ Եթէ ցանկանում էք բոլորին առանձին առանձին մեծադիր շինել տալը, դա շատ թանկ կ՚արժենայ, իսկ բոլորին միասին միատեղ, շատ անյարմար կը

լինի։ Մենք մտածել ենք մի ալբոմ հրատարակել մեր բոլոր ունեցած լուսանկարներից կարճ կարճ տեղեկութիւններով։

Օգ. 14-ի(2) մասին բաւականաչափ լրագրներից կտրուածներ ունինք, բայց այդ նշանակութիւն չունի։ Ամենալաւ կտորները թարգմանաբար լոյս են տեսել Դրօշակում։ Բայց մեր ձեռքին կայ դեսպանների ժողովի եւ Բ. դռան գրութիւնները այդ դէպքի մասին, որ մի փառաւոր document *է մեզ համար։ Առանց այն էլ բրօշիւրը հաստ կը լինի։*

Իւսուֆեանի գրելով այնտեղ 6-7,000 fr. *կայ ժողովւած, բայց այդ ամերիկացիք դժւարութեամբ են փողը ձեռքից բաց թողնում։ Դուրս է գալիս, որ հանգանակած գումարը նորից պէտք է ստանալ։ Փոխադրւած է* 2,000 fr. *մեզ, կարծենք* 1,262 fr. *եւս նրանց փոխադրածն է։ Այդ կողմից Իւսուֆեանը լաւ է երեւում։ Բայց մի յիմարութիւն է արել, որից չգիտենք, թէ ինչպէս պիտի դուրս պրծնի։ Առանց մտածելու, թէ ինչ է Բիւրօ ասւած հիմնարկութիւնը, վերցրել է եւ ընտրել է տւել ամերիկական Բիւրօ* (!!)։ *Այդ Բիւրօն Տաճկաստանի որ մասից պէտք է տեղեկութիւններ ստանայ եւ մեզ հաղորդի, դրա մասին մտածող չի եղել։*

Չեն մտածել նոյնպէս, թէ Բիւրօն ուրիշները պէտք է նշանակեն. ինքնակոչ Բիւրօ էլ կը լինի՞... Տեղական անդամները սկզբից ընդդիմացել են Բիւրօի ընտրելուն, հիմնւելով Իւսուֆեանից առաջ Ամերիկա գնացած մեր մի ընկերոջ բացատրութիւնների վրայ, իսկ այսօր Բիւրօն ընտրելուն պէս արդէն պահանջում են յարաբերութեան մտնել անմիջապէս միւս Բիւրօների հետ։ Դուրս է գալիս մի անորմալ բան. Ատրպատականը, որ նոյնքան նշանակութիւն ունի, զրկւած է Բիւրօից, իսկ Ամերիկան ունենալու է։ Առհասարակ Իւսուֆեանը շատ է սիրում արտաքին մի քանի ձեւերին մեծ նշանակութիւն տալ։ Բացի իր պահանջած վկայականներից (Խմբագրութիւնից, Պոլսից...), պահանջում է անգլիերէն, ֆրանսերէն լեզւով կնիքներ, մինչեւ իսկ անձնական կնիք... այժմ էլ Բիւրօ է սահմանել։

Հրաչը պէտք է գրէր պոլսեցոց բոլոր հասցէները, որոնց պէտք է ցրւէինք Պոլսից ուղարկած proclamation-*ները։ Պէտք է, որ թիւրք թերթերի հասցէները եւս գրւած լինէին։ Կը նշանակի, այդ նամակն եւս բռնւել է, տեղ չի հասել։ Հարցրէք Հրաչին։*

Կոմիտէի հասցէն՝ A. K. Martine, poste restante, Alexandrie (Egypte)։ *Իսկ եթէ մասնաւորապէս Խաժակին է, պէտք է աւելացնել տալ պ. Բաթոյեանին։ Առայժմ այդ պարոնը արդարացնում է Յոնանի յոյսերը։ Այդքան չէինք սպասում...*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Սուրէն – ծածկանուն Անդրէասեան Արտաշէսի, զոհուած Սամաթիոյ կռիւներուն (1896 թ. Օգոստ.):

2.- Ակնարկութիւն Օսմանեան դրամատան գրաւման:

53

Պատճէններու մատեան No 82, *էջ* 95

2-*ին փետր.* 1897 *թ.*
Ժընեւ

Յարգելի հայրենակից
պ. Ալիօն, [*Միացեալ Նահանգներ*]

Շնորհակալութեամբ ստացանք Ցիւրիխի Société de crédit Suisse *դրամատնից Ձեր փոխադրած* 1998 *ֆր.*

Բարեհաճէք հաղորդել մեր ներկայացուցիչ պ. Վահանեանին, թէ ինչ ձեւով է հարկաւոր հրատարակել այդ գումարը «Դրօշակի» մէջ։

Մնանք յարգանօք
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

54

Պատճէններու մատեան No 82, *էջ* 96-97

2-*ին փետր.* 1897 *թ.*
Ժընեւ

Յարգելի պ. Մինասեան,

Խնդրենք Դրօշակի I *եւ* II *համարներից մէկ մէկ հատ եւ առանձին առանձին պահարանների մէջ դրած ուղարկել հետեւեալ հասցէին՝*
Via Mer Rouge et Golfe Persique
Monsieur Garabed Kouyoumdjibachian
Bagdad (Turquie d'Asie)

Դրօշակի հետեւեալ համարներից կը խնդրենք շարունակաբար ուղարկել նոյն հասցէով մէկ մէկ օրինակ եւ առանձին նամակով հարցնել, ստանում է արդեօք ուղարկածները։ Դուք հասցէ տալու չէք, թող յայտնի մեզ նախկին ճանապարհով։ Ինքն արդէն գիտէ։

Եթէ դիւրութիւն ունէք, խնդրենք հարցնել այդտեղ թղթավաճառներից, թէ որքան կ'արժենայ ճանապարհածախսով եւ այլ ծախսերով միատեղ 1,000 kilog. *այն թղթից, որի վրայ տպւում են Դրօշակի համարները։ Գուցէ աւելի արժան լինի ուղղակի այդտեղից բերել տալ։*

Մեր փոխադրած 300 fr. *տղայոց համար անշուշտ ստացած եւ բաժանած կը լինէք։ Հաղորդէք իրենց, որ հիւանդանոցում գտնւած վիրաւորներից* 3-*ը առողջացած են եւ այժմ Եգիպտոս կը գտնւին։ Իսկ միւս երկուսը դուրս կը գան, հաւանական է,* 2-3 *ամսից յետոյ։*

Որովհետեւ կարող են եւ այլ յանձնարարութիւններ լինել, խնդրենք Ձեր արած ծախքերի հաշիւը պահել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

55

Պատճէններու մատեան No 82, *էջ* 98-99

Յարգելի ընկերներ,

(Եամպօլ)

Սեպուհի նամակը ստացանք,

Մեր խօսակցութիւնը տաճիկների հետ եւ մեր կարծիքը մանրամասն գրել ենք Վահապին։ Հարկաւոր ենք համարում հէնց այժմ տալ, որովհետեւ ինչպէս Սեպուհին էլ շատ լաւ յայտնի պէտք է լինի, այստեղացիները եւ սրանց բարեկամները Պոլսում դեռ յեղափոխական չեն բառիս բուն մտքով, որ նրանց ասպարէզ դուրս քաշելու համար անհրաժեշտ է մի զօրեղ զէնք՝ ռումբը։ Նրանց յեղափոխական ոգին դեռ այնքան թոյլ է, որ հասարակ զէնքերով չեն համարձակւիլ յարձակումներ գործել, որքան էլ քեզ հետ տեսականապէս համաձայն լինին։ Թող առաջին ռումբը պայթի դրանց ձեռքին. այդ ռումբի ձայնը դուրս կը քաշի կեանքից բուն յեղափոխական ուժեր։ Այն ժամանակ ատրճանակով էլ կը գործեն, դանակով էլ։ Իսկ եթէ այժմ դրանց չօգնենք, դժւար թէ դրանք համարձակւին հասարակ դանակով դուրս գալ. եղած տրամադրութիւնը կարող է հանգչիլ եւ գործը կանգ կ՝առնի անորոշ ժամանակով։

Ասպարէզը դարձեալ կը մնայ զանազան Ռիզաներին, Մուրադներին, որոնք բերանի մի անկիւնով հայհոյում են Սուլթանին, միւսով՝ հայերին։

Եգիպտոսից դեռ ոչինչ չենք ստացել։ Այստեղից ենք ստիպւած դրամ ուղարկել։ Տառեր գնելով, գործն առաջ չի գնալ. շարող է հարկաւոր։

Քաջբերունին հեռացել է Իզմիրից։ Արսէնը Մանուկն է եղել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

3-ին փետր. 97 թ.
Ժընեւ

[Էջերու լուսանցքներուն յաւելում՝ պատճէնը չելած բառերով .....]

Աչքներդ լոյս. Եգիպտոսից գրում են, որ փեսան գնացել է Օդեսա, ... յայտնել, տղան առել եւ տարել։ Վահէն խնդրում է, որ իր գրած ..... Սեպուհին եւս։ Մինչեւ այժմ եղած նամակներում ..... բան չի եղել գրութիւն ունէք իրարու հետ։ Զարժէ մէկ էլ հին նամակին մէջ պտրել։ Բանկայի գրաւումից յետոյ կարելի է Օդեսայի կատակերգութիւնը եւս գրել։ Վերջինս աւելի յաջող կը լինի։

56

Պատճէններու մատեան No 82, *էջ* 100

(*Փաստ.* 36*բ*-22)

4-*ին փետր.* 97 *թ.*

Յարգելի ընկերներ
(*Աղեքսանդրիա*)

Մի քանի օր առաջ փոխադրած էինք 100 *ֆր.։*
Փոխադրած ենք այսօր 150 *եւս։ Ինչո՞ւ Արսէնը առաջւանից չէր յայտնում, թէ իրեն փող է հարկաւոր։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

57

Պատճէններու մատեան No 82, *էջ* 105

Յարգելի պրն. Ահէմեան,

Ստացանք Ձեր նամակները։
Խնդրենք բարեհաճել գալ վաղը, շաբաթ օր, երեկոյեան ժամը 8-*ից յետոյ հետեւեալ հասցէով՝*
M. Gasparian, Pictet de Bock, 7e

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

8-*ին փետր.* 1897 *թ.*
Ժընեւ

58

Պատճէններու մատեան No 82, *էջ* 106

Յարգելի պ. Պիպեռճեան,

Վաղուց է ստացուած Ձեր երկար նամակը։ Շնորհակալութիւն ուղարկած տեղեկագրի համար։

Իսկ գալով վկայագրին եւ նուիրատուութեան տոմսերին, քանի որ դոքա աւելորդ են եղել, ինչպէս գրում էք, հարկաւոր էր վերադարձնել մինչեւ այսօր։ Եթէ մինչեւ այժմ չէք արել, չտապէք այժմ յետ ուղարկել։ Պահանջէք եւ ուրիշ տեղեր ցրուած տոմսերը։

«Դրօշակի» համարները դադարեցրինք ձեզ ուղարկելը մեր նամակի պատասխանը չստանալու պատճառով։ Այժմ դարձեալ կ՚ուղարկուեն։ Բաժանէք ինքներդ հարկաւոր տեղերը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Իսկ եթէ կանոնաւոր չէք բաժանելու, գրեցէք, որպէս զի մենք ուղարկենք։

59

Պատճէններու մատեան No 82, *էջ* 107

(*Փաստ.* 36*բ*-23)

9-*ին փետր.* 97 *թ.*, *Ժընեւ*

Գահիրէի կոմիտէին

Ընկերներ,

Մի քանի օրից յետոյ ձեր կոչը պատրաստ կը լինի։ Քանի որ անյարմար էք գտնում վիմագրած տարածել, խնդրենք կարճ գրել։ Դուք ինքներդ խոստովանում էք, որ այստեղ աշխատանք շատ կայ. բրոշիւրները չենք կարողանում հասցնել։

Նամակագրութեան համար տպագրուած թերթիկներ առայժմ չենք կարող ուղարկել, որովհետեւ եթէ մէկին ուղարկենք, պէտք է միւսներին էլ ուղարկենք. իսկ այդ անհնարին կը լինի մեզ համար ներկայ պարագաներում։ Արդէն միւսներին էլ մերժել ենք։ Այժմ կնիք ունէք. դրանով առայժմ եօլա գնացէք։

Հրանտ Ազատեանը խնդրում է 2 օրինակ Դրօշակ։ Խնդրենք յանձնել նրան իր խնդրածը եւ բաւականութիւն տալ նրա հարցերին՝ ասպատակող խմբերի մասին, պրոպագանդի եւ այլն։

Խնդրենք կոչին մասին հաղորդել Աղեքսանդրիա եւս։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

60

Պատճէններու մասեան No 82, *էջ* 109-110

Պուլկարիա ուղարկուած գրութիւն, առանց հասցէատիրոջ անուան յիշատակութեան:

Սիրելիս,
(Եամպոլ)

Սլիվէն կը գրենք, ինչ հարկաւորն է. կնքւած վկայագիր վաղուց է ուղարկւած։ Միւս նամակների հետ խառնելով մոռացանք ապահովագրած ուղարկել։ Եթէ ստանաք, շուտով մեզ հանդստացրէք։

Այդ տեսակ դոկումենտներ, ինչ ձեր ձեռքը դարձեալ կ'ընկնի, ուղարկէք, ժամանակով շատ հարկաւոր կը դայ։

Սեպուհի անցնելու մասին մենք էլ կարծում ենք, թէ այդ տեսակ պարագաներում թող չչտապի Իզմիր գնալու, իսկ ինչ վերաբերում է նոր վկայական ուղարկելուն, որտեղ ուղղակի Հրաչ գրւած լինի, խօսք չկայ, որ դրամ հաւաքելու տեսակէտից շատ լաւ կը լինի. միայն ինքը Հրաչը շատ չի՞ յայտնի լինիլ, եւ գուցէ ապագայում դժւար կարողանայ հետքերը կորցնել։ Բոլգարական կառավարութիւնը, չգիտենք, թէ ինչպէս կը վերաբերի. միայն Ռումանիայի մասին հաստատ կարող ենք ասել, որ ամենաստոր դիրքը կը բռնի։

Օր. Վերգինին դրամ կ'ուղարկենք, միայն լաւ չէր լինի՞լ, գայթակղութեանց տեղիք չտալու համար տեղական կոմիտէները հոգ տանին։ Յամենայն դէպս մենք դրամը կ'ուղարկենք կոմիտէին։

Նրա գրած նամակները եթէ Լեւոնին չենք տւել, կը նշանակի փոստայով ուղարկւածների մէջը պէտք է լինի։

Պ. Աճէմեանը նորից (Դադեանի հետ եկածը) նորից արտասահման է եկել համոզելու, որ մօտիկ ապագայում ոչ մի ցոյց չանենք... Դեռ այստեղ է, գուցէ նորից տեսնւենք։ Մանրամասը կը գրենք ընդհանուր նամակում, հնարաւորութիւն չունենալով առանձին առանձին գրել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Համարն այսօր լոյս է տեսնելու, արդէն տպարանին ենք յանձնել։
ՆՈՅՆ

8-*ին փետր.* 97 *թ.*

Դօբրիզից տղաներից մէկը ուղարկել է 12 *ֆր., գանգատւելով, որ իր վրայ ուշադրութիւն չենք դարձնում, ինքը շատ ծառայութիւններ է մատուցել, որ եւ թւում է։ Անուն, ազգանուն չկայ։ Թերթ է ուզում, նամակ եւ այլն...։ Ինչպէս ուղարկե՞նք, ո՞ւմ հասցէով... Խնդրենք տեղեկանալ եւ շուտով հաղորդել։ Թող յայտնի նոյնպէս, թէ ինչ ձեւով տպագրւի ստացւած* 12 *ֆր.։*

ՆՈՅՆ

Պորիսովկրատից ստացանք 100 *ֆր.։ Առաջիկայ* N N-*ում լոյս է տեսնելու։ Եթէ դրանով չեն բաւականանալու, եւ եթէ ընկալագիր են ուզում, թող մի հասցէ գրեն, որպէս զի ուղարկենք. նամակի տակ ստորագրած է Կ. Թ. Մենզիլճեան* (?)։

61

Պատճէններու մատեան No 82, *էջ* 111-112

8-*ին փետր.* 97 *թ.*

(*Պարիզ*)
Յարգելի ընկ. Զարիֆեան,

Սմբատ Խաչատրեանը այժմ Ռուսաստան է գտնուում։

Կը գրէք, թէ այդտեղ կը պատրաստուին դիմումներ անելու Զէյթունի մէջ համերաշխ գործունէութեան համար։ Այդ առթիւ կարող ենք հաղորդել, որ մեր ընկերները արդէն սկսած են այդ խնդրով զբաղուիլ։ Մեր ընկերը Եգիպտոսից գրում է, թէ տեսակցութիւն է ունեցել պ. Սվազլիի հետ եւ թէ Սվազլիին առաջարկել է Զէյթունը իրենց թողնել...։ Պատրաստութիւններ տեսնում են եւ մեր ընկերները երբէք չեն արհամարհել որեւէ ոյժ, միայն թէ հաւատ ունենան դէպի հակառակորդների անձնաւորութիւնը։

Եթէ յիշում էք, Պարիզի խմբից մէկ ներկայացուցիչ էր եկել այստեղ միութեան համար։ Դրա առթիւ մենք ձեզ մի նամակ ուղարկեցինք նրանց յանձնելու համար, եթէ յարմար դատէիք։ Չգիտենք, թէ ինչ արիք, յանձնեցի՞ք, թէ ոչ։ Այս քանի օրերս Գարօն վերջնական խօսակցութիւն է ունենում դրանց պատգամաւորի հետ, որ այժմ այստեղ է գտնուում։ Դրա խօսքերից հետեւում է, որ այդ Միութեան «վսեմ» գաղափարները արծարծող խմբի մէջ բաժանում է առաջ եկել, որի մի մասը ցանկանում է ուղղակի միանալ մեզ հետ, եւ Ձեզ հետ միասին հանգանակութիւնը շարունակել։

Հարկաւ, այդտեղ դուք արդէն բացատրած կը լինէք։

Երեւի Ձեզ արդէն յայտնի կը լինի, որ Արտաշէսը սաղ սալամաղ տեղ է հասել մեր մի ուրիշ ընկերոջ հետ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Պ. Աճեմեանի հետ տեսնուեցանք։ Իր առաջարկութիւնները լսած կը լինէք արդէն։ Մենք մեր կողմից յարձակուեցանք Օրմանեանի բռնած ընթացքի վրայ, որ տանում է դէպի Աչըգեանի ըէժիմը եւ առաջարկեցինք, որ Օրմանեանը, Դաղեանը, առհասարակ բոլոր այն անձնաւորութիւնները, որոնք ցանկանում են լուրջ ցոյց կազմակերպած տեսնել, ինչպէս իրենք են յայտնում պ. Աճեմեանի բերանով, թող նիւթապէս մեզ աջակցեն, որպէս զի մենք ստիպուած չլինենք դիմելու անցեալ տարւայ՝ երկու կողմի համար էլ անախորժ միջոցներին։

Աճեմեանը կարծենք բոլորովին ցանկութիւն չունէր այսպիսի ելք տեսնելու. նա երեւի «խաբելու» համար խորհուրդ տուեց յետաձգելու ցոյցը, որպէս զի «աւելի շատ պատրաստ լինենք», իսկ մենք դիտմամբ պնդեցինք այդ վերջինի վրայ։ Այս խօսակցութիւնը գաղտնի պէտք է մնայ։

62

Պատճէններու մատեան No 82, *էջ* 113-119

(*Ֆիլիպպոպոլ*)

Յարգելի ընկ. Վարազ-Վահան,

Ձեր բաց նամակը եւ 23-*ին գրածը ստացած են։ Բոլոր կոմիտէներին անհնար է ուղարկել տպագրուած թղթեր, դա ահագին կորուստ կը լինի թէ ժամանակի եւ թէ դրամի։ Իսկ եթէ մի քանիսին ուղարկես, այն ժամանակ պարտաւոր կը լինես միւսներին էլ ուղարկել. արդէն Եգիպտոսից, Ամերիկայից անընդհատ ուզում են։ Իսկ Պետոի վերաբերեալ կնիքը եւ կնքւած թղթերը, թէեւ արդէն պատրաստւում էինք պատւիրելու, բայց նպատակայարմար դատեցինք յետաձգել քիչ եւս, մինչեւ յայտնի կը լինին Թիֆլիզի ժողովի խորհրդակցութեան արդիւնքը, ուր Արվախը առաջարկելու է բօլգարական Բիւրօ հաստատելու ծրագիրը։ Դա մեզ կ՚ազատի աւելորդ տարաձայնութիւններից, մանաւանդ որ Ամերիկական Բիւրօի հարցն էլ կայ ասպարէզի վրայ։*

Հաշիւ պէտք է պահանջել սկիզբէն ի վեր, որովհետեւ մինչեւ այժմ ոչ մի հաշիւ չեն ներկայացրել։ Պոլիս ուղղուած հեռագրների տակ կը ստորագրենք Արսէն։ Թող ուրեմն նշանակեն այս անունը։

Avedis Oundjian, Bourgas, *Կենտրոնականի աշակերտ*, 26 *տարեկան, կ՚ուզէ մտնել յեղափոխութեան մէջ, խնդրում է մեզանից դրամ Ժընեւ*(3) *գալու համար։ Իրեն կը յայտնենք, որ աւելորդ ենք համարում իր Ժընեւ գալը եւ խորհուրդ կը տանք սպասել, որ մեր ընկերներն իրեն գտնեն։ Տեսէք, ինչ տղայ է։*

Վարնա գնացած ժամանակ չմոռանաք Վահագնից առնել նւիրատւութեան տոմսերը։ Հետաքրքիր գիծ Վարնայի կոմիտէի տաքտիկայի։ Առհասարակ շատերը գանգատ էին յայտնում թերթից զրկւած լինելու համար եւ խնդրում էին անմիջապէս խմբագրութիւնից։ Մենք էլ, պարզ բան է, խոյս էինք տալիս առանձին խմբերին ուղարկելուց, որպէսզի խռովութիւններին համար աւելի հաստատ հող չստեղծենք, եւ գրում էինք կոմիտէին, որ ինքը յանձնի։ Յանկարծ Վարնայի կոմիտէի վերջին նամակում կարդում ենք, թէ օրիորդները զրկւած են թերթից, որովհետեւ Վահագնի հետ քիթ քթի են... Սրանից յետոյ պարզ է, թէ ինչու խռովութիւնները փոխանակ մեղմանալու, աւելի էին տարածւում։ Այսօր ուղարկեցինք կոմիտէին 100 *ֆր.։ Բանը նրանումն է, որ օր. Էսմերեանին ճանապարհ գցելիս խոստացանք ինքներս հոգալ դրա ծախքերը, մինչեւ որ մի աշխատանք կը գտնի իր համար։ Բայց որովհետեւ դուք դրանից յետոյ Բօլգարիա մտաք, ձեզ գրեցինք օրիորդի մասին, նրան էլ գրեցինք, որ բոլոր խնդիրների մասին ձեզ դիմի։ Երեւի նա դրամ դարձեալ այստեղից է սպասել. մի քանի անգամ գրած է եղել Հրաչին։ Գրեցինք կոմիտէին, որ այդ փողը յանձնեն օրիորդին։ Աշխատէք մի կերպ դրանց համար գործ ճարելու։ Միթէ՞ իսկապէս գործ բնաւ չկայ։*

Եւրոպա եկող Պատրիարքի եւ Դադեանի պատւիրակը պ. Աճեմեանն է, նոյն անձնաւորութիւնը, որ եկել էր Դադեանի հետ։ Բերել էր հետը պատրիարքի կոնդակը, որով կողմնակի կերպով, իսկ Աճեմեանի բերանով՝ ուղղակի կերպով առաջարկում է «միառժամանակ» դադարեցնել շարժումը, ցոյցեր չանել, որ այժմ հայ ազգը հանգստութեան է կարօտ եւ այլն... խորհուրդ են տալիս սպասել, յետաձգել ցոյցը, որպէս զի աւելի լաւ կարողանանք պատրաստւել, ժողովուրդը զինել... Մենք

յայտնեցինք, որ մեր կարծիքով էլ հայ ազգը հանգստութեան է կարօտ, բայց նա հանգիստ չէ այժմ եւ հանգիստ էլ չի լինիլ, թէկուզ յեղափոխական շարժումը բոլորովին դադարի. հէնց այդ հանգստութիւնը ձեռք բերելու համար մենք անհրաժեշտ ենք համարում կռիւը։ Ինքն էլ համաձայնուեց, որ Սուլթանին չի կարելի թողնել, նրա վրայ ոչ մի յոյս դնել չի կարելի։ Ուրեմն յեղափոխութիւն անհրաժեշտ է, պատրիարքը, Դաղեանը եւ այլն... անբաւական են նախընթաց ցոյցերից, որովհետեւ մեծ արդիւնք չեն ցոյց տուել։ Մենք էլ ենք անբաւական եւ ցանկանում ենք աւելի բան կատարել։ Սրանից հետեւում է, որ ոչ թէ յետաձգելու մասին պէտք է խօսել, այլ աջակցելու. թող ուրեմն մեր «ազգայինները» աջակցեն մեզ եւ չստիպեն մեզ դիմել անցեալի տաքտիկային՝ սպառնալիքներով, դաշոյնով դրամ կորզելու, որ ահագին վնաս է բերում երկու կողմին էլ։ Պ. պատուիրակը խոստացաւ այդ բանը հաղորդել, աւելացնելով, թէ անյարմար կը լինի պատրիարքի կողմից այդպիսի գործերում խառնուիլը։ Պատասխանեցինք, թէ մենք Օրմանեանին շատ լաւ ենք ճանաչում, նա ինքը միջոցներ, հնարք կը գտնի։ Նա ուրիշի խրատներին կարօտ չէ։ Զմոռանանք յիշել, որ սկզբում սաստիկ յարձակուեցանք պատրիարքի տաքտիկայի վրայ, որ տանում է դէպի Աշըգեանականութիւնը։ Այդ էլ խոստացաւ յայտնել. դուրս եկաւ, որ փոխանակ նրանից խրատներ լսելու, մենք մեր հարկաւոր բաները յայտնեցինք։ Դեռ եւս այստեղ է, գուցէ մէկ էլ տեսնուենք։

Հրաչին այս խնդրոյ մասին առանձին չեմ գրում. խնդրենք ուղարկել նրան այս նամակը։ Պոլիս կը գտնուի։

Նախ քան ժընեւ գալը պ. Աճեմեանը տեսնուել է Արփիարի եւ Նազարբէկի հետ։ Վերջինին մասին այն կարծիքի է, թէ ոյժ չունի, իսկ առաջինի մասին յայտնում է, թէ կասկածելի անձնաւորութիւն լինելով, ամէն ինչ նրա մօտ չի խօսացել, միայն պաշտօնական կոնդակն է ցոյց տուել եւ խորհուրդ տուել ցոյցեր չանել։ Նա էլ իր համաձայնութիւնն է տուել։ Հետաքրքիրը նա է, որ խօսակցութեամբ տարուելով, պատուիրակը բարձրացրեց միութեան հարցը, հարցրեց, ինչու Դաշնակցութիւնը միջոցներ չէ ձեռք առնում Արփիարի դէմ եւ այլն։ Մենք էլ հարկաւոր պատասխանը տուինք։ Նա աւելի խօսում էր Նազարբէկի հետ միութիւն կազմելու մասին, աւելացնելով միաժամանակ, որ նա արդէն հիւանդ է։

Նազարբէկի հետ տեսակցութիւն է ունեցել եւ Զարիֆեանը։ Համերաշխութեան համար նա յայտնել է, թէ եթէ գործելու ընդհանուր ծրագիր կազմուի, այն ժամանակ կարելի կը լինի համերաշխ գործել։ Հակառակ է հայդուկային խմբերի գործունէութեան (շատ պարզ է, թէ ինչու. զարմանք է յայտնում, թէ ինչպէս Դաշնակցութիւնը չի հերքում Արփիարականների տարածած լուրերը միացման մասին. (ինքը ի՜նչ ուրախ կը լինէր դէպքից օգտուելու)։ Գուշակել է վերջապէս, որ Դաշնակցութիւնը կենտրոնականութիւնը ընդունելու է։

Վերջապէս յայտնի եղաւ, թէ տղայքը ինչպէս են Լոնդոն հասել։ Հարաւային Ամերիկայից անասուն՝ կով, եզ, ոչխար են բերում Անգլիա, դրանց խնամող, պահող է միշտ լինում։ Տղայքը օգտուել են հանգամանքից, կով, եզ խնամելով, ուտելով, խմելով շոգենաւի վրայ, 2 ոսկի էլ իւրաքանչիւրը վարձք ստանալով, Լոնդոն են հասնում։

Միւս 3-ին մասին արդէն գրած էինք։ Դեռ նոր լուր չունինք։ Գրած ենք Եգիպտոս, որ մանրամասը յայտնեն իրենց նախկին դրութեան մասին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

9-ին փետրվար 97 թ.

63

Պատճէններու մատեան No 82, *էջ* 121-126

(*Փաստ.* 36*բ*-24)

9-*ին փետր.* 97 *թ.*

Աղեքսանդրիայի կոմիտէին

Ընկերներ,

Այսօր Պոլսից նամակ կար, Վրէնի(1) *մասին խօսք չկար. հաւանական է, որ ձերբակալւած եւ ուղարկւած լինի։ Կը գրենք Պոլիս։*

1262 *Ֆր. Ամերիկայից էր ուղարկւած, նամակ ստացանք։*

Շ. Ֆահրատի(2) *մասին Սարգիսը նոյն կարծիքն է յայտնում։ Նա ինքը կը գրի այդ հարցի մասին։*

Արսէնի ծանօթ դոքթորին մենք չենք յիշում։ Չենք յիշում, որ առհասարակ այդ տեսակ խնդիրների մասին դիմումներ եղած լինեն որեւէ դոքթորի կողմից։ Եթէ հարկաւոր է, մենք կը դիմենք մեր բացակայ ընկերներին նրա գրութիւնների մասին հարցնելու։

Կրկնում ենք եթէ ուղարկած դրամը բաւական չէ, հեռագրէք, թէ որքան է հարկաւոր փոխադրել։ Զմոռանանք յայտնել, որ՝ Մարտինի(3) *հասցէով են փոխադրուած, ձեր նոր հասցէն ուշ ստանալուն պատճառաւ։*

Ուղարկած կոչը միայն այսօր կարելի եղաւ սկսել շարել։ Գահիրէ էլ յայտնեցինք, որ եթէ անյարմար էք գտնում վիմագրով տարածել, այդքան երկար կոչ մի գրէք։ Յոյս ունենք, որ ապագայ կոչերը կարճ գրւած կը լինին։

Ներփակեալ ուղարկում ենք մի նամակ, որ այսօր ստացւեց Գահիրէից։ Նամակագրին չենք ճանաչում, լաւ չենք ճանաչում եւ նրա յիշած անձնաւորութիւններին։

Չենք հաւատում ի հարկէ նամակագրի բոլոր ասածներին, բայց երեւի տղայքը այսպէս կամ այնպէս տեղիք են տուել այդ տեսակ բամբասանաց։

Ուշադրութիւն դարձրէք, որ այդպիսի անհամութիւններ չպատահեն։

Նամակը դիտմամբ ձեզ ենք ուղարկում եւ ոչ Գահիրէ՝ հարցին մեծ նշանակութիւն չտալու համար։ Գուցէ լոկ թշնամական դրդումների արդիւնք է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Համարը վաղը կ՝ուղարկւի։

1.- Վրէն Գասպարեան, ծանօթ Տաշրացի ծածկանունով, Տրապիզոնի պատասխանատու ընկերներէն:

2.- Շահէն Ֆարհատ, բուն անունով Մարտիրոս Գաբրիէլեան, Պոլսոյ հին գործիչներէն, որ 1896-ին մահացած էր Կիպրոս:

3.- Մուրատեան Մարտին, այդ օրերուն գործիչ Իզմիրի մէջ:

64

Պատճէններու մատեան No 82, *էջ* 127

10-ին փետր. 97 թ.

Monsieur Stépan Kanarian
Pharmacien
Jamboli (Bulgarie)

Վահանի(1) 2 *բաց նամակներն ստացանք, իրեն երկար նամակ գրուած է Ֆիլիպպոպոլ։*

Միսաքեանի լուսանկարն ստացուեց չատ ուշ. պատճառը չկարողացանք հասկանալ։ Այսօր ուղարկում ենք Հիւանդին(2) *եւ թերթ եւ նամակ։ Մէլիքն*(3) *իւրաքանչիւր մի նամակում պնդում է Պետոի*(4) *համար կնիք ու զինանշանով թղթեր ուղարկելու վրայ։*

Մեր նամակը երեւի դեռ չէ ստացած։ Ձգիտենք, ինչով պէտք է վերջանայ այդ բանը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի:
2.- Հիւանդը՝ Յոնան Դաւթեանն է:
3.- Մելիք – ծածկանուն Յովհ. Իւսուֆեանի:
4.- Պետո – ծածկանուն Ալեքսանդր Պետրոսեանի: «Պետոյի համար կնիք»ը պէտք է հասկնալ Վասպուրականի Կ. կոմիտէին համար կնիք իմաստով:

65

Պատճէններու մատեան No 82, *էջ* 128

12 Fevr. 97

Genève
[Parti révolutionnaire ottoman]

Cher Monsieur,

Hier nous avons vu un télégramme, annonçant que les proclamations sont distribuées. Il s'agit probablement de vos proclamations. Nous attendons une lettre à ce sujet.

La lettre qui contenait les adresses données par M^ieur^ Chefik- bey à notre camarade Hratch n'a été reçue à Constantinople que les derniers jours. Elle a voyagé aussi avec une partie des proclamations. Il est clair à présent pourquoi les journaux turcs n'en avaient pas reçu.

Les dernières nouvelles alarmantes de Constantinople sont sans doute l'effet de la distribution de vos proclamations.

Agréez, Monsieur, nos salutations empressées.

REDACTION DU "DROSCHAK"

Թարգմանութիւնը.—

Ժընեւ, 12 *Փետրուար* 1897

[*Օսմանեան Յեղափոխական կուսակցութեան*]

Սիրելի Պարոն,

Երէկ ստացանք հեռագիր մը, որ կը յայտնէր թէ Յայտարարութիւնները ցրուած են։ Հարցը հաւանաբար կը վերաբերի ձե՛ր յայտարարութիւններուն։ Այս մասին կը սպասենք նամակի։

Այն նամակը, որ կը պարունակէր հասցէներ՝ տրուած պ. Շեֆիք-բէյի կողմէ մեր ընկերոջ՝ Հրաչին, ստացուած է Կոստանդնուպոլիս վերջին օրերս միայն։ Նամակն ալ «ճամբորդած» է երեւի յայտարարութիւններու մէկ մասին հետ միասին։ Պարզ է ներկայիս, թէ ինչո՛ւ Թրքական լրագիրները չէին ստացած։

Կոստանդնուպոլսէն հասնող եւ ահազանգ հնչեցնող վերջին լուրերը, անկասկած, ձեր բաժնած յայտարարութեանց հետեւանք են։

Ընդունեցէք, պարոն, մեր ջերմագին ողջոյնները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

66

Պատճէններու մատեան No 82, *էջ* 129

(*Լոնդոնից դիմած հնչակեաններին*)

Յարգելի պարոններ,

Ստացանք ձեր բաց նամակը։ Ուղարկում ենք ահա մեր ծրագիրը։ Բացի սրանից մենք ոչ մի ուրիշ հրատարակութիւն չունինք մեր ընդհանուր կազմակերպութեան վերաբերեալ։

Գալով մեր կոմիտէների կամ շրջանների ներքին կանոնադրութեան, պէտք է ասենք, որ ըստ մեր ծրագրի՝ ոչ մի ընդհանուր, պարտաւորեցուցիչ կազմակերպչական ձեւ բոլոր կոմիտէների եւ շրջանների համար կարող չէ գոյութիւն ունենալ։ Իւրաքանչիւր մի կէտ կամ շրջան իր տեղական պայմանների համաձայն, տեղական ուժերի փոխադարձ համաձայնութեամբ կազմում է իր սեփական ներքին կանոնադրութիւնը, դուրս չգալով ի հարկէ ծրագրից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

12-*ին փետր.* 97 *թ.*, *Ժընեւ*

67

Պատճէններու մատեան No 82, *էջ* 130

14-*ին փետր.* 97 *թ.*

Mademoiselle Schouschanik Hagopian
Poste restante
Varna
(Bulgarie)

Յարգելի օրիորդ,

Ստացանք Սուրէնի(1) *լուսանկարը. անցեալ անգամ գրած էիք, թէ լուսանկարչի էք տուել փոխելու համար։ Եթէ մի քանի օրինակ էք պատրաստում եւ եթէ ձեր ձեռին կան ուրիշ օրինակներ, այն ժամանակ այս կը պահենք մեզ մօտ. հակառակ դէպքում յայտնէք մեզ վերադարձնելու համար։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Սուրէն – ծածկանուն Արտաշէս Անդրէասեանի, զոհուած 1896 թ. Սամաթիոյ կռիւներուն:

68

Պատճէններու մատեան No 82, *էջ* 130

14-ին փետր. 97 թ.

Monsieur Hovakim Thamissian
Philippopoli
Bulgarie

Ընկերներ,

Ստացանք ձեր նամակը եւ ներփակեալ հանգանակութեան երկար ցուցակը։ Այդքան երկար ցուցակ հրատարակել շատ դժուար է. առանց այն էլ նիւրատուութիւնը մեծ տեղ է բռնում թերթի մէջ։ Կը տպագրենք միայն ընդհանուր գումարը, իսկ եթէ անհրաժեշտ է ցանկը ամբողջովին տպագրել, խնդրենք շատ շուտով յայտնել մինչեւ ամս. 20-ը։

Պետրոսի մասին մանրամասը տեղեկութիւն տալ չենք կարող. գիտենք միայն, որ ապահով է, առողջ։ Ընկերները նրա մասին գովասանքով են խօսում։ Նամակը վաղուց ենք ուղարկել նրան յանձնելու համար։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

69

Պատճէններու մատեան No 82, *էջ* 131

16-ին փետր. 97 թ.

Ընկերներ

Ի Սուլինա,

Ձեր նախորդ նամակը եւս ստացած է։ Բայց եթէ չենք պատասխանել, պատճառն այն է, որ պատասխանելու ոչ մի կէտ չի եղել։

Ուղարկած դրամն եւս շնորհակալութեամբ ստացած է։ Արդէն Դրօշակի համարում տպագրած տեսած կը լինէք։

Պ. Սարգիսը վկայական է ուզում այդտեղ դրամ ժողովելու համար։ Այդպիսի մի վկայական աւելորդ ենք համարում ուղարկել։ Եթէ հաւատով չեն վերաբերում, Դրօշակի մէջ տպւած ցուցակը կարելի է լաւ ապացոյց լինել, որ տրւած փողերը չեն կորչում, այլ տեղ են հասնում։

Յայտնելով մեր շնորհակալութիւնը մշակ դասի աջակցութեան համար, մնանք

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

70

Պատճէններու մատեան No 82, *էջ* 132

Missak Baghdassarian
Ecole Normale, Nancy, France

Այսօր ուղարկեցինք նոր տաճկական թերթ Տրապիզոն ուղարկելու համար։
Տրապիզոնից նամակ կար, որով յայտնում են, որ Սուրէնը հեռացրած է գործից։ Սա մեզ համար անսպասելի էր։ Սուրէնին մենք ճանաչում էինք իբր եռանդոտ, անվախ յեղափոխական։
Փոթի. Արիստակէս Թիւրքեանի տանը օրիորդ Բերուզիկ Գասպարեանին հասցէն փոխել հետեւալի՝
Poti. Theophylacte Theophylactie pour Bechir Halalzade

Այսօր գրած նամակներս եւ կնիքը չեն ստացւած։ Յայտնիր Տրապիզոն, որ նոր հասցէով նամակ եմ գրել։

16-*ին փետր.* 97 *թ.*

71

Պատճէններու մատեան No 82, *էջ* 132

Monsieur Zarifian
1. Claude Bernard 1, Paris

Ընկեր,
Խնդրենք ուղարկել մեզ Jaune livre-*ից*(1) *մի օրինակ, միայն շուտով։*
Մեր ներկայացուցիչը չէ առաջարկել Զէյթունը մեզ թողնել, այլ Սվազլին է առաջարկողը, իսկ մեր ընդհանուր հայեացքը կը յայտնենք մօտ ժամանակներում, երբ բոլոր կոմիտէների կարծիքն իմանանք։
Միսաքեաններու մասին հաստատ լուր չունինք։ Որքան մեզ յայտնի է, նոքա եւս սպանւած պէտք է լինին(2)*։ Կը հարցնենք Բոլգարիայից եւ կը հաղորդենք ձեզ։ Արտաշէսի լուսանկարն ստացւած է։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

17-*ին փետր.* 97 *թ.*

1.- Jaune livre – դեղին գիրք։ Վերջին անունով ֆրանսական կառավարութեան կողմէ հրատարակուած փաստաթուղթերու ծաւալուն հատոր, որ նուիրուած էր 1893-1897 թուականներուն Հայաստանի անցուդարձերուն,– համիտեան կոտորածներ, Զէյթունի ապստամբութիւն եւայլն։

2.- Միսաքեան եղբայրները, ինչպէս նաեւ Արտաշէս Անդրէասեանը զոհուած էին 1896-ի Սամաթիոյ կռիւներու ընթացքին։

72

Պատճէններու մատեան No 82, *էջ* 141

18-*ին փետր*. 97

Սիրելի Հրաչ(1),

Եդուարդին(2) *անպատճառ ուղարկէք Իզմիր։ Մարտինը*(3) *հասել է ու ներս է մտել շատ ազատ կերպով։ Կնիք է ուզում։ Եւ ասում է, թէ ազատ ասպարէզ կայ գործելու։*

Թող չտապի, Եդուարդի հասնելուց յետոյ կնիք անմիջապէս կ՝ուղարկենք։ Այն ժամանակ կարող կը լինին կոմիտէ կազմել։

Մանուկը(4) *ցանկանում է Բաթում գնալ։ Վրէնը*(5) *Տրապիզոն է հասել եւ գրում է, թէ Սուրէնին հեռացրել են բոլոր միւս ընկերների պահանջմամբ։ Շատ անսպասելի լուր էր։ Մեր կարծիքը Սուրէնի մասին գրեցինք Վրէնին։*

Վաղը մի երկար նամակ ենք ուղարկելու Վարնայի կոմիտէին, որպէս զի այնտեղ ստորագրեն եւ ցրեն միւս կոմիտէներին եւս։

Համբոյրներ՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Հրաչը ծածկանուններէն մէկն էր Օսմանեան դրամատան գրաւման մասնակիցներէն Հայկ Թիրեաքեանի:
2.- Եդուարդ – ծածկանուն Սմբատ Պոյաճեանի:
3.- Մուրատեան Մարտիրոս:
4.- Մանուկ, այլապէս նաեւ Արսէն, Տրապիզոնի պատասխանատու ընկերներէն:
5.- Վրէն Գասպարեան, Տրապիզոնի պատասխանատու ընկերներէն:

73

Պատճէններու մատեան No 82, *էջ* 143
……

422
washington st.
Providence, N. D.
U.S.A.

Ձեր եղբայրը՝ Մկրտիչ Ասատուրեան (Սեբաստացի) Բուէնոս-Այրէսից վերադարձած այժմ Լոնդոն է գտնւում ողջ եւ առողջ։ Կը գրենք նրան ձեր նամակի մասին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

19-*ին փետր*. 97

74

Պատճէններու մատեան No 82, *էջ* 144-147

19-*ին փետր*. 97 *թ*.

Յարգելի ընկեր Վարագ-Վահան (*Վռամեան*),
(*Վարնա*)

Սպասում էինք ձեր Վարնա հասնելուն եւ հասցէին, որպէս զի նամակ գրենք։ Կոմիտէի նամակի պատասխանը նոյնպէս այդ պատճառով յետաձգւել է։

Դրանց «Թռուցիկը» մեզ վրայ շատ վատ ազդեց։ Այդ տեսակ միջոցներով «գործել» կրակի վրայ իւղ թափել է, եղած խառնակութիւններին աւելի լայն ծաւալ եւ խիստ բնաւորութիւն տալ։ Բացի այդ, այդ ի՞նչ է նշանակում ոչ մի ստորագրութիւն չդնել եւ կոմիտէի անունը չտալ։ Ընթերցողը գալիս է այն եզրակացութեան, որ Դաշնակցութիւնը Վարնայում մի ինչ որ վարչական ժողով ունի, մանաւանդ որ դոքա միշտ խօսում են ոչ թէ մասնաւոր կերպով, այլ ամբողջ Դաշնակցութեան բերանից։ Կոմիտէին առանձին նամակ չենք գրում։ Նրա հասցէով ձեզ թերթեր ենք ուղարկել։

Այս րոպէիս ստացանք Իւսուֆեանի նոր նամակը, որով պահանջում է առանց այլ եւ այլութեան Բիւրոյի կնիքը ուղարկել եւ կապել Ամերիկան մեր բոլոր բիւրոների (մենք միայն մէկ բիւրօ ունինք)։ Նրան մենք չկարողացինք հասկացնել, նա մեր կարծիքը սխալ է համարում, յոյս էլ չունենք համոզեցնելու, իմանալով նրա բնաւորութիւնը։ Մի բան էլ կայ, գուցէ նա տրամադրուած լինի ենթադրելու, որ ես լաւ յարաբերութիւն չունենալով հետը, անձնական պատճառներով արգելք եմ լինում Ամերիկական բիւրոն ճանաչելուն։ Այդ տեսակ բան նրանից սպասելի է, որովհետեւ, ինչպէս վերջերս իմացայ, նա մի այնպիսի ենթադրութիւն է արել, այնպիսի մի կարծիք է ստացել իմ մասին, որ ... փոքրիկ երախան անգամ չծիծաղէր։ Ուստի աւելորդ չէր լինի, եթէ դուք իբր կողմնակի անձնաւորութիւն բացատրէիք նրան այն խառնաշփոթութիւնը եւ գլխացաւանքը, որ կարող է առաջ գալ ամերիկական բիւրօ հաստատելուց։

Հրաչին էլ գրեցինք. Մարտինը հասել է շատ ազատ կերպով Իզմիր։ Թող անպատճառ Եդուարդը ճանապարհ ընկնի եւ որքան կարելի է շուտ։ Մարտինը կնիք էր ուզել, բայց չենք ուզում նրա ձեռքը յանձնել. նա շատ արժանաւորութիւններ ունի, բայց կնիքը ձեռքին ունենալով կարող է իբր ներկայացուցիչ ճանաչւել, իսկ նրա անձնաւորութիւնը հարկաւոր տպաւորութիւնը չի թողնիլ, ինչպէս յայտնում է նրան լաւ ծանօթ Գարոն։

Իսկ Եդուարդը, ինչպէս ասում են, կարող է շատ լաւ տպաւորութիւն թողնել իբր ներկայացուցիչ։ Այս պատճառով անհրաժեշտ ենք համարում Եդուարդի շուտ մեկնիլը։

Խաժակեանը(1) *բանակցութիւնների մէջ է մտել «Կրէտական եւ մակեդոնական ընդհանուր կոմիտէի» գործադիր անդամ «Ժան Կարտալիսի» հետ։ Ժան Կարտալիսը պէտք է դիմի Ամէնքի կոմիտէին, իսկ Խաժակը մեզ եւ արտասահմանեան բիւրոյին եւ հարցնեն նրանց եւ մեր ցանկութիւնը բանակցելու։ Խաժակի խորհրդով մենք պէտք է պատասխանենք իրեն, թէ պատրաստ ենք բանակցելու, որպէս զի նա այդ յայտնի իրենց։ Մեր կարծիքն այն է, որ մենք օգնել կրէտացիներին չենք կարող,*

Նրանք մեզ օգնել կարող են, բայց կ՚անե՞ն արդեօք, այդ շատ կասկածելի է։ Բայց որովհետեւ Ժան Կարտալիսը մակեդոնական շարժման մէջ էլ [է] մասնակցում, հարցրէք նրա մասին Մակեդոնական կոմիտէին։ Գուցէ խաբեբաների մէկն է, եւ պարապ տեղը ժամանակ չկորցնենք։

Բժիշկ Փաշայեանը Թաւրիզից գրում է, որ իր բարեկամ Անտոն Գալֆայեանը, դեղագործ, Langa Toulouba meydan, 113, *որը անցեալներում ծառայութիւններ մատուցած է Դաշնակցութեան. այժմ էլ առաջարկում է իր ծառայութիւնները. միայն նիւթական նեղ դրութեան մէջ գտնուելով, խնդրում է նիւթապէս աջակցել իրեն, որպէս զի ստիպուած չլինի խանութը ծախել եւ օտարութեան դիմել։ Ո՞վ, ի՞նչ է հարկաւոր գրել, պատասխանէք, եթէ ճանաչում էք այդ անձնաւորութիւնը։*

Օր[*իորդ*] *Էսմերեանը հանգանակութիւն էր արել եւ ցուցակը ուղարկել էր տպագրութեան համար։ Զտպեցինք, որովհետեւ չէր համաձայնել կոմիտէին յանձնել։ Այժմ երբ կարգադրէք այդ փողը, գրէք, որ ցուցակը տպենք։*

Թերթերի բաժանման վրայ լուրջ ուշադրութիւն դարձրէք։ Կոմիտէն ոչ մի բարոյական իրաւունք չունէր թերթից զրկելու այն դաշնակցականներին, որոնք իրենց հետ համաձայն չեն կամ հակառակ են, ինչպէս եւ չենք մերժում միւս կուսակցութեանց պատկանողներին՝ հնչակեաններին, արմենականներին. թերթի վրայ այդպէս չի կարելի նայել։

Ներփակեալ գրութիւնից կը տեղեկանաք Թիֆլիզի ժողովի մի վճռի մասին։ Մենք արդէն գրել ենք եւ յայտնել, որ համաձայն չենք պարտաւորեցուցիչ խօսքը մտցնել մեր կազմակերպութեան ընդհանուր գործունէութեան մէջ։

Եթէ դուք էլ համաձայն չէք (Պոլիս գրել ենք եւ սպասում պատասխանի), այն ժամանակ դուք էլ համաձայն կը լինէք մեր առաջարկութեան։ Թիֆլիզի ժողովը արտօնութիւններ է տալիս խմբագրութեան, Պոլսոյ կոմիտէին եւ Թիֆլիզի բիւրոին, դա նշանակում է նրանց հաւատում է. ուրեմն եթէ մենք մեր մէջ համաձայնւենք, դա ընդունելի կը լինի բոլորի կողմից։ Թող ուրեմն նրանցից 1-2 *հոգի գան արտասահման, այստեղ մենք մի որոշ համաձայնութեան կը գանք։ Մեր կողմից նորից կրկնել ենք, Վարդի*(2) *բերանով, մեր արած առաջարկութիւնը՝ խմբագրութիւնը բաժանել բիւրոյից եւ բիւրոն հաստատել Բոլգարիայում։ Դուք էլ ձեր նկատողութիւնները գրէք։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Տեղեկագիրը ստորագրել տուէք եւ ուղարկէք մի մի օրինակ բոլոր կոմիտէներին։ Միւս անգամ վիմագրած կ՚ուղարկենք։

1.- Խօսքը Գարեգին Խաժակի (Չագալեան) մասին է:
2.- Յակոբ Վարդ-Պատրիկեան (Արվախի):

75

Պատճէններու մատեան No 82, *էջ* 148

19-*ին փետր*. 97 *թ*.

Ընկերներ, (*Լոնդոն*)

Եգիպտոսից նամակ ստացանք ձեր 3 *ընկերների մասին։ Նրանցից մէկը իրեն լաւ չէ պահում. ինչպէս գրում են, յանդգնում է հայհոյել Բաբկէնի յիշատակը։ Այնտեղ նրանք լաւ են տեղաւորուած։*

Մկրտիչ Մուրատեանի եղբայրը տեղեկութիւն էր ուզել իր մասին։ Գրեցինք, որ Մկրտիչը ողջ եւ առողջ է։ Ահա նրա հասցէն, գուցէ հարկ լինի նամակ գրել

422 Washington St.

Providence, M. D. , U.S.A.

Ձեր ընկեր Գակնդը[?] *գնայուն*[?] *մեզանից թերթեր է ուզում. մենք կ'ուղարկենք ձեզ աւելորդ համարներ նրան ուղարկելու համար. թող ինչ հարկաւորն է, ձեր միջոցով դիմի։*

Մի նոր ընկերութիւն է հիմնել «Հայկեան միութիւն» անունով, չենք հասկանում, թէ ինչու։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

76

Պատճէններու մատեան No 82, *էջ* 149-150

20-*ին փետր*. 97 *թ*.

Յարգելի ընկեր
Վարագ-Վահան (*Վարնա*)

Այս րոպէին ստացանք Գնունու լուսանկարը Բելգիայից. անսպասելի էր։ Որքան կարելի է շուտ հասցրէք կենսագրութիւնը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Չի կարելի՞ Վարնայում կուտակուած տղայոց մաս մաս Պոլիս ճանապարհել. այժմ անկարելի չի լինիլ, ռամազանի երկիւղը վերացած կը լինի։

Հարկաւոր է Լոնդոնի տղայոց(1) *համար եւս քիչ քիչ գործ գտնել եւ այնտեղից հեռացնել, թէ չէ անգործութիւնը դրանց էլ կը փչացնի։*

Այնպիսի պարագաներում գոնէ տէրրօրիստական գործողութիւններով կարողանայինք զբաղուել...

Եթէ Վահէի(2) *համար դժուար է Պոլիս նորէն մտնել, աւելի լաւ չէ Իզմիր գնայ։*

Եգիպտացին(3) *էլ հիւանդանոց է մտել։ Յոնանի դրութիւնը դժուար է։ Ի՞նչ կարելի է անել։*

Գնունու կենսագրութիւնը շուտ շուտ ուղարկէք, որպէս զի կարելի լինի միւս համարում զետեղել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Խօսքը կը վերաբերի Օսմանեան դրամատան գրաւման մասնակցած տղոց:

2.- Հաւանաբար Վահէ Սիւնիի մասին է (Թիրեաքեան):

3.- Եգիպտացին՝ Դեւեան-Սինասեան Արտաշէսն է, որ նոյն տարուան Յունիս 1-ին պիտի մահանար:

77

Պատճէններու մատեան No 82, *էջ* 159

Յարգելի պարոն,
(Բէլգիա)

Շնորհակալ ենք Գնունու լուսանկարը ուղարկելու համար։
Միայն ցաւելով պէտք է աւելացնենք, որ սա մի ուրիշ Գնունի լինելու է։ Մեր ընկեր Գնունին բոլորովին նման չէ Ձեր ուղարկած լուսանկարին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

24-*ին փետր.* 97 *թ.*

78

Պատճէններու մատեան No 82, *էջ* 159

Missag Baghdassarian
Ecole Normale
Nancy
(France)

24-*ին փետր.* 97 *թ.*

Տրապիզոն բոլոր նամակներն ուղարկուած են։ Թերթ հարկաւոր է ուղարկել 100-*ից ոչ աւել։ Ռուսաստանի ճանապարհը նորից փակուել է։*
Ուղարկէք Ռուսաստանի հետեւեալ հասցէներով մի մի օրինակ՝

Տրապիզոն ուղարկէք միշտ երկու Հնչակներից էլ։ Ուղարկէք բոլոր համարները բաժանումից յետոյ, եթէ ունէք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

79

Պատճէններու մատեան No 82, *էջ* 161

24-ին փետր. 97 թ.

Փաշայեանին, Թաւրիզ

Յարգելի պ. բժիշկ,

Ձեր բարեկամ Գալֆայեանի մասին գրել ենք, ուր հարկն է։ Մեր ընկերները կամ ուղղակի կը խօսին նրա հետ, կամ թէ իրենց կարծիքը կը գրեն մեզ։ Մենք էլ Ձեզ կը հաղորդենք։

«Փախստական» վէպի միջից խնդրենք արտագրել եւ ուղարկել մեզ այն կտորները, որոնք վերաբերում են Երիզայի շրջակայքում գործող ասպատակային խմբերին մասնակցողների կենսագրութեան։ Որքան մենք յիշում ենք, այնտեղ պէտք է լինի մի քանի խօսք Ակնեցի Ճանիկ Ժամկոչեանի մասին, որը վերջերս նահատակւել է Երիզայի բանտում։

Այդ կենսագրական տեղեկութիւնները հարկաւոր են խմբագրութեան համար։

Գրում ենք մեր ընկերներին որ Ձեզ հասցնեն Ձեր պահանջած թերթերը։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

80

Պատճէններու մատեան No 82, *էջ* 167-169

24-ին փետր. 97 թ.

Ֆիլիպպոպոլի կոմիտէին

Յարգելի ընկերներ,

Այս համարի մէջ տեղի սղութեան պատճառաւ ձեր ցանկը անկարելի էր հրատարակել. լոյս կը տեսնի առաջիկայ համարում։ Թաթար-Բազարջ[իկ] հանգանակածի գումարն արդէն հրատարակւած է։ Եթէ ցանկանում են առանձին առանձին տեսնել իրենց անունները, ուղարկէք ցուցակը. հին նամակների մէջ փնտրեցինք, բայց չգտանք։ Խնդրում ենք վարժեցրէք հասարակութիւնը միայն գումարով հրատարակւած տեսնելուն, թէ չէ ահագին տեղ է խլում, մանաւանդ երբ գումարը մեծ է։

Մատնիչների ցուցակի եւ Թռուցիկի առթիւ պէտք է ասել, որ այդ տեսակ դէպքերում հարկաւոր է շատ մեծ զգուշութիւն. հարկաւոր է դրական փաստեր ունենալ ձեռքում այս կամ այն անհատին այդ տեսակ ծանր յանցանքի մէջ մեղադրելու համար։ Ունէ՞ք արդեօք այդ փաստերը։ Բացի այդ՝ այնքան էլ վնասակար չեն այն մատնիչները, որոնք յայտնի են հասարակութեան. այդ դէպքում լաւ գաղտնապահ

կազմակերպութիւնը հիանալի կերպով կարող է առաջ տանել իր գործը։ Վտանգաւոր են նոքա, որոնք անծանօթ են ձեզ։ Կարո՞ղ էք երաշխաւորել, որ այդպիսիները ձեր քաղաքում գոյութիւն չունին, կամ եթէ ձեր գիտցածները հեռացուեն, նոքա չեն գալ փոխարինելու։ Սրանով չենք ասում, որ չի հարկաւոր ուշադրութիւն դարձնել այդպիսիների վրայ, ոչ՝ հարկաւոր է դրանց միշտ հալածել, եւ հէնց դրա համար Դրօշակի մէջ կարելի է տպագրել մի ազդ ուղղուած բօլգարական հայերուն, բայց ձեր պարտականութիւնն է սաստիկ գաղտնապահ լինել եւ այնպէս չանել, որ մեր գործիչ-ընկերների գնալը ու գալը յայտնի լինի հասարակութեան, ուրեմն եւ նրա մէջ գտնուած մատնիչներին։

Վեհունու մասին մենք մի անգամ յայտնել էինք բօլգարական կոմիտէներին։ Կրկնում ենք, դա մի երեսպաշտ անձնաւորութիւն է, խօսքերին չհաւատալ եւ մանաւանդ դրամ չյանձնել ձեռքը։ Այդ վարդապետին ճանաչում ենք Սալմաստում խաղացած իր դերից։

Տաճկական յայտարարութիւններ ուղարկել ենք Վահանին Վարնա։ Կ՚ուղարկենք ձեզ եւս. թող տեղւոյդ տաճիկներից ցանկացողները տան ձեզ իրենց հասցէն, մենք այստեղ կը յանձնենք եւ սրանք ուղղակի կ՚ուղարկեն։

Կանանց համար առանձին հրաւէր անելու կարիք չկայ։ Արդէն մեր կազմակերպութեան մէջ դոքա խոշոր տեղ են բռնում, մանաւանդ Վանում։ Մարօի մահը ամենալաւ կը լինի հրաւէր մեր օրիորդների համար։

«Դրօշակ»ը 1891 *թ. հրատարակւել է երկու անգամ,* [18]92 *մէկ անգամ,* 4 *եւ* 5 *համարները լոյս են տեսել* [18]93*-ին։ Միայն* 94*-ից է սկսւում կանոնաւոր հրատարակութիւնը, եւ հաւաքածուն միայն այդ համարներից սկսած կարելի է ուղարկել։ Առաջին համարները ուղարկելու ոչ մի հնարաւորութիւն չկայ, իսկ* 94*-ից սկսած արդէն դուք կ՚ունենաք։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Այս ըոպէիս Յովհաննէս Յովսէփեան, Արմենակ Մելքոնեան, Գարեգին Թեճիրեան, Վռամշապուհ Զագրճեան ստորագրութիւններով մէկ ընկերական բողոք ստացանք։

Այդ ստորագրեալ դաշնակցականները յայտնած են, որ Ռոտոսթոցի Յովհաննէս Նեվրուզեան, կոմիտէի անդամ Երկանեանի թելադրութեամբ, հալածում է եւ անպատւում իրենց բոլորովին անյայտ պատճառներով։ Ծրագրի հիման վրայ նոքա դիմած են ընկերական դատաստանին։

Խնդրենք պարզել այս անհասկանալի դրութիւնը եւ յայտնել, թէ ինչ մարդիկ են բողոքողները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Արդէն Ձեզ գրւած է եղել, որ այժմ հնարաւորութիւն կայ հրացանները տեղափոխելու. ուստի եւ ծախելու այլեւս հարկ չկայ։ Միայն աշխատէք, որ լաւ պահեն, հրացանները չփչանան։

Արվախը վաղուց է անցել Ռուսաստան, միայն ոչ մի լուր չկայ։ Ենթադրութիւնները դժբախտաբար ճիշդ են երեւում. հաւանական է, որ ձերբակալւած լինի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

81

Պատճէններու մատեան No 82, *էջ* 170-172

24-ին փետր. 97 թ.

(Պարիզ)

Յարգելի ընկեր Զարիֆեան,

Երէկ Լոնդոնից վերադարձած մի հին հնչակեան (կարծենք Կենդրոնի անդամ) հրաւիրել էր մեզ մի մասնաւոր ժողովի, որտեղ նա երկար խօսեց միութեան անհրաժեշտութեան, այդ գաղափարի արծարծման մասին եւ այլն... առաջարկեց ի վերջոյ միջոցներ գտնել երկու կուսակցութիւնները միացնելու համար։

Ժողովին ներկայ էին եւ այնպիսի ուսանողներ, որոնք շատ քիչ առնչութիւն կամ ոչ մի առնչութիւն չունէին յեղափոխական կազմակերպութիւնների հետ։ Այս հանգամանքը ինքնըստինքեան վատ ազդեց մեզ վրայ. կարծես վկաներ էին կանչուած տեսնելու հնչակեան այժմեան կենտրոնի բարի ցանկութիւնները եւ դաշնակցականների անհոգութիւնը դէպի գործը։ Ճառի առաջին կէտին պատասխանեցինք, որ բոլորովին զուր է այդ տեսակ քարոզներով զբաղեցնել մեզ։ Այդ նախադասութիւնները 6-7 *տարի է կրկնւում են այնքան, որ մեզ բոլորիս համար տաղտկալի են դարձել. ամէնից շատ այդ միութեան վերաբերեալ քարոզները լսել է հնչակեան կուսակցութիւնը, որը ամբողջ ժամանակ յամառութեամբ, «սկզբունքով» կուէլ է միութեան գաղափարի դէմ եւ որովհետեւ այժմ չի գտնւիլ մի հայ, որ չհասկնար միութեան անհրաժեշտութիւնը, ուստի այդ գաղափարը արծարծելը կարելի է աւելորդ աշխատանք համարել։ Թող պ. ճառախօսը մեզ ցոյց տայ գործնական ճանապարհը։*

Ի նկատի առնելով անցեալի փորձերը, իւրաքանչիւր մի դաշնակցական կը պահանջի որոշ երաշխաւորութիւն հնչակեան կուսակցութիւնից։ 1) *Կեանքի մէջ մեր ընկերների եւ հնչակեանների մէջ եղել են բանակցութիւններ եւ փորձեր <u>միասին</u> գործելու։ Հնչակեան կենտրոնը ամենաանխիղճ կերպով կուէլ է դրա դէմ, իսկ Սասնոյ խնդրում բռնել է ամենախայտառակ դեր, դիտմամբ յեղաշրջելով փաստերը եւ չեղած փաստեր հնարելով։ Մեր ցոյց տւած աջակցութեան փոխարէն նա մեզ անւանել է հասարակութեան դրամը վատնողներ, գողեր, խաչագողեր եւայլն։ Այս բոլորը իր ժամանակին ունեցել է իր ազդեցութիւնը եւ Դաշնակցութեան վարկը վայր է ընկել գործին անծանօթ մարդկանց աչքում։ Այժմ ի՞նչ երաշխաւորութիւն է տալիս պ. ճառախօսը, որ նոյնանման դէպքեր չեն կրկնւիլ։* 2) *Մինչեւ այժմ մենք հնչակեան կուսակցութեան ոյժին նշանակութիւն էինք տալիս,որովհետեւ քիչ թէ շատ հաւատ ընծայելով Հնչակին, ընդունում էինք, որ նրա մէջ կան <u>հերոսներ</u>, նշանաւոր յեղափոխական ուժեր։ Այդ հերոսները շատ չեն, նրանց անուններն արդէն գիտէինք, բայց յանկարծ նոյն Հնչակից իմանում ենք, որ դոքա ամենակեղտոտ անձնաւորութիւններն են, մատնիչներ են եւ այլն...*

Արդ, եթէ հերոս հռչակւածներ այդպէս են, ապա ինչպէ՞ս կը լինին միւսները։ Ինչպէս կարելի է հաւատ ընծայել այդպիսի մի կազմակերպութեան <u>բարոյական</u> ուժին։

Ի վերջոյ առաջարկեցինք, որ յայտնի երաշխաւորութիւններ տան, որ հնչակեան

կուսակցութեան կողմից նախկին անբարեխղճութիւնները չեն կրկնուիլ եւ միեւնոյն ժամանակ ոյժ ցոյց տան. մի խօսքով, որ հնչակեան ներկայ կուսակցութիւնը աշխատի վստահութիւն ներշնչել դէպի իրեն։

Ցաւում ենք, որ իր ժամանակին դուք չգրեցիք ձեր մանրամասը խօսակցութիւնը միութեան հարցի վերաբերեալ, ու չհաղորդեցիք ձեր անձնական տպաւորութիւնը եւ կարծիքը։ Մենք եթէ աւելի լաւ ծանօթ լինէինք դրանց տրամադրութեան հետ, աւելի կանոնաւոր կը տանէինք խօսակցութիւնը։

Այդտեղ կայ այժմ մի կիլիկեցի երիտասարդ Սմբատ Տէր-Ղազարեան անունով. ինչպէս լսում ենք, դա պէտքական մարդ կարող է լինել։ Ինքներդ անմիջապէս դրան չմօտենաք։ Աշխատէք մի երրորդ անձնաւորութեան միջոցով տեղեկութիւններ հաւաքել։ Դա նոր հնչակեաններից է եւ կարծենք դժգոհ Արփիարներից։ Այնպիսի դիրք տուէք, որ եթէ նա ցանկանայ մօտենալ ձեզ, կարողանայ այդ անել. կը մօտենայ՝ լաւ, չի մօտենալ, թողէք մնայ։ Մեր լսածներին համեմատ դա իր ընկերներով ցանկանում է պարզապէս կապուել Դաշնակցութեան մէջ։

Ծրագիր կ՚ուղարկենք չուտով։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

82

Պատճէններու մատեան No 82, *էջ* 180

(*Արփիարականներից դժգոհներին՝ Սօսի*[?] *Գուգարեան եւ ընկ.*)

Յարգելի պարոն,

Ձեր փետր. 14-*ի նամակը, ինչպէս եւ* 18-*ի բաց նամակը ստացուած են իր ժամանակին։*

Շնորհակալ ենք Ձեր տուած տեղեկութիւնների համար, միայն մենք չենք կարող օգտուել Ձեր ցոյց տուած ճանապարհներից. մենք կ՚աշխատենք հեռու պահել մեզ ձեր այժմեան կռիւներից։ Աշխատէք դուք ինքներդ ձեր ներքին հաշիւները մաքրելու. մեր մասնաւոր յարաբերութիւնը ձեր կազմակերպութեան այս կամ այն անդամի հետ կարող է միայն վնաս բերել գործին, քան օգուտ։

Իսկ ինչ վերաբերում է Ամերիկա մեկնած ձեր ընկերներին, որոնք վճռել են մտնել Դաշնակցութեան մէջ, խնդրենք հաղորդել նրանց հասցէն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

28-*ին փետր.* 97 *թ.*
Ժընեւ

83

Պատճէններու մատեան No 82, *էջ* 181

(*Փաստ.* 36*բ*-4)

Սլիվէնի(1) *Օժանդակ կոմիտէին,*

Յարգելի ընկերներ,

Պ. Սեպուհը(2) *մեզ գրել էր արդէն ձեր մէջ տեղի ունեցած խօսակցութեանց մասին։*

Առհասարակ գովելի է ձեր զգուշութիւնը, միայն պ. Գանարեանին, ուրեմն եւ նրա յանձնարարած մարդուն դուք կարող էք հաւատով վերաբերուել։ Այս ի նկատի կ՚ունենաք ապագայի համար։

Կնիք ուղարկուած է երէկ։ Յուսով ենք ստացած կը լինէք. կ՚ուղարկուեն պահանջած գրքերը, բացի «Կուկունեանի արշաւանքից», որ սպառած է վաղուց։

Ձեր հանգանակած եւ Եամպոլ ուղարկած դրամների ցանկը կը տեսնէք «Դրօշակի» N*-ում։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

28*-ին փետր.* 97 *թ.*, *Ժընեւ*

1.- Քաղաք Պուլկարիոյ մէջ: Նոյնը Եամպոլ:
2.- Սեպուհ ծածկանուններէն մէկն էր Հայկ Թիրեաքեանի (Հրաչ), օսմանեան դրամատան գրաւման յայտնի հերոսներէն:

84

Փաստ. 36*բ*-25

«Դրօշակ»ի խմբագրութեան պաշտօնաթուղթի վրայ «Եգիպտոսի կոմիտէներին» ուղղուած նամակի մը աւարտին, Ռոստոմի ձեռագրով՝ յետ գրութեան:

2*-ին մարտի* 1897 *թ.*

Յ. Գ.— Աւելորդ չենք համարում դնել այստեղ Վրէժ (Ատրպատականի) Կետրոն. Կոմիտէի ծախքի հաշիւը, որից կարող էք մօտաւոր գաղափար կազմել այնտեղի գործունէութեան մասին։ Ի նկատի ունեցէք միայն, որ հաշւի մէջ չեն մտած այն հրացանները, որոնք տեղափոխուած են Ռուսաստանից կամ բոլորովին պատրաստ, կամ իբրեւ նիւթ արհեստանոցի համար, ինչպէս նաեւ փամփուշտները։

Հրացաններ, մասեր, ատրճանակներ (գնուած Պարսկաստանում — 13,810 *ղրան. փամփուշտամասեր եւ պայուսակներ՝* 3374 *ղր.* 80 *կ. փամփուշտ՝* 20,604 *ղր.*, *զօնդաղներ՝*(1) 1664 *ղր.։ Զէնքի փոխադրութեան՝* 17,184 *ղր.* 83 *կ.։ Արհեստանոցի եւ արհեստաւորների՝* 7641 *ղր.* 25 *կ.։ Կաշառքներ զէնքի եւ խմբերի փոխադրութեան*

ժամանակ՝ 6,024 *ղր.* 35 *կ.։ Փոխադրութեան Վան՝* 3968 *ղր.։ Սուրհանդակի՝* 3391 *ղր։ Կամաւորների ապրուստի եւ տեղափոխութեան՝* 22,553 *ղր.* 74 *կ.։ Խմբագրութեան փոխադրած՝* 2,500 *ղր.։ Նամակ Վան, փոստ, հեռագիր, անցագիր՝* 2381 *ղր.* 20 *կ.։ Վճարումն օտար պարտքերի՝* 575 *ղր.* 50 *կ.։ Տան իրեր՝* 1025 *ղր.* 50*կ.։ Տպագրութիւն եւ մանր ծախք՝* 403 *ղր.* 65 *կ.։ Դրամարկղում՝* 276 *ղր.։ Գումարը՝* 107,308 *ղրան։*

1.- Հրացանի կոթեր։

85

Պատճէններու մատեան No 82, *էջ* 183

Monsieur Tatoul Biberdjian
Eglise Arménienne
Bucarest (Roumanie)

Յարգելի պարոն Պիպերջեան,

Ուղարկած վկայագիրն ստացանք, շնորհակալ ենք. սպասում ենք նուիրատոմսերին։

Աղասի Նարիկեանի գանակոծութեան մասին տարածւած լուրը հերքելը պատիւ չի բերել Դաշնակցութեան։ Դա ինքնըստինքեան հասկանալի է։

Թերթ կ՚ուղարկենք առանձին արուարձանները, իսկ քաղաքի մէջ բաժանելու համար ուղղակի ձեզ կ՚ուղարկենք։

Կուկունեանի արշաւանքը սպառւած է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

3-*ին մարտի* 97 *թ.*

86

Պատճէններու մատեան No 82, *էջ* 183

M. T. Vahanian M. D.
252 West 39th St.
New York city, U.S.A.

3-*ին մարտի* 97 *թ.*

Յարգելի հայրենակից,

Ձեր նամակն ստացանք։ Խնդրենք պ. Սեքլեմեանի մասին դիմէք մեր ներկայացուցչին։

T. Vahanian, 520 P. O. Box. Lowell, Mass.։ *Նրանից կարող էք ճիշդ տեղեկութիւններ ստանալ եւ նրա հետ միայն գործ ունեցէք։*

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

87

Պատճէններու մատեան No 82, *էջ* 184-186

6-*ին մարտի* 97 *թ.*

(*Իսուֆեանին*)
Ընկեր,

Նոր-հնչակեանների բարձրացրած աղմուկին շատ էլ չպէտք է նշանակութիւն տալ։ Մեր ստացած տեղեկութիւնների համաձայն դրանց մէջ սկսել են նոր երկպառակտումներ։ Հաւանական է, դրա մասին ձեզ էլ յայտնի կը լինի, որովհետեւ դժգոհների մի մասը Ամերիկա է ուղեւորուել։ Վերջիններին մէջ ցանկութիւն է նկատւում պարզապէս ձուլուել Դաշնակցութեան մէջ։

Հին-հնչակեանների կողմից եւս մասնաւոր դիմում եղաւ միութեան մասին ներկայ կենտրոնի անդամ Հմայեակի միջոցով։ Մեր պատասխանը կարճ եղաւ. մենք պահանջեցինք, որ հնչակեան այժմեան կուսակցութիւնը երաշխաւորութիւններ տայ, հաւատ ներշնչի դէպի իրեն։ Նրա անցեալը շատ վատ է. անցեալներում հնչակեան կուսակցութեան կենտրոնական վարչութիւնը միշտ արգելք է եղել այդ տեսակ միութեան. ի՞նչ երաշխաւորութիւն կայ, որ այսօր նոյնը չի կրկնուիլ։ Բացի այդ, չենք հաւատում, որ հնչակեան հին կուսակցութիւնը ոյժ ունենայ. նրա բոլոր հերոս հռչակուածները դուրս եկան մատնիչներ, շարլատաններ. ուրեմն ի՞նչ են ներկայացնում իրենցից միւսները՝ ոչ-հերոսները, որոնք մնացել են դեռ հին վարչութեան հետ։

Եթէ ժողովուրդի ցանկութիւնն է միութիւն, եթէ նորերը յանուն միութեան ժողովուրդը բարձրացնում են ձեր դէմ, եթէ չեն ուզում տեսնել զանազան կուսակցութիւններ,— դուք էլ պահանջէք, որ հիները եւ նորերը իրար հետ միանան եւ ապա ուրիշներից պահանջեն միութիւն։ Ամենալաւ, ամենահաստատ միութիւնը կը լինի, երբ մտնեն մեր կազմակերպութեան մէջ, եթէ միայն հաւատում են մեր ուժին եւ ոչ թէ <u>միութիւն</u> խօսքով աղմուկները չատացնել եւ մեր մէջ էլ խռովութիւններ ձգել։

Բոստոնի կնիքն արդէն ուղարկուած է։ Ի միջի այլոց խնդրենք ուղարկել բոլոր կնիք ունեցող կոմիտէների ցանկը, եւ գրել մեզ, թէ որքան իւրաքանչիւրը վստահելի է։

Ինչ վերաբերում է Բիւրօի կնիքին, դրա մասին արդէն գրուած է։ Այդտեղի կոմիտէները զուր են քեզ կասկածում, որովհետեւ իրենք էլ էին գրել կնիքի մասին։ Զուզեցինք դրանց պատասխանել ուղղակի, թողեցինք քեզ, որ դուն հարկաւոր բացատրութիւնները տաս. իսկ եթէ ցանկանում են, կարող ենք մեր պատճառաբանութիւնները գրել Բիւրօին։ Ի միջի այլոց չուտով պէտք է այս խնդիրը վերջացնել. մնում է մեզ դիմել Թիֆլիզ, Բօլգարիա, Պարսկաստան, Պոլիս եւ հարցնել նրանց կարծիքը տեղւոյդ բիւրօի մասին։ Մեր ցանկութիւնն է միայն խառնաշփոթութիւն առաջ չբերել, այնպէս չանել, որ միեւնոյն կազմակերպութեան մէջ <u>Բիւրօ</u> անունը զանազան ֆունկցիաներ ունենայ։ Կը գրենք միւսների կարծիքն իմանալու համար, որպէս զի վաղը դարձեալ մեզ չմեղադրեն։ Եթէ համաձայնուինք, օր[ինակ] Ամերիկան բիւրօ ունենայ, Եգիպտոսն էլ կ՚ուզենայ, Պարսկաստանն էլ, Բօլգարիան էլ... Բա կենտրոնական կոմիտէն ի՞նչ դառնայ։ Զարմանալին այն է, որ դուք սխալ էք վարուել. դրանից անպատեհութիւններ են առաջ գալիս եւ այդ բոլորի մէջ մեզ էք մեղադրում։

Շուտով պատասխանիր, հարցնե՞նք միւսներին, թէ ոչ։

Պ. Ալէօնի ընկալագիրը ներփակեալ ուղարկում ենք։ Ինչո՞ւ մեր նախկին անդորրագիրը չես ցանկանում ներկայացնել։ Տպագրե՞լ չի հարկաւոր այդ գումարը, եթէ այո, ի՞նչ ձեւով։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

88

Պատճէններու մատեան No 82, *էջ* 187-188

[*Ատրպատականի Կ. կոմիտէին*]
(*Թաւրիզ*)

Սիրելիք,

Բոլգարացին չի երեւացել իր կողմերը։ Գարագաշեանի մասին աւելի աննպաստ կարծիք կարող ենք յայտնել։ Իմ ժամանակ նա ուսուցիչներից կազմւած խմբի մէջ էր. դատարկ մեծախօս մարդու տպաւորութիւն էր թողնում։ Ինձանից յետոյ ընդհարում է ունեցել մեր այնտեղի ամենալաւ ընկերոջ հետ, որից ստացել է մի ապտակ։ Այդ ապտակից յետոյ Պ. Գարագաշեանը անորոշ սպառնալիքներ է կարդում եւ քիչ յետոյ մեր ընկերը կանչւում է ոստիկանութեան դուռը, ենթարկւում հարցուփորձի, որի ժամանակ յայտնում են նրան ի միջի այլոց, թէ այդ տեղեկութիւններն ստացւած [են] իր մի «պաշտօնակցից»։ Ենթադրելով, որ այդ պաշտօնակիցը Գարագաշեանն է, մեր ընկերը դպրոցի մէջ լաւ հայհոյում է եւ մի քանի բառունցքի հարւածներ իջեցնում։ Գուցէ մեր ընկերոջ ենթադրութիւնը ճիշտ չէ եղել, յամենայն դէպս գործ էլ մի ունենաք հետը, զգոյշ եղէք եւ գաղտնիքներ միք տալ ձեռքը։ Կողմնակի կերպով հարց ու փորձ անելով, թողէք, որ ինքը պատմի իր ընդհարումների մասին։ Նրան առանձին նամակ չեմ գրում։ Յայտնէք իրեն, որ ձեզ «գրւած» է։

Վարդը Ռուսաստան է գնացել։ Հրաչը եւ Լեւոնը Բոլգարիայումն են առայժմ։ Ուրիշ մի քանի ծրագիրներ կան, Հրաչը դժւար թէ կարողանայ այդ կողմերը գալ։

Հեռագիրը վաղուց է ստացել ենք։ Դժւարութեամբ մի քանի խօսք գուշակեցինք։ Կարծենք գրում էք, որ Մարիամի(1) *մասին կը տպենք։ Եթէ այդ է, շատ ուշ էր։ Հեռագիր գրելիս իւրաքանչիւր մի տառ առանձին եւ պարզ գրեցէք։*

Մանուկը հասցէներ էր ուզել։ Կարելի է ուղարկել Վիլլորմի «իմ» Միքայէլի հասցէներով. օրիորդների հասցէներով եւս կարելի է ուղարկել միայն ոչ ապահովագրած։

Կարօն(2) *ի՞նչ եղաւ։*

Ժողովի վճռին՝ Բիւրոների մի քանի որոշումները պարտաւորեցուցիչ անել միւսների համար, մենք հակառակ ենք. հակառակ են եւ մեր Պոլսոյ ու Բոլգարիոյ ընկերները։

Այստեղ մենք հնարաւորութիւն ունենք արժան գներով լաւ հրացաններ գնել։ Մտածէք տեղափոխման հնարների մասին եւ շուտով մեզ հաղորդեցէք։

Ամօթ է վերջապէս մեզ համար։ 6-7 տարւայ ընթացքում չկարողացանք մի ճանապարհ գտնել Ռուսաստան թերթ մտցնելու համար։ Անվերջ գանգատներ են տեղում Ռուսաստանից։ Մինչեւ այժմ Տաճկաստանից էինք տեղափոխում. այժմ այդ

ճանապարհը փակուել է։ Թէ Աստուած սիրէք, լուրջ կերպով այդ հարցով զբաղուէք։ Բիւրոյի միջոցով շատ յարմար է. ինչու թողիք այդ։ Ռուսաստանում մերոնք զրկուած լինելով թերթից, չեն կարողանում հետեւել[?] *եւ սրա նրա ասածների հիման վրայ հաւատում են ամէն տեսակ յիմարութիւնների եւ զուր աղմուկի տեղիք տալիս։*

Անշուշտ դրա արձագանքը ձեզ էլ հասած կը լինի։ Մի բան ենք խնդրում ձեզանից՝ գրել առհասարակ, թէ ինչ տպաւորութիւն է թողնում այս կամ այն համարը, այս կամ այն յօդուածը։ Ուրիշ տեղերից միշտ գրում են։ Դա անհրաժեշտ է թերթը հետաքրքիր անելու տեսակէտից։

Համբոյրներս
Ձեր Ռ.

7-ին մարտի 97 *թ.*, *Ժընեւ*

1.- Մարիամ Մակարեան (Մարօ), ինքնասպան եղած:
2.- Կարօ – ծածկանուն Ռոստոմի եղբօր՝ Արիստակէս Զօրեանի:

89

Պատճէններու մատեան No 82, *էջ* 189

(*Փաստ.* 36*բ*-26)

7-ին մարտի 97 *թ.*, *Ժընեւ*

Սլիվէնի Օժանդակ կոմիտէին,

Ընկերներ,

Եթէ Պրայիլայէն աւելորդ համարներ են ուզում, թող գրեն, թէ քանի համար են ուզում։

Նոր հնչակեանների շրջաբերականը ջանացէք շուտ ուղարկելու։

Մինչեւ որ Կենտրոնական Կոմիտէ կազմուի, խնդրենք դիմել պ. Վարազ-Վահանին(1) *հետեւեալ հասցէով՝* Ervante Sissaguian, poste restante, Varna. *Նա մեր ներկայացուցիչն է։ Նրանից կը ստանաք եւ ձեր ցանկացած տոմսակները։*

Հնչակեան կուսակցութեան առաջ բերած նոր հնարքների վրայ ուշադրութիւն դարձնելու չէ։ Աշխատէք մեղմ միջոցներով, արդար ճանապարհով այդ բոլորի առաջն առնել։

Յովհաննէս Տէր-Մինասեան անունով մի պարոն ցանկանում է Դաշնակցութեան մէջ գործել։ Նա Սլիվէն(2) *է գտնւում եւ եթէ նրան ճանաչում էք իբր վստահելի անձնաւորութիւն, ընդունէք նրա առաջարկած ծառայութիւնները։*

Ընդունէք մեր բարեւները,
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Վարազ-Վահանը հին ծածկանունն է Արշակ Վռամեանի (բուն անունով Դերձակեան Օնիկ), որ յետագային աւելի ծանօթ դարձաւ Վահաք կեղծանունով:
2.- Սլիվէնը եւ Պրայիլան Պալքանի Կեդր. կոմիտէութեան պատկանող կուս. մարմիններ են: Սլիվէնը՝ պուլկարական, իսկ Պրայիլան՝ ռումանական քաղաք է:

90

Պատճէններու մատեան No 82, *էջ* 190

Monsieur Jacob Elisée
Poste restante
Caire (Egypte)

Յարգելի պարոն,

Ձեր երկու նամակներն ստացուած են։ Առաջինի պատասխանը գրուած է կոմիտէին։

Շնորհակալ ենք Ձեր տուած տեղեկութիւնների համար։ Միայն կը խնդրենք այսուհետեւ այդ տեղեկութիւններն ուղարկել մեր ներկայացուցչին, որին դուք ճանաչում էք եւ նրա հետ խորհրդակցիլ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

7-ին մարտի 97 *թ.*

91

Պատճէններու մատեան No 82, *էջ* 190

Monsieur Missag Baghdassarian
Ecole Normale
Nancy (France)

Միայն 160 *Դրօշ[ակ] էք ուզում, որոնցից* 60-*ը նամակներով ուղարկելու համար։ Բայց Կիրասոնի համա՞ր։ Այս անգամ Ռուսաստան ուղարկուելիք թերթերուն վրան գրեցէք, որ յայտնեն մեզ, ստանում են, թէ ոչ։ Ուրիշ հնար չկայ ստուգելու։*

Մի քանի անգամ կրկնելուց յետոյ, եթէ պատասխան չստացուեց, կարելի է դադարեցնել։

Նոր Հնչակը վաղուց է լոյս չի տեսնում, բայց կարելի է պահանջել հին համարները։ Փոստի ծախքը իրենք կը վճարեն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

7-ին մարտի 97 *թ.*

92

Պատճէններու մատեան No 82, *էջ* 192

10-*ին մարտի* 97 *թ.*, *Ժընեւ*

[*Բողոքող հնչակեաններին*]

Յարգելի պարոն,

Ազդարարութիւնները վաղուց են ստացուած, բայց ճիշտ ասած, մենք չենք հասկանում, թէ ինչու բանդերոլները մեզ էք ուղարկում փոստը ձգելու համար։ Այդ բանը դուք ինքներդ առանց որեւէ դժուարութեան կարող էիք անել, ինչո՞ւ մեզ էլ էք խառնում[?]*։ Ուղարկելով այս անգամ, խնդրում ենք, որ սա վերջին անգամը լինի։ Քանի որ մենք պաշտօնապէս այս կամ այն պատասխանը չենք տուել նոր հնչակեան կուսակցութեան, մեզ համար դժուար է այդ տեսակ յանձնարարութիւններ կատարել։ Նոյն պատճառով մենք չենք կարող տպագրել մեր տպարանում ձեր առաջիկայ շրջաբերականները։*

Ուրախութեամբ կը պատասխանենք ձեր տուած [*չպատճէնահանուած մէկ բառ*] *եւ շուտով Ձեզ կ՚ուղարկենք։*

Ձեր շրջաբերականները այսուհետեւ ուղարկէք մեզ միայն կոմիտէներին ուղարկելու համար։

Յարգանօք
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

93

Պատճէններու մատեան No 82, *էջ* 193

Յարգելի ընկեր Զարիֆեան,

Նամակիս հետ միասին ուղարկում ենք մի կապոց, խնդրելով, որ այդտեղից փոստ ձգէք։ Ուղարկողները Արփիարականներից դժգոհներն են, որոնք նկատելով դրանց կեղտոտութիւնները ձգտում ունեն պարզապէս Դաշնակցութեան մէջ ձուլւելու։

Ձեզանից երկար ժամանակ է նամակ չկայ։

Ծրարներից մէկից կը հանէք եւ շրջաբերականը եւ կը կարդաք։ Դիտմամբ չենք ուղարկում Պարիզում տարածելու համար, որովհետեւ ուղարկողը խնդրում է այդ չանել, այդտեղ նրա ձեռքը(1) *կը ճանաչեն, իսկ նա ցանկանում է առայժմ անյայտ մնալ։ Թէեւ մեզ շատ անախորժ էր դրանց ներքին գործերի մէջ մտնել, բայց զիջանեցինք այս անգամ բաւականանալով միայն այս թերթերն ուղարկելով եւ մերժելով նրանց միւս առաջարկները։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Լոնդոն պ. Մինասեանին նամակ ենք գրել եւ մի քանի յանձնարարութիւններ արել, ոչ մի պատասխան չկայ։

10-*ին մարտի* 97 *թ.*

1.- Իմա՝ ձեռագիրը։

94

Պատճէններու մատեան No 82, *էջ* 194

Յարգելի պարոն Կառնիքեան[?]
Ի Գալաց

Ձեր նամակն ստացած է։ Կազմակերպութեան վերաբերեալ զանազան խորհուրդներ հարցնելու համար խնդրենք դիմել մեր ներկայացուցչին՝
Yervante Sissaguian, poste restante, Varna (Bulgarie)
եւ նրա հետ շարունակէք ունենալ յարաբերութիւն։
«Դրօշակի» համարները կ՚ուղարկւեն ձեր հասցէին, միայն աւելորդ չէր լինիլ ստանալ տեղւոյդ ընթերցողների համաձայնութիւնը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

10-*ին մարտի* 1897 *թ.*

95

Պատճէններու մատեան No 82, *էջ* 195

Վարագ-Վահանին
Վարնա

Յարգելի ընկեր,

Երկար նամակ յետոյ կը գրենք։ Շտապում ենք հաղորդել, որ տաճիկները թէ՛ այստեղ եւ թէ՛ Պարիզում խիստ կերպով խնդրում են, որքան կարելի է շուտ, իրենց ռումբը յանձնել։
Մենք կարծում ենք, թէ վերջապէս մի քանիսը <u>տանք</u> այդտեղ, Բոլգարիայում։ Եթէ դուք էլ համաձայն էք, խնդրենք հեռագրել «լաւ», եթէ ո՛չ,— հեռագրէք «վատ»։
Տաճիկները անհամբեր սպասում են։
Մի մոռացէք, որ <u>ազնիւ</u> խօսք են տալիս նախ քան ռումբը գործածելը թերթը հրատարակել։
Իսկ եթէ անհրաժեշտ էք համարում թերթը հրատարակած տեսնել, ապա յանձնել, հեռագրեցէք, օրինակ «spassel»։
Խնդրենք հեռագրել շատ շուտ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 97

96

Պատճէններու մատեան No 82, *էջ* 199-201

14-*ին մարտի* 97 *թ.*

(*Վարագ-Վահանին*)

Յարգելի ընկեր,

Ձեր նամակը եւ ժողովի արձանագրութիւնը ստացուած են։ Արձանագրութիւնը հարկաւոր է հաղորդել կոմիտէներին, բայց այդ ձեւով անյարմար է։ Գուցէ միայն բովանդակութիւնը յայտնենք։

Ձեր գրածին կոմիտէների մասին համաձայն ենք, միայն ոչ բոլորովին։ Այդ արդէն ձեր գործն է որոշել, թէ որն է վստահելի, որը ոչ։ (Անհրաժեշտ է սակայն, որ խմբագրութեանը յայտնի լինի, թէ որ կոմիտէն որ աստիճան վստահելի է)։ Մենք կ՚ուղարկենք ձեզ, դուք վստահելիներին բաժանէք։

Վարնայի համար կնիք է[ք] ուզում, բայց դարձեալ չէք գրում, թէ ինչ կնիք։

Տաճկերէն թերթերն աւելի լաւ է, որ իրենք տաճիկներն անմիջապէս ստանան։ Ֆիլիպպ[ոպոլից] գրում են, թէ դուք վերցրել էք տաճիկների հասցէները։ Ուղարկեցէք մեզ։

Եուսուֆեանից հեռագիր կար. համաձայնուել է վերջապէս։

Լալայեանին մի նամակ ենք գրել, պատասխան չկայ։ Գուցէ հասցէն ճիշդ չէ։ Գրեցէք ձեր գիտեցած հասցէն։

Թիֆլիզի ժողովին ոչինչ չի կարելի գրել, որովհետեւ նա վաղուց է ցրուած։

Պոլսից մեզ ոչ մի գանգատ չեն գրում թերթի մասին։ Մի անգամ մեզ գրել էին, թէ միայն Մարտիրոսեանի հասցէով ուղարկել. մենք այդպէս էլ անում ենք։ Թող ուրիշ հասցէ էլ տան, աւելի ուրախ կը լինինք։

Կովկաս թերթ Տրապիզոնից էր գնում, այդ ճանապարհն էլ այժմ կտրուած է։ Պէտք է այդտեղից աշխատել. այդ տեսակէտից Հրաչը կարող է շատ օգնել, որովհետեւ նա ծանօթներ ունի Օդեսա, Բաթում, Սուխում... Մենք միայն Թիֆլիզի հետ նամակագրութիւն ունինք։ Ի միջի այլոց, ինչո՞ւ մեր նամակները չէք հաղորդում Հրաչին. նրան առանց տեղեկութիւնների էք թողնում։

Վահէն Հրաչի եղբայրն է։

Յոնանի առաջարկած յայտարարութիւնը նպատակայարմար է հրատարակել այն ժամանակ, երբ կրէտական հարցը լուծուելու վրայ կը լինի։ Այժմ մեզ ոչ ոք չի լսիլ։ Իսկ այն ժամանակ մեր յայտարարութիւնը կարող է որոշ ճնշում առաջ բերել։

Բայց յամենայն դէպս մենք չենք կարող արտասահմանեան կոմիտէի, մի գոյութիւն չունեցող հաստատութեան անունից որեւէ բան հրատարակել։ Քանի դեռ արտասահման Բիւրոն չի հաստատուած, յայտարարութիւն կարելի է հրատարակել խմբագրութեան կամ Պոլսոյ կոմիտէի անունից։

Մի քանի խօսք էլ Յոնանի մասին։ Պէտք է ասած, որ դրա կուրծքը շատ թոյլ էր վերջին ժամանակներս, սաստիկ տրամադիր թոքախտի։ Ինչպէս երեւում է, Պոլսոյ կլիման վատ է ազդում նրա վրայ։ Որովհետեւ մի առանձին գործ կատարել չի կարողանում Պոլսում տեղին բոլորովին անծանօթ լինելով, լաւ չէր լինի՞ արդեօք խորհուրդ տալ նրան տեղափոխուել Եգիպտոս կամ մի այլ կէտ, ուր կարողանար քիչ թէ շատ ամրացնել իրեն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

97

Պատճէններու մատեան No 82, *էջ* 202-205

16-*ին մարտի* 97 *թ.*

(*Զարիֆեանին*)

Յարգելի ընկեր,

Տեղեկագիրը վաղուց պատրաստում էինք ուղարկելու։ Շուտով կ՚ուղարկենք։

Աչճեանի գրելով (Գարօին) փողն արդէն պատրաստ է։ Իսկ ձեր գրելով, դեռ պատրաստ չէ։ Որովհետեւ Իզմիր դրամ է հարկաւոր ուղարկել մօտ 300 fr. *եւ այդ փողը Ֆրանսիայից պէտք է փոխադրել, խնդրենք յայտնել, ունէք արդեօք այդ գումարը թէ ոչ։ Եթէ ունէք, խնդրենք անյապաղ փոխադրել Զմիւռն[ի]ա հետեւեալ հասցէին*

M. K. Mourad, poste restante Anglaise, Smyrne (Turquie d'Asie).

Յանձնել պէտք է Crédit Lyonnais-*ին եւ չէքը այդ հասցէով ուղարկել ապահովագրած։*

Իսկ եթէ չունէք, հեռագրէք non, *որպէս զի մենք ուղարկենք։*

Շէֆիկի ընկերը եկաւ խօսալու նոյն նիւթի վերաբերմամբ։ Պոլսոյ մեր ընկերները հակառակ են, մինչեւ որ դրանք գործով չապացուցանեն իրենց գոյութիւնը։ Բոլգարիայի ընկերները համոզուեցին դա յանձնել, առանց սպասելու դրանց գործին, բաւականանալով միայն նրանով, որ տաճիկներն իրենց խոստացած օրգանով կարող կը լինեն պաշտօնապէս յայտնի դարձնել իրենց գոյութիւնը, իսկ տաճիկները բաւական չէ, որ չկատարեցին իրենց առաջին խոստումը՝ նախ ատրճանակով, իրենց ուժերով ասպարէզ գալ, այժմ մինչեւ իսկ օրգանը չեն ցանկանում հրատարակել։ Այս բոլորը կասկած է յարուցանում դէպի իրենց, թէեւ գրեցինք նորից եւ խնդրեցինք շուտով պատասխան գրել, բայց յոյս չունենք, թէ համաձայնուեն։ Արդէն վտանգը մեծ է, հէնց այսօր նամակ ստացանք Տրապիզոնից, որտեղ յայտնում են, թէ տաճիկները դրանց յայտարարութիւնը հայերին են վերագրում. իրենց հասկացրէք եւ յայտնէք, թէ իրենց պարտականութիւնն է վտանգի առաջն առնել եւ ի զուր տեղից հայկական արիւն թափել չտալ։ Թող անպատճառ սկսեն իրենց օրգանը եւ պաշտօնապէս ճանաչեն բոլորից եւ թող իրենց ընթացքով (խոստումները չկատարելով) կասկածներ չյարուցանեն մեր ընկերների սրտերում։

Լոնդոնի տղայքը մեզ ոչինչ չեն յայտնել։ Յաւալի կը լինի, եթէ իսկապէս այլեւս դրանց չպահես։ Գրել էինք, թէ մտադրութիւն կայ Բոլգարիա տեղափոխել, բայց ոչ բոլորին, եւ այն ժամանակ, երբ սրա կամ նրա համար գործ կը լինի։ Հաստատ իմացէք, եթէ իսկապէս ոչ մի հնարաւորութիւն չկայ դրանց այլ եւս այնտեղ պահելու, տեղափոխենք յամենայն դէպս բոլոր անգործ մնացածներին Բոլգարիա, թէեւ այդ ճանապարհածախսը շատ ծանր կը լինի ներկայումս մեզ համար, երբ աւելի անհրաժեշտ կարիքներ կան աչքի առաջ։

Պ. Մինասեանը ինչո՞ւ մեր նամակին չի պատասխանում։ Մի քանի յանձնարարութիւններ էինք արել, ինչո՞ւ է լռում։

Neuvièeme Croisade-*ի հետ ամէն կերպ աշխատէք յարաբերութեան մէջ մտնել։ Եթէ ճիշդ է, իրենց ձեւակերպած նպատակը, մեզ շատ օգտակար կարող են լինել։*

Ինչու Տաճկաստանի ներկայ դրութեան [մասին] տեղեկութիւններ չէք տալիս

տեղական լրագիրներին, օր[ինակ] [օտար լրագրի անընթեռնելի անուն]-ին։

Տեղեկութիւնները ներքին նահանգների մասին կարող էք գտնել Դրօշակում։ Վերջին ստացած թղթակցութիւնները առատ նիւթ կարող են լինել։ Եթէ հարկաւոր [է], գրէք, տպագրելուց առաջ կարելի է հաղորդել։

Զէյթունի վերաբերմամբ կարելի է, մինչեւ իսկ անհրաժեշտ է, բայց հաւատ չկայ բոլորովին դէպի հին հնչակեան կուսակցութիւնը։ Կրկնում ենք, այնքան հին հաշիւներ կան, որ Նազարբէկի ներկայութիւնը արդէն բաւական է, որպէս զի ամէն տեսակ կասկածներ առաջ գան։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Յ. Գ.— Անցեալ անգամ ձեզ յայտնել էինք, որ գանգատներ կան Գահիրէի տղայոց վրայ, մինչեւ իսկ ձեզ էինք ուղարկել ստացած նամակը։ Խնդրել էինք, որ տղայքը լաւ պահեն եւ առիթ չտան զանազան բամբասանքների, որոնք ձգում են կուսակցութեան անունը։ Այսօր նորից ստացում են 2 նամակ Հանըմեանի եւ իր երկու ընկերների վերաբերմամբ։ Առաջարկում ենք գտնել նամակ գրողներին եւ եթէ զրպարտանքներ են, խայտառակել դրանց հասարակութեան առաջ։ Յետ ենք ուղարկում այս նամակները եւս։

Կրկնում ենք, զգոյշ եղէք, այս տեսակ բամբասանքների առաջն առէք, որ մեծ ծաւալ չստանան։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

98

Պատճէններու մատեան No 82, *էջ* 207

16-*ին մարտ* 97 *թ.*
Ժընեւ

(*Լոնդոն, Բանկի տղայոց*)

Յարգելի ընկերներ,

Ուղարկում ենք ձեր ընկերների նամակը։

Պ. Զարիֆեանի գրելով, դուք միայն մինչեւ ամսոյս վերջը կարող էք մնալ այդտեղ։ Խնդրենք հաղորդել այդ մասին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Յ. Գ.— Խնդրենք ուղարկել մանրամասը տեղեկութիւններ ձեր սպանուած ընկերներու մասին։

ՆՈՅՆ

99

Փաստ. 36բ-27

Յուցակին մէջ տարեթիւը հարցականով 1897?:

«Դրօշակ»ի խմբագրութեան կողմէ Աղեքսանդրիոյ կոմիտէին ուղղուած նամակի վերջաւորութեան, Ռոստոմի գրչով յետ գրութեան է:

Ժընեւ, 16 *մարտի*

.....

Յ. Գ.— Մի անգամ ձեզ յայտնել էինք, որ գանգատներ կան Գահիրէի տղայոց վրայ, մինչեւ իսկ ձեզ էինք ուղարկել ստացւած նամակը: Խնդրել էինք, որ տղայքը լաւ պահեն եւ առիթ չտան զանազան բամբասանքների, որոնք ձգում են կուսակցութեան անունը: Այսօր նորից ստացւում են 2 *նամակ Հանըմեանի*(1) *եւ իր երկու ընկերների վերաբերմամբ: Առաջարկում ենք գտնել նամակ գրողներին եւ եթէ գրպարտանքներ են, խայտառակել դրանց հասարակութեան առաջ: Յետ ենք ուղարկում այս նամակները եւս:*

Կրկնում ենք, զգոյշ եղէք. այս տեսակ բամբասանքների առաջն առէք, որ մեծ ծաւալ չստանայ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Արտաւազդ Հանըմեան – Եգիպտոսի յայտնի ընկերներէն:

100

Պատճէններու մատեան No 82, *էջ* 211-214

19-*ին մարտի* 97 *թ.*

[*Հայկ Թիրեաքեանին*]

Սիրելի Հրաչ,

Վահապի մասին արդէն Գարօն քեզ գրել է: Քեզ ուղարկած վկայականի մասին նա մեզ ոչինչ չի գրել. շատ ես կասկածոտ:

— Քո ուղած հաշւեցոյցը չգտանք. որտե՞ղ ես դրել:

— Պարիզում միջոցներ են ձեռք առնում Նուպարին(1) *մօտենալու. մի կոմիտէ է կազմել եւ գուցէ փող ստանանք:*

— Բուէնոս-Այրէսից տղայքը լաւ են եկել. վարձւել են շոգենաւի վրայ Ամերիկայից Եւրոպա ուղարկւող անասուններին (*ոչխար, կով, եզ...*) *խնամելու համար: Բացի այդ, մինչեւ իսկ վարձ են ստացել իրենց աշխատանքի համար: Այժմ Լոնդոնում ապրում են* Armée de Salut-*ի հաշւով: Մենք եւս ուղարկեցինք* 300 fr. *գրպանի ծախք: Բայց ինչպէս իմացանք, մինչեւ այս ամսոյս վերջը միայն կարող են ապրել, այնպէս որ պէտք է դրանց անմիջապէս ճանապարհ ձգել դէպի Բոլգարիա: Զգիտենք, թէ ճանապարհածախք որտեղից ենք գտնելու:*

Տղայքը պատրաստ են նորից գործի անցնելու։

Քո առաջարկած փոխառութեան ձեւը հայերիս համար անյարմար է։ Ոչ ոք ոչ մի կոպէկ չի տալ։ Ո՞ւմ վրայ յոյս դնի, ո՞վ պէտք է վերադարձնի...

— Պոլիս, ինչպէս Յոնանը գրում է, միմիայն կարկատաններ են անում։ Նորից է սկսւում կազմակերպութիւնը։

Թիֆլիզից գրում են, որ Շահրիկեանը պատրաստականութիւն է յայտնում գործել արտասահմանում. անյարմար գտնելով նրան առայժմ խմբագրական գործին համար, մենք գրեցինք, որ աշխատեն բայց եւ այնպէս շատ շուտով ճանապարհ ձգելու դէպի մեր կողմերը։ Նա կարող է, որքան մեզ յայտնի է, շատ մեծ յաջողութիւն ունենալ հարուստների շրջանում։ Գուցէ նրան յաջողւի արտասահմանեան հարուստներից դուրս բերել Զէյթունի գործի համար անհրաժեշտ գումարը, իսկ Զէյթուն գնալդ կրնայ ուշանալ։ Նախ պէտք է սպասել Եգիպտոսից մեկնած տղայի տեղեկութիւններին։ Իսկ եթէ հարկաւոր դրամը լինի, կարծենք, կարող ես իսկոյն ճանապարհ ընկնել։ Եղբայրս(2) *գրել էր Պարսկաստանից, որ հեռանում է այդտեղից եւ ուզում է Պոլիս գնալ գործելու։ Հաւանական է, որ շուտով նրանից նամակ ստանանք, եթէ Թիֆլիզ գրած լինի։ Նա շատ լաւ ընկեր կը լինի քեզ համար եւ կարեւոր ոյժ Զէյթունում։*

Անցագիր ուղարկելը դժւար չէ, միայն մենք զարմանում ենք, որ Զաւէնը պարսկական անցագրով է ցանկանում ներս մտնել, կարծես աւելի եւս կասկած իրեն վրայ հրաւիրելու համար։ Արդէն Մարտինի գրելով, հնարաւորութիւն կայ առանց անցագրի ներս ընդունելու։ Արդէն Պետրոսը ճանապարհ է ընկել եւ պատրաստւում են նրան ափ հանելու։ Հաւատացած են, որ կը յաջողին։ Թող կամ առանց անցագրի մտնի, կամ թէ աւելի ապահով է Զաւէնի համար իր սեփական անցագրով մտնել։

— Ատրճանակ չենք կարող ուղարկել, որովհետեւ փող չունենք դրա համար։ Այստեղ կայ տեղական զինւորականը, ոչ այնքան լաւ մեծը, բայց շատ լաւը, արժէ 55 fr.*։ Զաւէնը գիտէ, մէկը տարել էին Տրապիզոն, կարծեմ Վրէնն էր կրում։ Եթէ ազատ դրամ լինի, կը գնենք եւ կ՚ուղարկենք։*

Russie Sout[erraine]-*ից թարգմանելու հարկ չկայ։ Եղածները կարողացանք շարել, մնաց նոր թարգմանութիւնները։*

Զմոռանամ ասել, որ մեր ձեռքի տակ ունեցած անցագրով կարելի է հաստատ անցագիր ստանալ ամէն տեղ, ուրեմն եւ այդտեղ։ Հարկաւոր է միայն անցագրի մէջ նշանակւած նշաններն իմանալ։

Ժողովի արձանագրութիւնը ուզում էինք ուղարկել, բայց նա նախ այստեղ հարկաւոր է միշտ, երկրորդ՝ շուտով կը գայ Զաւէնը, որն ամէն ինչ կը պատմի։

— Աճէմեանին կծու պատասխան տուինք։ Յայտնեցինք իրեն (Ի՜նչ լաւ է պատճէններն ունենալ. այս տողերն արտագրում եմ), որ մեր կարծիքով էլ հայ ազգը հանգստութեան է կարօտ։ Բայց նա հանգիստ չէ այժմ եւ հանգիստ էլ չի լինիլ, թէկուզ յեղափոխական շարժումը բոլորովին դադարի. հէնց այդ հանգստութիւնը ձեռք բերելու համար մենք անհրաժեշտ ենք համարում կռւել։ Ինքն էլ համաձայնւեց, որ սուլթանին չի կարելի թողնել։ Ուրեմն յեղափոխութիւնն անհրաժեշտ է։ Պատրիարքը, Դաղեանը եւ այլն դժգոհ են նախընթաց ցոյցերից, որովհետեւ մեծ արդիւնք չեն ցոյց տւել եւ ժողովուրդը զինւած չլինելով՝ կոտորւել է շատ։ Մենք եւս անբաւական ենք եւ ցանկանում ենք աւելի մեծ գործ կատարել։ Սրանից հետեւում է, որ ոչ թէ յետաձգելու մասին պէտք է խօսել, այլ <u>աջակցելու</u>։ Թող ուրեմն մեր ազ-

գայինները աջակցեն մեզ եւ չստիպեն մեզ դիմելու անցեալի տաքտիկային՝ սպառնալիքով դրամ կորզելու, որ աղէտաբեր է երկու կողմի համար եւս։ Պատւիրակը խոստացաւ այդ բանը հաղորդել ում հարկն է, աւելացնելով, թէ պատրիարքի համար անյարմար է այդպիսի գործերում խառնւել։ Պատասխանեցինք, թէ ինքը Օրմանեանը հնարներ կը գտնի, եթէ ցանկանայ... Բացի այդ, առաջուց յարձակւեցինք Օրմանեանի քաղաքականութեան վրայ, խորհուրդ տալով հեռու մնալ եւ [?]*կից...*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Խօսքը Պօղոս Նուպարի հօր՝ Նուպար փաշայի մասին է:
2.- Իմա՝ Ռոստոմի եղբօր՝ Արիստակէս Զօրեանի (Կարս):

101

Պատճէններու մատեան No 82, *էջ* 215-218

20 *մարտի* 97 *թ.*
Ժընեւ

Լօվելի կեդրոնական կոմիտէին [*Միացեալ Նահանգներ*]

Յարգելի ընկերներ,

Ձեզ արդէն ուղարկւած են պաշտօնական թղթեր նամակագրութեան համար։ 300 *թերթ լաւ, անգլիական թղթի վրայ՝ ձեզ համար եւ* 600 *աւելի հասարակի վրայ՝ միւս կոմիտէների համար։ Խնդրենք ուղարկել ցանկացողներին, որպէս զի բացառիկ դէպքերում պաշտօնական գրութեանց ժամանակ կարողանան գործածել։*

Ներփակեալ ուղարկում ենք Թրոյի եւ Զըսիի կոմիտէների կնիքները։

Հէվրհիլի հասարակութեան կողմից ստացանք մի հանրագրութիւն, որով պահանջում են միութիւն, նոյն ոգով մէկն էլ ստացանք Լօրէնսից։ Երեւի դարձեալ կը ստանանք։ Ցանկալի էր ձեր կարծիքը այդ հանրագրութեանց համար, թէ որքան դոքա արժանի են ուշադրութեան։ Այդ հանրագրութիւնների միտքը մենք չենք հասկանում։ Եթէ դոքա կարծում են, թէ մենք բնաւ միտք չունինք միանալու եւ նպատակ են դրել այդ միտքը մեր մէջ զարթեցնելու, հասկացրէք իրենց, որ աւելորդ աշխատանք է իրենց արածը։ Դաշնակցութեան անցեալը ամենալաւ գրաւականը կարող է լինել։ Հարցը բնական խոչընդոտները վերացնելու մէջն է. ահա թէ ինչի վրայ պէտք է ջանք թափել։ Թողնելով մի կողմ անձնաւորութիւնների խնդիրը, որն երկրորդական է, կայ սկզբունքի տարբերութիւն, կայ վերջապէս կազմակերպչական ձեւի տարբերութիւն, որ ամենագլխաւորն է։ Ապակենդրոնացման ձեւը մենք ամենայարմար, ամենաարդար ձեւն ենք համարում, իսկ նոքա չեն ուզում հաշտւել այս մտքի հետ։ Թող ուրեմն հասարակութիւնը որ հանրագրեր է պատրաստում, միմիայն խորհուրդներով, ընդհանուր դիմումներով, իր զայրոյթը արտայայտելով

չբաւականանայ,— այդ միամիտ ընթացք է, թող նա մօտենայ հարցին, թող նա սրտին մօտ ընդունի, այն թող նա [մէկ տող չպատճէնահանուած] *մէջ գործողի դրութեան մէջ,— այն ժամանակը նա, որ այսօր «ոչ մի տարբերութիւն չի տեսնում երկու կուսակցութեանց մէջ» եւ շատ հեշտ կերպով պահանջում է «միութիւն», կը տեսնի այդ բնական խոչընդոտները եւ լուրջ կերպով կը զբաղուի նրանց հեռացնելովը։ Հեռու տարածութեան վրայ իսկապէս շատ դժուար է տարբերութիւններ տեսնել, հեռուից գայլին եւ ոչխարին մէջ էլ տարբերութիւն չի կարելի գտնել, բայց մօտեցիր քիչ եւս, կը նկատես եւ ոչխարի պոզերը եւ գայլի ժանիքները... Թող հանրագրութիւն ստորագրողները մօտենան քիչ եւս, նոքա շատ լաւ կը տեսնեն թէկուզ կենդրոնացման եւ ապակենդրոնացման տարբերութիւնները։*

Մէկ ընդհանուր նկատողութիւն եւս։ Հանրագիր ստորագրողները լաւ սիրտ ունին, ցանկութիւնները շատ գովելի են, խօսք չկայ։ Բայց դոքա իրենց չափը կորցրնում եւ իրենց մոռանում են։ Խաղաղ նահանգներում հանգիստ կեանք վարող պարոնները յաւակնութիւն ունին այլ եւ այլ պահանջներ դնելու բուն երկրի մէջ հալ ու մաշ եղող, յեղափոխական կրակի մէջ խորովւող մեր ընկերներին։ Յանդգնութիւն ունին կարծելու, որ իւրաքանչիւր րոպէ իրենց կեանքի հետ խաղացող մեր ընկերները «միութեան» խնդրին զգուշաբար վերաբերւելով, աւելի քիչ են սիրում գործը, քան թէ նրանք, որոնք ժամանակ առ ժամանակ մտածում են այդ գործի մասին։ այդ դեռ ոչինչ։ դրանց բերանից մենք դեռ վիրաւորանքներ ենք լսում...

Այս առթիւ ձեր ուշադրութիւնն ենք դարձնում հետեւեալ փաստի վրայ։ Հէվըրհիլի հանրագրի մէջ վիրաւորանքներ կան մեր կազմակերպութեան հասցէին եւս։ Ստորագրողների կարծիքով «անձնական կիրքերն եւ կամ այլ ուղղութիւններ» են խանգարում միութեան իրագործման, ուստի եւ հրաւիրում են դաշնակցականներիս թողնել «մեր անձնական կիրքերը»։ Նոքա զայրոյթ են յայտնում մեր դէմ եւս։ «Ով են անհատներ եւ ի՞նչ իրաւունք ունին նոքա խաղալու ժողովրդի բաղդին հետ» գոչում են դրանք եւ յայտարարում, որ այլ եւս չեն ուզում խաբւել։ Դուրս է գալիս, որ «Դաշնակցութիւնը», ինչպէս եւ միւս կուսակցութիւնը, որի հետ առաջարկում են միանալ, խաբում են ժողովրդին, ղեկավարւում են ոչ թէ ժողովրդի շահերով, այլ իրենց անձնական կրքերով եւայլն...

Ստորագրողները, իբրեւ մեր կազմակերպութեան անծանօթ մարդիկ, դեռ կարող են այս կամ այն աննպաստ կարծիքը ունենալ։ Բայց ի՞նչ ասենք Հէվրհիլի մեր կոմիտէին, որի կնիքն ու ստորագրութիւնը նոյնպէս փայլում էին միւսների շարքերում։ Զէ՞ որ դրանով մեր կոմիտէն պաշտօնապէս հաստատում է կողմնակի կերպով մեզ վրայ բարդած մեղադրանքները։ Այս անհասկանալի դրութեան դիմաց մեզ մնում է երկու ենթադրութիւն անել.

1) *որ մեր կոմիտէն առանց կարդալու կամ առանց մտածելու կարդացածի մասին, շտապել է իր կնիքը միացնելու միւսներին։*

2) *որ նա իսկապէս համաձայն է հանրագրի մէջ արտայայտւած մեղադրանքների հետ։*

Խնդրում ենք Լօվելի կենդրոնական կոմիտէից պարզել մեզ Հէվրհիլի կոմիտէի ընթացքը, որպէս զի մենք էլ ըստ այնմ որոշենք մեր յարաբերութիւնները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

102

Պատճէններու մասեան No 82, *էջ* 220-221

Պոլիս

Սիրելիք,

Երէկւայ Intrass. *մէջ կարդացինք ձեր արած դիմումի մասին։ Երեւի պապը ինքն է յայտնել։ Եթէ այդպէս յայտնւում է, ինչո՞ւ մենք եւս չյայտնենք։*

Ձեր ծրագիրը մեր կարծիքով ամենաանհրաժեշտն է այս րոպէիս։ Սպառնական դիրքը միայն կարող է ստիպել դիպլոմատներին աւելի լուրջ ուշադրութիւն դարձընել մեր հարցի վրայ։

Անգլիական լրագիրները այժմ չափազանցրած լուրերով Հայաստանի վերաբերմամբ ձգտում են ընդհանրութեան ուշադրութիւնը հայկական խնդրի վրայից չհեռացնել։

Անգլիական կառավարութիւնը նոյնպէս կարծես առիթներ է փնտրում յարմար կէտից ներս խուժելու. կարծես այժմեանից հող է պատրաստում խառնաշփոթութեան ժամանակ յարմար դիրքեր գրաւելու։

Մինչեւ ընդհանուր ժողովի կայանալը կան հարցեր, որոնք անպատճառ պէտք է շուտ լուծւեն։ Արփիարականները հանրագրութիւններ են պատրաստել տալիս, գրգռում են ժողովրդին, որպէս զի նա դիմի երկու կուսակցութեանց եւս, պահանջելով միութիւն, եւ եթէ դրանցից մէկը մերժի, միացնի իր ուժերը համաձայնողի հետ։ Պէտք է վերջապէս բերանը բանալ եւ վերջնական հարւածը տալ։ Արդէն նրանց մէջ մի քանիսը պատրաստւում են պարզապէս ձուլւել։ Գրեցէք շուտով ձեր կարծիքը թէ ինչ պատասխան, ինչ ձեւով գրւի։

Պատերազմը հաւանական է, որ ծագի։ Յունական կառավարութիւնը զգուշացնում է պետութիւններին, յայտնելով, որ տաճկական սահմանապահ զօրքերը անկարգութիւններ են անում։ Այդ նշան է, որ ինքն է պատրաստւում «անկարգութիւններ» անել...

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

20-ին մարտի 97 թ.

103

Պատճէններու մատեան No 82, *էջ* 222

21 *մարտի* 97 *թ.*, *Ժընեւ*

Նանսի

Սիրելիս,

Ցանկը յանձնեցինք տաճիկներին, սակայն նոքա դժւար թէ օգտւեն, որովհետեւ երկիւղ են կրում նամակները բացւելուց։

Թերթերից 40 *հտ. ձեր ցանկութեան համեմատ կ՝ուղարկւեն։*

Կիրասոնի հետ մենք նամակագրութիւն չունենք. պէտք է Տրապիզոնից հարցրնել։

Կապոյտ եւ դեղին գրքոյկները(1) *մենք ինքներս չկարողացանք ստանալ, այդ գրքերը չեն ծախւում։*

Հնչակի մասին նորից դիմեցէք։

Զը գիտենք, ինչ տեսակ ծրարներ էք ուղում, որ այդտեղ չի ճարւում։ Այս նամակի ծրարը հաւանո՞ւմ էք։

Ռուսաստան ուղարկւած թերթերի վրայ մի քանի անգամ եւս կրկնեցէք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Մկրտիչը ուղարկել է ձեր ցանկացած ալբոմը։

ՆՈՅՆ

1.- Հայկական հարցին նուիրուած փաստագրական հատորներ՝ հրատարակուած անգլիական (կապոյտ) եւ ֆրանսական (դեղին) կառավարութեանց կողմէ:

104

Պատճէններու մատեան No 82, *էջ* 223

21 *մարտի* 1897 *թ.*, *Ժընեւ*

Լոնդոն, տղաներին

Յարգելի ընկերներ,

Ուղարկում ենք ներփակեալ նամակը, որ ստացաք Եգիպտոսից։

Մի նամակ էլ մի քանի օր առաջ էինք գրել եւ հարցրել ձեր դրութեան մասին, որովհետեւ լսեցինք, թէ իբր դուք միայն մինչեւ ամսոյս վերջը կարող էք մնալ ձեր տեղը։ Շտապեցէք օր առաջ պատասխանել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

105

Պատճէններու մատեան No 82, *էջ* 223

21 *մարտի* 1897 *թ.*, *Ժընեւ*

D. Grigor A. Brusalian
Braïla (Roumanie)

Ձեր նամակը ստացուած է, սակայն մանդան՝ ոչ։ Խնդրենք յայտնել մեզ, թէ ինչ հասցէով էք ուղարկել։ Իսկ եթէ հասցէի ճշդութեան մէջ համոզուած էք, բարեհաճեցէք դիմել փոստային վարչութեան։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

106

Պատճէններու մատեան No 82, *էջ* 224

Monsieur Zarifian
Claude Bernard, 1, Paris

Այսօր նամակ կար Լոնդոնից. տղայքը չեն կարող մնալ։

Շտապէք որեւէ կերպով նրանց Բոլգարիա (Վարնա կամ Բուրգազ) ճանապարհ ձգել։ Որքան շուտ, այնքան լաւ։

Եթէ Լոնդոն հարկ լինի դրամ փոխադրել, ճանապարհածախսի կամ այլ ծախսերի համար, խնդրենք անյապաղ հաղորդել հարկաւոր հասցէն։

Խնդրենք շտապել, որպէս զի կարողանանք հարկաւոր գումարը բերել տալ իր ժամանակին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

22-*ին մարտ* 97 *թ.*

107

Պատճէններու մատեան No 82, *էջ* 225-227

23 *մարտ* 97 *թ.*, *Ժընեւ*

Յարգելի ընկեր Զարիֆեան,

Երէկ առաւօտ ուղարկեցինք մի հեռագիր ձեր կոչն ուղարկելու համար, իսկ յետոյ մի carte postale. *ստացած կը լինէք։*

Շէֆիկի ընկերոջ էլ յայտնել ենք. մեր Բոլգարիայի ընկերների պատասխանը բացասական եղաւ, ոչինչ չեն յանձնել, եթէ դրանք, ինչպէս խոստացել են, իրենց պաշտօնական գոյութիւնը չհաստատեն։ Այդպէս էլ հարկաւոր է։

Տղայոց մասին երէկ գրեցինք։ Պէտք է ամէն ջանք թափել, որքան կարելի է շուտ ճանապարհ ձգել. իսկ եթէ մենք տատանուում էինք անձամբ դիմելու, դրա պատճառն այն էր, որ կասկածում էինք դրա լրջութեան վրայ։ Այս տեսակէտից աւելի լաւ էինք համարում նախ քան պաշտօնական դիմումը, մասնաւորապէս դիմում լինի։ Դուք աշխատէք մասնաւորապէս տեղեկութիւններ հաւաքելու, գուցէ մենք էլ դիմենք։

Մինասեանի մասին մի անհաւատալի բան իմացանք. իբր թէ տղայոց 300 fr. *իրենց չէ յանձնել. Զգիտենք, թէ որքան ստոյգ է դա, միայն ենթադրում ենք յամենայն դէպս, որ եթէ չի յանձնել, աւելորդ է համարել։ Ինչ որ է, խնդրենք մի կերպ, կողմնակի կերպով իմանաք. չլինի թէ ուղղակի դիմումով վիրաւորած լինէք նրան։*

Այս բոպէիս նստած խօսում է Լեւոնը, որ նոր է վերադարձել։ Խօսակցութիւնից իմացանք, որ Արփիարականներից դժգոհ խմբի շրջաբերականների մասին տեղեկութիւն ունի։ Սա մեզ յաջողւեց ձրի ճանապարհ ձգել. դա մի բարեբախտութիւն կը լինի մեզ համար մանաւանդ ներկայ բոպէիս։ Զգիտենք, կարող են արդեօք իրենք մեկնելու, թէ մէկը կը գնայ. այս բոլոր հոգսերը ձեզ ենք թողնում, իսկ հարկաւոր դրամի համար անյապաղ հեռագրէք մեզ։

Տղայոց տրամադրութիւնը կարծես խառնուում է։ Բանը նրանումն է, որ Ամերիկայից 2,000 *ֆր. են ուղարկել դրանց Բուէնոս-Այրէսից տեղափոխելու ծախսերը հոգալու համար։ Այդ բանը նրանք իմացել են եւ այժմ տօնը փոխելու վրայ են։ Հարկաւոր է խիստ կերպով հէնց առաջին անգամից դրանց քամին իջեցնել։ Ձեր դիմումը Կրէտայի վերաբերմամբ շատ աղմուկ է առաջ բերել։ Լուրը հասել է Բոլգարիա, այնտեղի մեր ներկայացուցիչը շտապով հեռագրել է մեզ, որպէս զի խանգարենք Կրէտա մեկնիլը։ Մեզ համար այս բոլորը մութն էր, մինչեւ որ ստացանք Ձեր նամակը։ Ինչո՞ւ առաջւանից չէիք յայտնել։ Կրէտա գնալու, յոյների հետ գործելու հարցը շատ լաւ է։ Արդէն Բոլգարիայից, Յունաստանից, Եգիպտոսից շատերը գնում են։ Ցաւալի է, ի հարկէ, որ առաջւանից չեն կարողացել առանձին գնդեր կազմել։ Եգիպտոսի մեր ընկերը աշխատել է, բայց չի յաջողել։ Բայց բանկայի տղաների մէջ կան կարեւոր ուժեր, որոնք մեզ հարկաւոր են։ Թող գնան Բոլգարիա, այնտեղ կը գտեն այդ կարեւոր ուժերը, իսկ մնացածներին կարող են եւ Կրէտա ուղարկել։*

Neuvième Croisade-*ի մասին եթէ շատ զարմանալի թւաց։ Այդ այնպիսի մի բան էր, որ խիստ գաղտնիք պէտք է մնար։ Ինչո՞ւ էք սրան յայտնել։*

Ի միջի այլոց ոչ մի վտանգ չկայ շրջաբերականները ուղարկել այն ձեւով, ինչ ձեւով որ դուք ստացաք։ Աշխատէք այդ բանը չտարածւի, թէ չէ մի գեղեցիկ օր կը տարածւի, թէ դաշնակցականներն իրենք են կազմել եւ տարածել։

Հնչակի հրապարակական հրաւէրը դուք նորութիւն էք համարում. այդ հրաւէրը մենք Դրօշակի I *համարում ենք կարդացել, իսկ դրանց կողմից այդ պարզ փարիսեցիութիւն է արդի հանգամանքներում։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Եթէ տղայոց գնալը ձրի լինի, թող բոլորն էլ գնան, մինչեւ իսկ գործ ունեցողները։

ՆՈՅՆ

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 108

108

Պատճէններու մատեան No 82, *էջ* 228-235

23 *մարտ* 97 *թ.*
Ժընեւ

Յարգելի ընկեր Վարագ-Վահան(1),

Ձեր ուղարկածները բոլորն էլ ստացած են, ինչպէս եւ վերջին երկու հեռագիրները։

Վառնայի կոմիտէի համար առայժմ պատւիրեցինք «Վառնայի կոմիտէ» կնիքը։ Յետոյ եթէ հարկ լինի, կարող ենք փոխել։

Մենք ոչ մի առարկութիւն ընդհանրապէս կնիք ուղարկելու դէմ չենք անում. մեր խօսքը «թէ կարող օտարի ձեռն ընկնի» եւ այլն վերաբերում է կորած կնիքին։ Արդէն այդ դէպքում նախազգուշացրինք, որ ապահովագրած ուղարկուեն այդ տեսակ թղթեր կամ իրեր, բայց դարձեալ մեր ընկերներից մէկը Սլիվէնի կնիքը, ինչպէս արդէն այժմ իմանում ենք, ուղարկել է պարզ նամակով։ Նա այժմ այստեղ չէ, գրեցինք նրան, որ հաղորդէ մեզ, թէ ինչ հասցէով եւ ձեւով է ուղարկել, ինչո՞ւ Սլիվէնից մինչեւ այժմ չեն յայտնել։

Եթէ գրած էի կոմիտէների հաշւի համար ոչ մի գումար չենք կարող պահել, այդ չէ նշանակում, թէ մենք աւելորդ բան ենք համարում։ Շատ բան կայ, որ մենք պէտք է անենք, աւելի կարեւոր մինչեւ իսկ, բայց ժամանակ չունենք։ Աւելի նպատակայարմար է, այդ բանը ձգել կենդրոնական կոմիտէներին։ Իսկ մենք կը պահենք միայն կենդրոնական կոմիտ[էի] ուղարկած հաշիւները։ Այնպէս որ զուր էք ուղարկել մեզ Ֆիլիպպոպոլի հաշիւը։ Տեղւոյդ բոլոր կոմիտէների հաշիւները պէտք է կեդրոնանան ձեզ մօտ, իսկ դուք մեզ ուղարկէք ընդհանուր հաշիւը։

— Հաւաքածուի մասին պէտք է ասած, որ ամէն կողմից խնդրում են, իսկ մենք չենք կարող ուղարկել. I եւ II թւերից(2) *միայն մէկ մէկ հատ ունենք. միջի համարներից մի քանիսը շատ քիչ են, 3-4 հատ ընդամէնը։ Կ՚ուղարկենք ձեզ մի հաւաքածու, առանց I եւ II համարներից եւ խնդրենք յայտնել միւսներին, որ զուր տեղից չդիմեն, այլ իրենց ունեցածներից հաւաքածուներ կազմեն։*

— Սոֆիայի կնիքը շուտով պատրաստ կը լինի. կամ ուղղակի կ՚ուղարկենք. եթէ հարկ լինի նամակ են գրելու կամ Ձեզ, հրահանգներ դուք ուղարկէք։

— Ձէնքերի համար գրեցինք Թաւրիզ ու Թիֆլիզ։ Տրապիզոն հարկ չկայ։ Պարսկաստան կարելի է գրել պարզ թանաքով։ Հարկաւոր ժամանակը գործածել «Հայրենիք սրբազան»(3), *բայց չպէտք է մոռանալ ներսի ծրարը։*

— Ձէյթունի մասին տեղեկութիւն ունինք Եգիպտոսից, միայն ոչ Տուրանից(4), *որը շատ չի խառնւում գործերին։ Արդէն այդտեղից մէկը մեկնած պէտք է լինի։ Սրա ուղեգիծը որոշւում է։ Դուք գտնում էք, որ այնտեղ աւելի յաղթանդամ ... եւ այլն մարդ է հարկաւոր, որ Հրաչը*(5) *յարմար չէ, չարքաշ չէ։ Մեր կարծիքով այնպիսի գործի համար մէկ, երկու մարդ բաւական չէ։ Նա որ այժմ ճանապարհ է ընկել, շատ յարմար է նախնական տեղեկութիւնների համար։ Մէկ մարդ է մեզ հարկաւոր Կիպրոսում, միւսն էլ Գարօի*(6) *կարծիքով Աթէնքում։ Եթէ Հրաչը չի կարող չարքաշ կեանքը տանել, թող չտանի. նա հարկաւոր կը լինի Կիպրոսում. թող միշտ այնտեղ մնայ հաղորդակցութեան, փոխադրութեան համար։ Իսկ յաղթանդամ, պաղարիւն, կազմակերպող... ի հարկէ հարկաւոր է։ Ի նկատի ունինք մի քանիսը, որոնք եփւել են հայդուկային խմբերում (ի միջի այլոց ի նկատի ունիմ եւ եղբօրս*(7),

որ լաւ զինագործ է)։ Հարկաւոր կը լինի մտցնել այնտեղ եւ սպաներ... Այս բոլորը ապագայի գործ է, իսկ առայժմ հարկաւոր ենք համարում, որ Հրաչը ուղեւորւի Կիպրոս։ Եթէ իր մէջ ոյժ չզգայ երկիր ներս մտնելու, չարքաշ կեանքը կրելու եւ այլն... թող գնայ։

— Հնչակեանների հետ պէտք է վերջացնել։ Ամերիկայից սկսել են, հանրագրութիւններ գալ, որով պահանջում են միութիւն։ Դա Մելիքի(8) *գրելով, Արփիարականների դրդումով է։ Արդէն համարեա թէ բոլորի կարծիքները գիտենք։ Կարող ենք սկսել բանակցութիւնները, միայն սպասում է Թիֆլիզ գրած նամակի պատասխանին։ Գրեցէք, թէ ինչպէս էք յարմար դատում ձեւակերպել մեր պատասխանը։*

Հին հնչակեան վարչութեան տրամադրութեան մասին արդէն գրած էինք։ Մնալով բոլորովին անզօր, նոքա եւս միութեան պատրանքով ցանկանում են իրենց raison d'être-*ը*(9) *պահպանել։ Հանրագրութիւնը թող պատրաստեն եւ ուղարկեն. դա առիթ կը լինի հրապարակօրէն դրանց կեղտոտութիւնները մերկացնելու, մի քիչ անցեալը յիշեցնելու։ Ոչ թէ ընդհանուր ժողովի ենթարկել, այլ մինչեւ իսկ կոմիտէներին հաղորդել աւելորդ է։ Բոլորի պատասխանը շատ պարզ է։*

Ընդհանուր ժողովի հարցը միշտ մնում է։ Թիֆլիզի բիւրոն համաձայնել էր ընդհանուր ժողովը կազմել արտասահմանում, բայց որովհետեւ ուշացաւ, մօտեցաւ Յունւար ամիսը, երբ ամէն տարի մասնակի ժողովներ են տեղի ունենում, առաջարկեցինք իրենց մասնաւորը ժողովում խօսել ի միջի այլոց եւ ընդհանուր ժողովի կայացնելուն մասին, կամ ընտրել ժողովում 2-3 *մարդ արտասահմանեան ընդհանուր ժողովին ներկայանալու համար։ Բայց յանկարծ արձանագրութիւնից տեսնում ենք որ ժողովը ընդհանուր է համարւել։*

Արտասահանեան բիւրօ դեռ գոյութիւն չունի, ինչպէ՞ս ուրեմն կարող են ընտրւել Բիւրոյի անդամներ։ Զեն ընտրւում ոչ [*անընթեռնելի մէկ անուն*]*, ոչ Տամատեան եւ ոչ միւսները...*

Հրատարակութիւններ անել մի դեռ չհաստատւած մարմնի կողմից, զարմանում ենք. ինչու Պոլսոյ կոմիտէի անունով չէք ուզում անել։ Նա աւելի մեծ հեղինակութիւն ունի, քան թէ որեւէ արտասահմանեան հիմնարկութիւն։

Ձեր արած միւս նկատողութիւնները ի նկատի կ՚ունենանք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

24 *մարտի* 97 *թ.*
Ժընեւ

Ինչո՞ւ թերթի համար ոչինչ չէք գրում։

Յ. Գ.— Ստացանք Ձեր 7/19 *Մարտ նամակը։ Որոշ պայմանանշանով մենք խնդրել էինք հեռագրել մեզ։ Դուք հեռագրեցիք* «spassel»։ *Բնական է, որ մենք յայտարարեցինք տաճիկներին, թէ մեր ընկերները մերժում են ձեզ ռումբ յանձնել, մինչեւ որ դուք օրգանը չհրատարակէք։ Դուք էլ պէտք է հասկանաք, որ ձեր նոր պայմանը, փողով վաճառելը, մենք չէինք կարող դուշակել։ Աւելացնել այդ պայմանը մենք անկարող ենք, քանի որ դոքա առանց այն էլ տրամադրւած են կարծելու (իրենց Պոլսոյ ընկերները արդէն հաւատ չունին), թէ մենք այս կամ այն պատրւակով խոյս ենք տալիս ռումբերը յանձնելու։ Զենք կարող առաջ բերել մանաւանդ այն պատճառով, որ մենք ինքներս էինք նրանց մեղադրում «նոր-նոր պայմաններ առաջացնելու մէջ եւ իրենց խոստումները չկատարելուն մէջ։*

Կնիքների մասին այս բոպէիս իմացանք, որ Սոֆիայի կնիքը վատ է եղել պատրաստուած, պէտք է նորոգել. Վարնայի կնիքի հետ միասին պատրաստ կը լինի։

Ըստ մեր ծրագրի, կոմիտէներից որեւէ մէկը, աւելի յարմարը կարող է լինել կենդրոնական։ Այնպէս որ կենդրոնական կոմիտէն պէտք է լինի մի որոշ կէտ։ Մենք ունինք Պոլսոյ, Կարնոյ, Վանայ կենդրոնական կոմիտէներ եւ ոչ թէ օր[ինակ] Վասպուրականի։ Այս տեսակէտից մենք չենք կարող ունենալ բօլգարական կենդրոնական կոմիտէ, այլ օրինակ Վարնայի, Ռուսչուկի... թող ուրեմն ինչպէս շատ առաջ գրուած էր, վերջապէս այդ կոմիտէներից մէկը ընտրւի կենդրոնական։

Մինչեւ իսկ, եթէ ուզում էք, Բիւրոն էլ պէտք է լինի որոշ կէտ։ 92 թ. ընդհ. ժողովում ընտրուած էր երկու կէտ՝ Թիֆլիզը եւ Թաւրիզը։ Յետոյ միայն 94 թ. Ռուսաստանի եւ Պարսկաստանի կոմիտէների ժողովում վերախօսւում է Բիւրօի կազմուածքն ձեւը եւ ֆունկցիան։ Եթէ մենք այժմ համաձայնինք որ «Արտասահմանեան բիւրօ» հաստատուածեան, դա կը լինի շեղում մեր ծրագրից. բայց խոյս տալու համար, եւ Բիւրօի տեղը գաղտնի պահելու համար կարելի է մի որեւէ կեղծ անուն տալ, ինչպէս օրինակ Թաւրիզի կենդրոնական կոմիտէն կոչւում է «Վրէժ» կենդրոնական կոմիտէ...

— Պոլսոյ պաշտօնական թղթերը պատւիրած են Ձեր ցոյց տւած ձեւով։

— Տաճիկների հասցէները իրենց կը յանձնենք։

— Արտասահմանեան բիւրօ-ն դեռ գոյութիւն չունի, ոչ ոք չի ընտրուած, եւ չի էլ կարող ընտրւել, քանի որ այդ հաստատուածեան դէմ բողոքում ենք թէ մենք, թէ դուք, իսկ մեր առաջարկուածեան մասին մենք չգիտենք նրանց՝ Թիֆլիզի բիւրօի կարծիքը։ Ուրեմն ինչպէ՞ս կարող ենք։ Թիֆլիզում միայն խօսացել են այդ մասին։ Ձը գիտենք, թէ ինչ աղբիւրներից է յայտնի այս բանը ձեզ։ Բիւրօն չի կարող ընտրրւիլ առանց մեր եւ Պոլսոյ համաձայնուածեան։ Մենք հակառակ ենք, ինչպէս եւ առաջ գրել էինք դրանց առաջարկած Բիւրօի դերին։

— Երկու երեք օր է, տաճիկները զահլաներս տարան իրենց դիմումներով։ Ձեր հեռագրի հիման վրայ յայտնեցինք իրենց դրականապէս, թէ մինչեւ օրդանը չհրատարակեն, ոչինչ չեն ստանալ։ Մենք էլ շատ ենք պնդում այժմ այդ կէտի վրայ, քանի որ իրենք յայտնեցին, թէ Պոլսոյ իրենց ընկերները կասկածում են, թէ ռումբերն իսկապէս կը տրւեն։ Այդ պատճառով նախ ցանկանում են ռումբերն իրենց ձեռքին տեսնել, ապա հրատարակել։

Ձեր նամակի կէտերին (տաճիկների վերաբերմամբ) աւելորդ ենք համարում պատասխանել, քանի որ Ձեր վերջին հեռագիրը փոխում է գործը։

— Ձեր ցանկացած թերթերը, բրոշիւրները կ՚ուղարկւեն, միայն La Russie Souterraine *եւ այլ գրքերը մենք չունենք, պէտք է գնենք բոլորը։ Ձը գիտենք, թէ ինչի համար էք ուզում, եթէ արժէ գնել, գրեցէք կ՚ուղարկենք։*

— Բլանկները պատւիրւած են. գուցէ վաղը պատրաստ լինին։ Ձեր տւած ձեւը անյարմար գտնւեցաւ, իրարու տակ կը դնենք թէ հայերէնը եւ թէ ֆրանսերէնը։

Բանկի տղայոց մասին արդէն գրւած էր. պէտք է անպատճառ հեռացնել նրանց Լոնդոնից։ Այստեղ նրանց կերակրել չենք կարող։ Եւ որքան շուտ, այնքան լաւ. ինչպէս գրել էինք, պատրաստ դրամ պահէք անմիջապէս փոխադրելու։ Հեռագրով կը յայտնենք հասցէն։ Կրէտա գալու խնդիրը հասկացւեց։ Առաջարկողը եղել է Զարիֆեանը։ Գրւեցաւ, բայց ոչ իրենց, որպէս զի շատ [անընթեռնելի մէկ բառ]։ Այդ լաւ եղաւ. հետեւեալ օրը Հրաչից ստացած մի նամակից շատ վատ հոտ էր փչում։ Լսելով, որ Ամերիկայից իրենց համար փող է հաւաքւած եւ խմբագրուածեան ուղարկւած, լեզուները երկարացրել են։

Ձեզ օգնական հաւանական է Վարդը(10) *գայ։ Բայց այստեղ էլ մարդ է հարկաւոր։ Մենք էլ անհամբեր սպասում ենք։*

Մի քանի խօսք Հրաչի(5) *մասին։ Ձենք հասկանում, թէ ինչու այդքան խիստ էք վարւում հետը։ Դուք մինչեւ իսկ ժողովի արձանագրութիւնը չէք ուղարկել իրեն կարդալու. չէք յանձնել նրան այն նամակը, որ մենք ուղարկել ենք եւ խնդրել յանձնել նրան եւս կարդալու։ Նա բոլորովին զուրկ է մնում տեղեկութիւններից։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Վարազ-Վահան – ծածկանուն Արշակ Վռամեան – Օննիկ Դերձակեանի:
2.- Խօսքը կը վերաբերի «Դրօշակ»ի առաջին երկու տարիներու թիւերուի:
3.- Խօսքը կը վերաբերին այն ոտանաւորին, որ կը սկսէր «Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ, թռչում եմ դէպի քեզ հոգովս անդադար» բառերով եւ որ կը ծառայէր իբրեւ «բանալի» գործածուող թուանշային ծածկագրին:
4.- Տուրան – ծածկանուն Կիպրոսի գործիչներէն Յակոբ Պէքարեանի:
5.- Հրաչ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի:
6.- Արմէն Գարօ (Փաստրմաճեան Գարեգին):
7.- Խօսքը կը վերաբերի Ռոստոմի եղբօր՝ Արիստակէս Զօրեանին:
8.- Մելիք – ծածկանուն Բուսուֆեան Յովհաննէսի:
9.- Ֆրանսերէն՝ գոյութեան իմաստ:
10.- Վարդը՝ Վարդ-Պատրիկեան Յակոբն է:

109

Փաստ. 37-6

Ռոստոմի ձեռագրով եւ գաղտնի թանաքով գրուած նամակ, որ լաւ բացուած չըլլալով՝ կարգ մը բառեր դժուար ընթեռնելի են:

Դրօշակի խմբագրութենէն
Զմիւռնիա

Յարգելի ընկերներ,

Ձեր վերջին երկու նամակներն ստացած են։
.... ձեր տւած հասցէով փոխադրուած է 300 *ֆր.։*
Շատ ուրախ ենք .... գալուն։
Պոլսոյ ընկերներից տեղեկացանք, որ այնտեղւանից կնիք ուղարկւած է իբր թէ տեղւոյդ կոմիտէին։ Գրեցինք ում հարկն է, որ կնիքը ձեզ յանձնեն։ Իսկ եթէ այդ... ճիշդ չէ, մենք անմիջապէս կ'ուղարկենք ձեզ։
Նէիրատոմսեր ղրկւած են Եգիպտոս։ Թերթ գուցէ չկարողանանք ուղարկել Անգլիայից։
Ի՞նչ է ձեր ծրագիրը։ Ա՞յն, ինչ որ Շահէն է գրել։

24-*ին մարտի* [18]97 *թ.*

110

Պատճէններու մատեան No 82, *էջ* 236-237

24 *մարտ* 97 *թ.*
Ժընեւ

[*Հայկ Թիրեաքեանին*] *Բուրգաս*,

Սիրելի Հրաչ,

Բուրգազի համար 2 *ծրագիր եւ բրոշիւրներ կ՚ուղարկուեն։*

Բրոշիւրները դանդաղ են գնում. «Յեղափոխ. պատճառները» կարօտ է փոփոխութեան։ Միքայէլն(1) *է դրանով զբաղուած, իսկ մինչեւ նա չվերջանայ, անյարմար է միւսն սկսիլ։ Գուցէ մի ամսից յետոյ բոլորովին պատրաստ կը լինի։*

Դէպի 11, 21, 3, 17 [Զէյթուն] *արդէն մէկն ուղեւորուել է։ Նա կը հասցնի մեզ հարկաւոր տեղեկութիւնները։ Իսկ մինչեւ այդ ժամանակ մենք պէտք է մէկը ունենանք* 29, 7, 22, 4, 13, 9, 13, 14, 12 [Կիպրոս]*-ում հաղորդակցութիւնը պահպանելու համար։ Մեր կարծիքով դու լաւ կ՚անես, եթէ հէնց այժմ ուղեւորուես այնտեղ։ Քո պահանջները շատ իրաւացի են, բայց ի նկատի ունեցիր, որ մենք միջոցներ չենք կարող գտնել, եթէ հաստատապէս գործ սկսած չլինենք։ Եթէ մեզ յաջողի ճանապարհներ գտնել, այն ժամանակ մենք կարող ենք պահանջել որոշ անձնաւորութիւններից մինչեւ իսկ ոչ թէ դրամ, այլ պատրաստի զէնք։ Այն ժամանակ մենք վստահաբար կարող ենք դիմել, իսկ այժմ ի՞նչ առաջ բերելով մենք կարող ենք սրան կամ նրան դիմել, ինչպէս համոզենք, որ իրենց տուածը չի կորչելու։*

Բացի այդ, այսօր նամակ ստացանք 11, 12, 7, 14, 18, 6, 7, 2, 3, 7, 35 [Զմիւռնիայից], *որով յայտնում են, որ Պետրոսին շատ մեծ յաջողութեամբ ներս են ընդունել։ Մինչեւ իսկ մի ինչ որ նամակի հիման վրայ գնացել են Սեպուհին*(2) *էլ ներս տանելու, բայց նրան չեն կարողացել (շատ բնական պատճառներով) գտնել։*

Ընտրութիւնը քեզ է մնում. դժւար է, բայց լաւ մտածիր եւ հաղորդիր մեզ։ Եթէ 11, 12, 7, 14, 18 [Զմիւռնիա], *վճռելու լինես, առաջւանից յայտնիր թէ այս ինչ օրը, եւ ինչ նաւով դուրս ես գալու։*

Ուրիշ ոչինչ, աւելի լաւ է նաւ նստել Պիրէից։

Ի՞նչ եղաւ Ակոպը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Միքայէլ Վարանդեան։
2.- Սեպուհ (կամ Հրաչ) նոյն Թիրեաքեան Հայկն է։

111

Պատճէններու մատեան No 82, *էջ* 238

Monsieur Zarifian
Claude Bernard, 1
Paris

Կոչը տպւած է։ Գուցէ վաղը պատրաստ լինի։ Զմիւռնա թերթ հարկաւոր է ուղարկել Անգլիայից։ Կարծում էինք, թէ պ. Մինասեանը կը կատարէ գործը, բայց նա մեր նամակին բնաւ չպատասխանեց։ Չէ՞ք ճանաչում մէկը, որին կարելի լինէր հարկաւոր հասցէն։ Պէտք է, որ մարդը վստահելի լինի։ Շուտով խնդրենք տալ մեզ հարկաւոր հասցէն, եթէ միայն հնարաւոր [*անընթեռնելի մէկ բառ*] *կարողանանք առաջիկայ թերթը Լոնդոնից։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

25-*ին մարտ* 97 *թ.*

112

Պատճէններու մատեան No 82, *էջ* 239

25 *մարտ* 1897 *թ.*
Ժընեւ

Սոֆիայի կոմիտէին,

Յարգելի ընկերներ,

Ուղարկում ենք ներփակեալ կնիքը եւ ողջունում Սոֆիայի դաշնակցական կոմիտէի հաստատութիւնը։

Մինչեւ Բոլգարիայում մի կենդրոնական կոմիտէի հաստատուիլը, խնդրենք ձեր բոլոր պէտքերի համար դիմել մեր ընկեր Վարագ-Վահանին հետեւեալ հասցէով՝ Yervante Sissaguian, poste restante Varna. *Նրանից պահանջէք եւ նուիրատոմսեր ձեզ համար։*

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

113

Պատճէններու մատեան No 82, *էջ* 243

28 *մարտ* 1897 *թ.*, *Ժընեւ*

Ֆիլիպպոպոլի կոմիտէին,
Ընկերներ,

Ստացանք ձեր հեռագիրը, որով յայտնում էք 5 No-*ի*(1) *կորսւած լինելը։ Կը դիմենք տեղւոյս փոստատան. գուցէ մոռացւած է նամակաղրոշմ կպցնել, այդ պատճառով պահել են։*

Ցաւում ենք, որ այնքան քիչ է մնացել, որ երկրորդ անգամ ուղարկել չենք կարող։ Դիմէք Վարնա, գուցէ այնտեղից ուղարկեն մի քանի համարներ։

Արդէն ստացած կը լինէք պաշտօնական թղթեր զինանշանով պաշտօնական յարաբերութեանց համար։

Մինչեւ Բոլգարիայում մի կենդրոն[ական] կոմիտէ ընտրւիլը, խնդրենք յարաբերութիւն պահպանէք պ. Վարազ-Վահանի միջոցով։

Ներփակեալ նամակը խնդրենք յանձնել պ. Պետրոսի եղբօր։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Խօսքը «Դրօշակ»ի համարի մասին է:

114

Փաստ. 37-5

Ռոստոմի ձեռքով գրուած նամակի մը վերջին էջը. ուղղուած պէտք է ըլլայ Տրապիզոն, քանի յիշուած թուականին Ռոստոմ Ժընեւ կը գտնուէր:

..... տաճիկները երկիւղ են կրում ուղղակի հասցէներով ուղարկել։

Կապոյտ ու դեղին գրքոյկները(1) *մենք եւս չկարողացանք գտնել։ Քաղաքական աշխարհից լուրեր տալ դժւար է։ Թէ կ'ուզէք տուէք մի հասցէ ֆրանսերէն թերթ ուղարկելու։*

Թաթուլին(2) *շատ բարեւ։*

Երզնկայի Հնչակի խումբը ո՞ր Հնչակին է պատկանում(3)*։ Զուր են խնդիրքով դիմում, որ մենք Հնչակի հետ բանակռւի մէջ չմտնենք։*

Ժողովի վճիռներից մենք համաձայն չենք կենտրոնացման ձգտման։

Շապին-Գարահիս[արից] նամակը չկար. կար միայն թռուցիկը։

Վանայ թռուցիկն ստացւած է։

28 *մարտի* 97 *թ.*, *Տրապիզոն*

1.- Ակնարկութիւն անգլիական (կապոյտ) եւ ֆրանսական (դեղին) կառավարութեանց նշուած գոյներով պարբերաբար հրատարակած այն գիրքերուն, որոնք կը բովանդակէին Հայաստանին եւ հայկական հարցին վերաբերող փաստաթուղթեր:

2.- Թաթուլը՝ Արամ Արամեանն է, այլապէս ծանօթ նաեւ Աշոտ ծածկանունով, որ շուրջ տարիէ մը ի վեր կը գտնուէր Կարնոյ բանտը:

3.- Ակնարկութիւն Հնչակեան կուսակցութեան պառակտումին. բաժանեալ հատուածը, որ սկզբնապէս ծանօթ էր Նոր հնչակեաններ անունով, 1898-էն ետք կոչուեցաւ Վերակազմեալ հնչակեան:

115

Պատճէններու մատեան No 82, *էջ* 244-245

29 *մարտ* 97 *թ.*

(*Զարիֆեանին, Լոնդոն*)
Յարգելի ընկեր,

Գուցէ ստացած լինէք Պարիզ գրած մեր վերջին նամակը։ Յամենայն դէպս հարկ ենք համարում կրկնել, որ տղայոց ըմբոստ վարմունքը մեզ մտատանջութեան մէջ է ձգել։ Դոքա իրենց չափը կորցրած են երեւում եւ եթէ այդպէս շարունակւի, այլ եւս գործել դոցա հետ անհնարին կը լինի։ Իրենց մի նամակ ենք գրել Մինասեանի հասցէով. պահանջէք այդ նամակը, կարդացէք եւ ըստ այնմ վարուէք։

Այսօր կը փոխադրենք Crédit Lyon[nais]-*ի միջոցով* 1000 fr. *իսկ եթէ դա բաւականութիւն չտայ, խնդրենք այդտեղ պ. Մինասեանից կամ մի ուրիշ տեղից պակասը լրացնել. մենք անյապաղ կ՚ուղարկենք։ Այժմ* 1000-*ից աւել չունենք. սպասում ենք մօտ օրերս։*

Ամենայարմար ճանապարհը ծովով է կամ Բուրգաս, կամ Վարնա։ Պոլսոյ մօտով անցնելը ոչ մի վտանգ չի սպառնում. ի՞նչ կարող են անել անգլիական նաւի վրայ։ Մանաւանդ որ կարիք չկայ տարածելու տղայոց մեկնելու մասին։ Անշուշտ կ՚աշխատէք որքան կարելի է գաղտնի պահել։

Ո՞վ է այդ Նաղիրեանը, ի՞նչ է դրա անունը, չէ՞ք կարող իմանալ դորա անցեալի մասին։

Այդ պարոնի գրելով երկու հնչակեան գործիչներ՝ Լեւոն Գալֆայեան եւ Արմենակ Զոլաքեան վճռել են մտնել մեր կազմակերպութեան մէջ։ Կարող էք հետները տեսնուել։

Ringdon Road, 16, West Hampst…. N. W, London.

Հաղորդէք մեզ ձեր տպաւորութիւնը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Ներփակեալ ուղարկում ենք 1000 fr. *չէքը։* 300-*ն էլ կայ, յուսով ենք, բաւական կը լինի։*

Տղայոց հրաւիրէք, ժողով կազմէք. թող խւրաքանչիւրը յայտնի իր կարծիքը։ Ով որ գրաւոր կերպով ներողութիւն կը խնդրի եւ կը խոստանայ ապագայում այլ եւս այդպիսի յիմար ընթացք չբռնել, նրանց միայն ճանապարհ կը ձգէք։ Միւսները թող մնան այդտեղ, դոքա գործի համար անպէտք կը լինին։

ՆՈՅՆ

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 116

Պատճէններու մատեան No 82, *էջ* 246-247

29 *մարտ* 97 *թ.*

(*Մէլիքին*) [*Յովհաննէս Իւսուֆեան, Միացեալ Նահանգներ*]

Ընկեր,

Զարմանում ենք, որ Բոստոնի կնիքը դեռ չի ստացած. նա վաղուց է ուղարկուած Սիմոնի ձեռքով։

Մենք բոլորովին այլ տեսակ էինք պատկերացնում մեզ ձեր կոմիտէների տրամարդութիւնը, իսկ շրջաբերականը ուղարկելուց յետոյ շատ փոշմանեցինք մեր մտերմական գրութեան համար։ Լաւ է, որ կարողացել ես առաջն առնել, մենք շատ էինք վախենում։ Հէվրհիլի հանրագրութեան դեռ չենք պատասխանել։ Տատանւում ենք։ Արձանագրութիւնն ստացած է։ Կ՚արտագրենք եւ քեզ կ՚ուղարկենք։ Ընդհանրութեան տարածել չենք ցանկանում, որովհետեւ իր բովանդակութեամբ կարող է թիւրիմացութիւնների տեղիք տալ։ Դու ինքդ, հարկաւոր տեղեկութիւնները քաղելով, կը տաս կոմիտէներին։

Ուղարկած նամակաթղթերը հաւնեցա՞ք, թէ ոչ։

Ժողովի որոշումներից մենք էլ նոյն կէտերին ենք հակառակ, ինչպէս եւ Վահապը, Յոնանը...

Թիֆլիզից դեռ պատասխան չի եկել մեր գրութեան։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Այսօր իմացանք, որ Օհանջանեանը չի եղել մեզ հետ բանակցող, այլ Նատիրեանը։ Մենք երկու Նատիրեան ենք ճանաչում։ Մէկը՝ Արտեմը, իմ դասընկերս է եղել եւ վատ մարդ չէ, միւսը եղել է Պարսկաստանում, կարծեմ եւ Պալքանում. դա կարծեմ սրիկայ է։

Յամենայն դէպս մենք մեզ զգոյշ կը պահենք։

Զարիֆեանը երէկ մեկնած պէտք է լինի Լո[*ն*]*դոն տղայոց Բոլգարիա տեղափոխելու համար։*

Այսօր փոխադրում ենք մեր ձեռքին ունեցած բոլոր գումարը (1000 fr.)։

Աշխատիր, որքան կարելի է շուտ մեզ դրամ հասցնել։

Զէյթունի կողմերը արդէն մէկը ճանապարհ է ընկել. այսօր Աղէքսանդրիայից մի խումբ դիմել է մեզ, ցանկութիւն յայտնելով մեր կազմակերպութեան մէջ մտնել եւ հայհոյելով հնչակեաններին։

Իզմիր այժմ երկու լաւ տղաներ ունինք։ Շուտով կսկսին գործել։

Մտադիր ենք նրանց ատրճանակներ հասցնել. նորերը կան, շատ լաւերը, անծուխ վառօդով...

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Յ. Գ.— Գուցէ շուտով արտասահման գայ մեր գործերով քո ծանօթ Շահրիկեանը։ Այս կողմերի հարուստներից փող ժողովելու...

117

Պատճէններու մատեան No 82, *էջ* 252-253

1 *Ապր*[*իլ*] 1897 *թ.*

(*Զարիֆեանին*)
Լոնդոն

Յարգելի ընկեր,

Դրամ ուղարկուած է 1000 fr. *ձեր նախկին հասցէով.*
23, Southampton st.

— Ուղարկում ենք Զմիւռնիայի ծրարը. լաւ փաթաթած է արդէն։ Ձեզ միայն մնում է հասցէն փոխել։ Ուղարկէք հետեւեալ հասցէով՝

Eduard Michel
Poste restante anglaise
Smyrne (Turquie d'Asie)

Լոնդոնից մեկնելուց առաջ տուէք այս հասցէն Worpsgusan[?]-*ին եւ ցոյց տուէք ուղարկելու ձեւը։ Հարկաւ նա գաղտնի կը պահի բոլորից։*

Զմիւռնա այժմ մենք լաւ ուժեր ունինք. նորերը նոյնպէս ճանապարհի վրայ են։ Ձեր առաջարկած տղաներին լա՞ւ էք ճանաչում. կարո՞ղ էք երաշխաւորել, թէ միայն նոր էք ծանօթացել։ Այդ բոլորը կարեւոր է, որովհետեւ հարկաւոր է հաղորդել Զմիւռնա։ Մինչեւ մեր ընկերները դրական ծանօթութիւններ չունենան չեն ընդունիլ իրենց մէջ։

Եթէ ձեզ լաւ ծանօթ չեն, թող յայտնեն, թէ մեր ընկերներից ո՞վ է դրանց ճանաչում։ Ձեր հաղորդած բոլոր տեղեկութիւնները հէնց այսօր կը գրենք Զմիւռնա։ Բայց աւելի լաւ կ՚անեն, եթէ իրենց կազմած հարուստներու ցուցակը մեզ ուղարկեն։

- Ինչպէս առաջ էլ գրած էինք, ամենանպատակայարմարն է տղայոց նախ Բոլգարիա փոխադրել, իսկ այնտեղ դրանց անձամբ ճանաչողները իւրաքանչիւրին իր ուժի համեմատ գործ կը տան։ Կրկնում ենք, Պոլսով անցնելը ոչ մի երկիւղ չի ներկայացնում։ Առաջինը՝ չեն ճանաչիլ, երկրորդ՝ կարիք չկայ ափ դուրս գալու. իսկ նաւի վրայ բոլորովին ապահով են։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

118

Պատճէններու մատեան No 82, *էջ* 252

Missag Baghdassarian
Ecole Normale
Nancy (France)

Տաճիկների նամակները ուղարկելը վտանգաւոր է համարւում պարոնների համար։ Այդ մասին գրւած է Տրապիզոն։

40 *օր*[*ինակ*] *կտրած դրօշակները կստանաք, միայն մի ծայրն է մնում, այն էլ դուք կտրէք։*

..... *մեզ եւս կը կտրեն։ Եթէ կարողները լսեն, ասպարէզը ի հարկէ այդ տեսակներին կը մնայ։*

Պէտք է որ արդէն 50 fr. *ուղարկւած լինի։ Եթէ ոչ, շուտով կ'ուղարկենք։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

1-*ին Ապր*[*իլ*] 97 *թ.*

119

Պատճէններու մատեան No 82, *էջ* 254

1 *ապր*[*իլ*] 1897 *թ.*

Պ. Դաւիթ Մարգարեանին,

Ընկեր,

Ձեր վերջին նամակն ստացւեց։ Ստացւած էին եւ նախընթաց նամակները։

Դիւրութեան համար գրեցինք Լոնդոնի տղայոց, որ իրենք ուղարկեն ձեզ թերթ եւ այլ բաներ։ Իսկ որովհետեւ նոքա գուցէ մեկնին, այսուհետեւ ուղղակի կը ստանաք։

Գրէք, թէ ինչ է ձեզ պակաս։ Քանի որ դուք գործ ունէք, մնացէք առայժմ այդտեղ։ Իսկ եթէ յաջողւեց ձրի փոխադրել բոլորիդ Բոլգարիա, այն ժամանակ պ. Զարիֆեանը ձեզ եւս կը կանչի։

Բրօշիւրներ եւս կը ստանաք։ Ձեր ցանկութիւնը այստեղ գալ մենք աննպատակ ենք համարում։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

120

Պատճէններու մատեան No 82, *էջ* 255

1-*ին Ապր*[*իլ*] 1897 *թ.*

Յարգելի պրն. ....կեան(1),
Կալաց

Ընկալագրերի համար խնդրենք դիմել Վարնա պ. Սիսակեանին։
Գործ ածէք խնայողութեամբ. տուէք կամ խմբերին կամ թէ խոշոր նուիրատուութիւնների համար։ Ընկալագրերը կնքւած կը լինեն Վառնայի կոմիտէի կնիքով, ուստի դրամը կ՚ուղարկէք պ. Սիսակեանին։
Պ. Անտոն Պօղոսեանին մենք անձամբ ծանօթ չենք, ուստի նորան գրել չենք կարող։ Գուցէ ծանօթ է մեր ընկերներից մէկը, որը այստեղ չէ։ Պ. Ղազարեւիչի հաստէով կ՚ուղարկւի առանձին համար։ Չենք հասկանում, ինչու էք ցանկանում նրա հաստէով ստանալ ձեր ցանկացած բրօշիւրները կամ ծրագիրը։ Խնդրենք իրեն համաձայնութիւնը առնել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Կրկնում ենք, որ ծրագրի, բրօշիւրների համար, առհասարակ ամէն տեսակ պահանջների համար խնդրենք դիմել պ. Սիսակեանին։

ՆՈՅՆ

1.- Անընթեռնելի անուն:

121

Պատճէններու մատեան No 82, *էջ* 256-259

1 *Ապր*[*իլ*] 97 *թ.*

Գահիրէի կոմիտէին,

Ընկերներ,

Միութեան խնդրոյ մասին գրւած է մեր ընկերոջ՝ պ. Բաբայեանին։ Նրանից կարող էք հարկաւոր տեղեկութիւններն առնել։
Հարկ ենք համարում աւելացնել հետեւեալը, որ կարող է պատասխան լինել տեղւոյդ հասարակութեան պահանջներին եւ կասկածներին (մեր մասին)։
Ով ծանօթ է քիչ թէ շատ յեղափոխական գործի հետ, նա շատ լաւ պէտք է հասկացած լինի, որ այս կամ այն անհատի հետ գործ ունենալուց առաջ անհրաժեշտ է երկար ժամանակ ուսումնասիրել նրան, փորձել եւ այլն... Եթէ այդ ընդունւում է մի անհատի վերաբերմամբ, ապա ինչպէ՞ս պէտք է վերաբերւել դէպի մի ամբողջ կազմակերպութիւն, ուր կան ամէն տեսակ մարդիկ։
Հնչակեանների նոր խումբը մեզ անծանօթ է համարեա թէ։ Նրա գործիչների մասին մենք գաղափար էինք կազմել Հնչակից, որն այժմ համարեա թէ բոլոր այդ «հերոս» հռչակւածներին մատնիչներ, շարլատաններ է անւանում։
Մենք ի հարկէ չենք հաւատում Հնչակի բոլոր ասածներին, բայց մենք չենք կա-

րողանում հաւատալ եւ այդ նախկին «հերոսներին». մեզ ժամանակ է հարկաւոր, որպէս զի կեանքի մէջ տեսնենք, ճանաչենք դրանց։ Իսկ դրա համար ոչ թէ 5 ամիս, 10 ամիսն էլ քիչ է…

Բացի այդ, դրանց մէջ եղած մի քանիսին մենք լաւ ենք ճանաչում. դրանց վրայ ոչ մի վստահութիւն ունենալ չենք կարող, ոչ մի դաշնակցական չի համաձայնիլ դրանց հետ գործել։ Անշուշտ այդ կազմակերպութեան մէջ լինելու են լաւ գործիչներ, բայց ինչպէ՞ս վստահանանք ընդհանրութեան, երբ այդ վնասակար անձնաւորութիւնները ոչ թէ միայն տեղ են գտնում դրանց մէջ, այլ եւ ղեկավարների դեր են կատարում։

Որպէս զի ղեկավարների վնասակար դերը չէզոքանայ, որպէս զի մենք կարողանանք շփւել եւ ճանաչել դրանց իսկական յեղափոխական ուժերը, իրական միութիւն առաջ բերել, հարկաւոր է, որ հնչակեաններն եւս ընդունեն ապակենտրոնացման սկզբունքը, իսկ գլխաւորն է գործ սկսին։

(Նկատենք այստեղ, որ ներքին նահանգներից եկած տեղեկութիւնների համաձայն հնչակեանները այդ կողմերում ոչ մի ոյժ չունեն, ուրեմն եւ միութեան հարցը աւելորդ է համարւում այդ կէտերի վերաբերմամբ)։

Եթէ կուսակցութիւնը այդքան ցանկանում է միութիւն տեսնել, թող նա միայն պլատոնական ցանկութիւններ արտայայտելով չբաւականանայ, այլ փնտրի գործնական ճանապարհներ իսկական միութիւն առաջ բերելու։

Մեզ զարմացնում է, որ հնչակեանները տարածել են, իբր թէ մենք անպատասխան ենք թողել իրենց դիմումը։ Դա ճիշդ չէ. մենք պատասխանել ենք, յայտնելով Դաշնակցութեան կատարեալ պատրաստականութիւնը։ Այնուհետեւ եկել է այստեղ պ. Սվազլեան, կիսա-պաշտօնական խօսակցութիւն ենք ունեցել, մենք որոշ առաջարկութիւններ ենք արել, վիճել ենք կենդրոնացման եւ ապակենդրոնացման մասին։ Պ. Սվազլեան խոստացաւ մեզ ուղարկել իրենց ներքին կանոնադրութիւնը. յայտնեց նոյնպէս, որ իր փոխանակ մի ուրիշը, որն աւելի է ծանօթ գործնական յեղափոխութեան, շուտով մեզ հետ կը տեսակցի։ Բայց ոչ ներքին կանոնադրութիւն ստացանք, ոչ էլ մարդը յայտնւեց. ինչպէ՞ս ուրեմն ծանօթանանք իրենց հետ։

Մի հանգամանք եւս կայ։ Միութեան խնդրոյ մասին ուրիշ տեղերից եւս դիմումներ են լինում եւ հին հնչակեանների եւ նորերի կողմից։ Իւրաքանչիւրն այնպէս է խօսում իր կուսակցութեան մասին, կարծես միւսը բնաւ գոյութիւն չունի։ Ստանում ենք եւ հանրագրութիւններ։ Այժմ մենք շւարած ենք մնացել, ո՞րն է իսկական հնչակեանը։ Այս դրութիւնը նախատեսելով, մենք հէնց սկզբից (երբ դեռ նոր Հնչակը լոյս չէր տեսել) ցանկութիւն յայտնեցինք կանոնաւոր բանակցութիւններ սկսել այն ժամանակ, երբ հնչակեան կուսակցութիւնը վերակազմւած, հաստատւած կը լինի վերջնականապէս եւ պաշտօնապէս ճանաչւած։ Բայց այժմ տեսնում ենք, որ երկուսի են բաժանւած, երկուսն էլ իրենց «հզօր» են հռչակում։ Պարզ է, որ պաշտօնական միութիւն ամբողջ հնչակեան կազմակերպութեան հետ հաստատել անկարելի է. մենք կարող ենք գործ ունենալ հնչակեան կուսակցութեան միայն մի մասի հետ։ Այդ մասը կարող է մեծ լինել, բայց եւ այնպէս նա մաս է։

Նամակագրութեան համար պաշտօնական թերթերը արդէն պատրաստ են։

Կ՚ուղարկւեն շուտով։

Ծրագիր ու նւիրատոմսեր ուղարկւած են արդէն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

122

Պատճէններու մատեան No 82, *էջ* 260-261

[*Ատրպատականի կոմիտէին*] *Թաւրիզ*
Սիրելիք,

Երկար նամակ յետոյ կը գրենք։ Առայժմ հարկ ենք համարում հաղորդել հետեւեալը։

Մի քանի ժամանակ կայ, որ սկսել ենք գործնականապէս զբաղուել 11. 21. 3. 17. 13. 14. 6. 13. 24 [Զէյթուն]-*ով։ «Ընդհանուր» կոչւած ժողովում այդ մասին խօսւել է. ուրեմն աւելորդ է դրա մասին երկար խօսել։*

Շատ լաւ կը լինէր, եթէ առաջւանից պատրաստութիւններ տեսնւած լինէին, այժմ կարելի կը լինէր շարժւիլ։ Բայց, ինչ եղել է, եղել է։

Այժմ պէտք է լուրջ կերպով զբաղւիլ։ Արդէն մէկը ճանապարհ է ընկել նախնական ծանօթութիւնների համար։ Հրաչը(1) *համաձայն է այնտեղ գնալու. կը գնան եւ ուրիշները։ Բայց մեզ հարկաւոր է մի ռազմական ոյժ, որն իսկապէս տանէր այնտեղի գործերը։*

Մեր կարծիքով անհրաժեշտ է, որ Նիկոլը(2) *ճանապարհ ընկնի։ Գործը իր ուզածն է. «կազմակերպութեան» գործերին մէջ կարող է բոլորովին չխառնւել։ Մենք հաւատացած ենք, որ Նիկոլը կարող է մեծ յաջողութիւն գտնել։ Եթէ Աղասու, Ապահի, Հրաչեայի*(3) *նմանները կարողացել են դեր խաղալ, ուրեմն կարելի է երեւակայել, թէ ինչպէս կ՚ընդունւի Նիկոլը։ Բացի այդ, շատ հարկաւոր կը լինի Կարսն*(4) *եւս։ Կարսի մասին գրեցինք Թիֆլիզ, յուսալով, որ նա այնտեղ կը լինի։*

Եթէ Նիկոլը համաձայն է, խնդրենք անմիջապէս հեռագրել bon. *իսկ եթէ ոչ* non։ *Առաջին դէպքում թող առանց ժամանակ կորցնելու գնայ Ռուսաստան, առնի Կարսին եւ Բոլգարիա անցնի։*

Պէտք է ասած, որ Կրէտէի դէպքից յետոյ մանաւանդ, ընդհանրութեան ուշադրութիւնը այնտեղի վրայ է դարձրած։ Եւ եթէ մեզ յաջողւի լուրջ բան սկսիլ, հասարակութիւնը շատ մեծ վստահութեամբ կը վերաբերի մեզ։ Ի միջի այլոց հնչակեան երկու խմբերը(5) *եւս այնտեղ են ուզում գործել եւ ամէն ջանք են թափում մեզ հետ միութիւն կապելու, զգալով իրենց թուլութիւնը։ Հէնց այսօր մի դիմում եղաւ արդէն* 11. 21. 3. 17. 13 [Զէյթո[ւն]-*ի գործիչների կողմից. դրա մասին յետոյ։ Մի խումբ եւս (դարձեալ նոյն տեղը) բացարձակապէս դաշնակցական է յայտարարած է իրեն։ Մի խօսքով հանգամանքները նպաստաւոր են։*

Համբոյրներս։
Ձեր ՌՈՍՏՈՄ

Երւանդի եւ Մանուկի(6) *նամակները ստացայ, դրանց մասին միւս անգամ։*

1.- Հրաչը՝ Թիրեաքեան Հայկն է, Օսմանեան դրամատան գրաման մասնակիցներէն։
2.- Խօսքը Նիկոլ Դումանի մասին է, որ նկատի առնուած էր Զէյթուն մեկնելու համար, սակայն վերջինս Խանասորի արշաւանքի կազմակերպութեան համար պատրաստութիւններու մէջ գտնուելով՝ պիտի չկարենար հեռանալ Ատրպատականէն։
3.- 1895 թ. Զէյթունի ապստամբութեան մասնակից եւ ղեկավար հնչակեան մարտիկներ։
4.- Կարոն՝ Ռոստոմի կրտսեր եղբայր Արիստակէս Զօրեանն է։
5.- Իմա՝ հին եւ անջատեալ հնչակեան խմբերը։
6.- Երուանդը՝ Իշխան Յովսէփ Արղութեանն է, Մանուկը՝ բժ. Քրիստափոր Օհանեան։

123

Պատճէններու մատեան No 82, *էջ* 266-267

3 *Ապր*[*իլ*] 1897 *թ.*, *Ժընեւ*

Սիրելի Հրաչ,

Ներփակեալ նամակի (Շապին Գարահ[*խար*]*) բովանդակութեան մասին մենք ոչինչ չգիտենք. մեզ ոչինչ չի գրւած, ենթադրելով գուցէ թէ դու պարզել ես։ Այնպէս որ մենք չենք հասկանում այդ ինչ «*[*անընթեռնելի երկու բառ*] *է»։*

Հիմա զգում ե՞ս քո ընթացքի անյարմարութիւնները. ես սպասում եմ, որ դու ինքդ մի օր ցոյց տաս այդ բանը, խոստովանիս. բայց դու լռում ես դեռ. յոյս չեմ կորցնում։

— Այդ տեղի կռւող ուժերի մասին միայն մի բան կարող ենք ասել։

Քանի Զէյթունում մի բան չենք սկսել, անկարող կը լինենք այդ տրամադրութեան բաւականութիւն տալ։

— Վիէննայի տղի հետ կտրել ենք յարաբերութիւններս։ Փտած տղայ դուրս եկաւ։ Մարսէյլ կարելի է դիմել՝ Vrtaness Ghasarian 2, Quai de la Juliette, 2. Compagnie des messageries maritimes(1).

Բայց աւելի լաւ է, մեծ քանակութեամբ այստեղ ուղարկես։ Մենք գործ կ՚ածենք, երբ հարկաւոր լինի։

Զէյթունի համար առաջարկել ենք Պարսկաստանի մեր շատ լաւ կռւողի (Նիկոլին — Դուման...), որ բացի իր կռւելու, կռիւներ վարելու ընդունակութիւնից լաւ ինտելիգենտ ոյժ է։

Եթէ նա համաձայնի, շատ լաւ կը լինի։ Հիանալի ոյժ է։ Եղբօրիցս դեռ պատասխան չկայ, գուցէ մի 10 *օրից յետոյ լինի։ Սալմաստից գրում են, որ նա մտադիր է նորից Պարսկաստան վերադառնալ։ Վախենում եմ, որ վերադարձած չլինի։*

— Սլիվէնի կնիքը ապահովագրւած էր. չի կորչիլ։

— Գարօն չի կարդացել Բարեպաշտի նամակը. ուղարկիր պատասխանը։

Իզմիր կնիք կայ արդէն, Վահապի(2) *ենթադրութեամբը. Լազարեանի մօր գրեցինք, որ յանձնեն։ Յամենայն դէպս նորը կ՚ուղարկենք, որովհետեւ շատ են շտապեցնում։ Եդւարդի կնիքը կարելի է ապահով կերպով այստեղից ուղարկել։*

Մելիքն(3) *ուղարկել էր մօտ* 3000 fr., *դրանից* 1000 fr. *միայն մնաց, որը փոխադրեցինք Լոնդոն տղայոց ճանապարհածախսի համար։*

Զարիֆ[*եան*]*ը*(4) *նորից Լոնդոն է գնացել։*

Սպասում ենք դրամի Ռուսաստանից եւ Վահապից։ Աւելորդը ձեզ կը դարձնենք։

Գուցէ տղայքը(5) *էլի ճանապարհ ընկնեն։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Նշուած հասցէատէրը՝ Վրթանէս Ղազարեան՝ Մարսէյլ քաղաքի այն ընկերն է, որ կը զբաղէր դէպի Կովկաս դաշնակցական մամուլ եւ զէնք-զինամթերքի առաքման գործով:

2.- Վահապ – ծածկանուն Վռամեան Արշակի:

3.- Մելիք – ծածկանուններէն մէկը Իսուֆեան Յովհաննէսի, որ այդ օրերուն կը գտնուէր Ամերիկա՝ Դաշնակցութեան շարքերու կազմակերպման գործով:

4.- Զարիֆեան – ծածկանուն Լոռու-Մելիքեան Յովհաննէսի:

5.- Տղայքը կը վերաբերի Պանք Օթթոմանի գրաւման մասնակից տղոյ, որոնք Արժանթինէն վերադառնալէ ետք կը գտնուէին Անգլիա եւ կը ծրագրուէր զանոնք ուղարկել Պուլկարիա:

124

Պատճէններու մատեան No 82, *էջ* 268

3 *Ապր*[*իլ*] 1897 *թ.*

Զարիֆեանին (*Լոնդոն*)
Յարգելի ընկեր,

Շտապում ենք ուղարկել Ձեզ ներփակեալ նամակները, գրուած Երիզայի եւ Տրապիզոնի կոմիտէների ձեռամբ եւ խնդրենք յանձնել ըստ պատկանելոյն։
Խնդրենք բացատրել նրան նամակներին պատասխանելու ձեւը, անգոյն մելանի գործածութիւնը եւ այլն...
Նամակները կարդացէք եւ ըստ այնմ բանակցէք հետը։
Թող շտապի պատասխանը Տրապիզոնի վրայով գրելու։
Ինչո՞ւ Ձեզանից նամակ չկայ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

125

Պատճէններու մատեան No 82, *էջ* 272-274

Պատճէնը խիստ անորակ նամակ: Անընթեռնելի բառերը, յայտնապէս անձնանուններ, նշանակած ենք առանձնաբար:

4-*ին ապրիլ* 1897 *թ.*

Վարազ-Վահանին (*Վարնա*)
[*Արշակ Վռամեան*]

Յարգելի ընկեր,

Ստացած են Ձեր 8, 12, 15, 16, 18 *մարտ նամակները։ Մինչեւ այժմ ժամանակ եւ տրամադրութիւն չի եղել պատասխանելու։*
Այսօր էլ միայն մի քանի գլխաւոր կէտերին կը պատասխանենք։
Բայց նախ եւ առաջ չմոռանանք յայտնելու որ բանկի տղայոց գլուխը ուրիշ քամի էր մտել, տօնը զգալի կերպով փոխել էին, պարզ էր, որ աշխատողները անպակաս են։ Մեզ մի վիրաւորական նամակ էին գրել, որ մեզ սաստիկ մտատանջութեան մէջ ձգեց. ապագայի համար լաւ բան չէր գուշակում։ Մենք պատասխանեցինք (*Զարիֆեանի միջոցով որ նորից Լոնդոն է գնացել դրանց ճանապարհ ձգելու համար*), *որ լաւ մտածեն եւ մեզ էլ պատասխանեն, թէ յետ են վերցնում իրենց խօսքերը, թէ ոչ։ Զափազանց անհանգիստ էինք, բայց այս րոպէիս ստացանք նրանց նամակը, որտեղ ներողութիւն են խնդրում, խոստովանում են իրենց արած յիմար բանը։*

Լոնդոն փոխադրում ենք 4000 fr. — 300 *էլ այնտեղ կար համարեա. բայց Զարիֆ-եանի գրելով ճանապարհը աւելի սուղ կը նայի, եթէ չյաջողուի ձրի ճանապարհ ձգել։ Մենք շւարած ենք, թէ որտեղից դրամ հասցնենք, եթէ հարկաւոր լինի։*

Աւելորդ ենք համարում կանգ առնել երկար Ձեր յարուցած խնդրի վրայ. չենք հասկանում, թէ ինչ հարկ կայ որոշելու, թէ ով պէտք է այդ խնդրով զբաղուի, ով պէտք է ճամբաներ որոշի եւ ով ընտրելիներ նշանակի։ Հարցը նրանումն է, որ [մէկ բառ անընթեռնելի] *այժ չունենք, պէտք է ընդհանուր ուժերով աշխատենք այնտեղ այժ ստեղծելով, ով ինչ կարող է։* [4 բառ անընթեռնելի]։

Պ. Տուրանը չի խառնւում գործի. կոմիտէն գտել է մէկին, որին շատ ճարպիկ մարդ էին համարում եւ ճանապարհ ձգել։ Այդ մարդը անծանօթ էր, ուրեմն վստահանալ նրա տւած տեղեկութիւնների վրայ բնականաբար չէինք կարող։ Հարկաւոր էր մի վստահելի մարդ եւ մենք հարցրինք մասնաւորապէս Հրաչին։ Կը համաձայնի նա արդեօք եւ խորհուրդ տւինք այն կողմերը գնալ։ Հրաչը, այդ անգամ Եգիպտոսից էր այդ միտքը հիանալի գտնում եւայլն...

Ձեր վրայ առած պատրաստականութիւնը որոշելու համար թէ ով եւ ինչ աստիճանով պէտք է Զէյթունի գործերի մէջ միջամտի, մեզ անհասկանալի է մնում, իսկ ինչ վերաբերում է այն քառասական դրութեան, որ առաջ է գալիս խմբագրութեան բուն երկրի գործերի մէջ խառնւելուց, թոյլ տւէք Ձեզ նկատելու որ այդ դրութեան պատճառը մի քիչ հեռուն պէտք է փնտրել։

— Արփիարեան-Յովհաննէսը մեզանից ոչ մի վկայական չէր ուզել, մի նամակ էր, մասնաւորապէս Հրաչին ուղղած։

— Պիպերեանը վկայականը վերադարձրեց, իսկ Նւիրատոմսերը դեռ ոչ, թէեւ խոստացել է ուղարկելու։ Կրկին կը դիմենք։

— Զաքարեանի projet *մի նոր բան չէ եւ մենք օգտւել չենք կարող։ Աւելի նպատակայարմար միջոցներ կան։*

— Պետօի եւ Բաբկէնի պատկերները մեծադիր են արւած, թէեւ Բաբկէնինը դարձեալ անաջող է։ Խոստացած ալբոմը պատրաստելու դեռ ժամանակ չկայ։

Զաքրեանի անցեալը շատ տխուր է. զարմանում ենք, որ չեռ դրան հաւատացողներ կան։ Դաշնակցութիւնը կարեւորութիւն չի տուել, որովհետեւ Ռուսաստան էր եկել «կենդրոնի» անդամ ընտրւելու համար. երբ իրեն խփեցին, նա մի քանի ուրիշներ ժողովեց եւ կազմեց մի ընկերութիւն, Տաճկահայաստանի ազատութեան վարչութիւն անունով։ Ընկերութիւնը այնքան անդամ կարողացաւ ունենալ, որ կենդրոնի անդամների թիւը կարողացաւ լրացնել։ Վերջը Վարնայից միացաւ մեզ հետ, յանձնելով իր զինարանը եւ դրամը (մի կոթը կոտրած մարտինի հրացան եւ մօտ 60 *ր*[*ուբլի*] *փող։) Մեղաւորեանի մասին եւս պատմածը սուտ է, բայց ոչ բոլորովին։* 91 *թ*[*ականի*] *վերջերը Ռումանիա էին գտնւում Կանտինեանը, Մեղաւորեանը, Կորուզեան*[?] *եւ այլ գործիչներ, որոնք զբաղւած էին զէնք գնելով (տխրահռչակ* 3,000 *հրաց*[*ան*]) *եւ ռումբեր պատրաստելով։ Այդ պարոնները իսկապէս առատութեամբ են դրամ ցրել։ Զաքրեանը դրա մասին խօսելիս կը լինի։*

— Թերզեանի մի նամակի առթիւ նկատում էք, որ նամակներին ուշ ուշ ենք պատասխանում կամ բոլորովին չենք պատասխանում։ Վերջինս ճիշդ չէ. հետաքրքիր է, թէ ինչ նամակ է մնացել անպատասխան։ Ուշ ուշ պատասխանելու մասին միայն այն կ՚ասենք, որ աշխատում ենք որքան կարելի է շուտ պատասխանել։ Հարցնում էք, թէ ինչու ընկեր չենք հրաւիրում։ Հրաւիրում ենք, շատ ենք հրաւիրում, մանաւանդ այն ժամանակ, երբ բոլորն էլ քաշւեցին այստեղից, բայց դեռ պատասխան

չկայ։ Եթէ շուտով մէկը Ռուսաստանից չեկաւ, այն ժամանակ դուք ուզէք, չուզէք պէտք է ձգէք Բոլգարիան եւ այստեղ գաք։ Ուրիշ կերպ անհնարին է։ Մի կողմը թողնելով թերթի, բրոշիւրների խնդիրը, ժամանակ չի լինում շատ անգամ նամակներին պատասխանելու, երբ մի անգամից շատ է կուտակւում։ Գործի շատութեան պատճառով (մանաւանդ համարը դուրս գալու օրերը), մարդ շշմում է եւ չի կատարում մինչեւ իսկ այն, ինչ կարող էր անել։ Մասնաւորապէս Թերզեանի նամակի համար պէտք է ասենք, որ պատասխանել ենք անմիջապէս, տուել մեր հասցէն, որպէս զի շուտով Ձեզ դիմի այդ եւ առհասարակ միւս խնդիրների առթիւ։ Դուք ժամանակին չէք պատասխանել, նա գանգատւում էր։ Եթէ մենք անկարող ենք գտնւում, գոնէ դուք ճշդապահ եղէք։

— Զարիֆեանը դիմած է եղել տղայոց «Նրանց տրամադրութիւնը» հասկանալու համար։ Զարիֆեանի Պարիզի հասցէն՝

1. Claude Bernard, 1

Մեզ դիմողներից շատերին մենք չենք ճանաչում։ Կանիկեան[?] *(Կալացից) վստահելի անձնաւորութիւն է։ Ի միջի այլոց ձեր հասցէն կարելի է՞ բոլորին յայտնել, անյարմարութիւններ չկա՞ն, եւ եթէ կան, ուրիշ հասցէ տուէք։*

— Կ՚ուղարկւի ձեր ցանկացած ցանկը։

— Տօպրիչից տղաներից մէկն է մեզ գրում։ Նրան եւս տուել ենք Ձեր հասցէն։

— Այդտեղից կամաւորներ ուղարկելը, ինչպէս տարիների փորձերը ցոյց են տուել աւելորդ է։ Մինչեւ Զէյթունում մի լուրջ բան չսկսենք, մենք այդ պահանջներին բաւականութիւն տալ անկարող կը լինենք։

— Դրամ կարող է մեզ հասցնել Իզմիրը, միայն մի լաւ ղեկավար է անհրաժեշտ։ Զաւէնը կարող է օգտակար լինել, իրբեւ Տրապիզոնի խմբում փորձւած. որքան մեզ յայտնի է, Թիֆլիզի ժողովն է որոշել նրա Իզմիր գնալը եւ ոչ Հրաչը։ Եգիպտոսը նոյնպէս։ Շահրիկեանին գնալու-չգնալու մասին դեռ որոշ պատասխան չստացանք։

— Վեհունուն լաւ ենք ճանաչում։ Սալմաստում նա բարեկամ էր ձեւանում մեզ, թէեւ միշտ արմենականների խմբի հետ էր։ Համերաշխութիւն էր քարոզում... Էզուիտ, շահասէր է եւ վախկոտ։ Հէնց որ լրագիրներում կարդացինք դրա մասին, իսկոյն գրեցինք կոմիտէներից մէկին (եթէ չենք սխալւում Ռուսչուքի)։ Ինչու առաջւանից հոգ չէ տարւած ժողովուրդի տրամադրութիւնը պատրաստելու։ Ուղղակի կերպով անյարմար է յարձակւել դրա վրայ, դա համահաւասար կը լինի մատնութեան։ Մեր կարծիքով ընդհանրապէս թերթում այդ տեսակ խնդիրների մասին չարժէ գրել։

— Քաջբերունին արդէն անցել է Կիպրոս։

— Կրկնում ենք Օգեսայի, Բաթումի, հետ նամակագրութիւն չունենք, հասցէները չգիտենք, ուստի տալ անկարող ենք։ Թիֆլիզից պատասխան չեկաւ։ Այդտեղի հետ նամակագրութիւն պահպանւում է այստեղի ուսանողուհիներից մէկի քրոջ հասցէով եւ դրա անունից։ Չգիտենք, թէ դա որքան յարմար է Ձեզ համար, կը գրենք դարձեալ։ Հրաչը հասցէներ շատ ունի, նրանց միջոցով եւս հասցէ պահանջէք։ Շարունակութիւնը վաղը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

126

Պատճէններու մատեան No 82, *էջ* 280

6-*ին Ապր*[*իլ*] 97 *թ.*

Յարգելի հայրենակիցներ,

Յայտնում ենք մեր ուրախութիւնը ձեր արած առաջարկութեան առթիւ։
Արդէն գրւած է մեր ընկերներուն, որ կապ հաստատեն ձեզ հետ։
Հաստատ չգիտենալով, թէ այս նամակը ձեր ձեռը կը հասնի, թէ ոչ, երկար գրել չենք կարող։ Այս պատճառով կը խնդրենք գրել ձեր հասցէն պարզ եւ ֆրանսերէն լեզուով։ Այն ժամանակ կ'ուղարկենք ձեզ ձեր ցանկացածները։

Մնանք յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

127

Պատճէններու մատեան No 82, *էջ* 281

6 *ապր*[*իլ*] 97 *թ.*

Missag Bagdassarian
Ecole Normale
Nancy, France

Ընկեր,

Տրապիզոնի նամակի մէջ մի առանձին բան չկար։
Խուզակի[?] *խմբագրին չենք ճանաչում։*
Հանգանակած գումարը գործ ածէք։ Այս անգամ ցանկը լիովին կը հրապարակէք, միայն միւս անգամ խնդրենք գումարը այդտեղ ընդհանրութեան յայտնի անել եւ միայն գումարը տպագրութեան յայտնել, ինչպէս անում են Բերլինի ուսանողները, թէ չէ տեղ շատ է բռնում։
Թօփալեանին կը պատասխանենք։
Ուղարկում ենք 20 *համար եւս։ Խնդրենք ուղարկել։*
Mekirditch Saghrian, poste rest[ante] française, Samsoun, Turquie d'Asie.
Խնդրենք հաղորդել Կարասու-Բազար թերթ ստացողների հասցէները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

128

Պատճէններու մատեան No 82, *էջ* 281

Monsieur D. Topalian
Etudiant en Médecine, Nancy (France)

Յարգելի պարոն,

Ձեր նամակն ստացանք։ Մենք արդէն ուղարկում ենք այդտեղ։ Ձեր ցանկացած քանակութեամբ համարներ կարող էք ստանալ տեղւոյդ ուսանողական cercle-*ից։*

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

6-*ին Ապր*[*իլ*] 97 *թ.*, *Ժընեւ*

129

Պատճէններու մատեան No 82, *էջ* 282

7-*ին ապր*[*իլ*] 1897 *թ.*
Ժընեւ

Anvers

Յարգելի պ. Սարեան,

Ներփակեալ նամակն այսօր ստացանք Անվերսէն, ոչինչ չհասկացանք։
Խնդրենք պարզել եղելութիւնը, եթէ միայն ուշադրութեան արժանի բան է։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

130

Պատճէններու մատեան No 82, *էջ* 282

Monsieur Sarkis Balian
Cafenia Arménien, 166, Soulina (Roumanie)

Յարգելի պարոն,

Մեր առաջին նամակը լաւ չէք հասկացել։ Տուէք, մէկ ուրիշը կարդայ եւ ձեզ հասկացնի։
Այսուհետեւ խնդրենք դիմել մեր ներկայացուցչին հետեւեալ հասցէով՝
Ervante Sissaguian
5 Outch, rue Miladinovada, 116, Varna, Bulgarie

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

6-*ին Ապր.* 97 *թ.*

131

Պատճէններու մատեան No 82, *էջ* 283-284

6-*ին Ապր*[*իլ*] 97 *թ.*
Ժընեւ

(*Մելիքին*) [*Յովհաննէս Իուսուֆեան, Միացեալ Նահանգներ*]

Յարգելի ընկեր,

Մասնաւոր նամակիդ յետոյ, այժմ շտապում եմ։

Բիւրօի մասին դու էլ ես աւելորդ համարում խօսալ. թողնենք ընդհանուր ժողովին. շատ հարցեր կան պարզելու։ Միայն այն նկատեմ, որ դոքա են ծանրանում մեր այս երկրորդական պատճառաբանութիւնների վրայ։ Ի հարկէ այդ քո յիշածները կարելի չեն, անհրաժեշտ չեն, բայց չէ որ աւելի կարեւոր պատճառներ կան։ Բայց թողնենք այս։

— Թիֆլիզի ժողովը մասնաւոր է եղել. չէ որ ամէն տարի այնտեղ տեղի են ունենում։ Բայց յայտնի չէ ինչ տրամաբանութեամբ «ընդհանուր» են կոչել։ Այդ է պատճառը, որ մենք չենք ուզում արձանագրութեան պատճէնը ուղարկել ձեզ։

Գուցէ այսպէս անենք։ Ուղարկենք ձեզ պատճէնը, իսկ դուք բովանդակութիւնը թռուցիկ թերթով տարածէք կոմիտէներին։ Ուրիշ հնարաւորութիւն չկայ։ Ի դէպս, ինչո՞ւ կենդրոն[ական] կոմիտէն թռուցիկներ չի հրատարակում, թէկուզ հերոսների առթիւ տարածած տարաձայնութիւնների առթիւ, կամ հանրագրութիւնների... Հէվրվիլի հանրագրութեան պատասխանը վաղուց է պատրաստուած, միայն չգիտենք, արժէ ուղարկել, թէ ոչ։

Զարիֆեանից նոր նամակ չկայ։ Նա նորից Լոնդոն է մեկնել տղաներին ճանապարհ ձգելու համար։ Հարկաւոր դրամը փոխադրել ենք, եթէ ճանապարհ ձգւի, հարկաւոր բացատրութիւնները կը գրենք ձեզ, որ հաղորդէք կոմիտէներին։

— Դրօշակ հրատարակում ենք երբ նիւթ է հաւաքւում։

— Մարօի դէպքը(1) *չէր կարելի մանրամասը նկարագրել, որովհետեւ անյարմարութիւններ կան առայժմ։ Նա սիրում է եղել մի երիտասարդ յեղափոխականի եւ սիրւելիս է լինում նրանից։ Ցցանկանալով արգելք հանդիսանալ նրա գործունէութեան, Մարօն վճռում է ինքնասպանութեամբ վերջացնել իր կեանքը, չկաշկանդել, այլ թողնել, որ նա ամբողջովին տրւի յեղափոխական գործին։ Մեզ համար էլ մութ էր. տպագրել ենք այնպէս, ինչպէս ստացել ենք։*

Բօրիսն(2) *այժմ Թիֆլիզ է, կարծեմ։ Պոլսոյ մեր ուժերը կազդուրւելու վրայ են։ Այստեղ կան այժմ բացի Յոնանից, Զարմայրը, Հրաչի եղբայրը, Հանըմեանը*(3) *եւ ուրիշներ... Եգիպտացին*(4) *Եգիպտոս է մեկնել նորից կազդուրւելու։ Սկսել են գործել, Պատրիարքին դիմումներ անողները մերոնք են։ Գուցէ շուտով սկսւի «սերիան»։*

Զէյթունի գործերը լաւ առաջ են գնում։

Վերջերումս Կիլիկիայի հնչակեան գործիչները մէկ դիմում արին մեզ դարձեալ միութեան համար։ Մեր նամակի պատասխանի պատճէնը գուցէ ձեզ ուղարկենք։ Խորհուրդ տւինք (մասնաւորապէս մեր կողմից) համերաշխ գործունէութիւն ստեղծելու համար մի քանի խոչընդոտներ հեռացնել՝ 1) Արփիարը, 2) ընդունել ապակենդրոնացումը։

Ժամանակ չենք գտնում ալբոմով զբաղուելու։ Առաջին անգամ առանձին առանձին կը պատրաստենք Պետոի եւ Բաբկէնի պատկերները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Մարոյի դէպք – խօսքը կը վերաբերի Մարիամ Մակարեանի ինքնասպանութեան։ Վերջինիս սիրած «երիտասարդ յեղափոխականը» եղած է Ռոստոմի եղբայր Արիստակէս Զօրեանը։
2.- Բօրիս – ծածկանուն Սմբատ Խաչատրեանի։
3.- Յիշուած անուններէն Յոնանը՝ Դաւթեանն է, Զարմայր՝ ծածկանուններէն մէկը Յովհաննէս Սերենկիւլեանի (Վարդգէս), Հրաչի եղբայր՝ Վահէ Սիւնի – Թիրեաքեան եւ Արտաւազդ Հանըմեան։
4.- Եգիպտացի – ծածկանուն Դեւեան-Մինասեան Արտաշէս, որ քիչ անց, 1897 թ. Յունիս 1-ին պիտի մահանար Գահիրէի մէջ։

132

Պատճէններու մատեան No 82, *էջ* 287-289

7-ին Ապր[իլ] 97 թ.
Ժընեւ

(Վարազ-Վահանին)
[Արշակ Վռամեան]

Յարգելի ընկեր,

Վառնայի կնիքը վաղուց ստացած կը լինէք։ Դա պարզապէս Վառնայի կոմիտէի համար է։ Զգիտենք թէ ինչիցն էք եզրակացրել, որ դա պէտք է փոխարինէ կենդրոնական կոմիտէի կնիքը, որի առթիւ դուք երկար պատճառաբանութիւններ էք առաջ բերում։ Եթէ չենք սխալւում, Ձեր նամակի հիման վրայ ենք ուղարկել։ Եթէ մինչեւ այժմ ուշացնում էինք, դրա պատճառը պէտք է յայտնի լինի։ Ենթադրում էինք, որ Վառնայի կոմիտէն կարող է կենդրոնական ընտրւել։ Այդ դէպքում ուղղակի կենդրոնականի անունով պատրաստել կը տայինք։ Այդ պատճառով էլ գրեցինք, որ եթէ հարկ լինի փոխելու, այսինքն Վառնայի կոմիտէն կենդրոնական դառնայ, կը փոխենք։

Անւան առթիւ նայեցի եւ տեսայ, որ «Վանայ Կենդր. կոմիտէն» «թռուցիկ թերթերի» վրայ «Վասպուրականի» է գրած, կը նշանակի կնիքն էլ այդպէս է պատւիրւած եղել։ Մինչեւ այսօր դրա վրայ ուշադրութիւն չէի դարձրել։ Ինչ անուն որ ուզում էք տուէք, եթէ այդպէս է։ Բայց եթէ դուք կնիքը գործ ածէք առանց կենդրոնական կոմիտէն ընտրել տալու, առանց այդ մարմինը հաստատելու, կարող են դալմաղալներ առաջ գալ։ Դուրս կը գայ, որ այն մարմինը, որ պէտք է տեղական կոմիտէների ձեռքով ընտրւի, նշանակւած է «վերեւից»։ Ի՞նչ կ'ասեն կոմիտէները, երբ ցանկացած «բալքանեան կամ բօլգարական» կոմիտէի կողմից հրահանգներ սկսեն ստանալ։ Ձե՞ն հարցնիլ թէ այդ ինչ կոմիտէ է, ով ընտրեց, ուր մնաց ապակենդրոնացումը։ Չէ որ առաջւանից գրւած է եղել կոմիտէներին որ ձեռնարկեն

Կենդր. կոմիտէի ընտրութեան։ Այդ բանը յետաձգուել է Ձեր գալով, որպէս զի ինքներդ լաւ ճանաչէք բոլորին, որոշէք ամենայարմարը եւ այդ յանձնարարենք մեր կողմից կոմիտէներին։ Յետոյ, երբ Բիւրօի հարցը մէջ մտաւ, մենք անգիտակցաբար այդ երկու հաստատութիւնները իրար խառնեցինք, մինչդեռ պէտք է բաժանել այդ երկուսը։ Բիւրօի ընտրութիւնը կախւած է մեզանից, ձեզանից, պոլսեցիներից, թիֆլիզցիներից... իսկ կենդրոնական կոմիտէի ընտրութեան մէջ անպատճառ պէտք է մասնակցին տեղական կոմիտէները։

Որպէս զի այս հարցը շատ չձգձգուի, շուտով ընտրել տուէք տեղւոյդ կենդրոնական կոմիտէն, յանձնուեն իրեն տեղական գործերը, իսկ դուք շտապէք գալ այստեղ մինչեւ Բիւրօի հարցի վճռուիլը։

Թէ չէ ձեր ծրագրած ուղղութեամբ դուք մեծ դուռ կը բանաք ամէն տեսակ ղալմաղալների, մանաւանդ որ «իրաւունք» բանեցնելու մէջ կոմիտէների եւ անհատների վերաբերմամբ Դուք շատ էք հեռու գնում։

— Սոֆիայի կնիքը ուղարկւած է արդէն իրենց եւ գրւած որ նուիրատոմսերի եւ հրահանգների համար Ձեզ դիմեն։

— Սլիվէնի կնիքն ապահովագրած է եղել, չի կորչիլ։

— Հաւաքածուն ուղարկւած է։ Գուցէ կարողանանք կոմիտէներին մի մի հատ ուղարկել (թէեւ պակաս համարներով)։

Հրաչի պակասութիւնները մեզ եւս յայտնի են, բայց հարցը դրանումը չէ։ Եթէ մենք շարունակենք վարւել հետն այնպէս, ինչպէս դուք էք անում, այդ պակասութիւնները չեն ուղղւիլ։ Պէտք է, որ ինքը զգայ եւ կամաց կամաց թողնի։ Ճիշդ է, մենք մեղաւոր ենք, մենք շատ թոյլ գտնուեցանք, բայց Ձեր ծայրայեղութիւնն էլ լաւ հետեւանքներ չի բերիլ։ Կարծենք, ոչ ոք չի կասկածում, որ Հրաչն իր պակասութիւնների հետ միատեղ ունի մեծ արժանաւորութիւններ։ Ի միջի այլոց խնդրենք գրել Ձեր կարծիքը, թէ Հրաչը ինչ գործի կարող է պէտք գալ այժմ։

Կոմիտէներից մի քանիսին արդէն գրել ենք, որ Ձեզ դիմեն մինչեւ Կենդր. կոմիտէի ընտրութիւնը։ Միւսներին էլ կը գրենք, միայն կարծում ենք, որ աւելի լաւ է, անէք այնպէս, ինչպէս քիչը վերն էինք գրել, այսինքն աշխատէք, որքան կարելի է շուտ այստեղ գալ։ Գործերը թափւած են, միայն նամակներին պատասխանելով բան չի դուրս գալ։ Հարկաւոր է շատ բան գրել այստեղից, ժամանակ չկայ։ Ռուսաստանից էլ կը գան, կը խորհրդակցենք, ուժերը կը բաժանէք, աշխատանքը նոյնպէս։ Սպասում ենք ձեր շուտ պատասխանին այս առթիւ։ Յոնանն էլ նոյնն է առաջարկում։

— Ներփակ ուղարկում ենք Ֆիլիպպ[էից] եկած մի նամակ։ Առաջարկում ենք այդ գրութիւններին առաջն առնելու համար հ[րա]պարակային բացատրութիւն պահանջել նամակագրից։ Թող պահանջեն փաստերով ապացուցանել եւ հակառակ դէպքում, խայտառակելը աւելորդ չէ։

— Լեւոն Սարգսեանը (Ֆիլիպպ.) նորից դիմում է եւ գործ է պահանջում։ Այստեղի դրա մի ընկերը լաւ կարծիք է յայտնում այդ տղի մասին։ Դիմել է եւ Պոլիս։

— Ո՞վ է Խուզակ[?] հրատարակողը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

133

Պատճէններու մատեան No 82, *էջ* 290

7-ին Ապր[իլ] 97 *թ.*, *Ժընեւ*

(*Զարիֆեանին*, *Լոնդոն*)

Յարգելի ընկեր,

Այսօր մի տարօրինակ նամակ ստացանք ֆրանսերէն լեզուով, ստորագրած Etutoine(1). *Դրա ասելով, մի ոմն Տիգրան Երկաթ անունով առաջարկութիւններ է արել մեր կողմից Զէյթունում գործելու։ Երեւի գրողը* Neuvième Croisade-*ի անդամ է։*

Զգիտենք, այս բոլորը յիմար հանաք է, թէ այդ պարոնը զոհ է գնացել Տիգրան Երկաթ անունով սրիկայի օյիններին։ Դժբախտաբար դուք Պարիզ չէք, իսկ մի ուրիշ ծանօթ չունենք, որին կարողանայինք դիմել՝ իմանալու համար թէ ով է այդ Երկաթը, որը մեր անունը չահագործում է։ Ահա նրա հասցէն՝

Ergath, 3, Rue Combon.

Խնդրենք գրել Պարիզ մէկին, որպէս զի նա մեզ որքան կարելի է շուտ տեղեկութիւն հասցնի։

Տղաներից ի՞նչ լուր։ Պէտք է շատ շուտով ճանապարհ ձգել։ Ամերիկայում սաստիկ դժգոհութիւն է տիրում, որ տղայքը armée de salut-*ի ապաստարանումն են ապրել։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Պէտք է ուղղել Antoine.

134

Պատճէններու մատեան No 82, *էջ* 291-292

«Պարոն»ը, ինչպէս կը պարզուի միեւնոյն թուականին Զարիֆեանին ուղղուած Ռոստոմի գրութենէն, պ. Անտուանն է, այն որ կը գլխաւորէր ֆրանս-Պելգիական նախաձեռնութիւն հանդիսացող «Իններորդ խաչակրութիւնը»: Ռոստոմի ձեռագրով նամակը մակագրուած է «չստացուած»: Արդարեւ պ. Անտուան այդ օրերուն մեկնած է Փարիզ, մինչ նամակը ուղարկուած էր Պելճիքայի իր հասցէին. վերադարձին՝ ենթական պիտի ծանօթանար գրութեան եւ անոր ընկերացող «Դրօշակ»ի հեռագրին, առանց սակայն համաձայնելու իրեն եղած յետաձգումի առաջարկին:

Monsieur,

Dès que nous avons entendu parler de l'entreprise que vous vous proposez, nous avons désiré entrer en relations avec vous pour nous entendre si possible au sujet d'une action commune.

L'occasion se présente aujourd'hui, mais d'après Votre lettre, nous voyons avec regret qu'on vous a fait de notre part de fausses offres et qu'une personne (nommé Tigrane Ergath) qui n'a aucune relation avec nous et que nous n'avons chargé d'aucun mandat, s'est permise de s'adresser à vous en notre nom et de vous promettre notre secours.

Nous nous permettons de vous conseiller de retarder votre expédition si c'est possible, et de vous entendre avec nous, car, croyons nous, nous pourrions vous être d'un grand secours, connaissant les lieux et les conditions.

Veuillez agréer, Monsieur, avec l'expression de notre vive reconnaissance pour votre noble dévouement. Nos salutations distinguées.

RÉDACTION DU "DROSCHAK"
Organe de la Fédération Révolutionnaire Arménienne

9 avril 1897
Genève

P. S. Prière de nous écrire à l'adresse: Armène Gaspar, Pictet de Bock, 7.

Թարգմանութիւնը.—

Պարոն,

Այն օրէն, երբ լսեցինք Ձեր առաջադրած ձեռնարկի մասին, փափաքեցանք յարաբերութեան մէջ մտնել Ձեզի հետ, որպէսզի ըստ կարելւոյն համաձայնութեան գանք համակարգուած գործունէութեան մը համար։

Այսօր առիթը կը ներկայանայ բայց նայած Ձեր նամակին ցաւօք կը տեսնենք, որ մեր անունով սխալ առաջարկներ եղած են ձեզի եւ որ անձ մը (Տիգրան Երկաթ անունով), որ ոչ մէկ առնչութիւն ունի մեզի հետ եւ որուն ոչ մէկ յանձնարարական տուած ենք մենք, դիմած է ձեզի մեր անունով եւ խոստացած մեր օժանդակութիւնը։

Կը համարձակինք խորհուրդ տալ Ձեզի, որ եթէ հնարաւոր է յետաձգէք ձեր արշաւանքը եւ հաւանութեան գալ մեզի հետ, որովհետեւ ծանօթ ըլլալով երկրի վայրերուն եւ պայմաններուն, կը կարծենք որ շատ օգտակար կրնայինք ըլլալ Ձեզի։

Հաճեցէք, Պարոն, ընդունիլ մեր ջերմ երախտագիտութիւնն ու ողջոյնները ձեր ազնիւ նուիրումին համար։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»
Պաշտօնաթերթ Հ. Յ. Դաշնակցութեան

9 *ապրիլ* 1897
Ժընեւ

Յ. Գ.— Խնդրենք մեզի գրել հետեւեալ հասցէին.—
Արմէն Գասպար, Պիկտէթ տը Բոկ, 7

135

Պատճէններու մատեան No 82, *էջ* 293

Au Comité d'Action Crétois

Messieurs,

Nous certifions par la présente que Monsieur Babayan est le représentant de notre parti en Egypte. Nous vous prions donc d'avoir entière confiance en lui et de vous entendre avec lui pour les mesures à prendre contre l'ennemi commun.
Veuillez agréer, Messieurs, nos salutations distinguées.

RÉDACTION DU "DROSCHAK"
Organe de la Fédération Révolutionnaire Arménienne

9 avril 1897
Genève

Թարգմանութիւնը.—

Կրետական շարժման կոմիտէին,

Պարոններ,

Ներկայիս կը վկայենք որ Պարոն Բաբայեան(1) *մեր կուսակցութեան նիրկայացուցիչն է Եգիպտոսի մէջ։ Կը խնդրենք, ուրեմն, որ ամբողջական վստահութիւն ունենաք եւ իր հետ համաձայնիք հասարակաց թշնամիին դէմ ձեռնարկելիք քայլերուն համար։*
Հաճեցէք ընդունիլ, Պարոններ, մեր յարգալիր ողջոյնները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»
Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթերթ

9 *ապրիլ* 1897
Ժընեւ

1.- Բաբայեան՝ Գարեգին Խաժակն է (Չագալեան)։

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 134

136

Պատճէններու մատեան No 82, *էջ* 294-295

9 *ապրիլ* 1897 *թ.*(1)

Յարգելի ընկեր Զարիֆեան (Լոնդոն)

Neuvième Croisade-*ի անդամ պ. Անտուանի կողմից երկրորդ նամակը ստացանք։ Մեզանից մի պատգամաւոր կ՚ուզեն բանակցելու համար. արդէն յայտնի է եղել, որ Երկաթ կոչւածը յանձնարարւած չի եղել մեր կողմից։ Այսօր մի նամակում յայտնեցինք եղելութիւնը, յայտնելով նաեւ մեր պատրաստականութիւնը՝ բանակցելու։*

Եթէ expédition-*ը*(2) *ուշացնեն, այն ժամանակ կարելի կը լինի պայմանաւորւել, իսկ եթէ ոչ,— ոչինչ չենք կարող անել։*

Յամենայն դէպս, խնդրենք տղայոց գործն աւարտելուց յետոյ տեսակցել նրանց հետ հետեւեալ հասցէով

M. Godfray
111, rue des Joyeuses Entrées
Louvain – Belgique

Երկրորդ նամակին դեռ չենք պատասխանել. պատասխանը կը հաղորդենք։

Պրուսացին թող Եգիպտոս մեկնի. վնաս չունի։ Այնտեղ եւս կարող է հարկաւոր լինել, կամ Իզմիր կը գնայ, կամ Զէյթուն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Բնագրին մէջ սխալմամբ գրուած է մարտ. սրբագրեցինք Ապրիլի, ինչպէս արձանագրուած է գրութեան աւարտին:
2.- Արշաւանքը:

137

Պատճէններու մատեան No 82, *էջ* 296-299

(*Պոլիս*)

Սիրելիք,

Դժբախտաբար դրամի սաստիկ նեղութիւն ենք քաշելու (չեմ ասում քաշում, որովհետեւ դեռ յոյս կայ, որ Լոնդոնից հեռագրով փող չեն պահանջելու տղայոց ճանապարհ ձգելու համար։ Հակառակ դէպքում, դրութիւններս անելանելի է)։

Այդ հարցը սաստիկ մտատանջութեան մէջ է ձգում մեզ։ Կարծենք Ռուսաստանից պէտք է յոյսը կտրել։ Ամերիկան դժւար թէ այլեւս մի բան տայ, նայած այնտեղի տրամադրութեան, թէեւ սպասում ենք դրական պատասխանի։ Բանը այն է, որ տղայոց armée de salut-*ի մէջ մնալը մեծ զէնք է դարձել արփիարականների ձեռքին, որոնք գրգռում են Ամերիկայի հասարակութիւնը մեր դէմ, օգտւելով մանաւանդ այն հանգամանքից, որ Ամերիկայում հանգանակութիւն է արւել յօգուտ այդ տղայոց ու մեզ է ուղարկւել։ Բաբկունին*(1) *Լոնդոն է եւ աշխատում է նրանց ճանապարհ ձգել, անգլիացիներից քիչ դրամ հանգանակելով։ Մենք փոխադրել ենք* 1,000 fr.։ *Այնտեղ էլ կար* 300, *ընդամէնը* 1,300 fr.։

Խ. Գ. մեզ դեռ չի դիմել։

Երէկւայ հեռագրներում կայ, որ իբր բանկի յարձակումի հեղինակներին ձերբակալել են։

— Ինչո՞ւ թղթակցութիւն չէք ուղարկում։

— Պատրիարքի թուղթի մասին յիշել չարժէ, երբ բովանդակութիւնը չկայ։

— Միութեան հարցը կանգ էր առել, երբ սկսեցին հանրագրութիւններ գալ Ամերիկայից (2-*ը*)*. դրանց ուզում էինք պատասխանել, երբ ստացանք Կիլիկիայի հնչակեան գործիչներից մի քանի դիմում։ Այդ նամակի եւ մեր պատասխանի պատճէնները կ՚ուղարկենք ձեզ։*

Ազդարարութիւնը ստացանք։ Թէեւ իսկոյն թարգմանեցինք (մօտաւորապէս), բայց վաղը հազիւ ուղղուի։ Միւս օրն էլ կիւրակի է։ Կը մնայ ուրեմն երկուշաբթի օրւայ, իսկ մինչեւ ձեզ հասնի, արդէն 3 *շաբաթ անցած կը լինի դէպքի օրից։ Ազդը կորցնում է բոլորովին իր նշանակութիւնը։ Աւելի լաւ չէր լինիլ, եթէ իսկոյն եւեթ դեսպաններին հաղորդէիք թէկուզ հայերէն. եթէ դժւար է այդտեղ ֆրանսերէն թարգմանել, պատճէն մեզ ուղարկէիք, մենք կը թարգմանէինք, կը տպագրէինք եւ թերթերին կը տարածէինք։*

Ուղարկելը կ՚ուղարկենք, միայն կարծում ենք, որ մինչեւ ձեզ հասնի, մինչեւ գրէք, մի նոր դէպք է պատահելու։

Ցետոյ չենք հասկանում, թէ ինչու էք ուզում դեսպաններին տպագրած ուղարկել։ Աւելի լաւ կը լինի, եթէ դուք ձեռագրով մի մի հատ դեսպաններին յանձնէք, իսկ տպագրւածները ցրւեն ոչ թէ այդտեղից, այլ օր[ինակ] Պարիզից։ Տուէք մի ուրիշ հասցէ եւս Գերմանիայից ուղարկելու համար։ Անյարմար է մէկով ուղարկել։

— Մէլիքն ուզում է ձեր հասցէն։ Ուղարկե՞նք, թէ դուք աւելի յարմարը կ՚ուղարկէք։ Ահա նրա հասցէն, գուցէ մոռացած լինէք, 520, P.O.Box T. Vahanian(2)։

— Եգիպտոսից նոյնպէս պահանջում են։ Անտոնի(3) *ձերբակալման լուրը մենք*

ուրիշ աղբիւրից էլ իմացանք։ Թոփալի(4) *մասին ոչինչ չկար։ Դրանը հաստա՞տ է։ Շատ վատ եղաւ։*

Եթէ պատերազմ չեղաւ, վա՜յ մեզ։ Եթէ «խաղաղութիւն» հաստատուեց, հայ ազգաբնակութեան կէսը չի մնալ, բոլորն էլ կը գաղթեն։ Ուտելու ոչինչ չունին։ Սարսափելի լուրեր են գալիս ներքին նահանգներից։

Neuvième Croisade *անունով մի ընկերութիւն է հիմնուել (ֆրանսիացի եւ բելգիացի) եւրոպացիներից, որի նպատակն է զէնքով միջամտել եւ հայկական դատը լուծել։ Մինչդեռ մենք միջոցների էինք փնտրում դրանց մօտենալու, դրանց գլխաւորից ստացանք մի նամակ (մի ոմն Տիգրան Երկաթ կեղծանունով Պարիզից առաջարկութիւններ, խոստումներ է արել մեր կողմից. այդ առաջարկութիւնների առթիւ էր նամակը), որից երեւաց, որ* 34, 2, 9, 25, 38, 4, 7, 35, 3, 5, 34, 13, 3, 20, 21, 22, 7, 29, 7, 27, 7, 29, 7, 2 [տասը օրից յետոյ դէպի Կիլիկիա] *արշաւանք են գործելու։ Մենք գրեցինք այսօր, յայտնելով, որ թէեւ մեր սաստիկ ցանկութիւնն էր իրենց հետ միասին գործելու, մենք աշխատում էինք, բայց ոչ մի Տիգրան Երկաթ չենք ճանաչում. մենք նրան երբեք ոչ մի բան չենք յանձնարարել։ Թող նրանք ուղղակի մեզ հետ սկսեն բանակցութիւնները։ Դրանից յետոյ ստացանք երկրորդ նամակը, որտեղ նա արդէն յայտնում է, թէ իմանալով որ այդ Տիգրան Երկաթը Դաշնակցութեան չի պատկանում, նրա հետ բանակցել չի ուզում. խնդրում է մեզանից մէկին։ Դեռ այդ նամակին չենք պատասխանել։ Կ՚աշխատենք յետաձգել իրենց ծրագիրը, Բաբկունին Լոնդոնից վերադառնալիս կ՚անցնի Բելգիա եւ կը տեսակցի հետները։ Դրանց ծրագիրն այնպէս տարօրինակ է, որ պէտք է խոստովանեմ, ոչ մի հաւատ չի ներշնչում։ Կ՚աշխատենք ամէն կերպ օգտուել։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

10-*ին Ապր*[*իլ*] 97 *թ.*

1.- Բաբկունի – ծածկանուններէն մէկը Յովհաննէս (Ժան) Լոռու-Մելիքեանի, որ ծանօթ էր ընդհանրապէս Զարիֆեան կեղծանունով:
2.- Վահանեանը նոյն Մելիքն է՝ Յովհ. Իւսուֆեան:
3.- Անտոն – ծածկանուն Սիմոն Զաւարեանի, որ իսկապէս ձերբակալուած էր եւ բանտ կը գտնուէր:
4.- Թոփալ – Քրիստափոր Միքայէլեանի համար գործածուած կեղծանուն:

138

Պատճէններու մատեան No 82, *էջ* 300

10 *Ապր.* 1897

Յարգելի պ. Սայեան,

Վերադարձնում ենք Ձեր նամակի մէջ ներփակեալ 3 *կտոր թղթերը։*

Մենք եւս կասկածեցինք, որ նամակաբերն ինքը Հայր-Սուրբն է, այդ պատճառով Ձեզ ուղարկեցինք։

Ձարժէ դրանով զբաղուիլ։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

139

Պատճէններու մատեան No 82, *էջ* 301-302

12 *Ապր*. 97 *թ*.

(*Զարիֆեանին*, *Լոնդոն*)

Յարգելի ընկեր,

Այսօր ուղարկում ենք մի հեռագիր։ Յամենայն դէպս նամակ էլ ենք գրում։ Պէտք է շտապել, տղայոց ճանապարհ ձգել եւ ճանապարհւել Louvain, Neuvième Croisade-*ի հետ տեսակցելու։ Այսօր մի հեռագրով խնդրեցինք սպասել մեր* télégram-*ին։*

Եթէ տղայոց ճանապարհ ձգելն ուշանում է, եւ եթէ այդ գործը չի կարելի յանձնել այդտեղ մէկին, խնդրենք հեռագրել, որպէս զի այստեղից մէկին ուղարկենք։ Իսկ եթէ ոչ՝ կարող էք, խնդրենք անմիջապէս ճանապարհ ընկնել։ Հասցէն կրկնում ենք, 111, rue des Joyeuses Entrées, Louvain, Belgique.

Բանակցութեան ժամանակ հետեւեալ գլխաւոր կէտերն ի նկատի ունեցէք։ Կիլիկիան ոչ թէ կռւող ուժերի պէտք ունի, այլ գլխաւորապէս պաշարի-ուտեստի եւ մասամբ զէնքի։ Այդ ցոյց տուեց վերջին ապստամբութիւնը։ Ուրեմն մեր ամենագլխաւոր հարցը պէտք է լինի հացի պատրաստութիւն տեսնելը։ Այնուհետեւ լաւ զէնք մատակարարելն, իսկ կռւող ուժեր մտցնելը պէտք է լինի մեր վերջին հոգսը, մանաւանդ որ ոչ մի ժամանակ մենք պակասութիւն չենք զգալ դրանց մէջ. մոռացանք յիշել կռւի ղեկավարներին։ Թող առաջին երկու պայմանները բաւականութիւն ստացած լինին, հարիւրաւոր երիտասարդներ կը թափւեն։

Բանակցութեան ժամանակ ծանօթացէք դրանց ուժի, ծրագրի հետ եւ անմիջապէս մեզ հաղորդէք։ Մեր ուժերի մասին հետեւեալն ենք յայտնում, որ միշտ ի նկատի կ՚ունենաք։

Մէկ երիտասարդ ուղարկւած է Եգիպտոսից։ Հրաչը ճանապարհ է ընկնում շուտով Կիպրոս, Ալէքսանդրէտից մի խումբ ինքնաբերաբար մտել է մեր դրօշի տակ։

Բացի այդ, Կիլիկիայի բոլոր հնչակեան ուժերը մի հանրագրով դիմել են մեզ, խնդրելով բանակցութիւնները շարունակել իրենց վարչութեան հետ։ Դրանց ուղարկած պատասխանի պատճէնը կը ստանաք։ Առայժմ հաղորդենք, որ մեր կողմից առաջարկւել է 1) *Արփիարին հեռացնել* 2) *ապակենդրոնացում ընդունել։ Յուսով ենք դրանց հետ համաձայնութեան գանք ինչպէս տեսնում էք, մենք առայժմ ոյժ չունենք, բայց շուտով կ՚ունենանք, եւ մեծ ոյժ։ Այս բոլորն ի հարկէ միայն Ձեզ համար է եւ ոչ նրանց յայտնելու։ Միայն մի բանից խոյս տուէք, խոստումներ անելուց եւ աշխատէք յետաձգել տալ* expédition-*ը։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

140

Պատճէններու մատեան No 82, *էջ* 303

13 *Ապր*. 97 *թ*.

Յարգելի ընկեր Գարեգին,

Կոստանցա

Պ. *Վարազ-Վահանին կարելի է լիովին հաւատալ։*
Պիպերջեանը մեզ գրել է տոմսակների մասին։ Առայժմ թողէք նրան. *հարկաւոր ժամանակը մենք կը գրենք Ձեզ։*
Կոմիտէ կազմելու համար, ինչպէս եւ այլ հարցերի մասին խնդրենք դիմել դարձեալ պ. *Վարազ-Վահանին։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

141

Պատճէններու մատեան No 82, *էջ* 304

13 *Ապր*. 1897 *թ*.
Ժընեւ

Յարգելի ընկեր Որբիկեան,

Պ. *Զարիֆեանի յանձնարարութեամբ ուղարկում ենք Ձեզ ներփակեալ ծրարը, խնդրելով, որ փոստին յանձնէք։ Նամակը ծանր է, ուստի խնդրենք չմոռանալ հարկաւոր արժէքով նամակագրոշմ խփել։ Տաճկաստանի վերաբերմամբ դա նշանակութիւն ունի։*
Ընդունէք մեր շնորհակալութիւնները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

142

Պատճէններու մատեան No 82, *էջ* 305

13 *Ապր.* 1897 *թ.*

(*Զարիֆեանին, ի Լոնդոն*)
Յարգելի ընկեր,

Ստացանք այս առաւօտ Ձեր հեռագիրը եւ 11 *ապր. նամակը։*

Antoine-*ը մեզ գրել էր, թէ սպասում է կիւրակի օրը մեր ներկայացուցչին։ Կիւրակի օրը մենք հեռագրեցինք, որ սպասեն մեր ներկայացուցչին։*

Ձեր ցանկացած տեղեկութիւններն գրւած են երէկւայ նամակով, դարձեալ նամակին հասցէով London st.

Ինչպէ՛ս է եղել, որ մոռացել ենք տղայոց մասին գրել։ Աւելորդ է տղայոց պահել Զէյթունի համար, քանի որ առայժմ ոչ մի կարիք չկայ։ Դրսից կռւող ուժեր կարող են հաւաքւել միայն այն ժամանակ, երբ տեղացիները պաշար ունենան եւ պատրաստ լինին կռւելու։

Թուխիկեանի մասին կը գրենք։ Այսօր ուղարկում ենք Որբիկեանի հասցէով մի ծրար, որ խնդրում ենք նոյնութեամբ փոստ ձգել պարզ, ոչ-ապահովագրած։ Թող իր ծախսերի հաշիւը պահի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

143

Պատճէններու մատեան No 82, *էջ* 306

13 *ապրիլ* 1897 *թ.*(1)
Ժընեւ

(*Զարիֆեանին, ի Լոնդոն*)
Յարգելի ընկեր,

Գուցէ ուշ լինի, բայց եւ այնպէս գրեմ։

Ամերիկայում տղայոց Armée de salut-*ի մէջ մնալը լաւ մատի փաթաթան է դառել հնչակեանների եւ այլ դժգոհ տարրերի ձեռքին։ Կարծում ենք, որ եթէ տղայքը մի ընդհանուր նամակ գրեն եւ ուղարկեն Ամերիկա, յայտնելով թէ իրենք բնաւ մտադիր չեն դանգատուելու, որ գոհ են եւ այլն... դրանով մեր թշնամիների բերանը փակած կը լինինք։ Թող մօտաւորապէս ձեւակերպեն այսպէս՝*

Լսում ենք, որ Ամերիկայում մի կարգ մարդիկ դժգոհութիւն են յայտնում դաշնակցական կոմիտէներին, որ նա մեզ տեղաւորել է Armée de salut-*ի ապաստարանում։ Յայտնում ենք, որ մենք ինքներս գոհ ենք եւ ապագայում եւս մենք պատրաստ ենք զրկանքներ կրել եւ ծանրութիւն չդառնալ Դաշնակցութեան համար։ ...*

Կամ մօտաւորապէս այսպէս, միայն իրենց լեզուով գրւած լինի եւ բոլորի ստորագրութեամբ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Թիւրիմացութեամբ բնագիրը ունի մարտ ամիսը։

144

Պատճէններու մատեան No 82, *էջ* 307

(*Կարասու-Բազար*)

Յարգելի բարեկամ,

Ձեր ուղարկած պարտքը, սկզբում 63 *ր*. 80 *կ*., *իսկ յետոյ* 272 *ր*. *ստացած ենք եւ մտցրած տոմարի մէջ։ Խնդրենք ուղարկել մնացեալը եւս։*
Խնդրենք այսուհետեւ Ձեր նամակներն ուղարկէք հետեւեալ հասցէին՝

M. Gasparian, 26, Chemin de la Roseraie, 26.
Ընդունէք մեր բարեւները եւ յարգանքները։
Տունս փոխած եմ։

Մ. *ԳԱՍՊ*.

13-*ին Ապր*. 1897 *թ*.

145

Պատճէններու մատեան No 82, *էջ* 308

13 *Ապր*. 1897 *թ*.
Ժընեւ

Սլիվէնի Օժանդակ կոմիտէին,
Յարգելի ընկերներ,

Վերջերս տեղեկացանք, որ կնիքն ուղարկւած է եղել Société Ojandak *հասցէով։ Եթէ կնիքը չգտնուեցաւ, հարկաւոր է ձեւը փոխել, որպէս ուրիշները չկարողանան շահագործել, եթէ իրենց ձեռքն է ընկած առաջինը։ Եթէ համաձայն էք, պատրաստել կը տանք պարզապէս «Սլիվէնի կոմիտէ»։*
Ձեր ցանկացած գրքերն ստանալու համար, ինչպէս նաեւ այլ եւ այլ պահանջների համար խնդրենք դիմել պ. *Վարազ-Վահանին, որ այժմ Վառնա է, մինչեւ որ մի կենդրոնական կոմիտէ հաստատուի։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. *Գ*.— *Պոլսոյ կռուի նկարագրութիւնը պատրաստւում է տպագրութեան։*

ՆՈՅՆ

146

Պատճէններու մատեան No 82, *էջ* 309-310

Սիրելիք, Պոլիս

Երէկ ուղարկեցինք մի մասը։ Մնացեալը վաղը կ՚ուղարկենք։

Ապահի նամակը մէկ էլ կարդալով, տեսանք, որ արտագրելու մասին է խօսում։ Երեւի հարկաւոր է արտագրել 6 *օրինակ դեսպաններին ուղարկելու համար։ Այդ անել չենք կարող, որովհետեւ մենք մեզ մօտ չենք պահել ձեր պատուիրած պաշտօնական թղթերից եւ ոչ մէկը։ Բոլորն էլ Վահապին ենք ուղարկել։ Իսկ հասարակ թղթի վրայ չարժէ։*

Տպագրուածի վրայ թիւերը մոռացուած է, բայց կարծենք առանձին վնաս չունի։ Աւելի լաւ կը լինի եթէ իւրաքանչիւրի վրայ կնիք դնէք։ Մկօն ուզում է Պոլիս գալ տէրրօրիստական խումբը մտնելու։ Ուզում է՞ք, թէ ոչ։

Ներփակեալ դնում ենք ամերիկ. եւ գերմանական լրագիրների անունները։ Զմռռանաք եւ Ռուսաստան ուղարկել։

[Կը հետեւին Պեդրոկրադ, Մոսկուա, Վիեննա, Նիւ Եորք, Պոսթոն եւ Լոնտոն հրատարակուող թերթերու անունները]:

147

Պատճէններու մատեան No 82, *էջ* 311-312

14 *ապրիլի* 1897 *թ.*(1)

(*Զարիֆեանին, ի Լոնդոն*)
Յարգելի ընկեր,

Ստացանք 12 *ապր. նամակը։ Զարմանում ենք, որ* Antoine-*ը դեռ Պարիզ է, ուրեմն մեր հեռագիրը չի ստացել, ինչպէս եւ ուղարկած նամակը։*

Մեր կարծիքը ընդհանրապէս գրել ենք արդէն. պարզ է, որ մանրամասը չէինք կարող գրել, քանի որ չգիտենք նրանց ոյժը եւ իսկական տրամադրութիւնը։

Մենք աւելի շատ պէտք է լսենք նրանց, քան թէ խօսենք եւ խոստումներ անենք։ Նրանք պէտք է մեզ օգնեն եւ ոչ մենք նրանց, այդ չպէտք է երբեք մոռանալ։ Մինչեւ մենք չշարժւենք, նրանց միջամտութիւնը ոչ մի օգուտ բերել չի կարող։ Իսկ մեր շարժւելու համար անհրաժեշտ է, կրկնում ենք, առաջինը ուտեստի պաշար, որպէս զի անցեալի նման Զէյթունը սովամահ չլինի, ուրեմն առատ դրամական միջոցներ։ Մենք մեր ձեռքից եկածը կ՚անենք, բայց պէտք է գիտենան դոքա, որ հայ ազգի նիւթական քայքայումը մեծ խոչընդոտ է ներկայանում հարկաւոր դրամը ձեռք ձգելու։

Երկրորդ, ռազմամթերքի պաշար. ճիշդ է, զէյթունցիք զինուած են, այդ կողմից այնքան էլ դժուարութիւն չեն կրում, բայց պարզ պէտք է լինի, թէ որքան անհրաժեշտ են վերջին կատարելագործուած հրացանները։ Արտասահմանում մենք պատրաստ ունենք 100 *հրացան եւ բաւականաչափ փամփուշտներ։ Նորերը գնելու դիւրութիւններ ունենք։ Երբ ճանապարհները հաստատուին տեղափոխելու համար, զէնք հայթայթելու հարցը դիւրին է։ Վերջին տեղն է բռնում կուռող ուժերի ներմուծումը Զէյթուն։ Զէ որ Զէյթունի մէջ այդ տեսակ ուժերի պակասութիւն չկայ, միմիայն ապագայում, երբ գործն սկսի, երկրի մէջ պատրաստուած պաշարի ու ռազմամթերքի քանակութեան համեմատ դրսից կարելի է ուժեր ներս մտցնել։*

Սկզբնական քայլերում այնտեղ հարկաւոր են ղեկավարող ուժեր։ Այդ տեսակ ոյժ կարող է լինել Հրաչը, եթէ նրան յաջողւի Զէյթուն մտնել։ Դէպի նոյն կողմերն են ուղեւորուել նոյնպէս ուրիշները, թէեւ երկրորդական ուժեր։

Բացի այդ, առաջարկութիւն է եղած հայդուկային կեանքի մէջ մխուած մի քաջ երիտասարդի, որը բացի այդ խելօք, փորձառու եւ միեւնոյն ժամանակ ինտելիգենտ ոյժ է։

Այս տեսակէտից աւելորդ ենք համարում այժմեանից մտածել տղայոց Զէյթուն ճանապարհ ձգելու մասին։

Թող միայն գործի հիմքերը դրուեն. ամէն կողմից կը թափւեն կուռող ուժեր։ Արդէն ամէն կողմից դիմումներ են լինում։ Մի նոր դիմում ենք ստացել Ռուսաստանի ուսանողներից եւս։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Տօնապետեանին խնդրենք յայտնել, որ Հնչակին ուղարկելու պատճառը մի թիւրիմացութիւն է եղել. կ՚ուղարկւին, միայն թող յայտնի, թէ որ համարները չեն ստացուած։

Յ. Գ.— Յայտնեցէք պ. Անտուանին, որ Զէյթունի անցեալ տարւայ փորձը պէտք է պարզ կերպով ցոյց տայ, որ եթէ մի բան պակասում է զէյթունցիներին, դա պաշարն է առաւելապէս եւ ոչ կռուող ուժերը։ Նա մեզանից պահանջում է 60-80 *լաւ կռուողներ, որ նրանց զինեն, հագցնեն եւրոպացու ձեւով։ Յայտնէք, որ ոչ թէ* 60-80, *այլ* 600-800 *եւ աւելին կան. թող միայն հնար մտածեն պաշար հասցնելու։ Մենք էլ մեր կողմից կ՚անենք յոյների օգնութեամբ։ Գուցէ մէկը շուտով Աթէնք գայ։ Առաջանից Եգիպտոսում՝ յարաբերութեան մէջ ենք յունական կոմիտէի հետ։ Անտուանին գրած մեր նամակը մեզ վերադարձրին։ Պատերազմն սկսել է, աշխատէք ամէն կերպ դրանց ձեռքից բաց չթողնել։*

1.- Բնագրին մէջ Ապրիլի փոխարէն գրուած է Մարտ։

148

Պատճէններու մատեան No 82, *էջ* 316-317

(*Պոլիս*)

Սիրելիք,

Քանի օր է գլուխներս բոլորովին խառն էր բնակարանի փոխուելու պատճառաւ։ Այսօր էլ մի քանի տող միայն կը գրեմ։

— Հանգանակութեան թղթերն ուղարկւած են 10 *հատ. Մնացածներն եւս կ՚ուղարկենք։*

— Թերթ ուղարկւած է 80 *հատ միայն երկու անգամով։ Պատճառը գրւած է։ Ուղարկէք երկրորդ հասցէն եւս, որպէս զի շուտով ձեզ հասցնենք։*

— Թերթն անկանոն է դուրս գալիս, որովհետեւ նիւթ չկայ. ի՞նչ հրատարակենք։ Հազիւ թէ ամսիս վերջին լոյս տեսնի։ Ինչո՞ւ դուք էլ չէք ուղարկում։ Եթէ ձերը լինի, այստեղից, այնտեղից կը սազացնենք։ Թէ Աստուած սիրէք, շուտ ուղարկէք։

— Կիւմիւշկերտեանի մասին ձեզ գրւած է եղել. շատ էք անհամբեր եւ պահանջկոտ։ Ձեր հեռագրի պատասխանը ժամը 3*-ին (գիշ.) ենք ուղարկել, չնորհակալ չէ՞ք։*

— Քեամիլ բէյի մասին դեռ ոչինչ չենք յայտնել. Շէֆիզը քանի օր է, եկել է «խօսալու»։ Սոիպւած ենք խոյս տալ։ Այսօրւայ Mechveret*-ի*(1) *մէջ դրա մասին կար։ Այնքան էլ կարեւորութիւն չեն տալիս։ Հասանն էլ է եկել։*

— Ուղարկւած են եւ ձեր դիմումները (դեսպաններին) մաս մաս։ Չգիտենք, ձեր ուզածով եղաւ, թէ ոչ։

— Եթէ օգ. 14*-ի դէպքի*(2) *վերաբերեալ համարներից լինի, կ՚ուղարկենք. այնքան քիչ է մնացել ընդհանրապէս, որ չգիտենք, թէ ինչ անենք։*

— Միտս չէ, ուղարկւած են ձեզ նոյնպէս Կիլիկիայի հնչակեան գործիչների նամակի եւ մեր պատասխանի պատճէնները։ Եթէ ուղարկւած չլինի, վաղը կ՚ուղարկենք։ Նոր հնչակեանները նոր օրգանով են երեւան եկել «Մարտ» անունով։ Գուցէ արդէն տեսած լինիք։ Այնտեղ ի միջի այլոց պատմում են մեր բանակցութեան սկիզբը եւ յայտնում են, թէ սպասում են մեր պատասխանին։ Արդէն բաւական է, պատասխանն անհրաժեշտ է։ Վահապի առաջարկութիւնը անտակտ ենք համարում։ Դրա մասին յետոյ։

Ձեր Ռ.

1.- Ահմէտ Ռիզայի խմբագրութեամբ Փարիզ լոյս տեսնող թուրք ընդդիմադիրներու թերթ։
2.- Օգոստ. 14 – ակնարկութիւն Օսմանեան դրամատան գրաւումին եւ Սամաթիոյ կռիւներուն։

149

Պատճէններու մատեան No 82, *էջ* 325-326

20 *Ապր*. 97 *թ*.

(*Վառնա*)

Սիրելիք

Այս առաւօտ մի նամակ գրեցինք. աւելորդ չենք համարում մի քանի խօսք եւս ասել։

Տխուր նամակ ստացանք Antoine-*ից* (Neuvième Croisade-*ի ներկ*[*այացուցիչ*]), *որը գրում է Զարիֆեանի հետ առաջին տեսակցութիւնից յետոյ։ Նա խոստանում է մտցնել Կիլիկիա* 100 *կատարելագործուած հրացան* 30,000 *փամփուշտով, սուինները*[?], *ատրճանակներ* 100 [անընթեռնելի մէկ բառ] *որսորդական, միւս զինուորական միւս պարագաների հետ միասին։ Խոստանում է մտցնել* 12 *սպաներ եւ ենթասպաներ*, 30 *զինուոր։ Նա մեզանից խնդրում է Կիլիկիայում* 60-80 *մարդ որ նրանք կը զինեն, կը հագցնեն եւ կը կազմակերպեն ըստ եւրոպականի։ Եթէ շատ մօտ ապագայում համաձայնութիւն չկայանայ, մենք այլ եւս չենք կարող օգտուել այդ ուժերից։ Նրանք կամ կը միանան հնչակեանների հետ, կամ ուղղակի Յունաստան կ'երթան։ Ահա թէ ինչու պէտք է լարել մեր ուժերը եւ շտապեցնել Զէյթունի գործը։*

Այսօր հեռագրուած է ձեզ, որ Վահապը գայ. քիչ հիւանդ եմ, կոկորդացաւ եւ տաքութիւն ունէի, անհնար է լինում կանոնաւորապէս գործը տանել։ Ինչ ուզում էք արէք Բիւրոյի կազմակերպութեան մասին, միայն այստեղ շուտով մէկն ուղարկէք առժամանակեայ կերպով։

Հեռագրեցաւ նոյնպէս, որ կամ Վարդը կամ Նիկոլը Աթէնք գնան, վաղուց է այնտեղ մի ներկայացուցչի պէտք է զգացւում։ Եգիպտոսի եւ Լոնդոնի յարաբերութիւններից յետոյ շատ հեշտ կը լինի մեր ներկայացուցչի համար հեղինակութիւն ձեռք բերել եւ օգնութիւններ ստանալ։ Անպատճառ մէկը պէտք է ճանապարհ ընկնի, միայն այնպէսը, որ կարողանայ ֆրանսերէն խօսալ եւ «դիրք» պահել։ Դրա կարեւորութեան վրայ պնդում են թէ Զարիֆեանը եւ թէ Խաժակը։ Գնալուց առաջ խնդրենք հեռագրել, որպէս զի շուտով ներկայացուցչական վկայագիր ուղարկենք։ Զմոռանաք գրել, ինչ անունով են գնալու։

Ժամանակ թանկ է, ազմակերպելու գործը յետոյ կը վճռենք, իսկ առայժմ հարկաւոր է ուժերը նպատակայարմար կերպով բաժանել եւ քիչ տաք-տաք գործել։

Սպասում ենք ձեր նամակին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

150

Փաստ. 36բ-29

21 *ապր.* 1897 *թ.*, *Ժընեւ*

Աղէքսանդրիայի կոմիտէին,
Յարգելի ընկերներ,

Նամակս ներկայացնողը մեր ընկերներէն է։ Խնդրենք ընդունել եւ հարկաւոր դիւրութիւնները ընծայել։

Ընդունէք մեր բարեւները
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ «ԴՐՕՇԱԿԻ»

151

Պատճէններու մատեան No 82, *էջ* 327

22 *Ապր.* 1897 *թ.*

Եմպոլի կոմիտէին
Յարգելի ընկերներ,

Հրացանների մասին գրւեցաւ Վարնա տղայոց։ Այսպէս ժամանակ եւ այդ տեսակ պայմաններով անյարմար ենք գտնում ծախելը։

Դրօշակների ամբողջ հաւաքածուն անկարող ենք ուղարկել, կ'ուղարկենք եղածը։ Իսկ պրօշիւրների, նւիրատոմսերի համար խնդրենք դիմել նոյնպէս Վարնա։ Մինչեւ բոլգարական կենդրոնական կոմիտէն ընտրւիլը խնդրենք հաշիւները եւս ուղարկել Վարազ-Վահանին։ Նրա հասցէն՝

Ervante Sissaguian, 5 Outch, rue Miladinovna, 166.

Ընդունէք մեր բարեւները
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

152

Պատճէններու մատեան No 82, *էջ* 329

22 *Ապր.* 1897 *թ.*

(Կարասու Բազար)
Յարգելի բարեկամ,

Արդէն մի նամակով յայտնել էի ձեզ պարտքս ստանալուս մասին։

Առաջին նամակով, որով ղրկած էիք 63 *ր.* 10 *կպ. դուք մոռցած էիք նամակի եւ ցուցակի մի մասը. մենք չգիտէինք, թէ ով է ուղարկողը։ Դիմեցինք Բոլգարիա եւ այլ տեղեր։ Վերջապէս ձեր երկրորդ նամակը ստանալով հասկացանք իրողութիւնը։ Հասցէս արդէն գրած էի, կրկնում եմ.*

M. Gaspar, Chemin de la Roseraie, 22

Ձեր Մ. ԳԱՍՊ.

153

Պատճէններու մատեան No 82, *էջ* 329

22 *Ապր*. 1897 *թ*., *Ժընեւ*

Աղէքսանդրիայի կոմիտէին
Յարգելի ընկերներ,

Երէկ այստեղից ճանապարհ ընկաւ մի երիտասարդ, որ կը դիմի ձեզ Paul Serge *հասցէով։ Նա կ'իջնի այն հիւրանոցում, ուր սովորաբար հայերն են իջնում. անունը չենք յիշում։ Յուսով ենք, կը գտնէք։*
Յունական կոմիտէին ուղղած նամակը ստացած կը լինէք։
Զմիւռնիայի համար ուրիշ ճամբով ենք ուղարկում։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

154

Փաստ. 36*բ*-30

23 *ապր*. 1897 *թ*., *Ժընեւ*

Աղէքսանդրիայի կոմիտէին,
Յարգելի ընկերներ

Ձեր նամակն ստացանք, որով հասցէն փոխում էք։ Երէկ ճանապարհ ընկաւ այստեղից մի երիտասարդ, որը կը դիմի ձեզ նախկին Paul Serge *հասցէով։ Նա կ'իջնի այն հիւրանոցում, ուր սովորաբար հայերն են իջնում։*
Յունական կոմիտէին ուղղած նամակը ստացած կը լինէք։
Զմիւռնա այժմ ուրիշ ճամբով ենք ուղարկում։

Ընդունէք մեր բարեւները։
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

155

Պատճէններու մատեան No 82, *էջ* 337

23 *Ապր*. 1897 *թ*., *Ժընեւ*

Մարսէյլի Եփրատ խմբին,
Յարգելի ընկերներ,

Խնդրենք յայտնել շաբաթը քանի անգամ եւ որ օրերը (ժամերը չմոռանաք) փոստային շոգենաւերը ճանապարհ են ընկնում Մարսէյլից դէպի Աղէքսանդրիա (Եգիպ[տոս]) եւ Պոլիս-Տրապիզոն։
Սպասելով ձեր պատասխանին, մնամք յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

156

Փաստ. 37-9

23 *ապր.* 97 *թ.*

Տրապիզոն

Ներողութիւն պատասխանը ուշացնելու համար։

Քայր-Ժայռի(1) *մասին ձեր եւ սեպուհցոց*(2) *արած նկատողութիւնները շատ ճիշտ են։ Բայց մի մոռացէք, որ այսպէս խառնաշփոթ ժամանակ, որը յուսով ենք աւելի է խառնուելու , շատ քիչ կը պատահի. պէտք է օգտուել այս հանգամանքից։ Խորհուրդ էք տալիս Մեծ-քաղաք*(3) *գրել. անշուշտ ձեզ յայտնի պէտք է լինի այնտեղ տեղի ունեցած ձերբակալութիւնների եւ աքսորուածների մասին։ Մենք այժմ չգիտենք, թէ ով է մնացել այնտեղ. ո՞ւմ դիմել։ Բացի այդ զարմանում ենք, որ ժողովի վճիռների գործադրութիւնը միայն Մեծ-քաղ[աքից] էք սպասում, քանի որ ժողովում մասնակցել են եւ միւսները...*

Բարոզ-Ցոլակին չենք ճանաչում։ Դիմեցէք, եթէ յոյս ունէք դրամական միջոց ստանալու։ Տեսնենք, թէ դոքա որքան անկեղծ են համերաշխ գործունէութիւն քարոզելով։

Ի՞նչ նոր լուր ունէք Կարինից. խնդրենք շուտով հաղորդել. խեղճ Թաթուլի(4) *տանջանքներին վերջ չի լինելու։ Ո՞վ է նոր բանտարկուող ընկերը։*

Այս դրամական տագնապին դուք էլ ժամանակ էք գտել ժամացոյցներ պահանջելու։ Առհասարակ սխալ կարծիք է տիրում այստեղի ժամացոյցների մասին։ Սովորական ժամացոյցները այդտեղ անհամեմատ արժան կարելի է գնել, քան այստեղ. իսկ բուն Ժընեւի ժամացոյցները որոնք իսկապէս լաւ են արժեն 200-300 *եւ աւել։ Արժէ՞ այդքան դրամ վճարել։*

Մի նոր ձեւի ատրճանակ է դուրս եկել, որից հիացած ենք մենք, ափսոս, որ շատ սուղ է։ Բայց եւ այնպէս կ՚ուզենայինք 1 *հատ ձեզ ուղարկել. ինչպէ՞ս անենք։*

Ձեզ ուղարկւած են Կիլիկ[իայի] հնչակեանների նամակի եւ մեր պատասխանի պատճէնները։ Ուղարկէք բովանդակութիւնը միւսներին։

Վազգէնին յայտնէք, որ չարունակի իր տեղեկանքները. թանաքը լաւ է բացւում(5), *թող միամիտ մնայ։*

1.- Քար-Ժայռը կուս. ծածկանունն է Տերսիմի:

2.- Սեպուհցիք՝ երզնկացիներն են, այսինքն տեղւոյն կոմիտէն:

3.- Մեծ Քաղաքը՝ Թիֆլիսն է, Բիւրոյի կեդրոնատեղին:

4.- Արամ Արամեանն է, որ 1896-էն ի վեր կը գտնուէր Կարնոյ բանտը եւ կ՚ենթարկուէր անասելի չարչարանքներու. ի վերջոյ 1899 թ. Օգոստոս 9-ին կախաղան պիտի բարձրանար «Կեցցէ յեղափոխութիւնը» գոչելով:

5.- Իմա՝ գաղտնի թանաքով գրուած նամակը լաւ կը բացուի:

157

Պատճէններու մատեան No 82, *էջ* 338-339

24 *Ապր*. 97 *թ*.

[*Բոլգարիա*]

Սիրելիք,

Արվախի նամակները եւ ձեր հեռագիրն ստացած են։

Թերթը լոյս չի տեսել դեռ։ Նիւթ չկար։ Սպասում էին Պոլսոյ թղթակցութեան. եթէ դա լինէր, կարելի կը լինէր այստեղից այնտեղից հաւաքելով համարը դրստել։ Իսկ պոլսեցիք ծուլացել էին։ Միայն այսօր ստացանք, այսօր էլ սկսում ենք համարը։

Աթաբ[*էգեանի*] *հրատարակութիւններն ուղարկւած են. ի՞նչ եղաւ մեր հեռագրի պատասխանը։ Մարդ գալիս է այստեղ, թէ ոչ։ Աստուած վկայ, բոլորովին թուլացել եմ, հիւանդ եմ, զօրով եմ գրում նամակները։*

Աթէնք գնացող եղա՞ւ։ Յունական նաւերը պարապ են մնացել։ Տաճկականները մէյտան չեն դուրս [*գալիս*], *որ բանեն։ Կարծում եմ, յոյները ուրախութեամբ կը համաձայնեն յարձակւել ծովեզրեայ քաղաքների վրայ (բացի Զմիւռնայից, ուր շատ յոյներ կան). թող մեր մասնակցութեամբ յարձակում գործեն Աղէքսանդրէտտի, Մերսինայի վրայ։ Այդ տեղերն եթէ գրաւեն, շատ* [*հեշտ*] *կը լինի ամէն տեսակ պաշար անցկացնել եւ Զէյթունը ոտի կայնեցնել։ Աթէնք գնացողի համար Լոնդոնից կարող ենք յանձնարարական ուղարկել, Եգիպտոսից եւս։*

Սպասում ենք մէկին։ Յոնանը դեռ Պոլիս է։ Ինչպէս երեւում է վերջին դէպքերի պատճառաւ չի ցանկանում դեռ եւս դուրս գալ Պոլսից։ Դժբաղդութիւնը նրանումն է, որ մենք ոչինչ չենք կարող նրան գրել, նոր հասցէներ չունինք, իսկ հինեբով արգելել են։

Առաջարկում եմ թողնել առայժմ կազմակերպութեան ընտրութեան խնդիրը։ Առայժմ մի կերպ եօլա կ՝երթանք մինչեւ աւելի խաղաղ ժամանակները։

Ձեր Ռ.

Յ. *Գ*.— *Աթէնք գնացողը թող բացի նամակի հասցէն, ուղարկի մեզ հեռագրի հասցէն եւս։*

ՆՈՅՆ

Ներփակեալ ուղարկում ենք [անընթեռնելի տեղանուն] *եկած մի բողոք. ի՞նչ պատասխանենք։ Խնդրենք ներկայացնել գրութիւնը։*

ՆՈՅՆ

Դրամի կատարեալ պակասութիւն է։ Մի ամիս առաջ հեռագրել ենք Թիֆլիզ, որ 600 *ր*[*ուբլի*] *ուղարկեն. ոչ մի պատասխան։ Աշխատէք մեզ մի քիչ դրամ հասցնել։*

ՆՈՅՆ

158

Պատճէններու մատեան No 82, *էջ* 340

26 *Ապր*. 97 *թ*., *Ժընեւ*

Սիրելիք,

Ինչո՞ւ էք լռել։

Երէկւայ նամակս ստացած կը լինէք։ Զմիւռնիայից փող են պահանջում դարձեալ կ՚ուղարկենք 200-300 fr.։ *Քիչ փող ստացանք։ Յոնանից էլ նամակ կար, որ չեմ կարող ներկայ լինել։*

Neuvième Croisade-*ը յետաձգւեց։ Բէլգիական կառավարութիւնը կարծենք գրաւել է նրանց զէնքերը։ Ինքը* Antoine-*ը աքսորւած է Բէլգիայից։ Մի քիչ կասկածելի է ինձ թւում։ Ապագան ցոյց կը տայ։ Զարիֆեանը արդէն Բէլգիա անցած կը լինի։ Տղայքը մաս մաս ճանապարհ են ընկնելու մասամբ* Armée de salut-*ի, մասամբ միւս անգլիացիների հաշւով։ Տղերանց էլ քիչ փող է բաժանւած։ Ամերիկայում սաստկանալու են դալմաղալները։ Հէնց որ այս իմանան։ Զարմանալի մարդիկ են։*

Արվախի յիշած «յանդիմանական թուղթը» չի ստացւած։ Այդքան որ Գէորգին հաւանել էին. ինչո՞ւ իրենց մօտ չեն պահում։

Անցեալ անգամ մոռացել էի ուղարկել [անընթեռնելի երկու բառ] *էի նամակը։*

Ռ.

Յ. *Գ*. — *Վահագնի ձեռքից առած նւիրատոմսերը ի՞նչ համարներ են կրում։*

159

Պատճէններու մատեան No 82, *էջ* 341

26 *Ապր*. 1897 *թ*., *Ժընեւ*

Յարգելի ընկեր Զարիֆեան,
Ի Անվերս,

Լոնդոնից գրած վերջին նամակն ստացանք։ Antoine-*ը մի քանի հակասութիւններ է թոյլ տուել իրեն. այդ ի նկատի պէտք է առնել եւ շատ հաւատ չընծայել իր ասածներին։*

Ձեր ձեռքում եղած դրամից չտապէք ուղարկել Զմիւռնա միեւնոյն ձեւով դարձեալ 300 fr.

Սպասում ենք Ձեր նամակին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. *Գ*.— *Ղազարոս Կռնիքեանը Կալացից ընկալագրեր է ուզում. վստահելի է։*

Սարգիս Բալեանի (Սուլինայից) մասին գրւած է ձեզ։ Դա մեզ երկար ժամանակ փոքրիկ գումարներ է ուղարկել։ Գործում է մշակների մէջ։ Փորացաւն է մի վկայագիր ունենալ ձեռքին, բայց ամէն անգամ մերժում ենք։ Վերջերումս գրում է, որ 30 *մարդ պատրաստ ունի։ Նրա նոր հասցէն*

Mme Niko Tchavouch, Cafenia Armenian, 205
Sulina (Roumanie)

160

Պատճէններու մատեան No 82, *էջ* 345-347

Աստղանիշ կրող առաջին պարբերութիւնը միայն տպուած է Տասնապետեանի կազմած հատորին մէջ, էջ 124-125:

4 *Մայիսի* 1897 *թ.*, *Ժընեւ*

(*Մէլիքին*)(1)
Ընկեր,

Թիւ 69 *նամակն ստացած է։*

Քո Կիլիկիա գնալը շատ լաւ կը լինի։ Իսկապէս մենք այնտեղ փորձառու ընկեր չունինք։ Խաժակը(2), *ինչպէս իր նամակներից երեւում է, շատ տաք է կպել, շատ է աշխատում, բայց եւ այնպէս մի փորձառու մարդու կարիք է զգացւում։ Քո առաջարկութեան մասին կը գրենք Վարնա, ուր այժմ հաւաքւած են Վահապը, Յոնանը, Վարդը, Մար-Շիմոնը, Նիկ. Մատինեանը, Տրապիզոնի Ղարագէօզեանը* (?), *գուցէ եւ Բօրիսը*(3)։ *Այնտեղ վճռելու են արտասահմանեան կազմակերպութեան գործը եւ բաժանելու են ուժերը։ Մի շաբաթ է սպասում ենք նամակի, բայց դեռ ոչինչ չկայ. երեւի շատ են վիճաբանում, իսկ մեր կողմից առայժմ կարող ենք նկատել, որ ներկայ պարագաներում, երբ հարց կայ Կիլիկիայի ուժերը խաղաղութեամբ միացնելու կամ մեր մէջ համերաշխութիւն հաստատելու, քո ներկայութիւնը այն կողմերում*(4) *կարող է շատ բարդացնել գործը, որովհետեւ քեզ արդէն նկատում են իբր Արփիարի անձնական թշնամի։ Մեր կարծիքով քո այնտեղ գնալը հարկաւոր կը լինի յետաձգել, մինչեւ որ որոշւեն մեր յարաբերութիւնները Կիլ*[*իկիայի*] *հնչակեան գործիչների հետ, կամ այս կողմը, կամ միւս**։

— *Խաժակի հասցէն* Monsieur George Petroff, poste restante française, *յանձնել Բաբայեանին։ Տուրանին էլ նոյն հասցէով, յանձնել Տուրանեանին*(5)։ *Սկզբներում Տուրանը հեռու է եղել պահելիս, իսկ այժմ աւելի մօտացել է եւ եթէ չեմ սխալւում կոմիտէի քարտուղարն է։*

— *Զէնքի մասին գրածը դատարկ խօսքեր չեն։ Յոյների եւ ֆրանքօ-էչլգիական ընկերութեան միջոցով շատ դիւրին է։*

— *Մեր բռնելիք ընթացքի մասին երեւի կը խօսին Վարնայում։*

— *Բօրիսը Ռուսաստան է եղել. գրել էին, թէ Բօլգարիա է գալու։*

— *Գարօն եւս այստեղ է։ Կ'ասենք, որ ինքը նամակ գրէ եւ քո հարցերին պատասխանէ։*

— *Շահրիկեանը դեռ եւս չի երեւացել այս կողմերը։*

— *Ալֆարականների, Տամատեանի եւ Արփիարի մասին մեզ ուղղակի ոչինչ չի յայտնի։*

— *Հանրագրութիւններին չարժէ պատասխանել սրանից յետոյ։*

— *Այս համարում (այսօր է լոյս տեսնելու) խոստացել ենք մօտիկ ապագայում բացատրութիւն տալ։ Գուցէ բացատրութիւնը շատ երկար լինի։ Հէվրհիլի կոմիտէն արդէն հնչակեան է դառել (եթէ դա է Հայկազեան միութիւնը, որի ազդը կարդացինք «Մարտ»ի մէջ)։ Եթէ այդպէս է, կնիքը առէք։*

— *Պոլսոյ համար այս անգամ հասցէ չենք կարող տալ. հինով արգելել են, բայց*

դեռ նորը չեն տուել։ Մենք էլ ենք սպասում. գրել էինք իրենց, որ քեզ մի հասցէ հաղորդեն։

— Չենք յիշում, թէ դու ինչ ես գրել Իզմիրի մասին. երեւի մի առանձին բան չի եղել։ Գրում ես, որ չգիտես, թէ մենք մոռացմամբ, թէ դիտմամբ չենք պատասխանել։ Չենք հասկանում, թէ ինչ ես ուզում ասել դիտմամբ խօսքով։ Ի միջի այլոց այսպիսի դարձուածքներ դու մի քանի անգամ քեզ թոյլ ես տուել։ կարելի է ենթադրել, որ դու մեր մէջ յետին մտքեր ես փնտրում։ Եթէ ճիշդ է այս, պարզ պէտք է լինի, որ յարաբերութիւնը պէտք է ընդհատել, մինչեւ խմբագրութեան վերակազմուիլը։

ԽՄԲԱԳՐ[ՈՒԹԻՒՆ] «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Մելիք – ծածկանուն Յովհ. Իւսուֆեանի, որ կը գտնուէր Ամերիկա, տեղւոյն Դաշնակցութեան կազմակերպման գործով:
2.- Գարեգին Խաժակ (Չագալեան):
3.- Յիշուած անունները յաջորդաբար՝ Արշակ Վռամեան (Վահապ), Յոնան Դաւթեան, Վարդ-Պատրիկեան Յակոբ, Տէր Մարտիրոսեան Միքայէլ (Մար-Շիմոն), Սմբատ Խաչատրեան (Բօրիս):
4.- Իմա՝ Կիլիկիա, ուր անցնիլ կը փափաքէր Իւսուֆեանը:
5.- Տուրան կամ Տուրանեան – ծածկանուն Կիպրոսի գործիչներէն Յակոբ Պէքէրեանի:

161

Պատճէններու մատեան No 82, *էջ* 348

4 *Մայ[իս]* 1897 *թ.*, *Ժընեւ*

Յարգելի ընկերներ,
(Նանսի)

Այսուհետեւ տաճկական թերթերը կը ստանաք ձեր տուած հասցէով։ Խնդրենք առանձին ուշադրութիւն դարձնել ուղարկելու ժամանակ(1) իւրաքանչիւր համարի բովանդակութեան վրայ։ Դա կարեւոր է մանաւանդ այժմ. թերթերը փոխել են իրենց տոնը։

Սուրէնի(2) նամակները ձեզ ենք ուղարկում. աւելորդ է Հրաչին ուղարկել, որովհետեւ գուցէ չուտով իրարու [հետ] տեսնուեն։ Չենք հասկանում ինչ հարկ կար հարց տինել դրանից այսպիսի ժամանակ եւ ի զուր տեղը Սուրէնի խանգարուած նեարդներն աւելի եւս խանգարել։ Չէ՞ր կարելի սպասել։

Դրօշակը այսօր է միայն լոյս տեսնելու։

Տան համարը 26 *է։*

Ներփակ ուղարկում ենք այն հասցէների ցուցակը, որոնցով Դրօշակ ստացուել է։

ԽՄԲԱԳՐ[ՈՒԹԻՒՆ] ԴՐՕՇԱԿԻ

Յ. Գ.— Ո՞վ է այդ Արմէնը. եւ ի՞նչ ձեւով կարելի է նրան ընկալագիր ուղարկել. փոստայով անյարմար է շատ։

ՆՈՅՆ

1.- Յայտնենք որ Ֆրանսայի Նանսի քաղաքի ուսանողներուն պարտականութիւնն էր Թուրքիա՝ յատկապէս Տրապիզոնի շրջան առաքելի նամակները ուղարկել իրենց հասցէատէրերուն:
2.- Սուրէն – ծածկանուն Սիմոն Շիսեանի:

162

Պատճէններու մատեան No 82, *էջ* 349

4 *Մայիսի* 1897 *թ.*, *Ժընեւ*

(*Զարիֆեանին*)
Յարգելի ընկեր,

— Ջհանգուլեանին մի կերպ համոզեցէք այստեղ գայ։

— Նազարբէկը երեւի դրամ ժողովելու է եկել. Զէյթունի՞ համար։ Հին վարչութեան հետ միութեան հարց չէ կարող լինել, որովհետեւ ոչ մի հաւատ չի ներշնչում։ Եթէ վարչութիւնը փոխւել է եւ եթէ նա զգում է նախկին վարչութեան կեղտոտութիւնները, թող հրապարակօրէն խոստովանի, իսկ գլխաւորն է՝ թող ոյժ ցոյց տան. չենք հաւատում, որ դոքա այժմ որեւէ ոյժ ունեն։

Անվերսի վարդապետի տեղը չգիտենք. ինքներդ գրէք Անվերս, որ դրան ոչ մի կարեւորութիւն չտան։

— Դրօշակը միայն այսօր է լոյս տեսնելու։

— Ալէքսանդրէտտից եկած բանկի տղայի մասին մենք ոչ մի տեղեկութիւն չունենք։ Զգոյշ եղէք, որ խաբեբայ չլինի։ Թող մանրամասը տեղեկութիւն տայ իր մասին եւ յայտնի, թէ ով ուղարկեց իրեն Պարիզ։

Պարիզից ստացանք մի նամակ Գէորգ Թապաքեան ստորագրած։ Իր գրելով նա ծանօթ պէտք է լինի մեզ Աղեքսանդրիայից. գուցէ այդ պարոնն է, բայց նա բարեւ է ուղարկում մեր մէկ ընկերոջ, որը Պարսկաստան է լինում եւ որի անունը Կարօ է։ Այդ պարոնի հասցէն՝ Boulevard Bachechouart, 112։ *Եթէ սա է իրեն բանկի հերոս ներկայացնում, կեղծ է, իսկ եթէ ոչ, յամենայն դէպս, գրեցէք, թէ ով է այդ Գէորգը եւ որտեղից է նա ճանաչում Կարօին։*

ԽՄԲԱԳՐ[*ՈՒԹԻՒՆ*]

163

Պատճէններու մատեան No 82, *էջ* 350

4 *Մայիս* 97 *թ.*, *Ժընեւ*

Սիրելիք, (*Վարնա*)

Լռել էք. երեւի շատ լուրջ էք զբաղուած։

Ներփակեալ ուղարկում ենք Պոլսից եկած մի գանգատ։ Ի միջի այլոց նամակների համար հասցէ տուէք. կտրւել ենք այնտեղից։ Յոնանը պահանջել էր 150 *օր*[*ինակ*] *Պոլսոյ համար. այդ բոլորը Մարտիրոսեանի հասցէո՞վ պէտք է ուղարկել։*

Թերթը այսօր է լոյս տեսել։ Միւս անգամ աւելի լաւ է վերջնական պատասխան տալ։ Դրա մասին հարկաւ կը խօսէք։

Իւսուֆեանը ուզում է թողնել Ամերիկան, որից յոյսը բոլորովին կտրել է եւ գնալ Կիլիկիայի կողմերը։

Ի՞նչ է ձեր կարծիքը։ Մեր կարծիքով նա լաւ կը լինի իբրեւ փորձառու յեղափոխական. միայն ներկայ պարագաներում նրա ներկայութիւնը այդ կողմերում կարող է շատ գրգռել Արփիարաններին, որոնք դրան նկատում են իբր Արփիարի անձնական թշնամի։ Աւելի լաւ կը լինի յետաձգել նրա գնալը մինչեւ մեր յարաբերութեանց որոշւելը։

Տուրանեանը այժմ աւելի մօտ է գործին. կարծեմ կոմիտէի քարտուղարն է։

ԽՄԲԱԳՐ[*ՈՒԹԻՒՆ*] «*ԴՐՕՇԱԿԻ*»

164

Պատճէններու մատեան No 82, *էջ* 354-355

6 *Մայ*[*իս*] 1897 *թ.*, *Ժընեւ*

Ատրպատականի Կենդրոնակ. կոմիտէին,

Սիրելիք,

Նախ գրենք ձեր հեռագրի մասին։ Երեւի Նիկոլը շատ է հարկաւոր այդտեղ(1)։ *Որովհետեւ մեզ յայտնի չէ այդտեղի պատրաստութիւնների աստիճանը, ծրագիրը եւ այլն, մենք անկարող էինք համեմատել եւ վերջնական բան ասել։ Այս պատճառով գրեցինք Վարնա, ուր այժմ հաւաքւած են շատերը, Ռուսաստանից նոր եկածները՝ Նիկոլը, Վարդը, Մար-Շիմոնը, Սմբատը*(2), *որոնք անշուշտ գաղափար ունեն ձեր ծրագրի մասին եւ թողինք, որ նոքա վերջնական պատասխանը ձեզ հեռագրին՝ Նիկոլի գալու կամ մնալու մասին։ Անշուշտ հեռագիրն արդէն ստացած կը լինէք։ Մեզ դեռ յայտնի չէ պատասխանը։*

Անհամբեր սպասում էինք, որ մեր հեռագրի պատասխան նամակը մինչեւ համարի լոյս տեսնելը գայ, բայց դժբաղդաբար ուշացաւ։ Եթէ իմանայինք հաստատ, թէ դատ էք բանալու, կը յայտարարէինք դրա մասին. հասարակութիւնը ուզում է դատավարութեան ժամանակ մանրամասը գրեցէք սպանութեան մոտիւները, Շէկօի(3) *բոլոր պակասութիւնները, որոնք անտանելի էին դարձնում ընկերներին։*

Ձեր պաշտօնական յայտարարութեան մէջ վերջին տողերը բաց թողինք, որովհետեւ դրանով դուք աւելի կասկած էք հրաւիրում կոմիտէի վրայ։

Մենք ինչպէս իմանանք, թէ Մարսէյլի Միրզոյեանին գրւած է անցագրերի մասին, եւ նա ի՞նչ նշանով իմանայ, որ անցագիր ներկայացնողը մերոնցից է։ Անցագիր ուղարկելիս, դուք հոգ չէիք տարել նշանները, անունը հայերէն գրել, իսկ այստեղ պարսկերէն կարդացող չկայ։ Միրզոյեանին կարելի է փոստով ուղարկել։

Վահապին (Վարնայից) կարելի է հաւատալ, մենք էինք ձեր հասցէն տուել, թէեւ այժմ աւելորդ է, որովհետեւ հեռանում է այնտեղից։ Այնտեղ կը մնայ Վարդը։

Ձեր պատուիրած պաշտօնական թղթերը շատ տգեղ են. ազատ ժամանակ մենք կը պատրաստենք եւ կ՚ուղարկենք ձեզ համար։

Յուսով ենք, ձեր խորհրդածութեան արդիւնքը մեզ կը հաղորդէք։

Neuvième Croisade-*ը, որի մասին գրել էինք անցեալ անգամ, իր արշաւանքը ուղղում է դէպի Մակեդոնիա։* Antoine-*ը, արշաւանքի կազմողը խոստացել է մշտական յարաբերութիւն պահպանել մեզ հետ եւ հարկաւոր դէպքում դէպի Հայաստան մեկնել։*

Ընդունէք մեր համբոյրները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Նիկոլը՝ Դումանն է, որ կը նախատեսուէր ուղարկել Զէյթուն, բայց ան կլանուած ըլլալով Խանասորի արշաւանքի պատրաստութիւններով՝ պիտի չկարենար հեռանալ Ատրպատականէն։

2.- Յիշուած անունները յաջորդաբար՝ Նիկոլ Մատինեան, Յակոբ Վարդ-Պատրիկեան, Միք. Տէր Մարտիրոսեան (Մար-Շիմոն) եւ Սմբատ Խաչատրեան (նաեւ Բորիս)։

3.- Շէկօ – ծածկանուն Արշակ Պարսամեանի։

165

Պատճէններու մատեան No 82, *էջ* 356-357

8 *Մայ*[*իս*] 1897 *թ.*
Ժընեւ

Թուրանի(1) *ներկայացուցչին*,

Ընկեր,

Ձեր Մարտ 28 *նամակն ստացանք եւ դառը ցաւ զգացինք։ Մեզ համար անսպասելի եւ միեւնոյն ժամանակ ծանր էր լսել ակնարկներ, մեղադրանքներ հանգուցեալ Մ*[*արօ*]-*ի*(2) *վերաբերմամբ։*

Դուք մեզանից բացատրութիւն էք պահանջում մեր խաբեւելու եւ «անպատւաբեր» յօդուածը տպագրելու համար։ Առաջին կէտին պէտք է յայտնենք, որ բացատրութեան համար ոչ թէ մեզ, այլ յօդուածագրին պէտք է դիմել. մենք ի՞նչ բացատրութիւն կարող ենք տալ. իսկ ինչ վերաբերում է յօդուածի անպատւաբեր լինելուն, դա մեզ միանգամայն զարմացնում է, չենք հասկանում թէ ինչ անպատւաբեր ոգի կայ այդտեղ. ճիշդ է յօդուածի մէջ պարզ չեն ինքնասպանութեան մօտիւները. մենք ենթադրում էինք, որ Խեչօն է պատճառը եւ գտնում էինք, որ թողած նամակը բոլորովին չի համապատասխանում իրողութեան։ Ուրիշ շատ տեղերից էլ զանազան տեսակ դիմումներ են եղել, բայց ոչ ոքի գլխում մի այդպիսի հրէշաւոր միտք չի ծագել։Իսկ եթէ Թեհրանի ընթերցողի վրայ յօդուածն այն տպաւորութիւնն է թողում, որ Մ-ն ինքնասպանութեան է դիմել իր խայտառակութիւնը ծածկելու համար, դա միայն պէտք է վերագրել Պարսկաստանի հուչակաւոր մթնոլորտին։

Ձեզ թւում է, որ խմբագրութիւնը անգիտակցաբար սխալւել է, «ծանօթ չլինելով մանրամասնութիւնների հետ»։ Ձեր այս խօսքերից պարզ է, որ դուք հաստատ գիտէք մի քանի մանրամասնութիւններ, որոնք ապացուցանում են Մ-ի խայտառակութիւնը։ Սպասում ենք անհամբեր այդ ապացոյցներին. յօդուածագրին մենք կատարելապէս հաւատում էինք մինչեւ այժմ։ Տուէք մեզ ձեր փաստերը, որպէսզի մենք թքենք մեզ խաբողի երեսին եւ հրապարակօրէն խոստովանինք ճշմարտութիւնը։

Յուսով ենք, որ շատ շուտով կը գրէք ձեր առաջարկները[?] *եւ միեւնոյն ժամանակ զգուշութեամբ կը վերաբերուէք այս փափուկ խնդրին։ Մի գուցէ ձեր ապացոյցները հաստատ չլինեն, իսկ ձեզ լաւ յայտնի պէտք է լինի, որ այդպիսի դէպքերում բաւական է մի փոքրիկ ակնարկ, որպէս զի ամէն կողմ տարածւի եւ կասկածը իբրեւ հաստատ իրողութիւն ընդունւի։ Մանաւանդ որ այս բոլորը վերաբերում է մի անձի յիշատակին, որը հնարաւորութիւն չունի ինքն իրեն արդարացնելու եւ որի հետ դուք կապւած էք ազգակցական կապերով։*

Ընդունէք մեր բարեւները՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Թուրան – ծածկանուն, որ ատեն մը կը գործածուէր բացի Ատրպատականէն՝ Պարսկաստանի մնացեալ շրջաններուն (Թեհրան կեդրոնով) համար:

2.- Մակարեան Մարիամ, որ ինքնասպանութիւն գործած էր իր սիրած երիտասարդին (այս պարագային՝ Ռոստոմի եղբօր Արիստակէս Զօրեանի) յեղափոխական գործունէութեան արգելք չհանդիսանալու համար:

166

Պատճէններու մատեան No 82, *էջ* 359

8 *Մայիսի* 97 *թ.*
Ժընեւ

Զարիֆեանին

Յարգելի ընկեր,

Նատիրեանի մասին կը գրենք քիչ յետոյ։ Սպասում ենք մեր մի քանի ընկերներին։
Հրաչը դեռ եւս Աթէնք է գտնւում։
Նրա հասցէն՝ Vahan Mardirossian
Poste restante Athènes.
Գրէք ձեր ծանօթ բժշկին կամ Antoine-*ին, որ տեսնւեն։*
Կիլիկիայում մեր ընկերներից մէկը ձերբակալւել է, ճիշդ է, բայց դա Հրաչը չէ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

167

Պատճէններու մատեան No 82, *էջ* 360

8 *Մայ[իսի]* 97 *թ.*

Monsieur Missag Bagdassarian
Ecole Normale
Nanacy, France

Ուղարկում ենք ընկալագրեր Տրապիզոնի համար, դրա մի մասը կարող էք Արմէնին եւս ուղարկել, միայն չմոռանաք նշանակել եւ մեզ ուղարկել, թէ որտեղ ինչ համար են ուղարկւած։
Ուղարկւած թերթերը պահեցէք, յետոյ կ'ուղարկէք Տրապիզոն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

168

Պատճէններու մատեան No 82, *էջ* 360

Յարգելի ընկեր, (*Լոնդոն*)

Խնդրենք ձեր ստացած պաշտօնական թղթերը Իզմիր ուղարկէք։

Ընդունէք մեր բարեւները
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

8-*ին Մայիսի* 1897 *թ.*

169

Պատճէններու մատեան No 82, *էջ* 361

8 *Մայ*[*իսի*] 1897 *թ.*
Ժընեւ

Յարգելի ընկեր

Գարեգին Բաֆֆի,

Ստացանք ձեր Ապր. 22 նամակը. պ. Գրիգոր Խաչնեւտարեանի մասին ոչինչ չենք կարող ասել, մինչեւ չգրենք Երիզա եւ Շապին-Գարահիսար, ուր նա իր խմբով մտադիր է անցնել։

Ձեր նամակից երեւում է, որ պ. Գրիգորը, ինչպէս եւ իր ընկերները փախստականներ են Տաճկաստանից եւ ազատ կերպով օգնել չեն կարող։

Հարկաւոր են ծանօթութիւններ խմբի միւս անդամների վերաբերմամբ եւս։ Խնդրենք հաղորդել, թէ որտեղացիք են միւսները եւ որտեղից մենք կարող ենք տեղեկութիւններ հաւաքել դրանց մասին։

Հակառակ ոչինչ չունենք, եթէ դուք ուզում էք մեզ հետ շարունակել յարաբերութիւնները, բայց ձեր կողմերում կենդրոնական կոմիտէ ընտրելուց յետոյ, բնական է, դուք նրա միջոցով կը պահպանէք ձեր կապը մեզ հետ. մեզ ուղղակի կը դիմէք անհրաժեշտ, ստիպողական դէպքերում։

Խնդրենք հաղորդել օրիորդին մեր բարեւները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Թերթը շատ ուշ լոյս տեսաւ։ Անշուշտ ստացած կը լինէք։

170

Պատճէններու մատեան No 82, *էջ* 363

12 *Մայիսի* 1897 *թ.*

Davit Markarian
Coventry (Angleterre)

Յարգելի ընկեր,

Ուղարկում ենք «Կուկունեան արշաւանքը». միայն խնդրում ենք կարդալուց յետոյ վերադարձնէք մեզ, որովհետեւ գրքոյկները բոլորովին սպառուած են. պատկերը կարող էք պահել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

171

Պատճէններու մատեան No 82, *էջ* 363, *բնագիրը ռուսերէն*

12 *Մայիսի* 1897 *թ.*

*Թանկագին Վոյնիչ**,

Սամսոնն ուղարկել է մեզ Ձեր վերջին նամակը։ Ինքը ներողութիւն է խնդրում, որ չի կարող առայժմ պատասխանել Ձեզ։ Պառկած է Neuchâtel-*ում։*

Ինչ վերաբերում է նամակներին, պէտք է ասել, որ մեր լոնդոնեան ընկերները պիտի ցրւեն բոլորը տարբեր երկրներ։ Շատերն արդէն Լոնդոնում չեն։ Գրէք ում են հասցէագրւած նամակները։ Եթէ հնարաւոր լինի, կը տանք Ձեզ նրանց հասցէները։ Հակառակ դէպքում դուք չէք կարողանայ դրանք ժամանակ ուղարկել։ Դուք ստիպւած կը լինէք դրանք յետ ուղարկել նամակների հեղինակին՝ անհրաժեշտ բացատրութիւններով։

Ձեր՝
[*Անընթեռնելի ստորագրութիւն*]

*) *Ծանօթագրութիւն ռուսերէն նամակը թարգմանող՝ ընկ. Գէորգ Խուդինեանի.*– Ethel Lilian Voynich (աղջկական անուն ազգանունը՝ Էտել Լիլիան Բուլ) անգլիացի կին գրող, որն իր ազգանունը ստացել էլ ամուսնուց՝ լեհ-լիտվական յեղափոխական սոցիալ դեմոկրատ Մ-Վ Վոյնիչից։ Չի բացառւում որ այս կեղծանունի տակ թաքնուածը Ռոստոմի ապագայ կինն է, որը մէկ տարի յետոյ պատրաստւում էր ամուսնանալու իր՝ Վոյնիչի նման յեղափոխականի՝ Ռոստոմի հետ։

172

Պատճէններու մատեան No 82, *էջ* 363

12 *Մայ.* 97 *թ.*

Missak Bagdassarian
Ecole Normale
Nancy, France

Միթէ՞ Սամսոն թերթ չէք ուղարկում։ Չէ որ հասցէ էինք ուղարկել։ Եթէ չէք ուղարկել, չտապեցէք ուղարկել։ Կրկնում ենք հասցէն Mekerditch Saghrian, poste rest[ante] française, Samsoun, 9։ *Եթէ համարները պակաս են, գրէք։*

Տրապիզոն ուղարկելու համար (նուիրատոմսեր եւ պաշտօնական թղթեր) հասցէն Տրապիզոնից սպասէք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

173

Պատճէններու մատեան No 82, *էջ* 364

Սիրելիք, (*Պոլիս*)

Թերթերն ուղարկւած են. միւս մասը վաղը կ'ուղարկւեն։

Journal de Genève-*ը շարունակւում է գնալ նախկին հասցէով։ Տուէք նոր հասցէ։*

Վահապին այսօր էգուց սպասում ենք։ Նա կ'ուղարկի լուսանկարները, մեզ այլ եւս հարկաւոր չեն. կլիշէները պատրաստ են։

17.13.23.2.17.5.2.6 [*Թոգաթեան*]-*եանը մերժում է, պատճառ բերելով իր համոզմունքի տարբերութիւնը։ Ինքը* positivist(1) *է, Օգիւստ Կոնդին*(2) *հետեւող, էվոլիւսիոնիստ*(3) *եւ այլն... մի շարք յիմարութիւններ. սա էլ մի նոր ձեւ է խոյս տալու եւ բաւական սրամիտ։*

Եթէ կարելի է թերթերը Գերմանիայից, Ֆրանսիայից եւս ուղարկել, տուէք համապատասխան հասցէներ։

Ձեզ ուղարկւում են թռուցիկ թերթեր հնչակեան երկու խմբերի դէմ։ Վերջինով առաջարկում են բոլոր հնչակեաններին միանալ Դաշնակցութեան հետ, պարզապէս ձուլւելով նրա մէջ։ Գուցէ այս վերջիններից օգտւենք թերթի համար։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

12 *Մ*[*այիսի*] 1897 *թ.*

1.- Փորձնական ճանաչողութեան հետեւող։
2.- Օգիւստ Կոնդ (1798-1857), ֆրանսացի իմաստասէր։
3.- Բարեշրջական։

174

Պատճէններու մատեան No 82, *էջ* 365

12 *Մայիսի* 1897 *թ.*, *Ժընեւ*

Ռուսչուկի կոմիտէին
Յարգելի ընկերներ,

Բանկի տղաներից երեքը՝ Սեդրակ, Յակովբ եւ Մխիթար երեքշաբթի օր պէտք է ճանապարհ ընկած լինին Վիեննայից, այսօր նամակ ունէինք։ Անշուշտ արդէն ձեզ մօտ կը լինին։

Խնդրենք Վարնա գտնուող ընկերների հետ խորհրդակցելով, տեղաւորէք դրանց ինչպէս եւ միւսներին, որոնք նոյնպէս գալու են։ Բայց պէտք է զգոյշ լինել, չլինի թէ երես առնեն եւ աղմուկ հանողների դասը մտնեն։

Ընդունէք մեր բարեւները՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

175

Պատճէններու մատեան No 82, *էջ* 366

18 *Մայ*[*իս*] 1897 *թ.*, *Ժընեւ*

Եփրատ խմբին [*Մարսէյլ*]
Յարգելի ընկերներ,

Խնդրենք յայտնել այն երիտասարդին, որը մտադիր է Յունաստան գնալ, թէ այստեղ կազմուած կամաւորաց խումբը այլ եւս չի մեկնելու, որովհետեւ յունական կառավարութեան կողմից բացասական պատասխան ստացուեց։

Յարգանօք՝ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Խնդրենք նոյնպէս հարցնել տեղւոյդ զինավաճառներից, ունեն արդեօք Bergman*-ի վերջին ձեւի ատրճանակներ, առանց գլանակի, տափակ, շատ յարմար գրպանում պահելու, անծուխ վառօդով, նիկելապատ գնդակով. մի անգամից կարելի է* 6 *փամփուշտ դնել մէջը։ Նայեցէք նոյնպէս արժէքը։*

ՆՈՅՆ

176

Պատճէններու մատեան No 82, *էջ* 367

18 *Մայ*[*իս*] 1897 *թ.*, *Ժընեւ*

Ամերիկական Կեդր. կոմիտէին
Յարգելի ընկերներ,

Ներփակեալ ուղարկում ենք ԱՄՆ կեդրոնական կոմիտէի նոր կնիքը։
Պաշտօնական թղթերը պատրաստ կը լինին վաղը կամ միւս օրը։

Յարգանօք՝ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

177

Պատճէններու մատեան No 82, *էջ* 369-370

18 *Մայ*[*իս*] 1897 *թ.*
Ժընեւ

(*Մէլիքին*)

Ընկեր,

Այսօր ուղարկում ենք Կենդր. կոմիտէի կնիքը ապահովագրած։ Ուրիշ հասցէ չունենալով ուղարկեցինք 520 P. O. Box *հասցէով։*
Federational Central Committee of America
Վահապին օրէօր սպասում ենք։
Վերջապէս կարող ես հանգիստ լինել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Երբ որ հնչակեան վարչութեան նամակին պատասխանեցինք, այն ժամանակ այդտեղ կենդրոնական կոմիտէ չէր կազմուած. այդ պատճառով քեզ է ուղարկւած մեր նամակի պատճէնը, որ դու հաղորդես կոմիտէին։ Ուրիշ կերպ վարուել մենք չէինք կարող։

Այդտեղ թռուցիկներ հանելը շատ նպատակայարմար է։

Քրիստափորը չի բանտարկուած. լուրը սխալ էր։ Վարդը Բոլգարիա է։ Տօնապետեանը չգիտենք, ինչու է Հնչակի հետ. մեզ համակրական նամակ էր գրել։ Ջհանգիւլեանը Եգիպտոսում արդէն միացել էր արփիարականների հետ։ Պարիզ էր, այժմ Լոնդոն է։ Ցանկանում էինք հետը տեսնուել, չյաջողուեց։ Մի 10 *օր առաջ հնչակեան կենդրոնական վարչութիւնից նոր նամակ ստացանք, որով յայտնում են, թէ Ջհանգիւլեանը վարչութեան կողմից ցանկանում է գալ եւ մեզ հետ խօսել միութեան հարցի մասին։ Ջուգենալով պատասխանել այն վարչութեան, ուր գտնւում է Արփիարեանը, մենք դիմեցինք մասնաւորապէս Տամատեանի միջնորդութեան, խնդրելով նրանից հաղորդել Ջհանգիւլեանին, թէ ամենայն ուրախութեամբ պատրաստ ենք ընդունել Ջհանգիւլեանին։ Մի շաբաթ է, պատասխան չկայ։ Հետեւանքի մասին մանրամասը կը գրենք կենդրոնական կոմիտէին։*

Ստացանք նոյնպէս Կիլիկիայի գործիչների պատասխանը։ Մենք կը պատասխանենք շուտով եւ երկու պատճէնները (կամ բովանդակութիւնը, որովհետեւ շատ է երկար) կ՚ուղարկենք ձեզ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

178

Պատճէններու մատեան No 82, *էջ* 374

25 *Մայիս* 1897 *թ.*
Ժընեւ

ՎԿԱՅԱԳԻՐ

Սոյն վկայագիրը ներկայացնող մեր ընկերը՝ պ. Արվախի Իսակ(1)*՝ արտօնուած է կուսակցութիւնս ներկայացնելու Պալքանեան երկիրներու մէջ։*
Կը խնդրուի վստահիլ եւ ամէն կերպով աջակցիլ իրեն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Արվախի Իսակը նոյնինքն Վարդ-Պատրիկեան Յակոբն է:

179

Պատճէններու մատեան No 82, *էջ* 380

28 *Մայ*[*իս*] 1897 *թ.*
Ժընեւ

Պ. Զարիֆեանին,
ի Պարիզ

Յարգելի ընկեր,

Ներկայիս խնդրենք յայտնել պ. Նատիրեանին, որ պատրաստ ենք ընդունել նրան եւ խորհրդակցել իր հետ գործունէութեան ասպարէզի ընտրութեան մասին։
Զմոռանաք սակայն յիշեցնելու իրեն, որ նրա այս կամ այն կողմը գնալու վերջնական պատասխանը մեզանից չէ կախուած, այլ այն կոմիտէից, որի անդամն է լինելու։

Ընդունէք մեր բարեւները
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Հաշիւը ստացանք. եթէ դրամի կարիք ունէք, գրեցէք ձեր պարտքն ուղարկենք։ Ինչո՞ւ անդորրագրերի բները չէիք ուղարկել։

ՆՈՅՆ

Ստացանք ձեր Մայիս 24 *նամակն եւս։ Կը պատասխանենք յետոյ։*

180

Պատճէններու մատեան No 82, *էջ* 389-394

Խիստ անորակ պատճէն, յատկապէս առաջին երկու էջերը: Կարելին եւ անկարելին փորձուած է իմանալի դարձնելու համար գրութիւնը: Պատճէնը չելած բառերը նշանակած ենք բազմակէտերով:

30 *Մայ*[*իս*] 1897 *թ.*
Ժընեւ

Զարիֆեանին,
Պարիզ

Յարգելի ընկեր,

Ձեր 19, 24, 27 *Մայ. նամակներն ստացուած են, ինչպէս նաեւ թերթերը ու ընկալագրերի բները: Զմոռանանք այժմեանից յայտնել, որ Մարտ*(1) *այլ եւս չուղարկէք, մենք ուղղակի ստանում ենք:*

Տղաներից մի մասը ապահով տեղ է հասել, յուսով ենք միւսները նոյնպէս:

Զմիւռնիա երկրորդ 300 fr. *ստացել են:*

Մինասեանի վարմունքը շատ անբացատրելի է: Բաւական չէ որ դրամը իր ժամանակին տղաներին չի յանձնել, որով արդար տրտունջ է առաջ եկել, այժմ էլ իր առեւտրական վնասները հասարակական փողերով է ծածկում: Հասարակական դրամի հետ այդպէս վարուել չի կարելի, դա անհատի սեփական ..... չէ, յայտնի պէտք է լինի իրեն մեր ..... եւ գրաւ դնէ ..... ժամացոյցը .....

Խմբագրութիւնն այդ կողմից ուժերի պակասութեան պատճառով գտնուել է աննպաստ պայմաններում. ահա թէ ինչու անկարող է եղել լիովին կատարել իր բոլոր պարտականութիւնները, մինչեւ իսկ թերթը կանոնաւոր հրատարակել:

— Ձենք հասկանում, ինչն է ստիպում ձեզ սուտ խօսել, երբ ձեզ դիմում են զանազան հարցերով. ընդհանուր կարծիքները միշտ .....ցնել եւ դրա համար բաւականաչափ ..... ունէք, իսկ միթէ՞ դուք ձեզ թոյլ էք տալիս մանրամասնութիւնների մէջ մտնել զանազան հարցերի վերաբերմամբ, գոնէ երբ մեզ դիմում են այդ օրինակ հարցերով, մենք «չգիտենք»-ով ենք գոհացնում:

Մարաշցի եւ Ատանացի երիտասարդներին որոշ պատասխան չի կարելի տալ, մինչեւ որ նրանց մասին հաստատ տեղեկութիւն չիմանանք: Մի գուցէ դա մի միջոց է լրտեսելու մեր քայլերը. այժմ մենք շատ պէտք է զգոյշ լինենք, մանաւանդ նոր հնչակեաններից, որոնք ամէն կերպ լրտեսում են մեզ: Թող ուրեմն կարճ ծանօթութիւններ տան իրենց մասին. մենք կարող ենք ստուգել: Մերոնք Կիլիկիա են ցանկանում մտնել, սպասում են պատասխանի, իսկ դուք, ի՛նչ գիտէք, որ ի՛նչ պատասխանէք: Այս տողերը բոլորովին անհասկանալի են, ի նկատի առնելով մեր վերջին գրութիւնները, Կիլիկիոյ գործի վերաբերեալ: Անկարող էինք դրանից աւելին ասել, որովհետեւ դա էր մեր բոլոր գիտեցածը: ..... բացի դրանից, որ Հրաչը .....: Միթէ՞ չգիտէք որ եթէ ցոյց պարտաւորուած լինի, ոչ Պարիզի հասարակութեանը, այլ մեզ համար մինչեւ իսկ անյայտ կը մնայ մինչեւ փաստի կատարուելը: Կամ ենթադրենք,

որ այս կամ այն անհրաժեշտ պատճառով Պոլսոյ կոմիտէն ստիպւած է մեզ հաղորդելու, միթէ՞ մենք իրաւունք պիտի ունենանք հաղորդելու մեր ներկայացուցիչներին մի այդպիսի ծանր ..... դանդատւում էք, որ ընդհանրապէս զրկւած էք տեղեկութիւններից, որ դուք Դաշնակցութեան գործերէն այնքան տեղեկութիւն ունէք, որքան մենք Չինաստանի։ Այս առթիւ պէտք է նկատենք որ անարդար էք կամ շատ մեծ գաղափար ունէք Չինաստանին վերաբերեալ մեր գիտութիւնների մասին։ Ցիշեցէք մեր գրածները։ Հարկաւ դուք չէք պահանջել որ մանրամասը տեղեկութիւն ունենանք Դաշնակցութեան ամբողջ գործունէութեան մասին. մի բան, որից զուրկ են մեր բոլոր կոմիտէները, մինչեւ Բիւրոն եւ Խմբագրութիւնը։ Մի կողմը թողնելով այն, որ գաղտնապահութեան որոշ սահմանից դուրս գալը դատապարտելի[?] *է իւրաքանչիւր մի կոմիտէի համար, որի պատճառաւ ընդունւած է հաղորդել Բիւրոյին կամ միւս կոմիտէիներին միայն այն, ինչ <u>անհրաժեշտ</u> է հաղորդել, կայ մի այլ հանգամանք, դա ժամանակի սղութիւնն է, որը գուցէ նշանակութիւն չունենայ կոմիտէների համար, բայց ահագին դեր է խաղում այնպիսի հաստատութեան համար, ինչպէս օրինակ Բիւրոն կամ Խմբագրութիւնն է, որ պարտաւոր է կապ պահպանել բոլոր երկրների հետ եւ շուտով մեզ հասցնէ։ Խնդրենք, ինչպէս յարմար էք գտնում գրէք իրեն եւ հետեւանքը մեզ հաղորդէք։ Խնդիրը փափուկ է։*

Նւիրատւութեան ցուցակը կը հրատարակենք ներկայ համարով։

Վաղինակ Վարդապետին երեւի Ճանկիւլեանը անկեղծաբար չի խօսել։ Բանը այն է, որ հնչակեան նոր վարչութիւնը մեզ դիմեց մի անգամ եւս, յայտնելով, թէ Ճանկիւլեանը վարչութեան կողմանէ կ'ուզէ գալ եւ անձամբ մեզ հետ խօսել։ Մեզ էլ հէնց այդ էր հարկաւոր։ Իսկոյն գրեցինք (միայն ոչ վարչութեան, ուր Արփիարն է, այլ Տամատեանին), որ ուրախութեամբ պատրաստ ենք նրան ընդունելու։ Այդ նամակին պատասխանեց Ճանկիւլեանը, յայտնելով, որ ֆիզիքական եւ այլ պատճառներով դժւարանում է գալ (պատճառը երեւի վարչութեան չպատասխանելն է[?]*), այլ ցանկանում է գրաւոր կերպով բացատրել։ Երկրորդ նամակով մենք պնդեցինք, որ գայ անպատճառ անձամբ խօսի։*

Նուպարի(2) *վերաբերումը մեզ չզարմացրեց, մեր ընկերներից մի քանիսը շատ էին իրենց յոյսը դրա վրայ դրել։ Իսկ ինչ վերաբերում է Թումայեանի յայտնածներին, Բագւայ մեր կազմակերպութեան մասին, դա սխալ է բոլորովին, երեւի ինքը Թումայեանը ծանօթ չէ, կը գայ, կը բացատրւենք։*

— Ձեր տրտունջները մեզ միանգամայն զարմացրին. դուք դանդատւում էք, որ հասարակութիւնը ամէն տեղ խօսում է Պոլսում կայանելիք ցոյցի մասին, մինչդեռ ինքներդ ոչինչ չգիտէք, Պարիզի հասարակութեան գիտեցածներին [*մէկ տող անընթեռնելի*]

Կիպրոս մեկնելու, անսպասելի կերպով ճանապարհը դէպի ուրիշ կողմն է ծռել։ (Ի միջի այլոց ձեզ գրել էինք, որ յայտնէք Antoine*-ի հետ գնացած հայ բժշկին, թէ որոնի Հրաչին մեր տուած հասցէով, ուրեմն զուր նեղութիւն չքաշեն)։ Այսպէս չգիտէք թէ ուր <u>ուղարկեալ</u>այն* 10-20 *երիտասարդներին, որոնք գործ են պահանջում ձեզանից։ Զարմանում ենք, որ դուք ձեզ վրայ մի այնպիսի դեր էք վերցնում, որից զուրկ են մեր բոլոր կոմիտէները, Բիւրոն, Խմբագրութիւնը... Ինչո՞ւ նախկին ընթացքով չէք ուզում գնալ։*

Ձեր դանդատների մէջ միայն մի արդարացի կէտ կայ, դա հասցէների խնդիրն է, որի վրայ մենք ուշադրութիւն չենք դարձրել եւ մոռացել ենք ձեզ յայտնել. այդ էլ

պէտք է սահմանափակել միայն Աղէքսանդր[իայի] հասցէով, որովհետեւ Կիպրոսին մեզ եւս յայտնի չէ (մարդը գնացել է, չգիտեն, մնալու է այնտեղ, թէ ուրիշ կէտ է տեղափոխելու, ուստի հասցէ չեն հաղորդել)։ Ահա Աղէքսանդր[իայի] հասցէն՝

Georges Petroff, poste restante française.

Յուսով ենք այս հասցէի առթիւ դուք ապակեղրոնացումը այլ եւս խախտուած չէք համարիլ։ Իսկ ինչ վերաբերում է «միւս ներկայացուցիչների» հասցէներին, խնդրենք թուել մի առ մի, թէ ում հետ է ձեզ անհրաժեշտ կապ հաստատել։

Խնդրենք, եթէ հնարաւոր է, հաղորդէք մեզ թէ ինչ խնդիրների մասին էք ցանկանում գրել օր[ինակ] Աղէքսանդրիա, որովհետեւ կոմիտէն նորակազմ է եւ մենք կատարեալ վստահութիւն[?] դեռ չունենք։ Առհասարակ հարկ ենք համարում նկատել, որ աւելի նպատակայարմար է զանազան թիւրիմացութիւններից խոյս տալու համար կարեւոր խնդիրների մասին անմիջապէս յարաբերութեանց մէջ չմտնէք ձեզ անծանօթ կոմիտէների հետ։

Բանկի տղայի մասին մենք հրաժարւում ենք որեւէ բան ասելուց։ Գուցէ ինքնագլուխ է եկել, գուցէ կոմիտէն իր ծախքերը հոգացել է, գուցէ ճանապարհածախս է տուել, մինչեւ Ամերիկա. ով գիտէ. ինչո՞ւ մի յանձնարարական նամակ չի բերել։ Ո՞ւմ որոշմամբ է Ամերիկա գնում, ի՞նչ գործի համար։

«Հնչակի» հասցէով նորից թերթ ենք ուղարկել. գուցէ Տօնապետեանը առանձնապէս իր համար է ցանկանում. իրեն էլ կ'ուղարկենք։

Մշեցու հարցը դժուար հարց է։ Մենք այսքան հեռաւորութեան վրայ, առանց ..... առնելու անկարող ենք մարդ ուղարկել իրենց։ Զմոռանաք, որ երբ յանձնարարում էք, պէտք է երաշխաւոր լինէք։ Արդեօք վստա՞հ էք նրա ուժերի, խոստումների վրայ։ Եթէ պատասխանատուութիւնը վերցնում էք ձեզ վրայ, մենք կը գրենք սահմանագլխի մեր ընկերներին, որ որոշ ճանապարհ ցոյց տան։

Դրամ ուղարկւած է 150 fr.։ *Ներփակեալ ուղարկում ենք Մինասեանի նամակը, տղայոց գրած նամակը եւ անցագիրը*[?]։

Ընդունէք մեր բարեւները։

Բարեւներով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Մարտ – Անջատեալ հնչակեաններու կողմէ Լոնտոն հրատարակուող թերթ։
2.- Նուպար փաշա – Պօղոս Նուպարի հայրը։

181

Պատճէններու մատեան No 82, *էջ* 395-396

Ուղղուած հաւանաբար Տրապիզոն, լեցուն թուանշային ծածկագրով՝ մեր կողմէ վերծանուած եւ անկիւնաւոր [ ] փակագծերու մէջ առնուած:

Սիրելիք,

Մայիս 15 *եւ* 22 *թ. նամակներն ստացուած են։ Օգտուում ենք ձեր տուած դիւրութիւնից եւ շտապում ենք պատասխանել։*

Տարիների փորձը ձեզ ցոյց տուած պէտք է լինի, թէ միջին թւով Մեծ Քաղաքը(1) *ձեզ որքան օգնութիւն կարող է հասցնել։ Դուք տեսնում էք, որ այդ օգնութիւնը մեծ չէ, բայց եւ այնպէս դուք շարունակում էք աւելի մեծ պահանջներ դնել. իրականութեան հետ հաշուել չէք ուզում. պարզ բան է, որ այդ տեսակ պարագաներում գանգատներն անվերջ կը լինին։*

2.34.4.32.2.6.2.29 [ատրճանակ] *ուղարկելու ձեր ցոյց տուած միջոց անկարելի է. աւելի դիւրին է առաջին միջոցը, բայց որովհետեւ Մարսէյլի մեր մարդուն դեռ եւս չենք փորձել, եւ այդ պատճառաւ վստահ չենք նրա գաղտնապահութեան վրայ, գրեցէք մեզ ձեր ծանօթ* 12.5.8.5.6.24.2.4.7 [մեքենավարի]-*ի անունը եւ տեղը։ Մեր մարդը կը տանի, կը յանձնի նրան առանց մի խօսք ասելու. ձեր ծանօթը արդէն պէտք է հասկանայ, թէ ինչ պէտք է անել։ Իսկ մենք իրեն կողմնակի կերպով հասկացնել կը տանք, որ* 6.2.14.1.2.6.23.7.9.3. [Նաւահանգիստ (*Պաթում*)]-*ի համար է։*

Եթէ առաջին փորձերը աջող եղան, այնուհետեւ հետզհետէ կարելի է աւելի վստահաբար շարունակել։ 20.4.12.30.5.18.8.10.5.4.5.27.13.14 [Դրամ ձեռք բերելու] *ձեր միջոցը շատ վտանգաւոր կարող է լինել մեր ամբողջ գործի համար։ Դա մեր սնանկութեան ապացոյց կարող է նկատուել, անցեալում արած բազմաթիւ փորձերը միշտ վնասակար են եղել։*

Գիտենք, թէ որքան դիւրութիւններ ունէք 18.13.12.10.22.34.4.2.9.34.5.27.13.14 [ռումբ պատրաստելու] *համար։*

Եթէ կարելի լինի, մենք կարող ենք լաւ 18.13.12.10.15.7.6.13.31 [ռումբ շինող] *ուղարկել. մէկն արդէն պատրաստ կայ, խնդրենք միայն* 2.6.35.23.4.7 [անցագրի] *դիւրութիւններ տալ։ Ուղարկէք ներքին նահանգներից* 12. 7. 12. 5. 18. 2. 28. 7. 1. 2. 12.7.20.7.21.6. [մի մեռած համիդիէին](2) *կամ մի այլ յարմար միջոց գտէք։*

23.4.7.23.13.4.16.2.19.8.5.34.2.4.5.2.6 [Գրիգոր Խառնետարեան] *ցանկանում է իր ընկերներով վերադառնալ* 23.4.2.1.7.9.2.4.29.12.5.4.11.6.29.2 [Գարահիսար կամ Երզնկա]-*ի հետ գործելու համար։ Գործել է իր ասելով* 8.5.18.7.2.4.16.6.5.2.6.7. 1.5.34 [Քեռի Արխանեանի հետ]։ *Խնդրենք յայտնել ուր հարկն է եւ հաղորդել մեզ տեղացիների կարծիքը։*

Ձեր Ռ.

31 *Մայ*[*իս*] 97 *թ.*

Յ. Գ.— Շատ հետաքրքիր է, Պառաւը(3) *դրամը ստացել է թէ ոչ։ Ո՞վ է Աղբիւրը.— Սերովբը չէ՞։*

Պաշտօնական թղթեր. ընկալագրեր եւ կնիք Ցամաքձորի(4) *համար պատրաստ կար Ցամաքձորի կոմիտէ։ Այդ էլ ուղարկեցինք։ Ի՞նչ կարիք կայ անպատճառ կեդր. անունով կնքելու։*

ՆՈՅՆ

1.- Մեծ Քաղաքը Թիֆլիսն է, այս պարագային՝ Բիւրոն:
2.- Իմա՝ մի մեռած օսմանեան քաղաքացիի:
3.- Պառաւ – ծածկանուն Կարապետ Ղումրիկեանի:
4.- Ցամաքձոր – ծածկանուն Բաղէշ քաղաքի կամ Պիթլիսի նահանգին:

182

Պատճէններու մատեան No 82, *էջ* 397-398

Յարգելի պրն. .....(1)

Ձեր գրած ..... կարդացուեցաւ այստեղի ուսանողական ժողովում եւ ընդհանուր հաւանութիւն գտաւ։ Ժողովին ներկայ եղող հարուստ ուսանողներից մէկը ցանկութիւն յայտնեց[?] *տպագրել տալ նրան իր ծախքով իր հայրենիքում Բոլգարիայում, որի համար խնդրեց ինձ գրել ձեզ եւ առնել ձեր համաձայնութիւնը։*

Կատարելով նրա խնդիրքը եւ սպասելով ձեր պատասխանին, աւելորդ չեմ համարում հաղորդել այն նկատողութիւնները, որ արուեցան ընթերցանութեան ժամանակ. հարկաւ հետաքրքիր կը լինի ձեզ համար եւ գուցէ նկատողութեան առնէք այդ եւ համաձայնուէք փոփոխութիւններ մտցնել։

Թողնում ենք ի հարկէ մի քանի մանր նկատողութիւններ.

1. *Պատկերի վերջին մասը, որտեղ հերոսը, հետեւելով խմբապետի օրինակին, ինքն էլ իր կնոջն է սպանում, կրկնութիւն է նախընթաց պատկերի եւ թուլացնում է առաջինից ստացած տպաւորութիւնը։ Նոյն այդ կտորի մէջ հերոսի կնոջ քարշ տուող քիւրդը համբուրում է իր զոհին. այդ տեսակ խառը բոպէին, կռւի ժամանակ դա այնքան էլ բնական չէ։*

2. *Ամենավերջին տողերը անպայման պէտք է փոխել։ Առաջինը, շատ մեծ յիմարութիւն է հերոսի կողմից կրակի, բոցի մէջ, գնդակների ..... եւ այլն։ Նամակագրութեամբ զբաղուել ենք. հերոսը նամակը <u>յանձնում է</u> մէկին, որը մի քանի ուրիշների հետ յաջողում է դուրս սողալ եւ այլն... Շատ լաւ, բայց ինչպէ՞ս կարող է հերոսը նոյն նամակի մէջ նկարագրել այն, ինչ կատարուել է նամակը յանձնելուց յետոյ։*

Կամ պէտք է բոլորովին ..... վերջին պատկերը եւ բազմակէտերով անորոշութեան մէջ թողնել, կամ թէ մի ուրիշ, բնական ձեւ տալ։ Օրինակ հերոսը կարող է մահացու վէրք ստացած լինի, ընկերները կարող են տանել նրան մի ապահով տեղ. այդտեղ հերոսը լաւ իմանալով իր մօտալուտ վախճանը կարող է կռւի վերջին բոպէները նկարագրել։ Այս արդէն ձեր գործն է, ինչպէս ուզում էք, փոխեցէք. միայն խնդրում եմ նամակիս պատասխանը շուտով գրէք, որպէս զի կարողանամ որոշ պատասխան տալ իր ծառայութիւններն առաջարկող ուսանողին...

Մ. ԳԱՍՊ.

6 *Յուն*[*իս*] 97 *թ.*

1.- Անընթեռնելի անձնանուն: Բազմակէտերով նշանակած ենք նաեւ միւս անընթեռնելի բառերը:

183

Պատճէններու մատեան No 82, *էջ* 399-400

6 *Յունիս* 1897 *թ.*(1)
Ժընեւ

Ատրպատականի Կ. կոմիտէին

Սիրելի ընկերներ,

Այսօր ստացանք ձեր անթւակիր նամակը։ Երկու նամակ էլ առաջուանից ենք ստացել։ Զնայած որ նոր ընկեր է աւելացել, բայց դարձեալ անկարող եղանք ձեր նամակներին շուտով պատասխանելու։

Նիկոլի(2) *գալու կամ չգալու մասին լաւ արինք որ դիմեցինք Վարնա։ Մենք չգիտէինք Նիկոլի ծրագրի մասին. ինչու առհասարակ հարկ չէիք համարում ձեր ծրագիրների մասին ընդհանուր տեղեկութիւններ մեզ տալու։ Մէկ էլ Զէյթունի գործը դանդաղ ընթացք ընդունեց. Հրաչը*(3) *որը մեզ խոստացել էր այն կողմերը անցնել եւ մի նամակով էլ յայտնել էր թէ մի երկու-երեք օրից յետոյ գնում է, չի գնացել եւ մնացել էր Բոլգարիա, մինչդեռ* ..... [մէկ տող անընթեռնելի]:

վերջին նամակով դուք դարձեալ միաժամանակ? գործելու մասին էք գրում, այն էլ յարմար րոպէին մեր գործը թուրքի երազն է դառել. երբ մածուն ենք տեսնում, գդալ չունինք, երբ գդալ ունինք, մածուն չենք տեսնում։ Մեզ մնում է միայն գործել այն ժամանակ, երբ պատրաստ ենք զգում։

Այս հարցերի մասին մի այլ անգամ։ Մեզ հաղորդել էին, որ Կարօն(4) 9.2.9.6.13.3-*ի* [Սասնոյ] *կողմերն է մեկնել։ Այդ ինչպէս եղաւ, որ Շուշի դուրս եկաւ։*

Գուցէ նամակս ստանաք 16.12.10.7 [խմբի] *մեկնելուց առաջ։ Մեր համբոյրները մնացողներին։*

Համբոյրներ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Ստացանք երկրորդ նամակը եւ Սաքօի(5) *ինքնակենսագրութիւնն ու պատկերը։*

ՆՈՅՆ

1.- Պատճէնը վրիպումով ունի 6 Մայիս թուականը:
2.- Խօսքը կը վերաբերի Նիկոլ Դումանին:
3.- Հրաչ – ծածկանուն Հայկ Թիրեաքեանի:
4.- Խօսքը կը վերաբերի Ռոստոմի եղբօր՝ Արիստակէս Զօրեանի (Կարօ):
5.- Խօսքը Սեւ Քարեցի Սաքոյի մասին է (Ծովիանեան):

184

Պատճէններու մատեան No 82, *էջ* 402-404

Արդեօ՞ք անուշադրութեան հետեւանքով, այս գրութեան պատճէնը եւս թուագրուած է 8 Մայիս, մինչ մատեանին էջերը յատկացուած են Յունիս ամսուան: Այլապէս նաեւ առաջին տողով յայտնուած «համար VIII թերթը լոյս տեսաւ»-ը ցոյց կու տայ, որ նամակը գրուած է Յունիս ամսուն. արդարեւ «Դրօշակ»ի նշուած համարը կը կրէ 31 Մայիս 1897 թուականը:

8 *Յունիս* 1897 *թ.*
Ժընեւ

Աղէքսանդրիայի կոմիտէին

Յարգելի ընկերներ,

Համար VIII *թերթը լոյս տեսաւ։ Ձեզ արդէն ուղարկւած է* 100 *օր*[*ինակ*]. *կ'ուղարկւի* 10 *օր*[*ինակ*] *եւս։ Նւիրատւութեան ցուցակի միայն մի մասը լոյս կարողացաւ տեսնել. չարունակութիւնը հետեւեալ համարում, Գահիրէն ցուցակի հետ միասին։*

Andon Achinoff *անուն անձը, որին դուք քաղաքային փոստայով թերթ էք ուղարկել, մերժել է ընդունել եւ փոստային վարչութիւնը այդ համարը մեզ է ուղարկել։ Ուրեմն այդ անձնաւորութեան այլեւս ոչինչ չէք ուղարկել։*

Պ. Թադէոսեանի մասին արդէն ձեզ յայտնի պէտք է լինի, որ խաբւած ենք։ Մենք ոչինչ չգիտէինք, ոչ նրան ուղեկցող օրիորդի եւ ոչ երիտասարդի մասին։ Այլապէս ոչ մի պատճառով դրա հետ գործ չէինք ունենալ։ Թադէոսեանը ոչ միայն մեզ է խաբել, այլ եւ իր քրոջը ու փեսին, որոնք այստեղ են ուսանում։ Սակայն մենք տրամադիր ենք կարծելու, որ Թադէոսեանը իբր անփորձ տղայ գուցէ մի ուրիշի թելադրութեամբ է այդպէս վարւել. մենք չենք կասկածում նրա գործելու ջերմ ցանկութիւնը։ Այժմ ձեզ է մնում այս կամ այն դիրքը ընդունել դէպի նա։ Կ'աշխատենք շուտով նրան մի առանձին նամակ գրելու։

Աղէքսանդրիա եկած երիտասարդին՝ Ռուբէն Մելքոնեանին (*թէ Մանուկեանին*), *պրուսացի, յանձնարարում ենք ձեզ իբր քաջ եւ վստահելի անձնաւորութիւն, կարող է լաւ գործ կատարել. Զմիւռնայի տեղական կոմիտէի խումբն առնելով, ուղարկեցէք նրան այնտեղ։ Խնդրենք յայտնել իրեն, որ իր նամակն ստացած է։ Եթէ այդտեղ եղող բանկի տղայոց ծախքի համար բանականաչափ դրամ չունէք, գրէք մեզ. դոցանից մէկը Պարիզ է եղել հասած։ Պարիզի կոմիտէն ուղարկել է նրան Ամերիկա։ Ինչո՞ւ մեզ չէք հաղորդել դրա մասին։ Սկզբում կարծում էինք, թէ ստախօս է, իսկապէս մեր տղաներից չէ։ Սովորութիւն արէք, երբ մէկին որեւէ տեղ էք ուղարկում, յայտնել, թէ ով է, ինչու էք ուղարկում, որքան ճանապարհածախք էք տուել եւ այլն...*

Ընդունէք մեր բարեւները՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Կիլիկիայի հնչակեան գործիչներից ստացանք երկրորդ նամակ՝ պատասխան մեր գրութեան։ Պատճէնը կը հաղորդենք։ Տպաւորութիւնն աննպաստ է։

185

Պատճէններու մատեան No 82, *էջ* 405

8 *Յուն*[*իս*]1897 *թ.*, *Ժընեւ*

Յարգելի ընկեր,
Վ. Ղազարեան, Մարսէյլ,

Կոմիտէին հասցէով գրած մեր մայիս 18 *գրութիւնը մինչեւ այսօր անպատասխան է մնացել։*

Այդ նամակի մէջ մենք խնդրել էինք յայտնել Յունաստան գնացող երիտասարդին, որ այստեղի կամաւորաց խումբը մերժողական պատասխան ստանալով յունական կառավարութիւնից, այլ եւս չի մեկնելու. խնդրել էինք նոյնպէս հարցնել տեղեկութիւններ տեղւոյդ զինավաճառներին, կարող են արդեօք դրանք ձեռք բերել Bergmann-*ի նոր ատրճանակները՝ տափակ առանց գլանակի, անծուխ վառօդով, նիքելապատ գնդակներով եւ ինչ գնով կարող են մեզ ծախել։*

Խնդրենք ձեզանից այս տեղեկութիւնները հաղորդել մեզ որքան կարելի է չուտ։

Նամակին հետ ուղարկում ենք ութ[?] *ծրար թերթ, խնդրենք այդ ծրարները նոյն ձեւով կապած (հասցէն պատռած ի հարկէ) յանձնել* Paquet-*ի* Arménie *շոգենաւի մէջ* Maître d'équipage Barbagelata-*ին։ Այս բանը գաղտնի պէտք է պահել։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

186

Պատճէններու մատեան No 82, *էջ* 406-407

8 *Յուն.* 1897 *թ.*, *Ժընեւ*

Պ. Զարիֆեանին, Պարիզ
Յարգելի ընկեր,

Թողնելով ձեր նամակի պատասխանը մի այլ անգամի, երբ ազատ ժամանակ կ'ունենանք, ձեր ուշադրութիւնն ենք հրաւիրում Պարիզ գտնուող մշեցու վրայ, որը ձեզ ներկայացել է իբր գործիչ եւ որին դուք Մուշ էիք ցանկանում ուղարկել, տեղեկութիւններ ուզելով մեզանից Մշոյ մեր գործունէութեան մասին։

Այդ անձնաւորութիւնը՝ Յովհաննէս Յարութիւնեան անունով յայտնի <u>չարլատան</u> է, որին մենք փնտրում ենք։ Դա եղել է Բրայիլա, հիմնել է մի բանւորական ընկերութիւն, եւ իր մօտ ժողովելով Բրայիլայի բանւորներից արիւն-քրտինքով աշխատած 1,500 fr. *յեղափոխական նպատակաւ, <u>փախել է</u> Ռումանիայից, խորին յուսահատութեան մէջ ձգելով իր բանւոր ընկերներին։ Հարկաւոր է <u>ամէն ջանք թափել</u> դրա լուսանկարը ձեռք բերելու։ Երեւի դա այստեղ այնտեղ գնալով խաբեբայութեամբ դրամներ է կորզում։ Ձեզ ենք թողնում ամէն հնարներ մտածել լուսանկարը ձեռք բերելու։ Բրայիլայի բանւորները պատրաստ են դրան պատառ պատառ անելու։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Այդ պարոնը մեզ եւս նամակ էր գրել, նկարագրել իր կեանքը, կարծելով թէ մենք ոչինչ չգիտենք։ Նրան առանձնապէս չենք պատասխանում, երկիւղ կրելով, որ նա չօգտուի մեր նամակից, այստեղ այնտեղ տարածելով, թէ կապ ունի Խմբագրութեան հետ եւ այլն։ Դուք իրեն յայտնէք, որ նամակն ստացած է եւ Խմբագրութիւնը իրեն ձեզ է յանձնարարել։ Զգոյշ եղէք որ բան չկասկածի։

ՆՈՅՆ

187

Պատճէններու մատեան No 82, *էջ* 408

[8 *Յունիս* 1897 *թ.*, *Ժընեւ*]

Պ. Դաւիթ Մարգարեան
ի Կովենդրի

Յարգելի ընկեր,

Անգլիայում մենք կոմիտէներ չունենք, որ կարողանանք հասցէները ձեզ ուղարկելու։ «Կուկունեանի արշաւանքը» ստացանք։

Ձեր ընկերները ապահով տեղ են հասել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

188

Պատճէններու մատեան No 82, *էջ* 408

8 *Յուն*[*իս*] 1897 *թ.*, *Ժընեւ*

Պ. Որբիկեան ի Լոնդոն

Յարգելի ընկեր,

Մինասեանը մեկնած լինելով, ուղարկում ենք Դրօշակի համարները Ձեր հասցէով եւ խնդրում ենք տարածել Լոնդոնի մէջ։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

189

Պատճէններու մատեան No 82, *էջ* 408

8 *Յուն*[*իս*] 1897 *թ.*, *Ժընեւ*

Պ. Բաղդասարեան ի Նանսի

Յարգելի ընկեր,

20 *օր*[*ինակ*] *ծրագիր ուղարկւած է արդէն։ Սուրէնից մենք եւս մի նամակ ստացանք, շուտով կը պատասխանենք։ Խմբագրութիւնը չի կարող տեղեկութիւն տալ, քանի որ կցկտուր են մեր գիտեցածները։*

Այս անգամ նամակով ուղարկւելիքները չկտրւած ուղարկւեցան, որովհետեւ ինչպէս որ կտրես, դարձեալ ծուռ է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

190

Պատճէններու մատեան No 82, *էջ* 421

(*Փաստ.* 36*բ*-33)

20 *յուն*[*իս*] 1897 *թ.*
Ժընեւ

Ատրպատականի կոմիտէին

Սիրելիք,

Իր ժամանակին չկարողացանք հաղորդել ձեզ ուղարկւած համարների թիւը։ Ուղարկւում է 8 *ծրար* 3-*ական հատ իւրաքանչիւրում*(1)։

Ի՞նչ եղաւ Շէկոյի դատավարութիւնը(2) ։ *Ինչպէս առաջ էլ գրել էինք, առանձին ուշադրութիւն դարձրէք դատավարութեան ձեւի վրայ։ Հասարակութեան համար դա առանձին նշանակութիւն ունի։*

Շուտով կը ստանաք մեր ու Ճանկիւլեանի(3) *մէջ տեղի ունեցած բանակցութեանց արձանագրութիւնը հարկաւոր բացատրութիւններու հետ միասին։*

Տղերանց մասին եթէ լուր լինի, չմոռանաք հեռագրով յայտնել։ Աւելի լաւ է առաջւայ նման սովորական ձեւով հաղորդել։

Մեր համբոյրները
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Խօսքը «Դրօշակ»ի ուղարկուած համարներու մասին է:

2.- Շէկօ – բուն անունով Արշակ Պարսամեան (1869-1897), դաշնակցական մարտիկ, որ 1897 թ. Փետր. 24-ին Թաւրիզի մէջ «անձնական պատճառներով» սպաննուած էր ուրիշ երեք մարտիկներու կողմէ:

3.- Ճանկիւլեան Յարութիւն (1856-1915), որ հնչակեան կուսակցութեան կողմէ Ժընեւի մէջ բանակցութիւն կը վարէր Դաշնակցութեան ներկայացուցիչներուն հետ՝ երկու կուսակցութեանց միջեւ միութիւն կամ համերաշխութիւն առաջացնելու մտադրութեամբ:

191

Պատճէններու մատեան No 82, *էջ* 465-466

30 *Յուն*[*իս*] 1897 *թ.*

(*Տրապիզոն*)

Սիրելիք,

Ստացանք 19 *յունիս ձեր թուակիրը։*

Ինչո՞ւ այսքան երկար ժամանակ նամակ չէիք գրում։ Շատոնց է, որ մենք ձեզ այլեւս 23.2.11.5.34.20 25.27.38.11.2.6 [Գազետ Դը Լոզան](1) *չենք ուղարկում, մասամբ այն պատճառաւ, որ մեզ չէք տեղեկացնում ապահով ստանալու մասին, մասամբ էլ աշխատանքի չատութեան պատճառաւ մտքներս չի մնում։ Յարմա՞ր էք գտնում, որ ուղղակի* 16.12.10.2.23.4.13.14.17.5.2.6 [խմբագրութեան] *կողմից ուղարկւի։*

17.5.4.17.25 [թերթը] *ուշանում է, որովհետեւ կողմնակի զբաղումներ շատ կան։ Այժմ մէկ անդամ էլ աւելացել է*(2)*։*

Պաշտօնական թղթեր նորից ուղարկւեցան 260 *հատ։*

2.34.4.32.2.6.2.29 [ատրճանակ] *ձեր ուզած ձեւով ուղարկել անհնարին է, որովհետեւ այստեղ չեն ընդունիլ։*

12.2.4.9.5.27.7 [Մարսելի] *մէջ խումբ ունինք, բայց դեռ չենք փորձել. նրանց գրելով Նաւահանգիստ*(3) 7 *ծրար ուղարկեցինք։ Գրէք, որ անմիջապէս մեզ յայտնեն ստանալու կամ չստանալու մասին։ Իւրաքանչիւր* 28.4 2.4.7.12.21.33.30.21.4.7.6.2.29 [ծրարի մէջ 30 օրինակ] *իր սեփական անունով* 22.2.9.34.4.12.21.33.5.2.6. [Պաստրմաճ]-*եան* Rue 29.2.4.39.6-*ը* [անընթեռնելի հասցէ. արդեօ՞ք Կաֆէ] *այստեղ* 23.4.2.6.29.8.39.7.27.38.11.32.39 [Գրան Կաֆէ Լոզան], *անդ* Mme 10.2.10.5.27.27 [Բաբէլ]։ *Եթէ նամակը մասնաւոր, ընտանեկան է, թող գրեն։*

Շուտով կ՚ուղարկենք մեր եւ 32.2.6.29.7.14.27 [Ճանկիլ]-*ի մէջ տեղի ունեցած բանակցութեանց արձանագրութիւնը։*

Թող Վազգէնը(4) *մանրամասն տեղեկութիւն ուղարկի Մօտկանցոց չարժման մասին։ Այդ քիւրդերը ի՞նչ դիրք բռնած էին Սասնոյ գործում։*

Նիւրատուութեանց ցուցակը տպագրւել է իր ժամանակին։

17.13.9.6.28[թոյն]-*ի մասին աւելորդ է ասել, որ որոշ պարագաներում հարկաւոր է. ընդհանրապէս ոչինչ չի կարելի ասել. դա կախւած է մասնաւոր դէպքերից։ Մենք* 12.2.4.9.21.3.27.7 [Մարսէյլ]-*ի խմբին չենք յայտնում, թէ ուր պիտի գնան* .....(5)

Մենք խնդրում ենք միայն ծրարները յանձնել այսինչ մարդուն։ Դուք ինքներդ յանձնարարէք իրեն, թէ այս կամ այն ծրարը ում է հարկաւոր յանձնել։

Կը գրենք 18.13.14.12.10.15.7.8.18.31 [ռումբ շինող]-*ին, որ ճանապարհ ընկնի։ Ձեզ կը հաղորդւի մեկնելու օրը։*

Եգիպտացու(6) *մահը անշուշտ յայտնի կը լինի ձեզ։ Խնդրենք հաղորդէք նրա մասին ինչ տեղեկութիւն որ գիտէք եւ որքան կարելի է կարճ ժամանակամիջոցին։ Գրէք եւ Սամսոն։*

Պառաւի(7) *մասին կը գրենք մենք եւս։ Դուք խսկոյն եւեթ պէտք է հաղորդէիք Տաշրեանին*(8) *դրա մասին։ Մենք, խոստովանելով նրա մի քանի յարմարութիւններ-*

ը իր դերի համար, միեւնոյն ժամանակ կատարեալ վստահութիւն չունինք նրա վրայ։ Եթէ յիշում էք, Ռոստոմը ձեզ նախազգուշացրեց։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Կ'աշխատիմ շուտով մի նամակ գրել ձեզ Մլեհին հասցնելու համար։

Ռ.

[Ծ. Խմբ.– Էջատակի յաւելումներ]

12. 2. 20. 12. 13. 14. 2. 11. 5. 27. 9. 5. 9. 7. 21 [Մաղմուազել Սեսիէ], *նոյն փողոցը եւ համարը* 1[?].26.4.38.11.35.4.21, *մի մոռացէք, որ տ*=t *եւ ոչ* d.։

Գրէք Վազգէնին(4), *որ աշխատին մի որեւէ տեղ* 16. 27. 4. 34. 13. 14. 12. 2. 18. 33. 2. 35. 6. 5. 27. – 29. 2. 18. 2. 24. 4. 13. 14. 17. 5. 2. 6 *ուշադրութիւնը* 12. 13. 34. 29. 6. 35. 7. 6. 5. 4. 7. 35. 37. 9. 1. 12. 2. 6. 23. 27. 16. 7. 35 [խլրտում առաջացնել կառավարութեան ուշադրութիւնը Մոտկանցիներից եւ Սահմանագլխից] *դարձնելու համար։*

Եթէ կարելի է, Աղբիւրը(9) *կամ մի ուրիշը խմբով* 12. 38. 34. 28. 2. 6. 35. 13. 35. 12. 38. 34 [Մօտկանցոց մօտ] *անցնեն միասին գործելու համար։ Աւելի լաւ է անցնեն քիչ թւով, բայց վերջին ձեւի հրացաններով։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Թուանշային ծածկագիր, որուն բանալին է՝

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգով անդադար։

Վերեւի ոտանաւորի այս տողերը իբրեւ բանալի գործածուած են Ռոստոմի կողմէ ընդհանրապէս No 82 Պատճէններու մատեանի գրութիւններուն մէջ։
Կը վերծանուի – Գազետ Դը Լօզան։

2.- Խմբագրութեան «աւելացած անդամը» Արշակ Վռամեանն էր (Վահապ), բուն անունով Օնիկ Դերձակեան։
3.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի։
4.- Խօսքը կը վերաբերի Վասպուրականի ծանօթ գործիչ Վազգէնի՝ բուն անունով Տէրոյեան Տիգրան։
5.- Անընթեռնելի մէկ բառ։
6.- Եգիպտացի – ծածկանուն Դեւեան-Մինասեան Արտաշէսի (1868-1897), յանդուգն յեղափոխական, որ 1897 թ. Յունիս 1-ին մահացած էր թոքախտէ։
7.- Պառաւ – ծածկանուն Ղումրիկեան Կարապետի, Տերսիմի գործիչներէն։
8.- Տաշրեան – ծածկանուն Գասպարեան Վրէնի, Տրապիզոնի գործիչներէն։
9.- Խօսքը հաւանաբար Սերոբ Աղբիւրի մասին է։

ՎԵՐՋ No 82 Ռոստոմի կողմէ գրուած Պատճէններու մատեանին

192

Փաստ. 36բ-21

30-*ին յուն*[*իս*] 97 *թ.*
Ժընեւ

(*Աղեքսանդրիայի կոմիտէին*)

Յարգելի ընկերներ,

Այս րոպէիս մի նամակ ստացանք Աթէնքից, որով յայտնում են հիւանդանոցում(1) *գտնւած* 5 *վիրաւորներից* 3-*ի առողջանալը եւ Աթէնք հասնիլը, եւ մի ուրիշ նամակ, որով յայտնում են, թէ տղայքը Աղեքսանդրիա են ճանապարհ ընկել։ Ուրեմն այժմ նրանք ձեզ մօտ կը լինին։ Ձեր դրամական դրութեան անծանօթ լինելով, փոխադրում ենք ահա* 100 fr. *տղայոց անհրաժեշտ կարիքների համար։*

Պոլսոյ հասցէն այստեղից չենք կարող տալ։ Կը գրենք իրենց, որ Եգիպտոսին յարմար հասցէ տան։ Առայժմ ինչ հարկաւորն է, կարող էք մեր միջոցով հաղորդել։

Աւելորդ չենք համարում յայտնել, որ Պոլիս մերոնք առայժմ անյարմար են գտնում այդ տեսակ հարցերով զբաղւել, այնպէս որ նրանց վրայ <u>*առայժմ*</u> *կարող էք յոյսեր չդնել։*

Հաղորդեցէք մեզ հիւանդանոցի տղայոց տրամադրութիւնը։ Թող գրեն, թէ ինչպէս են հետները վարւում, ի՞նչ խօսակցութիւններ էին տեղի ունենում եւ ինչպէս ճանապարհ ձգեցին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Կուսակցական «բառարան»ին մէջ հիւանդանոցը կը նշանակէր բանտ։

193

Պատճէններու մատեան No 83, *էջ* 128-129

19 *Սեպտ.* 1897

Պ. Զարիֆեանին, Պարիզ

Յարգելի ընկեր,

Ձեր երկու նամակներն (*Սեպտ.* 9 *եւ* 14) *ստացւած են։ Թէ հասարակութիւնը դժգոհ է Պոլսի վերջին դէպքից, դա շատ բնական է, որովհետեւ նա առհասարակ շատ խստապահանջ է։ Պոլսի ցոյցը միայն արձագանք էր Վասպուրականի դէպքերի եւ միջոց՝ ցոյց տալու, թէ իւրաքանչիւր րոպէ ու ամենաանսպասելի միջոցներով մենք կարող ենք երեւան հանել մեր ուժը։ Հասարակութեան ուշադրութիւնը դարձրած պէտք է լինի Վասպուրականի եւ ոչ Պոլսի վրայ։*

Argus-*ի*(1) *ուղարկածներից այժմ գոհ ենք. լաւ էր* archives diplomatiques-*ից կըտրածը մեր հարցի վերաբերմամբ։ Եթէ կարելի լինէր դրա նախընթացները եւս ուղարկել, շատ շնորհակալ կը լինէինք։*

Արդէն պ. Տօնապետեանից իմացած կը լինէք, որ նրա հրատարակած գրութիւնը

մեզ եւս ուղարկուած է եղել։ Վերջերս Պարիզից ուղարկածները բաժանել ենք մեր կոմիտէներին։

Մէշվերեթի(2) *յօդուածին աւել լաւ է պատասխանել ոչ խմբագրութեան կողմից, այլ մի դաշնակցական անհատի։ Հէնց այն րոպէին, երբ պատրաստուելիս է եղել շոգենաւ փոխադրուելու։ Թերթերի մէջ յիշուած Սարգիսը նա է։ Առհասարակ այս անգամ Պոլսի մէջ շատ կորուստ ունեցանք, մի բան, որ երբեք տեղի չէր ունեցել. Սիւնիք կոմիտէն*(3) *ամբողջովին ձերբակալուած է։*

Դրա փոխանակ Վասպուրականի արշաւանքը շատ յաջող ելք ունեցաւ։ Արշաւանքին մասնակցել են քահանաներ, բժիշկ եւ կեդրոնական կոմիտէն ամբողջովին։ No 11-*ի*(4) *մէջ առաջ բերած մասնաւոր նամակը պատկանում է այստեղի համալսարանը աւարտած բժիշկին։ Քիւրդերի յարձակումը Սալմաստի վրայ ճիշդ չէ։ Համոզուած լինելով, որ Սալմաստի վրայ յարձակւողներից ոչ մէկը կենդանի չի վերադառնալ, քիւրդերը աւելի լաւ են համարել անցնել Խոյ եւ յարձակւել մի անպաշտպան գիւղի վրայ։*

Պ. Ջերազը այստեղ էր։ Տեսակցեցանք երկու անգամ։ Յայտնեց իր համակրութիւնը Դաշնակցութեան եւ միեւնոյն ժամանակ իր տարբեր համոզումը մեր բռնելիք ընթացքի մասին։ Ժամանակ չկար երկար խօսելու։ Նրա կարծիքով մենք պէտք է լուռ կենանք մինչեւ մի պատեհ առիթ գալը։

Պ. Տօնապետեանին յայտնէք մեր շնորհակալութիւնը իր ուղարկած գրութեան մասին։ Յայտնէք նրան ի միջի այլոց, որ ինքը Ռոստոմին ճանաչել չի կարող (երեւի չփոթում է մի ուրիշ Ռոստոմի հետ) եւ որ Ռոստոմը խմբագիր չէ Դրօշակի, այլ խմբագիրներից մէկը։

Ընդունէք մեր բարեւները՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Argus – մամլոյ գործակալութիւն Փարիզի մէջ, որ թերթերու մէջ լոյս տեսած յօդուածներու կտրօնները, ըստ պատուէրի կ՝ուղարկէր իր բաժանորդներուն։
2.- Թուրք ընդդիմադիր Ահմէտ Ռիզայի խմբագրութեամբ Փարիզի մէջ հրատարակուող լրագիր։
3.- Պոլսոյ թաղամասերէն Բերայի եւ Ղալաթիայի դաշնակցական կոմիտէ։
4.- Խօսքը կը վերաբերի «Դրօշակ»ի համարին։

194

Պատճէններու մատեան No 83, *էջ* 135-137

21 *սեպտ.* 97

Սիրելիք,

[*Տրապիզոն*]

Ստացած են ձեր օգ. 8, 14, 23, 28, *սեպտ.* 3, 11 *եւ Նաւահանգիստի*(1) *օգ.* 22, 24 *նամակները։ Ձեն ստացած դեռ կորիւնների լուսանկարները։*

38, 4, 20, 13, 14, 17, 5, 4, 17 [Օրդու թերթ](2) *դադարեցրել ենք։ Ձեզ ուղարկւել է արդէն. ստացած կը լինէք։*

Ձեր եւ Նաւահանգստի յարաբերութիւնների մասին Կռուածաղիկի(3)*հետ աւե-*

լորդ է այժմ մեր կողմից բան գրել, քանի որ դա անցած խնդիր է։ Իսկ գալով ցոյցին, նրա բացասական կողմը դուք շատ էք չափազանցնում, յիմարութիւն անուանելով եւ այլն...

Ի հարկէ մենք եւս այդպէս փոքր բան չէինք սպասում, բայց դա էլ ունեցաւ իր դրական արդիւնքը։ Սխալ է ձեր ստացած տեղեկութիւնը, իբր թէ ահագին գումար է ծախսւած։

Ամբողջովին տարւած լինելով Քարաժայռի(4) խնդրով, դուք չէք կարողանում սառը կերպով նայել Դաշնակցութեան ամբողջ գործունէութեան վրայ։ Առաջինը չպէտք է մոռանալ, որ Բիւրոն կամ որեւէ ուրիշ մարմին պատասխանատու չէ, եթէ ստացւած մեծ գումարը չի գործադրւում Քարաժայռի, կամ Վրէժի(5) կամ Ջիթապտուղի(6) վրայ. այդ գումարը տրւած է յատկապէս Կռուածաղիկի համար։ Երկրորդ, գրելու հարկ չկայ, որ մենք եւս համակարծիք ենք Քարաժայռի մեծ նշանակութեան մասին, բայց չպէտք է ղեկավարւել միայն մեր ցանկութիւններով. մենք պէտք է միշտ յիշենք մեր նիւթական անձկութիւնը։ Բացի Քարաժայռից կան ուրիշ կէտեր, որոնցից մէկը մինչեւ իսկ աւելի կարեւոր է։ Պարզ պէտք է լինի բոլորին համար, թէ մենք մեր այժմեան միջոցներով անկարող ենք բաւականութիւն տալ այդ բոլոր պահանջներին. մեզ մնում է գործը առաջ տանել, ծրագիր կազմել մեր ունեցած միջոցների համաձայն։

Դուք յոյս ունէք արտասահմանի հայերի վրայ, այդ պատճառով դուք դիմում էք մեր կոմիտէներին եւ հայ ազգին (?)։ Կարծո՞ւմ էք, թէ մենք դիմումներ չենք անում, նոյն իսկ Քարաժայռը յիշեցնելով։ Բայց հնչակեանների երկպառակտումներից, նրանց բարձրացրած արշաւանքից յետոյ (միութեան խնդրի առթիւ, իբր թէ մենք խոյս ենք տալիս...) այնքան քիչ դրամ է հանգանակւում, որ տեղական պէտքերին մինչեւ իսկ բաւականութիւն չի տալիս, էլ ուր մնաց խմբագրութիւն(7) ուղարկելը։ Եւ մենք ստիպւած ենք դարձեալ կենտրոնական գանձարանից պահանջել մեր ծախքը։

Յոյս ունինք, որ Վասպուրականի դէպքերը քիչ ցնցեն հասարակութիւնը, հանգանակութիւն սկսւի, եթէ միայն հնչակեանները խելքը բոլորովին չմոռանան։

Սեպուհի(8) շրջաբերականի հրատարակելը առհասարակ աւելորդ էր. առանց այն էլ ամենուրեք տարածւած է Քարաժայռի խնդիրը։ Այժմ դուք դիմելով հայ ազգին, աւելի կը տարածէք եւ չլինի թէ գործը դեռ լուրջ չսկսած՝ վիժի։

Մօտակայ ընդհանուր ժողովում այդ հարցի մանրամասնութիւնները պէտք է լուրջ քննադատութեան ենթարկել։ Առայժմ թողնելով այդ եւ այլ, բազմիցս [?], խնդրենք պատասխանել մեզ՝ 1) միջոցներ ունէ՞ք արդեօք առանց անցագրի կամ օտար անցագրով մարդ ներս մտցնել եւ պահել կասկածից հեռու 2) Սեպուհը կարո՞ղ է օտար մարդիկ պահել իր մօտ։

Համբոյրներս՝
Ձեր Ռ.

Մելիքը(9) խնդրում է յայտնել Նաւահանգիստ, որ գտնեն 12, 7, 8, 2, 3, 21, 27, 2, 18, 2, 2, 18, 2, 8, 2, 5, 27, 5, 8, 12, 34, 4, 5, 6, 7, 29, 35, 7, 4, 8, 13, 24, 7, 10, 2, 11, 2, 4 *յանձնել* 9, 4, 23, 7, 9, 29, 7, 4, 2, 29, 13, 9, 6, 2, 3, 7, 8-*ին* (10), *դա ուզում է Վրէժըստան գնալ. պէտք է արգելել եւ ուղարկել Կռուածաղիկ, որին շատ լաւ ծանօթ է։*

Վաղը մեկնում է Բերկմանը [?], 17, 9, 4, 17, 3, 4, 8, 37, 31, 4, 23, 2, 10, 5, 9, 7, 29, 2, 6, 8, 5, 37, 12, 8, 2, 7, 7, 6, 6, 5, 14, 2, 1.....(11)։

1.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի:
2.- Թուանշային ծածկագիր. «Որդու թերթ»:
3.- Կռուածաղիկ – ծածկանուն Պոլսոյ:
4.- Քարաժայռ – ծածկանուն Տերսիմի:
5.- Վրէժ – ծածկանուն Ատրպատականի:
6.- Ձիթապտուղ – ծածկանուն Զէյթունի:
7.- Խմբագրութիւն գործածուած է Ժընեւի իմաստով, այսինքն՝ «Դրօշակ»ի խմբագրութեան:
8.- Սեպուհ – ծածկանուն Երզնկա քաղաքի:
9.- Մելիք – ծածկանուն Իւսուֆեան Յովհաննէսի:
10.- Լուսանցքին գրուած ծածկագրի թուանշանները հազիւ ընթեռնելի են, հետեւաբար անստոյգ են եւ ոչ բոլորովին վերծանելի: Կը խօսուի «Միքայէլ Առաքելի մօր» կացարանէն առարկայ մը «Սարգիս Կիրակոսեանին» յանձնելու մասին:
11.- Միեւնոյն ինչ նախորդ ծանօթագրութեան պարագային: Հոս կը խօսուի «թերթեր եւ շրջաբերական» ուղարկելու մասին:

195

Պատճէններու մատեան No 83, *էջ* 147

21 *սեպտ.* 97 *թ.*

Կարմրաթշիկին(1)

Սիրելիս,

Երկար ժամանակ է քեզանից տեղեկութիւն չունեմ, գրում եմ քո հին հասցէով. հաւանական է դեռ առաջուայ տեղդ լինես։

Այստեղ է եկել Հրանտը .... է ունենում, ապրում է ինձ մօտ։ Երբ նա իր մտադրութեան մասին գրեց ինձ, ես չգիտէի, թէ դա ինչ Հրանտ է։ Ես էլ խորհուրդ տուի գալ։ Բայց յետոյ, հէնց երէկ պարզուեց, որ դա նոյն Հրանտն է, որը քեզանից 200 *ր*[*ուբլի*] *է առել սրանից* 3 *տարի առաջ, գնացել Պոլիս. քեզ խաբել է եւ փողերդ չէ վերադարձրել։*

Յովհաննէսից կը հարցնեմ, թէ ինչպէս է պատահել որ Հրանտը իր խօսքը չի կատարել, իսկ քեզանից խնդրում եմ գրես ինձ, թէ ինչ պայմաններով ես տուել փողը։ Լաւ է պատահել։ Եթէ մի ուրիշից եւս առել է, այն էլ գրիր։

Պատասխանը շուտով։

Բարեւներս
Քո Քոթոթ(2)

Գրիր հետեւեալ հասցէով
M. Sissaguian, Roseraie No 23

1.- Կարմրաթշիկ – ծածկանուն Մարգարեան Մարտիրոսի:
2.- Քոթոթ – ծածկանուն Ռոստոմի:

196

Պատճէններու մատեան No 83, *էջ* 156-161

25 *սեպտ.* 97

Պ. Սահակ Մարգարին

Սիրելի ընկեր,

Քո սեպտ. 7, 13, 16-*ի նամակներն ստացած են. ընդհանրապէս ասած գործունէ-ութիւնդ լաւ հողի վրայ չես դրել. փոխանակ անմիջապէս դիմելու հանգանակու-թեան, դու բոլոր ժամանակդ գործ ես դնում կազմակերպութեան վրայ եւ յոյսդ դնելով այս կամ այն խոստումների վրայ հեռանում ես մի տեղից միւս տեղ։ Ինչո՞ւ Ղարաչու*[?] *նման չեմ կանգնում կողքներին եւ ինքդ քո ձեռքով հաւաքում փողը։ Հաւատացիր, դրանով աւելի հաստատ կազմակերպութիւն կարելի է առաջացնել, քան թէ քարոզներով։ Քարոզներ եղել են եւ առաջ. ի՞նչ է դուրս եկել։ Այդտեղ քա-րոզել է Բաբայեանը, Ղարա-Մելիքը*(1)*, մասամբ եւ Ռոստոմը,— ի՞նչ դուրս եկաւ, լսում են, խոստանում, ճանապարհ ձգում, յետոյ կամ լռում, կամ մի քանի սանտիմ ուղարկում։ Վարդի, Մէլիքի*(2) *ընդունած ձեւը ամենանպատակայարմարն է։*

Բուկրէշում քո դրած ամենաընտիր ուժերի մէջ յաղթող Բեդիրեանը դուրս եկաւ ամէնից յարմարը՝ ներկայացուցիչ լինելու։ Մեր կարծիքով աւելի լաւ է առանց ներկայացուցչի մնալ, քան թէ դրա նմանը ունենալ։

Բուկրէշի կոմիտէն նոյնպէս խոստացել է հանգանակութիւն բանալ։ Այդ բանը իրենց չպէտք է թողնել։ Վերադարձիր անպատճառ, դու ինքդ գլուխ անցիր եւ շտա-պեցրու։ Եթէ այսպիսի բարեբաստիկ հանգամանքներում հանգանակութիւնը չա-ջողւի, յետոյ բոլորովին չի աջողւիլ։ Վասպուրականի դէպքը փառաւոր ապացոյց պէտք է լինի, թէ Դաշնակցութիւնը ինչ լրջութեամբ է վերաբերում գործին եւ ինչ յաջողութեամբ ի կատար ածում։ Նոյն ձեւով մենք կը դիմենք միւս կէտերին։

Երբ քեզանից պահանջւում էր մի հեղինակաւոր անուն խմբագրութեան մէջ, ին-չո՞ւ չես պարզում դրանց մեր տաքտիկան, անհատներին ձուլել խմբերի մէջ, որ խմբերը յայտնի լինեն եւ ոչ այս կամ այն անհատը, ինչո՞ւ չես ցոյց տալիս, որ հէնց դրա մէջն է մեր առաւելութիւնը։

Աւելորդ է գրել քեզ, որ Բուքրէշի դրամը, որ քեզ <u>խոստացել էին</u> ուղարկել, չեն ուղարկած դեռ։ Մի անգամ արդէն քեզ գրւած է եղել, որ ռումանական թերթե-րում երեւացող նպաստաւոր յօդւածները թարգմանել տաս եւ ուղարկես։ Եթէ դեռ չես ուղարկել՝ ուղարկիր այժմ, որ ուշ էլ լինի վնաս չունի։ Ախր մեր ասածը ուրիշ է, օտարինը ուրիշ։

Կոստանցայի(3) *նորակազմ կոմիտէն ինչո՞ւ պիտի մեզ հետ յարաբերութիւն ու-նենայ եւ ոչ Պալքանեան Կեդր. կոմիտէի հետ։ Ռումանական բոլոր կոմիտէները պէտք է նրա հետ կապել։ Զարմանալի է, որ դեռ գլուխ ես դնում հնչակեանների հետ։ Եթէ դրանք Տամատեա*[նա]*կաններ են, աւելի լաւ, որովհետեւ ճիշդ է, որ Տամատեանը կատարելապէս համաձայն է Ճանկիւլեանի հետ եւ արդէն բաժանւած է Արփիարից, կարծում ենք, որ մի առիթի է սպասում մեզ հետ միանալու։ Այն բրօ-շիւրը, որի մասին դու հարցնում ես, գրւում է Ճանկիւլեանի ձեռքով։ Դրա համար անհրաժեշտ մի քանի դոկումենտների պատճէնը ուղարկեցինք Ճանկիւլեանին։*

Ինչպէս լսում ենք, դեռ աւելի կարեւոր նամակներ կան։ Մեզ համակրողներից մէկը ինքը կարդացել է Աղասու(4) մի նամակը, որով այդ միմոսը գրում է, թէ հնչակեաններին քանդեցինք, այժմ Դաշնակցութիւնն էլ կը քանդենք։ Այդ բանը իրանք ցանկանում են յաջողեցնել միւլթեան միջոցով։ Զրպարտիչ չհռչակւելու համար ստիպւած ենք ի հարկէ լռել։

Ճանկիւլեանը յարած է մեզ վերջնականապէս թէ ոչ, դժւար է արդ ասել, բայց նա մեզ շատ համակիր է, Եգիպտոսի հնչակեան նշանաւոր գործիչների նկատմամբ յուսախաբ լինելուց յետոյ։ Այժմ նա, դեռ իբրեւ հնչակեան, բանակցում է երկրի կոմիտէների հետ, յայտնելով նրանց իր տեսածները։

Կոմիտէ հաստատելու պայմանների մասին դիմիր Արվախին(5)։ Ի միջի այլոց չմոռանաս յանձնել նրա բաժանւած նւիրատոմսերի հաշիւը։

Արշաւանքին(6) մասնակցել են բացառապէս դաշնակցականները։ Օտար ոչ մի անհատ որեւէ մասնակցութիւն չի ունեցել։

Բորիսի(7) ծրագրած Պրոկլամասիոնները լոյս չտեսան, որովհետեւ այս տարի անյարմար դատւեցաւ խմբագրութիւնը ժամանակաւորապէս նրա ձեռքը տալու կամ խմբագրութեան մէջ անդամ ընդունելու։

Ռուսաստանի գծի վրայ շատ ուշադրութիւն դարձրու։ Բայց աշխատիր այնպէս անել, որ տեղացիք ստիպւած չլինեն իրենք նաւը մտնելու, այլ նաւի մարդը ինքը դուրս տանի։ Դրա համար կարելի է առատ վարձատրութիւն տալ եւ այդ բանը հեշտութեամբ կարող է կատարել նաւի խոհարարը, կամ սրճարանապետը (եթէ ի հարկէ ռուս չէ)։

Գրիր Պրուսալեանին մենք ուղարկում էինք Տէրհօր յանձնարարութեամբ։ Զարմանում ենք, թէ ինչու Տէր Հայրը աւելի շուտ չի յայտնել մեզ այդ փոփոխութեան մասին։ Ի միջի այլոց, յայտնիր այդտեղ վերադարձող տղաներին (օր[ինակ] Ռուբէնին, եթէ այդտեղ է), որ իրենց խումբը կողոպտող մշեցի Յովհաննէսը Պարիզից մեզ դիմել էր գործելու համար։ Մենք ի հարկէ ճանաչեցինք նրան, աշխատեցինք միայն մի կերպով դրա լուսանկարը ձեռք ձգել, բայց չյաջողւեց։ Նա հեռացաւ Մարսէյլ, այնտեղ էլ զուր տեղը աշխատեցինք։ Այնտեղից մեկնել է Բաթում։ Թող աշխատեն նրա դէմքը ճանաչողները Բաթումում գտնել նրան եւ արժանաւոր պատիժը տալ։ Վերադարձողները ինչպէ՞ս են բացատրում իրենց վարմունքը։ Միթէ՞ չէր կարելի հայրենիքում մնալ։

Աշոտի բերդարգելութեան վճռի մասին մեզ ոչինչ չի յայտնի։ Մեզ թւում է, թէ դա սխալ պէտք է լինի։ Աշոտը դեռ դատի չի ենթարկւել։

«Միւսի»ն Ռոստոմը չի ճանաչում։ Ո՞վ է դա։ Դրա մասին չի կարելի՞ մի քանի տեղեկութիւններ հաղորդել Դրօշակում։

Դերսիմի եւ Զէյթունի խնդրի մասին համաձայն ենք քեզ հետ։ Բնականաբար դա պէտք է առաջնակարգ տեղ բռնի։ Զէյթունի մասին երկար խօսեցինք Զերազի հետ։ Նա ներքուստ հիացած [է] մեր ֆէտայիներից՝ ի միջի այլոց խորհուրդ էր տալիս ժամանակին տեղափոխել դրանց Զէյթուն։ Նա շատ լաւ կարծիքի է Դաշնակցութեան մասին, միայն չի հաւանում մեր ընդունած տաքտիկան՝ մասնակի շարժումներ յարուցանել։ «Պէտք է սպասել յարմար րոպէի եւ ընդհանուր շարժում յառաջ բերել»։ Հարկ եղած պատասխանը տրւեցաւ իրեն։ Նա չէր համաձայնւում (գուցէ եւ իր դիրքը թոյլ չէր տալիս համաձայնելու), բայց վերջն ինքն էլ գտաւ հայդուկային փոքր խմբերի անհրաժեշտութիւնը, գլխաւորապէս ժողովրդի ինքնապաշտպանութեան տեսակէտից։ Բաժանւեցինք բարեկամաբար։ Ժրնեւը նրան դուր եկաւ։

Մոռացանք յայտնել, որ Տօնապետեանը իր բրօշիւրը գրելուց յետոյ Պարիզից մեզ դիմեց եւ յայտնեց իր պատրաստականութիւնը Դաշնակցութեան մէջ մտնելու եւ մեզ հետ գործելու։ Պատասխան դեռ չի տրուած մեր կողմից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Բաբայեան – ծածկանուն Գարեգին Խաժակի (Չագալեան)։ Ղարա-Մելիք – ծածկանուն Բարսեղ Մելիք-Գրիգորեանի։
2.- Վարդ, Վարդօ – Յակոբ Վարդ-Պատրիկեան. Մելիք – ծածկանուն Իւսուֆեան Յովհաննէսի։
3.- Կոստանցա – քաղաք Ռումանիոյ մէջ, որ կազմակերպական իմաստով կապուած էր Պալքանեան Կեդր. կոմիտէին։
4.- Աղասի – ծածկանուն Թուրսարգիսեան Կարապետի, մասնակից եւ ղեկավարներէն 1895 թ. Զէյթունի ապստամբութեան։
5.- Արվախի – ծածկանուն Յակոբ Վարդ-Պատրիկեանի։
6.- Խօսքը կը վերաբերի Խանասորի արշաւանքին։
7.- Բորիս – ծածկանուն Խաչատրեան Սմբատի։

197

Պատճէններու մատեան No 83, *էջ* 162-165

26 *սեպտ.* 97

Պ. Զարիֆեանին(1), *Պարիզ*

Ընկեր,

Ձեր սեպտ. 24 *նամակն ստացած է, ինչպէս նաեւ գրաշարի ձեռքով ուղարկածը, որի համար հաղորդել ենք ձեզ մեր նախընթաց նամակով։*

Տօնապետեանը(2) *մեզ եւս գրել էր իր դաշնակցական դառնալու մասին։ Կ'աշխատենք մի յարմար ասպարէզ գտնել նրա համար։ Բայց անձնապէս ծանօթ չլինելով դրա անձնաւորութեան, անհատական ուժին, տրամադրութեան, շատ ենք դժուարանում անշուշտ նրա հետ խօսալիս. իմացած կը լինէք, թէ մօտաւորապէս ինչ ձեւի գործունէութեան է ձգտում։ Խնդրենք այդ մասին ձեր գիտեցածը գրել մեզ։ Աւելորդ չէ նոյնպէս իմանալ, անձնական միջոցներ ունի, թէ ոչ՝ իր անձնական ապրուստը հոգալու համար։*

Mardet-*ին*[?] *մեր Պոլսոյ ընկերները ծանօթ են եւ հետը գործ են ունեցել։ Այնքան էլ վստահելի անձնաւորութիւն չի երեւում. աւելի աշխատում է գաղտնիքներ իմանալ, քան թէ օգտակար լինել։ Հանըմեանի*(3) *համար մասնաւորապէս ոչ մի բան չի կարելի անել, անմեղ անհատ է ներկայացնել նրան, որովհետեւ նա համարեա ամէն ինչ-բան իր վերաբերմամբ խոստովանել է։*

Գալով ձեր ձեռնարկին՝ նիւթ մատակարարել եւրոպական թերթերին,— աւե-

լորդ է ասել, որ շատ լաւ բան է, եւ մենք ամէն կերպ պատրաստ ենք ձեզ ուղարկելու։ Մեր մի քանի ընկերները խոստացել են բայց դժբախտաբար սրտով չեն կպել։

Զգիտենք, թէ ինչ ձեւով էք ձեռնարկելու այդ գործը. գուցէ կանողանանք լայնացնել եւ մի որոշ պաշտօնական կերպարանք տալ։ Այն ժամանակ դժուար չի լինիլ ձեռնարկել Ֆրանսերէն լեզուով մի փոքրիկ թերթի հրատարակելը։ Եւրոպական թերթերը կարող են այնուհետեւ այդ թերթից արտատպել յօդուածները։ Այդ թերթի միջոցով մենք կարող կը լինենք հրապարակ հանել շատ բան, ինչ այժմ անյայտ է մնում, կը հերքենք եւրոպական մամուլում (օր. Մէշվերէթում(4)) երեւացող զանազան անհեթեթ կարծիքներ եւայլն։ Այդ տեսակ մի բերան մենք վաղուց էինք ձրգտում ունենալ, բայց զանազան պատճառներով անիրագործելի էր մնում մեր մտադրութիւնը։ Ի միջի այլոց հարկաւոր է ընդհանուր ժողովի հաւանութիւնը։ Եթէ ձեզ յաջողւի իրագործել այս առաջարկութիւնը, շատ լաւ օգուտներ կարող է ստանալ Դաշնակցութիւնը։

Թէ այս ձեռնարկի եւ թէ մեր գործունէութեան եղանակի մասին,— որ դուք չօշափում էք ձեր վերջին նամակում,— որոշ եզրակացութեան յանգելու համար ձեր ներկայութիւնը անհրաժեշտ է այստեղ։ Ինչպէս տեսնում ենք, դուք դեռ եւս չէք որոշել, չէք ճանաչել մեր գործունէութեան գլխաւոր ուղղութիւնը եւ ձեր հայեացքը չէք հեռացնում այն կէտից, որի գործունէութիւնը միայն երկրորդական, լրացուցիչ էր այս անգամ։ Իսկ դա մեծ նշանակութիւն ունի ժողովրդի մտքին որոշ ուղղութիւն տալու համար։

Վերջացնելով նամակը, աւելորդ չենք համարում ձեր նամակի մի կէտի մասին եւս մի քանի խօսք գրել։ Մեր խօսքը ձեր հետեւեալ տողերի մասին է. «Ընկերներ, կը փափաքէի մի փոքրիկ դիտողութիւն ընել <u>եթէ ներելի է դիտողութիւն ընել եւ կարծիք յայտնել</u>»։ Այս տողերը մեզ զարմանք են պատճառում, քանի որ ձեզ քաջ պէտք է յայտնի լինի, որ ոչ թէ իւրաքանչիւր կոմիտէ, այլ մինչեւ իսկ իւրաքանչիւր մի անհատ կատարեալ իրաւունք ունի ամէն տեսակի նկատողութիւններ անելու։ Այդ անում են մեր բոլոր ընկերները. արել էք եւ դուք. ինչո՞ւ այդ տեսակ տարակուսանք պէտք է այսօր ծագի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Զարիֆեան – ծածկանուն Յովհաննէս (Ժան) Լոռու-Մելիքեանի:
2.- Տօնապետեան – Լոնտոն հաստատուած գործիչ (անկուսակցական):
3.- Հանըմեան Արտաւազդ, Եգիպտոսի ընկերներէն:
4.- Մէշվերէթ – թուրք ազատական Ահմէտ Ռիզայի խմբագրութեամբ Փարիզ լոյս տեսնող լրագիր:

198

Պատճէններու մատեան No 83, *էջ* 166

28 *սեպտ.* 97

Արվախին(1), *Վառնա*

Ընկեր,

Քո երկու հեռագիրներն ստացուած են։ Սպասում ենք նամակիդ։ Արդեօք խելքդ կտրել է գումարի մի մասը փոստայով ուղղակի մեզ ուղարկել, թէ անցեալ անգամուայ նման Լոնդոնի միջոցով պէտք է տեղափոխել։ Դրութիւններս շատ վատ է։

Պոլսից Թորգոմը(2) *եւ Արսէնը, որի մի նամակը ներփակեալ ուղարկում ենք, գրում են, որ խումբը փողի սաստիկ պակասութիւն ունի։ Թորգոմը եւ Իտարէի* [?] *եղբայրը վտանգւած են։ Անցագրի եւ դրամի պատճառով փախչել չեն կարող։ Սիւնիի*(3) *միջոցով աշխատիր որքան կարելի է շուտ Պոլիս դրամ հասցնել, միայն փոքրիկ գումարները։ Պոլիս մնացած* 100 *ոսկին թողէք մնայ. նրա տեղը թող տղերանցից ոչ ոք չիմանայ եւ պահողին չճանաչի։*

Յայտնէք ուր հարկն է, որ այդ տեսակ խնդիրներով դիմեն ոչ թէ մեզ, այլ ուղղակի ձեզ։

Համարը(4) *լոյս կը տեսնի մի քանի օրից յետոյ։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Արսէնին մենք չենք ճանաչում. գուցէ գերմանական հիւպատոսարանին տղան է։ Սիւնին ճանաչելիս կը լինի, թող մեզ էլ յայտնի։

Լսում ենք, որ Սիւնին ու Միսակը վերադառնալ են ցանկանում իրենց տեղերը։ Մեր կարծիքով դա անժամանակ է, քանի որ ներկայումս երկուսի դրութիւնն էլ անապահով է։ Աշխատէք յետ կանգնեցնել այդ մտքից։

ՆՈՅՆ

Տամատեանը(5) *վերջնականապէս զգւած հնչակեաններից մեզ է դիմում միանալու համար։ Ճանաչում ես, ինչ բանի կարող է օգտակար լինել։ Նա այժմ Պարիզից Լոնդոն է մեկնել, ուր սպասում է մեր պատասխանին։*

Այստեղ էր եկել Զերազը(6)*։ Ինչպէս երեւաց, փորացաւ ունի. ուզում է այստեղ տեղափոխւել։ Շատ գովասանքով է խօսում մեր մասին. միայն տաքտիկան չի հաւանում. նրա կարծիքով* 1) *ամբողջ ուշադրութիւնը պէտք է դարձնել* .....(7) *բարձրացնելու համար։ Մեր ասելիքը ասացինք, վերջ ի վերջոյ համաձայնեց, որ հայդուկային փոքրիկ գործունէութիւնը անհրաժեշտ է, բայց եւ այնպէս խորհուրդ էր տալիս ամբողջ ուշադրութիւնը Զէյթունի վրայ դարձնել, ուր ուղղել եւ սահմանագլխի հերոսներին*(8)*։*

ՆՈՅՆ

1.- Արվախի – ծածկանուն Յավոր Վարդ-Պատրիկեանի, խմբագիր Վառնայի «Շարժում» լրագրի:
2.- Թորգոմ – ծածկանուն Սերեմճեանի Արտաշէսի:
3.- Վահէ Սիւնի – ծածկանուն Թիրեաքեան Վահէի:
4.- Խօսքը «Դրօշակ»ի յաջորդ համարի մասին է:
5.- Միհրան Տամատեան, Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան ղեկավարներէն:
6.- Մինաս Չերազ:
7.- Լուսանցքի վրայ գրուած մօտ երկու տող անընթեռնելի, ուր Չերազ յայտնած պիտի ըլլայ, որ համաձայն չէ մասնակի շարժումներուն, այլ պէտք է ուժերը կեդրոնացնել Զէյթունի մէջ (Տես այս մասին 25 Սեպտ.ի գրութիւնը):
8.- Սահմանագլխի հերոսներ – Ակնարկութիւն հաւանաբար Խանասորի արշաւանքին մասնակցած մարտիկներուն:

199

Պատճէններու մատեան No 83 *էջ* 169

3 *Հոկտ.* 97

Պ. Զարիֆեանին(1), *Պարիզ*

Ընկեր,

Այս ըոպէիս ստացանք Argus-*ի*(2) *հաշիւը։ Ձեր գրածին հակառակ ամսական* 30 fr.-*ի փոխարէն հաշուել են հատով, իւրաքանչիւր կտորը* 0.30 fr.։ *Ուղարկուած է ընդամէնը* 258 *կտոր, որ կ՚անի* 77 fr. 40 *ս*[*անտիմ*]։ *Եթէ մենք իմանայինք, թէ կտորով են հաշուելու, ի հարկէ չէինք համաձայնի, որովհետեւ մեզ ուղարկուել են կտորներ, որոնք ոչ մի կապ չունին մեր խնդրի հետ։ Բացի այդ <u>միեւնոյն բովանդակութեամբ</u> շատ հատուածներ են ուղարկած, միայն զանազան լրագրներից քաղած։*

Խնդրենք այս խնդրի համար դիմէք, բացատրութիւն պահանջէք եւ մեզ հաղորդէք շուտով։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Հարցրէք, հաշուե՞լ են արդեօք [անընթեռնելի քանի մը բառ. տես այս մասին յաջորդ գրութիւնը] *պատարագի արարողութեան նկարագրութիւն կամ մի այսպէս բան, որից ուղարկել էին մօտ* 20 *հատ եւ որը մենք վերադարձրինք իսկոյն։*

1.- Զարիֆեան – ծածկանուն Յովհ. Լոռու-Մելիքեանի:
2.- Argus – Փարիզեան մամլոյ գործակալութիւն, որ ըստ պատուէրի թերթերու կտրօններ կ՚ուղարկէր պահանջուած հասցէին:

200

Պատճէններու մատեան No 83, *էջ* 170-171

4 *հոկտ.* 97

Պ. Զարիֆեանին, Պարիզ

Ընկեր,

Ստացանք Argus-*ի հաշիւը։ Թէեւ դուք գրել էիք, որ ամսական* 30 fr. *արժէ, սակայն հաշւած էր կտորով, իւրաքանչիւր կտորը* 30 *ս*[*անտիմ*]*։ Իրենց հաշւով ուղարկւած է* 258 *կտոր, որ կանի* 77 fr. 40 c.*։*

Ի հարկէ դուք կը պարզէք այս հանելուկը, իսկ ապագայի համար մենք հետեւեալն ենք առաջարկում։ Համաձայն ենք, որ հաշիւը լինի կտորով, իւրաքանչիւրը 30 *ս*[*անտիմ*]*, սակայն մենք չենք կարող հաշւի մէջ մտցնել մի ինչ որ եպիսկոպոսի պատարագի արարողութեան նկարագրութիւնը* (*ուղարկւած մօտ* 20 *հտ.*)*, միայն նրա համար, որ եպիսկոպոսի մականունը սկսւում է* arm. *խօսքով, կամ Ռուսաստանի միօրեայ հաշւեգրութեան մասին տեղեկութիւնը, ուր կայ* Arménie *խօսքը եւ այլն... Մէկ է, մենք աւելորդ ենք համարում ստանալ միեւնոյն լուրն տասը լրագիրներից կտրած։*

Ուրեմն եթէ համաձայն են ուղարկել մեզ մի մի օր[*ինակ*] *եւ եթէ մի որեւէ լուր միայն մեծ լրագրից կտրելով կ՚ուղարկեն, այն ժամանակ թող շարունակեն, եթէ ոչ՝ պէտք չէ։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

201

Պատճէններու մատեան No 83, *էջ* 174-175

5 *հոկտ.* 97 *թ.*

Ընկեր,

Քո Սեպտ. 12, 14 *նամակները, Սիւնիի* 9 *սեպ., Մարի, Սեպուհի, Գիսակի*(1) *նամակների պատճէնները ստացւած են։ Ստացւած է նաեւ* 1,200 fr.*։ Զը գիտենք, թէ ինչու այդքան քիչ ես ուղարկել. ի նկատի պէտք է ունենայիր եւ այստեղից տրւելիք ճանապարհածախսերը։ Փոխադրիր դարձեալ* 1,800 fr. *Թիֆլիզ էինք դիմել, պատասխանել էին, թէ ձեր* <u>*ուղարկած գումարից*</u> *ուզենք։* 1,800 fr. *կարող ես եւ Անգլիայի վրայով փոխադրել, վնաս չունի, թող քիչ ուշանայ։ Մի երկու օր առաջ ուղարկած մեր հեռագիրը* 300 fr. *մասին չեղեալ նկատիր։ Կարծելով թէ դարձեալ Անգլիայի վրայով ես փոխադրել, հեռագրեցինք, որ գոնէ* 300 fr. mandat-*ով ուղարկես շուտով, մարկաների, ճաշի* [?] *փող չունէինք։*

Սահակ Մարգար անունով մէկը ձերբակալւած է Գալացում իբր յեղափոխական։ Մօտը շատ թղթեր, նամակներ են գտել։ Քանի որ այդպիսի խստութիւններ կան,

ի՞նչ միտք ունի, չենք հասկանում նամակներ պահելը։ Հիմա ամէն տեղ անհրաժեշտ է խիստ զգուշութիւն, գաղտնապահութիւն։ Ո՛վ գիտէ, ինչ չի կարող պատահել։ Հարկաւոր է շատ զգոյշ լինել անունների վերաբերմամբ։

2, 15, 13, 34, 25 [Աշոտը]-ը(2) գրել էր իր մտադրութեան մասին եւ պատասխանը ուզել էր քո հասցէին։ Թող շատ էլ չչտապի ներկայ խառն պայմաններում. կարող է զուր տեղը վտանգուել։ Սիւնին այդտեղ է. դէ, նա լաւ կ'իմանայ պայմանները. հարկաւ նրա հետ կը խորհրդակցի։

Սիւնին թող իր կարծիքը Ցոլակի մասին գրի Ծովափ(3)։ Այդ պարոնը, որքան մեզ յայտնի է, բացի լոկ հետաքրքրութիւնից ուրիշ բան չի կարող առաջարկել Քարաժայռի(4) խնդրին։ Նրա մասին հարցրել էին մեզ, բայց մենք չգիտէինք, թէ դա N-ն է։ Ինքը լաւ տրամադրւած է դէպի մեզ եւ մեր փոքրիկ յանձնարարութիւնը կատարել է։

Գրաշարի պէտք չունինք այլ եւս։ Այժմ կանոնաւոր կը լինի թերթի հրատարակումը։

«Զոհ» կոմիտէն(5) մի տեղեկագրով գանգատւում է Կ. կոմիտէի դէմ։ Գանգատը մեր կարծիքով չափազանցութեան է հասցրած։ Դրա մասին մենք մեր կողմից կը գրենք. միայն թող Սիւնին ինքը աշխատի բացատրել իրենց ճշմարտութիւնը, միայն թէ Աստուած սիրէ, աշխատի աւելի չլարել յարաբերութիւնները։ Կրկնում եմ մի անգամ եւս դրամի մասին։ Ուղարկե՞լ էք, թէ ոչ։

Սիւնին մեր ուշադրութիւնն է դարձնում 22, 7, 22, 4, 13, 9, 7 [Պետրոսի]-ի վրայ։ Մենք դժւարանում ենք որեւէ որոշ բան ասել, որովհետեւ մեզ համար բոլորովին մութն է, թէ ինչու պէտք է ասեն ներս մտնող 8-ի խումբը եւ թէ այդ ինչ գործ է, որը պահանջում է 1,000 ռսկի։ Եթէ 1000 ռսկով են սկսում, 100000[ով] պէտք է վերջացնել. մեզ շատ կասկածելի է թւում, որ մեր <u>իսկական</u> ոյժը ի նկատի առնելով ծրագիր սկսին այնտեղ։

Քանի որ Ժակը հեռացել է, ձուլիչները մեզ շատ են հարկաւոր. չպէտք է դրանց ձեռքից թողնել։

Եթէ ժամանակ չունիս փ-ի բրօշիւրներով զբաղւել, գրիր մեզ։

Յ. Գ.— «Իրաւունքին» յայտնիր Բանասիրականի բաժնում տպագրելու եւ ապա առանձին լոյս ընծայելու։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Գիսակի նամակի մասին մի երկու օրից յետոյ։

ՆՈՅՆ

1.- Սիւնի – ծածկանուն Թիրեաքեան Վահէի, Մար՝ Տէր Մարտիրոսեան Միքայէլի, Սեպուհ՝ Թիրեաքեան Հայկի (Հրաչ), Գիսակ՝ Սերենկիւլեան Յովհաննէսի (Վարդգէս)։

2.- Թուանշային ծածկագիրը կը վերծանուի՝ Աշոտ, որուն բուն անունը Եղիկեան Կարապետ էր։

3.- Ծովափ – ծածկանուն Տրապիզոն քաղաքի։ Ցոլակը՝ հաւանաբար Եսայեան Սեդրակն է։

4.- Քարաժայռ – ծածկանուն Տերսիմի։

5.- «Զոհ» կոմիտէն Կ. Պոլսոյ Սամաթիա թաղամասի կոմիտէութիւնն է, մեծամասնութեամբ մարտականներէ բաղկացած։

202

Պատճէններու մատեան No 83, *էջ* 176

6-*ին հոկտ.* 97 *թ.*

Սիրելիս(1),

Լաւ եղաւ, որ Գիսակի(2) *նամակի պատճէնը ուղարկեցիր, դրա շնորհիւ պարզըւեցան մի քանի թիւրիմացութիւններ, որոնք մնալով կարող էին ապագայում մեծ խնդիրներ դառնալ։*

Գիսակը իր նամակում, որ ուղարկում ենք ներփակեալ, խոստովանում է, որ իր եզրակացութիւնները շատ արագ են կազմուած եւ հիմք չեն ունեցել։ Այստեղ մեծ դեր են խաղացել ոչ թէ փաստերը, այլ ուրիշներից լսած պատրաստ եզրակացութիւնները։ Ինչ որ է, այս թիւրիմացութիւնները պարզւելուց յետոյ կարծում ենք, որ կարող կը լինես հետը միասին գործել։ Անձնապէս քո դէմ իր նամակի մէջ համարեա ոչինչ չկայ. գլխաւորապէս յարձակւում է մեզ վրայ, ճիշդն ասած՝ Ռոստոմի վրայ։ Գիսակի խոստովանութիւնը մեզ բոլորովին գոհացրեց, մնում .....(3) *Սիւնիին գրած նամակը. եթէ դու էլ գոհ մնաս, հեռագրիր իսկոյն։*

Անյարմար լինելով Դրօշակում որեւէ կերպով զբաղւել այս կամ լրագրի յարձակումներով, աւելի յարմար ենք գտնում մի քանի նկատողութիւններ ուղարկել «Իրաւունքում» զետեղելու համար։ Օրինակի համար այսօրւայ Հնչակի պատմածը սահմանագլխում պատահած ընդհարումների մասին չի կարելի լռութեամբ անցկացնել։ Այդ աստիճանի լրբութիւն արդէն երեւակայել չի կարելի։ Անպատճառ աշխատիր մի բան գրել, ծաղրել այդ յօդուածը։ Ի միջի այլոց ուղարկիր Ամերիկայի կետրոն. կոմիտէի հասցէով մի օրինակ «Իրաւունք»։ Շուտով կը գրենք բաժանորդներ հաւաքելու մասին, բայց թող օրինակը տեսնեն։

Հասցէն՝ Daschnactzakan Central Committee,
520 P.O. Box
Lowell, Mass. Etats-Unis.

1.- Անյայտ կը մնայ նամակին որուն եւ ուր ուղղուած ըլլալը:
2.- Գիսակ – ծածկանուն Յովհ. Սերենկիլեան (Վարդգէս):
3.- Անընթեռնելի երկու բառ:

203

Պատճէններու մատեան No 83, *էջ* 177-178

7 Հոկտ. 97

[*Իզմիր*]

Սիրելիք,

Ստացած են ձեր սեպտ. 12/24 *եւ* 12/26 *նամակները։ Ձեր առաջարկած նւիրատուութեան տպագրելու ձեւը շատ անյարմար ենք գտնում։ Ինչպէ՞ս կարելի է մի մասը ստանալով՝ ամբողջը տպագրել։ Նախ, եթէ այս կամ այն պատճառով, անկախ բոլորովին թէ ձեզանից եւ թէ նւիրատուներից, մնացած գումարը ստանալ չկարողացաք, ինչպէս պէտք է հաշիւ տանք. պակաս գումարը որտեղի՞ց կը լրացնէք։ Երկրորդ, ստանալով գումարի մի մասը, իսկ տպագրելով ամբողջը, դուք կասկածանքի տակ կը ձգէք մեր նւէրների ճշդութիւնը։ Ձեր նւիրատուները իրաւունք կ'ունենան համոզւելու, որ մեր տպագրած բոլոր խոշոր գումարները ճիշդ չեն։ Դա մեր ընդհանուր վարկը կը ձգի։ Ուստի, գիտենալով հանդերձ, որ ամբողջի տպագրութիւնը մի քանի տեղական օգուտներ կ'ունենայ, բայց ի նկատի առնելով վերոյիշեալը, նպատակայարմար ենք համարում չչեղւել մեր սովորութիւնից՝ տպագրել միայն այն, ինչ ստացւում է։*

Ստացանք այսօր 12, 29, 4, 34, 19, 5, 2, 4, 7, 35 [Մկրտչեանց]-*էն* 690 fr. — *յետագայ վճարելիքների մասին ոչ մի խօսք։ Մենք կը յայտնենք մեր շնորհակալութիւնը եւ կ'աւելացնենք, որ այդ մասին կը հաղորդւի ուր հարկն է։ Որովհետեւ այդ մարդը առաջներում էլ կամովին վճարում էր, անտեղի կը լինէր որեւէ ճնշում բանեցնել իր վրայ, թողնելու է իր կամքին։*

2, 34, 4, 32, 6, 29, 6, 5, 4, 25 [ատրճ[ա]ն[ա]կներ]-*ը կ'ուղարկենք աւելի փոքր, բայց լաւ տեսակից։*

«*Իրաւունքի մը գործադրութիւնը*» *թերթից այլեւս չկայ։*

Ձեր հարստանալու միջոցներով շատ էք ոգեւորւում։ Ձեր ոգեւորութիւնը հաղորդւում է մեզ եւս, բայց այդ չի խանգարում մեզ քիչ թերահաւատ գտնւել։ Ժամացոյցի մասին ոչինչ չենք կարող ասել. ի հարկէ փորձով գիտէք դրա օգտաւէտ լինելը, իսկ ինչ վերաբերում է մազերին [Անընթեռնելի մէկ բառ] *սեւ գոյն տալու ջանքերին, թոյլ տւէք մեզ նկատելու, որ ձեր նոր բարեկամի ջանքերն ապարդիւն կը լինեն, մանաւանդ որ դեռ եւս այնպիսի ապակի չի գտնւած, որ ամէն կրակի դիմանայ։ Իսկ եթէ ապակին անհրաժեշտ չէ, նրան կարելի է փոխարինել մի ուրիշ նիւթով։ Կարելի է օգտւել նաեւ ոսկերիչների գործածած հալելու ամաններով, որ շատ դիմացկուն են սաստիկ ջերմութեան իսկ։*

Աւելի գործնական է վերջին միջոցը՝ էդ[լարդի] *առաջարկած։ Բայց ունէ՞ք դրա համար բաւական ոյժ։ Կազմէք մանրամասն ծրագիր, հաշւեցէք, թէ ձեզ ինչ է հարկաւոր, ինչ ունէք, ինչ է պակաս։ Միւս* 29, 36, 12, 7, 34 [կոմիտէն]-*երը կարող են օգնութեան հասնել փորձառու մարդկանցով եւ այլն...*

11, 7, 6, 2, 23, 13, 4, 28, 25 [զինագործ]-*ը այդ տեսակ պայմաններում մեզ համար աւելորդ է։ Ազատ երկրում պատրաստ կարելի է ձեռք բերել, պատրաստելու հարկ չկայ։ Բացի այդ՝ Վահանն էլ ձեզ հաղորդած կը լինի, որ այդ տեսակ մարդկանցից*

բաւական վստահելի ընկերներ ունինք։

Դեռ եւս չենք ստացել ոչ գինին եւ ոչ Վահանի երկար նամակը։ Գինու հարցը դժուար է։ Հագիւ թէ Պարիզի մեր ներկայացուցիչը ժամանակ, ընդունակութիւն եւ ցանկութիւն ունենայ գինի վաճառելով զբաղուել։ Կը գրենք իրեն։

Բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «*ԴՐՕՇԱԿԻ*»

204

Պատճէններու մատեան No 83, ***էջ*** 180

7 *հոկտ.* 97 *թ.*

[***Օդեսա, Կարմրաթշիկին***(1)]

Սիրելիս,

Նամակիս պատասխանն ստացայ։ Քո տուած տեղեկութիւնները այնքան էլ անյուսատ չեն, որպէս զի գործ չունենանք Հրանտի հետ։ Սպասում եմ Յովհաննէսի կարծիքին։

Յակոբի լուսանկարն ունինք։ Կուուածաղիկը(2) ***հիւանդ է չատ։ Հարստութեան մեծ մասը կամ յարքունիս է գրաւուած կամ ձեռքից գնացել է։ Բայց եւ այնպէս մի մասը մնացել է եւ յոյս կայ չուտով կազդուրուի։***

Ընդունիր բարեւներս՝
Քո Ռ.

P. S.— ***Իմ երկար նամակները ստանո՞ւմ ես, թէ ոչ։ Բան չես գրում։***

1.- Կարմրաթշիկ – ծածկանուն Մարգարեան Մարտիրոսի։
2.- Կոուածաղիկ – ծածկանուն Պոլսոյ։ «Հիւանդ է շատ», կը նշանակէ ձերբակալութիւնները շատ են։

205

Պատճէններու մատեան No 83, *էջ* 185-186

13 *Հոկտ.* 97

Պ. Զարիֆեանին(1), *Պարիզ*

Ընկեր,

Argus-*ի*(2) *հաշիւը ստացուած է եւ* 45 fr. *վճարեցինք։ Անցեալի հաշիւը փակուած է ուրեմն, իսկ ապագայի համար, կրկնում ենք, հաշիւը թող լինի կտորներով, պայմանաւ միայն, որ հաշուի չառնուեն մի որեւէ նիւթի վերաբերեալ աւելորդ կտորները։ Եթէ համաձայն չեն, թող դադրեցնեն ուղարկելը։*

Տօնապետեանի կապը Աբգար Յովհաննիսեանի եւ մանաւանդ Եզեանի հետ քիչ կասկածելի են դարձնում նրան, տեսնենք։ Դժուարանում ենք որոշ բան գրել իրեն, սպասում ենք մեր մի ընկերոջ կարծիքին։

Ձեր ձեռնարկի համար ուղարկում ենք ձեզ գերմանական մի կարեւոր եւ ազդեցիկ շաբաթաթերթի համարը, ուր նշանաւոր ճանապարհորդ Ֆրանց Ֆիշերը իբր ականատես պատմում է մեր արշաւանքի մասին(3)։ *Այդ հեղինակաւոր անձնաւորութեան կարծիքը կարող է մեծ նշանակութիւն ունենալ եւրոպացիների աչքում։ Եթէ* [անընթեռնելի մէկ տող] *առանձնապէս տալ խմբագրութիւններին տպագրելու համար։ Ձեր ձեռնարկի դիւրութեան համար կարող է օգտակար լինել մի ռուս գրող, որը աշխատակցած է տեղւոյդ լրագիրներում, ուստի եւ կապեր ունի խմբագիրների հետ։ Եթէ կարիք էք զգում մի այդպիսի օգնականի, գրեցէք շուտով, որ դիմենք նրան համաձայնութիւնն առնելու համար։*

Ուղարկած դրամը (165 fr.) *ստացած կը լինէք արդէն։ Դրանով պէտք է գնել* Bergmann-*ի երկու ատրճանակ փոքր տեսակից* (No 2) *եւ ապսպրէք, որ Մարսէյլի մեր ընկերոջ հասցէին ուղարկեն իսկոյն։*

Մոռացանք գրել, որ 2 *ատրճանակների հետ հարկաւոր է գնել* 400 *փամփուշտ եւս։*

Խնդրենք յայտնել Նանսիի մեր ընկեր պ. Բաղդասարեանին (62, Rue Guy Lussac), *որի հետ անշուշտ ծանօթացած կը լինէք արդէն, որ բացի յուլիս* 25-*ի արշաւանքից նոր արշաւանք տեղի չի ունեցել քրդերի հետ։ Նոր արշաւանք առայժմ չի նախատեսւում, այնպէս որ նոր մարդկանց պէտք չկայ առայժմ։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Խնդրենք իսկոյն եւեթ մեզ հաղորդել ատրճանակների առաքումը։

ՆՈՅՆ

1.- Յովհ. Լոռու-Մելիքեանին։
2.- Argus-ի մասին տեսնել Ռոստոմի 3 հոկտ.ի նամակի թիւ 2 ծանօթագրութիւնը։
3.- Խօսքը կը վերաբերի Խանասորի արշաւանքին։

206

Փաստ 36*բ*-42

Ժընեւ, 21 *հոկտ*. 1897

Կիպրոսի կոմիտէին
Ընկերներ,

Ստացուած են Սեպուհի սեպտ. 3/15, 18/30 *նամակները, ինչպէս նաեւ Վահանի սեպտ*. 12 *եւ Մարի*(1) 10 *սեպտ*. *նամակների պատճէնները*։

Նախընթաց բոլոր ձեր նամակները մեզ մտատանջութեան մէջ էին ձգել։ Ինչպէս յանկարծ ամբողջ խումբը միանգամից երկիր պէտք է տեղափոխուէր(2)։ *Այդ ի՜նչ ծրագիր է, որ հէնց առաջին քայլի համար պահանջում է* 1,000 *ոսկի, իսկ յետոյ* 100 *հազար ոսկիներ։ Որտեղից յոյս ունէք ստանալ այդ առասպելական գումարը... Սրա վրայ աւելացրէք եւ այն, որ մենք եւս կասկածանքով էինք վերաբերում դէպի Փափազեանի ու Թադէոսեանի ուժերը։*

Ձեր վերջին նամակը մեզ հանգստացրեց։ Կատարելապէս համաձայն ենք ձեզ հետ, որ պէտք է մէկ մէկ երկիր(3) *մտնել, որ խմբով անցնելը ոչ միայն անկարելի է, այլ եւ վտանգաւոր ամբողջ ձեռնարկի համար։ Շատ պէտք է զգոյշ վարուել մանաւանդ այժմ, եթէ միայն ճիշտ է Եգիպտոսից մեզ հասած մի մասնաւոր լուր, իբր թէ կառավարութիւնը յաջողել է գտնել հնչակեանների պահեստները եւ բազմաթիւ ձերբակալութիւններ կատարել։ Իսկ ինչ վերաբերում է ձեզ հարկաւոր գումարին, մեր կարծիքով առայժմ պէտք է բաւականանալ եղածով։ Առաջիկայ Ընդհանուր Ժողովում Զէյթունի հարցին գլխաւոր տեղը կը տանք եւ կը մտածենք անհրաժեշտ գումարի աղբիւրի մասին։*

Թադէոսեանի վերաբերմամբ մենք մեզ կատարելապէս խաբուած գտանք հէնց առաջին քայլից. իսկոյն ի հարկէ այդ բանը հաղորդեցինք Աղեքսանդրիայի կոմիտէին, թողնելով իրեն՝ կոմիտէին վարուել նրա հետ, ինչպէս ինքն է ուզում։ Կասկած չկայ, որ այժմ նա էլ յուսախաբ եղած կը լինի,- առաջներում գովում էր Թադէոսեանի եռանդը.- ուրեմն կարող էք կարճ կտրել. հեռացնել նրան բոլորովին։ Ուղարկէք Աղեքսանդրիա. թող այնտեղ մի գործ գտնի իր համար։ Ռոստոմը կը դիմէ մասնաւորապէս նրա փեսային։ Գուցէ նա քիչ նիւթական օգնութիւն հասցնի։

Կարծում ենք որ վերջ ի վերջոյ ձեր դոկտորն էլ մի օրին է խաղալու։ Քանի անգամ ձեզ զգուշացրել են. բայց ուշադրութիւն չէք դարձնում։

Վահանը(4) *Ռուսաստանի փորձերից խրատուած պէտք է լինի, որ հարցը հրացան ունենալու մէջ չէ, այլ տեղափոխելու, բայց եւ այնպէս նա առաջարկում է դեպոյում կուտակել։ Աւելի լաւ չէ՞ քիչ քանակութեամբ գնել եւ փոխադրել։ Եթէ յաջող լինի, հետզհետէ աւելացնել քանակութիւնը։ Բոլգ*[*արիա*] 100-*ը*, *Վարդի*(5) *գրելով, դժուար է առայժմ տեղահան անել։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Վահանը՝ Նիկոլ Մատինեանն է, Մարը՝ Միք. Տէր Մարտիրոսեան։
2.- Խօսքը կը վերաբերի Զէյթունի 1895 թ. ապստամբութենէն ետք, 1897-ին Դաշնակցութեան նախաձեռնութեամբ ապստամբութեան նոր փորձին մասին։ Սակայն Կիպրոս հաւաքուած յեղափոխականներու ձերբակալութեան եւ կուտակուած զինամթերքի գրաւման հետեւանքով, ծրագիրը պիտի ձախողէր։
3.- Երկիրը, այս պարագային, Կիլիկիան է։
4.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի։
5.- Վարդ-Պատրիկեան, ծանօթ նաեւ Վարդօ, Արվախի ծածկանուններով։

207

Փաստ. 36բ-43

Ժընեւ, 25 *հոկտ.* 1897

Կիպրոսի կոմիտէին
Ընկերներ,

Մեր նամակը (21 *հոկտ.*) *ուղարկելուց մի երկու օր յետոյ ստացանք Սեպուհի*(1) *նոր նամակը, որով յայտնում է մեզ ապրանքի ձերբակալելու մասին։ Այս դէպքը միայն հաստատում է մեր նախընթաց նամակում արած դիտողութիւնը, թէ հարցը ապրանք գնելու մէջ չէ, այլ պահելու ու փոխադրելու եւ թէ գործը պէտք է սկսել փոքր քանակութիւնից։ Նոյն ոգով երկու նամակ ստացանք Թիֆլիզից։ Այնտեղ էլ մեծ թերահաւատութեամբ են վերաբերւել դէպի ձեր նախկին ծրագիրը եւ անհրաժեշտ են դատում Թադէոսեանի անմիջական հեռացելը։ Բանից դուրս է գալիս, որ դա զինագործութիւն էլ չգիտէ։*

Զգիտենք, թէ այս կրած անյաջողութիւնից յետոյ վերջ ի վերջոյ ինչ ընթացք կը բռնէք։ Միայն մի բան մեր կողմից խորհուրդ կը տանք՝ երբեք չչտապել, գործը տանել կամաց-կամաց եւ հիմնաւոր կերպով։ Մեր առաջին գործը պէտք է լինի ստոյգ տեղեկութիւններ ունենալ երկրի ուժերի, ժողովրդի տրամադրութեան մասին։ Առանց այդ դրական տեղեկութիւնների, հիմնւած օտարների, զանազան Տիգրանների զեկուցումների վրայ անկարելի է լուրջ ծրագիր կազմել։ Մի մոռացէք.— դուք ինքներդ էք միշտ կրկնում,- թէ հիմնական գործ պէտք է բռնւի եւ ոչ թէ «ցոյց» անւի։ Մինչեւ իսկ ի նկատի ունենալով կառավարական վերջին խստութիւնները, որ անհրաժեշտաբար տեղի պէտք է ունենայ հնչակեանների ձերբակալումներից յետոյ, աւելի նպատակայարմար կը լինի, եթէ ձեզանից միայն մէկը կամ երկուսը նախ գնան, իսկ յետոյ միւսներն էլ կարող են մուտք գործել։

Ինչ վերաբերում է «մեծ գումարի» հարցին, որը բարեբախտաբար թողւած է ձեր կողմից, բայց ոչ բոլորովին, պէտք է ասենք, որ դա էլ շտապելու արդիւնք է։ Սաստիկ սխալւում է մասնաւորապէս Մարը(2)։ *Նրա գրելով զէյթունցին գիտէ, որ իր շարժւելու համար հարկաւոր են հարիւր հազարներ, ուստի անհրաժեշտ է նրա վստահութիւնը ձեռք բերելու համար առաջին անգամից ցոյց տալ նրան մեծ գումար, օր*[*ինակ*] 10,000 *ռ.։ Այդ տաքտիկան ամենավտանգաւորն է. եթէ հնչակեանները լոկ խոստումներով էին կերակրում զէյթունցիներին եւ խաբում, մենք էլ կը խաբենք նրանց մեր* 10,000-*ով, որովհետեւ մենք ոչ մի յոյս չունենք այժմ, որ հարիւր հազարներ կարող կը լինինք հասցնել։*

Ամենաուղիղ ճանապարհն է ոչ թէ 100,000*ների յոյս ներշնչել, այլ ընդհակառակը ոչինչ չխոստանալ առայժմ. յետոյ այն, ինչ իսկապէս կարող ենք հասցնել։ Վահանի գրելով Ոսկեհանքը*(3) *կարող է ձեր նախնական ծախքերը հոգալ, իսկ Վարդի բռնած ընթացքի մասին կը գրուի իրեն։ Ի միջի այլոց, ի նկատի ունեցէք, որ Վառնայի դրամի վրայ շատ էլ կարելի չէ յոյս դնել։ Այնտեղ կար* 7,000 fr. *ընդամէնը, որի* 3,000 fr.*ը խմբագրութիւն է փոխադրւած. եւ խմբագրութիւնն այժմ ուրիշ աղբիւր չունենալով* (*Թիֆլի*[*զի*]*ց գրել են մեզ, թէ իրենք անկարող են ուղարկել եւ թէ Վառնայի փողից վերցնենք*), *ստիպւած կը լինի ապագայում եւս օգտւել այդ դրամից։*

Եթէ բոլորիդ յաջողւեց ներս մտնել, այն ժամանակ ի հարկէ Կիպրոս մարդ է

հարկաւոր։ Բայց չէ որ այդտեղ կան ուժեր։ Եթէ Վահանը չկարողացաւ մնալ այդ-տեղ, Եգիպտոս գնաց, կարող էք փոխադարձ համաձայնութեամբ Խաժակին(4) *կանչել, նա ինքը տրամադիր է։ Ուրիշ որտեղի՞ց մարդ գտնենք։ Մելիքը*(5) *Ամերի-կայում է կապուած. իսկ Ռոստոմը չի կարող խմբագրութիւնից հեռանալ, որովհե-տեւ այստեղ դեռ նոր մարդ էլ ենք ուզում հրաւիրել։ Միթէ՞ ձեզ յայտնի չէ այստե-ղի աշխատանքը։*

Գուցէ յաջողւի Ամերիկայից ձեզ դրամ հասցնել։ Մելիքն արդէն սկսած կը լինի նոր հանգանակութեան։ Եթէ յաջողւեց, ուրեմն լաւ դրամ կ՚ունենաք, իսկ եթէ ոչ, այն ժամանակ մեր կարծիքով աւելորդ է Մելիքի նման մի փորձւած ոյժ այնտեղ փակւած պահել, այն ժամանակ գուցէ Մելիքին ունենաք։

Վասպուրականի դէպքը ամէն տեղ ոգեւորութիւն է պատճառել, արդիւնքը տեսնենք։

Վահանի հասցէն են ուզում ծնողները, որպէսզի Ռուսաստանից ուղղակի նա-մակներ գրեն։

ԽՄԲԱԳՐ. «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Սպասում ենք զէնքի բռնւելու հետեւանքին։

ՆՈՅՆ

1.- Սեպուհ – ծածկանուն Պանք Օթոմանի ղեկավարներէն Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):

2.- Մար – ծածկանուն Միքայէլ Տէր Մարտիրոսեանի:

3.- Ոսկեհանքը՝ Իզմիրի դաշնակցական կազմակերպութիւնն է:

4.- Գարեգին Խաժակ: Վահանը՝ Նիկոլ Մատինեանն է: Յիշեցնենք, որ Մարը Միք. Տէր Մարտիրոսեանն է, Վարդը՝ Վարդ-Պատրիկեանը:

5.- Մելիքը՝ ծածկանուններէն մէկն է Յովհ. Իւսուֆեանի:

208

Պատճէններու մատեան No 83, *էջ* 195-196

25 *հոկտ.* 97

Պարոն Ճերմակեանին, Վիէննա

Յարգելի պարոն,

Մի ստիպողական գործի համար հարկ ենք համարում դիմել Ձեր աջակցութեան, լիայոյս լինելով, որ մեր խնդիրքը չի մերժուիլ ձեր կողմից։

Մեր ընկերներից մէկը՝ պ. Սահակ Մարգարը, հանգանակութեան համար Ռումանիա գնացած ժամանակ ձերբակալուել է Գալացում, արտաքսուել երկրից ու յանձնել աւստրիական կառավարութեան։ Մեր ընկերը մեզ յայտնել էր Պրէտէալից, թէ իրեն տանում են Վիէննա, որտեղից նա կուղեւորուի դէպի մեզ։ Սակայն նա դեռ եւս այս կողմերը եկած չլինելով, ենթադրում ենք, որ պահուած պէտք է լինի Վիէննայի ոստիկանատան մէջ։

Հաղորդելով Ձեզ այս փաստը, խնդրում ենք շատ, որ դուք անձնապէս կամ մի ուրիշի միջոցով աշխատէք տեղեկանալ ոստիկանատնից, այդտեղ է արդեօք մեր ընկերը, թէ ոչ, եւ եթէ այդտեղ է, երբ նրան կարձակեն ու ճանապարհ կը ձգեն։

Յայտնելով նախօրօք մեր շնորհակալութիւնները,

Մնանք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

209

Պատճէններու մատեան No 83, *էջ* 202-204

4 *նոյ.* 97

[*Տրապիզոն*]
Սիրելիք,

Համարով(1) *զբաղուած լինելով, անկարող եղանք շուտ պատասխանել ձեր սեպտ.* 26 *նամակին։*

Զուր էք աշխատում մի ինչ որ հակասութիւն գտնել մեր կարծիքների մէջ Կուսածաղիկի(2) *վերաբերմամբ եւ եւս առաւել մեզ նրա պաշտպան երեւակայել։ Զը գիտենք, ինչից էք ենթադրել, թէ մենք համակարծիք ենք եղել, մինչդեռ մեզ համար նոյնքան անսպասելի էր նրա արածը, որքան եւ ձեզ համար։ Պոլսոյ մեր ընկերները այս անգամ աւելորդ են համարել խորհրդակցելու ոչ միայն ձեզ եւ միւսների հետ, այլեւ մինչեւ իսկ տեղեկացնել մեզ։ Մենք միայն մի քանի տեղեկութիւնների հիման վրայ կասկածեցինք նրանց այդ քայլը եւ երբ պատրաստւում էինք յայտնել մեր կարծիքը, արդէն ուշ էր... Մենք գիտէինք, թէ այնտեղ ոյժ քիչ կայ եւ երբեք չէինք կարող երեւակայել, որ այդպիսի փոքր ուժերով ասպարէզ դուրս կը գան... Բայց եւ այնպէս.— թէեւ փոքրիկ գործ,— նա ունեցաւ իր նշանակութիւնը։ Դուք ընդհանրապէս հակառակ էք դրան եւ ապարդիւն էք համարում։ Այս հարցի մասին ի հարկէ կը խօսինք իր ժամանակին։ Նամակով դժուար է իրար հասկանալ։*

Քարաժայռի(3) *համար խնդրում ենք մի յարմար մարդ. բայց չկայ այնպիսի մէ-*

կը, որ այս կամ այն տեսակէտից պակասութիւն չունենայ... Ձեր տուած տեղեկութիւնները ի նկատի կունենանք միշտ եւ կաշխատենք օգտուել։

Գործնականապէս ինչպէ՞ս կարող ենք ձեզ օգտակար լինել։ Ինքներս շատ քիչ նւիրատուութիւն ենք ստանում, որովհետեւ հիմա ամէն մի յայտնի նւիրատուութիւնները հաւաքւում են իրենց կենտրոն. կոմիտէի սնտուկի մէջ։ Մեր միակ աղբիւրը մնացել է ընդհանուր կետր. կասսան, որը դժւարութեամբ է մատակարարում մեր պահանջը։ Իսկ այստեղի ծախքերը շատ շատ են, մանաւանդ որ ստիպւած ենք լինում գացող-եկողի ծախքերը հոգալ։

Եթէ քիչ աւելորդ դումար ունենանք որեւէ ժամանակ, իսկոյն ձեր ատրճանակը կուղարկենք։

Խնդրենք հաղորդել Նաւահանգիստ(4)

1) *Ուղարկւած են* 12 *եւ* 13 *համարները* 200-*ական հատ։ Ծրագիրները մնացել են միւս անգամւայ համար։*

2) *Կորիւնների լուսանկարը ստացւած է։*

3) *Ստացանք Նոյնպէս Զաւէնի*(5) *լուսանկարը հանդերձ կենսագրութեամբ։*

4) *Նոյեմբ.* 10-*ի կոչերը դժւար է նորից տպագրել։ Հիներից դեռ կան, կարող ենք ուղարկել։ Եթէ թւականը խանգարում է, թող կտրեն, դէն ձգեն։ Թող գրեն այդ մասին։*

5) *Զգիտենք, թէ տանողներից որն է դժգոհ։ Բայց թող իրենք մի նորմա նշանակեն։ Այս կողմերում ոչինչ չի վճարւել եւ չի վճարւելու։ Երբ յայտնի կը լինի դժգոհը, կը գրենք։*

6) *Հրատարակութիւնից յետոյ մենք անմիջապէս ուղարկում ենք, իսկ եթէ* No 2, 14, 25 [նաւ]-*ը ուշ է գալիս, դա մեր մեղքը չէ։ Աշխատէք միւսներում եւս մարդ գտնել։*

7) *Ստացւած են նրանց սեպտ.* 4/16, 7/19, 9/21, 10/22 *նամակները։*

8) *Իսկ ամենակարեւորը՝ ստակ չունենք* 2, 34, 4, 32, 2, 6, 2, 29 [ատրճանակ] *գնելու համար։*

Ստացանք 2, 4, 20, 13, 14, 7, 25 [Արդուին]-*ից մի նամակ, որով յայտնում են, թէ ձեր միջոցով պահանջել են թուղթ, կնիք եւ այլն եւ իբր թէ դուք պատասխանել էք «ապսպրած ենք»։ Այժմ մեզանից են պահանջում։ Սա ի՛նչ բան է։ Գրեցէք նրանց, որ եթէ ծածկագրով են գրում, թող ուշադրութիւն դարձնեն. թէ չէ այնպէս են խառնում տառերը, որ ոչինչ չի կարելի հասկանալ։ Բաւական չէ որ սխալ են կազմում, սխալ էլ գրում են։*

Բոլորովին անհասկանալի է Շանթի լռութիւնը։ Միթէ՞ չի կարելի մինչեւ իսկ մասնաւոր տեղեկութիւն առնել... Լսում ենք, որ 17, 2, 17, 13, 14, 27, 25 [Թաքուլ]-*ի դատավճիռը արդէն տրւած է* (15 *տարւայ*). *ճիշդ է, թէ ոչ։*

Ռոստոմը յայտնում է իր չնորհակալութիւնը եղբօր սպանման առթիւ(7) *ցաւակցութիւն յայտնողներին։*

ԽՄԲԱԳՐ. «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Ակնարկութիւն «Դրօշակ»ի հերթական համարի պատրաստութեան:
2.- Կռուածաղիկ – ծածկանուն Պոլսոյ:
3.- Քարաժայռ – ծածկանուն Տերսիմի:
4.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի:
5.- Զաւէն – ծածկանուն Յակոբ Գարակէօզեանի (1873-1897), տրապիզոնցի երիտասարդ յեղափոխական, որ մատնութեան հետեւանքով 1897 թ. Օգոստոս 12–24-ին Պոլսոյ իր տան մէջ կը պաշարուի ոստիկաններէ եւ անձնատուր չըլլալու համար կը դիմէ անձնասպանութեան:
6.- Աշոտ Թաքուլ, ծանօթ Արամեան Արամ անունով, որ Կարնոյ մէջ կախաղան պիտի հանուէր 1899 Օգոստոս 9-ին:
7.- Ռոստոմի եղբայրը՝ Արիստակէս Զօրեան, նահատակուած Խանասորի արշաւանքի ընթացքին (1897):

210

Պատճէններու մատեան No 83, *էջ* 205-208

6 *Նոյ.* 97

Պ. Զարիֆեանին(1), *Պարիզ*
Ընկեր,

Ստացած են ձեր հոկտ. 20 *եւ նոյեմբ.* 2 *նամակները։ Աւելի շուտ չկարողացանք պատասխանել։*

Պ. Բագրատունիի գրելով՝ ատրճանակները դեռ եւս չէն ստացուել։ Այս ի՛նչ հանելուկ է։

Բացի այդ, բաւական տարբերութիւն կայ ձեր սեպտ. 14*-ի ուղարկած գների եւ վերջին* facture*-ի գների մէջ։ Գուցէ ձեր ուղարկած առաջւայ գները ուրիշ ձեւի ատրճանակների համար է։ Խնդրենք այս թիւրիմացութիւնը եւս պարզել։*

Argus*-ի*(2) *ուղարկւածներից աւելորդ կտորները ձեզ ենք ուղարկել ձեր նամակի հիման վրայ, որպէս զի դուք, ինչպէս եւ գրել էիք, կարգադրէք կամ վերջացնէք։*

«Միութիւն» թերթը ստանում ենք. չարժէ այդպիսիների վրայ ուշադրութիւն դարձնել. գործ չունին. պարապ չմնալու համար զուր աղմուկներ են հանում։

Հանրմեանը կեդր. կոմիտէի անդամ չի եղել։ Նա եղել [է] *տեղական «Սիւնիք» կոմիտէի անդամ։ Ձերբակալւածները գլխաւորապէս այդ կոմիտիէից էին։*

Քրդերի Պարսկաստան արշաւելու մասին գրած էինք մեր նախորդ նամակներից մէկում։ Այդ տեղեկութիւնը ճիշդ է եւ դրանից յետոյ ոչինչ չի պատահել. ընդհակառակը այժմ մի նոր ուրախալի երեւոյթ է նկատւում։ Մեզ հաղորդած են մեր ընկերները, որ Խանասորի կռւից յետոյ, որը առասպելական գոյներ է ստացել, բերանից բերան հաղորդւելով, մի քանի քիւրդ ցեղեր բարեկամութիւն են փնտրում տեղական հայերի. քիւրդ կոյսերը երգեր են յօրինել եւայլն... Միւս կողմից հայ ժողովուրդը չտեսնւած ձգտումն է ցոյց տալիս զէնք ձեռք բերելու։ Առանց մեր հսկողութեան [?] *գիւղացիները իրենք ձեռք են ձգել վերջին տարին մօտ* 300 *հրացան։ Անգլիական մի թերթում հաղորդւում են Բերդակ գիւղում ձերբակալւած հրացանների մասին։ Այդ հրացանները իրենք գիւղացիներն էին ձեռք ձգել։ Եւ դեռ մեր ապուշները մեր շարժումը վերջացած են համարում եւ Դաշնակցութեան գործունէութիւնը վնասակար։*

Կիպրոսի մեր ընկերների առաջին քայլը անաջող է. գնւած զէնքերը ձերբակալւած են Կիպրոսի մէջ։ Շուտով ի հարկէ լաւ կը ծանօթանան տեղական հանգամանքների հետ եւ այդ տեսակ բան այլեւս չի կրկնւիլ։ Բացի այդ, յոյս կայ, որ զէնքերը յետ կը դարձնեն։ Կիլիկիայում եւս ձերբակալութիւններ են տեղի ունեցել։ Հնչակեանների թղթերը բռնւած են նոյնպէս։

Պարիզից մեր ստացած լուսանկարը հաւանական է ներփակեալը լինի։ Խնդրենք ցոյց տալ պ. Թահտաճեանին եւ եթէ իրենն է, յանձնէք իրեն, յայտնելով մեր շնորհաւորութիւնը։ Պարոնը գրում է երկու լուսանկարների մասին։ Երկրորդի մասին բնաւ տեղեկութիւն չունինք։ Մեզ մօտ մէկ լուսանկար միայն կայ այժմ, այն էլ Պոլսից է ուղարկւած։

Զմիւռնիայից մի յանձնարարութիւն են արել ձեզ։ Այդտեղի անդամներից մէկը գինի ունի ծախելու կոմիտէի օգտին։ Այդ գինին, ինչպէս իրենք իմացել են, շատ արժէք ունի Պարիզում։ Մէկ չիշ էլ ուղարկել են մեզ նմուշի համար։ Հիմա նրանք խնդրում են իմանանք այդտեղ գինեվաճառներից, թէ որքանով կարող են գնել։

Խնդրում են նոյնպէս տեղեկութիւններ մաքսի, ճանապարհածախսի եւ այլ ծախսերի համար։ Եթէ յարմարութիւններ ունէք Զմիւռնիայի կոմիտէի խնդիրքին բաւականութիւն տալու, գրեցէք, մենք կուղարկենք ձեզ գինու նմուշը։

Դրամական սաստիկ նեղութեան մէջ ենք, թէ մենք եւ թէ կոմիտէները։ Չի կարելի՞ արդեօք այդտեղ մի հանգանակութիւն բանալ։

Ի՞նչ եղաւ պ. Մինասեանի պարտքը։ Ո՞ւր է նա։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Զարիֆեան – ծածկանուն Յովհ. Լոռու-Մելիքեանի:

2.- Argus – Փարիզեան մամլոյ գործակալութիւն, որ ըստ պատուէրի թերթերու կտրօններ կ՚ուղարկէր պահանջուած հասցէին:

211

Պատճէններու մատեան No 83, *էջ* 234-235

Խիստ անորակ պատճէն. անընթեռնելի բառերը կամ անունները նշուած են բազմակէտերով:

10 *Նոյեմբ.* 97

Արվախին(1), *Վառնա*
Ընկեր,

19 *հոկտ. քո նամակը ստացած է։ Հաստատում ենք մեր* 4 *նոյեմբ. նամակը։ Դրամը ստացանք, բայց դարձեալ ոչինչ չի մնում։ Թէեւ գրելու ենք Թիֆլիզ փողի համար, բայց չենք կարծում, որ շուտով ուղարկեն. այնպէս որ գուցէ դարձեալ ձեզանից պահանջենք։*

Կիպրոս գրեցինք իրենց պահանջի մասին, յայտնելով, որ քո մօտ գտնուած գումարի վրայ յոյս չդնեն, որովհետեւ նա վերջանալու մօտ է, բայց չէ՞ որ դու մի ինչ որ 2,000 fr. *թէ ռուբլի էիր խոստացել Մարին*(2)։ *Ինչո՞ւ այդ փողը չես ուղարկում։*

Այդտեղի օրիորդաց խումբը «փոքրիկ» թարգմանութիւններ է ուզում անել, իսկ դու Էրկման-Շատրիան(3) *ես ուզում։ Լաւ «փոքրիկ» թարգմանութիւններ կը լինեն… Միմիայն* Histoire d'un paysan-*ի համար թարգմանութեան ու տպագրութեան համար տարի հարկաւոր կը լինի։ Եւ դա ի՛նչ օրիորդների բան է։ Աւելի լաւ չէ՞, խոկապէս, փոքրիկ բաներ ընտրել, օրինակ* .....-*ի առանձին կտորներ*(4), *իսկ եթէ ուզում էք, որ լեգալ լինի, ամէն կողմ տարածւի, դա ուրիշ բան, բայց յամենայն դէպս փոքրիկ գրուածներ են հարկաւոր եւ ոչ Էրկմ.-Շարիանի լման ահագին հատորներ։ Մենք էլ կաշխատենք գտնել այստեղ յարմար պատմութիւններ։*

Գիսակի(5) *մասին արդէն գրած է մի քանի անգամ։ Մեզ մօտ նա խոստովանեց իր սխալը։ «Ներշնչւած» է եղել։ Մենք դրանով գոհացանք, այժմ դու գիտես։ Այստեղից տւել ենք դրան միայն* 160 fr., *այս ի նկատի ունեցիր։*

Քո Բոլգարիայից հեռանալու մտադրութիւնը Ֆրանսերէն սովորելու համար այստեղ, մեզ վրայ լաւ տպաւորութիւն չարեց։ Կարծում ենք, որ նոյնը միւս ընկերների համար կը լինի։ Եթէ Ռոստոմի հեռանալը <u>հիւանդութեան</u> պատճառով դատապարտելի է, միթէ՞ ներելի է քո հեռանալը <u>Ֆրանսերէն</u> սովորելու համար։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Մեզ համար եւս նպաստաւոր է. Մարսէյի միջոցով փոխադրել. երկուսին[?] *ծախսեցինք* fr. 200։

1.- Արվախի – ծածկանուն Վարդ-Պատրիկեան Յակոբի:
2.- Մար – ծածկանուն Տէր Մարտիրոսեան Միքայէլի:
3.- Էրկման-Շատրիան Էմիլ (1822-1899) – ֆրանսացի գրող, վիպագիր:
4.- Անընթեռնելի անուն:
5.- Գիսակ – ծածկանուն Յովհ. Սերենկիւլեանի (Վարդգէս):

212

Պատճէններու մատեան No 83, *էջ* 246-247

11 *Նոյեմբ.* 97

Պրն. Տօնապետեանին, Լոնդոն
Յարգելի հայրենակից,

Ներողութիւն ենք խնդրում ձեր 22 *սեպտ. նամակի պատասխանը այսքան ուշացնելուն համար։*

Ձեր առաջարկը՝ ծառայել այսուհետեւ յեղափոխութեան գործին Դաշնակցութեան դրօշի տակ, մեր կողմից ուրախութեամբ ընդունուեցաւ։ Յուսով ենք, որ փոխադարձ համաձայնութեամբ կը գտնենք ձեր ապագայ գործունէութեան համար համապատասխան մի ասպարէզ, ուր դուք կարող կը լինէք աւելի մեծ արդիւնքով գործադրել ձեր անհատական ուժերը։

Մեր կոմիտէներին արդէն գրուած է ձեր առաջարկի մասին, բայց որովհետեւ դուք աւելի լաւ էք ճանաչում ձեր ընդունակութիւնը, կը դիմենք ձեզ եւ խնդրում, որ դուք ինքներդ որոշէք ձեր գործունէութեան ձեւն ու տեղը։

Իսկ ինչ վերաբերում է այն 30 fr.-*ին որ դուք ուզում էիք ձեր երկրորդ հրատարակութեան համար, պէտք է յայտնենք (թերեւս արդէն ուշ է), որ ուղարկել չենք կարող։ Հարցը ի հարկէ գումարի մեծութեան կամ փոքրութեան մէջ չէ. մենք առհասարակ աւելորդ ենք համարում խառնուել այդ տեսակ գործերի մէջ, մանաւանդ հնչակեան հին կետրոնի վերաբերեալ, որը վաղուց ի վեր մեզ համար գոյութիւն չունի։*

Եթէ այդտեղի պատկերազարդ յայտնի լրագիրները, ինչպէս օր[*ինակ*] Inolby Grafte-*ը ցանկանան տպագրել մեր հայդուկների պատկերները, մենք ուրախութեամբ կուղարկէինք։ Այդ պատկերներից մենք շատ ունինք, մանաւանդ Խանասորի կռւի մասնակցող հայդուկներինը, իրենց հագուստով ու զէնքով։ Մի երկուսի կլիշէները մինչեւ իսկ պատրաստ են։*

Սպասում ենք ձեր նամակին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Պարիզում դուք մի հասցէ էիք տուել Բէյրութ Պ. Զարիֆեանին Դրօշակ ուղարկելու համար։ Զէ՞ք կարող մեզ յայտնել, թէ ի՞նչ մարդիկ են դոքա եւ ինչո՞վ կարող են մեզ օգտակար լինել։ Բացի այդ, ի՞նչ կարծիք ունէք Բէյրութ գտնուող Անդրանիկ Պտուկեանի (Արշաւիր) եւ Կարապետ Թագւորեանի (Արծիւ Արծրունի) մասին, որոնք իրենց գրելով, ուզում են մեզ օգտակար լինել։

ՆՈՅՆ

213

Պատճէններու մատեան No 83, *էջ* 250-257

(*Փաստ.* 36*բ*-45)

Ծ. Խմբ.– Աղեքսանդրիա՝ Նիկոլ Մատինեանին (Վահան) ուղղած Ռոստոմի այս նամակը հրատարակուած է Հ. Տասնապետեանի կողմէ, բայց պակասաւոր է եւ խառն ի խուռն, էջերու ետ ու առաջ սխալ դասաւորումով: Կու տանք ամբողջութիւնը ըստ պատճէններու մատեանին մէջ պահուած օրինակին:

11 *Նոյեմբեր* 1897

Վահանին(1), *Աղէքսանդրիա*
Սիրելիս,

Քո նոյեմբ[*եր*] 4-*ի նամակը ստացուեցաւ այսօր։ Ստացած էր նոյնպէս Ամէնքի սեպտ*[*եմբեր*] 12-*ի նամակիդ պատճէնը, որի պատասխանը* (*մասամբ*) *գրուեցաւ Կիպրոս։*

Ուրախ ենք, որ քո գնած հրացանները բռնած են. դա ամենահամոզիչ ապացոյցը կը լինի ձեր ամբարելու ծրագրի վերացականութեան։ Այսքան տարի Պարսկաստանի ու Ռուսաստանի փորձերից դեռ չհամոզուեցանք, որ հարցը ամբարելու մէջը չէ, այլ ապահով տեղափոխելու եւ պահելու։ Յոյս ունենք, որ այսուհետեւ փոքրից կը սկսես, շատ փոքրերից։ Հազարների ծրագիրը դեռ շուտ է կազմելու։

Առհասարակ դու շատ օպտիմիստ(2) *ես դարձել։ Զմիւռնիայից ոսկիները հազարներով ես հաւաքում, թէ հարուստներից եւ թէ միջին դասակարգից եւ շատ շուտ հաւատում ես Երկրից եկողների պատմածին ժողովրդի յեղափոխական պատրաստականութեան մասին։ Մենք չենք հաւատում, որ մի այդպէս չարաչար կերպով յուսախաբ եղած ժողովուրդ նորից ինքը ապստամբի ներկայ պարագաներում, եթէ մինչեւ իսկ մենք մեր բոլոր ուժը մտցնենք այնտեղ։ Ուրիշ բան է, եթէ իրենք ստիպւած լինին պաշտպանուելու, ինչպէս էր իսկապէս անցեալ անգամ։ Այժմ յոգուտ ապստամբութեան խօսողները հաւանական է իրենց գրպանի մասին մտածողներ են գլխաւորապէս։ Ուստի նախ եւ առաջ մեզ անհրաժեշտ է ունենալ Երկրում վստահելի մի անձնաւորութիւն, որը ոչ թէ կոյր հաւատ ընծայելով սրա նրա ասածին, կամ ոգեւորելով մէկի կամ միւսի տրամադրութիւնից, այդ ընդհանրութեան վերագրի, այլ որը ինքը դիտէ, փորձի եւ այլն... Ի հարկէ դրա համար ժամանակ է հարկաւոր, գործը շատ կը ձգձգուի, բայց այլապէս անկարելի է, եթէ իսկապէս մենք ցանկանում ենք լուրջ գործ կատարել։ Խանասորի կռիւը չէր յաջողուել 3-4 տարի առաջ, եթէ մինչեւ իսկ նոյն քանակութեամբ մարդ եւ զէնք ունենայինք։ Կիլիկիայի գործունէութիւնը շատ տարբեր է մեր միւս գործունէութիւնից։ Այդտեղ անհրաժեշտ է երկար պատրաստութիւն՝ առանց մեծ մեծ խոստումների, եւ ծրագիր՝ հիմնւած ոչ թէ ապագայի* 100.000-*ների վրայ, այլ ներկայիս* 100-*ների։*

Այդ Պահլաւը ո՞վ է։ Ակամայ դրան եւս կասկածում ենք. Կիլիկիոյ հնչակեաններին գրած նամակի տակ մի այդպիսի ստորագրութիւն կայ։ Նա խօ չէ՞... Հետաքրքիր է, իսկապէս, քո կարծիքը պատահած անաջողութիւնից յետոյ։

Մենք կարծում էինք, որ այդտեղ բաւականաչափ հող է պատրաստւած հանգա-

նակութիւն սկսելու համար, դրա համար էլ Կիպրոսի նամակում յիշեցինք այդ մասին։ Բայց քո գրածին նայելով, հանգանակութիւնը չի աջողւել։ Ցամենայն դէպս մի փորձ արա։ Խանասորի կռիւը ամենալաւ զէնքը կարող է լինել մեր ձեռքին։ Դրանով Դաշնակցութիւնը ապացուցեց իր մտաւոր, բարոյական կարողութիւնը, կազմակերպչական ընդունակութիւնները... Դա ամենալաւ գրականն է, որ ապագայում եւս նոյն ուժով կը տանենք ժողովրդի ապստամբական գործերը։

Շատ զարմանալի է, որ Ճանկիւլեանը(3) *գնում է այդտեղից առանց մի խօսք ասելու հասարակութեան իր ստանձնած միսսիայի մասին։ Մի ինչ որ բրոշիւր էր պատրաստում. մեզ էլ գրել էր, դոկումենտներ էր պահանջել եւ խնդրել էր մեզանից ոչ մի յարաբերութեան մէջ չմտնել, ոչ մի խօսք չասել մինչեւ իր բրոշիւրի լոյս տեսնելը։ Այժմ այդ բրոշիւրը չի հրատարակւում, թողնում է գնում։ Մինչեւ ե՞րբ մենք պէտք է լռութեան դատապարտուած լինենք։ Գուցէ դեռ եւս այդտեղ է. հասկացրէք նրան էութիւնը եւ թող եթէ բրոշիւրը չի հրատարակւում, մի կարճ երկտողով յայտնի զանազան լրագիրներին (Իրաւունք, Միութիւն...) եւ Դրօշակին՝ իր հանած եզրակացութիւնը միութեան հարցի մասին։ Մենք իսկապէս պատրաստւում էինք մի երկար նամակ գրելու իրեն, երբ հասաւ նրա մեկնելու լուրը։ Կը գրենք յամենայն դէպս եւ Թիֆլիզ. երեւի յանձնարարած կը լինէք նրան։ Թող այնտեղից ուղարկի իր ծանուցումը։ Ներփակեալ նամակը (Ճանկիւլեանինը) յանձնեցինք տիրոջ։*

Թերթ հրատարակելու ուղուր է ընկել։ Իւսուֆեանն էլ Ամերիկա է ուզում հրատարակել եւ մեր տառերից է ուզում։ Նանսիից նոյնպէս տեղեկութիւն են հարցնում տպարան կազմելու ծախքերի մասին։ Պարիզում եւս մի այդպիսի ձեռնարկ կայ։ Մի ժամանակ Բօլգարիա էին ուզում նոյնը անել։ Հիմա էլ ձեր հերթն է եկել։ Իսկապէս մեզ համար անհրաժեշտ է մի թերթ, որտեղ կարողանանք պաշտպանւել մեր դէմ եղած յարձակումների դէմ։ Դրօշակը դրանով զբաղւել չի կարող։ «Իրաւունքը»(4) *այժմ մերոնց ձեռքին է, բայց նա էլ չի կարող կատարելապէս մեր շահին ծառայել։ Ձեր թերթին մասնաւոր գոյն տալ չարժէ եւ չի կարելի, որովհետեւ կազմակերպութեան ծախքերով է լինելու։ Նրանից սպասելիք օգուտը քո օպտիմիզմի հետեւանք է. դրա մէջ կարող ես հաւատացած լինել։ Հրատարակել կարելի է թռուցիկների ձեւով, այնպէս ինչպէս հրատարակւում էին մեր թռուցիկները, երբ դեռ Դրօշակ չկար։ Իսկ եթէ վերջ ի վերջոյ նպատակայարմար դատւեց մասնաւոր գոյն տալու, այդ դէպքում կարելի է ծախել, մասնաւորների նիւթական աջակցութիւնը ձեռք բերել, Դաշնակցութեան անունից հեռու պահել... Այն ժամանակ ի հարկէ ծախքերը պէտք է բոլորովին առանձնացնէք կազմակերպութեան ծախքերից։*

Տառերը ճիշդ մեր 10-ի տառերի ձեւը ունե՞ն, թէ միայն համարը միեւնոյնն է։ Եթէ ճիշդ նոյն տառերն են, խնդրենք մեզ ուղարկել մի քիչ ա, ն, ր. Մկոն(5) *կ'իմանայ, թէ որքան է հարկաւոր։ Մեր աւելորդ տառերը կուղարկենք ձեզ։*

Նիւթեր չենք կարող ձեզ ուղարկել։ Այժմ բոլորովին զուրկ ենք։ «Իրաւունքին» մի տարի առաջ ենք ուղարկել, այն էլ մի անգամ միայն։

Եթէ ձեր թերթի հրատարակութիւնը չյաջողի, «Իրաւունքի» համար բաժանորդներ գտէք այդտեղ։

Ռուսաստան Դրօշակ ուղարկելու համար ուրեմն միջոց կայ։ 60 *հատ առաջ էինք ուղարկել.* 60 *հատ էլ վաղը կուղարկենք։ Գրիր թէ, ընդամէնը որքան է հարկաւոր ուղարկել։*

Հինգ հոգի ռուսահպատակներ, որոնց մէջ եւ Երանդը(6)*, յանձնւած են ռուս կառավարութեան եւ արդէն Ռուսաստան են ուղարկւած։* 3 *հոգի էլ Տաճկաստան են։ Նիկոլը, Բժիշկը*(7) *վերադարձել են Թիֆլիզ։ Հին դալմաղալները նորոգւել են,*

աւելի սաստիկ կերպով։ Երեւի պատճառներից մէկը այդ անպիտան Ոսկանն է(8), *որին այդքան կուրօրէն պաշտպանում են Երւանդը, Ծաղիկը*(9), *բայց որին Մ[ալ-մաստ]ի կոմիտէն դուրս է արել. զէնքերը բոլորը ապահով են։ Թորոսը*(10) *վերադարձել է Սալմաստ. Վազգէնի*(11) *կողմից մարդ է եկել զէնքեր տեղափոխելու։ Ուրեմն դրութիւնը նոյնն է։*

Պարսկաստան մարդ է հարկաւոր։ Բժիշկը եւ Նիկոլը մի ինչ որ պայմաններ են առաջարկելու վերադառնալու համար։ Չգիտենք, թէ ի՞նչ պայմաններ են, բայց մեր կարծիքով պէտք է խիստ կերպով որոշել կոմիտէների, անհատների դիրքը։ Քանի դեռ Ոսկանների, Շէկոների նմանները կան, ուրիշ կերպ անկարելի է։

Դու առաջ մտադիր էիր Եգիպտոս գալ եւ մի մասնաւոր պարապմունք գտնել ընտանիքիդ օգնելու համար։ Ինչպէ՞ս է, կարելի է, թէ ոչ։ Հիմա բանը այնպէս է շրջւել, որ միւսները եւս (կիպրոսցիք) ստիպւած կը լինին նոյնը անելու, որովհետեւ նիւթական միջոցների մեծ նեղութիւն կայ։ Պարսկաստանում ահագին պարտքեր են արւած։ Թիֆլիզի միջոցները նրան պիտի գնան. Արվախի(12) *մօտ այժմ* 2500 *ֆր. է մնացել* (2-500-*ը մենք ենք առել). մենք էլ ուրիշ ոչ մի աղբիւր չունինք, իսկ ծախքներս շատ։ Ամերիկան, Եգիպտոսը մեզ ոչինչ չեն տալիս։ Այնպէս որ, ինչպէս իրենց էլ գրել ենք, դժւար կը լինի շատ մարդ պահել եւ Կիպրոսից,— ի հարկէ եթէ չյաջողւի ներս մտնել.— պէտք է թողնեն Կիպրոսում միայն անհրաժեշտ մարդիկ, իսկ միւսները թող Եգիպտոսում ձմեռը անցկացնեն։ Աշխատէք Մկոյի համար եւս մի տեղ գտնել։ Շուտով գուցէ դուք ստիպւած լինէք Զմիւռնիայի փողերից մեզ ուղարկել, եթէ ուզում էք, որ Դրօշակը չդադարի։*

Մկոյի համար փող կուղարկենք, երբ Թիֆլիզից ստանանք. այժմ ոչ մի սանտիմ չենք կարող շարժել։ Ուղարկեցէք մի հասցէ փողի համար։ Կարելի՞ է օգտւել Բաբայեանի(13) *փողի հասցէով Մկոյին հասցնելու համար։*

Խնդրենք անպատճառ հեռագրի համար մի կարճ հասցէ տաք։ Մեր հասցէն Droschak, Genève։

Զմոռանանք յայտնել, որ Թիֆլիզից էլ նոյն կարծիքն են յայտնել ձեր խոշոր ծրագրի մասին։

Բաբայեանը գալո՞ւ է, թէ ոչ Զմիւռնիա։

Համբոյրներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

[Էջերու լուսանցքներուն]

Յ. Գ.— «Փարոսի» բոլոր համարները բարեհաճիր հաւաքել եւ ուղարկել մեզ. մենք չենք ստանում։ Առհասարակ թող տեղացիք սովորութիւն անեն իւրաքանչիւր մի հրատարակութիւն մեզ ուղարկել, լինի թռուցիկ թերթ, լինի լրագիր։

— Վահագը(14) *խորհուրդ է տալիս ծանօթանալ այդտեղ իր ընկերոջ՝ Տուրանի (Բէքէրեան Յակովը) հետ եւ աշխատել նրան աւելի մօտեցնել։*

— Անդրանիկ Պտուկեան (Արշաւիր) եւ Կարապետ Թագւորեան (Արծիւ Արծրունի) Բէյրութից մեզ դիմել են, առաջարկելով իրենց ծառայութիւնները։ Դրանք նախկին հնչակեաններ են։ Տեղեկացէք դրանց մասին եւ եթէ յարմար դատէք, մտէք յարաբերութեան մէջ։ Նրանց կարելի է գրել ֆրանսիական փոստայով հետեւեալ հասցէին՝ Mr. Abersam, poste restante française, Beyrouth (Syrie)։

1.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի:
2.- Լաւատես:
3.- Յարութիւն Ճանկիլեան, հնչակեան ղեկավար, Դաշնակցութեան հետ միութեան կամ համերաշխութեան ջերմ կողմնակից:
4.- «Իրաւունք» – Վառնա հրատարակուող եռօրեայ լրագիր:
5.- Սուլթանեան Մկրտիչ (1873-1897), դաշնակցական մարտիկ:
6.- Երուանդ – ծածկանուններէն մէկը Իշխան Յովսէփ Արղութեանի (1863-1925):
7.- Նիկողը՝ Նիկոլ Դումանն է (Տէր Յովհաննիսեան). Բժիշկը՝ Օհանեան Քրիստափոր (1864-1932):
8.- Ոսկան – Զադոյեան Ոստանիկ. Շեկօ՝ Պարսկաստանի Արշակ, 1897 թ. Փետրուարին սպաննուած անձնական վրէժխնդրութեամբ:
9.- Ծաղիկ – ծածկանուն Մատինեան Սաթենիկի:
10.- Թորոս – ծածկանուն Ալոյեան Գալուստի:
11.- Վազգէն – ծածկանուն Տէրոյեան Տիգրանի:
12.- Արվախի – ծածկանուն Վարդ-Պատրիկեան Յակոբի:
13.- Բաբայեան – ծածկանուն Գարեգին Խաժակի (Չագալեան):
14.- Վահապ – ծածկանուն Վռամեան Արշակի, իսկական անունով՝ Օննիկ Դերձակեան:

214

Պատճէններու մատեան No 83, *էջ* 258-259

12 *Նոյեմբ.* 97

Պրն. Զարիֆեանին(1), *Պարիզ*
Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր նոյեմբ. 8 *նամակը։ Հաստատում ենք մեր* .....(2)
Ներփակեալ ուղարկում ենք գների ցուցակը։ Եթէ դա Bergmann-*ի ատրճանակների գներն են, ինչպէս դուք էք գրում, զարմանալի է, որ այդտեղ* grand modèle-*ը նշանակւած է միմիայն* 55 fr., *իսկ մեզ հաշւել է* 70 fr. (*գեղչով*)։
Գինիի նմուշը կուղարկենք. երկիւղ ենք կրում, որ արդէն փչացած լինի։
Հանգանակութիւնը յամենայն դէպս փորձեցէք։
Այդ Մինասեան կոչւած պարոնը պարզապէս խաբեբայ է երեւում։ Եթէ նա չուտով չվերադարձրեց այդ 300 fr., *պէտք է դատարանի միջոցով պահանջել, իսկ եթէ այդ էլ չօգնեց, մեր սեփական միջոցներին դիմել։ Հարցը* 300 fr.-*ի մէջ չէ, այլ Դաշնակցութեան պատւի։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— 13 *հոկտ. նամակով մենք խնդրել էինք ձեզ պատւիրել* No 2, *փոքրիկ տեսակից։ Բայց չգիտենք ձեր սխալի պատճառով, թէ վաճառողի, ցուցակի մէջ մտած է* No 3, *մեծ տեսակը, այն էլ փոխանակ* 55 fr., 70 fr.-*ով։ Եթէ արդէն ուշ չէ, ատրճանակները չեն ուղարկւած, ուղղէք այդ սխալը եւ փոխանակ* grand modèle, No 3 *պահանջէք* petit modèle No 2։ *Այդպէս է պատւիրւած մեզ, որովհետեւ դա աւելի յարմար է հետը կրելու։*

ՆՈՅՆ

1.- Զարիֆեան – ծածկանուն Յովհաննէս Լոռու-Մելիքեանի:
2.- Թուականը չէ նշուած:

215

Պատճէններու մատեան No 83, *էջ* 314-317

5/17 *դեկտ.* 1897 *թ.*

[*Վան*]

Ընկերներ,

Ստացանք ձեր 3 *նոյեմբ. նամակները։*

Գանգատւում էք, որ Վրէժստան(1) *մարդ չկայ, մինչդեռ Մեծ Քաղաքից*(2) *մեզ գրում են, որ վաղուց է մարդ են ուղարկել փոխադրութեան համար։ Բացի այդ, գուցէ արդէն դուք էլ իմացած կը լինէք,— Ծովասար*(3) *մի ստւար խումբ է անցել եւ զէնքեր են տեղափոխւած։*

«Փարոսի» հրատարակիչը Արփիարը չէ, այլ մի ուրիշ Արփիարեան։ Ինքը՝ Արփիարը շարունակում է մնալ հնչակեան նոր վարչութեան մէջ եւ նա է խմբագրում կուսակցութեան «Մարտ» թերթը, որը երկար ժամանակ լռելուց յետոյ, սկսել է նորից հրատարակւել։ Միութիւն քարոզող այդ թերթը այժմ համարեա <u>ամբողջովին</u> լցւած է Դաշնակցութեան դէմ ուղղուած յօդւածներով, լիքը ամենակեղտոտ ստերով ու զրպարտութիւններով։ Այդ փոփոխութիւնն առաջացաւ այն օրից, երբ Ճանկիւլեանն այստեղ գալուց յետոյ, տեսնելով, որ մեր կողմից ոչ մի խոչընդոտ չկայ եւ համոզւելով, որ մենք կատարեալ իրաւունք ունէինք վստահաբար չվերաբերւելու դէպի հնչակեան նորակազմ կեդրոնը, համաձայնւեց, թէ միութիւն յաջողեցնելու համար անհրաժեշտ է հեռացնել Արփիարին եւ մի քանի այլ կեղտոտներին։ Այդ օրից միութեան անունով տաք տաք ճառողները յանկարծակի լռեցին եւ սկսեցին տարածել, թէ Ճանկիւլեանին խմբագրութիւնը կաշառել է եւ այլն։ Միութեան խնդիրը նախկին ձեւով վերջացած կարելի է համար[ել], դա այլ եւս չի կարող կայանալ, քանի որ հնչակեան վարչութեան փոքր ի շատէ վստահելի անդամը՝ Տամատեանը հեռացել է վարչութիւնից համաձայն լինելով Ճանկիւլեանի հետ։ Իսկ միւսները սկսել են խայտառակ արշաւանք Դաշնակցութեան դէմ։ Մարտի առաջիկայ համարում պէտք է խօսեն միութեան հարցի վերաբերեալ։ Մենք մեր ասելիքը կասենք եւ վերջ կը դնենք այդ խնդրին։ Ճանկիւլեանը նոյնպէս պատրաստում է մի բրօշիւր նրանց կեղտոտ տաքտիկան հրապարակ հանելու համար։ Միութեան խնդիրն այդ ձեւով փակելուց յետոյ մեզ կը մնայ ամէն ջանք թափել երկրի բուն գործիչների հետ կապ հաստատել։ Կիլիկիայից Եգիպտոս են հասել երկու նշանաւոր ուժեր. մեր ընկերները բանակցութեան մէջ են նրանց հետ եւ յոյս ունեն յաջող հետեւանքի հասնել։

Իսկ հին վարչութեան միակ եւ վերջին պաշտպան Տօնապետեանը, որ այդ դալմաղալների ժամանակ Նազարբէկեանների կողմն էր պահում, մի քիչ ժամանակից յետոյ, համոզւելով այս վերջինների կատարեալ խայտառակութեան մէջ, ինքն էլ հեռացաւ, հրատարակելով մի մեծ բրօշիւր։ Վերջերումս ցանկութիւն յայտնեց իրեն դնել Դաշնակցութեան տրամադրութեան տակ, եկաւ մեզ մօտ, տեսակցեցանք, յետոյ ճանապարհ ընկաւ Լոնդոն։

Ատրպատակ[ան]ից գրած Վազգէնի(4) *նամակները ստացւած են։ Շարաֆի*(5) *մասին գրում էք, թէ խմբագրութիւնը <u>յամառաբար</u> շարունակում է նրան սպան-*

ւած հրատարակել։ Վազգէնը միայն «կարծիք» էր յայտնել, թէ կենդանի է, իսկ երեք ուրիշ թղթակիցներ պնդում են, թէ մեռած է։ Ինչպէ՞ս էք ուզում, որ մենք անպատճառ Վազգէնի կարծիքին հաւատանք եւ ոչ երեք ուրիշների պնդումներին։ Այս համարում մենք մի ծանօթութիւն կը դնենք դրա մասին։

Յեղափոխութեան թշնամիներն աշխատում են այնպիսի գոյն տալ մեր գործին, որ իբր թէ ամէն ինչ բղխում է արտասահմանից, եւ թէ բուն երկրի ժողովուրդը հակառակ է յեղափոխութեան, եւ այս հիման վրայ պահանջում են մեզանից դադարեցնել յեղափոխութիւնը, կարծես դա մեզանից, կամ մի քանի խմբերի կամքից է կախուած։ Այս տեսակ յարձակումներ լսւում են գլխաւորապէս երէկւայ յեղափոխականների բերաններից. նրանց հարկաւոր է մի բանով արդարացնել իրենց գոյութիւնը։ Դա աւելի մեծ չփոթութիւն է առաջ բերել ժողովրդի մէջ։ Այդ յարձակումներին աւելի նպատակայարմար է պատասխանել բուն երկրից, ժողովրդի սրտից եկած յօդուածներով։ Աշխատէք յօդուած ուղարկել այդ ուղղութեամբ։

Ինչպէս եւ Ծովափից(6) *կը գրեն ձեզ, մեզ հարկաւոր է ունենալ բոլոր քաղաքական յանցաւորների մանրամասը ցուցակը, նշանակելով բանտը, որի մէջ գտնւում են, նոյնպէս եւ ձերբակալման թւականը, եթէ միայն հնարաւոր է։ Այդ յանցաւորների թւում պէտք է հաշւել եւ գիւղացիներին, որոնք ապաստան են տւել յեղափոխականներին կամ զէնք են պահել եւ այլն* (*օր*[*ինակ*] *Բերդակ գիւղից ձերբակալւածները*)։

Լաւ կը լինէր նոյնպէս կազմել ցուցակ այն յափշտակութիւնների, աւարառութիւնների, որ տեղի են ունեցել վերջին տարիներին եւ աստիճանաբար մեզ ուղարկել։ Աշխատիլ միշտ թւական դնել, որպէսզի ճշմարտութիւնը ստուգւի։ Այդ մասին խնդրենք գրել գաւառները, նոյնպէս եւ [անընթեռնելի երկու անուն] *եւ այլոց։*

Բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Աշխատէք շատ շատ թղթակցութիւններ ուղարկել։ Նիւթ չունենք։

1.- Վրէժստան – ծածկանուն Ատրպատականի:
2.- Մեծ Քաղաք – ծածկանուն Թիֆլիսի:
3.- Ծովասար – իմա Սասուն:
4.- Վազգէն – ծածկանուն Տէրոյեան Տիգրանի:
5.- Շարաֆ – Խանասորի մէջ կոտորուած քրտական Մազրիկ ցեղախումբի ցեղապետ, որ փախուստ տալով փրկած էր իր կեանքը:
6.- Ծովափ – ծածկանուն Տրապիզոն քաղաքի:

216

Պատճէններու մատեան No 83, *էջ* 320-321

Տրապիզոն առաքուած նամակի մը կցուած Ռոստոմի Յետ գրութեանը:

[*Դեկտ.* 97]

Յ. Գ.— Դաղեանի(1) *առաքելութեան մասին հաղորդածը թող կոմիտէների շրջանից դուրս չգնայ։ Առաջինը, դա կարող է տարածելով վնասակար հետեւանքներ ունենալ. երկրորդ, դեռ հարց է, կը դիմի արդեօք Արթին փաշան եւ կը համաձայնի արդեօք Դաշնակցութիւնը բանակցութիւններ սկսելու։ Աւելացնենք այստեղ, որ մեզանից պահանջում են դադարեցնել մեր յարձակողական տաքտիկան, թողնելով մեզ շարունակել զինուել, խմբեր պատրաստել, կռուել ինքնապաշտպանութեան համար եւ այլն... Միայն չյարձակուել առաջինը այն էլ գլխաւորապէս Պոլսոյ մէջ։ Մի տեսակ զինադադար է առաջարկւում։*

Բայց եւ այնպէս դուցէ Արթին փաշան դիմեց եւ դաշնակցական կոմիտէները համաձայնեցին բանակցել եւ առաջարկել իրենց մշակած պահանջները։ Ի հարկէ մենք այս դէպքում չենք կարող պահանջել, օրինակ, որ եւրոպական կառավարիչ նշանակւի եւ այլն. որպէսզի իրագործելի լինի, մենք պէտք է չափաւորենք մեր պահանջները (մենք մասնաւորապէս կարծում ենք, որ դժւար թէ մեր մինչեւ իսկ չափաւոր պահանջները կատարւին, բայց դրանով մենք ցոյց կը տանք ժողովրդին, որ յեղափոխութիւն ենք անում ոչ թէ յեղափոխութիւն անելու համար, այլ ժողովրդի դրութիւնը բարւոքելու։ Երկրորդ, եթէ ոչինչ չլինի, գոնէ մի քանի բանտարկեալ կ՚ազատւեն, երրորդ, միեւնոյնն է, միչեւ այժմ Պոլսում ոչինչ չենք կարող անել. այդ ժամանակամիջոցում կը պատրաստուինք։ Մեր պահանջներից մէկն անշուշտ կը լինի բոլոր քաղաքական յանցաւորների ազատիլը։ Այս պատճառով հարկաւոր է մեզ բոլոր բանտարկեալների մանրամասն ցուցակը. 1) անունը, ազգանունը, 2) բանտարկութեան թիւը, առիթը, տեղը։ Միւս պահանջը կը լինի յափշտակւած իրերի, կալւածների վերադարձը։ Ուրեմն հարկաւոր [է] դրանց մանրամասն ցուցակը եւս կազմել եւ որովհետեւ դա աւելի դժւար է, աստիճանաբար մեզ ուղարկել։

Խնդրենք այս մասին, նոյնպէս եւ նամակիս ընդհանուր տեղեկութիւնները հաղորդէք <u>բոլոր կոմիտէներին</u>, առաջարկելով նրանց որքան կարելի է շուտ հասցնեն մեզ պահանջւած ցուցակները։ Ներփակեալ նամակը արտագրեցէք եւ ուղարկեցէք Վազգէնին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Նաւահանգիստ ուղարկել ենք 2 *նամակ — 21 նոյ. եւ* 17 *դեկտ.։ Ստացա՞ծ են։*
— Լսում ենք, որ ձեր քաղաքից գաղթածները վերադարձել են։ Ճի՞շդ է։

1.- Տատեան Արթին փաշա, Թուրքիոյ արտաքին գործոց փոխ-նախարար, որ Սուլթանին թելադրութեամբ բանակցութեան մէջ էր Ժընեւ՝ Դաշնակցութեան հետ:

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 205

217

Պատճէններու մատեան No 83, *էջ* 340

23 *դեկտ.*[189]7

Մխիթարեան տպարանին, Վիէննա

Արժանապատիւ Հայր-տնօրէն,

Ներփակեալ ցուցակի համեմատ խնդրենք cicero-antique *տառերից պատրաստէք* 105 kl[?] *եւ ուղարկէք* contre remboursement *Եգիպտոս հետեւեալ հասցէով՝*
Mr. Joseph Tchiboukdjan, Alexandrie (Egypte).
Ձեզ յետոյ կը պատւիրենք մեզ համար եւս moderne colonel antique *տառերից եւ կը վճարենք անցեալից մնացած մեր պարտքը։*

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Խնդրում ենք առանձին ուշադրութիւն դարձնէք ցուցակի մէջ նշանակուած իւրաքանչիւր տառի որոշեալ քանակութեան վրայ։


340

218

Պատճէններու մատեան No 83, *էջ* 359-360

2 *յուն*[*ւար*] [18]98

Զարիֆեանին, Պարիզ

Ընկեր,

Ձեր դեկտ. 22 *նամակն ստացած է, ինչպէս նաեւ զինավաճառինը։ Վերջինիս գրելով՝ յետաձգելուն պատճառը վառօդն է եղել եւ ատրճանակները պէտք է ուղարկւած լինին դեկտ.* 24-*ին. Թէեւ դեռ եւս Մարսէյլի ընկերից ոչ մի լուր չունինք ստանալուն մասին։*

Ստացանք Մինասեանի հասցէն. յոյս չունինք, որ իր խոստումը կատարի։ Այդ դէպքում Դրօշակի մէջ ստիպւած կը լինինք յայտարարել դրա կեղտոտ վարմունքը։ Դատ բանալու մասին ի՞նչ կարծիքի էք։

Ճանկիւլեանի համար գուցէ չուտով տեղ գտնեն Եգիպտոսում։

Հետաքրքիր է, թէ ինչ են նիւթում այդտեղ հնչակեանները։ Աւելորդ է գրել ձեզ, որ Դաշնակցութեան «մեծերէն» ոչ ոք չկայ Պարիզում։

Շնորհաւոր նոր տարի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Նամակիս հետ միասին ուղարկւում է ձեզ եւ 7 *ծրար Տաճկաստան ուղարկելու համար։ Հասցէն գրած պատրաստ է. ձեզ մնում է միայն պատռել երեսի թուղթը եւ փոստին յանձնել։*

Պարիզ է գտնւում այժմ Նանսիի մեր ընկեր պ. Բաղդասարեանը, որին կարող էք դուք կատարելապէս վստահել։ Ձեր այժմեան պարապմունքների ժամանակ մանաւանդ նա կարող է ձեզ շատ օգտակար լինել, կատարելով մեր յանձնարարութիւնները։ Այս մասին խնդրենք չուտով գրել։

ՆՈՅՆ

219

Պատճէններու մատեան No 83, *էջ* 365-368

5 *յուն*[*ւար*] [18]98

Վահանին(1), *Աղեքսանդրիա*

Ընկեր,

Ստացանք քո դեկտ. 26-*ի եւ*27-*ի նամակները։ Ինչպէս արդէն գրել էինք, ձեր պատւէրը մեր կազմած ցուցակի հետ միասին ուղարկեցինք Մխիթարեաններին։ Պատասխանը բացասական եղաւ։ Մերժում են* Contre remboursement *ուղարկել, պահանջելով, որ նախ կանխիկ* 600 fr. *հասցնէք իրենց, որից յետոյ միայն համաձայն են ձուլել տալ եւ ուղարկել ձեզ տառերը։*

Խնդրում են նոյնպէս, որ ուղարկէք իրենց ձեր տառերից մի երկուսը նոյն բարձրութեամբ ձուլել տալու համար։ Սպասում ենք ձեր գրութեան նրանց պատասխանելու համար։

Միութեան(2) *խնդրի մասին այդտեղի կոմիտէն ճիշդ է, գրել էր իր կարծիքը, բայց նա խոստացել էր գրել նաեւ խմբագրութեան բռնած ընթացքի մասին. այդ խոստումը դեռ եւս չի կատարւել։*

Արփիարի(3) *մատնիչ լինելը ապացուցանելու համար այդտեղացիների առաջարկած միջոցները այժմ համարեա թէ անիրագործելի են. բացի այդ եւ միանգամայն միութեան խնդրի տեսակէտից աւելորդ։ Նրա այդ բանի մէջ մենք համոզւած ենք ոչ միայն հարցաքննութեան պատճէնից, որ մեզ ուղարկել է Պոլսոյ կենտր. կոմիտէն, այլ եւ այն բերանացի յայտարարութիւններից, որ արաւ մեզ պ. Տրդատ Դադեանը (Վահրամի եղբայրը) այստեղ եղած ժամանակ։ Նոյնպէս բժ. Թիրաքեանը յայտնել է բերանացի մեր մի ընկերոջ, որ Արփիարն է եղել իրեն մատնողը։ Կ՚ասես, թէ հասարակութիւնը նոյնպէս պէտք է համոզւի։ Բայց ի՞նչ անենք. ո՞ր մատնիչն է տալիս իր մասին դրական փաստեր, կամ ինչպէս անենք, որ Դադեանը եւ Թիրաքեանը հրապարակօրէն, այն էլ յեղափոխական կազմակերպութեան միջոցաւ, յայտնեն իրողութիւնը։ Եթէ քեզ ծանօթ Աշոտը եւ միւս չհամոզւող հնչակեաններն այդքան ցանկանում են, թող իրենք ձեռք բերեն մեզ առաջարկած միջոցներով հարցաքննութիւնը եւ ստուգեն։*

Միութեան խնդրի տեսակէտից դա կարեւոր չէ։ Բանտի զրկանքների տակ շատերն են մատնութիւններ անում, որ սովորաբար ներւում է, եթէ մատնողը զղջում է եւ բանտից ազատւելուց յետոյ փոխում իր ընթացքը։ Բայց Արփիարը իր անցեալով այնքան վնասներ է տւել ընդհանրապէս յեղափոխութեան եւ մասնաւորապէս Դաշնակցութեան, որ Պոլսի կոմիտէն ստիպւած է եղել տեռորի ենթարկել։

Եթէ Արփիարը բոլորովին մաքուր անցեալ ունենար, նրա <u>ներկան</u> ամբողջովին յեղափոխական շարժման դէմ է. «Մարտի»(4) *մէջ յեղափոխական անւան տակ ծածկւած ամենաստոր արաշաւանք է սկսել յեղափոխական շարժումների դէմ։ Դեռ շատ առաջ նա ցանկացել է հակայեղափոխական պրոպագանդա անել. Տամատեանը*(5) *եւ միւսները արդելք են հանդիսացել, առարկելով, թէ քանի որ յեղափոխական կազմակերպութեան մէջ է ինքը, <u>իրաւունք</u> չունի մի այդպիսի քայլ անելու։ Եթէ մեզ դիմող հնչակեանները իրենք յեղափոխական են, պէտք է հասկական,*

որ մենք գործ կարող ենք ունենալ միմիայն հնչակեան կուսակցութեան յեղափոխական մասին հետ եւ ոչ թէ զանազան շարլատանների, կասկածելիների եւ այլն... Թող քիչ էլ սպասեն, մենք համոզուած ենք, որ Արփիարները շուտով իրենք իրենց դիմակը կը վերցնեն. հաւանական է, որ այդ կատարուի իրենց «Նոր-Կեանքի» միջոցով(6)։

Կրկնում ենք, մեր աչքում Արփիարը անպայման վնասակար անձնաւորութիւն է յեղափոխութեան համար։ Եւ եթէ Պարիզի հնչակեանները չեն համոզուած, որ նա մատնիչ է, պէտք է համոզուած լինեն, որ ժեզիւտ է. 2000 *ր. կլանող, մեղայականը գրող, Բաբալի*(7) *ցոյցին կասկածելի դիրք ունեցող, ընդհանուր առմամբ կասկածելի եւ հակայեղափոխական։*

Եթէ Արփիարի մի քանի հանրածանօթ կեղտոտութիւնները չեն դրդում հնչակեաններին դուրս բերել իրենց միջից, tant pis pour eux(8)։

Արփիարի խնդրի վրայ մի րոպէ անգամ կորցնել չարժէ. այնքան նա պարզ է (այս տողերը դժուարութեամբ ենք գրում). մինչեւ նա անպայման կերպով հեռացած չլինի հնչակեան կուսակցութիւնից, մենք ոչ մի բանակցութիւն սկսել չենք կարող նրա կեդր. վարչութեան հետ։ Իսկ այդտեղի բանակցող հնչակեաններին համոզէք, որ փոխանակ այդ տեսակ խնդիրներով զբաղուելու եւ մեզ զբաղեցնելու, թող մտածեն անմիջական գործունէութեան մասին, թող ձեռք ձեռքի տան մեր ընկերներին եւ համերաշխաբար սկսին գործի. համոզէք, որ երբեք Արփիարները չեն ցանկանար «միութիւն» Դաշնակցութեան հետ. միանալով՝ նրանք կը կորցնեն իրենց դիրքը, նրա ղեկավարի պաշտօնը։ Նրանք կարող են այսուհետեւ պահպանել իրենց raison d'être-*ը*(9) *ոչ թէ այս կամ այն դրական գործը վարելով, այլ լարելով ամբոխի մի քանի ժամանակաւոր զգացումները, «հաստատելով» ներկայ յեղափոխական շարժումը։*

Այս րոպէիս ստացանք Մանուկի[?] *նամակը, որով դարձեալ փող է պահանջում։ Ասէք արդէն ստացած են .....եանի*(10) *հասցէով ուղարկած* 100 fr.։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի:

2.- Հարցը կը վերաբերի Վերակազմեալ հնչակեաններու եւ Դաշնակցութեան միջեւ գործակցութիւն կամ համերաշխութիւն առաջացնելու նախաձեռնութեան, որ ծանօթ էր «միութիւն» անունով:

3.- Արփիար Արփիարեան, ծանօթ գրագէտը, որ անդամ էր Վերակազմեալ հնչակեաններու կեդր. վարչութեան եւ որ Դաշնակցութեան կողմէ կ՚ամբաստանուէր մատնութեամբ եւ թրքական իշխանութեանց հետ գործակցելու ծանր յանցանքներով:

4.- Վերակազմեալ հնչակեաններու Լոնտոն հրատարակուող թերթ:

5.- Միհրան Տամատեան, նոյնպէս անդամ հնչակեաններու կեդրոնին:

6.- «Նոր Կեանք» – Լոնտոն հրատարակուող Վերակազմեալ հնչակեաններու հանդէս:

7.- Կ՚ակնարկուի հնչակեան կուսակցութեան կազմակերպած Պապ-Ալիի ցոյցին՝ Սուլթան Համիտի դէմ (1895 թ.):

8.- Ֆրանսերէն՝ իրենց համար աւելի վատ իմաստով:

9.- Ֆրանսերէն՝ գոյութեան իմաստ:

10.- Անընթեռնելի մէկ բառ:

220

Պատճէններու մատեան No 83, *էջ* 369

5-*ին յունու.* 98 *թ.*

[*Պ. Ս. Բագրատունիին*]

Ընկեր,

Դրամ այս անգամ չենք կարող ուղարկել. դրութիւններս նեղ է եւ մի կերպ արէք, մինչեւ մեր դրամ ստանալը։

Մեզ մօտ արդէն պատրաստ կայ տառերի համեմատական ցուցակը, որ մի ժամանակ դուք ուզել էիք։ Եթէ հարկաւոր է, կուղարկենք։

Բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Ստացած ենք ձեր 21 *դեկտ. եւ* 3 *յունու. բացիկները։*

221

Պատճէններու մատեան No 83, *էջ* 375

8 *յուն*[*ւար*] 98

Զարիֆեանին, Պարիզ

Յարգելի ընկեր,

Այսօր մի նամակ ստացանք պ. M. Gauthier — Villars-*ից* (93, rue de Pourcelles), *որով նա ցանկութիւն է յայտնում ունենալ Խանասորի կուի նկարագրութեան ֆրանսիական թարգմանութիւնը։ Մենք նրան պատասխանում ենք, որ թարգմանութիւնը ստանալու համար դիմի ուղղակի ձեզ։*

Եթէ պարոնին հարկաւոր լինին մեր ընկած զինուոր-ֆէդայիների լուսանկարները, ուրախութեամբ կուղարկենք այն էլ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Ատրաճանակները ստացած են վերջապէս 400 *փամփուշտի հետ միասին։ Պակաս են այն գործիքները, որոնց մէջ դարսում են նախօրօք* 5 *փամփուշտ եւ միանգամից ատրճանակի մէջ մտցնում։ Եթէ դա մոռացած չէ, եւ առանձին է հաշւում, գնեցէք դրանցից մի* 5-6 *հատ եւ ուղարկէք Մարսէյլ պ. Բագրատունուն։ Այդ գործիքն անհրաժեշտ է։*

Հաստատում ենք յունու. 2 *նամակը եւ երէկւան բաց-գիրը։*
ՆՈՅՆ



222

Մատեան No 81-1, *էջ* 35-41 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

10 *յունուար* 18[98]

[*Արեւելեան Բիւրոյին*], *Թիֆլիզ*

Անցեալ անգամ ձեզ արդէն գրուած է Տրդատ Դադեանի առաքելութեան մասին։ Երէկ ստացուեց դրա մի նամակը Պոլսից, որի մէջ կար ներփակեալ եւ Արթին փաշայի նամակը ուղղած Տրդատին(1)։ *Այդ նամակների պատճէնները պատրաստւում ենք կոմիտէներին ցրւելու, բայց որովհետեւ ձեզ ալ կը հասնի, առաջ ենք բերում Արթ*[*ին*] *փաշայի նամակի բովանդակութիւնը* (*բանդերոլի վրայ*)։

Մեր վերջին խօսքը Դադեանին եղել է հետեւեալը.— Մենք մեր կողմից ոչ մի առաջարկութիւն անելու իրաւունք չունինք. մենք պէտք է դիմենք մեր կոմիտէներին, որոնց գործը կը լինի մշակել այդ առաջարկութիւնները եւ ներկայացնել ուր հարկն է, եթէ միայն հարկաւոր դատուեցաւ բանակցութեան մէջ մտնել։ Եւ որպէսզի խմբագրութիւնս քիչ թէ շատ լուրջ հիմք ունենայ մի այդպիսի դիմում անելու կոմիտէներին եւ կոմիտէները նոյն հիմքն ունենան բանակցելու իրար մէջ, անհրաժեշտ է մի լուրջ երաշխաւորութիւն, որ ներկայ դէպքում կարող է լինել Արթին փաշայի գրաւոր խոստումը։ Ահա այդ գրաւոր երաշխաւորութիւնն է, որ Արթին փաշան ուղղակի կերպով մեզ է հասցրել, իսկ թէ ով է այդ նոր մարդը եւ ինչու համար է գալիս, այդ պարզ չէ մեզ համար առայժմ։

Ուրեմն ձեր տեղական ժողովում մտածէք Դադեանի առաջարկութեան վրայ եւ պարզէք հետեւեալ հարցերը.

1) *Հարկաւո՞ր էք համարում ընդհանրապէս այդ տեսակ բանակցութեան մէջ մտնել, թէ ոչ.*

2) *Դաշնակցութիւնը ի՞նչ դիրք է պատրաստւում բռնել, ինչ զիջումներ կարող է անել.*

3) *Ի՞նչ պահանջներ է դնում։*

Բանակցութիւնները մենք անհրաժեշտ ենք համարում սկսել, թէեւ բոլորովին յոյս չունինք, որ իրերի իսկական փափաք առաջ գայ։ Ամենայաջող դէպքում բանտարկեալները կ՝ազատուեն, փախստականները ազատ մուտք կը ստանան եւ գուցէ մի քանի իրադէներ(2) *հրատարակուեն, անգործադրելի մնալու պայմանաւ. բայց դա լաւ ապացոյց կը լինի, որ յեղափոխական գործունէութիւնը, մասնաւորապէս ռմբայինը, ապարդիւն չէ մնում. դրանով ցոյց կը տանք հասարակութեան, որ յեղափոխութիւն ենք անում ոչ թէ յանուն սիրոյ դէպի յեղափոխական արհեստը, այլ ընդհակառակը առիթ չենք բաց թողնում ժողովրդի դրութիւնը բարելաւելու. վերջապէս դա կարելի է համարել յեղափոխութիւն, մասնաւորապէս Դաշնակցութեան բարոյական յաղ[թու]թիւնը ի խրախոյս մեր ապագայ գործունէութեան համար։ Գլխաւորը, այս բանակցութիւնները ոչ մի վնաս չեն հասցրել մեր գործունէութեան։ Բոլորը մէկ է. Պոլսում երկար ժամանակ մի բան պատրաստել անկարող կը լինինք, իսկ մեր «յարձակումները» գլխաւորապէս Պոլսում են կատարուելու. միւս կէտերի վրայ մեր գործունէութեան կարող ենք պաշտպանողական կերպարանք տալ եւ այդպէս էլ կը լինի (յիշեցնենք ձեզ, որ Դաղեանին հասկացրել ենք, թէ ոչ մի պայմանով Դաշնակցութիւնը չի դադարեցնել իր պատրաստութիւնները եւ միշտ կը կռուի, եթէ հարկ լինի թէ ինքնապաշտպանութեան եւ թէ ժողովրդի պաշտպանութեան համար. շատ շատ նա համաձայնի նախայարձակը չլինելու եւ եթէ մեր մէջ փոխադարձ համաձայնութեամբ կայացած առաջարկութիւնները չկատարուեցան — ըստ Դաղեանի — մենք իրաւունք ունինք յարձակողական դիրքը վերսկսելու։ Իսկ ինչ վերաբերում է մեր առաջարկելիք պահանջներին, դեռ այդ մասին որոշ էլքի չենք հասել։ Սկզբում ուզում էինք յենուել Պոլսոյ կոմիտէի պահանջների վրայ՝ հանելով եւրոպացի կառավարիչ նշանակելու կէտը, բայց նա շատ թերի է եւ ընդհանուր, մինչդեռ մենք ամէն ջանք պէտք է թափենք հիմնուել իրական չարիքների վրայ եւ մեր պահանջներին տալ զուտ կենսական կերպարանք, եւ որքան կարելի է մանրամասնաբար շեշտել կէտերը։ Այդ տեսակէտից շատ օգտակար կարող են լինել* 15, 2, 1, 4, 7, 29, 5, 2, 6 [*Շահրիկեան*]-*ը*, 12, 2, 6, 13, 14, 29 [*Մանուկ*]-*եանը եւայլն*... *Մենք մինչեւ իսկ առաջարկում ենք, որ այդտեղից մէկը ձեր ժողովի հրահանգների հետ միասին վեր կենայ գայ այստեղ, եթէ բանակցութիւնները իրօք լուրջ ընթացք ընդունին։ Դա կարող է արագացնել գործը։ Գուցէ հեռաւոր կոմիտէները իրենց լիազօրութիւնը տան։*

Ինչպէս գրել էինք, չգիտենք, թէ նոր մարդ ինչու է գալիս։ Ենթադրում ենք, որ դրանով Արթին փաշան աշխատում է խոյս տալ անմիջական յարաբերութիւնից։ Այդ պատճառով մենք կ՝աշխատենք այնպէս տանել գործը, որ մի դեր չունենայ եւ մենք յարաբերութեան մէջ լինենք ուղղակի Արթին փաշայի հետ։

1.- Արթին փաշա Տատեանը Օսմ. կայրութեան արտաքին գործոց նախարարութեան գործակատարն էր, որ իբր անուղղակի միջնորդ Սուլթան Համիտի բանակցութեան մէջ էր Հ. Յ. Դաշնակցութեան հետ՝ իր եղբօրորդի Տրդատ պէյի միջոցով, որ մէկէ աւելի անգամներ ուղարկած էր Ժընեւ։

2.- Հրամանագիրներ։

223

Պատճէններու մատեան No 83, *էջ* 388-389

31 *յուն.* 98

Մոլէկիւլ կոմիտէին, Բերլին
Ընկերներ,

Ձեր 15 *յունուար նամակն ստացել ենք իր ժամանակին. ներողութիւն ենք խնդրում ուշ պատասխանի համար։*

Ուրախութեամբ կարդացինք կոմիտէիդ վճիռը՝ ձեռնարկել մի շարք հրատարակութիւնների սոցիալիստական վարդապետութիւն տարածելու նպատակով։ Դրա կարիքը մեծ է մեր կեանքի մէջ եւ ինչպէս դուք եւս նկատել էիք։ Խմբագրութիւնս դժբախտաբար անկարող է եղել դրան բաւականութիւն տալու, չնայած իր խոստումին, որ արել է «Գիտական Սոցիալիզմի» թարգմանութեան առաջաբանի մէջ։ Այժմ, երբ մի ամբողջ կոմիտէ իւր վրայ է առնում այդ աշխատութիւնը, յոյս կայ որ գործը կանոնաւոր ընթացք ընդունի եւ մեր երիտասարդութիւնը հնարաւորութիւն ունենայ ծանօթանալու սոցիալիզմի անմիջական աղբիւրների հետ։

Մեր կողմից խոստանում ենք ձեզ ամէն տեսակ աջակցութիւն. առայժմ ուղարկում ենք ձեզ ձեր ընտրած «Մանիֆեստի»(1) *հայերէն թարգմանութիւնը, որ արւել է նոյնպէս գերմաներէնից։*

Աշխատակցութեան համար այստեղ կարող էք դիմել պ. պ. Միքայէլ Յովհաննիսեանին եւ Սարգիս Մինասեանին(2)*, երկուսին էլ համալսարանի հասցէով, Պարիզ եւ Լոնդոն. հասցէ յետոյ կը տանք նախօրօք այնտեղի ընկերների համաձայնութիւնը առնելով։*

Այստեղի տպարանի վրայ մեծ յոյս դնել չի կարելի։ Ունինք ընդամէնը մէկ գրաշար, որը բացի Դրօշակից ամսւայ ընթացքում հազիւ կարող է շարել բրօշիւրից մէկ տպագրական թերթ։ Ձպէտք է մոռանալ, որ մենք կունենանք ուրիշ հրատարակութիւններ եւ ագիտացիական բնաւորութիւն կրող։

Նիւրատուութեան վերաբերեալ ձեր հաղորդած կէտերը կը հրատարակւին յաջորդ համարում։

Ընդունէք մեր ընկերական ողջոյնները։
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Խօսքը կը վերաբերի Կարլ Մարքսի եւ Ֆ.Էնգելսի հեղինակած «կոմունիստական կուսակցութեան մանիֆեստ»ին։

2.- Առաջինը Վարանդեան Միքայէլն է իր իսկական անունով (Յովհաննիսեան). երկրորդը՝ Սարգիս Մինասեանն է, ծանօթ Արամ-Աշոտ եւ Ազատորդի գրական կեղծանուններով։

224

Պատճէններու մատեան No 83, *էջ* 392-393

4 *փետր.* 98

Արվախին(1), *Վառնա*
Ընկեր,

Դեկտ. 29 *եւ յունւ.* 6 *նամակներդ ստացած են։* 1000 fr. *ստանալու մասին արդէն գրուած է։ Թիֆլիզ անընդհատ դիմումներ ենք անում դրամի համար, ստացանք միայն* 100 *ր. եւ քիչ յետոյ խոստումներ։ Միջոցներ չունին բոլորովին։ Այնպէս որ դուցէ դարձեալ հարկաւոր լինի այդտեղ դիմել։ Պոլսի դրամի մասին արդէն կարգադրուած է, Աշոտը կըստանայ։*

Մի նոր թերթ հրատարակելը Բոլգարիայում վատ չի լինիլ, բայց աւելի լաւ չէ՞ ձեր ուժերը միացնել Եգիպտոսի ուժերի հետ եւ մի լաւ թերթ լոյս ընծայել։ Արդէն նրանք տպարան են ձեռք ձգում։ Գուցէ շուտով պատրաստի ունենան։ Նոյնպէս դիմել էին մեզ, յայտնելով իրենց ցանկութիւնը ունենալ իբր խմբագիր կամ Գամեր-Արշաւիրին, կամ Երուանդին։ Որքան մեզ յայտնի է, Գամեր-Արշաւիրը կարող է խմբագիր լինել, բայց ի հարկէ դու աւելի լաւ կը ճանաչես դրանց ուժերը։ Գուցէ քո յիշած դժգոհ երիտասարդները, որոնք ուզում են բաժանուել «Իրաւունքից», հէնց դրանք են։ Այս հարցի մասին յայտնիր քո կարծիքը Վահանին(2)։

Ի՞նչ դրութեան մէջ է Ջհանկիւլի բրօշիւրը։ Մենք դիտմամբ ոչ մի փոփոխութիւն չարինք նրա մէջ, ապագայում զանազան թիւրիմացութիւններից մեզ ազատ պահելու համար։ Թող միայն ինքը լինի պատասխանատու իր գրածներին։

Աշոտին կուղարկենք մենք իր ուզած վկայականը եւ թուղթ կարտերը, այնպէս որ ձեր ուղարկելը աւելորդ է։ Ափսոս, որ Թորգոմը Գրգոյի(4) *խելքին է ընկել։ Իրենց յիմար նամակով պատճառ դարձան մեր յարաբերութեան խզելուն։ Մենք հիմա գործ ունինք միայն Աշոտի* (5) *հետ։*

Մարը(6) *պահանջում է իր գրութիւնը։ Եթէ չի տպագրւելու, յետ ուղարկիր իրեն։*

Ի՞նչ եղաւ Փափազեանի պատկերը (*կոտորածների ժամանակից*)։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Աշոտը հարցնում է մեզ, թէ ինչ ընթացք պահի միւսների նկատմամբ։ Հարցը շատ փափուկ է։ Մենք նրան անորոշ պատասխան կը դրենք, որովհետեւ չգիտենք քո կարծիքը, մինչդեռ մեզ հարկաւոր է մի ընդհանուր զգուշութեամբ տանել գործը, որպէս զի ապագայում դժուարութիւններ առաջ չգան։ Մեր նախորդ նամակի մէջ [անընթեռնելի մէկ բառ] *մեր կարծիքը յայտնել ենք քեզ. յուսով ենք կը պատասխանես շուտով։*

— Յամենայն դէպս պէտք է աշխատել Գիսակի(7) *յիշած Յ.-ին (Օձեցի) Պոլիս մտցնել. եթէ միայն սա Վահապի*(8) *ճանաչած Յ.-է։ Գրգոյին էլ դու աշխատիր խելքի բերել։*

1.- Արվախի – ծածկանուն Վարդ-Պատրիկեան Յակոբի:
2.- Վահան – ծածկանուն Մատինեան Նիկոլի:
3.- Ջհանկիւլ – Յարութիւն Ջհանկիւլեան (Ճանկիւլեան):
4.- Գրգօ – ծածկանուն Սայեան Գրիգորի: Թորգոմը՝ Սերեմճեան Արտաշէսն է:
5.- Աշոտ, Սեւ Աշոտ – ծածկանուն Եղիկեան Կարապետի:
6.- Մար – ծածկանուն Տէր Մարտիրոսեան Միքայէլի:
7.- Գիսակ – ծածկանուն Սերենկիւլեան Յովհաննէսի (Վարդգէս):
8.- Վահապ – ծածկանուն Վռամեան Արշակի:

225

Պատճէններու մատեան No 83, *էջ* 394-395

4 *փետր.* 98

Պ. Զարիֆեանին, Պարիզ

Յարգելի ընկեր,

Ձեր վերջին յունու[ար] 13 *նամակն ստացուած է։ Շնորհակալ ենք* Argus-*ին վճարելուն համար։ Փող ստանանք թէ չէ, ձեր պարտքը կը վճարենք։*

Ի՞նչ եղաւ Խանասորի կռւի թարգմանութեան հարցը. իմացա՞ք, թէ ինչ նպատակի համար է Vorkers-*ը այդ թարգմանութիւնը ուզում ունենալ։*

Նոյնպէս մոռացել էք գրել, թէ հնչակեաններն այդտեղ ինչ են պատրաստւում անել, որի համար բանակցութեան մէջ են Դաշնակցութեան մեծերից մէկի հետ։

Ձեզ արդէն ուղարկւած է Արթին փաշայի հետ ունեցած մեր բանակցութիւնների պատմութիւնը։ Ցմոռանաք ուղարկել այդ շրջաբերականը պ. Սարգսեանին ու Բաղդասարեանին եւս եւ հաղորդել մեզ ձեր կարծիքը։

Գերմանական հայ ուսանողներից կազմւած Դաշնակցական «Մոլեկիւլ» կոմիտէն, ի նկատի առնելով, որ այլ եւ այլ պատճառներով խմբագրութիւնս չի կարողանում հրատարակել սոցիալիստական գրւածքներ, իր վերջին նիստում որոշել է այդ աշխատութիւնը, նոյնպէս նաեւ դրա վերաբերեալ բոլոր ծախքերը իր վրայ առնել։ Կոմիտէն դիմել է մեզ, խնդրելով ցոյց տալ Պարիզում մարդիկ, որոնք կարող կը լինեն աջակցել նիւթապէս եւ մտաւորապէս իրենց ձեռնարկութեան։ Արդ եթէ դուք, կամ Բաղդասարեանը, կամ մի ուրիշները, որոնց չենք ճանաչում, մի այդպիսի ցանկութիւն ունեն, խնդրենք յայտնել մեզ։

Ընկերական բարեւներ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Antoine-*ը խոստացել է մեր ընկերներից մէկին՝ պ. Բաբայեանին մի անցագիր։ Եթէ* Antoine-*ի տեղը գիտէք, խնդրենք հաղորդել նրան, որ չտապի իր խոստումը կատարելու։*

226

Պատճէններու մատեան No 83, *էջ* 400-405

5 *փետր*. 1898

[*Ատրպատականի Կ. Կ.ին, Թաւրիզ*]

Սիրելիք,

Ստացանք Դ-ի երկար նամակը, որի համար յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը։

Համաձայն ենք ձեզ հետ, որ թերթի մէջ աւելորդ է այժմ զանազան մանրամասնութիւններ գրել Խ[անասոր]ի կռւի մասին։ Այդ տեղեկութիւնները մեզ հարկաւոր են բրօշիւրի համար։ Սրա մի մասը տպւել է, սպասում ենք ձեր յաւելածին, որ խնդրում ենք անյապաղ ուղարկել, նոյնպէս Խանի եւ Կրետացու կենսագրութիւններին, որ խոստացել է ուղարկել Սառիկեանը(1)*, բայց չգիտենք ինչու, չի ուղարկում։ Եթէ այս երկուսի մասին դուք էլ բան գիտէք, գրեցէք։*

Ցաւալի է, որ ոչ ոք հոգ չի տանում ընկած տաճկահայերի կենսագրութեան մասին։ Միթէ՞ ընկածներից ոչ մէկը լուսանկար չունի, կամ խմբի մէջ չի նկարւել, կամ մի որեւէ գործով յայտնի չի եղել։ Անպատճառ ուղարկէք եղած լուսանկարները, վնաս չունի, եթէ խմբի մէջ էլ նկարւած լինեն. կարելի է առանձին պատրաստել կլինէն։ Դուք ինքներդ դժգոհ էք, որ տաճկահայերի մասին քիչ է խօսւում. ինչո՞ւ յատկապէս դրա մասին հոգ չէք տանում։

Մեր նախորդ նամակով գրել էինք ուղարկել մեզ դարձեալ լուսանկարներ, եթէ միայն կան։ Դուք գրում էք, թէ կան եւ յետոյ հարցնում, ուղարկենք, թէ չէ. զարմանալի չէ՞, էլ ինչո՞ւ էք հարցնում, ուղարկէք էլի. նոյնը պէտք է ասել Խանասորի քարտէզի համար. ի՞նչ լաւ կը լինէր, եթէ ժամանակին ստանայինք այդ քարտէզը, կռւի իւրաքանչիւր կէտը նշանակած. հիմա էլ ուշ չէ, պատրաստէք եւ ուղարկէք, բրօշիւրին կը միացնենք։ Ուրեմն բրօշիւրը յետաձգում ենք մինչեւ այդ քարտէզի եւ կռւի իւրաքանչիւր կէտի նկարագրութիւնը ստանալը։

Մեզ վրայ վատ տպաւորութիւն թողեց մեր տղերանց վարմունքը գիւղացիների հետ։ Դրա առաջը պէտք է առնել, կարգապահութիւն անհրաժեշտ է, ինչ գնով ուզում է լինի։ Գրում էք, որ դժւար է կոմիտէի անդամներին ծածուկ պահել։ Համաձայն ենք, որ դժւար է, եւ հարկաւոր՝ խօսքը լսել տալու համար, բայց միթէ՞ կարելի չէ ներկայացնել տղերանց կամ ժողովրդին իբր կոմիտէ յանձնարարութիւնները կատարող եւ ոչ իբր կոմիտէի անդամ. թող կոմիտէն մնայ մի վերացական հասկացողութիւն, որի ոչ տեղն է յայտնի, ոչ կազմութիւնը։

Լուրերին նայած, քրդերը լրջօրէն մտածում են Սալմաստի վրայ արշաւել։ Ի հարկէ պատրաստութիւններ տեսած կը լինէք, բայց չգիտենք, մտածում էք, թէ ոչ դինամիտի մասին։ Մեր կարծիքով այդ զէնքը կարող է մեծ յաջողութիւն ունենալ քրդերի դէմ. գիւղի մէջ տներից կարելի է ռմբերով կռւել, իսկ ճանապարհներին մինաներ պատրաստել։

Ոսկանի խնդրի մէջ քիչ չէ մեղաւոր Երւանդը(2)*. սա որ ուզենար, կարող կը լինէր նրան սանձահարել։*

Ինչ որ է, դա մի դարտ ու բալա է դառել մեր գլխին։ Մեր կարծիքով պէտք է վերջ

[տալ] այդտեղի իշխանութեան երկուութեան։ Մի իշխանութիւն կազմում է կոմիտէն, միւսը Վասպուրականի ներկայացուցիչն է։ Ներկայացուցչական ձեւը պէտք է վերացնել (կարծես դեսպաններ լինեն) եւ կոմիտէն կազմել խառը այդտեղացիներից եւ տաճկահայերից։ Եթէ Վասպուրականը համաձայնի, շատ լաւ բան կը լինի։ Այդ մասին մենք կը գրենք իրենց։ Ի դէպս յիշենք մի ցաւալի լուր։ Գերմանական լրագիրներին հեռագրում են Պոլսից, որ Տէրոյեանը(3) իր երկու ընկերներով սպանուած են։ Չգիտենք, թէ որքան ստոյգ է այս լուրը, բայց եթէ ճիշդ է, Վանի կեդր. կոմիտէն շատ կը թուլանայ Վազգէնի մահով։ Ձեր պարտականութիւնը կը լինի նրան մի փոխարինող գտնել։ Սպասում ենք անհամբեր այդ լուրի ստուգութեան։ Դուք էլ ձեր իմացածը հարկաւ իսկոյն հաղորդած կը լինէք մեզ։

Շէկոյի արձանագրութիւնը անպատճառ ուղարկէք։ Մենք մինչեւ իսկ առաջարկում ենք հրապարակ հանել թերթի միջոցով։ Եթէ հակառակ բան ունէք, գրեցէք։

Համար ուղարկում ենք 1) Խոյի հասցէներով 180 հ[ա]տ. 2) Սալմաստ Բժշկի 50 հ[ա]տ եւ 3) Թեհրանի 90 հ[ա]տ։ Ստացա՞ծ են բոլորը, թէ ոչ, խնդրենք հաղորդել։ Ռուսաստան ուղարկէք նոյն քանակութեամբ. պակսեցնելու հարկ չկայ. երկրի համար, եթէ ուզում էք, կարող ենք աւելի շատ ուղարկել։ Տուէք միայն նոր հասցէ, կամ կարող ենք հին հասցէով կրկնել։ Հէնց այս անգամ նախկին [?] հասցէով դարձեալ 50 օր[ինակ] կ՚ուղարկենք։

Պետոյի եւ Բաբկէնի մեծադիր պատկերները ունինք. ուզում ենք ձեզ էլ ուղարկել։ Կարելի՞ է թերթերի հասցէով օգտւել։

Ի՞նչ լուր ունէք Թեհրանից. այնտեղ այս տարի ո՞վ կայ, ինչ են շինում։

Նամակովս ուղարկում ենք Դաղեան փաշայի հետ ունեցած մեր բանակցութիւնների առթիւ շրջաբերականը։ Յայտնէք շուտով, ձեր կարծիքը։ Թերթերի մէջ եւս կ՚ուղարկուեն մի քանիսը (10 հատ) զանազան կողմեր ցրւելու համար։

Տաճկաստանի մանրամասը քարտէզ դժւար թէ կարողանանք գտնել։ Մենք ունենք մէկը, բայց Թաւրիզինը աւելի ճիշդ եւ մանրամասն է։ Յամենայն դէպս կը փնտռենք։ Ո՞վ է հնչակեան Փարամազը(4)։ Դա նախկին Ֆարաշբաշին է՞, թէ Արդաբիլի ուսուցիչը։

Անցեալ նամակում հարցրել էինք Կարապետ Փանոսեանի եւ արհեստանոցի դրութեան մասին. ոչինչ չէք գրել։ Երեւի արհ[եստանոցի] մասին չէք հասկացել. ինչ անենք, որ Մխիթարը հետը տարել է. Հայրենիք սրբազան երգէք(5), պրծաւ գնաց։

Կարոյի նամակներն ստացանք, շնորհակալ ենք, սպասում ենք միւս նամակներին։ Չի՞ կարելի արդեօք գտնել Մարոյի գրած վերջին նամակը, որ պէտք է լինի Կարոյի թղթերում(6)։

Սաքոն(7) վերադարձել է Թիֆլիզ։Ովքե՞ր են պատրաստւում այդտեղ գալ։ Մի բան, որ մենք չէինք սպասում, դա Նիկոլի ու Վարդանի հակառակութիւնն էր(8)։ Բարեբախտաբար դրանց հարցը փակւած է, ինչպէս գրում են Թիֆլիզից։

Չգիտենք, Վասպուրականի, այդտեղի անցած դարձածների մասին գրած կը լինէք, թէ սպասում էք մեր յատուկ հարցերին։ Մեզ զարմացրեց Դաւրիզի յանդիմանութիւնը ուղղած մեզ, թէ «խմբագրութիւնը սառն է կապւած կոմիտէների հետ», թէ իր ժամանակին հարկաւոր հարցերը չի տալիս եւ այլն... Ի՜նչ հարցեր. միթէ՞ դուք ինքներդ չէք հասկանում, թէ այս ինչ, այն ինչ հարցերի մասին պէտք է գրել։ Երբ մենք երկար ժամանակ սպասում ենք, ոչինչ չենք ստանում, կամ թէ չէ ստանում ենք թերի տեղեկութիւններ, ստիպւած ենք լինում հարցեր տալ. դուք վեր էք կենում եւ մեզ նկատողութիւն անում, թէ հարցերը ուշ են տրւած։ Մի անգամ ընդ

Միշտ խնդրում ենք 1) գրել մեզ բոլոր բաների մասին, որ տեղի են ունենում Պարսկաստանում 2) Հաղորդել Տաճկաստանից եկած բոլոր լուրերը 3) Հաղորդել [մէկ տող անընթեռնելի] ուղարկել մեզ որքան կարելի է շատ լուսանկարներ, մանրամասը տեղեկութիւններով իւրաքանչիւր գործիչի մասին։ Աւելի լաւ կը լինի վերցնէք ձեր կամերայը, արտադրէք եւ լրացուցիչ տեղեկութիւններով մեզ ուղարկէք։

Ինչպէս անցեալ անգամ գրել էինք, մեզ հարկաւոր են տեղեկութիւններ Պարսկաստանի ոչ-յեղափոխական ընդհանուր կեանքի մասին եւս։ Մի նայէք, որ թերթերի համար աւելորդ է, շատ անգամ մեզ դիմում են, մասնաւոր տեղեկութիւն ուզում մեզանից այս կամ այն դէպքի մասին։ Իսկ մենք ոչ միայն չենք կարողանում տալ, այլ ինքներս սպասում ենք Արմէնիային, նրանից մի բան իմանալու համար։ Այնպէս որ եթէ սովորութիւն դարձնէք պարբերաբար երկու շաբաթ մի անգամ այլ եւ այլ տեղեկութիւններ հաղորդել մեզ, թէ յեղափոխական, թէ ընդհանուր, մենք շատ եւ շնորհակալ կը լինենք։

Ընդունէք մեր ընկերական բարեւները՝

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Խանը՝ Դաւթեան Կարապետն է (1873-1897), Կրետացին՝ Միրզայեան Աստուածատուր (1871-1897), երկուքն ալ զոհուած Խանասորի արշաւանքի ընթացքին: Սառիկեան Յակոբ (1872-1945), հետագային քահանայ:

2.- Զաղոյեան Ոստանիկ: Երուանդը՝ Իշխան Յովսէփի Արղութեանն է:

3.- Տէրոյեան Տիգրան, ծանօթ Վազգէն ծածկանունով (1872-1898), որ արդարեւ 1898 թ. Յունուար 2-ին Կուռուպաշի դաշտին մէջ (Վասպուրական) իր խումբին հետ կռուի բռնուելով թուրք զօրքին հետ, նահատակուած էր երկու ընկերներու հետ:

4.- Փարամազ (Սարգիսեան Մատթէոս), հնչակեան ծանօթ ղեկավար դէմք:

5.- «Հայրենիք սրբազան»ը այն երգն է, որուն խօսքերը Ռոստոմ կը գործածէր իր թուանշային ծածկագրերուն համար. երեւի Մխիթարը (բժ. Քրիստափոր Օհանեան) հետը տարած է երգին բառերը:

6.- Կարոն՝ Ռոստոմի եղբայր Արիստակէս Զօրեանն է, նահատակուած Խանասորի կռիւներուն: Մարոն՝ Մակարեան Մարիամ՝ անձնասպանութիւն գործած էր սիրեցեալին (Արիստակէսի) յեղափոխական գործունէութեան արգելք չհանդիսանալու համար:

7.- Սաքոն՝ Սեւքարեցի Սաքոն է (Ծովիանեան):

8.- Խօսքը կը վերաբերի Նիկոլ Դումանի եւ Խանասորի արշաւանքին հրամանատար Վարդանի միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութեան:

227

Մատեան No 81-1, *էջ* 44-48 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

7 փետր. 98

[*Արեւելեան Բիւրոյին*], *Թիֆլիզ*

Ստացանք 8/20 *յուն*[*ւար*] *եւ Վարդանի* 10 *յուն. նամակները։*

Հիմա մեր նամակները. ինչպէս տեսնում ենք, պիտի սկսին եւ վերջանան փողի պահանջով։ Ձեր ուղարկած 100 *ր*[*ուբլին*] *միայն ծիծաղ կարող էր շարժել։ Եթէ խակապէս միջոց չունէք, թող մի որեւէ քաղաք իր վրայ առնի կանոնաւոր մեզ ամսականները հասցնելը, իսկ եթէ այդ եւս անկարելի է, գրեցէք, գրաշարին ճանապարհ կը ձգենք, թերթը ուշ ուշ կը հանենք, պրոշիւր չենք հրատարակել եւայլն... ուրիշ ճար չկայ. պինդ ընկած տեղը մեզանից ստիպւած կը լինի հեռանալ եւ մասնաւոր պարապմունք գտնել մի կողմը թողնելով զանազան արտաքին պահանջներ։ Այս բոպէիս Մելիքը*(1) *պահանջում է մեզանից* 500 *ֆր. թէ իր պարտքերը տալու եւ թէ ապրելու համար։ Անպիտան ամերիկացիները չեն պահում նրան։ Մենք ուզում ենք փող ուղարկել, միայն այն պայմանով, որ նա թողի Ամերիկան, գայ։ Որքան շատ ուշանայ, այնքան աւելի պէտք կը լինի ուղարկել. ահա թէ ինչու ենք չտապում նրան փող հասցնելու։*

Արվախի(2) *մօտ եղած փողերից մենք ստացել ենք մօտ* 5000 *ֆր.։ Ուրիշ տեղեր էլ են ուղարկւած եւ այժմ էլ ուղարկւում են։*

Ձեր նամակի մէջ երկու կէտ չհասկացանք։ Գրում էք, որ ժողովի ձեւը, տեղը նրանք պիտի որոշեն։ Ովքե՞ր այսինքն։ Յետոյ պարզ չէ, թէ ինչ խորհրդին են մասնակցելու ձեր հրաւէրով Բորիսը, Վարդը(3) *եւ մի քանիսները։ Նիկոլի եւ Վարդանի*(4) *մէջ առաջացած դժգոհանքները մեզ համար անսպասելի էին. լաւ է, որ հարցը փակւած է։ Նիկոլն աւելի լաւ կ'անի վերադառնայ իր հին տեղը*(5)։ *Մարի*(6) *գործերը աջող չեն գնում. ո՞վ գիտէ, դեռ երբ պէտք կը զգացւի նրա ուժերի մէջ։*

Վիշապի(7) *դրութիւնը շատ էլ նախանձելի չէ։ Դէպքից յետոյ*(8) *աննշան ոյժ էր մնացել։ Մնացողների մէջ վստահութիւն ներշնչողը Թորգոմն*(9) *է. Գրգոյին*(10) *պէտք է կարսեցիք լաւ ճանաչէք։ Նրան վստահել բոլորովին դժւար է։ Կան մի երկու աննշան ուժեր եւս։ Պարզ բան է, որ մենք չէինք կարող դրանց ձեռքը տալ Պոլսոյ Կենտ. կոմիտէի կնիքը, որ կարող էին ոչ-այնքան նպատակայարմար կերպով գործադրել, մանաւանդ Արթին փաշայի հետ ունեցած փափուկ խնդրի ժամանակ, իսկ դրանք անպատճառ ուզում էին «առանձին հաշիւ բռնող Օրմանեանի*(11) *եւ միւսների» հետ։ Մեր այս մերժումը դրանց շատ բարկացրել էր եւ մեզ մի վիրաւորական նամակ էին գրել, որից յետոյ մեզ մնում էր միայն խզել դրանց հետ ամէն յարաբերութիւն։ Բարեբախտաբար Աշոտը այդ ժամանակ կարողացաւ ներս մտնել*(12). *դա գործունեայ եւ փորձւած տղայ է։ Եթէ նրան յաջողւեց համոզել միւսներին, որ իրենց դերից դուրս չգան, կեղրոնական ձգտումներ չունենան, շատ լաւ կը լինի։ Շուտով գուցէ ներս մտնի մի ուրիշ կարող երիտասարդ եւս։ Բայց այսպէս ձգել չի կարելի։ Եթէ ոչ Պոլսի մէջ, գոնէ Բոլգարիայում անհրաժեշտ է մի ղեկավարող մարմին։ Պոլսում դրամ կայ, Աշոտը մաս մաս կստանայ ընթացիկ ծախքերի համար։*

Արվախը այլեւս չի խօսում իր հեռանալու մասին. երեւի բոլորովին թողել է իր

մտադրութիւնը կամ յետաձգել է։ Նրա մասնաւոր միջոցները իր հեղինակութիւնների արդիւնքից պէտք է կազմուեն։

Սիմէոնը այդ կողմերը գալու ոչ մի մտադրութիւն չունի, իսկ Յոնանը(13) ասում է, որ իր վրայ յոյս չդնեն. կարող է գնալ, կարող է չգնալ։

Այժմ գանք Վարդանի նամակին։

Զարմանալի բան է. թէեւ ինքը խոստովանում է, որ իրենք են մեղաւոր մեզ ճիշդ եւ լրիւ տեղեկութիւններ չհասցնելու մէջ, բայց եւ այնպէս մեզ նկատողութիւններ է անում։ Մենք ի՞նչ անենք, ինչպէ՞ս իմանանք, թէ այս կամ այն լուրը ճիշդ է, թէ ոչ։ Հանգուցեալ Վազգէնն(14) էլ (հանգուցեալ ենք գրում, որովհետեւ գերման. լրագրողների հաղորդելով նա իր երկու ընկերների հետ սպանուած է) դատապարտում էր մեզ Շարաֆին(15) սպանուած յայտարարելու մէջ։ Վարդանի գրած սրբագրութիւնները ուշ են հասել, որովհետեւ արդէն բրօշիւրը եւ թերթերը տպագրուած են. սպասում ենք Սարիկեանի(16) խոստացած կենսագրութիւններին (Խանի, Կրետացու)(17)։ Բայց կարելի է իբր յաւելուած հրատարակել լրացուցիչ տեղեկութիւնները. կարելի է պատրաստել իւրաքանչիւր խմբի, կամ աւելի ճիշդն ասած իւրաքանչիւր կէտի վրայ տեղի ունեցած կռիւների նկարագրութիւնը։ Սպասում ենք անհամբեր այդ լրացուցիչ տեղեկութիւններին։ Նոյնպէս եւ կենսագրութիւններին։ Որպէսզի տաճկահայերի արդար բողոքներին (դրա մէջ եւս բացառապէս թղթակիցներդ էք մեղաւոր) բաւականութիւն տրւի, ուղարկէք սպանուած բոլոր տաճկահայերի, մասնաւորապէս .....(18) Գրիգորի կենսագրութիւնները եւ եղած լուսանկարները։ Այս մասին Պարսկաստան էլ ենք գրել։

Ի միջի այլոց միթէ՞ տղերաց խելքը չի կտրել գնդակներով ջարդեք Շարաֆի սնտուկի կողպէքը։ Կարսայ մէջ զինուորները այդ մեթոդով էին բացում ամրապինդ դրամարկղերը։

Ո՞վ է 20-որդ նահատակը։ Բժիշկը(19) գրել էր, թէ նա հնչակեան էր։ Բայց ինչո՛ւ մինչեւ հիմա անունը, ազգանունը չէք գրում։ Առանց այդ ինչպէ՞ս կարելի է հրատարակել։ Դա էլ անպատճառ յայտնեցէք։

Իմացանք, որ Շէկոյի(20) սպանողների վճիռը կատարուել է։ Պարսկաստանի մեր ընկերները յարմար չե՞ն դատում դատի արձանագրութիւնը հրատարակութեան տալ։ Եթէ կողմնակի մի որեւէ արգելք չկայ, մեր կարծիքով դրա հրապարակ հանելը լաւ տպաւորութիւն կը թողնի հասարակութեան վրայ։

1.- Մելիք – ծածկանուն Իւսուֆեան Յովհաննէսի (1850-1920), որ այդ օրերուն կը գտնուէր Ամերիկա, տեղւոյն կուսակցական-կազմակերպական գործով:

2.- Արվախի – ծածկանուն Վարդ-Պատրիկեան Յակոբի, խմբագիր Վառնայի «Շարժում» թերթի:

3.- Բորիս – ծածկանուն Խաչատրեան Սմբատի: Վարդը՝ նոյն Վարդ-Պատրիկեան Յակոբն է:

4.- Նիկոլը՝ Նիկոլ Դումանն է (Տէր Յովհաննիսեան). Վարդանը՝ Խանասորի Վարդանն է (Մեհրաբեան Սարգիս):

5.- Հին տեղը՝ Ատրպատականն է:

6.- Մար – ծածկանուն Տէր Մարտիրոսեան Միքայէլի:

7.- Վիշապ – ծածկանուն Պոլսոյ:

8.- Դէպքից յետոյ՝ ակնարկութիւն Պանք Օթոմանի:

9.- Թորգոմ – ծածկանուն Սերեմճեան Արտաշէսի:

10.- Գրգօ ծածկանունով ծանօթ էր Գրիգոր Սայեանը, յայտնաբար սակայն այլ է Ռոստոմի յիշածը:

11.- Խօսքը Կ. Պոլսոյ պատրիարք Մաղաքիա Օրմանեանի մասին է:
12.- Աշոտ, Սեւ Աշոտ – ծածկանուն Եղիկեան Կարապետի, որ կարողացած էր «ներս մտնել», այսինքն Պոլիս մտնել:
13.- Յոնան Դաւթեան: Սիմէոնը՝ Շխեանն է:
14.- Վազգէն – ծածկանուն Տէրոյեան Տիգրանի, որ նահատակուած էր տարուան սկիզբը հերոսաբար կռուելով:
15.- Շարաֆ – քիւրտ ցեղապետ Մազրիկ ցեղի, որ պատահմամբ փրկուած էր Խանասորի կռիւներու ընթացքին:
16.- Սառիկեան Յակոբ (1872-1945), Խանասորի արշաւանքի մասնակիցներէն՝ յիսնապետի աստիճանով. հետագային քահանայ:
17.- Խան – ծածկանուն Դաւթեան Կարապետի (1873-1897). Կրետացի – Միրզայեան Աստուածատուր (1871-1897): Երկուքն ալ զոհուած Խանասորի կռիւներու ընթացքին:
18.- Անընթեռնելի անուն:
19.- Բժիշկ Քրիստափոր Օհանեան (1864-1932):
20.- Շէկօ – ծածկանուն Պարսամեան Արշակի (1869-1897), դաշնակցական հայդուկ, սպաննուած Թաւրիզի մէջ անձնական վրէժխնդրութեան հետեւանքով:

228

Պատճէններու մատեան No 83, *էջ* 413-416

9 *փետր.* 1898

Տրապիզոն

Սիրելիք,

Ձեր դեկտ. 9/16, 13/25 *եւ յուն.* 4/16 *նամակներն ստացած են։*

Մինչեւ հիմա ոչ մի նոր տեղեկութիւն չստացանք Վազգէնի դէպքի մասին, ոչ հաստատ, ոչ հերքող։ Վախենում ենք, ճիշդ լինի գերմանական լրագիրների հաղորդածը(1)։

Մեզ զարմացնում է ձեր վերաբերումը, վերին աստիճանի կասկածոտ, դէպի Մեծ Քաղաքի բիւրոն։

Այս տարւայ նրանց բայոնական ժողովը ձեզ տեղի է տուել կարծելու, թէ դրանով նոքա իրենց միապետական ուղղութիւնը չխախտելու համար, ընդհանուր ժողովի իրագործումը մի կողմն են թողնում։ Մինչդեռ Մեծ Քաղաքում ամէն տարի կայանում են բայոնական ժողովներ, որոնք ոչ մի կապ չունին ընդհանուր ժողովի գաղափարի հետ (անցեալ տարւանը թիւրիմացութեամբ է միայն ընդհանուր կոչւել, որի դէմ մենք իր ժամանակին բողոքել ենք)։ Ընդհանուր ժողովը պիտի կայանայ բոլորովին անկախ Մեծ Քաղաքի ժողովներից։ Իր ժամանակին մենք խնդրել ենք, որ իրենց բայոնական ժողովում որոշեն ընդհանուր ժողովի տեղը, ձեւը, ժամանակը եւ այլն։ Բացի այդ, առաջարկել ենք ընտրել պատւիրակներ՝ իրենց, Ռուսաստանի եւ Պարսկաստանի կոմիտէների կողմից ընդհանուր ժողովին ներկայանալու։ Եւ թէ Մեծ Քաղաքացիք ընաւ մտադրութիւն չունին խաբել սրան, նրան, խանգարել ընդհանուր ժողովի կայանալը, դա պարզ է եւ Նաւահանգստի(2) *մի նամակից, որով բողոքում են Մեծ Քաղաքի առաջարկութեան դէմ՝ պատւիրակների միջոցով ներկայանալ ընդհանուր ժողովին եւ ոչ այն ձեւով, որ իւրաքանչիւր կոմի-*

տէ ունենայ իր առանձին ներկայացուցիչը։ Մեր կարծիքով՝ Նաւահանգիստը զուր է բողոքում։ Առանձին ներկայացուցիչներ ուղարկելու իրաւունքը վերապահւում է միայն բուն երկրի գործիչ կոմիտէների համար։ Ամերիկան, Եգիպտոսը, Բոլգարիան կ՝ունենան միմիայն մէկ մէկ ներկայացուցիչ, իսկ Ռուսաստանինը եւ Պարսկաստանինը թող կատարւի պատւիրակների ձեւով։ Ուրիշ կերպ, այսինքն, եթէ ամէն մի դաշնակցական կոմիտէ (արտասահմանեան, երկրից դուրս) իրաւունք ունենայ մի մի ներկայացուցիչ ուղարկել, խառնաշփոթ բան դուրս կը գայ, դա ընդհանուր ժողով չի լինիլ։

«Դիմակաւորները» դեռ լոյս չի տեսել եւ դժւար թէ շուտով լոյս տեսնի։ Ուղարկել էին մեզ տպագրելու, մենք մերժեցինք։ Վառնան էր համաձայնւել առաջ, բայց յետոյ նա էլ մերժեց։ Բրոշիւրն այժմ իրեն Ճանկիւլեանին են վերադարձրել, մինչդեռ այդ բրոշիւրի հրատարակութիւնն անհրաժեշտ էր։

Արփիարը իր արբանեակներով դադար չեն տալիս մեզ իրենց կեղտոտ արշաւանքով։ Ամէն կողմից մեզանից բացատրութիւն են պահանջում, մենք էլ ստիպւած կը լինինք բերան բանալ, ասպարէզ հանել դրանց բոլոր կեղտոտութիւնները, թէ չէ հասարակութիւնը տեսնելով մեր լռութիւնը սկսում է հաւատալ քիչ քիչ Արփիարի օյինբազութիւններին։

Կռւածաղիկ(3) յարմար հասցէ չունինք ձեզ տալու. քիչ սպասեցէք. կը ստանանք եւ կ՝ուղարկենք։ Աւելի քաւ է, կը գրենք, որ ուղղակի ձեզ տան իրենց հասցէն։

Բարեւներ։
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Արտասահմանեան թերթերում կարդացինք Նշան Քէչիչեանի մահւան մասին։ Նրա լուսանկարը մեզ մօտ կայ, որի վրայ գրւած է, թէ Արխանեանի խմբի անդամ է եղել, իսկ այժմ Տրապիզոնի, թէ Երզնկայի դաշնակցական խմբի անդամ է։ Տարւայ տեսութեան մէջ յիշելով Նշանի կորուստը, միայն առաջինը յայտնեցինք, վստահ չլինելով երկրորդի վրայ։ Ինչո՞ւ նրա մասին ոչ մի տեղեկութիւն չէք գրել։

Աշխատէք թղթակցութիւններ հասցնել։

ՆՈՅՆ

1.- Տես 5 Փետր. 1898 թ. նամակի ծանօթագրութիւն թիւ 3-ը (էջ 215)։

2.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի։ Մեծ Քաղաքը անշուշտ Թիֆլիսն է կամ Հ.Յ.Դ. Բիւրոն։

3.- Կռւածաղիկ – ծածկանուն Պոլսոյ։

229

Պատճէններու մատեան No 83, *էջ* 417-418

9 *փետր*. 1898

Արվախին(1), *Վառնա*

Սիրելիս,

Քանի որ այդպիսի անհամաձայնութիւն է տիրում մեր եւ Զոհ կոմիտէի(2) *մէջ, քանի որ այնտեղ ղեկավարող մի ոյժ չկայ, այժմ աւելի քան երբեք անհրաժեշտ է ունենալ Բօլգարիայում մի յատուկ մարմին, որ մշտական յարաբերութեան մէջ լինի պոլսեցոց հետ։ Այդ նպատակով գրած ենք այսօր Գիսակին*(3)*, որ նա անպատճառ մեկնի Վառնա, այլեւս չձգձգի այդ հարցը։ Նրա հետ միասին յարաբերութիւն կը պահպանէք մինչեւ որ տեսնենք, թէ ինչ է լինում։*

Կեդրոնական կոմիտէն հաղորդեց մեզ, որ Ճանկիւլեանի բրօշիւրը յետ են ուղարկել իրեն, որովհետեւ 200 fr. *կը նստի նրա տպագրութիւնը։ Սա եղաւ երեխայական խաղ։ Միթէ՞ առաջ չէր կարելի այդ բանը մտածել։ Այսքան նամակագրութիւն, մի տեղից միւս տեղ փոխադրութիւն, մերժում, վերջ ի վերջոյ խոստում եւ յետոյ դարձեալ այդ չարաբաստիկ բրօշիւրը Եգիպտոս է ճանապարհ ձգւում։*

Այժմ մենք ենք ստիպւած ասել այն, ինչ մասամբ այդ բրօշիւրը կ՚ասէր հասարակութեան։

Ընդհանուր ժողովի պատրաստութիւններ են տեսնւում։ Թիֆլիսից գրել էին, որ ինչ որ խորհրդի համար հրաւիրելու են Բօրիսին(4)*, քեզ եւ մի քանիներին։ Զհասկացանք լաւ։ Ենթադրում ենք, որ այդ խորհուրդը ընդհանուր ժողովն է լինելու, որովհետեւ մենք առաջարկել էինք, որ ժողովին ներկայացողները պէտք է անպատճառ վկայական ունենան իրենց ուղարկող մարմնի կողմից։ Իսկ այն անձնաւորութիւնները, որոնք չեն կարող ընտրել, բայց որոնց ներկայութիւնը անհրաժեշտ է ժողովին, թող առանձնապէս հրաւիրւեն։ Մեր առաջարկութիւնը՝ հրաւիրողները լինեն խմբագրութիւնը* [լուսանցքի վրայ գրուած 1 տող շարունակութիւնը՝ անընթեռնելի]:

Վահագնը հիմա Եգիպտոսում պարապ նստած, գանգատւում է, որ իրեն առանց միջոցների են ձգել։ Ուզում է Բօլգարիա վերադառնալ մասնաւոր գործ գտնելու համար։ Փող է ուզում, եթէ կարող էք ուղարկէք նրան։

ՆՈՅՆ

1.- Արվախի – ծածկանուն Յակոբ Վարդ-Պատրիկեանի:
2.- Զոհ կոմիտէ – Կ. Պոլսոյ Սամաթիա թաղաքամասի կոմիտէ (մարտական):
3.- Գիսակ – ծածկանուն Յովհ. Սերենկիւլեանի (Վարդգէս):
4.- Բօրիս – ծածկանուն Խաչատրեան Սմբատի:

230

Պատճէններու մատեան No 83, *էջ* 424-425

11 *փետր.* 1898

[*Ատրպատականի Կ. Կ.ին*] *Թաւրիզ*

Սիրելիք,

Հաստատում ենք մեր փետր. 5-*ի նամակը։*

Այսօր ստացանք Գագիկի նամակը, որով խնդրում է տպագրել, թէ «Վրէժ» Կեդրոն. կոմիտէն(1) *ստացել է Թուրանից*(2) 4120 *ղռ*[*ան*], (3000 *ղռ*[*ան*] *կանխիկ, ճանապարհածախս՝ Արբակին* 420 *ղռ*[*ան*], *Ղարամիրզին* 200 *ղռ. Գապակարախանին* 150 *ղռ*[*ան*], *Սաղաթէլին* 200 *ղռ*[*ան*], *Միքայէլին* 150 *ղռ*[*ան*])։

Սա անկանոնութիւն է. եթէ Վրէժ կոմիտէն է ստացել, նա՛ պէտք է մեզ յայտնի, եւ ոչ թէ ուղարկողը։ Այսպէս հաշիւները շատ կը խառնուեն։ Կարծենք, որ աւելի դիւրին է գրել Թեհրանից Թաւրիզ, քան թէ Թեհրանից այստեղ, եւ եթէ ձեր գլուխը խառն է եղել արշաւանքից յետոյ(3) *եւ չէք կարողացել ամբողջ հաշիւն ուղարկել, հիմա կարող էին Թեհրանից ձեզ յիշեցնել միայն։*

Աւելի տարօրինակ է, որ մեզանից են ստացական պահանջում այդ ուղարկւած 4120 *ղռ*[*անի*] *համար։*

Մենք ինչպէ՞ս կարող ենք ստացական տալ, թէ Վրէժ կոմիտէն այս ինչ մարդուց այսքան փող է ստացել։

Միթէ՞ ինքը «Վրէժ» կոմիտէն չի կարող ստացական տալ։ Ինչո՞ւ ձեզ չեն դիմում։

Մենք հիմա շւարած ենք մնացել, տպագրե՞նք, թէ ոչ ուղարկած հաշիւը։ Եթէ մինչեւ իսկ այս անգամ տպագրենք, դա իբր բացառութիւն կ՚անենք, եւ վերջին անգամը կը լինի։ Ժամանակ է կանոնաւորութիւն մտցնել յարաբերութեան մէջ։ Վրէժը կեդրոնական կոմիտէ է. միւս կոմիտէները ինչ հաշիւ որ ունին մեզ հաղորդելու, թող հաղորդեն նրա միջոցով։

Մի քանի անգամ մեզ հաղորդել են, թէ նահատակների թիւը 20 *է եւ ոչ* 19 *եւ թէ* 20-*որդը մի հնչակեան է։ Բայց ինչո՞ւ մինչեւ հիմա չէք ուղարկում այդ մոռացեալի անունը, ազգանունը եւ այլն։ Երեւի Դաւրիզը սպասում է, որ յատկապէս հարց տանք դրա մասին եւ դուցէ դժգոհ լինի մեզանից, որ հարցը ուշ է տրւում...*

Սպասում ենք ձեր նամակին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Վրէժ – Ատրպատականի Կեդր. կոմիտէ, Թաւրիզ կեդրոնով։
2.- Թուրան – ծածկանուն Պարսկաստանի մնացեալ շրջանի, Թեհրան կեդրոնով։
3.- Ակնարկութիւն Խանասորի արշաւանքին։

231

Պատճէններու մատեան No 83, *էջ* 437

14-*ին փետր*. 1898
Ժընեւ

Մինաս Ջերազին, Լոնդոն

Յարգելի հայրենակից,

Մեր ստացած մի տեղեկութեան համաձայն ձեզ ծանօթ պիտի լինի օրիորդ Վարսենիկ Գալէմքերեանը, որ անցեալ տարւայ ապրիլին եկել է Լոնդոն։

Եթէ ստոյգ է մեր ստացած տեղեկութիւնը, մեզ շատ պարտաւորեցրած կը լինէք, եթէ բարեհաճէք յայտնել վերոյիշեալ օրիորդի հասցէն։

Ընդունէք մեր յարգանաց հաւաստիքը։

ԽՄԲԱԳՐ[ՈՒԹԻՒՆ] «ԴՐՕՇԱԿԻ»

232

Պատճէններու մատեան No 83, *էջ* 440

15 *փետր*. 1898
Ժընեւ

Արվախին, Վառնա

Սիրելիս,

Կեդրոնական կոմիտէին գրած նամակից կ'իմանաս ընդհ. ժողովի կայանալու պայմանների մասին։ Աւելացնենք միայն, որ ժողովը տեղի է ունենալու Անտոնի(1) *քաղաքում (հաւանական է Թիֆլիզում) մարտի* 24-*ից սկսած։ Բայց տեղի եւ ժամանակի մասին առայժմ <u>ոչ ոքի</u> չպէտք է յայտնել. կը յայտնենք միայն վերջին րոպէին։ Թող առայժմ մշակեն առաջարկութիւնները, պատգամաւորը ընտրւի, պատրաստ մնայ։*

Ո՞վ պէտք է լինի ձեր ընտրելին. խամ մարդկանցից պէտք է զգուշանալ։ Մեր կարծիքով յարմարագոյնը Քանարեանն է։

Թէ մեզանից ով կը գնայ, դեռ եւս յայտնի չէ։ Հրաւիրում ենք Մէլիքին(2) *եւս։ Դու ինչպէ՞ս։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Յունւ[ար] 24 *նամակդ ստացել ենք։*

1.- Անտոն – ծածկանուն Սիմոն Զաւարեանի: Խօսքը անշուշտ Հ.Յ.Դ. Երկրորդ Ընդհ. ժողովի մասին է:

2.- Մէլիք – ծածկանուն Իւսուֆեան Յովհաննէսի:

233

Պատճէններու մատեան No 83, *էջ* 441-442

15 *փետր.* 1898

Պարիզի կոմիտէին,

Ընկերներ,

Ստացանք ձեր 10 *փետր. կազմած որոշումները Արթին փաշայի հետ ունենալիք բանակցութիւնների մասին։*

Բանակցութեան այս խնդիրը կարող է լաւ փորձաքար համարուել Դաշնակցութեան ընդհանուր տրամադրութեան հետ ծանօթանալու համար։ Եթէ իրօք Դաշնակցութեան գոյութիւնը արհեստական միջոցներով է պահպանուում, եթէ նա յոգնել է գործելուց, նա ոչ միայն կը սկսի բանակցութիւնները, այլեւ ամենաանչան պահանջներով կը բաւականանայ։ Իսկ եթէ նա բացարձակապէս մերժի այդ կարգի խնդիրները կամ թէ խիստ, բանաւոր պահանջներ առաջ դնի, դա կը լինի նոր ապացոյց թշնամիների աչքում Դաշնակցութեան զօրութեան։ Այս տեսակէտից միխիթարական են կոմիտէիդ որոշումները, ինչպէս նաեւ վերջերս Թիֆլիզում կայացած ռուսաստանեան ու Պարսկաստանի կոմիտէների բայոնական ժողովի վերաբերումը, որը համաձայն է միայն այն ժամանակ թողնել յարձակողական դիրքը, երբ սուլթանը կ՚ընդունի եւրոպական կոնտրոլը եւ դրա համար յատուկ իրադէ կը հրատարակի։

Ուրիշ տեղերից դեռ եւս կարծիքներ չունինք։

Թէ այս եւ թէ այլ կարեւոր խնդիրների համար վաղուց է զգացւում ընդհանուր ժողովի կարիքը։ Երկար ժամանակ զանազան հանգամանքներ անկարելի էին դարձնում նրա իրագործումը։ Բայց այժմ արդէն վերջնական համաձայնութիւն է կայացել եւ ժողովը կը լինի մինչեւ երկու ամիս, ոչ ուշ։

Շատ առաջ ընդունւած է եղել Եւրոպայի դաշնակցական ուսանողների ընդհանուր ժողովում մասնակցելու հարցը եւ այդ մասին գրւաց է եղել պ. Զարիֆեանին։ Այժմ հարկաւոր է մտածել գործնական եղանակի վրայ։ Կազմակերպւած ուսանողական կոմիտէ ունինք միայն Բերլինում (ամբողջ Գերմանիայի համար) եւ Պարիզում։ Միւս քաղաքներում կան միայն դաշնակցական անհատներ, կամ համակրող խմբեր։ Որպէսզի այս իրար չկապւած խմբերն ու անհատները կարողանան մէկ ձայն ներկայացնել, անհրաժեշտ է <u>շատ շուտով</u> կազմել մի ուսանողական ընդհանուր դաշնակ[ցական] ժողով, ուր մշակւի ուսանողների գործունէութեան մասնաւոր ծրագիրը, ձեւակերպւին ընդհանուր ժողովին ներկայացուելիք ընդհանուր պահանջները եւ ընտրւի մի պատւիրակ ընդհ. ժողովին ներկայանալու։ Ուսանողական ժողովը կազմելու ձեւը եւ այլ մանրամասնութիւնները թողնում ենք ձեզ՝ ուսանողներիդ։ Նանսի կարելի է դիմել պ. Բաղդասարեանի միջոցով, իսկ Բերլին՝ հետեւեալ հասցէով՝ Mr. Ter-Markossian, Charlottenburg, Berlin.

Վերջինը եւ գերմանական այլ քաղաքները կապւած կը լինին Բերլինի կոմիտէի հետ։

Բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

234

Պատճէններու մատեան No 83, *էջ* 443

15 *փետր*. 1898

Պ. Զարիֆեանին, Պարիզ,

Յարգելի ընկեր,

Պ. Villars-*ի վերաբերմամբ ձեռք առած ձեր նախազգուշական միջոցները մեզ աւելորդ են թւում։ Ի՞նչ վատ նպատակի կարող է այդ պարոնը ծառայեցնել Խանասորի կռւի թարգմանութիւնը։ կարո՞ղ է դեսպանատան յանձնել,— թող յանձնի, ի՞նչ վնաս։ Այս ենթադրութիւնն իսկ մեզ շատ անհաւանական է թւում, որովհետեւ եթէ դեսպանատան հարկաւոր է այդ թարգմանութիւնը, միթէ՞ հայ թարգմանիչներ գտնել չի կարող նա. ի՞նչ կարիք կայ ֆրանսիական գրողների միջնորդութեան դիմել։*

Եթէ դուք ժամանակ չունէք, յանձնէք այդ բանը պ. Բաղդասարեանին կամ մի ուրիշին, որին յարմար էք դատում. միայն թէ թարգմանութիւնը շուտ կատարւի, թէ չէ Villars-*ը տեսնելով այդ ձգձգումները, կարող է թողնել տպագրութեան յանձնելու միտքը։ Զմոռանաք թարգմանութիւնը կատարել բրօշիւրի թերթերից, որ ուղարկւած է ձեզ. դա աւելի լրիւ է։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Ձեր ուղարկած Դրօշակի համարը սխալմամբ մեզ են վերադարձրել։ Ներփակ ուղարկում ենք ծրարը։

ՆՈՅՆ

235

Պատճէններու մատեան No 83, *էջ* 444-445

16 *փետր*. 1898

Մոլեկիւլ կոմիտէին, Բերլին,

Ընկերներ,

Ընդհանուր դաշնակցական ժողովի միտքը, որ վաղուց ի վեր պտտում էր մեր մէջ, վերջապէս իրականանալու վրայ է։ Թիֆլիզում կայացած Ռուսաստանի եւ Պարսկաստանի կոմիտէների ըայոնական ժողովում վճռւել է շատ մօտ ժամանակում կատարել ընդհանուր ժողով, որի անհրաժեշտութեան վրայ շատ պնդում էին վերջերս երկրի մէջ գտնւած կոմիտէները։

Ի նկատի ունենալով, որ արտասահմանեան դաշնակցական ուսանողները եւս պիտի ունենան իրենց ձայնը այդ ընդհանուր ժողովում, առաջարկում ենք ձեզ, խորհրդակցութեամբ Պարիզի մեր կոմիտէի հետ, որոշել արտասահմանեան դաշնակցական ուսանողութեան ընդհանուր ժողովում մասնակցելու ձեւը։ Մեր կար-

ծիքով աւելի նպատակայարմար կը լինի շատ շուտով հրաւիրել արտասահմանեան քաղաքներից մէկում մի դաշնակցական ուսանողական ժողով, որը կը ծրագրի ուսանողների մասնաւոր գործունէութեան ուղղութիւնը, կը մշակի ընդհանուր ժողովին ներկայացնելիք առաջարկութիւնները եւ կ՚ընտրի մի պատգամաւոր ժողովին մասնակցելու։

Այս խնդրի մասին գրել ենք Պարիզ եւս։ Նրանք կը դիմեն Նանսի. խորհրդակցութիւն հրաւիրէք բացի գերմանական քաղաքների ուսանողներից ցիւրիխցիներին եւս։

Պարիզ կարող էք դիմել հետեւեալ հասցէով՝

M. Zarifian, Claude Bernard, 1.

Սպասում ենք ձեր նամակին։

Ձեր հրատարակչական գործին աջակցելու ցանկութիւն են յայտնել Պարիզից։

1) Nahapetian, 11-bis, Rue Berthelles

2) Ter-Maroukian, 290 Rue st. Jacques.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

236

Պատճէններու մատեան No 83, *էջ* 451

Տրապիզոն

Սիրելիք

Հաստատում ենք մեր 9 *փետր. նամակը։*

Արդէն մեզ յայտնի կը լինի 25, 6, 20, 1, 2, 8, 13, 14, 4, 26, 13, 31, 23, 7 [ընդհանուր ժողով]-*ի մասին եւ հարկաւ պատրաստութիւններ տեսնում էք։*

Որքան էլ աննպաստ լինին պայմանները, պէտք է աշխատել, որ որքան կարելի է շատ 8, 5, 4, 29, 3, 2, 35, 13, 14, 29, 7, 19 [ներկ[ա]յացուցիչ] *ունենաք այդ կողմերից։ Դժբախտաբար ամենակարեւոր կէտերից մէկը՝ Վանը ներկայացուցիչ չի ունենալու։ Երզնկան թող անպատճառ մէկն ուղարկի։ Ի՞նչ դրութեան մէջ է Բաբերդի եւ Շ*[ապին] *Գար*[ահիսարի] *կոմիտէները։ Աւելի յարմար կը լինի, եթէ ձեր ներկայացուցիչը ներկայացնէր եւ վերոյիշեալ երկու կոմիտէները։ Մի կերպ իմաց տուէք Մլէհին, որ անպատճառ աշխատի գոնէ ինքը գալ։ Մուշ, Բաղէշից բոլորովին յոյս չունինք, թէ մարդ կարող է գալ։ Մեր յարաբերութիւնն էլ կտրուած պիտի լինի։*

Զմոռանաք յայտնել բոլորին, որ ընդարձակ տեղեկագրութիւն եւ հաշիւ ուղարկեն ժողովին, եթէ նոյն իսկ պատգամաւոր լինի իրենց կողմից։

Ի՞նչ եղաւ Քեռին(1), *ոչինչ չէք գրում։*

1.- Խօսքը կը վերաբերի Տերսիմի Քեռիին (Շիշմանեան Ռուբէն)։

237

Մատեան No 81-1, *էջ* 54-58 (*Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի*)

21 *փետր*. 98

[*Արեւելեան Բիւրոյին*], *Թիֆլիզ*

Ձեր անթւակիր եւ յունւ[*ար*] 23 *նամակները ստացանք։ Հաստատում ենք մեր* 7 *փետր. նամակը Ռոստոմի ատողի* [?] *հասցէով։*

Ձեր առաջարկած պահանջները յեղափոխական յարձակողական դիրքը թողնելու համար իրաւացի են։ Դուք, ուրեմն, չէք մտածել պահանջների իրագործման մասին, այլ նայել էք բանակցութիւնների խնդրի վրայ լոկ մեր բողոքի կէտերը աւելորդ անգամ լսելի անելու տեսակէտից։ Պարիզի կոմիտէն կտրական կերպով մերժած է որեւէ բանակցութիւն։ Ուրիշ տեղից կարծիք դեռ չենք ստացել։

Մեր պահանջները ընդհանրացնելու միտքը շատ լաւ միտք է, բայց մեզ զարմացնում է, որ դուք դրա համար առաջարկում էք դիմել հնչակեան կենտրոններին, կարծես թէ բոլորովին այս աշխարհից չլինէք։ Հնչակեան նոր կեդրոնին դիմել չենք կարող, քանի որ այդ կենտրոնում կայ Արփիարը(1), *աւելի ճիշդն ասած՝ քանի որ նա է կազմում կեդրոնը։ Անդամներից միակ վստահելին՝ Տամատեանը*(2) *հեռացել է։ Բացի այդ, կեդրոնը պաշտօնապէս յայտարարել է պետութիւններին, որ թողնում է յեղափոխական գործունէութիւնը, յուսալով, որ խոստացած բեֆորմները կիրագործուին։ Իսկ Մարտ-ի, Նոր-կեանքի*(3) *միջոցով շատ ճարպիկ կերպով հակայեղափոխական պրոպագանդա է կատարւում։*

Ուրեմն ի՞նչ միտք ունի դրանց դիմելը։

Իսկ եթէ դիմենք նախկին կենտրոնին, նա կը վիրաւորուի, իբր ծաղր ընդունելով մեր դիմումը։ (Ի միջի այլոց, վաղուց է, Հնչակը չի հրատարակւում)...

Բայց դիմել հարկաւոր է. Եւրոպայի եւ Սուլթանի աչքում աւելի մեծ նշանակութիւն կունենայ ընդհանուր պահանջը։ Ինչպէ՞ս անել։ Դրա համար 2-3 *ժողով ենք կազմել, բայց դեռ որոշ եզրակացութեան չենք յանգել։ Մօտաւորապէս որոշել է այսպէս* 1) *դիմել Ձերազին, Փորթուգալեանին*(4) *եւ մի քանի ուրիշներին, հարցնելով նրանց, թէ ինչ պահանջներ կարող են իրենց կարծիքով ապահովել հայ ժողովրդի խաղաղ կեանքը* 2) *դիմել հնչակեաններին Տամատեանի, Ճանկիւլեանի*(5) *միջոցով, հրաւիրելով նրանց ցոյց տալ մեզ, թէ ինչ եղանակով կարող ենք բանակցել իրենց հետ մեր պահանջների վերաբերմամբ։ Դժւարութիւններից մէկն էլ նա է, որ դիմումներ կարող ենք անել միայն մեր կողմից, ոչ ամբողջ Դաշնակցութեան։*

Այս հարցի վրայ դեռ ժամանակ ունինք մտածելու, որովհետեւ սպասում ենք Արթին փաշայի(6) *թոյլտուութիւնը՝ միւս մարմիններին հաղորդելու իր առաջարկութեան մասին։*

Որոշւել է դիմել նաեւ Մելքում խանին, Նուբար փաշային։ Դրանով առիթ կունենանք իմանալ «դիպլոմատների» կարծիքը, որ պահանջել է ձեր բայոնական ժողովը։ Թէեւ ժողովը չպէտք է այդ կէտին կարեւորութիւն տար, յիշելով, որ դիպլոմատները հէնց նրանով են դիպլոմատ, որ ծածկում են իրենց իսկական կարծիքները։

Ընդհանուր ժողովի ժամանակը անյարմար է արտասահմանեան ընկերների տեսակէտից։ Բայց ի՜նչ արած։ Յոնանը(7) *ի նկատի ունենալով տաճկահայ նեկայացուցիչների փոքր թւի հաւանականութիւնը, ընդհ. ժող. առաջարկում է յետաձգել մինչեւ ամառ, երբ բուն երկրից աւելի մեծ թւով կարող են ներկայանալ։ Սակայն*

մեր կարծիքով ամառը աւելի քիչ կը գան, որովհետեւ գործի ժամանակ է։

Անտոնի քաղաքը ո՞րն է։ Նաւահանգիստը, թէ Մեծ-Քաղաքը(8)։ Չէր կարելի աւելի պարզ գրել։

Հաւաքածուն ուղարկուեցաւ (96 եւ 97 թուակ.)։

Գրաշարին սպասում ենք։ Սպասում ենք եւ փոստի։ Բաթումինը ստացանք։ Բայց դարձեալ պարտքերից ազատուել չենք կարող, Իւսուֆեանին ուղարկել եւայլն...

Բաթում գտնուող Փափազեանը, ինչպէս մեզ յայտնել են, Ռուսչուկի իր տիրոջից փող է փախցրել, մի քանի ոսկի էլ մեր անունով է վերցրել։ Բաթումի մի նամակի տակ մի քանի տող էր աւելացրել, որ մեզ ենթադրել է տալիս, թէ մտերիմ յարաբերութեան մէջ է մերոնց հետ։ Գրէք Բաթում, որ զգոյշ պահեն իրենց։ Արվախը(9) թէեւ յանձնարարական է տուել, բայց յետոյ փոշմանել է, վերոյիշեալ փաստերը իմանալուց յետոյ։

Դրօշակը յանձնեցէք հետեւեալ հասցէով՝

[Ռուսերէն անընթեռնելի հասցէ]:

Փող է խոստանում մեզ ուղարկել, դուք առէք։

Ձեզ ո՛վ ասաց, որ արտասահմ. ուսանողութիւնը մեզ հետ պաշտօնապէս չի կապուած։ Պարիզի կոմիտէն վաղուց գոյութիւն ունի, գերմանական ուսանողութիւնը վերջերումս բոլորովին կազմակերպուել է (Մոլեկիւլ կոմիտէ)(10)։ Այդ երկուսին առաջարկել ենք Նանսի, Ժընեւ եւ այլ քաղաքներում ցրուած դաշնակցական խմբերի ու անհատների հետ միասին մի ներկայացուցիչ ընտրել։

Վիշապի(11) գործերը սկսում են կանոնաւորուել։ Աշոտը(12) սկսել է կարգի բերել, հաւաքել ցրուած նիւթերը։ Բայց շատ է տակնուվրայ եղած, գլխաւորապէս մատնութիւնների շնորհիւ։ Վահէի(13) այդտեղ գնալը բոլորովին նպատակայարմար չէ. այնտեղ այժմ հարկաւոր է մի մարդ, որ ազատ համարձակ կարողանայ պտտիլ։ Վահէն զուր տեղը կարող է վտանգուել։ Զմիւռնիայում գտնուողները մտադիր են երկրի ներսն անցնել. եթէ այդ յաջողուեց, Վահէն կարող է Զմիւռնիա մտնել, այնտեղ նա աւելի ազատ կը լինի։

1896 եւ 97 թուակ.հաւաքածուն ուղարկուած է. (No 2) լոյս կը տեսնի 3-4 օրից յետոյ կ՝ուղարկեն(14)։

Նոր հասցէ տուէք Temps(15) կամ տեղական լրագիրներ ուղարկելու. սրա թուղթը փոխել են։ Լրագիր կուղարկենք շարունակ, իսկ նամակների վրայ առանձին նշան կը դնենք։ Այն ժամանակ աւելի շուտ լուր կարող ենք գրել։

1.- Ծանօթ արձակագիր Արփիար Արփիարեան:
2.- Միհրան Տամատեան:
3.- «Մարտ» եւ «Նոր կեանք», Վերակազմեալ հնչակեաններու հանդէսներ էին (Լոնդոն):
4.- Մինաս Չերազ եւ Սկրտիչ Փորթուգալեան:
5.- Միհրան Տամատեան եւ Յարութիւն Ճանկիւլեան:
6.- Արքին փաշա Տատեան:
7.- Յոնան Դաւթեան:
8.- Մեծ-Քաղաքը Թիֆլիսն է: Նաւահանգիստը՝ Պաթում: Անտոնը, անշուշտ, Ս. Ջաւարեանն է:
9.- Արվախի – ծածկանուն Վարդ-Պատրիկեան Յակոբի:
10.- «Մոլեկիւլը» Պերլինի Հ.Յ.Դ. ուսանողական կոմիտէն է:
11.- Վիշապ – ծածկանուն Կ. Պոլսոյ:
12.- Աշոտ, Սեւ Աշոտ – ծածկանուն Եղիկեան Կարապետի:
13.- Վահէ (Սիւնի) – ծածկանուն Թիրեաքեան Վահէի, եղբայրը Հայկ Թիրեաքեանի (Հրաչ):
14.- Խօսքը կը վերաբերի «Դրօշակ» պաշտօնաթերթին:
15.- Փարիզեան հանրածանօթ օրաթերթ:

238

Պատճէններու մատեան No 83, *էջ* 462

1 *Մարտի* 1898

Մէլիքին, Բոստոն
Ընկեր,

Քո հասցէով արդէն ուղարկւած է 300 fr. *ճանապարհածախս։ Ջնայած մեր բոլոր ջանքերին, աւելին անկարող եղանք ուղարկել եւ պէտք է աւելացնել, որ մօտիկ ապագայում եւս յոյս չունինք քեզ բաւականութիւն տալու։ Այնպէս որ ամէն կերպ աշխատիր պարտքերդ մի կերպ կարգադրելով, անմիջապէս Ամերիկայից հեռանալ։ Անհրաժեշտ է, որ դու լինես ժողովում։ Թիֆլիզից կ՝ուղարկես պարտքերդ։*

Աւելորդ չենք համարում յայտնել քեզ, որ մինչեւ հիմա նոր կեդր. կոմիտէից ոչ մի տող չենք ստացել։

Բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

239

Պատճէններու մատեան No 83, *էջ* 463-464

1 *Մարտ* 1898

Օր. Գալէֆրաճեանին, Մանչէստեր
Յարգելի օրիորդ,

«Մարտ» լրագրի թիւ 7-ի մէջ կարդացինք, որ Ապրիլի սկզբներին Բոլգարիայից եկած մի հայ օրիորդ ներկայանալով Հնչակեան Վերակազմեալ Կեդրոնին(1), *յարուցել է միութեան խնդիրը եւ յայտնել է ի միջի այլոց հետեւեալը.*

«Մօտէն ունեցած տեղեկութիւններուն նայելով փափագելի է «Դրօշակի» խմբագրութեան մէջ յարաբերութեան մտնել հնչակեան կեդրոնին հետ, սակայն անգամ մը այդ նամակին հասած չըլլալու սխալ լուրը հրապարակ նետւած ըլլալով, հիմա չես գիտեր ինչպէ՞ս մէջէն ելլել. հնչակեան կեդրոնական վարչութիւնը թող զոհողութիւն մը ընէ յեղափոխական գործին սիրոյն համար եւ դիւրացնէ «Դրօշակ»ի խմբագրութեան յարաբերութեան մտնելու միտքը։

«Այս անգամ ձեր գրելիք նամակին պատասխանը անպատճառ պիտի ստանաք»։

Հաստատ աղբիւրից տեղեկանալով, որ վերոյիշեալ օրիորդը դուք էք, ներկայիս դիմում ենք ձեզ եւ խնդրում յայտնել, թէ ով է տուել ձեզ այդ տարօրինակ տեղեկութիւնը։ Ո՞վ է ձեզ յայտնել, որ խմբագրութիւնս հրապարակ է նետել հնչակեան վերակազմեալ կեդրոնի նամակը չստանալու լուրը եւ չգիտէ, «ինչպէս մէջէն ելլել»։ Բացի այդ, ո՞րտեղից գիտէք, որ խմբագրութիւնս անպատճառ պիտի պատասխանէր հնչակեան վերակ[ազմեալ] կեդրոնի նոր դիմումին։

Յուսալով, յարգելի օրիորդ, որ չէք զլանալ այս հարցերի պատասխանը կարճ ժամանակի մէջ մեզ ուղարկելու, յայտնում ենք կանխաւ մեր շնորհակալութիւնները։

Յարգանօք՝ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- 1898 թուին հնչակեաններու անջատ թեւը ստացաւ «Հնչակեան Վերակազմեալ կեդրոն» կամ կուսակցութիւն անունը։

240

Պատճէններու մատեան No 83, *էջ* 465-466

1 *Մարտի* 1898

Պարիզի կոմիտէին,

Ընկերներ,

Ստացանք ձեր փետր. 23 գրութիւնը, որով յայտնում էք կոմիտէիդ որոշումը յատուկ ներկայացուցիչ ունենալ ընդհանուր ժողովում։

Բոլորովին համաձայն ենք ձեզ հետ, որ եթէ Բերլինի ու Պարիզի կոմիտէները զատ զատ ներկայանան ընդհ. ժողովին, աւելի լաւ կարող կը լինեն իրենց միտքն արտայայտել։ Այդ տեսակէտից շատ ցանկալի է այդ ժողովին հրաւիրել բոլոր կոմիտէների ներկայացուցիչները, բայց ի նկատի ունենալով այն պայմանները, որոնց մէջ պիտի կայանայ ընդհ. ժողովը, մասնակցողների շատութիւնը միանգամայն վտանգաւոր կարելի է համարել։ Այս պատճառով որոշւել է Դաշնակցութեան գործունէութեան ասպարէզը շրջանների բաժանելով, ընդ. ժողովի հրաւիրել միայն այդ շրջանների պատգամաւորներին։ Այսպիսով, Ամերիկայի շրջանը իր 20 կոմիտէներով ունենալու է միայն մէկ ներկայացուցիչ, ինչպէս նաեւ Բալկանեանը (Ռումանիան եւ Բոլգարիան), Եգիպտոսը (Կիպրոսի հետ միասին) եւ այլն... Միմիայն երկրի մէջ գտնւած կոմիտէներին է վերապահւած առանձին առանձին ներկայացուցիչ ունենալու իրաւունքը։ Ինչպէս տեսնում էք, այսպիսի պարագաներում յարմար չէ, որ Պարիզի եւ Բերլինի կոմիտէները մի մի ձայնով ներկայանան. դրա դէմ ամենայն իրաւամբ կը բողոքեն միւս շրջանները։

Շրջանների բաժանման ժամանակ, որպէս զի թէ դուք եւ թէ եւրոպական միւս կոմիտէները կարողանան ներկայացուցիչ ունենալ ժողովում, մեր կողմից առաջարկութիւն եղաւ մի ձայն եւս տալ արտասահման[եան] դաշնակցական ուսանողութեան, նկատելով այդ իբր մի առանձին շրջան։ Ահա թէ ինչու, գիտենալով հանդերձ ներկայացւելիք դժւարութիւնները, ոչ-ուսանողների մասնակցութիւնը եւս, առաջարկեցինք ձեզ կամ ժողով գումարելով, կամ մի այլ միջոցով ընդհանուր ժողովին ուղարկել նոյն եւրոպական խմբերի կողմից մի ներկայացուցիչ։

Այս հարցի մասին Բերլինից դեռ կարծիք չենք ստացել։

Բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

241

Պատճէններու մատեան No 83, *էջ* 467-468

1 *Մարտի* 1898

Պ. Զարիֆեանին, Պարիզ

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր փետր. 21 *նամակը։*

Եթէ Խանասորի արշաւանքի թարգմանութիւնը լոյս տեսնի, անշուշտ մեզ եւս կ՚ուղարկէք։

Նիւրատուութեան ցուցակը լոյս կը տեսնի առաջիկայ համարում։ Այս անգամ տեղ չկայ։

Ուրախ ենք, որ Մինասեանի գործը խաղաղութեամբ էք վերջացրել, միայն թէ իր խոստումը կատարի։

Պ. Բաղդասարեանին խնդրենք յայտնել Սեպուհի հասցէն Sergo Laghobi, poste restante, Larnaka։

Պ. Ս. Շխեանի միջոցով ձեզ ուղարկեցինք 140 fr. *որով պէտք է գնել* 2 *ատրճանակ փոքր տեսակից* No 2 *առանց ամանի,* 500 *փամփուշտներով,* 10 *հատ* chargeurs *եւ բացի այդ* 100 *հատ փամփուշտ* No 3։

Ձեզ մօտ եղած դրամից խնդրենք վերցնել argus-*ից մնացած մեր պարտքը, իսկ մնացորդը յանձնել պ. Բաղդասարեանին։*

Նորերս Պիւլպիւլեանը կրկնակի կերպով դիմել էր մեզ, յայտնելով իր ցանկութիւնը Ժընեւ գալ տեսակցութեան համար, բայց նախ քան իր գալուստը, ցանկութիւն էր յայտնել տեսնուել Պարիզի մեր ներկայացուցչի հետ եւ հարցրել էր նրա անունը։ Պիւլպիւլեանին իբր պատասխան կ՚ուղարկուի Դրօշակի վերջին համարը, ուր արտատպուած է ձեր շրջաբերականի մի մասը։

Սրանից բաւական ժամանակ առաջ մեր մի ծանօթից ստացանք մի նամակ, որով մեր ծանօթը յայտնում էր իր Պոլսից եկած մի անձնաւորութիւն ցանկութիւն ունի մեզ հետ խօսելու ազգային խնդիրների մասին եւ հարցնում էր մեր համաձայնութիւնը։ Չիմանալով այդ անձնաւորութեան ով լինելը, մենք ոչ մի դրական պատասխան չտուինք, յայտնեցինք միայն, որ խմբագրութեանս դռները բաց են ամէն մի հայի առաջ, ուրեմն եւ այդ եկուորի առաջ։ Այժմ յայտնւում է, որ այդ անձնաւորութիւնը Պիւլպիւլեանն է եղել, որ մեր առաջւայ «անտարբեր» պատասխանից յետոյ, չի համարձակւում այժմ ուղղակի դիմել մեզ, այլ կողմնակի ճանապարհներով է ձգտում իմանալ մեր տրամադրութիւնը։ Պատասխանը տեղին կը լինի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

242

Պատճէններու մատեան No 83, *էջ* 476-477

5 *Մարտի* 1898

Պ. Ճանկիւլեանին, Աղէքսանդրիա

Յարգելի հայրենակից,

Այստեղից մեկնելիս, մանաւանդ պ. Տամատեանի հետ տեսնուելուց յետոյ, դուք մեզ յոյս էիք տալիս, թէ մեր արձանագրութեան մէջ յիշատակւած խոչընդոտները դիւրութեամբ կը վերանան եւ թէ Դաշնակցութեան ու Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան մէջ կայանալիք միութեան կամ համերաշխ գործակցութեան մասին բանակցութիւնները հնարաւոր կը դառնան։

Այդ օրից անցել է արդէն մօտ կէս տարի, բայց ցաւօք սրտի տեսնում ենք, որ խոչընդոտները փոխանակ վերանալու, ընդհակառակը աւելի են ամրացել. սկսւել է ստոր արշաւանք Դաշնակցութեան դէմ, դուք հռչակւել էք յիմար, կաշառւած եւ խմբագրութիւնս թշնամի միութեան։

Մեր ունեցած տեղեկութիւնների հիման գրայ հաստատապէս իմանալով, որ «Մարտը» ներկայ դէպքում բնաւ չի արտայայտում ամբողջ ձեր կուսակցութեան տրամադրութիւնը, համոզւած լինելով, որ նրա յեղափոխական մասը համամիտ կը լինի ձեզ եւ պ. Տամատեանի հետ ու կը հեռացնի մեր մէջ ընկած խոչընդոտները, մենք դեռ չենք կտրում մեր յոյսը՝ մի օր իրականացած տեսնելու մեր ու ձեր մէջ միութեան կամ համերաշխ գործունէութեան հարցը, որ այսօր այդպէս չարաչար կերպով շահագործւում է։

Այս յուսով յայտնում ենք ձեզ, որ մօտ ժամանակի մէջ Դաշնակցութիւնը առիթ ու դիւրութիւն պիտի ունենայ որոշ եզրակացութեան յանգելու այս կենսական հարցի մասին։ Ուստի ներկայիս խնդրում ենք ձեզ ըստ կարելոյն կարճ ժամանակի մէջ հաղորդել մեզ

1) *Հնարաւո՞ր էք համարում դուք ձեր համախոհների հետ միասին վերացնել արձանագրութեան մէջ յիշւած խոչընդոտները եւ սրանով կարելի դարձնել բանակցութիւնները միութեան կամ համերաշխ գործունէութեան մասին։*

2) *Եւ եթէ այո, մօտաւորապէս երբ եւ ինչ ձեւով։*

Սպասելով նամակիս պատասխանին, մնամք յարգանօք՝

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Ձեր պատասխանի պատճէնը խնդրենք յանձնել մեր տեղական կոմիտէին։

ՆՈՅՆ

243

Պատճէններու մատեան No 83, *էջ* 474-475

7 *Մարտ* 1898

Վահանին(1), *Աղեքսանդրիա*

Ընկեր,

Երկար ժամանակ չգիտէինք, թէ որտեղ ես. այդ ի՞նչ է, այլեւս ձայն-ծպտուն չես հանում։

Արդէն կոմիտէին գրած նամակից կ'իմանաս մեր առաջարկութեան մասին, որ [*արինք*] *Ճանկիւլեանի միջոցով հնչակեան վերակազմեալ կուսակցութեան։ Նոյն տեսակ դիմում ցանկանում էինք անել Տամատեանին եւս, երբ իմացանք, որ նա Եգիպտոս է մեկնում։ Այդ շատ լաւ եղաւ. աշխատիր տեսնուել հետը անձամբ, հասկացնել մեր դրութիւնը, ցոյց տալ, որ ուրիշ դիրք անկարող էինք բռնել միութեան խնդրի առթիւ։ Թող իրար մէջ խորհրդակցեն եւ իրենց դրութեան եւ տրամադրութեան մասին պարզ, որոշ գաղափար տան մեզ, ընդհանուր ժողովին ներկայացնելու համար։ Ընդ. ժողովի մասին զգուշացել ենք իրենց պարզ գրելու, դուք էլ ամէն կերպ աշխատէք գաղնի պահել։*

Մեր առաջարկութեան պատասխանի պատճէնը խնդրել ենք կոմիտէին յանձնել։ Այդ պատճէնն ստանալուն պէս կը շտապես անմիջապէս Թիֆլիզ հաղորդել, որպէս զի ընդ. ժողովին չուշանայ։

Այդտեղից ո՞վ է գնալու. գուցէ հէնց գնացողը իր հետ տանի հնչակ[*եանների*] *պատասխանը։*

Այստեղից գուցէ 3 *հոգի գնանք, Գարօն, Վահապը եւ Ռոստոմը*(2)։

Ի՞նչ եղաւ ձեր տառերի խնդիրը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ. — Յուն. 1 *նամակդ ստացուել է, պատասխանելու ոչինչ չկայ։*

Գուցէ Կիպրոսից գրած չլինեն. ժողովը կայանալու է Մարտի 29-*ին Թիֆլիզում։ Այս բանը կը յայտնես <u>միայն ընտրուած պատգամաւորին</u>, այն էլ վերջին օրերը։ Բոլորովին ցանկալի չէ, որ տարածուի։*

1.- Վահան – ծածկանուն Նիկոլ Մատինեանի:

2.- Արմէն Գարօ (Գարեգին Փաստրմաճեան), Արշակ Վռամեան (Վահապ) եւ Ռոստոմ (Ստեփան Զօրեան):

244

Պատճէններու մատեան No 83, *էջ* 480-481

10 *Մարտի* 1898 *թ.*

Տրապիզոն

Սիրելիք,

Ձեր 6/18 *փետր. նամակն ստացած է։ Հաստատում ենք մեր* 9 *եւ* 16 *փետր. գրութիւնները։*

Վազգէնի(1) *մահուան մանրամասնութիւնները հասան այն ժամանակ, երբ թերթն արդէն տպարանին էր յանձնուած։ Միայն կարողացանք առաջին երեսում մահազդը ուղղել. առաջնորդողը փոխել դժուար էր։ Ի դէպ, Ռոստոմը Ցիւրիխից մասնաւոր նամակ էր գրել. միթէ՞ չէք ստացել։ Արմենականների շահատակութիւնները հրապարակ հանել ամօթ է, աւելի լաւ է լռենք առայժմ։*

Զգիտենք, հարկաւոր է յիշեցնել, թէ ոչ, որ Վազգէնի կենսագրութիւնը փութով ուղարկեն։ Լուսանկար դժուար թէ ունենայ։ Մի տարի առաջ (Վանայ դէպքից յետոյ) խնդրեցինք իր եւ Զարուհու(2) *լուսանկարները. Վազգէնը իրենը մերժեց, իսկ Զարուհունը խոստացաւ ուղարկել, բայց այն էլ չուղարկեց։ Այս մասին գրէք Ֆարհատին*(3)*։ Զմոռանան նոյնպէս տեղեկութիւններ Միքօ-ի*[?] *ու Արշակի մասին։*

Զարուհու համար Պոլսոյ կեդր. կոմիտէի կողմից դիմում կը լինի դեսպաններին, որ արգելեն աքսորը։ Շուտով նորից այստեղ կը գայ Տրդատ բէյ Դատեանը. գուցէ կարողանանք նրա միջոցով եւս մի բան անել։ Դա գալիս է բանակցութիւնների խնդրի համար. կոմիտէների պատասխանը կ՚ուզէ առնել, իսկ առիթը եղաւ մեր մի նամակը Արթին փաշային, որով նրա թոյլտուութիւնն էինք խնդրում միւս յեղափոխական մարմիններին եւս յայտնելու իր առաջարկութեան մասին, որպէսզի պահանջները դրւին ոչ միայն Դաշնակցութեան, այլ բոլոր յեղափոխական մարմինների կողմից։ Այս միտքը մեզ յայտնուել էր Թիֆ[*լիզի*] *բայոնական ժողովի կողմից. դիմելու ձեւի մասին մենք դեռ որոշ եզրակացութեան չենք եկել, բայց յամենայն դէպս հարկ համարեցինք դիմելու իրաւունքը ստանալ Արթին փաշայից։*

Կոմիտէներից մինչեւ այժմ ստացած պատասխանները բացասական են։ Բոլորն էլ մերժում են ձեզ նման որեւէ բանակցութիւն։ Բայց ի նկատի ունենալով, որ Թիֆ[*լիզի*] *բայոնական ժողովը վճռել է սկսել բանակցութիւնները եւ մինչեւ իսկ պահանջներ է մշակել, այդ խնդիրը կը ձգենք ընդհանուր ժողովին։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Վազգէն – ծածկանուն Տէրոյեան Տիգրանի։

2.- Զարուհի – Վազգէնի քոյրը, անդամ Վասպուրականի Կեդր. կոմիտէի, դատապարտուած աքսորի։

3.- Ֆարհատ – ծածկանուն Օհանջանեան Սարգիսի։

245

Պատճէններու մատեան No 83, *էջ* 486-487

10 *Մարտ* 1898

Արվախին, Վառնա

Սիրելիս,

Քո փետր. 5/17 *նամակն ստացած է։ Բայց ցաւում ենք, որ նրա մէջ չկարողացանք գտնել ոչ մեր առաջարկութիւնների եւ ոչ այս կամ այն խնդրի մասին մեր յայտնած կարծիքների պատասխանը։ Դրա փոխանակ նամակդ լիքն է անբացատրելի, իրար հակասող կէտերով, որոնց դէմ դու ինքդ կը բողոքես, եթէ երկրորդ անգամ կարդաս գրածդ։*

Թողնելով մի կողմ երկրորդական կէտերը, մենք չենք կարող այսօր չբողոքել 1000 fr. *Շարժումին*(1) *յատկացնելու փաստի դէմ եւ այն էլ մի այնպիսի ժամանակ,— այդ քեզ էլ լաւ յայտնի է — երբ ամենաանհրաժեշտ ծախքերի համար այստեղ սանտիմ չենք կարողանում գտնել։*

Զգիտենք, թէ ինչպէս կը վերաբերուեն միւս ընկերները, բայց մենք բոլորովին դէմ ենք այժմ Դաշնակցութեան հաշւով կիսապաշտօնական թերթ ունենալուն, այն էլ Շարժումի նման մի թերթ, որ II *համարից ներբողական է սկսել կարդալ Արփիարին։*

Բացի այդ, միթէ՞ պէտք է յիշեցնել, որ այդպիսի մի ձեռնարկի համար եթէ ոչ ընդհանրութեան, գոնէ մօտ ընկերներին պէտք էր դիմել նախօրօք նրանց համաձայնութիւնն առնելու։

Գրում ես, թէ ընդհանուր ժողովին չես գնալու. եթէ այդ վճիռդ վերջնական է, այն ժամանակ քո մօտ եղած առանձին գումարի հաշիւը, իբր խմբագրութեան ներկայացուցչի հաշիւ ուղարկիր շուտով մեզ խմբագրութեան ընդհանուր հաշւին մէջ մտցնելու համար։ Իսկ կոմիտէների հաշիւը ձեր ընտրած պատգամաւորն ինքը կը տանի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Շարժում – Վառնա հրատարակուող լրագիր՝ նոյն Արվախիի (Վարդ-Պատրիկեան Յակոբ) խմբագրութեամբ:

246

Պատճէններու մատեան No 83, *էջ* 489-490

11 *Մարտ* 1898

Պ. Զարիֆեանին, Պարիզ,

Յարգելի ընկեր,

Ձեր Մարտ 8 *նամակն ստացած է։*

Պէտք է սպասել, մինչեւ որ թիւ 2 *ատրճանակները բերել տան. թիւ* 3 *չէ մեզ պատւիրուած։ Ատրճանակները հարկաւոր է ուղարկել հետեւեալ հասցէով՝*

Mieur Vrtaness Ghazarian, poste restante, Rue de la République *եւ միաժամանակ* carte postale-*ով յայտնել նոյն անձնաւորութեան։*

Compagnie des Messageries maritimes, Quai de la Juliette *հասցէով։*

Ստացանք Բերլինի կոմիտէի կարծիքը։ Նա եւս անյարմար է գտնում այժմ ընդհան[ուր] ուսանող[ական] ժողով կազմելը, որ կարող է իրականանալ ապրիլին ընդհանուր արտասահմանեան ուսանողութեան «Միութ[եան]» ժողովի հետ միասին։ Այս պատճառաւ նա առաջարկում է յետաձգել ընդհ. դաշնակց. ընդհ. ժողովը, ապրիլից յետոյ հրաւիրել, որ ի հարկէ անհնարին է։ Բացի այդ եւս որոշել է՝

«Մեր պատգամաւորը, եթէ ուսանող լինի, ձայն չի ունենալ գործնական բաժնում ընդհանուր ժողովի ժամանակ. նա ձայնի իրաւունք կ'ունենայ միայն տեսական բաժնում։

«Եթէ պատգամաւորը լինի մասնաւոր անձն եւ քաջ տեղեակ գործնական յեղափոխութեան, կ'ունենայ նոյնպէս գործնականում իր ձայնը։

«Ժողովս խմբագրութեան միջոցով դիմում է ոչ բուն երկրի կոմիտէներին եւ իր մասնակցութեան ձեւը առաջարկում է միւսների համար եւս

«Եթէ կ'ընդունին մեր առաջարկութիւնները. «Մոլեկիւլ»ը կ'ուղարկի իր լիազօր (No 1, 2, 3) *ներկայացուցիչը, իսկ եթէ*

«Այս բոլոր որոշումներին բացասական պատասխան ստացանք, մենք (ժողովս) կ'ուղարկենք մեր պատգամաւորին ընդ. ժողովում ներկայ լինելու եւ մեր որոշումներով ղեկավարելու»։

Վերջին կէտերը մեզ համար եւս մութն են. պարզ է միայն մի բան, որ նրանք առաջարկում են երկրից դուրս գտնուող կոմիտէներին, որոնք անծանօթ են գործնական յեղափոխութեան, ձայն չունենալ նրան վերաբերեալ խնդիրների մէջ։

Հարցը պարզելուց յետոյ կը գրենք դարձեալ։

Ներփակ ուղարկած հաշւով ձեզ մօտ պիտի լինի մօտ 40 *ֆր. որ խնդրում ենք յանձնել պ. Բաղդասարեանին։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Հաշւի մէջ չի մտցրած ձեր արած մանր ծախքերը, որի քանակութիւնը մեզ անյայտ է, խնդրենք այդ եւս մտցնել։

ՆՈՅՆ

247

Պատճէններու մատեան No 83, *էջ* 491-492

11 *Մարտ* 1898

Պ. Բաղդասարեանին, Պարիզ,

Յարգելի ընկեր,

Մարտ 8 *նամակդ եւ հաշիւն ստացանք։*

Պ. Զարիֆեանին ուղարկեցինք իր ուզած հաշիւը։ Մօտ 40 fr. *կը ստանաք նրանից, իսկ յետոյ, երբ մենք փող ստացանք, անմիջապէս կը փոխադրենք ձեզ։*

Մի փոքրիկ հանգանակութեան համար աւելորդ չի լինիլ դիմել Նանսիի նախկին ընկերներիդ եւս։ Մօնպելիէ գնացող մի ուսանողի միջոցով առաջարկեցինք այնտեղ կազմել մի խումբ Դաշնակցութեան համակրողներից։ Եթէ այդ բանը յաջողւեց, կը կապենք ձեզ հետ։

Դրօշակի ծաւալով մի թերթի տառերը (ամբողջը մի տեսակ) կ՚արժենայ մօտ 1,000 fr. *տպագրական մի քանի այլ գործիքների հետ միասին հաշւած։ Տառերի համեմատական քանակութեան ցուցակ ունինք կազմած. եթէ հարկ լինի, կ՚արտագրենք, կ՚ուղարկենք։ Չլինի՞ թէ անբաւարար էք գտած արտասահմանում հրատարակւող թերթերի քանակութիւնը։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Տրապիզոնից խնդրում են այլ եւս իրենց տաճկական թերթեր չուղարկել։

Ռուսաստան եւս զգուշացէք աւելորդ տեղեր թերթեր ուղարկել։ Այս մասին գրւած է եղել։

ՆՈՅՆ

ՎԵՐՋ No 83 Ռոստոմի կողմէ գրուած Պատճէններու մատեանին

248

Պատճէններու մատեան No 84, *էջ* 1-4

16 *Մարտ* 1898

Մոլէկիւլ կոմիտէին, Բերլին

Ընկերներ,

Ձեր 8 *Մարտի նամակը ստացած է. ընդհանուր ժողովը յետաձգելու հարցը ուշ է. ամէն տեղ յայտնած է արդէն. ամէն տեղ պատրաստութիւններ են տեսնուում եւ դուցէ պատգամաւորներից մի քանիսն արդէն ճանապարհ ընկած են։ Յիշեցնենք, ի միջի այլոց, որ ամառը գործի ժամանակ լինելով, անյարմար է ընդհանուր ժողով կազմելու տեսակէտից. բուն երկրի գործիչները անկարող կը լինին իրենց տեղից շարժուելու։*

Ձեր որոշումը, որ գործնական յեղափոխական կեանքին անծանօթ կոմիտէները ձայն չունենան ընդհ. ժողովում բուն գործնական խնդիրների մէջ, շատ նպատակայարմար ենք գտնում։ Յանկալի է, որ այդ որոշումը ընդունւի միւսների կողմից եւս, որով շատ դիւրացած կը լինի դրական ծրագիր կազմելու գործը։ Ձեր առաջարկութիւնը կը ներկայացնենք ընդհանուր ժողովի քննութեան. կոմիտէներին ուղարկելը առանձին առանձին եւ մի ընդհանուր համաձայնութեան գալն արդէն ուշ է։

Ձեր որոշումների 5 *եւ* 6 *կէտերը լաւ չհասկացանք. խնդրենք կրկնել, միայն աւելի պարզ ձեւով։ Միայն «Մոլէկիւլը կ՚ուղարկի իր լիազօր ներկայացուցիչը» նախադասութեան առիթով հարկ ենք համարում հաղորդել հետեւեալը։ Որովհետեւ ժողովը կայանալու է այնպիսի պայմաններում, որ միանգամայն վտանգաւոր է դարձնում մեծ թւով պատգամաւորներ ունենալը, մեր մէջ համաձայնութիւն է կայացել պատգամաւորներ հրաւիրել ոչ թէ բոլոր դաշնակցական կոմիտէներից առանձին առանձին այլ որոշ կերպով բաժանւած լայն շրջաններից։ Այսպէս, Ամերիկան (որ մօտ* 20 *կոմիտէ ունի) ուղարկելու է միայն մէկ ներկայացուցիչ. Բոլգարիան ու Ռումանիան՝ նոյնպէս մէկ. Եգիպտոսը Կիպրոսի հետ միասին մէկ եւայլն... Միայն բուն երկրի կոմիտէներն իրաւունք ունին առանձին առանձին ներկայացուցիչ ունենալու։ Այսպիսի պարագաներում, ինչպէս տեսնում էք, բոլորովին յարմար չի լինիլ, որ Մոլէկիւլ կոմիտէն (ինչպէս նաեւ Պարիզինը — նրանք եւս ձեզ նման են վճիռ տւել) ունենայ ընդհ. ժողովում իր յատուկ ներկայացուցիչը։ Բայց ինչպէ՞ս անել, որ արտասահմանեան ուսանողութիւնը այս կամ այն ձեւով ներկայանայ ընդհ. ժողովին։ Յաւալի է, որ նախօրօք հոգ չի տարւել կազմակերպելու դէս ու դէն ցրւած դաշնակցական խմբերին ու անհատներին կապ հաստատելու նրանց մէջ, որպէսզի այսպիսի դէպքերում կազմակերպօրէն ներկայացւեն։*

«Մոլէկիւլի» ընդհ. ժողովին մասնակցելու հարցը դիւրանում է նրանով, որ նա հրաժարւում է այլ եւ այլ խնդիրների մէջ մտնելուց, սահմանափակւելով տեսականի շրջանում։ Այս հիման վրայ մենք կարծում ենք, որ «Մոլէկիւլ»ը կարող է ունենալ իր ներկայացուցիչը ընդհ. ժողովում, ուր կ՚առաջարկի ու կը պաշտպանի ձեր գործունէութեան ծրագիրը։

Աւելորդ չենք համարում հէնց այստեղ մի դիտողութիւն անել ձեր նամակի 3 *կէ-*

տի մասին. «եթէ պատգամաւորը կը լինի մասնաւոր անձն եւ անմիջապէս քաջ տեղեակ գործնական յեղափոխութեամբ, կ'ունենայ գործնականում իր ձայնը»։ Քանի որ «Մոլէկիւլը» իրեն անձեռնհաս է գտնում յեղափոխական գործնական խնդիրներում, նրա պատգամաւորը չի կարող ձայն ունենալ այդ խնդիրներում, որքան էլ նա լաւ ծանօթ լինի դրանց։ Այդ տեսակ մի անձնաւորութիւն կարող է յայտնել իր կարծիքները այս կամ այն գործնական խնդրի առթիւ, բայց իբր անհատ եւ ոչ իբր ձեր ներկայացուցիչ։ Ուստի եթէ ուզում էք, որ ձեր դրած սկզբունքը ընդհանրանայ, ընդունւի միւսների կողմից եւս պարզորոշ ձեւով, պէտք է թողնէք այդ կէտը եւ համաձայնւէք, թէ պատգամաւորները պիտի լինին կոմիտէն, իր կամքի արտայայտիչները, անկախ իրենց անհատական ուրիշ յատկութիւններից։

Իսկ ինչ վերաբերում է ընդհանուր դաշնակցական ուսանողական ժողովին, յուսով ենք, որ ամէն կերպ կ'աշխատէք իրականացնել նրան գոնէ ապրիլին՝ ընդհանուր ուսանողական ժողովի հետ միաժամանակ։

Բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

249

Պատճէններու մատեան No 84, *էջ* 20-23

Սիրելիք, [*Թաւրիզ*, *Ատրպատական*]

Այս րոպէիս ստացանք ձեր 25-II *նամակը Դաղեանի առաջարկութեան վերաբերեալ գործին հետ միասին։ Ստացած է նաեւ* 19 *եւ* 26-II *նամակը։*

Ներողութիւն, որ երկար գրելու ժամանակ չունենք. հարսանիքի(1) *պատրաստութեան մէջ ենք։ Ռոստոմը վաղը մեկնելու է։ Միւսները սպասում են փողի։ Դրամը մենք եւս չենք ստանում, չնայած մեր նամակներին, հեռագրին եւայլն, ժամանակները վատ են։ Տեսնենք հարսանիքի հետեւանքը։ Աստուած տայ, որ խաղաղ անցնի գոնէ։ Այդ կողմից երկիւղ ենք կրում, որովհետեւ մի երկու պարոններ, ինչպէս իմանում ենք Թիֆլիզից, թունդ պրոպագանդա են անում խմբագրութեան դէմ, ինտրիգներ են լարում։*

Կենսատու փողու համար կ'աշխատենք. չուտով գալու է Ամերիկայից Եուսուֆեանը, նրանից կ'իմանանք այն երիտասարդի մասին, որ պատրաստւում էր ձեզ մօտ գալու։

Մենք չենք ասում, թէ Շէկոյի կենսագրութիւնը տպենք[?], *այլ հրապարակ հանենք այն փաստը, որ դիսցիպլինային հակառակ գնացողներն անպատիժ չեն մնում։ Հէնց աւետիսի՝ պատժի ազդն է, որ մենք հարկաւոր ենք համարում յայտնել հասարակութեան։*

Անցեալ անգամ ուղարկւած է ընդամէնը 3 *կապոց* (*որոնց երկուսը Ս.տ Է-ի հաստէով*) 280 *հատ։*

Այս անգամ կ'աւելացնենք 2 *կապոց* 30-*ական։*

Թեհրանի հաշիւը տպագրւած է արդէն։ Մի ուրիշ նամակով Պապեանը բացատ-

րում է իր ուղղակի մեզ դիմելու պատճառը։ Նրա ասելով, Բէկը[?] *զրպարտել է իրեն եւայլն. այս պատճառով չի ուզում հետը յարաբերութիւն ունենալ։*

Բրոշիւրն ստիպւած ենք յետաձգել. դրա փոխանակ լոյս ընծայեցինք մի բրոշիւր, որ թէեւ ոչ-շատ յեղափոխական, բայց մտածելու լաւ առիթ է տալիս։

Խնդրենք ուղարկել անցագրեր (եթէ միջոցներ կ'ունենանք ի հարկէ)։ Եթէ կարելի է, թող ֆրանսիական տաճկական[?] *եւ գրւած լինին անունը, տարիքը եւ այլն, իսկ եթէ ոչ, իւրաքանչիւր անցագրի կպցրէք մի կտոր թուղթ, որի վրայ գրւած լինին հայերէն բոլոր նշանները, անունը, ազգանունը, որտեղացի լինելը եւայլն...*

Համբոյրներ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

26 *Մարտի* 98 *թ.*

1.- Հարսանիք – խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. երկրորդ Ընդհ. ժողովին, որ պիտի գումարուէր Թիֆլիսի մէջ 1898 թ. Ապրիլ-Յունիս ամիսներուն: Այդ իսկ պատճառով, Ընդհ. ժողովին մեկնած Ռոստոմի գրութիւնները կանգ կ'առնեն հոս: Յաջորդ նամակը ան պիտի գրէր 1899 թ. Մարտ ամսուն:

250

Փաստ. 8-2

Ժընեւ, «Դրօշակ»ի խմբագրութեան, հաւանաբար Յոնան Դաւթեանին ուղղուած բացիկ:

յունիս 5, 1898

Սիրելիս,

Ստացայ քո նամակը. կամ վաղը, կամ միւս օրը անպատճառ կը պատասխանեմ։ Աստուած վկայ, հնարաւորութիւն չկայ։

Միայն չտապում եմ յայտնել, որ քո հարցրած միակ ըէակտիվը ամոնեաքն է (NH3), *այդ առաջուանից է ինձ յայտնել, ուրեմն ճիշտ է, ուրիշ ըէակտիվներով չփորձէք. դա ամենահաստատն է։ Թէեւ կարելի է գործածել* soude caustique *եւ* (NaOH)։

Քո Ռ.

Անալիզի հետեւանքները հաղորդիր։

251

Պատճէններու մատեան No 84, *էջ* 365-366

11 *Մարտի* 1899

Պարոն Գայաեանին
(Մ. Բաղդասարեանի միջոցով, (Պարիզ)

Յարգելի հայրենակից,

Դաշնակցութեան անցեալ տարւայ ընդհանուր ժողովը, որոշելով մերժել «նոր հնչակեանների» առաջարկած միութիւնը՝ խմբագրութեանս վրայ պարտականութիւն է դրել «Դրօշակի» մի յաւելածով պատճառաբանել այդ որոշումը։

Խնդրին վերաբերեալ մեր ձեռքի գտնւած զանազան թղթերի շարքում կայ եւ ձեր մի նամակը, ուղղւած պ. Սեքլեմեանին, ուր, ի միջի այլոց, կարդում ենք հետեւեալ տողերը։

«... եւ այսօր հնչակեան կուսակցութեան երկու բեկորներն դժոխքի կրակով եւ ոճով իրարու դէմ զինւած, կը մղեն անարդ պայքար. այդ է իրենց գոյութեան պայմանը։ Եւ հետեւապէս այդ պիտի ըլլայ դեռ երկար ատեն, թերեւս միշտ՝ իրենց մեկ զբաղումը։ Հապա ազգին հո՛գը, փրկութեան գո՛րծը։ Ատոնց վրայ խորհելու եւ գործելու ժամանակ չունին. եւ ըսենք նաեւ, ոչ արժանիք, ըստ որում այսքան կեղտոտեցին զիրար եւ քանդեցին ազգին յեղափոխական հաւատքը»։

«Ահա, սիրելիս, իրերու արդի վիճակը։ Երեւակայական «համագումար ժողովներէ», փոխադարձ արտաքսումներէ, մանաւանդ «Վերակազմեալ» կեդրոնէն չը խաբուինք։ Ատոնք բոլորը անձնական հաշիւներ են եւ «Վերակազմեալը» ժողովուրդէն դրամ շորթելու վերակազմեալ միջոց մըն է, ոչինչի վրայ հաստատւած» ...։ «Փարիզի մէջ իրենց հաւատարիմ ընկեր ունին եւ խորհրդական Բաշալեան, Զօպանեան, Աղասի. հոյակապ սրիկաներ, նրբացած խաբեբաներ...»։

Դիմելով ձեզ այս առթիւ, խնդրում ենք ըստ կարելոյն շուտով յայտնել մեզ, իրաւունք կը տաք արդեօք մեզ վերոյիշեալ յաւելածում օգտւել վերը բերած ձեր խօսքերից։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

252

Պատճէններու մատեան No 84, *էջ* 367

12 *մարտ* 1899

(Պ. Բաղդասարեանին, Պարիզ)
Ընկերներ,

Խնդրենք ներփակեալ նամակը հասցնել պ. Գայաեանին, որի հասցէն մեզ յայտնի չէ։

«Ի խաչ հան զդա» բրոշիւրը արդէն շարուում է, խնդրենք տեղեկանալ եւ շուտով մեզ հաղորդել

1) *Քանի՞ օրինակ է հարկաւոր տպագրել*

2) *Երես (կող) հարկաւո՞ր է, թէ ոչ*

3) *Հասցէ հարկաւո՞ր է նշանակել երեսի վրայ, թէ ոչ, եւ եթէ հարկաւոր է, ի՞նչ հասցէ։*

«Դրօշակ» ձեզ ուղարկուում է 130 *օրինակ, Տրապիզոն* 20, *Կր.* 50 *եւ Պարիզ* 60։

Բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

253

Փաստ. 38-8

Ժընեւ, 21 *մարտ* 1899

Ամերիկայի Կետրոնական կոմիտէին
Ընկերներ,

Հաստատում ենք մեր 10 *մարտի նամակը։ «Մարտի»*(1) 11 *համարում կարդացինք հետեւեալ տողերը.*

«Լովէլի մեր մասնաճիւղին քարտուղարը իր գործին մէջ «Դրօշակի» պատկանող դաշնակցական ընկեր մը ունի եղեր. այդ անձը կը յայտնի գողնալ հնչակեանին թուղթը (Ամերիկայի հնչ. նահանգային վարչութեան շրջաբերականը) եւ յանձնել «Դրօշակի» արժանաւոր ներկայացուցիչ Կ. Ի-եանին»։

Խնդրենք ըստ կարելոյն շուտով տեղեկանաք եւ հաղորդէք մեզ, ճիշտ է արդեօք այդ գողութեան փաստը, եւ եթէ ոչ՝ ինչ պարագաների մէջ է կետրոնական կոմիտէի ձեռքն ընկել վերոյիշեալ շրջաբերականը։

Ընկերական բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

Յ. Գ.— Կրկին անգամ խնդրում ենք ստացագիրը շուտով ուղարկել։

ՆՈՅՆ

1.- Լոնտոն հրատարակուող Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան պաշտօնաթերթ:

254

Պատճէններու մատեան No 84, *էջ* 378

30-*ին Մարտի* [18]99 *թ.*

Ս. Բագրատունուն, Պարիզ

Ընկեր,

Խնդրենք ուղարկել մեզ անցեալ տարւայ Temps-*ի մի համարը, որի մէջ խմբագրութիւնն ողջունում է վերակազմեալ հնչակեան կուսակցութեան յեղափոխական գործունէութեան թողնելը։ Այս համարը լոյս է տեսել յունւ*[*ար*] 14-*ից* (98 *թ.*) *առաջ, բայց երբ, չենք կարող ասել։*

Եթէ կարող էք, ուղարկէք նոյնպէս ժամանակաւորապէս վերակազ[*մեալ*] *Հնչակի երեք համարները եւս։*

Բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

255

Պատճէններու մատեան No 84, *էջ* 382

(*Փաստ.* 38-9)

4 *Ապրիլ* [18]99(1)

Ամերիկայի կենտրոնական կոմիտէին

Ընկերներ,

Հաստատում ենք մեր 21 *Մարտի նամակը։*

Ձեր Մարտ 17 *նամակն ստացանք, նամակի միւս կէտերի մասին թողնելով մի այլ անգամի, այսօր մենք պատասխանենք անցագրի առթիւ ծագած հարցերին*(2).

1. *Խաժակը թող ծնած լինի Մոսկվա եւ այնտեղ էլ բնակած.*

2. *Արհեստի հարցը, եթէ կարելի է, անորոշ թողէք, իսկ եթէ ոչ, թող վաճառական արձանագրւի։*

3. *Ազգութեան խնդիրն էլ կարեւոր չէ, վնաս չունի, թող այդտեղ հայ արձանագրեն. բաւական է, որ <u>անցագրի վրայ ազգութեան</u> մասին որեւէ ակնարկ չլինի։*

4. *Գնալիք տեղը նշանակէք Ռումանիա, Բոլգարիա, իսկ եթէ Մոսկվա ծնած լինելը, ուրեմն ռուսահպատակութիւնը որեւէ կերպով արգելք հանդիսանայ ամերի-*

կահպատակ դառնալուն, այն ժամանակ ծնած տեղը թող արձանագրուի Թաւրիզ, եթէ հայ է, կամ Ուրմիա, եթէ հրեայ է։

Բարեւներով՝
***ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ*(3)**

1.- Պատճէններու մատեանին մէջ գտնուող այս նամակին բնագիրը կը կրէ 38-9 համարակալումը: Թուականը գրուած է 21 Մարտ,որ յայտնապէս վրիպակ է, քանի կը սկսի «հաստատում ենք մեր 21 Մարտի նամակը» խօսքով: Ուղղեցինք 4 Ապրիլի, ինչպէս սրբագրուած է բնագրին մէջ «4 Մարտ», ինչ որ դարձեալ վրիպակ է. պէտք է ըլլայ 4 Ապրիլ:

2.- Խօսքը կը վերաբերի կեղծ անցագիր ձեռք բերելու հարցին:

3.- 1898 թ. Թիֆլիս գումարուած Հ.Յ.Դ. Երկրորդ Ընդհ. ժողովի որոշումով «Դրօշակ»ի խմբագրութիւնը վերածուած էր Արեւմտեան բիւրոյի: Արեւելեան բիւրոյի իրաւասութիւնը կը տարածուէր Ռուսիոյ, Պարսկաստանի եւ Արեւմտեան Հայաստանի նահանգներուն վրայ: Մնացեալը՝ Արեւմտեան Թուրքիայէն սկսեալ մինչեւ Պալքանները, Եգիպտոսը, Եւրոպական եւ Ամերիկեան ցամաքամասերու գաղութները, պիտի մտնէին Արեւմտեան բիւրոյի իրաւասութեան ներքեւ: Բաժանման գիծը կ՚անցնէր՝ Սեւ-ծովեան նաւահանգիստ Կիրասունի արեւմուտքէն դէպի հարաւ՝ Տիարպէքիր նահանգ երկարող ուղիղ գիծը: Ուստի, այս գիծէն արեւելք տարածուող շրջանները կը պատկանէին Արեւելեան բիւրոյին, իսկ արեւմուտքը՝ Արեւմտեան բիւրոյին: Այս բոլորով մէկտեղ, երկու բիւրոներն ալ իրաւասու էին անխտիր հաղորդակցելու կազմակերպական բոլոր շրջաններուն հետ: Հետեւաբար Ժընեւէն առաքուած գրութիւններուն տակ առհասարակ կը ստորագրուէր Արեւմտեան բիւրօ: Կը պատահէր նաեւ «Դրօշակ»ի խմբագրութեան անունով գրուէին անոնք:



ՎԵՐՋ No 84 Ռոստոմի կողմէ գրուած Պատճէններու մատեանին

256

Փաստ. 1141-17

Բացիկ է. Պուլկարիայէն (Ֆիլիպէ) Ժընեւ «Դրօշակ»ի խմբագրութեան կամ Ա-րեւմտ. բիւրոյին ուղղուած: Զոյգ թուականները (16-28 Հոկտեմբեր) կը վերաբերին հին եւ նոր տոմարներուն: ԺԹ. դարուն, հնի եւ նորի տարբերութիւնը 12 օր էր: 1900-էն սկսեալ, տարբերութիւնը պիտի ըլլար 13 օր:

16/28 *Հոկտ.* 99

Մի նամակ երկու օր առաջ ուղարկեցի։
Լեապօվը(1) *յայտնում է, թէ մինչեւ հիմա դեռ թղթակցի վկայականը չի ստացել, իսկ* .....(2) *նիստերը բացւել են։ Չգիտեմ, թէ ինչու չէք ուղարկել։ Եթէ որեւէ զգուշութիւն կ'ուզէք բանեցնել, կարող էք հեշտ որոշել վկայականը*(3)։
Ուղարկէք ուղղակի իրեն եւ .....(2) *հետեւեալ հասցէով՝*

.....
Ֆիլիպպէ

1.- Լեապով Գուրին, մակեդոնացի յայտնի յեղափոխական, բարեկամ Դաշնակցութեան:
2.- Օտար բառը պէտք է ունենայ կոնգրես իմաստը:
3.- Լեապովին պէտք էր «Դրօշակ»ի արտասահմանեան թղթակցի վկայական ուղարկել:

257

Փաստ. 1143-24

Պուլկարիոյ Ֆիլիպպէ (այժմ Փլովտիւ) քաղաքէն ուղարկուած Ռոստոմի մէկ գրութիւնն է, լուսանցքին «ստ[ացուած] 11 նոյեմբ. 1901» արձանագրութեամբ:

5 *Նոյ.* 1901
Ֆիլիպէ

Մի քանի ժամանակ առաջ ինձ յայտնեցին թէ Մերճանովը(1) *գտել է փախուստի մի միջոց, որի համար խնդրում է* 2000 *ֆրանքի չափ գումար։ Ինձ հարցրին թէ որքա՞ն մենք կարող ենք տալ. խոստացայ մինչեւ* 500 *ֆր.։* 100*ը անմիջապէս տուի ըսելով որ մնացածը յետոյ կը տամ. գրել եմ Մեծ քաղաք*(2), *ձեզ եւս յայտնում եմ որ աշխատէք որոնել* 400 *ֆր. հարկ եղած ժամանակը կը հեռագրեմ։ Չեմ շտապում որովհետեւ այնքան հաւատ չեմ ընծայում։ Կը սպասեմ Պետոյի*(3) *նամակին։ Եթէ*

Նրանից էլ իմանամ անմիջապէս պէտք է հասցնել։ Իրենք, մակեդոնացիք, դժուար դրութեան մէջ են, Բարձրագոյն կոմիտէն հակառակ է ոչ մի սանտիմ չտալ. միւսներն ալ բան չունին, դիմում են մասնաւոր շրջանակներին։ Երէկ ալ այստեղ ներկայացում տրւեցաւ նոյն նպատակով։

ՌՈՍՏՈՄ

1.- Սվեատոսլաւ Մերճանով, պուլկար յեղափոխական, 1901 թ. ամրան՝ հայ եւ պուլկար մարտիկներու մասնակցութեամբ թրքական զօրքի դէմ Էտիրնէի (Ադրիանապոլիս) մօտ մղուած արիւնալի կռուի մը ընթացքին, որ շարունակուած էր մինչեւ փամփուշտներու սպառումը, գերի բռնուած էր՝ Պետրոս Սերեմճեանի (Պետո), թեքիրտաղցի Օննիկ Թորոսեանի եւ մակեդոնացի Խրիստո Հաճի Իլիեւի հետ, որոնք, չորսն ալ, Էտիրնէի մէջ նոյն տարուան Նոյեմբեր 27-ին կախաղան հանուեցան, քաջ մարտիկներու համբաւ շահելով:

2.- Մեծ Քաղաքը Թիֆլիսն է:

3.- Պետոն Պետրոս Սերեմճեանն է, նոյնպէս բանտարկուած, ապա կախաղան հանուած, «Վէրքերով լի» ծանօթ երգին հերոսը:

258

Փաստ. 1143-69

Ռոստոմի ձեռագրով նամակ, «Հ. Յ. Դաշնակցութեան Ֆիլիպէի կոմիտէ» ստորագրութեամբ:

13 *դեկտ.* 1901

Ատրպատականի Կենտր. «Վրէժ» կոմիտէին
Ընկերներ,

Արդէն իմացած կը լինէք, որ Ատրիանապոլսոյ մէջ կախաղան են հանուած Պետրոս Սերեմճեանը (Ֆիլիպեցի), Օննիկ Թորոսեանը (Թէքիրտաղցի) եւ երկու նշանաւոր պուլկար յեղափոխականներ՝ Սվեատոսլաւ Մէրջանով (Ժընեւի համալսարանից) եւ Խրիստո Իլիեւ։ Դրանից 3-4 ամիս առաջ կռւի մէջ սպանուած էին կախուածների ընկերները՝ Թաթուլ Զարմանեան (մալկարացի), Օննիկ Թարաքճեան (Թէքիրտաղցի) Անտոն («տրապիզոնցի» — Բաղրի փաշայի տեռորիստը) եւ երեք բուլղար՝ Սոկոլով (ուսուցիչ) եւ ուրիշներ։

Այդ առթիւ հայ եւ բուլղար եկեղեցիներում հոգեհանգիստներ կատարւեցան եւ շատ քաղաքներում աղմկալից ցոյցեր տեղի ունեցան։

Պետրոս Սերեմճեանը (բուլղարացի) քաջ ծանօթ լինելով Պարսկաստանի եւ Վասպուրականի մեր ընկերներին, հարկաւ դուք եւս պիտի ուզենաք նրա եւ նրա ընկերների յիշատակը յարգելու համար էլ հոգեհանգիստ կատարել տալ թէ այդտեղ եւ թէ Սալմաստ(1)*։ Մենք պիտի խնդրէինք, որ կոմիտէդ կուսակցական նամակ ուղարկէր*

Պետրոսի հօրը, որ քաղաքս կը բնակի։

Կոմիտէիդ կը յայտնարարենք Գէրոդ վրդ. Նալպանտեանը, որ վանահայր է նշանակուած Թադէոսի վանքում։ Նա կարող է շատ օգտակար լինել ձեզ։ Այստեղի մեր կազմակերպութեան անդամ էր։

Ընկերական բարեւներով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՖԻԼԻՊԷԻ ԿՈՄԻՏԷ

Յ. Գ.— Խնդրենք յայտնել պ. Տիգրան Մելիքսէթեանին, եթէ միայն ձեր կողմերն է, որ մենք կ՚ուզենք տեղեկութիւն ունենալ իր մասին։
ՆՈՅՆ

1.- Պետրոս Սերեմճեանը «Վէրքերով լի» ծանօթ երգի հերոսն է:

259

Փաստ. 13-26

4 *յուլիս* 1903

(Կարս — Մեծ Քաղաքից)

Սիրելիք,

Կակոն վերադառնում է։ Աշխատէք ճանապարհ ձգել Խաչիկի եւ Լեւոնի հետ եւ եթէ ուզում էք, մի երկու հոգի եւս աւելացրէք։ Մուշեղը եւ Մարտիրոսն էին ուզում սրա հետ գնալ, բայց մենք չընդունեցինք, որովհետեւ նրանք տրամադրութիւն ցոյց չտուին տեղական մարմնին ենթարկւելու. նրանց միտքն է առանձին մարմին հաստատել եւ միայն մեզ հետ կապ ունենալ։ Մենք դրական կերպով խնդիրը դրինք, որ պէտք է անպայման ենթարկւին Երկաթին(1) *եւ միւսներին։ Մարտիրոսը շատ հեռուներն է մտածում, իսկ Մուշեղը հաւանական է ընդունի վերջ ի վերջոյ մեր պայմանը։ Այն ժամանակ կ՚ուղարկենք համապատասխան յանձնարարականով։*

Ձեր Ռ.

Կակոյին տրւում է 10 *ռուբլի։*
ՆՈՅՆ

1.- Աշոտ-Երկաթ, իսկական անունով Լեւոնեան Արմենակ (1871-1904), ծանօթ մարտիկ:

260

Ռոստոմի ձեռագրով՝ չհամարակալուած եւ անթուակիր գրութիւն՝ Արեւելեան բիւրոյի կողմէ, ուղղուած հաւանաբար Ժընեւ Արեւմտեան բիւրոյին: Ըստ բովանդակութեան կը տեղադրուի 1903 թ. Յունիս-Յուլիս ամիսներուն, երբ թրքական զօրքերն ու քիւրտերը շրջափակման մէջ կ՚առնէին Տարօն-Սասունի շրջանը: Վահանը Մանուէլեանն է, բուն անունով Տողրամաճեան Կարապետ:

Սիրելիք,

Հարկ ենք համարում աւելացնել հետեւեալը։

Մեր այստեղի պատրաստութիւնները եւ քայլերը անւում են համաձայն Բարձրաւանդակի(1) *մարմնի տրամադրութեան։ Վահանը հետեւեալ կերպով է ձեւակերպում իրենց ծրագիրը։*

1) *Շարունակ կազմ ու պատրաստ գտնւել հանդէպ այլ եւ այլ անակնկալների։*

2) *Եթէ նկատեն, որ զօրքերը ու քիւրդերը շատ են սխմում պաշարման շղթան, թոյլ չտան, որ թշնամին յանկարծակի ներս մտնի, այլ առաջին յարձակողական քայլը իրենք անեն, որով ա) առաջին հարւածով վհատում առաջ բերած կը լինեն թշնամիների մէջ, բ) զէնք եւ մթերք ձեռք բերած կը լինեն։*

Բացի այդ նոքա պահանջում են մեզանից, դրսի մարմիններից

1) *Շարունակ պատրաստել զէնք, մթերք եւ կռւող ուժեր*

2) *Հասցնել իրենց բաւական գումար պաշարման դէպքում միջոց ունենալու համար*

3) *Իսկ Սասունի վրայ յարձակման դէպքում, սահմանագլխի*(2) *այլ եւ այլ կէտերից յարձակումներ գործել եւ թոյլ չտալ որ կառ[ավարութիւնը] իր ամբողջ ուշադրութիւնը Սասունի վրայ կեդրոնացնի։*

Այս պատճառով է որ մենք դիմում ենք ձեզ եւս(3)*, առաջարկելով ձեր կողմից հարկ եղած պատրաստութիւնները տեսնէք, թէ դրամի, թէ զէնքի եւ թէ մարդկանց։*

Ընդհանուր ժողովի(4) *հրաւէրը ստացած կը լինէք արդէն։ Ցանկալի է ժողովից առաջ իմանալ ձեր հարցերը եւ կարծիքները։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒԵԼ[ԵԱՆ] ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Վ[ահան]ի մասին երբ հարկ լինի, պատշաճ գրութիւն կ՚ուղարկենք։

1.- Բարձրաւանդակ – ծածկանուն Սասնոյ:

2.- Սահմանագլուխ – պէտք է իմանալ Պարսկաստանի կամ աւելի ճշգրիտ՝ Ատրպատականի կողմէն:

3.- Այսինքն՝ Արեւմտեան բիւրոյին:

4.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհ. ժողովին, որ պիտի գումարուէր 1904 թ. Փետրուար-Մարտ ամիսներուն:

261

Փաստ. 756-20

Անթուակիր նամակ, որուն երկրորդ մասը, շեղագրով շարուած, Ռոստոմի կողմէ արտագրութիւն է Մենակի (Առստամեան Եգոր) մէկ գրութեան: Ռոստոմի նամակը անթուակիր է, Մենակինը 1903 թ. Յուլիս 31: Պէտք է ենթադրել Օգոստ.ի սկիզբ: Նամակը գրուած է Կովկասէն, հաւանաբար Թիֆլիսէն:

Նամակին առաջին էջին վերեւ, Քրիստափորի ձեռագրով՝ «ստացուած 27 օգոստոսին»:

Սասունից ստացած լուրերը հանգստացուցիչ են։ Կարնոյ եւ Մշոյ մէջ առեւտրական յարաբերութիւնները կտրուած են կառավարութեան հրամանով։ Կարինում բերդին եւ քաղաքին պահապան մնացել են թնդանօթաձիգները։ Զօրքի մի մասը թողել են Խնուսի բերդը, իսկ մնացածը՝ 870 հոգի ուղարկել են Մուշ։ Հրայրը(1) անցել է Խլաթ իր խմբով Զիարէթի զինուորներին կոտորելուց յետոյ։ Խմբից միայն ինքը Հրայրն է թեթեւ վէրք ստացել, բայց անվտանգ։ Բիւրակնից(2) եկած նամակի մէջ գրում են, որ մերոնք կռիւ են ունեցել քրդերի հետ եւ նրանց մեծ կոտորած են պատճառել։

Կառավարութիւնը քրդերին գրգռելու համար լուր էր տարածել, թէ ֆետայիները մտադիր են յատկապէս քրդերին կոտորել, նրանք էլ մեծ թւով պատրաստւում են Սասնոյ վրայ գնալու իբր նախայարձակներ։ Կառավարութիւնը իր գործերը առաջ պիտի քշէր քրդերից յետոյ, ինչպէս դա եղաւ Սասնոյ կոտորածին։ Յարձակումը առաջին տեղի ունեցաւ Շէնիկի վրայ. մերոնք սոսկալի ջարդ տալով քրդերին, յետ են մղում նրանց, եւ զօրքը փոխանակ օգնութեան հասնելու, քակում են վրանները եւ իջնում Մուշ, քաղաքը պաշպանելու նպատակով։

Վանից եկել են ռուսական, անգլիական հիւպատոսները եւ ֆրանսիական փոխհիւպատոսը։

Բասենում թուրքերի մէջ կատարեալ անդորրութիւն է, չնայած հայերի մէջ աչքի ընկնող արտակարգ իրարանցման. մի հանգամանք, որ պիտի կատաղութիւն առաջ բերէր։

Հայերի մի քանի զօրեղ հարւածներից յետոյ կառավարութիւնը յանկարծակի փոխեց իր ընթացքը քիւրդերի վերաբերմամբ. հիմա նրանք խստիւ հալածւում են։ Բասենում հազիւ հազ է պատահում քիւրդ ձիաւոր, այն էլ առանց զէնքի։

*
* *

(Մենակի նամակից)

Երկու շաբաթ առաջ Կարինի ֆրանսիական հիւպատոսին ներկայացաւ մի բասենցի եւ նկարագրեց ժողովրդի վիճակը: Հիւպատոսը շատ սիրով ընդունեց նրան եւ յոյս տուաւ թէ «մի յուսահատուէք, ձեր յոյսերը կ՚իրականանան եւ բասենցիները օրհնում են ֆրանսիական կառավարութիւնը»: Այս խօսքերը մի փոքր ժպիտ փայլեցրին

ծով դարդից կնճռոտած դէմքերի վրայ: Առաջին անգամ «մարդկային իրաւունքներ» յայտարարողների սերունդը, մեծ յեղափոխութեան հայրենիքի որդիքը պիտի արդարացնե՞ն մեր յոյսերը… Եթէ այո, ե՞րբ, ե՞րբ… Հերիք չէր այսչափ արիւնը…

Խնուսի առաջնորդարանից մի ընդարձակ տեղեկագիր է ներկայացրած նոյն հիւպատոսին, որ բացի մեծ սիրով ընդունելուց, առաջարկել է միշտ անպակաս անել նման տեղեկանքներ:

1903 թ. յուլ. 31-ին

1.- Հրայր Դժոխք (Ղազարեան Արմենակ):
2.- Բիւրակն – կուս. ծածկանուն Խնուս քաղաքի:

262

Փաստ. 725-9

Աշոտ Երկաթի (Արմենակ Լեւոնեան) կողմէ Ա. Վռամեանին ուղղուած նամակ է, գրուած Պուրակէն (Սալնոյ ձոր, Բաղէշ). ստացուած է Յուլիս 27 / Օգոստոս 9-ին, 1903 թ.: Վերջին էջին վրայ Ռոստոմի յաւելուած՝ մանր գիրերով:

Վահանը պէտք է ըլլայ Մանուէլեանը, իսկական անունով Տողրամաճեան Կարապետ (1870-1904) Սասնոյ 1904 թ. ապստամբութեան ընթացքին Դաշնակցութեան ներկայացուցիչը:

Ժընեւ ուղարկած Վահանի նամակում կար, որ 750 ոսկի ստացել են. նամակը գրւած է օգ. 31ին: Շուտով դարձեալ 200-300 կը հասնի:

Յոյս ունենք մինչեւ 20.000 ր. լրացնել հետզհետէ: Այնպէս որ ձեր ուղարկած գումարը կարող էք մեր հաշւին անցկացնել, իսկ մենք Պարսկ[աստան] մնացած փողը մեր հաշւին կ'առնենք: Զգիտեմ, ձեր ուղած ընկալագիրը ստացաք, թէ ոչ:

Քո Ռ[ՈՍՏՈՄ]

Զմոռանաք, որ 3000 ր[ուբլի] մենք ենք ստացել Վրէժից(1)*. որքան ինձ յայտնի է, Շամ*(2) *աւելի է գնացել, քան 100 ոսկին:*

1.- Վրէժ – ծածկանուն Ատրպատականի Կ. կոմիտէութեան:
2.- Շամ – ծածկանուն Վան-Վասպուրականի:

ԾԱՆՕԹ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ռոստոմի կենսագիրներուն համար անոր կեանքին մէկ որոշ շրջանը – 1903 թ. վերջերէն (Նոյեմբեր – Դեկտեմբեր) մինչեւ 1904 թ. կէսերը, անորոշ կը մնայ: Բոլորն ալ համաձայն են որ այդ ամիսներուն ցարական ոստիկանութեան կողմէ ան ձերբակալուած եւ աքսորուած էր Օտեսա. այդ պատճառով ալ չկրցաւ մասնակցիլ 1904 թ. Փետրուար-Մարտ ամիսներուն Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ գումարուած Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհ. ժողովին (փակումը 17 Մարտին): Հրաչ Տասնապետեան, որ կազմած ու խմբագրած է Ռոստոմի Նամականին, կը գրէ. *«Երրորդ Ընդհ. ժողովի օրերուն (1904-ի առաջին քանի մը ամիսներուն) նամակներ (Ռոստոմէն)՝ մեզի հասած չեն դժբախտաբար»:* Եւ սակայն, ինչպէս ցոյց պիտի տան յաջորդող էջերուն մէջ տրուած գրութիւնները, Ռոստոմ իր Օտեսայի աքսորավայրէն, եւ նոյնիսկ բանտէն, Սոֆիա ուղարկած է շարք մը նամակներ, որոնց մասին պիտի խօսուի քիչ անդին:

Թէ որքան ժամանակ աքսորի կամ բանտի մէջ մնացած է Ռոստոմ, այդ մասին ժամանակակիցներու նամակներուն եւ Հ.Յ.Դ. կեդրոնական արխիւին մէջ կը գտնենք հատուկտոր նշմարներ միայն, որոնք, այսուհանդերձ, որոշ լոյս կը սփռեն գրեթէ անյայտ մնացած այս խնդրին վրայ:

Այսպէս, Սիմոն Զաւարեան իր 23 Մարտ 1904-ին «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղած նամակով կը գրէ. *«Իմ այստեղ [Օտեսա] անցնելու գլխաւոր նպատակն է շտապեցնել եւ կարգադրել Ռ.[ոստոմ]ի ճանապարհելը. տեսնեմ»:* Իսկ 5 Ապրիլին Ալեքսանդրապոլէն (Գիւմրի) նոյն հասցէին գրած նամակով կ՚ըսէ. *«Քանի օր է այս կողմերն եմ: Ռ.ին վերաբերեալ հարցը հաւանականօրէն կարգադրուի դրական կերպով. վախնամ մի քանի ամիս դա ձգձգուի»:* Ինք Ռոստոմ, Օտեսայէն 14 Ապրիլին գրած նամակին մէջ կը յայտնէ, որ *«հիմա ընտանեկան գործերս կարգադրուած կարելի է համարել»,* բայց «անցագիր ճարելու հարցը» պիտի ուշացնէր Օտեսայէն իր մեկնումը (փաստ. 14-17): Հաւանաբար Զաւարեանի այս վերջին նամակէն բաւական ուշ թուականի մը գրուած է Համօ Օհանջանեանի թիֆլիսեան մէկ գրութիւնը, Մհերեան ստորագրութեամբ, Արեւելեան բիւրոյի անունով ուղղուած Ժընեւ՝ Արեւմտեան բիւրոյին: Մեր հարցին պարզաբանման համար կարեւոր այս փաստաթուղթը (14-26) դժբախտաբար անթուակիր է: Այս նամակով ան կ՚աւետէ. *«Ռոստոմից հեռագիր ստացանք որ բանդից դուրս է եկել եւ գալիս է ձեզ մօտ այդտեղից Մարսէյլի վրայով գալու: Սպասում էր նամակի»:* Ուստի իր աքսորական եւ բանտային կեանքը պէտք է հաշուել շուրջ 6 ամիս, որովհետեւ 20 Մայիս 1904-ին գրած նամակին մէջ կը յայտնէ. *«Սպասում եմ անցագրիս. ստացայ թէ չէ ճանապարհ կ՚ընկնեմ»* (փաստ. 14-20). իսկ նոյն տարուան Յունիսի սկիզբը արդէն զինք կը գտնենք Ժընեւ:

Այժմ բանտէն կամ աքսորավայրէն գրած աւելի քան տասնեակ մը նամակներուն մասին: Անոնցմէ մէկ քանին ուղղակի իր ձեռագրին կը պատկանին: Մեծ մասը սակայն արտագրուած է՝ յայտնապէս գաղտնի մելանով գրուած նամակներէ, որոնք ուղղուած են Սոֆիա՝ Ընդհ. ժողովի համար հաւաքուած ընկերներու, արտագրուած այս վերջիններէն Քր. Միքայէլեանի, Ս. Զաւարեանի, Խ. Մալումեանի եւ այլոց ձեռամբ: Արտագրութիւնները ընդհանրապէս չեն ներկայացներ Ռոստոմի նամակներուն ամբողջութիւնը, այլ կարեւոր այն բաժինները միայն, որոնք երեւի կը շահագրգռէին ժողովն ու ժողովականները:

Ստորեւ այդ գրութիւնները՝ արտագրողի անուան եւ ստացուած թուականի նշումով: 14 հատ են անոնք, թուագրուած No 263-276, որոնց միջոցաւ յաւելեալ տեղեկութիւններ կը քաղենք Ռոստոմի աքսորականի կեանքէն (էջ 253-263):

263

Փաստ. 13-22

Սիմոն Զաւարեանի ձեռագրով արտագրուած Ռոստոմի այս գրութիւնը յայտնաբար գաղտնի թանաքով գրուած, լաւ բացուած չէ. կու տանք բազմակէտերով:

Ռոստոմից

2 *Նոյեմբ.* 1903

Վերջին դէպքերը դեռ եւս առանձին խստութիւններ առաջ չեն բերել։

Մեր խմբապետներից բռնուած են մի քանի հոգի։ Սաքոյին(1) *եւ մի քանիսին էլ առ այժմ հեռացրել ենք. նրանց մասին հարց ու փորձ են անում։ Առ այժմ մի վճռողական քայլ կառավարութեան կողմից չի երեւում։ Նահանգական քաղաքներում (մասնաւանդ Գանձակ) նոր աֆերա է բացւել, պաշտօնեաների համար. պատահած մարդուն եթէ ունեւոր է բանտարկում են եւ կաշառք առնելով ազատում. մինչեւ իսկ լրբաբար առաջւանից պահանջ են դնում՝ եթէ մերժում են ստանում մի մահանա բռնում են։ Խօսք կայ աքսորների մասին բայց* .....(2) *իսկ տաճկահայերի դէմ բացարձակ հալածանք է սկսւել։ Բաթումից ստիպում են հեռանալ նոյնիսկ այնպիսիներին, որոնք կանոնաւոր անցագիր ունեն։ Բռնուածներից մի քանիսին արձակել են, որովհետեւ ոչ մի կապ չեն գտել։ Ասում են որ Նատալին էլ կ՚արձակեն շուտով։ Լուրեր են պտտւում որ Կարոպատքինն է նշանակւելու։ Հիւանդի դրութիւնը ըստ ոմանց լաւանում, ըստ ուրիշների վատթարանում, բայց փաստ է որ այստեղ այլեւս չի մնալ։ Կաթող[իկոս]ը շարունակում է իրեն լաւ պահել, բայց ֆիզիքապէս ընկճուած է։*

Ժողովրդի տրամադրութիւնը լաւ է, ի բաց առեալ մի քանի չրջաններ ուր դեմորալիզացիա է սկսւել. այս նկատելի է մասնաւորապէս Գանձակ, ուր պրոկուրորը ինքն է զզւել իր ստացած օնանիմ(3) *զրպարտութիւններից այս կամ այն հայի կողմից. մեր դրութեան վերաբերեալ լուրեր աւելի մեզ* .....(2) *հետաքրքրում է թէ ինչ գրուեցաւ վերջին ընդհարումների մասին։ Թանաքով գրուած տեղեկութիւնները մասնաւոր են. պաշտօնական դեռ ոչինչ չունենք. առ այժմս այսքան։ Սրանից յետոյ խոստանում եմ կանոնաւոր գրել եթէ ի հարկէ պարագաները թոյլ տան։ Սրանից մի շաբաթ առաջ մէկ նամակ եմ գրել Սիմ[ոն]ի*(4) *տւած հասցէով միայն ազգանունի տառերը փոխելով. կարծեմ* .....(2) *բայց տան համարը եւ այլն ճիշտ է։ Ընդհ. Ժ. մասին վերջնական կարծեմ պէտք է միաձեւ*[?] *անել. յայտնել Բարձրաւանդակ որ աշխատեն ըստ կարելւոյն շատ պատգամաւոր ուղարկել*(5)*. պատգամաւորները հասան թէ չէ այնտեղ իսկոյն եւ եթ իմաց կը տանք օրը։*

Տեղի մասին հարկաւոր չէ հէնց հիմա յայտնել։ Միայն վերջին օրերը կը յայտնենք որ չտարածւի. իսկ Ամերիկայի, Եգիպտոսի եւ այլ տեղերի պատգամաւորներին կարելի է հաւաքել մի տեղ յետոյ իմաց տալ...

Սրանից մի ամիս առաջ Քարի(6) *մեր ընկերներին ներկայացաւ մի երիտասարդ* ..... *սպանելու։*

Մերոնք կասկածում են նրան եւ ստիպում են ..... *որ ինքը* ..... agent provocateur(7)։

Խուզարկում են եւ մօտը գտնում ոստիկանութեան կողմից տրուած վկայական։ Երիտասարդը խոստովանութեան ժամանակ տալիս է իր ընկերակիցների անունները որոնց վերայ ..... կայ։ Նշանակւած երիտասարդները կարծեմ կենդանի, թէ Աստուած սիրէք ձեր նամակները, գրէք եւ այն գրելուց .....

Էլ[լ]էնի(5) *մէկ նամակը կարդացել եմ։*

.....

.....

.....

Թէ որ վեր կենալու լինի.....

Խմբի մտած նոր մարդ չկայ. լուրերին նայելով տղաները յաջող հասել են մինչեւ Խնուս - Սպանում են 7-5 հոգու ..... որոնցից 25 հետեւակներից են. վերացնելով սպանւած զինուորների եւ քրդերի ձիաները։

Այսօր էգուց սպասում ենք երկրից լուրի։

Միթէ արտասահմանի թերթերն իսկ ոչինչ չըգրեցին. պատմեմ մի դէպքի [*մասին*] *որ առ այժմս չենք հրատարակում։*

1.- Հաւանաբար Սեւքարեցի Սաքոն է (Ծովիանեան):
2.- Անընթեռնելի բառ. այսուհետեւ անընթեռնելի բառերը՝ բազմակէտով:
3.- Անանուն:
4.- Ս. Զաւարեան:
5.- Բարձրաւանդակ – ծածկանուն Սասունի: Հարցը կը վերաբերէր 1904 թ. Սոֆիայի մէջ գումարելիք Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհ. ժողովին Սասունէն պատգամաւորներ ուղարկելու հարցին:
6.- Քար – ծածկանուն Ալեքսանդրապոլ քաղաքի եւ Շիրակի շրջանին:
7.- Ֆրանսերէն՝ գրգռիչ գործակալ:
8.- Էլէն – ծածկանուն Քրիստափոր Միքայէլեանի:

264

Փաստ. 13-23

[*Ստ.* 14 / XII / 03]

Սիրելիք,

Զգիտեմ իմ գրած նախորդ նամակը ստացել էք, թէ ոչ։ Նոր տեղեկութիւն չկայ երկրից։ Մենակի(1) *եւ իր ընկերների մասին ոչ մի լուր։*

Իսկ դուք ի՞նչ էք անում։ Լսեցինք, որ փարիզինը անաջող է անցել, թէեւ լաւ բաներ են խօսացել։

Էս էլ այսպէս, քիչ եմ գրում, շատ հասկացէք։

Ձեր ՌՈՍՏ[*ՈՄ*]

դեկտ. 1903

Եղածով պէտք է գոհանալ, լաւ է քիչ, բայց շուտով, քան թէ լեգեօններ յետոյ։

1.- Մենակ – ծածկանուն Գէորգ (Եգոր) Առստամեանի (1882-1903), երիտասարդ յեղափոխական մարտիկ, որ Սասունի ապստամբներուն զինամթերքի եւ մարտիկներու հասցնելու յաջողութեամբ պսակուած բազմաթիւ փորձերէ ետք պիտի զոհուէր 1903 թ. աշնան (Հոկտեմբերի) կռիւներուն: Աքսորի մէջ գտնուող Ռոստոմ յայտնաբար տեղեակ չէր անոր նահատակութենէն:

265

Փաստ. 14-16

Սաֆօ – Մարգարեան Մարտիրոսի ձեռագրով Ստացուած Սոֆիա II-04-ին Ռոստոմից

Մի կէտի վրայ էլ եմ ուզում կանգ առնել։ Գուցէ Ընդհ. Ժողովում հարց ծագի փոթ[որիկի](1) գործ տարածել եւ իրան տալ ընդհանուր բնաւորութիւն... նոյն միջոցները գործ դնել իւր ռայոնում. այս բանից ես շատ եմ վախենում. դրան ամէն կերպ պէտք է հակառակուել։ Բաթ[ումի] չարաբաստիկ դէպքը մեզ խրատ։ Ընդհակառակն անհրաժեշտ է որ մեր կոմիտ[էները] փողի տեսակէտից խոյս տան եւ այլ կիսասպառնական միջոցներից որ մասամբ գործադրուել է։ Եթէ մեր կոմիտ[էները] գործադրելիս իրենց կորրեկտ պահէին, այդ տեսակ հնչ[ակեանները] չէին վեր կենալ մանր մունր դիմումներով փ[ող]ի դիմումները խանգարելու։

Մի այլ հարց էլ։ Ինչ դիրք պէտք է բռնենք այն պարագային եթէ պատերազմ ծագի. եթէ պատ[երազմը] սահմանափակուի Բուլղ[արիայի] եւ Տաճկ[աստանի] միջեւ, պարզ է։ Իսկ եթէ Ռուս[աստան] եւ Տաճկ[աստան] բռնուեցին, ինչ անենք այն ժամանակ։ Իմ կարծիքս է մի յատուկ յայտարարութեամբ պէտք է հրաւիրենք բոլոր ոյժերը Տաճկ[աստանի] դէմ։ Տաճկահայ խնդիրը աւելի կախում ունի մոմենտներից, որոնց կորցնելը կարող է ճակատ[ագրական] լինել։ Մինչդեռ կռիւը եթէ կանոնաւոր կերպով մի տարի ուշ էլ սկսենք մի առանձին կորուստ չենք ունենայ։

Ցարմար հասցէ չունեմ ձեզ տալու։ Երեւի մերոնցից կը լինեն այստեղ։ Բայց ինչպէս գտնեմ։ Գրեցէք մի բուլղարի հասցէով յանձնել .....-ին(2). ինձ էլ յայտնեցէք նրա հասցէն։ Կը գնամ կը ստանամ։

Տիար Անտոնին(3) տալ եմ մի ժամագործի հասցէ. Կարող էք գրել անմեղ նամակներ. քիչ յետոյ կը կանոնաւորեմ։

Լաւ ծանօթ չեմ սոցիալ ռեւոլուց[իոներների] ծրագրին։ Բայց կարծեմ, որ իմ առաջարկածը մօտաւորապէս նոյնն է։ Կարող են առարկել ի հարկէ, որ մեր կուսակցութիւնը չի կարող իր մէջ ամփոփել ամէն տեսակ գործունէութիւններ, որ թող բանւորական խնդրով զբաղուեն սոց. դեմ[ոկրատներ]ը։ Բայց սա սխալ կը լինի այն տեսակէտից, որ «Հայ» կուսակցութիւնը չի կարելի նկատել իբր սովորական մի կուսակցութիւն հասարակական հողի վերայ։ Մեր թշնամին արտաքին է. ուստի մեր կուս.ը պէտք է կրի աւելի ժամանակաւոր կառավար[ութեան] կերպարանքը եւ իր մէջ աշխատի ամփոփել կռւի բոլոր ձեւերը։ Մի կէտի վրայ էլ եմ ուզում քիչ կանգ առնել։

1.- Փոթորիկ – բռնի դրամահաւաքի իմաստով:

2.- Անընթեռնելի մէկ բառ:

3.- Տիար Անտոն կամ Անտոն Գոշ (Պոյաճեան, 1849-1927), Պուլկարիոյ պատասխանատու ընկերներէն, որ այդ օրերուն կը վարէր «Դրօշակ»ի եւ Արեւմտեան բիւրոյի դիւանապետի պաշտօնը:

266

Փաստ 14-13

Ռոստոմի ձեռագիր

15 / II / 1904

Յարգելի Բարեկամ(1),

Քանիցս անգամ նամակ եմ գրած եղբօրս, սակայն պատասխան չեմ առած։ Խնդրեմ յատկապէս նեղութիւն կրէք այս իմ երկտողս ցոյց տալով նրան, ստիպէք, որ նամակիս պատասխանը բարեհաճի գրել։

Եթէ եղբայրս հոդ չէ, խնդրեմ նամակս յանձնէք կամ պ. Վռամեանին, կամ Տէր Օհանեանին։

Յարգանքներս բոլոր բարեկամաց
Ձեր ՌՈՍՏՈՄ

1.- Յարգելի բարեկամը պարզապէս Արեւմտեան բիւրոն է. նոյնը նաեւ «եղբայրս»ի համար։ Վերջին այս պարագային, պէտք է ենթադրել Քր. Միքայէլեանը։

267

Փաստ. 14-7

Ռոստոմի մէկ բացիկը «Մանուէլ» ստորագրութեամբ։

Սիրելիս,

Որքա՜ն պահպանողական ես եղել, կպել ես հին ձեւերի, էլ պոկ չես գալիս։ Չէ, բոլորովին փափաք չունեմ քեզ հետեւելու։

Հռիփսիմէն ասում էր, որ շուտով գալու ես, ճի՞շտ է, քննութիւններ տուել ես, թէ դեռ տալու ես։

Գալիս ի հարկէ ինձ էլ կ՚այցելես։

Պետրոսը ամառս իր հայրենիք է գնալու եւ ամբողջ ամառը այնտեղ է մնալու։ Գործերը լաւ չեն պատերազմի պատճառով։

Համբոյրներս քեզ
Քո՝ ՄԱՆՈՒԷԼ

29 / II / 1904

268

Փաստ. 14-14

Մարգարեան Մարտիրոսի (Սաֆօ) ձեռագիր, մակագրուած Ռոստոմի նամակ:

Աւետիս Շահբազեանի հարց.

Քանի որ եկաւ եւ ուզեց վճարել Ժընեւ առածը։ Ես էլ իմանալով, որ Կ[արմիր] Խ[աչ]ից պահանջ ունի, ուզեցի հաշիւ իրենից։ Հաշիւը ներկայացրեց մանրամասն. չեմ յիշում։ Այսքանը գիտեմ որ եթէ Կ. Խ[աչ]ից իր ուզածը մենք հանենք, իրեն պարտք կը մնանք 4-5 *ռուբ[լի]։ Հաշիւը փակեցինք այնպէս որ նա ոչ պահանջ եւ ոչ պարտք ունի։ Եթէ ապագայում ոեւէ առարկութիւն լինի իր ներկայացրած հաշուի մասին, նա պարտաւորւում է վճարել տարբերութիւնը։*

Եւ ուրեմն այդտեղ վճարէք 250 *ֆ Ռուսչուկի պարտքը եւ Ժընեւինը։ Կ. Խ.ը կը վճարէ դրա փոխարէն։ Դրա մասին խօսւում է - խնդիրը Տիրանը տարբեր կերպով է ներկայացրել։ Ինքը բացակայ լինելով, մանրամասնութիւնները կարող էր չիմանալ։ Բացի այդ, ես հակառակ էի խազէինից փող առնի, իսկ առնելու դէպքում ամբողջ գումարը յատկացնի այդ գործով բանտարկուածներին* (3 *հոգի*) *եւ սպանուածի ընտանիքին։ Ամբողջ գումարը կասսան է մտցուել։ Կարծեմ Ընդ. Ժ[ողովը] եթէ սկզբունք որոշէ որ կոմ[իտէները] իրաւունք չունին սպառնալիքով դրամ ժողովել, կարող է որոշել որ ստացած գումարը կասսայից հանի եւ մի կերպ տնօրինի։ Վռամեանին հարցրէք ե՞րբ եւ ում միջոցաւ է փոխադրել* 600 *ռուբ[լին]. այդ գումարը դեռ չէր ստացած։*

Ինչպէս երեւում է Մակ[եդոնացիք] իրենց պոչը քաշած են ուզում պահել այս տարի։ Ձեր որոշումը Բիւրոն պահել Պատ. Կ. Մարմ.ից, բաւական ցաւալի եւ տարօրինակ է։ Մինչեւ հիմա մենք խնդիրներ էինք բաց անում դրսից ներս տանելու համար, հիմա հակառակն էք անում։ Ինչպէ՞ս եղաւ որ այս ժողովում ներսը այնքան առատութիւն տիրեց, որ դուրս էք բերում այնտեղից մարդի։

Իմ հասցէն՝
Mr. M. Kurdian[?]

Յանձնել Պետրոսեանին

269

Փաստ. 14-15

Ռոստոմից ստ[ացուած] փետրուար, 1904-ին:

Անծանօթ ձեռագիր

Այստեղ մենք տեսնում ենք երկու ուղղութիւն — Socialiste Révolut[ionnaire] *եւ* social démocrate*ի հարցը չի կարելի դնել այնպէս՝ սրան կամ նրան. բացի մի քանի վայրերում, մենք գործել ենք կամ գործելու ենք առաջիններին ուղղութեամբ, բայց կան վայրեր, ուր մենք ստիպուած ենք յարել եւ* soc. démocrate*-իայի շարժման, ուր հողը ինձ աւելի յարմար է թւում եւ դրա վրայ մենք կարող ենք համերաշխութեան քայլ անել վրացիների հետ. ապագան դրան [է] եւ լաւ կը լինէր եթէ Ընդհ. Ժողովը իր սանկցիան տար։*

*
* *

Որովհետեւ Ժ[ողով]ը չի կարող ներկայ պայմաններում զբաղուել այդ հարցերով, ուստի աւելի [լաւ] է ընտրել յանձնաժողով, որը պատրաստի մի հիմնական ծրագիր մեր գործունէութեան. մասնաժողովին էլ կարելի է յանձնել Ռուսաստանում բռնելիք մեր դիրքի որոշումը. հետեւելով զանազան վայրերում զանազան կերպով արտայայտուող շարժումներին, չափելով մեր հակառակորդների ուժը՝ համաժողովը կարող է ապագայ[ում] մշակել եւ ժողովին ներկայացնի մեր գործնական ծրագիրը. այնպէս որ այժմ ծրագրին հիմնական կէտերին չի դպչելով՝ թէ Ռ[ուսաստանի] եւ թէ Տաճկաստանի մասին ծրագրել մի քանի գործնական քայլեր։ Գալով մասնաւորապէս Ռ[ուսաստան]ի, անպատճառ հարց է ծագում միւս տարրերի հետ համերաշխ գործակցութեան հարցը։

*
* *

Մարդկանց պակասութիւնն է ամենամեծ չարիքը. սրա վրայ ծանրանալ։

1.- *Պատասխանատու մարմինը ուժեղացնել. նա միշտ ձայն ունի. հետեւապէս դա ..... միշտ կարող է նա իր երկու եւ աւելի անդամները ղրկել։*

2.- *Ազատ մարդ.- ընտրութ[եան] գերադասութիւն տալ Երկիր եղած, գործնական մարդկանց։*

3.- *Ընտրութեան ձեւի եւ եղանակի մասին. ժամանակ եւ իրաւասութիւն - միւս մարմինների վատ եղած* [?] *ժամանակ։*

4.- *Ամէնից շատ ինձ հետաքրքրում է թէ ինչ որոշում պիտի տաք տաքտիքայի մասին։ Ճիշտն ասած մեր հիմակուան ծրագիրը պէտք է փոխւի, ոչ թէ միայն այն պատճառով որ սկսում է Ռ[ուսաստանը] տեղ բռնել մեր գործունէութեան մէջ, այլ եւ այն որ դրութիւնը, Տաճկաստանում մեր ու մեր դրացի[ների] յարաբերութիւն[ները]ը սկսել են փոխուել։*

270

Փաստ. 14-3

Ռոստոմի ձեռագիր

Մարտ 1904

Որքան աշխատում եմ յիշել Կ. Մարտիրոսեանի խնդրի(1) *մանրամասնութիւնները, չեմ կարողանում։ Ուստի գրել պատմութիւնը, առանց ձեռքիս ունենալու հարկաւոր գրաւոր վկայութիւնները, անհնարին է։ Կը շեշտեմ միայն մի քանի կարեւոր կէտեր, որ չմոռանաք մտցնել ինքներդ։*

1) *Մթերքը գնուած է եղել* 95 *թ. սկզբին Վիշապի*(2) *յանձնարարութեամբ, իր ծախքով եւ իր պէտքերի համար, բայց ծրագիրը փոխուելով՝ չի փոխադրուում։ Յանձնուած է եղել սկիզբները մի վաճառականի, որից Սեպուհը*(3) *առնում է եւ յանձնում Կ. Մարտիրոսեանին։ Սա սկսում է վաճառել ապրանքը մաս-մաս Գաբրովացուն իր փախստից բաւական առաջ։ Միաժամանակ պահանջներ է դրել վերցնել ապրանքը, առարկելով թէ պահելու դիւրութիւններ չունի եւ այլն։ Այս քայլը արել է* 1) *փող կորզելու դիտաւորութեամբ* . 2) *որպէսզի ապագայում յանցանքը ուրիշների վրայ ձգի. պէտք է շեշտել այն հանգամանքը, որ երբ Քանարեանը ուրիշ տեղ է պատրաստում եւ վստահելի մարդիկ է ուղարկում՝ ապրանքը տեղափոխելու, Մարտիրոսեանը խոյս է տալիս յանձնելուց զանազան պատրւակներով. յանձնում է միայն իւղը*(4) *որ ծախել չէր կարող։ Փախստեան ժամին նրա մօտ մնացած է եղել միայն մի քանի սնտուկ (Տ*[*ես*] *արձանագր.)։ Իր մասնաւոր գործերի ձախորդութիւնը պատրւակ է եղել ապահով փախչելու։ Իր ցուցմունքներից յետոյ գրել է մի նամակ, ուր խոստովանում է վերջ ի վերջոյ իր յանցանքը։*

Մեր գործն էր 1) *ազատել անյայտացած* 5-6 *սնտուկը, որ մնացել էր փախստից յետոյ* 2) *յետ գնել ծախւածները Գաբրովացուց նոյն գնով ինչ ինքն է եղել վճարած, կամ յետ ստանալ դրամով տարբերութիւնը։ Երկուսն էլ յաջողւեց։ Սնտուկները առինք, իսկ Գաբ. տւեց մեզ* 30 *հատ առանց դրամի (մանրամաս*[*նութիւնները*] *գործի մէջ)* 3) *գտնել գլխաւոր յանցաւորի մեղսակիցներին, որի համար դիմում եղաւ գրեթէ բոլորին, ով այդ խնդրով հետաքրքրւում էր եւ որեւէ բան գիտէր։*

Գործը ամբողջովին յանձնւած է Վիշապին, որ քննելով կայացրել է իր վճիռները։

Կ. Մարտիրոսեանինը յայտնի է։ Միւս բոլոր ամբաստանեալներից կարեւոր է Առ. Արթ.ի խնդիրը։ Թէ իր կեցւածքից, թէ միւսների եւ թէ մանաւ[*անդ*] *Կ. Մարտիրոսեանի, ծախելու գործի մէջ ոչ մի մասնակցութիւն չի ունեցել։ Մեղաւոր է նրանում, որ իմանալով հանդերձ, թէ Մարտիրոսեանի մօտ մեր ապրանքից կայ եւ թէ այդ ապրանքին վտանգ է սպառնում, նպաստել է նրա փախստեան, որով չափազանց դժւարացրել է քննութեան գործը եւ նիւթական վնաս է պատճառել մեզ, իսկ բուն զեղծման գործին ոչ մի մասնակցութիւն չի ունեցել։*

Մաքսուտ Պալիկեանը մեռել է Եգիպտոսում։

Զպէտք է մոռանալ շեշտել, որ քննութիւնը ամէն տեղ կատարւել է հրապարակօրէն եւ դիմում եղել է բոլորին, ով մի բան գիտենալու կամ հաղորդելու ըիզք է ցոյց տւել։

Բայց աւելի լաւ է, եթէ կարելի է, յետաձգէք մի առժամանակ։

1.- Ռոստոմ Պուլկարիա գտնուած տարիներուն (1898-1902) զբաղած էր կուսակցական զէնքերու գողութեան հարցով, որուն գլխաւոր մեղադրեալն էր Կարապետ Մարտիրոսեանը:
2.- Վիշապը Պոլիսն է:
3.- Սեպուհ՝ ծածկանուններէն մէկն է Պանք Օթոմանի գրաւման ղեկավարներէն Հայկ Թիրիաքեանի:
4.- Իւղը՝ ուժանակն է, պայթուցիկ նիւթ:

271

Փաստ. 14-6

Ռոստոմի ձեռագիր

Ռոստոմի ձեռագրով, բայց Ս. Գր. ստորագրութեամբ (Գրիգորեան՝ Ռոստոմի անցագրային մէկ ծածկանունն էր) համառօտ գրութիւն ուղղուած «Բարեկամ»ի, որ պարզապէս «Դրօշակ»ի խմբագրութիւնն է: Ակնարկուած «խնդիրք»ը կը վերաբերի անցագիր ճարելու հարցին, որու մասին աւելի լայնօրէն կը խօսի յաջորդ՝ թիւ14-17 փաստաթուղթին մէջ:

Սիրելի Բարեկամ,

Քանի մը օր առաջ կարեւոր նամակ մը գրեցի։ Կը զարմանամ, որ ցարդ պատասխան չկայ։

Շատ երկմիտ եմ. կը խնդրեմ շուտափոյթ երկտողով մը յայտնես, ստացած ես արդեօք նամակս եւ պիտի կատարես արդեօք պաշտօնիս վերաբերեալ քեզի ուղղած խնդիրքս։

Յարգանքներս ձեր ընտանեաց
Ս. Գր.

24 / III / 1904

272

Փաստ 14-17

Քրիստափոր Միքայէլեանի ձեռագիր

Սիրելի՛ք,

Նախընթաց գրածներս ստացած կը լինէք. իմ գալու մասին էի ուզում հարցնել։ Հիմա ընտանեկան գործերս կարգադրւած կարելի է համարել։ Եթէ այդտեղ հարկաւոր է շուտով մարդ, կ՚աշխատեմ շուտով անցնել։ Թէ ոչ, թէ ոչ ալ կարելի է, կը գերադասէի մի փոքրիկ պտոյտ անել եւ մի քանի քաղաքներով(1) *անցնել։ Անցագիր գուցէ կարողանամ ձեռք բերել դիւրութեան համար։ Ասէք փեսիս*(2)*, որ իրենց ֆերմայի համար հրապուրիչ պաշտօն առաջարկէ. օրինակ ես կարող եմ պէտք գալ իբրեւ արեւելեան լեզուների ծանօթ, իբրեւ Ռուսաստանի, Պարսկաստանի, Եգիպտոսի իրենց գործակատարների համար որպէսզի կարողանամ իրենց նամակները կարդալ-գրել։ Թող Աւետը*(3) *մի նամակ գրի ինձ իրենց ֆերմայի բլանկի վրայ առաջարկելով լաւ ռոճիկ եւ այլ հրապուրիչ պայմաններ։ Նամակ գրի ուղղակի իմ անունով* Poste restante(4)*։ Մի երկու տող էլ ես կը գրեմ իրեն։ Մարտիրոսեանի մասին որքան քիչ գրէք՝ այնքան լաւ. իսկ արձանագրութիւններից կարելի է տպագրել միայն իրենը։ Նամակ գրեցէք հետեւեալ հասցէով՝*

Mr. M. Bosdréian

Յանձնել Պետրոսեանին։

Ռոստոմի նամակ 14/ IV *Օդեսա*, 904

1.- Այդ քաղաքներէն մէկը եղած է այժմու Մոլտաւայի մայրաքաղաք Քիշնեւը, ուր իրեն հետ տեսնուած է Ս. Զաւարեանը:

2.- «Ասէք փեսիս» – Ռոստոմ փեսայ չունէր: Հետեւող տողերուն իմաստը այն էր, որ կարեւոր հաստատութեան մը մէջ կարեւոր պաշտօն խոստացող առաջարկ մը ներկայացուի, որպէսզի իբրեւ փաստաթուղթ գործածելով անցագիր մը ձեռք ձգէ:

3.- Խօսքը կը վերաբերի հաւանաբար Աւ. Ահարոնեանին:

4.- Ֆրանսերէն՝ նամակատուն պահ դրուած իմաստով:

273

Փաստ. 14-20

Խ. Մալումեանի (Ակնունի) ձեռագիր
«ստ[ացած] մայիսի 20» մակագրութեամբ:

Ռոստոմի նամակը

Սիրելիք,

Ստացայ Էլլէնի(1) *նամակը. թէ Աստուած սիրէք թողէք այդ հին թանաքը։ Բոլորովին բացված է տեղ հասնում։ Աւելի լաւ է իմի նման չկարդացվի բոլորովին, քան թէ ձեզի նման չբացված՝ կարդացվի։*

Նամակներից մէկում նշանակել էի այն կէտերը, որ պէտք է դնել Կարապետ Մարտիրոսեանի դատավճռի մէջ. աւելի լաւ է, թողէք մինչեւ իմ գալը. համ էլ չը թողեն գամ. սպասում եմ անցագրիս. ստացայ թէ չէ ճանապարհ կ՚ընկնեմ։

Ինչու մի քանի տող չէիք աւելացրել գործի դրութեան մասին։ Յոյս կա՞յ, որեւէ միջամտութեան։

* * *

Հաւանական է, իմ դուրս գալը բաւական ուշանայ։ Սեփականով չէ յայտնվում(2)*. ուրիշինով կ՚անցնեմ. հրէական անցագիրներ կարելի է գնել ուզածիդ չափ. մէկը փորձի համար պատուիրել ենք, 55 ռուբլով. եթէ յանձնի, ուրիշն էլ կը պատուիրենք. միայն մանկաբարձուհու դիպլոմ դժուար է գտնել, պէտք է մօտ ծանօթ գտնել եւ ...*

Համբոյրներով

1.- Էլլէնը Քր. Միքայէլեանի ծածկանուններէն մէկն է:
2.- Ըսել կ՚ուզէ սեփական անցագրով:

274

Փաստ. 14-18

Սիրելիս,

Շատ շնորհակալ եմ քո ուղարկած չոկալատիդ համար. եկող լինի այստեղից, քեզ համար լաւ թէյ կ՚ուղարկեմ։

Ուրիշ. ինչպէ՞ս ես, լա՞ւ ես. համբոյրներս Միքայէլին(1) *եւ միւսներին։*

Մի երկու օրից յետոյ մի երկար նամակ կը գրեմ։

Քո Ռ.

14 / IV / 1904

1.- Վարանդեան Միքայէլին. ուրեմն գրութիւնը ուղղուած է Ժընեւ:

275

Փաստ. 14-19

Ռոստոմի ձեռագիր, ստացուած թուականի –10 յունիս – մակագրութեամբ:

Սիրելիս,

Եթէ ուզում ես ուղղակի գնալ, այն ժամանակ ի հարկէ քեզ ձեռնտու է սահմանագլխից տոմսակ վերցնել մինչեւ Թիֆլիզ։ Իսկ եթէ ուզում ես նաւով ճանապարհորդել, այն ժամանակ անցիր Ռումանիայով եւ այստեղով։ Ռումանական սահմանագլխից մինչեւ Օդեսա տոմսակը Ա. կարգի կ՚արժենայ մօտաւորապէս 3 *ռ. ոչ աւել։ Օդեսայից Բաթում կարելի է գնալ* 10-12 *ռուբլիով։*

Ահա քո ուզած տեղեկութիւնները։ Եթէ այստեղով անցնելու լինիս, հեռագրիր։

Քո Ռ.

22 / V / 1904

276

Փաստ. 14-21

Է. Ակնունիի ձեռագիր: Խիստ անընթեռնելի եւ
տեղ տեղ բաց ձգուած (կիտաւոր):

յունիս

Զգիտեմ ռուսական թերթերին Պրօ Արմենիա ուղարկւում են. ..... թարգմ[անաբար] քաղուածքներ է անում «Frank. Zeit.»*-ից։*

Լաւ կը լինէր, եթէ ուղարկէին։ ..... վերջին համարում առաջարկ կայ Հայաստանի ինքնավարութեան մասին։

Ինչպէս երեւում է, Սասունը վերջնականապէս մեր ձեռքից գնացած պէտք է համարել, երբ բոլոր հայերին կը քշեն եւ կը բնակեցնեն քրդեր։

....

Չի՞ կարելի նպաստ ուղարկել զոհերին?։

Իմ գալս այսօր-էգուց կ՚որոշւի։ Նահանգապետը ..... ինքը իր կողմից հարցուփորձ կ՚անէ ուր հարկն է. եւ եթէ արգելք չը կայ հիւպ[ատոս]ը կը տայ անցագիր։ Ռուսաց ներքին անցագիր բաշխում են։ Հեռագիր ստանաք թէ չէ, ... ուշացաւ ..... այո լաւ է. փող այստեղ պարտք կ՚անեմ կը գամ. յետոյ այդտեղից կը փոխադրեմ։

Կարմրաթշիկ[ից] եւ Անտոնից(1) *ոչ մի լուր։*

Անցագրերից մէկը վաղուց պատրաստ է։

1.- Կարմրաթշիկը Սաֆոն է (Մարգարեան Մարտիրոս), իսկ Անտոնը՝ Սիմոն Զաւարեան:

Հ.Յ.Դ. ԿԵԴՐ. ԱՐԽԻՒԻ «ՍԵՒԱԳՐՈՒԹԵԱՆՑ» ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ «ՊԱՏՃԷՆՆԵՐՈՒ» ՄԱՍԻՆ

«Ռոստոմի անտիպ նամակները» հատորի զգալի մէկ մասը յատկացուած է հեղինակի այն գրութիւններուն, որոնք ցարդ մնացած էին անյայտ՝ պատմաբաններու եւ ուսումնասիրողներու հասողութենէն դուրս, մինչդեռ անոնք յատուկ նշանակութիւն ներկայացնող փաստաթուղթեր են՝ մեր ազատագրական նորագոյն պայքարի պատմութեան մէկ բախտորոշ շրջանի շատ մը դէպքերու եւ դրուագներու պարզաբանման տեսակէտէն:

Առաջին առթիւ հարցը կը վերաբերի Պոսքընի Հ.Յ.Դ. կեդրոնական արխիւին մէջ պահպանուող երբեմն հաստկեկ այն տետրակներուն կամ մատեաններուն, որոնք կը կրեն «Սեւագրութիւններ» ընդհանուր պիտակը: Անոնց մէկ մասը, ճիշդ է, սահմանուած էր Ժընեւ հաստատուած Արեւմտեան բիւրոյի անդամներուն առօրեայ նոթագրութիւններուն, ուր կը նշուին, օրինակ, գումարելի ժողովներու օրակարգերը, հանդիպում-տեսակցութիւններ այլազան անձնաւորութիւններու հետ, կամ գրուելիք եւ ստացուած նամակներու հասցէատէրերը եւայլն: Այս բնոյթի *«Սեւագրութիւնները»* հեռու են անշուշտ ուսումնասիրողներու անմիջական հետաքրքրութիւնը շարժելէ: Սակայն եւ կան այնպիսիները, որոնք, ինչպէս ըսինք, պատմական ուշագրաւ կարեւորութիւն ունին: Վերջին այս կարգին կը պատկանին Սեւագրութեան այն տետրակները, ուր շարադրուած են Օսմ. Թուրքիոյ եւ ցարական Ռուսիոյ տարածքին գործող կուսակցական մարմիններուն կամ ղեկավար ընկերներուն յղելի նամակները: Բռնատիրական այս պետութիւններէն ներս կը գործէր խիստ գրաքննութիւն, զոր շրջանցելու համար՝ գաղտնապահական նկատումներով՝ անհրաժեշտ էր դիմել ծածկագրութեան այլազան միջոցներու: Ասոնցմէ մէկը անգոյն մելանի գործածութիւնն էր:– Պանդխտութեան մեկնած ամուսնոյն, կամ արտասահման ուսանող զաւկին, եւ կամ գործի, կեանքի սղութեան մասին տեղեկութիւններ հաղորդող անմեղ բնոյթի գրուածքի մը բաց տարածութիւններուն, յաճախ նաեւ տողամէջերուն, գաղտնի թանաքով կը շարադրուէր բուն նամակը. ստացողը պէտք է «բանար» կանխաւ պայմանաւորուած քիմիական յատուկ լուծոյթի մը օգնութեամբ: Սեւագրութեան տոմարները կը պարունակեն այս բնոյթի հազարաւոր նամակներ: Այսպէս՝ Քրիստ. Միքայէլեանի, Ս. Զաւարեանի, Ռոստոմի, Միք. Վարանդեանի, Ակնունիի եւ այլոց ձեռագրով շարադրուած անհամար գրութիւնները պէտք է արտագրուէին գաղտնի մելանով եւ, ճամբորդներու կամ ուղղակի նամակատան միջոցով, ուղարկուէին իրենց հասցէատէրերուն: Եւ որովհետեւ Բիւրոները այս մասին շատ յստակ ու կտրուկ ցուցմունք ունէին,– «*Կարդալէ ետք փճացնել*», հետեւաբար հազարաւոր այդ փաստաթուղթերը անհետ կորած պիտի համարէինք, եթէ Ժընեւի Հ.Յ.Դ. կեդրոնական պահոցներուն մէջ (այժմ Պոսքընն) պահպանուած չըլլային անոնց բնագիրը կազմող սեւագրութիւնները*:

---

*) Հարկ է արձանագրել, որ Հ.Յ.Դ. Բիւրոներու վերոյիշեալ հրահանգը տառացիօրէն գործադրուած է: Տարիներու ընթացքին մեր կատարած պրպտումներէն ի յայտ կու գայ, որ իրենց վերջնական տեսքով (արտագրուած) այդ նամակներէն հետք չէ մնացած մեր արխիւներուն մէջ: Բացառութիւն պէտք է համարել անոնցմէ միայն մէկը,– 1905 թ. Արեւմտեան բիւրոյի կողմէ Ժընեւէն գաղտնի

*
* *

Ռոստոմի ձեռագրով շարադրուած եւ գաղտնի մելանով արտագրելի նամակները կը գտնուին հետեւեալ թղթածրարներուն մէջ.–

1.– No 89ա թղթածրար, թիւ 1 տետր: Մակագրուած է «Արեւմ. բիւրօ, գաղտնի թանաքով գրուած նամակների սեւագրութիւններ, Մայիս 1904 թ.»: Տետրը կը սկսի Քրիստ. Միքայէլեանի գրչին պատկանող երկու նամակներով, ուղղուած Մուշ՝ Ասքանազեան կոմիտէին, եւ Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին: 172 էջերէ բաղկացած այս տետրին մէջ թէեւ կը գտնուին այլ ձեռագրերով քանի մը նամակներ, սակայն ամբողջութիւնը կարծէք վերապահուած եղած է Ռոստոմին, որուն ձեռքով գրուած են մնացեալ 67 գրութիւնները: Անոնցմէ վերջինը կը կրէ 7 Յունուար 1905 թուականը:

Ռոստոմի այս նամակներուն մէկ կարեւոր մասը ուղղուած է Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին եւ կը շօշափէ գլխաւորաբար 1904 թ. Սասնոյ ապստամբութեան առնչուող խնդիրներ: Քիչ չեն նաեւ կուսակցական տարբեր մարմիններուն սահմանուած գրութիւնները (Վան, Կարս, Պաքու, Պաթում, Կիլիկիա), որոնք կ՚արծարծեն, բացի կազմակերպչականէն, նաեւ քաղաքական խնդիրներ, Սուլթան Համիտի մահափորձէն սկսեալ մինչեւ զինական եւ դրամական առաքումներու կապուած հարցեր:

2.– No 89ա թղթածրար, թիւ 2 տետր: Էջերը թուագրուած չէին. թիւ 1 տետրի շարունակութիւնը համարելով՝ մեր կողմէ էջերը համարակալուած են 173-286:

Այս տետրին ալ զգալի բաժինը կազմուած է Ռոստոմի նամակներով (միշտ «սեւագրութիւն» ձեւին տակ՝ արտագրելի գաղտնի մելանով), ուղղուած մեծ մասով Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին, ապա նաեւ Պաթում (Նաւահանգիստ) եւ Պաքու (Ոսկեանապատ): Նամակները թուագրուած են 1905 թ. Յունուարէն մինչեւ 6 Սեպտեմբեր: Այս թուականէն քանի մը օր ետք Ռոստոմ ճամբայ պիտի ելլէր արդէն դէպի Կովկաս: Արդարեւ, հայ-թաթարական ընդհարումները բուռն թափ ստացած ըլլալով Անդրկովկասի տարածքին, արտասահման գտնուող պատասխանատու շատ մը ընկերներ, Ռոստոմէն սկսեալ մինչեւ Յոնան Դաւթեան, Խանասորի Վարդան, Ս. Զաւարեան, Միք. Վարանդեան եւ ուրիշներ պիտի փութային Կովկաս, տեղւոյն վրայ ղեկավարելու համար թաթար խուժանին դէմ հայութեան մղած պայքարը:**

թանաքով Վան ուղարկուած Ակնունիի մէկ գրութիւնը, որ բաւական յաջողութեամբ «բացուած» ու արտագրուած է Արամ Մանուկեանի կողմէ:

Այլապէս շահեկան է Քրիստափոր Միքայէլեանի 1901 թ. Հոկտ. 9-ին յղած ընդարձակ մէկ նամակը Սղերդ քաղաքի կուս. պատասխանատու ընկերոջ, որուն մէջ մանրամասն բացատրութիւններ կու տայ գաղտնի մելանի գործածութեան եւ այդ միջոցով գրուած նամակները բանալու քիմիական դեղերու բաղադրութեան մասին: Ապա թուանշային (շիֆրէ) յատուկ աղիւսակ մը տրամադրելով կը թելադրէ խիստ գաղտնի անձնանուններն ու տեղանունները այդ ծածկագրով ներկայացնել: Վերջապէս խիստ պատուէր.– կարդալէ ետք «թղթերը ոչնչացնելիս պէտք է այրել եւ ոչ թէ պատռել»: Տես «Քրիստափոր Միքայէլեանի անտիպ նամակները», «Վէմ» մատենաշար թիւ 1, Երեւան 2020, էջ 170-177:

**) No 89ա թղթածրարի թիւ 2 տետրին մէջ գտնուող եւ Ռոստոմի գրչին պատկանող 23 նամակներ, որոնք 1905 թուականը կը կրեն եւ կը վերաբերին նոյն տարուան Փետրուարին սկսած հայ-թաթարական ընդհարումներուն, առաջին անգամ լոյս ընծայած ենք Երեւանի «Վէմ» հանդէսի 2009 թ. թիւ 2-ին (27) մէջ (էջ 127-141):

3.– Թղթածրար 48, թիւ 3 տետր: Մակագրուած «Թուրքիա, նամակների սեւագրութիւն, 1905»: Այս տետրը եւս (համարակալուած մեր կողմէ էջ 1-99) բաղկացած է առաւելաբար Ռոստոմի նամակներէն: Ինչպէս ցոյց կու տայ պիտակին «Թուրքիա» արձանագրութիւնը, նամակները ուղղուած են Օսմ. կայսրութեան տարբեր քաղաքներու կուս. մարմիններուն.– Պոլիս (Վիշապ), Պէյրութ (Ծոց), Իզմիր (Ոսկեհանք), Վան (Շամ), Մուշ, եւ կը շօշափեն այլազան նիւթեր:

Նկատի ունենալով որ Սեւագրութիւններու 89ա-1, 89ա-2 եւ 48-3 տետրերը կը վերաբերին 1904-1905 տարիներու անցուդարձերուն, անոնց բովանդակութիւնը կը ներկայացնենք ամբողջութեամբ եւ այն շարքով՝ որ կը գտնուին անոնք վերոյիշեալ թղթածրարներուն մէջ: Ժամանակագրական կարգը յարգելու նկատումով, մէջընդմէջ ներառած ենք նաեւ առանձին համարակալում ունեցող նամակներ:

4.– Թղթածրար 52, թիւ 3 տետրին մէջ եւս կը գտնուին Ռոստոմի գրչին պատկանող եւ դարձեալ գաղտնի թանաքով արտագրելի երկու համեմատաբար երկար նամակներ, ուղղուած Վանի ընկերներուն: 1907 տարուան գրութիւններ են, հետեւաբար կը զետեղուին իրենց թուականի կարգով:

*

* *

1904 եւ 1905 տարիներու վերաբերող երկրորդ մեծ խմբաքանակը կազմուած է *«Պատճէնների մատեան»* պիտակը կրող ծաւալուն երկու հատորներէն, որոնց մասին խօսք եղաւ Ռոստոմի անտիպներու այս գրքին առաջին բացատրութեան մէջ: Անոնք կը կրեն 88 եւ 89 համարները, որոնցմէ առաջինը կը սկսի 1 Դեկտ. 1904 թ.ին եւ վերջանայ 1905 թ. Յունիսի նամակով: Երկրորդը (թիւ 89) կը սկսի 6 Դեկտ. 1905 թ. եւ կը վերջանայ 1906 թ. 1 Հոկտ.ի գրութիւններով: Երկու մատեանները ժամանակագրական կարգով կը կազմեն մէկզմէկու շարունակութիւնը: Արեւմտեան բիւրոյի այս նամակները ուղղուած են առհասարակ արտասահմանեան մարմիններու, այսինքն ցարական եւ օսմանեան կայսրութիւններէն դուրս գտնուող երկիրներուն (Պարսկաստան, Արեւմտեան Եւրոպա, Ամերիկա, Եգիպտոս, Պալքաններ): Պէտք է նշել, որ խիստ բարակ թերթերէ կազմուած էջերու վրայ դրոշմուած պատճէնները միշտ չէ որ դիւրընթեռնելի են, յատկապէս էջատակի եւ լուսանցքային գրութիւնները: Այս պարագան նշած ենք ծանօթագրութեամբ եւ բազմակէտերով:

*

* *

Այլապէս, բացի այս կամ այն պատճառով Հրաչ Տասնապետեանի խմբագրած Ռոստոմի Նամականիէն դուրս մնացած նորայայտ նամակներէն, հատորի վերջին բաժնին մէջ իբրեւ յաւելուած ներառնուած են 1917 թ. Ստոկհոլմի ընկերվար Միջազգայնականի օրերուն Ռոստոմի գրչին պատկանող եւ հայկական հարցին լուծման միտող տեղեկագրական գրութիւններ եւ նամակներ, շարադրուած ֆրանսերէն լեզուով, մեր կողմէ կատարուած հայերէն թարգմանութեամբ մէկտեղ:

Ե. Փ.






№ 88
1904 и
1905


№ 89
1905 – 1906
№ 89
1905–1906

277

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 10-11

Մայիս 15 [1904]

ՄՈՒՇ(1)

Շրջաբերականը անընդհատ ստացւում է. դա նշանակում է, որ ուղարկուածները հիմա չեն բռնւում։

Հաշւեպահութեան մասին

Աւետիքը(2) *ե՞րբ է գալու։ Շատ ցանկալի է իրենից ունենալ տեղեկութիւն, թող շտապի գրել։*

Մեզ հասնում են այլեւայլ լուրեր զէնքերի, փամփուշտների կորուստների մասին։ Գրեցէք, թէ որքան է եղել գնուած, որքանը բռնուած։ Ասում են նոյնպէս, որ մեծ մասը անպէտք է դուրս եկել, ճի՞շտ է արդեօք։ Էդ էլ ձեզ անկախ, յատուկ մարմին զէնքեր գնելու համար(3)։

Էրզրումից հեռագիր կայ, որ սահմանը անցկացած մի խումբ, 42 *հոգի, ընդհարում է ունեցել*. 25-*ը կամ* 30-*ը սպանւել են*, 5 *գերի բռնւել. միւսները ազատւել են։ Մի ուրիշ խմբի ընդհարման ժամանակ Սասունի մօտակայքում գերի է բռնւած ռուսաց զօրքի մի սպայ։ Թումոն*(4) *չլինի՞։*

Ինչ լուր ունիք Պարսկաստանից։

Երբ խումբը անցնում է, ժամանակին տեղեկացրէք մեզ, որպէսզի թերթերում երեւցած հեռագիրները հանելուկ չմնան։

1.- Գրութեան հասցէն չէ ճշդուած։ Բովանդակութենէն դատելով պէտք է ուղղուած ըլլայ Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին։

2.- Արդեօ՞ք Սահակեանը (Հայր Աբրահամ)։

3.- Ակնարկութիւնը կ՝երթայ Զիֆոնին (զինուորական ֆոնդ),– Անդրկովկասի մէջ ստեղծուած յատուկ մարմին՝ զէնք-զինամթերքի մատակարարման համար։

4.- Արդարեւ Թումեանց Թումանն էր, այլապէս ծանօթ Թորգոմ ծածկանունով, որ «Որսկան» խումբի գլուխը անցած ճամբայ ելած էր Սասնոյ ապստամբներուն օգնութեան հասնելու համար։ Օլթիի շրջանէն հազիւ թրքական սահմանը անցած, 1904 թ. Յունիս 30-ին խումբը ռուս եւ թուրք սահմանապահ զօրքերու միացեալ յարձակման ենթարկուեցաւ։ Թուման Թումեանց եւ իր ընկերները նահատակուեցան՝ զոհ դառնալով ռուս սահմանապահներու դաւադրութեան։ Նախքան իր մահը, Թումեանց Թուման «Մրրիկ» ձիաւոր խումբի գլուխը անցած յաջողած էր Սասուն հասցնել կարեւոր քանակութեամբ զինամթերք։

278

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 11

ԲԱԳՈՒ

1) *Արտաբիլի, Ռեշտի վրայով, Աստարա ուղարկւած են եւ ուղարկւելու են ահագին քանակութեամբ թերթեր, գրքոյկներ, կլիշէներ, հայերէն եւ ռուսերէն։ Անհրաժեշտ է, որ շաբաթը մի մարդ գնայ բերի։ Պէտք է լաւ կազմակերպել, որ չամբարւեն։*

2) 4-5-6 *համարում մանրամասնութիւններ գործի մասին*(1)։ *Ընդհանրապէս լաւ է։*

Յետ եկած վիճակախաղի տոմսակների համարները ուղարկւած են(2)։

Ձեր ուղարկած թղթակցութիւնները Պետրովսկից եւ ուրիշ տեղերից տպւած են Daily News-*ի մէջ։ Պրեսանսէի հեռագիրը ստացւած է։ Ձափազանցութիւններից խոյս տուէք։*

Ամէն անգամ մենք կը յայտնենք, թէ որքան եւ ուր ենք ուղարկում. դուք էլ յայտնեցէք ստացածների թիւը։

Շուտ շուտ տեղեկութիւններ։

Օդեսա նամակ գրէք զգոյշ կերպով, վաճառականի նամակի ձեւով։

Գրւած 30 *յունիս* [1904](3)

1.- Կը վերաբերի «Դրօշակ»ի յիշուած համարներուն մէջ տրուած լուրերուն:
2.- Բնագրին մէջ տրուած է հասցէն՝ ռուսատառ:
3.- Ռոստոմի ձեռագրով եւ սեւ հաստ մատիտով աւելցուած:

279

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 12

ՋՐԱԲԵՐԴ(1)

Տեղեկութիւններ դրութեան մասին(2)

Ստացւել ե՞ն առաքումները – «Դրօշակի» հաւաքածու – զանազան բրոշիւրներ եւայլն, որ ուղարկել էինք Վրէժստանով(3) *սրանից մօտ 3 ամիս առաջ*(4):

1.- Ջրաբերդ ծածկանունն է Կարսի, որուն ուղղուած պիտի ըլլար գրութիւնը:
2.- Այս տողը կը նշանակէ, որ գաղտնի թանաքով արտագրութեան ատեն հարկ է տեղեկութիւններ հաղորդել դրութեան մասին:
3.- Վրէժստանը կամ Վրէժը Ատրպատականն է:
4.- Վերջին պարբերութիւնը (շեղագիր) Միք. Վարանդեանի ձեռագրով է:

280

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, 89ա-1, *էջ* 12

Գրուած 2-ին յուլ. [1904]

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ(1)

Յուլիս 6-*ին* (*ըստ եւր*[*ոպականին*])(2) *ուղարկւելու են թերթեր եւ գրքոյկներ։ Նշանախօսը՝* Elba No 05։ *Խնդրւում է ժամանակին գալ եւ զգուշութեամբ դուրս տանել։*

«Դրօշակ»ը ինչպէ՞ս է բաշխւում.– որքա՞ն է մնում ձեր շրջանում, որքա՞ն էք ղրկում Մ[եծ] Ք[աղաք](3) եւ ուրիշ տեղեր: Ծրարները եւ մեր նամակը ստանալուց՝ խնդրում ենք միշտ տեղեկացնել մեզ, որպէսզի ըստ այնմ կարգադրենք առաքումները մեր միւս գծով (Վրէժ):

1.- Պաթում (Նաւահանգիստ) ուղարկուած այս նամակին առաջին պարբերութիւնը կը պատկանի Ռոստոմի գրչին, շարունակութիւնը՝ Միք. Վարանդեանի:
2.- Այսինքն նոր տոմարով:
3.- Մեծ Քաղաքը Թիֆլիսն է:

281

Պատճէններու մատեան No 88, *էջ* 167

1904 2 *յուլիսի*

Սուլինայի «Դանուբ» կոմիտէին

Ընկերներ,

Գրքոյկներ կ՚ուղարկւեն երկու օրից յետոյ, իսկ մեծադիր պատկերները առայժմ պատրաստ չունինք։ Դիմեցէք Պալք. կենտր. կոմիտէին, գուցէ նրանց մօտ մնացած լինի։ Պատւիրելու ենք նորից։

Ձեր հաշիւները ուղարկեցէք միշտ կենտր. կոմիտէին։ Նւիրատուութիւնների ցանկը եւս նրա միջոցով մեզ հասցրէք, որպէսզի խառնաշփոթութիւն տեղի չունենայ։ Ներփակ վերադարձնում ենք ձեր ուղարկած ցանկը։

Օդեսայի ձեր ընկերներին չմոռանաք մէկ երկու համար «Դրօշակ» ուղարկել պահարանով։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

282

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 13

Գրուած յուլ. 3, 1904

ԱՐԵՒԵԼ. ԲԻՒՐՕ(1)

Զանազան խմբեր հայ գաղութներից դիմումներ են անում։ Լաւ է բոլոր վայրերին մասնակից անել, առաջարկելով ամէն տեղից 2-3 հոգի ընկերներ պատրաստել եւ ուղարկել։ Նոր հասցէներ ուղարկէք թէ այդտեղից եւ թէ ուրիշ տեղերից։ Հեռագիրներ չուղարկել Թաւրիզից։ Տեղեկութիւնները կը գրենք միայն Արեւել. բիւրոյին, որը թող շրջաբերականներով հաղորդի կոմիտէներին։

* * *

Ասխաբադի կոմիտէին գրել, թէ Բագւից իրենց ստանալիք 10 օրինակ «Կովկասեան վէրքերը»(2) ղրկեն քահանայ Բէգ Գիւլեանին, Սամարղանդ:

Գրել եւ մի քանի տեղեկութիւններ դրութեան մասին:

* * *

Խնդրում է ձեր տպագրելիք թռուցիկները եւ այլ հրատարակութիւնները, նամանաւանդ զինուորական խմբերի, ներքին կազմակերպութեան (Տարօնի եւ այլ շրջանների), կանոնագրութիւնները (տպագրած թէ ձեռագիր) ուղարկէք մի քանի օրինակներով Ալեքսանդրիա (Եգիպտոս) Dr. Gar. Pachayan-ին(3), Կիլիկիայի շրջանի համար:

1.- Այս նամակը գրուած է երեք տարբեր ձեռագրերով: Առաջին պարբերութիւնը Ռոստոմին է. երկրորդը՝ Վարանդեանին, իսկ երրորդը՝ Սիմոն Զաւարեանին:

2.- «Դրօշակ»ի մատենաշարով հրատարակուած Է. Ակնունիի գիրք:

3.- Բժ. Կարապետ Փաշայեան (1864-1915), Դաշնակցութեան ներկայացուցիչ Եգիպտոսի մէջ, որու ճամբով հաղորդակցութիւն կը հաստատուէր Կիլիկիոյ հետ:

283

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 19-21

Գրուած յուլ. 11*ին*

ՄՈՒՇ

Ստացանք ձեր յունիս 8-*ի* (*թէ* 3-*ի*) *նամակը։*

Նախ եւ առաջ խնդրում ենք ամէն անգամ տեղեկութիւն տալ այդ վայրերում գտնուող բոլոր ընկերների մասին։ Անդրանիկի ողջ եւ առողջ լինելու լուրը մեզ շատ ուրախացրեց, սակայն դժբախտաբար Վահանի(1) *եւ միւսների մասին ոչինչ չէիք հաղորդել։ Ցանկալի են յատուկ տեղեկութիւններ՝*

1) *Հիւպատոսների ընթացքի մասին, մասնաւորապէս ռուսականի.*

2) *Ժողովրդի զանազան խաւերի տրամադրութեան մասին.*

3) *Զոհերի եւ աւերումների մասին։ Այստեղ ձեր ուշադրութեանն ենք յանձնում*

հետեւեալ հանգամանքի վրայ։ Յայտնի է, որ դէպքերի անմիջական ազդեցութեան տակ, ականատեսներն ընդհանրապէս չափազանցնում են եղելութիւնը։ Ձեր նամակներից երեւում է, որ դուք էլ աւելի մռայլ էք ներկայացնում աղէտները։ Դրանից խոյս տալու համար աւելի լաւ է փորձել դիմել վիճակագրական ձեւին, այնպէս, ինչպէս իր ժամանակին արին Սասունի վերաբերմամբ մեր հանգուցեալ ընկերներ՝ Թաթուլը ու Ապրոն(2)։

Ի՞նչ գաղտնիքներ կարող էին իմանալ բռնուած թղթերից. մեր մելանի գաղտնիքը յայտնա՞ծ է, թէ ոչ։

Ի՞նչ չափով գործադրուեցան Սուլթանի խոստումները՝ 1) *ընդհանուր ներում չնորհել* 2) *սասունցիներին իրենց տեղը դարձնել* 3) *աւերուած տները վերաշինել* 4) *նպաստ բաժանել։*

Ինչպէ՞ս են վարւում այն հայերի հետ, որոնց զէնքը ձեռքին են բռնում։ Որքա՞ն խիստ է զինուորական դատարանը։ Ի՞նչ օգնութիւն է լինում. ո՞ր տեղերից. ի՞նչ եղան մեր փոխադրած գումարները. դեռ ձեր ձեռքը չհասա՞ն։

Դրամական նպաստի համար կ՚աշխատինք աղբիւրներ գտնել. արդէն 5.000 fr[anc] *յանձնուած է Պրեսանսէի*(3) *միջոցով արտաքին գործոց նախարարին, որ նա ուղարկի Ֆր*[*անսական*] *հիւպատոսին կարօտեալներին բաժանելու համար* (*գաղտնի պահէք*)։ *Ինչպէս լսում ենք, Անգլիայում ժողովարարութիւն*(4) *է կատարւելու սասունցոց եւ մշեցոց օգտին։*

Լոնդոնում կայացած համաժողովը թէեւ հրապարակօրէն մի առանձին արդիւնք ցոյց չտւեց, բայց առիթ եղաւ զանազան երկիրների ներկայացուցիչների միջեւ մի ընդհանուր համաձայնութիւն մշակելու խնդիրը առաջ տանելու համար։ Թւում է, որ այս անգամ Անգլիան լուրջ քայլեր է մտադիր անելու։ Նախընթաց դառը դասերն են, որ արգելում են մեզ աւելի լաւատես լինել ապագայի վերաբերմամբ։ Մտադրութիւն կայ հիւպատոսների թիւը աւելացնել։ Խօսք կայ նոյնպէս Հայաստանում մտցնել եւրոպական սպաների ձեռքով տեղական ժանդարմերիա, այնպէս, ինչպէս անում են Մակեդոնիայում։ Իտալիայում տեղի ունեցան աղմկալից ժողովներ յօգուտ մեր դատին։ Եթէ Ռուսաստանը չարունակի պարտութիւններ կրել, գուցէ մեր հարցը աւելի համարձակօրէն դրուի։

Ձեր տուած տեղեկութիւնները կը հաղորդենք եւրոպական կարեւոր թերթերին, որոնք պատրաստ են մեր դատին աջակցելու։

Մասնաւորապէս խնդրում ենք հասցնել տեղի ունեցած բոլոր կռիւների, ընդհարումների, անհատական թէ խմբական ընդդիմադրութիւնների, անձնազոհութիւնների մանրամասը նկարագրութիւնները։ Հիւպատոսներին դադար մի տուէք, չարունակ նիւթեր մատակարարէք։

Ուղարկելով ձեզ մեր ջերմ ընկերական համբոյրները, խնդրում ենք չարունակական տեղեկութիւններ հաղորդել իրերի դրութեան մասին։

1.- Անդրանիկը հայդուկապետն է։ Վահանը (Մանուէլեան) Դաշնակցութեան լիազօր ներկայացուցիչը Սասնոյ 1904 թ. ապստամբութեան օրերուն։

2.- Աշոտ Թաթուլ՝ Արամեան Արամ, դաշնակցական հին մարտիկներէն, որ գործած է Կարս, Բասեն, Սասուն։ Ամբողջ երեք տարիներ Կարնոյ բանտը մնալէ ետք, կեանքին հրաժեշտ տուաւ թրքական կախաղանին վրայ «Կեցցէ յեղափոխութիւնը» գոչելով։ Ապրոն (Սահակեան Մկրտիչ) նոյնպէս հին ֆետայի, Թաթուլի ընկերներէն. զոհ գնաց Սասնոյ մէջ ձիւնամրրիկի։

3.- Ֆրանսիս տը Պրեսանսէ, ֆրանսական խորհրդարանի պատգամաւոր եւ Pro-Armenia-ի խմբագրութեան անդամ։

4.- Հանգանակութիւն։

284

Պատճէններու մատեան No 88, *էջ* 174

1904 *յուլ.* 12
No 15

Պ. Փայլակ Տէրունեանին, Խարթում

Յարգելի հայրենակից,

Ստացանք 30 *յուն*[*իս*] *թուակիր ձեր նամակը, ներփակ* 30 *անգլ. ոսկի չէքով, ինչպէս նաեւ հանգանակութեան ցանկը։*

Երկրի մէջ կուռող մեր ընկերների համար առաւել մխիթարական է տեսնել, որ Սուտանի խորքերում գտնուող արիւնակիցները անգամ չեն մոռանում իրենց օգնութիւնը հասցնելու։

Հանգանակութեան ցանկը լոյս կը տեսնի «Դրօշակի» մէջ առաջիկայ թուերից մէկում։

Յարգանօք՝ [*Արեւմտեան բիւրոյի կնիք*]

285

Պատճէններու մատեան No 88, *էջ* 175

1904 *յուլ.* 14
No 16

Քրիստափորին [*Միքայէլեան*], *Պարիզ*

Սիրելիս,

Գրիր տեսնենք, կարելի է արդեօք Դրօշակում տպագրել Դէլկասէի(1) *հաղորդածը Մայիսեան ծրագրի համար*(2), *եւ եթէ կարելի է, ինչ ձեւով։*

Վանի նամակից իմանում ենք, որ ֆրանսիական հիւպատոսը իրեն համար թարգման է վերցրել Միհրան Թարկուլեան անունով մէկին, որը եղել է Վարդգէսի(3) *մատնիչներից մէկը։ Ի՞նչ տեղեկութիւններ կարող է մատակարարել նա հիւպատոսին յօգուտ մեր դատին։ Յաւալին այն է, որ հիւպատոսը գիտենալով է այդ ընտրութիւնը արել։ Նամակը գրուած է մարտ 7-ին։*

Երկրից նպաստ են ուզում։ Չի՞ կարելի մի ժողովարարութիւն անել(4)։ *Ի՞նչ եղաւ Անգլիայում սկսուած փորձը։*

Համբոյրներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Թէոֆիլ Դելկասէ, Ֆրանսայի արտաքին գործոց նախարար:
2.- 1895 թ. Մայիս 11-ին Մեծ պետութիւններ՝ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ Կ. Պոլսոյ դեսպաններուն կողմէ Օսմանեան պետութեան ներկայացուած բարեռորոգումներու ծրագիր՝ հայաբնակ վեց նահանգներուն վերաբերող:
3.- Սերէնկիլեան Յովհաննէս, ծանօթ Գիսակ եւ Վարդգէս ծածկանուններով: Կը գտնուէր Վանի բանտին մէջ:
4.- Հանգանակութիւն կատարել:

286

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, էջ 14-15

Յուլ. 14-ին

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Հաշուի խառնելու մասին (Արեւմտ. բիւրոյից ստացուած 10.000 *ր[ուբլու] առթիւ)։*

Օդեսայի նուիրատու[ութեան] մասին յայտնել։ Կոնստանցայի դրամի մասին։

Ստացուեց «Թմբուկ» կոմիտէի(1) *հաշիւը, ուղարկուած Բագու բոլորովին բաց։ Ուշադրութիւն ! Ախալքալաք անունը պարզ գրուած։*

Էլլէնի(2) *գրելով՝ Բերարը եւ Լօրիսը*(3) *գոհ են Լոնդոնի միտինգից։ Տրամադրութիւնը աւելի վճռական է եղել։ Կազմուել են տեղական մասնաժողովներ գործը շարունակելու համար։ Ի միջի այլոց Դելկասէն*(4) *յայտնել է, որ մտադիր է Մայիսեան ծրագիրը առաջ քշել։*

Կտրօնները ստացո՞ւմ են արդեօք։

Կար[եւորութ]եամբ յանձնարարէք ուղարկի նոր լոյս տեսած գրքերից։ Մրգաստան յայտնէք, որ իրենց կնիքը Ոսկեհանքից(5) *ուզեն։*

Շուշուայ, Գանձակի, Երեւանի, Ալեքսանդրապոլի դատավարութեանց մանրամասնութիւնները եւ եթէ կարելի է,— մեղադրական գործերը։

Ստացանք յունիս 20 *նամակը։ Նամակագիրը մի քանի տողեր չոր գրչով է գրել*(6)*. գրելիս թող նայի, մի բան թղթի վրայ գծւում է թէ ոչ։*

Հեռագիրներ ուղարկէք անմիջապէս Պարիզ աւելի կարեւոր դէպքերում եւ ամէն անգամ մեզ հաղորդէք, թէ երբ եւ ինչ հասցէով է ուղարկւում։ Կայծակի կուլի մասին(7) *հեռագիրներ ուղարկեցինք մի քանի թերթերի. լոյս տեսան։ Նոյն տաքտիկան այն ժամանակ յաջողութիւն կ՝ունենայ, երբ արագ եւ յանկարծակի լինի, ժամանակ չտրւի թշնամուն իր զօրութիւնը աւելացնելու։ Երէկ հեռագիր կար, որ Վանայ վիլայէթում* 39 *հոգի հայեր Կովկասից անցած շրջապատւում են քրդերից եւ կոտորւում։ Ի՞նչ կարող է դա լինել։ Զգիտենք, թէ ինչ է տեղի ունեցել ձեր մէջ։ Բայց երեւում է, որ Դումանը*(8) *շատ դժգոհ է գնացել ձեզանից։ Լօրիսը ստացել է կոնդակը. օրիորդը*(9) *դեռ չի երեւացել։ Դժոխքի*(10) *կենսագրութիւնը ստացանք։ Խնդրում ենք ամէն տեսակ կենսագրական նիւթեր, ինչ ձեր ձեռը կ՝ընկնի, անմիջապէս ուղարկէք։ Զհասկացանք, թէ ինչու Աւետիսը*(11) *չի ուզում գալ. այդ տեղն չկարդացուեց։ Տեղի ունեցած ցոյցի մասին էլ չկարողացանք բոլոր խօսքերը կարդալ։ Օրիորդի մասին մանրամասը գրէք։ Նամակները մի ուշացրէք։*

1.- Թմբուկը կուս. ծածկանունն է Ախալքալաք քաղաքի եւ ընդհանրապէս Ջաւախքի:

2.- Էլլէնը Քրիստափոր Միքայէլեանի ծածկանուններէն մէկն է:

3.- Վիկտոր Բերար – ֆրանսացի քաղաքական գործիչ. բարեկամ եւ սերտ գործակից Դաշնակցութեան: Լորիսը՝ Յովհ. Լոռու-Մելիքեանն է, անդամ Արեւմտեան բիւրոյի եւ պատասխանատու հայ դատի աշխատանքներուն:

4.- Դելկասէ՝ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար:

5.- Մրգաստանը Երեւանն է, Ոսկեհանքը՝ Իզմիր. սակայն ըստ երեւոյթին վրիպակ է. հաւանաբար պիտի ըլլայ Ոսկանապատ, այսինքն Պաքու:

6.- «Չոր գրչով է գրել». գաղտնի թանաքով գրուածի մասին է երբ արտագրողները անուշադրութեամբ սպիտակ մելանը կը մոռնային նորոգել:

7.- Կայծակ (Վաղարշակ Պաղտասարեան), հերոսական ուրիշ տիպար մը, որ Սասունին օգնութեան հասնելու ճամբուն վրայ Դժոխք խումբով կռուի բռնուեցաւ թրքական զօրքի հետ եւ նահատակուեցաւ (1904 թ. Յունիս):

8.- Նիկոլ Դուման, որ նոյնպէս փորձած էր օգնութեան փութալ Սասունին, բայց 1904 թ. Յունիսին թուրք-պարսկական սահմանին վրայ կռուի բռնուելով ետ դարձած:

9.- Օրիորդը Ռուբինան է, Արէշեան, որուն կը սպասուէր Ցուցականի գործին համար (Սուլթանի մահափորձ):

10.- Հրայր Դժոխք (Արմենակ Ղազարեան), Սասնոյ 1904 թ. ապստամբութեան ղեկավարներէն, հերոսաբար նահատակուած Ապրիլի կռիւներուն:

11.- Ըստ երեւոյթին Ահարոնեանը:

287

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 16

Գրուած 14-*ին*

ԲԱԳՈՒ

Կարմիր խաչին յայտնել փող ուղարկել Տ[*իկին*] *Հրաչին*(1) *անմիջական հասցէ-ով.—* Madame Aznive Tyriakian, Poste restante russe, Samsoun (Mer Noire)։

1.- Տիկին Հրաչը՝ Պանք Օթթոմանի յայտնի հերոսներէն Հայկ Թիրեաքեանի (ծածկանունը Հրաչ) կինն էր: Հրաչ երկու տարիէ ի վեր կը գտնուէր բանտ, ուրկէ դուրս պիտի գար 1908-ին, Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն ետք:

288

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 16

Գրուած 14-*ին* (*յուլիսի*)

Մ[*ԵԾ*] *Ք*[*ԱՂԱՔ*]

Դրամի խնդիրը պէտք է թողնել դաշնակցական Խորհուրդին հայեցողութեան(1)։

Արեւելեան բիւրոյի եկամուտներից յատկացուած գումարները մաս մաս ուղարկել։ Բացի այդ, վերադարձնել այն 26,000 fr[anc] (*մօտաւորապէս*), *որ նախահաշուից աւել ուղարկուած է ձեզ։ Մանրամասը հաշիւը շուտով կը հաղորդենք։*

Կէս տարեայ հաշիւը (*յուլիսին*) *շտապեցրէք։*

1.- Կ՝ակնարկուի «Փոքորիկ»ի միջոցաւ հաւաքուած գումարներուն, որոնց գործածութեան եւ բաշխումին տնօրինումը վերապահուած էր Դաշնակցութեան Խորհուրդին: Այս վերջինը պիտի գումարուէր 1905 թ. սկիզբը: Յայտնենք որ Դաշնակցութեան Խորհուրդը կուսակցութեան վերին մարմինն էր, որ կը գումարուէր Ընդհ. ժողովներու միջեւ ինկող ժամանակաշրջանին: Ան բաղկացած կ՝ըլլար ներկայացուցիչներէն՝

ա) Արեւելեան եւ Արեւմտեան բիւրոներու,

բ) Պատասխանատու չորս Կեդր. կոմիտէներու (Կ. Պոլիս, Կիլիկիա, Տարօն-Սասուն եւ Վասպուրական),

գ) Ցուցական եւ Կովկասի ինքնապաշտպանութեան մարմիններու:

289

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 16

Գրուած 14-*ին*

Լեւոնի նամակին պատասխանել(1)

1) *Կնիք ուղարկուած է*, 2) *Օրիորդի համար սպասիր Էլլէնի հեռագրին Պարիզից*. 3) *Դրօշակը կ՝աւելացնենք, գրքեր էլ կ՝ուղարկենք։ Տոմսերի հաշիւը ուղարկուած է։ Արձանագրութիւնից կազմակերպութեան մասը կ՝ուղարկենք մինչեւ մի ամիս։ Նամակ ստանում ենք։ Տեղեկութիւն ինչո՞ւ չէք տալիս։ Սիրաքը*(2) (*Ռաչտից*) *պատրաստակամութիւն է յայտնում ամառս գործելու, ուր ուզէք գնալու։*

1.- Նամակը ուղղուած պէտք է ըլլայ կամ Արեւելեան բիւրոյին, կամ Պաքուի (Ոսկանապատ) Կեդր. կոմիտէին: Օրիորդը Ռուբինան է. Էլլէնը՝ Քրիստափորը: Լեւոնը, հաւանաբար Գիլլումեանն է, Ցուցական մարմնի անդամ:

2.- Սիրաքը հաւանաբար Գրիգորեան Սիրականն է (1878-1937):

290

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 17

[*Գրուած* 14-*ին*]

Մ[*ԵԾ*] *Ք*[*ԱՂԱՔ*]

Հաստատում ենք մեր .....(1) *նամակները։*

Անհամբեր սպասում ենք մանրամասնութիւնների փոխ-նահանգապետի սպանման մասին(2)։

Գրեցէք միմիայն տրուած հասցէներով առանց որեւէ խօսք մէջը աւելացնելու. աշխատեցէք գրել միշտ գաղտնի թանաքով։ Տեղեկութիւններ Դումանի մասին։ Ձեր կողմից ուղարկած երիտասարդին անցագիր տուինք եւ ճանապարհ ձգեցինք. միթէ՞ նրանից լուր չունէք(3)։ *Հարցրինք նրա մասին Բոլղարիա։ Վիեննայում բռնուածների մասին ոչինչ չգիտենք։ Կնիքներ ուղարկուած են Ոսկանապատ*(4), *մա-*

սամբ դա ձեր պահանջին գոհացում կը տայ. այդ ստանալուց յետոյ մէկ էլ գրեցէք, թէ որ տեղերի համար եւս հարկաւոր է։

1.- Թուականներու տեղը բաց ձգուած. արտագրողը պիտի ամբողջացնէր:
2.- Հարցը կը վերաբերի Գանձակի հայատեաց նահանգապետ զօրավար Անդրէեւի ահաբեկման:
3.- Բնագրին մէջ «չունենք», պարզապէս վրիպակ է:
4.- Ոսկանապատը Պաքուն է:

291

Պատճէններու մատեան No 88, *էջ* 178-179

1904 *յուլ.* 16

Պ. Լորիս Մէլիքեանին

Յարգելի ընկեր,

Ստացանք կաթողիկոսի գրութիւնները, որ այսօր եւեթ ուղարկում ենք ձեզ։

Սարաջեան եպիսկոպոսին ուղղած նամակի մէջ հարկաւ կը լինին կաթողիկոսի մանրամասն հրահանգները, այնուամենայնիւ աւելորդ չենք համարում հաղորդել Սիմոնի(1) *նամակից մի քանի կէտեր՝ ձեր մասնաժողովի առաքելութեան վերաբերեալ։*

1) *Խորհրդակցութեան համար պէտք է հրաւիրել մի երկու բանիմաց հայեր, մասնաւորապէս խօսք է եղել Մասէհեան Յովհաննէս խանի եւ Մելքոն խանի մասին։*

2) *Պատգամաւորութիւնը իր առաջին դիմումը պէտք է անի Պարիզ, յետոյ գնայ Լոնդոն, Վիէննա եւ վերջը Բերլին։*

3) *Լուբէին*(2) *դիմումից 7 օր առաջ պէտք է այդ մասին հեռագրով յայտնել կաթողիկոսին, որպէսզի էջմիածնից դրանից յետոյ Պետերբուրգ էլ գրուի։ Այդպիսով՝ Պարիզ եւ Պետերբուրգ միաժամանակ տեղի կ՚ունենան դիմումները։*

Կաթողիկոսին ուղարկուելիք հեռագրի պայմանը մեզ յայտնի չէ։ Հաւանական է, որ Սարաջեան եպիսկ[ի]. նամակի մէջ լինի։

Ընկերական բարեւներով
[*Արեւմտեան բիւրոյի կնիք*]

1.- Խօսքը կը վերաբերի Սիմոն Զաւարեանի:
2.- Էմիլ Լուբէ – Ֆրանսայի նախագահ:

292

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, էջ 23-24

Գրուած 19 յուլիսին

ԶՐԱԲԵՐԴ(1)

Մուշից մենք կանոնաւոր տեղեկութիւն ստանում ենք։ Փողի մասին գրեցինք [*Արեւելեան*] *բիւրոյին։ Յայտնեցէք Մուշ եւ միաժամանակ մեզ, թէ ում միջոցով եւ որքան դրամ է ուղարկած։ Մշոյ կոմիտէն կը պահանջի։ Երկաթի խումբը*(2), *գրում էք, որ տեղ չհասաւ։ Բայց ո՞ւր մնաց։ Զիվինի կռւի մասին մեր հաղորդածները լրագիրներին։ Ձեր բոլոր տեղեկութիւնները ստանում ենք. երբեմն մի քանի օրինակներ։ Զուրնաչիները*(3) *դժւար թէ խումբ անցկացնեն, որովհետեւ սրանց կենտրոնը մարմինը աննպատակ է հռչակում մեր «մասնակի» շարժումները. ինքը պատրաստում է «ընդհանուր ապստամբութեան»։* (*)

Թերթ ուղարկում ենք Վրէժ(4) *մեծ քանակութեամբ. պահանջեցէք, որ կանոնաւոր բաժանեն։ Այս անգամ* ([*Դրօշակի*] No 7 *լոյս է տեսնելու այսօր*), *ուղարկելիս՝ կը յայտնենք, թէ մօտաւորապէս ուր եւ որքան պէտք է ճանապարհ ձգեն։*

Մեր ստացած տեղեկութիւնները հեռագրով յայտնում ենք եւրոպական կարեւոր թերթերին, որոնք չեն մերժում։

Անտոնը(5) *վաղուց է դուրս է գնացել. այսօր հաւանական է, տեղ հասած լինի։ Կազմակերպութեան վերաբերեալ ժողովի*(6) *որոշումները շարւում են. մի շաբաթից պատրաստ կը լինեն։*

Վահանի(7) *մահուան մասին հակասական լուրեր են գալիս։ Սպասում ենք վերջնական հաստատ լուրի։ Ցոյս ունինք, որ նա մնացած լինի Սասունում, մի ձորում պատսպարւած։*

(*) Այստեղ բնագրին մէջ խաչաձեւ գծուած է (երեւի արտագրութեան ժամանակ չգրուելու համար) հետեւեալ պարբերութիւնը.–

«*Բայց այս բոլորը ոչինչ, որովհետեւ եկել են այն համոզման, որ մինչեւ Ռուսաստ. բռնակալ մնայ, Տաճկահայաստանի հարցը չի լուծուիլ, ուստի իրենց ուժերը պէտք է լարեն Ռուսաստանի դէմ։ Այս բոլորը նշան է, որ մէջները նոր բաժանում պէտք է առաջ գայ՝ սոցիալ-դեմոկրատական, որ կը գործի Ռուսաստանում եւ հին հնչակեան՝ Տաճկաստանի դէմ կռւելու։ Այժմեանից իրենց մտադրութիւնը՝ գործել սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան միացած՝ չեն հրապարակ հանում, որովհետեւ վախենում են, որ բոլոր տաճկահայ տարրը հեռանայ կուսակցութիւնից, ինչպէս նաեւ այն կովկասահայերը, որ կապւած են տաճկահայ դատին։ Եթէ խումբը անցկացաւ, դա կը լինի բաժանման առաջին քայլը*»։

1.- Զրաբերդը Կարսն է, որուն ուղղուած է գրութիւնը:

2.- Երկաթ, Աշոտ-Երկաթ, բուն անունով Լեւոնեան Արմենակ (1871-1904), յեղափոխական հարուստ անցեալի տէր անուանի մարտիկ, որ Սասնոյ ապստամբներուն օգնութեան հասնելու ճամբուն, Արճէշի մօտ կռուի բռնուելով կը նահատակուի (1904 թ. Յուլիս):

3.- Հնչակեանները: Այդ անունը կը գործածէին հաւանաբար կուսակցութեան պաշտօնաթերթ «Հնչակ»ի հետեւողութեամբ:

4.- Վրէժ, Վրէժստան – Ատրպատականն է (Թաւրիզ):

5.- Սիմոն Զաւարեանն է, որ մեկնած էր դէպի Լեռնավայր-Կիլիկիա, Պէյրութ:

6.- Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհ. ժողովին, որ գումարուած էր նոյն տարուան Փետրուար-Մարտ ամիսներուն, Սոֆիա: Խօսքը՝ կազմակերպութեան այդ բաժնի վերաբերեալ որոշումներուն մասին է:

7.- Վահան Մանուէլեան, բուն անունով Տողրամաճեան Կարապետ (1866-1904) Դաշնակցութեան լիազօր ներկայացուցիչը Սասնոյ մէջ, որ արդէն Մայիս 16-ին նահատակուած էր:

293

Պատճէններու մատեան No 88, *էջ* 180-181

Պատճէններու մատեանի այս փաստաթուղթին առաջին էջը (180) բոլորովին անընթեռնելի է՝ էջին դրոշմը տպուած չըլլալուն հետեւանքով: Երկրորդ էջի (181) բովանդակութենէն ի յայտ կու գայ, որ հարցը կը վերաբերի Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմեանի Եւրոպա ուղարկած եպիսկոպոսական պատուիրակութեան, որուն միացած էր Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի անդամ Յովհաննէս Լորիս-Մելիքեանը: Պատուիրակութիւնը պիտի շրջէր շարք մը եւրոպական երկիրներ եւ մեծ պետութեանց մօտ պաշտպանէր հայկական դատը:

[1904 *Յուլիս*]

..... կազմում են՝ Այվատեան եւ Սարաջեան կաթողիկոսները եւ Լորիս Մէլիքեանը: Այդ երեքն էլ հիմա Պարիզ են: Երէկ ստացանք կաթողիկոսի դիմումները եւ բոլոր պետութիւններին եւ ուղարկեցինք Պարիզ: Ձնայած բոլոր ջանքերին եւ խորհուրդներին, որ մինչեւ առաջին դիմումը, խնդիրը գաղտնի մնայ, ինչպէս իմանում ենք, հասարակութեան մէջ արդէն չչուկը տարածւել է: Քո ուղարկած բառարանը ստացւել է: Սիմոնի դասախօսութիւնների գրքի մասին տեղեկութիւն չունինք: Ե՞րբ ես ուղարկել:

Քրիստափորի հասցէն՝ Administration du Pro Armenia, Avenue de l'Observatoire, 3: *Հեռագրի համար ուրիշ յատուկ չի տուել:*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

294

Պատճէններու մատեան No 88, *էջ* 182

1904 *յուլ.* 20

Ռուսչուկի կոմիտէին,

Յարգելի ընկերներ,

Սրանից մօտաւորապէս 25 *օր առաջ Օդեսայից մի երիտասարդ Ռոստոմի յանձնարարութեամբ պէտք է եկած լինի եւ պ. Հայկին ներկայացած: Այդ երիտասարդի մասին ցարդ ոչ մի տեղեկութիւն չունինք. վախենում ենք, որ սահմանագլխում մի վտանգ պատահած չլինի: Խնդրենք անմիջապէս մեզ հաղորդել. եկաւ արդեօք այդ երիտասարդը եւ ուր է այժմ:*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

295

Պատճէններու մատեան No 88, *էջ* 183-185

1904 *յուլ.* 20

Ամերիկայի Կեդր. կոմիտէին,

Ընկերներ,

Ստացանք այսօր Պրօվիտէնսից մի նամակ պ. Վռամեանին անյապաղ հասցնելու համար։ Հաւանական է, որ ձեզանից է այդ նամակը։ Մեր վերջին տեղեկութեան համեմատ պ. Վռամեանը Բագու է եղել։ Անտեղեակ լինելով նամակի պարունակութեան, անկարող ենք մեր միջոցներով ապահով կերպով նամակը տեղ հասցնելու։ Նամակը պահում ենք, երբ սահմանը անցնի կ'ուղարկենք իրեն։

Պարսկաստանից մեզ խնդրում են յայտնել ձեզ, որ ստացականները ուղարկւած են «Հայրենիքի» խմբագրութեան միջոցով, ձեր անմիջական հասցէն չիմանալով։ Խնդրում են ձեր հասցէն, եթէ յարմար էք դատում, հաղորդեցէք իրենց։

Սան Լուի(1) *ցուցանհանդէսի ժամանակ տեղի է ունենալու գեղարուեստի ու գիտութիւնների կօնգրէ։ Եւրոպայից հրաւիրւած են* 120-*ի չափ գիտնականներ։ Մեր կողմից մի փոքրիկ զեկուցում ենք պատրաստում այդ կօնգրէին ներկայացնելու. ցանկալի է, որ կոմիտէդ էլ իր կողմից պատգամաւորների կամ այլ միջոցներով հրաւիրէր կօնգրէի անդամների ուշադրութիւնը մեր հարցի վրայ։*

Մեր ուղարկած հեռագիրը Երկաթի(2) *մասին ստացած կը լինէք։ Կարճ հասցէ չունէ՞ք հեռագիրների համար։ Երկաթի խմբի կռիւը տեղի է ունեցել Արճէշից քիչ հեռու Խօջալու կոչուած ձորակում։ Խմբից կորուստ է լինում ընդամէնը* 7 *հոգի, իսկ թշնամուց մօտաւորապէս* 20 *հոգի, որոնց մէջ մի քանիսը յայտնի ցեղապետների թոռներ։*

Դումանի(3) *հեծելախումբը նոյնպէս ընդհարում է ունենում. մերոնցից սպանւած են միայն* 2 *հոգի, իսկ զինւորներից* 23 *եւ* 2 *սպայ։*

Կայծակի(4) *խումբը զոհ է գնում խմբապետի ու տղաների ոգեւորութեան։ Երբ մի յաջող հարւածից քրդերի դիակները թափւում են, խումբը դուրս է գալիս իր ամուր դիրքից եւ դաշոյններով նետւում փախչող քրդերի ետեւից։ Այդ ժամանակ հակառակ կողմից զինւորները գրաւում են այդ դիրքը եւ կոտորում տղաներին։ Նոր տեղեկութեան համաձայն սպանւել են միայն* 13 *հոգի. մնացածները ազատ են։*

Ռուս կառավարութիւնը արտակարգ, ամենավատ խստութիւնների է դիմում, մանաւանդ սահմանագլխի գաւառներում։

Պատրաստւում է անցնել նաեւ մի հնչակեան խումբ 20-25 *հոգուց։ Մեզանից ռումբեր են ուզել եւ ստացել։ Մերոնք ամէն կերպ աջակցում են նրանց։*

Այս առթիւ հարկ ենք համարում կոմիտէիդ միջոցով «Հայրենիքի» խմբագրութեան ուշադրութիւնը դարձնել իր բռնած անօգուտ եւ վնասակար ընթացքի վրայ կուսակցական խնդրի մէջ։ Մենք կարծում ենք, որ առհասարակ ամէն կերպ պէտք է խոյս տալ կուսակցական պայքարից, որ միայն աւելի է լարում յարաբերութիւնները, պէտք է խոյս տալ մանաւանդ [*մէկ բառ բաց ձգուած*] *պարագաներում։ Երկրորդ, եթէ անհրաժեշտ է ասպարէզ դուրս գալ, պէտք է հաստատապէս ստուգել փաստը։ Երրորդ, նախքան լրագրական նիւթ դարձնել խնդրի առարկան, ցանկալի*

է փորձել ուրիշ միջոցներ։ Այս բոլորը մեզ ստիպում է ասել «Հայրենիքի» վերջին մեղադրանքը, թէ հնչակեանները Սասունի, Անդրանիկի անունով, մի խօսքով անագնիւ ճանապարհով հանգանակութիւն են անում։

Այս բոպէիս լրացուցիչ տեղեկութիւն ստացանք Դումանի կռւի մասին։ Կռիւը տեղի է ունեցել Վանայ ճանապարհի վրայ, տեւել է մօտ 10 ժամ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Սան Լուի – նաւահանգիստ Միացեալ Նահանգներու մէջ։
2.- Աշոտ Երկաթ – բուն անունով Լեւոնեան Արմենակ, անուանի մարտիկ, որ Ռոստոմի նամակին մէջ յիշուած Արճէշի մօտ մղուած կռիւի ընթացքին կը նահատակուի։
3.- Նիկոլ Դումանի առաջնորդութեամբ Սասունի օգնութեան փութացող հեծելախումբ, որ սահմանագլուխի վրայ թուրք եւ քիւրտ զօրքերու հետ բախում ունենալէ ետք նահանջեց դէպի Ատրպատական։
4.- Կայծակ – բուն անունով Պաղտասարեան Վաղարշակ, որ նոյնպէս նահատակուած էր Յունիս ամսուն՝ Սասնոյ ապստամբներուն օգնութեան գացող խումբին եւ թրքական զօրքին միջեւ տեղի ունեցած կռուի ընթացքին։

296

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 21-22

յուլ. 23-*ին Մուշ գրւած*

Հաստատում ենք մեր յուլ. 10-*ի գրութիւնը։*

Ստացանք ձեր նամակները յունիս 1, 7 *եւ* 16*ին գրած։ Դրանից առաջ ստացել էինք յուն*[*իս*] 3-*ի* (*թէ* 8-*ի*) *նամակը։ Բոլոր կարեւոր կէտերը հաղորդեցինք հեռագրով եւրոպական թերթերին։ Կ՚օգտւենք այդ նիւթերից մեմորանդումի համար, որ կը ներկայացնենք պետութիւններին մի յարմար ժամանակ։ Շարունակեցէք նիւթեր ուղարկել։ Ինչպէս առաջ էլ գրած էինք, շատ ցանկալի է իմանալ բոլոր՝ մեծ թէ փոքր ընդհարումների մանրամասը նկարագրութիւնը։ Սպասում ենք Վահանի*(1) *վախճանի մասին վերջնական, ստոյգ տեղեկութիւններ։ Շատ անհանգիստ ենք նոյնպէս Երկաթի*(2) *մասին։ Արճէշի նրա կռուի մասին լուր առինք, այնուհետեւ տեղեկութիւն չունենք, թէ ինչ եղաւ։ Մեզ վերայ լաւ չազդեց տղաների միջեւ ծագած խռովութիւնները։ Ամէն կերպ յորդորեցէք եւ մեր կողմից, որ միանան, համերաշխ մնան։ Նպաստի վերաբերմամբ հետեւեալն է արւած* 1) *Պրեսանսէն առաջարկել է* 5.000 fr. *Դելկասէին*(3) *Մշոյ եւ Սասունի կարօտեալների համար։ Դելկասէն դեռ պատասխան չի տուել։* 2) *Մի մասնաժողով է կազմւում Պարիզում զանազան կուսակցութիւններից նւիրատւութիւններ ընդունելու։ Ժամանակը թէեւ վատ է. վականների ու շոգերի պատճառաւ մարդիկ ցիրուցան են եղել, բայց էլի կ՚աշխատեն մի բան անել. կաթողիկոսի կողմից մի պատգամաւորութիւն է կազմւել* 6 *մեծ*

պետութիւններին դիմելու համար։ Պագամաւորները հիմա Պարիզ են եւ քիչ յետոյ կը սկսեն իրենց այցելութիւնները։ Նրանց թւումն են մեր երկու ընկերները։ Գուցէ արդէն իմացած լինէք, որ Ֆրանսիական կառավարութեան նախաձեռնութեամբ՝ ռեֆորմների մի նոր ծրագիր է առաջարկւած Սուլթանին՝ Անգլիայի, Ֆրանսիայի եւ ռուսերի կողմից։ Հետեւանքի մասին դեռ որոշ բան յայտնի չէ։ Վաղարշակը(4) *նահատակւել է* 13 *ընկերներով Զիվինի ամրութիւններում. թշնամուց ընկել է մօտ* 400 *հոգի։ Խումբը ճիաւոր էր։ Երկաթի խումբը Արճէշի մօտ տալիս է* 7 *զոհ, կոտորելով* 90 *հոգի։ Դումանի հեծելախումբը Վանայ ճանապարհին կոտորում է* 25 *զինւոր եւ* 2 *սպայ. զոհ է տալիս* 2 *հայդուկ։ Նոր խմբեր են պատրաստւում, չնայած ռուս կառավ[արութեան] արտակարգ խստութիւններին ու ճնշումներին։*

Եթէ միջոց ունէք Պոլսից եւ Կովկասից որեւէ կերպով դրամ ստանալ, գրեցէք շուտով անմիջապէս կը հասցնենք։

1.- Վահան – Տես 19 Յուլիս նամակի թիւ 7 ծանօթագրութիւնը:
2.- Երկաթ – Տես 19 Յուլիս նամակի թիւ 2 ծանօթագրութիւնը:
3.- Պրեսանսէին եւ Դելկասէին ծանօթ ենք, երկուքն ալ ֆրանսացի քաղաքական դէմքեր. առաջինը՝ խորհրդարանի անդամ, երկրորդը՝ արտաքին գործոց նախարար:
4.- Կայծակ (Վաղարշակ Պաղտասարեան – 1875-1904) – Յեղափոխական հարուստ անցեալ ունեցող մարտիկ, որ Սասնոյ ապստամբներուն օգնութեան հասնելու ճանապարհին կռուի կը բռնուի եւ կը նահատակուի:

297

Պատճէններու մատեան No 88, *էջ* 188

1904 *յուլ.* 24

Պ. Պօղոս Սահակեանին, Աստարա

Յարգելի ընկեր,

Համաձայն «Վրէժ» կոմիտէի վերջին գրութեան, ձեզ ուղարկում ենք այս անգամ եւ այն կապոցները, որ առաջ Ռաշտ էին գնում։ Ուրեմն Արտաբիլի կապոցներն էլ հետը ժողված՝ ձեր անունով այս անգամ ստացւելու է 700 *օրինակ։ Բարեհաճեցէք յայտնել ստանալուն մասին։ Խնդրենք յայտնել նոյնպէս, թէ որքան է հարկաւոր տեղական պէտքերի համար եւ որքան էք փոխադրում։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Չի կարելի արդեօք եւ Արտաբիլ գնացող կապոցները ձեր հացէով ուղղակի Աստարա ուղարկել։ Գուցէ այսպէս աւելի յարմար լինի։

ՆՈՅՆ

298

Պատճէններու մատեան No 88, *էջ* 189

1904 *յուլ.* 24

Պ. Եփրեմ Դաւթեանին(1), *Ռաշտ*

Յարգելի ընկեր,

Համաձայն «Վրէժ» կեդր. կոմիտէի(2) *գրութեան, այն կապոցները, որ մինչեւ հիմա Ռաշտ էինք ուղարկում, ուրիշ գծով են գալու։ Տեղական պէտքերի համար ուղարկում ենք վերջին համարից միայն* 20 *օրինակ։ Խնդրենք յայտնել, թէ ձեզ խոկապէս որքան է բաւական,* 20 *օրինակից աւել, թէ պակաս։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Տարիներ ետք հանրածանօթ դարձած Եփրեմ խանն է:
2.- Վրէժ Կեդր. կոմիտէն Ատրպատականի Կեդր. կոմիտէն է. Վրէժ կոմիտէն Թաւրիզ քաղաքի կոմիտէն է:



Ռոստոմի ձեռագիր, գաղտնի թանաքով արտագրելի նամակի նմոյշ

299

Փաստ. 212-124

Ռոստոմի այս անթուակիր նամակը (գրուած Ժընեւէն «Դրօշակ»ի խմբագրութեան կողմէ եւ ուղղուած Փարիզ) ըստ բովանդակութեան պէտք է տեղադրել 1904 թ.ի Յուլիս-Օգոստոս ամիսներուն, երբ Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմեան Հայրիկ յատուկ պատուիրակութիւն մը առաքած էր Եւրոպա՝ Պերլինի դաշնագիրը ստորագրած պետութեանց մայրաքաղաքները՝ 1) բողոքելու համար նոյն տարուան ընթացքին Մշոյ, Սասունի, Ալաշկերտի եւ Վասպուրականի մէջ ծայր տուած հալածանքներուն դէմ եւ 2) պահանջելու համար որ հայկական նահանգներու մէջ գործադրութեան դրուին նոյն դաշնագրով խոստացուած բարենորոգումները: Պատուիրակութիւնը, որ բաղկացած էր Ամերիկայի հայոց առաջնորդ Յովսէփ Արք. Սարաճեանէ ու Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Սահակ Արք. Այվատեանէ եւ որուն պիտի օժանդակէին Եւրոպայի մէջ շարք մը ազգային դէմքեր, պիտի այցելէր նաեւ Ուաշինկթըն՝ Միացեալ Նահանգներու նախագահ Ռուզվելդին:

Նամակը, ենթադրաբար, կրնայ ուղղուած ըլլալ Ակնունիին, որ այդ օրերուն Փարիզ կրնար ըլլալ, եւ կամ Յովհաննէս Լոռու-Մելիքեանին, որ Կաթ. պատուիրակութեան գլխաւոր օժանդակողներէն մէկը պիտի ըլլար:

Սիրելիս,

Ինչպէս տեսնում ենք, դեռ մի քիչ աւել պիտի մնաս Պարիզում, մինչեւ Պատգամաւորների խնդիրը կարգաւորուիլը. կարծում ենք, որ սկզբում կարող են զանազան միջամտութիւնների պատճառով անհամութիւններ ծագել։

Այվատեանը ջերմ դաշնակցական է, մանաւանդ ըստ Յոնանի(1)։ *Լաւ կը լինէր, եթէ նախնական ժողովներում՝ դու էլ ներկայ լինէիր. տես յարմարութիւնը եւ մեզ տեղեկութիւն տուր, թէ ինչ է լինում։ Եթէ դու ուշանալու լինիս, ցանկալի է, որ Յոնանը դար այդտեղ եւ անձնապէս տեսնուէր Այվատեանի հետ, որին չափազանց մօտ է։*

Մաշտոց հայր-սուրբը(2) *եկաւ։ Կաթողիկոսին կարելի է պարզապէս հեռագրել՝* Dans une semaine(3), *եթէ ուրիշ պայմանական բան չկայ։*

Մարտիրոսը(4) 10,000 fr. *է եղել ուզած, իսկ մենք ուղարկել ենք միայն* 1000! *Ի՞նչ անենք հիմա, ուղարկենք մնացեալը, թէ չէ. ինքն էլ ոչինչ չի աւելացնում։*

Վերջին հեռագիրը կարծեմ քեզ եմ ուղարկել. մէջը հաշիւ կար, թէ որքան ենք պարտ Թիւֆեկչիէվին(5)։

Համբոյրներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Յոնան Դաւթեան, որ մօտէն ճանչցած պիտի ըլլար Այվատեան Սրբազանը, երբ վերջինս Ատրպատականի թեմի առաջնորդն էր:

2.- Տաճատ վարդապետ, որ ապա կարգաթող պիտի ըլլար, բուն անունը՝ Մելքոնեան Մկրտիչ (1882-1916), կուսակցական ծածկանունով ծանօթ Գարմէնը:

3.- Ֆրանսերէն՝ մէկ շաբթուան ընթացքին:

4.- Մարտիրոս Մարգարեան, ծանօթ Սաֆօ ծածկանունով, Ցուցական մարմնի անդամ:

5.- Պուլկար վաճառական, հայթայթիչ պայթուցիկ նիւթերու:

300

Պատճէններու մատեան No 88, *էջ* 193-194

1904 *օգ*. 1

Բալկանեան Կեդր. կոմիտէին

Ընկերներ,

Ստացանք ձեր յուլ. 8/21 *նամակը։ Նէիրատութեան ցանկերը գուցէ ուշ լոյս տեսնեն «Դրօշակում», որովհետեւ ահագին կապոցով ցանկեր սպասում են իրենց հերթին։*

Կոստանցայում հանգանակութեան գումարի առթիւ ձեր ու Կոստանցայի դըժգոհութիւնները կատարելապէս անտեղի են։ Բիւրօն ոչ մի իրաւունք չունի մերժելու այս կամ այն նպատակների համար յատկացուած գումարների առաջարկը. չի էլ կարելի պահանջել, որ անպատճառ այս կամ այն մարմնի միջոցով նպատակին հասցւի։ Կոստանցայի նամակը կարդացինք եւ ներփակ յետ ենք ուղարկում ձեզ։

Թերթերից իմացած կը լինէք Ալաշկերտում գործող խմբերի մասին։ Խմբերը երեւացել են քրդական մի քանի աւերումներից յետոյ։ Մի ուրիշ խումբ Որսկանի եւ Թորգոմի (Թումեան) առաջնորդութեամբ [երեք բառ անընթեռնելի] սահմանագլխում շրջապատւում է երկու կողմից ռուսական եւ տաճկական զօրքերով եւ ջարդւում։ Զնայած, որ տղաները ոչ մի գնդակ չեն արձակում ռուս զինուորների կողմը, վերջիններս անխնայ եւ անգութ հարւածում են. 32 սպանւածներից միայն 5 *են ընկնում տաճկական գնդակներից*(1)։

Վահանի(2) *մասին չարագուշակ լուրեր են գալիս. ենթադրութիւն կայ, որ սպանւած է. սպասում ենք ստոյգ տեղեկութեան, որ խոստացել են ուղարկել Մշոյ մեր ընկերները։ Դաշտում դեր գործում են* 3-9 *խմբեր։*

Դումանի(3) *խումբը (հեծելախումբը) միայն* 2 *զոհ է տալիս, սպանելով* 25 *հոգի եւ* 2 *սպայ։*

Պարիզից գրում են, որ Լուբէն ու Դելկասէն(4) *լաւ ընդունելութիւն են արել կաթողիկոսի պատւիրակներին։ Առայժմ պէտք է գաղտնի պահել մեր մասնակցութիւնը այդ գործի մէջ։*

Կովկասում մեծ յուզում է տիրում։ Արեւելեան բիւրօն 30,000 fr. *է յատկացրել Սասնոյ եւ Մշոյ արկածեալներին։ Դիմում է եղել Դէլկասէին, որպէսզի համաձայնի ֆրանս. հիւպատոսի միջոցաւ նպատակին հասցնել։ Պատասխան դեռ չկայ, երեւի տատանւում է։ Մեծ աղմուկները մեծ դիւրութեամբ են մոռացութեան տալիս։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ակնարկութիւն Որսկանի եւ Թորգոմի (Թումեան) առաջնորդութեամբ Օլթիի սահմանագլուխին Երկիր՝ Սասնոյ ապստամբներուն հասնելու նպատակով սահմանին վրայ յարձակման ենթարկուեցաւ միաժամանակ թրքական եւ ռուսական զօրքերու կողմէ եւ մեծ թիւով զոհեր տուաւ։ Հակառակ անոր ֆետայիները առանց գնդակ մը արձակելու անձնատուր եղած էին ռուսերուն, վերջիններս անխնայ սպաննած էին զանոնք։ Ապա, մերկացուցած ու յօշոտած էին դիակները։

2.- Վահան – բուն անունով Տողրամաճեան Կարապետ, Դաշնակցութեան ներկայացուցիչը Սասնոյ ապստամբութեան օրերուն:

3.- Նիկոլ Դուման, որ նոյնպէս հեծեալներու խումբով մը կ՝ուղղուէր դէպի Սասուն ապստամբներուն օգնութեան:

4.- Լուբէ եւ Դելկասէ,– փոխադարձաբար նախագահ եւ արտաքին գործող նախարար ֆրանսական հանրապետութեան:

301

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 27-28

2 *օգոստ.* [1904]

ԲԷՅՐՈՒԹ, Անտոնին(1),

Յուլ. 24[*ի*] *նամակդ ստացանք, ստացել ենք նաեւ Զմիւռնիայից գրած բացգիրը։ Քանի որ Ռահվերը*(2) *եկել է եւ հետը տեսնուել ես, քանի որ միւսներն էլ են գալու, գործը ուրեմն քիչ քիչ կարգի կ՝ընկնի։ Գրում ես, որ մի մանրամասը նամակ էլ մի օր առաջ ես ուղարկել. մենք չենք ստացել այդ նամակը։ Հասցէդ չենք տալ առայժմ ոչ մի տեղ. թող քիչ ուշ լինի, հիմիկուանից լու չընկնի*(3)։ *Բացի այդ, շատ էլ յարմար չէ քո տուած հասցէով երկրի ներսից նամակ գրել, կարող է խկոյն կասկած հրաւիրել։*

Քո անունով շատ նամակներ են եկել. ի՞նչ անեմ. ուղարկե՞մ, թէ ոչ, կամ ի՞նչ ձեւով։ Նամակներից մի երկուսը ձեր տնից են. մոռացանք պայմանաւորուել քո նամակագրութեան մասին։ Դուն ի՞նչ ձեւով ես նամակ գրելու, ուղղակի՞ միթէ։

Մի յարմար օր կը գնամ Մարսէյլ եւ պահեստի պատրաստութիւն կը տեսնեմ։

Ուզած գիրքդ կ՝ուղարկենք, եթէ խօսք տաս, թէ քաղաքիցդ դուրս հետդ չես տանելու։

Գանք նորութիւնների։ Ժիրայրը առաջել է Մարաշ եւ թերեւս Արծւաբերդ(4)։

Երկաթի խմբի ընդհարման ժամանակ զոհ են գնացել 7 հոգի, մնացածները ապահով են եւ կարծենք Ախլաթ են հասել։

Ալաշկերտ անցած խմբերը։ Որսկանի եւ Թորգոմի խմբերը։ Թղթակից իտալացին. կաթողիկոսի պատւիրակութիւնը։ Հեռագիրներ Թաւրիզից։ Լուրջ միջամտութեան նշոյլ չկայ։ Դումանի խումբը, Մշոյ եւ Սասունի դրութիւնը(5)։

Միսակը գրում է, թէ ինքը խօսք չի տուել Ադանա անցնելու, թէ Սիմոնը(6) *սխալուել է։ Առ հասարակ ես քեզ խորհուրդ եմ տալիս մի առժամանակ դրանց հանգիստ թողնել, մինչեւ նրանք որոշապէս չճշդեն իրենց բռնած ընթացքը։*

1.- Անտոնը Սիմոն Զաւարեանն է, Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու մարմնի անդամ:

2.- Ռահվեր – Կիլիկիոյ հին գործիչներէն Վարդանեան Միսաք (1874-1949):

3.- Լու չընկնի,– չիմացուի, լուրը չտարածուի:

4.- Ժիրայրը Կիլիկիոյ գործիչներէն է, բուն անունով Միրճեան Կարապետ, մահացած 1909-ին: Արծուաբերդը՝ Զէյթունի կուս. ծածկանունն է:

5.- Ամբողջ պարբերութիւնը ունի այն իմաստը, որ նշուած կէտերու մասին աւելի լայն տեղեկութիւններ պիտի տրուին գաղտնի թանաքով շարադրուելիք նամակին մէջ:

6.- Միսակը վերեւ յիշուած Ռահվերն է (Վարդանեան). Սիմոնը՝ Զաւարեանի մասին է:

302

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, էջ 25-26, 29-31

Գրուած օգ. 3-ին
(բանկի հասց.)

Մ[ԵԾ] Ք[ԱՂԱՔ](1)

Հաստատում ենք

— Նամակների հրատարակութիւնների առթիւ։ Պէտք է նրանց հիման վրայ շրջաբերականի պէս բան գրել եւ ոչ թէ նոյնութեամբ ցրուել։ Ամերիկայի մէջ էլ ձեզանից օրինակ առնելով տարածում են ամէն տեսակ նորութիւններ երկրից ստացած։

— Թերթ ուղարկւեց (No 7) *Արտաբիլ* 500, *Աստարա* 200, *Թաւրիզ* 400. *իսկ շուտով Բաթումի գծով կ'ուղարկւի* 1500։

Եթէ Պարս[կաստան] գնացածներից 100 *հատ վերցնեն տեղական կարիքների համար, ձեզ բաժին կը մնայ* 1.000 *օր[ինակ], չենք հաշւում Սալմաստի* 220-*ը, որ երեւի Շամ է*(2) *գնում։*

Շիրակեան վաճառականի մօտ Մոմճեան անունով երիտասարդը խումբ է կազմել եւ 50 *ռ. նպաստ ուղարկել։ Կանչել տւէք եւ հետը խօսեցէք։*

— Ջրաբերդից(3) *ուզել էին իրենց թղթերի պատճէնները. ժամանակ չկայ այդքանը արտագրելու։ Արտագրել ենք միայն ամենակարեւորը, եկողի հետ կ'ուղարկենք։*

— Անյարմար է յարաբերութիւնը երկու տեղից պահել։ Սասնոյ նպաստի համար երկու հեռագիր կար, Բագւից եւ Մ. Ք[ից]։ Մեր մի ընկերը մինչեւ հիմա համոզւած է, որ խնդիրը տարբեր գումարների վրայ է։

— Անտոնը(4) *տեղ է հասել։*

— Ուշադրութիւն դարձրէք հրատարակութիւնների ձեւի վրայ։

— Նամակները խէժով բացէք։

— Հաշւի մասին։ Պէտք է զանազանել Բիւրոյի եկամուտը եւ հաշիւը։ Եթէ մի կոմիտէից փող են փոխադրում Բիւրոյին, դա պէտք է մտցնել հաշւի մէջ եւ ոչ Բիւրոյի ցանկի, որովհետեւ արդէն տպագրւում է իբր Կոմիտէի եկամուտ։ Այնպէս կարգադրէք, որ միեւնոյն գումարը երկու անգամ չհրատարակւի։

— Ոսկանապատից(5) *ուզում են իմանալ այստեղի կարծիքը գործունէութեան տեւողութեան մասին։ Երկրի ներսը զինւած ստւար խմբերով ոյժ մտցնելու մասին աւելորդ է կարծիք յայտնել, քանի որ արդէն իրականութիւնը ցոյց է տալիս դրա անկարելիութիւնը ներկայ պարագաներում։ Յարձակողական տաքտիկին համակարծիք ենք. միայն աւելի լաւ է մի ձեռնարկ, բայց յաջող, քան մի քանիսը, կէս կատար։ Մեր անաջողութիւնները սիրտ են տալիս թշնամուն, նսեմացնում են կազմակերպութեան հեղինակութիւնը. իսկ եթէ վերանայ վախը, այն ժամանակ վայ մեզ։ Մինչեւ հիմա քրդերը, տաճիկ ժողովուրդը միշտ ակնածել են մեր ուժից։ Վերջին դէպքերը շատ բան պէտք է փոխեն։ Պէտք է մէկ զօրեղ հարւածով վերականգնել կազմ[ակերպութեան] պատիւը։ Մեր ցաւը նրանումն է, որ ժողովրդի ոգեւորութիւնը, կռուի պահանջը այնքան մեծ է, որ անհնար է լինում կարգ կանոնի տակ ձգել եւ մտածւած, ծրագրւած, երկարատեւ եւ գաղտնի մի ձեռնարկ պատրաստել։*

Բանն այնտեղ է հասել, որ եւրոպական թերթերը մեր ուղարկած հեռագիրները խմբերի գործունէութեան մասին, տպագրում են «nouveaux massacres»(6) *վերնագրի տակ։ Այն էլ պէտք է ասած, որ թէեւ մեր տեղեկութիւնները տպագրում են, բայց այնքան էլ չեն հաւատում, որ թշնամուց կոտորւել է* 400, 500 *հոգի եւայլն։ Պատճառը շատ պարզ է, որովհետեւ բացի մեր հեռագիրներից, ուրիշ ոչ ոք չի խօսում մեր յաղթութիւնների մասին։ Գուցէ ամիսներ յետոյ դեղին, կապոյտ գրքերում*(7) *կարդանք հիւպատոսների զեկուցումները։ Պէտք է ուրեմն այնպիսի հարւած տալ, որ փաստը ինքը խօսի, որ ստիպւած լինեն լեզուն բանալ* (*)։

(*) Ծանօթ Խմբ.– Բնագրին մէջ հետեւեալ ընդարձակ հատուածին վրայ խաչաձեւ գիծեր քաշուած են. արդեօ՞ք պէտք է նշանակէ, որ նկատի չէ առնուած արտագրութեան ատեն:

Թորգոմի(8) *խմբի կռւի մասին եւ ոչ մի ակնարկ! Մի հանգամանք եւս, որի մասին առաջ էլ էինք գրել։ Թէեւ դուք ասում էք, որ իրողութիւնը չափազանցրած չէք նկարագրում, որ նա իսկապէս սոսկալի է, բայց մենք դարձեալ կասկածում ենք, ոչ թէ ձեզ, այլ ձեզ լուրեր հաղորդողին։ Ամէնից քիչ պէտք է հաւատալ ականատեսի պատմածին. սա պարատոկս է. միշտ ականատեսը տրամադրւած է չափազանցօրէն դիտել երեւոյթը։* Quillard-*ն*(9) *էլ այսօրւայ նամակում խնդրում է գրել մեր ընկերներին, որ թիւերը ստուգեն եւ ապա հաղորդեն։ Նա էլ շատ կասկածում է նրանց ճշտութեան եւ վախենում է, որ այլեւս հաւատ չընծայեն* Pro-Armenia-*ի ասածներին։ Երկու ապացոյց ասածներիս։ Դումանի կռւի լուրը առնելով Թաւրիզի մեր ընկերները հեռագրում են, թէ Վանայ ճանապարհին քրդերը կոտորել են* 50 *հայ,– կարծելով թէ դիպլոմացիայի վրայ դրանով ազդելու են. խայտառակութիւնը այնտեղ է, որ Լանսդաոն*(10) *խոստացել է քննութիւն կատարել տալ! Ահա ձեզ գիտակցական չափազանցութեան մի օրինակ։ Յաղթութեան լուրը կոտորածի ձեւով են ներկայացրել, չուզենալով հաւատալ, որ ամէն մէկ այդ տեսակ լուր մի մինուս է մեր դատի համար։ Իսկ կռւի նկարագրութիւնը, որ կարող է քիչ թէ շատ ոգեւորել, դեռ մինչեւ հիմա չի ստացւել։ Երկրորդ օրինակ։ Ֆարհատը Մրգաստանից*(11) *մի զգացւած թղթակցութիւն է ուղարկում, որ սկսում է կոտորածների յառաջաբանով, մինչեւ երկինք հասնող դիակների կոյտով, ծխացող արիւնով եւայլն... ինչ է, ինչ է... Երկաթի խումբը* 7 *հոգի է զոհ տւել։ Այսպէս բան կը լինի՞։ Նոյն բանը նկատւում է Մշոյ թղթակցութիւններում։ Կռիւներ են լինում նրանց մասին ոչ մի խօսք, իսկ զոհերի մասին! «Դիակները ջրի առաջը կտրում են, թնդանօթներով են ջրի ճանապարհը բաց անում»։ Մշոյ ընկերների հոգեբանութիւնը հասկանալի է, իսկ դրսեցիներին ի՞նչ ասենք։*

– Կաթողիկոսի պատւիրակութիւնը լաւ ընդունելութիւն է գտել Լուբէի(12) *եւ Դելկասէի մօտ։ Հիմա գնացել են Լոնդոն։*

[Աւարտ գծուած բաժնին]:

* * *

– Բանակցութեան մէջ ենք մի իտալացու հետ, որ ուզում է գնալ Հայաստան իբր թղթակից. եկաւ, խօսեցինք, պայմանաւորւեցինք։ Եթէ կարողացաւ մտնել խորքե-

ը, անցնել Մուշ, Սասուն, Վան, Պարսկաստան, դա մեզ կը նստի 2.200 fr.(13)։

— Մեզ առաջարկներ եղան Ֆինլանդացիների կողմից միւս տարրերի հետ միացած համերաշխ գործելու։ Սկզբունքով համաձայնութիւն տւինք։

Եթէ կոնգրէս կայանայ, պէտք է որ Ինքնապ[աշտպանութեան] մարմինը մի ներկայացուցիչ ունենայ։ Առ այժմ թող խօսեն ուրեմն պայմանների մասին։ Կը գրենք դարձեալ, երբ կոնգրէսը հրաւիրելու մասին գործնական քայլեր առնուեն։

1.- Մեծ Քաղաքը, ինչպէս ծանօթ է, Թիֆլիսն է, այլ խօսքով Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոն։
2.- Շամը ծածկանունն է Վան-Վասպուրականի։
3.- Ջրաբերդը Կարսն է։
4.- Սիմոն Զաւարեանի համար է, որ անցած էր Պէյրութ։
5.- Ոսկանապատը Պաքուն է։
6.- Ֆրանսերէն – նոր կոտորածներ։
7.- Ֆրանսական (դեղին) եւ անգլիական (կապոյտ) կառավարութեանց կողմէ ամէն տարի կամ պարբերաբար հրատարակուող պաշտօնական ժողովածուներ էին, ուր տեղ կը գտնէին առ հասարակ իրենց դեսպաններէն եւ հիւպատոսներէն ստացուած զեկուցագրեր։
8.- Թորգոմ՝ ծածկանունն էր Թումեանց Թումանի։
9.- Pro-Armenia-ի խմբագրապետը։
10.- Լորդ Լանսդաս, Անգլիոյ արտաքին գործոց նախարար։
11.- Ֆարհատ – Սարգիս Օհանջանեան, Մրգաստան-Երեւանի Կեդր. կոմիտէի անդամ։
12.- Էմիլ Լուբէ Ֆրանսայի հանրապետութեան նախագահ։ Դելկասէ՝ Արտաքին գործոց նախարար։
13.- «Իտալացին» Պրոֆ. Ռակկա անունով հայասէր անձնաւորութիւն էր։ Հայաստան այցելութեան ծրագիրը չիրականացաւ երեւի բազմաթախս ըլլալու պատճառաւ։

303

Պատճէններու մատեան No 88, *էջ* 198

1904 *օգ.* 3

Բագրատ վարդ. Վարդազարեանին, Սպահան

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր նամակը, ուղղուած Քրիստափորին։

Ձեր ուղարկած հեռագիրները լաւ ազդեցութիւն ունեցան Ամերիկայում։ Եթէ սրանից յետոյ պէտք լինի նոր դիմումի այդտեղից, հեռագրով կը յայտնենք։

Կաթողիկոսի պատւիրակութիւնը լաւ ընդունելութիւն է գտել Պարիզ։ Հիմա պատւիրակները Լոնդոն են գնացել։ Քանի որ այդ պատւիրակութիւնը պտտելու է զանազան տեղեր, աւելի լաւ է ամէն տեսակ դիմում կատարել նրա միջոցով։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

304

Պատճէններու մատեան No 88, *էջ* 199-200

1904 *օգ.* 6

«Վրէժ» Կեդր. կոմիտէին,

Սիրելի ընկեր,

Ստացանք ձեր Յուլիս 5-*ի նամակները, ինչպէս նաեւ Յունիս* 28-*ինը։*

Հաստատում ենք մեր Յուլ. 24, 13, 8-*ի նամակները։ Ստացել են ձեր վերջին կապոցները։*

Ռաչտ եւ Աստարա մեր կողմից նամակներ են գրուած ուղարկուած թերթերի քանակի մասին։

Արտաբիլ ուղարկուած արկղիների թիւը կը ճշտենք. որքան մեզ յայտնի է, 12-*ի փոխանակ աւելի քիչ պէտք է ուղարկած լինին։ Կատարուած ծախսերը* (12 *թուման ծախսը եւայլն) գրեցէք մեր հաշւին։ Մենք այստեղ կը կարգադրենք։*

Ղազւին կ"ուղարկւի 5 *օր*[*ինակ*] *Դրօշակ, ինչպէս գրել էինք։ Հարկ ենք համարում յայտնել, որ նոյն տեղը ուղարկւում է արդէն* 3 *օր*[*ինակ*] [*լատինատառ անընթեռնելի անուն*]-*ի հասցէով։*

Քաղաքի մէջ խմբերի զարգացումը մխիթարական է, աւելի մխիթարական են կանանց խմբերի գործունէութիւնը եւ հին արմենականների համակրութիւնը։

Դումանի խմբի մասին դեռ եւս մանրամասնութիւնները չեն եկել. դա ներելի չէ. գրում էք, որ եկող կայ, կը պատմէ, իսկ եթէ չեկա՞ւ. այդպիսի անհոգութիւն կը լինի՞։ Յամենայն դէպս, եկողի մի նայէք, անպատճառ պատրաստէք եւ ուղարկէք, գուցէ հետեւեալ համարին հասնի։

Ուղարկում ենք «Հայաստան եւ Մակեդոնիա» 400 *օրինակ երեք գծով՝ Աստարա, Արտ*[*աբիլ*] *եւ Խոյ, ինչպէս նաեւ* 700 *օր*[*ինակ*] 8 *տեսակ բրոշիւրներ։ Հաշիւները կարգին պահէք եւ ժամանակին ծախւածի փողը ուղարկէք։ Աշխատէք որքան կարելի է շատ Կովկաս փոխադրել։*

Ընդհանուր ժողովում մշակւած կազմակերպական կանոնները արդէն յանձնըւած են տպարանին։ Կ'ուղարկենք շուտով։

Այստեղ առայժմ յարմար ընկերներ ի նկատի չունինք ձեր կողմերը ուղարկելու։

Շէյխի խնդրի մասին յետոյ կը գրենք, երբ ծանօթանանք ուղարկւած տեղեկագրին։

Հեռագիրները շատ էք ընդարձակ շարադրում. դուք համառօտ փաստերը հաղորդեցէք, մենք կը լրացնենք։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Այսօր հեռագիր ստացանք, որ Դէլկասէն ընդունել է մեր առաջարկը. 30,000 fr.-*ի չափ մի գումար բաժանել տալ Մշոյ ֆրանսիական հիւպատոսի միջոցով Սասնոյ եւ Մշոյ արկածեալներին։*

Կաթողիկոսի պատւիրակները հիմա Լոնդոն են գնացել։ Պարիզում Լուբէի եւ Դէլկասէի կողմից լաւ ընդունելութիւն է եղել։

ՆՈՅՆ

305

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 32-33

Օգոստ. 6-*ին*

ՈՍԿԱՆԱՊԱՏ

Յայտնեցէք Մ. Ք., *որ Բարսեղեանի տուած հասցէով* (*բանկի*) *ուղարկել ենք մի երկար նամակ*(1)։ *Այնտեղ կան բաներ, որ ձեզ էլ են վերաբերում*։

Այսօր ստացանք Պարիզից հեռագիր։ Դելկասէն(2) *համաձայն է ընդունել մեր դրամը հիւպատոսի ձեռքով բաժանելու համար։ Հեռագրեցինք Մ. Ք. դրա մասին Ղարիբի*(3) *հասցէով։ Միայն ինչպէ՞ս անել, որ մերոնց ձեռքը մի որոշ գումար ընկնի։ Յամենայն դէպս պէտք է դրա մասին յայտնել Մշոյ կոմիտէին։ Փողը այստեղ կը տանք, սպասելով ձեր փոխադրութեան։*

Դումանին(4) *լաւ հայհոյէք. մինչեւ հիմա ոչինչ չգրեցին դէպքի մասին, իսկ հիւսիսային գործակալութիւնը դժբախտաբար այդպիսի բաներով չի զբաղեցնում հասարակութիւնը։*

Մ. Ք.ի նամակում յայտնել ենք մեր կարծիքը ապագայ գործունէութեան մասին։ Մեզ ձեռնտու չեն ոչ լռութիւնը, եւ ոչ խմբերի անպատիժ, սուս ու փուս կոտորածը։ Թող կազմի մի արշաւանք, կատարի մի գործ, որի մասին ստիպւած լինեն բերանը բանալ։ Որքան էլ մենք ասենք, թէ 100, 300, 400 *թշնամի ենք կոտորել, նշանակութիւն չի ունենալ, մինչեւ միւսների բերանից էլ նոյն բանը չլսուի։ Իսկ մինչեւ հիմա կատարւած դէպքերի մասին համարեա ոչ մի ակնարկ չի եղել ոչ մէկի կողմից։*

Ձենք հասկանում, ինչ նշանակութիւն ունի ձեր կողմից Պրեսանսէի ճառի թարգմանելը, քանի որ դա լոյս է տեսնում Դրօշակում։

Ռաչտ այլեւս չի ուղարկւում։ Ուղարկեցինք փորձի համար 40 *օր*[*ինակ*] *Մեշէդ եւ ձեզ հեռագրեցինք։*

Տուէք հեռագրի համար կարճ հասցէ։

Աստարա ուղարկւած է 240 *օր*[*ինակ*], *Արդ*[*աբիլ*] 500. *ուրեմն առնւազը* 600 *օրինակ կարող են ձեզ հասցնել*(5)։

Ինչո՞ւ Անդրէեւի, Բոգոսլաւսկու մասին մի տող չէք գրում(6). *ստիպւած ենք այստեղից այնտեղից քաղել։ Չի լինի՞լ, որ Պրեսանսէի ճառերը մենք թարգմանենք, իսկ Անդրէեւների մասին դուք գրէք։*

II *կոմիտ*[*էին*] *յայտնէք, որ հաշիւը չէր տպագրւում, որովհետեւ սկիզբը չկարառաջիկայում կը տպենք։*

Հիմա իմացանք, որ Մոսուլի դէպքի մասին պաշտօնական լուր կայ Times-*ում։ Դրա համաձայն միայն* 4 *հոգի են ազատւել։ Մշոյ դաշտում մի դարանակալ խումբ յարձակւում է զօրքի վրայ։ Զօրքերին օգնութիւն է հասնում, ապստամբները փախչում են, աւերելով իրենց ճանապարհին* 3 *գիւղ։*

Քանի որ Դելկասէն յանձն է առել նպաստները տեղ հասցնել, չի՞ կարելի հարուստներից առնել փողը եւ ոչ մեր գանձարանից։ Նպաստները կարելի է ուղարկել Պրեսանսէի անունով։

Ջրաբերդցիք(7) *գանգատւում են, որ նամակ չենք գրած։ Յայտնէք իրենց, որ նախ գրել ենք, յետոյ ախր դժւար բան է մի անգամից* 3-4 *տեղի հետ նամակագրու-*

թիւն պահպանել եւ ամէն տեղ նոյն տեղեկութիւնները կրկնել։ Թող [Արեւելեան] Բիւրոն այդ պաշտօնը յանձն առնի, մեր տւած տեղեկութիւնները կոմիտէներին յայտնի։

1.- Մ. Ք. – Թիֆլիսն է. Բարսեղեանը՝ Տէր Դաւթեան Յովսէփը, անդամ Արեւելեան բիւրոյի:
2.- Դելկասէ – Ֆրանսայի Արտ. գործոց նախարար: Տրամադրուած գումարը Ֆրանսայի հիւպատոսի միջոցաւ իբրեւ նպաստ պիտի բաշխուէր Տարօնի եւ Սասնոյ աղէտեալներուն:
3.- Աւետիս Ահարոնեանի:
4.- Նիկոլ Դումանին, որ իր խումբով կռուի բռնուելով սահմանագլուխին՝ չէր յաջողած օգնութիւն հասցնել Սասնոյ կռուողներուն:
5.- Խօսքը «Դրօշակ»ի համարներու առաքումին մասին է:
6.- Անդրէեւ եւ Բոգոսլաւսկի. առաջինը Գանձակի փոխ նահանգապետ, երկրորդը Սուրմալուի գաւառապետ, երկու հայատեաց պաշտօնեաներ, որոնք ինկան դաշնակցական ահաբեկիչներու գնդակներէն:
7.- Կարսեցիք:

306

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 34

օգ. 8-ին [?]

Մ. Ք.(1)

Գաղտնիքներ հրատարակւած նամակներում. օր[ինակ] Մշոյ հասցէն։

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին յղուելիք գրութեան նիւթը, մէկ նախադասութեամբ: Ռոստոմի ձեռքով, գրուած թանձր սեւ մատիտով:

307

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 34

Գրւած օգ. 8-ին

ՋՐԱԲԵՐԴ(1)

Դուք գանգատւում էք, որ ձեզ նամակ չենք գրում։ Ձեզ գրւած [է] յուլիսի սկիզբին եւ 19-ին յուլիսի։ Աւելի պահանջկոտ մի եղէք։ Մի մոռացէք, որ հարկաւոր է եւ ուրիշ տեղեր գրել։

Ձմոռանանք մի նկատողութիւն անել ձեզ։ Երկրից ստացած նամակները դուք

նոյնութեամբ հրատարակում եւ ցրւում էք զանազան կողմեր. այդպէս չի կարելի. պէտք է որոշ կէտեր դուրս հանել. դուք տրւած հասցէն եւս, որ խիստ գաղտնի պէտք է պահւի, այն էլ չէք հանում։

Մինչեւ հիմա տեղի ունեցած դէպքերի մասին պաշտօնական ոչ մի տեղեկութիւն չէր տրւում։ Բացի մեզանից համարեա ոչ մի խօսող չկար բայց վերջերս լուր հաղորդւեց Մոսուլի դէպքի մասին։ Հեռագիր կար նաեւ մի յարձակման մասին, որ արել են մերոնք Մշոյ դաշտում թուրք զօրքի վրայ։ Ռուսաց ներկայացուցիչների դերը ակնյայտնի է. նրանք գնացած են եղել, ինչպէս երեւում է, լոկ ոստիկանական նպատակով։ Մամուլին կը տանք մի շարք փաստեր դրանց դերի մասին։

Դժոխքի (2) *պատկերը ստացանք։ Նամակ խնդրւում է գրել անպատճառ գաղտնագրով, երբ որոշ գաղտնիքներ կան։*

Ալաշկերտի խմբերի մասին Մրգաստանից ոչ մի լուր չունենք։ Դուրանի(3) *հետ մենք անմիջական կապ ունենք։ Գիտեն արդեօ՞ք նրանք նոր թանաքի գաղտնիքը — 6.000ի մասին կարգադրութիւն կը լինի։*

Նոր մխիթարական լուրն այն է, որ Դելկասէն ընդունեց Քիյառի առաջարկը ֆրանսիական հիւպատոսի միջոցով նպաստ տեղ հասցնել արկածեալներին։ 30.000 ֆր. արդէն փոխադրւած է այդ նպատակով։

Ընդհանրապէս մեր խնդրով հարկ եղածին չափ չեն զբաղւում։ Դրա պատճառներն են 1) *ամառւայ արձակուրդները. հիմա բոլորը ցիր ու ցան եղած զանազան տեղեր հանգիստ են վայելում.* 2) *Ռուսաստանի գործերը, որ կլանել են ընդհանուրի ուշադրութիւնը։ Անդրէեւի, Բոգոսլաւսկու սպանութիւնները բաւական նշանակութիւն ունեցան ի շարս միւս դէպքերի։ Ցաւում ենք միայն, որ մեզ մինչեւ այժմ ոչ մի տող չգրւեցաւ։*

Ապագայ ձեռնարկների մասին մեր կարծիքը գրել ենք եւ Մ. Քֆ. եւ Ոսկ[*անապատ*]*։ Անհրաժեշտ է այնպիսի մի հարւած, որ ստիպւած լինեն խօսել։*

Կաթողիկոսի պատւիրակները հիմա Լոնդոն են։ Պարիզի ընդունելութիւնը լաւ է եղել։

Անտոնը (4) *տեղ է հասել։ Միայն դէս ու դէն չխօսէք նրա մասին, չտարածւի։*

Մրգաստանից ստացանք մի թղթակց[*ութիւն*] *Երկաթի կռւի մասին։ Այդ թղթակցութիւնը թէեւ տպում ենք, բայց կասկածում ենք ճշմարտութեանը։ Ուրիշ տեղեկութիւնների նայելով քարայրի մէջ պայթած ռումբերից սպանւել են ոչ թէ քրդեր, այլ մեր ընկերներից* 9 *հոգի։ Ի՞նչ լուր ունէք նրանց մասին։*

1.- Զրաբերդ-Կարսի սահմանուած գրութիւն։
2.- Հրայր Դժոխք, նահատակուած 1904 թ. Սասնոյ ապստամբութեան օրերուն։
3.- Տարօնի։
4.- Սիմոն Զաւարեանը։

308

Պատճէններու մատեան No 88, *էջ* 201
(*Փաստ.* 43-25)

1904, *օգ.* 9, *Ժընեւ*

Մինարէթի(1) *ընկերներին,*

Սիրելիք,

Ջաֆար աղայի դէմ արշաւանքը եւ պարսիկ դատաւորի առաջարկը, մեր կարծիքով, շատ բարեպատեհ առիթ է, եթէ միայն Ջաֆար աղան թշնամի է հայերին։ Պէտք է ամէն կերպ օգտուել այդ առիթից։ Հարկաւոր է գրել Մրգաստան եւ Ջրաբերդ(2)*։ Այն ուժերը, որոնք այնքան զոհողութեամբ գործում են ռուսական սահմաններում, կարող էին գալ ձեզ մօտ եւ օգտուել դիւրութիւններից։ Եւ որովհետեւ առաջին անգամն է, որ այդ տեսակ մի ձեռնարկի ենք մասնակցում, անհրաժեշտ է խիստ ընտրութիւն ուժերի. թող* 20 *հոգի լինին, միայն ընտրովի։ Իսկ եթէ կարողացինք տալ մի անհատ, հմուտ զինուորական կարգերի, որ կարողանար ղեկավարել արշաւանքը, դա մեր վարկը շատ կը բարձրացնէր։*

Այս հարցի մասին գրելու ենք եւ Մ[*եծ*] *Ք*[*աղաք*](3)*։*

Էլլէնը(4) *այստեղ չէ։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Առաջիկային մանրամասը նամակ։

1.- Մինարէթ – ծածկանուն Սալմաստի:
2.- Մրգաստան – ծածկանուն Երեւանի. Ջրաբերդ – ծածկանուն Կարսի:
3.- Մեծ քաղաք – ծածկանուն Թիֆլիսի, այլ խօսքով՝ Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի:
4.- Էլլէն – ծածկանուն Քրիստափոր Միքայէլեանի:

309

Պատճէններու մատեան No 88, *էջ* 202
(*Փաստ.* 43-10)

1904 *օգոստ.* 9, *Ժընեւ*

Աղէքսանդրիայի կոմիտէին

Ընկերներ,

Ստացանք ձեր յուլիս 30 *նամակը։ Պ. Մանավեանի մասին դժուարանում ենք մեր համաձայնութիւնը տալու, քանի որ նրա մասին ոչինչ մեզ յայտնի չէ։ Եթէ ձեր կարծիքով նա ազատելուց յետոյ կարող է պէտք գալ կազմակերպական գործերի*

համար, կամ եթէ դուք վստահ էք, որ ժամանակի ընթացքում նա իր պարտքը կը վերադարձնի, ձեր պատասխանատուութեան տակ նպաստ տուէք։ Քանակի մասին եթէ խօսք լինի, անշուշտ ի նկատի կ'ունենաք այն ընկերների վիճակը, որոնք ամբողջովին նուիրուած են եղել գործին, որոնք հիմա տառապած են բանտերում եւ աքսորավայրերում եւ որոնց նպաստի կանոնաւորման խնդիրը անհրաժեշտութիւն է դառել։ Մենք արդէն պատրաստում ենք մի յստակ ցանկ մեր բանտարկեալ եւ աքսորուած ընկերների։

Ներկայիս ուղարկում ենք «Կազմակերպական կանոններից» 2 օրինակ՝ մէկը ձեզ, միւսը Գահիրէի համար։

Աւելորդ է ասել, որ կոմիտէի անդամների շրջանից այդ հրատարակութիւնը չպէտք է դուրս գայ։ Ցանկալի է նոյնպէս, որ երկու կոմիտէները աշխատէին ձեռք բերելու կանոնագրով պահանջուած ցենզը։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

310

Պատճէններու մատեան No 88, *էջ* 203
(*Փաստ.* 43-12)

1904 *օգոստ.* 9, *Ժընեւ*

Պ. Թափառիկին(1),

Սիրելի ընկեր,

Ստացանք ձեր յուլ. 30-*ի նամակը եւ ներփակ պայմանները ձեր համաձայնութեան հնչակեանների հետ։*

Նախ եւ առաջ չենք կարող մեր ցաւը չյայտնել, որ դեռ գործը չսկսուած՝ կազմակերպութիւնից դուրս անհատներ արդէն գիտեն դրա մասին, գիտեն, թէ ով է ընտրուած եւ թէ նոյն իսկ ինչ ճանապարհով պէտք է տեղ հասնի։ Ինչ եղել է, եղել է, բայց սրանից յետոյ պէտք է աշխատել ամէն կերպ հետքերը ջնջել։

Ձեր ասած մարդիկ դեռ մինչեւ այսօր չեն երեւացել։ Կը գան, կը խօսինք։ Համաձայնութիւնը կայացնելիս՝ խնդիրը, մեր կարծիքով, դուք գործնական հողի վրայ չէք դրել։ Այդպիսի խնդիրներից սկսել, դա նշանակում է շարունակ խօսակցութեան, բանակցութեան շրջանում մնալ եւ գործնականի չդիմել։ Մեր նախնական պայմանները թերեւս դժուարացնեն մեր բանակցութիւնները, բայց յուսով ենք, որ կարող կը լինենք համաձայնութեան գալ, եթէ եկողները իսկապէս գործին նախանձախնդիր են։ Ձէք մոռացել, հարկաւ, նրանց նախազգուշացնելու, որ վերջնական համաձայնութիւն պէտք է կատարուի երկրի մէջ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Թափառիկ – ծածկանուն Տոքթ. Կարապետ Փաշայեանի, ներկայացուցիչ Հ. Յ. Դաշնակցութեան Եգիպտոսի մէջ։

311

Պատճէններու մատեան No 88, *էջ* 204

1904 *օգ.* 10

Պ. Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Փորձեցէք այս անգամ անթափանցիկ պարկով[?] *ուղարկել, գուցէ դա յաջողի։ Դրա մասին կը յայտնենք Նաւահանգիստ*(1)։ *Բայց քանի որ* No-*ն արդէն հնացել է, նրա մի մասը ետ վերցրէք եւ փոխարէնը նոր հրատարակութիւններից դրէք։ «Իմէրէտի»*(2) *մարդուն յանձնէք, միայն փոխ մի՛ք տալ, մինչեւ տեղ չհասցնի։ «Անատոլի» մասին գրւած է արդէն, վախենում ենք, որ նամակը ժամանակին տեղ չհասնի, ուշ էի՛ք* [*անընթեռնելի մէկ բառ*]։ *Ի նկատի ունեցէք որ նամակները յաճախ* 10-12 *օրէն տեղ կը հասնին։*

Այսօր ձեզ ուղարկւում է 40 fr. *խնդրենք որոշ գրել, թէ որքան է հարկաւոր ուղարկել, հաշւելով եւ այն* 20 fr. (*ամսական*), *որ պէտք է ձեզ տրւի պահեստի համար։*

Սպասում ենք ձեր նամակին փամփուշտ լեցնելու (*եւ ոչ չինելու*) *գործիքների մասին։*

Ընկերական բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

1.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի:
2.- Իմէրէտ, ինչպէս նաեւ Անատոլի, Մարսէյլի եւ Պաթումի միջեւ երթեւեկող նաւերում անուններն են:

312

Պատճէններու մատեան No 88, *էջ* 205
(*Փաստ.* 43-55)

1904, *օգ.* 10, *Ժընեւ*

«*Վրէժ*» *Կենտր. կոմիտէին*(1),

Ձեզ ուղարկւեց 20 *օրինակ «Կազմակերպական կանոններից»*(2) *տպագրւած միայն կոմիտէների համար։ Դրանից* 3-*ը կը պահէք ձեզ*, 3-*ը կ՚ուղարկէք Շամիր*(3), *իսկ մնացած* 14-*ը՝ Սարուստան*(4)։

Ստացանք ձեր 12/VII *նամակը. հաստատում ենք օգ.* 6-*ի բիւրոյի նամակը։*

Ընկերական բարեւներով՝
ԽՄԲԱԳՐ[*ՈՒԹԻՒՆ*] *«ԴՐՕՇԱԿԻ»*

1.- Ատրպատականի (Վրէժ) Կ. կոմիտէին ուղղուած երկտող:
2.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհ. ժողովի հաստատած կանոններում:
3.- Շամիր կամ Շամ – ծածկանուն Վան-Վասպուրականի:
4.- Սարուստան – ծածկանուն Կովկասի:

313

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 34

Գրուած օգ. 10-ին

ԲԷՅՐՈՒԹ

Նախորդ նամակը հաստատում ենք, 2 *օգ.*(1)։

Այնթապ գտնուող Աւօն, որ մի լաւ ոյժ է, բերել տայ, կամ յարաբերութեան մտնի։

Պահեստի մասին գրուած է։ Ինքս կ'երթամ։

Ուղարկուած է՝ անիշխ[*անական*] *գրքոյկներ եւ գիւղատնտեսական գիրքը։*

Հնչակեանների (*հին*) *կողմից այստեղ են գալու երկու հոգի. մէկը Գրիգոր Վարդանեանը* (*Կեդր*[*ոնի*] *անդամ*), *միւսը Ռուբէն անունով մի գործիչ։ Այդ Ռուբէնը եկած է երեւի այդտեղ եւ տեսնուել Դոկտորի հետ։ Գնացել են Եգիպտոս, համաձայնութիւն գոյացնելու համար, սպասել են քո*(!) *գալուն* (*անունդ էլ գիտեն*!), *որպէս Պատասխանատու մարմնի անդամի եւ իմանալով, որ ուրիշ ճանապարհով տեղ ես հասել, վճռել են գալ այստեղ բանակցութեան համար։ Աստուած գիտէ, թէ այդ բոլորը ինչպէս են իմացել։ Ասենք, զարմանալի կը լինէր, եթէ չիմանային։ Ախ, այս մեր լայնասրտութիւնը*! ... *Թափառիկը*(2) *մեզ ուղարկել է իրենց համաձայնութեան պատճէնը, որ մի տեսակ դաշնագիր է* (*առաջ բերել կէտերը*)։ *Մեր կարծիքը նոյնպէս կը յայտնենք։ Առաջին կէտը անընդունելի է, որովհետեւ աւելորդ է։ Ոչ մի անունի պէտք չկայ, եթէ համաձայնենք լուռ կերպով պատրաստուել, այնպէս որ նոյնիսկ մեր օժանդակ մարմինները չիմանան մեր համաձայնութեան մասին։ Իսկ վերջում՝ գործի ժամանակ կարելի է ասպարէզ գալ երկու մարմինների միացեալ անունով։ Երկրորդ կէտի պահանջը անբնական է, քանի որ ոչ մի գործիչ յայտնի չէ միւս կուսակցութեան։ Դա կարող է որոշել միայն գործնական կեանքը։* III-*ը պարզ հետեւանք է արդէն համերաշխ գործակցութեան։* IV-*ը արհեստական. ով ինչ ունի, թող այն բերի։ Դաշնակցութիւնը անցեալներում նոյնանման դէպքերում դրանով է ղեկավարուել։ Այս կարծիքը կը լինի Փաշայ*[*եանի*] *անհատական կարծիքը։*

1.- Նամակը յայտնապէս ուղղուած է Սիմոն Զաւարեանին, Պէյրութ, ուր կը գտնուէր ան։

2.- Թափառիկ՝ ծածկանունն է Եգիպտոսի կուսակցական պատասխանատու գործիչ Տոքթ. Կարապետ Փաշայեանի։ Քիչ անդին յիշուած համաձայնութեան կէտերը չկան սեւագրութեան մէջ, անոնք պիտի աւելցուէին գաղտնի թանաքով արտագրութեան մէջ։

314

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 38-39

Գրուած օգ. 12(1)

Մ[*ԵԾ*] *Ք*[*ԱՂԱՔ*]

Սալմաստի դատաւորի առաջարկը։

Ամէն տեղից գանգատւում են, որ Դրօշակ չեն ստանում։ Ցանցաւորը դուք էք, որ ժամանակին մարդ չէք ուղարկում ապրանքը ափից(2) *վերցնելու։ Վրէժից մեզ գրում են, որ կանոնաւոր կերպով իրենք ափ են հասցնում։*

Մեզ համար ոչ մի դժւարութիւն չկայ թերթերի թիւը աւելացնել։ Դուք մեզ գրեցէք, թէ ուր որքան պահանջ կայ։

Կանոնագիր ուղարկեցինք 14 *հատ Սարուստանի*(3) *համար։ Ամէն մէկ կոմիտէի մէկ հատ։*

Առաքելը ճանապարհից ուղարկել է մեզ ձեր ապսպրանքների եւ հարցերի մի շարք։ Ահա նրանց պատասխանը։

1) *Կնիքներ ուղարկւած են արդէն եւ դուք ստացել էք։ Գրեցէք, թէ որքան է պակաս։* 2) *Հիմա բրոշիւրներով զբաղւելու ժամանակ չկայ, քիչ ենք. եղածներն էլ յոգնած, հիւանդ։ Ղարիբին*(4) *չտապեցրէք։* 3) *Ուրիշ կուսակցութիւնների ծրագիրներ կ՚ուղարկենք։* 4) *Ժողովի կազմած կանոններ տպագրւած են արդէն, ուղարկւած են։ Վրէժից ձեզ կ՚ուղարկեն* 14 *հատ, ամէն մէկ մարմին մի մի հատ։* 5) *Սասուն դրամ կարելի է ուղարկել. Դելկասէն*(5) *յանձն առաւ եւ արդէն* 30.000 [*ֆրանք*] *փոխադրել ենք։* 6) *Ստէորոտիպի*(6) *մասին կը մտածենք.* 7) *Պայթուցիկ նոր նիւթ կայ, յարմար տեղափոխութեան համար եւ դիւրութեամբ պատրաստւող։ Դրա մասին՝ յետոյ, երբ մեզ կը յայտնեն։* 8) *Թորգոմի*(7) *դժբախտ վախճանի մանրամասնութիւնը եւ դիակների լուսանկարը ստացանք։ Կը գրենք թերթերին։* 9) *Տաքտիկի մասին արդէն գրւած է նախընթաց նամակում. ինչպէս նաեւ Ոսկանապատ։ Հարկաւոր է մէկ, բայց այնպիսի հարւած, որ ստիպւած լինին խօսել։* Բիկով-*ը*(8) *անպատի՞ժ պէտք է մնայ. ի՞նչ են մտածում։ Քաղաքական աշխարհում մի առանձին բան չկայ։*

Այս րոպէիս ստացանք համառ[*օտ*] *տեղեկութիւն Ալաշկերտի դէպքերին Բարսեղեանի մի-երկու տողով։ Գանգատւում էք, որ նամակ չենք գրում։ Աւելի քան զարմանալի է։ Ձեզ գրւած է՝ յունիս* 30 (*Լօռ. հասցէով*), *յուլիս* 3 (*տիկ. Թաւրիզեանի ձեռքով*), *յուլ.* 14-*ին* (*Լօռ. հասցէով*), *մէկ նամակ Ղարդուշի*[?] *ձեռքով, օգ.* 3 (*բանկի*)։ *Ձենք հաշւում Ոսկ*[*անապատ*] *գրւածները, որ խնդրել ենք ձեզ եւս հասցնել։ Դուք է՞ք գանգատւում, որ ձեզ չհայհոյենք ձեր լռութեան մասին, կամ Բարսեղեանի գունագեղների*(9)։

Ջրաբերդ հաղորդել. 1) *որ իրենց ուղարկած լուսանկարի (դիակների) ծրարում պակաս էին երկու կազակների նամակները։*

2) *Մեր նամակը ճիշտ ժամանակին են ստացել։ Մեր դրած թւականը* (*յուլ.* 19) *եւրոպական է*(10)։ *Դարձեալ կրկնում ենք, որ իրենց նամակները գաղտնի թանաքով գրեն։*

1.- Թուականին տակ փակագծով կայ անունը Եւանգուլ[եան]ի, որ, ըստ երեւոյթին, եղած է նամակը Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին տանողը կամ ուղարկողը. եւ կամ Թիֆլիսի մէջ հասցէ մը:

2.- Ափ-ը (բնագրին մէջ ոչ գլխագիր) կուսակցական ծածկանուն-կեղծանուն է: այդպէս կը կոչուէր Արաքսի ափէն ոչ հեռու, պարսկական սահմանէն ներս գտնուող Ս. Ստեփանոս (Նախավկայ) վանքը՝ Դարաշամբ վանքապատկան գիւղով: Ռուս-պարսկական սահմանագլուխի այս կէտը անցքերէն մէկն էր դէպի Անդրկովկաս եւ հակառակը՝ կուսակցական հրատարակութիւններ, զէնք եւայլն փոխադրելու համար: Վրէժը՝ Ատրպատականն է:

3.- Սարուստան – կուս. ծածկանուն ամբողջ Ռուսիոյ եւ Կովկասը ներառեալ անշուշտ: Յայտնենք, որ այդ տարիներուն Կովկասի մէջ Դաշնակցութիւնը ունէր 10 Կեդր. կոմիտէութիւն, իսկ Ռուսիոյ մնացեալ տարածքին երկու՝ Մոսկուայի եւ Ս. Փեթերսպուրկի կոմիտէութիւն, առանց հաշուելու ուսանողական խումբերը՝ զանազան քաղաքներու մէջ:

4.- Աւետիս Ահարոնեանին:

5.- Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը:

6.- Տպագրական միաձոյլ կաղապար, քլիշէ հանելու եւ բազմաթիւ օրինակներով տպելու համար:

7.- Թորգոմը ծածկանունն է Թումեանց Թումանի:

8.- Ռուսատառ: Բիկովը Օլթիի ռուս սահմանապահ զօրքի հրամանատարն էր, որուն հրահանգով կոտորուած են Թորգոմի խումբին մարտիկները:

9.- Ակնարկութիւն Բարսեղեանի (բժ. Յովսէփ Տէր Դաւթեանի) ձեռագրին անընթեռնելիութեան:

10- Այսինքն նոր տոմարով: Յայտնենք որ նոր (եւրոպական) եւ հին (Արեւելքի մէջ գործածուող) տոմարներուն մէջ 13 օրուան տարբերութիւն կար: Նոր տոմարով Օգոստոս 15-ը, օրինակ, հին տոմարով կը համապատասխանէր Օգոստոս 2-ին:

315

Պատճէններու մատեան No 88, *էջ* 206

1904 *օգոստ.* 14

Ֆիլիպէի կոմիտէին,

Սիրելի ընկերներ,

Քղիից ստացուած մի թղթակցութեան մէջ, որ տպուած է «Դրօշակի» No 6-*ում, մի քանի մատնիչներ են յիշուած, որոնց մէջ եւ «Փօլիսաճի Յակոբ աղա» անունով մէկը։ Դրա դէմ բողոքում է Ամերիկայի մեր կոմիտէներից մէկը, որի ասելով վերոյիշեալ աղան* 13 *տարի շարունակ Պոլիս է եղել ապրելիս, որ այդ ժամանակամիջոցում Քղի ոտք չի դրել եւ հէնց Պոլիս էլ մեռել է սրանից* 7 *ամիս առաջ։*

Այս առթիւ խնդրում ենք՝

1) *Չի կարող արդեօք կոմիտէդ, այդտեղ բնակւող քղեցիներին հարց ու փորձ անելով, պարզել մասամբ այս խնդիրը եւ*

2) *Չէք կարող արդեօք մէկն ու մէկի միջոցով անմիջապէս նամակը հասցնել Քղի։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

316

Պատճէններու մատեան No 88, *էջ* 207

1904 *օգ*. 14

Հ.Յ.Դ. Տիթրոյիթի կոմիտէին,

Յարգելի ընկերներ,

Ստացանք ձեր 28 *յուլ. նամակը։*
Ձեր տուած տեղեկութիւնը Սերկեւիլ գիւղացի Յակովբ աղայի մասին մենք կը յայտնենք Քղի եւ բացատրութիւն պահանջելով, հետեւանքը կը հաղորդենք ձեզ։ Խնդրենք այս մասին յայտնել վերոյիշեալի որդուն։ Գուցէ անուններու խառնաշփոթութիւն կայ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Խնդրենք յայտնել, թէ Յակովբ աղան Պոլիս ինչ գործի էր եւ ուր կը կենար։

Ն[*ՈՅՆ*]

317

Պատճէններու մատեան No 88, *էջ* 208

1904 *օգ*. 14

Հ.Յ.Դ. Պալքանեան Կ. կոմիտէին,

Ստացանք ձեր 28 *յուլ. նամակը։*
Ոսկանապատի(1) *վիճակախաղի մասին մեզ եւս դեռ ոչինչ յայտնի չէ։ Աչքի առաջ ունենալով ներկայ խառնակ դրութիւնը Կովկասում, պէտք է սպասել, որ աշնանից շուտ այդ վիճակախաղը չի կայանալ։*
Խնդրենք իմացնել պ. Վարդին(2), *որ Պրայիլա հանդիպի եւ այնտեղ մերոնց միջեւ ծագած վէճերը քննի։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի:
2.- Վարդ – բուն անունով Վարդ-Պատրիկեան Յակոբ: Յիշուած Պրայիլան Ռումանիոյ քաղաքներէն է:

318

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 41

օգ. 17

ԲԱԹՈՒՄ

Ուղարկւած թերթերի մասին (No 3 *եւ* 7) (1)։

1.- Թիւ 3-ը եւ 7-ը կը վերաբերին հաւանաբար «Դրօշակ»ի առաքուած համարներուն (1904), որոնց բովանդակութեան մասին պիտի գրուէր գաղտնի թանաքով շարադրուելիք նամակին մէջ:

319

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 43-45

օգոստ. 21

ՄՈՒՇ

Կասկածում էինք, թէ մեր նամակները տեղ չեն հասնում. այդ էր պատճառը, որ յուլիս 10/23 *ից ի վեր նամակ չենք գրել ձեզ։ Ձեր վերջին (յուլիս* 13/26 *նամակը) մեզ ապահովացրեց։ Ձեր բոլոր նամակները ստացւում են, միամիտ եղէք. միայն մենք էլ ձեզ ենք ուզում նկատել, որ զգուշութեամբ գրէք — նախավերջին նամակը (յուլ.* 7) *առանց բանալու կարելի էր կարդալ*(1)։ *Լուծւածքի մէջ քիչ քանակութեամբ ալկօօլ լցրէք։*

Ձեր ուղարկած զոհերի ցանկը թարգմանեցինք եւ ուզում էինք նախարարներին ուղարկել, բայց պահեցինք, որովհետեւ տեսանք, որ կարեւորութիւն չեն տալու։ Ձեր տուած տեղեկութիւնների հիման վրայ Կովկասի մեր ընկերները հեռագրել են անգլօ-հայկական մասնախումբի նախագահ Ստէֆանսօնին, թէ 7,000 *հոգի է կոտորւել։ Ստէֆանսօնը անմիջապէս այդ լուրը հաղորդել է նախարարին, որը պատասխանել է քաղաքավարի կերպով, թէ այդ լուրի հաստատութիւնը ինքը չունի, այսինքն թէ՝ լուրը սխալ է։ Մեզ եւս ձեր հաւաքած թիւերը կասկածելի են թւում։ Չէ՞ որ ինքներդ էք խոստովանում, որ դեռ կան ընտանիքներ, որոնք իրենց կորուստի քանակը չգիտեն։ Մեր վարկը պահելու համար անհրաժեշտ են ճիշտ թւեր։ Ձեր նամակներից մի տեղեկագիր կազ[մ]եցինք եւ ուղարկեցինք կաթ[ողիկոսի] պատւիրակներին՝ որպէսզի տեսակցութիւնների ժամանակ իրենց կողմից չեշտեն մի քանի կէտերի վրայ, օրինակ Մշոյ շրջանում մշտական հիւպատոսներ պահելու անհրաժեշտութեան վրայ։*

Դելկասէին յանձնել ենք Quillard-*ի*(2) *միջոցով նորերս մի խոշոր գումար*, 30,000 fr. *Սասնոյ արկածեալներին բաշխել տալու համար։ Դելկասէն տատանումից յետոյ յանձն է առել այդ բանը, բայց ինչպէս երեւում է, ուղարկելը դեռ ուշանալու է։ Այ-*

սօր Quillard-*ից ստացանք մի նամակ, որով նա յայտնում է, թէ անմիջապէս իմաց կ՚անի ուղարկուելու օրը։ Յոյս կայ եւ ուրիշ գումարների։ Միայն ինչպէ՞ս անել, որ ձեր ձեռքը մի յատուկ գումար ընկնի։ Պոլիս փոխադրած մի գումար վերադարձընում են, դժուարանում են այլեւս ձեզ ուղարկել։*

Կաթողիկոսի պատուիրակութեան մասին գրել էինք անցեալ անգամ։ Պարիզում լաւ ընդունելութիւն է գտել. Լոնդոնում ընդունուել է Լանստաունի(3) *կողմից, սպասում են թագաւորի վերադարձին։ Այնուհետեւ անցնելու են ուրիշ երկիրներ։*

Ձեր ներկայացրած պահանջները տպագրում ենք Դրօշակում։ No 8. *կ՚ուղարկենք եւ այլ թերթերի։ Երրորդ ստորագրութիւնը փոխեցինք։ Դեսպանների նոր ծրագրի մասին նոր բան չկայ, որ հաղորդենք. լռեցին, մի ինչ որ ոյժ խանգարեց։ Դրութիւնը անորոշ է։ Ամբողջի ուշադրութիւնը կլանուած է պատերազմով։ Գուցէ կամաց կամաց պարզուի խնդիրը։ Մեր վախը Ռուսաստանի կողմից է։*

Գրեցէք, թէ իսկապէս որ կէտերում են զօրանոց կառուցանում։ Ինչպէս երեւում է, դժուար պիտի լինի կառուցման առաջն առնել։ Կառա[*վարութիւնը*] *կարող է առարկել, թէ դա անում է ինքնապաշտպանութեան տեսակէտից։ Գուցէ այնպիսի տեղեր են, որ հնարաւոր լինի ապագայում ձեռք անցնել, լաւ դիրքեր ու պաշար ձեռք բերել։ Յամենայն դէպս դիմումներ անւում են։*

Հարցնում էք, թէ ինչ ծրագրով պէտք է գործել հիմա։

Անծանօթ լինելով տեղական արդի պայմաններին, դժուարանում ենք որոշ կարծիք յայտնել։ Յամենայն դէպս, մեր կարծիքով, խմբերի բոլոր գործերը պէտք է ունենան ոչ թէ յարձակողական գոյն, այլ պաշտպանողական։ Մի հարց. չի՞ կարելի արդեօք անհատական տեռորի ձեռնարկել, փաշաների վրայ կամ այլ պատասխանատու անձանց։ Վերջին տարին քանի՛ քանի՛ կարեւոր ուժեր զոհ գնացին, իսկ մի փաշա չսպանուեց։ Երեւի ձեզ արդէն գրած կը լինեն Թորգոմի եւ Որսորդի խմբերի ցաւալի վախճանի մասին Օլթիի շրջանում, ինչպէս նաեւ Ալաշկերտ արշաւած խմբերի մասին։

Նամակը զատ պահարանի մէջ դնել. վրան գրել Մանուկին յանձնելի. դա դնել միւս պահարանի մէջ, որի վրայ միայն Ֆրանսերէն գրուի. ոչ մի խօսք հայերէն։

Տեղեկութիւններ Վահանի, Հրայրի գործունէութեան, դերի մասին։ Տեղեկ[*ութիւններ*] *ընդհանրապէս նահատակ ընկերների, ժողովրդի միջից աչքի ընկնող քաջերի, հերոսական դէպքերի մասին եւայլն...*

Գրուեցաւ օգ. 21

1.- Այսինքն՝ գաղտնի թանաքով գրուած նամակը առանց «լուծուածք» գործածելու՝ կը կարդացուէր:

2.- Դելկասէն Ֆրանսայի արտաքին գործոց նախարարն էր, Քիյառը՝ Pro-Armenia-ի խմբագրապետը (Փարիզ):

3.- Անգլիոյ արտաքին գործոց նախարարը:

320

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 46-47

օգ. 24

ՊԷՅՐՈՒԹ(1)

Հաստատում եմ օգ. 10 *եւ* 12 *նամակները։ Անցեալ նամակներից մէկում գրել էի, որ Վարդանը*(2) *սպասում է քո նամակին, որպէսզի ճանապարհ ընկնի։ Այսօր գնացողի հետ ապսպրեցի, թէ թող վեր կենայ գնայ. նամակը գրուած է այստեղ եւայլն։ Հայկն էլ եկել է, ուրեմն գործը քիչ քիչ լաւանալու է։*

Ուղարկած հաշիւներդ ստացանք։ Ոչինչ չես գրել փողի խնդրի մասին. յուսով ենք լաւ կարգադրուած լինի։

Ամերիկայից հարց են տալիս. կազմակերպւա՞ծ է արդեօք Լեռ[*նավայրի*] *մարմինը, ուզում են յարաբերութեան մտնել ձեզ հետ։ Մենք այդ հարցի մասին մի քանի բան գրեցինք, չեշտելով այն հանգամանքի վրայ, որ դժւար է երկրի մարմնի համար կապ պահպանել դրսի մի այնպիսի մարմնի հետ, ուր գաղտնապահութիւն ասուած բանը չկայ, ուր կուսակցական վիճաբանութիւնների շնորհիւ ամէն ինչ համարեա հրապարակի վրայ է։ Խոստացանք նրանց փափաքը յայտնել ձեզ, ինչ որ կատարում ենք։ Ամենամեծ գաղտնապահութիւնը պէտք է գործադրել Լեռ*[*նավայրի*] *վերաբերմամբ, որովհետեւ ոչ մի տեղ այնքան ներքին թշնամիներ չկան որքան այնտեղ։ Նրանց մի նամակը, կամ յանուն ժողովրդեան շահերուն արած մի յայտարարութիւնը, բացած մի խնդիրը բաւական է տակն ու վրայ անելու ամբողջ գործը։*

Մարից (3) *դեռ լուր չունենք։ Զգիտենք, ինչ եղաւ։*

Նոր ընդհարումներ տեղի են ունեցել Մշոյ դաշտում։ Կռիւների ժամանակ մերոնք ջարդել են, բայց ինչ արած, որ դրա փոխանակ թալանւում են անզէն գիւղեր։ Լօրիսը (4) *դեռ Լոնդոն է։ Քո արած նկատողութիւնները ի զուր են. զարմանալի մարդ է եղել։ Մի քանի բաներ էինք գրել, նեղացել է։ Դէհ ինչ արած, նեղանայ, չնեղանայ, պէտք է գրենք, ինչ պէտք է անենք։ Գլխաւոր պակասութիւնը նրանումն է, որ ուզում է մենակ գործել։ Ձերազի մասին գրել էինք, ասել էինք, թէ կաթողիկոսի կամքն է, որ նրան էլ առնելով յարգած կը լինենք կաթողիկոսի կամքը եւայլն... Ոչ մի ծպտուն չհանեց։ Եթէ հնար լինի, եպիսկոպոսներին էլ մի կողմը կը թողնի։ Հիմա պատւիրակները Լոնդոն են, սպասում են թագաւորի վերադարձին, բայց յոյս չունեն ընդունելու։*

Անդրէեւին, Բոգոսլովսկուն սպանողները մերոնք են. կատարւել են եւ այլ տեղորներ Ղարս, Նախիջեւան։ Ոչ ոք չի բռնուած։

30.000 fr. *յանձնուած է Դելկասէին, որը յանձն առաւ բաժանել տալ Սասունի եւ Մշոյ կարօտեալներին*

Գրւեցաւ օգ. 24*-ին*

1.- Գրութեան աւարտին սեւ թանձր մատիտով եւ Ռոստոմի ձեռքով՝ «գրւեցաւ օգ. 24-ին»։ Նամակը ուղղուած է Ս. Զաւարեանին, որ կը գտնուէր Լեռնավայր-Կիլիկիա:

2.- Խանասորի Վարդանը (Մեհրաբեան Սարգիս), որ Զաւարեանի հետ անդամ էր Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու մարմնին (1869-1931):

3.- Մար՝ Տէր Մարտիրոսեան Միքայէլ, Կիլիկիոյ հին ու նուիրեալ գործիչներէն, որ 1899-էն ի վեր բանտարկուած կը մնար Մարաշ, ուրկէ 1904-ի Հոկտեմբերին միայն պիտի ազատուէր եւ անցնէր Եգիպտոս:

4.- Յովհ. Լոռու-Մելիքեան, անդամ Արեւմտեան բիւրոյի եւ պատասխանատու Եւրոպայի մէջ հայ դատի աշխատանքներուն:

321

Պատճէններու մատեան No 88, *էջ* 217
(*Փաստ.* 43-13)

1904, *օգ.* 24, *Ժընեւ*

Պ. Թափառիկին(1),

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր 17 *օգ. նամակը։*

Հնչակեանների վերաբերմամբ ձեր էական սխալը կայացել է նրանում, որ հակառակ ընդհ. ժողովի որոշման, նրանց հետ բանակցել էք իբրեւ մի ամբողջական մարմնի, մի կուսակցութեան անդամների հետ եւ ոչ իբրեւ սոսկ յեղափոխական անհատների կամ խմբերի հետ. դուք խօսել էք յանուն երկու կուսակցութիւնների՝ Դաշնակցութեան եւ Հնչակեան կուսակցութեան, մոռանալով, որ ընդհ. ժողովը չի ընդունել հնչակեան կուսակցութիւնն իբր մի ամբողջական մարմին։ Դուք արել էք եւ մի փոքրիկ անզգուշութիւն, յայտնելով նրանց, թէ սպասում էք այդտեղ պատասխանատու ընկերոջ գալուն։ Ինչո՞ւ այդ եւս իմանային։ Առհասարակ Լեռնավայրի(2) *վերաբերմամբ մենք պարտաւոր ենք տասնապատիկ աւելի զգոյշ լինել, որովհետեւ ոչ մի տեղ չենք կարող ընդհարուել այնքան <u>նեբքին</u> թշնամիների հետ, որքան այդ վայրում։*

Ուրախ ենք Հայկի եւ Շատիկի(3) *անցնելուն։*

Հաշիւների տպագրութիւնը կարող է ուշանալ, որովհետեւ շատ նիւթ կայ հաւաքւած։

Կարելի՞ է արդեօք ուսուցչի տեղ գտնել Եգիպտոսում մեր ընկեր Կ. Պիոնեանի համար, որ ուսուցիչ է Բուլղարիա եւ անդամ Պալք. կետր. կոմիտէի։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Թափառիկ – ծածկանուն տոքթ. Կարապետ Փաշայեանի, Հ.Յ.Դ. ներկայացուցիչ Եգիպտոսի մէջ:

2.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ, ինչպէս նաեւ Սուրիոյ եւ Լիբանանի Հ.Յ.Դ. կազմակերպութեան:

3.- Խօսքը կը վերաբերի Թիրեաքեան Հայկի (Հրաչ) եւ Շատիկեան Պօղոսի:

322

Պատճէններու մատեան No 88, *էջ* 218-219
(*Փաստ.* 43-56)

1904, *օգ.* 14/27, *Ժընեւ*

«*Վրէժ*» *Կենտր. կոմիտէին*(1),

Ստացել ենք խմբագրութեան ու բիւրոյին ուղղած ձեր նամակները՝ յուլիս 10, 15, 17, 22 *եւ* 29. *հաստատում ենք մեր օգ.* 6 *եւ* 11-*ի նամակները։*

Ինչպէս արդէն գուշակել էինք, ընկեր Սարգիսը(2) *այստեղ չեկաւ. ճանապարհը չեղելով՝ ուրիշ կողմ գնաց, եւ մենք մնացինք դարձեալ առանց մանրամասը տեղեկութիւնների կռւի մասին, եթէ չհաշւենք Սալմաստից ուղարկած մի քանի կցկտուր տեղեկութիւնները։ Խնդրում ենք ուրիշ առիթներով աւելի ճշտապահ լինել։ Դուք ձերը ուղարկեցէք, աւելորդ տեղեկութիւնը խօ չի վնասել։*

Փորձերը ցոյց տուին, որ փամփուշտների քանակը պէտք է աւելացնել. դրան ոյժ տուէք։

Ուղարկւած հեռագիրները նոյնութեամբ ստացել ենք։

Իւչքիլիսէի կոտորածի հեռագիրը հրատարակութեան չտուինք, որովհետեւ չգիտէինք, հաւատալ ճշտութեան, թէ ոչ։ Ենթադրում էինք, որ դարձեալ մեր խմբի ընդհարումն է այդ ձեւով նկարագրւել։ Զէ՞ր կարելի երկու խօսք աւելացնել հնչակեանների արշաւանքի մասին, այն ժամանակ մեզ ամէն ինչ հասկանալի կը դառնար։ Մենք էլ ստիպւած էինք ենթադրութիւններ անել. բարեբախտաբար մեր հրատարակութեան ձեւը համապատասխան դուրս եկաւ ճշմարտութեան։ Որպէսզի ապագայում զանազան թիւրիմացութիւններ տեղի չունենան, սովորութիւն դարձրէք մի երկու տող աւելացնելու յատկապէս մեզ համար։ Մենք պէտք է իմանանք ճշմարտութիւնը, որպէս զի ըստ այնմ հրատարակենք ստացւած լուրերը։

Ճիշտ է, մենք սկզբում խորհուրդ էինք տալիս հեռագիրներ յաճախ ուղարկել, տուել էինք հասցէներ, բայց հիմա այս ու այն կողմից այնքան են թափւում, որ ստիպւած ենք խնդրել, որ զսպեն հեռագիրներ խփելու եռանդը։ Ասէք խնդրեմ ի՞նչ իմաստ ունի այն ահագին շարադրութեան հեռագրելը, որ ձեզ ուղարկած են եղել Ոսկանապատից(3). *եթէ մի շաբաթ ուշ իմացւի, ի՞նչ մի առանձին վնաս դրանից։ Շատ լաւ էք արել, որ չէք ուղարկել, զուր ծախս կը լինէր։ Սրա մասին մենք յայտնել ենք Ոսկ*[*անապատ*]։ *Ուղարկեցէք միայն կարեւոր հեռագիրները։*

Այսօր կը գնենք ձեր պահանջած ծրարները, որ միշտ մոռանում ենք։

Թերթ այս անգամ աւել ենք ուղարկում։ Աստարա աւելացրել ենք 120, *Արտ*[*աբիլ*] 100, *Թաւրիզ* 100, *Խոյ* 100։ *Ամբողջ քանակը մի անգամից չենք ուղարկել, այլ մաս մաս։ Դաշտ ուղարկելու ենք իրենց գրածին համաձայն՝* 60 *հատ։*

Վերջին նամակում դուք երկարօրէն կանգ էք առնում դարձեալ հեռագիրների խնդրի վրայ։ Ի նկատի ունեցէք, Մրգաստան(4) *եւ ուրիշ տեղեր էլ յայտնեցէք, որ մեր ստացած լուրերից մենք ամէն անգամ հեռագիրներ ենք կազմում եւ ուղարկում կարեւոր թերթերին։ Ուրեմն թող միայն անմիջապէս եւ ըստ կարելոյն մանրամասը մեզ փոստով տեղեկութիւններ չտապեն հասցնել։ Հեռագիր ուղարկեցէք այդտեղից միայն կարեւոր դէպքերում։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ի՞նչն է պատճառը, որ Աստարա-Արտ[աբիլ] ուղարկուածներից միայն 350-ն է Ոսկանապ[ատ] հասնում։

Ն[ՈՅՆ]

1.- Վրէժ – ծածկանուն Ատրպատականի եւ մասնաւորաբար Թաւրիզ քաղաքի:
2.- Խօսքը կը վերաբերի Բարսեղեան Սարգիսի, որուն իսկական անունն էր Օտապաշեան Պօղոս:
3.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի:
4.- Մրգաստան – ծածկանուն Երեւանի:

323

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, էջ 48-51

Գրուեցաւ օգ. 27

Մ[ԵԾ] [ԲԱՂԱԲ](1)

Այսօր ստացանք Բարսեղեանի նամակը, որի վրայ 4-5 ժամ տանջուելուց յետոյ, հազիւ հազ կարողացանք միայն մի քանի բան հասկանալ 1) որ Բոլղարիա անցած ուսանողը պարապ է նստած եւ 2) որ Բժիշկը մեզ մօտ է գալիս։ Թախանձագին խնդրում ենք նամակագրութիւնը յանձնէք մի այնպիսի մէկին, որի ձեռքը կարելի լինի դիւրութեամբ կարդալ։ Բարսեղեանի հասարակ թանաքով գրածները անկարելի է կարդալ, ուր մնաց գաղտնի թանաքով գրածը։ Աւելի լաւ չէր եւ Ռուբէնի(2) նամակը, Ոսկանապատից գրուած։ Նամակ խօ չէր, ասես մօտ 500 տարուայ տապանագիր լինէր։ Թուղթն էլ պէտք է փոխել. դա քիչ թէ [շատ] ծծող պէտք է լինի, որպէսզի քսելիս գրուածը չսրբուի, տեղը մաքուր մնայ։ Ուզո՞ւմ էք, եկողի հետ թուղթ ուղարկենք։

Ռոստոմը բոլորովին մեղք չունի, որ ուսանողը պարապ է նստում։ Նրան յանձնարարական էր տուած, ու նա գնացել է Վառնա, ուր այդ ժամանակ կային Մարտիրոսն(3) ու միւսները։ Զարմանալի է, որ նրանք ոչինչ չեն արել։ Էգուց կը կարդաղրւի այդ խնդիրը։

Անցեալ նամակներից մէկում խնդրել էինք յայտնել, ստացած է արդեօ՞ք Կոնստանցայից եկած չէքը... Մինչեւ ստացուելու մասին լուր չտաք, ախր չենք կարող ցանկը տպագրութեան յանձնել։

Լեւոնը (Գ.)(3) առաջարկում է, որ իրեն թոյլ տրւի օսմանեան դեսպաններից մէկին գլորել։ Նրա առաջարկին մենք համամիտ չենք։ Եթէ նա որոշել է անհատապէս մի գործ կատարել, իրեն զոհելով, կարծում ենք, որ կարելի է աւելի նպատակայարմար ձեռնարկներ առաջարկել։ Եթէ մի յարմար գործ ի նկատի ունէք, որ նա կարողանայ մենակ կատարել, կամ առառաւելն մի օգնականով, գրեցէք, որպէսզի առաջարկենք իրեն։ Նա սպառնում է վիշապցիների(4) հետ չհաշտուել։

Ձեր լուրջ ուշադրութիւնն ենք դարձնում հետեւեալ հարցի վրայ։ Ղարիբը(6) չի գալիս. չգիտենք, չի գալու ընաւ, թէ յետաձգում է։ Յոնանին(7) միտք կար այստեղ պահել, բայց չեղաւ. Էլլէնի(8) գլխաւոր առարկութիւնը այն է, որ բիւրոյի միւս երկու անդամները, Վիշապի եւ Լեռնավայրի կազմից, պէտք է լինեն տաճկահայեր։ Եւ որովհետեւ նա Վիշապ էլ չի կարող մտնել Օրտանսի(5) հետ, ինչպէս ենթադրում

էին, վերջինիս հիւանդութեան պատճառով, մնացել է երկուսի արանքում։ Կարելի էր նրան առաջարկել Ղարիբի փոխարէն։ Բայց սրա համար պէտք է սպասել Ղարիբի վերջնական որոշման։ Քանի անգամ հարցրել ենք եւ խնդրել, որ ինքը գրի, թէ ինչ դժւարութիւններ կան իր գալուն։ Բացի դրանից Ռոստոմն էլ գուցէ ստիպւած լինի հեռանալ ընտանիքի պատճառով, որը ամառը վերջանալուց հաւաքւելու մի տեղ չունի։ Այսպէս թէ այնպէս Ղարիբի վերջնական պատասխանը անհրաժեշտ է։

Մենք ձեզ արդէն հեռագրել էինք, թէ Դելկասէն ընդունել է առաջարկը։ 30,000*-ը փոխադրել ենք եւ սպասում ենք փոխարէնը ձեզանից։ Հարուստներից մի բան չառա՞ք։ Ի միջի այլոց ի՞նչ արդիւնք ունեցան ձեր դիմումները։ Այստեղ միայն մէկն է երեւացել, որ Փ-ի*(9) *կողմից առաջարկում է* 10,000 fr.! *Ի՞նչ պէտք է լինի սրա վերջը։ Ցուցական մարմնի գրելով Նաւահանգստում դարձեալ չարունակում են հին ձեւով ժողովարարութիւն*(10) *եւ մեծ գումար են հաւաքել։ Պահանջում են այդ գործի քննութիւնը։*

Սպասում ենք Ալաշկերտի դէպքերի մանրամասնութեան, ինչպէս նաեւ Դումանի կուի։

Օլթիի դիակների պատկերները կը ցրենք մեծ քանակութեամբ բոլոր երկիրներում ֆրանսերէն տեքստով(11)*։*

Ստացանք այլ եւ այլ ճանապարհներով ուղարկած բոլոր թղթերը եւ հաշիւները։

Բժիշկը(12) *ի՞նչ նպատակով է գալիս այս կողմերը. պատւիրակութեան համար անյարմար է։ Երկու բժիշկներ, երկուսն էլ հայերէն չիմացող — չափազանց անյարմար կը լինի։*

Այս անգամ Դրօշակ 500 *օր*[*ինակ*] *աւելի կ՚ուղարկենք։ Անհրաժեշտ է կանոնաւորել Վրէժի գիծը։ Այնտեղից գանգատւում են, որ Ոսկանապատից եկող տանող չի լինում*(13)*։*

1.- «Բանկ»ը Թիֆլիսի մէկ դրամատունն է, որուն հասցէն կ՚օգտագործուէր նամակագրութեան համար։ Գրութեան վերեւ նշում կայ «ստացուած»։

2.- Խօսքը հաւանաբար կը վերաբերի Պաքուի (Ոսկանապատ) Կեղր. կոմիտէի անդամ Աբրահամ Գիւլխանդանեանի, որուն ծածկանուններէն մէկը Ռուբէն էր։

3.- Մարտիրոս Մարգարեան – Ցուցական մարմնի յայտնի անդամներէն Սաֆոն է։

4.- Լեւոնները բազմաթիւ են. այս մէկը, անունին կողքին փակագծի մէջ Գ. տառէն հետեւցնելով, պէտք է ըլլայ Ցուցական մարմնի անդամակցութենէն դադրած եւ Կովկաս անցած Գիւլումեան Լեւոնը։

5.- Այսինքն Պոլսոյ մէջ (Վիշապ) գործող Ցուցական մարմնի այն անդամներուն հետ, որոնք կը ծրագրէին Սուլթան Համիտի մահափորձը։

6.- Ղարիբը Ա. Ահարոնեանն է։

7.- Յոնան Դաւթեան, Դաշնակցութեան առաջին սերունդի գաղափարական անձնաւորութիւններէն, որ եղած է Բիւրոյի անդամ եւ «Դրօշակ»ի խմբագիր։ Օրտանսը՝ Յոնանի զուգեղերուհի կինն է։

8.- Քրիստափոր Միքայէլեանի։ Վիշապը Պոլիսն է, Լեռնավայրը՝ Կիլիկիան։

9.- Փ-ը հաւանաբար «Փոքորիկ»ն է,– բռնի հանգանակութեան ձեռնարկ, որ միայն Ցուցական մարմնին էր արտօնուած։

10.- Ժողովարարութիւն կը նշանակէր հանգանակութիւն։ Նաւահանգիստը Պաքումն է։

11.- Ծանօթ է, որ Սասնոյ օգնութեան փութացող Թուման Թումեանցի (Թորգոմ) Ռուսկան խումբը կոտորուած էր Օլթիի մօտ ռուս սահմանապահ զօրքին կողմէ։ Այս վերջինին հրամանատարը՝ գնդապետ Բիկով՝ զոհուած ֆետայիներու դիակները հաւաքել տալով՝ նկարուած էր անոնց հետ։ Ակնարկութիւնը եւրոպական մամուլին մէջ այս լուսանկարին հրատարակել տալուն կը վերաբերի։Արդարեւ, «Դրօշակ»ի խմբագրութիւնը բազմացնելով այդ լուսանկարները հազարաւոր օրինակներով ուղարկած էր եւրոպական եւ ամերիկեան մամուլին։

12.- Հաւանաբար խօսքը կը վերաբերի բժ. Յակոբ Զաւրիեւի (1865-1920)։

13.- Վրէժը Ատրպատականն է, իսկ Ոսկանապատը՝ Բագուն։

324

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 51-53

օգ. 28-ին
Գրուած Տէր-Թոմ. ձեռքով(1)

ԹԻՖԼԻԶ

Մ[եծ] Քաղաքի եւ Ոսկան[ապատի] նամակները լաւ չեն գրւում։

Հաշիւների կանոնաւորում։ Մեր պարտքերը թող վճարեն. էգուց էլ որ պահանջներ են անելու, որտեղի՞ց գոհացում տանք։ Մեր հաշւով դուք պէտք է փոխադրէք դարձեալ մօտաւորապէս 20 հազ. ռուբլի։ Որովհետեւ հիմա Վասպուրականի պահանջները սաստկանալու են, փամփուշտների մեծ քանակութիւն պէտք կը լինի փոխադրել, իսկ Ընդհ. ժողովը շատ սահմանափակ գումար է յատկացրել այդ շրջանին. պէտք է մի ճար մտածել։ Որքան մեզ յայտնի է, Նաւահանգիստը իր նախահաշուից շատ աւել գումար պէտք է ունենայ իր տրամադրութեան տակ. այդ աւելորդը կարելի է յատկացնել Վասպուրականի չնախատեսած պահանջներին։ Առաւելապէս պէտք է զոռ տալ փամփուշտների փոխադրութեան։ Հիմա երկրի մէջ բաւականաչափ հրացաններ կան, անպէտք ընկած, փամփուշտների պակասութեան չնորհիւ։

Որքան յիմար պիտի լինէր տղաների դրութիւնը Մշոյ դաշտում, եթէ Շամից փամփուշտը չհասնէր։ Ինչո՞ւ մի քանի տեղ պահեստներ չէին պատրաստուած...

Այսօր թերթերում կարդացինք հիւպատոսական տեղեկութիւններ Պոլսից, որ Մշոյ դաշտում եւ Բիթլիսում տեղի են ունեցել 2 մեծ ընդհարումներ։ Տաճիկների կողմից կայ 1 սպանուած 6 վիրաւոր։ Մերոնք առանց կորուստ կրելու աներեւութացել են (եղել են 40 հոգի)։

Մուշ կը փորձենք դրամ հասցնել ուղղակի մերոնց ձեռքը՝ երկու ճանապարհով, որ ցոյց է տուել Տատրակը(2)։

Յայտնեցէք Զրաբերդ եւ ուրիշ տեղեր, որ արտասահման հայերի հասցէներով ուղարկուած նամակները բաց են անում, կարդում, յետոյ մեզ ուղարկում։ Եթէ մի գաղտնի գրութիւն կայ, աւելի լաւ է ուղարկել օտարների հասցէներով, որոնք նոյնութեամբ մեզ են հասցնում։

Այստեղ գալու է Մաշտոց վարդ[ապետը]. դա Ամերիկայի մեր կազմակերպութեան անդամն է։ Ռ[ոստոմը] խոստացել էր դրա հետ նամակ ուղարկել ձեզ, բայց հասցնել չկարողացաւ(3)։

Յ[ոնան]ի պատմելով Ոսկանապ[ատ] եւ այդտեղ ընտրութիւններ են կատարւել Դ.ի համար։ Դրանից առաջ ընդհ. ժողովը դրա մենաշնորհը թողել է ցուցական մարմնին։ Եթէ ընտրւածներ կան, թող համաձայնեն Յուց. մարմնի հետ եւ ըստ այնմ դերերը բաժանեն։

Հեռագիրների առթիւ։

Թերթ (No 8) *ուղարկած ենք՝ այս անգամ* 420 *աւելի Վրէժի գծով։ Նաւահանգըստի գծով նոյնպէս կ՚աւելացնենք։ Խնդրում ենք Ոսկանա[պատի] մարմնից յատուկ հոգ տանել փոխադրութեան կանոնաւորման։*

Ճերմակեան վաճառ[ատան] տղաներին փոստով թերթ հասնում է։ Կարող էք նրանցից վերցնել։

Ֆինլանդացիների դիմումի մասին գրել էինք. համարեա բոլոր այլազան տարրերը տուել են իրենց համաձայնութիւնը համերաշխութիւն հաստատելու։ Ձեզանից պատասխան չեկաւ. շուտով նրանց ներկայացուցիչը գալու է Ժընեւ. եթէ մինչեւ այդ օրն էլ չեկաւ, ձեր կողմից տալու ենք համաձայնութիւն։

Դիակների պատկերը Ֆրանսերէն բացատրութիւնով կը հրատարակենք եւ կը տարածենք շուտով։

Պատւիրակները հիմա Պարիզ են վերադարձել։ Անգլիական թագաւորը շուտով չի վերադառնալու Լոնդոն։

Ի՞նչ արիք Սալմաստի դատաւորի առաջարկի առթիւ։ Կոզակների նամակները ստացանք։

Լեւոնի մասին կրկնել։ Կոնստանցայի չէքը։

Օգոստոսի սկզբից գրւած է նամակ Մ. Ֆ. (օգ. 3 բանկ), *Ոսկանապատ* (օգ. 6), *Ջրաբ*[*երդ*] (օգ. 8), *Մ. Ֆ.* (օգ. 12 *Եր*[*եւան*]), *Նաւահ*[*անգիստ*] (օգ. 17), *Մ. Ֆ.* (օգ. 27 *բանկ*)։

Գրաշար լաւ(4)։

Վարդանը(5) *թող ճանապարհ ընկնի։*

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղղուած նամակ, նոյն Ռոստոմի ձեռագրով «գրւած Տէր Թոմ. ձեռքով», ինչ որ կը նշանակէ, թէ վերջինս գաղտնի թանաքով արտագրողն է:

2.- Տատրակը ծածկանունն է Մշոյ Գեղամին, Տէր Կարապետեան:

3.- Մաշտոց վարդապետ – դաշնակցական, յետագային կարգաթող – իսկական անունը Ներսէս Փափազեան (1872-1915):

4.- Երեւի լաւ գրաշար կը սպասեն կամ կը պահանջեն Թիֆլիսէն:

5.- Խանասորի Վարդանի մասին է, Մեհրաբեան Սարգիս:

325

Փաստ. 43-32

1904, *օգ.* 29, *Ժընեւ*

Ամերիկայի Կենտր. կոմիտէին,

Յարգելի ընկերներ,

Ներփակ կը գտնէք մեր մի նամակը, գրւած յուլիս 12-*ին։ Զարմանում ենք, որ յետ է եկել։ Բայց թերթերը ինչպէ՞ս են ստացւում։ Խնդրենք պարզել այս հանելուկը։*

Սպասում ենք պ. Վռամեանի գալուն, որպէս զի նրա միջոցով ընդարձակ տեղեկութիւններ հաղորդենք մեր գործունէութեան մասին, ինչպէս նաեւ մեր կարծիքը այդտեղի խնդիրների վերաբերմամբ։ Յոյս ունենք, այս երկու օրս այստեղ լինի։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Յ. Գ.— Գուցէ P.O.B. 127 *հասցէով ուրիշ անգամ էլ բան ուղարկւած լինի. աւելորդ չէր լինել դիմելը։*

ՆՈՅՆ

326

Փաստ. 43-83

1904, *օգ.* 31, *Ժընեւ*

Սիրելիս, (*Աթէնք*)

Ներփակ ուղարկած ենք 10,000 fr. *չէկ, որ ուզել էք։ Բանկում ասացին, թէ* en or(1) *աւելացնել չեն կարող, միայն կը դրեն* au cours de Paris(2), *որ ամենաբարձրն է։*

Տաճկերէն թարգմանութիւնը պահանջների պատրաստ է, բայց նախ քան տպագրութեան յանձնելը հարկ համարել ենք հարցնել ձեզ, ուզում էք, որ դրան կցած լինի մի կոչ տաճկերէն ուղղած։ Եթէ ուզում էք, կոչի հետ միասին կը հրատարակենք, եթէ ոչ, միայն պահանջներն էք ուզում, առանձին մի կոչ կը պատրաստենք։

Համբոյրներով՝

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ֆրանսերէն՝ ոսկի:
2.- Ֆրանսերէն՝ Փարիզի սակով, արժողութեամբ:

327

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 54

օգ. 31

ԲԷՅՐՈՒԹ(1)

Վարդանը(2) *եթէ գայ, հարկաւոր կը լինի մի երրորդը եւս մարմնի կազմը լրացնելու համար։ Պէտք է աշխատել, որ գոնէ դա տաճկահայ լինի։ Եթէ ուզում ես, այստեղից մի վերջին դիմում անենք Ցիւրիխցիներին, իմանանք նրանց վերջին որոշումը, եւ եթէ հրաժարւելու լինեն, իմ կողմից կ՚առաջարկէի Տիրանին, որ երկար տարիների ընթացքում վարժւել է կազմակերպական գործերում։*

Հնչակեանները դիմեցի՞ն, ի՞նչ պատասխանեցիք։ Պէտք է զգոյշ լինել. մեր աջակցութեամբ մի 14 *հոգուց խումբ անցկացրին Ալաշկերտ. հիմա այնպիսի զուռնա են փչում, որ ուղղակի անտանելի են. նոր դարագլուխ բացւած են համարում...*

Վաղուց է պատրաստ եմ գնալու Մարսէյլ, բայց ձեր բախտից հիմա գործադուլ է. նաւերը չեն բանում. վախենում եմ, մի գուցէ գործադուլի ժամանակ զէնքեր գնելը առանձին ուշադրութիւն դարձնի. գուցէ յամենայն դէպս էգուց գնամ։

ՌՈՍՏՈՄ

Մշոյ դաշտում զոռ կռիւներ են սկսւել հիմա. տղաները լաւ են։ Հիմա միջոց կայ ուղղակի իրենց ձեռքը դրամ հասցնելու։ Ափսոս, որ առաջ չգիտէինք, 30,000 fr.*ը հիւպատոսի տրամադրութեան տակ դրինք։*

1.- Ս. Զաւարեանին ուղղուած նամակ:
2.- Վարդանը Խանասորի արշաւանքի ծանօթ հրամանատարն էր (Մեհրաբեան Սարգիս), որ Ս. Զաւարեանի հետ անդամ էին Լեռնավայր-Կիլիկիոյ Պատասխանատու մարմնին:

328

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 55

օգ. 31

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Մի ընդարձակ նամակ ենք ուղարկել եկւորի ձեռքով, գրւած օգ. 28-*ին։ Ստացանք Ռուբէնի նամակը, որ բոլորովին չկարողացանք կարդալ, բացի մի երկու խօսքերից։ Բայց հիմա լաւ միջոց ունենք, որ ձեզ եւս յանձնարարում ենք — նամակները բացէք* silicate de soude-*ով։ Դա թանձր հեղուկ է, որ հրաշալի է բաց անում։ Սրանից յետոյ յոյս ունենք ամէն տեսակ գրւածները բանալ, եթէ միայն չոր գրչով գրւած չլինեն։ Վերջին դեղով փորձեցինք այսօր եւ մի քանի բան կարողացանք ջոկել Ռուբէնի գրածից* 1) *Դումանը չի ուզում գրել, թէեւ հայհոյել էք, դուք էք խոստանում գրել,* 2) *Լօթիքը*(2) *ամբողջութեամբ չեն փոխադրում թերթերը* (*էհ, թող երկու, երեք անգամից բերեն. այս անգամ* 500 *օրինակ աւել ենք ուղարկել*), 3) *որ զահրումար թանաքը ծծւում է. քիչ թող ծծուի, վնաս չունի. միայն եթէ թուղթը բարակ է, միայն մէկ երեսին գրէք։ Ուրեմն խնդրենք կրկնել բոլոր կարեւոր կէտերը։*

Այդտեղ է գալու Համոյին(3) *ծանօթ մի ռուս տիկին, որը նորից ուզում է նրան տեսնել։ Կը դիմէ Նիկոլի հասցէով։*

Անունն է Աննա Նիկոլայեւնա(4)։

1.- Բագու (Ոսկանապատ) ուղարկուած այս նամակի աւարտին նոյն թանձր սեւ մատիտով՝ «Չոփուռեանի հասցէով»։ Չոփուռեանը ծածկանունն է Թադէոսեան Լեւոնի (Պապաշա)։ Ռուբէնը՝ Գիւլխանդանեան Աբրահամն է։

2.- Ակնարկութիւնը «Դրօշակ»ի համարները տեղ հասցնող պարզ, զուարթ, կերուխում սիրող բայց քաջասիրտ երիտասարդներուն է։

3.- Համօ Օհանջանեանին։

4.- Ռուսատառ։

329

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 56-58

Գրւած 4 *սեպտ.* [1904]

ՄՈՒՇ

Ստացանք ձեր յուլիս 27 *եւ* 21 *նամակները, հաստատում ենք մեր օգոստ.* 8/21 *նամակը։*

Եւրոպական թերթերում կարդում ենք, որ տաճիկ կառավարութիւնը Վահանի եւ Հրայրի(1) *բռնուած նամակներով հաստատում է, թէ հայերն են գիւղեր հրդեհողները։ Որքա՞ն ճիշտ է այս լուրը։ Եւ եթէ ճիշտ է, ի՞նչ էր նպատակը։ Սասունցիներն էլ, ինչպէս նաեւ հայ հոգեւոր իշխանութիւնը ամբողջ պատասխանատուութիւնը իբր թէ ձգում են ապստամբների վրայ։*

Հեռագիր կայ նոյնպէս, թէ IV *զօրաբանակը ոտքի է հանւում։ Կարեւոր է հետեւել զօրքերի շարժման երկրի մէջ եւ կանոնաւոր տեղեկութիւններ ուղարկել։ Մի գուցէ կառավարութիւնը օգտւելով խառնակ դրութիւնից Ռուսաստանի հետ հա-*

մաճայնած վերսկսի կոտորածները ուրիշ վայրերում եւս։ Այս մասին հարկ եղած դիմումը կ՝անենք մեր կողմից։

Ձեր ներկայացրած պահանջները յայտարարեցինք բոլոր կարեւոր թերթերին։ Ընդհանուր տպաւորութիւնը լաւ է։

Տեղ հասա՞ւ արդեօք մեր յանձնած նպաստը։ Վիշապի մասին գրել ենք եւ սպասում ենք պատասխանի. իսկ վաճառատան միջոցով փոխադրեցինք 3,000 fr. *ձեր մատնացոյց արած վաճառականին յանձնելու։ Ստանալուց խնդրենք անմիջապէս իմաց տաք։* Pro-Armenia*-ի վերջին համարում յայտարարւած են Սասունի մասնաժողովի անդամների անունները.— նրանց մէջն են* Bertholet, *նախկին արտաքին գործոց նախարար*, Lavisse, Sully Prudhomme (*արտագրել բոլորի անունները*)։ *Եթէ նւիրատւութիւնները ուշանան, այն ժամանակ մենք յատուկ դիմում կ՝անենք մեր մարմինների աջակցութեան։*

Թորգոմի(2) *խմբին նահատակութեան լուրը ձեզ հասած կը լինի։ Դիակների պատկերները, մի կարճ ֆրանսերէն բացատրութեամբ տարածել ենք ամէն կողմ։ Տպաւորութիւնը մեծ է. մանաւանդ վրդովւում են ռուս տարրերը ռուս բռնակալութեան այդ արարքից։*

Տղաներին մեր ջերմ համբոյրները։ Թող ներկայ հանգամանքներում աշխատեն ամէն կերպ խոյս տալ ընդհարումներից, ուժերը խնայել, բայց միշտ պատրաստ կենալ։ Անչափ ուրախ ենք, որ ընկերների միջեւ համերաշխութիւն է տիրում. յուսով ենք, որ այդպէս կը շարունակուի։

Թերթերում կարդացինք նոր ընդհարումների մասին. տեղեկութիւնները հիւպատոսական էին։ Անհամբեր սպասում ենք մանրամասնութիւններին։

Pro-Armenia*-ում տպագրւած է նոյնպէս ձեր ուղարկած կոտորածների ցանկը։*

Ներկայ պարագաներում չ՝արժեր թերթի համար վտանգել. անոր ալ ժամանակը կուգայ. կարեւոր լուրերը ձեզ տալիս ենք եւ կուտանք: Ընկ. ջերմ բարեւներ(3):

4 *սեպտ.* 1904։

1.- Վահան – Տողրամաճեան Կարապետ՝ Դաշնակցութեան ներկայացուցիչը Սասունի մէջ եւ Հրայր Դժոխք, երկուքն ալ նահատակուած 1904 թ. Սասնոյ ապստամբութեան ընթացքին:
2.- Թումեանց Թումանի:
3.- Վերջին պարբերութիւնը «Ներկայ պարագաներում…», Յարութիւն Գալֆայեանի ձեռագրով:

330

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 58

ՄՈՒՇ(1)

Գրել Միհրան Tartiozian*-ի մասին*
Դելկասէի պատասխանը

1.- Գրուելիք նամակի մը սեւագրական հակիրճ նոթեր: Միհրան Թարթիոզեանը (ճիշդ ազգանունը Թարգիւլեան է) ֆրանսական հիւպատոսարանի պաշտօնեայ էր. կը կասկածուէր մատնութեան մէջ եւ վախ կար, որ 30,000 ֆր.ի նպաստի բաշխումը իր միջոցաւ կատարուի:

331

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 59-61

ՎԻՇԱՊ(1)

Հին Քաղաքից ձեր ուղած դրամը ուշացել էր, որովհետեւ Մուխանը[?] *այստեղ չէր. ուղարկւած է* 31-*ին, արդէն ստացած կը լինէք։ Երէկ նոյն տեղից նոր հեռագիր ստացանք։ Տառերը խառնւած էին։ Հասկացանք, որ հարկաւոր է* 6, 4, 13, 7, 6, 2, 26, 4, 16, 1, 9, 14, 16, 2, 6, 18, 22, 10, 11 *եանի*(2) *անունով փոխադրել մի նոր գումար։ Ստուգելու համար խնդրեցինք կրկնել հեռագիրը Ֆրանսերէն կամ նամակ գրել։ Եթէ պատասխանը կամ հեռագիրը ետ եկաւ, վաղը մեր հասկցած ձեւով կը կատարենք։ Կարծում ենք, որ հեռագիրը կարող է ետ գալ, որովհետեւ նա քաշւած է Յ…ի անունին*(3), *իսկ նա կարող է այնտեղ չլինել — երէկ տիկինը մի բացգիր ցոյց տւեց Յ.ից, որով նա յայտնում է, թէ վերադառնում է։*

Մերոնցից բռնւած խօ չկայ այդտեղ։

Ոսկանապատից ստացանք 10,000 *ռ*[*ուբլի*]. *ուղարկւածի փոխարէն, հաշիւները կը կարգաւորենք։*

Թորգոմի խմբի պատկերը առանձին թերթերով, Ֆրանսերէն բացատրութեամբ տպեցինք, տարածեցինք։ Լոյս կը տեսնի .....*ում*(4), Pro-Arm[enia-*ում*] *եւ յետոյ Դրօշակում, երբ կ՚ունենանք խմբանկարները։*

Զարմանալի է, որ Հրաչի նամակը մէջը չի եղել. գուցէ ուրիշի նամակ է եղել։ Էլ-լէնը(5) *ոչ մի մասնաւոր նամակ ներփակ չի ստացել։*

Դրօշ[*ակ*]*ում տպւած պահանջները խմբագրել են Մշոյ մեր ընկերները, հաւանական է ընդհ. ժողովի հիման վրայ։ Վերջինս եթէ ուզում էք, ուղարկենք ձեզ*(6)։

Առաջ էլ գրել էինք, որ տաճկերէն թարգմանութիւնը այդ պահանջների պատրաստ է։ Մի յառաջաբան անհրաժեշտ է։ Եթէ ուզում էք, այդ յառաջաբանը կցենք թարգմանութեանը եւ այնպէս ձեզ ուղարկենք. իսկ եթէ ոչ՝ առանձին կոչ հրատարակենք։

Մենք գիտենք, որ Լեւոնը չի վտանգւած. մենք աչքի առաջ ունինք այն հանգամանքը, որ Սարուստանի(7) *մարմինները կը դժւարանան նրան իրենց մէջ ընդունել։*

Բժիշկը չեկաւ. եթէ գայ, կը յայտնենք ձեր փափաքը։ Անցագրերի համար նամակներ գրւած է։

Փ.ի(8) *գործերը սկսել են կարգաւորւել։ Զուռնաչիները*(9) *խանգարում են։*

Այս նամակի պատասխանը ստանալուց յետոյ, կը գրենք մի ընդարձակ նամակ։

Թորգոմը(10) *գրել էր պայպըլ հաուզի մասին։*

Մեզ չէք չի հարկաւոր։ Համաձա՞յն են արդեօք փողը ստանալ մեզանից, հանել Բազէլի միսիոնար Մ. Քօլլին, որ սա յանձնի հայոց առաջնորդարանին (Վարդան վարդապետին)(11)։ *Այս ձեւով աւելի յարմար է։ Դելկասէին յանձնած* 30.000 *Ֆր.ը դեռ տեղ չի հասել։ Հասնի էլ, պիտի բաժանւի հիւպատոսի քարտուղար Միհրանի միջոցով, որ Վարդգէսի*(12) *մատնիչներից մէկն է։ Վանի կռիւների մասին լսած կը լինէք։ Կոմսը*(13) *մտադրութիւն է ունեցել գաւառներում ամրանալ, բայց ինչպէս երեւում է Անդրանիկը եկել է եւ ծրագիրը փոխել են, կամ գուցէ հարկադրւած են եղել։ Եբր լսեցինք, թէ* IV-*որդ զօրաբանակը ոտի է կանգնում եւ Վանայ վալին զինել է մահմեդ*[*ական*] *ամբոխը, մի ազդարարութիւն հեռագրեցինք նախարարներին։*

1.- Պոլիս ուղղուած այս անթուակիր նամակը գրուած պէտք է ըլլայ 4 – 11 Սեպտ.ի միջեւ:

2.- Շիֆրէ այս ծածկագիրը կը բացուի «Մայր Արաքսի ափերով» տառերով.– Ս, ր, գ, ի, ս, ա, բ, ր, հ, մ, ե, ն, հ, ա, ս, ց, է, ո, վ: Այբ տառերէն մէկ քանին զեղչուած են. ուստի պէտք է կարդալ՝ Սարգիս Աբրահամեան հասցէով:

3.- Յոնան Դաւթեանի:

4.- Լատինատառ անընթեռնելի երկու անուններ, հաւանաբար թերթերու:

5.- Էլլէնը Քրիստափոր Միքայէլեանի ծածկանունն է, իսկ Հրաչը՝ Թիրեաքեան Հայկ, Պանք Օթթոմանի գրաման հերոսներէն, երկու տարիէ ի վեր կը գտնուէր բանտ, ուրկէ սակայն կը թղթակցէր դուրսի ընկերներուն հետ:

6.- Արդարեւ Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհ. ժողովը, գումարուած Սոֆիա 1904 թ. Փետրուար-Մարտ ամիսներուն, խմբագրած էր այն պահանջները, զորս պէտք է ներկայացնէին Սասնոյ ապստամբները եւրոպական պետութեանց հիւպատոսներուն (Տես «Դրօշակ», 1904 թ. Օգոստոս, թիւ 8, էջ 105-6): Ահա այդ պահանջներուն մէկ օրինակն է, որ Տարօն-Սասունի ընկերները (Անդրանիկ, Գեղամ Տէր Կարապետեան եւայլն) յղած էին եւրոպական պետութեանց ներկայացուցիչներուն:

7.- Սարուստան – կուս. ծածկանուն՝ գործածուած ընդհանրապէս Ռուսիոյ, մասնաւորապէս Կովկասի համար:

8.- «Փոթորիկ», բռնի հանգանակութեան ձեռնարկ:

9.- Հնչակեանները:

10.- Պէտք չէ շփոթել Թումեանց Թումանի հետ, որ Սասունի օգնութեան հասնելու ճամբուն վրայ զոհուած էր արդէն: Այս Թորգոմը (Սերեմճեան Արտաշէս) անդամ էր Սուլթան Համիտի մահափորձը պատրաստող Յուցական մարմնին: Պայպըլ Հաուզը՝ Աստուածաշունչի տարածման հաստատութիւն է:

11.- Վարդան վարդապետ Յակոբեան (1846-1915), Մշոյ Ս. Կարապետի վանահայր, դաշնակցական, անդամ Հ.Յ.Դ. Տարօն-Սասունի Կեդր. կոմիտէին:

12.- Վարդգէս Սերէնկիւլեան (1871-1915), յեղափոխական ղեկավար գործիչ, որ 1903 թ. սկիզբէն կը գտնուէր Վանի բանտը:

13.- Վահան Փափազեան: Խօսքը կը վերաբերի այն օրերուն երբ Սասնոյ ապստամբութեան ձախողութենէն ետք, հայդուկապետ Անդրանիկը իր զինակիցներով անցած էր Վասպուրականի շրջանէն, ուրկէ պիտի անցնէին Պարսկաստանի Ատրպատական նահանգը:

332

Պատճէններու մատեան No 88, *էջ* 231

1904 *սեպտ.* 7

Աղասէրին եւ Միսակին(1)

Սիրելի ընկերներ,

Ամէն անգամ, երբ Լեռնավայրի(2) *վերաբերմամբ մի խնդիր է ներկայանում, մենք շուարած ենք մնում չիմանալով, թէ ինչ դիրք բռնել ձեր երկուսիդ նկատմամբ, մինչեւ հիմա մեզ յայտնի չէ, թէ ինչ է ձեր վերջնական որոշումը։*

Այս անորոշութիւնը հաճելի չէ, ի հարկէ, եւ ձեզ համար։ Ուստի կարծում ենք, որ աւելորդ չի լինիլ, եթէ գոնէ մէկը շրջանից, մի երկու օրով մեզ մօտ գար՝ խօսելու եւ ծանօթանալու համար երկրից եկած նոր տեղեկութիւններին, որ յուսով ենք դրականապէս կ'ազդեն ձեր տրամադրութեան վրայ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Գրիգորեան Յակոբ (Աղասէր) եւ Գոյումճեան Միսաք, երկուքն ալ անդամ Կիլիկիոյ Պատասխանատու մարմնին. կը գտնուէին Գերմանիա:

2.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ:

333

Պատճէններու մատեան No 88, *էջ* 234-235

1904 *սեպտ*. 8

Ամերիկայի Կեդր. կոմիտէին,

Յարգելի ընկերներ,

Ստացանք ձեր 23 *օգ. նամակը. ներփակ* 400 fr. *չէքի հետ միասին։*

Լօրիս Մելիքեանը գուցէ դեռ ուշանայ։ Չենք կարծում, որ նրա գբաղմունքները ներեն մի երկու ամիս ձեր կողմերում անցկացնելու, ինչպէս դուք էք ուզում։

Համաձայն ձեր յայտնած փափագին՝ յարաբերութիւն հաստատելու Լեռնավայրի մարմնի հետ, մենք դիմեցինք մեր ընկերոջ։ Ներփակ ուղարկում ենք նրա նամակը, որ արտագրել ենք ձեզ համար։ Ձեր պատասխանը կարող էք ուղղել առայժմ դոկտ. Փաշայեանի միջոցով (Alexandrie, Docteur Phachayan khan)։ *Մի անգամ եւս խնդրում ենք խիստ գաղտնապահութիւն Լեռնավայրի նկատմամբ։ Պրո[պա]գանդի համար միթէ՞ բաւական չեն անցեալի փաստերը։ Եթէ մարդ ուղարկելու լինէք Լեռնավայրի համար, զգուշութիւնը պահանջում է* [*մէկ տող անընթեռնելի*]

..... *նրանք անհրաժեշտաբար*

..... *կարելի է յայտնել, թէ Բիւրոն է ուզել։ Մենք այստեղ ինքներս կը պարզենք խնդիրը։* [*Մէկ բառ անընթեռնելի*], *թէ դա որքան անյարմարութիւն է ներկայացնում, սակայն այս նախապատրաստական շրջանում անհրաժեշտ է ըստ կարելոյն քիչ խօսել տալ Լեռնավայրի մասին։*

Մասնագէտների կարիքը յանձնարարում ենք ձեր յատուկ ուշադրութեան։ Առանձնապէս կարեւոր է պայթուցիկ նիւթերի մասնագէտները։ Գուցէ հիմա Լեռնավայրի համար հարկաւոր գան Վասպուրականի համար առաջարկուած միտրալիոզները։ Որքան յիշում ենք, դրա առաւելութիւնը նրա մէջն է, որ մեծ քանակութեամբ փամփուշտներ է նետում մի երկու րոպէում։ Որովհետեւ մենք դժուար թէ ունենանք փամփուշտի այնքան պաշար, որ կարողանանք առատութեամբ թափել, մեզ աւելի հարկաւոր կը լինին հեռու նետող (բայց այնպէս, որ կարելի լինի նշան առնել) գործիքներ։ Խնդրենք այդտեղ գտնուող բոլոր տեսակների մասին մեզ մանրամասը տեղեկութիւն տալ։

Վռամեանը ուշացաւ, չգիտենք, թէ ինչու։

Ամերիկայում տեղի ունեցող յարձակումներից դուք աւելի էք ազդւում, քան հարկաւորն է։ Կենդանի եւ բազմակողմանի գործունէութեան մէջ անպակաս կը լինին «քննադատութեան» ենթարկւելիք կէտեր։ Թող մեր մասին փաստերը խօսին։

Վանայ կռիւների մասին անշուշտ ամերիկական թերթերը նոյնպէս գրում են։ Այսօրւայ հեռագրին նայելով՝ քաղաքը մերոնց ձեռքն է, եւ նոր ուժեր են ուղարկում քաղաքը ետ առնելու։ Կռւողները պէտք է լինեն Կոմսի եւ Անդրանիկի [*քանի մը բառ անընթեռնելի, հաւանաբար՝ հրամանատարութեան ներքեւ*](1)։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Սպասում ենք ձեր 6-*ամսեայ հաշիւներին։*

1.- Սասնոյ ապստամբութեան անյաջողութենէն ետք հայդուկապետ Անդրանիկ խումբ մը զինակիցներով անցած էր Վանայ շրջան, ուր կռիւներ մղեց թրքական զօրքին դէմ։ Կոմս – ծածկանունն է Վանի կուսակցական պատասխանատու Փափազեան Վահանի։

334

Պատճէններու մատեան No 88, *էջ* 237

[1904 *սեպտ.* 8]

Պ. Յորդան[ան]եանին(1),

Յարգելի ընկեր,

Պ. Զ.ի անունին գրած ձեր նամակը ստացանք։

Այսուհետեւ կանոնաւորապէս կը ստանաք 50-*ական օրինակ թերթ։ Դժբախտաբար ամիսը երկու անգամ հրատարակել չենք կարող, չնայած մեր ջերմ բաղձանքին։*

Ձեր նուիրատուութիւնը (Դրօշակի բաժնեգինը հանած՝ 191 fr. 60 *ս.) կը տպւի* No 9-*ում։*

Ձեր բարեւները տեղ կը հասցնենք։

Չի՞ կարելի արդեօք յատուկ հանգանակութիւն բանալ յօգուտ Սասունի եւ Մշոյ տառապեալների։ Պարիզում այդ նպատակով յատուկ մասնաժողով է կազմւել ամենայայտնի ֆրանսիացիներից, որոնց անունները կարող էք գտնել Pro Armenia-*ի* No 93-*ում։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Յորդանանեան – Դաշնակցութեան պատասխանատուն Նոր Ջուղայի մէջ:

335

Պատճէններու մատեան No 88, *էջ* 238
(*Փաստ.* 43-11)

1904, *սեպտ.* 10, *Ժընեւ*

Աղէքսանդրիայի կոմիտէին,

Յարգելի ընկերներ,

Ստացանք ձեր ուղարկած (29 *օգ.*) *բոլոր հաշիւները եւ ընկալագրերի բները։*

Քանի որ ոչ Աղէքսանդրիայի եւ ոչ Գահիրէի մարմինները կոմիտէական ցէնզ չունին, մնում է նրանց համարել ենթակոմիտէներ։ Եթէ «կոմիտէ» անուան անհրաժեշտութիւն կայ, գուցէ կարելի լինի երկու մարմինները մէկ նկատել. երկուսի հաւաքական ուժերը հաւանական է պահանջւած ցէնզին գոհացում տան։ Այդ դէպքում կ՚ունենանք մէկ՝ Եգիպտոսի կոմիտէ։

Դժոխքի(1) *լուսանկարը արդէն ունինք։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Չի կարելի արդեօք ընդհանուր հանգանակութեան դիմել յօգուտ Սասնոյ եւ Մշոյ տառապեալներին, նպաստները կարելի է ուղարկել Պարիզի մասնախմբին կազմւած յայտնի ֆրանսիացիներից (Pro Arm[enia], No 93)։

Ն[ՈՅՆ]

1.- Խօսքը կը վերաբերի Հրայր-Դժոխքի, որ նահատակուած էր 1904 թ. Սասնոյ ապստամբութեան ընթացքին:

336

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 62-64

սեպտ. 11*ին*

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Ձեր ուղարկած ծրարները Քօչ. միջոցով ստացւած են։ Չի ստացւել միայն Աբրահամովիչի(2) *առաջին նամակը, որ նա յիշում է եկւորի ձեռքով ուղարկւած նամակում։ Նաեւ լուսանկարների մէջ չկայ գերմանուհունը։*

Դրօշակ ուղարկում ենք փոստով եւս, բայց ինչպէ՞ս անենք, որ ժանդարմերիան ձերը չբռնի։ Նոր հասցէով եւս կ՚ուղարկենք։ Ստացել էք ընդամ[*էնը*] 300 *օր*[*ինակ*] *եւ հարցնում էք, ուղարկել ենք արդեօ՞ք դարձեալ* 300 *օր.։ Մի անգամ եւս կրկնում ենք։ Ձեր գծի համար ուղարկւում է* 740 *օր. եթէ* 140 *օր. — որ շատ լաւ է — պահեն տեղական պէտքերի համար, ձեզ բաժին կը մնայ առնուազը* 600 *օր. — վերջին* 8*րդ* No-*ից ուղարկւած է Վրէժ* 420 *օր*[*ինակ*] *աւել, որից ձեր կողմի համար մօտ* 200։ *Ուրեմն եթէ փոխադրութեան գործը կանոնաւորէք, միշտ կ՚ունենաք մօտ* 800 *օր.*, *իսկ դուք փոխանակ այդ անելու, դարձեալ ուզում էք մեզ նոր «հարց ուղղելով» ձեր խիղճը հանդարտացնել։ Հարցրէք Ռուբէնից*(3), *եւ նա ձեզ կ՚ասի, որ այդ «լոթիները»*(4) *ամբողջը չեն բերում։*

Ռուսների վերաբ[*երմամբ*] *անհամ բան դուրս եկաւ։ Նրանք արդէն պատրաստել էին մի ծրար. հասցէն գրեցինք տուինք, որ ուղարկեն. յանկարծ Զոփ*[*ուռեանը*](5) *գրում է, թէ ոչ թէ այդ գծով, այլ Նաւահ*[*անգիստ*] *թող ուղարկեն։ Նրանց համաձայնութիւնը առե՞լ էք... յանկարծ նրանք էլ բողոքեցին։ Խնդրենք չուտով նրանց համաձայնութիւնը առէք եւ հեռագրէք մեզ* revenue։

Վարդանի(6) *մասին հեռագրեցինք, Վառնա։ Ինչո՞ւ այդպէս բան էք անում. ինչո՞ւ ուղղակի այստեղ չէք ուղարկում. այնտեղ եթէ երեւայ, լու է ընկնելու*(7)։

Սպասում ենք Կովկասի բոլոր մարմինների 6 *ամսեայ հաշիւներին. գլխաւորապէս Բիւրոյի յատուկ հաշւապահ ենք բերել տուել, իսկ հաշիւ ուղարկող չկայ։ Սպասում ենք նոյնպէս ձեր բայոնական ժողովի որոշումների մանրամասնութիւններին։ Ցանկալի է Դեկտ. ամսին Դաշնակ*[*ցութեան*] *Խորհրդի ժամանակ Ինքնապաշտպանութեան կոմիտէի ծրագիրը որոշւած լինի վերջնականապէս։ Մեր կարծիքը կ՚ուղարկենք ձեզ, երբ ստանանք ձեր որոշումները։*

Վանայ դէպքը անակնկալ էր. երեւի Անդրանիկը իր խմբով երեւացել է, եւ նրա վերադարձը փոխել է Կոմսի եւ Իշխանի(8) *ծրագիրը։ Այստեղից փոխադրեցինք* 3.000 fr.։ *Եթէ մի լաւ խումբ պատրաստ ունենայինք պարս*[*կական*] *սահմանագլխում, որ ներս խուժէր այդ բոպէին, հրաշալի բան կը լինէր։ Բացի հիւպատոսական տեղեկութիւններից ոչ մի ուրիշ բան չունենք։ Վերջին* 2 *օրւայ լռութիւնը չարագուշակ է տղաների վիճակի վերաբերմամբ։ Երբ լուր եկաւ, թէ* IV *զօրաբանակը շարժւում է, հեռագրով մի ազդարարութիւն ուղարկեցինք «Խորհրդի»*(9) *կողմից պետութիւններին, սպառնալով ծայրայեղ միջոցների դիմել, եթէ խաղաղ ժողովրդին կոտորելու լինեն։*

Մռաւի(10) *գրած կցկտուր տեղեկութիւններով կը ղեկավարուենք Ֆինլանդ*[*ական*] *կոնգրէսում, եթէ մինչեւ այդ ժամանակ մի լրիւ ամփոփում չստանանք։ Լե-*

հացիները մի նախապատրաստական ժողով են հրաւիրում ոչ-ռուս տարրերից՝ որոշելու հպատակ ազգութիւնների դերը։ Այդ հրաւէրին դեռ չենք պատասխանել։

Բ. Կոմիտէի հաշիւները տալուում են այս համարում։ Այնքան ցանկ կայ որ։

1.- Ոսկանապատ – Պաքու ուղարկուած այս նամակին վրայ, թանձր սեւ մատիտով Ռոստոմ աւելցուցած է՝ Արեւելեան բիւրոյին, որ կը նշանակէ թէ երկու մարմիններուն սահմանուած գրութիւն է։ Գրութեան աւարտին եւս աւելցուած նոյն մատիտով՝ «Ուղարկուած Վիեննա Քօչարեանին». կը նշանակէ այս վերջնոյն միջոցաւ նամակը պէտք է հասցուէր Կովկաս։

2.- Աբրահամովիչը՝ Գիւլխանդանեան Աբրահամն է, այդ տարիներուն անդամ Պաքուի Կեդր. կոմիտէին։

3.- Հաւանաբար Յովհ. Քաջազնունին է, յետագային Հայաստանի հանրապետութեան անդրանիկ վարչապետը։

4.- Փոխադրող երիտասարդները։

5.- Թադէոսեան Լեւոն, Քրիստափորի քրոջ որդիներէն, նոյնպէս անդամ Պաքուի Կեդր. կոմիտէին։

6.- Խանասորի Վարդանը, բուն անունով Մեհրաբեան Սարգիս։

7.- Այսինքն լուրը պիտի տարածուի։

8.- Կոմսը Վահան Փափազեանն է, իսկ իշխանը՝ Վասպուրականի Լեռնապարի շրջանը կազմակերպողը. իսկական անունը՝ Նիկոլ Միքայէլեան։

9.- Դաշնակցութեան Խորհուրդի, որ կուսակցութեան գերագոյն մարմինն էր։

10.- Ժամհարեան Մարգար (1877-1905) Կովկասի ինքնապաշտպանութեան մարմնի ներկայացուցիչ, որ տարի մը ետք պիտի նահատակուէր Շուշիի ինքնապաշտպանութեան կռուի ընթացքին։

337

Պատճէններու մատեան No 88, *էջ* 241

1904 *սեպտ.* 10

Պալքանեան Կեդր. կոմիտէին

Յարգելի ընկերներ,

Այսօրուայ մեր հեռագիրը Վարդանի(1) *մասին ստացած կը լինէք անշուշտ։ Խնդրենք անմիջապէս ճանապարհ ձգել մեզ մօտ։*

Խնդրենք յատկապէս ժողովել եւ մեզ ուղարկել շարունակաբար ռումանական, հրեական եւ այլ անցագրեր, որքան որ հնարաւոր կը լինի։

Pro Armenia-*ից իմացած կը լինէք, որ Պարիզում մի մասնախումբ է կազմուած յատկապէս Սասունի եւ Մշոյ տառապեալներին օգնելու նպատակով։ Կարելի է արդեօք Պալքանեան շրջանում մի ընդհանուր հանգանակութիւն բանալ, նպաստները մասնախմբին հասցնելու պայմանով։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՕ

338

Պատճէններու մատեան No 88, *էջ* 240
(*Փաստ.* 43-15)

1904, *սեպտ.* 11, *Ժընեւ*

Պ. Թափառիկին(1),
Յարգելի ընկեր,

Ձեզ մօտ եղել են մի քանի անցագրեր։ Խնդրենք չտապով մեզ ուղարկէք։ Հաւաքեցէք, որտեղ ինչ անցագիր կը գտնէք՝ յոյնի, հրեայի, գերմանացու, ասորու եւ այլն... Շատ կարեւոր են։

Նամակիս մէջ ուղարկում ենք ձեր ուղած դեղը, որի գաղտնիքը շատ խիստ պէտք է պահել, որովհետեւ դեռ չի տարածւած եւ ոչ մի կառավարութիւն չի կասկածում։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Թղթերու սնտուկին մէջ մասնաւոր տօսիէի մէջ կան պարսկական, կարծեմ մի հատ ալ ամերիկեան:

ՎԱՀՐԱՄ(2)

1.- Նամակը ուղղուած է Աղեքսանդրիա, Եգիպտոսի մէջ Հ.Յ.Դ. ներկայացուցիչ Տոքթ. Կարապետ Փաշայեանին: Դեղը, որուն մասին կը խօսուի, կը վերաբերի քիմիական այն լուծոյթին, որու միջոցաւ կը «բացուէր» գաղտնի թանաքով գրուած գրութիւնը:

2.- Վահրամ – ծածկանուն Կիլիկիոյ նախկին գործիչներէն Յարութիւն Գալֆայեանի, որ ապա ժընեւ փոխադրուելով՝ կը վարէր Արեւմտեան բիւրոյի քարտուղարութիւնը: Վերջին նախադասութիւնը (շեղագիր) կը պատկանի իր ձեռագրին:

339

Պատճէններու մատեան No 88, *էջ* 242
(*Փաստ.* 43-33)

1904, *սեպտ.* 11, *Ժընեւ*

Ամերիկայի Կենտր. կոմիտէին,
Յարգելի ընկերներ,

Խնդրենք ուղարկել մեզ անյապաղ ձեր ձեռքի տակ ունեցած բոլոր օտարազգի անցագրերը եւ շարունակել ժողովել նորերը։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Պարիզում կազմւած մասնախմբի մասին յօգուտ Մշոյ եւ Սասունի տառապեալների, արդէն իմացած կը լինէք Pro Armenia-*ի* No 93-*ից։ Եթէ հնարաւոր է, աշխատէք Ամերիկայում հանգանակութիւններ սկսւեն նպաստներ ուղարկելու այդ մասնախմբին։*

Ն[*ՈՅՆ*]

340

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 65-66

սեպտ. 12

ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ՄԱՐՄՆԻՆ – ԲԷՅՐՈՒԹ(1)

Հայկի անզգուշութիւնը Լառնակա – Ադանայի համաձայնութիւնը։

Ստացանք ձեր ժողովի կայացրած որոշումները։ Հարկ ենք համարում նախ եւ առաջ մի քանի խօսք ասել զէնքի գնման եւ փոխադրութեան խնդրի մասին։ Մեր կարծիքով՝ Դոկտորի(2) *գալը եւ պտտելը աննպատակայարմար է։ Նախ որ զանազան տեղեր մտնելով, կարող է աչքի ընկնել եւ վտանգւել։ Երկրորդ՝ գուցէ կարելի լինի այնպիսի միջոցներ գտնել, որ այդտեղից մարդ գալու պէտքը չզգացւի։ Մեր ընկերներից մէկը Ռ-ը*(3) *այդ խնդրի հետ ծանօթանալու նպատակով գնացել էր Մարսէյլ. շուտով մտադիր [է] եւ ուրիշ տեղեր այցելել։ Ծանօթանալուց յետոյ իր ծրագիրը կը ներկայացնի։ Առ այժմ պէտք է զոհանալ մանր փոխադրութիւններով։ Մարսէյլում առաջին անգամին համար փոխադրելու բան կայ։ Եթէ որոշելու լինէք այդ, յայտնեցէք մեզ նախօրօք։*

Ձեր ուզած գումարը փոխադրել ենք Եգիպտոս (10.000 fr. *փոխանակ* 600 *ոսկու*)։ *Յուսով ենք, փորձւած մարդկանց ձեռքով կը գործադրէք այդ գումարը։ Չգիտենք, թէ որքան նպատակայարմար է դրամները ցրել զանազան տեղեր ինքնապաշտպանութեան գործի համար։ Դա չի՞ խանգարել արդեօք բուն կենտրոնացման գործին։ Նոյն տեսակէտից կարծում ենք, որ վնասակար կը լինեն անհատական տեռորները այդ շրջանում։*

Անգլիերէն կանոնագիր – գրքերի մասին տեղեկութիւն կը ժողովենք եւ մի յարմարը կ'ուղարկենք։ Կ'ուղարկենք նաեւ Բաֆֆիի գրքերից։

Վարդանը(4) *այս քանի օրս պէտք է դուրս եկած լինի. հեռագրել ենք, որ այստեղով անցնի։ Մեզ սխալ տուած հասցէով* Նանէ Լեչկօ(5), Poste restante française. *մի քանի բաներ կան ուղարկւած։ Պահանջեցէք փոստից։*

Գուցէ արդէն լսած լինէք Վանայ նոր կռիւների մասին։ Ուրիշ սեփական տեղեկութիւն չունենք։ Ինչպէս երեւում է, կռիւը ծագել է Անդրանիկի, Սարհատի(6) *եւ խմբի Վան մտնելով։ Վերջին երկու օրս լուր չկայ թերթերում։ վախ կայ, որ կռիւը ճնշւած լինի։ Կռւից յետոյ տղաները քաշւել են լեռները։*

1.- Նամակի աւարտին՝ «Գրեցաւ սեպտ. 14-ին», ինչ որ կը նշանակէ թէ նամակը գաղտնի թանաքով արտագրուած է Սեպտ. 14-ին։

2.- Դոկտորը Կիլիկիոյ հին գործիչներէն բժիշկ Զաքարիա Կիլիկեանն է։

3.- Վարդանեան Միսաք, Կիլիկիոյ գործիչներէն, ծանօթ Ռահվեր ծածկանունով։

4.- Խանասորի Վարդանը (Մեհրաբեան Սարգիս), որ Լեռնավայրի Պատասխանատու մարմնի անդամ էր։

5.- Ռուսատառ

6.- Անդրանիկը՝ հայդուկապետն է, Սարհատը՝ Գէորգ Չաւուշ։

341

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 66-68

Գրուեցաւ սեպտ. 14

ՍԻՄՈՆԻՆ(1)

Ցիւրիխ մի նամակ գրեցինք, հրաւիրելով նրանցից գոնէ մէկին վերջնական բացատրութեան համար։ Դեռ ոչ ոք չի եկել։

Մարկաների խնդիրը կարող է ուշանալ։ Պարիզից անցնելիս կը փորձեմ ձեւը ընտրել։ Իսկ կը գնամ, երբ Յոնանը(2) *այստեղ գայ։ Մարսէյլ գնացի, ծանօթացայ տեղական պայմաններին, պահեստի գործը կը կարգաւորենք։ Արդէն այնտեղ ատրճանակներ կան. փամփուշտներ տեղափոխելու փորձ արէք։ Պարիզ եւ մի քանի այլ տեղեր անցնելուց եւ զանազան զէնքերի հետ ծանօթանալուց յետոյ կը գրեմ բոլորի յարմարութիւնները, անյարմարութիւնները, գները եւայլն։ Փոխադրութեան գործի համար դուցէ պէտք չլինի Դոկ[տոր]ի աջակցութեան։ Կայ մի զինավաճառատուն, որ յանձն է առնում ո՛ր նաւահանգիստը ուզում ես՝ ապրանքը ափ իջեցնի ապահովաբար, պայմանաւ միայն, որ ապսպրանքը* 30.000 fr.[*ից*] *պակաս չլինի։*

Կովկասում կայացել է Բայոնական ժողով։ Մանրամասնութիւնները կը գրենք, երբ յայտնի լինին մեզ։ Տրամադրութիւնը շատ բարձր է։ Մի քանի կարեւոր ձեռնարկներ են որոշել։

Կոմսը(3) *մտադրութիւն ունէր ամրանալ գաւառներում, բայց յանկարծ լսում ենք Վանայ կռուի մասին։ Նոր պատրաստութիւնների վրայ են Էլլէնը եւ ընկ[երները]*(4) *համարեա բոլորը իրենց տեղերն են գնացել։*

Փողին զոռ տալը քեզանից չէ. ի նկատի ունենալով այդ տեղացիների հռչակաւոր շահասիրութիւնը, վախենում ենք։ Այստեղ էր եւ քեզ էր հարցնում Կաֆեանը(5)։

Նամակներդ աւելի լաւ է Բէյրութից փոստ գցել տաս։ Նոր անձնական նամակներ չունես։ Միայն մի ինչ որ պարոն է քեզ ուզում անպատճառ ելեկտրականութեամբ բուժել։ Նախկին հասցէով նամակներ ունիմ գրած։

Դու զուր ես յայտնում գրելու եւ բանալու դեղերի անունները։ Պէտք է միայն առնել եւ տալ։

Ամերիկայի նամակը արտագրեցինք եւ այնպէս ուղարկեցինք, ծածկագրերի գաղտնիքը չյայտնելու համար։ Լաւ կը լինէր, եթէ նրանք թղթակցէին Թափառիկի(6) *կամ մեր միջոցաւ։ Եթէ գնումները իրենք կատարեն, դա խօսք չկայ, աւելի կ՚ոգեւորի նրանց. բայց այդ ոգեւորումից է, որ վախենում ենք. նրանք էլ ընկերներին կ՚ուզեն ոգեւորել, ընկերներն էլ հակառակորդների դէմ կ՚ուզենան ապացոյցներ բերել եւ այսպիսով խնդիրը հրապարակի վրայ կը դնեն։*

1.- Սիմոն Զաւարեանին ուղղուած նամակ։
2.- Դաւթեան Յոնան։
3.- Վահան Փափազեան։
4.- Հարցը կը վերաբերի Քրիստափորի (Էլլէն) գլխաւորած Ցուցական մարմնին։
5.- Գաբրիէլ Կաֆեան, հնչակեան ղեկավար գործիչ։
6.- Տոքթ. Կարապետ Փաշայեան, գործիչ այդ օրերուն Եգիպտոս։

342

Պատճէններու մատեան No 88, *էջ* 243

1904 *սեպտ.* 14

Աթէնքի ընկերներին,

Սիրելիք,

Ստացանք ամս. 10-*ին ձեր հետեւեալ հեռագիրը՝* "Pochadretszek tache hazar Sarguis Abtahamiani hestzedo Vischab": *Հասկացանք այսպէս՝ «Փոխադրեցէք* 10,000 *Սարգ*[*իս*] *Աբր*[*ահամեանի*] *հասցէով Վիշապ*(1)»: *Անբնական համարելով, որ Վիշապ*(1) *այդ անունով փող պէտք է փոխադրուի, խնդրեցինք մի հեռագրով աւելի պարզ եւ ֆրանսերէն գրել: Ձեր երկրորդ հեռագիրն էլ մեր կասկածի վերաբերեալ ոչինչ չասաց: Որպէսզի բանը չուշանայ, ուղարկեցինք Վիշապ ձեր պահանջած գումարի չէքը: Բայց այսօրւայ Յոնանի*(2) *նամակից տեսնում ենք, որ Մ*[*արգիս*] *Ա*[*բրահամեան*]*-ը այդտեղ է եւ ոչ Վիշապ: Հիմա դուք գիտէք. գրեցէք եւ յետ պահանջեցէք: Միւս անգամ աւելի զգոյշ եղէք:*

Մի նամակ էլ մենք ենք Վիշապ գրում:

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՕ

Հայերէն հեռագրելու դէպքում պէտք է ամէն մի տառը առանձին եւ յստակ գրել:

Ն[*ՈՅՆ*]

343

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 68

սեպտ. 20

ԲԱԳՈՒ, ԱԲՐ[*ԱՀԱՄ*]*ԻՆ*(1)

1.- Աբրահամ Գիւլխանդանեանին ուղղուած նամակ, գրուած թանձր սեւ մատիտով: Բովանդակութեան մասին ոչ մէկ նշում:

344

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 69

սեպտ. 21-*ին*

ԹԻՖԼԻԶ ՆԱՄԱԿ(1)

Ղարիպի հասց[*էին*]

(*Թէ ինչպէս բանալ նամակները*)

1.- Նամակի նիւթի մասին փակագծի մէջ առնուած հակիրճ նշումով եւ «Ղարիբի [Ահարոնեան Աւետիս] հասցէին» ճշդումով:

345

Պատճէններու մատեան No 88, *էջ* 246
(*Փաստ.* 43-16)

1904, *սեպտ.* 21, *Ժընեւ*

Պ. Թափառիկին,

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր 15 *սեպտ. նամակը։ Ուղարկւած գումարների մասին յայտնած կը լինէք ի հարկէ պ. Սիմոնին*(1) *եւ աւելի լաւ է մնացած գումարի մասին սպասէք նրա նոր հրահանգին։*

Pro Armenia-*ի մասին նորից գրեցինք Պարիզ։*

«*Դրօշակ*» *բարակ թղթի վրայ ուղարկում ենք* 10 *օրինակ երկրի համար։ Եթէ Օլթիի դիակների պատկերներից*(2) *հարկաւոր լինի, յայտնեցէք։*

Այսօր հեռագրով խնդրեցինք որ դոկտորը սպասէ Պէյրութ, եթէ միայն ուշ չէ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Սիմոն Զաւարեանին:
2.- Նշուած պատկերներու մասին տեսնել 27 Օգոստոս 1904-ի նամակի թիւ 11 ծանօթագրութիւնը:

346

Պատճէններու մատեան No 88, *էջ* 247

1904 *սեպտ.* 21

Գահիրէի կոմիտէին

Յարգելի ընկերներ,

Ձեր նամակները ժամանակին ստացուել են։ Նուիրատուութեան ցանկերը լոյս կը տեսնեն No 9-*ում։ Խնդրենք նկատի ունենալ, որ բաւական թւով ցանկեր կան կուտակուած, տեղի սղութիւնը թոյլ չի տալիս ժամանակին հրատարակելու։ Ռուսաստանի ցանկերը երբեմն* 6-8 *ամիս են սպասում։*

«Կազմակերպչական կանոններից» 5 *օրինակ ուղարկել չենք կարող, որովհետեւ, ինչպէս տեսած կը լինէք վերնագրից, դա ուղարկւում է միմիայն կոմիտէներին եւ մէկ մէկ հատ։ Բաժանել դա խմբերին չի կարելի։ Կոմիտէները պարտաւոր են ենթակոմիտէներին եւ խմբերին վերաբերեալ մասերը արտագրել եւ իրենց յանձնել։ Այս էլ պէտք է աւելացնել, որ մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն ոչ Աղէքսանդրիան եւ ոչ Գահիրէն ընդհան. ժողովի սահմանած ցէնզին չեն համապատասխանում։ Այս հարցի մասին գրել ենք Աղէքս*[*անդրիայի*]* կոմիտէին, իրենք ձեզ էլ յայտնած կը լինին։*

Ձեր գրածին համաձայն, այսուհետեւ ձեզ կ՚ուղարկենք 200 *օր*[*ինակ*] [*վերջին տողը չպատճէնահանուած, հաւանաբար կը վերաբերի ուղարկուած «Դրօշակ»ներու համարներուն*]։

[*Ընկերական բարեւներով՝*
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ]

347

Պատճէններու մատեան No 88, *էջ* 249

1904 *սեպտ.* 23

Պ. Միհրան Ակինեանցին, Վիէննա

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր նամակը, որով առաջարկում էք մեզ յարաբերութեան մտնել ձեզ ծանօթ մի վստահելի զինավաճառի հետ։ Ուրախութեամբ պատրաստ ենք օգտւելու այդ առաջարկից։ Բայց տեսակների, տեղափոխութեան գծերի, յանձման, վարձատրութեան եւ այլ պայմանները այնքան բարդ են, որ անհրաժեշտ է անձնական տեսակցութիւն։ Ուստի շատ գոհ կը լինէինք, եթէ ձեր բարեկամը բարեհաճէր մեզ մօտ անցնել այդ բոլոր պայմանների վերաբերեալ վերջնական համաձայնութիւն կայացնելու։

Պատասխանը խնդրենք ուղարկել մեզ հեռագրով։

Մեր կողմից թախանձագին խնդրում ենք մեր համաձայնությունը տալու եւ առհասարակ մեր բանակցութեան մասին ոչ ոքի ոչ մի խօսք չասել։

Եթէ ձեր բարեկամը դժուարանայ իր միջոցներով գալ, պատրաստ ենք ամբողջ ծախսը մեզ վրայ առնել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Հեռագրի հասցէն՝ Droschak, Genève.

348

Պատճէններու մատեան No 88, *էջ* 250-251

1904 sept. 25

Cher camarade,

Nous venons d'envoyer à Foundouklian le dernier numéro du Droschak qui vient de paraître et qui contient d'intéressantes correspondances de Turquie et de Caucase.

Sur les derniers événements nous ne savons rien de précis. Nous attendons impatiemment les détails des événements à Vaspourakan. Tout ce que nous savons c'est que Andranik avec une forte bande avait débarqué à l'île d'Aghthamar, sur le lac de Van. La bande fut bientôt cernée; mais nos camarades purent repousser les attaques réitérées pendant deux jours entier et c'est après cette rencontre qu'ils se dirigèrent sur Van. Le reste vous est connu. Plus d'une semaine, les révolutionnaires s'étant barricadés dans un quartier de la ville résistèrent vaillamment aux troupes. Il faut vous dire que nos groupes de Van rejoignirent en grand nombre la petite troupe d'Andranik et [le] combat fut mené sous le commandement de Koms, notre représentant à Vaspourakan. Heureusement toutes les tentatives de l'ennemi de s'emparer des bandes échouèrent, et celles-ci purent gagner les montagnes, où elles sont, il faut espérer, en securité.

L'incomparable audace d'Andranik provoque l'admiration de tous.

Les clichés cosaques peuvent, certainement, être utilisés par qui que ce soit. Ils nous seront retournés après.

Vous pouvez utiliser dans le prochain numéro une citation de la "Novoé Vremia" concernant ces clichés. Le journal de Souverine nous attaque très violemment et déclare tout simplement que la photogtaphie est fausse.

La citation sera envoyée demain à Foundouklian, pour être traduite.

Salutations fraternelles
DROSCHAK

P. S.– Un de nos camarades du Bureau se rendra prochainement (le 27 ou 28 sept.) à Paris, pour participer au Congrès et tâchera de vous voir Armeau.

Թարգմանութիւնը.—

1904 *սեպտ.* 25

Սիրելի ընկեր(1),

Ֆունտուգլեանին ուղարկենք «Դրօշակ»ի վերջին համարը, որ նոր լոյս տեսաւ եւ որ կը պարունակէ հետաքրքրական թղթակցութիւններ Թուրքիայէն եւ Կովկասէն։

Վերջին դէպքերու մասին ճշգրիտ ոչինչ գիտենք։ Անհամբեր կը սպասենք Վասպուրականի դէպքերու մանրամասնութիւններուն։

Ինչ որ գիտենք, այն է որ Անդրանիկը մեծ խումբով մը ցամաքահանում կատարած էր Վանայ լճին մէջ գտնուող Աղթամար կղզին։ Խումբը շուտով շրջապատուած է, բայց մեր ընկերները կարողացած են ամբողջ երկու օր ետ մղել կրկնակի յարձակումները, եւ այս բախումէն ետք է որ անոնք ուղղուած են դէպի Վան։ Մնացեալին ծանօթ էք։ Աւելի քան շաբաթ մը, յեղափոխականները քաղաքի մէկ թաղամասին մէջ ամրացած՝ քաջութեամբ պաշտպանուած են զօրքին դէմ։ Պէտք է ձեզի յայտնել, որ մեծ թիւով Վանի մեր [օժանդակ] կռուողները միացան Անդրանիկի փոքրաթիւ խումբին եւ մարտերը մղուեցան Վասպուրականի մեր ներկայացուցչին՝ Կոմսի(2) *հրամանատարութեան ներքեւ։ Թշնամիին բոլոր փորձերը՝ մեր խումբերը ձեռք անցընելու ուղղութեամբ, բարեբախտաբար, ձախողեցան, եւ վերջիններս կարողացան բարձրանել լեռներ, ուր կը յուսանք որ ապահով վիճակի մէջ են։*

Անդրանիկի անզուգական յանդգնութիւնը ամէնուն հիացմունք պատճառած է։

Կոզաքներու քլիշէները(3) *անշուշտ որ կրնան օգտագործուիլ ոեւէ մէկուն կողմէ։ Վերջը պէտք է մեզի վերադարձուին։*

[Պրօ Արմենիա-ի] յաջորդ համարին մէջ կրնաք օգտագործել «Նովոէ Վրէմիա»-ի մէկ մէջբերումը կլիշէներու մասին։ Սուվորին թերթը մեր վրայ ուժգին կը յարձակի եւ կը յայտարարէ, պարզապէս,որ լուսանկարը կեղծ է։

Թարգմանութեան համար, մէջբերումը վաղը պիտի ուղարկուի Ֆունտուգլեանին։

Եղբայրական բարեւներով՝

ԴՐՕՇԱԿ

Յ. Գ.— Մօտերս (սեպտ. 27 կամ 28-ին) Բիւրոյի մեր ընկերներէն մէկը պիտի մեկնի Փարիզ, մասնակցելու համար Կոնգրէսին եւ պիտի աշխատի ձեզի հանդիպիլ։

1.- Յայտնաբար ֆրանսերէն այս նամակը ուղղուած է Փարիզ՝ Փրօ-Արմենիա-ի խմբագրապետ Պ. Քիյառին։

2.- Կոմս – ծածկանուն Փափազեան Վահանի։

3.- Կոզաքներու քլիշէներ – ակնարկութիւն Օլթիի սահմանագլուխին ռուսական զօրքերու կողմէ սպաննուած հայ ֆետայիներուն։ Պէտք է ճշդել, որ Թումանց Թումանի (Թորգոմ) առաջնորդութեամբ Սասնոյ ապստամբներուն օգնութեան փութացող ֆետայիներու «Ռուսական» խումբը Օլթիի մօտ թրքական սահմանը անցնելէ ետք շրջափակման մէջ գտնուած էր թէ՛ ռուս զօրքին եւ թէ վերջիններէն տեղեկացուած թրքական զօրքերուն կողմէ։ Հակառակ անոր որ ֆետայիները կամովին ածնատուր էին եղած ռուսերուն, վերջինները անխնայ կոտորած էին անոնցմէ շատերը։ Ապա, հայ ֆետայիներու դիակները յօշոտելէ եւ անդամահատելէ ետք՝ անոնք՝ այսինքն ռուս սահմանապահ զինուորները գլխաւորութեամբ սպայ Բրկովի նկարուած էին անոնց հետ։ Ահա այդ լուսանկարներն են, որ «Դրօշակ»ի խմբագրութիւնը հարիւր հազարաւոր օրինակներով ուղարկած էր եւրոպական եւ ամերիկեան մամուլին եւ այլազան հաստատութիւններու։

Աւելցնենք որ, Կարսի Հ.Յ.Դ. Կեդր. կոմիտէի որոշումով, 1904 թ. Օգոստոս 31-ին Օլթի քաղաքին մէջ Բրկով դաշնակցական տեռորիստի գնդակով ահաբեկուեցաւ։

349

Պատճէններու մատեան No 88, *էջ* 252-257

Հանգանակութիւն, հանգանակուած գումարներու «Դրօշակ»ի մէջ հրատարակութեան մասին՝ Պալքանեան Կեդր. կոմիտէին ուղղուած այս երկար եւ մանրամասն նամակի պատճէնին մէջ շատ մը բառերու դրոշմը թոյլ է եւ, հետեւաբար, անոնք կը մնան անընթեռնելի: Այդ բաժինները նշած ենք բազմակէտերով:

1904 *սեպտ.* 27

Պալքանեան Կեդրոն[ական] կոմիտիէն

Ընկերներ,

Ստացանք ձեր սեպտ. 5 *նամակը։*

Վարդանը(1) *Մարսէյլի ճանապարհն է ընտրել. արդէն այստեղ է։*

Ցուցական մարմնի պահանջը իրաւացի է. ըստ նախահաշուի, բացի պատրաստ 2000-*ից, սպասուելիք գումարից* (3000 fr.) 2000 fr. *եւս նրան պէտք է յատկացուի, ուրեմն ընդամէնը ձեր շրջանից* 4,000 fr.։

Կոնստանցայի(2) *խնդրի մասին ստացել էինք Վարդի*(3) *եւ մի քանի ուրիշների (ինչպէս վերջն իմացանք նախկին կոմիտէի անդամների) ստորագրութեամբ մի երկար բողոքագիր, որը այնպիսի ոճով չէր գրուած որ տրամադրէր պատասխանելու։ Ձեր վերջին նամակում դուք եւս շօշափում էք նոյն խնդիրը, իրաւացի գտնելով Կոստանցայի կոմիտէի բողոքը։ Մենք համամիտ չենք եւ դարձեալ կրկնում ենք, որ բիւրոն ուրիշ կերպ վարուել չէր կարող։ Եթէ բողոքողները եւ դուք պաղարիւնութեամբ քննէիք խնդիրը եւ մի շարք խնդիրներ, ... չէին կարող յայտնի լինե՞լ, դուք կը տեսնէիք, որ Բիւրոն հեռու է եղել «կենտրոնականութեան» ձգտումներից. պարզ կը լինէր նոյնպէս, որ Պալքանեան Կեդր. կոմիտէի հասցէին «վիրաւորանքի» խնդիրը ձեր ընթացքից էր կախուած. այսինքն դուք կարող էիք այնպիսի դիրք բռնել, որ «վիրաւորանքը» նպատակին չհասնէր։ Իսկ ինչ վերաբերում է մեր խաբուելուն, պէտք է ասենք, որ եթէ մեզ խաբող եղել է, դա Կոստանցայի կոմիտէն է եղել, որի տուած տեղեկութիւններով ղեկավարուել է Բիւրոն, իր համաձայնութիւնը տալիս։ Այդ նամակի մէջ պարզ կերպով ասւում է, որ հանգանակութիւնը ժողովրդական է եղել ու «ժողովրդական ձեւի տակ ըլլալուն շատերի փափագն է ուղղակի Արեւմտեան բիւրոյին յանձնել բուն իր նպատակին յատկացնելու համար»։ Այս փափագի հանդէպ կոմիտէն իր կողմից աւելացնում է՝ «մեր մասին այս մտածումները անտեղի են. կոմիտէս կ'ուզէ ուղղակի Պալքանեան կոմիտէի տրամադրութեան տակ դնել»։ Հիմա կոմիտէն ինչ բացատրութիւն էլ տայ, չի կարելի ուրանալ, որ ժամանակին նա խոստովանել է «շատերի փափագի» մասին, եւ ուզեցել է հակառակ այդ փափագին իր ուզած ձեւով կարգադրել հանգանակութիւնը տեղ հասցնելու խնդիրը։ Եթէ Կոստանցայի կոմիտէն չգիտէ, բայց ձեզ պէտք է յայտնի լինի որ դաշնակցական մարմինները ոչ միայն խոյս են տալիս բռնութիւն գործելուց նւիրատուների կամքի վրայ, այլ եւ ընդհակառակը, իրենք են առաջարկում նրանց հաւանած ճանապարհով [մէկ բառ անընթեռնելի] հասցնել դրամը։ Ոչ*

Արեւելեան բիւրոն ոչ էլ Արեւմտեանը, որ երկրի մէջ գործող մարմինները մտածել են «վիրաւորուել» երբ այս կամ այն պատճառով նւէրները գնացել են կազմակերպութեան ուրիշ շրջանի մարմիններին, չեն վիրաւորուել նոյնիսկ [մէկ բառ անընթեռնելի] անվստահութիւն ցոյց տուած դէպքերում։ Քիչ է պատահել, որ մեր ընկերները կամ կոմիտէները իրենք առաջարկեն, «եթէ մեզ չէք վստահում, ուղարկեցէք այս կամ այն մարմնին, այս կամ այն ճանապարհով»։ Չեն վիրաւորուել, որովհետեւ աչքի առաջ են ունեցել ոչ թէ սրա կամ նրա «հովերը», նոյն իսկ «վիրաւորելու» տրամադրութիւնը, այլ գործի շահերը։ Չեն վիրաւորուել, որովհետեւ նրանց համար կարեւոր տեղ է բռնել վստահութիւնը, դէպի ամբողջ կազմակերպութիւնը կամ նրա մի գործող մարմինը։ Չպէտք է մոռանալ, որ յաճախ այս կամ այն մարմնին այս կամ այն ճանապարհով նպաստ հասցնելու փափագը բղխում է ոչ միայն անվստահութիւնից, այլեւ մի ներքին ցանկութիւնից իրենց սիրած մարմնին աւելի մօտիկից կապւելու։ Այս ձեւով է եղել դրւած եւ Կոստանցայի հանգանակութեան խնդիրը Արեւմտեան բիւրոյի առաջ, եւ ոչ մի խօսք է եղել սկզբում «անվստահութեան» վերաբերեալ։

Սրանով չենք ուզում ի հարկէ ասել, որ կանոնաւորութիւն չի հարկաւոր։ Պարզ է, որ կազմակերպութիւնը[?] ամէն կերպ պէտք է ձգտի դիւրութիւն, կանոնաւոր [մէկ բառ անընթեռնելի] կարգեր սահմանել, ինչ որ արել է [ընդհանուր] ժողովը, բայց որովհետեւ դրան չի կարելի հասնել բռնութեամբ, ճնշումներով, ընդհանուր ժողովը ընդունել է բացառիկ դէպքեր, սպասելով, որ դաշնակցական մարմինները իրենց բարոյական ազդեցութեամբ հեղինակութիւն ձեռք բերեն հասարակութեան առջեւ եւ վստահութիւն ներշնչելով, սահմանած կարգերը ընդունիլ տան։ Այդ ձեւով է վարւել, ի միջի այլոց, Ամերիկայի մեր մարմինը եւյաջողութիւն գտել ձեռք բերելով չէզոք հասարակութեան կատարեալ վստահութիւնը։ Կոստանցայի հասարակութեան փափագի հանդէպ Արեւմտեան բիւրոն իրաւունք չի համարել կատարել կոմիտէի ուզածը եւ տուել է պահանջած հասցէն։ Ուրիշ կերպ նա բարոյական իրաւունք չունէր վարւել։ Եթէ բիւրոյին յայտնի լինէր այն հանգամանքը, որ նախօրօք դիմում են արել Պալքանեան Կ. կոմիտէին եւ մերժում ստացել, այն ժամանակ ի հարկէ բիւրոն կը հարցնէր Կեդր. կոմիտէի հիմունքները։ Բայց դրա մասին ոչ մի խօսք չկար ոչ կոմիտէի եւ ոչ Յոնիկեանի[?] նամակների մէջ. եւ բիւրոն տուել է իր համաձայնութիւնը, Կոստանցայի կոմիտէի «կ՚ուզէ»ն համարելով Դաշնակցութեան սկզբունքներին անծանօթ լինելու արդիւնք։

Կոմիտէի անդամների նախաձեռնութիւնը, աջակցութիւնը, մասնակցութիւնը, եւ այլն, շարունակ շեշտւում է, չեն կարող իրաւունք տալ կոմիտէին իր ուզածին պէս տնօրինելու, եթէ նոյնիսկ կոմիտէի անդամները ամբողջ հանգանակութիւնը իրենք կատարած լինէին։ Գլխաւորը նւիրատուների փափագն է եւ հանգանակութեան ձեւը, իսկ այդ ձեւը եղել է «ժողովրդական», ինչպէս հաստատում է կոմիտէն։

Ինչ վերաբերում է նոր կոմիտէի ընտրութեան, նոր անդամներին, նրանց անվստահելիութեան, Յոնիկեանի[?] ձգնաւորեանին բարեկամ լինելուն, նրա չար միտումներին եւ այլն... այդ բոլորը չի կարելի իբր առարկութիւն ծառայել Արեւմտեան բիւրոյի տուած որոշման դէմ, թէկուզ այն պարզ պատճառով, որ դրանք նոր հանգամանքներ են բիւրոյի համար։ Եւ եթէ բողոքողները հասկացել են, որ պ. Յոնիկեանները[?] դաշնակցական մարմինների միջեւ անհամաձայնութիւն ձգելու չարամտութիւնը ունին, իրենք պէտք էր զգուշանային խառնակիչների դիտաւորու-

թիւնների իրագործման նպաստելուց։ Իսկ այն ընթացքը, որ բռնել են Կոստանցայի ընկերները եւ Վարդը, կասկած չկայ, որ ցնծութեամբ կ՝ողջունի նրանց կողմից, որոնք անհամբեր սպասում են մեր հրապարակային կռիւներին։ Ձենք կարող ..... որ մանաւանդ ընկեր Վարդի բռնած ընթացքի .....։ Այն բողոքագիրը, որ նա գրել է եւ որը ..... Կոստանցայի նախկին կոմիտէի անդամները, ... անտակտ մի գրութիւն է, ...։ Ժամանակ չունենալով կանգ առնել նրա այլ եւ այլ կէտերի վրայ — նամակը առանց այն էլ երկար — ցոյց տալ Վարդի սխալը։

..... ինչն է դրդել բիւրոյի նամակը վերագրել մի անհատի միայն եւ աւելացնել այդ առթիւ անտեղի խորհրդածութիւններ։ Երբ նամակի տակ գրւած է «Արեւմտեան բիւրո» ստորագրութիւնը, դա նշանակում է, որ նամակը գրւած է խորհրդակցութեամբ եւ համաձայնութեամբ բիւրոյի բոլոր անդամների եւ որ բիւրոն է պատասխանատու գրւածին եւ ոչ այս կամ այն անհատը։

Այս բոլորից պարզ է, որ եթէ կայ թերութիւն Կոստանցայի հանգանակութեան խնդրի մէջ, դա չպէտք է փնտռել Արեւմտեան բիւրոյի որոշման մէջ. Բիւրոն մի պայմանով միայն կարող է կատարել Կոստանցայի կոմիտէի ուզածը, այն է երբ նա ձեռք կը բերի նիւրատուների ընդհանուր համաձայնութիւնը։

Սուլինայի(4) *կոմիտէի ուղարկած գումարները, ինչպէս եւ Պալքանեան շրջանից ուղղակի մեզ եկած բոլոր դրամները կը մտնեն ձեր հաշւին։*

Ընդհանուր կարգադրութիւն արէք, որ բոլոր հանգանակութեան ցանկերը ձեր միջոցով ուղարկեն հրատարակութեան, եթէ նոյն իսկ գումարները ուղղակի մեզ են ուղարկւում։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Խօսքը Խանասորայ Վարդանի մասին է, բուն անունով՝ Մեհրաբեան Սարգիս:
2.- Կոստանցա – քաղաք Ռումանիոյ մէջ:Յայտնենք որ Պալքանեան Կեդր. կոմիտէի իրաւասութիւնը կը տարածուէր Պուլկարիոյ, Ռումանիոյ եւ աւելի ուշ, Սերպիոյ վրայ:
3.- Վարդ – ամբողջական անունը՝ Վարդ-Պատրիկեան Յակոբ:
4.- Սուլինա – քաղաք Ռումանիոյ մէջ:

350

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 69-71

սեպտ. 25

ԹԻՖԼԻՋ(1)

Կացութեան մասին: – Դեսպանի խնդիր: Վարդան – Կոնստանցա – Կոնգրէ – Հաշիւներ – համար – Քարտուղար

Քաղաքական կացութեան մասին: Անգլիան անտարբեր է աւելի. Իտալիան կարծես բոլորովին հեռացել է: Դրա մասին գրեցինք Պարիզ: Իտալիայի ընթացքը բացատրւում է նրանով , որ Սուլթանը նրան օրօրում է Ալբանիայի ապագայ տիրապետութեան երազներով: Անգլիան փոխւել է, որովհետեւ Դարդանէլի խնդիր է ծագել: Բացի այդ, չի ուզում, որ Ամերիկան յաջողութիւն գտնի հայկական խնդիրը առաջ քշելով: Մնում է Ֆրանսիան, որ մենակ ոչինչ չի կարող անել:

Եթէ ի մի բերենք թէ լրագրական լուրերը եւ թէ երկրից եկած տեղեկութիւնները, այն ժամանակ կարելի է հետեւեալ ամփոփումը անել:

Տաճկաստանը կարծես Անգլիայի աջակցութեամբ կամենում է օգտւել հանգամանքից Ռուսաստանի վերաբերմամբ իր դիրքը ամրացնելու: Գուցէ կարողանայ պատերազմի երկիւղով ազատւել մի քանի սահմանափակումներից, որ նրա վրայ է դրել Ռուսաստանը պատերազմից յետոյ: Անգլիա-տաճկական այդ համաձայնութիւնն է գուցէ պատճառ, որ անգլիական հիւպատոսը Մշում աջակցում է տաճիկ կառավարութեան ժողովրդի զինաթափման գործին (հիւպատոսի այդ ընթացքի դէմ հեռագրով բողոքեցինք անգլ[իական] մինիստրին): Միւս կողմից գուցէ անգլիական ազդեցութեան ենք պարտական, որ Վասպուրականում, շատ դէպքերում տաճ[իկ] կառավարութիւնը միջնորդների եւ այլ խաղաղ միջոցների է դիմել, երբ մեր խմբերը եւ նրանց միացած գիւղացիները յարձակումներ են գործել տաճիկ զօրքերի վրայ (տես Բայանդ[ուր] Իշխանի(2) նամակները):

Իսկ եթէ հաւատանք Սիմաֆորի թղթակցին, որը Պոլսոյ ֆրանս. դեսպանատան պաշտօնեայ է, անգլիական դեսպանը էսկադրիայի(3) ընդունելութեան ժամին իսկ պնդել է Մայիսեան ռեֆորմների անհրաժեշտութեան վրայ: Եթէ Ռուսաստանի դէմ մի բան է պատրաստւում, զարմանալի չի լինել, եթէ Անգլիան աշխատի գոհացնելով հայերին խաղաղութիւն հաստատել Տաճկաստանում. կարծես ռուսները մասամբ այդ զգում են Նովոյէ առնի-եան(4) յարձակւում է կառավ[արութեան] բռնած ընթացքի վրայ (մեր տպած պատկերների առթիւ) .....(4) արխիւից հանում եւ տպում է 2-3 ամիս առաջ գրած մի թղթակցութիւն ռուսաց կոտորածի մասին:

Շուտով մեզանից մէկը Պարիզ է գնալու: Այնտեղ էլ խօսք կը լինի, ի հարկէ: Գնալու է մասնակցելու Ֆինլանդացիների հրաւիրած կոնգրէսին, որ լինելու է սեպտ. 30-ին:

Դեսպանի խնդրին մենք համակարծիք չենք: Դա կը համարւի մի յուսահատական քայլ: Այդ խնդրին դարձեալ կը դառնանք:

<u>Կոնստ[անց]այի չէքի մասին</u> 10 անգամ հարցրել ենք, ստացել էք, թէ ոչ: Ինչո՞ւ ոչինչ չէք պատասխանում: Խնդրենք այս անգամ պատասխանէք հեռագրով՝ Calic-

jian Roseraie *հասցէով։ Ստիպողական է։ Նաւահանգիստ Վահապի*(5) *ասելով շատ փամփուշտ կայ... պահանջեցէք Շամի համար։*

Սպասում ենք հաշիւների, թէ Բիւրոյի եւ թէ Կովկասի բոլոր մարմինների։

Թող Բժիշկը(6) *իր մօտ մի քարտուղար պահէ, լաւ ձեռք ունեցող յատկապէս թղթակցութիւնների համար, կարող է իբր* .....(7) *ապրել տանը։*

No 9 (8) *այսօր ուղարկում ենք։*

Ակոպի ձեռքով մի ընդարձակ նամակ ենք ուղարկել։

Խնդրենք յայտնել, մեր որ նամակներն են ստացուել։

Ստացանք Ռուբէնի նամակը։

1.- «Բանկի հասցէին» նշումով, յայտնապէս ուղղուած է Արեւելեան բիւրոյին:
2.- Բայանդուր իշխանը՝ Վանայ Իշխանի (Միքայէլեան Նիկոլ) մէկ այլ ծածկանունն է:
3.- Նաւատորմի:
4.- Ռուսատառ. թերթի անուններ են. երկրորդը՝ անընթեռնելի:
5.- Վահապ – ծածկանուն Վռամեան Արշակի: Շամը՝ Վան-Վասպուրականն է:
6.- Բժիշկը՝ Արեւելեան բիւրոյի անդամ Յովսէփ Տէր Դաւթեանն է:
7.- Ռուսերէն անընթեռնելի բառ:
8.- «Դրօշակ»ի Սեպտեմբերի համարը:

351

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 72-75

30 *սեպտ. գրուած*

ԹԻՖԼԻԶ(1)

Մի կարեւոր խնդիր

Այստեղ մենք բանակցութեան մէջ ենք մի զինավաճառի հետ, որ պատրաստականութիւն է յայտնում մեզ զէնք յանձնել Պարսկաստանում, որ կէտում որ ուզենանք, եւ բացի այդ Տրապիզոնում, Էրզրումում, Բայազէդում եւ նոյն իսկ Վանում (այս վերջին երկու կէտերում — դժւարութեամբ), առհասարակ Տրապիզոնից — Բայազէդ ճանապարհի բոլոր կէտերում։

Տաճկաստանում յանձնելու կարողութեան կասկածում ենք, բայց Պարսկաստանում վստահ ենք, որ կարող է։ Մօտ ժամանակում նա մեր տրամադրութեան տակ կարող է դնել 1.000 *հրացան վէրէնդէլ սիստեմի։ Ուրիշ հրացանների պատւէրը կարող է կատարել* 6 *ամսից յետոյ միայն։ Վէրէնդէլը տալիս է մեզ հատը* 30 *ռուբ. առանց փամփուշտի, եւ պայմանն է, որ մեր պատւէրը* 1.000 *հատից պակաս չլինի։ Այդ քանակութիւնը կարող ենք մենք ստանալ զանազան կէտերում եւ զանազան ժամանակներ։ Ապահովութեան համար պայման է դնում միայն, որ ամբողջ պատւէրի գինը* (30.000 *ր.*) *մենք պահ տանք մի բանկի առաջուանից, եւ ինքը բանկից ստանայ այն չափով, ինչ չափով յանձնւում է ապրանքը, ամէն անգամ ներկայացնելով բանկին ապրանք ստացողի կողմից ստացական։*

Մենք յայտնել ենք նրան, որ մեր վերջնական պատասխանը կը տանք, մեր պատ-

ւէրը կ՝անենք ընկերների կարծիքը իմանալուց յետոյ։ Դեռ մեր մէջ էլ կան մանրամասնութիւններ, որ դեռ չեն պարզուած, բայց եւ այնպէս հիմիկուանից ենթարկում ենք այս խնդիրը ձեր խորհրդածութեան եւ հարկ ենք համարում առաջ բերել մեր դիտողութիւնները։

Վէրէնդէլը պարսկական զօրքի հրացանն է, բերդանից լաւ եւ հաստատ։ Այս կողմից մեզ կարող է գոհացնել։ Մենք երկիւղ յայտնեցինք, որ կառավարական զէնք լինելով, կառավ.ը կարող է հալածանք սկսել, եթէ մեր ձեռքում տեսնեն։ Զինավաճառը մեզ պատասխանեց, որ երկիւղը անհիմն է, քանի որ հազարներով ծախւում է ժողովրդի մէջ։ Դժուարութիւնը փամփուշտի կողմից կարող է լինել։ Նա մեզ կարող է յանձնել ընդամէնը 20.000 լցած փամփուշտ, եւ 30.000 հատ գիլզա(2), լցածքը հատը 10 կոպ[եկ], իսկ պարապ գիլզան 7 կպ.։ Պէտք է Վրէժից հարցնել, կարելի է անդրեո՞ք փամփուշտ գտնել։ Բացի այդ, մի առաջարկ ունենք, որ սրանից 2-3 տարի առաջ գրւած է Վրէժ, բայց անուշադրութեան է մատնւած ի միջի այլոց փողի պակասութեան պատճառով։ Առաջարկն է՝ Թաւրիզում հիմնել մի փամփուշտի գործարան, որ նոյնիսկ իբր առեւտրական ձեռնարկ մեզ մեծ օգուտ կը տայ։ Մեքենաների գների, գնման ու հաստատման հնարաւորութիւն եւ այդ պայմանների հետ ծանօթանալուց յետոյ կը գրենք դրա մասին։

Քանակութիւնը (1000 հատ), *մեզ չպէտք է վախեցնի։ Եթէ չկարողացանք ամբողջը տեղաւորել, աւելորդը միշտ կարելի է ծախել հայ ժողովրդին։ Վերջապէս կան տեղական խաներ, որոնք պատրաստականութիւն են յայտնել օգնել մեր տեղափոխութեան գործին, եթէ մենք էլ նրանց հրացան հասցնենք իրենց փողով։ Կարելի է վերսկսել նոյնպէս բանակցութիւնները Ուրմիոյ սահմանների մօտ ապրող քիւրդական չէյխի հետ, որ թշնամի է տաճիկ կառավարութեան, որը առաջարկել է մեզ հետ միութիւն, խնդրելով մեզանից միայն զէնք իր փողով եւ իր որդուն պատանդ է առաջարկել։*

Գուցէ կարելի լինի համոզել նրան, որ միայն 500 *հրացանի պատւէր ընդունի։*

Ապրանքը ընդունելու համար յարմար է ունենալ Պարսկաստանում մի երկու հոգի աչքը բաց ամերիկական հպատակներ։ Սրա մասին խօսք է տալիս հոգալ Վահապը(3)*։*

Մեր կարծիքն է, եթէ Պարսկաստանում հնարաւորութիւն կայ փամփուշտների պակասը լրացնել (ամէն մի հրացանին առնուազը 500 *փամփուշտ), կամ եթէ փամփուշտ չինելու մեր ծրագիրը իրականանայ, այն ժամանակ կարելի է պատւէրը տալ։ Հակառակ դէպքում պէտք է ուրիշ հրացանների պատւէր տալ։*

Մի հանգամանք եւս պէտք է նկատի ունենալ։

Շատ հաւանական է, որ Պարսկաստանը նոյնպէս ուզում է նոր հրացաններ ձեռք բերել վէրէնդէլի փոխարէն։ Նա կարող է մտադրութիւն ունենալ գնել։ Թէկուզ Գերմանիայի նորերս փոխած հրացանները։ Այդ դէպքում նա ի հարկէ արժան գնով հրապարակ կը հանի իր հին հրացանները։ Եւ ով գիտէ գուցէ մեզ հետ բանակցող պարոնը այդ հրացանների վրայ է յոյս դնում։ Սրա մասին պէտք է ճիշտ տեղեկութիւն հաւաքել, թէեւ միւս կողմից Պարսկաստանը որտեղի՞ց պէտք է միջոցներ գտնի զէնքերը փոխելու։

Այս խնդրի մասին գրում ենք եւ Վրէժ։ Շուտով խորհրդակցեցէք եւ հետեւանքը մեզ հաղորդէք։ Զինավաճառը սպասում է մեր պատասխանին մօտաւորապէս մի ամսից յետոյ։

Վարդանը(4) *այստեղ է. Յոնանը գնում է Ամերիկա։ Լեւոն Գիւլ[ումեանին] գրե-*

ցինք, որ վերադառնայ ձեզ մօտ։ Խօսէք հետը դեսպանի եւ նման խնդիրների մասին։ Մեր ծրագրի մասին նրան ոչինչ չենք յայտնել։ Գրէք ձեր որոշումների մասին։

1.- Գրութիւնը ուղղուած է Արեւելեան բիւրոյին, «Եւանգ[իլեանի] հասցէին»։ Կողքին, դարձեալ Ռոստոմի ձեռքով, կայ «ստացած» արձանագրութիւնը, ինչ որ ենթադրել պէտք է տայ, թէ որեւէ միջոցով իմացուած է գրութեան տեղ հասած ըլլալը։
2.- Դատարկ փամփուշտի պատեան, պարկուճ։
3.- Վահապ – Վռամեան Արշակ։
4.- Խանասորի Վարդանը (Մեհրաբեան Սարգիս), Յոնանը՝ Դաւթեանն է։

352

Պատճէններու մատեան No 88, *էջ* 259-260

1904 *հոկտ.* 1

«Վրէժ» Կեդր. կոմիտիէն(1)

Սիրելի ընկերներ,

Հաստատում ենք մեր սեպտ. 20 *եւ* 30-*ի նամակները (վերջինիս մէջ ընդհ. ժողովի որոշումների չտպագրուած մասը)։*

Ստացել ենք ձեր սեպտ. 2 *նամակը, յուլիս* 12-*ինը եւ* 14-*ինը, օգ.* 18-*ինը նոյնպէս ստացուած են ժամանակին։ Վրիպակները տպուած են* No 9-*ում*(2)։

Կը փոխադրենք նորից 2,000 fr. *աւելի յարմար է կրկնակի ծախսերի չենթարկուելու համար Սարուստանից*(3) *պահանջէք հարկաւոր գումարը։*

Անդրանիկը(4) *գրում է, որ գուցէ սահմանը անցնի եւ ձեզ մօտ գայ իր ընկերներով։ Մենք յուսով ենք, որ նրանց դիմաւորելու մասին հարկ եղած կարգադրութիւնները կ'անէք. յուսով ենք նոյնպէս, որ կռիւների մէջ իրենց քաջութեամբ փայլող զինուորները ազատ վայրում եւս, խաղաղ կեանքում, իրենց վարմունքով, նիստ ու կացով բարձր կը պահեն կազմակերպութեան պատիւը։ Խնդրենք նրանց գալուն պէս անմիջապէս մեզ հեռագրէք, իսկ քանի «երկրի մէջ» են, ամէն ջանք թափէք նրանց պահանջներին գոհացում տալու։ Այդ մասին մենք եւս կը գրենք Արեւելեան բիւրոյին։*

Մի կարեւոր խնդիր։

Այստեղ մենք բանակցութեան մէջ ենք այն զինավաճառի հետ, որ մասնաւորապէս պարապում է զէնք գնելով եւ Պարսկաստան տեղափոխելով։ Նա պատրաստականութիւն է յայտնում [մէկ տող առանց պատճէնի](5)։ Զենք կարծում, որ շատ մեծ միջոցներ պահանջի մեզանից։

Մի ուրիշ հարց. եթէ 1,000 *ծայրի [մէկ բառ անընթեռնելի] պէտք չունենանք (պահելու մասին չենք խօսում, որովհետեւ մաս մաս ենք վերցնելու), կարելի՞ է աւելորդը ծախել Սալմաստի հայ ժողովրդին, կամ մեր բարեկամ բէկին կամ [մէկ բառ անընթեռնելի] խանին. գուցէ կարելի լինի վերսկսել բանակցութիւնները Ուրմիի չէյխի հետ։ Ապրանքը ընդունելու համար Սամսոնը կամ Պետրոսը*(6) *կարող են ու-*

նենալ իրենց հետ մի երկու ամերիկահպատակ ընկերներ, որոնք կը վարեն գործը։ Այդ մասին խօսք է տալիս հոգալ Վահապը(7)։

Շատ հաւանական է նոյնպէս, որ Պարսկաստանը ուզում է փոխել իւր հրացանները, նորերը ձեռք բերել։ Այդ դէպքում նա ի հարկէ ստիպւած կը լինի արժան գներով հրապարակ հանել իր հին հրացանները։ Խնդրենք հարց ու փորձ անել այս մասին եւ ճիշտ տեղեկութիւն հասցնել մեզ, չլինի թէ 30 *ր*[*ուբլի*]*ով պայման կապելով խաբւենք։*

Եթէ այդտեղ որեւէ առաջարկ լինի ձեզ զէնք գնելու եւ այլն, խնդրենք մեզ անմիջապէս յայտնել։

Ի դէպ ուզում ենք պարզած լինել մի խնդիր չէյխի մասին. նրա առաջարկած պայմանները լաւ են, եթէ միայն յետին միտք չունի։ Զի՞ ուզում արդեօք նա զինւել մեր միջոցով եւ փոխանակ տաճիկ կառավարութեան դէմ ապստամբելու զէնքը դարձնի — եթէ ոչ հայերի — Պարսկաստանի դէմ։

Այս նամակը Սալմաստ հաղորդելով, խնդրենք շատ շուտով մեզ պատասխանել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ատրպատականի Կեդր. կոմիտէին:
2.- Իմա՝ «Դրօշակ»ի 1904 թ. թիւ 9 համարում:
3.- Սարուստան – ծածկանուն Կովկասի:
4.- Խօսքը հայդուկապետ Անդրանիկի մասին է, որ Սասնոյ 1904 թ. ապստամբութենէն ետք խումբ մը զինակից ընկերներով անցած էր Ատրպատական, ապա Կովկաս մեկնելու համար:
5.- Այս մասին տեսնել նախորդ՝ 30 Սեպտ.ի եւ 1 Հոկտ.ի նամակները:
6.- Սամսոն – ծածկանուն Թադէոսեան Ստեփանի – Պետրոս (զինագործ) – Տէր Յովհաննիսեան Բագրատ:
7.- Վահապ – ծածկանուն Վռամեան Արշակի (վերջինիս բուն անունն էր Դերձակեան Օննիկ):

353

Պատճէններու մատեան No 88, *էջ* 262-263

1904 *Հոկտ.* 5

Սարգիս Աբրահամեանին, Աթէնք

Ստացանք ձեր վերջին նամակը։ Զէքի փոփոխւած պատճէնը այսօր կ՝ուղարկենք ձեզ։ Ապագայում այսպիսի բարդութիւններից խոյս տալու համար աւելի լաւ է նամակներով պահանջներ անէք, եթէ գործը ստիպողական չէ։ Իսկ եթէ անհրաժեշտ է հեռագրով յայտնել. մի քանի ֆրանկ մի խնայէք պարզ գրելու համար։

Պարսկաստանից մեզ հեռադիտակների մասին ոչինչ չեն գրել։ Շամի(1) *նամակներից մէկում գրւած չէր, որ պէտք ունին։ Բայց չենք յիշում, որ Պարսկաստանից հեռադիտակների պատւէրը մեզ արած լինին։ Կոմսի*(2) *վիճակի մասին մեզ եւս յայտնի է։ Մենք մեզ բոլորովին չենք արդարացնում, միայն չպէտք է մոռանալ, որ մեր մարմինները աւանդական սովորութիւն ունին ամէն պատասխանատւութիւն բիւրոների վրայ ձգել։ Շամի հետ մենք նամակագրութիւն չենք ունեցել ուղղակի, որովհետեւ այդտեղից արգելեցին՝ չվտանգելու համար գործը։ Պահանջներին գո-*

հացում չենք տուել ժամանակին, որովհետեւ նրանց ծրագիրը կազմուած էր շատ լայն եւ դրա համար անբաւարար էր այն չնչին գումարը, որ յատկացրած է եղել ընդհ. ժողովը Վասպուրականին։ Անհրաժեշտ էր բացառիկ ժողովում սահմանուած նախահաշիւներից աւել եկամուտը յատկացնել, իսկ դրա համար ժամանակ ու խորհրդակցութիւն էր հարկաւոր։ Կոմսի դրութիւնը հասկանալի է, բայց պահանջները նպատակայարմար են, բայց տրտունջները այնքան էլ իրաւացի չեն։

Մինիստ[ր]ներին ուղարկած «սպառնական» ազդարարութեան պատճառը կոտորածի պատրաստութեան հեռագիրներն էին եւ որ անպատճառ չի կապւում ցուցականի գործունէութեան հետ։

Մինչեւ հիմա մեզ չգրեցիք այն նիւթի բաղադրութիւնը, որ Էլլէնը(3) *գտեր էլ Պարիզում։ Շուտով գրեցէք, որովհետեւ տղաներ կան, որ սովորել եւ գնալ են ուզում։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ամերիկայից ուղարկել են մեր հաշւին դարձեալ 1.000 *տոլ[ար]* (5.152 fr.)։ *Խընդրում են ձեզանից ստացական թէ այդ գումարի եւ թէ նախընթաց* 1.000 *տ. համար։ Եթէ կնիքը ձեզ մօտ է, շտապեցէք ուղարկել։*

Ն[ՈՅՆ]

1.- Շամ – ծածկանուն Վանի:
2.- Կոմս – ծածկանուն Փափազեանի Վահանի:
3.- Էլլէն – ծածկանուն Միքայէլեան Քրիստափորի:

354

Պատճէններու մատեան No 88, *էջ* 264

1904 *Հոկտ.* 5

«Վրէժ» կեդր. կոմիտէին

Սիրելի ընկերներ,

Ներփակ ուղարկելով 5000 fr. *չէք, խնդրենք այդ գումարը ծառայեցնել Տարօնի եւ Շամի ընկերների պէտքերին։ Այս գումարը ուղարկւած է Ամերիկայի կենդր. կոմիտէի կողմից. խնդրենք «Վրէժ»ի կողմից մի ստացական ուղարկել հետեւեալ հասցէին՝*

A.R.F. Central Committee
P. O. Box 2690
Boston, Mass, U.S.A.

Հաստատում ենք մեր հոկտ. 1 *նամակը։ Այնտեղ թէեւ խոստացել էինք ուղարկել միայն* 2.000 fr., *բայց յետոյ մտածեցինք աւելացնել, խորհելով, թէ Ս[արուստան]ից կարող է ուշանալ։*

Ն[ՈՅՆ]

355

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 78

Գրուած 5 *հոկտ.* [1904]

ՅՈՒՅԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ(1)
Սաֆոյին — Սայեանի հասցէով

Յուցականի հաշւին ստացւած է 5.152 fr.: *խնդրում են ստացագիր թէ այս գումարի եւ թէ նախընթաց* 1.000 *տոլարի համար: Ո՞ւմ պէտք է դիմել:*

Սաֆոյի երկու նամակները ստացւած են:

Դիմումները տաճկերէն լեզւով եթէ կ՚ուզէք պատրաստ պահենք, որ հարկաւոր ժամանակը անմիջապէս ուղարկենք: Կարելի է այն ձեւով տպագրել, որ յայտնի չլինի մարմնի անունը:

Մեր նամակներից մէկում հարցրել էինք, թէ մի բան արիք արդեօ՞ք 6.000 *ր*[*ուբլու*] *մասին: Ոսկանապատից*(2) *հարցնում են հանգուցեալ Նժոյգի խնդրի մասին*(3). *Անպատճառ ուզում են մի բան արած լինեն: Եթէ դուք չէք անելու, իրենք կ՚անեն. պատասխանեցէք:*

Հարցրել էինք նոյնպէս Պայպըլ հաուզի(4) *միջոցով դրամ փոխադրելու համար Մուշ ոչ թէ այն ձեւով, ինչպէս գրել էր Թորգոմը* (5), *այլ դրամը այդտեղ ուղղակի իրենց տալով, որպէսզի իրենց ներկայացուցիչը Բաղէշում յանձնի առաջնորդ Վարդան վարդապետին:* .....(6), *շատ էք անհանգիստ ուղարկւած* 30.000 *մասին: Միամտւեցէք, փոխարէն ստացել ենք աւել* 15.000 *ր.*, *այսինքն մօտ* 10.000 fr. *աւելի: Յոնանը*(7) *գնում է Ամերիկա:*

Վանայ նամակի բովանդակութիւնը եւ մեր պատասխանի գլխաւոր կէտերը(8):

1.- Յուցական մարմինը, յիշեցնենք, ստեղծուած էր Ընդհ. ժողովին կողմէ Սուլթանը ահաբեկելու նպատակով. զայն ղեկավարող Քր. Միքայէլեանի մահէն ետք, գործը ստանձնած էր Մարտիրոս Մարգարեան, ծանօթ Սաֆօ եւ Կարմրաքշիկ ծածկանուններով: Յուցականի գործունէութեան մասնակիցներէն էր նոյնպէս Գրիգոր Սայեան (1881-1921):

2.- Պաքուից:

3.- Նժոյգը՝ Սուլթան Համիտն է կամ անոր ահաբեկման ծրագիրը: «Հանգուցեալ» նշումը կը վերաբերի հաւանաբար մահափորձի վիժած ըլլալուն:

4.- Պայպըլ հաուզ-ը Աստուածաշունչը տարբեր լեզուներով հրատարակելու եւ տարածելու ամերիկեան կազմակերպութիւն է:

5.- Արտաշէս Սերեմճեան, անդամ Յուցական մարմնի:

6.- Քանի մը բառերու վրայ մելանը տարածուած ըլլալով՝ ընթեռնելի չէ խօսքը. հարցը ըստ երեւոյթին կը վերաբերի Յունիսին ուղարկուած նամակի մը:

7.- Յոնան Դաւթեանը:

8.- «Կէտերը» չեն նշուած. անոնք պիտի յիշուէին այս «սեւագրութեան» արտագրուած (գաղտնի թանաքով) օրինակին մէջ:

356

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 79

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Ստացանք Գրիշայի 25 *Օգ. նամակը եւ Ռուբէնի* 5/18 *Սեպտ.-ինը։* Quillard-*ի*(2) *հասցէն՝* Maurice Peyrol 368 Rue Saint-Honoré, Paris.

«*Կովկասեան վէրքերը*»(3) *արդէն վաղուց այստեղ թարգմանուած է։ Թարգմանութիւնը եթէ քիչ թէ շատ տանելի լինի, կը սրբագրուի հմուտ ձեռքով եւ կը յանձնուի տպագրութեան։ Այդտեղ ուղարկելը երկար կը տեւի։ Սրա մասին կը գրենք դարձեալ։*

Ձեր հրատարակած ազդերը խաչագողերի մասին ստացանք։ Ցանկալի է տպագրութեան յանձնել դատավարութեան գործը։ Առողջացածի հետ ինչ էք անելու։ Նովոյէ առնիյա-*ին*(4) *կը պատասխանենք* Pro Armenia-*ի եւ Դրօշակի մէջ։ Ստացանք ռուսերէն հրատարակուած կոչը դիակների պատկերներով։ Լաւ է գրուած։*

Զէկը, եւ չէկի առթիւ հեռագիրը ուշացել էր, որովհետեւ Խաչ[*ատուրը*](5) *բացակայ էր քաղաքից մի ամսով։ Հեռագիրը կարծել ենք, թէ անձնական*[?] *է։ Երկու չէկն էլ ժամանակին ստացել ենք։ Հեռագիրները շատ պարզ էք գրում, քիչ զգոյշ եղէք։*

1.- Պաքու ղրկուած այս գրութիւնը, որ անթուակիր է, պէտք է կրէ 5 Հոկտեմբեր թուականը, ինչպէս են նախորդ եւ յաջորդ էջերու նամակները։
2.- Քիյար – Pro-Armenia-ի խմբագրապետը։
3.- Է. Ակնունիի ծանօթ յօդուածաշարքը, լոյս տեսած «Դրօշակ»ի համարներով։
4.- Ռուսատառ։
5.- Է. Ակնունի։

357

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 80-83

Ուղարկուած 5 *Հոկտ.*(1)

ՎԱՆ (Վիշապի վրայով)

Ստացանք Վիշապ գրած ձեր նամակը կարծելով թէ մեզ է ուղղուած. առանց բանալու մեզ են ուղարկել։ Այս ճանապարհով կարող ենք կանոնաւոր նամակագրութիւն պահպանել։ Ստացել ենք նաեւ Վրէժի վրայով ուղարկած ձեր բոլոր նամակները, թղթակցութիւնները եւ լուսանկարները։ Ձեր գանգատի առթիւ հարկ ենք

համարում ասել հետեւեալը(2)։ Եթէ մինչեւ հիմա որեւէ «հրահանգ» չենք գրել, դրա պատճառը այն է, որ ձեր կազմած ծրագիրը տեղւոյդ գործունէութեան վերաբերեալ անցնում է Ընդհ. Ժողովում գծուած սահմանից։ Որքան էլ նպատակայարմար, ստիպողական գտնէինք ձեր պահանջները, անկարող էինք միջոցներ հայթայթել, որովհետեւ եղածները բաժանուած էր այս կամ այն վայրերի վրայ Ընդհանուր Ժողովի որոշումների համաձայն։ Եթէ ձեզ տայինք, միւսներից պէտք է կտրէինք, իսկ այդ բանը մեզ ոչ ոք թոյլ չի տալ։ Մնում էր ուրեմն ձեր պահանջների համար մտածել գտնել այնպիսի միջոցներ, որոնք չեն մտած Ընդհ. Ժող[ովի] կազմած նախահաշւի մէջ։ Այդ հարցով էլ զբաղուած էինք, երբ դէպքերը վրայ հասան։ Մեր կողմից անմիջապէս փոխադրեցինք Վրէժ 3000 fr., որ հաւանական է ձեզ արդէն հասած կը լինի։ Նոյնքան դումար էլ այսօր ենք փոխադրում դարձեալ նոյն տեղը։ Որպէսզի Տարօնի տխուր պատմութիւնները չկրկնուին դրամի փոխադրութեան վերաբերեալ, հէնց այժմեանից տէր մեզ հասցէ, հաստատ հասցէ, որպէսզի կարելի լինի ծայրայեղ պէտքերի համար արտակարգ մի դումար անմիջապէս փոխադրել, լինի դա միսիոնարների միջոցով, լինի վաճառականների, միեւնոյնն է։ Դուք մի բան գտէք եւ մեզ յայտնէք։

Նոյնը պէտք է ասենք եւ «կարծիքի» վերաբերեալ։ Ուրիշ ի՞նչ կարող էինք ձեզ յայտնել բացի այն որոշումից, որ տուել է Ընդհան. Ժողովը։ Եթէ ձեր կարծիքով մենք մեղաւոր ենք ձեզ լուրերից զուրկ պահելու մէջ, դրա պատճառը մասամբ այն է, որ վաղուց է անմիջական յարաբերութիւն չենք ունեցել Շամի հետ. այդտեղից մեզ արգելւում է գրել այդ։ Կրկնում ենք, եթէ այս ճանապարհը հաստատ լինի, մեր նամակագրութիւնը կանոնաւոր կարող է դառնալ։

Ձեր մասին չափազանցրած լուրեր հաղորդուեցան Պոլսից։ Հեռագրում էին, թէ ապստամբները 150 հոգով ամրացել են քաղաքում եւ կռւում են, թէ քաղաքը վերցրւած է, թէ զօրքերը չեն կարող գրաւել դիրքերը, եւայլն։ Այնպէս էր դուրս գալիս, որ թողել էք գաւառների ծրագիրը եւ քաղաքում կռւելու որոշում կայացրել Տարօնի ընկերների գալուց յետոյ։ Հեռագրում էին նոյնպէս, որ կառավ[արութիւնը] զինում է մահմեդական ամբոխը եւ ոտքի է հանում Երզնկայի զօրաբանակը։ Վախենալով ընդհ. կոտորածի վերսկսումից, մի նախազգուշական հեռագիր ուղարկեցինք նախարարներին։

Քաղաքական աշխարհը դժբախտաբար հիմա քիչ է զբաղւում մեր հարցով եւ այդ այն պատճառով, որ ընդհանրութեան ուշադրութեան առարկան Ռուսաստանն է. Անգլիայի բռնած դիրքից կարելի է ենթադրել, որ նա ձգտում է Տաճկաստանի հետ միացած Ռուսաստանին նեղը դնի։ Ուրիշ կերպ դժւար է բացատրել նրա պաղութիւնը։ Հաւանական է նոյնպէս, որ նա խկապէս պնդի բեֆորմների իրագործման վրայ։ Անգլիական էսկադրայի ընդունելութիւնից օգտւելով աւստ[րիական] դեսպանը չեշտել է բեֆորմների վրայ։ Իտալիան հրապուրւելով Ալբանիայի վերաբերմամբ տրւած խոստումներով նոյնպէս յետ է կանգնել երրորդութիւնից(3). միայն Ֆրանսիան է պահպանում իր լաւ տրամադրութիւնը։ Շատ բան է կախւած պատերազմի վախճանից(4) եւ Ռուսաստանում տեղի ունենալիք փոփոխութիւններից։

Մեր կարծիքով՝ քանի որ փամփուշտի եւ առհասարակ ռազմամթերքի պակասութիւն ունէք, պէտք է պաշտպանողական դիրքի մէջ պահէք ձեր ուժերը, մինչեւ Դաշնակցութեան Խորհուրդի կայանալը, ուր հաւանական է Վասպուրականի վերաբերմամբ մի որոշ ծրագիր մշակուի։ Ուժերը լաւ է գաւառներում ցրւած պահել։

Դրամի եւ մթերքի նպաստներ կ՚ուղարկենք հետզհետէ։ Իսկ դուք աշխատէք մի կանոնաւոր ծրագիր մշակել, հիմնւած մեր իրական պայմանների վրայ։

Այս նամակի պատասխանը ստանալու պէս կը գրենք նորից։

1.- Վան՝ Պոլսոյ (Վիշապ) ճամբով ուղղուած նամակ:

2.- Խնդրոյ առարկայ վէճը հասկնալի դարձնելու համար յայտնենք, որ Ընդհ. ժողովի կողմէ Վան-Վասպուրականի շրջանին համար որոշուած պիւտճէն անբաւարար գտնելով՝ Վանի (Շամ) Կ. կոմիտէն յաւելեալ գումար կը պահանջէր իր ծրագիրներու իրագործման համար:

3.- «Երրորդութիւն»ը այն զինակցութիւնն էր, որ կնքուած էր Գերմանիոյ, Աւստրօ-Հունգարիոյ եւ Իտալիոյ միջեւ:

4.- Ակնարկութիւնը ռուս-ճապոնական պատերազմին է:

358

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 100-101

Գրւած 7 հոկտ.

ՋՐԱԲԵՐԴ(1)

Ձեր նամակը ստացանք, Մուշի նամակը ներփակ։ Խնդրենք մեզ յայտնել, ով է այդ Տատրակը(2)*, ի՞նչ եղան ձեր կողմից փոխադրած գումարները, որքա՞ն էք ընդամէնը փոխադրել, ինչո՞վ բացատրել այն հանելուկը, որ Տատրակը շարունակ պնդում էր, թէ Անդրանիկի*(3) *եւ տղաների մօտ բոլորովին փող չկայ, իսկ յանկարծ իր՝ Անդրանիկի նամակից իմանում ենք, որ մենակ իր մօտ* 200 *ոսկի կայ։ Մի քանի օր առաջ Վահապը*(4) *ստանում է Ամերիկայից Տատրակի նամակից մի քաղուած։ Տատրակը նկարագրելով իրերի դրութիւնը, աւելացնում է, թէ փող էք հաւաքում, ուղարկում, բայց չէք հետաքրքրւում, թէ ի՞նչ են լինում ձեր փողերը։ Այնպէս է գալիս, որ մենք չենք էլ մտածում երկիր փող հասցնելու։ Այս բանը մենք գրեցինք իրեն Տատրակին, տեսնենք, ինչ բացատրութիւն է տալիս։*

Մինիստրին յանձնած գումարի մասին նորից դիմում արինք Պարիզ, Quillard-*ը գրել է մինիստրին։ Ուշանալու պատճառը փոխադրութեան արարողութիւնների բարդութիւններն են։ Բայց հաւանական է, որ հիմա հասած լինի։ Անցեալները Տատրակի ցոյց տւած մի հասցէով փոխադրեցինք* 3,000 fr. *ուղղակի տղաների պէտքերի համար։ Պատասխան եթէ ստանանք, դարձեալ կը փոխադրենք։* 6000*-ի մասին գրեցինք Վիշապ։ Տատրակը այդ անպիտանի եղբայրը չլինի՛ ...*

Ձեր արխիւը կամ Վրէժի միջոցով, կամ ուղղակի ճանապարհ ձգէք։ Դատավարութեան թղթերը շատ կարեւոր են։

Հետեւեալ նամակները կը գրենք ուրիշ թանաքով։ Ձէք կարողանում բանալ, ահա թէ ինչու չեն կարդացւում մեր նամակները։ Հիմիկուանից ուղէք մի հեղուկ Մ. Բ.-ից կամ Ոսկանապատից եւ նրանով բացէք մեր նամակները։

Եթէ կարողանայիք ձեր քարտէզը մեզ ուղարկել...

Թող Սարգիսը գրի Իսաջանի, Թումանի, Եգորի (սրա մասին դեռ մի տող չկայ գրւած! ...) շրջանի մասին(5)։

Խմբանկարներ ուղարկում էք առանց նշանակելու անունները։ Ի՞նչ իմանանք, թէ խմբից ով է սպանւած, ով է ազատ, եւ ով բռնւած։ Խնդրենք նոր օրինակներ ուղարկել անունները նշանակած։ Օլթիի խմբանկարներից միայն 3-ն է ստացւած, ի՞նչ եղան միւսները։

Բիկովի(6) մասին իմացանք եւ հաղորդեցինք թերթերին։ Բա, չեն գրել, թէ որտեղ, ինչպէս է կատարւել տեռորը։

Ձեր բայոնական ժողովի արձանագրութիւնը եւ հաշիւները նոյնպէս ստացւել են։ Մեր գործերը յուսով ենք աւելի կանոնաւորել։

Ձեր միջեւ տեղի ունեցած անհամաձայնութիւններին պէտք է վերջ տալ։ Հրաժարւածները պէտք է իրենց տեղը գան։ Եթէ ինտրիգների պատճառով գործիչները հեռանային, հիմա Դաշնակցութեան մէջ մարդ չէր մնալ։

Յարութիւնը[?] ինչո՞ւ է ձգձգում իր պարտքի խնդիրը։ Ռոստոմին նա ասել էր, թէ կարգադրել է, որ տունը ծախեն եւ պարտքը վճարեն։

1.- Կարս (Ջրաբերդ) ուղարկուած նամակ:

2.- Տատրակը ծածկանունն է Տարօն-Սասունի Կեդր. կոմիտէի անդամ Գեղամ Տէր Կարապետեանի (1865-1918):

3.- Հայդուկապետն է:

4.- Արշակ Վռամեան:

5.- Յիշուած անունները՝ Սարգիս, Իսաջան, Թուման, Եգոր՝ Ղարաբաղէն եկած եւ իրենց ուսումը նոր աւարտած երիտասարդներ են. բացի առաջինէն, միւս երեքը արդէն նահատակուած էին Արեւմտահայաստանի ազատագրութեան ճանապարհին: Առաջինը՝ Սարգիս, որուն համար Ռոստոմ կը թելադրէ գրել՝ միւսներուն յիշատակը յաւերժացնելու համար, ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ Արամ Մանուկեանը, իսկական անունով Սարգիս Յովհաննիսեան, որ ճամբայ ելած էր Սասուն անցնելու նպատակով, բայց 1903-4 տարիներուն պիտի մնար Կարս եւ լծուէր կազմակերպչական աշխատանքի: Իսաջանը (Առաքելեան) 1903 թ. 29 Օգոստոսին պիտի զոհուէր ուժանակի պայթումի մը հետեւանքով: Թումանը (Թումեանց – 1879-1904) մէկէ աւելի անգամներ կը յաջողի իր խումբով հասնիլ Սասուն զէնք ու զինամթերք հասցնելով ապստամբ Սասունին, ապա, բազմաթիւ մարտեր մղելէ ետք կը նահատակուի Օլթիի շրջանին մէջ թրքական զօրքերու եւ ռուս սահմանապահներու օղակին մէջ մղուած կռիւներու ընթացքին: Եգորը (Առստամեան Գէորգ, 1882-1903) կրտսերագոյնը իր ընկերներէն, նոյնպէս բռնուած Սասնոյ օգնութեան հասնելու տենչով, շատ մը մարտերու մասնակցելէ ետք կ՝իյնայ ի վերջոյ սահմանագլուխի կռիւներուն մէջ (1903 թ. Սեպտեմբեր):

6.- Օլթիի շրջանի ռուս սահմանապահ զօրքի հրամանատար, որուն հրէշային գազանութիւններուն զոհ գացած էին տասնեակներով Սասունի օգնութեան փութացող մարտիկներ, եւ որ իր կարգին ահաբեկուեցաւ Համօ Ջանփոլատեանի կողմէ՝ 31 Օգոստոս 1904-ին:

359

Պատճէններու մատեան No 88, *էջ* 266

1904 *հոկտ.* 8

Գահիրէի կոմիտէին

Յարգելի ընկերներ,

Ստացանք ձեր 21 *սեպտ. նամակը։ Հաստատում ենք նոյն օրը գրած մեր նամակը։*

Կամաւորներու խնդրի մասին նախ եւ առաջ պէտք է նկատենք հետեւեալը։ Առհասարակ երկիր գնալ փափագողները անպատրաստ, անփորձ են լինում եւ այն համոզումը ունեն, որ սահմանագլխում մի քիչ կարող կը լինեն վարժւել։ Ձեր կամաւորները ինչպէ՞ս են. վա՞րժ են, լաւ հրացանաձգո՞ղ են, ընդունա՞կ են երկար քալելու, կարո՞ղ են տանել այլ եւ այլ զրկանքներ։ Խմբերի մէջ պահանջւում են կատարեալ զինւորներ եւ ոչ այնպիսիներ, որոնք բեռ են դառնում ընկերների համար։ Եթէ զինւորական այս պահանջներին գոհացում տւողներ կան, գրեցէք նրանց թւի մասին. առնելով համապատասխան մարմինների կարծիքը, կը հաղորդենք ձեզ, թէ ուր եւ քանի կամաւորի պահանջ կայ, իսկ առայժմ յանձնարարում ենք ձեզ ամենամեծ ուշադրութիւնը դարձնել կամաւորների զինւորական կրթութեան վրայ։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

360

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 150-151

Գրուած հոկտ. 12

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ(1)

Նաւագնացութիւնը վերսկսել է, գործադուլը վերջացաւ, առաջին առթիւ կ'ուղարկեն ձեզ համարները։

Ձեր հաշիւների մէջ պակաս են Նոյեմբ. եւ Դեկտ. ամիսների տոմսակների բուները։ Ամենավերջինը Հոկտեմբերինն է։ Գալով նախորդ կոմիտէի պարտքին, քաղում ենք Ընդհ. Ժողովի արձանագրութիւնից հետեւեալը.

Նաւահանգիստ.– Ընդհանուր հաշուեկշիռ 98-903 շրջանի համար. կան օրատետրեր եւ ընկալագրերի արմատներ, պակաս դրամ կայ 697 ռուբլի, որ պէտք է ստացւի Կարինէ, Քէշիշեանէ եւ Շահինէ։

Ստիպւած են մեծ քանակութեամբ մէկին յանձնել, որովհետեւ միւսները հրաժարւում են, բայց եւ այնպէս կը գրենք, թող մէկ էլ փորձեն։

Դրամ վճարելը յարմար է այդտեղ անել։ Կարող էք մտցնել Բիւրոյի հաշւին։

Կնիքների մասին սպասում ենք Ա[ռեւելեան] Բ[իւրոյի] կողմից մի ընդհանուր պատւէրի։ Թող մի ցանկ պատրաստեն։ Բոլորը կը պատւիրենք մի անգամից եւ կ'ուղարկենք։

Ծովափ(2) *ի՞նչ հասցէով կարելի է գրել. եթէ յարաբերութիւն ունէք, յայտնեցէք, որ գրելու ենք* Simavonian *— հասցէով։*

Շ[ապին] Գարահիսարից մի անստորագիր նամակ ստացանք, որով յայտնում են, որ տեղական կոմիտէն քայքայւած լինելով կնիքը հիմա գտնւում է Տաքէսեան Ալեքսան անունով մէկի մօտ, որը յաւակնութիւններ ունի գեղծումներ գործելու։ Չէ՞ք կարող ստուգել եւ յամենայն դէպս կնիքը առնել քանի որ կոմիտէն կազմալուծւել է։

1.- Նոյն թանձր մատիտով գրութեան ուղարկման թուականը՝ «գրւած հոկտ. 12»: Պաթումի կազմակերպութեան պարտքի մասին արձանագրութիւնը (3-րդ պարբերութիւնը շեղագիր) գրւած է Յար. Գալֆայեանի ձեռքով:

2.- Ծովափը կուս. ծածկանունն է Օտեսայի:

361

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 160

13 *հոկտ.*

ԾՈՎԱՓ(1)

Ստացանք ձեր 5 *սեպտ. նամակը։ Վերջին* No 9-*ը վերադարձրել են*(2)*։ Ինչպէ՞ս անենք, որ ապահով հասնեն, գուցէ յարմար է Բերլինից կամ Պարիզից փոստ ձգել։*

Շ[ապին] Գարահիսարից մի նամակ ստացանք «Դաշնակցութեան համակիր մը» ստորագրութեամբ, որով յայտնում են, թէ Տաքէսեան Ալեքսան անունով մէկի մօտ է գտնւում կոմիտէի կնիքը եւ թէ այդ պարոնը այդ կնիքով գեղծումներ գործելու նշաններ է ցոյց տալիս։ Խնդրենք ստուգել այս լուրը եւ մեզ հաղորդել։ Լաւ կը լինի կնիքը առնել եւ մեզ ուղարկել, քանի որ կոմիտէն լուծւած է։

Խնդրենք գրել, թէ ինչ դրութեան մէջ են գտնւում այդտեղի, Երզնկայի, Բաբերդի, Շ. Գարահիսարի գործերը։

Նաւահանգիստ(3) *գրել ենք, թէ նամակ գրելու ենք առաջւայ (Ս-ի) հասցէին, բայց երկիւղ կրելով, որ դա առաջինի նման կարող է ուշ ստացւել, ուղարկում ենք թերթի հասցէին։*

1.- Տրապիզոն (Ծովափ) ուղղուած նամակ: Էջին տակ, նոյն Ռոստոմի ձեռքով բայց թանձր սեւ մատիտով գրուած՝ «Շրջաբ[երական] նամակներ, Սմբատին դեկտ. 2ին»: Սմբատը՝ Սիմոն Զաւարեանի ծածկանուններէն մէկն է:

2.- Խօսքը կը վերաբերի «Դրօշակ»ի 1904 թ. No 9-ին:

3.- Նաւահանգիստը Պաթումն է:

362

Պատճէններու մատեան No 88, *էջ* 267

1904 *հոկտ.* 15

Բալկանեան Կեդր. կոմիտէին,

Յարգելի ընկերներ,

Հաստատում ենք մեր սեպտ. 27 *նամակը։ Խնդրենք մեր հաշւին վճարել պ. Լեւոն Գիւլումեանցին* 100 fr. *եւ յանձնել նրան ներփակ նամակը։*

Ցուցականին վերաբերեալ 2000 fr. *ինչո՞ւ ուշացաւ։ Խնդրում ենք շուտով փոխադրել։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

363

Պատճէններու մատեան No 88, *էջ* 278

1904 *հոկտ.* 24

Մինարէթի կոմիտէին(1),

Ամսոյս 19-*ին հեռագրով խնդրեցինք որ յայտնէք Շամ Կոմսին*(2), *պատրաստութիւն տեսնեն Խորհուրդին պատգամաւոր ուղարկեն։ Խորհուրդը պիտի կայանայ դեկտ.* 15-*ին կամ քիչ յետոյ։ Նամակով խնդրում ենք պարզ ուշադրութիւն դարձընէք եւ շտապէք ժամանակին լուր տալու։ Շատ ցանկալի է, որ գայ ինքը Կոմսը։ Իսկ եթէ այս կամ այն պատճառով անկարող լինի դուրս գալ երկրից, թող մի շատ ընդարձակ տեղեկագիր ուղարկի երկրի դրութեան եւ կատարելիք գործի մասին։*

Կիպերտի քարտէզը ստացած կը լինէք։ Աւելի լաւ է Թաւրիզում պատրաստէք մեծ մասշտաբով մի նորը, առնւած այնտեղի մեծ քարտէզից։ Պակաս բաները կարելի է լրացնել Կիպերտից եւ ամբողջը ստուգել մեր տղաների միջոցով, որոնց ձեռքը կարելի է տալ առանձին առանձին գաւառակները։ Ջրաբերդում ձեռք են բերել մի վերստուգւած[?] *մանրամասը քարտէզ։ Գրել ենք, որ պատճէնը մեզ առաքեն։ Ստանալուն պէս Վասպուրականի շրջանը կ՚ընդօրինակենք եւ ձեզ կ՚ուղարկենք։*

Ամէն ջանք թափէք, որ կառավարութիւնը ուշադրութիւն [*մէկ բառ անընթեռնելի*] *Վասպուրականի վրայ։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Մալխաս(3) *թող ընդօրինակի ձեզ ուղարկւածից ինչ իրեն հարկաւոր է։*

Ն[*ՈՅՆ*]

1.- Մինարէթ – ծածկանուն Սալմաստի:

2.- Շամ – ծածկանուն Վանի, Կոմսը Դաշնակցութեան ներկայացուցիչն էր Վասպուրականի շրջանին մէջ. այսուհանդերձ ան պիտի չկարենար մասնակցիլ Դաշնակցութեան Խորհուրդի նիստերուն:

3.- Մալխաս – ծածկանուն՝ Ամերիկայէն եկած Յովսէփեան Արտաշէսի, որ իբրեւ կուսակցական գործիչ հաստատուած էր Ատրպատականի Խոյ քաղաքը:

364

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 87-88

ՎԻՇԱՊ(1)

Նախ չմոռանանք հարցնել Էլլէնից(2), *թէ որոնց է պահ տուել Ոսկանապատում առած մուրհակները։*

Վիճակահանութիւնը քաշել են արդէն։

Շրջաբերականները տպագրութեան յանձնելիս՝ մենք կանգ առանք մի շարք դժուարութիւնների առաջ, որոնց մասին անհրաժեշտ ենք համարում դիմել ձեզ։ Թէեւ ուշ է, մեղքը մերն է, բայց եւ այնպէս խնդրենք լսել։ Վախեցանք, որ չլինի թէ շրջաբերականների տպագրութիւնը կասկածներ հրաւիրի Վիշապի ձեռնարկի վրայ(3)։ *Վտանգ կարող է լինել նոյնպէս կոչերը ձեզ ուղարկելիս (Դրօշակի վերջին համարները Ֆրանս. փոստատունը յետ դարձրեց)։ Առանձնապէս վախ կայ տաճկերէն կոչերի տպագրութիւնից։ Խնդիրը պարզ կը լինէր, եթէ միմիայն պահանջների կէտերը տպագրութեան տայինք. դա ոչ մի կասկածի տեղիք չէր տալ։ Իսկ քանի որ առաջաբան է լինելու, որի բովանդակութիւնը անհրաժեշտաբար հարկ կը լինի կապել ձեր ձեռնարկի իրագործման հետ, այսպէս կամ այնպէս դժուար կը լինի ապահովութեան սահմաններում մնալ։ Ֆրանսիական տպարանում ոչինչ, մի կերպ կարելի է անել, բայց ինչ գրել տաճկերէն, որ դէպքին պատշաճ լինի եւ միեւնոյն ժամանակ շարողների մէջ կասկած չյարուցանի։ Երկար խօսելուց յետոյ կանգ առանք հետեւեալ կէտերի վրայ.*

1) *Ֆրանսերէն եւ հայերէն հիմիկւանից կը յանձնենք տպագրութեան. ստորագրութիւն կը դնենք մի այլ մարմնի, օրինակ Շամի կամ Մուշի, բայց բաւական հեռու, այնպէս որ հարկաւոր ժամին այդ ստորագրութիւնը կտրէք, կնիքը խփէք եւ տարածէք։ Իսկ ինչ վերաբերում է տաճկերէնին, որ տաճիկների ձեռքով պատրաստուած լինելու պատճառաւ, պահանջում է մեծ զգուշութիւն, տպագրութեան կը յանձնենք միայն պահանջի կէտերը մի քանի ընդհանուր, անորոշ խօսքերով, նոյնպէս մի ուրիշ մարմնի ստորագրութեամբ։ Միաժամանակ, եթէ կ՚ուզէք, կը պատրաստենք մի կոչ ընդհանուր կազմակերպութեան կողմից։ Ամէն կերպ կ՚աշխատենք, որ կատարուելիք գործի հետ անմիջապէս չկապուի։*

Դեսպաններին ուղարկուելիքը լաւ է. ձեռագիր անել։

1.- Պոլիս ուղարկուած անթուակիր գրութիւն, վերջաւորութեան, հաստ մատիտով «Գրած է փոփոխած»։

2.- Քրիստափորէն։

3.- «Վիշապի ձեռնարկ» – Սուլթան Համիտի ահաբեկման ձեռնարկ։

365

Փաստ. 43-37

1904, *հոկտ.* 26, *Ժընեւ*

Ամերիկայի Կենտր. կոմիտէին,

Յարգելի ընկերներ,

Ներփակ ուղարկում ենք ցուցական մարմնի ստացականը ձեր ուղարկած 2,000 *տոլարի համար։*

Մեր ընկերները հիմա, յուսով ենք, տեղ հասած կը լինեն։ Խնդրենք յայտնել իրենց, որ Պարիզի գործը յաջողութեամբ վերջացաւ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

366

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 115-120

1-*ին նոյեմբ.* [1904]

ՄԵԾ ՔԱՂԱՔ(1)

Ստացել ենք Ճերմակեանի, Բարսեղի, Զոփուռեանի 1 *հոկտ.*, *Բարսեղի* 15 *Յուլիսի (ուշացել է ճանապարհին),* 29 *սեպտ. Համոյի,* 2 *հոկտ. եւ* 7 *հոկտ. նամակները։ Այսպիսի առատութիւն չի եղել Դաշնակցութեան պատմութեան մէջ. յուսով ենք այսպէս էլ շարունակւի։*

Ձեր նամակներին ուզում էինք պատասխանել Նիթրայի(2) *միջոցով, բայց նա ուշանալու է դեռ. համառօտակի կը գրենք, մանրամասը նրանից կ՚իմանաք։*

Նախ ձեր պատւէրները 1) *արձանագրութիւնը ուղարկել չենք կարող մեր մարմիններին, քանի դեռ Խորհուրդը իր սանկցիան չի տուել։ Մի քանի մասերը կ՚արտագրենք եւ Նիթրային հետ կ՚ուղարկենք։ Կազմակերպչական կանոններից տպագրւած եւ ուղարկւած են վաղուց Վրէժի վրայով։* 2) *Կնիքների համար սպասում էինք ձեր պատւէրին. չստանալով՝ պատւիրում ենք* IV, V, VI *եւ* VII *Կենտր.* [*կոմիտէների*] *կնիքները*(3)*։ Գոնէ թիւը նշանակէիք։ Եկողի ձեռքով կ՚ուղարկենք։* 3) *Նոր հասցէներ* a) Paris, rue Bertholet, 20, Mme Grégoire Foun, b) Maurice Peyrol 368 Rue Saint-Honoré, Paris. *Այս հասցէով կ՚ուղարկէք* Pro-Arm[enia-*ի*] *վերաբերեալ գրւածները, իսկ եթէ նամակ լինի միայն մեզ վերաբերեալ, աւելացրէք* Pour Michel. *Ուրիշներ էլ կը գրենք։*

Բուն նամակները, ուր գաղտնի բաներ կան, հայերի հասցէներով չուղարկէք։ Զրաբերդի նամակները միշտ բաց թանաքով են գրւում եւ մեզ բացւած են հաս-

նում, իսկ այնտեղ ամէն տեսակ գաղտնիքներ են լինում։ Մի խօսքով գաղտնապահութեան օրէնքները մոռացութեան չտաք։

«Հայկական Միութիւն»ը եթէ իրականանայ, մեզ վնասել չեն կարող, եթէ մենք մեր ուժը պահպանենք։ Մենք չպէտք է մոռանանք, որ բուրժուազիան ակամայ է մեզ յարած, որ առաջին պատեհ առթիւ նա աշխատելու [է] յեղափոխութեան լուծը թօթուել։ Պէտք է ուրեմն կազմակերպ[ութիւնը] ամուր պահել եւ առիթի հնարաւորութեան յոյսը յետաձգել տալ անորոշ ժամանակով։

Ձեր նամակից պարզ չի, ֆոնդն է արդեօք դա, թէ մի ուրիշ ձեռնարկ է։ Եթէ ֆոնդն է, հարկ ենք համարում ասել ձեզ, որ երբ մեզ Գրիգորը (Ս-ը) կարդաց կանոնադրութիւնը եւ ասաց, թէ մի տոկոսը տուելու է յեղափոխական գործին, մենք առաջարկեցինք, որ ֆոնդի յաջողութեան համար հանեն այդ կէտը, որպէսզի նուիրատուները ազատօրէն տան իրենց գումարները։ Ի նկատի ունէինք եւ հետեւեալ նկատումները 1) տոկոսը ընդունելով Դաշնակցութիւնը մի տեսակ կախում կ'ունենայ ֆոնդից 2) եթէ դիմելու լինենք որեւէ հարուստի, նա մեզ արդարացի կերպով կը պատասխանի, թէ գնացէք ֆոնդից ձեր տոկոսը ստացէք։ Դրա փոխանակ մենք աշխատել ենք եւ մեզ խօսք են տուել, որ ֆոնդի ղեկավարութիւնը կը գտնուի մեր ուզած մարդկանց ձեռքին։ Պէտք է միայն չթողնել, որ ֆոնդը Լոնդոն հաստատուի, ինչպէս ուզում են մի երկուսը, այլ անպատճառ Պարիզ։

No 1-*ի ստէորոտիպը կ'ուղարկենք փորձի համար*(4)։ *Եթէ յաջողուի, կը շարունակենք։ Կ'ուղարկենք Վրէժ։ Դուք էլ հարկ եղած պատրաստութիւնները տեսէք։*

Թերթերը ուղարկելիս մենք երբեք չենք գրում չերէզ Բագու *կամ* չերէզ Ջուլֆա(5)։ *Փոստատունը ինքը իր գծերը ունի, որոնցով ուղղում է։ Աստարա այլեւս չենք ուղարկի։*

Պարոյրին (Անդ.)(6) *ճանապարհ ձգեցէք մեր կողմը, բայց ուղղակի, առանց Բուլղարիա կամ Ռումանիա հանդիպելու։ Թող Բաթումից նաւ նստի։ Միեւնոյնն է Խորհրդին պէտք է գայ։*

Շամի մասին մենք էլ ենք կարծում, որ առայժմ պէտք է լուռ պատրաստութիւններ տեսնեն։ Մոբիլիզացիայի առթիւ ծագած կարծիքը, թէ իբր թէ ձեր որոշումը ծրագրից դուրս է, մեզ զարմացնում է։ Էլ ո՞ր օրւայ համար է մեր համերաշխ գործունէութիւնը միւս տարրերի հետ։ Մի անգամ արդէն ընդունել ենք համերաշխութիւն, ուրեմն Ընդհանուր Ժողովն էլ ենք ընդունել։ Եւ ի՞նչ է նշանակում զուտ ազգային հող։ Խորհուրդին պէտք է պարզ ճշտել մեր ծրագիրը։ Սրա համար ցանկալի է, որ Կովկասի գաւառներից, Ինքնապաշտ[պանութեան] կոմիտէի կողմից գային մի քանի ներկայացուցիչներ Խորհուրդի հետ միաժամանակ Կովկասեան ծրագիրը մշակէինք։

Զէնքերի (վէրէնտէլի) մասին ձեր որոշումը չուշացնէք։

Համոն գրում է, որ մենք ռուսներին Դրօշակ տանք Օդ[եսա] մերիններին յանձնելու համար «ինչպէս մենք իրանց այստեղ հասցնում ենք»։ Համոն տեղեկութիւն երեւի չունի, որ Զոփուռեանի կարգադրութեամբ ռուսական թերթերի մեր գծով ուղարկելը դադարեցրել ենք։ Եթէ հնարաւորութիւն կայ նորից ընդունելու, գրեցէք։ դա շատ լաւ կը լինի։ փոխադարձաբար մեր թերթերը նրանց միջոցով կարող ենք ոչ միայն Օդեսա, այլեւ Մոսկվա եւ Պետ[երբուրգ] հասցնել։ Սպասում ենք ձեր նոր կարգադրութեան։

200-300 *հազարի հաւաքումը չուշացնէք։*

Պրոպագանդիստներ մեզ կարող է տալ ուսանողութիւնը։

Այստեղից այդ խնդրի մասին գրեցինք Եկեղեցի(7)։ *Հոգ տարէք, որ ուսանողութիւնը այդ կողմից մեզ մենակ չթողուի։*

Վիշապի գործերը գոհացուցիչ են։

Վարդանը ճանապարհ ընկաւ այստեղից։ Ռ[*ոստոմ*]*ի* [*հետ*] *միասին գնացին Պարիզ։ զէնքեր տեսան։ Կարելի է չուտով պատուէր լինի* 100 *հատ հին մաուզէրների* (*հատը* 12 fr.)։ *Մնացել է փոխադրութեան խնդիրը կարգադրելու։*

Հիմա դանք Բարսեղեանի իերոդլիֆներին(8), *որ յաջողուեց լաւ կարդալ։*

Թռուցիկի(9) *զինուորակ։ հաստատութիւն մտնելու դէմ բան չունենք։ Ռաշիդի բռնուելը ափսոս եղաւ։ Ի՞նչ է նրան սպասում։ է։ Մեր լսածի համաձայն նա ոչ միայն «ըմբոստ» է, այլեւ խաբեբայ։ Զէ՞ որ նա մեզ խաբել է, ինչ որ* 3,000 *ր։ տոմսակ առել իբր թէ պայթուցիկների համար եւ նրանով հրացաններ գնել*(10)։ *Ի միջի այլոց ի՞նչ եղաւ խնդիրը։*

Միայն ուղարկել մարտ[*ական*] *վարժարան մտնելու համար բոլորովին աննպատակայարմար է։*

Ղարիբի(11) *չգալը դուք բոլորովին խելացի եւ իրաւացի էք համարում։ մենք էլ համաձայն ենք ձեզ հետ, մանաւանդ Ռ*[*ոստոմ*]*ը։*

Մուշի փողը տեղ է հասել։ Ֆրանսիական հիւպատոսը այդ մասին գրել է Դելկասէին(12), *աւելացնելով, որ փողը մտադիր է բաշխել հոգեւորականութեան ձեռքով ու կառավարութիւնից գաղտնի, փափաք է յայտնում նոյնպէս, որ այդ գումարից մի փոքրիկ մասը յատկացւի Վանին։ Դելկասէն հաղորդելով* Quillard-*ին հիւպատոսի զեկուցումը, թոյլտուութիւն է խնդրում նւիրատուներից մի փոքրիկ գումար՝ յատկացնել Վանայ կարօտեալներին։* Quillard-*ը պատասխանեց, թէ թող հեռագրով կարգադրեն եղած գումարից տրւի վանեցիներին* 2,000 fr. *իսկ այդ պակասը լրացնելու համար մինիստրի տրամադրութեան տակ է դրւում նոր* 2,000 fr. *գումարը։ Դելկասէի բարի տրամադրութիւնն էր պատճառ, որ հեռագրեցինք ձեզ ուղարկել նոյն նպատակով դարձեալ* 10,000 fr., *ուղարկէք* Quillard-*ի հասցէին։ Ցայտնէք այս մասին Գրիգորին* (*Մ-ին*), *որը բժշկի ձեռնարկին խոստանում է* 50 *հազ։ թող գոնէ մի մասը այս գծին հաւատան։*

Մի քանի անգամ գրել ենք, որ Ոսկան[*ապատի*] *չէկը* (10,000 *ր։*) *ստացւել է։ Մենք երբեք չենք մտածել, թէ այդ չէկը կորցրել էք։*

Մոմճեանը, որ Ճերմակեանի մօտ է ծառայում, մեզ մի նամակ էր գրել, որ բոլորիդ անունները կային։ Իրեն կը յայտնէք, որ այդ մարդիկ խառը չեն գործին։ դուք էլ մի լաւ խրատէք կողմնակի կերպով։

Հաւաքածուն, որ ուզել էիք Մ։ Ք։ կոմիտէի համար, ուղարկում ենք Վրէժ։

1.- Նամակը ուղղուած է Արեւելեան բիւրոյին:

2.- Նիքրա՝ Յարութիւն Շահրիկեանի ծածկանունն է: Այդ օրերուն Շահրիկեանը կը գտնուէր Ժընեւ, ուրկէ շուտով պիտի վերադառնար Կովկաս: Շարունակութեան մէջ յիշատակուած Համոն՝ Օհանջանեանն է, Չոփուռեանը՝ Լեւոն Թադէոսեանը, Վարդանը՝ Խանասորի հերոսը՝ Մեհրաբեան Սարգիս, Ղարիբը՝ Աւետիս Ահարոնեան:

3.- Կովկասը եւ Ռուսաստանի մնացեալ շրջանները բաժնուած էին 10 Կեդր. Կոմիտէութիւններու: Չորրորդը, հինգերորդը, վեցերորդը եւ եօթներորդը կը համապատասխանէին յաջորդաբար՝ Ոսկանապատ-Պաքուի, Քար-Ալեքսանդրապոլի, Նաւահանգիստ-Պաթումի եւ Նալբանդ-Նոր Նախիջեւանի շրջաններուն:

4.- «Դրօշակ»ի 1904 թ. Նոյեմբերի թիւին քլիշէն:

5.- Ռուսատառ՝ Բագուի կամ Ջուլֆայի վրայով:

6.- Պարոյրը Անդրանիկն է, հայդուկապետը, որ Սասնոյ ապստամբութեան ճնշումէն ետք, նախ անցաւ Վասպուրական, ապա Ատրպատական եւ Կովկաս, ուրկէ ինչպէս կ՚երեւի Ռոստոմի այս գրութենէն, ուղղակի Ժընեւ, ուր 1905 թ. Փետրուարէն սկսեալ պիտի գումարուէր Դաշնակցութեան Խորհուրդի ժողովը: Անդրանիկ այս վերջինի նիստերուն պիտի մասնակցէր իբրեւ ներկայացուցիչ Դուրան-Բարձրաւանդակի (Տարօն-Սասուն):

7.- Եկեղեցի – ծածկանունն է Մոսկուայի:

8.- Բարսեղեան – ծածկանունն է Արեւելեան բիւրոյի անդամ Բժ. Յովսէփ Տէր-Դաւթեանի: Հիերոգլիֆ-մեհենագրութիւնը՝ ակնարկութիւն է անոր դժուար ընթեռնելի ձեռագրին:

9.- Թռուցիկ – ծածկանունն է Տէր Աբրահամեան Գէորգի (1877-1909). դաշնակցական հին մարտիկ. մասնակցած է Խանասորի արշաւանքին, աշակերտած է Հ.Յ.Դ. Պուլկարիոյ Ջին. վարժարանին, Քեռիի կողքին կռուած եւ նահատակուած է Պարսկաստանի Սահմանադրական շարժումներուն ընթացքին (1908):

10.- Ռաշիդ (Տէր Մաթէոսեան), կասկածելի բնաւորութեան եւ վարքի տէր անձնաւորութիւն, յետագային ուսուցիչ Պուլկարիոյ Հ.Յ.Դ. Ջին. վարժարանին մէջ, վտարուած կուսակցութենէն:

11.- Ղարիբը Աւետիս Ահարոնեանն է:

12.- Թէոֆիլ Դելկասէ (1852-1923) Ֆրանսայի արտաքին գործոց նախարար:

367

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 152-3

Նոյեմբ. 1-ին(?)

ԵԿԵՂԵՑԻ(1)

Ստացանք ձեր նամակը։ «Նովոստի»(2) *արդէն ստանում ենք։ Ձեր նշանակած վրիպակը կը դնենք։*

Դրօշակի հին համարները կարող ենք ուղարկել, եթէ ապահով ճանապարհ լինի։ Եթէ կարծում էք ստանալ Կովկասի վրայով, դա դժւար կը լինի, որովհետեւ շատ ձեռքից ձեռք պէտք է անցնի եւ հազիւ թէ ձեզ հասնի։

Ուսանողութեան ուշադրութիւնն ենք դարձնում մի կարեւոր հանգամանքի վրայ։ Կովկասի ամէն մի անկիւնից դանդատներ են լսւում, որ ինտելիգէնտ-ղեկավար ուժերի մեծ պակասութիւն է զգացւում։ Այդ պահանջներին գոհացում տալու համար ուսանողութիւնը պէտք է որոշ պատրաստականութիւն ձեռք բերի դեռ ուսանողական նստարանի վրայ։ Երբ մեր կռիւը սահմանափակւած էր միայն Տաճկաստանով, Կովկասի ինտելիգէնտ ուժերը կարող էին մասամբ արդարացնել իրենց համեմատական անտարբերութիւնը նրանով, որ անծանօթ Տաճկաստանի պայմաններին՝ նոքա հնարաւորութիւն չունէին գործադրելու այնտեղ իրենց ուժերը լիովին։ Հիմա խնդիրը փոխւած է, կռիւը տարածւած է եւ Ռուսաստանում եւ գործը այնպիսի մեծ ծաւալ է ստացել, այնքան նոր ֆունկցիաներ են աւելացել, որ ասպարէզի վրայ գտնւող մեր ինտելիգէնտ ուժերը չեն կարողանում կատարել պահանջի 1/100-*ը իսկ։ Մի կարեւոր կէտում, ուր հարիւրաւոր խմբեր կան, ղեկավար մարմնի մէջ ոչ մէկ ինտելիգէնտ մարդ չկայ։ Ռուսաստանի ուսանողական միութիւնը իր զբաղմունքների բացառիկ առարկան պիտի դարձնէ այս պահանջը։*

1.- Մոսկուա (Եկեղեցի) ուղարկուած:

2.- Ռուսատառ՝ թերթի անուն:

368

Պատճէններու մատեան No 88, *էջ* 282
(*Փաստ.* 43-61)

1904, *Նոյեմբ.* 4, *Ժընեւ*

«Վրէժ» կենտրոն. կոմիտէին(1),

Յարգելի ընկերներ,

Հարկ ենք համարում յայտնել ձեզ, որ «Դրօշակի» վերջին համարից (No 10) *ուղարկւած եւ ուղարկւելու է՝*

Խոյ 450 *օրինակ, Սալմաստ Ֆրանգեանին* 220 *օր*[*ինակ*], *Թաւրիզ Բժշկին* 100 *օր*[*ինակ*], *եւ որովհետեւ Ոսկանապատի*(2) *կարգադրութեամբ՝ Աստարա բոլորովին չի ուղարկւելու, իսկ Արտաբիլ ուղարկւելու է Թաւրիզի վրայով, ուստի Բժշկի հասցէին աւելացրինք Արտաբիլ ուղարկելու համար* 360 *օր*[*ինակ*] *եւ ուղղակի Արտաբիլ* Via Tauris *մակագրութեամբ* 600 *օր*[*ինակ*]։

Խնդրենք ստուգել, ստացւում են մեր առաքումները լիովին, թէ պակասում են։

Նշանակւած քանակի մի մասը արդէն ուղարկւած է, միւս մասը հետզհետէ փոստը կը ձգենք։

Ընկ[*երական*] *բարեւներով՝*
ԽՄԲ[*ԱԳՐՈՒԹԻՒՆ*] *«ԴՐՕՇԱԿԻ»*

1.- Թաւրիզ՝ Ատրպատականի Կ. կոմիտէին:
2.- Պաքուի:

369

Պատճէններու մատեան No 88, *էջ* 283

1904 le 7 Nov.

Messieurs,

Nous avons l'honneur d'accuser la réception de trois cartes de Kipert:
1) Diarbékir, 2) Erzéroum et 3) Bodroum.

Nous vous prions de nous faire parvenir les cartes suivantes de Kipert.
1) La Turquie d'Asie, sur une seule tuile, La plus détaillée, ancienne publication, deux exemplaires.
2) Vilayet d'Adana, sur la tuile, trois exeplaires.

3) Vilayet de Van, si cette carte est déjà publiée.
4) Vilayet d'Erzeroum, un exemplaire sur la tuile.

Agréez, messieurs, nos considérations distinguées.

REDACTION DU DROSCHAK

Թարգմանութիւնը.—

1904 7 *նոյ.*

Պարոններ,

Պատիւ ունինք յայտնելու՝ որ ստացած ենք Կիպերտի երեք քարտէսները.—
1) *Տիարպէքիր*, 2) *Էրզրում* եւ 3) *Պոտրում։*

Կը խնդրենք մեզի հասցնել Կիպերտի հետեւեալ քարտէսները՝
1) *Ասիական Թուրքիա, կտաւի վրայ, ամէնէն մանրամասնը, հին հրատարակութիւն*, 2 *օրինակ։*
2) *Ատանայի վիլայէթ, կտաւի վրայ*, 3 *օրինակ։*
3) *Վանի վիլայէթ, եթէ այս քարտէսը արդէն հրատարակուած է։*
4) *Էրզրումի վիլայէթ, մէկ օրինակ կտաւի վրայ։*

Հաճեցէք, պարոններ, ընդունիլ մեր յարգանաց հաւաստիքը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

370

Պատճէններու մատեան No 88, *էջ* 285

1904 *նոյեմբ.* 7

Պ. Յովսէփեանին, Խոյ

Յարգելի ընկեր,

Ներփակ carte-*ից կը համոզուէք, որ ձեր ուզած քարտէզը սպառած է եւ այդ պատճառով է, որ չէք ստացել։ Նոր հրատարակութիւններ կան առանձին առանձին վիլայէթների։ Գրէք, թէ որ վիլայէթն էք ուզում։ Մեծ Հայաստանի նահանգներից հրատարակւած է միայն Էրզրումի վիլայէթը, որից մէկ օրինակ կ՚ուղարկենք ստանալուն պէս։ Բացի այդ կողմնակի միջոցներէ մենք դիմել ենք սպառուած քարտէզներից ձեռք բերելու, եթէ ստացանք, կ՚ուղարկենք այն եւս։*

Ձեր հասցէին վաղը փոստն ենք ձգում 100 *օր*[*ինակ*] *Դրօշակ Սարուստանի համար։ Եթէ կարող էք աւելի մեծ քանակութեամբ տեղափոխել, յայտնեցէք։*

Էլէկտրական գործիքներից մէկը նմոյշի համար կ՚ուղարկենք գործածելու եղանակի բացատրութեամբ հանդերձ, բայց քիչ յետոյ։

Մենք շատ երկմիտ ենք Երկաթի մասին. արդեօք [*մէկ տող անընթեռնելի*]։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

371

Պատճէններու մատեան No 88, *էջ* 284

1904 *նոյեմբ.* 8

Պ. Վ. Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Յայտնեցինք այսօր Բ[*աթումի*] *նաւի մասին։ Գրեցինք նաեւ, որ աշխատեն պայմանաւորուել մարդկանց հետ հէնց Բ*[*աթում*]*ում։*

Նրանց կարելի է գրել հետեւեալ հասցէով՝
Պարոն Յարութիւն Դաւիթեանին
Մարիանեան պողոտայ, Սոբետ. տուն(1)
Յանձնել պ. Արշակին
Բաթում, անձամբ(1)

Դիտմամբ տառերը հատիկ հատիկ գրեցինք, որ ստիպւած չլինէք ուրիշի օգնութեան դիմել եւ հասցէն յայտնի անել։ Ամէն անգամ որ նաւը ճանապարհ ընկնի, դուք մի բացգիր ուղարկէք հէնց նոյն օրը, որեւէ բովանդակութեամբ։ Դրանից նրանք կ՚իմանան, որ նաւը ճանապարհ է ընկել։ Եթէ հարկ լինի, մարդու անունը կամ պաշտօնը կարելի է որեւէ կերպով բովանդակութեան մէջ հասկացնել։ Երկար նամակները հարկ կը լինի գաղտնի մելանով գրել։

Մօտ մի ամիս առաջ այստեղից Մարսէյլ մեկնեց ռուսահայ մի երիտասարդ, որը որքան յիշում ենք, պէտք է ձեզ հանդիպելիս լինի։ Աշխատէք մօտենալ, եւ եթէ խոհեմ, լուրջ երիտասարդ դուրս եկաւ, կարելի կը լինի նրան յանձնարարութիւններ անել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ռուսատառ հասցէ։

372

Պատճէններու մատեան No 88, *էջ* 286

1904 *Նոյեմբ.* 8

Առաքելին(1), *Վառնա*

Սիրելի ընկեր,

Քո ուղարկած անդորրագիրը տեղ հասցրինք։ Անցագիր էլ չի ճարւում։ Պարիզում աշխատում են, գուցէ յաջողւի։ Եթէ հարկաւոր լինի, կարող ենք ուղարկել պարսիկի, ասորու անցագրեր (*պատահական*)։

Յակովբեանը Լօզան է. կը յայտնենք քո հասցէն։ Մեզ այնքանն է յայտնի, որ պատրաստութիւն են տեսել փախցնելու. մի ժամանակ մեծ յոյս ունէին. վերջերումս ոչինչ չեն յայտնում։ Կը խնդրենք, որ ազատ ժամանակդ գրէիր քո բանտարկութեան եւ հարցաքննութեան պատմութիւնը։

Ներփակ նամակը յանձնիր Վարդին(2)։ *Մենք կը գրենք Իզմիր, որ նպաստ հասցընեն Եդուարդին*(3) *մեր հաշւին։*

Որքան գոհ կը լինէինք, եթէ Կ. կոմիտէի խնդիրը բոլորովին վերջանար ու բայոնական ժողովի նիւթ չդառնար։ Այդ մասին կատարելապէս համաձայն ենք քեզ։ Խօսիր Վարդի հետ։

Ընկ. բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Առաքել – այստեղ ծածկանունն է Բարսեղեան Սարգիսի:
2.- Վարդ-Պատրիկեան Յակոբ:
3.- Եդուարդ – ծածկանուն Պոյաճեան Սմբատի:

373

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 151

Նոյեմբ. 8

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ(1)

Հաստատում ենք հոկտ. 12 *նամակը։ Ամսոյս* 5-*ին դուրս է եկել Պալդի* Bithynie *նաւը, այդտեղ կը լինի հաւանական է ամսոյս* 15-*ին* (2-*ին*)(2)։ *Այդ նաւի* maître-*ին*(3) *յանձնուած է* No 7, 8 *եւ* 9, *Հայրենիքի եւ ռուսերէն թերթ, ընդամէնը* 4 *կապոց։ Այդ մարդը առաջին անգամն է ընդունում, վարձքը կանխիկ ստացել է* (25 fr.). *Նշանախօս չկայ։*

Եթէ այդտեղ ինքներդ համաձայնութիւն կայացնէք նաւերի մարդկանց հետ, դա

չատ լաւ կը լինի։ Մարսէյլի ընկերը(4) *բոլորովին ազատ ժամանակ չունի։ Համաձայնութիւնը առնելուց յետոյ կամ թող մարդը գայ մեր ընկերոջ գտնի, կամ թէ դուք նամակով յայտնէք նաւի եւ մարդու անունը։*

1.- Նաւահանգիստ – Պաթում ուղարկուած գրութիւն:
2.- Թուականը՝ «15-ին (2-ին)» նշուած է առաջինը (15) ըստ նոր տոմարի, երկրորդը (2) հին տոմարի համար, որ այդ տարիներուն գործածական էր Արեւելքի երկիրներուն մէջ:
3.- Ֆրանսերէն բառ՝ գլխաւոր, վարպետ իմաստով: Հոս գործածուած է նաւաստիներու պետի իմաստով: Նշուած թիւերը կը վերաբերին առաքուած «Դրօշակ»ներու համարներուն: Հայրենիք-ը Ամերիկայի Հ.Յ.Դ. կազմակերպութեան հրատարակած շաբաթաթերթն էր:
4.- «Մարսէյլի ընկերը» Վրթանէս Ղազարեանն էր, որ կը զբաղէր թերթերու, նամակներու եւ զինամթերքի առաքման գործով:

374

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 153-4

Նոյեմբ. 8-*ին*

ԿԱՅԾ(1)

Ստացանք հոկտ. 17-*ի ձեր նամակը։ Ցաւում ենք, որ ժամանակի սղութեան պատճառով անկարող կը լինենք նիւթեր մատակարարել դասախօսութիւնների ձեւով։ Բայց գրքեր, թերթեր կ'ուղարկենք, որքան կ'ուզէք, միայն թէ տեղափոխութեան հարցը կանոնաւորէք։ Այստեղից Բուլղարիա եթէ ուղարկենք հաւաքածուն նախ քան փոխադրութեան գիծը կանոնաւորելը, նա կարող է ձեռքից ձեռք անցնել եւ տեղ չհասնել։ Նախ եւ առաջ գիծը յաջողեցրէք։ Սրա մասին ժամանակին խօսւել է Խաչոյի հետ։ Ի՞նչ եղաւ հետեւանքը։ Վատ չէր լինիլ, եթէ ուսանողներից մէկը մի ամսով արտասահման անցնէր Ծննդեան արձակուրդներին։ Այստեղ նա հարկ եղած ծանօթութիւնները ձեռք կը բերէր։ «Դրօշակ» շարունակ ուղարկւում է սրճարանի հասցէին Ս. Զ.-ին. ստացւո՞ւմ են արդեօք։ Սրանից յետոյ կ'ուղարկուի նաեւ Տէր Օհանեանին* poste restante(2), *ինչպէս ինքն էր կարգադրել։ Տուէք ուրիշ հասցէներ եւս։*

Ստեփան Պօղոսեանը Ակկերմանում կազմել է մի փոքրիկ խումբ։ Ուզում է այստեղ ուղարկել ամսավճարները։ Եթէ ճանաչում էք, դիմեցէք իրեն եւ կապւեցէք հետը։

Պատերազմի մասին(3) *առանձին բան չկայ հաղորդելու։ Համարեա նոյն բաները մայրաքաղաքի թերթերն են գրում. աննպաստ բաները ի հարկէ քիչ ուշ եւ աշխատելով թանձրացնել իրենց համար նպաստաւոր փաստերը։*

1.- Օտեսա (Կայծ) ուղարկուած նամակ:
2.- Ֆրանսերէն՝ նամակատուն ցպահանջ պահ դրուած:
3.- Խօսքը ռուս-ճապոնական պատերազմի մասին է:

375

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, էջ 154-157

Նոյեմբ. 11-ին

ՍԻՄՈՆԻՆ(1)

Սեպտ. 14-ին մի նամակ էինք գրել, մէկը քեզ, միւսը բոլոր ընկերներին։ Այդ նամակը չի ստացուել Սարհատի (2) հեռանալու պատճառով։ Դրանից յետոյ ոչինչ չենք գրել. երեւի դու էլ չես սպասել։

Անն[մասի](3) վրայով ստացել ենք քո երկու նամակը։ Երրորդը (տիկնոջ հասցէին) ստացանք վերջերումս, ուր հասցէ էիր տուել։ Գրում եմ այդ հասցէով։ Դժբախտաբար պէտք է ասեմ որ իրերդ ուղարկելու համար տուածդ հասցէն բոլորովին չհասկացանք։ Անունը պարզ կարդացինք, իսկ առաջին խօսքը չասկարա(?) դուրս եկաւ։ Կարծում էինք, որ բժշկի բարեկամին գրածդ նամակում կրկնուած կը լինի այդ հասցէն։ Դիմեցինք, սակայն պատասխան ստացանք, թէ այդպիսի մի բան դեռ տեղ չի հասել։ Իրերդ կը մնան, ուրեմն, մինչեւ հասցէի պարզւելը։

Մի քանի տեղեկութիւններ Լեռնավայրի գործի մասին։ Վարդանը(4) այստեղ եկաւ, բաւական մնաց, որովհետեւ այդ ժամանակ Սարհատը դուրս էր եկել Ծոցից(5), իսկ առանց նրա ներկայութեան չգիտէինք, թէ ինչ ձեւով Վարդանը կարող կը լինէր ներս մտնել։ Սարհատի Ալեքսանդրիա հասնելը որ իմացանք, հեռագրով կանչեցինք։ Այստեղի խորհրդակցութեան արդիւնքը բերանացի կը պատմեն։ Ընդհանրապէս ասենք, որ այժմեանից նաւ գնելու եւ դրա նման լայն ծրագիրներ անժամանակ նկատեցան, քանի դեռ «ներսի ուժերը» փորձւած չեն։ Վարդանը եւ Ռոստոմը գացին Պարիզ ծանօթանալու այնտեղի զէնքերի եւ վաճառման ու փոխադրութեան պայմանների հետ։ Պէտք է ասած, որ այնտեղ գիտէինք մէկին, որը յանձն էր առնում ափ(6) հասցնել, մաքսից հանել տալ ապահովաբար ապրանքը, պայմանով միայն, որ մեր պատւէրը 30,000 fr.-ից պակաս չլինի։ Տեսանք նրա ունեցած զէնքերը։ Ունի հին մաուզէր (հատը 12 fr., փամփուշտը 8 fr.) աւստրիական մանլիխէր կարճ (80 fr.), ռումինական մանլիխէր, երկար (60 fr.)։ Ունի եւ պայթուցիկ նիւթեր։ Մեծ պատւէր տալուց հրաժարւեցինք։ Խոստացանք միայն գնել 100 մաուզէր, 300-ական փամփուշտով, եթէ մեր ընկերը գնայ Յունաստան եւ այնտեղ փոխադրութեան գիծը յաջողեցնի։ Վարդանը գնաց, եւ նրա վերջին նամակից իմանում ենք, որ աւելի ձեռնտու է եղել տեղն ու տեղը գնել «դրա» հրացաններ։ Փողը արդէն փոխադրել ենք։

Եթէ ներսի փոխադրութեան պայմանները լաւ լինեն, ապրանք առնելը հեշտ է։ Առաջին փորձից յետոյ կ'ուղարկենք լաւ հրացաններ՝ մանլիխէր։

Լեւոն Գիւլումեանը իր թեկնածութիւնն է դնում ձեր վայրի համար։ Վիշապցիների (իսկապէս Սաֆոյի) հետ կուել է(7)։

Նրան մեղադրում են վախկոտութեան մէջ։ Մեզանից նրան ճանաչում է Ռոստոմը, որի կարծիքով իբր կազմակերպող ոյժ նա անյարմար է։ Կամ ընկերները չեն նրա հետ հաշտւում, կամ ինքը ընկերների հետ։ Կարող է սակայն օգտակար լինել իբր պայթ[ուցիկ] նիւթերին քիչ թէ շատ ծանօթ մարդ։ Վարդանը եւ Սարհատը հակառակեցին նրա թեկնածութեան ասելով՝ թէ նրա ուժին պէտք կարող են ունենալ

մի տարուց յետոյ։ Առաջարկուեց նրան գնալ Պարսկաստան, որտեղից գուցէ մտնի Վասպուրական։

Պարս[կաստան] գնալու համաձայնութիւն տուեց, աւելացնելով սակայն, որ Վասպուրական չի գնալ, որովհետեւ այնտեղի գործին չի հաւատում։ Նորից դնում է իր թեկնածութիւնը, պահանջելով, որ անպատճառ քեզ գրի։ Գրում ենք, սպասելով քո կարծիքին, դու նրան աւելի պէտք է ճանաչես։

Պատրաստութիւն ենք տեսնում «Խորհրդին»։ Ըստ Ընդ. Ժ[ողովի] որոշման «Խորհուրդը» օրինաւոր կարող է լինել այն դէպքում միայն, եթէ Պատասխ. մարմինների 2/3 բացակայ չէ։ Քանի որ հիմա 3 մարմին ունենք, անհրաժեշտ է ուրեմն անպատճառ 2-ի ներկայութիւնը։ Վիշապից մէկը անպատճառ կը լինի։ Սասնոյ պատասխ. մարմինը գոյութիւն չունի։ Անդրանիկին (որ հիմա Պարսկաստան է անցել իր 14 ընկերներով) հրաւիրել ենք իբր հին մարմնի կենդանի մնացած ընկերոջ։ Հրաւիրել ենք Կոմսին(8), որովհետեւ առաջիկայում Վասպ[ուրականը] կարող է կարեւորութիւն ստանալ։ Ձեր կողմից էլ ցանկալի է մէկը գար մի ամփոփ տեղեկութիւն տալու ձեր վայրի մասին, որի վրայ այնքան յոյսեր են դրուած եւ որի պայմանները դրա հետ միասին ամէնից քիչ են ծանօթ մեզ։

Թռուցիկի(9) վերաբերեալ քո գրածը՝ նրա արտասահման անցնելու համար գործնական չէ։ Դպրոց մտնել, այնտեղ կատարելագործուելը տարիներ է պահանջում։ Եւ վերջ ի վերջոյ ի՞նչ «գործնական» բաներ պիտի սովորի,— այն որ ուրիշ աւարտողներ են սովորում։ Նոր գիւտեր խօ չենք սպասում։ Աւելի լա՞ւ չէ գործ ունենալ մի մարդու հետ, որ տասնեակ տարիներով պարապել է այդ խնդրով, իմանալու համար բոլոր գործնական եւ մեզ մատչելի միջոցները։ Նոյնը պէտք է եւ Եգիպտոսի ձեր ինժինէրի մասին։

Լեւոնի հարցի մասին կարող ես մի carte գրել այլաբանօրէն Պարիզ, նոյն տիկնոջ, բայց չուտով, որովհետեւ մարդը սպասում է։

Կովկասի հայոց գիւղական պէտքերը եւ պահանջները սոցիալիստ[ական] հողի վրայ։

Նամակը վերջացել էր, երբ ստացանք քո հոկտ. 23-ի երկար նամակը։ Այդ նամակը աւելի է մեզ համոզում, որ տեղիդ գործունէութիւնը պիտի լինի յարատեւ եւ զգոյշ, որ չպէտք է շտապել, եւ գլխաւորն է աւանսներ չտալ եւ վերացնել այն համոզումը, թէ մենք մեծ գումարներ ունենք ձեռքի տակ։

Ծրագիր ուղարկուած է Ծոց։ Եթէ ուզում էք, մէկն էլ կ՚ուղարկենք Ջրվէժ(10)։ Ապրանքի վերաբերմամբ ուրախ ենք, որ միեւնոյն թուի վրայ ենք կանգ առել եւ մենք եւ դու։

Գրքերից (պայթ[ուցիկների] վերաբ[երմամբ]) աւելի լաւ է ձեռք քաշես։ Փոխանակ սպասելու, որ այդտեղ ուսումնասիրեն, աւելի լաւ է պատրաստ ռեցեպտներ տալ։ Ժակ Լեւոնը ուզում է պատրաստել մի ձեռնարկ, կը մշակենք, կ՚ուղարկենք զանազան տեղեր։ Գրքեր ու բրոշիւրներ կ՚ուղարկենք, գլխաւորապէս անիշխանական՝ կրօնամոլութիւնը խանգարելու համար։

Հասցէդ նորից չպարզուեց։ Եթէ 103 ընդունենք ո (որ իսկապէս լ է) դուրս կը գայ լուսանկա։ Չգիտենք թէ դա անո՞ւն է, թէ ր տառը պակաս է եւ պիտի լինի լուսանկար(11)։

Նոյեմբ. 15

1.- Ս. Զաւարեանին ուղղուած նամակ է, երկու մասէ բաղկացած:
2.- Պէտք չէ շփոթել Գէորգ Զաւուշի հետ, որ նոյնպէս ծանօթ էր Սարհատ ծածկանունով: Այս մէկը (աւելի ճիշդ Սահրատ) Իզմիրի եւ Կիլիկիոյ գործիչներէն էր – Յարութիւն Յակոբեան: Այս վերջինի Սահրատ ծածկանունը Ռոստոմ միշտ կը գրէ Սարհատ ձեւով:
3.- Annemasse՝ Զուիցերիոյ սահմանին մօտ ֆրանսական փոքր քաղաք է:
4.- Խանասորի Վարդանը (Մեհրաբեան Սարգիս), այդ տարիներուն Ս. Զաւարեանի հետ անդամ՝ Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու մարմնին:
5.- Պէյրութից: Ծոցը կուս. ծածկանունն է Պէյրութի:
6.- Այսինքն Կիլիկիոյ մէկ նաւահանգիստը հասցնել:
7.- Վիշապցիները պոլսեցիներն են, այս պարագային՝ Պոլիս գտնուող Ցուցական մարմնի անդամները, որոնք Սուլթան Համիտի ահաբեկման գործով կը զբաղէին: Սաֆոն (Մարգարեան Մարտիրոս) անունցմէ մէկն էր:
8.- Վահան Փափազեան, ղեկավար գործիչ Վասպուրականի մէջ:
9.- Թռուցիկ Գէորգ (Տէր Աբրահամեան Գէորգ): Խանասորի արշաւանքին մասնակիցներէն:
10.- Զրվէժը Կիլիկիոյ Մերսին նաւահանգիստին ծածկանունն էր:
11.- Հարցը կը վերաբերի Ս. Զաւարեանի գործածած թուանշային (շիֆրէ) գաղտնագրութիւնը բանալու դժուարութեան:

376

Պատճէններու մատեան No 88, *էջ* 290
(*Փաստ.* 43-62)

1904, *նոյեմբ.* 12, *Ժընեւ*

«Վրէժ» Կենտր. կոմիտէին(1),

Յարգելի ընկերներ,

Հաստատում ենք մեր նոյեմբ. 4-ի նամակը, որով յայտնել ենք ձեզ թէ «Վրէժի» կողմերը որքան Դրօշակ է ուղարկուած։
Ձեզանից վաղուց է նամակ չունենք։
Այսօր փոստն ենք ձգում Բժշկի հասցէին 40 *օրինակ «Կազմակերպական կանոններից»* 2 *կապոցով։ Ուղարկում ենք ապահովագրած ու խնդրում ենք բոլորը ամբողջութեամբ հասցնել Մ*[*եծ*] *Քաղաք*(2)*։*
Սրանից առաջ նոյն հասցէով, ուղարկել էինք դարձեալ Սարուստանի(3) *համար* 14 *օրինակ։ Գանգատւում են, որ ոչինչ չեն ստացել։ Խնդրենք ուշադրութիւն դարձընել, որ զանազան ձեռքեր չընկնին, այդ հրատարակութիւնը սահմանւում է միայն կոմիտէների համար։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Թաւրիզ՝ Ատրպատականի Կ. կոմիտէին:
2.- Մեծ Քաղաք – ծածկանուն Թիֆլիսի:
3.- Սարուստան – ծածկանուն Կովկասի:

377

Պատճէններու մատեան No 88, *էջ* 291

1904 *Նոյեմբ.* 14

Պալքան[եան] Կենտր. կոմիտէին,

Յարգելի ընկերներ,

Ստացանք ձեր հոկտ. 25-*ի նամակը։ Հաստատում ենք մեր հոկտ.* 20-*ի նամակը։*

Ուրախ ենք, որ Կենտ. կոմիտէիդ անդամների միջեւ ծագած անհամաձայնութիւնը փակւած է արդէն։ Բայց, ինչպէս գրել էինք ընկեր Սարգսի մասնաւոր նամակում, շատ ցանկալի է, որ խնդիրը շրջանական ժողովին չընկնէր եւ բոլորովին վերջ ստանար ընկերական բացատրութեամբ։ Փիլիպէից դեռ եւս ոչինչ չենք ստացել։

Ներփակ նամակը կը խնդրենք յանձնել Սարգսին։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

378

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 159-161

Ուղարկւած 17 *Նոյեմբ.*

ՎԻՇԱՊ(1)

Ստացանք Էլլէնի երկտողը ներփակ նամակների հետ, որ միացրինք ձեր արխիւին։

Sesbié-*ի տան համարը* 57-*ն է։*

Déclaration-*ի մասին կարծիք դեռ չստացանք։ Ինչպէս երեւում է, շտապելու տրամադրութիւն չունէք։ Գալֆայի*(2) *հաշիւը սխալ է, երեխան շուտով չի ծնելու։ Դուք ի հարկէ հասկանում էք մեր անհանգստութիւնը եւ աւելորդ չէք համարել ժամ առաջ տեղեկութիւն տալ մեզ, թէ երբ է սպասւում ծննդաբերութիւնը*(3)*։ Այդ մեզ հարկաւոր է իմանալ, որպէսզի մեր ուժերի ներածի չափ ջանք թափենք եւրոպական յայտնի բժիշկների միջոցով թէ՛ ծննդականի դրութիւնը բարելաւելու եւ թէ ծննդաբերութեան բարդութիւնների առաջն առնելու։ Եթէ հարկաւոր տեսնէք, կարող էք պայմանական հեռագիր ուղարկել տալ Ֆիլիպէից, ամսաթւին աւելացնելով* 12. *օրինակ, եթէ մեզ հեռագրել տաք* 32 *թիւը, կը հասկանանք, որ կատարւելու*

է 20-ին, եթէ 38-ին, 26-ին եւայլն…

Անդրանիկի(4) *գալու մասին այստեղ էլ նոյն դիտողութիւնները եղան, բայց վերջ ի վերջոյ կանգ առանք նրա գալու վրայ։ Սարուստանից*(5) *էլ առաջարկել են ապահովութեան համար արտասահման փոխադրել նրան։ Լուսանկարը ստացանք, արտաքինը լաւ է, վնաս չունի։* Quillard-*ն*(6) *էր ասում, թէ տանենք մինիստրին ներկայացնենք։ Կ՚աշխատենք որ անհամ կերպարանք չընդունի գործը, այդ կողմից միամիտ եղէք։*

Ասլանի(7) *մասին Էլլէնի ասածները լաւ են։ Բայց մեղադրանք էլ կայ, մեղադրանք էլ։*

Աշոտը հիմա տեղ հասած կը լինի։ Հայկն էլ մտնում դուրս է գալիս։ Սարգսի համար անցագիր գտնել չկարողացանք։ Զգիտենք, Գրիգորին յաջողւել է, թէ ոչ(8)*։*

Անհամբեր սպասում ենք ձեր տեղեկութիւններին։ Սպասում ենք նաեւ Էլլէնի յիշողութիւնների շարունակութեան։

Ձեր

Նպա[ս]տներ հասել են Վան, եւ մի մասը Սասուն։ Գէորգ Զաւուշը իր խմբով վերադարձել է Սասուն բաշխման վրայ հսկելու(9)*։ Սարգիս Տէր Օհանէսեանը անցել է Շամ. այնտեղից մտադրութիւն ունի Բարձր*(10) *անցնելու։*

1.- Պոլիս հասցէագրուած նամակ, ամենայն հաւանականութեամբ Քրիստափորին (Էլլէն), որ արդէն Սամուէլ Ֆայն կեղծ անցագրով մտած էր Օսմանեան մայրաքաղաք, տեղւոյն վրայ ուսումնասիրելու, ապա նախապատրաստելու Սուլթան Համիտի մահափորձը: Գրութեան ոճը, հասկնալի պատճառներով, բոլորովին այլաբանական է:

2.- Յար. Գալֆայեան:

3.- Ակնարկութիւն Սուլթանի մահափորձին, ապա, շարունակութեան մէջ, մահափորձէն ետք ջարդերու հաւանականութեան եւ անոնց առաջքն առնելու միջոցներուն: «Երեխան շուտով չի ծնելու» – իմա՝ Սուլթանին մահափորձը շուտով տեղի չ՚ունենար:

4.- Սասնոյ հերոսն է, որուն Եւրոպա անցնելուն կը սպասուէր:

5.- Սարուստանը ծածկանունն է Ռուսիոյ, անշուշտ ներառեալ Կովկասը:

6.- Քիյառ՝ Pro-Armenia-ի խմբագրապետը:

7.- Ասլանը Ռուբէն Զարդարեանի ծածկանունն է:

8.- Աշոտը (Եղիկեան), Հայկը (Սանոսեան), Սարգիսը (Վանայ Սարգիս, Օտապաշեան Պողոս), Գրիգոր՝ Ցուցականի, այս պարագային Սուլթանի ահաբեկման գործին մասնակիցներ են:

9.- Արդարեւ, Սասնոյ ապստամբութեան ճնշուելէն ետք, Գէորգ Զաւուշ եւս, Անդրանիկի, Մուրատի, Սեպուհի, Քեռիի եւ բազմաթիւ ուրիշ մարտիկներու հետ անցած էր Վասպուրականի շրջանը: Այժմ կը վերադառնար աղէտեալ բնակչութեան համար հասած նիւթական նպաստի բաշխումին հսկելու համար:

10.- Բարձր կամ Բարձրաւանդակ՝ կուս. ծածկանունն էր Սասունի: Սարգիս Օհաննէսեանը՝ նոյնինքն Արամ Մանուկեանն է, որ արդարեւ 1904 թ. Նոյեմբերին անցած էր Վան:

379

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, էջ 120-122

Նոյեմբ. 18-ին

Մ. Ք.(1)

Ստացանք Բարսեղեանի հոկտ.23-ի եւ Զոփուռեանի(2) *հոկտ. 25-ի նամակները։ Հաստատում ենք մեր 1 նոյեմբ. երկար նամակը։ Նիթրայի*(3) *հետ բերանացի ապսպրանք են արել մի շարք խնդիրների մասին։*

Այսօր մենք տարածում ենք մեր մարմիններին հրաւէր «Խորհրդի» առթիւ(4)*։ Ուղարկում ենք երկու օրինակ՝ Սիսեանի եւ Եղիշէի հասցէներով*(5)*։ Արտագրում ենք մի օրինակ ձեզ համար, որպէսզի դուք ձեր կողմից դիմէք ձեր շրջանի մարմիններին։ Բացի այդ ուղարկել ենք Վրէժ* 15 *հատ ձեզ հասցնելու համար*(6)*։*

Ահա մեր հրաւէրի <u>բովանդակութիւնը</u>(7)*։*

Զէնքերի մասին սպասում ենք ձեր վերջնական որոշման։ Քանի որ բերդանը ձեզ վրայ նստում է այդտեղ 40 *ր*[*ուբլի*]*., աւելի լաւ չէ՞ վէրընդէլը, որ Պարսկաստանում մեզ տրւելու է* 30 fr.-*ով*(8)*։ Կարո՞ղ ենք յայտնել զինավաճառին, թէ վէրընդէլ կ՚ընդունինք այն քանակութեամբ ինչ քանակութեամբ փամփուշտ կը ճարւի, հաշուելով ամէն մի հրացանին* 500-*ական փամփուշտ։ Ի միջի այլոց այդ մարդը ուզում է անցնել Ռուսաստան եւ այնտեղից Թաւրիզ։ Ուզում է հասցէներ այդտեղ ձեզ հետ տեսնուելու, մասնաւորապէս Նիթրայի հետ, որին ծանօթացաւ այստեղ։ Հասցէ տալուց վախենում ենք։ Իրեն յայտնեցինք, որ աւելի լաւ է մեզ բացատրի, թէ ինչպէս եւ որտեղ կարող են գտնել նրան մեր ընկերները Թաւրիզում։*

<u>Սարգիսը</u> Բարձր(9) *թող առայժմ չանցնի, մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն դա վտանգաւոր պէտք է նկատել առայժմ։*

<u>Սեւ ծովի</u> գաղթականների մասին գրել ենք Լոնդոն. Պարսկաստան գաղթելու մասին նոյնպէս կը դիմենք. լաւ կը լինէր, եթէ դուք միաժամանակ յայտնէիք, թէ որ կէտերում հնարաւոր եւ փափաքելի էք համարում բնակեցնելը(10)*։*

<u>Մոբիլիզացիայի</u> առթիւ հրատարակւած շրջաբերականը ստացանք, լաւ էր կազմւած։

Թէ Աստուած սիրէք, փոխադրութեան եւ բաշխման գործը դուք կանոնաւորէք(11)*։ Մենք միշտ աւելի ենք ուղարկում, քան դուք էք ստանում։*

Դժւարութիւնները ձեր կողմիցն է։ Մեզ համար ինչ կայ. դուք կանոնաւոր գծեր հաստատէք, մէկի փոխանակ երկու ուղարկենք։ Կարելի է կանոնաւորել Խոյի գիծը (*այնտեղ ուղարկել ենք* 100 *օր*[*ինակ*] *Մրգաստան*(12) *հասցնելու համար*)*. Ջուլֆայի գիծը, Օրդուբաթի, Ագուլիսի միջոցով կարելի է մաքսանենգերի ձեռքով մեծ բեռներ անցկացնել, նոյնը եւ Խուտափերինի գծով։ Վերջին գիծը կարող է վերցնել իւր վրայ Ապառաժը*(13)*, որ մի ժամանակ չահագործում էր։*

Ստեորոտիպ կ՚ուղարկենք Թաւրիզ, որ Ոսկանապատ հասցնեն(14)*։*

Օլթիի դէպքի վերաբերեալ դոկումէնտները ինքներս պէտք է հրատարակենք(15)*։*

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղղուած նամակ: Գրութեան աւարտին սեւ թանձր մատիտով՝ «Ուղարկուած 18-ին Տիկ. Եւանգ. հասցէով»:

2.- Չոփուռեան ծածկանունն է Լեւոն Թադէոսեանի, անդամ Պաքուի Կեդր. կոմիտէին:

3.- Նիքրան՝ Յար. Շահրիկեանն է:

4.- Հարցը կը վերաբերի Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին, որ պիտի գումարուէր 1905 թ. Փետրուարին:

5.- Սիսեանը ծածկանուններէն մէկն է Աւետիս Ահարոնեանի. Եղիշէն՝ Թոփչեանն է, Թիֆլիսի «Յառաջ» պաշտօնաթերթի խմբագիրներէն:

6.- Վրէժը Ատրպատականն է (Թաւրիզ):

7.- Յիշուած հրաւէրի բովանդակութիւն չկայ, բայց սեւ մատիտով գրուած է «արտագրել», այսինքն՝ գաղտնի մելանով արտագրութեան ատեն պէտք էր աւելցնել:

8.- Յայտնենք որ 30 ֆրանքը այդ օրերուն համարժէք էր 12 ռուբլիի, հետեւաբար անհամեմատ աւելի աժան քան Թիֆլիսի 40 ռուբլին, այն տարբերութեամբ որ Ֆրանսայի մէջ գնուած իւրաքանչիւր զէնք պիտի ունենար 500 փամփուշտ:

9.- Սարգիսը ապագայ Վանայ Սարգիսն է, բուն անունով Օտապաշեան Պօղոս (1875-1915): Բարձրը՝ Բարձրաւանդակն է, Սասուն:

10.- Հարցը կը վերաբերի Համիտեան հալածանքներէն Կովկաս, Սեւ ծովու ափին ապաստանած արեւմտահայ գաղթականներուն, զորս ռուսական իշխանութիւնները որոշած էին արտաքսել: Պարսկաստան կը համարուէր յարմարագոյն երկիրը՝ զանոնք տեղաւորելու համար:

11.- Հարցը կը վերաբերի Կովկաս առաքուած «Դրօշակ»ի թիւերու փոխադրութեան եւ բաշխումին:

12.- Մրգաստան – ծածկանուն Երեւանի:

13.- Ապառաժ – ծածկանուն Ղարաբաղ-Շուշիի:

14.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի:

15.- Կ՚ակնարկուի ֆետայիներու սպանդին, գազանաբար գործուած ռուս սահմանապահներու կողմէ:

380

Պատճէններու մատեան No 88, *էջ* 299

1904 *նոյ.* 21

Պ. Լորիս-Մէլիքեանին,

Սիրելի ընկեր,

Ամերիկայից մեզ գրում են, որ քեզ յանձւած է 400 *դոլար, որ պէտք է մտցնեն մեր հաշւին։ Բացի այդ, կազմակերպութեան վրայ է ընկնելու նոյնպէս մեծ մասը այն գումարի, որ ծախսւած է ճաշկերոյթի համար։ Ինչպէս երեւում է, քո Ամերիկա գնալը շատ թանկ է նստել կազմակերպութեան։ Այս եւ մի քանի այլ հանգամանքներ աչքի առաջ ունենալով՝ մենք այն համոզմանն էինք, որ քո Ամերիկա գնալը անհրաժեշտ չէր։ Բայց դժբախտաբար՝ գնալուդ մասին մենք իմացանք այն ժամանակ, երբ մեր պատասխանը այլեւս չէր հասնիլ Լոնդոն։*

Որովհետեւ դեկտ. 15*-ին կայանալու է «Խորհուրդի» ժողովը, որի համար պատրաստած ենք ընդհանուր հաշիւ Բիւրոյի կողմից եւ տեղեկագիր Դաշնակցութեան ընդհանուր գործունէութեան մասին, խնդրում ենք ուղարկել քո մօտ գտնւած գումարների հաշիւը։ Դու ի հարկէ կը պատրաստես քո տեղեկագիրը արտասահմանեան պրոպագանտի մասին։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

381

Պատճէններու մատեան No 88, *էջ* 300

1904 *Նոյ.* 23

Պ. Յովսէփեանին, Խոյ

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր երկու ծրարները, բայց բացուած կողքերից։ Կամ ծրարն է ճանապարհին տրորուել, կամ այդտեղ [մէկ բառ անընթեռնելի] հայ պաշտօնեան է հետաքրքրուել բովանդակութեամբը։ Սրանից յետոյ հաստ ծրար գործածէք կամ մի քանի ծրարներով ուղարկէք։

Ապահովութեան համար աւելի լաւ է մէկ նամակը կրկնակի ծրարի մէջ դնել, ինչպէս մենք ենք անում։ Ուշադրութիւն դարձրէք նոյնպէս փոստատան վրայ։

Որպէսզի կատարելապէս համոզուէք, որ Կիպերտի քարտէզից այլեւս չկայ, ներփակ ուղարկում ենք մի նամակի կտոր էլ, գրուած Բերլինից։

Փոխանի խմբի կորուստը մեզ մեծ ցաւ պատճառեց։ Փոխիկն է(1) *դա արդեօք։*

Ձեր հասցէին դեռ ոչինչ չենք ուղարկել։ Ուղարկելիս՝ երկտողով իմաց կ՚անենք։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ձեր հասցէին ուղարկուած է 100 *օր*[*ինակ*] *Դրօշակ, Մրգաստանի*(2) *համար։ Կը ստանաք չուտով եւ մի հաւաքածու, Արեւել. բիւրոյին հասցեելու համար։*
Ն[*ՈՅՆ*]

1.- Փոխան կամ Փոխիկ – ծածկանուն դաշնակցական յայտնի մարտիկ Յովհաննիսեան Վահրամի (1874-1904):
2.- Մրգաստան – ծածկանուն Երեւանի:

382

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 123

Նոյ. 24, *Բժ. Թադ. հասցէով*

Մ. Ֆ.(1)

Այս քանի օրս ձեզ մօտ է գալու «Վրաստան» կուսակցութեան անդամ Ադամաշվիլի կեղծ անունով մէկը — դա որովհետեւ անձամբ ճանաչում է «մլուկների սարսափին», տուինք նրա անունը։ Դա եղել է Պարիզի ժողովում եւ իբր ականատես աւելի մանրամասը կը պատմի։ Եթէ «մլուկների սարսափը» այդտեղ չլինի, նա գուցէ դիմի Վանիային(2)*, որին նոյնպէս ճանաչում է։ Թէեւ ինքը խնդրել է նամակով իր անունը չյայտնել, բայց որովհետեւ գուցէ նա չկարողանայ ոչ մէկին եւ ոչ միւ-*

սին տեսնել, հարկ ենք համարում յամենայն դէպս ձեզ հաղորդել, որ դա Նով[ոյէ] Առ[նիյա]*-ի նախկին աշխատակից* Լալի-*ն*(3) *պէտք է լինի։ Երբ տեսնուէք, խօսեցէք ձեր անելիքների մասին։ Հիւսիսակերտի*(4) *Բիւրոյի կազմը կարծենք չի յաջողուելու։ Ֆինլանդացիների աւելի չափաւոր մասը հեռանում է. ասպարէզի վրայ մնում է արմատական կուսակցութիւնը։ Յայտնի չէ, թէ երբ լոյս պիտի տեսնի* déclaration-*ը։*

Մռաւի(5) *հեռագիրը չիմացանք, թէ ում է վերաբերւում. սպասում ենք նամակի։*

ՀԱՇՈՒԱԿԱՆ ՆՈԹԵՐ(6)

Մեծ-քաղաք – Արեւելեան Բիւրոն իր ստացած գումարներու մասին Յուլիս 16էն ի վեր երբեք տեղեկութիւն չէ տուած – իսկ ծախսերու մասին երբեք:

Ոսկանապատի Կ. Կոմիտէն երբեք հաշիւ չէ ներկայացուցած: Ոսկան[ապատ]-ի Երկրորդ կոմիտէն ներկայացուցած է մինչեւ Ապրիլի վերջը ելքի հաշիւը պակաս:

Ոսկանապատի քաղ[աքային] կոմիտէն. նոր կազմի մուտքը ստացուած մինչեւ 30 Սեպտ. իսկ ելքը չէ ստացուած:

1.- Թիֆլիս ուղարկուած նամակ:
2.- Վանիան՝ Յովհ. Լոռու-Մելիքեանն է, անդամ Արեւմտեան բիւրոյի՝ Եւրոպայի մէջ քարոզչական աշխատանքներու պատասխանատու:
3.- Շեղագրով շարուածները ռուսատառ են:
4.- Հիւսիսակերտը Պետերբուրգի կուս. ծածկանունն է:
5.- Մռաւը՝ Մարգար Ժամհարեանն է, անդամ Կովկասի ինքնապաշտպանութեան մարմնին:
6.- Ռոստոմի գրութեան յաւելուած՝ Յար. Գալֆայեանի գրչով:

383

Պատճէններու մատեան No 88, *էջ* 305

1904 *նոյ.* 29

Պ. Յովսէփեանին, Խոյ

Յարգելի ընկեր,

Այսօրւայ փոստով ուղարկում ենք երկու կապոց հին համարների յատկապէս Մ[*եծ*] *Ք*[*աղաք*] *հասցնելու համար։ Խնդրենք ամէն կերպ պատւիրէք, որ ամողջովին տեղ հասցնեն։*

Կապոցների մէջ կան հետեւեալ համարները
1894 *թ.* No 6 – 12
1895 *թ.* No 1 – 4, 6 – 16, 19 *եւ* 21
96 *թ.* No 8, 11, 18 – 28
97 *թ.* No 1 – 16
98 *թ.* No 1 – 4, 6 – 11

99 թ. No 1 – 10
900 թ. No 1 – 10
901 թ. No 1 – 9
902 թ. No 1 – 11
903 թ. No 1 – 10
904 թ. No 1 – 10

Ընդամէնը 123 *համար։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Հաստատում ենք մեր նոյ. 23-ի նամակը։

Ն[*ՈՅՆ*]

384

Պատճէններու մատեան No 88, *էջ* 306-7

1904 *նոյ.* 30

Վահապին(1), *Բոստոն*

Սիրելի ընկեր,

Ստացանք քո նոյ. 8-*ի նամակը։ Իզմիրի բանտարկեալների մասին գրուեցաւ, տուինք եւ ձեր հասցէն. միայն հարկ ենք համարում աւելացնել, որ հէնց այսօր ստացուած նամակներից երեւում է, որ անհամ խառնակութիւններ են ընկել մէջները. դժուար է ասել, թէ ինչ դրութեան մէջ է կոմիտէն։ Մենք գրում ենք հետեւեալ հասցէով՝* Stephen Richard, British post.

Անյարմար է դիմել Սարաճեանին մի այդպիսի խնդրով. վայ թէ զանազան մեկնութիւններ տայ։

Անգլիական դեսպանին կ՚ուղարկենք Դրօշակի այն համարը, ուր տպուած է Հրայրի կենսագրութիւնը։

Այն ինչ մենք կարող ենք հաղորդել անգլիական կառավարութեան, նա արդէն ունի իր ձեռքի տակ։ Չէ որ Մշոյ մեր ընկերները պարբերաբար ամէն ինչ հաղորդում են հիւպատոսներին, մասնաւորաբար անգլիականին։ Memorandum-*ի համար պէտք է* [*երկու բառ անընթեռնելի*]. *պատճառաբանութիւնը։*

«Կովկասեան վէրքեր»ի թարգմանութեան ծախքի համար սպասում ենք Կովկասից մի գումարի։

Կամաւորները ե՞րբ են ուզում գալ։ Աւելի լաւ չէ՞ր սպասեն «Խորհրդի» ժողովին, որպէսզի ըստ այնմ վարուին, թէ չէ հիմա ո՞ւր կարող են գնալ։

Մշի ընկերից ստացանք բացատրութիւն։ Սաստիկ բողոքում է, որ իրեն վերագրում են այդ տեսակ տողեր։ Նա ոչ մէկի հետ Ամերիկայում նամակագրութիւն չու-

նի։ Նամակը նա համարում է կեղծիք եւ ենթադրում է, որ այդ կեղծիքը կատարել են մի երկու փոլիսաճիներ յատկապէս իրեն վնասելու նպատակով։ Պահանջում է խիստ քննութիւն։ Մենք էլ խնդրում ենք նամակը ստացող պարոնից մեզ հասցնի նամակը ձեռքը(2) *համեմատելու համար գոնէ։*

Գալֆայեանը խորհուրդ չէ տալիս վերոյիշեալ հասցէով գրել Իզմիր։ Նա աւելի լաւ է համարում դիմել ուղղակի Մարթինին կամ Էդգարին հետեւեալ հասցէով՝ Garabed Ayvazian։ *Բայց եթէ չգրես, սպասես, որ իրենք ուղարկեն իրենց հասցէն, շատ լաւ բան արած կը լինես։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Կոմիտէի հասցէին ուղարկում ենք շրջաբերական նամակ «Խորհրդի» առիթով։

1.- Վահապ – ծածկանուն Դերձակեան Օննիկի, աւելի ծանօթ Վռամեան Արշակ անունով։
2.- Ձեռքը համեմատելու – իմա՝ ձեռագիրը համեմատելու։

385

Պատճէններու մատեան No 88, *էջ* 308

1904 *նոյ.* 30

Սարգիս Աբրահամեանին, Վառնա

Սիրելի ընկեր,

Շատ ուրախ կը լինէինք, եթէ կոմիտէի անդամների միջեւ ծագած երկպառակութիւնները կարողանայիք ընկերական շրջանում վերջացնել։

«*Շարժում*»*ը*(1) *գնելուն մենք բոլորովին համամիտ չենք։ Եթէ կենտր. կոմիտէի անդամները իրենք ուզում են, թող հիմունքները ուղարկեն «Խորհրդին» ներկայացնելու համար։*

Սարաֆովին(2) *կ՚ուղարկենք պատկերները։* 500 fr.*ը արդէն վճարուած է։*

Լեւոնը Աթէնքից ուզում է 500 fr.։ *Աւելի լաւ է, դուք այդտեղից ուղարկէք հաշիւները չխառնելու համար։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Սարհատի հասցէն՝ Jean Jacob, poste restante
Athènes, Grèce

Այդ հասցէով էլ կարելի է Լեւոնին դրամ ուղարկել։

1.- Պուլկարիոյ Վառնա քաղաքին մէջ Վարդապետեանի կողմէ հրատարակուող լրագիր։
2.- Բորիս Սարաֆով – մակեդոնացի յեղափոխական ղեկավար դէմք, բարեկամ Դաշնակցութեան։

386

Պատճէններու մատեան No 88, *էջ* 309
(*Փաստ.* 43-63)

1904, *Նոյեմբ.* 30, *Ժընեւ*

«Վրէժ» Կենտր. կոմիտէին(1),

Յարգելի ընկերներ,

Այսօրւայ փոստով ուղարկում ենք 4 *կապոց «Դրօշակ» Արտաբիլի վրայով Ոսկանապատ*(2) *հասցնելու համար։ Խնդրենք հոգ տանիլ, որ շուտ եւ ապահով ստանան։*

Սպասում ենք ձեր հաշիւներին։

Ուղարկէք նաեւ Սասունից վերադարձած ընկերների լուսանկարները։

Ինչո՞ւ չէք կանոնաւորում փոխադրութեան համար Խուտափէրին, Ջուլֆայի, Շահթախտի գծերը մաքսանենդերի միջոցով։ Բեռներով թէյ փախցնողները միթէ՞ չեն կարող մի քանի փութ հրատարակութիւններ անցկացնել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ատրպատականի Կեդր. կոմիտէին:
2.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի:

387

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 124-5

Նոյ. 30-*ին*

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Երէկ մեզ հաղորդեցին Թիֆլիզի եւ Բագուի գլխաւոր լրտեսապետների հասցէները։

1) *Թիֆլիզ*, Նիկոլայ Իլիչ Պերեշեւկին Կաւկասկայա Ուլ[ից] դոմ No 17։ *Բացի սրանից կայ եւ մի ուրիշ անուն* Գէորգուբիանի Իլի Սարիբեկի Պեր[եուլոկ]։

2) Բագու, Նիկոլայ Իլիչ Պերեշեւկին դոմ No 26։ *Այս հասցէն տրուած է մի ուրիշի տեղ, որ ջնջուած է։ Ջնջած հասցէն հետեւեալն է.*

Վերեսնիյայա, Պրիկասպիյսկայա Ուլիցա, No 131, Ռոման Սիմիոնովիչ Ou…:

Շատ հաւանական է, որ Ou-ը մի ուրիշ տեղ փոխուած լինի, իսկ նրա տեղը եկած լինի Թիֆլիզից Բագու Պերեշեւկին-ը(2)։

Յամենայն դէպս այս բոլոր անունները աչքի առաջ ունեցէք, ընակարանները կարելի է հսկել, դիմացի կողմը մի սենեակ վերցնել եւ եթէ հաստատուի իրողութիւնը, բոլոր եկող գնացողների լուսանկարները հանել։

Ուղարկում ենք ձեր ուզած թերթերը No 9 200 *օրինակ, հին համարներից* 2-*ական հատ։*

Մեքենայից մեր խելքը բան չի կտրում։ Ինչպէս երեւում է, ամէն մէկը ձեզանից առանձին է մտածում եւ կարգադրութիւններ անում։ Զոփուռեանը(3) *մեքենայի պատւէր է ուղարկում, Համոն*(4) *ստէորոտիպի։ Մէկը Դրօշակն է ուզում արտատպել, միւսը նոր թերթ է հիմնում։ Զի՞ լինիլ, որ երբեմն խորհրդակցէք այդ տեսակ խնդիրների վերաբերմամբ։*

Քարտէզ կ՚ուղարկենք մեծ քանակութեամբ եւ այդտեղ, եթէ իմանանք, թէ դրան արգելք չկայ։

Ասխաբադից ձեզ դրամ են ուղարկել «Կովկասեան վէրքերի» թարգմանութեան համար։ Ինչո՞ւ մինչեւ հիմա բան չէք յայտնում դրա մասին։ Կամ փողը ուղարկէք, կամ գումարը յայտնէք։

Ձեր ուղարկած հասցէով կը ստանաք կազմ[*ակերպական*] *կանոնների կէս մասը։ Միւս մասն էլ կը ստանաք։*

Գրում էք, որ այնպէս ուղարկենք, որ չհասկանան, թէ գիրք է կամ թերթ։ Աւելի՞ լաւ չէ ուղարկել իբրեւ ապրանք մեծ քանակութեամբ։ Այդ դէպքում հարկաւոր է միայն մաքսատանը հարկ եղած զգուշութիւնները ձեռք առնել։

Ստացանք ձեր 4/17 *նոյ. նամակը։*

Խնդրենք անմիջապէս նամակս ստանալուն պէս գտնէք մի վստահելի դաշնակցական գրաշար եւ ըստ կարելոյն շուտով ճանապարհ ձգէք։ Նեղութեան մէջ ենք, մերինը հեռացրել ենք...

Դեկտ. 5-*ին շրջաբերական նամակ, Յովնաթանեանի հասցէով։*

1.- Պաքու ուղղուած նամակ, էջին վերեւ «ստացած» նշումով:
2.- Շեղագրով շարուածները՝ ռուսատառ:
3.- Թադէոսեան Լեւոն (Զոփուռեան):
4.- Օհանջանեան Համօ:

388

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 89-90

30 *նոյ.*

ՇԱՄ(1)

Ստացանք ձեր 20 *հոկտ. նամակը։ Շատ ցաւում ենք, որ մեր առաջին նամակը չի կարդացել։ Ընդարձակ գրել էինք քաղաքական դրութեան եւ ձեր տրտունջների առթիւ։ Ուրախութեամբ կը կրկնէինք, եթէ հաստատ համոզուած լինենք, թէ գոնէ այս նամակը լրիւ կը կարդացի։ Բայց նախ մեր նամակները բանալու դեղերի մասին։ Ժօն պօտասով գրուածները չի կարելի երկաթի արջասպով բանալ, պէտք է գործածել պէր-կլօրիւր դը ֆէր։ Դա մի թանձր կարմրագոյն դեղ է. ծախւում է դեղարաններում. արիւն կանգնեցնելու համար է։ Եթէ արջասպով մասամբ յաջողւում է բանալ, դրա պատճառը միայն այն է, որ արջասպը ընդհանրապէս մաքուր չի լինում։ Օդի մէջ արջասպը խառնւելով թթւածնի հետ, փոխւում է։ Եթէ առաջին ձեր*

նամակը պահել էք, փորձեցէք բանալ պէր-կլօրիւր դը Ֆէրով (ռուսերէն դրան ասում են խլորոկիսլոտնոյէ ժելեզօ(2))։

Սրանից 1.5 *ամիս առաջ հեռագրով խնդրել ենք Սալմաստ՝ յայտնել Շամ, թէ Կոմսը*(3) *հրաւիրուում է Խորհրդի ժողովին. խնդրում էինք չգալու դէպքում ուղարկել մի ընդարձակ տեղեկագիր, մէջ բերելով բոլոր պահանջները եւ կարիքները, պատասխան դեռ չունենք։*

Քաղաքական հանգամանքները իրօք բոլորովին նպաստաւոր չեն որեւէ շարժման դէպքում։

Առայժմ պէտք է ամէն կերպ խոյս տալ ընդհարումներից եւ ամրացնել գաւառները։

հաղորդում ենք ձեզ մի հանգամանք, որի վերաբերմամբ յանձնարարում ենք խիստ գաղտնապահութիւն նոյնիսկ ընկերների շրջանում։

Ֆրանսիացի մեր բարեկամները կարողացան համոզել Դելկասէին(4) *ընդունել* 30.000 fr. *բաշխելու համար Սասունի եւ Մուշի կարօտեալներին։ Սրանից մի ամիս առաջ* Quillard-*ը*(5) *ստացաւ մինիստրից մի նամակ, որով յայտնում էր, թէ փողը ստացել է Վանում եւ թէ Վանայ հիւպատոսը մտադիր է բաշխումը կատարել տեղական առաջնորդի միջոցով։ Հիւպատոսը խնդրել էր, որ այդ գումարի մի փոքրիկ մասը արտօնի, նուիրատուների կողմից, բաշխել Վանայ կարօտեալներին։* Quillard-*ը պատասխանեց, թէ թող* 2.000 fr. *բաշխի Վանում եւ պակասը լրացնելու համար նորից յանձնեց* 2050 fr.

Հետեւեալ մեր նամակը բացէք պէր-կլօրիւր դը Ֆէր-ով։

Ի՞նչ եղաւ Գ-ի(6) *վիճակը։*

1.- Նամակը ուղղուած է Վան (Շամ):
2.- Ռուսատառ:
3.- Վահան Փափազեան, որ պիտի չկարենար երթալ Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին:
4.- Ֆրանսայի արտաքին գործոց նախարար:
5.- Pro-Armenia-ի խմբագրապետ:
6.- Գիսակ – Յովհաննէս Սերենկիւլեան, որ բանտ կը գտնուէր:

389

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 91

30 *նոյ.*

ՎԻՇԱՊ(1)

Déclaration*ը պատրաստուում է, կ'ուղարկւի հետեւեալ հեռագրով, երկու հասցէներով։*

Շրջաբերական նամակը կ'ուղարկենք վաղը։ Պատրիարքար[ան]ից թղթեր հայկական հարցի վերաբերմամբ։

Ներփակ նամակը Շամ ուղարկել։

1.- Պոլիս ուղարկուած գրութիւն:

390

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 91

1 *դեկտ.* [1904]

ՎԻՇԱՊ(1)

Սարգսի եւ ընկերների ձերբակալման մասին(2)։ *Հասցէ ուղարկեն հեռագիրներ համար, որ կը տանք անհրաժեշտ դէպքերում Պարիզից կամ գերմանական մի քաղաքից։*

1.- Պոլիս ուղարկուած գրութիւն:
2.- Սարգիսը ապագայ Վանայ Սարգիսն է, Բարսեղեան, իսկական անունը՝ Օտապաշեան Պօղոս: Ցուցականի գործին «դրսի» ընկերն էր. Պուլկարիոյ մէջ ռումբի փորձերէն վերադարձին ձերբակալուեցաւ հետը գտնուող ընկերներուն հետ, ռումբ եւ այլ նիւթեր իրենց ձեռքին: Վտարուեցաւ Պուլկարիայէն, բայց շուտով վերադարձաւ եւ վերստին գործի լծուեցաւ:

391

Պատճէններու մատեան No 88, *էջ* 312

1904 *դեկտ.* 1

Պալքանեան Կեդր. կոմիտէին

Յարգելի ընկերներ,

Ստանալով ձեր նամակը, հեռագրեցինք ձեզի անմիջապէս Գէնատիեվի եղբայր Պազին, խնդրելով միջամտութիւն։

Ենթադրում ենք, որ կարող էր տեղի ունենալ խուզարկութիւն, կարող էին գաղտնիքներ բացւել։ Շատ երկմիտ ենք, խնդրենք հեռագրով մեզ միամտացնել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ինչո՞ւ այդ բանը հեռագրով չէիք յայտնել։

392

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 126

Ուղարկուած շրջաբ. նամակ դեկտ. 3

Մ. Ֆ.(1)

Պատգամ[*աւորների*] *ծախք։*

Հաշիւ. խմբանկարներ. կենսագրականներ. տեռօրներ։ Սանձահարել։ Տեղեկութիւններ աքսորուածների մասին։ Հայկունին։ Հնչակեանների մասին։ Պատժել տեռօրի[?] *սպանողին։ Ղարաբ*[*աղի*] *ղաչաղները*[?]*։ Հասցէ՝* Madame Josephine Domenjof, Chatillon Lausanne.

1.- Թիֆլիս՝ ուղարկելի գրութեան մը շարադրելի կէտերը, որոնց մասին Ռոստոմ աւելի լայնօրէն պիտի գրէ Արեւելեան բիւրոյին ուղղուած 10 Դեկտ.ի նամակին մէջ։ Այս նոթերուն թուականը արձանագրուած Դեկտ. 3, բայց նախորդ էջի (125) տակը գրած է «դեկտ. 5-ին շրջաբերական նամակ, Յովնաթանեանի հասցէով»։ Կը թուի, թէ հարցը միեւնոյն շրջաբերականին մասին է, հաւանաբար առաքման թուականի ճշդումով։

393

Պատճէններու մատեան No 88, *էջ* 314

1904 *դեկտ.* 3

Տ. Ստեփան քհնյ. Գիւլումեանին, Պրաիլա

Արժանապատիւ հայր,

Ձեր 12 *նոյ. նամակի համաձայն, այսուհետեւ Պ. Մելիք Մանուկեանի հասցէով կ՚ուղարկենք* 5-*ական օրինակ «Դրօշակ»։*

Խնդրենք յայտնել Պ. Յարութիւն Խաչատուրեանին եւ Պետրոս Համբարձումեանին, որ նրանց մասին ոչ մի աննպաստ տեղեկութիւն մենք չենք ստացել. այդ ենթադրութիւնը սխալ է։ Թերթ չուղարկելու պատճառը լոկ այն է, որ մոռացմամբ նրանց անունները ընդհանուր գրքից փոխադրուած չեն եղել բաժանորդագրութեան մատեանը։ Նրանք այսուհետեւ կանոնաւորապէս պիտի ստանան «Դրօշակի» համարները։

Կը յուսանք, որ դուք ձեր հայրական յորդորներով կ՚աշխատէք վերացնել կամ գոնէ մեղմացնել Պրայիլայի մեր հայրենակիցների միջեւ ծագած անհամաձայնութիւնները։

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

394

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 162-3

8 *դեկտ.*

ՍՄԲԱՏԻՆ, ՄԷՐՍԻՆ(1)

Հաստատում ենք նոյ. 11-*ի նամակը։ Վարդանը արդէն Ծոց է ճանապարհ ընկել. այդ կողմից միամիտ եղիր։ Այս օրերս էլ փոխադրեցինք Սարհատին* 3000 fr. *ապրանքի տեղափոխութեան համար.* 3000 fr. *էլ վաղը կ՚ուղարկենք*(2)։

Մեզ յիմար դրութեան մէջ ես գցել քո թերի հասցէով, որը դեռ չի պարզւել։ Յամենայն դէպս մի քանի անհրաժեշտ իրեր կ՚ուղարկենք. խո՞ չի կորչելու։

Թերթեր շարունակ կ՚ուղարկենք։ Փաթաթոցներին անպատճառ նայիր։ Վերջին օրերս քեզ ուղարկեցինք 2 *կապոց թերթերի, փաթ[եթի] վրայ արտագրելով մեր շրջաբերական նամակը «Խորհրդի» առթիւ։ Չգիտենք, թէ որքան յարմարութիւն կ՚ունենաք ձեր մարմնի կողմից ներկայացուցիչ ուղարկել։ Դու կարո՞ղ կը լինիս դուրս գալ. հաւանական է, «Խորհուրդը» կայանայ դեկտ. վերջին, նոյնիսկ գուցէ յունուարի սկզբին*(3)։ *Շատ դանդաղ ենք շարժւում։ Յամենայն դէպս մի ընդարձակ տեղեկագիր հարկաւոր է ձեր մարմնի կողմից։ Չմոռանաս նաեւ նախորդ մեր նամակի մէջ յիշած խնդրի մասին գրել (գիւղական պէտքերը, դրա համեմատ մեր պահանջները եւ գոհացում տալու միջոցները համապատասխան հողի վրայ)։*

Պարիզ ուղարկած իրերդ, Լօրիսի(4) *ասելով, դեռ իրենք չեն ստացել։*

Լօրիսը եկաւ երէկ Այվատեանի(5) *հետ միասին։ Հիմա աւելի յոյս կայ, որ Անգ[լիայի] թագաւոր ընդունի պատւիրակութիւնը։ Շուտով այդ նպատակով Լոնդոն պիտի մեկնին։ Պատւիրակութիւնը նեղութիւն է կրում նիւթական տեսակէտից։ Պարիզից մի սանտիմ չեն տուել։ Դարձեալ կը փորձեն։ Ստիպւած ենք դիմել Կովկաս մի* 3000 *ր-ի չափ գումար ուղել։ Այվատեանը ուղղամիտ դաշնակցականի տպաւորութիւն չի թողնում։*

Անդրանիկը(6) *շուտով այստեղ կը լինի։ Կովկասում կազմակերպութիւնը մեծ ծաւալ է ընդունում։ Հետեւել եւ ղեկավարել դժւար է լինում։ Տեռորները այն աստիճան շատացել են, որ ստիպւած են յատուկ շրջաբերականով արգելք դնել։ Վիշապցիք*(7) *լաւ են։ Իզմիրում խառնակութիւնը վերսկսել է տղաների միջեւ։ Վասպուրակ[ան]ում չգիտեն, թէ որոշ ինչ դիրք բռնեն։ Երկու լաւ տղաներ ներս են մտել, մի քանի յաջող փոխադրութիւններ են եղել, բայց մի խոշոր կորուստ տւինք՝ Փոխանը*(8) *իր* 14 *ընկերներով կոտորւել են Դումանի կռւած տեղում։*

Մի երկու լաւ ուժեր կան, որոնք ուզում են նւիրւել յեղ. գործին։ Ձեր տեղեկագրի մէջ չմոռանաք գրել, թէ ուր ինչ ուժեր են հարկաւոր եւ ինչով կարող են զբաղւել։ Տիրանը ճանապարհ է ընկնում ձեր կողմերի համար։

1.- Ս. Զաւարեանին (Սմբատ) ուղղուած գրութիւն, «ուղարկւած 8-ին» նշումով։

2.- Վարդանը (Խանասորի) Մեհրաբեան Սարգիսն է, Զաւարեանի հետ Լեռնավայր-Կիլիկիոյ Պատ. մարմնի անդամ, որ առաջինին հետեւելով պիտի անցնէր Պէյրութ (Ծոց)։ Սարհատը, աւելի ճիշդ Սահրատը, Իզմիրի եւ Կիլիկիոյ գործիչներէն է։

3.- Դաշնակցութեան Խորհուրդի նիստը իրողապէս պիտի կայանար 1905 թ. Փետրուարի վերջին օրերէն սկսեալ մինչեւ Մարտ-Ապրիլ ամիսները։

4.- Յովհ. Լոռու-Մելիքեան:
5.- Այվատեան եպս. մաս կը կազմէր Եւրոպա մեկնած կաթողիկոսական պատուիրակութեան:
6.- Սասնոյ հայդուկապետը:
7.- Վիշապցիք՝ պոլսեցիք: Ակնարկութիւնը Սուլթանի մահափորձը կազմակերպողներուն է:
8.- Փոխան կամ Փոխիկ, իսկական անունով Յովհաննիսեան Վահրամ (1874-1904), որ Հոկտեմբերի կէսերուն իր զինատար խումբով Սալմաստէն ճամբայ ելած էր Երկիր անցնելու համար. հազիւ սահմանը անցած կռուի բռնուելով քիւրտերու հետ նահատակուած էր իր ընկերներով: Նախապէս նոյն տեղը Նիկոլ Դուման եւս հանդիպած էր զինեալ քիւրտերու եւ հազիւ փրկուած:

395

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 126-129

10 *դեկտ.*

Մ. Ք.(1)

Հաստատում ենք նոյ. 18, 24 *մեր նամակները։ Բացի այդ արտագրած ուղարկել ենք մեր տարածած շրջաբերական նամակի ամբողջութիւնը դեկտ.* 3-*ին։ Մեծ դժուարութիւններ ենք կրում հասցէների պատճառով. աւելացրէք նորերը։ Ահա մեր մի նոր հասցէն՝* Madame Josephine Domenjof, Chatillon, Lausanne.

Պատգամաւորութիւնը(2) *վաղը Պարիզից գալու է Լոնդոն։ Հիմա յոյս կայ ընդունելու թագաւորի կողմից։ Եթէ այդ ընդունելութիւնը կը կայանայ, այնուհետեւ դիւրին կը լինի։ Պատուիրակութիւնը նեղութիւն է քաշում դրամական կողմից։ Արտասահմանի հայերը այնքան են տուել, որ հազիւ է ծածկում եպիսկոպոսների ծախքը։ Միսսիան վերջացնելու համար անհրաժեշտ է օգնութիւն Կովկասից։ Լօրիսի*(3) *ծախքը եղել է մինչեւ հիմա մեզանից։ Եթէ* 4000 *ր. այդտեղից մեզ ուղարկուի, այդ գումարով կարող ենք եպիսկոպոսների ծախքը լրացնել եւ Լօրիսինն էլ հանել։ Ուրեմն փութացէք։ Դիմէք ի միջի այլոց Ոսկանապատ «Գրիգորին» (Ս-ին), որի հետ ամառս այստեղ խօսել ենք եւ ուղարկէք մեզ անհրաժեշտ գումարը։ Մինչեւ վերջը տանելու պատասխանատուութիւնը մեզ վրայ է ընկած։*

Լօրիսը եւ Ա-ը այստեղ էին։ երէկ գնացին։ Ռուզվէլտի(4) *հետ տեսակցութիւնը լաւ արդիւնք պիտի տայ։ Դրական կերպով խոստում է արել։*

Պարոյրը(5) *չերեւաց։ Եկողների ձեռքով ուղարկէք խմբանկարներից մի մի օրինակ եւս, բայց իւրաքանչիւր զինուորի անունը նշանակած։ Ստանում ենք պատկերներ, չգիտենք ովքեր են, կամ որն է նրանցից սպանուած, որը կենդանի, որը գերի։ Դա անհրաժեշտ է բրոշիւրների համար։ Շատ լաւ կ՚անէք իսկապէս, եթէ մանր տեռօրները սանձահարէք. համը փախչում է։ Կրկին եւ կրկին անգամ խնդրում ենք ամէն անգամ տեղեկութիւններ տալ մեզ տեռօրների, բանտարկութիւնների, աքսորների մասին, պատրաստէք մանրամասը ցանկեր դրանց եւ մեզ ուղարկէք։ Ախր ինչպէ՞ս է, որ ուրիշ թերթեր ժամանակին թարմ թարմ լուրեն են ստանում։*

Ստէօրօտիպը չուտ ստանալու համար։ Կ՚ուղարկենք մօտաւորապէս 5-6 *օրից յետոյ։* No 11-*ը արդէն ուղարկւած է Վրէժ եւ բաւական քանակութեամբ*(6)։

Զոփուռեանը(7) *գրել էր հնչակեանների դէմ մեր յարաբերութիւնները լարելու մասին։ Ըստ մեզ՝ դարձեալ պէտք է խոյս տալ ծայրայեղ միջոցներից։ Խնդրենք գրել, թէ ուր եւ ինչ սպանութիւններ են տեղի ունեցել կուսակցական հողի վրայ, ինչ են եղել շարժառիթները։*

Ղարաբաղում պէտք է ուժեղացնել մեր գործունէութիւնը։ Դա կարեւոր է 1) *տեղական ինքնապաշտպանութեան գործի տեսակէտից* 2) *շատ կը դիւրացնի մեր փոխադրութեան գործը։ Որեւէ կապ պահպանո՞ւմ է արդեօք հայ «ղաչաղների» հետ։ Չի՞ կարելի նրանց մէջ մտցնել մեր մի երկու ընկերներին եւ որոշ ուղղութիւն տալ նրանց գործերին։*

Եթէ ինքնապաշտ[*պանութեան*] *մարմնի ծրագիրը անցնի «Խորհրդի» ժողովում բաւարար կերպով, անհրաժեշտ կը լինի յատուկ ուշադրութիւն դարձնել մեր աշխատանքի վրայ գիւղացիական շրջաններում։ Ցանկալի է, որ «Խորհրդին» ներկայացուի ցանկը այն ձեռնարկների, որ կազմակերպութիւնը կարող կը լինի տանել գիւղերում համայնական հողի վրայ։ Դա կարող են անել նրանք, որոնք լաւ ծանօթ են մեր գիւղացիների պէտքերի եւ պահանջների հետ։*

Ի՞նչ եղաւ Հայկունին(8)։ *Ջրաբ*[*երդից*] *այլեւս լուր չունենք։ Չի՞ կարելի արդեօք Թիֆլիզ կամ Բագու միւս ազգերի հետ միասին — թէկուզ միայն վրացիների հետ, ժողով կազմել որեւէ առիթով եւ Կովկասի ձայնը նոյնպէս լսելի անել։ Պետերբուրգը, Մոսկվան, Օդեսան եւ այլ քաղաքներ իրենց պահանջները ձեւակերպել են։ Պէտք է շեշտել մեր յատուկ պահանջները։ Փորձեցէք խօսել այս մասին այն վրացու հետ, որի մասին գրել էի նախորդ նամակներից մէկում*(9)։

1.- Մեծ Քաղաք (Թիֆլիս), այսինքն Արեւելեան բիւրոյին ուղարկուած նամակ:

2.- Ակնարկութիւն կաթողիկոսի նշանակած պատուիրակութեան, որ Արեւմտահայաստանի դատի հետապնդման առաքելութեամբ այցելութեան ելած էր եւրոպական մայրաքաղաքները:

3.- Յովհ. Լոռու-Մելիքեան, Արեւմտեան բիւրոյի անդամ, որ մաս կը կազմէր նոյն պատուիրակութեան:

4.- Միացեալ Նահանգներու նախագահը:

5.- Անդրանիկը:

6.- Ստէորոտիպը ամբողջ էջը տպող սարքուածք է (քլիշէ): Վրէժը Ատրպատականն է: No 11-ը «Դրօշակ»ի 1904 թ. համարն է:

7.- Թադէոսեան Լեւոն:

8.- Չիլինկիրեան Յակոբ, դաշնակցական յայտնի գործիչ Կարսի (Ջրաբերդ) շրջանին մէջ:

9.- Վրացիին կեղծ անունը Ադամաշվիլի էր. տես այդ մասին Ռոստոմի Նոյեմբեր 24-ի գրութիւնը:

396

Փաստ. 212-123

Քրիստափորին ուղղուած երկտող:

Սիրելիս,

Առաքելի(1) *ուզած հաշիւները չենք ուղարկում, որովհետեւ յոյս ունինք մի երկու օրից յետոյ նրան այստեղ տեսնել։ Եթէ նոյնիսկ ուրիշ մէկը ընտրւի Ցուցականի կողմից, թող Առաքելը բայց եւ այնպէս գայ։*

Մրաւը(2) *եւս եկաւ։*

Ձեր Ռ.

13 *դեկտ.* 1904

Եթէ առանձին պէտք չկայ, Պայթուցիկին(3) *մի տարէք Ծաղիկ*(4)*։ Այնտեղ (Բաղու եւ Վրէժ*(5)*) մեծ կարիք կայ մի վարպետի։ Չէ՞ք կարող այդտեղ մի երկու երիտասարդ ընտրել եւ սովորեցնել։ Ամէն տեղից մարդ են ուզում, աւելի շատ Լեռնավայրից*(6)*։*

Ռ.

1.- Առաքելը ծածկանուններէն մէկն էր Սարգիս Բարսեղեանի, ապագայ Վանայ Սարգիսին, նոյնպէս ծանօթ Շամիլ ծածկանունով, բուն անունով՝ Օտապաշեան Պօղոս (1875-1915)։ Քրիստափոր կը խորհէր իրեն փոխարէն Բարսեղեանը (Առաքել) ուղարկել Խորհուրդի ժողովին։

2.- Մրաւ կամ Մռաւ՝ ծածկանունն էր Ժամհարեան Մարգարի (1877-1905), որ Հ.Յ.Դ. Կովկասի Ինքնապաշտպանութեան մարմնի կողմէ պիտի մասնակցէր Խորհուրդի նիստերուն, բայց տեղեկանալով կովկասի մէջ հայ-թաթարական ընդհարումներուն մասին՝ փութաց վերադառնալ եւ նահատակուեցաւ 1905 թ.ի Շուշիի պաշտպանութեան կռիւներուն ընթացքին։

3.- Պայթուցիկ – ծածկանուններէն մէկը Կոստի Համբարձումեանի (1882-1918), որ իբրեւ ռումբերու եւ ուժանակի պատրաստութեան մասնագէտ՝ կը մասնակցէր Ցուցականի գործերուն։

4.- Ծաղիկ – ծածկանուն Պոլսոյ։

5.- Վրէժ – ծածկանուն Ատրպատականի, Թաւրիզի։

6.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ։

397

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 92

20 *դեկտ.*

ՎԻՇԱՊ(1)

«Խորհրդի» համար առաջարկում են ժողովը անել Կովկաս։ Ի՞նչ է ձեր կարծիքը։ Եւ ի՞նչ էք կարծում, կարող է՞ք ներկայացուցիչ ունենալ ձեր կողմից։ Աչքի առաջ ունեցէք այն, որ Սարգիսը(2) *դիմել է մեզ, խնդրելով ներկայ գտնուել «Խորհրդին»։ Չէ՞ք կարող արդեօք ծայրայեղ դէպքում ձեր ձայնը նրան տալ։*

Մեր շրջաբերականը ժամանակին ուղարկել չկարողացանք հասցէների վտանգը-ւելու պատճառով։ Դուք մեզ տուել էք միայն մի հասցէ։ Երկու երեք օր կը սպա-սենք, եթէ նոր հասցէ չստացանք, դրանով կ՚ուղարկենք, խնդրելով 1) *ըստ կարելոյն մանրամասը պատասխան նշանակուած կէտերի վերաբերմամբ* 2) *Դնել ձեր հարցե-րը։*

1.- Պոլիս՝ Ցուցական մարմնին ուղղուած գրութիւն։
2.- Սարգիսը ծանօթ Բարսեղեանն է, բուն անունով Օտապաշեան Պօղոս։

398

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 129-130

դեկտ. 20-*ին*

Մ. Ք.(1)

Ստացանք ձեր հեռագիրը, որով հրաւիրում էք ժողովը(2) *այդտեղ անել։ Այդ մասին պէտք էր հարցնել Լեռնավ*[*այրի*] *եւ Վիշապի կարծիքը եւս։ Լեռնավայր դի-մելու պէտք չկայ հիմա, քանի որ Սմբատի*(3) *վերջին նամակում գրուած էր, որ աւե-լորդ են համարում իրենց կողմից ներկայացուցիչ ունենալ։ Մնացել է Վիշապը, որու կարծիքին ենք սպասում։ Եթէ նրանք եւս հրաժարւեն մարդ ուղարկելուց, այն ժամանակ խնդիրը պարզւում է, ժողովը այդտեղ կ՚անենք, իսկ եթէ ուզենան մաս-նակցել, պէտք կը լինի, որ դուք այս կողմը գաք, որովհետեւ նրանցից ոչ ոք երկար ժամանակ կորցնել չի կարող։ Ի նկատի ունեցէք եւ մեր դրութիւնը, ինչպէս նաեւ այն, որ մեծ քանակութեամբ թղթեր պէտք են, որ անհնար կը լինի տեղափոխել։ Ձեր փափաքը ծանրանում է նրանով, որ սպասել էք եւ վերջին րոպէին յանկարծա-կի տեղի հարց բարձրացրել։ Եթէ վերջնականապէս որոշէք այդտեղ անել, այն ժա-մանակ պահեցէք ձեզ մօտ Պարոյրին*(4), *նրա տուած տեղեկութիւններով կարելի է ղեկավարւել Շամի մասին ծրագիր կազմելիս։*

Թէեւ մենք հեռագրել ենք, որ 5 *օրից պատասխան կը տանք, բայց տանք չտանք, դուք նամակս ստանալուն պէս հեռագրեցէք* Non, *եթէ մնացել էք ձեր հիմիկւայ կարծիքին եւ* Oui, *եթէ համաձայնէք այստեղ կայացնել ժողովը։*

Պրեսանսէի վերջին դիմումի վրայ Դելկասէն(5) *հեռագրով բացատրութիւն է պահանջել հիւպատոսից։ Պատասխանը կը հաղորդենք։*

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղարկուած գրութիւն։ Նամակի վերջաւորութեան՝ «Ուղարկուած դեկտ. 21, Տիկ. Եւանգ[իլեանի] հասցէով»։
2.- Կ՚ակնարկուի Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին, որ ի վերջոյ պիտի գումարուէր Ժընեւ 1905 թ. Փետրուարի վերջերէն սկսեալ։
3.- Սմբատ կամ Սմբատ Օհանեան, Սիմոն Զաւարեանի մէկ այլ ծածկանունն է։ Լեռնավայրը Կիլիկիան է, Վիշապը՝ Պոլիս։
4.- Անդրանիկին։
5.- Պրեսանսէն ֆրանսական խորհրդարանի անդամ էր, Դելկասէն՝ արտաքին գործոց նախա-բարը։

399

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 102

Վրացիների(1) ***հետ համաձայնութիւն մոբիլիզացիայի առթիւ։ Ծաղիկ գրուած է Բդէյեանի մասին։ Ոչ Էլլէնի, ոչ Սաֆոյի եւ ոչ ալ Սիմոնի հասցէները***(2) ***չի կարելի հաղորդել։***

1.- Երկու տող անթուակիր գրութիւն, առանց հասցէի: Հաւանաբար շարադրուելիք նամակի մը համար սահմանուած նոթեր: Հաւանական թուական՝ 21 Դեկտ.
2.- Յաջորդաբար՝ Քրիստափոր Միքայէլեան, Մարտիրոս Մարգարեան եւ Ս. Զաւարեան:

400

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 102

դեկտ. 21-ին

ԿԱՅԾ(1)

Էլլէնի(2) ***ուղած անցագրերի մասին, չուտով ուղարկէն կամ մարդու միջոցով կամ եթէ մարդ չպատահի փոստով Գօշի***(3) ***հասցէին։***

1.- Օտեսա (Կայծ) հասցէագրուած գրութիւն:
2.- Քրիստափոր Միքայէլեան:
3.- Անտոն Գօշ՝ Պուլկարիոյ դաշնակցական գործիչներէն, աւելի ուշ՝ «Դրօշակ»ի խմբագրատան դիւանապետ, իսկական անունը՝ Պոյաճեան Անտոն:

401

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 169-70

Նամակը ուղղուած է Պաքումի հնչակեան մարմնին: Սկիզբը մէջբերուած է Հ.Յ.Դ. Նաւահանգստի Կեդր. կոմիտէի նոյն հասցէին գրուած նամակը: Յայտնապէս հարցը կապուած է նոյն քաղաքին մէջ երկու կուսակցութեանց կողմէ ձեռնարկուած դրամահաւաքի առթիւ ծագած վէճի մը: Գրութեան վերջաւորութեան սեւ թանձր մատիտով աւելցուած է «Գրած Գր. Վարդանեանին – դեկտ. 21-ին 1904»:

դեկտ. 21, 1904

Յարգելի հայրենակից,

Այս օրերս մեզ հասաւ պատճէնը հետեւեալ նամակի, որ արտագրում եմ նոյնութեամբ։

«Պ. Շուտին,
Յարգելի պարոն,

Ներկայ տարւայ օգ.-ի 2-ին Ձեր գրած ու տարածած շրջաբերականով (որի բնագիրը ձեռներս է) Դուք, միայն Ձեզ յայտնի շարժառիթներից դրդուած, աշխատել էք Պ. քահ[անայ] Մինասեանին հակայեղափոխական եւ նոյնիսկ հայատեաց յայտարարել: Գրութեամբս յայտնելով, որ «սեւագլուխը» դաշնակցական է, նախազգուշացնում ենք Ձեզ, որ եթէ հնչակեանների կողմից դաւադրութեան որեւէ փորձ լինի յիշեալ քահանայի անձնաւորութեան դէմ, դուք, պարոն, իմացած եղէք, Ձեր գլխով պատասխանատու կը լինէք մեր առաջ:

Հ.Յ.Դ. Նաւահանգստի Կ. Կոմիտէ

Ինչպէս տեսնում էք, նամակը գրած է Նաւահանգստի մեր կոմիտէի կողմից Պ. Շուտին, որը համարւում է Ձեր ընկեր։ Լիազօրութիւն չունենալով պաշտօնական դիմում անելու, այստեղի մեր ընկերները յանձնարարեցին ինձ հաղորդել նամակի բովանդակութիւնը մասնաւորապէս Ձեզ, իբրեւ ծանօթի եւ իբրեւ մի անձնաւորութեան, որի տեսակէտները եւ տրամադրութիւնը մեզ արդէն յայտնի են։ Մենք տարակոյս չունենք, որ դուք ձեր ընկերների միջոցով հարկ եղածը կ՚անէք անախորժ ընդհարումների առաջն առնելու համար։ Աւելորդ է աւելացնել, որ մենք չտապել ենք ժամանակին խորհուրդ տալ մեր կոմիտէին ամէն կերպ խուսափել ծայրայեղ միջոցներին դիմելուց, մանաւանդ որ տեղի ունեցած բարդութիւնները կարող են լինել միայն թիւրիմացութեանց արդիւնք։

1.- Նամակի վերջաւորութեան սեւ թանձր մատիտով՝ «Գրած Գր. Վարդանեանին – դեկտ. 21-ին 1904»:

2.- Նաւահանգիստը Պաքումն է:

402

Պատճէններու մատեան No 88, *էջ* 329-30

1904 *դեկտ.* 21

Թայինեանին(1), *Պարիզ*

Սիրելի ընկեր,

Քանի որ Թագաւորը(2) *դրականապէս մերժում է ընդունել պատւիրակներին, պէտք է ուրեմն առայժմ յետաձգել ուրիշ այցելութիւններ։*

Վաղը կ'ուղարկենք 1,000 fr. Pro Armenia-*ի ծախսերի համար։*

Ամերիկայից մեզ ուղարկել են քո մի նամակը, որ գրել ես պ. Փափազեանին նոյ. 22-*ին, այսինքն մեր հեռագիրներից յետոյ։ Այդ նամակում դու դիմում ես անում անձնապէս քո կողմից Ամերիկայի դաշնակցական կոմիտէներին, պարզում ես քո ծրագիրը եւ միջոցներ ես ուզում անգլ*[*երէն*] Pro Armenia-*ի հրատարակութեան համար։ Եւ այդ անում ես այն ժամանակ, երբ հաստատապէս գիտես, մեր ուղարկած հեռագիրներից յետոյ, որ այդ ձեռնարկը բացարձակ կերպով մերժւած է ընդհանուր ժողովի կողմից։ Սա ի՞նչ է նշանակում, ի՛նչ* [*մէկ բառ անընթեռնելի*] *կարող էր անել Ամերիկայի ընկերների վրայ։ Մեզ համար բոլորովին անհասկանալի է մնում մանաւանդ քո մի նախադասութիւնը՝* «je puis vous dire que Pro Armenia français peut être remplacé par anglais»(3)։ *Միթէ սա նշանակում է, որ դու ձգտում ես ունեցել այդ տեսակ փոփոխութիւններ անել։ Զարմանալի է, որ մեր բացատրութիւնների միջոցին դու բոլորովին խօսք չարիր ոչ քո նամակի եւ ոչ քո մտադրութիւնների մասին։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Այստեղ եղած ժամանակդ դու խոստացար նամակագրութիւնդ պահպանել ոչ թէ ընկերներից մէկի հետ, մասնաւոր կերպով, այլ Բիւրոյի հետ, պաշտօնապէս։ Բայց այստեղից հեռանալով, դու դարձեալ շարունակում ես առաջւայ նման գործի վերաբերեալ ընդհանուր խնդիրների մասին գրել մասնաւոր ընկերոջ։

Ն[*ՈՅՆ*]

1.- Թայինեանը ծածկանուններէն մէկն է Յովհ. Լոռու կամ Լորիս-Մելիքեանին։

2.- Խօսքը կը վերաբերի Մեծն Բրիտանիոյ Եդուարդ Է. թագաւորին, որ մերժած էր ընդունիլ Ամենայն հայոց կաթողիկոսին ուղարկած պատգամաւորութիւնը։

3.- Ֆրանսերէն՝ «կարող եմ ըսել, որ ֆրանսերէն Փրօ-Արմենիան կրնայ փոխարինուիլ անգլերէն Փրօ-Արմենիայով»։

403

Պատճէններու մատեան No 88, *էջ* 341

1904 *դեկտ.* 26

Սարգիս Աբրահամեանին, Աթէնք

Սիրելի ընկեր,

Ներփակ կը գտնէք հրեական մի անցագիր, որ ուզել էիք։

Ձեր փափագը դիւրին է իրականացնել, եթէ «Խորհուրդը» արտասահման կայանայ։ Բայց խօսք կայ, Սարուստանում(1) *անել։ Այդ դէպքում կարո՞ղ էք սահմանն անցնել։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Սարհատի(2) *համար չէք առել ենք նոյն օրը, երբ հեռագիրը ստացել ենք։*

Ն[*ՈՅՆ*]

1.- Սարուստան – ծածկանուն Կովկասի:
2.- Սարհատ – աւելի ճիշդը Սահրատ – ծածկանուն Յակոբեան Յարութիւնի:

404

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 164-166

«Արեւմտեան բիւրօ» ստորագրութեամբ այս նամակը՝ ուղղուած Լեռնավայրը-Կիլիկիա՝ Սիմոն Զաւարեանին, գրուած է մեզի անծանօթ ձեռագրով, սակայն, լեզուէն ու ոճէն դատելով, կը թուի թէ ամբողջութիւնը Ռոստոմի կը պատկանի: Արդէն վերջին պարբերութիւնը՝ շեղագիր շարուած՝ Ռոստոմի գրչով է:

28 *դեկտ.*

ՍԻՄՈՆԻՆ

Ձեր չրջանից դիմում են յաճախ դրամի համար. եթէ ամէն պահանջի բաւարարութիւն տանք, խառնաչփոթութիւն դուրս կը գայ։ Խնդրում ենք այդ հարցը կարգադրէք, որպէսզի անկախ դիմումներ չպատահեն եւ մենք գործ ունենանք մի մշտական մարմնի հետ։

Տիրանը մտադիր է ճանապարհ ընկնել այդ կողմերը։ Նրա անցեալի խնդրի մա-

սին մանրամասն տեղեկութիւններ կը ստանաս Վարդանից(1)։ *Փամփուշտ լցնելու գործիքները պատւիրւած են Աթէնք։ Թռուցիկը*(2) *եկել է Բուլգարիա զինւորական դպրոց մտնելու համար։ Մենք կ՚ուզենք, որպէսզի նա, ինչպէս եւ միւսները մասնագէտների մօտ սովորեն եւ ոչ թէ դպրոցներում, քանի որ դպրոցների մէջ սովորելու համար տարիներ են հարկաւոր։ Ուրեմն այդ հարցի մէջ մենք քեզ հետ համակարծիք ենք եւ մեր որոշումը չէ խախտւած եւ դու ի զուր ես նեղանում։ Մասնագէտներ պատրաստելու համար նոր միջոցներ ենք ձեռք առել։*

Լեւոնը նորից մտել է Վիշապի շրջանը(3)։

Արեւելեան Բիւրոն առաջարկում է «Խորհուրդը» Կովկասը անել. հաւանական է, որ այդ առաջարկը ընդունուի։

49, 52, 74,23, 25, 18, 26*ի հետ*(4) *մենք կանոնաւոր նամակագրութեան մէջ ենք։ Նրան առաջարկել ենք դրամական նպաստ, բայց նա մերժում է։ Անցագրի խնդրի մասին գիտենք նրա ծրագիրը, որ շատ որոշ է։ Արտաքին միջամտութիւնը կարող է խանգարել գործին, աւելի լաւ է որ դու չտեսնուես հետը։*

Ուղարկածդ կողովը ստացանք: Մէջը կայիճ՝ գիրք-արկղը, կաշիճ, տետրակներ եւ կարտ-պոստալներ: Այն նամակը, որի մէջ թւել էիր ուղարկածդ իրերը եւ նրանց վերաբերեալ կարգադրութիւնը, Ռոստոմը կորցրել է: Յիշում է, որ մի գործւածք պիտի ուղարկէր Սօնիկին, բայց այդպիսի գործւածք չկար իրերի մէջ: Երեւի ճանապարհին հանել են: Կարտ-պոստալները ուղարկում ենք մաս առ մաս: Կարգադրութեան մասին խնդրում ենք մի անգամ եւս գրել: Քո ուզած մի քանի բաները կարող էինք նամակի հասցէով ուղարկել բայց լաւ չէինք մտածել: Դիտողութիւնդ ճիշտ է: Վերջին մեծ նամակդ շատ լաւ էր գրւած: Միտքդ պահիր նոյն ձեւով պատրաստել: Ուղարկել ենք երկու գիրք. երեւի այժմ ստացած կը լինես:

Ընկերական ջերմ բարեւներով եւ համբոյրներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1904 *թ.* 28 *դեկտ.* — *Ժընեւ*

Վարդանի նամակի մի մասը չկարողացանք կարդալ, որովհետեւ մի երեսի վրայ երկու անգամ էր գրել։

Հասցէ էլ չէր տուել:

Բժիշկը (Դումանի խմբի) աշխատում է Վռաչեանց ……(5) խումբ կազմել եւ Սասուն ու Մուշ անցնել: Ռուսաց դեսպանը համաձայնութիւն է տուել եւ հիմա Բժիշկը Ոսկանապատ(6) է գնում դրա համար անհրաժեշտ գումարը (50 հազ. ր.) ժողովելու:

1.- Վարդանը Խանասորի Վարդանն է, բուն անունով Մեհրաբեան Սարգիս, որ Զաւարեանի նման անդամ էր Լեռնավայր-Կիլիկիոյ Պատասխանատու մարմնին:

2.- Թռուցիկը հին մարտիկներէն է, բուն անունը՝ Տէր Աբրահամեան Գէորգ:

3.- Լեւոն Գիլումեան: Վիշապ – ծածկանուն Պոլսոյ:

4.- Գործածուած այս թուանշային (շիֆրէ) ծածկագրին բանալին մեզի ծանօթ չէ:

5.- Ռուսատառ: Բժիշկը՝ Տոքթ. Զաւրեան Յակոբն է, որ արդարեւ Նիկոլ Դումանի հետ 1904 թ. Յունիսին Սասնոյ օգնութեան հասնելու նպատակով կազմուած արշաւախումբին մասնակցած էր: Այդ անյաջող փորձէն ետք Զաւրեան կը ձեռնարկէր բժշկական խումբով մը մուտք գործել Մուշ-Սասուն:

6.- Ոսկանապատը Պաքուն է:

405

Պատճէններու մատեան No 88, *էջ* 354

Յովհ. Լոռու-Մելիքեանին ուղղուած այս նամակը լաւ պատճէնահանուած չըլլալուն բերումով, տեղ-տեղ՝ յատկապէս էջատակի մէկ-երկու տողերը պատճէններու մատեանին մէջ չեն երեւիր: Այդ բաժինները նշած ենք բազմակէտերով:

1904 *դեկտ.* 29

Թայինեանին(1), *Պարիզ*

Սիրելի ընկեր,

Երեք օր առաջ ուղարկած 1000 fr.*ի չէքը յուսով ենք ստացած լինիս արդէն։*

Պաշտօնական նամակագրութիւնը անհրաժեշտ ենք գտնում գործի կանոնաւորութեան համար։ Եւ դրա համար բոլորովին հարկաւոր չէ միշտ տրամադրութեանդ տակ հայերէն իմացող ունենաս, կարող ես գրել ֆրանսերէն, ինչպէս գրում ես մասնաւոր նամակներդ։

Նոյեմբերին գրած պաշտօնական նամակդ ուշի ուշով նորից կարդացինք։ Պատասխանելու ոչ մէկ նոր կէտ չկայ։ Նրա մէջ չօշափուած մեծ խնդիրը բաւականաչափ պարզուած ենք համարում անձնական տեսակցութեան ժամանակ։

Քո կարծիքով մեր եւ քո միջեւ եղած տարբերութիւնը նրա մէջն է կայանում, որ դու մի ..... անձերի։ Շատ գոհ ենք, որ դրա մէջ ես ..... եւ կը յուսանք, որ պիտի աշխատիս այդ կողմից ամէն դէպքերում գերազանցել մեզ։

Փափազեանին գրած քո մասնաւոր նամակի մեզ ուղարկելը դու անւանում ես «ամօթալի անգաղտնապահութիւն»։ Կարծում ենք, որ այս խօսքերը անզգոյշ կերպով ես գործածել եւ եթէ մտածես, պիտի յետ առնես ընկերոջդ հասցէին ուղղած այդ անտեղի վիրաւորանքը։ Խնդիրը չի վերաբերում անձնական յարաբերութիւններին։ Դու գրում ես նրան մի գործի մասին, որ վերաբերում է Դաշնակցութեան, դիմում ես անում դաշնակցական կոմիտէների ուշադրութեան եւ ուզում ես, որ այս բոլորը չայտնուի դաշնակցական մարմիններին, որ չիմացուեն նրանց կարծիքները։ Եթէ ընկեր Փափազեանը հրապարակ չհանէր քո նամակը, ինչպէ՞ս պիտի կատարէր քո խնդիրքը, եթէ նոյնիսկ ուզենար կատարել։ Քանի որ գործին խառնում ես դաշնակցական մարմինները, այն էլ այնպիսի մի ձեւով, որ տարակուսանք կարող էր յարուցանել Ամերիկայում։ Փափազեանը այլ կերպ վարուել չէր կարող, եւ դու ոչ մէկ իրաւունք չունես նրա վարմունքը անւանել «ամօթալի անգաղտնապահութիւն»։

Իսկ ինչ վերաբերում է Բիւրոյի «օգտուելուն» այդ նամակի ..... նաեւ միւս խնդիրներին, չօշափած նամակիդ մէջ, ... աւելորդ ենք համարում դրանց վրայ կանգ առնել։ Խորհրդի ժամանակին մասին յայտնի չէ. յայտնի չէ նոյնպէս եւ տեղը։

Արեւել[եան] բիւրօն պահանջում է Կովկասում.....

Յ. Գ.— Այսօր ստացանք հետեւեալ հեռագիրը Թիֆլիզից

Délégation Parisienne désire savoir faut-il continuer mission conseille communiquer décision prise.(2)

Չգիտենք թէ ինչ դիմում է եղել պատուիրակութեան կողմից, ինչ ձեւով է հարցը դրուել. այս պատճառով գուցէ դու աւելի լաւ հասկանաս հեռագրի իմաստը։ Մեր կարծիքով կաթողիկոսը (*որ հիմա Թիֆլիզ է*) *համաձայն է, խորհուրդ է տալիս շարունակել* (conseille)։ *Իսկ ինչ վերաբերում է վերջին նախադասութեան, չգիտենք, թէ ում է վերաբերում. արդեօք որոշումը պատուիրակութեան հաղորդենք, թէ մեր կարծիքը՝ իրենց։ Հաւանական է, պատուիրակութիւնն էլ առանձին հեռագիր ստացած լինի։ Գուցէ աւելի պարզ։ Յամենայն դէպս վարուեցէք, ինչպէս ուզում էք. մեր կողմից ինչ հարկաւոր է, ասել ենք. նոր ասելիք չունինք։*

1.- Թայինեան – ծածկանուն Յովհ. Լոռու կամ Լորիս-Մելիքեանին:
2.- Ֆրանսերէն՝ Փարիզի պատուիրակութիւնը կ՚ուզէ իմանալ թէ հա՞րկ է արդեօք շարունակել առաքելութիւնը – Իմացնել առնուած որոշումի մասին:

406

Պատճէններու մատեան No 88, *էջ* 356

1904 *դեկտ.* 31

Մարտինին եւ Էդգարին(1)

Ընկերներ,

Ստացանք Իզմիրից գրած ձեր երկուսի նամակները։ Մարտինի մասին մենք եւս այն կարծիքին ենք, որ նա յարմար է Լեռնավայրի(2) *համար։ Կը գրենք ընկերներին, իսկ առայժմ թող նա սպասի Յունաստանում։ Ինչ վերաբերում է Էդգարին, նրա համար որոշ գործ առայժմ ի նկատի չունինք։ Առաջարկում ենք, որ նա ճանապարհ ընկնի մեզ մօտ գրաշարութիւն անելու, եթէ ի հարկէ տրամադիր է, մինչեւ որ նրա ուժերի համեմատ մի գործ ներկայանայ երկրի մէջ։ Հակառակ դէպքում թող ճանապարհ ընկնի անմիջապէս Բաթում։ Ուղեւորուելուց առաջ հեռագրէք, որպէսզի հարկ եղած տեղեկութիւնները հաղորդենք Արեւել*[*եան*] *բիւրոյին։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ընկեր Կարոյին խնդրենք յայտնել, որ չէկը թէեւ վերցրել ենք, բայց պէտք է փոխենք, որովհետեւ անունը սխալ են գրել։ Կ՚ուղարկենք երկուշաբթի օրը։

Ն[*ՈՅՆ*]

1.- Երկուքն ալ անդամ էին Ցուցական մարմնին: Մարտինի բուն անունը Մուրատեան Մարտիրոս էր, Էդգարը՝ Այվազեան Կարապետին:
2.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ:

407

Փաստ. 212-120

Յայտնաբար Քրիստափորին ուղղուած նամակի մը վերջին էջն է (գրուած հաւանաբար1904 թ. վերջերուն), ուր Ռոստոմ կը շեշտէ անոր մասնակցութեան անհրաժեշտութիւնը Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին, որ պիտի գումարուէր 1905 թ. Փետրուարէն սկսեալ:

Որովհետեւ քեզ աւելի լաւ է գնացք նստել Վիէննայում, ուստի անպատճառ ճանապարհ ընկիր գնալուց առաջ: Տեսակցութիւնը անհրաժեշտ է: Բայց կրկնում ենք, որ անհամեմատ լաւ կը լինի եթէ այս կողմերը գաս: Incognito-*ն*(1) *պահելու համար կարող ես կանգ առնել* Nyon-*ում*(2), *կամ սրա նման մի տեղ:*

Համբոյրներով՝
Ռ.

1.- Լատիներէն՝ գաղտնի, ինքնութիւնը պահելու իմաստով:
2.- Քաղաք Զուիցերիոյ մէջ, Լեմանի լիճի հիւսիսակողմը:

408

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-1, *էջ* 131-32

(*Ուղարկ. յունուար* 2-*ին* [1905] *Տէր Օհանեանի ձեռքով*)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ, ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Պարսիկ վաճառականին յանձնարարական են տուել Մ. Բ. եւ Ոսկ[*անապատ*] *ուղարկել: Դա անտակտ մի բան է: Այդ մարդը մի առանձին ցաւ ունի մեր ներքին գործերը իմանալու: Նա ի հարկէ այդ անում է իր առեւտրական գործի տեսակէտից, բայց եւ այնպէս ընաւ ցանկալի չէ, որ ճանաչի այդտեղի մեր ընկերներին եւայլն... Մենք նրան գրել էինք, թէ թող գնայ Վրէժ, իր տեղը յայտնի, մերոնք կը գնան եւ կը գտնեն նրան: Հետեւանքների մասին հաղորդեցէք:*

Էնզէլի Ա. Ս.-ին ուղարկւում է 200 *օրինակ, Զոփուռեանի*(2) *նամակի վրայ,* 4 *կապոցներով: Այս անգամ ուղարկեցինք միայն* 150 *օր*[*ինակ*]: *Շարունակե՞նք թէ ոչ:*

Հնչակեանների խնդրի մասին հարկ ենք համարում հաղորդել հետեւեալը: Նաւահանգստից ուղարկել էին մի ոմն Շւոտին ուղղուած սպառնագրի պատճէնը՝ հնչակեան կենտրոնին հասցնելու համար(3): *Իրաւունք չհամարելով այդ պատճէնը ուղարկել Բիւրոյի կողմից հնչ. կենտրոնին — մի բան, որ արգելւում է Ընդհ. Ժողովի կողմից, Բիւրոն յանձնարարեց Ռ*[*ոստոմ*]*ին, որ նա իր կողմից մասնաւոր*

կերպով յայտնի եղելութիւնը Կենտր[ոնի] անդամներից մէկին՝ Գր. Վարդ[անեա-ն]ին։ Ռ[ոստոմ]ը յայտնեց, աւելացնելով, որ մեր կողմից խորհուրդ է տրուած Նա-ւահանգստի կոմիտէին ծայրայեղ միջոցների չդիմել, յոյս տածելով որ իրենք էլ իրենց կողմից միջոցներ ձեռք կ՚առնեն անախորժ բարդութիւնների առաջն առնե-լու համար։ Գ. Վ. բացակայ է եղել. նրա տեղ պատասխանեց Ռ. Խան[ազատ]ը(4) Խաչ[ատուր]ին(5)։ Նրա ասելով, իրենք ոչ թէ խորհուրդ, այլ խիստ հրահանգներ են տուել խոյս տալ այդ տեսակ քայլերից. բողոքում է մերոնց դէմ, որ իբր թէ ամէն տեղ հալածում են հնչակեաններին. բերում է օրինակ Ղարսում Թիւթիւնջեանի դէպքը (մասնաճիւղի նախագահ, մահացու կերպով վիրաւորուած մերոնց կողմից)։ Ի վերջոյ առաջարկում է, որ երկու կուսակցութիւնները մի ժողովով modus vivendi(6) *մշակեն եւ վերջ տան փոխադարձ հալածանքներին... Այդ նամակին պատաս-խանելու համար մեզ պակասում են փաստեր։*

Թղթակիցների խնդրի համար կարգադրութիւններ էք անում !... Մենք դեռ չգի-տենք, թէ ում գործն է Տէր-Սահակովի սպան[ութիւնը], Շուշւայ ոստիկանապետի եւայլն... Եթէ թերթերում չգրէին, խօմ չէինք էլ իմանալու, թէ այդպիսի դէպքեր պատահել են...։

Հեռագիր ուղարկելիս՝ ամէն մի տառը առանձին առանձին եւ պարզ գրեցէք. վերջին հեռագիրը Թայինեանի(7) միսսիայի մասին չհասկացանք լաւ։ Ենթադրե-ցինք, որ դուք խորհուրդ էք տալիս շարունակել։ Չհասկացանք communiquez décision prise(8) *նախադասութիւնը. չգիտէինք, թէ ում էր վերաբերում։ Յամենայն դէպս հեռագիրը արձանագրեցինք եւ ուղարկեցինք Թայինեանին, աւելացնելով մեր ենթադրութիւնները։ Անցեալ նամակներից մէկում ուզել էինք* 4000 *ր.ի չափ փող պատւիրակութեան ծախսերը լրացնելու համար։ Վերջերս լսեցինք, որ մի գու-մար նորից հաւաքւել է Լոնդոն։ Աշխատէք շուտ հասցնել մեր ուզածը։ «Խորհրդի» համար, ինչպէս երէկ հեռագրեցինք, սպասում ենք Վիշապի պատասխանին։ Եթէ նա էլ մերժի մասնակցութիւնը Լեռնավայրի նման, «Խորհուրդը» օրինական հա-մարւել չի կարող։*

1.- Ռոստոմի ձեռագիր։ Նամակը ուղղուած է Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին, Ոսկանապատ-Պաքուի ճամբով։

2.- Թադէոսեան Լեւոնի։

3.- Տես այս մասին Ռոստոմի Դեկտ. 21-ի գրութիւնը։

4.- Ռուբէն Խանազատ, Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներէն։

5.- Խաչատուրը (Մալումեան) Է. Ակնունին է։

6.- Լատիներէն ասացուածք, հաշտ ապրելու եղանակ մը գտնելու իմաստով։

7.- Թայինեանը ծածկանունն է Յովհաննէս Լորիս-Մելիքեանի, անդամ Արեւմտեան բիւրոյի եւ Եւրոպայի մէջ հայ դատի աշխատանքներուն պատասխանատու, որ մաս կը կազմէր Ամենայն հա-յոց կաթողիկոսի նշանակած պատուիրակութեան։

8.- Ֆրանսերէն՝ «հաղորդեցէք առնուած որոշումի մասին»։

409

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, էջ 133-34

յունուար 3, 1905

Մ. Ք.(1)

Ոսկանապատ գացող մէկի ձեռքով մի նամակ ենք գրել։ Այս անգամ կ՚ուզենք մի քանի խօսք աւելացնել դարձեալ «Խորհրդի» մասին։ Քանի որ Լեռնավայրը մերժում է ներկայանալ, իսկ Ծաղիկը ամենայն հաւանականութեամբ նոյնպէս մերժի. որովհետեւ նրանցից ոչ մէկը չի կարող գործը ձգել եւ դուրս գալ, ուստի «Խորհուրդը» ըստ կանոնի անվաւեր կը լինի(2)։ *Կը մնայ ուրեմն գոհանալ առայժմ ձեր բայոնական ժողովով, եւ դա անհրաժեշտ է, քանի որ ունենք այնպիսի անյետաձգելի խնդիրներ, ինչպէս ինքնապաշտ*[*պանութեան*] *ծրագիրը եւ Վասպուրականը։ Այդ ժողովին մենք էլ կ՚ունենանք մեր ներկայացուցիչը, եթէ յարմար դատէք հրաւիրելու մեզ էլ*(3)։ *Բայց որովհետեւ մեր ներկայացուցիչը չի կարող երկար ժամանակով բացակայ լինել այստեղից, մանաւանդ եթէ բարդութիւններ աւելանան Ծաղիկի պատճառով*(4), *ուստի այնպէս կարգադրէք, որ ամէն տեղից ժամանակին գան եւ ի զուր տեղը ժամանակ չկորչի։ Սպասում ենք ուրեմն ձեր հեռագրին՝ որպէսզի մեր ներկայացուցիչը իսկոյն ճանապարհ ընկնի։ Հեռագրեցէք միայն ամսաթիւը, աւելացրած* 15 — *օրինակ եթէ բացւելու է յուն.* 5[*ին*], *հեռագրէք միայն* 20 *թիւը, եթէ* 10-*ին, հեռագրէք* 25, *եթէ* 20-*ին* — 35։

1.- Մեծ Քաղաք՝ Թիֆլիս, այլ խօսքով Արեւելեան բիւրոյին ուղարկելի Ռոստոմի այս գրութեան վրայ գիծ քաշուած եւ նոյն գրչով արձանագրուած է «Չի ուղարկուած»։ Այսուհանդերձ կու տանք ամբողջութիւնը այնպէս՝ ինչպէս որ է։

2.- Կանոնագրի համաձայն Դաշնակցութեան Խորհուրդի նիստերու վաւերականութեան համար անհրաժեշտ էր մասնակցող իրաւասու մարմիններուն երկու երրորդին ներկայութիւնը։

3.- «Մենք»ը Արեւմտեան բիւրոյի համար է. «եթէ յարմար դատէք հրաւիրելու մեզ էլ», անշուշտ ըսուած է զուարթամտութեամբ, որովհետեւ ըստ կանոնագրի, Արեւմտեան բիւրոյի մէկ անդամը իրաւասու ձայն ունէր Խորհուրդին մէջ։

4.- Կ՚ակնարկուի Սուլթանի ահաբեկման ծրագրին։ Ծաղիկը՝ Պոլսոյ համար գործածուող ծածկանուններէն մէկն էր։

410

Պատճէններու մատեան No 88, *էջ* 357-8

1905 *յունւ.* 3 (1)

Լ[*իպարիտ*] *Նազարեանին, Բերլին*

Ընկեր,

Այստեղի մեր ընկերներից մէկը արդէն պատրաստել է մի յօդուած Դաշնակցութեան ուղղութեան մասին. յօդուածը գրւել է [*լատինատառ անընթեռնելի անուն, հաւանաբար լրագրի*]*-ի համար։ Առիթը «Իսկրա»ի տարածած զրպարտութիւններն են, որ կարող են մտքեր մոլորեցնել։ Այդ յօդուածը կարող է մասամբ գոհացնել ձեր գերմանացի բարեկամին։ Թերի մնացած կէտերը կարելի է առանձին պարզել։*

Դրօշակի այս տարւայ համարները կ՚ուղարկենք, ինչպէս նաեւ «Դէպի կռիւ» գիրքը, որ նորերս լոյս է տեսել։

Ներփակ կը գտնէք մեր երկու շրջաբերական-նամակները, ուղղուած կոմիտէներին։ Ուղարկում ենք Բերլինի համակիր ուսանողներին ի գիտութիւն։ Ցանկալի է իմանալ ձեր կարծիքները, մասնաւորապէս «ինքնապաշտպանութեան կոմիտէների» համար կազմուելիք ծրագրի մասին։ Միթէ՞ [*մէկ տող անընթեռնելի*] *չկան։ Ուսանողութեան որոշ մասի անտարբերութիւնը դէպի մեր կազմակերպութիւնը ժամանակաւոր է եւ հետեւանք է այն բանի, որ մենք դեռ եւս չենք մշակել եւ հրապարակ հանել մեր ծրագիրը Կովկասի վերաբերմամբ։ Մի յարմար առթիւ Յովհաննիսեանը*(2) *կամ մի ուրիշ ընկեր կ՚անցնի այցելելու մի քանի քաղաքներ։*

Ձեր ակնարկած խնդիրների մասին, որ ծագել են Երեւանում եւ այլ տեղեր, հետաքրքիր է լսել։ Ոչ մի անպատեհութիւն չկայ նամակով յայտնելու։ Եթէ կ՚ուզէք, գրէք մասնաւոր ընկերոջ հասցէով։

Ժամանակը եթէ ների, մօտ օրերս մի ամփոփ տեղեկութիւն կ՚ուղարկենք ապակենտրոնացման եւ նրա գործադրութեան մասին մեր կեանքում։ Այդ կէտը մենք կարեւոր ենք համարում, որովհետեւ ամենայն հաւանականութեամբ նոյն սիստէմը վերջնականապէս ընդունինք Կովկասի վերաբերմամբ եւ առաջարկենք մեր դրացի կազմակերպութիւններին։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Խնդրենք գրել մեզ տեղւոյդ ուսանողութեան քանակի եւ որակի մասին։
Ն[*ՈՅՆ*]

1.- Բնագիր-պատճէնին տարեթիւը սխալմամբ գրուած է 1904։
2.- Յովհաննիսեան – իսկական անունն էր Միքայէլ Վարանդեանի։

411

Պատճէններու մատեան No 88, *էջ* 361

1905 *յունու.* 5

Պալք[*անեան*] *կենտրոնական կոմիտէին,*

Յարգելի ընկերներ,

Ստացանք ձեր դեկտ. 16 *նամակը։ Սպասում ենք ձեր բայոնական ժողովին եւ հաշիւներին։*

Պուքրէշից խնդրում են հին եւ նոր հաշիւները յանձնել տեղւոյն մարմնին. ի՞նչ հաշիւներ են նրանց ուզածը։ Գրում ենք, որ ձեզ դիմեն։

«*Շարժումի*»(1) *վերջին* N No-*ում լոյս տեսած յօդուածները դաշնակցական այլ եւ այլ խնդիրների մասին մեզ զարմանք են պատճառում։ Չենք հասկանում թէ ինչպէս կարող են հրապարակ գալ Շարժումի էջերում այն տեղեկութիւնները, որ մենք գաղտնի շրջաբերական-նամակներով յայտնում ենք Պալքանեան կ. կոմիտէին։ Եւ ինչպէ՞ս կարելի է լրագրական նիւթ դարձնել խնդիրներ, որ միմիայն դաշնակցական ընկերների խորհրդակցութեան առարկայ պէտք է լինեն։ «Դաշնակցական ընկերներին» վերնագիրը ապահովութիւն չէ ի հարկէ, որ բացի ընկերներից ուրիշ ոչ ոք չի կարդալու յօդուածները։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ*[*ԵԱՆ*] *ԲԻՒՐՕ

1.- Վառնայի մէջ Վարդ-Պատրիկեան Յակոբի (Վարդօ) խմբագրութեամբ լոյս տեսնող լրագիր։

412

Պատճէններու մատեան No 88, *էջ* 362

1905 *յունու.* 5

Պուքրէշի ենթակոմիտէին

Յարգելի ընկերներ,

Ստացանք ձեր դեկտ. 17/30 *նամակը։ Ուրախ ենք ձեր վառ տրամադրութեան եւ յուսով ենք, որ իրօք կը կատարէք ձեր ուխտը եւ բարձր կը պահէք Դաշնակցութեան պատիւը։*

Հին եւ նոր հաշիւների, ինչպէս նաեւ այլ տեղական խնդիրների համար խնդրենք դիմել Պալքան. կենտրոն[*ական*] *կոմիտէին։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

413

Պատճէններու մատեան No 88, *էջ* 363-4

1905 *յունիս*. 6

Թայինեանին, Պարիզ,

Սիրելի ընկեր,

Ստացանք քո վերջին անթւակիր նամակը։ 3000 fr. *ուղարկել չենք կարող։ Դու միշտ մոռանում ես, որ մեր տրամադրութեան տակ եղած միջոցները սահմանափակ են, այն աստիճան, որ եթէ երկրի մէջ գործող մարմինները ուզենան այսօր կամ էգուց ընդհանուր ժողովի կողմից իրենց յատկացրած գումարները ստանալ, մենք հնարաւորութիւն չպիտի ունենանք նրանց գոհացնել։ Եթէ մեր ձեռքին դեռ քիչ թէ շատ փող կայ, դրան պատճառը միայն այն է, որ արտասահմանեան պրոպագանդի համար նշանակւած գումարն է ամբողջովին ծախսւել։ Եթէ միւս մարմիններն էլ ցոյց տային քո եռանդը փող ծախսելու ասպարէզում, մեր դրութիւնը յուսահատական կը լինէր։ Այն ինչ ուղարկում ենք, այսպէս ասած միւս մարմիններից ենք կտրում։ Այսպիսի պարագաներում ոչ մի հնարաւորութիւն չկայ բանկէտների եւ անգլիերէն բրոշիւրների վրայ հարիւրներ ծախսել։ Ուրեմն մնում է առայժմ գոհանալ միայն* Pro Armenia-*ի հրատարակութեամբ, մինչեւ «Խորհրդի» կայանալը։*

«Խորհուրդը» չատ հաւանական է այստեղ գումարւի, որովհետեւ ոչ Լեռնավայրը եւ ոչ Ցուցականը չեն կարող ներկայացուցիչ ուղարկել Կովկաս։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

414

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-1, *էջ* 134

յուն[*ուար*] 7 [1905]

Մ. Ք.(1)

Մեր հեռագիրը ստացած կը լինէք արդէն։ Քանի որ Ցուցական մարմինը կարող է ներկայացուցիչ ուղարկել միայն այն դէպքում, եթէ այստեղ լինի ժողովը, եւ միեւնոյն ժամանակ Լեռնավայրի կողմից կիսապաշտօնական ներկայացուցիչներ նշանակուած են Գալֆան եւ Մարը(2), *որոնք նոյնպէս Կովկաս անցնել չեն կարող, ուրեմն մնում է, որ դուք գաք։ Սպասում ենք։*

Ձմռանաք ներկայացնել՝

1) *Ամբողջական հաշիւները բոլոր կոմիտէների։*

2) *Ցանկը բոլոր աքսորեալների, բանտարկեալների,*

3) *Պատկերները նահատակների իրենց անուններով։*

Պէտք է շուտով որոշել կովկասեան խնդիրը(3), *որպէսզի Կովկասը կարողանայ ինքնուրոյն ոտի կանգնել եւ դադարի խաղալիք դառնալուց զանազան* պալշենստվօ-*ների*, մենշեւստվօ-*ների*(4) *պայքարներում։*

1.- Մեծ Քաղաք՝ Թիֆլիս, այլ խօսքով Արեւելեան բիւրոյին ուղղուած գրութիւն:

2.- Հարցը անշուշտ կը վերաբերի Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին: Լեռնավայրը՝ Կիլիկիան է, ներառեալ Սուրիան եւ Լիբանանը: Գալֆան՝ Յարութիւն Գալֆայեան, «Դրօշակ»ի խմբագրութեան գործավար-քարտուղար, վերջերս միայն այդ պաշտօնին կոչուած, նախապէս կը գործէր Կիլիկիոյ եւ Եգիպտոսի մէջ: Մարը՝ ծածկանունն է Միքայէլ Տէր Մարտիրոսեանի, որ քանի մը ամիս առաջ ազատ արձակուած էր Մարաշի բանտէն, ուր կը մնար 1899-էն ի վեր:

3.- Կ՚ակնարկուի «Կովկասեան Նախագիծ»ի քննարկման եւ որդեգրման հարցին:

4.- Ռուսատառ՝ մեծամասնականների եւ փոքրամասնականների:

ԾԱՆՕԹ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Սեւագրութիւններու» թիւ 89ա-2 տոմարը, մեծ մասամբ շարադրուած է Ռոստոմի գրչով, թուագրուած չէ, մինչ 89ա-1-ի էջերը տպագիր էին: Այս վերջինին հետեւելով մեր կողմէ թուագրած ենք այս մէկը եւս (էջ 173-286):

89ա-2 տոմարը կը բացուի Ռոստոմի գրչով «Յոնանին, Վահապին, Սարգսին» ուղղուած նամակով մը: Գրութիւնը շարադրուած է «Դրօշակ»ի խմբագրութեան եւ Արեւմտեան բիւրոյի գործավար Յարութիւն Գալֆայեանի կողմէ, տեղ-տեղ Ռոստոմի յաւելումներով (տարբեր ձեռագիր): Կու տանք ամբողջութիւնը:

Յոնան Դաւթեանին, Արշակ Վռամեանին (Վահապ) եւ Սարգսին (Մինասեան, ծանօթ Արամ-Աշոտ ծածկանունով) ուղղեալ այս նամակը յատկանշական է անով, որ կը լուսաբանէ անմիջապէս յաջորդող՝ Համօ Օհանջանեանի եւ Ռոստոմի կողմէ սեղմ տողերու մէջ տրուած բացատրութիւնը: Արդարեւ, 1905 թ. Փետրուարին սկսելիք Հ. Յ. Դաշնակցութեան Խորհուրդի քանի մը ամիսներու վրայ երկարող նիստերուն քննութեան ենթակայ այլազան հարցերու շարքին, պիտի արծարծուէր նաեւ կուսակցութեան Կովկասեան գործունէութեան հարցը, որուն իբր արդիւնք պիտի մշակուէր յատուկ նախագիծ: Ահա այս նախատեսութեամբ է, որ հարկ տեսնուած է առաջնակարգ կարեւորութիւն ներկայացնող այս հարցին շուրջ նախօրօք իմանալ ղեկավար եւ ցենզաւոր ընկերներու կարծիքը:

Յայտնենք, որ Պոսթընի Հ.Յ.Դ. կեդրոնական արխիւներուն մէջ պահպանուած են Դաշնակցութեան Խորհուրդի այս շատ կարեւոր հարցադրումներուն պատասխան-նամակները, ուղարկուած Ամերիկայէն՝ Յոնան Դաւթեանի (1905 թ. Մարտ 18), Արշակ Վռամեանի (Մարտ 20) եւ Սարգիս Մինասեանի (Մարտ 22) կողմէ: Նոյն նպատակով Խորհուրդը դիմած է նաեւ շատ մը ուրիշ ընկերներու, որոնց կարգին յատկապէս Քրիստափոր Միքայէլեանին, որուն ուղղուած գրութեան աւարտին Համօ Օհանջանեան իբրեւ յաւելում կը գրէ.– *«Միրելիս, Խորհուրդի եկած ընկերները շատ կը ցանկային այս հարցերի վերաբերող ունենալ քո կարծիքը: Հարցերը շատ ծանր են եւ մենք չենք ուզում առանց քեզ հետ խորհրդակցելու վճռել նրանց, կամ մի որոշ եզրակացութեան գալ: Շուտով պատասխանիր, իսկ եթէ դու ինքդ գայիր, դա խօ ամենալաւ բանը կը լինէր»:* Կուսակցութեան առաջին դէմքը, սակայն, ամբողջ էութեամբ մխրճուած ըլլալով Սուլթան Համիտի մահափորձին նախապատրաստական աշխատանքներուն մէջ, պիտի չկրնար հեռանալ Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայէն, ուր եւ քիչ անց, Մարտ 4/17ին, Վիտոշ լերան լանջերուն ռումբի փորձարկման ատեն պիտի զոհուէր իր ընկերոջ՝ Վռամշապուհ Քենտիրեանի հետ: Այս դրժ-

բախտ պատահարը պատճառ եղաւ, որ Խորհուրդի նիստերը ընդհատուին եւ կարգ մը ընկերներ փութան Սոֆիա մասնակցելու համար թաղման արարողութիւններուն:

Դաշնակցութեան Խորհուրդի 1905 թ. աշխատանքներուն վերաբերող փաստաթուղթերը տեսնել «Նիւթեր Հ.Յ.Դ. պատմութեան համար» շարքի Բ. հատոր, էջ 226-236 եւ Է. հատոր, էջ 75-91:



415

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 173-174

Յոնանին, Վահապին, Սարգսին,

Ի նկատի ունենալով Գ. ընդհանուր ժողովէն յետոյ Ռուսաստանի մէջ տեղի ունեցած քաղաքական-յեղափոխական զօրեղ շարժումները, բռնակալութեան թուլանալը, բոլոր հպատակ ազգերու քաղաքական ընդհանուր պահանջներու առաջ գալը, Դաշնակցութեան եւ այլ յեղափոխական մարմիններու համերաշխ գործակցութեան փորձերը եւ Կովկասի ձայնի անհրաժեշտութիւնը համառուսական շարժման մէջ, անհրաժեշտ կը համարենք, նախ քան խնդրի քննութեանը դիմելը, հարցնել եւ ձեր կածիքը հետեւեալ հարցերու մասին։

1.- *Արդեո՞ք Դաշնակցութիւնը Կովկասի մէջ պէտք է մնայ զուտ ինքնապաշտպանութեան հողի վրայ, ինչպէս կը տրամադրեն ընդհ. ժողովի որոշումները, եթէ ոչ այնտեղ եւս հանդիսանայ որպէս մի յեղափոխական կուսակցութիւն, որ յեղափոխական միջոցներով պիտի հետապնդէ որոշ քաղաքական իտէալներ։*

2.- *Եթէ այո, համաձա՞յն էք արդեօք հետեւեալ բանաձեւին*, որ ընդունուած է կովկասեան ռայոն. ժողովում:

Դաշնակցութեան նպատակն է ձեռք բերել Կովկասում ռամկավարական դաշնակցութիւն (Fédération démocratique) *կապուած Ռուսաստանի հետ՝ Կովկասի ֆէդէրացիան ապահովող օրէնքներով։*

3.- *Տնտեսականի վերաբերեալ սոցիալիզմը ընդունիլ որպէս ղեկավարող սկզբունք եւ բանւորութիւնը եւ գիւղացիութիւնը կազմակերպել նոյն ուղղութեամբ։*

* * *

Մեծ-Հայքի վերաբերմամբ Խորհրդի մէջ տրուած են հետեւեալ հարցերը.—

4.- *Ի նկատի ունենալով, որ Վասպուրականի մէջ ունինք բաւականաչափ ուժեր, որոնք այնտեղ չեն կարող ապահով մնալ, իսկ Երկրէն դուրս գալով վատ տպաւորութիւն կը թողնեն ժողովրդի վրայ, որոշել հնարաւորին չափ ռազմամթերք եւ կռւող ուժեր հասցնել անոնց, միեւնոյն ատեն խնդրելով ըստ կարելոյն խոյս տալ կառավարութեան հետ ընդհարումներէ, որպէսզի շատ ուժեր կեդրոնացնեն այնտեղ։*

5.- *Որովհետեւ* 15 *տարուան գործունէութեան եղանակը Մեծ-Հայքում* de facto *ունեցաւ միայն մի հետեւանք — ժողովրդի յեղափոխական ոգու զարթնումը—, որովհետեւ ո՛չ արշաւախմբերը եւ ոչ կեդրոնացումը չեն յաջողւում մեզ եւ թէ յաջողւին անգամ չեն ապահովեր մեր դատի լուծումը, որովհետեւ մեր դատը կը շահինք միայն այն ժամանակ երբ խոշոր ձեռնարկ մ՚ունենանք, վերջապէս ի նկատի ունենալով, որ Դաշնակցութիւնը թէ՛ դրամական եւ թէ մարտական բաւականաչափ խոշոր ուժեր ունի այժմ — յանձնել զինուորական ականաւոր ուժէ եւ մեր փորձաւած ընկերներէ կազմւած մի մասնաժողովի՝ ուսումնասիրելու մարտական եւ յեղափոխական տեսակէտէ երկրի մի քանի մասերը եւ սահմանագլուխները,*

կազմել յատակագիծ մը որեւէ խոշոր ձեռնարկի եւ ներկայացնել Ընդհ. ժողովի։

Ծանօթ.— Կովկասի ռայոնական ժողովը ձայներու մեծամասնութեամբ ընդուներ է 1 կէտը՝ կենդանի գործը շարունակելու համար եւ 4-ը որպէս անհրաժեշտ ուսումնասիրութիւն։

416

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 176

Սիրելիք,

Այս հարցերի պատասխանը մենք շատ կ՚ուզենք ունենալ ձեզնից, Յովնանի, Վահապի եւ Սաքոյի կարծիքները։ Եթէ կարողանայիք հեռագրով պատասխանել։ Առաջի հարցին այո, երկրորդին՝ ոչ եւ այլն. այսպէս շատ լաւ կը լինէր։

Ջերմ համբոյրներով ՀԱՄՕ

Ռոստոմի յաւելուած

Հեռագրի մէջ նշանակեցէք միայն թւանշանները: Եթէ, օրինակ, համաձայն էք առաջին, երկրորդ, չորրորդ կէտերի հետ, հեռագրէք 124. եթէ առաջին եւ հինգերորդին՝ 15 եւայլն: Սրա հետ միասին ուղարկէք փոստով, եթէ հարկաւոր տեսնէք, աւելի մանրամասը պատասխան, գուցէ ուշ չլինի:

417

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 179

յունուար 9, 1905

ԵԿԵՂԵՑԻ(1)

Դրօշակ միշտ ուղարկում ենք թէ իրենց եւ թէ թերթին։ Կը փորձենք բանդերոլով բաց ուղարկել։ Թող տան Հիւսիսակերտի հասցէն(2)*։ Թող ցոյց տան մէկին, որին կարենանք ռուսների միջոցով մի կապոց թերթ հասցնել։*

Տեղեկութիւններ անցած դարձածի մասին(3)*։*

1.- Եկեղեցի՝ ծածկանունն է Մոսկուայի, որուն ուղղուած է գրութիւնը:
2.- Հիւսիսակերտ՝ ծածկանուն Պետերբուրգի:
3.- Տեղեկութիւնները պիտի գրուէին արտագրութեան ատեն:

418

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 1-3

յուն[*ւար*] 9 [1905]

ՇԱՄ(1)

Աղթամարի կաթող. տեղապահի(2) *սպանութեան պատճառները խնդրում ենք մանրամասը դարձնել։ Ձեր ուղարկած տեղեկագիրը Նարեկայ դէպքի մասին*(3) *ընդհակառակը լաւ կողմից է ներկայացնում վարդապետին։ Այդ դէպքը չենք յայտարարում. տպաւորութիւնը լաւ չի լինիլ։ Հայերի վերաբերմամբ տեռորները պէտք է մեծ զգուշութեամբ որոշուին։*

Մինչեւ հիմա մեզ յայտնի չէ, գալու է արդեօք ձեր կողմից մէկը՝ ամփոփ գաղափար տալու համար ձեր կողմերի դրութեան մասին։

Վարդանի(4) *նամակը այսօր ստացանք, որով յայտնում է իր Շամ անցնելու մասին հակառակ Ընդհ. ժողովի որոշումներուն։ Քանի որ Ընդհանուր ժողովի որոշումը գործադրելու հնարաւորութիւն չէր մնացել եւ երկրի ընկերները նրան հրաւիրել են իրենց մօտ գործելու, ուրեմն Վարդանի արած քայլի մասին խօսք անգամ լինել չի կարող։ Ընդհակառակը, մենք ուրախ ենք նրա տեղ հասնելուն։*

Գիսակի(5) *մասին սպասում ենք մխիթարական մի լուրի։*

Քաղաքական դրութեան մասին որոշ բան յայտնել դժուար է։ Փաստը այն է, որ բոլորն էլ զբաղուած ռուս-եապոնական պատերազմով, մեր հարցը մի կողմն են դրել։ Այսպիսի պարագաներում այս կամ այն պետութեան համակրական քայլերը ապարդիւն են անցնում։ Այսպէս՝ նախագահ Ռուզվէլտը(6) *խոստացել էր կաթողիկոսի պատւիրակութեան եռանդուն միջամտութիւն ցոյց տալ հայկական խնդրում, եւ իսկապէս իր բացման ճառի մէջ նա տեղ էր տուել եւ հայկական դատին։ Բայց խոստումը մինչեւ հիմա ոչ մի դրական բանով չարտայայտուեց։ Եւրոպացի բարեկամների ասելով՝ Անգլիան (որուն հետ էր մտադիր գործել Ռուզվէլտը) եւ մակեդոնական խնդիրը թողնելու է Ռուսաստանին եւ Աւստրիային, իսկ ինքը ձեռնարկելու է Հայաստանի բարեկարգութեան։ Ասում են նաեւ, որ պատերազմը վերջանալուց յետոյ (որ սպասւում է ապրիլին) մի միջազգային կոնֆէրանս է մտադրւում, ուր կարող է տեղ բռնել եւ հայկական խնդիրը։ Յամենայն դէպս մեզ մնում է մի բան՝ ամէն կերպ խոյս տալ ընդհարումներից, պատրաստւել եւ առաջուց նշանակել եւ պաշտպանել այն կէտերը, որոնցով կարող է անցնել թշնամին այս կամ այն գաւառի վրայ յարձակւելու համար, զինւած ուժերը պահել գաւառներում, բայց ծածուկ։*

Ֆրանսիական հիւպատոսի միջոցով փոխադրւած 35,000 fr. *խնդիրը մի հանելուկ է դառել։*

Չնայած մեր բարեկամների դիմումներին, չնայած մինիստրի հեռագրին, դեռ դրա մասին ոչ մի հաստատ լուր չստացանք։ Չէ՞ք կարող դուք պարզել հանելուկը. չի՞ յանձնել նա արդեօք ստացած նպաստը անգլիական մինիստրին. կամ իր անպիտան թարգմանը օյին խաղացած չլինի։

Ձեր ուղարկած արխիւի մէջ գտանք ձեր երկրորդ դիմումը Ֆրանս. հիւպատոսին իր թարգմանի առթիւ։ Եթէ ժամանակին դա ստացւած լինէր, գուցէ մինիստ-

ըը աւելի շուրջ ուշադրութիւն դարձնէր։ Յիշեցնում ենք որ Quillard-*ը այդ մասին գրել էր նախարարին, որը պատասխանեց, թէ իր հաւաքած տեղեկութիւնների համաձայն թարգմանի արարքների մէջ ոչ մի կասկածելի բան չի նկատուել եւ թէ Գիսակի*(5) *մատնիչը ուրիշն է եւ նա արդէն տեռորի է ենթարկուել։*

Մինարէթի գծով մի շաբաթ առաջ ուղարկուած է մեր երկու շրջաբերական-նամակները, որ խնդրել ենք արձանագրելով մեզ ուղարկելն։

1.- Շամ – Վան ուղարկուած նամակ:
2.- Աղթամարի կաթ. տեղապահ Արսէն վարդապետի ահաբեկումը գործադրուած էր Վանայ Իշխանի (Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեան) կարգադրութեամբ: Արսէն վարդապետ դարձած էր գործիք քրքական իշխանութեանց ձեռքը եւ զանոնք տեղեակ կը պահէր ֆետայիներու շարժումներուն մասին:
3.- Կ՚ակնարկուի 1904-ի ամրան Նարեկայ վանքին մէջ քրքական զօրքէն պաշարուած ֆետայիներու (Իշխանի ղեկավարութեամբ) մղած հերոսական կռուին, որ յաջող ելք էր ունեցած:
4.- Վարդան Շահպազն է:
5.- Վարդգէս Սերենկիւլեանն է, որ 1903-էն ի վեր Վանի բանտ կը գտնուէր:
6.- Միացեալ Նահանգներու նախագահ:

419

Պատճէններու մատեան No 88, *էջ* 365

1905 *յունիս*. 10

Յովսէփեանին(1), *Խոյ*

Յարգելի ընկեր,

Ելեկտրական գործիքը շատ թանկ դուրս եկաւ, դրա համար է որ չենք ուղարկել։ Եթէ աւելի արժանը չկարողացանք գտնել, դրանից կ՚ուղարկենք։

Եթէ Շամից որեւէ պատասխան գայ, իրենց պատգամաւորին մասին, խնդրենք հեռագրով մեզ իմաց տալ։ Հեռագրի հասցէն՝ Droschak, Genève.

Ձեր ուղարկած Շամի նամակները, ինչպէս նաեւ թղթակցութիւնները, կենսագրութիւնները՝ բոլորն էլ ապահով ստացւում են։ Յետագայում կարեւոր թղթերը դրէք նախ հասարակ պահարանի մէջ, յետոյ միայ քաթանի պահարանի մէջ, երկու կողմից էլ լաւ խէժ քսելով, այնպէս որ ներսի պահարանը լաւ կպչի քաթանի պահարանին։ Այդ ձեւով պատրաստած պահարանները ուղարկէք recommandée.

Երկաթի մասին աղօտ լուր ունինք, որ գուցէ բանտարկուած լինի։

Քայլաչափը եւ Վահանի կլիչէն ստացած կը լինէք։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԻՐՕ

Ստացանք ձեր նոյ. 28-*ի նամակը։ Հաստատում ենք մեր դեկտ*. 23-*ի նամակը։*
Ն[*ՈՅՆ*]

1.- Յովսէփեան Արտաշէս (1877-1962), ծանօթ Մալխաս ծածկանունով, Ամերիկայէն եկած էր Երկիր անցնելու նպատակով. առաւելաբար հաստատուած էր Ատրպատականի Խոյ քաղաքը:

420

Պատճէններու մատեան No 88, *էջ* 366

1905 *յունիս* 10

«Վրէժ» Կենտր. կոմիտէին

Յարգելի ընկերներ,

Ստացանք ձեր 9 *դեկտ. նամակը։*

Հաստատում ենք մեր դեկտ. 20 *եւ* 26 *նամակները։ Աւելորդ ենք համարում ամէն անգամ առանձին գրել, թէ քանի օրինակ «Դրօշակ» ենք ուղարկում, քանի որ միշտ միեւնոյն քանակութիւնն է։ Մաս մաս ենք փոստը ձգում, որպէսզի ուշադրութիւն չդարձնեն միեւնոյն գծով գնացող միատեսակ ծրարների վրայ։ Մի անգամ եւս կրկնում ենք, թէ ուր որքան է գնում։*

1) *Խոյ զանազան հասցէներով* 450 *օրինակ*, 9 *կապոց*
2) *Սալմաստ*, *Ֆրանդեան* 220 *օր*[*ինակ*]
3) *Թաւրիզ*, *Բժ*[*շկի*] *հասցէով* 100 *Դրօշ*[*ակ*] *եւ մի քանի այլ թղթեր*
4) *Մէշէտ* — 50 *օր*[*ինակ*]
5) *Արտաբիլի համար Բժ*[*շկի*] *հասցէով* 8 *կապոց*, 240 *օրինակ*
6) *Արտաբիլ* Via Tauris 600 *օր*[*ինակ*]
7) *Էնզէլի ուղարկւած է* No 11-*ից* 200 *օր*[*ինակ*], *եւ* No 12-*ից* 150 *օր*[*ինակ*]
8) *Ռէշտ* 70 *օրինակ*
9) *Խոյ Յովսէփեանի հասցէին* 100 *օր*[*ինակ*]։

Եթէ որեւէ փոփոխութիւն լինի, եթէ աւելացնենք կամ պակասացնենք, անմիջապէս կը յայտնենք։

Ձեր հասցէին կնիքներ չեն ուղարկւած, իսկ ստէորոտիպի մասին արդէն գրել ենք։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Սամսոնի ուղարկած լուսանկարները ստացել ենք։

421

Պատճէններու մատեան No 88, *էջ* 367

1905 *յունւ.* 10

Սարհատին(1), *Աթէնք*

Յարգելի ընկեր,

Ստացած կը լինէք հեռագրով փոխադրած գումարը (3000 fr.), *որից* 1000 fr. *ձեր հաշւին։*

Նայած ձեր նամակներին եւ հեռագիրներին՝ դուք վաղուց պէտք է ճանապարհ ընկած լինէիք։ Ձեր այդտեղ ուշանալը մեզ մտատանջութեան մէջ է ձգել, չլինի թէ որեւէ դժբաղդութիւն պատահած լինի։ Խնդրենք միամտացնել։

Սպասում ենք ընկ. Մարտինի եւ Երկաթի(2) *պատասխաններին։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Սարհատ (ճիշդը Սահրատ) – ծածկանուն Յակոբեան Յարութիւնի:
2.- Մարտինի իսկական անունը՝ Մուրատեան Մարտիրոս:

422

Պատճէններու մատեան No 88, *էջ* 368-9

1905 *յունւ.* 10

Գիլանի կոմիտէին(1)

Յարգելի ընկերներ,

Ստացել ենք ձեր 3 *դեկտ. նամակը։*

Շուտով ձեզ մօտ կը լինի այստեղի մեր ընկեր ուսանողներից մէկը՝ պ. Հայկը։ Նա յանձն առաւ խօսիլ ձեզ հետ եւ կարգադրել փոխադրութեան խնդիրը։ Յուսով ենք, որ այդ կարեւոր գործը անպատճառ գլուխ կը բերէք նրա աջակցութեամբ։

Պ. Ներսէսեանի համար նորից կը յիշեցնենք թէ «Շարժումին» եւ թէ «Հայրենիքին» բաժնեգները ժամանակին ուղարկել ենք։

Ձեր ուզած գրքերը նոյնպէս կ՚ուղարկենք։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ուղարկւում են հետեւեալ գրքերից 20-*ական օրինակ*

1) *Մարկ Բօտարիս* 2) *Լեռան ռազմիկը*[?] 3) *Ազատութեան երգեր* 4) *Հաշտութիւնը*[?] 5) *Հայուհիներ* 6) *Ապստամբ Սասուն* 7) *Հերոսը* 8) *Հայկական ըէֆորմներ*

9) *Հայաստան եւ Մակեդոնիա* 10) *Գիտական սոցիալիզմ* 11) *Սոցիալիզմ* XIX *դարում* 12) *Կարնոյ յիշատակին* 13) *Ազատութեան ճանապարհին, Հատ*[*որ*] I, 14) *Հատ.* II, 15) *Հատ.* III, 16) *Մեծ առաւօտ*։

Այս գրքերից, եթէ ձեզ համար աւել մնան, ուղարկեցէք Կովկաս։

ՆՈՅՆ

1.- Գիլան – Իրանի հիւսիս-արեւելեան՝ Էնզելի, Ղազուին եւ Ռաշտ քաղաքներու շրջանի կոմիտէ:

423

Պատճէններու մատեան No 88, *էջ* 373

1905 *յունւ.* 15

Պալքան[*եան*] *Կենտրոնական կոմիտէին*

Յարգելի ընկերներ,

Ֆիլիպէի նախկին Արամեան խմբի անդամները խնդրում են մեր միջոցով առաջիկայ շրջանական ժողովին լուծում տալ իրենց յարուցած խնդրին։ Կարծում ենք, որ նոյն խնդիրքը ուղղակի կերպով արւած կը լինի եւ շրջանային ժողովին։

Հաղորդելով նախկին Արամեան խմբի անդամների փափագը շրջանական ժողովին, մեր կողմից յոյս ենք տածում, որ ձեր շրջանի ընկերները, օգտւելով այս տարւայ համախմբումից, կը մտածեն բոլոր խմբերի համար ընդհանուր օրէնքներ, որոնցով կը հարթւեն ծագած անհամաձայնութիւնները եւ որոնք անհնարին կը դարձնեն նոյնանման խնդիրների յարուցելը ապագայում։

Ընկերական բարեւներով ժողովի բոլոր անդամներին՝

[*ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ*]

424

Պատճէններու մատեան No 88, *էջ* 374

1905 *յունւ.* 16

Վրթանէս Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Մեր ուղարկած երկու տուփերը ստացած կը լինէք։ Դրանք պէտք է Նաւահանգիստ(1) *ուղարկւեն։ Խնդրենք յանձնել նաւերից ամէնից աւելի վստահելիին, որովհետեւ շատ կարեւոր է, որ ապահով տեղ հասնեն։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաքումի:

425

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 7-9

յուն[ւար] 11-*ին*

ՍՄԲԱՏԻՆ(1)

Մարտինը իրեն առաջարկում է ձեր գործի մէջ մտնելու(2)։

Հաստատում ենք մեր ...(3)։

Ուղարկել ենք Կիպերտի քարտէսը (Պարիզի վրայով, Ընանի գիրքը)։

Խորհուրդը յետաձգուեց, որովհետեւ Կովկասից առաջարկ եկաւ այնտեղ անելու։ Մենք էլ աչքի առջեւ ունենալով 2 կարեւոր խնդիրները (ինքնապաշտ[պանութեան] եւ Վասպուրականի) տրամադրուեցինք այնտեղ անենք, թէեւ դա դժուար էր մեզ համար։ Բայց յետոյ պարզուեց, որ եթէ այնտեղ անենք, ոչ Լեռնավայրը եւ ոչ Ցուցականը իրենց ներկայացուցիչը ունենալ չեն կարող։ Այս պատճառով հեռագրեցինք, հրաւիրելով մեզ մօտ։ Բացի այդ, Կովկասում ծագած գործադուլների պատճառով արտակարգ խստութիւններ սկսուած կը լինեն բոլոր քաղաքներում, որ անհնարին կը դարձնեն որեւէ կանոնաւոր ժողով։

Օդեսայի հետ առեւտրի գաղափարը աւելի լաւ կը լինի թողնէք։

Զարմանալի բան է, եթէ նաւի խնդիրը մերժուած է եղել ձեր ժողովում, հապա ինչո՞ւ Սարհատը(4) *պնդում էր։*

Թռուցիկը(5) *Սոֆիա է, ուզում է գինուորական դպրոցը մտնի։ Մի երիտասարդ գնաց այստեղից, սովորելով այն, ինչ կարելի էր (ի միջի այլոց մի շատ գործնական նիւթ կայ, որի փորձը արինք. եւ յայտնի եղաւ։ Մի տուփ կ'ուղարկենք ձեզ եւ կը գրենք պատրաստելու ձեւը)։ Այստեղից անցաւ Բուլղարիա, ուր կը լրացնի իր իմացածները։ Այդ պաշարով նա անցնելու է Ոսկանապատ, Վրէժ, ամէն տեղ տղաներ հաւաքելով եւ սովորեցնելով։*

Մեր ժողովից յետոյ Ռ[ոստոմը] խոստանում է մասնագիտական բրոշիւրներով զբաղուել։

Մարը(6) *առայժմ Եգիպտոս է մնում իր հիւանդութեան պատճառով։ Խորհրդին կը հրաւիրենք։*

Կոչի մասին (թիւրքերէն) միշտ խօսում ենք, բայց յետաձգում ենք։ Գալֆան(7) *դեռ անցեալի խառը հաշիւներից գլուխ հանել չի կարողանում։*

Եկող շաբաթ պինդ կը կպչենք։

Պատւիրակութիւնը չընդունուեց անգլ[իական] թագաւորի կողմից. բայց եւ այնպէս կաթողիկոսի հրահանգով պիտի շարունակի իր ուղեւորութիւնը։

Գրում ես, որ Դաշնակցութեան մէջ բոլորն էլ սոցիալիստներ չեն, որ այդ կէտի վրայ ուշադրութիւն դարձնենք։ Ճիշտ է, բայց սոցիալիստական վարդապետութիւնը ուղեցոյց է Դաշնակցութեան համար։ Մեր հիմնակէտն է աշխատաւոր դասի շահերը եւ այդ շահերի տեսակէտից պէտք է որոշուի մեր ուղղութիւնը։ Մեր կռուի ընթացքում մեզ միանում են տարրեր, որոնց հիմնական ձգտումները չեն համապատասխանում մեր ձգտումներին, բայց որոնք պարզ տեսնում են, որ մենք անհրաժեշտ ենք ընդհանուր թշնամու դէմ կռուելու գործում։ Մենք էլ մեր կողմից ոչ մի տեղիք չունենք մեզանից ետ մղելու մեր առժամեայ գործակիցներին։

Վերջին գործադուլին մերոնք էլ են խառնուել, իրենց յատուկ պահանջներով։ Առաջին համարում լոյս կը տեսնի։

1.- Սմբատը (Օհանեան) Սիմոն Զաւարեանի ծածկանուններէն մէկն է: Նամակը հասցէագրուած է Ծոց-Պէյրութ, ուր կը գտնուէր Ս. Զաւարեան այդ միջոցին:

2.- Մարտին կամ Աշոտ Մարքին (Մուրատեան) դաշնակցական հին գործիչ էր, որ Ամերիկայէն գալով նախ Յուցականի Իզմիրի Օժանդակ մարմնին անդամ էր, իսկ աւելի ուշ կը գործէր Լեռնավայր-Կիլիկիոյ մէջ:

3.- Բաց ձգուած տեղը պէտք է արձանագրուէր Զաւարեանին ղրկուած վերջին նամակին թուականը:

4.- Պէտք չէ շփոթել Գէորգ Չաուշի հետ, որ նոյնպէս ծանօթ էր Սարիատ ծածկանունով: Այս մէկը Իզմիրի եւ Կիլիկիոյ հին գործիչներէն է, որ ամերիկեան անցագիր ունէր Յակոբեան, Harry Jacobs անունով: Խորքին մէջ իր իսկական ծածկանունը Սահրատ էր, բայց Ռոստոմ ամէն տեղ կը գրէ Սարիատ ձեւով:

5.- Թռուցիկ՝ Գէորգ (Տէր Աբրահամեան):

6.- Մարը՝ Միք. Տէր Մարտիրոսեանն է, նոյնպէս դաշնակցական հին գործիչներէն, որ ամբողջ 6 տարի (1898–1904) Մարաշի բանտը մնալէ ետք, նոր էր ազատ արձակուած ու անցած Եգիպտոս կազդուրուելու համար:

7.- Յարութիւն Գալֆայեան, Կիլիկիոյ ծանօթ գործիչներէն, որ այժմ Ժընեւի մէջ կը վարէր Արեւմ. բիւրոյի քարտուղարութիւնը:

426

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, ***էջ*** 10-12

11 ***յուն***[***ւար***]

ՎԻՇԱՊ(1)

Շտապում ենք պատասխանել ձեր 3 ***յուն***[***ւար***] ***նամակին, որ այսօր ստացանք։***

«Եթէ տրամադիր էք, պատասխանեցէք» մեր նախադասութիւնը պէտք է բացատրել նրանով, որ ձեր որոշումների, պատրաստութիւնների, վռազելու եւայլն տպաւորութեան տակ, մենք այնպէս էինք կարծում, որ դուք այնքան էլ տրամադիր չէք մեր նշանակած կէտերով զբաղելու։ Երեւում է, որ մենք սխալւեր ենք։ Լաւ, բայց դա ձեզ իրաւունք չի տալիս անելու ենթադրութիւններ, մեզ համար բոլորովին վիրաւորական։ Դրա համար բաւական էր ձեզ յիշել մեր 20 ***դեկտ.ի նամակը, ուր մենք հարցրել էինք ձեր կարծիքը ժողովը Կովկասում անելու համար։ Այդ նամակում հարցրել էինք «կարո՞ղ էք ներկայացուցիչ ունենալ ձեր կողմից», յիշեցրել էինք որ Սարգիսը***(2) ***դիմել է մեզ խնդրելով ներկայ գտնուել «Խորհրդին», եւ հարցրել էինք «չէ՞ք կարող արդեօք ծայրայեղ դէպքում ձեր ձայնը նրան տալ»։ (Դարձեալ նոյն համոզումով, որ ձեզ համար դժուար կը լինի մարդ ուղարկել այդ տեղից)։ Նոյն նամակով խնդրել ենք*** 1) ***մանրամասը պատասխան մեր նշանակած կէտերի վերաբերմամբ եւ*** 2) ***դնել ձեր հարցերը։ Ձեզ համար կարեւորութիւն կ՚ունենայ այն հանգամանքը, որ այս նամակը գրւած է Էլլէնին այստեղ հրաւիրելուց*** 2-3 ***օր յետոյ։***

Այդ հրաւէրը անելիս, մենք մի բոպէ անգամ չենք մտածել էլլէնին կանչել իբր ձեր ներկայացուցիչ կամ իբր էլլէն «Խորհրդի» ժողովին մասնակցելու։ Այդ միտքը չէինք կարող ունենալ, թէկուզ այն պարզ պատճառով, որ ինքներս դեռ չգիտէինք, այստե՞ղ է կայանալու ժողովը, թէ Կովկասում, եւ պատրաստուում էինք այնտեղ մարդ ուղարկել, եթէ վերջնականապէս այնտեղի օգտին որոշուէր։ Մենք միայն ուզեցել ենք օգտուել մի ընկերոջ դուրսը գտնուելու առիթից, խօսելու մի քանի խնդիրների մասին, որոնցից մի քանիսը վերաբերում են հէնց ձեր գործին, եւ մէկը մասնաւորապէս նրա փորձերին։

Սրա մասին գրուած էր ձեզ մեր դեկտ. 14-ի նամակի մէջ։ Եւ ի նկատի ունենալով այն, որ նա երկար ժամանակով բացակայել չի կարող, առաջարկել ենք ծայրայեղ դէպքում տեսակցութիւն կայացնել Վիեննայում։ Ոչ «նուրբ ոճ» ենք ուզեցել բանեցնել եւ ոչ էլ «ձեր պարտականութիւնը» մեզ վրայ առնել, ձեր «իրաւունքներին» ձեռնամուխ լինել։ Մենք ցաւում ենք միայն, որ մեր ամենապարզ ընկերական քայլը տեղիք է տուել այդպիսի բարդ կասկածների։

«Խորհուրդի» տեղի եւ ժամանակի մասին սպասում ենք Արեւել. Բիւրոյի պատասխանին։

Յոյս ունենք, որ ընդունեն մեր վերջին առաջարկը՝ «Խորհուրդը» այստեղ անել։ Հէնց որ ստանանք պատասխանը, անմիջապէս ձեզ կը հաղորդենք, որպէսզի դուք եւս մասնակցելով «Խորհրդին» ձեր «պարտականութիւնը» կատարած լինէք «ըստ չափու կարեաց»(3)։

1.- Պոլիս՝ Յուցական մարմնին ուղարկուած նամակ:

2.- Վանայ Սարգիսն է (Բարսեղեան-Օտապաշեան), որ այդ օրերուն կը գործէր Պուլկարիոյ մէջ իբրեւ «դրսի» անդամ Յուցական մարմնին:

3.- Այս գրութիւնը պատասխան մըն էր Սաֆոյի (Մարգարեան Մարտիրոս) մէկ նամակին, ուր Յուցական մարմնի անունով ան վրդովում կը յայտնէ, որ Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին իրենց անկախ որոշումով եւ սեփական ներկայացուցիչով մասնակցելու իրաւունքը կը խլուի իրենց ձեռքէն:

Չակերտներու մէջ առնուած խօսքերը մէջբերուած են Սաֆոյի այդ նամակէն: Սաֆոյի մատնանշուած նամակը տեսնել «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», Ե. հատոր, Պէյրութ, 2007, էջ 412:

427

Պատճէններու մատեան No 88, *էջ* 376

1905 *յունւ.* 17

Պալքանեան շրջանական ժողովին

Յարգելի ընկերներ,

Ներփակ ուղարկելով մի օրինակ եւս «Կազմակերպական կանոններ», ժողովիդ ուշադրութեան ենք յանձնարարում մասնաւորապէս այն յօդուածները, որոնցով հարկ կը լինի ճշտել, թէ մինչեւ որ աստիճան շրջանի այլ եւ այլ մարմինները համապատասխանում են ընդհանուր ժողովում սահմանուած պահանջներին։ Յօդ.[*ած*]

29-42 հիմք պէտք է ծառայեն խմբերի, խմբակցութիւնների եւ կոմիտէների համար կազմուելիք կանոնադրութեան, իսկ մասնաւորապէս յօդ. 35 կարող է լուծել [մէկ բառ անընթեռնելի] Արամեան խմբի յարուցած դժգոհութիւնը, որի մասին երկու օր առաջ գրել ենք Պալք. կենտրոնական կոմիտէին։

Օգտուում ենք առիթից յայտնելու ժողովին, որ ստացել ենք Դէլկասէի(1) տուած երկար բացատրութիւնը։

[Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ]

1.- Թէոֆիլ Դելկասէ – Ֆրանսայի արտաքին գործոց նախարար։

428

Պատճէններու մատեան No 88, էջ 377

1905 յունս. 17

Ֆիլիպէի կոմիտէին

Ընկերներ,

Գուցէ Ֆիլիպէ եկած լինի մի երիտասարդ Համբարձումեան անունով, որ մի քանի ժամանակ առաջ ճանապարհ է ընկել այստեղից. խնդրենք գտնել նրան եւ յանձնել 106 fr. 45 սանտ[իմ]. իրեն յայտնէք, որ այդ դրամը ուղարկել է իր եղբայր՝ Սաքոն, որը խնդրում է տեղեկութիւն տալ իր վիճակի մասին, եղբօրը կարող է գրել օր. Կաֆեանի միջոցով։

Փողը կը յանձնէք եւ կը մոցնէք մեր հաշւին. պ. Համբարձումեանից չմոռանաք ստացական առնել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

429

Պատճէններու մատեան No 88, էջ 378-380

Ռուսերէն նամակ

1905 յուն. 17

Թայինեանին, Պարիզ(1)

Սիրելի ընկեր,

Ստացել ենք քո յունուարի 13-ի նամակը։ Քո նամակների ուշադիր ընթերցանութիւնը մեզ բերել է այն եզրակացութեանը, որ դու կամ այնքան էլ չես հասկանում հայոց լեզուով գրուած մեր նամակները կամ էլ թարգմանիչի միջոցով չես կարողանում ճշգրիտ կերպով արտայայտել այն ամէն ինչը մենք ուզում ենք ասել։ Դրա հա-

մար էլ տարբեր պատահական թիւրիմացութիւններից խուսափելու համար որքան էլ դա անյարմար է, մենք մեզ ստիպւած ենք համարում քեզ գրել ռուսերէնով եւ խնդրել քեզ՝ պատասխանելու այդ նոյն լեզուով։

Մենք քո նամակի բոլոր կէտերին չենք պատասխանելու ոչ թէ նրա համար որ քեզ առարկելու բան չունենք — դրանով դու կը համոզւես իր ժամանակին, այլ սոսկ այն պատճառով որ դրանց էական ու առանձնայատուկ նշանակութիւն չենք տալիս։

Անցնենք մեր տարաձայնութիւնների գլխաւոր կէտին։ Մենք որեւէ չափով չենք կասկածում նրանում որ եթէ դու պահանջում ես ինչ որ գումար՝ որեւէ ձեռնարկի համար՝ ապա քո պահանջը արդարացի ու անյետաձգելի ես համարում։ Բայց դու ճիշտ ես միայն «արտահմանեան պրոպագանդիստի» տեսանկիւնից միայն։ Դու անտեսում ես մեր տրամադրութեան տակ եղած կանխիկ միջոցների սահմանափակութիւնը, որի մասին քեզ գրել ենք մեր նախորդ նամակում։ Եթէ մեր գործող կոմիտէներին պէտք լինեն խոշոր միջոցներ եւ նրանք պահանջեն մեզանից՝ Ընդհանուր ժողովի կողմից արդէն իսկ յատկացւած գումարներից, <u>ապա մենք ի վիճակի չենք լինելու բաւարարել նրանց պահանջները։</u> Այդպիսի ֆինանսական միջոցների դէպքում ինչպէ՞ս ծախսեր անել անգլերէն բրոշիւրների հրատարակութեան եւ էլ աւելի վատ՝ բանկետների վրայ։ Միթէ՞ դա անյետաձգելի է եւ չի՞ կարելի սպասել «խորհուրդ»-ին(2)։

Կաթողիկոսին ուղղւած զեկուցագրի գաղտնի մասը պէտք է անպայման գրել մեր ընկերներին եւ գաղտնի թանաքով։ Սրբազան-ները(3) թող չցրւեն։ Ամենայն հաւանականութեամբ այդտեղ թիւրիմացութիւն կայ։ Նշանակում է թիֆլիսեան ընկերներն իրենց հեռագրով ուղղակի ցանկացել են իմանալ մեր կարծիքը։ Մենք նրանց կը գրենք եւ յոյս ունենք պարզել թիւրիմացութիւնը։

Գալֆայեանը խնդրում է հաստատել այս նամակին կից հաշիւը։

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ(4)

Յ. Գ.— Կարող է պատահել որ սրբազան-ները(3) իրենց կողմից գրել են կաթողիկոսին՝ եւ արտայայտւել են հետագայ քայլերի անյոյս լինելու մասին։ Եթէ այդպէս է, եթէ նրանք տրամադրւած չեն, ապա դա ի հարկէ այլ հարց է. այդ ժամանակ այլ ելք գոյութիւն ունի՝ թող մեկնեն իրենց թեմերը։ Իսկ եթէ ոչ՝ ապա թող սպասեն թիւրիմացութեան պարզաբանմանը։

Վաղը կը ստանաս 1000 fr. *չէկ* Pro Armenia-*ի*(5) *համար։ Տուեալ չէկը փոխանցիր Քիյառին։ Խնդրում ենք նաեւ քո հաշւի մէջ չմտցնել* Varandian-*ի*(5) *համար նախատեսւած գումարը։*

***Ն*[*ՈՅՆ*]**

1.- Ներկայ հատորին մէջ ինչպէս այս՝ նոյնպէս Ռոստոմի հետագայ ռուսերէն գրուած նամակներու թարգմանութիւնները կատարուած են ընկ. դոկտ. Խուդինեան Գէորգի կողմէ, ինչպէս նաեւ, առհասարակ, ծանօթագրութիւնները:

2.- «Խորհուրդ» բառը գրուած է հայերէն:

3.- «Սրբազան» բառը գրուած է հայերէն:

4.- Հայերէնով գրուած է:

5.- Pro Armenia եւ Varandian գրուած են լատինատառ:

430

Պատճէններու մատեան No 88, *էջ* 381
(*Փաստ.* 46-54)

1905 *յունիս.* 18

Թափառիկին(1), *Ալէքսանդրիա*

Յարգելի ընկեր,

Այսօրուայ փոստով ուղարկում ենք ձեզ մի քանի կապոցներ (Դրօշակ եւ բրոշիւրներ), հասցէները գրելով,— որ Սմբատը(2) *պիտի ուղարկած լինի — հարկաւոր է յանձնել աւստրիական փոստատանը, կամ աւելի լաւ, ուղղակի Պէյրութ մեկնող նաւի փոստարկղը ձգել։*

Հրատարակել եւ վաճառել կարելի է միայն նահատակուած ընկերների պատկերները։

Ռուսերէն թերթեր կ'ուղարկենք։ Դրանցից մէկը ձրի կարող ենք ստանալ, միւսը վճարով է։

Ծրագիր խմբերի համար կը պատրաստենք «Խորհրդի» ժողովից(3) *յետոյ։ «Կազմակերպական կանոնները» ըստ ընդհ. ժողովի պէտք է ուղարկել միայն կոմիտէներին։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆԲԻՒՐՕ

1.- Թափառիկ – ծածկանուն Տոքթ. Կարապետ Փաշայեանի, որ կուս. ներկայացուցիչն էր Եգիպտոսի մէջ:
2.- Սմբատ – ծածկանուններէն մէկը Սիմոն Զաւարեանի:
3.- Դաշնակցութեան Խորհուրդը պիտի գումարուէր Ժընեւի մէջ Փետրուար ամիսէն սկսեալ:

431

Պատճէններու մատեան No 88, *էջ* 382-3

1905 *յունիս.* 19

Լեռնեանին(1), *Բերլին*

Յարգելի ընկեր,

«Խորհուրդը» կայանալու է մօտիկ ապագայում, ճիշտ ժամանակը դեռ որոշ չէ։

Զարմանում ենք, որ միայն 3 հոգի էք հաշւում դաշնակցականներ։ Զգիտենք, աչքի առջեւ ունէք արդեօք Պ. Սագեանցին իր կնոջ հետ, օրիորդ Ադամեաններին, Տիկ. Շահբազեանին։

Ինչո՞ւ էք վրդովւում, որ հայ ռուսական սոց. դէմոկրատները պրոպագանդի

նպատակով դիմում են այս կամ այն միջոցի. բնական է, որ պիտի աշխատեն իրենց թիւը ստւարացնելու։ Մենք էլ չենք կարող ձեռներս ծալած նստել. մեր կողմից եւս անհրաժեշտ է ուսանողական բոլոր քաղաքներում որոշ պրոպագանդ։ Ինչպէս գրել էինք, մի յարմար առիթի ենք սպասում, որպէսզի մեզանից մէկին ուղարկենք ուսանողական շրջանների հետ աւելի սերտ կապ հաստատելու։ Ցիւրիխցի պարոնի յանձնարարականի մասին կը գրենք Թիֆլիզ։ Միայն թէ Թէլաւը բաւական հեռու լինելով Թիֆլիզից — գնալ, տեսնուել եւ դալը առնւազը 3 օր կը պահանջի — չգիտենք, թէ այսպիսի նեղ ժամանակ մեր ընկերները որքան դիւրութիւն կ՚ունենան այդ յանձնարարութիւնը կատարելու կարճ ժամանակի մէջ։

Պ. Վարդանեանին կ՚ուղարկւի «Դրօշակ»։

Սպասում ենք ձեր տեղեկանքներին։

Մենք յոյս ունինք որ եթէ «Խորհուրդը» որոշի կովկասահայ դատի մանրամասը ծրագիրը, ուսանողութիւնը չի տատանուիլ այլ եւս այսօրւայ նման։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Շրջաբերական-նամակները խնդրենք վերադարձնել մեզ, եթէ այլ եւս ձեզ հարկաւոր չեն լինիլ։

Ն[*ՈՅՆ*]

1.- Լեռնեան – ծածկանուն Նազարեանց Լիպարիտի (1874-1947):

432

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 180-81

յուն[*ւար*] 19

ՄԵԾ ՔԱՂ[*ԱՔ*](1)

Հաստատում ենք մեր յուն[*ւար*] 2-*ի նամակը, ուղարկւած Ոսկ*[*անապատ*] *մի երիտասարդի ձեռքով, եւ յուն*[*ւար*] 7 *նամակը բանկի հասցէով։ Ձեզանից վաղուց է ոչինչ չունենք։ Գոնէ կատարւած տեռորների մասին գրեցէք, ո՞վ է արել, ինչո՞ւ. չգիտենք, թէ ինչպէս արձանագրել թերթում։ Վերջապէս մի բան արէք այս չարաբաստիկ թղթակցութեան խնդրի հետ մէկը թող յանձն առնի գոնէ կարճ կարճ լուրեր հաղորդել։*

Գրաշարի մասին էինք գրել։ Գտա՞ք մէկին։

Մի յանձնարարութիւն, որ խնդրում ենք չձգձգել։

Մեր մի ծանօթի բարեկամը ուզում է արտասահման անցնել։ Պէտք է նրան դիւրութիւններ տալ։ Տուէք մի յարմար անցագիր, պարսկական, եթէ ռուսական չգտնէք։ Ինքը թէեւ ռուս է բայց դէմքը սեւ է։ Անունը եւ տեղը յետոյ կը յայտնենք։ Զոփուռեանին(2)։ *Եթէ անցագիր ունենայ, կարող է ազատ համարձակ ճանապարհ ընկնել, միայն թէ նշանները քիչ թէ շատ համապատասխանեն։ Աւելի լաւ է նաւ*

նստել Նաւահանգստում։ Իսկ գուցէ աւելի յարմար միջոց գտնէք։ Մի խօսքով այս կողմերը ճանապարհ դրէք։ Նրան ներկայացնողը պէտք է ասի, որ յանձնարարուած է .....(3) կողմից։

Այս անգամ No *12-ի ստէորոտիպը*(4) *ծովային ճանապարհով է գալու։ Հարկ եղածը կարգադրէք. երկու տուփերով է, մօտ 7 ֆ*[*ու*]*նտ իւրաքանչիւրը։*

«Խորհրդի» մասին ի՞նչ արիք։ Սպասում ենք մի լուրի։

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղարկուած նամակ։ Էջին վերը նոյն գրչով՝ «Եւանգ. հասցէ – ստացուած»։ Վերեւ յիշուած Ոսկանապատը ծածկանունն էր Պաքուի։

2.- Չոփուռեան – ծածկանուն Թադէոսեան Լեւոնի։ Նաւահանգիստը ծածկանունն է Պաքումի։

3.- Ռուսատառ անընթեռնելի անուն։

4.- «Դրօշակ»ի 1904 թ. No 12-ի (Դեկտեմբեր) համարին քլիշէն, ուր կար Փարիզի մէջ կայացած Ռուսաստանի ընդդիմադիր կուսակցութեանց (որոնց շարքին նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան) որոշումը՝ միացեալ ուժերով տապալելու ցարական վարչակարգը։

433

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No *89ա-2, էջ* 181-82

յուն[*ւար*] 21

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Ստացանք վերջապէս այսօր մի նամակ Զոփուռեանից։ Նիթրային(2) *այստեղ աղաչել պաղատել ենք, որ հասկացնի ձեզ, թէ որքան կարեւոր են թէկուզ կարճ, բայց կանոնաւոր տեղեկութիւնները։ Տեռորներ են կատարւում, որոնց մասին մենք թերթերից ենք իմանում, չարած մնալով, թէ ինչ ձեւով արձանագրենք թերթի մէջ։ Գործադուլ է լինում, եւ մենք մի ամիս պէտք է սպասենք, որպէսզի մեր աղբիւրից մի բան իմանանք։*

Խնդրենք յայտնել Մ[*եծ*] *Ք*[*աղաք*] *Բարսեղեանին, որ մեր յիշած ծանօթի հասցէն է* ... Պռապորշիկ Վիկտոր Ալեքսանդրեւիչ Ռախմանով(3)։

Ի՞նչ եղաւ գրաշարը։

Երկար թղթակցութիւններ չենք խնդրում, այլ համառօտ խրոնիկա յեղափոխական կեանքի՝ ամբողջ Կովկասում։

Այս գործադուլը պէտք է լաւ ապացոյց լինի, որ պէտք է հիմնաւորել մեր բանւորական կազմակերպութիւնը, թոյլ չտալ, որ զանազան պալշենստվօ-*ներ*, մենշեւստվօ-*ներ*(3), *կամ նրանցից բաժանւածներ երբ ուզենան, իրենց թայֆայական նկատումներից դրդւած գործադուլներ յարուցանեն։*

Բժ. Արեգնազանը Ծաղիկ եղած ժամանակ մի քանի կարեւոր թղթեր է ձեռք բերել եւ յանձնել Սաֆոյին(4), *պայմանով միայն, որ չհրատարակւեն։ Մինչդեռ շատ ցանկալի է մի ձեւ գտնել հրատարակութեան համար, որովհետեւ շատ կարեւոր են։ Կարելի է յայտարարել, թէ ստացւած են երկրից, կամ Հիւսիսակերտից*(5)։ *Իրեն համար դա ոչինչ, որովհետեւ ծայրայեղ դէպքում կարող է յայտարարել, թէ տուել է սրան նրան կարդալու, ձեռքից ձեռք անցած կը լինի, եւ մէկն էլ արտագրած ու*

Դրօշակին ուղարկած կը լինի։ Միայն վախենում ենք ձեռնարկի համար։ Թող ուրեմն բժիշկը ինքը մի ձեւ ցոյց տայ հրապարակ հանելու համար։

1.- Ոսկանապատ-Պաքու ուղարկուած նամակ. քովը փակագծի մէջ «Գրիշայի [հասցէին]»:
2.- Չոփուռեանը Թադէոսեան Լեւոնն է, Նիթրան՝ Յար. Շահրիկեանը: Այս վերջինը արդէն Ժընեւէն վերադարձած էր Պաքու:
3.- Ռուսատառ՝ մեծամասնականներ եւ փոքրամասնականներ:
4.- Մարգարեան Մարտիրոս, Յուցականի անդամներէն: Արեգնազանը ծածկանուններէն մէկն է բժ. Յ. Զաւրեանի: Ծաղիկը՝ Պոլիսն է:
5.- Հիւսիսակերտ – ծածկանուն Պետերբուրգի:

434

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, *էջ* 182-83

Ուղարկւած յուն[ւար] 20

Մ. Ք.(1)

Մոռացանք գրել կաթ. պատուիրակութեան խնդրի համար։ Ինչպէս երեւում է, մենք նրանց հեռագիրը լաւ չենք հասկացած եղել. մենք կարծել ենք, թէ Մ. Ք. խորհուրդ են տալիս շարունակել։ Այդ իմաստով էլ գրեցինք Լօրիսին(2)*։ Բայց յետոյ իմանում ենք, որ կաթողիկոսից հեռագիր է եղել եպիսկոպոսներին, որ իրենց վիճակները քաշւեն։ Սրանով ուրեմն վերջ է տրւում ուղեւորութեան։ Մինչդեռ պրոպագանդի տեսակէտից փափաքելի է շարունակել։ Եթէ դրամական նպաստ հասցընելու յոյս կայ, խնդրէք կաթողիկոսից, որ արտօնէ նրանց շարունակել։ Այս առթիւ գրւած է նաեւ Լօրիսին։ Սպասում ենք եպիսկոպոսների պատասխանին։*

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղարկուած գրութիւն. կողքին սեւ մատիտով՝ «Ուղարկւած 21-ին յուն[ւար]»:
2.- Յովհ. Լոռու-Մելիքեան, անդամ Արեւմտեան բիւրոյի:

435

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, *էջ* 183-84

Ուղարկւած 24-*ին*

Մ. Ք.

Պետերբուրգի շարժման լուրերը հարկաւ արդէն ձեզ հասած կը լինեն։ Շարժումները ընդհանրանում են. եւ շուտով Կովկասին կը հասնի հերթը։ Ֆինլանդիան ապստամբւել է, ինչպէս հաղորդում է վերջին հեռագիրը. դրան անպատճառ կը հե-

տեւի Լեհաստանը։ Լսում ենք, որ Բագւում գործադուլը վերսկսում է։ Տեսնւեցանք սոց.-ռեւոլ. հետ։ Սրանք ասում են, թէ իրենք պէտք է իրենց վերջին ուժերը թափեն, անեն ամէնուրեք այն, ինչ հնարաւոր է։

Եթէ հեռագրական վերջին լուրերը շատ չեն չափազանցրած, եթէ շարժումը իրօք ընդհանրանայ, Դաշնակցութիւնը պէտք է թողնի իր կրաւորական դիրքը եւ իբրեւ Կովկասում ամենահին եւ ամենալաւ կազմակերպւած ոյժ բոլորից առաջ կանգնի։ Հայերը մի կողմից յարաբերութիւն ունենալով թիւրքերի, միւս կողմից վրացիների հետ պէտք է կովկասեան ազգերի համերաշխութեան գործում աւելի եռանդուն դեր ունենան։ Կովկասը պէտք է անի իր մասնակի պահանջը. այլ եւ այլ ընդհատ պահանջների հետ չպէտք է մոռանալ հողային խնդիրը, որ տեղացիներից առնւում եւ տրւում է եկւոր ռուսներին։ Այդ պահանջին տակ կը կպչեն եւ թուրքերը եւ վրացիները։ Մեր գլուխն էլ հիմա շատ խառն է։ Միտինգներ են տեղի ունենալու։ Սպասում էինք ձեզանից ամէն մի 2-3 օրը մի նամակ։

436

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 13-15

ՇՈՅ
Սմբատին(1)

Դարձեալ խնդրում ենք մի ամփոփ տեղեկագիր ուղարկել ձեր գործերի մասին։ Նամակներիդ մէջ տրւած տեղեկութիւնները ցիր ու ցան են, եւ բացի այդ, չէ՞ որ որոշ ժամանակից յետոյ, մարդկանց եւ պայմաններին աւելի լաւ ծանօթանալուց յետոյ հայեացքդ պէտք է բաւականաչափ փոխւած լինի։

Քանի որ այդտեղ ես, տեսնւիր անպատճառ Վարդանի(2) *հետ եւ կարգադրեցէք, թէ ում էք արտօնում դրամի պահանջներ անելու։ Աշոտ Լեւոնը* 2,000 *ոսկի է, օրինակ, ուզում Թափառիկից*(3)։ *Մի ուրիշը ուրիշ գումար է ուզելու։ Մտէք մեր դրութիւնը։ Ի՞նչ անել։ Մենք գրել ենք յամենայն դէպս Թափառիկին, որ միմիայն Պատասխ. մարմնի անդամների պահանջներին գոհացում տայ։*

Գալով այն տեղական ընկերներին, որոնց ուզում ես Պատասխ. մարմնի անդամների թւի մէջ մտցնել, պէտք է ասենք, որ մեր կարծիքով դա սխալ տակտիկ է։ Նախ որ առաջին տպաւորութիւնները կարող են սխալ դուրս գալ, ինչ որ շատ հաւանական է մի այդպիսի վայրում։ Երկրորդ, ինչպէս դու էլ ես նկատել, մէկին տուած առաւելութիւնը ապահովաբար կը գրգռի միւսներին, եւ դրանից անվերջ ներքին խնդիրներ կը ծագեն։ Այնպէս որ մեր անկեղծ խորհուրդն է երբեք չչտապել։

Վկայականները ուղարկուած են Պարիզի միջոցով։ Պարիզի կոնֆերենցիայի մասին մանրամասը քեզ պիտի պատմէր Վարդանը։ Ահա թէ ինչու քեզ չի գրւել ժամանակին։ Քո նշանակած պահանջները գրւած են աւելի լայն չափերով։ Habeas corpus-*ը*(4) *դէհ հիմա .....*(5) *էլ է պահանջում։ Ծոցում ասենք Դրօշակից էլ կ՚իմանաս բաւական բան։*

Թղթակից գտել էինք։ Մինչեւ դէս գնաց, դէն գնաց զանազան յանձնարարու-

թիւնների համար, աչունը մօտեցաւ, երբ միեւնոյնն էր տեղ չէր կարողանալու հասնել։ Ստիպւած եղանք յետաձգել մինչեւ գարուն։

Սասուն դրամական փոքրիկ օգնութիւններ (40, 50 *ոսկով*) *ուղարկում ենք թէ մենք եւ թէ Ար*[*եւելեան*] *Բ*[*իւրոն*]։ *Վերջերս նպաստներ բաժանում է անգլիական հիւպատոսը։ Ֆրանսիականը խայտառակ դուրս եկաւ, սրա պատմութիւնը երկար է։*

Պրեսանսէի ազդու դիմումի վրայ Դելկասէն(6) *հեռագրելով բացատրութիւն էր ուզել։ Բանից դուրս է գալիս, որ հիւանդութեան պատճառով չի կարողացել անձամբ գնալ. հայ հոգեւորականութեան միջոցով ուղարկել է* 19,000 fr.*ի չափ գումար։ Անպիտան Կոնստանն էլ ֆրանսիական կառավարութեան պրեստիժը բարձր պահելու համար տրամադիր է եղել պահել գումարները մինչեւ գարուն, որ հիւպատոսը իր ձեռքով տանի բաժանի։ Պրեսանսէն պատասխանեց Դելկասէին, որ իր բացատրութիւնները գոհացուցիչ չի գտնում եւ որ թող բոլորը յանձնեն տեղական հայ հոգեւոր առաջնորդներին։*

Եթէ դուրս գալու լինես Ծոցից, Եգիպտոս չմնաս, նախ որ քո այնտեղ երեւալդ լու կը գցի(7)*, երկրորդ, արդէն «Խորհրդի» ժամանակը կը լինի։ Մարին կը վերցնես այստեղ կը գաս։ Կոմսը*(8) *գալու է նոյնպէս։*

Ստացանք այսօր եւ 8 *յուն*[*ւարի*] *նամակը։ Շատ ես պահանջկոտ։ Եթէ այստեղ դու եղած չլինէիր եւ պայմաններին ծանօթ, դեռ հասկանալի է։ Այդքա՜ն բաներ կարելի է պահանջել... Այդ նամակի կէտերին կը դառնանք. առայժմ լրացնենք մի երկու կէտ։*

Մարթինը իր յանցանքով չի հեռացել Իզմիրից։ Անհամաձայնութիւններ են ծագել տղերանց մէջ, որի պատճառով Ցուցական մարմինը որոշել է, որ Մարթինը եւ Էտկարը հեռանան(9)*, բայց ոչ թէ նրա համար, որ այդ երկուսը յանցաւոր են։*

Տեղորները, որ ուզում է սահմանափակել Արեւել. Բիւրոն, փողի համար չէ որ անում են. մեր կարծիքով էլ «Փոթ[*որիկ*]*»ի*(10) *գործը պէտք է դադարեցնել։*

1.- Անթուակիր նամակ Պէյրութ (Ծոց) գտնուող Ս. Զաւարեանին:

2.- Խանասորի Վարդանն է, Մեհրաբեան Սարգիս, որ Ս. Զաւարեանի հետ անդամ էր Լեռնավայր-Կիլիկիոյ Պատ. մարմնին:

3.- Աշոտ-Լեւոնը Կիլիկիոյ երիտասարդ գործիչներէն է. Թափառիկը՝ Տոքթ. Կարապետ Փաշայեան, Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչ Եգիպտոսի մէջ:

4.- Լատիներէն. անգլիական յայտնի օրէնք, որմով դատարանը կը պահանջէր մեղադրեալին անձամբ ներկայութիւնը ատեան, որոշելու համար անոր յանցաւոր ըլլալը կամ ոչ:

5.- Ռուսերէն անընթեռնելի երկու բառ (կրճատուած):

6.- Դելկասէն Ֆրանսայի արտաքին գործոց նախարարն էր. Պրեսանսէն խորհրդարանի անդամ եւ Pro-Armenia-ի խմբագրական կազմէն:

7.- Այսինքն՝ լուրը շուտով կը տարածուի:

8.- Մարը՝ Միք. Տէր Մարտիրոսեանի ծածկանունն է. Կոմսը՝ Վահան Փափազեանի: Երկուքէն ոչ մէկը պիտի կարենար մասնակցիլ «Խորհրդի» ժողովին. Մարը՝ հիւանդութեան պատճառով, Կոմսը՝ ճամբուն ձիւնով փակուած ըլլալուն հետեւանքով:

9.- Երկուքն ալ Ցուցական մարմնի օժանդակող ընկերներ. Մարթինը՝ Մուրատեան Մարտիրոս. Էտկարը՝ Այվազեան Կարապետ:

10.- «Փոթորիկը» բռնի հանգանակութեան ձեռնարկն էր:

437

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, էջ 16-18

(*Ուղարկուած* 26-*ին յունուարի*)

ՎԻՇԱՊ
Թորգոմին(1)

Վիշապի բանտից մեր բանտարկուած ընկերներից մէկը նպաստ է խնդրում։ Թորգոմը պէտք է նրան ճանաչի։ Ահա թէ ինքը ի՞նչ է գրում իր մասին։

«Բիւթանիոյ նահանգին կազմակերպիչն էի. պատիժս ցկեանս է. վկայուած եմ անգլիական քոլլէճէ մը». երեք ու կէս տարի է բանտումն է։Հասցէն, որի միջոցով կարելի է փող հասցնել, չի դրել նամակի մէջ։ Աչխատէք այդտեղ իմանալու նրա կապերը եւ մեր հաշւին մի գումար տուէք։ Շատ նեղ դրութեան մէջ է երեւում։

Թայինեանի(2) *համար ուզում էինք վերցնել չէք եւ ուղարկել Էլլէնին, որպէսզի նա ինքը ձեր կողմից անի ինչ ուզում* [է]։ *Երկար է պատմել, թէ ինչու մենք չէինք ուզում մեր ձեռքով այդ բանը անել։ Բայց յետոյ խնդիրը այնպէս փոխուեցաւ, որ հրաւիրեցինք Թայինեանին մեզ մօտ համաձայնութեան գալու համար որոշ կէտերում մինչեւ «Խորհրդի» կայանալը։ Այս միայն նկատենք, որ հակառակ ձեր գրածին «իսկապէս փողն է, որ կը պակսի»։ Մեր ձեռքում չի մնացել այնքան, որ կարողանանք թէկուզ միայն ձեր ու Լեռնավայրի պահանջները գոհացնել։ Բացի այդ, առաջիկայում մենք չենք ունենալու մեր անցեալի եկամուտները։*

Թղթերի մէջ գտանք այն նամակը, որի փոխանակ ձեզ ուղարկուած էր մաքուր թուղթ. դա օգոստ. 14-*ին գրուած նամակն է, որ իբր դոկումենտ պահում ենք ձեր ներկայացուցչին ցոյց տալու համար, երբ նա գար այս կողմերը։*

Մեզ զարմացրեց ձեր պահանջը Ոսկեհանքի գործի մասին(3). *երեւի դեռ եւս չեն յայտնել ձեզ, որ տղաները ձեռք են բերել* 2,000 *ոսկու չափ գումար* (50,000 fr.)։ *Այդ գումարը մոցրել էին իրենց հաշւի մէջ եւ խնդրել էին առայժմ չհրատարակել։ Ի միջի այլոց, ինչպէ՞ս վարւինք դրա վերաբերմամբ։*

Բժիշկը(4) *մեզ ոչինչ չի ուղարկել։ Խնդրենք յիշեցնել նրան, որ ուղարկի եւ բացի այդ ցոյց տայ այն ձեւը, որով կարելի է հրատարակութեան յանձնել։*

Վաղը կիրակի լինելով, երկուշաբթի օրը կ՚ուղարկենք երկու չէք 5000-*ական ֆր.*, *սպասելով ձեր հեռագրին կամ նամակին հետեւեալ* 10,000 fr.*ը ուղարկելու համար։*

1.- Պոլիս (Վիշապ) ուղղուած նամակ։ Թորգոմը Արտաշէս Սերեմճեանն է, անդամ Ցուցական մարմնի։

2.- Յովհ. Լոռու-Մելիքեան, անդամ Արեւմ. բիւրոյի եւ պատասխանատու եւրոպական քարոզչութեան։

3.- Ոսկեհանքը Զմիւռնիա-Իզմիրն է, ուր ծրագրուած էին Սուլթան Համիտի մահափորձին զուգահեռ, շարք մը սադրիչ արարքներ թուրք պետական եւ եւրոպական հաստատութիւններու դէմ։

4.- Ակնարկութիւն Տոքթ. Կարապետ Փաշայեանին, Եգիպտոս։

438

Պատճէններու մատեան No 88, *էջ* 388-9

1905 *յունուար* 27

Սարհատին(1), *Աթէնք*

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր յունուար 17-*ի նամակը։*

Մեզ զարմացնում է ձեր ծրագրի փոփոխումը եւ նոր առաջարկը։ Բաւական ժամանակ է, որ դուք պնդում էիք փոխադրել ձեզ շտապով ապրանքի տեղափոխութեան ծախքը։ Մենք աճապարեցինք կատարել ձեր պահանջը այն համոզումով, որ ամէն ինչ պատրաստ է եւ միայն ճանապարհածախսն է, որ պակասում է։ Իսկ հիմա նոր պատմութիւններ ենք լսում Շէյխի հիւանդութեան եւ նրա մարդու ուշանալու մասին։ Եթէ դեռ մարդը չէր եկել, ի՞նչ պէտք կար այնքան մեզ շտապեցնելու։

Զէնքի քանակութիւնը աւելացնելուն բոլորովին համամիտ չենք. կարող է մի նոր պատահականութիւն, չնախատեսած, վտանգել փոխադրութեան փորձը։ Հակառակ ենք նոյնպէս շոգենաւ վարձելուն։ Եթէ Շէյխի մարդը մի ամիս առաջ գար, միթէ՞ ամեռ չէր լինելու, եւ միթէ՞ ամեռը առագաստանաւերը չեն բանում։ Արէք, մի խօսքով, այնպէս, ինչպէս նախօրօք համաձայնութիւն էր գոյացել։ Ոչ մի ստիպողական հանգամանք չենք տեսնում առաջին ծրագիրը փոփոխելու։ Բացի այդ, գործի վերաբերեալ առաջարկների մասին պէտք է գրել ձեր մարմնին(2)։ *Եթէ նոյնիսկ մենք համամիտ լինէինք ձեզ, չէինք կարող ոչինչ փոփոխել առանց պատասխանատու ընկերների հաւանութեան։*

Աւելորդ չենք համարում յիշեցնել ձեզ, որ վերջերս ստացել ենք նամակ, որով առաջարկում են դրամ ուղարկել միայն այն նամակների հիման վրայ, որոնք կ'ունենան ընկեր Սմբատի կամ Վարդանի ստորագրութիւնները(3)։ *Այնպէս որ սրանից յետոյ ձեր բոլոր դրամական պահանջները արէք նրանց միջոցով եւ նրանց հաղորդէք ձեր հաշիւների պատճէնները։ Ծոցում*(4) *կ'առնէք ձեր ծախսերի համար անհրաժեշտ դրամը։ Իսկ յամենայն դէպս ուղարկում ենք* 500 fr., *որպէսզի ձեր անմիջական պէտքերի պակասութիւն չզգաք։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Սարհատ, աւելի ճիշդ Սահրատ – ծածկանուն Յուցական մարմնի անդամներէն Յակոբեան Յարութիւնի:

2.- Այսինքն՝ Յուցական մարմնի:

3.- Սմբատ – ծածկանուն Զաւարեան Սիմոնի. Վարդանը՝ Խանասորի Վարդանն է, բուն անունով՝ Մեհրաբեան Սարգիս:

4.- Ծոց – ծածկանուն Պէյրութի:

439

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 185-86

Ուղարկուած 31 *յունուար (Գրիշային)*

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)
Մ. Ք.

Հաստատում ենք մեր յուն[*ւար*] 21 *նամակը։*

Հոկտ.ի ձեր հաշիւը կորել է, մեր ձեռքը չի հասել, նորը ուղարկէք։

Եպիսկոպոսները(2) *գնացել են իրենց տեղերը, գուցէ հանգամանքները այնպէս դասաւորուեն, որ նորից անհրաժեշտ լինեն այցելութիւնները, այս մասին յայտնեցէք կաթողիկոսին։*

Հեռագրական լուրերը Ռուսաստանի շարժումների, Ֆինլանդիայի ապստամբութեան մասին չափազանցրած դուրս եկան։ Մ. Ք. ուղարկած հեռագիրը Դաշնակցութեան դերի մասին հետեւանք էր այդ չափազանցութիւնների։ Բայց եւ այնպէս բանւորական շարժումները տարածւում են Լեհաստանում։ Եթէ մօտ ժամանակներումս մի առանձին նոր բան չլինի, ապագայում անխուսափելի է դառնալու։ Կուսակցութիւնները պատրաստւում են, բաւական մարդիկ այստեղից գնացին։ Լեհացիք լուրջ պատրաստութիւններ են տեսնում, թէեւ ինչպէս երեւում է, առանձին չեն շարժւելու. սպասելու [*են*] *ռուսական շարժման ուժեղ բռնկման։*

Կովկասի դերի մասին պէտք է լաւ մտածել եւ, ինչպէս գրել էինք Մ. Ք., Դաշնակցութիւնը պէտք է դուրս գայ իր կրաւորական դերից եւ չփճացնի զուր տեղից իր ժամանակը եւ ուժերը, քարշ գալով այս կամ այն կազմակերպութեան ետեւից։ Մեզ ուղղած հարցերին, թէ ինչու Դաշնակց. չի ուզել մասնակցել ցոյցին, մենք, չիմանալով ձեր տուած պատճառաբանութիւնները, այլ եւ այլ ենթադրութիւններ ենք առաջ բերում, գլխաւորապէս այն, որ «ցոյցի դուրս գալը» մեզ համար նոյնը չէ, ինչ որ ուրիշների համար է. մենք չենք կարող դուրս գալ հրապարակ, ծեծւել եւ գոհ սրտով հեռանալ, մեր պարտքը կատարած համարելով։ Դուրս կը գանք այն ժամանակ, եթէ մեզ պատրաստ կը զգանք ուժին ուժով դիմադրելու»։ Ասում ենք նոյնպէս, որ դուք վախենում էք գուցէ, թէ ներկայ շարժումներով Կովկասի ընդդիմադրական եռանդը կարող է սպառւել, եւ կառավարութիւնը դիւրութեամբ գլուխ կը բերի մոբիլիզացիան։ Ի՞նչ ասենք, քանի որ դուք ոչինչ չէք գրում։

Սոցիալ յեղափոխականներից այդտեղ մի երկու կարեւոր ուժեր են եկել։ Պալշենստվօ-ն(3) *նոյնպէս մարդիկ է ուղարկում։*

Ձեզ համար դժւար չի լինիլ այդ երկուսի հետ միասին համաձայնութեան գալ։ Մենշեւստվօ-ն(3) *երեւի զուռնաչիների*(4) *հետ կը լինի։ Գուցէ զուռնաչիներն են պատճառ եղել, որ սկսւած նախնական բանակցութիւնները ընդհատւել են։*

Եւրոպայի տրամադրութիւնը շատ նպաստաւոր է Ռուսաստանի յեղափ. շարժման նկատմամբ։

Սպասում ենք լուրերի։

1.- Միաժամանակ Թիֆլիս (Մեծ Քաղաք) եւ Պաքու (Ոսկանապատ) ուղարկուած նամակ.
2.- Խօսքը կը վերաբերի Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեանի նշանակած պատուիրակութեան անդամ եպիսկոպոսներուն (Այվատեան Սահակ եւ Սարաճեան Յովսէփ):
3.- Ռուսերէն՝ Պալշենստվօ՝ Պոլշեւիկ կուսակցութիւնը. Մենշեւստվօ՝ Մենշեւիկ կուսակցութիւնը:
4.- Հնչակեաններուն:

440

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, *էջ* 187-89

Ուղարկուած փետր.-ին [1905] K.C.-*ի հասցէով*

Մ. Ք.(1)

Ստացանք ձեր հեռագիրը։ Երեւի տեղեկութիւններ էք ուզում շարժումների մասին։ Յունուար 24-*ի մեր նամակից արդէն իմացած կը լինէք նախնական տեղեկութիւնները, որ մենք վերապահութեամբ հաղորդեցինք (դրանից առաջ գրուած է նամակ տիկնոջ հասցէին յունուար* 19-*ին)։*

Շարժումների մասին առաջին լուրերը խիկապէս չափազանցրած դուրս եկան։ Ֆինլանդիան չի ապստամբել, իսկ Լեհաստանի խռովարարները սահմանափակել են բանւորական ցոյցերով, թէեւ այս անգամ շատ ուժեղ։ Այնպէս որ Կովկասի շարժումներն էլ հաւանական է կրեն մասնակի կերպարանք, եթէ վրացի գիւղացիները չմասնակցեն, որ բաւական հաւանական է։ Ի միջի այլոց, կարծենք «Սակարտվելոյի»(2) *վրայ մեծ յոյսեր դնել չպէտք է։ Նրանց կազմակերպութիւնը գլխաւորապէս ինտելիգենցիայի մէջն է։ Բանւորների մէջ ոչինչ չունեն, ուրեմն շարժումների ժամանակ շատ շատ օժանդակի դեր միայն կատարեն։ Փորձեցէք մօտենալ աւելի բանւորական կուսակցութիւններին։*

Ինչպէս գրեցինք եւ Ոսկանապատ, բոլոր կուսակցութիւնները մեծ պատրաստութիւններ են տեսնում եւ առաջիկայում սպասւում է աւելի ուժեղ բռնկում, զինուած։ Նոյն իսկ խաղաղ սոցիալ դեմոկրատները զէնքից են խօսում։ Բոլորն էլ լարում են իրենց ուժերը, բաւական քանակութեամբ երիտասարդներ գնում են այստեղից։ Փողոցները ընկած հանգանակութիւններ են անում «ճանապարհածախս» հաւաքելու համար։ Մի երկուսին էլ մենք նպաստեցինք։ Պալշենստվօ-*ի*(3) *անդամներից մէկին կողմնակի կերպով տւինք* 40 fr., *երէկ էլ մի վրացու խոստացանք տալ* 150 fr.: *Եթէ դրանք ունենային մեր միջոցները*! … *փողը պակասեցնում է մեր յեղափոխական եռանդը… Այսօր հեռագրների մէջ կարդացինք, որ Թիֆլիզում գործադուլ է հրատարակւել։ Հաւանական է Բաթում էլ լինի։ Յուսով ենք, որ Բագւայ փորձը լաւ խրատ կը լինի։ Քանի որ ի վերջոյ քարշ ենք գնալու միւսների եաեւից, քանի որ միեւնոյնն է, սպառելու ենք մեր ուժերը, աւելի լաւ չէ՞, որ հէնց սկզբից մասնակցենք։*

Այս անգամ էլ դառնում ենք հին մեր խնդիրներին, օրը օրին տեղեկութիւններ տալ անցած դարձածի մասին, թէ այստեղ եւ թէ Բաթում։ Պէտք չկայ այդ լուրերը գաղտնի թանաքով գրել, մանաւանդ Բաթումից։ Եթէ Աստուած սիրէք, մէկ էլ ենք խնդրում լուրջ ուշադրութիւն դարձրէք։ Չէ՞ք ամաչում։ Ձեր վերջին նամակը ստացւել է նոյեմբ. 16-*ին, ուրեմն երկու ամիս ու կէս առաջ*!…

Վերջապէս ի՞նչ եղաւ մեր «Խորհուրդը»։ Եթէ առաջ եկած բարդութիւնների պատճառով չէք կարողանալու մարդ ուղարկել, գրեցէք։ Բայց գոնէ հաշիւները ուղարկէք։

1.- Մեծ Քաղաք – Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղարկուած նամակ:
2.- Վրացական սոցիալիստ-ֆեդերալիստներ, հիմնուած 1904 թ. Ապրիլին:
3.- Ռուսատառ:

441

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 21-23

փետր. 3

ՇՈՅ

Սմբատին(1)

Քո վերջին տեղեկութիւնները, մանաւանդ Վարդանի նամակը մեզ վրայ այն տպաւորութիւնը թողին, որ պէտք է ոչինչ համարել արդէն եղածը եւ սկսել նորից ու քչից։ Դա ի՞նչ խայտառակ միջավայր է եղել, եւ որքան մեծ սխալ է եղել գումարներ ցրելը այլ եւ այլ կէտերում։

Սարհատի ուղարկած հաշիւները նոյնպէս մխիթարական չեն։ Անձնական ծախքերը համեստ համարել չի կարելի։ Գուցէ Յուցականի անդամների օրինակից է ազդուել։ Բայց նա մոռանում է մի հանգամանք։ Յուցականի գործունէութիւնը այն տեսակի է, որ ժամանակ շահելու համար ծախք կարելի է չխնայել։ Նրանց արած ծախքերի մեծութիւնը դատապարտելի է նոյնպէս, ի հարկէ, յեղափոխական տեսակէտից, բայց մասամբ ներելի է աչքի առջեւ ու[*նենալով*] *Յուցականի ծրագրի* բնոյթը, *իսկ եթէ ներկայ նախապատրաստական շրջանում Լեռնավայրի անդամները ընթանան ծախքերի նոյն ճանապարհով, միլիոնները քիչ են։ Պէտք է միջոցներ ձեռք առնել, որ դրամի շատութիւնը, ուրեմն գործելու աւելի մեծ դիւրութիւնը չգնայ ի հաշիւ յեղափոխական եռանդի եւ զոհողութեան նւազեցման։ Սարհատին անյարմար համարեցինք մեր կողմից նկատողութիւն անել, միայն յայտնեցինք* 1) *որ իր հաշիւների պատճէնները ուղարկի ձեզ* 2) *գործի կարգադրութիւնների մասին նոյնպէս ձեզանից հրահանգ ստանայ։*

Աւոյի(2) *մասին հաղորդածդ մխիթարական է, բայց չլինի թէ հասկացել է քո թոյլ կողմը, կամ ինչպէս ասում են «ատամներդ համրել է» եւ սկսել է դիտմամբ քո ոգով քարոզներ կարդալ... Յամենայնդէպս նրա վերաբերեալ աւելի լաւ է չշտապես կարգադրութիւններ անել, յանկարծ մի ուրիշ բան դուրս չգայ։*

Թռուցիկի համար ի զուր իրարանցման մէջ ես ընկել։ Էլ խօսք ասող չկայ։ Եկել է, աշխատում է դպրոց մտնել։

Մի քանի օր է, այստեղ է եկել Շապոլնիկովը (*եղբայրը վաղուց է այստեղ*)։ *Նա ցաւ յայտնեց, որ ընտանեկան պատճառներով* (*տանը բոլորն էլ հիւանդ են*) *չպիտի կարողանայ մօտ ապագայում գործի մտնել։ Բաւական տեսնուեցինք, խօսեցինք։ Այս երեկոյ նորից տեսնուելու ենք։ Եղբայրը պահեստի սպայ է, չի ուզում Ռուսաստան գնալ։ Փախչում է Ալժիր։ Այնտեղից նա իր կենդանաբանական հետազօտութիւնները կ՚ուղարկի Բերլինի ակադեմիային, որից յոյս ունի պաշտօն ստանալ իր հետազօտութիւնները շարունակելու Տաճկաստանում։ Ինքը լաւ կենդանաբան է։* 49, 52, 74, 23, 25, 18, 26-*ը*(3) *մտադիր է իրեն խոհեմ պահելով յաջողել փոխադրուել մի համեմատաբար աւելի ազատ վայր, որտեղից դիւրին կը լինի նրան բերել տալ։*

Նեգատիւներդ ստացած են, միայն գործածքն էր, որ պակաս էր։ Լուսանկարը ուղարկեցինք Բորիսին(4)։ *Դրամական օգնութիւն չարի՞ր։*

Տիրանը հիմա Եգիպտոս է։ Երբ գայ, Վարդանին կանչիր եւ մի ընդհանուր ծրագիր կազմէք։

1.- Ս. Զաւարեանին ուղղուած նամակ, Պէյրութ (Ծոց): Վարդանը՝ Մեհրաբեան Սարգիս, Խանասորի արշաւանքին հրամանատարն է:
2.- Աւոն Երզնկայէն էր եւ ատենօք գործակցած Տերսիմի Քեռիին (Ռուբէն Շիշմանեան) հետ. այժմ կը գտնուէր Այնթապ: Գնահատելով անոր նուիրուածութիւնը, Ս. Զաւարեան փափաք յայտնած էր, որ ան առնուի Լեռնավայր-Կիլիկիոյ Պատ. մարմնի մէջ:
3.- Գործածուած ծածկագրին բանալին մեզի ծանօթ չէ:
4.- Բորիսը ծածկանունն է դաշնակցական հին գործիչներէն Սմբատ Խաչատուրեանի:

442

Պատճէններու մատեան No 88, *էջ* 392

1905 *փետր.* 4

Պ. Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

«*Անատոլիի*» *մասին արդէն գրուած է Նաւահանգիստ*(1)։ *Կրկին անգամ տուել ենք ձեր հասցէն, որ ուղղակի ձեզ յայտնեն ապրանքը ստանալու կամ չստանալու մասին։*

Ֆրանսիսկաններին պէտք այլեւս չունինք։ Նորերս ձեռք բերինք 4 *հատ* 3-5 (?) fr.-*ով իւրաքանչիւրը։ Սրանով արդէն փակւում է եւ իտալականների խնդիրը։*

«Bithynie»-*ի*(2) *մասին նոր տեղեկութիւն չունինք։ Ինչպէս նախորդով էլ գրել էինք, հաւանական է, որ ստացած լինին։*

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի:
2.- Bithynie, ինչպէս Անատոլի՝ Պաթումէն Մարսէյլ երթեւեկող նաւեր են:

443

Պատճէններու մատեան No 88, *էջ* 394

1905 *փետր.* 4

Հ.Յ.Դ. Սլիվէնի(1) *ենթակոմիտէին*

Յարգելի ընկերներ,

Ստացանք ձեր 18 *յունւ. նամակը։ Համաձայն արդէն ընդունուած որոշման մենք տպագրութեան ենք յանձնում միմիայն այն ցանկերը, որ ստացւում են կենտրոնական կոմիտէի միջոցով։ Ուստի թէ նոր ցանկի համար եւ թէ հնից մնացած* 55 fr. *գումարի համար խնդրենք դիմել Պալք. կենտրոնական կոմիտէին։*

«*Դէպի կռիւ*» *գրքից կ՚ուղարկենք ձեզ* 5 *օրինակ. Գոլոշեանի կենսագրութիւնը դեռ պատրաստ չէ։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Սլիվէն – քաղաք Պուլկարիոյ մէջ:

444

Պատճէններու մատեան No 88, *էջ* 395

1905 *փետր*. 8

Պ. Մարզպետունուն(1), *Ֆիլիպէ*

Յարգելի ընկեր,

Սիմոնին(2) *ուղղած ձեր նամակը անյարմար ենք գտնում ուղարկել. կը յայտնենք միայն պարունակութիւնը եւ պատասխանը ժամանակին ձեզ կը հաղորդենք։*

Եթէ Բիւրոն չուղարկեց ձեզ Վարդի(3) *հեռագրի պատճէնը, դրա պատճառը անուշադրութիւնը չէր։ Նա չէր ուզում ոչ մի կերպ խառնւած լինել ձեր ներքին երկպառակտումներին։ Իսկ ընկեր Ռոստոմի խօսքերը ձեր «առաջ գնալու» մասին վերաբերում են ո՛չ թէ ձեր արած ընդհանուր դիտողութիւններին, այլ — ինչպէս կը տեսնէք նամակը նորից կարդալուց յետոյ — ձեր մասնաւոր կասկածին դէպի Պ. Վարդը, երբ սա պնդելիս է եղել, թէ Կ. Կ. անդամների հրաժարականի մասին խօսք չի եղել իր ուղարկած հեռագրի մէջ։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Մարզպետունի – ծածկանուն Ղազարոսեան Ղազարոսի (1878-1918):
2.- Սիմոնը՝ Ջաւարեանն է:
3.- Վարդը՝ Վարդ-Պատրիկեան Յակոբն է:

445

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 24

8 *փետր*[*ւար*]

ՎԻՇԱՊ(1)

Ստացանք ձեր հեռագիրը. վաղը կ՝անենք չէկերը եւ կ՝ուղարկենք։

Այսօր եկան Համոն եւ Պարոյրը։ Սպասում ենք նաեւ Մարգարին։ Եթէ ներկայացուցիչ ուղարկելու լինէք(2), *հեռագրէք Պարիզ* Oui, *հետեւեալ հասցէով* Grégoire Foun, Bertholet, 20, Paris.

1.- Պոլիս՝ Յուցական մարմնին ուղարկուած նամակ:
2.- Կ՝ակնարկուի Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին Յուցականի կողմէ ներկայացուցիչ ուղարկելուն: Յիշատակուածներէն Համոն՝ Օհանջանեանն է, Պարոյրը՝ Անդրանիկը, Մարգարը՝ Ժամհարեան (Մռաւ):

446

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 27

Ռոստոմի ձեռագրով երկտող, որ աւելցուած է Յար. Գալֆայեանի գրչին պատկանող եւ 1905 թ. Փետրուար 9-ին Մուշ ուղարկուած նամակի մը, ուր կը պահանջուի չափազանցուած տեղեկութիւններ չտալ Սասնոյ մէջ գործուած աւերածութիւններու եւ սպանութիւններու մասին:

փետր. 9

Մուշ(1)

Խնդրենք շուտով յայտնել, թէ ինչ զէնքեր են առնուած Սասնոյ ժողովրդից, կա՞ն նրանց մէջ արդեօք կազմակերպութեան հրացանները։

1.- Յարութիւն Գալֆայեանի ձեռագրով: Միայն վերջին երեք տողերը Ռոստոմի ձեռքով աւելցուած են:

447

Պատճէններու մատեան No 88, *էջ* 398

1905 *փետր.* 10

Կարապետ Պիոնեանին, Ֆիլիպէ

Յարգելի ընկեր,

Մինչեւ հիմա մեզ յայտնի չէ ոչ նորընտիր Կ. կոմիտէի(1) *կազմը եւ ոչ վայրը։ Միայն ընկեր Յ. Ադամեանի նամակից իմացանք, որ ընտրուածների մէջ դուք եւս կաք։ Այս պատճառով դիմում ենք ձեր միջոցով նորընտիր Կ. կոմիտէին եւ խնդրում ըստ կարելոյն շուտով հասցնել մեզ ձեր բայոնական ժողովի արձանագրութիւնը, ինչպէս նաեւ շրջանի հաշիւները։*

Նոյն նամակից իմանում ենք, որ Վարդը հրաժարւում է յանձնել մեզ 6,000 fr. *չափ մի գումար, որ մնացած է եղել նրա ձեռքին։ Խնդրում ենք այս մասին շուտափոյթ տեղեկութիւն հասցնել մեզ։*

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՕ

1.- Հարցը կը վերաբերի Պալքանի Կեդր. կոմիտէին:

448

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 28-30

փետր. 11ին

ՇԱՄ(1)

Ստացել ենք ձեր նոյ. 30 նամակը։

Հաստատում ենք մեր յուն[ւար] 9 նամակը։

Ձեր ներկայացուցչի գալու մասին հակասական լուրեր են հասնում։ Վերջին տեղեկութիւնն է, թէ ձիւների պատճառով Կոմսը չի կարողանալու գալ։ Սրանով յայտնում ենք, որ եթէ մինչեւ այս նամակիս ստանալը քաղաքից դուրս գալու հնարաւորութիւն չի եղել, աւելորդ է այլեւս գալը, որովհետեւ «Խորհուրդը» կայանալու է ամենաշատը մի շաբաթից յետոյ։ Հեռագրեցինք Վրէժ(2) *ուղարկել մեզ եւ անմիջապէս այն երկու ծրարները, որ Կոմսը պատւիրած է եղել չբանալ մինչեւ իր հասնելը։ Եթէ այդ ծրարների մէջ չկան մանրամասը ցուցմունքներ շարժման կարեւոր կէտերի մասին, խնդրենք անպատճառ մեզ հասցնել. չմոռանաք նաեւ քաղաքի եւ շրջակաների յատակագիծը, նշանակելով այն կէտերը, ուր կան զօրքեր (նրանց թիւը), ամրոցներ, հայ եւ մահմետական բնակութիւններ, ճանապարհներ, որոնցով կարող են օգնական զօրք ուղարկել եւ այլ անհրաժեշտ տեղեկութիւններ... միեւնոյն բանը միւս կէտերի վերաբերմամբ։*

Քաղաքական աշխարհը ամբողջովին կլանուած է ռուս-եապոնական հարցով եւ Ռուսաստանի ներքին խռովութիւններով։ Հաւանական է երկու երեք ամսից յետոյ ռուսական շարժումները վերսկսուեն աւելի մեծ թափով եւ պատրաստութիւններով։ Կովկասը նոյնպէս արձագանք կը տայ։ Անհրաժեշտ կը լինի ուրեմն ապահովել նախօրօք ձեր կարիքները, որպէսզի կովկասեան շարժումները չխանգարեն ձեզ։ Ռուսաստանի յեղափոխութիւնը, եթէ յաջող ելք ունենայ, զգալապէս կ'ազդի մեր հարցի վրայ։ Առհասարակ պատերազմի վախճանից բաւական բան է սպասւում։

Եթէ միսիոնարների շրջանում համակիրներ ունէք, նրանց հասցէով կ'ուղարկենք Դրօշակ փակ ծրարով, իսկ եթէ չուզենան, Pro Arm[enia] *կամ եւրոպական թերթերից կտրօններ մեր հարցի վերաբերմամբ։ Փակ ծրարներով, Գերմանիայից կամ Աւստրիայից փոստը ճգած, ամէն բան կարող է ապահով տեղ հասնել։*

Կարող էք օգտւել նրանց հրատարակած Mitteilungen aus dem Orient *հանդէսից, որ անպատճառ ստանալիս կը լինեն այդտեղ։ Եթէ Դրօշակի կամ* Pro Arm[enia]*ի մի համար ձեռք ճգէք, կարող էք կարեւոր տեղերը քաղուածօրէն հեկտոգրաֆի*(3) *միջոցով տարածել։*

Վ[անի] Ֆր[անսական] հիւպատոսի վարմունքը պարզւեց։ Դելկասէն մի բացատրութիւն էր ուղարկել Պրեսանսէին։ Ուշանալու պատճառը եղել է այն, որ հիւպատոսը ձմեռուայ պատճառով չի կարողացել անցնել Սասուն։ Սպասել է գարնան գալուն, որպէսզի իր ձեռքով կատարի բաշխումները։ Դա եղել է մասնաւորապէս դեսպանի (Larsens?) *փափաքը։*

Օտար տարրերի հետ համերաշխութեան պայմանները կը մշակենք Խորհրդի ժողովում։

Տեռորների ցանկը յայտարարեցինք. բացի վարդապետի(4) *եւ իր քարտուղարի տեռորից։ Սպասում ենք դրանց վերաբերեալ ձեր բոլոր փաստերին։*

Մեսրոպեանի հասցէով ոչինչ չենք ստացել։ Կը հարցնենք։

15, 9, 31, 9, 5, 12, 9, 6, 11 (5) *հետ երբ վերջնականապէս պայմանաւորուենք, ձեզ կը հաղորդենք։*

Եթէ սրանից յետոյ Աբտրահման բէյին(6) *նամակ գրելու լինեն, թող գրեն տաճկերէն։ Պարսկաստան գալուց վախենում է։ Հրաւիրելու ենք մօտ օրերս մեզ մօտ բերանացի խօսելու։*

Սրանից յետոյ մեր բոլոր նամակները բացէք Ness……(7) *Միայն այս գաղտնիքը մի հոգի իմանայ։*

1.- Վան ուղարկուած նամակ։ Կոմսը ծածկանունն էր Փափազեան Վահանի։
2.- Վրէժը Թաւրիզն է, Ատրպատականի Կեդր. կոմիտէն։
3.- Տպագրական բազմացնող սարք։
4.- Աղթամարի կաթ. փոխանորդ Արսէն վարդապետն է։
5.- Վաճառականին։ Ծածկագիրը կը բացուի «Որ մեռնում եմ կռիւ տալով քաջի պէս» ոտանաւորի բառերով։
6.- Եւրոպա ապաստանած քիւրտ ցեղապետ, Դաշնակցութեան բարեկամ։
7.- Գաղտնագիր նամակ բանալու դեղատոմս մը ըլլալու է։

449

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 189-90

փետր. 13 (1)

ՈՍԿԱՆԱՊԱՏ

Եկան վերջապէս Համոն եւ Պարոյրը(2)։ *Իմաց տուինք ուրիշ տեղեր։ Հաւանական է, մի շաբաթից յետոյ սկսենք կանոնաւոր պարապմունքները*(3)։

Համոն մոռացել է Շամի ծրագիրը հետը բերել։ Անմիջապէս գրէք եւ ուղարկէք։

Շատ ուրախացանք Արեգնազանի(4) *յաջողութեան։ Թող գնացողները չմոռանան* 1) *զոհերի իսկական թիւը իմանալ, ճիշդ ցանկ կազմել, աչքի առաջ ունենալով միշտ, որ ստանալու են բոլորովին գոյութիւն չունեցած ընտանիքների եւ անձերի անուններ, որոնք իբր թէ կոտորուել են*(5)։

2) *Առանձին նպաստներ տալ կողմնակի միջոցներով Հրայրի*(6) *եւ ուրիշ ընկերների ընտանիքներին։*

3) *Մշոյ նամակներից երեւում է, որ ծանր հարկեր են առնում այն գիւղերից, որոնք թալանւած են եղել, բայց քիչ միչ նպաստ են ստացել։ Եթէ կարողանան այնպէս անել, որ իրենց տուած նպաստներով չլիանան պաշտօնեաները!…*

Տատրակի(7) *իմացած ճանապարհով խնդրում ենք յաճախ մեզ տեղեկութիւններ հաղորդել։*

Այսօր մեր ծանօթներից մէկը Եղ. Մատ……[?] *յայտնեց մեզ, որ հակառակ իրենց պնդումներուն, թէ իրենք վճարել են Դաշնակցութեան, հնչակեանները շարունա-*

կում են պահանջել սպառնալիքով։ Խնդրում է, որ մի միջոց ձեռք առնենք։ Տեսնուեցէք նախօրօք հօրը հետ եւ եթէ հնչ[ակեանները] շարունակում են սպառնալ, ազդարարեցէք հնչակեաններին ինչպէս հարկն է։ Նրան ճանաչում է Ն. Գ.-ը։ Համոյի կարծիքով ազդարարել պէտք է Խաչ. Վարդանեանի միջոցով, որին կարելի է խօսք հասկացնել։

1.- Պաքու ուղղուած նամակ։ Թուականի (Փետրուար) 9-ի վրայ գիծ քաշուած եւ 13 գրուած։ Նամակի աւարտին եւս՝ սեւ բանձր մատիտով՝ *«Ուղարկուած փետր. 13-ին Չոփուռեանի հաց[էին]»*։

2.- Համոն՝ Օհանջանեանն է, անդամ Արեւելեան բիւրոյին, Պարոյրը՝ Անդրանիկ, հայդուկապետը։ Շամը, ինչպէս գիտենք, Վանի ծածկանունն է։

3.- Ակնարկութիւնը Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին է, որուն մասնակցելու համար եկած էին Հ. Օհանջանեանն ու հայդուկապետ Անդրանիկը։

4.- Արեգնազանը բժ. Յ. Զաւրեանն է, որ յաջողած էր արտօնութիւն ստանալ Տարօն անցնելու՝ Սասնոյ կռիւներուն ընթացքին վիրաւորեալներուն բժշկական խնամք հասցնելու համար։

5.- Խօսքը կը վերաբերի 1904 թ. Սասնոյ ապստամբութեան ժամանակ աղէտեալ ընտանիքներուն նպաստ բաշխելուն։

6.- Հրայր-Դժոխքի։

7.- Գեղամ Տէր Կարապետեան։

450

Պատճէններու մատեան No 88, *էջ* 399
(*Փաստ.* 46-55)

1905 *փետր.* 14

Թափառիկին, Ալէքսանդրիա

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր փետր. 3 *նամակը հաշիւներով միասին։*

Հաստատում ենք մեր փետր. 4 *նամակը։*

Եթէ որեւէ խնդիր ունէք «Խորհրդին» ներկայացնելու, խնդրենք չտապել։ Ինչո՞ւ Ալէքսանդրիայի եւ Գահիրէի մարմինները չեն պատասխանում իրենց ուղղած հարցերին։

Ձեզ մօտ գտնուած դրամներից խնդրենք օգնել օր. Զարուհուն(1), *փոխարէնը կը ստանանք «Կարմիր Խաչից»։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ներփակ նամակը ուղարկէք ընկեր Մարին(2)*։*

1.- Զարուհին քոյրն էր յեղափոխական անուանի մարտիկ Տէրոյեան Տիգրանի (Վազգէն), նահատակուած 1898-ին։ Զարուհին, որ եղած էր անդամ Վասպուրականի Կեդր. կոմիտէին, կը գտնուէր աքսորի մէջ Երուսաղէմ։

2.- Մար – ծածկանուն Տէր Մարտիրոսեան Միքայէլի (1869-1931)։

451

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 31

ՏՐԱՊԻԶՈՆ(1)

Մեզ յայտնում են, որ Բագառիճ գիւղի (Կամախի) մասնախումբը, Վիշապ անուն[ով] յայտնի, այժմ քայքայուած լինելով զէնքերը եւ փամփուշտները փչանում են։

1.- Ռոստոմի ձեռագիր, «գրեելիք» նշումով:

452

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 32, 34, 35

ԾՈՑ
Սմբատին (1)

Հաստատում ենք փետր. 3 մեր նամակը։

Մարզպետունին(2) *իր թեկնածութիւնը դնում է Լեռնավայրի համար եւ ուզում է իմանալ քո կարծիքը թէ որքան նա յարմար է ձեր գործի համար, եւ ինչ կարող է կատարել։*

«Դաւիթ բէկ» ձեզ ուղարկուած է 6 փետր[ուարին]։

Մարթինի վերաբերեալ հետեւեալն է խնդրում հաղորդել ձեզ Յուցական մարմինը։

(*Արտագրել...*)(3)։

Ծոցից այստեղ եկած մի երիտասարդից իմանում ենք, որ տեղումդ կարելի է գտնել մարդինի հրացան 60 fr.*ով, ինչպէս նաեւ պայթուցիկ նիւթեր։ Միթէ՞ ճիշտ է, չենք հաւատում, բայց եւ այնպէս ուշադրութիւն դարձրէք եւ տեղեկացէք։*

Այս բանը յայտնուած է եղել Յօշանին։ Յետոյ, ինչո՞ւ է Շատիկեանը սրան յայտնում, թէ Սարհատը(4) *գացել է զէնք գնելու։ Որքան էլ վստահելի լինի երիտասարդը, ի՞նչ պէտք կայ յայտնելու։ Լաւ չճանաչելով սրան, չենք կարողանում պարզ խօսել ձեր գործերի մասին եւ յանձնարարութիւններ անել։ Թէեւ եթէ ժամանակը ներէր, կարելի էր մի քանի բան սովորեցնել եւ բերել տալով նոր նիւթը (Ժէդուզ է նրա անունը), սրա ձեռքով ուղարկել։ Այդ նիւթը արտաքին տեսքից բոլորովին անմեղ մի բան է. կարելի է իբր ատամ մաքրելու դեղ ուղարկել դեղարանների,* Droguerie-*ների հասցէներով, իսկ իբր մետաղ մաքրող, մետաղեայ ամաններ, իրեր ծախողների հասցէին։ Բայց եթէ նաւի խնդիրը կանոնաւորէք, կարելի է մաս մաս Մարսէլից փոխադրել բերտոլեան աղի հետ միասին։ Պատրաստելու ձեւը, կը բացատրենք նամակով, հեշտ է։*

Այստեղից գնացած երիտասարդը մտադիր է Ծաղիկ(5) *մտնել։ Աթէնք չգիտենք, թէ որքան յարմար է (Տիրանն էլ այնտեղ չէ)։ Աւելի լաւ է, եթէ ժամանակը ներում*

է, Տիրանը անցնի Բուլղարիա եւ այնտեղ հարկ եղած բաները սովորի։

Կարող է եւ այստեղ մեզ հանդիպել։ Ժ[ակ] Լեւոնը(6) *հիմա Եգիպտոս է։ կը գրենք նրան, որ իր իմացածները սովորեցնի։ Շուտով յոյս ունենք, որ մի լաւ մասնագէտ մեզ մօտ գայ։ Եթէ գալու լինի, բերել կը տանք մի քանի երիտասարդներ սովորեցնելու համար։*

Կոմսը չկարողացաւ դուրս գալ ձիւների պատճառով։

Հիմա այստեղ են Համոն, Մարգարը, Անդրանիկը։ Հեռագրով հրաւիրեցինք Մարին, սպասում ենք Ցուցականի ներկայացուցչին, որպէսզի կանոնաւոր նիստերը սկսենք։ Դու ..... էին(7)*։*

Անդրանիկը լաւ տպաւորութիւն է ստեղծել [որպէս] դրական մարդու։ Այստեղ է եւ յայտնի Գապոնը(8)*։ Վաղը մեզ մօտ է խոստացել գալ։ Ծածկւում է։ Տպաւորութիւնները կը հաղորդենք։ Կուսակցականների համերաշխ գործունէութեան մի նոր փորձ կայ։*

1.- Պէյրութ գտնուող Սիմոն Զաւարեանին հասցէագրուած այս նամակը անթուակիր է. պէտք է գրուած ըլլայ Փետրուարի (1905) կէսերուն: Գրութեան մէկ մասը, կամ անոր պատճէնահանուած օրինակը տեղ-տեղ աղաւաղուած է (կիտաւոր):

2.- Մարզպետունի, աւելի ուշ ծանօթ Մարզպետ ձեւով, գործիչ էր Ատրպատական, աւելի ուշ Պիթլիսի շրջանին մէջ: Իսկական անունն է Ղազարոսեան Ղազարոս:

3.- Մարթինը (Մուրատեան) հրաժարած ըլլալով Իզմիրի օժանդակ մարմնէն, կ՝առաջադրէր իբրեւ գործիչ անցնիլ Կիլիկիա, իսկ Լեռնավայրի Պատ. մարմինը կը պահանջէր Իզմիրի (Ոսկեհանք) գործերուն մէջ իր անմեղութեան մասին վկայող փաստաթուղթ մը Ցուցական մարմնէն: Ռոստոմի այս նամակին կցուած է այդ վկայագիրը(No 48-3, էջ 33) Ցուցականի կնիքով: Ծանօթագրութիւններու աւարտին կու տանք նաեւ ամբողջութիւնը եւ պատճէնը Քրիստափորի ձեռագրով գրուած եւ ցարդ անտիպ այդ նամակին:

4.- Երեքն ալ Լեռնավայր-Կիլիկիոյ երիտասարդ գործիչներէն: Յօշանի իսկական անունը Պաղտոյեան Ներսէս է: Շատիկեանը (Պօղոս) տրապիզոնցի է, իսկ Սահիրատը (Յակոբեան) ծանօթ է նաեւ Իզմիրէն՝ Ցուցականի գործերով:

5.- Ծաղիկ – կրճատումը Կռուածաղիկի – ծածկանունն է Պոլսոյ:

6.- Ժակ-Լեւոնը (Լեւոն Նեւրուզ Թորոսեան) Պոլսոյ հին գործիչներէն էր եւ մասնագէտ պայթուցիկներու: Հրաւիրուած էր մասնակցելու Ցուցականի գործին (Սուլթանի մահափորձ):

7.- Յիշուած անուններէն Կոմսը՝ Վահան Փափազեանն է, Վանի գործիչներէն, Համոն՝ Օհանջանեանն է Արեւելեան բիւրոյէն, Մարգարը՝ Ժամհարեան Կովկասի ինքնապաշտպանութեան մարմնէն, Անդրանիկը՝ Սասնոյ ապստամբութեան ծանօթ հերոսը, իսկ Մարը՝ Միք. Տէր Մարտիրոսեան Կիլիկիոյ հին գործիչներէն, որ 5 տարուան բանտարկութենէ ետք (Մարաշ) անցած էր Եգիպտոս կազդուրուելու համար եւ հիւանդութեան պատճառով պիտի չկարենար մասնակցիլ «Խորհուրդ»ի նիստերուն:

Վերոյիշեալները հրաւիրուած էին մասնակցելու Դաշնակցութեան Խորհուրդի նիստերուն: Յաջորդող երեք տողերը անընթեռնելի են:

8.- Գէորգի Գապոն՝ ռուս յայտնի յեղափոխական, նախկին քահանայ:

Լեռնավայրի Պատասխանատու մարմնի ընկերներին

Մարքինի Ոսկեհանքից հեռանալու մասին ձեր դրած հարցի վերաբերմամբ՝ սրանով գալիս ենք յայտնելու, որ Մարքինը անյաջողութեան հանդիպելով Ոսկեհանքում, իսկապէս զոհ հանդիսացաւ այնտեղի մի-երկու անձնաւորութիւնների անսանձ ամբարտաւանութեանը միայն: Իսկ Մարքինը ընդհակառակը Ոսկեհանքում անցկացրած ժամանակի բոլոր ընթացքում բացի պարզած տրամադրութիւնից դէպի գործը եւ յանուն համերաշխութեան ամէն տեսակ զիջողութիւնների պատրաստականութիւնից՝ ոչ մի առիթ չտուեց մեզ դժգոհ լինելու նրանից:

Ահա ինչու կարծում ենք, որ Ոսկեհանքի դէպքը բնորոշ չէ Մարքինի համար եւ որ նա կարող է օգտակար լինել երկրում ընկերական լաւ մթնոլորտի մէջ:

Ընկերական ջերմ բարեւներով
(Կնիք Ցուցական մարմնի)

Յ. Գ.– Ներկայ վկայութիւնը տրւում է Ցուցական մարմնի բոլոր հինգ անդամների միաձայն հաւանութեամբ:

ԷԼԼԷՆ



453

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, *էջ* 191

Մ. Ք.(1)

Ստացանք ձեր յունուար 24-*ի եւ* 22-*ի նամակները։*

Տեղեկութիւններ հաղորդէք 1) *Կովկասի որ վայրերում են բնակեցրած ռուս գաղթականները*, 2) *իւրաքանչիւր տեղ որքան* 3) *Ռուսաստանի որ նահանգներից են գաղթում։ Դա անհրաժեշտ է ռուս յեղափոխականների համար, որպէսզի նրանք իմանան, թէ ուր պրոպագանդ անեն չգաղթելու համար*, 4) *որ վայրերում են զօրեղ միւլքատարները 5) ուր առաւելապէս տանջւում են սակաւահողութիւնից։* 6) *Որտեղ եւ որքան հող են խլել հայերից կամ միւսներից։*

Ինչով վերջացրիք Քէքէջեանի եւ Արսէնի խնդիրները։

Թղթակից գտա՞ք։

Ռաշիդի(2) *մասին կը գրենք Սոֆիա։ Կ՝անեն, ինչ կարող կը լինեն։*

Շատ ցաւում ենք, որ մեր հեռագիրները չէք հասկացել։ Բա էլ որ օրի համար էր Սարսափը(3) *այստեղից բառարան տարել։ Խ-ը*(4) *յիշեցնում է նրան, որ բառարանը նա արտագրել է իր ծոցի տետրակում։*

Ուղարկէք Քարի(5) *զէնքերի հաշիւները* (Համոյի կնոջ միջոցով):

1.- Կողքին՝ «Ուղարկած 15-ին [փետրուար]», իսկ էջին վարը փակագծի մէջ՝ «Համոյի կնոջ միջոցով»:

2.- Ռաշիդ – Տէր Մաթեւոսեան:

3.- Սարսափի ինքնութիւնը ծանօթ չէ մեզի: Կրնայ գործածուած ըլլալ Յար. Շահրիկեանի համար, որ վերջերս Ժընեւէն վերադարձած էր Կովկաս:

4.- Խ-ը հաւանաբար Խաչատուրն է, Մալումեան (Է. Ակնունի)

5.- Ալեքսանդրապոլի:

454

Պատճէններու մատեան No 88, *էջ* 402-3

1905 *փետր.* 16

Լեռնեանին(1), *Բերլին*

Յարգելի ընկեր,

«*Խորհուրդը*» *կայանալու է մօտ ժամանակում։ Սպասում ենք ձեր արձանագրութեան։*

Խոսրով Խոսրովեան անունով մի երիտասարդ, որ Բերլին է գտնւում, սրանից երկու շաբաթ առաջ գրել էր մեզ, թէ իր հայրը՝ Մոզդոկի ծերունի քահանան, սպանւած է եկեղեցու դրանը։ Նա ուզում էր իմանալ, արդեօք յեղափոխական կոմիտէի գործն է դա, թէ անձնական վրէժխնդրութիւն։ Այդ մասին ոչ մի լուր չունենալով, մենք խոստացանք ճշմարտութիւնը իմանալ եւ հաղորդել։ II *Կ. կոմի-*

տէր(2) *պաշտ*[*օնական*] *յայտարարութիւնից հիմա իմանում ենք, որ իրաւ՝ այդ երիտասարդի հայրը տեռորի է ենթարկւած իբրեւ կառավարական գործակալ եւ մատնիչ։ Խնդրենք գտնել նրան եւ յայտնել իրականութիւնը։ Հասցէն՝* Berlin N. B. Kransen str. Br.

Ինք երիտասարդը լաւ տղայ է եւ նրա համար [1 *տող չպատճէնահանուած*] *իր հօր պատիժը. մենք մի բան կարող ենք անել, այն է՝ դիմել Կ. կոմիտէին, առաջարկելով տպագրութեան չյանձնել այդ դէպքը։*

Ընկեր[*ական*] *բարեւներով՝*
ԱՐԵԻՄՏ[***ԵԱՆ***] ***ԲԻԻՐՕ***

1.- Լեռնեան – ծածկանուն Նազարեանց Լիպարիտի:
2.- II Կ. կոմիտէն կը համապատասխանէ Ջրաբերդ-Կարսի Կեդր. կոմիտէին:

455

Պատճէններու մատեան No 88, *էջ* 407-8

1905 le 17 fév[rier]

Cher ami

Les quatre passeports, envoyés par vous, sont déjà reçus. Nos sincères remerciements.

Ci-joint vous trouverez un papier en russe, qui concerne une question urgente et importante. Il s'agit d'un de nos camarades, que vous connaissez personnellement, arrété il y a cinq mois sur la frontière russo-turque avec des bombes et portant le passeport bulgare, qu'il a malheureusement déchiré au moment de son arrestation. Dans son interrogatoire il insistait qu'il est sujet bulgare. Si cette assertion est prouvée, notre camarade sera simplement exilé dans le gouvernement d'Oufa. Dans le cas contraire les autorités russes soupçonnant qu'il ne soit pas un sujet russe, lui infligeront une punition beaucoup plus sévère.

Nous vous prions donc d'avoir l'obligeance de vous adresser à qui de droit pour obtenir les certificats nécessaires et de nous les envoyer le plus tôt possible.

Nos salutations fraternelles
RED[ACTION] DU "DROSCHAK"

Թարգմանութիւնը.—

1905, 17 *փետրուար*

Սիրելի բարեկամ,

Ձեր ուղարկած չորս անցագրերը ստացուած են արդէն։ Անկեղծ շնորհակալութիւններ։

Կից պիտի գտնէք ռուսերէն գրութիւն մը, որ կը վերաբերի ստիպողական եւ կարեւոր հարցի մը։ Ան կը վերաբերի մեր ընկերներէն մէկուն, զոր կը ճանչնաք անձնապէս. հինգ ամիսներ առաջ ան ձերբակալուած էր ռուս-թրքական սահմանին վրայ, ռումբերով եւ պուլկարական անցագրով, զոր դժբախտաբար պատռած էր

իր ձերբակալութեան միջոցին։ Իր հարցաքննութեան ընթացքին, ան պնդած էր որ պուլկարահպատակ է։ Եթէ այս հաւաստումը ապացուցուի, մեր ընկերը պարզապէս պիտի աքսորուի Ուրֆայի կուսակալութիւն։ Հակառակ պարագային, ռուսական իշխանութիւնները, կասկածելով անոր ռուսահպատակ ըլլալուն, շատ աւելի խիստ պատիժի մը պիտի ենթարկեն զինք։

Պիտի խնդրենք ձեզմէ հետեւաբար, որ յանձն առնէք դիմելու առ որ անկ է եւ ձեռք բերէք անհրաժեշտ վկայագիրները ու կարելի փութով մեզի ուղարկէք զանոնք։

Եղբայրական ողջոյններով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

456

Պատճէններու մատեան No 88, *էջ* 411

1905 le 18 févr[ier]

Cercle Coopératif Communiste
Chers camarades,

Nous accusons reception de votre lettre de 15 courant.

En vous remerciant bien cordialement pour votre invitation, nous tenons à vous exprimer notre regret de ne pas pouvoir assister aux séances de l'Administration du Cercle Coopératif Communiste. A l'avenir, quand nous serons moins occupés, nous profiterons de votre décision et participerons volontiers aux travaux de l'Administration.

Recevez, camarades, nos salutations fraternelles.

REDACTION DU "DROSCHAK"
Organe de la Fédération Révolutionnaire Arménienne.

Թարգմանութիւնը։—

1905, 18 *փետրուար*

Համայնավար կոոպերատիւ ակումբ
Սիրելի ընկերներ,

Ստացած ենք սիրով ընթացիկ [*ամսուան*] 15-*ի ձեր նամակը։*

Ջերմօրէն շնորհակալութիւն յայտնելով ձեր հրաւէրին համար, կը փափաքինք ցաւօք յայտնել, որ պիտի չկարենանք ներկայ գտնուիլ Համայնավար կոոպերատիւ վարչութեան նիստերուն։ Ապագային, երբ նուազ զբաղած ըլլանք, պիտի օգտուինք ձեր որոշումէն եւ սիրով մասնակցինք Վարչութեան աշխատանքներուն։

Ընդունեցէք, ընկերներ, մեր եղբայրական ողջոյնները։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի
Պաշտօնաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցութեան

457

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 36-37

փետր. 20

ՎԻՇԱՊ(1)

Ցուցականի կողմից «Խորհրդին» ներկայացուցիչ չուղարկելը մեզ դժւար դրութեան մէջ է դնում։ Աչքի առաջ ունեցէք, որ Շամից Կոմսը(2) *չի կարողացել գալ ձիւների պատճառով։ Լեռնավայրը*(3) *գրել է, թէ տեղական կազմակերպութիւնը այնքան զօրեղ չի համարում իրեն, որպէս զի «Խորհրդին» յատուկ ներկայացուցիչ ունենայ։ Նա նշանակել է Գալֆայեանին կիսա-պաշտօնական կերպով։ Մարը*(4) *հրաժարւեց գալ հիւանդութեան պատճառով, Գալֆան էլ առանց այն էլ այստեղ է։ Այնպէս որ եթէ ձեր կողմից մէկը չլինի, «Խորհուրդը» օրինական համարւել չի կարող, որովհետեւ Երկրի պատասխանատու մարմինների* 2/3 *ներկայ չի լինիլ։ Այս պատճառով հեռագրով խնդրեցինք այսօր Էլլէնին*(5), *որ այս հանգամանքը ձեզ իմացնէ։ Յուսով ենք, որ «Խորհրդի» համար եկածների դրութեանը* [*մէջ*] *մտնելով, անպատճառ մէկին կ՚ուղարկէք։*

Ուղարկելիս՝ հեռագրէք Պարիզի հասցէին։ Տւէք նոյնպէս մի հասցէ, որպէս զի Բերլինից կամ Պարիզից հեռագիրներ տանք անհրաժեշտ դէպքերում։

Թայինեանի(6) *խնդրի մասին կ՚ասենք միայն այն, որ չէկը Ցուցականին ուղարկելով, մենք թողնում էինք պատասխանատուութիւնը ձեզ վրայ։ Մեզ համար բոլորովին անսպասելի էր թէ Թայինեանի դիմումը ձեզ եւ մանաւանդ ձեր կարգադրութիւնը։ Առանց նախօրօք մեզանից հարցնելու մեր մերժման մոտիւների մասին, առանց ուզենալու ծանօթանալ նախընթաց պարագաների հետ, դուք յանկարծ որոշում էք կայացնում* 3000 fr. *«փոխ տալ» Թայինեանին։ Տալ այն ժամանակ* [*երբ*]*ոչ մի կերպ մենք չէինք կարող — պատճառների մասին կը խօսենք «Խորհրդի» ժողովում —, ձեր կարգադրութիւնն էլ չկատարել չէինք կարող, ուստի որոշեցինք ձեր պահանջած գումարի չէկը դնել Ցուցականի տրամադրութեան տակ, որպէսզի պատասխանատուութիւնից մենք ազատ մնանք։ Մեզ աւելի տարօրինակ թւաց Էլլէնի վարմունքը, որ զլացել էր գոնէ մի տող գրելու Թայինեանի դիմումի մասին։*

1.- Պոլիս (Վիշապ) ուղարկուած նամակ Ցուցական մարմնին:
2.- Շամ – ծածկանունն է Վան-Վասպուրականի. Կոմսը՝ Փափազեան Վահանն է:
3.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ:
4.- Մար – ծածկանուն Տէր Մարտիրոսեան Միքայէլի (1869-1931):
5.- Էլլէն – ծածկանուն Միքայէլեան Քրիստափորի:
6.- Թայինեան – ծածկանուն Յովհ. Լոռու-Մելիքեանի, անդամ Արեւմ. բիւրոյի եւ պատասխանատու Եւրոպայի մէջ հայ դատի քարոզչութեան:

458

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 38-39

ԾՈՑ(1)

Մ. Քր. հասցէն՝ Կաւկասկոյէ Դաւարիշեսկо *եւայլն* [*ռուսերէն գրուած հասցէ*]
Թռուցիկինը(2)՝ Exarch-Josiph I str., 20 Sophia.

Հայրենիքի եւ Armenia-*ի համար գրուած է Ամերիկա։*

Այսօր ուղարկուեցաւ քեզ բանտ[*երոլով*] *մի երկար գրութիւն։ Պատասխանը անհրաժեշտ է տալ հեռագրով* (Gregoire Foun, Bertholet, 20 Paris *հասցէով*)։ *Այդտեղ կայ ընդամէնը վեց կէտ* 1) *Կովկասեան մարմինը. բուն յեղափոխական կազմակերպութիւն* 2) *Նպատակը — ռամկ. Դաշնակցութիւն* 3) *Սոցիալիզմ* 4) *Կենտրոնացում Վասպուրականի համար* 5) *Խոշոր ձեռնարկի պատրաստութիւն* 6) *Ռայոնական ժողովի ընդունած որոշումը։ Հեռագրիր միայն թուանշաններով։ Եթէ ընդունում ես, օրինակ, առաջինը, երկրորդը, երրորդը եւ չորրորդը հեռագրիր* 1234. *եթէ առաջինը եւ չորրորդը* 14 *եւայլն*...։ *Մանրամասը պատասխանը գրիր նամակով։ Դիմիր նոյնպէս Վարդանին նրա կարծիքը եւս իմանալու համար։ Մանրամասը պատասխանը կարող է պէտք գալ որոշումների վերջնական խմբագրութեան ժամանակ*(3)։

Ստանում ենք հետզհետէ Բագւայ դէպքի մանրամասնութիւնները։ Վարչութեան մասնակցութիւնը աներկբայելի է, բազմաթիւ փաստեր կան(4)։

Նակաշիձէն(5) *մեծ դեր է խաղացել։ Մերոնք սպառնագիր են ուղարկել։ Այսօրւայ ստացած հեռագրի համաձայն վիրաւորներ երկու կողմից* 1500 *հոգին են. հայերից սպանւած են* 350 *հոգի եւ թիւրքերից* 250։ *Մերոնք թէեւ ուշ են դուրս եկել* (*Դուման առաջնորդութեամբ*), *բայց լաւ ջարդ են տուել։ Բանը ռումբերի չի հասել։ Բայց արդէն «կոմիտէի» հրապարակ գալը եւ ռումբի վախը մեծապէս ազդել է թիւրքերի վրայ։ Դրա՛ն պէտք է վերագրել դադարումը։ Զօրքերը եւ ոստիկանները ընկած տեղը զինաթափ են արել հայերին, իսկ վկաներ կան, որ թիւրք ամբոխին բաժանել են ատրճանակներ եւ փամփուշտներ։*

Մերոնց գրգռումը չափազանց է։ Մի բան՝ թերթերը, նոյնիսկ տեղական թերթերը բաւական ազատ մեղադրում են ադմինիստրացիային։

1.- Արեւմտեան բիւրոյի այս նամակը (անթուակիր եւ անստորագիր) ուղարկուած է Պէյրութ՝ Ս. Զաւարեանին, հաւանաբար Փետրուարի երկրորդ կիսուն:

2.- Թռուցիկ Գէորգն է (Տէր Աբրահամեան), որ Սոֆիա գացած էր պուլկար զին. վարժարանին մէջ ուսանելու համար:

3.- Հարցը կը վերաբերի Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին դրուելիք օրակարգի հարցերուն, որոնց համար հարկ տեսնուած էր դիմել շարք մը վաստակաւոր ընկերներու (Յոնան Դաւթեան, Ա. Վռամեան, եւայլն), որպէսզի իրենց անմիջական կարծիքները հասցնեն հեռագրով, իսկ աւելի ընդարձակը՝ նամակով: Այս մասին աւելի մանրամասն տեսնել թիւ 100 նամակը եւ ծանօթագրութիւնը:

4.- Կ՝ակնարկուի 1905 թ. Փետրուար 6-ին Պաքուի թուրք զինեալ խուժանին հայկական թաղամասին վրայ կատարած յարձակումին եւ անով սկիզբ առած հայ-թաթարական արիւնոտ ընդհարումներուն, որոնք շուտով տարածուեցան ամբողջ Անդրկովկասի տարածքին եւ որոնց հրահրումին մէջ առաջին օրէն ակնյայտ դարձաւ ցարական իշխանութիւններու խաղացած գրգռիչ դերը:

5.- Պաքուի հայատեաց նահանգապետ, որ Դաշնակցութեան որոշումով պիտի ահաբեկուէր նոյն տարին Դրոյի (Դրաստամատ Կանայեան) կողմէ:

459

Պատճէններու մատեան No 88, *էջ* 412

1905 *փետր.* 22

Ստեփան քհնյ. Գիւլումեանին, Պրայիլա

Արժանապատիւ հայր,

Ստացանք Մէլիք-Մանուկեանի նամակը եւ գաւառացի եղբայրների հանրագրութիւնը։

Խնդրենք յայտնել ում հարկն է, որ Պոլոյեանից ոչ մի տող չենք ստացել Մէլիք-Մանուկեանի թերթերի վերաբերմամբ, եւ ոչ ոք էլ իրաւունք չունի մեզ այդ տեսակ խորհուրդներ տալու։ «Դրօշակ» ուղարկում ենք կանոնաւորապէս Մէլիք-Մանուկեանին, ինչպէս եւ միւս բաժանորդներին։ Եթէ նա չի ստանում, դրա պատճառը տեղւոյդ փոստատանը պէտք է փնտռել, կամ հասցէն մեզ ճիշտ չէ տրուած։ Խնդրենք յամենայնդէպս կրկնել հասցէն, կամ նորը տալ։ Եթէ այդ էլ չօգնեց, ստիպւած կը լինինք իր ուղարկածը վերադարձնել։

Յարգանօք՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻԻՐՕ

460

Պատճէններու մատեան No 88, *էջ* 415

1905 *փետր.* 22

Էլլէնին(1), *Ֆիլիպէ*

Սիրելի ընկեր,

Ուղարկում ենք ներփակ 2000 fr.-*ի չէք, որ ուզել էիր։*

Քո յիշած մասնագէտը գուցէ նոյնն է, որի մասին մեզ էլ էին յայտնել (Հիւսիսակերտից)(2)*։ Շատ լաւ կը լինէր, եթէ Ժընեւ հանդիպէր, կամ այդտեղ մի քանի լաւ տղաներ պատրաստէիք։*

Սարգիսը(3) *իբրեւ ի՞նչ է գալիս։ Երկու օր առաջ մենք գրեցինք Վիշապ*(4)*, չեշտելով իրենց ներկայացուցչի անհրաժեշտութիւնը։*

Համբոյրներով՝
ԱՐԵՒՄՏ. ԲԻԻՐՕ

1.- Քրիստափոր Միքայէլեանին (Էլլէն) ուղղուած նամակ:
2.- Հիւսիսակերտ – ծածկանուն Պետրոկրաղի:
3.- Սարգիս – Բարսեղեան, բուն անունով՝ Օտապաշեան Պօղոս:
4.- Վիշապ – ծածկանուն Կ. Պոլսոյ:

461

Պատճէններու մատեան No 88, *էջ* 418

1905 *փետր*. 22

Վռամեանին, Բոստոն

Սիրելի ընկեր,

Ամերիկայից ուղարկւած դրամի հաշիւների մասին հետեւեալն են գրում Շամից(1). «*Մինչեւ* 904-*ը հաշիւները գրւած են Երկաթի եւ Շահպազի*(2) *ձեռքով, իսկ Կոմսի գալէն վերջ ստացւած բոլոր դրամների հաշիւները, ինչպէս նաեւ* 904-*ի ընթացքում Բարձրաւանդակ*(3) *ղրկւած դրամների ընկալագրեր ղրկւած են Մինարէթ եւ Աւարայր*(4) (*բացի Բարձր*[*աւանդակ*] *ղրկւած* 150 *լիրայից. ղրկւած է եւ* 25 *լիրա որ չէ հասած Բարձր*[*աւանդակ*], *այլ մնացել է Պուրակ*(5) *եւ ծախսւել Բարձրի կարիքների վրայ. մենք չգիտենք թէ Վահանը*(6) *տեղեկութիւն ունէ՞ր այս մասին*)։ *Ամերիկայէն մեր ստացած դրամների* (904-*ի ընթացքում*) *հաշիւը՝ գրւած մի չորի վրայ, ղրկել ենք Ամերիկա*(?) *այնտեղ գնացող մի ընկերի հետ*»։

Պէյրութից խնդրում են ուղարկել իրենց 5 *օր*[*ինակ*] «*Հայրենիք*» *եւ* 2 *օր*[*ինակ*] «Armenia»։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

P. S.— *Պէյրութի հասցէն՝* Monsieur John Terzi No 51 Rue B. Armenian College, Beyrouth (Syrie).

1.- Շամ – ծածկանուն Վան-Վասպուրականի:
2.- Երկաթ կամ Աշոտ Երկաթ ծածկանուն Լեւոնեան Արմենակի: Շահպազը՝ Վարդան Շահպազն է, բուն անունով Տօնիկեան Մինաս:
3.- Բարձրաւանդակ – ծածկանուն Սասունի:
4.- Աւարայր – ծածկանուն Ատրպատականի Խոյ աւանին:
5.- Պուրակ – ծածկանուն Խլաթ աւանի:
6.- Վահան՝ հաւանաբար Փափազեանի (Կոմս) մասին է:

462

Պատճէններու մատեան No 88, *էջ* 417

1905 *փետր*. 24

Միսաք Խարախանեանին, Պարիզ

Ստացանք ձեր 9/22 *փետր. բացգիրը։ Շտապում ենք յայտնել, որ ձեր վրայ ծանրացած են մի քանի մեղադրանքներ, որոնց վերաբերեալ դուք ժամանակին կը հրաւիրւիք բացատրութիւններ տալու։ Իսկ առայժմ առաջարկում ենք պատասխանել հետեւեալ հարցերին։*

1) *Որքա՞ն դրամ էք դուք ստացել Նաւահանգստում*(1) *եւ ումնից։ Ի՞նչ ծախսեր էք արել։*

2) Ինչո՞ւ Մ. Ք.-ով(2) անցնելիս, դուք ոչինչ չէք յայտնել Արեւել. բիւրոյին ձեզ մօտ գտնւած խոշոր գումարի մասին։ Ինչո՞ւ այդ գումարը ձեզ հետ էիք ման ածում։

3) Ինչպէ՞ս է, որ ձեզ մօտ այդքան փող լինելով՝ դուք դարձեալ Գանձակի կոմիտէից փոխ էք առնում։

Ձեզ մօտ գտնւած գումարի մնացորդը չտապեցէք ուղարկել մեր հասցէին։

[*Ընկերական բարեւներով՝*
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ]

1.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաքումի:
2.- Մեծ Քաղաք – ծածկանուն Թիֆլիսի:

463

Պատճէններու մատեան No 88, *էջ* 419

1905 le 24 fév[rier]

Groupe Français d'Etudes Sociales à Genève
Chers citoyens,

En réponse à votre invitation, nous venons vous informer que nous participerons à la cérémonie, qui sera organisée à l'occasion de l'anniversaire de la Commune. Nous nous ferons bien représentés au comité d'organisation, mais notre délégué regrette beaucoup de ne pas avoir le temps de participer aux travaux préparatifs.

Nos salutations fraternelles
REDACTION DU "DROSCHAK"
Organe de la Fédération Révol[utionnaire] Arménien

Թարգմանութիւնը.—

1905, 24 *փետրուար*

Ժընեւի մէջ ընկերային ուսումնասիրութեանց ֆրանսական խումբին
Սիրելի քաղաքացիներ,

Ի պատասխան ձեր հրաւէրին՝ կը հաղորդենք որ պիտի մասնակցինք այն արարողութեան, որ պիտի կազմակերպուի [*ֆրանսական*] *Համայնքի տարեդարձին։*

Պիտի ունենանք նաեւ մեր ներկայացուցիչը կազմակերպիչ յանձնախումբին մէջ, բայց մեր պատուիրակը շատ կը ցաւի, որ ժամանակ չունի մասնակցելու նախապատրաստական աշխատանքներուն։

Եղբայրական ողջոյններով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի
Պաշտօնաթերթ Հ. Յ. Դաշնակցութեան

464

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, *էջ* 192

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Հեռագիրներից մօտաւորապէս գաղափար կազմեցինք խառնակութիւնների մասին։ Ե՞րբ կը ստանանք ձեզանից տեղեկութիւն։ Ինչպէ՞ս է սկսւել, որքան մեծ է եղել կոտորածը, մեր կողմից ի՞նչ ընդդիմադրութիւն է եղել, ովքեր կան զոհւած(2)։

Շտապեցէք որքան կարելի է շուտ եւ որքան կարելի շատ փաստեր ոստիկանութեան մասնակցութեան եւ առհասարակ կառավարութեան բռնած դիրքի մասին։ Արդէն մենք հեռագրել ենք եւրոպական թերթերին, ասելով, որ յարձակումը կազմըւած է ոստիկանութեան ձեռքով։

Մեզ հարկաւոր են հիմա փաստեր...

Աւելի երկիւղ ենք կրում ձերբակալութիւններից։

Ինչ եղել է, եղել է. բայց մեր բոլորիս կարծիքով հակահարւածը պէտք է ուղղել կառավարութեան պաշտօնեաների դէմ։ Շատ հաւանական է, որ նահանգապետին, ոստիկանապետին փոխեն, այսինքն մի ուրիշ տեղ պաշտօն տան։

Սպասում ենք...

1.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի։ Կողքին սեւ թանձր մատիտով՝ «25 փետր. (Գրիշայի հ[ասցէին]», նոյնպէս աւարտին՝ «Գրւեցաւ 25 փետր.»։

2.- Հարցումները կը վերաբերին Պաքուի 1905 թ.ի հայ-թաթարական առաջին ընդհարումներուն։

465

Փաստ. 213-55

Ռոստոմի ձեռագրով անթուակիր նամակ ստորագրուած Ռոստոմ եւ Խաչատուր (Է. Ակնունի)։

Ուղղուած է ամենայն հաւանականութեամբ Քրիստափորին, իբրեւ ղեկավար Ցուցական մարմնի, որ այդ օրերուն Ապտիլ Համիտի մահափորձի պատրաստութեան մէջ կը գտնուէր։ Նամակը հաւանաբար 1905-ի Փետրուար ամսու գրութիւն է։ Հարցական նշանները բնագրին կը պատկանին։

Սիրելիս,

Հեռագիրդ ստացանք, խոստացել են այս երեկոյ բացատրել։ Պատասխանը կը հեռագրեմ։

Ստացանք Ծաղիկից(1) *մի նամակ, որով խնդրում են* (?) *Ցուցականի հաշւին տալ Թայինեանին*(2) 3000 fr. *բրոշիւրների հրատարակութեան եւ միտինգի*(?) *համար։*

Այդ կարգադրութիւնը եղել է քո հաղորդած տեղեկութիւնների հիման վրայ։

Վաղը կ՚ուղարկենք քեզ 3000 fr. *չէք։ Թող Ցուցականը իր պատասխանատուու-*

թեան տակ ինչ ուզում է անի։ Ձենք ուզում բացատրել մեր բռնած դիրքը այդ 3000 fr.*ի առթիւ, որովհետեւ Ցուցականը աւելորդ է համարել դրանով հետաքրքրուել։*

Համբոյրներով՝

ՌՈՍՏՈՄ եւ ԽԱՉԱՏՈՒՐ

Վաղը եթէ Խաչատուրից հայհոյական նամակ չստանաս, գոհացիր սրանով։

1.- Ծաղիկ՝ Կ. Պոլսոյ կուսակցական ծածկանուն, Կռուածաղիկի կրճատումն է: Պոլսոյ համար իբր ծածկանուն կը գործածուէր նաեւ Վիշապ:

2.- Թայինեանը Յովհաննէս Լոռու-Մելիքեանն է, անդամ Արեւմտեան բիւրոյի եւ պատասխանատու Եւրոպայի մէջ հայ դատի աշխատանքներուն:

466

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, 48-3, *էջ* 40-41

ՄՈՒՇ(1)

Բաշխումների մէջ անմիջապէս Սարհատը թող չմասնակցի. դա վտանգաւոր կը լինի. բայց բաշխելուց յետոյ, նրան հաղորդէք ցանկը, ինչպէս նաեւ Կոմսին(2)*։*

Ցանկալի է իմանալ, ապահով են արդեօք Բարձրում(3) *պահւած զէնքերը. թող Սարհատը մանրամասը գրի, թէ որքան հրացան եւ փամփուշտ կայ ապահով կազմակերպութեան տրամադրութեան տակ։*

Որբերի վիճակի մասին կը մտածենք մի բան անել. կը խնդրէինք մեր կողմից, որ Հրայրի որդին դպրոց դրւի. նրա ծախսերը առանձնապէս կը հասցնենք Յեսուին(4)*։*

Սարհատի խմբի մասին կը գրենք Կոմսին։ Այնտեղից հարկ եղած կարգադրութիւնը կ՚անեն։

Եթէ Հրայրից եւ Վահանից(5) *թղթեր կամ նամակներ կան մնացած, խնդրենք մաս մաս մի կերպ Պարսկաստան եւ Ջրաբերդ հասցնել։*

Յոյս կայ, որ գարնան մօտ դարձեալ նպաստներ հասնեն։ Ֆրանսիական հիւպատոսի զեկուցման նայելով, որ նա ուղարկել է Դելկասէին(6), *գարնանացանը ապահովւած կը լինի չունեւոր գիւղացիներին։*

Կովկասում բարդութիւններ են առաջ եկել։ Կառավարութիւնը յեղափոխական շարժումը ջլատելու նպատակով զանազան տեղերում աշխատում էր թիւրքերին դրդռել հայերի դէմ։ Մի շարք ապարդիւն(7)

1.- Անթուակիր նամակ, հաւանաբար Փետրուարի վերջերուն:

2.- Հարցը կը վերաբերի Սասնոյ եւ Տարօնի աղէտեալներուն համար ուղարկուած գումարի բաշխումին: Սարհատը Գէորգ Չաուշն է, Կոմսը՝ Վահան Փափազեան:

3.- Բարձրը կրնայ Սասունը ըլլալ եւ կամ Բարձրաբերդի կրճատումը, այսինքն Կարին: Աւելի հաւանականը Սասունն է – Բարձրաւանդակ:

4.- Յեսու ծածկանունն էր Տարօնի Ս. Կարապետի (Գլակայ) վանահայր Վարդան վրդ. Յակոբեանին:

5.- Հրայրը՝ Հրայր Դժոխքն է (Արմենակ Ղազարեան), Վահանը՝ Մանուէլեան-Տողրամաճեան Կարապետ՝ Դաշնակցութեան ներկայացուցիչը Տարօն-Սասունի մէջ: Երկուքն ալ նահատակուած 1904 թ. Սասնոյ ապստամբութեան ընթացքին: Ջրաբերդը Կարսի կուս. ծածկանունն է:

6.- Դելկասէն Ֆրանսայի արտաքին գործոց նախարարն էր:

7.- Գրութիւնը անաւարտ է:

467

Պատճէններու մատեան No 88, *էջ* 425

1905 *մարտ* 9

Մ. Վանեցեանին, Դարմշտատ

Ուրախութեամբ ընդունելով ձեր առաջարկը՝ գործել Թիֆլիզի դաշնակցական խմբերից մէկի մէջ, յայտնում ենք այդ մասին Թիֆլիզի մարմնին։ Ձեզ կը գտնեն ձեր ցոյց տուած հասցէով։

Բարի եղէք յայտնելու, թէ ովքեր են ձեր ծանօթները Թիֆլիզում, ում կարելի է դիմել ձեր մասին տեղեկութիւններ հաւաքելու համար։

ԽՄԲ[*ԱԳՐՈՒԹԻՒՆ*] «*ԴՐՕՇԱԿԻ*»

468

Պատճէններու մատեան No 88, *էջ* 426
(*Փաստ.* 46-76)

1905 *մարտ* 13

Մարտինին(1), *Աթէնք*

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր 7/20 [*փետրուարի*] *նամակը։ Ճիշտ է, Սիմոնը*(2) *գրել էր, որ մի վարժուած երիտասարդ ուղարկենք՝ ձեզ գործնական փորձերի հետ ծանօթացնելու համար։ Բայց դա դժուար թէ յաջողուի, որովհետեւ այն երիտասարդը, որին աչքի առջեւ ունէինք, չտապում է Ռուսաստան։ Դրա փոխանակ աւելի լաւ կը լինէր, եթէ ձեզանից մէկը անցնէր Բուլղարիա։ Այնտեղ կան մարդիկ, որոնք կարող են ծանօթացնել. դրանք պատրաստւում են այլ եւ այլ տեղեր ցրւելու համար։ Մէկը մասնաւորապէս ուզում է Լեռնավայր*(3) *անցնել։ Սրա մասին գրուած է Սիմոնին։ Սպասէք — եթէ նրանց կողմից ուրիշ կարգադրութիւն չի եղել — նրանց նամակին։*

Վաղը ձեզ կը փոխադրենք 300 fr. *ճանապարհածախս։*

Ընկեր[*ական*] *բարեւներով՝*
ԱՐԵՒՄՏ[*ԵԱՆ*] *ԲԻՒՐՕ*

Յ. Գ.– Ներփակ կը ստանաս (300) երեք հարիւր ֆրանքի չէք Գրէտի-Լիօնէէն։ Չէքի թիւն է 1412(4)։

1.- Մարտին – ծածկանուն Մուրատեան Մարտիրոսի։
2.- Խօսքը Սիմոն Զաւարեանի մասին է։
3.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ։
4.- Յետ գրութեանը կը պատկանի Արեւմտեան բիւրոյի գործավար Յարութիւն Գալֆայեանի գրչին։

469

Պատճէններու մատեան No 88, *էջ* 427

1905 *մարտ* 13

Տիրանին, Ալէքսանդրիա

Սիրելի ընկեր,

Արդէն տեսած կը լինիս Միսակին, որ մի քանի օր առաջ այստեղից ճանապարհ ընկաւ։ Լսիր նրա բացատրութիւնները եւ քո դիտողութիւններդ հաղորդիր։

Լեռնավայրի խնդիրը այնքան փափուկ է, որ անհրաժեշտ է մի լուրջ խորհրդակցութիւն ընկերների, դերերի որոշ բաժանում։ Անշուշտ ժամանակին կը հաղորդէք ձեր ընկերական խորհրդակցութեան հետեւանքները։

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Միսակից յետ ստացանք այստեղ 300 *ր[ուբլ]ուց մի քիչ պակաս։*

470

Պատճէններու մատեան No 88, *էջ* 428

1905 *մարտ* 13

Թայինեանին(1), *Պարիզ,*

Սիրելի ընկեր,

Գրում էք, որ չէք գալու «Խորհրդի» նիստերին մասնակցելու։ Պատճառը չգիտենք, բայց անհրաժեշտ պիտի լինի մասնակցել գոնէ այն նիստերին, երբ խօսք կը լինի արտասահմանեան պրոպագանդի մասին։

Ինչո՞վ վերջացաւ ձեր ժողովը։

Չի կարելի արդեօք մի միտինգ կազմակերպել Բագւայ դէպքի առթիւ։

Ներփակ նամակը երեւի Արտակ խան Գորոյեանինն է (պարսկական հիւպատոսարան)։

Խնդրենք հասցնել նրան։

Պոլսի պատգամաւորին սպասում ենք այս երկու օրերս։

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՕ

1.- Թայինեան – ծածկանուն Յովհ. Լոռու-Մելիքեանի։

471

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 193

Մ. Ք.(1)

Ստացանք փետր. 2-ի նամակը։ Հաստատում ենք մեր փետր. 2/15-ի, յուն[ւար] 19/1-ի 11/24-ի (Սարսափի հասցէով) նամակները(2)*։ Ստացած կը լինէք եւ մեր հեռագրական պատասխանը։ Այս քանի օր է, սաստիկ մտատանջութեան մէջ ենք. հեռագրական լուրերը իրենց անորոշութեամբ աւելի են խառնում։ Երեւի մի քանի օրից ձեզանից կամ Ոսկ[անապատ]ից ճիշտ տեղեկութիւն կ՚առնենք*(3)*։*

Եւրոպական թերթերին հեռագրեցինք, որ հեղինակը ոստիկանութիւնն է։ Տուէք հիմա <u>փաստեր</u> որքան կարելի է շատ։

Շատ հաւանական է, որ Բագւայ օրինակից ազդւեն միւս քաղաքներն էլ։ Պէտք է զգոյշ լինել, կարող են մեզ քնացնել, ինչպէս անում էին Տաճկաստանում։ Պէտք է խմբերի բաժանել, զինել որքան հնարաւոր է, մեր ունեցած բերդանի փամփուշտները բաժանել բաւականաչափ, նշանակել տասնապետներ, ընդհանուր կարգադրիչ, բռնել կարեւոր կէտերը, փողոցների մուտքերը, միջոցներ ձեռք առնել զանազան կէտերի միջեւ մշտական հաղորդակցութիւն պահպանելու, դրա համար յատուկ սուրհանդակներ նախօրօք որոշել։ Կարելի է եւ ռումբեր բաժանել աւելի կարեւոր դէպքերում գործածելու պայմանով։

1.- Կողքին հաստ մատիտով՝ «ուղարկուած 26-ին փետր. Եւանգուլեանի հասցէին»։ Մեծ Քաղաքը Թիֆլիսն է։

2.- Ամսանուններու կողքին դրուած զոյգ թուականները (2/15, 19/1,11/24) կը վերաբերին նոր եւ հին տոմարներու գործածութեան. առաջին թուանշանը հին տոմարի համար է, երկրորդը՝ նորին. տարբերութիւնը՝ 13 օր։

3.- Հարցը կը վերաբերի հայ-թաթարական ծանօթ ընդհարումներուն, որոնք սկիզբ առած էին Պաքուի մէջ (Ոսկանապատ)։

472

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 206-207

Մ. Ք.(1)

Զէնքի վերաբերեալ տեսնուեցանք վաճառականի հետ։ Առայժմ խօսեցինք մաուզէր ատրճանակների մասին։ Պայմանները հետեւեալներն են. դեպոզիտի խնդիրը բոլորովին թողնուեցաւ։ Դրա փոխանակ խոստացանք avance(2) *տալ* 10,000 fr. *ապսպրելով* 50-100 *հազար* fr.*-ի ապրանք։ Ապրանքը պարտաւոր է հասցնել Կովկասի որ քաղաքը ուզենք .....*(3)*։ Եթէ ապրանքը կասկածուեցաւ մաքսատանը, կամ ճանապարհին, կամ ընկերութեան պահեստում, նախքան մեր ստանալը, վնասը իրենն է։ Պատասխանատու ենք միայն այն մասի համար, որ մեր ձեռքը կ՚անցնի։ Փամփուշտի հոգսը մենք պէտք է քաշենք։ Այդ մասին պէտք է պայմանաւորուել տեղական զինավաճառներից մէկի կամ մի քանիսի հետ։ Ատրճանակը մեզ տալու է*

այն գնով ինչ գնով գործարանը կը ծախի, աւելացնելով 15 *ր*[*ուբլի*] *հատին թէ ճանապարհածախս, թէ իրենց՝ աշխ*[*ատանքի համար*]։ *Միջին թւով հատը մեզ կ՚արժենայ* 100 fr.=40 *ր*[*ուբլի*]։

Ուրեմն պատասխանեցէք

1) *Ո՛ր քաղաքները եւ ինչ չափով իւրաքանչիւր տեղ կարող էք ընդունել*

2) *Առաջին պատուէրը ո՛ր քաղաքը անենք եւ ինչ քանակութեամբ։*

3) *Ինչ քանակութեամբ հնարաւոր է տեղումդ փամփուշտ ձեռք բերել։ Եթէ դա շատ դժուար է, կարեւոր է վաղօրօք յայտնել մեզ, որովհետեւ վաճառականը պատրաստ է եւ փամփուշտ ուղարկել, միայն ըիսկը մեր վրայ։ Մեզ թւում է, որ փամփուշտներ անհամեմատ աւելի մեծ դիւրութեամբ կարելի է ձեռք բերել տեղական վաճառականներից, քան ատրճանակներ։*

Մոսիններ նոյնպէս յանձն է առնում հասցնել, եթէ միայն այս կողմերում գտնուեն։ Դա մենք արդէն կարող ենք ընդունել առանց փամփուշտի։ Մաուզէր հրացանի մասին առայժմ խօսք չի կարող լինել, քանի որ փամփուշտի ճարը տեսնելու հնարաւորութիւն չենք տեսնում։

Նամակից առաջ ուղարկէք հեռագիր։ Եթէ ուզում էք, որ 200 *հատ ստացւի օր*[*ինակ*] *Թիֆլիզում, հեռագրէք* 200 roubles, *եթէ* 150՝ *Երեւան* — 150 francs։

Ուրեմն rouble *կը նշանակի Թիֆլիզ*,
francs — *Երեւան*,
toumans — *Ղարս*,
florin — *Քար*(4),
piastres — *Բագու*,
mark — *Բաթում*,
ghrans — *Սալմաստ։*

Նոյն բանը կրկնեցէք նամակով։

1.- Արեւելեան բիւրոյին՝ Թիֆլիս ուղղուած այս գրութիւնը թուական չունի. գրուած պիտի ըլլայ Մարտի երկրորդ կիսուն:

2.- Ֆրանսերէն՝ կանխավճար: Դեպոզիտը՝ աւանդն է:

3.- Ռուսերէն, անընթեռնելի:

4.- Քար՝ ծածկանունն էր Ալեքսանդրապոլ-Գիւմրիի:

473

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 208

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Ստացւած է մարտ 27 *նամակը։*

Նոր լուսանկարներ ուղարկէք դարձեալ, ուղարկւածները գործադրել ենք արդէն։

1.- Անթուակիր երկտող առաքուած Պաքու, հաւանաբար Ապրիլի առաջին կիսուն:

474

Պատճէններու մատեան No 88, *էջ* 447

1905 *ապր.* 13

Պալքանեան Կենտր. կոմիտէին

Ընկերներ,

Խնդրենք պատւիրել 100 *քիլ*[*ոկրամ*] *Արամեան* 8 *կէտանոց տառ եւ ուղարկել շուտով։*

Շտապեցէք ուղարկել նաեւ Քրիստափորի եւ Էդուարդի վրայ դրած պսակների ցանկը, մակագրութիւններով միասին «Դրօշակի» առաջիկայ համարում զետեղելու համար։ Գերեզմանների ցանկապատը պէտք է չինել շատ պարզ, քանի որ տեղափոխելու խնդիր կայ։ Թող չինել տան փայտից, գերեզմանները [*մէկ բառ անընթեռնելի*] *պատեն եւ ծաղիկներով զարդարած պահեն։ Դրա համար, կարելի է կամ գերեզմանապահին մի բան վճարել կամ մի ուրիշին յանձնարարել։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

475

Պատճէններու մատեան No 88, *էջ* 448

Ռուսերէն նամակ

1905 *ապր.* 14

«*Յեղափոխական Ռուսաստանի*»(1) *խմբագրութեան միջոցով ստացել ենք Ֆրանսիայում ցարիզմի զոհերի օգտին հաւաքւած գումարից երկու հազար երեք հարիւր եօթանասուն երկու ֆրանկ յիսուն սանտիմ* (2372 fr. 50 c.)։

«*ԴՐՕՇԱԿԻ*» *ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ*(2)
Հ.Յ.Դ. կնիք

1.- «Յեղափոխական Ռուսաստան» – Էսէռների կուսակցութեան պաշտօնաթերթն էր մինչեւ 1905-ի Դեկտեմբերը:

2.- «Դրօշակ»ի խմբագրութեան գրած մի քանի տողանոց ստացական է՝ Հ.Յ.Դ. կնիքով:

476

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 210-12

15 *ապր*[*իլ*, 1905]
Ուղարկւած .....(2)

Մ. Ֆ.(1)

**Ստացանք վերջին նամակը, անթւակիր։ Ռուսների վերաբերեալ կտորները հաղորդեցինք. ստացանք նաեւ պահանջւած բրոշիւրների ցանկը, նոյնպէս յանձնեցինք։ Խորհուրդը վերջանում է այսօր։ Հեռագրով ուղարկւած պատւէրների մասին վաղը կարգադրութիւն կը լինի։*

Գրենք համառօտակի կոնֆերանսի մասին։ Մասնակցում էին 1) *Ֆինլանդական ակտիւ դիմադրութիւն կուսակցութիւնը* 2) *Լատիշների սոց-դեմոկտ. միութիւնը* 3) *լեհական սոց. կուսակցութիւնը* 4) *բելոռուսների սոցիալիստական* գրամադա-ն(3) 5) *սոցիալիստ-ռեվոլուցիոներները* 6) *Սակարտվելօ* 7) *եւ մենք*։ Բոլորը յեղափոխական կուսակցութիւններ էին, ուստի եւ որոշումներն էլ աւելի պարզ եւ յեղափոխական եղան։*

Միաձայն որոշւեց ապստամբութեան միջոցաւ տապալել միապետութիւնը։ Ընդհանուր հիմունքները ապագայ Ռուսաստանի — ռամկավարական հանրապետութիւն իր բոլոր յատկանիշներով։ Այդ կարգերը հաստատելու համար ընդունւեց հրաւիրել ուչրեդիտելնոյէ սոբրայնէ(4) *Ֆինլանդիայի եւ Լեհաստանի համար, որոնք իրանք կ՚որոշեն իրանց ներքին հարցը. նաեւ՝ թէ կը մնան արդեօք Ռուսաստանի հետ թէ կ՚անջատուեն։ Կովկասի համար նոյնպէս* ուչրեդիտելնոյէ սոբրայնէ(4), *որը կը հաստատի Կովկասեան ռամկավարական Ֆեդերացիայի հիմունքները, կը յայտարարի իր Ռուսաստանի հետ կապւած մնալը եւ ռուս սոց*[*իալիստներ*] .....(2) *հետ միասին կ՚որոշի այդ կապերի պայմանները։ Մնացեալ Ռուսաստանի համար մի ընդհանուր* ուչր[եդիտելնոյէ] սոբր[այնէ](4)։ *Տեղական ինքնավարութիւնը հասցրած մինչեւ տեղական պարլամենտները բոլոր այն տեղերի համար որոնք կը պահանջեն դա։ Ամենալայն ազգային ինքնորոշման սկզբունքը սոցիալական եւ տնտեսական պահանջների մէջ դրւեց* .....(5)։ *Բացի սրանից բոլոր այն պահանջները որ դրւում են բոլոր* minimum .....*-ների*(6) *մէջ։ Այս բոլորը կը հրատարակւի ապրիլի* 25 (*նոր տոմ.*) *յետոյ առանձին դեկլարացիաներով։ Բացի սրանից կը հրատարակուի մի շարք պրոկլամացիաներ ընդհանուր ստորագրութեամբ մի քանի կենսական հարցերի վերաբերեալ։ Գործնական հարցերը կ՚որոշւին երկրում։ Արտասահմանում հաստատւում է մի բիւրօ միջոցներ հայթայթելու* (*զէնքի համար*) *եւ յարաբերութիւններ պահպանելու համար։*

Մի մարդ ուղարկեցէք Նաւահանգիստ հետեւեալ միսսիայով։

Նա պիտի մտնի յարաբերութեան մէջ սակարթվելիստների(7) *հետ, որոնց մէջ կան մաքսատան ծառայողներ եւ նրանցից իմանայ թէ ինչպէս կարելի է մաքսատնից անցնել կոթեր եւ կարճեր*(8), *որոնք մենք կարող ենք ուղարկել իբրեւ ապրանք։ Նրանք պիտի ասեն ինչ տեսակի կապոցների մէջ անել եւայլն։ Դա մի երկրորդ միջոց է զէնք հասցնելու ձեզ։ Բացի սրանից կայ մի երրորդ միջոց.*

Այստեղից դուցէ կարելի լինի մի նաւով հասցնել Սեւ ծովի ափերը, ուր որ ուզէք։ Պէտք է մի ամայի տեղ ընդունել ապրանքը եւ տեղափոխել ներս։ Գրեցէք, թէ հնա-

բաւո՞ր է ձեզ արդեօք մի այդպիսի բան կազմակերպել եւ մանրամասն նշանակեցէք տեղը եւ ժամանակը։

Մհերը(9) *շուտով կը ճանապարհուի դէպի ձեզ նախօրօք մտնելով մի քանի քաղաքներ։*

Համբոյրներով

1.- Թիֆլիս ուղղուած այս գրութեան առաջին բաժինը Ռոստոմի ձեռագրով է (աստղանիշերու մէջ առնուած), ապա կը շարունակուի Համօ Օհանջանեանի գրչով:
2.- Ռուսերէն անընթեռնելի բառ. հաւանաբար՝ ռեւոլուցիոներ:
3.- Ռուսատառ:
4.- Ռուսատառ. հիմնադիր հաւաք:
5.- Ռուսերէն անընթեռնելի նախադասութիւն:
6.- Ռուսերէն անընթեռնելի բառ:
7.- Վրացի սոցիալիստ-ֆեդերալիստներ: Նշուած կոնֆերանսի մասին տեսնել՝ «Դրօշակ», թիւ 5, 1905, «Յեղափոխական կուսակցութիւնների դաշն ցարիզմի դէմ» յայտարարութիւնը:
8.- Կոթը՝ հրացանն է, կարճը՝ ատրճանակ:
9.- Մհերը Համօ Օհանջանեանն է, որու գրչին կը պատկանի այս նամակի վերջին բաժինը:

477

Պատճէններու մատեան No 88, *էջ* 449-50

1905 *ապր.* 16

Ռաշտի կոմիտէին, [*Պարսկաստան*]

Ընկերներ,

Ստացանք ձեր 21 *փետր. նամակը։ Մահմեդականների յուզումի հանդէպ մեր ընկերների վրայ ծանր պարտականութիւն է ընկնում հասկացնելու պարսիկ բանիմաց մասին ռուսաց բռնապետութեան ձգտումները՝* 1) *Պարսկաստանը իր իշխանութեան տակ ձգելու եւ դրա համար առիթների հող պատրաստելու եւ* 2) *խռովութիւններ սերմանելու կովկասեան ժողովուրդների մէջ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ նրանց իրաւունքներից զուրկ պահել եւ օգտուել դրանից՝ ռուսական դաշտը զօրեղացնելու համար Կովկասում* (*տեղական գիւղացիների հողերը խլելով եւ ռուս գաղթականներին յանձնելով եւ այլն*...)։

Տեղափոխութեան խնդիրը կարգադրեցի՞ք արդեօք։ Դա շատ կարեւոր է, որովհետեւ մեր հրատարակութիւնների քանակը աւելանալու է։ Ի՞նչ եղաւ այն ուսանողը, որի մասին գրել էինք ձեզ։

Որքան էլ դժուար լինի զինման գործը, պէտք է այնուամենայնիւ ամէն կերպ հոգ տանել եւ գոնէ սովորական ատրճանակներով զինել խմբի անդամներին։

«Շարժումի» հետ ոչ մի յարաբերութիւն չունինք։Խմբագիրը՝ Վարդոն Պալքանեան Կենտր. կոմիտէի որոշմամբ հեռացուած է կազմակերպութիւնից պալքանեան

չրջանում։ Խնդրի մանրամասնութիւնների մասին յետոյ կը տեղեկագրենք դաշնակցական բոլոր մարմիններին։ Իսկ «Հայրենիքին»(1) *կը յիշեցնենք մի անգամ եւս։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Այս անգամ ձեզ կ՚ուղարկենք 200 *օր*[*ինակ Դրօշակ*] *Սարուստան*(2) *փոխադրելու համար։*

Ն[*ՈՅՆ*]

1.- «Հայրենիք» – պաշտօնաթերթ Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէին:
2.- Սարուստան – ծածկանուն Կովկասի:

478

Պատճէններու մատեան No 88, *էջ* 451

1905 *ապր.* 17

Սաֆոյին(1), *Պարիզ*

Սիրելի ընկեր,

Ներփակ կը գտնես Ռոստոմի գրած մասնաւոր նամակը Լեւոնին։ Նայիր, եթէ անյարմար մի կէտ գտնես, նշանակիր եւ վերադարձրու, իսկ եթէ ոչ, փոստը ձգիր այդտեղից, կամ հետդ բեր։

Լորիսը թող Ֆընտըգլեանին ասի, որ նա գնայ եւ զինավաճառին հարցնի մաուզէրեան գերմանական ատրճանակների գնի մասին, եթէ պատւիրելու լինենք 2000 *հատ։ Հարցը այն ձեւով չդրւի, որ զինավաճառը կարծի, թէ անպատճառ գնելու ենք։*

«Խորհրդի» համար եկած նամակների մի ծրարը գտնւեցաւ Խաչատուրի(2) *արկղի մէջ։ Մի առանձին խնդիր չկայ մոռացւած։*

Համբոյրներով՝
ԱՐԵՒՄՏ[*ԵԱՆ*] *ԲԻՒՐՕ*

Անցագիրը կը պատւիրենք կէսօրից յետոյ։

Ն[*ՈՅՆ*]

1.- Սաֆօ – ծածկանուն Մարգարեան Մարտիրոսի, որ Քրիստափոր Միքայէլեանի եղերական մահէն ետք պիտի գլխաւորէր Ապտիլ Համիտը ահաբեկելու գործողութիւնը:
2.- Խաչատուր Մալումեան, ծանօթ Է. Ակնունի ծածկանունով:

479

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 212-14

ապրիլ 17-*ին*
(*Ռուբէնի ձեռքով*)

Մ. Ֆ.

Հաստատում ենք մեր 15 *թւա*[*կանի*] *նամակը, ուղարկւած ինստիտուտի հասցէին։*

Դարձեալ զէնքի մասին։ Պարսկին avance(1) *դժուարանում ենք տալ. վախենում ենք կորչի. բացի այդ, չգիտենք թէ փամփուշտի հոգը հնարաւորութիւն պիտի ունենա՞ք տանելու, թէ ձեր յոյսը արտասահմանի վրայ է։ Այս պատճառով չենք շտապում պատւէրը վերջնական տալուց։ Մանաւանդ որ մի ուրիշ միջոց եւս կայ։ Հնարաւորութիւն կայ ծովափի որ կէտում ուզենաք նաւով ապրանք բերել։ Սրա մասին անգամ ենթադրաբար էինք գրել, այսօր հաստատապէս մեզ վստահեցրին։*

Նաւը կարող է յանձն առնել բերելու մի անգամից 600 *պուդից ոչ պակաս։ Կարող է մի տեղ սպասել* 1-2 *օր ու գիշեր։ Ինքը նաւակներ չունի։ Նաւակների հոգսը դուք պէտք է քաշէք. լաւ կը լինի, եթէ ապրանքը ընդունելու գործը կարգադրէք ծովեզրի հայ գաղթականների միջոցով. եթէ դա չյաջողւի, վրացիների աջակցութեամբ։ Նաւը զբօսանաւ* (եախթա)(2) *լինելով չի կարող ապրանքով մօտենալ նաւահանգիստներին։ Ուրեմն եթէ յաջողեցնէք մաքսատան գործը, որի մասին գրել էինք անցեալ անգամ, դա ներկայ դէպքում աւելորդ կը լինի, դրա համար սովորական ապրանքատար նաւին հարկ կը լինի յանձնել իբրեւ ապրանք։ Խնդրում ենք լուրջ ուշադրութիւն։ Անմիջապէս մի ձեռնհաս մարդ ուղարկէք ծովեզերքը կարգադրելու ապրանքը ընդունելու խնդիրը։ Եթէ յաջողւի, մեզ անհրաժեշտ կը լինեն ուրեմն հետեւեալները* 1) *տեղը,* 2) *ժամանակը,* 3) *ինչ ծանրութեամբ սնտուկներ անել (յարմար է ամէն մէկը* 4-5 *փութանոց)։ Կազմակերպողը կամ ծանօթ մէկը կարող է անցնել արտասահման, նստել զբօսանաւը առաջնորդելու համար նշանակւած տեղը։ Լաւ կը լինի մի քանի կէտերում սարքել պահեստներ։ Զբօսանաւը կարող է բանել միայն մինչեւ մայիսի* 15-20-*ը։ Մարդ ուղարկելուց հեռագրէք* parti, *պահեստի եւ ընդունելութեան գործը յաջողւելուց —* bon(3)։

1.- Կանխավճար:
2.- Ռուսատառ:
3.- Ֆրանսերէն՝ parti - մեկնած, bon - լաւ:

480

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 214-15

Մ. Ք.(1)

18 *եւ* 30 *մարտի նամակը ստացուել է։*

Շամի հաշիւները չեն ուղարկուել։ Կը պահանջենք։ Բայց դուք էլ կրկնէք ձեր պահանջը։

Լսում ենք, որ թիւրքերէն լեզուով թիւրքերի կողմից շրջաբերականներ են հրատարակուել։ Ինչո՞ւ մի քանի հատ չէք ուղարկում։

Տիգրանին ներկայանալու է մի ուսանող, մեր այստեղի ընկերներից։ Շատ լաւ տղայ է, թէեւ անփորձ։ Իրեն դնում է մի 3-4 *ամսւայ համար կազմակերպութեան տրամադրութեան տակ։ Նրան տուել ենք կնիքներ ձեզ յանձնելու։*

Ամոն(2) *ճանապարհ է ընկնում այսօր։ Ճանապարհին քիչ կ՚ուշանայ։*

Շամի համար փող փոխադրէք Վրէժ։ Շուտով կը գայ Սարգիսը (*Վարդանեանը*), *որը ընտրուած է Վասպուրականի մարմնի անդամ*(3)։ *Պատասխանատու մարմնի ընտրութիւնը յետաձգուեց ապագայ Ընդհ. Ժողովին, որ որոշուած է հրաւիրել տարուայ վերջին Խորհրդի փոխարէն*(4)։ *Վասպուրականին որոշուած է յատկացնել զէնքի համար* 80 *հազ. ր.*, *տեղական ծախսերի* 20 *հազ. ր.*։ *Անդրանիկն*(5) *էլ է մտնելու այդ շրջանը, միայն ոչ հիմա։*

Մանրամասն արձանագրութիւնը կ՚ուղարկենք ժամանակին։

Ձեր նամակից իմանում ենք, որ մաուզէրի փամփուշտի հոգսը վաճառականի վրայ էք ձգում։ Դա շատ անվստահ միջոց է, քանի որ, ինչպէս գրել էինք, նա ըիսկը իրա վրայ չի առնում։ Պէտք է ամէն ջանք թափել Նաւահանգստի գործը վերջացնել։ Վերջերս ստացանք մի նամակ Սակարտվ[*ելոյի*](6) *խմբագրութիւնից, որ այդ հարցի համար դիմենք բժիշկ Սանդրոյին. նա ամէն աջակցութիւն ցոյց կը տայ, դիմեցէք, եթէ դեռ ոչինչ չէք արել։ Կարսի հետ մեր գործը կը շարունակենք, այս երկու օրս վերջնական պատուէրը կը տանք, միայն Նաւահանգստի գործի կարգադրութիւնը անհրաժեշտ է թէկուզ փամփուշտների համար։*

1.- Անթուակիր, պէտք է ենթադրել Ապրիլի երկրորդ կիսուն։

2.- Հաւանաբար ըսուած Համոյի – Օհանջանեանի համար։

3.- Վանայ Սարգիսն է, Բարսեղեան, բուն անունով Օտապաշեան Պօղոս։ Շամը Վանն է, Վրէժը՝ Ատրպատական։

4.- Չորրորդ Ընդհ. ժողովը սակայն, Անդրկովկասի մէջ բռնկած հայ-թաթարական կռիւներու պատճառով, կարելի պիտի ըլլար գումարել միայն 1907 թ. Փետրուարին։

5.- Սասնոյ ծանօթ հերոսը։

6.- Վրացական սոցիալիստ-ֆեդերալիստներ կուսակցութեան համանուն պաշտօնաթերթը։

481

Պատճէններու մատեան No 88, *էջ* 453

1905 *ապր*. 18

Սիրելի Լորիս(1),

Կարգադրիր, որ մի մի օրինակ Pro Armenia *ուղարկել Լոնդոն հետեւեալ հասցէին՝* Minasse Cassabian 10, Litchbourne St. Cambridje sq., W. London.

Դա հարկաւոր է երկրի համար(2)։

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Լորիսը, որուն ուղղուած է երկտողը, Յովհ. Լոռու-Մելիքեանն է, անդամ Արեւմտեան բիւրոյի եւ պատասխանատու արտասահմանի հայ դատի աշխատանքներուն:
2.- Երկիր՝ պէտք է իմանալ Արեւմտեան Հայաստան իմաստով:

482

Պատճէններու մատեան No 88, *էջ* 453

1905 *ապր*. 18

«Հայրենիքի» խմբագրութեան

Խնդրւում է «Հայրենիքի» եւ անգլիերէն Armenia-*ի մի մի օրինակ ուղարկել չարունակ Լոնդոն Ֆարհատի հասցէին։ Ուզում են երկրի համար։ Ուղարկէք նոյնպէս «Հայրենիքի» հետ միասին 5-ական օրինակ անգլ.* Armenia *Պէյրութ։*

Ռաչտից գանգատւում են, որ իրենց չէք ուղարկած «Հայրենիքի» համարները։

Շուտով մանրամասը նամակ կը գրենք։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՕ

483

Պատճէններու մատեան No 88, *էջ* 454

1905 *ապր*. 18

Ֆարհատին, Լոնդոն

Ընկեր,

Սրանից յետոյ ձեզ կ՚ուղարկւի մի աւելորդ օրինակ «Դրօշակ», մի մի օրինակ «Pro Armenia», «*Հայրենիք*» *եւ գուցէ անգլիական* «Armenia»։ *Ստացւածները պէտք է ուղարկել ծրարներով, անգլիական թերթերի մէջ լաւ փաթաթած, ապահովագրած հետեւեալ հասցէով՝* K. M. Thomas esq.Consulat Anglais, Diarbekir (Turquie d'Asie). *Կարելի է ուղարկել նաեւ թերթերից կտրօններ. ծրարները պէտք է փոքր լինեն։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Շիրազիի մասին ձեր տուած տեղեկութիւնները ի նկատի կ՚ունենանք։ Նա յանձնարարւած էր Թիֆլիզի մեր մի բարեկամի կողմից այստեղի մի ընկերոջ։

484

Պատճէններու մատեան No 88, *էջ* 456-7

1905 *ապր*. 19

Վռամեանին, Բոստոն

Սիրելի ընկեր,

Փոստոյեանին ճանապարհ ենք դրել վաղուց։ Շատ անյարմար ժամանակ եկաւ. մի կողմից Ռուսաստանի յեղափոխական կուսակցութիւնների ժողովներին պէտք էր մասնակցել, միւս կողմից «Խորհրդի» համար եկած ընկերների հետ խորհրդակցել։ Մարդ եթէ ուղարկում էք, ուղարկէք այնպիսի տեղեր, որ նոքա ստիպւած չլինեն անջատ գործել։

Անդրանիկը(1) *խոյս է տալիս առհասարակ «ցոյցերից», բայց տեսնենք։*

Ահարոնեանը եկաւ վերջապէս։ Հիմա յոյս ունինք խմբագրական գործերը աւելի եռանդով տանել։ Հիմա Պարիզ է գտնւում։ Բագւայ դէպքերի մասին ահագին քանակութեամբ թղթեր, վկայութիւններ ունի ձեռքին։

Մեր ընկերների Սոֆիա մեկնելով(2) «*Խորհրդի*» *նիստերը չեն ընդհատւել, որով-*

հետեւ նիստեր պաշտօնական չկային։ Սպասում էինք Վիշապի(3) *ներկայացուցչին, որպէսզի «Խորհրդի» կազմը օրինական համարուէր։ Ներկայացուցիչը ողբալի Վռամն*(4) *էր, որին եթէ դու չճանաչես, Սարգիսը*(5) *պիտի ճանաչի։ Ի միջի այլոց թող Սարգիսը գրի մեզ համար նրա կենսանգրութիւնը (թէկուզ թերի), նիւթ չունինք նրա մասին։ Առայժմ զգուշանում ենք յայտարարել նրա ով լինելը, կառավարութիւնը եւ ծնողները դեռ չգիտեն։ Երկուսի զմիւռսելու եւ թաղման բոլոր ծախքերը ընկերների վրայ է, ի զուր ես անհանգստանում։*

Կովկաս զէնքի կատարեալ սով է. սաստիկ պահանջ կայ, հասցնել չենք կարողանում։ Փորձ ենք անում մի քանի արտակարգ միջոցների դիմելու։

«Խորհրդի» եւ Ռուսաստանի կուսակցութիւնների համաժողովին մասին յետոյ կը գրենք։ «Դրօշակի» բաժանորդների մասին արած առաջարկդ պարզ չհասկացանք։

Վանի գործիչների մասին մասնաւոր տեղեկութիւնները աչքի առաջ կ՚ունենանք, հարկ եղածը կ՚անենք. այսքանը միայն իմացէք, որ ակնյայտնի թշնամութեան արդիւնք են մեղադրանքի մի քանի կէտերը։

Ընկերական բարեւներ՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Վանի գործերի վերաբերեալ նամակները յանձնում ենք ընկեր Վարդանեանին(6), *որ ընտրուած է Վասպուրականի մարմնի անդամ։ Անհրաժեշտ կը լինի խիստ քննութեան։*

Ն[ՈՅՆ]

1.- Անդրանիկ – ծանօթ հայդուկապետն (Օզանեան) է, որ նկատի առնուած էր Դաշնակցութեան Խորհուրդի համար՝ որպէս պատգամաւոր Տարօն-Սասունի:

2.- Սոֆիա մեկնիլ – ակնարկութիւն այն ընկերներուն, որոնք Քրիստափորի եւ Վռամշապուհի թաղման առիթով Ժընեւէն մեկնած էին Սոֆիա:

3., Վիշապ – ծածկանուն Կ. Պոլսոյ:

4.- Վռամշապուհ Քենտիրեան, որ Քրիստափորի հետ զոհուած էր ռումբի փորձարկման ժամանակ:

5.- Սարգիսը՝ Բարսեղեան Սարգիսն է, բուն անունով Օտապաշեան Պօղոս:

6.- Միեւնոյն Բարսեղեան Սարգիսն է, որ Եւրոպա անցած էր Գրիգոր Վարդանեան անունով կեղծ անցագրով:

485

Պատճէններու մատեան No 88, *էջ* 460

1905 *ապր*. 20

Արտաշէս Յովսէփեանին, Խոյ

Սիրելի ընկեր,

Այսուհետեւ «Դրօշակ» կ'ուղարկուի Խոյ 600 *օր*[*ինակ*]. 300-*ը ձեր հասցէով եւ* 300-*ը պ. Սահակ Ստեփանեանի, համաձայն Կ. Կ. նամակի։*

Ուղարկուած մեքենան պահեցէք, մինչեւ մէկը գայ եւ գործածութեան եղանակը ցոյց տայ։

«Խորհրդի» որոշումը Վասպուրականի գործունէութեան մասին կը հաղորդենք Ատրպատականի Կենտր. կոմիտէի միջոցով։ Այնքան միջոց է յատկացուած, որ սրանից յետոյ կը դադարէք գանգատուելուց։ Միայն պէտք է խիստ ուշադրութիւն դարձնել, որ դրամը իսկապէս անհրաժեշտ ծախքերին գնայ եւ չծառայի ի վնաս յեղափոխական եռանդի ու զոհողութեան, ինչպէս դա նկատուել է մի քանի այլ դէպքերում։

Շամի(1) *ընկերներին չտապէք յանձնարարել մեր կողմից չափազանց մեծ զգուշութիւն. ամէն կերպ խոյս տան որեւէ ընդհարում առաջ բերելուց։ Թող ուշադրութիւն դարձնեն նաեւ ժողովրդի տրամադրութեան վրայ. մի քանի մասնաւոր տեղեկութիւններից երեւում է, որ ժողովրդի մի մասի մէջ սուր թշնամութիւն կայ։*

Ընկեր[*ական*] *բարեւներով՝*
ԱՐԵՒՄՏ[***ԵԱՆ***] ***ԲԻՒՐՕ***

1.- Շամ – ծածկանուն Վան-Վասպուրականի:

486

Պատճէններու մատեան No 88, *էջ* 461

1905 *ապր*. 20

Սաֆոյին(1), *Պարիզ*

Սիրելի ընկեր,

Քեզանից մինչեւ հիմա դեռ ոչ մի լուր։ Եգիպտոսից մեզ գրում են, որ Անդրանիկը փոխադրել է իր քրոջը՝ Տիկ. Աստուրեանին 10 *ոսկի։ Կասկածում են, որ դա կարող է լինել կազմակերպութեան միջոցներից։ Խնդիրը փափուկ է, գուցէ սխալւում են, բայց յամենայն դէպս հրաւիրում ենք Ցուցականի ուշադրութիւնը այս հանգամանքի վրայ։*

Պէտք է նաեւ խստիւ արգիլել դրսի հետ գրագրութիւն պահպանել։ Տեղական գաղտնիքները յայտնի են եւ դրսի ընկերներին։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Սաֆօ – ծածկանուն Ցուցական մարմնի անդամ Մարգարեան Մարտիրոսի:

487

Պատճէններու մատեան No 88, *էջ* 462

1905 *ապր.* 20

Մարտինին(1), *Աթէնք*

Ընկեր,

Յոյն-մակեդոնական կոմիտէի հետ ոչ մի յարաբերութեան մէջ մտնել չի կարելի պաշտօնական հողի վրայ. այս պատճառով աւելորդ ենք համարում եւ վկայական ուղարկելը։ Պէտք է պարզօրէն յայտնել նրանց մեր կարծիքը յոյն-բուլղարական թշնամութիւնների առթիւ, պէտք է քարոզել նրանց համերաշխութեան անհրաժեշտութիւնը ընդհանուր թշնամու դէմ։

Եդուարդը(2) *թող մի առժամանակ գնայ Բուլղարիա, կ՚ապրի կամ Սոֆիայում կամ Ֆիլիպէ։*

Ընկերակ[ան] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ի՞նչ եղաւ Վարդանը(3)։

1.- Մարտին – ծածկանուն Ցուցական մարմնի անդամ Մուրատեան Մարտիրոսի:
2.- Եդուարդ – ծածկանուն Ցուցական մարմնի անդամ Պոյաճեան Սմբատի:
3.- Խօսքը Խանասորի Վարդանի մասին է, իսկական անունով Մեհրաբեան Սարգիս:

488

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 44

ՊԷՅՐՈՒԹ
Սմբատին (1)

Ներքին գործունէութեան ծրագիր։ Զինուորական ծրագիր։ Հիւպատոսներին Դրօշակ։ Խորհրդի որոշման ժամանակաւորութիւնը եւ անհրաժեշտութիւնը։ Կարատաղի գնդակների ձուլիչ։

1.- Ռոստոմի կողմէ Ս. Զաւարեանին գրուելիք նամակի մը գլխաւոր կէտերը:

489

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 45 *եւ* 47

(*Լեւոնին*(1) *ուղարկուած* 20*ին ապրիլի* 1905)

Սիրելիս

Ձեր անելիքի մասին երկար խօսեցանք այստեղ. միշտ աչքի առջեւ ունենալով քո վերջին նամակներում չեշտուած ստիպողականութիւնը։ Մեր որոշումի մասին քեզ կը գրի Սաֆոն(2), *ես աւելորդ եմ համարում կրկնել։ Կ'ասեմ միայն այն, որ* մենք *այն խորին համոզման ենք, որ հակառակ ընթացքը բացարձակապէս պիտի վնասի Վիշապի գործին*(3) *եւ ապարդիւն դարձնի մի այն փոքրիկ համակրութիւնը, որ ներկայումս նկատւում է մի փոքրիկ եւրոպական շրջանի մէջ։ Այս պարագան աչքի առաջ ունենալով յոյս ունեմ, որ ոյժ գործ կը դնես քեզ վրայ եւ — որքան էլ ծանր լինի քեզ համար — կը յարմարացնես ձեր անելիքը գործի շահի հետ, այսինքն՝ Վիշապից վերջը*(4)։

Ընկեր Ասլանին(5) *խնդրենք յայտնել, որ թող ճանապարհ ընկնի Եգիպտոս եւ այնտեղ սպասի մեր նամակին։*

Համբոյրներով՝
Քո Ռ[*ոստոմ*]

Համբոյրներս նոյնպէս նորեկ ընկերոջ, եթէ տեղ է հասել։

1.- Սուլթան Համիտի մահափորձի ձեռնարկին մէջ կան երկու Լեւոններ, երկուքն ալ Կովկասէն եկած, մէկը Պաթումէն, միւսը Թիֆլիսէն: Ռոստոմի այս նամակը ուղղուած պէտք է ըլլայ անոնցմէ մէկուն, որ այդ օրերուն Իզմիր կը գտնուէր:

2.- Մարտիրոս Մարգարեանն է, Ցուցական մարմնի ծանօթ անդամը, որ Քրիստափորի եղերական մահէն ետք (17 Մարտ 1905), ստանձնած էր գործին ղեկավարութիւնը:

3.- «Վիշապի գործը». ակնարկութիւն է Սուլթան Համիտի մահափորձի կազմակերպութեան. այլ անունով՝ Նժոյգի գործ:

4.- «Այսինքն Վիշապից վերջը» բառերը աւելցուած են Սաֆոյի ձեռագրով:

Հարցը կը կայանար անոր մէջ, որ Սուլթան Համիտի մահափորձին զուգահեռ, որոշուած էր դաւադրական բնոյթի շարք մը ձեռնարկներ կատարել Իզմիրի մէջ թուրք պետական եւ եւրոպական հաստատութիւններու դէմ: Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին, որուն կը մասնակցէր նաեւ Սաֆոն իբրեւ ներկայացուցիչ Ցուցական մարմնի, որոշուած էր Իզմիրի խափանարարական ձեռնարկները գործադրել Վիշապի գործէն, այսինքն Սուլթանի ահաբեկումէն ետք միայն: Ահա, ա՛յս որոշումն էր (որուն մասին Սաֆոն աւելի մանրամասն պիտի գրէր), հետեւաբար Լեւոնին վրայ պարտականութիւն կը դրուէր այդ մէկը բացատրելու Իզմիրի ընկերներուն, որպէսզի չաճապարեն, այլ սպասեն Սուլթանի մահափորձին ելքին: Հարցի մասին դարձեալ Լեւոնին՝ Ռոստոմ եւս պիտի գրէր աւելի ուշ (տեսնել No 48-3-ի Ապրիլ 29-ի նամակը):

5.- Ասլան կուսակցական ծածկանունն է ծանօթ գրող Ռուբէն Զարդարեանին, որ այդ օրերուն Իզմիր կը գտնուէր:

490

Պատճէններու մատեան No 88, *էջ* 466 *եւ* 468

1905 *ապր.* 25

Պալքանեան Կեդր. կոմիտէին

Ընկերներ,

Խնդրենք յայտնել ընկեր Մերճանեանին(1), *որ իր նամակները ժամանակին ստացուել են եւ նրա մասին խօսել է ընկեր Պիոնեանը. նրան աչքի առջեւ ունինք, միայն թող լաւ պատրաստուի եւ սովորի այն ամէնը, ինչ որ հնարաւոր է այդտեղ սովորել։ Սրա հետ միաժամանակ հարկ ենք համարում աւելացնել, որ բոլոր գնացողները անհրաժեշտաբար պէտք է իմանան որեւէ արհեստ՝ երկրում մնալու եւ ազատ ապրելու համար։ Կարելի է սովորել ի միջի այլոց* 1) *լուսանկարչութիւն*, 2) *ժամագործութիւն*, 3) *հիւսնութիւն*, 4) *հայելիներ շինել*, 5) *երկաթագործութիւն*, 6) *թիթեղագործութիւն եւ այլն։ Ուրեմն եւ Գրիգորը պէտք է որեւէ մի արհեստ իմանայ, այլապէս նրան ոչ մի տեղ չեն ընդունիլ։*

Այս պայմանը խնդրենք հաղորդել բոլոր մարմիններին։

Սպասում ենք վաղուց նախկին կենտրոնական կոմիտէի հաշիւներին. ինչո՞ւ չէք ուղարկում։

Սուլինայից(2) *Սրապիոն Տարօնցի անունով մէկը մեզ ուղարկել է պատճէնը այն նամակի, որ ուղղել է ձեզ իր հաշիւների առթիւ։ Ի՞նչ խնդիր է դա. խնդրենք պարզել։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ներփակ կը գտնէք Վարդոյին(3) *գրած մեր նամակը պատճէնը։*

Ն[*ՈՅՆ*]

1.- Մերճանեան Գրիգոր (1880-1973), որ հետագային Մերճանօֆ անունով պատասխանատու դեր պիտի վերցնէր թուրք պետական դէմքերու ահաբեկման գործին մէջ:
2.- Սուլինա – քաղաք Ռումանիոյ մէջ:
3.- Վարդ-Պատրիկեան Յակոբ, որ դրամական իրացումներու պատճառով Պալքանեան Կեդր. կոմիտէն հեռացուցած էր Դաշնակցութեան շարքերէն:

491

Պատճէններու մատեան No 88, *էջ* 469

1905 *ապր.* 27

Ֆարհատին, Լոնդոն

Յարգելի ընկեր,

Ձեր չհասկացած խօսքը «փոքր» է. ծրարները պէտք է փոքրադիր լինեն, կասկած չյարուցանելու համար։

Պ. Շիրազիին մենք Սօխումի(1) *գաղթականների մասին յանձնարարութիւն չենք արել, բայց դա կարող է արուած լինել Թիֆլիզից։*

Մեր կողմից խորհուրդ ենք տալիս ձեզ շատ չտարուել Շիրազիի խնդրով. որեւէ դիմում Լանտաուէրին(2) *նպատակայարմար չենք գտնում։ Այդ ձեւով «պատժել» նշանակում է միայն հայերի վարկը ձգել։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Քաղաք Վրաստանի մէջ։
2.- Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար։

492

Պատճէններու մատեան No 88, *էջ* 470

Geneva 28 april 1905

Dear Sir,

I have received your letters.

As you find possible settle for business and to sign the contract before knowing the price of the materials, today just I have telegraphied to your adress the following dispatch:

"Voulons signer contrat, télégraphiez consentement".

As soon as I receive your answer, our fellow-comrade shall start to Vienna, having with him his real passport to sign there the contract, because we wish to settle the business in Vienna.

Yours faithfully
ROSDOMIAN

Թարգմանութիւնը.—

Ժընեւ, 28 *ապրիլ* 1905

Սիրելի Պարոն,

Ստացած եմ ձեր նամակները։

Քանի կարելի կը գտնէք գործին համար Վիեննա հաստատուիլ եւ պայմանագիրը ստորագրել նախ քան ապրանքին գիները գիտնալը, այսօր իսկ ձեր հասցէին ղրկեցի հետեւեալ հեռագրալուրը՝

«*Կ՚ուզենք ստորագրել պայմանագիր. հեռագրեցէք համաձայնութիւն*»(1)։

Անմիջապէս որ ստանամ ձեր պատասխանը, մեր ընկերը [*գործը*] *պիտի սկսի Վիեննայի մէջ, հետը ունենալով իսկական անցագիր՝ հոն ստորագրելու համար պայմանագիրը, որովհետեւ գործը կը փափաքինք հաստատել Վիեննայի մէջ։*

Հաւատարմօրէն, Ձերդ՝
ՌՈՍՏՈՄԵԱՆ

1., Հեռագիրը ամբողջութեամբ ֆրանսերէն է։

493

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, *էջ* 216

28-*ին ապր.*

ԲԱԹՈՒՄ

«*Անատոլիի*» *նաւով ուղարկւած է՝* [*Դրօշակ*] No 12 — 350 *օր*[*ինակ*], No 1 — 300 *օր.*, No 2 — 350 *օր.* No 3 — 1250 *օր. Հայր*[*ենիք*](1) N 10 - 15 — 54 *օր*[*ինակ*], *երեք տուփեր եւ ռուսերէն թերթեր, ամէնքը* 3 *պարկի մէջ, վարձքը* 100 fr., *դուք պէտք է վճարէք։*

Նիւրատ[*ուութիւնների*] *սխալները կ՚ուղղենք. հասցէներով կ՚ուղարկենք Դրօշակ։*

1.- Ամերիկայի Հ.Յ.Դ. կազմակերպութեան պաշտօնաթերթը:

494

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 49-50

29 *ապր.* 1905

Լեւոնին

(*Մասնաւոր նամակ Ռոստոմի*)

Քո դրած հարցերին պատասխանում եմ մասնաւոր նամակով թողնելով քեզ որոշել, ո՛ր կէտերը հարկաւոր ես համարում պաշտօնական կերպով յայտնելու կոմիտէին։ Սաֆոն այստեղ չէ, հարցերին կը պատասխանեմ առանձին, յետոյ ցանկը կ՚ուղարկեմ նրան։

1) *Թէ երբ պատրաստ կը լինի Վ*[*իշապ*]*ը դրա մասին գրել կարող է միայն Ցուցական մարմինը։*

2) *Երկրորդ եւ երրորդ հարցերին պատասխանել ենք նախորդ նամակով։ Կրկնում ենք, մեր խորին համոզմամբ եթէ դուք առաջ ձգէք ձեր գործը, կը խանգարէք Վ*[*իշապ*]*ի գործին եւ կը փճացնէք նրանց ծրագիրը։*

3) *Չորրորդ հարցին եւս պատասխանը տւել ենք. քաղաքական տեսակէտից ձեր գործը, անկախ, առանձնապէս կատարւած, որեւէ նշանակութիւն չի ունենալ. դա կը համարւի մի աննպատակ պատահական երեւոյթ, արդիւնք յեղափոխականների գրգռւած ջղերի։ Բայց կապւած Վ*[*իշապ*]*ի գործի հետ՝ նա կը ստանայ ներքին իմաստ եւ կը ներկայանայ բոլորին իբր անխուսափելի, տրամաբանական հետեւանք նախընթաց դէպքի։ Այն առարկութիւնը, թէ Վ*[*իշապ*]*ի մեծ գործից յետոյ*

Ո[սկեհանք]ի «փոքրիկ» գործը ազդեցութիւն չի թողնել, անհիմն է, որովհետեւ այդ երկու գործերի ընոյթը տարբեր է, Վ[իշապ]ինը ուղղւած է տաճիկ կառավարութեան դէմ, իսկ ձերը՝ եւրոպական պետութիւնների շահերի դէմ։ Եթէ Վ[իշապ]ի գործը հանդիպի դիպլոմատների անտարբերութեան, կատարելապէս արդարացուցիչ կը լինին Ո[սկեհանք]ի ձեռնարկները։

4) *Երկու ընկեր պակսելով, Վ[իշապ]ի գործը կանգ չի առնելու*(1)։ *Մնացածները մտադիր են շարունակել։*

5) *Մեր յիշած մարդը նոյն Կոնստանդինն է*(2)։

Սրա հետ միաժամանակ հարկ ենք համարում չեշտել, որ ոչ մի բոպէ չպէտք է թուլացնել ձեր պատրաստութեան գործը։ Քո վերջին նամակը իմ մէջ կասկած յարուցեց, հնարաւոր կը լինի՞ արդեօք իրագործել ձեր բոլոր ձեռնարկները։ Անկեղծ խորհուրդ կը տամ՝ աւելի լաւ է ընտրել մի երկու բան միայն, յանձնել կատարելապէս վստահելի մարդկանց, քան թէ դիմել, ընկնել շատ ծրագիրների ետեւից եւ վերջը գուցէ ամօթով մնալ։

Եդուարդի(3) *մասին կարգադրութիւն է եղել Բուլղարիա գնալու։*

Գրիր այն հարցերը, որին հարկաւոր է պաշտօնական պատասխան գրել։

1.- Ռոստոմի ակնարկութիւնը Քրիստափոր Միքայէլեանի եւ Վռամշապուհ Քենտիրեանի է, որոնք զոհ գացած էին ռումբերու փորձարկման։
2.- Կոստի Համբարձումեան։
3.- Բուն անունը՝ Սմբատ Պոյաճեան, Իզմիրի գործիչներէն։

495

Պատճէններու մատեան No 88, *էջ* 471

1905 *ապր.* 29

Լօրիսին(1), *Պարիզ*

Սիրելի ընկեր,

Ներփակ ուղարկում ենք 1380 fr. *չէկ, որից* 380 fr. *Ֆընտրկլեանի վերցրած գումարի փոխարէն է, իսկ* 1000 fr. Pro Armenia-*ի համար* (*Մայիս ամսւայ հաշւին*)։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Լորիս – Յովհ. Լոռու-Մելիքեանն է։

496

Պատճէններու մասեան No 88, *էջ* 473-4

1905 *Մայիս* 2

Սաֆոյին, Վիէննա

Սիրելի ընկեր,

Հաշիւներդ ստացանք, ինչպէս նաեւ անցագրի թերթիկները։ Խնդիրը դժուարացաւ նրանով, որ ուզում են նոյն անունով լինի անպատճառ։ Բանն այն է, որ մեր բարեկամները խորհուրդ չեն տալիս այդ տեսակ անցագրեր ներկայացնել դեսպանատուն՝ փոխել կամ բաժանել տալու համար։ Իրենք երբեք այդ տեսակ բան չեն անում։ Այդ էր պատճառը, որ պատւիրեցինք մի բոլորովին նորը։ Այսօր սպասում ենք վերջնական պատասխանի նորը ստանալու մասին։ Կ՚ուղարկենք այդ էլ, գուցէ դա աւելի յարմար գտնես, քան թէ հինը։ Իսկ Աշոտի համար պատւիրածը ուղարկում ենք ներփակ։

Ռոստոմի գալը մնաց։ Պարսիկը այնպէս է ուզում գործը տանել, որ բացի 10,000 fr. *ավանսից*(1), *պիտի մեր փողով գնենք ապրանքը։ Դա արդէն մեծ րիսկ կը լինի մեր կողմից։ Ուրեմն դեռ եւս պէտք կը լինի նամակով շարունակել բանակցութիւնները։*

Ներփակ կը գտնես նաեւ 6,000 fr. *չէկ, դրանից* 2,000 *քեզ,* 2,000 *Լիզ*(2), *իսկ մնացեալ* 2,000-*ը ուղարկիր Ֆիլիպէ, Երւանդ Ալաջալեանին։ Որպէսզի կոմիտէի անդամները չիմանան, թէ ինչ գործեր են կատարւում Ցուցականի համար, անհրաժեշտ է մի առանձին գումար դնել Ֆիլիպէի ընկերների տրամադրութեան տակ, որով նրանք կարողանան գործադրել առանց կոմիտէի բոլոր անդամներին հաշիւ տալու։ Արդէն կոմիտէի գանձարանից ծախսւած է* 1500 fr.-*ի չափ գումար, որ պէտք է շուտով տեղը դնել։ Մեզանից էին ուզել, գրեցինք որ դու կ՚ուղարկես։ Կոմիտէից անկախ ծախսելու մասին խօսել է Ռոստոմը Սոֆիա եղած ժամանակ։*

Մնդիկը յարմար է Ռուբինայի ձեռքով ուղարկել։

Մեր հեղուկներով պէտք է լւանալ հետեւեալ կարգով։ Առաջ պէտք է No 1-*ով քսել, քիչ ժամանակ պահելուց յետոյ պէտք է բամբակով հանել եւ տեղը մաքրել մի քանի անգամ ջրով, այնպէս որ առաջին հեղուկի հետքը չմնայ։ Դրանից յետոյ պէտք է քսել* No 2-*ը, եւ ապա դարձեալ մաքրել ջրով։ Եթէ այսպիսով բոլորովին չմաքրւի, պէտք է կրկնել նոյն կարգով։ Մի խօսքով պէտք է աշխատել, որ մէկ հեղուկը միւսի հետ չխառնւի թղթի վրայ, որովհետեւ դրանց խառնուրդից առաջ է գալիս դիրտ, որը մնում է թղթի ծակոտիների մէջը եւ այլեւս չի մաքրւում։*

Ի՞նչ հարցի մասին էիր ուզում խորհրդակցել Ռոստոմի հետ, եթէ նա այդտեղ դար։ Եթէ հարցը քիչ թէ շատ կարեւոր է, կը խնդրէինք — որքան էլ ձանձրալի լինի քեզ համար — ինքդ դայիր։ Անցագրի եւ այլ խնդիրներ էլ այստեղ կը վերջացնէինք։ Համաձայնութեան դէպքում հեռագրիր Oui, *որ անցագիրը չուղարկենք եւ* Non, *եթէ գալու չլինես։*

Հեռագրի պարզ հասցէն Droschak Genève. *Եթէ քո գալը հնարաւոր չէ, իսկ խոր-*

հրդակցութեան նիւթը կարեւոր, հեռագրիր Viens. *այս դէպքում Ռոստոմը անմիջապէս ճանապարհ կ'ընկնի, իսկ եթէ այդ էլ աւելորդ է, հեռագրիր* [*անընթեռնելի ֆրանսերէն բառ*]։

[*Ընկերական բարեւներով՝*
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ]

1.- Հայատառ՝ ֆրանսերէն բառ՝ կանխավճար իմաստով:
2.- Լիզը Ռոստոմի կին Լիզան է, որ Ֆիլիպէ (այժմ Փլովտիւ) քաղաքին մէջ հայկական դպրոց հիմնած էր:

497

Պատճէններու մատեան No 89, *էջ* 4

1905 *մայիս* 2

Լօրիս Մէլեքեանին, Պարիզ

Սիրելի ընկեր,

Ներփակ ուղարկում ենք 1,000 fr.-*ի չէկ։ Մնացեալ պահանջի մասին այսօր կը խօսինք։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՕ

498

Պատճէններու մատեան No 88, *էջ* 475

1905 *մայիս* 4

Սաֆոյին, Վիէննա

Սիրելի ընկեր,

Ներփակ կը գտնես երկրորդ չէկը, դարձեալ 6000 fr. (5714 fr. 30), *որից* 2000 *Լիզի համար, իսկ* 4000-*ը Շամի։*

Բացի այդ, գրւած է արդէն Մ. Ք., որ չուտով որոշ գումար փոխադրեն Վրէժ Շամի պէտքերի համար(1)։

Շամի նամակը կը գրենք չուտով։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Մ. Ք.-ը Թիֆլիսն է, Շամը՝ Վան-Վասպուրական, Վրէժը՝ Ատրպատական:

499

Պատճէններու մատեան No 88, *էջ* 476

Ռուսերէն նամակ

1905 *մայիս* 4

Սիրելի ընկերներ(1),

Քարտուղարութիւնը դեռեւս չի կարողանում ճիշտ գործել քանի որ ոչ բոլոր կուսակցութիւններն են բիւրոյում նշանակել իրենց ներկայացուցիչներին։ Հնարաւոր է չսպասելով դրան օրերս դիմենք բոլոր կուսակցութիւններին՝ արտայայտելու կուսակցական կոմիտէի կազմի հարցով։

Ձեր նամակը ցոյց տուեցինք ընկեր Ձերնովին(2)*։ Նրա խօսքերով՝ Ձեզ ուղարկւել են բոլոր փաստաթղթերը, զարմանում է, թէ ինչո՞ւ չեն դրանք ստացւել։ Խոստացաւ նորից ուղարկել՝ մէկական օրինակով։*

Մեր ընկեր Բեկը(3) *Վարշաւայում է, նշանակում է, կը տեսնւի ձեզ հետ։*

Ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը։

ՌՈՍՏՈՄ[?]

1.- Վերեւում կայ մատիտով աւելացուած հայերէն գրութիւն՝ Լեհացիներին P.P.S.: Խօսքը Լեհաստանի Սոցիալիստական կուսակցութեան՝ P.P.S.-ի մասին է:

2.- Ձերնով Վիկտոր (1873-1952) ռուսական Էսէռների ճանաչուած առաջնորդ: Ռուսաստանի Սահմանադիր ժողովի առաջին եւ վերջին ղեկավարը:

3.- Անձը պարզել չյաջողուեց: Բայց հնարաւոր է սա Բոլեսլաւ Բերգերն է՝ P.P.S.-ի մարտական թեւից, ով 1904-ի Նոյեմբերի 13-ին Վարշաւայի Գրժիբովսկի հրապարակում ոստիկանների արիւնոտ կոտորածի կազմակերպիչն էր, որը լեհ յեղափոխականների առաջին մարտական գործողութիւնն էր՝ 1863-ի ապստամբութիւնից յետոյ, քանի որ Ռոստոմը սիրում էր անձնանունը կեղծանունի վերածելու նման եղանակը:

500

Պատճէններու մատեան No 88, *էջ* 477

1905 *մայ.* 5

Վ. Ղազարոսեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Խնդրենք տեսնւել գալիք յառաջիկայ յանձնակատարի հետ եւ հարցնել, համաձայն է արդեօք ատրճանակներ եւ համապատասխան թւով փամփուշտներ տեղափոխել։ Եթէ համաձայն է, ամէն անգամին քանի հատ, ինչ քանակութեամբ (ուղարկւելիք ատրճանակները մաուզէրեան են) եւ ինչ պայմաններով։ Որպէսզի նա չծանրաբեռնի, մենք կը պակասեցնենք թերթերի առաքումը։ Հարցրէք նոյնպէս համաձայն կը լինի արդեօք ապագայում տեղափոխի եւ պայթ[ուցիկ] նիւթի փոշի (բոլորովին անվտանգ տեղափոխութեան ժամանակ)։

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵԻՄՏ[ԵԱՆ] ԲԻԻՐՕ

501

Պատճէններու մատեան No 88, *էջ* 479

1905 *մայ.* 6

Լօրիսին եւ Աւետիսին(1), *Պարիզ*

Սիրելի ընկերներ,

Ինչպէս ձեզ յայտնի է, վերջին միջկուսակցական համաժողովում որոշուած է ունենալ մի կոմիտէ Պարիզում, որի նպատակը պէտք է լինի դրամ ժողովել եւ հայթայթել կռւող կուսակցութիւններին, ինչպէս նաեւ նպաստներ հասցնել ցարիզմի զոհերին։

Որովհետեւ որոշուած է նոյնպէս, որ այդ կոմիտէի մէջ մտնեն Պարիզի յայտնի հասարակական գործիչներից մի քանի հոգի, առաջարկում ենք ձեզ, որ սոց[*իալ*]*.* ռեւոլ[*ուցիոնէր*](2) *ներկայացուցիչ Ռուբանովիչի հետ միասին (սրան նոյնպէս գրւելու է այս մասին) հրաւիրէք Սակարդվելօ-ի խմբագիր Դէկանոզովին եւ լեհ սոց. կուսակցութեան ներկայացուցչին — որին ճանաչում է Ռուբանովիչը եւ միասին համաձայնութեան գալով, հարկ եղած դիմումները անէք։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[***ԵԱՆ***] ***ԲԻՒՐՕ***

1.- Նամակը ուղղուած է Յովհ. Լոռու-Մելիքեանին (Լօրիս) եւ Աւետիս Ահարոնեանին:
2.- Բնագրին մէջ ռուսատառ:

502

Պատճէններու մատեան No 88, *էջ* 480

Ռուսերէն նամակ

1905 *մայիս* 6

Ընկեր Դեկանոզովին(1), *Պարիզ*

Ընկեր Զերնովի հետ միասին մենք որոշեցինք գրել մեր ներկայացուցիչներին [*ջնջուած լատինատառ բառ*], *որ նրանք հաւաքւեն ձեզ, ինչպէս նաեւ* P.P.S.-*ի ներկայացուցիչների հետ եւ առանձնացնեն այն կարեւոր հասարակական գործիչներին, որոնք կը համաձայնւեն մտնել կոնֆերանսի կողմից ծրագրւած նւիրատւութիւնների համար նախատեսւած կոմիտէի մէջ։*

Հարկաւոր է նաեւ համապատասխան անւանում ընտրել մեր բիւրոյի համար։ Առաջարկւում է հետեւեալը՝ Bureau de l'Union des partis militants de l'Empire Russe(2). *Կարող է դուք ընտրէք աւելի յարմար ու գեղեցիկ անւանում։*

Քարտուղարութեան ժամանակաւոր հասցէն է՝ M. et Mel. Panosian Vardan, Rue de l'Ecole de Chimie, 2։

Հեռագրի համար՝ Droschak, Genève, *ընկերոջ հետ ստուգեցի։*

1.- Դեկանոզովը (Դեկանոզիշվիլի) Գէորգի – 1904-ին ստեղծուած վրաց սոցիալիստ-ֆեդերալիստների ղեկավարներից էր եւ Ռոստոմի ընկերը: Նաեւ՝ հետագայում խորհրդային արտաքին հետախուզութեան ղեկավար (1938-1939 թթ.) Վլադիմիր Դեկանոզովի հայրը:
2.- Ֆրանսերէն՝ Ռուսական կայսրութեան [դէմ] պայքարող կուսակցութեանց Միութեան բիւրօ:

503

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 216-18

6 *մայ*[*իս*, 1905]

Մ. Ք.(1)

Նահանգապետի խնդիր։ Ռուսները նորից եկան խօսելու նահանգ[*ապետի*] *խնդրի մասին։ Նրանք շատ են պնդում, որ այդ գործը իրենց թողնի, կամ գոնէ կատարողը լինի իրենցից։ Մենք կարծում ենք, որ կարելի է նրանց այդ զիջումը անել։ Թող որոշումը տրւի երկու կուսակցութիւնների կողմից, իսկ կատարողը լինի նրանցից՝ թէկուզ մերոնց աջակցութեամբ։ Դա նպատակայարմար կը լինի, աչքի առաջ ունենալով մահմեդականների լարւած դրութիւնը։ Յիշեցնում ենք ձեզ, որ համաժողովին մեր կողմից առաջարկ եղաւ Նակաշիձէի դէմ փորձի նման դէպքերում՝ որոշումը տրւի մի քանի կուսակցութիւնների կողմից, մասնաւորապէս այն ազգի կուսակցութեան, որին պատկանում է տեռորի ենթարկւելիք անձը։ Այնպէս որ շատ լաւ կը լինէր, եթէ Նակաշիձէի որոշման տակը ստորագրէր նաեւ Սակարթվելոն*(2)։

Զէնքի խնդիր։ Մեր ծանօթ վաճառականի հետ դժւարութեամբ է գործը գլուխ գալու։ Բանից դուրս է գալիս, որ բացի 10,000 fr. *նախավճարից, պէտք է վճարենք նաեւ ուղարկւած ապրանքի արժէքը։ Մի խօսքով՝ սա պէտք է առայժմ համարւի մի վերջին միջոց, որին կը դիմենք ծայրայեղ դէպքում։ Առայժմ, թէ Աստուած սիրէք, աշխատէք գլուխ բերել Նաւահանգստի գծի գործը։ Մի հրեայ կոմիսիոնէր նորերս պատրաստականութիւն է յայտնել փամփուշտը փոխադրել այլ եւ այլ տեղեր, ինքը մի գերման գործարանատիրոջ ներկայացուցիչ է։ Սպասում ենք լրացուցիչ տեղեկութիւնների։ Եթէ տեսնէք, որ Նաւահանգստի գծից յոյս չկայ, հեռագրէք, որ դարձեալ այդ պարսիկ վաճառականից բռնենք։*

Մարտիրոսի տղաներին հարցրէք, թէ նրանցից որը կարող է եւ ընդունակ է անցնելու Շապին-Գարահիսարի կողմերը Կիրասոնի գծով, ծանօթանալու համար այնտեղի պայմաններին։

Շամի համար Վրէժ կամ Մինարէթ չուտով մի գումար փոխադրէք(3)։ *Շատ են գանգատւում Արեւել. Բիւրոյից, որ նոյնիսկ նամակներին չի պատասխանում։ Վ*[*րէժ*]*ի գծով փոխադրում ենք մեր կողմից* 2000 fr., *այսօր էլ փոխադրում ենք* 4000 fr.։

Այսօր մի վրացի սոց-դեմոկրատ մեզ ցոյց տուեց Իվերիայի մի լուրը, որով մեր Արշակը մատնիչի դերի մէջ է դուրս բերւած։ Նրա ասելով իրենք «քննութիւն» են բաց անելու եւ եթէ «հաստատւի» կասկածը, «տեռորի են ենթարկելու» Արշակին։ Զենք կարծում, որ լուրջ բան լինի վրացու ասածը, բայց վաղօրօք պէտք է զգուշացնել պէտք եղած տեղը, որ Արշակը մեր ընկերն է եւ որ կազմակերպութեան հետ չխաղան։

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղղուած նամակ:

2.- Վրացական սոցիալիստ-ֆեդերալիստներ կուսակցութիւնը: Դրոյի կողմէ ահաբեկուած Պաքուի նահանգապետ Նակաշիձէն ազգութեամբ վրացի էր:

3.- Նաւահանգիստը՝ Պաքումի ծածկանունն է, Շամը՝ Վան-Վասպուրականի, Վրէժը՝ Ատրպատական-Թաւրիզի, իսկ Մինարէթը՝ Սալմաստի:

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 459

504

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 218

6 մայիս

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Կրկնել Մ. Ք.-ի նամակից նշանակած մասերը(2)։

Նիթրայի(3) *ուղարկածները ստանում ենք, բայց խնդրում ենք տպագրութեան համար սահմանուած լուրերը* ***բաց*** *թանաքով գրել, իսկ ուր կազմակերպական գաղտնիքներ կան, կամ անուններ — գաղտնի թանաքով եւ ոչ թէ հակառակը անել։*

1.- Ոսկանապատ-Պաքու ուղարկուած գրութիւն:

2.- Նշանակուած մասերը կը վերաբերին նախորդ՝ Մեծ Քաղաք – Թիֆլիս ուղղուած 6 Մայիսի նամակին «Նախանգապետի խնդիր» եւ «Զէնքի խնդիր» բաժիններուն:

3.- Յարութիւն Շահրիկեանի:

505

Պատճէններու մատեան No 88, *էջ* 481

1905 *մայ.* 8

Պալք. Կենտր. կոմիտէին,

Սիրելի ընկերներ,

Զարմանքով լսեցինք, որ դեռ եւս արհեստանոցի գործը գլուխ չի եկել եւ որ Գրիգորը Շուշա է գնացել։ Ինչպէս եւ հեռագրով հաղորդել էինք, անմիջապէս բերել տուէք Գրիգորին, հայթայթէք բոլոր անհրաժեշտ ծախսերը, եւ թող տղաները մաս մաս սովորեն։

Ուղարկում ենք առայժմ 20 *տետր նւիրատոմսեր մինչեւ նորերը պատրաստելը* (No 1610[?]-*ից մինչեւ* No 16584)*։ Բացի այդ՝* 50 *բլանկ կենտ. կոմիտէի համար եւ* 100-*ը շրջանի կոմիտէների։*

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ներփակ չէկը (5000 fr.) *կը խնդրեն յանձնել Սաֆոյին։*

506

Պատճէններու մատեան No 88, *էջ* 482

1905 *մայ.* 8

Լեռնեանին(1), *Բերլին*

Յարգելի ընկեր,

Կատարելապէս համամիտ ենք ձեր առաջարկին ուսանողական կազմակերպութիւնների վերաբերեալ։ Մենք եւս այդ ուղղութեամբ աշխատանքը համարում ենք անհրաժեշտ։ Արդէն Պարիզում, Լոնդոնում եւ այլ տեղեր սկսել են կազմակերպել խմբեր «Ջանքի» ձեւով(2)*։ Շատ ուրախ կը լինէինք, եթէ մի մանրամասը ծրագիր մշակէիք խմբերի պարապմունքների մասին։ Ընկեր Վարանդեանը պատրաստ է յանձն առնել շրջագայիլ։ Բայց առայժմ ծանրաբեռնուած լինելով այստեղի աշխատանքով, պէտք է յետաձգել։ Ծրագիր կ՚ուղարկենք, հէնց որ պատրաստ կը լինի։*

Ընկ. բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[*ԵԱՆ*] *ԲԻՒՐՕ*

Յ. Գ.— Խնդրւում է ուղարկել Ուսանող. միութեան վերաբերեալ գրքերի, իրերի ցանկը։

1.- Լեռնեան – ծածկանուն Նազարեանց Լիպարիտի:
2.- «Ջանք»ը Ժընեւի Հ.Յ.Դ. ուսանողական խումբն էր:

507

Պատճէններու մատեան No 88, *էջ* 483

1905 *մայ.* 9

Գիլանի կոմիտէին, Ռաշտ

Ընկերներ,

Ստացանք ձեր 15 *ապր. նամակը։ Այս անգամ ուղարկւում է ձեզ* 800 *օր*[*ինակ*] *Դրօշակ, կ՚ուղարկւին նաեւ այլ եւ այլ բրօշիւրներ։ Խնդրենք հոգ տանել եւ ժամանակին ապահով տեղ հասցնել։*

Ընկեր[*ական*] *բարեւներով՝*
ԱՐԵՒՄՏ[*ԵԱՆ*] *ԲԻՒՐՕ*

508

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 219-21

Մայ. 9

Մ. Ք.(1)

(*Ուղարկուած Խաստուրովի*[?] *ձեռքով*)

Conférence-*ի մասին ձեզ գրուած է* 15 *ապր.* (..... *հասց.*)(2)։ *Պակասը կը լրացնի Մհերը*(3) *որ արդէն այդտեղ կը լինի։*

Ծրագիրը պատրաստ է, շուտով կը յանձնենք տպագրութեան։

Փող անպատճառ ուղարկէք, հարկաւոր է։ Զմոռանանք ասել, որ Շամ փոխադրել ենք 2000 + 4000 fr.։

Վաճառականը ինքը փող չունի, որ ինքը ատրճանակներ գնի։ Պէտք է ուրեմն մեր փողով անել։ Դա արդէն մեծ ռիսկ կը լինի մեզ համար։ Գուցէ մենք գտնենք ինքներս ծախւելու տեղը, քիչ քիչ գնենք եւ վաճառականի հետ միմիայն փոխադրութեան մասին պայման կապենք։ Այս գործը ձգձգւելու է։ Կրկին անգամ չեշտում ենք Նաւահանգստի խնդրի անհրաժեշտութեան վրայ։ Դա ամենալաւ գործը կը լինի, եւ ինչ ուզենանք կարող կը լինենք փոխադրել։

Վարդին(4) *դրամ ուղարկելը կարող է խայտառակ ելք ունենալ։ Բանն այն է, որ նա հեռացուած է Պալքան. շրջանից։ Բռնած դիրքը խայտառակ է։ Հրաժարւում է յանձնել նորընտիր կոմիտէին* 6000 fr.*ի չափ գումար։ Հաւանական է արդէն ծախսած լինի, կամ իր պարտքերը վճարած։ Խորհուրդի որոշմամբ Բիւրոն պահանջել է այդ գումարը — ոչ մի պատասխան։ Մի քիչ յետոյ եթէ ոչինչ չստանանք, պիտի պաշտօնապէս հաղորդենք բոլոր մարմիններին։ Բայց դուք զգուշացրէք այլ եւ այլ տեղեր, որպէսզի թիւրիմացութիւններ չպատահեն։ Ահա թէ ինչու հեռագրով խնդրեցինք ձեզ (հեռագիրը Մլուկների Սարսափի անունով էր) անմիջապէս կարգադրել, որ ուղարկուած դրամը փոխադրուի Պիոնեանին*(5)։ *Եթէ չէք արել, անմիջապէս արէք, եւ հեռագրով, թէ չէ դրա գլխին էլ կարող է քար ընկնել։*

Զգիտենք, թէ ինչ ձեւով է արտայայտւել ձեր մասնակցութիւնը «ազգային ժողովին»։ Մեր կարծիքով «պաշտօնական» մասնակցութիւնը բոլորովին սխալ կը լինի։ Սխալ է եղել եւ Ոսկանապատի հայ-թիւրքական կոմիտէին պաշտօնական մասնակցութիւնը։ Ինչո՞ւ անպատճառ իբր դաշնակցական պէտք է մտնել։

Այսօր կարդացինք հեռագիրներում, որ Երեւանում հայերը եւ թիւրքերը իրար կոտորում են։ Շատ անհանգիստ ենք։ Հարկաւ ժամանակին կը տեղեկագրէք։

II *Կենտր. Կոմիտէի*(6) *շրջաբերականը, ռուսերէն լեզուով, ստացանք։ Քիչ անխնամ է խմբագրուած։* «.....» «.....» «.....»(7) *չեն կարող տեռորի ենթարկուել։ Տեռոր են ենթարկւում նրանք, որոնք* .....(7). *կարծես թէ ժանդարմը ուրիշ պաշտօն ունի, բացի ժողովրդական ազատութիւնը ճնշելուց եւ մենք մեր գլխի վրայ պիտի պահենք այն ժանդարմին կամ ոստիկանին, որը «իր պարտականութիւնը» կատարելով մեզ ձերբակալում է, հալածում եւ փախչելու դէպքերում խփում, սպանում։ Դուրս է գալիս, որ մեր կռիւը «վատ» ժանդարմների դէմ է եւ ոչ որոշ սիստեմի։ Եւ վերջապէս ումն ենք ուզում համոզել, յորդորել* ?... *միամտութիւն չէ՞ մի յեղափոխ. կազմակերպութեան կողմից։ Այս անխնամ*

խմբագրութիւնը նկատւում է առհասարակ այդտեղի շրջաբերականների մէջ։ Հարկաւոր չի լինել արդեօ՞ք մի խմբագրական մասնաժողով ընտրել մեր բոլոր շրջաբերականների համար։

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղարկուած նամակ։
2.- Ռուսատառ անընթեռնելի անուն։
3.- Համօ Օհանջանեանը։ Տպագրութեան յանձնուելիք ծրագիրը «Կովկասեան Նախագիծ»ն է։
4.- Վարդ-Պատրիկեան, ծանօթ Արվախի ծածկանունով, որ ի վերջոյ պիտի արտաքսուէր Դաշնակցութեան շարքերէն եւ ահաբեկուէր (1907)։
5.- Կարապետ Պիոնեան – Պալքանի Կ. կոմիտէութեան անդամներէն։
6.- II Կենտ. կոմիտէն Սարուստան-Ռուսաստանի Հ.Յ.Դ. կազմակերպական ցանցին մէջ կը կազմէր Ջրաբերդ-Կարսի Կ. կոմիտէութիւնը։
7.- Դարձեալ ռուսատառ անընթեռնելի նախադասութիւն։

509

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 51-53

մայիս 9

ՇԱՄ(1)
(*Վիշապի վրայով*)

Ստացանք Վիշապի ընկերներին ուղղած ձեր 20 Մարտի նամակը։ Ձեր տրտունջների առթիւ մի անգամ արդէն գրել էինք։ Հիմա էլ ստիպւած ենք մի քիչ կանգ առնել դրանց վրայ, մանաւանդ որ ձեր նամակում նկատում ենք գոյների խառնում։ Գրում էք, որ դուք ստացել էք ժողովրդի 200 օսմ. ոսկի զէնքի համար, բայց ստիպւած էք եղել ծախսել անմիջական պէտքերի վրայ, մասնաւորապէս Շահէնի եւ Բարձրաւանդակի բազմաթիւ զինուորների(2)։ *Մինչդեռ ոչ մի խօսք չէք ասում Շահէնի ձեզ յանձնած* 171 *ոսկու մասին, եւ ձեր ուղարկած հաշիւների մէջ (մինչեւ Հոկտեմբերի վերջը) այդ* 200 *ոսկու մասին ոչ մի խօսք չկայ։ Այդ* 200*-ին կից վերցրել էք* 300 *ոսկի պարտք, ուրեմն ունեցել էք* 500 *ոսկի պարտք, մինչդեռ ձեր վերջին նամակում խօսելով հանդերձ Աւարայրի*(3) 100 *ոսկի պարտքի մասին, բոլորովին չէք յիշում ձեր* 500 *ոսկի պարտքը։ Եւ ինչո՞ւ առանց մեզ մի տող գրելու այդ մասին, դուք ձեզ թոյլ էք տալիս ասել. «բայց ի մեծ ցաւ մեզ եւ երկրի ժողովրդի՝ արտասահմանը քնել է խոր քնով եւ այլն...»։ Յետոյ, ինչո՞ւ կանոնաւոր հաշիւ չէք ուղարկում իր ժամանակին որպէսզի կարողանանք հետեւել ձեր ծախքերի եւ պէտքերի ընթացքին։*

Ձեր վերջին հաշիւը եղել է մինչեւ հոկտ. վերջը։ Առայժմ փոխադրւած է ձեզ 4000 fr., *սպասելով ձեր մանրամասը հաշւին։ Թողեցէք ձեր հնաւանդ տրտունջների ձեւը, պահպանեցէք կանոնաւոր յարաբերութիւն Վ.[իշապ]ի գծով առայժմ մեզ հետ։*

Մենք արդէն ձեզ գրել էինք, որ Արեւել. Բիւրոն չափազանց ծանրաբեռնուած լինելով՝ առայժմ միաժամանակ մեզ հետ եւս պահպանէք ձեր յարաբերութիւնը։ Ձեր գլխաւոր սխալը կայանում էր նրա մէջ, որ տեղական գործերը սկսելիս, աչքի առջեւ չէք ունեցել Ընդհանուր Ժողովի գծած բիւդժէի սահմանը, այն է ընդամէնը 20,000 fr., *որի մի մասը առաջւանից տրւած է եղել։ Հիմա հաղորդելով ձեզ Խորհրդի որոշումները, յոյս ունենք, որ ճշտիւ կը հետեւէք նրանց։ Ինչպէս կը տեսնէք, զէնքի համար նշանակուած է* 80,000 *ր.*, *իսկ տեղական ծախքերի համար* 20,000 *ր.։ Ձեր պարտականութիւնն է հետեւել, որ դրամի շատութիւնը վնաս չբերի գործին, որ աւելորդ ծախքերի դուռ չբացւի եւ դրանից պակասի գործիչների անձնական զոհողութեան ոգին, մի բան, որ դժբախտաբար նկատւել է ուրիշ վայրերում։*

Նոյն որոշումները յայտնւած է ձեզ Վրէժի վրայով սրանից 2 *շաբաթ առաջ։*

Մենք խնդրել էինք ձեզանից մանրամասը տեղեկութիւններ ճանապարհների, կիրճերի, ամրութիւնների մասին, զօրքի քանակութեան այլ եւ այլ տեղերում. քաղաքի յատակագիծը եւ այլն։ Ինչո՞ւ չէք ուղարկում։ Ձկար նոյնպէս ձեր տեղեկագիրը, որ ուզել էինք «Խորհրդի» համար։

Գրում էք, որ այդտեղ հրացաններ կարելի է գնել։ Ի՞նչ հրացաններ են արդեօք։ Կարելի՞ է վստահել, ի՞նչ գներով կարելի է ձեռք ձգել եւ ինչ քանակութեամբ։

Խորհուրդի որոշումները(4)։

1.- Վան ուղղուած նամակ, Պոլսոյ (Վիշապ) վրայով:

2.- Շահէն ծածկանունը գործածուած է հայդուկապետ Անդրանիկի համար, երբ վերջինս Սասնոյ (Բարձրաւանդակ) կռիւներէն ետք անցաւ Վան-Վասպուրական, նախքան Ատրպատականի (Վրէժ) ու Կովկասի ճամբով Ժընեւ մեկնիլը:

3.- Աւարայր՝ ծածկանունն է Ատրպատականի Խոյ քաղաքին:

4.- Նշուած որոշումները չկան սեւագրութեան մէջ. անոնք պիտի աւելցուէին հաւանաբար նամակի արտագրութեան ժամանակ: Արդարեւ, ինչպէս յիշուած է («Նոյն որոշումները յայտնուած է ձեզ Վրէժի վրայով սրանից 2 շաբաթ առաջ»), արխիւային թիւ 46-7 փաստաթուղթը կը ներկայացնէ Ատրպատականի Կ. կոմիտէին ուղարկուած այդ նամակը, Ռոստոմի ձեռագրով եւ Արեւմտեան բիւրո ստորագրութեամբ, ուր շատ աւելի լայն կերպով անդրադարձ կայ Դաշնակցութեան Խորհուրդի այդ որոշման մասին (Տես Ռոստոմ, Նամականի, Պէյրութ 1999, էջ 384-5):

Տեղին է մատնանշել, որ Խորհուրդի որոշումը իսկապէս բացառիկ էր, երբ նկատի ունենանք, որ Վասպուրականի համար Երրորդ Ընդհ. ժողովի քուէարկած 20,000 ֆրանքին դիմաց, այժմ կը յատկացուէր 100,000 ռուբլի, որ այդ տարիներուն հաւասար էր 250,000 ֆրանքի:

Ստորեւ կը մէջբերենք ամփոփ մէկ արձանագրութիւնը Խորհուրդի այդ որոշման («Հ. Յ. Դաշնակցութեան Խորհրդի արձանագրութիւնը, 1905 թ. Մայիս», փաստ. թիւ 1567ա-15).–

<u>Տաքտիկ – կենտրոնացման հարց</u>

Ի նկատի առնելով, որ եւրոպական ազդու միջամտութիւն առաջ բերելու եւ Հայկ. հարցը լուծելու համար եւայլն, անհրաժեշտ է երկարատեւ, ուժեղ դիմադրութիւն, իսկ այդպիսի դիմադրութիւնը հնարաւոր է միայն լուրջ պատրաստութիւնից յետոյ՝

Խորհուրդը որոշեց,

Խոյս տալով ամէն տեսակ կանխաժամ ու վտանգող ռեւէ ընդհարումից, զգուշաւոր, լիակատար եւ իրական պատրաստութեամբ հայ կռուող ազգաբնակչութեան մի զգալի մասը զէնքով դիմադրելուց յետոյ՝ ընդհանուր շարժում առաջ բերել Վասպուրականում եւ Լեռնավայրում [Կիլիկիա]:

Ամէն կերպ աշխատել յիշեալ երկու վայրերի շարժումները համաձայնեցնել իրար հետ:

510

Պատճէններու մատեան No 88, *էջ* 484

1905 *մայ.* 10

«Վրէժ» Կենտր. կոմիտէին

Ընկերներ,

Ձեր 1904 *թ. հաշիւը ստացել ենք։ Մի քանի անգամ մենք ձեզ յայտնել ենք, թէ ուր եւ որքան թերթ է գնում, բայց դուք երեւի կարեւորութիւն չէք տալիս։ Ահա վերջին անգամ կապոցներով ուղարկւած թերթերի ցանկը, որ խնդրենք պահել, որովհետեւ այդպէս էլ շարունակելու ենք եթէ փոփոխութիւն չլինի ձեր կողմից։*

Թեհրան — 100 *օր[ինակ]*

Թաւրիզ — 400 *օր[ինակ]* (*Յակովբեան*) 625 *օր[ինակ]* (*Բժիշկի հ.*), 500 *օր[ինակ]* (*Բողարեան կամ Մեծբայեան*)

Խոյ — 300 *օր[ինակ]* (*Արտ[աշէս] Յովս[էփեան]*) *եւ* 400 (*Սահ. Ստեփան*)

Սալմաստ — 220 *օր[ինակ]* (*Ֆրանգ[եան]*)

Արտաբիլ — 700 *օր.* (*Գր. Մինասեան*), 600 (*Սահակեան* via Tauris)

Ռաշտ — 800 *օր[ինակ] երեք հասցէներով։*

Նամակների համար յատուկ հասցէ տուէք, քանի որ Բժշկի անունով թերթ է գալիս։

Ընկ. բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻԻՐՕ

Յ. Գ.— Վաղը կ'ուղարկենք քաթանի ծրարներ 100 *հատ։*

511

Պատճէններու մատեան No 88, *էջ* 485-6

1905 *մայ.* 10

Սուլինայի Դանուբ կոմիտէին

Ընկերներ,

Ստացել ենք ձեր ապր. 11 *նամակը, արձանագրութեան հետ միասին, ինչպէս նաեւ Պալք. կենտր. կոմիտէին ուղղած ձեր նամակի պատճէնը։*

Ձեր փափագը ուղղակի մեզ հետ յարաբերութիւն պահպանելու, անկախ Պալք. կենտր. կոմիտէից, ոչ մի բանաւոր հիմք չունի։ Ձեր առաջ բերած հանգամանքը, որ իբր թէ կենտր. կոմիտէի մէջ մեծ խլրտումներ կան, պէտք է համարել լոկ թիւրի-

մացուլթեան արդիւնք. որքան մեզ յայտնի է, նորընտիր կենտր. կոմիտէի անդամների միջեւ ոչ մի խլրտում չկայ։ Իսկ ինչ վերաբերում է նախկին կենտր. կոմիտէի անդամ Վարդոյի դրամ չյանձնելուն, այդ մասին արդէն կայացել է Դաշնակցութեան Խորհրդի որոշումը, որը եւ հաղորդուել իրեն՝ Վարդոյին։ Այնպէս որ առաջարկում ենք ձեզ շարունակել յարաբերութիւնները նախկին ձեւով եւ օգտուելով Պալք. կենտր. կոմիտէի անդամ Պիոնեանի ներկայութիւնից Սուլինայում, ամէն ջանք թափեցէք վերացնելու ձեր միջեւ ծագած բոլոր դժգոհութիւնների պատճառները։

Մենք շատ գոհ կը լինէինք նորից տեսնել Սուլինայում այն համերաշխութիւնը, ինչ որ տիրում էր տարիներից ի վեր, եւ յարատեւած այն անկեղծ սէրը դէպի գործը, որը կապում է հայրենիքից հեռու դեգերող պանդուխտ եղբայրներին։

Ընկերական բարեւներով՝
Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Այսօր ուղարկեցինք ձեզ հետեւեալ հեռագիրը՝ «Անհրաժեշտ է կապուել կենտրոնականի հետ»։

Ն[ՈՅՆ]

512

Պատճէններու մատեան No 88, էջ 489-90

1905 մայ. 14

Սաֆոյին(1), Ֆիլիպէ

Սիրելի ընկեր,

Քո 8 մայիսի նամակը եւ Ֆիլիպէից տուած հեռագիրը ստացել ենք։

Հեռագրով քեզ պատասխանեցինք, որ պահանջներդ կատարուած են։ Ներփակ կը գտնես 4800 fr. չէկ, իսկ մնացած 5200-ինը կ՚ուղարկենք վաղը դարձեալ Երւանդի(2) անունով։ Լիսի 5,000 fr. արդէն տեղ հասցրած կը լինես։

Մինչեւ հիմա, Լիսից(3) դուրս գալուցդ օրից, մենք դրամ ուղարկել ենք ձեզ միայն քո նամակների հիման վրայ։ Խնդրում ենք տեղ հասնելուցդ անմիջապէս յետոյ մարմնին(4) կոմից մի պաշտօնական նամակ ուղարկէք, որով մարմինը իր վրայ է առնում քո միջոցով պահանջուած բոլոր գումարների պատասխանատուութիւնը։ Այս խնդիրքը մեզ դրդում է դնել նախ ձեր մարմնի կազմած կանոնադրութիւնը, որով սահմանափակւում է անհատ-անդամի դրամ ուղելու իրաւունքը եւ երկրորդ՝ Լեռնավայրի(5) կուսի շրջանին տրուած գումարների առթիւ յարուցած խնդիրները։ Մեզ մեղադրում են, թէ ինչու մենք փող ենք բաց թողել առանց օրինական ձեւով արուած պահանջների, անհատների նամակների հիման վրայ եւ մեզ վրայ են ուզում ձգել պատասխանատուութեան մի մասը։ Բացի այդ, դու աւելորդ ես համարել — դարձեալ հակառակ ձեր մարմնի հաստատած կանոնների.— պարզել, թէ

ինչ ծախսերի համար են յատկացուած քո պահանջած գումարները (բացի Լիս ուղարկուածներից)։ Այստեղ ասում էիր, թէ մեծ ծախսերի շրջանը անցել է եւ թէ սրանից յետոյ շատ քիչ ծախս է լինելու։ Հիմա որ քո պահանջները 30,000 fr. *են հասնում, չհաշուելով Շամի* 4000 fr.-*ը, միթէ՞ պէտք չէիր զգում, գոնէ ընկերական տեսակէտից, մի քանի խօսք ասել գումարների գործադրութեան մասին։ Մեզ համար ծանր է զբաղուել եւ զբաղեցնել ձեզ այս կարգի խնդիրներով,— վերոյիշեալ տողերը գրում ենք երկու օրուայ տատանումից յետոյ։ Դու լաւ կը յիշես, որ երբ «Խորհրդի» ժողովներից մէկում դու խօսք բաց արիր ձեր ծախսերի առատութեան պատճառների մասին, մենք էինք, որ փակեցինք այդ խնդիրը։ Նամանաւանդ դժուար է ներկայ րոպէին։ Բայց Լեռնավայրի օրինակից յետոյ, մենք մեզ ստիպուած ենք տեսնում այդ անել, եւ յուսով ենք դու մեզ կը հասկանաս։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— *Հեռագրով խնդրել էինք նոյնպէս կարգադրել Ռուբինայի գալու խնդիրը։ Նա բոլորովին կազդուրուած է, ոչ մի ցնցում։ Եթէ չվստահէք առաջին գործը, նա անպայման յարմար է Յ-ի համար։ Նատիան (քոյրը) նոյնպէս պատրաստ է օգնելու տեղափոխութեան։*

1.- Սաֆօ – ծածկանուն Մարգարեան Մարտիրոսի, որ Քրիստափորի վախճանելէն ետք, պիտի գլխաւորէր Ցուցական մարմնի գործունէութիւնը, յատկապէս կապուած Ապտիլ Համիտի մահափորձին:
2.- Երուանդ Ալաճաճեան, անդամ Պալքանեան Կ. կոմիտէին:
3.- Լիս – Պոլիս անուան կրճատուած ձեւ:
4.- Իմա՝ Ցուցական մարմնի:
5.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ:

513

Պատճէններու մատեան No 88, *էջ* 498

1905 *մայ.* 16

Եդուարդին, Ֆիլիպէ

Սիրելի ընկեր,

Երէկուայ նամակով ուղարկուած 4300 fr. *չէկը ստացած կը լինէք։ Այսօր ուղարկում ենք մի հատ չէկ* 5800 fr.։ *Այդ երկուսն էլ ընկեր Սաֆոյի համար է։*

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

514

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 222

16 *Մայիսի*

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Թէ Մարգարի միջոցով, թէ նամակով ձեզ եւ Մ. Ք. խնդրել ենք փոխադրել մեզ մի որոշ գումար. Անհոգութեամբ ուշադրութիւն չէք դարձրել։ Հիմա խայտառակ դրութիւն է ստեղծւել։ Մնացել է մեր ձեռքին միայն 50.000 fr. *այն էլ մի տարով բանկը դրւած։ Մինչդեռ ցուցականի եւ այլ պահանջներ կան։ Բացի այդ, զէնքի վաճառականի հետ բանակցութիւնները դարձեալ եկան դեպոզիտի յանգան։ Դրա համար միայն հարկաւոր է* 100.000 fr.։ *Այնպէս որ խնդրենք անմիջապէս հեռագրով եւ փոստով փոխադրէք առնուազը* 100.000 *ր*[*ուբլի*]։

1.- Պաքու ուղարկուած գրութիւն:

515

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 222-23

16 *Մայիսի*

Մ. Ք.(1)

Այստեղից անցնող մէկի (Խաչատրեանի[?])*ձեռքով նամակ ենք գրել մի շաբաթ առաջ։*

Քանի անգամ ձեզ գրել ենք փողի մասին։ Ինչ կար, վերջանում է, իսկ առաջներս ահագին պահանջներ կան։ Զէնքի համար միայն հարկաւոր է առայժմ 100.000 fr.։ *Անմիջապէս փոխադրեցէք* 100.000 *ր*[*ուբլի*]. *Թէ չէ խայտառակ դրութիւն է ստեղծըւում։ Հեռագրեցինք Աւետիքին*(2), *յետ եկաւ հեռագիրը, դուրս եկած է այդտեղից. կարծես դժւար էր յանձնարարել, որ եկած հեռագիրը տուն տանեն կամ ուրիշին յանձնեն։ Ստիպւած եղանք Թոփչեանի*(3) *հասցէով կրկնել։ Կրկնում ենք, անմիջապէս կարգադրէք։*

Ի՞նչ եղաւ Մհերը(4)։

1.- Մեծ Քաղաքը Թիֆլիսն է, ուր ղրկուած նամակները ուղղուած են Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյին:
2.- Սահակեանին (Հայր Աբրահամ):
3.- Եղիշէ Թոփչեան (1872-1909), Թիֆլիսի «Յառաջ» օրաթերթի խմբագիր:
4.- Մհեր, Մհերեան – ծածկանուն Համօ Օհանջանեանի (1874-1917):

516

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, էջ 54-55

մայ[իս] 16

ԾԱՂԻԿ(1)

Սաֆոյին մի նամակ ենք գրել, բայց գուցէ դեռ չստացած դուրս եկած լինի։

Փոխադրել ենք պահանջած գումարները։ Խնդրում ենք Սաֆոյի միջոցով պահանջած բոլոր գումարների ստացման մասին մարմնի կողմից մի ստացական ուղարկէք։

Ռուբինայի(2) *մասին հեռագրով հարցրել էինք Սաֆոյից. պատասխան չստացանք։ Գուցէ Սաֆոն սպասած լինի ընկերների հետ խորհրդակցելու։ Ի նկատի ունեցէք, որ նա բոլորովին կազդուրւել է, եւ մօտ մի ամիս կը լինի, որ ոչ մի ցնցում չի պատահել։ Փորձի համար տարանք հրացանաձգութեան տեղը.— ոչ մի նշոյլ նախկին յուզւած վիճակի։ Հիմա անցագրի համար գնացել է ուրիշ տեղ. երրորդ օրն է, որ բացակայ է. կարելի է այս գիշեր վերադառնայ։ Նրա քոյրը նոյնպէս պատրաստ է յեղափոխութեան օգնելու։ Ժամէժամ սպասում է հրաւէրի։ Եթէ առաջին դերը այս կամ այն պատճառով չվստահէք նրան, նա պատրաստ է երկրորդի համար, որին նոյնիսկ նախապատուութիւն է տալիս։ Այդ դերի համար դուք աւելի կարող էք ապահով լինել։ Անդարձ որոշած լինելով, նա շատ յարմարութիւններ ունի։*

Վռամի(3) *պատկերը յաջող չէ։ Չի կարելի արդեօք ուրիշը գտնել։ Ժամանակն էլ չէ հրատարակելու։ Ի՞նչ կարգադրութիւն արիք նրա ծնողների մասին։ Էլլէնի լուսանկարը կ՚ուղարկենք եւրոպացի բարեկամին. միայն յարմա՞ր է հիմա արդեօք։*

1.- Պոլիս՝ Յուցական մարմնին ուղղուած նամակ։ Սաֆոն Մարգարեան Մարտիրոսն է, իսկ Ծաղիկ կամ Կռուածաղիկ՝ Պոլսոյ կազմակերպութեան տրուած այլ ծածկանուն էր։

2.- Ռուբինա Արէշեան, որուն թեկնածութիւնը կ՚առաջարկէ Ռոստոմ՝ Յուցական մարմնի անդամակցութեան. անոր դէմ էր Սաֆօ այն առարկութեամբ որ չափազանց յուզական վիճակի մէջ կը գտնուի ենթական Քրիստափորի մահուան հետեւանքով։ Ի վերջոյ Ռուբինայի թեկնածութիւնը պիտի ընդունուէր։ Քոյրը եւս իր օժանդակութիւնը պիտի բերէր Յուցականի գործին։

3.- Վռամշապուհ Քենտիրեան, զոհուած Քրիստափորի հետ ռումբերու փորձարկման ընթացքին։

517

Պատճէններու մատեան No 88, *էջ* 500

Ռուսերէն նամակ

1905 *մայ.* 17

P.P.S.

Սիրելի ընկերներ,

Բեկը գրում է, որ Պարիզում ձեր ընկերները համաձայնուել են Ռուսաստան տեղափոխել մեր գրականութեան որոշ քանակութիւն։ Եթէ այդ մասին ձեզ էլ ասի, ապա խնդրում ենք յայտնել՝ ինչ քանակութեամբ (քաշով) կարելի է ամէն անգամ ուղարկել ձեզ, ինչ հասցէով եւ ինչ տեսքով։

Ընկերական բարեւներով՝
REDACTION DROSCHAK

518

Պատճէններու մատեան No 88, *էջ* 503-504

Ռուսերէն նամակ

1905 *մայ.* 17

Սիրելի ընկերներ,

Սրանով կարող էք հաւաստիացնել Պարիզում ձեր ներկայացուցչին, որ Պարիզում «Rue de l'Ecole de Chimie» *փողոց հաստատապէս գոյութիւն ունի։ Արդեո՞ք Պարիզում են նրանք դա որոնել։ Ձեզ խնդրում ենք նաեւ, որ բիւրոյի հարցով դիմէք քարտուղարութեան մեր հասցէով. Ձեզ հետ գրագրութիւնը վարելու է Կոմս Ս. Տ. Յալկովսկին։*

Ձեր կողմից ընտրած անւանումը «Comité auxiliaire»(1) *այնքան ալ յարմար չէ։ Այդ բառն իր մէջ ինչ որ արտասահմանեան բան է պարունակում։*

Ինչ վերաբերում է «Amis du peuple russe et des peuples annexés»(2) *մեր հետ արդէն խօսակցութիւն եղել է։ Բայց դա այն մասին է, որ օրերս Պարիզից եկած ընկերոջ վրայ, որը հեռանում է «նշած ընկերութեան կազմով», դժուար թէ յարմար լինի դնել մեր կոմիտէի առաջադրանքը։ Յամենայն դէպս, հարկ է նախապէս խորհրդակցել նշած ընկերութեան կոմիտէի քարտուղար* Quillard*-ի հետ։ Կոմիտէում մասնակից է մի օրիորդ, որը սրտին բաւականին մօտ է ընդունում ռուսական յեղափոխութեան ճակատագիրը եւ իբր պատրաստ է համապատասխանել մեզ՝ զէնքի ցուցադրութեան մէջ։*

Սպասում ենք նախորդ նամակների պատասխանին՝

Ընկերական բարեւներով՝
RED[ACTION] "DROSCHAK"

1.- Ֆրանսերէն՝ Օժանդակ կոմիտէ:
2.- Ֆրանսերէն՝ ռուս ժողովուրդի եւ [Ռուսաստանի] կցուած ժողովուրդներու:

519

Պատճէններու մատեան No 88, *էջ* 507-8

1905 *մայ.* 20

Պալք. Կենտր. կոմիտէին

Սիրելի ընկերներ,

Արհեստանոցի մասին ձեր արած կարգադրութիւնները չուտով մեզ հաղորդէք։ Ուրիշ տեղերից սովորելու փափագ յայտնողներ կան։

Գրեցէք նոյնպէս, հնարաւոր է արդեօք զինավարժութեամբ պարապել Բուլղարիայի որեւէ վայրում։

Սուլինա գրւած է, որ անպատճառ ձեզ հետ կապւեն։

Դեռ որովհետեւ շատ տեղեր դեռ չգիտեն Վարդի բռնած ընթացքը եւ շարունակում են համարել ընկեր (Արեւել. բիւրոն, օրինակ, ուղարկել է նրան 2000 ր. որոշ յանձնարարութեամբ), հարկաւոր է յայտնել ամէն տեղ անցած դարձածը։ Դրա համար անհրաժեշտ է ունենալ ձեր կայացրած պաշտօնական որոշումը(1)*, ձեր յարաբերութիւնների պատմութիւնով հանդերձ, սկսւած նախկին Կ. կոմիտէի անդամների միջեւ ծագած անհամաձայնութիւններից։*

Էսաբալեանի կտակած 500 fr. *ստացանք։ Դրա մասին կը լինի ներկայ* No*ի նւիրատւութիւնների բաժնում։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Տիգրանեանը հաւանական է գայ յունիսի վերջին։

Ն[*ՈՅՆ*]

1.- Նշուած պաշտօնական որոշումը կը վերաբերի Պալքանեան Կ. կոմիտէի կողմէ Վարդ-Պատրիկեանի (Վարդօ) իրենց շրջանէն հեռացման:

520

Պատճէններու մատեան No 88, *էջ* 509

1905 *մայ.* 20

Մխիթարեան տպարան, Վիէննա

Մեր վերջին պատւէրի պակասը լրացնելու համար խնդրում ենք ուղարկել մեզ հետեւեալ տառերից։

գ — 200 *հատ*
ւ — 2700 *հատ*
ճ — 150 »

և — 350 »
ստորակ[էտ] (,) — 700 *հատ*
չակ[երտ] («») — 300 »
գիծ - tiret (-) — 80 *հատ*

Որպէսզի շատ չուշանայ ճանապարհին, խնդրում ենք ուղարկել փոստայով, իբրեւ colis postal.

Յարգանօք՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿԻ»

521

Պատճէններու մատեան No 89, *էջ* 1-3

Ռուսերէն նամակ

1905 *մայիս* 20

Ընկ. Ուլրիխին(1), *Կրակով*

Սիրելի ընկեր,

Ստացանք Ձեր՝ մայիսի 26-*ի նամակը։ Կարճ պարզաբանեմ բոլոր թիւրիմացութիւնները.* 1) *Պարիզում չի լինելու ոչ մի բիւրո։ Բիւրոն գործելու է այնպէս, ինչպէս որոշուած էր կոնֆերանսում եւ ինչպէս որ դուք էք գրում։*

Թիւրիմացութիւնը առաջացել է նրանից, որ մենք որոշել ենք դիմել մեր Պարիզի ներկայացուցչին Պարիզեան կոմիտէն հաստատելու հարցով։ Նրանք, որպէս գործին աւելի մօտ մարդիկ, այսինքն աւելի լաւ ծանօթ լինելով տեղական աշխարհին, աւելի հեշտ կը կատարեն կոմիտէի համար համապատասխան մարդկանց ընտրութիւնը, որի վերջնական հաստատումը պէտք է, ի հարկէ, կախւած լինի բիւրոյից։ 2) *Քարտուղարութիւնը, ինչպէս որոշուած էր, լինելու է Ժընեւում։ Եւ, հետեւաբար, հասցէն է լինելու* «Rue de l'Ecole de Chimie», 2 — *Պեյանեւսկի։* 3) *Նամակները ստանալու են վերոնշեալ հասցէով, իսկ նամակագրութեան վարումը քարտուղարութեան անունից յանձնարարւած է ընկ. Վոլխովսկուն։*

Ներողութիւն խնդրելով իմ նախորդ ոչ լիարժէք եւ ոչ յստակ նամակների համար՝ անցնեմ գործին։ Ինչպէս Ձեզ արդէն յայտնի է, Պարիզեան կոմիտէի իրագործումով բաւականաչափ քաշքշուկ է լինելու։ Դժւարութիւնների մասին գրում էր Ռուբանովիչը(2) *ընկ. Վոլխովսկուն*(3)։ *Գլխաւոր դժւարութիւնը նրանում է, որ Պարիզում արդէն գործում է կոմիտէ, որի մասին Դուք գրում էք Ձեր նամակում։ Եթէ նրա կողքին ստեղծւի մէկ այլ կոմիտէ, կ՚առաջանայ մրցակցութիւն դրանց միջեւ, ինչի արդիւնքում հասարակութիւնը կը դադարի վստահել երկուսին էլ։ Ընկ. Վոլխովսկու կողմից բերւել են նաեւ այլ հիմքեր, որոնց* CP-*ի ընկ*[*երները*] *խորհուրդ են տալիս ժամանակաւորապէս յետաձգել Պարիզեան կոմիտէի կազմակերպման գործը։ Նրանց կարծիքով, մի քանի հարիւր ֆրանկի պատճառով պէտք*

չէ բարդութիւններ եւ աւելորդ ագիտացիա առաջացնել սոց. դեմոկրատների կողմից։

Մենք համաձայն չենք դրա հետ 1) *հարցը ամենեւին ֆրանկով չէ, այլ փաստի օգտապաշտական նշանակութեան։* 2) *Կոմիտէի պարտականութիւնների մէջ, իմ յիշելով, մտնում է ոչ միայն գումարի հաւաքումը, այլ նաեւ աջակցութիւնը պայքարող կուսակցութիւնների զէնքի եւ այլ տեխնիկական միջոցների առաքման հարցում։* 3) *Մեր՝ կոմիտէ կազմակերպելու որոշման մասին արդէն հրատարակել է թերթերում։*

Այն չիրականացուած թողնելը չի խօսի կոնֆերանսի որոշումների լրջութեան օգտին։

4) *Որպէս վերջին միջոց, կարելի է խուսափել տարաձայնութիւններից՝ հաստատելով յայտնի համաձայնագիրը արդէն իսկ գործող կոմիտէի հետ։ Ամօթ է, որ այս յանձնաժողովի հարցը համաժողովում չդրուեց այն պատուիրակների կողմից, ովքեր դրա մասին տեղեակ էին։ Այդ դէպքում հնարաւոր էր գալ մի փոքր այլ լուծման։*

Մեր ընկերը (նա երէկ է մեկնել Պարիզից) կը տեսնի Ռուբանովիչի, Quillard et Motziem-*ի*[?](4) *հետ եւ մեզ կը ներկայացնի արդիւնքները։ Այդ դէպքում անհրաժեշտ կը լինի կանգ առնել ինչ որ որոշակի բանի վրայ։*

Ընկերական բարեւներով՝
ROSTOM

1.- Թերեւս Ուլրիխ Վասիլի – լատվիացի յեղափոխական:
2.- Ռուբանովիչ Իլիա Ադոլֆի (1859-1922) – ռուս սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան Կ. Կ. անդամ: Մասնագիտութեամբ՝ ֆիզիկոս մանկավարժ:
3- Վոլխովսկի Ֆելիքս – ռուս լեգենդար յեղափոխական նարոդնիկ եւ ապա Էսէռ: Մահացել է 1914-ին Լոնդոնում:
4.- Այս լատինատառ ազգանունը չի հասկացւում: Դատելով տառերի մէջ առկայ tz հնչիւնախմբից՝ ամենայն հաւանականութեամբ խօսքը ազգութեամբ լեհի մասին է:

522

Պատճէններու մատեան No 88, *էջ* 510

1905 *մայ.* 22

Պալք. Կենտր. կոմիտէին

Սիրելի ընկերներ,

Ինչպէս արդէն գրել էր ընկեր Սարգիսը, եթէ արհեստանոցի հաստատման համար անհրաժեշտ չէ Գրիգորի ներկայութիւնը, թող նա ճանապարհ ընկնի Ռուսաստան, Պարսկաստան, ուր նա հարկաւոր է։ Այդ դէպքում բացի անցագրի եւ այլ մանր տեղական ծախքերից, տուէք նրան 270 fr. *ճանապարհածախս, որը անցկացրէք մեր հաշւին։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

523

Պատճէններու մատեան No 88, *էջ* 511-12

1905 *մայ.* 27

Յուցական մարմնին

Սիրելի ընկերներ,

Ոսկեհանքում(1) *դրութիւնը սպառնում է բարդւել. Լեւոնը*(2) *կոմիտէի միւս ընկերների խորհրդակցութեամբ ներկայացել է տեղական խմբերին, իբրեւ թէ Արեւմտեան բիւրոյի կողմից եկած պատւիրակ* (!) *խմբերի գործերը կարգադրելու համար։ Խմբապետները կասկածել են եւ չեն ընդունել նրան. դրանից յետոյ կոմիտէն չտապում է ուղարկել մեզ թելադրութիւններ, բաւական մանրամասը, թէ ինչ դիրք պիտի բռնի Բիւրոն, ինչ պիտի պատասխանի, երբ խմբապետները դիմեն հարցումով։ Իսկապէս մի քանի օր յետոյ ստացանք խմբապետների նամակը, որով յայտնելով իրենց կասկածը, ուզում են ուղղակի մեզանից իմանալ, թէ որքան ստոյգ է Լեւոնի պաշտօնը։ Այս մի կողմից, միւս կողմից մասնաւոր տեղեկութիւնից իմանում ենք, որ Լեւոնի յարաբերութիւնները կոմիտէի միւս ընկերների հետ լաւ չեն, որ բոլոր գործերը վերջիններիս ձեռքին է, ուզենան — գործ կը լինի, չուզենան — չի լինիլ։ Յետոյ, Ոսկեհանք է վերադարձել Եդուարդը*(3), *որի ներկայութիւնը, չնորհիւ հին պատմութիւնների, աւելի է բարդացնելու ներքին յարաբերութիւնները։ Սպասում եմ, բացի այդ, Սարհատին*(4), *որին դատի է ենթարկել եւ համարեա թէ հեռացրել իր շրջանից Լեռնավայրի*(5) *մարմինը։ Պայթուցիկը* (*Համբ.*)(6), *որ նոր է տեղ հասել, դժւար թէ կարողանայ գլուխ դուրս բերել։ Այս պատճառով մենք յարմար դատեցինք մեզանից մէկին ուղարկել այնտեղ՝ ստուգելու համար տեղական հաշիւները եւ կարգադրելու գործերը։ Բայց որովհետեւ խնդիրը վերաբերում է եւ Յուցականին, ուստի դիմում եմ ձեզ իմանալու համար ձեր կարծիքը։ Մեր ընկերը Ոսկեհանքից կ՚անցնի Եգիպտոս, որտեղ նոյնպէս պահանջ կայ։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ոսկեհանք – ծածկանուն Իզմիրի:
2.- Հաւանաբար հարցը կը վերաբերի Գիւլումեան Լեւոնի:
3.- Եդուարդ – ծածկանուն Պոյաճեան Սմբատի:
4.- Սարհատ, աւելի ճիշդ Սահրատ – ծածկանուն Յակոբեան Յարութիւնի:
5.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ:
6.- Պայթուցիկ – ծածկանուններէն մէկը Համբարձումեան Կոստիի:

524

Պատճէններու մատեան No 88, *էջ* 513

Ռուսերէն նամակ

1905 *մայ.* 29

Սիրելի ընկերներ,

Ֆինլ[անդական] դիմադրութեան կուսակցութեան(1) *ներկայացուցիչը բողոքում է* Européen-*ում* (6 *մայիսի*) *հրապարակուած ձեր յօդուածի դէմ որում կոնֆերանսի յատուկ յայտարարագրի տակ ստորագրելուց Ֆինլ. կուսակցութեան հրաժարուելը բացատրւում է ի միջի այլոց նրանով որ այն աւարտւում է Կեցցէ՛ սոցիալիզմը տողով։ Նման բացատրութիւնը նրանց կողմից անհիմն է համարւում այն պարզ պատճառով որ Ֆինլ. կուսակցութեան ներկայացուցիչները նախապէս հրաժարւել են յայտարարագրի կազմմանը որեւէ մասնակցութիւնից ուստիեւ հրաժարման պարագայում չէին կարող իմանալ թէ ի՛նչ տողով պէտք է նա աւարտւէր։ Դա նկատի ունենալով՝ խնդրում են քարտուղարութեանն ուղղել ձեր կողմից թոյլ տրւած սխալը։ Իսկ մեզ թւում է որ լաւ կը լինէր որպէսզի դուք ինքներդ ուղղակի հերքում ուղարկէիք* Européen-*ին։*

Ընկերական բարեւներով քարտուղարութեանը՝
ROSTOM

1.- Յայտնի է նաեւ ֆինլանդական ակտիւ դիմադրութեան կուսակցութիւն անունով: Գաղտնի մարտական յեղափոխական կուսակցութիւն, որը պայքարում էր Ֆինլանդիայի ռուսականացման դէմ կիրառելով տեռորը: Գործել է 1904-1906 թ.թ.: Առաջնորդն էր Կոննի Ցիլլիակուսը:

525

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 56-58

29 *մայ[իս]*

ՈՍԿԵՀԱՆՔ(1)

Ստացանք ձեր մարմնի կողմից Սաֆոյին գրած 21 *ապր. նամակը, ուր դուք յայտնում էք, թէ որոշել էք միեւնոյն օրը անել։ Այդ որոշման կանգ էք առել, ենթադրելով, որ Խորհուրդը իր որոշումը կայացրել է առանց աչքի առաջ ունենալու, որ ձեր գործը կարող է վտանգւել։ Այս առթիւ հարկ ենք համարում յայտնել, որ ձեր վտանգւելու հարցը ոչ միայն Խորհուրդը աչքի առաջ է ունեցել, այլ դա բռնել է մեր վիճաբանութիւնների մէջ ամենակարեւոր տեղը։*

Բայց եւ այնպէս Խորհուրդը եկաւ այն եզրակացութեան, որ ստիպողական է ձեր վերջը ձգել։ Որպէսզի որեւէ թիւրիմացութիւն չլինի, արտագրում ենք բառ առ բառ Խորհուրդի որոշումը երկու գործերի յաջորդականութեան վերաբերեալ։

(*Որոշումը*)(2)։

Ուրեմն խօսք էլ չի կարող լինել երկու ձեռնարկները միեւնոյն օրումը անելու մասին, ձերը անպատճառ պէտք է վերջը լինի։

Լսում ենք, որ ձեր ծրագիրը փոխանակ կրճատելու աւելի էք ընդարձակում։ Քանի որ վախ ունէք, թէ գործը կարող է բացւել, ինչու էք նոր ձեռնարկներով աւելի բարդացնում ձեր դրութիւնը, աւելի տեղիք տալիս բացւելու։ Մեր խորին համոզմամբ պէտք է կանգ առնել քիչ թւով ձեռնարկների վրայ, դրանց վրայ կենտրոնացնել բոլոր ուժերը, եւ ոչ թէ ցիր ու ցան լինել. մի բան որ կարող է կամ գործը վտանգելու պատճառ դառնալ, կամ անաջողութեան մատնել։ Բացի այդ, ձեր լուրջ ուշադրութիւնն ենք հրաւիրում Ֆ[րանսական] 2 ձեռնարկի վրայ։ Դրանով դուք կարող էք քանդել մի բան, որ տարիների աշխատանքի արդիւնք է։ Գոնէ գ[երմանական]ի մասին պատրաստէիք, էլի մի բան է։ Մանաւանդ որ գործը կարող է ոչ այնպէս ընթանալ, ինչպէս դուք էք ենթադրում, չէ՞ որ հէնց առաջին քայլից կարող է արիւնահեղութիւն առաջ գալ։

Եդուարդը նորից մտել է, լաւ, միայն խնդրում ենք, որ ամէն կերպ խոյս տրուի հին հաշիւները պտրտելուց(3)։

Իսկ ինչ վերաբերում է Սարհատի հրաւիրելուն, այդ ի հարկէ ձեր պատասխանատուութեան տակ պէտք է անէք, բայց մենք յիշելու ենք, որ ընկերական պարտքը պահանջում էր, որ դուք դիմէիք Լեռնավայրի համաձայնութեան նախ քան նրան հրաւիրելը։

Մարտինին(4) *Լեռնավայրը իր մէջ չընդունեց մինչեւ որ Ցուցական մարմնից վկայական բերել չտուեց։*

Էտկարը այդտեղ հիւանդ եղած ժամանակ ծախսեր է արել սովորականից աւել։ Հիմա պաշտօն գտնելով խնդրում է իր հաշիւները, որպէսզի կարողանայ մաս մաս վճարել իր պարտքը։ Խնդրենք ուղարկել նրա ծախսերի հաշիւները։ Ինչո՞ւ ձեր ընդհանուր հաշիւը չէք ուղարկում։

1.- Իզմիր՝ Ցուցականի տեղական օժանդակ մարմնին ուղղուած նամակ:

2.- Սեւագրութեան մէջ չկայ «որոշումը», որ հաւանաբար նամակի գաղտնի թանաքով արտագրութեան ժամանակ պիտի աւելցուէր:

Ահա այդ որոշումը, քաղուած «Հ. Յ. Դաշնակցութեան Խորհրդի «արձանագրութիւնը», 1905 թ. Մայիս» փաստաթուղթէն (1567ա-15):

«Ի նկատի ունենալով Վիշապի ձեռնարկին ահագին կարեւորութիւնը եւ այն վտանգը նրա աջողութեան դէմ, որ կարող է առաջ բերել Ոսկեհանքում տեղի ունենալիք ցոյցը,

Խորհուրդը որոշում է՝

Ոսկեհանքի ձեռնարկը կատարել անպատճառ Վիշապի ձեռնարկից յետոյ եւ յատկապէս այն դէպքում, եթէ առաջինից սպասուած հետեւանքները յօգուտ մեր դատի ի դերեւ ելնեն, շնորհիւ եւրոպական պետութիւնների անտարբերութեան:

Այս որոշման մասին Ցուցական մարմնի միջոցով յայտնել ի գիտութիւն Ոսկեհանքի գործադիր կոմիտէին:

Նկատ՝

Այս առթիւ Ցուցական մարմնի անդամ պ. Սաֆօ բողոք յայտնեց, առաջարկելով մտցնել այն՝ արձանագրութեան մէջ.

«Ես, իբրեւ Ցուցական մարմնի ներկայացուցիչ, ստիպուած եմ չհամաձայնել Խորհրդի որոշման հետ՝ Ոսկեհանքի ու Վիշապի ձեռնարկների յաջորդականութեանը վերաբերութեամբ, քանի որ ընկերների կարծիքը հակառակ է դրան: Բացի այդ, Խորհրդի միջամտութիւնը այս հարցում սկզբունքով ես գտնում եմ իբրեւ խախտումն Պատասխանատու մարմնի գործունէութեան ազատութեան: Ուստի յայտնում եմ բողոքս»:

3.- Հին հաշիւներ փնտռտելուց, քրքրելուց:

4.- Սարհատ, աւելի ճիշդ Սահրատ, Մարտին (Մուրատեան), Եդուարդ (Պոյաճեան Սմբատ) եւ Էտկար (Այվազեան Կարապետ) Իզմիրի գործիչներ են: Լեռնավայրը, ինչպէս ծանօթ է, Կիլիկիան է:

526

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 224-26

4-*ին յունիսի* [1905]

Մ. Ք.(1)

Մեր վերջին նամակը եղել է մայիս 16-*ին։ Պետրոսի միջոցով ուղարկած* 40.000-*ի չափ գումարը ստացանք։*

Նախիջեւանի դէպքերի առթիւ այստեղ բաւական խորհրդակցութիւններ ունեցանք։ Վերջ ի վերջոյ որոշուեցաւ հետեւեալը.

1) *Հրատա*[*ra*]*կել մի կոչ ֆրանսիական պարլամենտի եւ սենատի անդամներին, ինչպէս նաեւ միւս երկրների պարլամենտների* 2) *դիմում հասարակական կարծիքին* 3) *դիմել Սակարտվէլոյի*(2) *կազմակերպութեան, որպէսզի աշխատի վրացի հասարակութեան մէջ ցոյցեր կազմել կառավարութեան ընթացքի դէմ* 4) *գրել Ամերիկայի ընկերներին, որ դիմում անեն Ռուզվէլտին*(3) *եւ ամերիկական հասարակական կարծիքին* 5) *Ժընեւում կազմակերպել միտինգ։*

Բացի այդ, հարկ ենք համարում ձեզ առաջարկել 1) *Մի նախազգուշացում Դաշկովին*(4) 2) *Ձեռք առնել նորից Ռէտվեզանի խնդիրը, ցոյց տալու համար ներկաներին, որ հեռանալով էլ չեն ազատւելու պատժից* 3) *Դադարեցնել մանր տեռորները, որ աւելորդ առիթներ կարող են տալ արտակարգ խստութիւնների* 4) *Կազմակերպել անպատճառ ափ իջեցնելու խնդիրը։ Բարսեղեանը*(5) *յանձնարարել էր Ռ-ին գրել իր նամակում, որ միջոցը պատրաստ է։ Եթէ պատրաստ է, շտապեցէք յայտնել մեզ* a) *ինչ քանակութեամբ կարելի է ուղարկել ամէն անգամ* b) *արկղների մեծութիւնը, ծանրութիւնը, ձեւը* c) *Որտեղից ճանապարհ ձգել,* d) *ինչպէս նշանակել հասցէն։*

Վարդի(6) *խնդիրը ի՞նչ եղաւ։ Անպատճառ կարգադրեցէք, որ փողը կամ մեզ հասցնի, կամ Պիոնեանին, Ֆիլիպէ։ Ապսպրած իրերը մենք կը գնենք, առանց սպասելու ձեր ուղարկած դրամի ստանալուն։*

Մի նամակ ստացանք, որի բովանդակութիւնը մեզ չէր վերաբերում։ Հաղորդեցինք Եկեղեցի(7)։ *Երեւի մերն էլ ուղարկւած է այնտեղ։*

Մրաւի(8) *նամակները չի կարելի այդպէս բաց գրել եւ փոստին յանձնել։*

Բարեկամները գանգատւում են, որ իրենց խոստացած թէյը(9) *դեռ չի ստացւած, չգիտեն՝ Ոսկանապատի*(10) *մեր ընկերների, թէ իրենց ընկերների պատճառով։ Բայց չլինի թէ մեր կողմից արգելք լինի, խոստումը արուած է Մրաւի եւ Մհերի*(11) *այստեղ եղած ժամանակ։*

Ծրագրի ընդհ. մասը շարւում է(12), *ուզում էինք նախ Դրօշակում դնել, բայց յետոյ անյարմար գտանք։ Կ՚ուղարկենք ձեզ երեսը։ Պատրաստւում է բուն ծրագրային մասը։ Ուշանալուց մի նեղանաք, չէ որ պատասխանատու գործ է։ Ցաւելւածն*(13) *աւելորդ է ուղարկել, քանի որ արդէն վերջին* No*ի մէջ լոյս է տեսել։*

Վորոնցով-Դաշկովի խաղաղացումը լինելու է երեւի հետեւեալ ձեւով։ Նա կ՚աշխատի մահմեդականների միջոցով ահաբեկել հայերին եւ բազմաթիւ բանտարկութիւններ անել տալ, ինչպէս արել են Գուրիայում։

Գրեցէք, թէ ինչպէս էր չինւած եւ լցած Նակաշիձէի ռումբը։

Շատ լաւ կը լինէր, եթէ անմեղ զոհերի ընտանիքներին տուէր որոշ վարձատրութիւն։ Յայտարարուէր նոյնպէս, որ դատապարտուած անձանց հետ միասին լինելուց խոյս պէտք է տալ։

Շատ հաւանական է, որ մահմեդականների յարձակումները տարածուեն միւս գաւառների վրայ եւս։ Որքան էլ զինուած լինեն մեր գիւղերը, բայց եթէ նրանք առանձին առանձին ուզենան պաշտպանուել, միշտ կը տուժեն. յարձակողները միշտ կարող են իրենց թիւը եւ ոյժը աւելացնելով, խորտակել ամէն մի ընդդիմադրութիւն. պէտք է առաջւանից մարդիկ նշանակել ամէն մի գիւղում, որ թշնամու երեւալուն պէս, նրանք բոլորը հարեւան գիւղերից համախմբուեն եւ թշնամու առաջը կտրեն եւ ոչ թէ ամէն մի գիւղ առանձին ենթարկուի յարձակման։

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղղուած նամակ:
2.- Վրացական սոցիալիստ-ֆեդերալիստներ կուսակցութիւն:
3.- Միացեալ Նահանգներու հանրապետութեան նախագահ:
4.- Վորոնցով-Դաշկով, Անդրկովկասի փոխարքայ:
5.- Բարսեղեան – ծածկանուն Արեւելեան բիւրոյի անդամ բժ. Տէր Դաւթեան Յովսէփի (1870-1946):
6.- Վարդ կամ Վարդօ – Վարդ-Պատրիկեան Յակոբ, Պուլկարիոյ «Շարժում» թերթի խմբագիր, որ դրամական իւրացումի ամբաստանութեան տակ կը գտնուէր: Այդ պատճառով ալ նախ պիտի հեռացուէր Պալքանի կազմակերպական շարքերէն, ապա ահաբեկումի ենթարկուէր (1907):
7.- Եկեղեցի – ծածկանուն Մոսկուայի:
8.- Ժամհարեան Մարգար (1877-1905) անդամ Հ.Յ.Դ. Կովկասի ինքնապաշտպանութեան մարմնին. մասնակցած էր Դաշնակցութեան Խորհուրդի ժողովին. Կովկաս վերադառնալէն ետք պիտի մասնակցէր Շուշիի ինքնապաշտպանութեան կռիւներուն եւ զոհուէր Սեպտեմբեր ամսու մարտերուն: Եկեղեցին՝ Մոսկուան է:
9.- Թէյը այլաբանական իմաստով գործածուած է հոս: Շատ հաւանաբար հարցը ռուս յեղափոխականներուն խոստացուած ուժանակներուն մասին է:
10.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի Կ. կոմիտէութեան:
11.- Մեր կամ Մերեան – ծածկանուն Արեւելեան բիւրոյի անդամ Համազասպ Օհանջանեանի (1874,1947):
12.- Խօսքը Դաշնակցութեան Խորհուրդի կողմէ մշակուած Կովկասեան Նախագծի մասին է:
13.- Խօսքը «Դրօշակ»ի յաւելուածին մասին է:

527

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 227

4-ին յունիսի

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ(1)

Նաւի համար ձեր ձեռքով արած ծախսերի հաշիւը ուղարկէք, որպէսզի Մարսէյլի հաշւին աւելացնելով, մտցնենք ընդհանուր հաշւի մէջ։

Փոխադրութեան խնդրի համար մի քանի անգամ գրել ենք Մ. Ֆ. կրկնում ենք համառօտակի ձեզ։

1) *Աշխատէք վրացիների հետ միասին մաքսատան վրացի պաշտօնեաների աջակ-*

ցութեամբ մաքսատնի միջից ապահով կերպով ապրանք անցկացնելու։ Սակարտվէլոյի խմբագիրները խոստացել են իրենց ընկերների աջակցութիւնը։

2) Եթէ ուրիշ կերպով հնարաւորութիւն ունէք ապրանքը նաւից հանելու, խնդրենք չուտով յայտնել մեզ ա) ինչ քանակութեամբ մի անգամից կարող էք դուրս հանել բ) ինչ երկարութեամբ, լայնութեամբ, ծանրութեամբ պիտի լինի իւրաքանչիւր սնտուկ գ) որ քաղաքից եւ ինչ ապրանքի անուան տակ յարմար է յանձնել նաւին։

Եթէ հարկաւոր է յատուկ մի մարդ այդ գործի համար եւ եթէ դուք չունէք, գրեցէք։

Այս անգամ թերթի ճանապարհով կը ստանաք գուցէ 3 *մաուզէրեան ատրճանակ։*

1.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի:

528

Պատճէններու մատեան No 89, *էջ* 5

1905 *յունիս* 5

Լօրիս Մէլիքեանին, Պարիզ

Սիրելի ընկեր,

Անգլիերէն Pro Armenia-*ի համար հետեւեալ պայմանները պէտք է դնել Մասինգամին։*

1) *Ոչ մի տող չպէտք է գրուի յեղափոխութեան դէմ։*

2) *Պէտք է պաշտպանի մեր* minimum *ծրագիրը, այնպէս, ինչպէս անում է ֆրանսերէն* Pro Armenia-*ն։*

3) *Նա իր ձեռքը պիտի առնի նոյնպէս կովկասահայերի դատը։*

Երբ այս կէտերի վերաբերմամբ դրական պատասխան ստացուի, խնդրենք յայտնել, որպէսզի անհրաժեշտ ծախսերի համար գումարը ուղարկենք քեզ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵԻՄՏԵԱՆ ԲԻԻՐՕ

P. S. — *Մասինգամը եւ Ստէյնը պիտի իմանան, որ հրատարակում է Դաշնակցութիւնը։*

529

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, էջ 59-62

6-ին յունիսի

ԾՈՅ
Սմբատին(1)

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Բագւի դէպքի առթիւ բռնած կառավարութեան դիրքը եւ դրանից յետոյ առաջացած Նախիջեւանի շրջանի աղէտները ոչ մի կասկած չեն թողնում, որ կառավարութիւնը վերջնականապէս որոշել է կոտորածներով սարսափ տարածել հայ ժողովրդի վրայ, տեսնելով նոյնանման պատրաստութիւնների նշաններ եւ այլ վայրերում, նոյնիսկ մասնակի յաջողութիւններ՝ վրացիներին եւս հայերի դէմ գրգռելու գործի մէջ, զգալով, թէ որքան ներկայումս կարիք կայ Կովկասում փորձւած եւ ղեկավար ուժերի, Արեւմտեան Բիւրոն մասնակցութեամբ Յոնանի, Մարի, Գրիգոր Վարդանեանի եւ Լեռնավայրի մարմնի անդամ Վարդանի(2) *կատարեց մի շարք ժողովներ, որի հետեւանքը եղաւ ի միջի այլոց եւ հետեւեալ որոշումը.*

Առաջարկել Սիմոնին եւ Վարդանին ժամանակաւորապէս թողնել Լեռնավայրը։ Ինչպէս փորձերը ցոյց տուին, ներկայ պարագաներում ոչ Վարդանը եւ ոչ Սիմոնը հնարաւորութիւն չունեն օգտակար լինելու այդ շրջանում այն չափով, ինչ չափով կարող էին լինել, եթէ նախապատրաստական գործը քիչ առաջ գնացած լինէր։ Նրանց ժամանակաւոր բացակայութիւնը Լեռնավայրի շրջանից, ի հարկէ, որոշ բացասական հետեւանքներ կ՚ունենայ, բայց այն ահագին օգուտը, որ նրանք կարող են տալ ուրիշ շրջաններում, հարիւրապատիկ կը փոխարինէ առաջ գալիք վնասը։ Այս պատճառով առաջարկւում է Վարդանին, որ անմիջապէս ճանապարհ ընկնի Կովկաս։ Սա համաձայն լինելով անձամբ, ուզում է միայն ունենալ Սմբատի համաձայնութիւնը եւս, որ խնդրւում է յայտնել հեռագրով, հետեւեալ հասցէին Grégoire Foun, Bertholet, 20, Paris։ *Իբրեւ փորձառու զինւորական ոյժ, նրա ներկայութիւնը Կովկասում ներկայ տագնապալից պարագաներում, աւելի քան անհրաժեշտ է։ Սիմոնին գալով, նրա վերաբերմամբ առաջարկւում է երկու բան*

1) *Գալ ժամանակաւորապէս Ժընեւ, փոխարինելու համար Ռոստոմին, որը նոյնպէս պատրաստւում է Կովկաս անցնելու*

2) *Կամ գնալ Կովկաս, ուր նրա ներկայութիւնը ստիպողական է ծագած բարդ յարաբերութիւնների պատճառաւ. մասնաւորապէս աչքի առաջ ունենք բանակցութիւնները եւ համաձայնութիւնները վրացիների հետ, որոնց մէջ նա բազմաթիւ կապեր ունի։ Առաջին առաջարկը աւելի նպատակայարմար է, որովհետեւ յարաբերութիւնների գործը Կովկասում մասամբ կարող է յաջողեցնել եւ Ռոստոմը, իսկ Ժընեւում մնալով՝ Սիմոնը կարող է հետեւել եւ Լեռնավայրի գործերին։*

Երկու շաբաթից յետոյ ճանապարհ է ընկնելու նաեւ Յոնանը։ Գրիգոր Վարդանեանը, որ ընտրւած է Վասպուրականի մարմնի անդամ, մի քանի ամիս կը մնայ Կովկասում եւ կը զբաղւի տեղական գործերով։ Գնում են Խզմալեանը(3) *եւ ուրիշները։*

Այս բոլորը անում ենք, որովհետեւ, կրկնում ենք, Կովկասի դրութիւնը շատ լուրջ է եւ նա կարող է դառնալ նոյն սպանդանոցը, ինչ որ եղաւ Տաճկահայաստա-

նը, եւ այդ հարւածը ոչ միայն կը կոտրի կովկասահայերին, այլ եւ երկար ժամանակով հրապարակից կը հանի տաճկահայ դատը։

Խնդրւում է Սիմոնից, որ իր մասին եւս հեռագրով պատասխանի։

(Վարդանը խնդրում է աւելացնել, որ եթէ Սիմոնը չուզենայ դուրս գալ, ինքն էլ կը հրաժարի Կովկաս գնալուց)։

Այսպէս ուրեմն, ամէն բան կախւած է քո դուրս գալուց։ Եթէ հեռագրես Oui, *դա նշանակում է, թէ դուրս ես գալիս եւ մնալու ես Ժընեւ. այս դէպքում Վարդանը եւ Ռոստոմը ճանապարհ կ'ընկնեն.* Bon, *նշանակում է ուզում ես Կովկաս անցնել։* Non, *նշանակում է չես ուզում դուրս գալ (այս դէպքում Վարդանն էլ կը մնայ)։*

1.- Ծոցը ծածկանունն է Պէյրութ քաղաքի. Արեւմտեան բիւրոյի այս նամակը ուղղուած է հոն գտնուող Սիմոն Զաւարեանին (Սմբատ):

2.- Յոնանը՝ Դաւթեանն է, Մարը՝ Միք. Տէր Մարտիրոսեան, Գրիգոր Վարդանեանը՝ նոյն ինքն Վանայ Սարգիսը (Բարսեղեան-Օտապաշեան), որ այդ անունը կրող անցագիր կը գործածէր, իսկ Վարդանը՝ Խանասորի Վարդանն է (Մեհրաբեան Սարգիս), որ այդ օրերուն Ժընեւ կը գտնուէր:

Յիշուածները՝ բոլորն ալ շուտով պիտի անցնէին Կովկաս, հայ-թրքական ընդհարումներու ընթացքին հայութեան ինքնապաշտպանութեան գործը վարելու համար:

3.- Խզմալեան Թադէոս (1869-1918), ծանօթ նոյնպէս Ալեքսանդր Տիգրանեան ծածկանունով:

530

Պատճէններու մատեան No 89, *էջ* 6-7

1905 *յուն.* 6

Ամերիկայի կենտրոն. կոմիտէին, Բոստոն

Ընկերներ,

Ստացանք այսօր ձեր թիւ 4 *շրջաբերական-նամակից մի օրինակ, որի առթիւ շտապում ենք մի երկու խօսք ասել։*

Ընկերների նամակներից քաղւածքներ անելիս, չպէտք է մոռանալ, որ ընկերների առաջին տպաւորութիւնները ընդհանրապէս չափազանցրած են լինում։ Բնաւ ցանկալի չէ, որ մեր ուժերի մասին աւելի մեծ գաղափար կազմւի, քան այն, ինչ կայ իրականապէս։ Բացի այդ, դուք մեծ անզգուշութիւն էք արել, դնելով հնչակեան պարագլուխների անունները եւ մտնելով մասամբ նրանց անհատական կեանքի մէջ։ Եթէ հնարաւոր է, խնդրենք յետ ժողովել շրջաբերականները կամ միջոցներ ձեռք առնել, որ նրանք կազմակերպութեան շրջանից դուրս չհանւեն։

Կովկասի դրութիւնը շատ խռովեալ է. կառավարութիւնը գրգռում է մահմեդականներին հայերի դէմ բացարձակ կերպով։ Գուցէ եւ Կովկասում տեղի ունենան մեծ կոտորածներ։ Այս առթիւ որոշել ենք մի քանի ձեռնարկներ։ Կարեւոր դատեցինք նոյնպէս, որ ամերիկական մամուլի մէջ եւս սկսւի ագիտացիա, եւ մի դիմում

լինի ամերիկահպատակ եւ ամերիկաբնակ հայերի կողմից Ռուզվէլտին այն բարբարոս միջոցների առթիւ, որ գործ է դնում ռուս կառավարութիւնը հայերի դէմ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ներփակ շրջաբերականը խնդրենք յանձնել «Հայրենիքի» խմբագրութեան։ Հարկ ենք համարում աւելացնել, որ Նակաշիձէին որոշել էին սպանել եւ ռուս սոցիալիստները եւ վրացիները։ Դիմել էին Դաշնակցութեան, խնդրելով, որ այդ գործը իրենց թողնի։ Սակայն որքան էլ նպատակայարմար դա դատւէր, զգացմունքը թոյլ չի տուել մերոնց այդ զիջումը անել։

Ընկեր Դարբինեանը(1) *այսօր տեղ է հասել։*

Ն[*ՈՅՆ*]

1.- Աբրահամ Դարբինեան, արաբկերտցի, Ամերիկա գաղթած, ապա իբրեւ գործիչ Երկիր անցած։

531

Պատճէններու մատեան No 89, *էջ* 8-9

Ռուսերէն նամակ

1905 *յունիսի* 7

«*Պրշեդսվիտի*» (Przedswit)(1) *խմբագրութիւն*

Կրակով (Cracovie)

Սիրելի ընկերներ,

Ստացանք ձեր յունիս 5-*ի նամակը։ Մի քանի օր առաջ այդտեղ էր Գապոնը*(2)։ *Նրա եւ Վոլխովսկու հետ միասին կազմակերպեցին խորհրդակցութիւն բիւրոյի*(3) *եւ կոմիտէի վերաբերեալ։ Գապոնն առաջարկում է հրաւիրել բոլոր կազմակերպութիւնների ընդհանուր խորհրդակցութիւն։ Բայց դա մենք ժամանակավրէպ գտանք, քանի որ խորհրդակցութիւնների համար նոր նիւթ չկայ եւ բիւրոյի վրայ դրուած կոնֆերանսի որոշումները դեռեւս կեանքի չեն կոչւել։ Դրա փոխարէն որոշեցինք դիմել ձեզ, խնդրելով ձեր պատւիրակին ուղարկել Ժընեւ։ Երեք կազմակերպութիւնների համաձայնեցւած քայլերը զգալի արագութիւն կը հաղորդեն բիւրոյի աշխատանքներին։*

Ընկեր [*անընթեռնելի*] *տեսնւել է Ռուբանովիչի հետ։ Ստացւում է որ կոմիտէի կազմակերպումը հնարաւոր կը լինի սկսել որոշ ժամանակ անց։ Ի դէպ Գապոնի* (*միանգամայն հիմնաւոր*) *առաջարկով քարտուղարութիւնը դիմեց ընկեր Դեկանո-*

զովին որպէս բիւրոյի անդամի՝ նրա վրայ դնելով կոմիտէի կազմակերպման հոգսերը։

Մեզ առաջարկում են ֆրանսիական Gras(4) *սիստեմի հրացաններ էժան գնով՝* 6-7 fr.։ *Մեզ դրանք պէտք չեն։ Ձեզ պէտք չե՞ն արդեօք։*

Վարչաւեան հասցէն մեզ յայտնի չէ։ Բեկն այդ մասին մեզ ոչինչ չի գրել։ Ստացւում է այնտեղ արդէն պայմանաւորւել են փոխանցման մասին եւ ձեր ընկերները գիտեն ում փոխանցեն։ Մատնանշած հասցով 2-3 *օրից կ՚ուղարկենք* 1000 *օրինակ։*

Ընկերական բարեւներով՝
ԴՐՕՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Կովկասում մեր դրութիւնը աննախանձելի է։ Կառավարութիւնը հայերի դէմ է գրգռում տեղի մահմեդականներին։ Յարձակումները սկսեցին վարչակազմի աջակցութեամբ այն շրջաններից, որտեղ հայերը փոքրամասնութիւն են կազմում։ Էրիւանում կրկնւեց յարձակումը, բայց այնտեղ այս անգամ յաջողութիւնը մեր կողմն է։ Զգուշանում են զօրքի միջամտութիւնից։ Նակաչիձէի սպանողը չի գտնւել։ Նա փրկւել է զինւած [անընթեռնելի բառ] աջակցութեամբ։

Կցում ենք սպանութիւնից անմիջապէս յետոյ մեր Բաքւի կոմիտէի պրոկլամացիայի պատճէնը։

Ն[ՈՅՆ]

1.- Լեհական սոցիալիստական կուսակցութեան Կրակովում հրատարակուող թերթն էր: 1906-ին Լեհական սոցիալիստական կուսակցութեան տրոհումից ձեւաւորուած Լեհական սոցիալիստական կուսակցութիւն – յեղափոխական ֆրակցիայի Polska partia socjalistyczna – frakcja rewolucyjna պաշտօնաթերթ: 1909-ից կուսակցութիւնը վերականգնեց իր հին՝ PPS-Polska partia socjalistyczna անուանումը:

2.- Գապոն քահանայ:

3.- 1904 թ. վերջերին – 1905 թ. սկզբներին տեղի ունեցած Ռուսաստանի ընդդիմադիր եւ յեղափոխական կուսակցութիւնների միջկուսակցական ժողովների մասին է:

4.- Լատինատառ գրուած է:

532

Պատճէններու մատեան No 89, *էջ* 10

1905 *յունիսի* 7

Լեոնեանին(1), *Բերլին*
Ընկեր,

Ուսանողի խնձորի(2) *մասին Ռուբինան գրել էր, ուղարկել էր նաեւ նկարը։ Պէտք է ասել, որ դրա սկզբունքը մեզ արդէն յայտնի էր. չենք գործածում, որովհետեւ չի կարելի դրա բուն ընկնելու ճիշտ ժամանակը որոշել, մինչդեռ մեր ձեռքի տակ ունինք ձեւեր, որով կարելի է նոյնիսկ մի շաբաթ առաջ որոշել ժամը։*

Իսկ ինչ վերաբերում է փորձերին, ուրախութեամբ կը հոգայինք բոլոր անհրաժեշտ ծախսերը, եթէ միայն ուսանողը որոշ բաներում փորձառութիւն ձեռք բերելուց յետոյ համաձայնի անցնել Կովկաս եւ գործի մէջ մտնել։ Այս դէպքում գուցէ հարկաւոր լինի, որ այստեղ գայ, գործնական մի քանի բաների հետ ծանօթանալու համար։ Բայց նախ քան այս պայմանները մեր կողմից նրան յայտնելը, մենք կ'ուզենայինք իմանալ ձեզանից, թէ նա մինչեւ որ աստիճան վստահելի կարող է լինել բուն գործի ասպարէզում։

Ծրագիրը դեռ պատրաստ չէ. գուցէ մի շաբաթից տպագրուած լինի ամբողջովին։ Առայժմ գոհացէք խորհրդաժողովի որոշումներով։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Լեոնեան – ծածկանուն Նազարեանց Լիպարիտի:
2.- Խնձորը՝ ռումբի, նռնակի իմաստ ունի:

533

Պատճէններու մատեան No 89, *էջ* 11

Ռուսերէն նամակ

1905 *յունիսի* 7

Ընկեր Ռոմ-ին(1), *Ցիւրիխ*
Սիրելի ընկեր,

Ստացել ենք Ohanjan-a-*ի անունով քո նամակը Ռուսաստան մեր գրականութեան առաքման վերաբերեալ։*

Մեր կողմից հաւաքւած տեղեկատուութեամբ պարզւեց որ ներկայ ժամանակում Ռիգայում պոլիտեխնիկումի փակման պատճառով նրանց մօտ ընկերներ չգտնւեցին։ Այնպէս որ այդ գործը հարկ է լինելու առայժմ յետաձգել։

Շնորհակալութիւն ձեր [անընթեռնելի բառ] *համար։*

Ընկերական բարեւներով՝
ԴՐՕՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Անունը չի կարդացւում:

534

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 228

7-ին յունիսի

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ

Ամիսներ առաջ Համոն ուղարկել է ձեզ մի կապոց թղթեր, հաշիւներ այստեղ ուղարկելու համար։ Այդ թղթերը դեռ չեն ստացուել։ Ի՞նչ եղան։
Անատոլիի նաւով առաքումի ցանկը (տես նամակ Ղազարեանի(1) *6 Յունիսի)։*

1.- Վրթանէս Ղազարեանը Մարսէյլի նաւահանգիստէն զէնք, «Դրօշակ» եւ այլ իրեր առաքող ընկերն էր։

535

Պատճէններու մատեան No 89, *էջ* 13-14

1905 *յուն[իսի]* 9

Պալքանեան Կենտր. կոմիտէին, Ֆիլիպէ

Ներփակ ցանկը պէտք է տալ Թիւֆէնկչիէվին եւ նրանից առնել ապրանքը։ Մի քանի իրեր կան, որոնց քանակութիւնը չի նշանակուած, թող ինքը դնի համապատասխան չափով։ Երբ Թիֆլիզից ստացանք հեռագիր Պիոնեանի անունով Oui, *նշանակում է, ապրանքը պէտք է վերցնել, փողը վճարել։ Ուղարկելու համար նշանակուած է հետեւեալ միջոցը։ Բոլոր իրերը պէտք է դնել չանթաների մէջ, որոնք* 10-15 *կիլոյից ծանր չպէտք է լինեն։ Մի քանի տղաներ ապրանքը առնելով ճանապարհւում են Սիլեստրէ գերմանական նաւով։ Սիլեստրէ չեն իջնում, այլ այնտեղից նոր տոմսակ են առնում մինչեւ Գալաց։ Գալացի տղաները, պէտք է նախօրօք իմանան, թէ ապրանքը որ օրը, ինչ նաւով պէտք է գայ։ Այդ օրը նոքա համապատասխան թւով տղաք են ուղարկում Բրաիլա, տալով նրանց ոստիկանական վկայականներ, որ վերադարձին խուզարկումից ազատ մնան։ Բրաիլայում նրանք միանում են Սիլեստրէից եկող տղաներին, առնում են պայուսակները եւ այս ձեւով առանց խուզարկուելեան ափ իջնում։ Գալացում ապրանքը յանձնում են Բաթում գնացող մի նաւի, ուր մենք մարդիկ ունենք։*

Թիւֆէնկչիէվին խօսէք, որ ապրանքը առնւած է համարուելու միայն այն ժամանակ, երբ Թիֆլիզից Oui *հեռագիրը ստացւի, որովհետեւ վերջին դէպքերը Կովկասում կարող են փոխած լինել ծրագիրը։ Այդ դէպքում էլ փողը կը փոխադրենք։*

Կովկասը նոր Տաճկահայաստան է դառնում։ Երեւանեան նահանգի ամբողջ թիւրք աւազակ եւ սրիկայ ղուրտերը ոտքի են հանել։ Քիւրդերն էլ միացել են։ Գիւղերը անջատ՝ պաշտպանւելու հնարաւորութիւն չունին։ Կառավարութիւնը կամ բոլորովին անտարբեր է,— երբ ոյժը թիւրքերի կողմն է — կամ աջակցում է թիւրքերին,— երբ հայերը լուրջ դիմադրում են։ Նախիջեւանի յաջողութիւնից յետոյ յար-

ձակումը վերսկսում է Երեւանում։ Առաջին օրը սպանում եւ վիրաւորում են մօտ 20 *հայ։ Երկրորդ օրը մերոնք են յարձակում անում, կոտորում են մօտ* 40 *թիւրք, երրորդ օրը թիւրքերի սպանուածների թիւը անցնում է* 100*-ից, իսկ վերաւորներինը դառնում է մի քանի հարիւր։ Անմիջապէս զօրքը միջամտում է, եւ քաղաքը հիմա յայտարարուած է պաշարման դրութեան մէջ։ Կասկած չկայ, որ կառավարութիւնը ամէն ջանք թափելու է զինաթափ անի հայերին։ Նոյն տեսակ դէպքեր անխուսափելի են համարւում նոյնիսկ Թիֆլիզում, ուր կառավարութիւնը զինում է ռուս բանւորներին։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ընկեր Մարզպետունին կարող է ճանապարհւել Պարսկաստան։ Իսկ Միքայէլ Զաթալեանի եւ Պետրոսի մասին կը գրի ընկեր Սարգիսը Պարսկաստանից։

536

Պատճէններու մատեան No 89, *էջ* 15

1905 *յուն.* 12

«Վրէժ» Կենտր. կոմիտէին(1)

Ընկերներ,

Ներփակ կը գտնէք 17 *օրինակ մեր շրջաբերական-նամակներից։ Երկու օրինակը պահէք ձեր շրջանի համար. մի քաղաքից միւսը ուղարկել տուէք, իսկ մնացած* 15*-ը խնդրենք ապահով ճանապարհով փոխադրել Կովկաս։*

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ատրպատականի Կ. կոմիտէին։

537

Պատճէններու մատեան No 89, *էջ* 16-17

1905 *յուն.* 14

Լորիս Մէլիքեանին, Պարիզ

Սիրելի ընկեր,

Ներփակ ուղարկում ենք քեզ Gomant*-ի*(1) *նամակը մի ուրիշ թղթի հետ, ուր կայ քո եւ Անդրանիկի*(2) *խօսած զէնքերի ցանկը, ճիշտ* 2,509,800 fr.*-ի, ոչ աւել, ոչ պակաս։ Զգիտենք, ինչ էիք մտածում այդ պատւէրի մասին բանակցելիս։ Որտեղի՞ց*

այդքան գումար։ Ինչո՞ւ մեզ անյարմար դրութեան մէջ էք դնում։ Անդրանիկի ասելով, դու ես դիտմամբ քանակութիւնը բարձրացրել, որպէսզի պատւէրին աւելի մեծ կարեւորութիւն տան։

Պ. Gomant-*ին մենք հեռագրով պատասխանեցինք, թէ մեր ընկերը կը գայ անձամբ կը խօսի։ Խնդրում ենք ուստի գնալ եւ նրան յայտնել՝* 1) *ինչպէս դուք էլ առաջւանից ասել էք, արժէքը կը վճարենք միայն ապրանքը տեղումը ստանալուց յետոյ, եւ իբրեւ ապահովութիւն, բանկում կը դնենք մի որոշ գումար դէպոզիտ*(3)։ *Եթէ*[?] *այս նախնական պայմանը հնարաւոր եղաւ գոհացնել, մեր առաջին պատւէրը կը լինի* 100 *հատ մաուզէրեան ատրճանակներ եւ* 400,000 *փամփուշտով։ Պէտք է աւելացնել նաեւ, որ Բելգիայում մեզ խոստացել են այդ ատրճանակները տալ հատը* 7,5[?] fr.-*ով։ Գուցէ դրանք լաւերը չեն, չգիտենք, բայց վերջնական պատւէրի դէպքում կը ստուգենք։ Ամենակարեւորն է՝ ապահով յանձնելու խնդիրը։ Եթէ այդ մասին երաշխաւորութիւն է տալիս, այն ժամանակ խնդիրը դիւրանում է։*

Թող Գալֆան(4) *Մարսէյլ գնալիս ըստ կարելոյն գոնէ վերցնի հետը թէ ատրճանակ, եւ թէ փոշի*(5)։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Gomant-*ի նամակները յետ ուղարկիր Գալֆայի ձեռքով։*
Ն[*ՈՅՆ*]

1.- Փարիզի մէջ զէնքի վաճառման հաստատութիւն:
2.- Հանրածանօթ հայդուկապետն է, որ Արեւմտեան բիւրոյի կողմէ ուղարկուած էր Փարիզ եւ եւրոպական այլ կեդրոններ զէնք-զինամթերքի գնման համար:
3.- Աւանդ դրուած գումար:
4.- Յարութիւն Գալֆայեան – Արեւմտեան բիւրոյի գործավար:
5.- Պայթուցիկ նիւթ:

538

Պատճէններու մատեան No 89, *էջ* 18

1905 *յուն.* 14

Վ. Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Եթէ հարկ լինի քիչ թէ շատ մեծ քանակութեամբ ատրճանակ, փոշի, փամփուշտ ուղարկել Պարիզից պահեստի համար, ի՞նչ ձեւով կարելի է անել. եթէ հնարաւոր է երկաթուղով իբրեւ ապրանք, ի՞նչ հասցէով, ինչ մեծութեամբ եւ ծանրութեամբ սնտուկներով։ Խնդրենք այս հարցերին պատասխանէք ըստ կարելոյն շուտով երկու տեղ՝ 1) *ուղղակի մեզ եւ* 2) *հետեւեալ հասցէով՝* Mr Galfa, Administration de "Pro Armenia", 3, Avenue de l'Observatoire, Paris.

Պատասխանը խնդրենք չուշացնել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

539

Պատճէններու մատեան No 89, *էջ* 21

1905 *յուն.* 14

Պրն. Վարդոյին, Վառնա

Ապր. 25-ի մեր նամակով յայտնել էինք ձեզ «*Խորհրդի*» որոշումը այն գումարի վերաբերմամբ, որ դուք ինքնագլուխ պահել էք ձեզ մօտ։ *Մեր այդ նամակին* պատասխան դեռ չստացանք։

Երկրորդ եւ վերջին անգամ պարտք ենք համարում յիշեցնել ձեզ՝ ձեր պարտականութեան *մասին։*

Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

540

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 63-66

14-*ին յունիսի*

ՎԻՇԱՊ(1)

Ստացանք Աչոտի նամակը. Վռամի(2) *լուսանկարը ժամանակին ստացել ենք։ Խնդրել էինք սպասել մի նորը գտնելու համար, որովհետեւ ձեր ուղարկածը բաւական անաջող է։*

Բացի այդ նպատակայարմար ենք գտնում հրատարակութեան յանձնել դէպքից յետոյ։

Քրիսից նամակ ստացանք։ Գրում է, որ չչտապենք հրատարակել Վռամի կենսագրութիւնը։ Նա ձեզ այնպէս է հասկացել, իբր թէ մենք շատ ենք շտապում։ Հանգստացրէք նրան պարզելով, որ մենք ինքներս անժամանակ ենք գտնում այդ բանը։

Քրիստափորի լուսանկարը նոյնպէս յետոյ կ՚ուղարկենք։

Սաֆոյի նամակը՝ Բուքրէշից գրած, ստացանք, ինչպէս նաեւ արխիւում պահւելիք ծրարը։

Ոսկեհանքից լուրեր են գալիս այնտեղ կատարւող վրդովեցուցիչ ծախսերի համար։ Պահանջեցէք հաշիւ. ի սէր Աստծոյ, դրանք մեզ բոլորովին խայտառակելու են։ Ինչպէս իմանում ենք, Անդրանիկը(3), *Գէորգը եւ մի ուրիշը կազմակերպութեան դրամի վրայ նայում են, ինչպէս իրենց սեփական։ Բացի* 5 *հոգուց, որ մարմին են կազմում, կազմակերպութեան հաշւին ապրում են դարձեալ* 15 *հոգի։ Սրանց մէջ կան այնպիսիները, որոնք անձնական պարապմունք ունեն։ Պէտք է վերջ տալ սրան։ Եւ այդ բանը դուք պէտք է անէք, քանի որ ձեր սկզբնական քայլերով դուք էք նպաստել այդ ընթացքին։ Պէտք է դրանց հասկացնել, որ յոյս դնել նոր գումարների վրայ չեն կարող, քանի որ մէկ կողմից Կովկասը մեծ ոյժ է կլանելու, միւս կող-*

մից չի կարողանալու անցեալի չափով եկամուտ տալ։ Դրութիւնը այնտեղ սոսկալի է երեւում։ Կառավարութիւնը ափ արձակ հովանաւորում է թիւրք սրիկաներին եւ աւազակներին, միւս կողմից նեղում է ամէն կերպ հայերին։ Յարձակման պատրաստութիւններ են տեսնում նոյնիսկ Թիֆլիսում։ Երեւանում կոզակների սպանները ազատ կերպով թիւրքերին զինավարժութիւն են սովորեցնում։ Խուզարկում են հայերին, զէնքերը խլում։ Այսպիսով ուզում են թուլացնել հայերին, յարձակումները յաջողեցնելու համար։ Երեւանում կրկնել են յարձակումը, առաջին օրը սպանել են եւ վիրաւորել մօտ 20 հայ։ Երկրորդ եւ երրորդ օրերը մերոնք են յարձակւել եւ մեծ ջարդ տուել թիւրքերին։ Հարիւրաւոր սպանուածներ ու վիրաւորներ կան թիւրքերից։ Անմիջապէս զօրքը միջամտում է եւ զինուորական դրութիւն է հաստատում։ Նախիջեւանում մերոնք պաշտպանում են տները. այնքան ոյժ չեն ունենում, որ դուրս գան չուկան եւս պաշտպանելու։ Ղարսից ճանապարհ է ընկնում 15 հոգինոց մի խումբ, որ ճանապարհին ստւարանալով հասնում է 80 հոգու։ Այդ խումբը մի քանի ջարդ է տալիս թալանողներին ու աւազակներին, յետ առնելով աւարը։ Յաւելին այն է, որ վրացիներին էլ են գրգռում հայերի դէմ, եւ դա մասամբ կարծես թէ յաջողւում է։ Շատ լաւուած դրութիւն է ամէնուրեք։ Ստիպւած եղանք Վարդանին առաջարկել Կովկաս գնալ։ Անդրանիկ(4) նոյնպէս պատրաստւում է, սպասում է համաձայնութիւն Մ. Ֆ.ից։ Գնում են մի քանի ուսանողներ եւս։ Ռոստոմը նոյնպէս ճանապարհ է ընկնում։ Կովկասը կարող է արիւնլւայ լինել, ինչպէս Տաճկահայաստանը։ Սիմոնին հրաւիրել ենք այստեղ Ռոստոմի փոխարէն։ Վարդանի եւ Սիմոնի ժամանակաւոր հեռանալը Լեռնավայրի(5) շրջանից առանձնապէս չի վնասել այնտեղի գործերին, քանի որ գործը դեռ բոլորովին նախապատրաստական շրջանի մէջ է։ Վարդանը առանց այն էլ մի առժամանակ մտադիր էր դուրսը մնալ, իսկ Սիմոնը Ժընեւից մասամբ կարող է զբաղւել եւ Լեռնավայրի գործերով։

1.- Վիշապը Պոլիսն է. Ռոստոմի նամակը ուղղուած է Սուլթանին մահափորձը կազմակերպող Յուցական մարմնին:

2.- Աշոտ, Սեւ Աշոտ, Աշոտ Բագրատունի, իսկական անունով Եղիկեան Կարապետ, անդամ էր Յուցական մարմնին: Վռամը՝ Վռամշապուհ Քենտիրեանն է, զոհուած Քրիստափորի հետ ռումբերու փորձարկման ընթացքին: Քրիսը՝ Ֆեներճեան, նոյնպէս անդամ Յուցական մարմնի:

3.- Շշփոթել Սասնոյ հերոսին հետ. այս մէկը՝ Երամեան Պօղոս, անդամ էր Իզմիրի (Ոսկեհանք) Օժանդակ կոմիտէին:

4.- Բուն ինքը՝ հայդուկապետը, որուն Կովկաս անցնիլը վտանգաւոր համարուեցաւ: Անդրանիկ մնաց Եւրոպա եւ զբաղեցաւ զինական գնումներով եւ, աւելի ուշ, Պուլկարիոյ Հ.Յ.Դ. զինուորական վարժարանի կազմակերպութեամբ:

5.- Լեռնավայրը Կիլիկիան է. Սիմոնը՝ Զաւարեան. Վարդանը՝ Խանասորի, բուն անունով Մեհրաբեան Սարգիս

541

Պատճէններու մատեան No 89, *էջ* 19-20

1905 *յուն.* 15

Պալքանեան Կենտր. կոմիտէին, Ֆիլիպէ

Ընկերներ,

Այսօր հեռագրով խնդրում ենք կատարել Արեւմտեան բիւրոյի պատւէրը, որի մասին գրել էինք ձեզ ամսոյս 9-ին։ Թող մէկը ձեզանից գնայ Սոֆիա, կարգադրի ամէն ինչ եւ գումարի մասին մեզ հեռագրով յայտնի։ Եթէ հարկ լինի, թող յատուկ մի մարդ ապրանքի հետ միասին գալաց գնայ։ Գնացողը Գալացում թող տեղեկանայ, ի միջի այլոց, թէ ինչ զէնքեր կարելի է այնտեղ գնել եւ ինչ գներով։ Մասնաւորապէս թող իմանայ մաուզէրի, automatique(1) *ատրճանակների մասին։*

Վարդը(2) *ուղարկե՞ց արդեօք ընկեր Պիոնեանին այն գումարը, որը ուղարկւել էր նրան թիւրիմացութեամբ Թիֆլիզից։ Մեր դիմումին պատասխան չեկաւ [մէկ բառ անընթեռնելի]։ Այսօր երկրորդ եւ վերջնական նամակն ենք գրում Վարդին։*

Փամփուշտի գործարանի համար մենք ծախք չենք խնայիլ, եթէ մենք իսկապէս վստահ լինենք, որ պատրաստւած փամփուշտները պէտքական են։ Ո՞վ է տեսել, գործածել դրա փամփուշտները, ո՞վ կարող է վկայութիւն տալ։ Այնպէս չլինի, որ ծախքեր անենք եւ յետոյ անպէտք բաներ ստանանք։ Մի հարց եւս. քանի՞ տեսակ փամփուշտ կարելի է շինել, միայն մէկ սիստէմի, թէ այլ եւ այլ։

Կովկասում հիմա դրութիւնը համեմատաբար լաւ է, հաւանական է, Երեւանում մեր տարած յաղթութեան հետեւանօք։ Մերոնք որոշել են ակն ընդ ական պատասխանել, եթէ նոր շարժումներ սկսւին։ Այլ եւ այլ տեղեր խմբեր են դուրս բերւած։ Զէնքի ահագին պահանջ կայ եւ գինւելու տրամադրութիւն, սակայն ներս տանելու մեծ դժւարութիւններ կան։ Աւելացրէք սրան եւ կառավարութեան ջանքերը՝ հայերին գինաթափ անելու, դիւրին կը լինի հասկանալ մերոնց դրութիւնը։ Բաւական զէնքեր բռնւած են Բագւում։ Բացւած է ռումբի ձուլարանը, ուր ձերբակալւել են 3 *հոգի,* 200-*ից աւել ռումբերով։ Նախիջեւանում սկզբները մերոնք լաւ դիրք են բռնած լինում, բայց գիջանելով թիւրք մեծամեծների, փոխ-նահանգապետի յորդորներին, սկսում են բանալ խանութները։ Հէնց այդ ժամանակ տեղի է ունենում պայմանաւորեալ յարձակումը շուկայի վրայ։ Թաղերում լաւ են պաշտպանւում։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Ֆրանսերէն՝ ինքնագիր:

2.- Վարդ-Պատրիկեան Յակոբ, որ դրամական իւրացումներու եւ այլ զեղծումներու յանցանքներով պիտի հեռացուէր Դաշնակցութեան շարքերէն եւ, աւելի ուշ, ահաբեկման ենթարկուէր:

542

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 67

15 *յունիսի*

ՈՍԿԵՀԱՆԲ(1)

Ձեր պահանջած թղթերի առթիւ հաղորդում ենք հետեւեալը։

1) *Անցեալ տարի սպառնալիք տուել ենք մի մասնաւոր դէպքի առթիւ։ Դա չի կարող պէտք գալ ձեզ*

2) *Դաշնակցութեան* minimum *պահանջները կը տպագրենք եւ կ'ուղարկենք ֆրանսերէն լեզուով, առաջաբանով միասին։*

3) *Յունարէն հնարաւորութիւն չունենք այստեղ պատրաստել. չի՞ կարելի այդ բանը յանձնել Սարհատին* (2)։ *Եթէ նա դիւրութիւն ունի, մենք կ'ուղարկենք ֆրանսերէն տեկստը. թող թարգմանել տայ եւ տպագրի։*

4) *Թիւրքերէնը մի քիչ դժւար է, բայց կ'անենք։*

Բանն այն է, որ հիմա մենք շատ աւելի ենք խառը (*Կովկասի մասին տեղեկութիւններ*)։

Չպէտք է զուր տեղը աւելի գրգռել յոյներին եւ թիւրքերին։

1.- Իզմիր (Զմիւռնիա) Յուցականի տեղական օժանդակ մարմնին ուղղուած նամակ:

2.- Սարհատը, աւելի ճիշդ Սահրատ, բուն անունով Յակոբեան Յարութիւն, Կիլիկիոյ եւ Իզմիրի գործիչներէն էր:

543

Պատճէններու մատեան No 89, *էջ* 22

Արխիւային համարակալում չունի: Կը գտնուի Վարդոյի դատական թղթածրարին մէջ, No 37:

1905 *յուն.* 16

Պալք[*անեան*] *Կենտր. կոմիտէին, Ֆիլիպէ*

Ընկերներ,

Ստացանք Վարդի(1) *խնդրի վերաբերեալ ձեր կազմած տեղեկագիրը, դաշնակցական մարմիններին տրւելու համար։*

Այդ տեղեկագրի մէջ առաջ է բերւած նաեւ մեր նամակի պատճէնը Վարդին, որ ուղարկել էինք ձեզ ի դիտութիւն։ Այդ նամակը բոլորովին ի զուր էք զետեղել, դա կոմիտէիդ չի վերաբերում։ Այնպէս որ հարկաւոր կը լինի թերթը փոխել ու նորից

պատրաստել։ Ներփակ կը գտնէք մի օրինակ, ուր ջնջուած է մեր նամակը։ Խնդրենք ուրեմն, չուտով սրբագրել եւ ուղարկել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Սարգիսը(2) *կ'ուշանայ Կովկասում. Գրիգորը կարող է դեռ այդտեղ մնալ։*

1.- Վարդը՝ Վարդ-Պատրիկեանն է, ծանօթ Վարդօ եւ Արվախի ծածկանուններով, Պոլկարիոյ «Շարժում» թերթի խմբագիր, որ նիւթական իւրացումներու եւ կարգապահական խախտումներու պատճառաւ պիտի արտաքսուէր կուսակցութենէն եւ ահաբեկման ենթարկուէր 1907-ին։

2.- Սարգիսը՝ Բարսեղեան Սարգիսն է (Շամիլ), բուն անունով Օտապաշեան Պօղոս (1875-1915), որ հայ-թաթարական ընդհարումներու ընթացքին կը գտնուէր Կովկասի այլեւայլ շրջանները, նաեւ Ղարաբաղ։

544

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 229-232

16-*ին յունիսի*

Մ. Ք.(1)

Ստացանք ձեր հեռագիրը՝ Բուլղարիայում ապսպրած ապրանքի մասին։ Մենք էլ իսկոյն կարգադրեցինք, որ պատւէրը կատարեն եւ տեղ հասցնեն համաձայն ձեր նամակի ցուցմունքներին։ Բայց ի՞նչ արիք այդ ապսպրանքի համար Վարդին(2) *փոխադրած 2000 ր.ի մասին։ Հեռագրեցի՞ք, որ յանձնի։ Եթէ չէք արել, անմիջապէս եւ իսկոյն պահանջէք, որ փողը ուղարկի կամ մեզ կամ Ֆիլիպէ, թէ չէ դրա գլխին էլ քար կ'ընկնի։*

Մինչեւ հիմա մի կարգին բան չգրեցիք Նաւահանգստում ստանալիք ապրանքի փոխադրութեան ձեւի մասին։ Գրում էք, որ ուղարկենք սովորական նաւերով, բայց ինչպէ՞ս. իբրեւ ապրա՞նք յանձնենք նաւին, ինչպէ՞ս, ինչ նշանով պէտք է Նաւահանգստի ընկերները ճանաչեն սնտուկները։ Թէ մա՞րդ պէտք է դնենք հետը։ Խնդրում ենք կէտ առ կէտ, ամենայն մանրամասնութեամբ գրէք փոխադրութեան ձեւի, հասցէի, սնտուկների մեծութեան, ծանրութեան եւ այլ պայմանների մասին։ Անհրաժեշտ է մի քանի ազատ մարդ Նաւահանգստում եւ այլ կէտերում։

Եթէ ապրանք ընդունելու խնդիրը կարգադրէք, ամէն բան կարող ենք հասցնել։

Կրպոն, որ աշխատել է այդ կողմերում, պատրաստ է գալ։ Մենք էլ շատ յարմար ենք գտնում նրան, բայց սպասում ենք ձեր հեռագրին։ Եթէ առհասարակ մարդու պէտք ունէք, գրեցէք, այստեղ բաւականաչափ փափաքողներ կան։

Ուզում էին գալ Անդրանիկը, Վարդանը, Ռոստոմը։ Ձեր հեռագրից յետոյ միայն Վարդանն է ճանապարհ ընկնելու։ Եթէ գործերը բարդանան, կը գան եւ միւսները(3)։

Բարսեղեանի(4) *գրած մի նամակը* (8 *մայ*[*իս*]) *երէկ միայն ստացանք* (1/14

յուն.)(5)։ Ինչո՞ւ ուղղակի հասցէներով չէք ուղարկում։

Օտար թերթեր ուղարկում ենք Վրէժի(6) վրայով։

Ծրագրի նախագիծը(7) անվերջ փոփոխւում էր. տրամադրութիւն էլ չկար վերջին դէպքերի պատճառով։ Վաղը վերջապէս յանձնում ենք տպարանին։

Զի՞ կարելի Թիֆլիզի եւ Բաթումի ինքնապաշպանութեան գործին հրաւիրել նաեւ վրացիներին ու ռուսներին։ Համերաշխ ակտիւ քայլը մեծ նշանակութիւն կ'ունենար։ Բացի այդ, պէտք է սպառնալ եւ թիւրքերի յայտնի անձանց, որ եթէ նրանք չդիմադրեն իրենց բաշիպոզուկ տարրերին, պիտի պատասխանատու նկատւեն։

Գրում էք, որ հրոսակային խմբեր էք հանում, ակն ընդ ական պատասխանելու համար։ Լաւ կը լինէր, եթէ պատժի ենթարկւէին միայն թալանին, կոտորածին մասնակցած գիւղերը եւ անհատները։

Բարսեղեանի տւած նոր հասցէները Դրօշակ ուղարկելու համար չկարողացանք կարդալ։ Նամակները այսուհետեւ յանձնէք գրելու Սիմոնին, որ արդէն ձեզ մօտ եկած կը լինի(8)։ Բարսեղեանը գանգատւում է մի ինչ որ բանի համար, որ վեցերորդ անգամն է կրկնում։ Բայց թէ ինչ բան է, չկարողացանք իմանալ, տեղը բոլորովին մաքուր է։ Զոր գրչով, կամ պարզ ջրով է գրել, ինչպէս եւ նախընթաց 5 անգամները(9)։

Զրաբերդի, Մրգաստանի եւ Քարի կոմիտէները(10) մի ընդհանուր բողոք են գրել մեզ նւիրատւութեանց ցանկի հրատարակութիւնը ուշացնելու համար։ Յայտնեցէք նրանց, որ այդ ցանկերը չենք ստացել, ինչ ստանում ենք շուտով յանձնում ենք տպագրութեան։

Նակաշիձէի հետ սպանւած կառապանի եւ պարսիկ մրգավաճառի ընտանիքներին լաւ կը լինէր կոմիտէի կողմից մի դրամական նպաստ տրւէր եւ ցաւակցութիւն յայտնւէր։

Պէտք է այդ առթիւ մի շրջաբերական հանել, որ կոմիտէի կողմից դատապարտրւած մարդկանց հետ զգուշանան յարաբերիլ, նրանց հետ միասին չլինեն որպէսզի անմեղ տեղը չզոհւեն։

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին։ Նամակին մէջ բազմիցս յիշատակուած Նաւահանգիստը՝ Պաթումն է անշուշտ։

2.- Տես այս մասին 4 Յունիսի նամակի ծանօթ. 6-ը։

3.- Հայ-թաթարական ընդհարումներու տարածման հետեւանքով, շուտով Անդրկովկաս պիտի փութային բացի Վարդանէն (Խանասորի), Ռոստոմ, Զաւարեան, Յոնան Դաւթեան, Միք. Վարանդեան եւ շատ ուրիշներ։

4.- Բարսեղեանը ծածկանունն է Արեւելեան բիւրոյի անդամ բժ. Յովսէփ Տէր Դաւթեանի։

5.- Ժընեւէն գրուած նամակները նոր տոմարով են թուագրուած։ Այստեղ 1/14-ը կը նշանակէ հին տոմարով 1, իսկ նոր տոմարով՝ 14 Յունիս։

6.- Վրէժը Թաւրիզն է, Ատրպատական։

7.- Խօսքը Դաշնակցութեան Խորհուրդի կողմէ մշակուած Կովկասեան Նախագծի մասին է։

8.- Եթէ Սիմոնը՝ Զաւարեանն է, ապա Ռոստոմ կը սխալի, որովհետեւ վերջինս միայն 1906 թ. Յունուարի վերջերուն ճամբայ պիտի ելլէր դէպի Կովկաս, ուր հասաւ Փետրուարի առաջին օրերուն։

9.- Ռոստոմի դիտել տուած առարկութիւնը հետեւեալ իմաստը ունի.– Բարսեղեան գրած (գաղտնի թանաքով) նամակին մատնանշուած տեղերը բառերը չեն կարդացուիր, որովհետեւ բոլորովին ցամքած գրիչով գրուած է։

10.- Յաջորդաբար՝ Կարսի, Երեւանի եւ Ալեքսանդրապոլի։

545

Պատճէններու մատեան No 89, *էջ* 23

1905 *յուն.* 17

Լեռնեանին, Բերլին

Յարգելի ընկեր,

Խնդրենք հարցնել Պօղոսեանին, ինչ եղան Պրօլեդարեատի միջոցով ուղարկած կապոցները, տեղ հասան, թէ ոչ։ Հարցրէք նոյնպէս, որին կարելի է յանձնել, եթէ P.P.S.*-ի միջոցով փոխադրելու լինենք։*

Մոսկվայից գրում են, որ նրա մօտ մնացել է Դաշնակցութեան պլաց-կարտը։ Խնդրում ենք որ մեզ ուղարկի։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

546

Պատճէններու մատեան No 89, *էջ* 24

1905 *յուն.* 19

Թ. Յակովբեանին, Սոֆիա

Յարգելի ընկեր,

Այսօր մեկնում է դէպի Բուլղարիա մեր ընկեր Տիգրանեանը. ճանապարհին քիչ ուշանալու է։ Վիէննայից դուրս գալիս նա հեռագիր կը տայ մեր հասցէին։ Խնդրենք նրան հանդիպել կայարանում։ Սեւ, միջահասակ երիտասարդ է, ձեռքին կ՚ունենայ «Դրօշակ» թերթը։ Եթէ ժողով անելու լինէք, այնպէս կարգադրէք, որ մի օրից աւել չմնայ Սոֆիայում. շուտով ճանապարհ ընկնի Ֆիլիպէ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

547

Պատճէններու մատեան No 89, *էջ* 25

1905 *յուն.* 19

Պալք[*անեան*] *Կենտր. կոմիտէին, Ֆիլիպէ*

Ներփակ ուղարկում ենք 8,000 fr. *չէկ Երւանդի հեռագրի հիման վրայ։*

Այսօր ճանապարհ է ընկնում ընկ. Տիգրանեանը։ Որովհետեւ նա շատ է շտապում կովկաս գնալ, աշխատեցէք ըստ կարելոյն քիչ պահել ձեր կողմերում։

Յոյս ունինք, որ իրերը Ռումանիա տեղափոխելիս, հարկ եղած զգուշութիւնները ձեռք առած կը լինէք։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

548

Պատճէններու մատեան No 89, *էջ* 26

1905 *յուն.* 20

Լօրիսին, Պարիզ

Սիրելի ընկեր,

Ներփակ ուղարկում ենք 1,000 fr. *չէկ՝ հեռագրիդ համաձայն։*
Գալֆայեանին ասէք շատ չուշանայ։
Կովկասի դրութեան մասին կը պատմի Ցոնանը։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

549

Պատճէններու մատեան No 89, *էջ* 27

Ռուսերէն նամակ

1905 *յունիսի* 20

Դեկանոզովին, Պարիզ

Սիրելի ընկեր,

Թիֆլիզից մեզ գրում են որ ձեր ընկերներին յաջողւել է կարգաւորել փոխադրութեան գործը։ Կարո՞ղ էք արդեօք մեզ յայտնել թէ ինչպէս եւ որտեղի՞ց կարելի է ուղարկել ապրանքը։

Ընկերական բարեւներով՝
ԴՐՕՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

550

Պատճէններու մատեան No 89, *էջ* 28

1905 *յուն.* 20

Վ. Ղազարեանին, Մարսէյլ

Ընկեր,

Երէկ ճանապարհ ընկած մեր ընկերոջ, յոյս ունինք, հարկ եղած աջակցութիւնը ցոյց տուած կը լինէք։

Ձեր ժամանակի սղութեան մասին մի քանի անգամ գրուել է։ Չէ՞ք կարող արդեօք մի երկու ամսով արձակուրդ վերցնել ձեր դրասենեակից՝ յատկապէս փոխադրութեան գործը կանոնաւորելու համար։ Այդ ամիսների ձեր ծախքը կազմակերպութիւնը իր վրայ կը վերցնի։

Ապրանքները չի ուղարկուելու Մարսէյլ։ Գալֆայի նամակից երեւում է, որ Պարիզում նա ոչինչ չի գտել։

Խարբերդի նամակը փոստը ձգէք։

No 5-*ի վերջին կապոցները պահէք առայժմ։ Կ'ուղարկէք այն ժամանակ, երբ ուրիշ բան չունենաք ուղարկելու։*

Եթէ դրասենեակը չհամաձայնի արձակուրդ տալ, առաջարկեցէք, որ գոնէ օրւայ մի մասը՝ կէսօրից առաջ կամ յետոյ ձեզ ազատ ձգեն։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՕ

551

Պատճէններու մատեան No 89, *էջ* 29

1905 *յուն.* 20

Արտաշէս Յովսէփեանին, Խոյ

Սիրելի ընկեր,

Ստացանք ձեր 11 *մայ. նամակը Շամի*(1) *արխիւին հետ միասին։ Արխիւի մնացած մասը ուղարկէք տուփի մէջ իբրեւ* colis postal.

Դուք մի քանի անգամ դժգոհութիւն է[ք] յայտնել, որ Սամսոնի(2) *միջոցով ենք ձեզ վերաբերեալ խնդիրների մասին տեղեկութիւն ուղում կամ ձեզ բան հաղորդում։ Իսկ վերջին նամակում իբր սրամտութիւն աւելացնում էք. «չլինի թէ իմ հասցէն չունիք»։ Վստահացնելով ձեզ, որ հասցէն ունինք, հարկ ենք համարում խնդրել սակայն, որ այդ տեսակ մանր-մունր բաներ ձեր մտահոգութեան առարկայ չդարձնէք. աչքի առաջ ունեցէք միշտ մեր ժամանակի սղութիւնը, գուցէ շուտով*

ստիպւած լինենք մեր նամակագրութիւնը պահպանել բոլորի հետ միմիայն Կ. կոմիտէի միջոցով։

Զհասկացանք ձեր եւ մի ուրիշ սրախօսութիւնը. «բայց վախնամ, այդ նիւթերն ալ ելեկտր[ական] գործիքի օրին ինկնայ»։ Միթէ՞ գործիքը դեռ չէք ստացել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— «Դրօշակ» կ'աւելացնենք 200 *օր[ինակ]։*

1.- Շամ – ծածկանուն Վան-Վասպուրականի:
2.- Սամսոն – ծածկանուն Թադէոսեան Ստեփանի (1870-1945), որ կը մնար Սալմաստ:

552

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 232

20 *յունիս*

ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏ(1)

Վաղը առաւօտ Մարսէյլից դուրս պէտք է գայ Կրպոն. թող մէկն ու մէկը անպատճառ նաւը գնայ նրան տեսնելու, նախ քան նրա նաւից իջնելը։ Հետը բան է բերում(2)։

Ամսիս 4-ին մեր գրած նամակին պատասխանը յոյս ունենք այս երկու օրը ունենալ։ Մի անգամ եւս խնդրում ենք փոխադրութեան խնդրին տալ առաջնակարգ նշանակութիւն։ Մի խնայէք ոչ մարդկային աշխատանք եւ ոչ փող։

Ամէն կերպ աշխատէք համերաշխութիւն պահպանել միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ, մասնաւորապէս վրացիներին։ Խառը մարմին կազմէք քաղաքը պաշտպանելու համար, եթէ խռովութիւն սարքեն կամ .....ն(3) *կամ թիւրքերը։*

Լեւոնին գրէք, որ պայթուցիկ փոշի ճանապարհ ձգի. իր գտնւած տեղում ունենք մեծ քանակութեամբ։

1.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաքումի:
2.- Հասկնալի է որ խօսքը զէնքերու մասին է:
3.- Ռուսերէն անընթեռնելի բառ:

553

Պատճէններու մատեան No 89, *էջ* 30

1905 *յուն.* 21

Պալք[անեան] Կենտր. կոմիտէին, Ֆիլիպէ

Ապրանքը դուք միայն Գալաց հասցրէք. այնտեղ գիտեն, թէ ինչ պէտք է անել։ Գոնէ մեզ այդ մասին ոչ մի ցուցմունք չեն տուել Թիֆլիզից։

Զինուորներու վերաբերմամբ պէտք է ղեկավարւել «կազմակերպական կանոն-

ներով»։ Ձենք հասկանում, ինչու են գալիս եւ ինչու են գնում։ Պէտք է աշխատել մի գործի դնել եկողներին։ Վերջ տուէք անտեղի ճանապարհորդութիւններին։

Նամակի թղթեր կ՚ուղարկենք։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

554

Պատճէններու մատեան No 89, *էջ* 34
(*Փաստ.* 46-40)

1905 *յունիսի* 21

Սարհատին, Աթէնք

Յարգելի ընկեր,

Լեւոնին ասէք, որ փոշի էլ աւելացնի ուղարկուելիք ապրանքին։

Հաստատուած ճանապարհով կարելի՞ է արդեօք եւ հրացան փոխադրել։

Փոխադրութեան խնդիրը այնքան կարեւոր է, որ կ՚առաջարկենք ձեզ մի առ ժամանակ այդտեղ մնալ եւ նոյնպէս այդ գործով զբաղուել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Վարդանը(1) *բացակայ է։ Գուցէ մօտ ժամանակում Աթէնք անցնի։*

1.- Խօսքը կը վերաբերի Խանասորի Վարդանին (Մեհրաբեան Սարգիս), որ Սիմոն Զաւարեանի հետ անդամ էր Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու մարմնին։

555

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 68

22 *յունիսի*

ՈՍԿԵՀԱՆՔ

Բիւրոյի անդամը(1) *չպիտի գայ այլեւս Կովկասում ծագած բարդութիւնների պատճառով։*

Տեղեկութիւն Կովկասից(2)։

1.- Բիւրոյի անդամը հաւանաբար Ս. Զաւարեանն է, որ Կովկաս պիտի մեկնէր։ Ոսկեհանքը Իզմիրն է։

2.- Այսինքն՝ գաղտնի թանաքով արտագրողը պէտք է աւելցնէ տեղեկութիւններ կովկասեան դէպքերու մասին։

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 498

556

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 233-236

յունիսի 23-*ին*
Համոյի հասցէով (չոկոլատով)

Մ. Ք.

Մհերի նամակները ստանում ենք։ Զարմանալի մարդիկ էք։ Կազմակերպական ներքին գաղտնիքները Մհերը գրում է պարզ թանաքով, իսկ Նիթրան(1) *տպագրութեան համար սահմանուած տեղեկութիւնները — գաղտնի թանաքով։ Խնդրում ենք, ուշադրութիւն դարձրէք եւ գաղտնիքների մասը գրէք գաղտնի թանաքով։*

Փոխադրութեան գործը եթէ կանոնաւորել է կամ կանոնաւորելու յոյս կայ, հեռագրէք, որպէսզի շուտով մի մարդ ունենանք արտասահմանում յատկապէս գնման եւ փոխադրութեան գործի համար։ Քանի որ Calecjian *անունը արդէն կապուած է Դրօշակի հետ շնորհիւ վերջին հեռագիրների, գործի վերաբերեալ հեռագիրները, մանաւանդ եթէ գաղտնի բանալիով է, ուղարկէք ուրիշ անուան, օր[ինակ]* Edouard, Roseraie, 29։

Վարդանը ճանապարհ կ'ընկնի երկու երեք օրից յետոյ։ Կրպոն արդէն դուրս է եկել դէպի Նաւահանգ[իստ](2)։ *Ուրիշ մարդ ուզո՞ւմ էք։ Կան ուսանողներ, որ փափաքում են գալ, եթէ պէտք ունէք, հեռագրէք.* Bon.

Թերակղզում ապրանքը ապսպրուած է արդէն, կարգադրութիւն արէք գալստի վերաբերմամբ։

Այդ ապրանքի մեծ մասը, նոյն իսկ գուցէ եւ ամբողջը կարելի է ճանապարհ ձգել Մարսէյլից եւ անհամեմատ աւելի արժան։ Ի նկատի ունեցէք սա ապագայի համար։

Ինչո՞վ բացատրել զօրքի աջակցութիւնը Խանուխլարում։

Միտինգների շարք կարելի էր բանալ Եւրոպայում, եթէ ֆրանս-գերմանական գժտութիւնը չծագէր. Ժօրէսը(3) *խօսք էր տուել Յուլիսի 8-ի համար, բայց յետոյ հրաժարուեց։ Շուտով Խաչատուրը եւ Աւետիսը*(4) *կը գնան Պարիզ արտասահմ[անեան] պրոպագանդի խնդիրը որոշելու։ Առայժմ գոհանում ենք հեռագիրներ տալով եւրոպական կարեւոր թերթերին։*

Սակարտվելոյի խմբագրութիւնից ստացուած մի նամակից երեւում է, որ վրացիների մէջ էլ գրգռում կայ հայերի դէմ։ Դա վերագրում են Դաշկովի բերած պրովակատորներին։ Այսպէս կամ այնպէս մի օր գուցէ ծագի հայ-վրացական ընդհարումներ։ Զգիտենք, թէ այս լուրը որքան ճիշտ է, բայց յամենայնդէպս անհրաժեշտ է մի քանի ձեռնարկներով ամէն պատահարի առաջն առնել։ Կարծում ենք, որ լաւ կը լինէր մի խառը մարմին կազմել քաղաքի պաշտպանութեան համար։

Սակարտվելոյի ասելով՝ վրացիների դժգոհութեան պատճառը այն է, որ լուր է տարածուած, իբր թէ Կովկասում միայն հայերն են, որ դաշնակցական կազմակերպութեան դէմ են!... Լալին[?] *եւ ընկ. չէ՞նք կարող նոյնիսկ լեգալ գրականութեան միջոցով պարզել մեր ձգտումները, կամ շրջաբերականով, եթէ լեգալ թերթերում թոյլ չտան։ Հետաքրքիր է, թէ ինչ են անում դրա հանդէպ մեր դաշնակիցները, ինչ միջոցներ են ձեռք առել։ Այս իմաստով մի նամակ էլ մենք ենք գրելու Սակարտվէլոյին։*

Լսում ենք, որ Թիֆլիզում մեծ վախ կայ։ Եթէ այդպիսի մի պատրաստութիւն տեսնելու լինի, առանց դրսից եկողների չենք կարող յաջողել։ Անհրաժեշտ կը լինի

ուրեմն Հալլաբարի եւ Շէյթան-Բազարի քարվանսարաներում լրտեսներ ունենալ, թիւրքերի շարժումներին հետեւելու համար։ Դա մի դժւար գործ չէ։ Կարելի է յատուկ խումբեր պահել Բորչալուից եկող թիւրքերի ճանապարհը կտրելու համար։ Հարկաւոր կը լինի զինել քարվանսարաներում բանող հայ մշակներին, մասնաւորաբար այնտեղ, ուր մեծամասնութիւնը թիւրք վաճառականներ են։ Կարելի է առաջւանից նշանակել կէտեր թիւրքերի մասում յարձակում գործելու համար եւ տներ՝ օդը ցնդացնելու։ Այդ նպատակի համար շատ յարմար է հետեւեալ բաղադրութիւնը, որ շատ հեշտ է պատրաստել եւ մեծ քանակութեամբ։ Պէտք է առնել dinitro benzine 75% (*գործ է ածւում ճոթի գործարաններում ներկելու համար*) *եւ* .....25 %(5) (*գործ է ածւում իբր հող պարարտացնող*)։ *Երկուսն էլ առանձին առանձին պէտք է լաւ փոշի դարձնել, մաղել ամենանուրբ մաղով, յետոյ լաւ չորցընելուց յետոյ խառնել։ Պատրաստութեան ժամանակ ոչ մի վտանգ չկայ։ Պատրաստւած խառնուրդը նոյնպէս անվտանգ է, չի պայթում ոչ կրակից, ոչ հարւածից։ Պայթեցնելու համար պէտք է առնել* ..... (5) *կամ մեր ունեցած կապսիւլներից (ըստ կարելոյն մեծերը), ամէն մէկ* 100 gr.-*ին* 2 gr պրիմուչայա(5)։

Երկու աղերն էլ պէտք է լինին մաքուր:

1.- Մտերը՝ Համօ Օհանջանեանն է. Նիթրան՝ Յար. Շահրիկեանը: Մ. Ք.– Մեծ Քաղաքը Թիֆլիսն է, աւելի ճիշդ Արեւելեան բիւրօ:

2.- Վարդանը ծանօթ է, Խանասորի Վարդանն է: Կրպոն՝ Մարսէյլ-Պաթում (Նաւահանգիստ) նաւային գծի վրայ ռազմամթերքի փոխադրութեան գործով զբաղող ընկեր է:

3.- Jean Jaurès, ֆրանսացի յայտնի ընկերվարական ղեկավար եւ Դաշնակցութեան բարեկամ անձնաւորութիւն:

4.- Յաջորդաբար Է. Ակնունի եւ Աւ. Ահարոնեան:

5.- Ռուսերէն, առհասարակ անընթեռնելի բառեր:

557

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 68-69

24-ին յունիսի

ՎԻՇԱՊ(1)

Կովկասից վերջին լուրը։ Մեծ թւով քիւրդեր անցել են պարսկական սահմանը եւ միացած տեղական թիւրքերին, սկսել են ասպատակութիւններ Երեւանեան նահանգում։ Խանուխլար եւ սահմանագլխի ընդհարումները։ Ժամանակաւոր խաղաղութիւն։

Ռուբինան(2) *հիմա, յուսով ենք, այդտեղ հասած լինի։ Լաւ կ՚անի, եթէ «հիւանդ» ձեւացնի, տնից շատ դուրս չգայ։* Պետական տեղեկագրեր[*ում*](3) *պարզապէս գրւած է, որ Սոֆիայի դէպքից յետոյ*(4) *թիւրքերը համոզւած են, որ հայերը մի «սիւրպրիզ» են ուզում անել Պոլսում։ Եթէ այդպէս է, զարմանում ենք, որ Գիբոհին*[?] *չեն հետեւում։ Այդքան էլ ապշութիւն!... Յամենայն դէպս, պէտք է խիստ զգուշութիւն, գրքերի հետ շատ չչփւել։*

Ի միջի այլոց չի՞ կարող արդեօք նա յանձնարարել իր հայրենիքում իր բարեկամներին, որոնք գուցէ կարողանան մեզ օգտակար լինել զէնքի գնման եւ փոխադրութեան գործի մէջ։

Խնդրենք յայտնել իրեն, որ Վռամի(5) *մասին իր գրած յիշողութիւնները շնորհակալութեամբ ստացանք։ Առայժմ կը պահենք։*

Ներփակ յետ ենք ուղարկում ձեր մի նամակը, որ այսօր ստացանք Վիեննայից։

Եթէ Ռուբինան պատրաստելու լինի իր սովորած նիւթը, պէտք է գործածելու համար չինել …… թէեւ, ինչպէս այսօր մեզ ասաց մի մասնագէտ, մեր ունեցածներն էլ շատ լաւ են։

Ահա Աշոտի(6) *ուզած հաշիւը։*

(Հաշիւը չգրուեցաւ)։

1.- Պոլիս (Վիշապ) ուղղուած նամակ, Ցուցական մարմնին:
2.- Ռուբինան՝ բուն անունով Արէշեան Սոֆիա (1881-1971) անդամ էր Ցուցական մարմնին, որոն վստահուած էր Ապտիլ Համիտի ահաբեկման գործը:
3.- Ռուսերէն:
4.- Սոֆիայի դէպք – ակնարկութիւն փորձարկման ժամանակ ռումբի պայթումի հետեւանքով Քրիստափոր Միքայէլեանի եւ Վռամշապուհ Քենտիրեանի զոհուելուն:
5.- Վռամշապուհ Քենտիրեան, Քրիստափորի հետ զոհուած ռումբի փորձարկման ընթացքին:
6.- Աշոտ Բագրատունի, բուն անունով Եղիկեան Կարապետ, Ցուցական մարմնի անդամներէն էր:

558

Պատճէններու մատեան No 89, *էջ* 35

1905 *յուն.* 24

Ընկ. Լեռնեանին(1), *Բերլին*

Յարգելի ընկեր,

Գերմ[*անական*] *սոցիալ-դեմոկրատների նպաստի մի մասը* 550 fr. *ստացանք։ Խնդրենք յայտնել նրանց հասցէն, որպէս*[*զի*] *յայտնենք ստանալու մասին եւ շնորհակալութիւն ասենք։ Քանի որ խառնուել ենք այդ խնդրի մէջ, պէտք է հասկացնել հիմնաւորապէս մեր եւ միւսների միջի տարբերութիւնը, պէտք է պարզել, որ նըպաստի պէտք եւ իրաւունք չունին նրանք, որոնք միայն հրատարակութիւններով են զբաղուած։*

Սեւերդովը եկաւ, մի երկու րոպէով տեսնուեցանք, խոստացաւ նորից մտնել։ Իսկ ……-ը(2) *դեռ չկայ։*

Վերջին տեղեկութիւնը Կովկասից այն է, որ մերոնք, համբերութիւնը հատած, որոշել են դուրս գալ պաշտպանողական դիրքից։ Կազմուել են խմբեր, որոնք յարձակւում եւ պատժում են այն գիւղերը, որոնք մասնակցել են կոտորածի եւ թալանի։ Մանրամասնութիւնները չունինք դեռ։

Ընկ. բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Նադիային խնդրենք ասել, որ իր դուրս գալուց մի երկու օր առաջ իմաց տայ։

Ն[*ՈՅՆ*]

1.- Լեռնեան – ծածկանուն Նազարեանց Լիպարիտի:
2.- Ռուսերէն անընթեռնելի անուն:

559

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 70-71

26 *յունիսի*

ՈՍԿԵՀԱՆՔ(1)

Հաստատում ենք մեր 22 *յուլ.*(1) *նամակը։*

Ներփակ ուղարկում ենք ի գիտութիւն Պալք[*անի*] *Կենտ. Կոմիտէի որոշումը նախկին Կենտ. Կոմիտէի անդամ Վարդոյի վերաբերմամբ։*

Առաջին երեսի վրայ կը գտնէք արտագրած՝ Ընդհանուր Ժողովի որոշումը Ոսկեհանքի վերաբերեալ, որ ուղել էիք վերջին նամակով(2)*։ Ինչպէս տեսնում էք այդ կտորից Ոսկեհանքը չի կարող ոչ մի պայմանով մենակ շարժուել։ Անկախ երկրի շարժումից կարող է ցոյց անել միմիայն Վիշապը։ Ուրեմն եւ Ընդհ. Ժողովի որոշումը ձեզ ոչ մի իրաւունք չի տալիս բռնելու այն ընթացքը, որին դուք յամառաբար դառնում էք ամէն անդամ։ Ի զուր էք պնդում ձեր տեղական պայմանների ստիպողականութեան վրայ։ Ամէն մի յեղափոխական մարմնի համար ստիպողական կարող է լինել միմիայն գործի ընդհանուր շահերը, եւ ոչ թէ այլ եւ այլ տեղական նկատումներ։ Մարմինը հէնց նրա համար է մարմին, որ տեղական պայմանները յարմարացնի եւ ծառայեցնի գործի ընդհանուր պահանջին եւ ոչ թէ ենթարկւի նրանց։*

Ինչ տեսակէտից էլ նայելու լինենք խնդրին՝ ընկերական, թէ իրաւաբանական, դուք անպայման պէտք է ենթարկւէք «Խորհրդի» որոշումներին, ձեր պայմանները նրան յարմարեցնելով, թէ չէ տատանւող տրամադրութիւնը աւելի եւս կը խառնի գործին կանոնաւոր ընթացքը։ Մի շփոթւէք, մի կորցրէք ձեր պաղարիւնութիւնը։ Միթէ՞ կարծում էք, որ եղել են կամ կարող են լինել դաւադրական գործողութիւններ, որոնց պատրաստական շրջանը ապահոված լինի պատահարներից։ Կամ քի՞չ են վտանգւել գործեր, բոլորովին պարաստ սպասելով յարմար րոպէի։

Ինչպէս նախընթաց նամակով գրել ենք, վաղուց ենք հրաժարւել ձեզ մօտ մարդ ուղարկելու մտադրութիւնից(3)*։*

Սարհատին առաջարկել ենք մնալ Ալթէնք տեղափոխութեան խնդրի համար։

Ռուս թերթեր կ՚ուղարկենք։

1.- Իզմիր՝ Յուցականի տեղական մարմնին ուղղուած նամակ. թուականը պէտք է ըլլայ 26 յունիսի (բնագրին մէջ՝ յուլիս), որովհետեւ Յուլիս 21-ին տեղի ունեցած էր արդէն Սուլթանին մահափորձը. հետեւաբար վէճի նիւթ չէր կրնար ըլլալ Իզմիրի դաւադրական ձեռնարկները անկէ առաջ կամ վերջը կատարելու հարցը։

2.- Տես 29 Մայիսի նամակի թիւ 2 ծանօթագրութիւնը։

3.- Տես 22 Յունիսի նամակը։

560

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 72-74
28 *յունիսի*

ՇԱՄ(1)
Վիշապի վրայով

Այսօր միաժամանակ ստացանք ձեր երկու նամակները 1) *Ապր. 11-ինը Վրէժի վրայով եւ Մայիս* 20-*ին, Վ[իշապ]ի վրայով։ Ինչպէս տեսնում էք, Վրէժի վրայով ձեր նամակները չափազանց շատ են ուշանում։*

Աչքի առջեւ ունենալով Վ[իշապ]ի ճանապարհի դիւրութիւնը, աւելի լաւ է յարաբերութիւնը պահպանել այդ գծով եւ մենք այնպէս կը յարմարացնենք, որ դրամն էլ մեր միջոցով ստանաք։ Ցոյց տուէք միայն Վ[իշա]պ եւ մի այլ տեղ արտասահմանում մի միջոց, որով կարելի լինի մեծ գումար փոխադրել։ Առայժմ նախկին ճանապարհով կը ստանաք մաս մաս։ Բացի 2000-*ից ձեզ համար ուղարկւած է դարձեալ* 4000։

Գարեգնի եւ Մալխասի(2) *մասին մեր յայտնած կարծիքը արդէն հիմա պարզւած կը լինի ձեզ։*

Ձեր ցոյց տուած հասցէով կ՚ուղարկենք Դրօշակի համարներից մէկ մէկ օրինակ։

Պատասխանենք հիմա ձեր հարցերին

ա) Ձեր շրջանին յատկացրւած 80 *հազ. պիտի կարգադրի տեղական մարմինը երբ նա կազմւի ընտրւած ընկերների տեղ հասնելով։ Սահմանագլխի կոմիտէները միմիայն Վասպուրականի մարմնի գիտութեամբ եւ համաձայնութեամբ պիտի ծախսեր անեն։*

բ) Դուրանի եւ Սարհատի(3) *վերաբերեալ հիմնական կարգադրութիւն արդէն եղել է, երեւի հասկանում էք, թէ ինչ ենք ուզում ասել։*

գ) Բանտարկեալներին պէտք է օգնել մեր եւ տեղական միջոցներով։ «Կարմիր Խաչը» հիմա անկարող կը լինի նպաստներ ուղարկել, որովհետեւ հէնց Կովկասում ահագին կարիք կայ։

դ) Վարդանեանը (4) *արդէն Կովկաս է անցել։ Կը գրենք, որ ձեր ապսպրած գործիքները այնտեղից տանի։ Իսկ ինչ վերաբերում է պայթուցիկ փոշիներին, դրա փոխադրութիւնը կը յետաձգուի ժամանակաւորապէս, որովհետեւ հիմա դժւարութիւններ կան գնելու գործին մէջ։ Նա կը սպասի Վրէժում ձեր նամակին։*

Սպասում ենք ձեր հաշիւներին։ Տեղեկագիր դեռ չենք ստացել։

Թռուցիկը (5) *զինւորական դպրոցումն է։*

Շահէնի(6) *տղաների գալը չգալը ձեզանից է կախւած։ Կանչեցէք, երբ յարմար կը դատէք։*

Զարուհու(7) *Դամասկոս քշւելու խնդիրը մեզ համար էլ չպարզւեց։ Ցոյս ունենք շուտով իմանալ։*

Մի քանի ընդհանուր տեղեկութիւններ։

Կովկասը, ինչպէս արդէն ձեզ յայտնի կը լինի, արեան մէջ է։ Թիւրքերի շարժումը ընդհանրանում է։ Կապը համիսլամական շարժման հետ պարզւած է։ Զարմանալի ոչինչ չի լինել, եթէ մի օր պարզւի, որ Տաճկաստանը պատրաստութիւններ է եղել տեսած Կովկասում՝ ոտքի հանելու Ռուսաստանի դէմ մահմեդականներին, պատերազմ յայտնած դէպքում։ Հայերս երկու կրակի մէջ ենք մնացել։ Մօտիկ ապագան գուցէ պարզի մեր դրութիւնը։ Եւրոպայում նոյնպէս խաղաղ չէ։ Ռուսաստանի պարտութիւնը խախտել է տիրած հաւասարակշռութիւնը։ Գերմանիան

համարձակ քայլեր է անում։ Ֆրանսիան երկիւղ է կրում եւ իրեն չափազանց զգոյշ է պահում։ Խնդիրը առայժմ դառնում է միայն Մարոքոյի շուրջը։ Այս պայմաններում մեր խնդրով զբաղեցնելը բաւական դժուար բան է։

Ձեզ յանձնարարում ենք չափազանց զգուշութիւն եւ աչալրջութիւն։ Խնդրենք շուտ շուտ գրել կառավարութեան դիրքի եւ ընթացքի մասին։

1.- Պոլսոյ (Վիշապ) վրայով Վան (Շամ) ուղղուած նամակ:
2.- Գարեգինը՝ Թադէոսեան Ստեփանն է, Ատրպատականէն դէպի Վասպուրական ֆետայիներու եւ զէնքի փոխադրութեան պատասխանատուն: Մալխասը՝ Յովսէփեան Արտաշէս:
3.- Սարհատը՝ Գէորգ Չաուշն է. Դուրանը՝ Տարօն:
4.- Վանայ Սարգիսն է՝ Բարսեղեան, բուն անունով Օտապաշեան Պողոս: Իր օգտագործած անցագրին մէջ անունը Գրիգոր Վարդանեան էր:
5.- Թռուցիկ Գէորգ (Տէր Աբրահամեան), Խանասորի արշաւանքին մասնակիցներէն, որ անցած էր Պուլկարիա, Սպայից վարժարան:
6.- Շահէնի տղաները՝ ակնարկութիւն Վասպուրական մնացած Անդրանիկի զինուորներուն: Վասպուրական մնացած միջոցին Անդրանիկի համար օգտագործուած էր Շահէն ծածկանունը:
7.- Վասպուրականի յեղափոխական յայտնի գործիչներէն Վազգէնի (Տէրոյեան Տիգրան) քոյրը, յեղափոխական հայուհի, որ եղած էր անդամ Վասպուրականի Կեդր. կոմիտէին եւ որ 1896-ին ձերբակալուելով աքսորուած էր Երուսաղէմ:

561

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 75-76

28 *յունիսի*

ՎԻՇԱՊ(1)

Ներփակ նամակը Շամ(2) *ուղարկէք. Ռուբինան*(3) *յոյս ունենք, արդէն տեղ հասած լինի։ Վերջին նամակը Ռումանիայից էր։ Ինչպէս արդէն գրել էինք, Ոսկեհանք*(4) *գնացող այլեւս չկայ։ Ասենք, իրենք էլ չեն ուզում, որ մարդ գնայ։ Յոյս ունեն իրենք վերջացնեն։ «Շտապողական լուրեր», որ ուզել են ձեզ հաղորդել իրօք վերաբերում են իրենց գործունէութեան մոմենտին։ Համաձայնելով առաջ Խորհրդի վճիռների հետ, յանկարծ մեզ դարձեալ գրում են, թէ որոշել են փոխել տրուած որոշումը եւ գործը անել անմիջապէս Վ[իշապ]ից յետոյ։ Մենք մեր նամակով դարձեալ պնդեցինք Խորհրդի որոշումի վրայ։ Ուզել էին եւ Ընդհ. Ժողովի որոշումը Ցուցական[ի] գործունէութեան մասին։ Այդ էլ ուղարկեցինք։ Դրանից էլ կը տեսնեն, որ Ընդհ. Ժողովն էլ իրաւունք չի տուել նրանց իրենց մտադրութիւնը գլուխ բերելու։*

Սիմոնի(5) *դուրս գալը եւ մտնելը դժուար գործ չէ։ Բայց աւելորդ է սրա վրայ կանգ առնելը, քանի ինչպէս երեւում է հեռագրից, հեռանալու մտադրութիւն չունի։*

Ուզում էինք 4,000 fr. *փոխադրել Շամի համար*(2), *բայց չգիտենք, կարելի է արդեօք հին հասցէով ուղարկել։ Խնդրենք յայտնել շուտով։ Իսկ եթէ կարող էք ձեր ունեցած միջոցներից մի մասը հանել Շամին, աւելի լաւ, պակասը անմիջապէս կը լրացնենք հասցէն ստանալուն պէս։*

1.- Պոլիս (Վիշապ) ուղարկուած նամակ Ցուցական մարմնին:
2.- Վան:
3.- Ռուբինա Արէշեան, Ցուցական մարմնի անդամներէն:
4.- Իզմիր:
5.- Զաւարեան:

562

Պատճէններու մատեան No 89, *էջ* 37

1905 *յուն.* 29

Լօրիսին, Պարիզ

Սիրելի ընկեր,

Ներփակ ուղարկում ենք 2,000 fr.-*ի չէկ անգ*[*լերէն*] Pro Armenia-*ի հաշւին։*
Զհասկացանք, թէ ինչ faits précis(1) *էիր ուզում հեռագրով։ Զի՞ կարելի արդեօք այդ տեսակ բաները նամակով գրես։*

Ընկեր[*ական*] *բարեւներով՝*
ԱՐԵՒՄՏ[***ԵԱՆ***] ***ԲԻՒՐՕ***

1.- Ֆրանսերէն՝ ճշգրիտ իրողութիւններ։

563

Պատճէններու մատեան No 89, *էջ* 40

1905 *յուն.* 30

Յոնանին [*Դաւթեան*],

Սիրելիս,

Դու դարձեալ ծախսերի չատութեան վրայ ես կանգ առնում։ Խնդրում ենք, այդպիսի երկրորդական նկատումներ մի կողմը թողնել, երբ զէնքի այնքան մեծ կարիք կայ։ Աչքի առջեւ ունեցիր, որ Ռուսաստանում ահագին ծախսեր են անւում եւ համեմատաբար շատ քիչ զէնք ձեռք բերւում։
Առագաստանաւի մասին կը գրենք եւ կը խնդրենք պատասխանը հեռագրով։ Թէեւ արդէն մի անգամ մեզ գրել էին, թէ տեղափոխութեան այդ ձեւը անյարմար է, բայց գուցէ հանգամանքները փոխւած լինին։
Յամենայն դէպս դու պէտք է սպասես այդ կողմերում մինչեւ ստանանք տեղեկութիւն, թէ ինչ ձեւերով կարող են ապրանքը ընդունել։

Ընկեր[*ական*] *բարեւներով՝*
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

«Բազու»-*ն*(1) *կ՚ուղարկենք այսօրւանից։*
Ն[***ՈՅՆ***]

1.- Ռուսատառ գրուած է։

564

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 76

30 *յունիսի*

ՎԻՇԱՊ(1)

Հաստատում ենք յուն. 28-ի մեր նամակը։ Ստացանք ոսկեհանքցոց նամակը, որը մեզ վրայ լաւ տպաւորութիւն չթողեց։ Մեզ չէին յայտնել, թէ ընդունում են «Խորհրդի» առաջարկը «տեսականապէս», ինչպէս ձեզ են գրել, շատ դրական կերպով հաղորդուած էր, թէ ընդունում են «Խորհրդի» որոշումը։

Տեղեկութիւններ Կովկասից։

1.- Պոլիս (Վիշապ) ուղարկուած նամակ Ցուցական մարմնին։ Ոսկեհանքցիք Իզմիրի ընկերներն են։

565

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 237-38

յուն[իս] 30

Մ. Ք.

Այս րոպէիս ստացանք Մհերի(1) 6/19 *նամակը։ Շնորհակալ ենք տրուած մանրամասն տեղեկութիւնների համար։*

Զէնք գտնելու համար մի ճար է մնացել – չրջապ[ատ]ել զինուած թիւրքերին եւ նրանցից առնել։

Գրում էք դարձեալ թէ Նաւահանգստում(2) *միջոց են գտել. ասում էք, որ գոնէ քիչ քիչ ուղարկենք։ Բայց ախր ինչպէ՞ս, ի՞նչ ձեւով, մարդով, թէ առանց մարդու։ Քանի անգամ խնդրել ենք ձեզ, հարցրել ենք Նաւահ[անգիստ]։ Բայց պատասխան չկայ։ Մեր սիրտը ճաքում է անհամբերութիւնից, պատրաստ ենք ամէն ինչ թողնել զէնքի համար, միայն ցոյց տուէք ուղարկելու ձեւը։ Ստիպւած Կրպոյին ուղարկեցինք Նաւահ[անգիստ], տալով նրան մի քիչ բան։ Եթէ՞ նրա գլխին մի փորձանք գայ։*

Ռաչիդը ո՞վ է, նա՞, որ բռնուել էր ռումբերով միասին։

Հիմա մեր կարծիքով աւելի ուշադրութիւն պէտք է դարձնել այն վայրերի վրայ, ուր մինչեւ հիմա բան չի պատահել, օր[ինակ] Գանձակ, Շուշի, Ախալցխա…։

Times-*ի*(3) *համարները բերել կը տանք։*

Սրանից յետոյ եթէ պահանջներ դնելու առիթ ներկայանայ, կամ դիմումներ անելու, պէտք է աշխատել, որ ազգերի ներկայացուցիչները առանձին առանձին չանեն, այլ միասին, ինչ դասակարգի էլ դրանք պատկանեն։ Լաւ կը լինէր մի առիթ փնտռել մեր եւ վրացի լեգալ գործիչներին միատեղ բերելու եւ ընդհանուր պահանջներ մշակելու համար։

Փոխադրեցէք մեզ շուտով փող։ Զէնքի խնդրի համար դրա պատճառով դէմ չընկնենք։

Թերթ փոխադրել ենք նախ լեհ պրոլետարիայի միջոցով 1000 *հատ — հետեւանքի մասին ոչինչ չգիտենք եւ վերջերս* P. P. S.*-ի միջոցով դարձեալ* 1000 *հատ։*

Ամսիս ընթացքում գրւել են նամակներ յունիս 4*-ին*, 16*-ին (բանկի կամ Մհերի վերջին հասցէով) եւ* 23*-ին ուղղակի Մհերին։*

1.- Համօ Օհանջանեանի: Մեծ Քաղաքի (Մ. Ք.), ինչպէս յայտնի է, Թիֆլիսն է, այս պարագային Արեւելեան բիւրոն:

2.- Պաքումում:

3.- Լոնտոն հրատարակուող անգլիական հանրածանօթ լրագիր:

566

Պատճէններու մատեան No 89, *էջ* 42-43

1905 *յուլ.* 3

Պարոն Վարդոյին(1), *Վառնա*

Ստացանք ձեր յունիս 9/22 *նամակը, որով խոստանում էիք ձեզ մօտ պահած գումարը ներկայացնել ընդհանուր ժողովին անձամբ, ձեր պատճառաբանութիւններով միասին, եւ որոնք, ձեր ասելով պիտի գոհացնեն թէ մեզ եւ թէ «Խորհրդի» անդամներին եւ խնդրում էք այդ մասին յայտարարենք Դրօշակի մէջ կամ արտօնենք ձեզ յայտարարել Շարժումի*(2) *միջոցով։*

Ոչ մի պայմանով մենք չենք կարող համաձայնութիւն տալ ձեր առաջարկին. չենք կարող, հետեւաբար, ոչ հրատարակել Դրօշակի մէջ ձեր ուզած յայտարարութիւնը եւ ոչ էլ արտօնել ձեզ նոյն բանն անելու։ Դրամը դուք անպայման պարտաւոր էք հէնց այժմ յանձնել կամ Պալք[անեան] կենտրոնական կոմիտէին կամ Արեւմտեան բիւրոյին։ Այլ կերպ ոչ մի հանգամանք չի կարող արդարացնել ձեր վարմունքը, որ եզակի է Դաշնակցութեան մէջ։

Իսկ գալով ձեր փափագին՝ անձամբ ներկայանալ ընդհանուր ժողովին եւ պարզել նրան ձեր պատճառաբանութիւնը, դրա դէմ մենք մեր կողմից իրաւունք չենք համարում որեւէ առարկութիւն անել։

Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Վարդօ – ծածկանուն Վարդ-Պատրիկեան Յակոբի, որ արդէն Պալքանեան Կեդր. կոմիտէն հեռացուցած էր իր շարքերէն:

2.- «Շարժում» – Վարդ-Պատրիկեան Յակոբի խմբագրութեամբ Վառնա լոյս տեսնող լրագիր:

567

Պատճէններու մատեան No 89, *էջ* 44

1905 *յուլիս* 3

Վ. Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Մեր լսածին համաձայն նաւային երթեւեկութիւնը Բաթումի հետ ընդհատուած է, ճի՞շտ է արդեօք։ Եթէ ճիշտ է, խնդրենք մեզ յայտնել, թէ երբ պիտի վերսկսի։

Նախորդ մեր նամակով առաջարկել էինք ձեզ մի երկու ամսով արձակուրդ վերցնել յատկապէս մեր գործերով զբաղուելու համար։ Ինչո՞ւ չէք պատասխանում։

Ընկեր. բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

568

Պատճէններու մատեան No 89, *էջ* 45

1905 *յուլ.* 3

Յոնանին, Անվէրս

Սիրելիս,

Ռոստոմի տուած հասցէն թերի ես համարում, բայց դժուար թէ աւելի լրիւը կարելի լինի գտնել։ Նաւահանգստից պատասխան ստացուեց, ընդունելու հաստատ միջոց ունին, եթէ նախ ծառայողներից մէկը յանձն առնի ապրանքը նաւը վերցնել։ Առայժմ այս միջոցը, եւ այդ ուղղութեամբ էլ աշխատիր։

Խէյրեանի հետ ծանօթանալ ի հարկէ կարելի է, միայն նա այդ տեսակ գործերից իրեն հեռու կը պահէ։ Ջարժէ բացուել։

Գալֆան ասում է, որ Երեւանդը իսկապէս չափազանց զբաղուած է։ Պէտք է համբերել։

Ուղարկում ենք ներփակ նամակներից մի երկուսը։ Ինչ ուզում ես, կ՚ուղարկենք, միայն թէ այդտեղից մի հեռացիր առանց մի բան կարգադրելու։

Համբոյրներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Սիմոնը մերժում է մեր առաջարկը, հեռանալ չի ուզում։
Ն[ՈՅՆ]

569

Պատճէններու մատեան No 89, *էջ* 46

1905 *յուլ.* 3

Պալք[*անեան*] *Կենտր. կոմիտէին, Ֆիլիպէ*

Ստացանք Երևանդի նամակը Սոֆիայից գրած։ Ինչպէս հեռագրով էլ ասել ենք, ցանկի մէջ ինչ նշանակւած է, միայն այն պէտքէ պատւիրել, ուրիշ ոչինչ։ Եթէ պակաս բան կայ, յետոյ կարելի է լրացնել։ Դրա մասին սպասում ենք լրացուցիչ տեղեկութիւնների։

Ներփակ կը գտնէք մեր եւ Վարդի միջեւ փոխանակւած նամակների պատճէնը, որ ուղարկում ենք ձեզ ի գիտութիւն։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

570

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 239-40

4 *յուլիսի* [1905]

ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏ(1)

Կրպոյի հեռագիրը ստացանք. շատ ուրախ ենք ապահով ելքին։

Ստացանք նաեւ ձեր նամակը Ս-ի ձեռքով ուղարկած։ Տրւած յանձնարարականներով կ'օգտւենք ըստ կարելոյն շուտով։ Յատուկ մարդ կ'ունենանք տեղումը։ Ափսոս միայն, որ մեր ուղած իրերը այնտեղ դժւարութեամբ է գտնւում։ Տեղափոխութեան տեսակէտից ամենայարմար վայրը Բելգիան է։ Մեր մի ընկերը այնտեղ աշխատում է, դուք էլ, եթէ հնարաւորութիւն ունէք, այդտեղ աշխատէք կապ հաստատել Բելգիա գացող եկող նաւերի մարդկանց հետ։

Կանգ մի առնէք, փորձեցէք եւ ուրիշ միջոցներ։ Որքան շատ, այնքան լաւ։

Ամերիկայի մեր Կ. Կոմիտէն յանձնարարում է ձեզ հետեւեալ ընկերներին, որոնց խնդրում է բարոյական աջակցութիւն ցոյց տաք՝ Մարտիրոս Տէր Բարսեղեան, Սամուէլ Պողոսիկեան եւ Սեդրակ Սարգիսեան։

Մ. Ֆ. ապսպրած ապրանքը ուղարկուած է Գալաց։ Պէտք է փնտռել հետեւեալ հասցէով՝ Petru Garabed, Str. Port, 129 Galatz։

Սակարտվէլիստների հետ ձեր գործը մի թողնէք, հետամուտ եղէք շարունակ։

1.- Պաքում (Նաւահանգիստ) ուղարկուած նամակ:

571

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 241-43

5 *յուլիսի*

Մ. Ֆ.

Օր. Սերիբր. ձեռքով ստացուած(1)

Վարդի խնդիր։ *Պիոնեանը*(2), *ստանալով ձեր հեռագիրը* reçutes-vous 400 fr. (*ինչո՞ւ* 400 fr.) de Vard(3), *հեռագրում է Վարդին, որից պատասխան է ստանում, թէ ոչ մի* 400 fr. *ոչ մի Արտաւազդից*(4) *չի ստացել։ Դրա վրայ մենք հեռագրեցինք Վարդին, որ Թ.-ից ստացած* 2.000 *ր. չէքը ուղարկի Պիոնեանին։ Դրա պատասխանը ստացանք։* 2.000 *ր. իր սեփականը*(!) *կարծելով, նրանով իր պարտքերն է վճարել։ Ուրեմն դրա գլխին էլ քար ընկաւ! Հիմա ի՞նչ պիտի անէք. հեռագրեցինք, գրեցինք, կրկնեցինք նամակը. ինչո՞ւ ժամանակին չտապով կարգադրութիւն չարիք։ Հիմա դուք գիտէք, ինչ ուզում էք, արէք, այդ գումարը նրանից առէք, իսկ եթէ յայտնել էք իրեն ժամանակին, եւ նա դիտմամբ զանց է արել, խնդրենք մանրամասը գրել, թէ երբ եւ ինչ էք հաղորդել նրան։ Ի դէպ, նախկին գումարը նա չի վստահանում յանձնել դաշնակցական մի որեւէ մարմնի։ Նա ուզում է անձամբ ներկայացնել Ընդհ. Ժողովին իր պատճառաբանութիւններով, ինչպէս մեզ է գրում, իսկ ինչպէս ուրիշ տեղ է խօսում, ուզում է ընդհ. ժողով հրաւիրել, մաքրել Դաշնակցութիւնը եւ ապա յանձնել։*

Ապրանքի մի մասը գնուած է, ձեր նշանակած տեղն է ուղարկուած։ Միւս մասը քիչ յետոյ։ Նաւահ[*անդիստ*] *յայտնել ենք, թէ ում պէտք է դիմել* (Petru Garabed, Str. Port, 129)։ *Կարգադրութիւն արէք ստանալու մասին։ Ի միջի այլոց ծախողը ասում է, որ պիտակների հետ պէտք է եւ* սուխիէ էլէմենտի(5) *լինեն. մի բան, որ դուք չէք նշանակել։ Աւելացնե՞նք, թէ ոչ։*

Փոշու մասին գրել ենք, որ Աթ[*էնք*]*-ից ուղարկեն։ Այստեղ հիմա չեն ծախում, քանիսին դիմել ենք, մերժում են։ Երեւի Գալֆանսի*[?] *դէպքից յետոյ խստացել են։*

Ձեր յանձնարարած երիտասարդը եկաւ. թղթերի կապոցը բերեց. միայն Բարսեղեանի(6) *նամակի կէսը չկար։ Աւելորդ թուղթ կարծելով, կտրել եւ դէն է գցել, որպէսզի տեղ չբռնի։*

Ծրագիրը վաղը վերջապէս կը ստանանք տպարանից։ Հարցրէք խմբագրատուններում։

Նաւահանգստից ստացանք վերջապէս մի երկու ցուցմունք. բայց հակառակի պէս երթեւեկութիւնը դադարել է։ Ցոնանը(7) *դրանով է զբաղւած. փող ուղարկեցէք, որ հարկաւոր դէպքում կապւած չմնանք։ Մեզ խոստանում են հասցնել Ոսկանապ*[*ատ*](8) *եւ այնտեղ մեր ձեռքը յանձնել* 500 *մաուզ*[*էր*] *ատրճանակ համապատասխան թիւ փամփուշտներով։ Միայն դրամը կանխիկ են պահանջում, խոստանալով վերադարձնել, եթէ անկարող լինեն ապրանքը ապահովաբար մեր ձեռքը հասցնել։ Մենք ուզում ենք առաջարկել՝ յանձնել մեզ* 100-*ական պարտիաներով։ Դրա ռիսկը* 13.000 fr. *կը լինի։ Չէկը ուղարկէք Աստուածատուրի անունով, առնւազը* 40.000 *ր.*։

1.- Նամակի վերեւ նշուած է «Օր. Սերիբր.ի ձեռքով ստացած»: Ուղարկուած Թիֆլիս (Մ. Ք.) Արեւելեան բիւրոյին:
2.- Պիոնեան Կարապետ, անդամ Պալքանի Կ. կոմիտէի:
3.- Ֆրանսերէն՝ Վարդէն ստացա՞ք 400 ֆրանքը: Վարդը՝ Վարդ-Պատրիկեանն է (Արվախի), ծանօթ նիւթական իւրացումի հարցով:
4.- Արտաւազդը կուս. ծածկանունն էր Արեւելեան բիւրոյի: Նաւահանգիստը՝ Պաքում:
5.- Ռուսատառ:
6.- Բարսեղեան – ծածկանուն բժ. Յովսէփ Տէր Դաւթեանի:
7.- Դաւթեան Յոնան:
8.- Ոսկանապատ – Պաքու:

572

Պատճէններու մատեան No 89, *էջ* 47

1905 *յուլիսի* 5

Պալք[անեան] Կենտր. կոմիտէին, Ֆիլիպէ

Սիրելի ընկերներ,

Խնդրենք յայտնել Գալաց, ում հարկն է, որ ապրանքը պահի մինչեւ որ Նաւահանգստից կարգադրութիւն կ՚անեն այդ մասին։

Կովկասից մխիթարական լուրեր են գալիս տեղի ունեցած ընդհարումների մասին։ Դրա վերաբերեալ մի երկու օրից կը ստանաք մի համառօտ տեղեկագիր։

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

573

Պատճէններու մատեան No 89, *էջ* 48-9

1905 *յուլ.* 5

Յոնանին [Դաւթեան], Անվերս

Սիրելիս,

Պայթուցիկի խնդիրը չթողնես, դա շատ կարեւոր է, պահանջում են վերջին նամակով էլ։

Հրացանի տեսակների մասին ես հարցնում։ Նախ եւ առաջ պէտք է գնել այնպիսի հրացաններ, որոնց փամփուշտը տեղումը կարելի է գտնել, օր[ինակ] Բերդան (ռուսական), Մարտինի (տաճկական), ռուսական վերջին սիստէմի (սա առանձին անուն չունի)։ Երկրորդ, հրացանները պէտք է լինին կարճ տեսակը (ձիաւորների կամ սպաների)։ Սա անհրաժեշտ է տեղափոխութեան տեսակէտից։ Առաւել մեզ

հարկաւոր են ռուսական վերջին սիստէմից։ Դա մեծ քանակութեամբ պատւիրւած է St. Etienne-*ում (Ֆրանսա)։ Եթէ տեղւոյդ զինավաճառները կարողանան դրանցից ձեռք բերել, դա մեծ բան կը լինի մեզ համար։ Եթէ դա անհնարին լինի, թող պատրաստեն յատկապէս այնպիսի հրացան, որ կարելի լինի նրանով արձակել ռուսական հրաց[անի] փամփուշտները։ Դրա համար հարկաւոր է միայն փողը եւ փամփուշտի տեղը յարմարեցնել։ Դա մի դժւար գործ չի։ Մայրայեղ դէպքում միայն կարող ենք գնել ուրիշ սիստէմի հրացաններ, բայց այդ հրացանների հետ անպատճառ պէտք է գնել մեծ քանակութեամբ փամփուշտներ։*

Կովկասից նորութիւն չունինք։ Կրպոյից հեռագիր կար, ապահով տեղ է հասել, սպասում ենք նրա նամակին։ Ստացանք եւ նամակ Նաւահանգստից։ Տեղափոխութեան ձեւ են ցոյց տուել քիչ քանակութիւնների համար։ Դրանով արդէն ստանում են։

Քեզ թերթ կանոնաւորապէս ուղարկում ենք։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Փախչելու մասին զուր մի մտածել, որովհետեւ նաւային երթեւեկութիւնը առայժմ ընդհատւած է Սեւ ծովի խառնակութիւնների պատճառով։

Ն[ՈՅՆ]

574

Պատճէններու մատեան No 89, *էջ* 51

1905 *յուլ.* 7

Անդրանիկին(1), *Պարիզ*

Սիրելի ընկեր,

Հաստատում ենք մեր երէկւայ նամակը։ Փամփուշտները կը գրենք, որ ուղարկեն։ Բայց ռուսականը եւ գուցէ եւ մաուզէրինը այդտեղ կը գտնւին։ Հարց ու փորձ արա։ Գրում ենք այս մասին եւ Յոնանին։

Այդտեղ դու էլ խօսա զինավաճառի հետ, չի՞ կարելի արդեօք պատւիրել այնպիսի հրացաններ, որոնցով հնարաւոր լինի արձակել ռուսական փամփուշտները։

Խաչատուրը(2) *կը գայ, եթէ պարսկական դեսպանատան մէջ ծառայող Արշակ խանը այդտեղ է։ Շուտով իմացիր, եթէ այդտեղ է, անմիջապէս հեռագրիր։*

Լորիսը(3) *իր ասելիքները թող ինքը գրի։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Սասնոյ հայդուկապետն է, որ Փարիզ ու եւրոպական այլ քաղաքներ ուղարկուած էր զէնք-զինամթերքի գնումի նպատակով։ Այդ բոլորը պիտի ղրկուէին Կովկաս՝ հայ-թաթարական ընդհարումներուն օգտագործուելու համար։

2.- Խաչատուր Մալումեան (Է. Ակնունի)։

3.- Լորիսը՝ Յովհ. Լոռու-Մելիքեանն է։

575

Պատճէններու մատեան No 89, *էջ* 52

1905 *յուլ.* 7

Յոնանին, Անվերս

Սիրելի ընկեր,

Մաքսատան միջոցով ապրանք դուրս հանելը Նաւահ[անգիստ] մեր ընկերները համարում են անիրագործելի ներկայ պարագաներում։ Այնպէս որ դա թողնելով ապագային, հիմա ամենամեծ ուշադրութիւնը պէտք է դարձնել նաւերում մարդ գտնելու վրայ։

Անդրանիկը դեռ չի եկել։ Տես, այդտեղ կարելի՞ է ռուսական նոր հրացանների փամփուշտ գտնել. գուցէ իբրեւ մօտէլ մի տեղ պահած լինին։

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԻՐՕ

576

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 77

ՇԱՄ(1)

Հաշիւներ ուղարկել մինչեւ մարմնի կազմուելը։
Անպայման դիսցիպլին։
«Փոշիների հարց»։
Տեղեկագիր ուժերի։

1.- Վան (Շամ) ուղարկուելիք նամակի ուրուագիծ:

577

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 77-78

9 *յուլիսի*

ՎԻՇԱՊ(1)

Լեապովը(2) *խնդրում է յայտնել, որ Սաֆոյի*(3) *առած անցագիրը* .....(4) *անուանով անպէտք է Ռուսաստանի համար. նրանով կարելի է ապրել միայն արտասահմանում։ Դրանով ուրեմն ոչ ոք չգնայ Ռուսաստան։*

Անցագիրը վիզա անելու համար դեռ մի յարմար մարդ չգտանք։ Թարսի նման հիւպատոսարան միայն այստեղ կայ, ոչ Բերն եւ ոչ Ցիւրիխ։

Այսօր ուղարկում ենք տպագրւած յայտարարութիւնը։ Comités de Mousch *դիտմամբ ենք դրել, որպէսզի եթէ դէպքից առաջ թղթերը բռնւեն, գործի մասին չկասկածեն*(5)։ *Ուրեմն ուղարկելուց առաջ չմոռանաք կտրել այդ մասը։ Տեկստի եւ ստորագրութեան միջեւ մեծ տարածութիւն ենք պահել կնիքի համար։*

Մոռացել ենք հարցնել Վռամի(6) *հօր հասցէն. յայտնեցէք Ֆիլիպէ։ Կը գրենք, որ* 250 fr. *ուղարկեն։*

Սպասում ենք ձեր նոր գիւտին։

Կովկասում ռուս կառավարութիւնը սկսել է տատանւել։ Բացւել է տաճիկ կառավարութեան մի ծրագիր, որով հայերին կոտորելով, պիտի աշխատեն Անդրկովկասը գրաւել։ Մի մասը այն կարծիքի է, որ պէտք է այս պարագային հայերին զինել. միւս մասը աւելի նպատակայարմար է գտնում թոյլ տալ հայերին կոտորել, վստահ, որ վերջումը միեւնոյնն է, ռուսները կարողանալու են յետ նւաճել Անդրկովկասը։

Վաղը նամակ կը ստանաք Շամ(7) *ուղարկելու համար։ Մի ինչ որ բան կայ այնտեղ. չարունակ գանգատւում են իրենց մեծ պարտքերից, իսկ երբ հաշիւ պահանջեցինք, դուրս եկաւ, որ իբրեւ պարտք միայն* 350 *ղր. է նշանակւած։*

Ներփակ ուղարկուել է 2 չէկ 6000 + 4000 = 10,000 ֆր., որու 4000ը կը փոխադրէք ինչպէս նախօրօք ձեզ գրուել էր՝ Շամ(8):

1.- Պոլիս (Վիշապ) Ցուցական մարմնին ուղղուած նամակ:

2.- Մակեդոնացի յայտնի յեղափոխական առաջնորդ, բարեկամ Դաշնակցութեան:

3.- Մարգարեան Մարտիրոս, որ Քր. Միքայէլեանի մահէն ետք կը ղեկավարէր Ապտիլ Համիտի դէմ մահափորձի ձեռնարկը:

4.- Ռուսատառ անընթեռնելի անուն:

5.- «Մուշի կոմիտէներուն» անունով յայտարարութիւնը կը վերաբերի Եըլտըզի մահափորձին:

6.- Վռամշապուհ Քենտիրեան, զոհուած Քրիստափորի հետ ռումբերու փորձարկման ընթացքին:

7.- Շամը Վանի համար է:

8.- Վերջին՝ հաշուական բաժնին վերաբերող բաժինը գրուած է Արեւմտ. բիւրոյի գործավար Յարութիւն Գալֆայեանի ձեռքով:

578

Պատճէններու մատեան No 89, *էջ* 54

1905 *յուլիս* 10

Վ. Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Շատ հաւանական է, որ նաւային երթեւեկութիւնը վերսկսի շուտով։ Խնդրենք անմիջապէս հեռագրով մեզ յայտնէք առաջին նաւի գնալուն օրը։

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

579

Պատճէններու մատեան No 89, *էջ* 59

1905 *յուլ.* 12

Յոնանին, Անվերս

Սիրելի ընկեր,

Վիշապի մեր բարեկամը, որին դիմել էինք, տուել է մեզ իր բարեկամի հասցէն, նախօրօք սրա համաձայնութիւնը առնելով։ Ուրեմն վստահաբար դիմիր նրան։ Հասցէն՝ J. Jacobs 10 - Rue des Recollets, Anvers։ *Միայն պէտք է ներկայանալ նրան իբր մաքսանենդ վաճառական եւ ցոյց տալ, որ Գրիմը (իսկական անունը* Loris, *որը դու իբր թէ չգիտես) նոյնպէս մեզ հետ գործ ունի իր շահի համար։ Այդ մարդը վաճառական է, ուրեմն աւելի գործնական։ Կ'ասես, որ եկել ես իր հետ տեսնուելու յատուկ նպատակով Վիշապից եկած նամակի հիման վրայ։ Կարեւոր չէ, եթէ նոյնիսկ իմանայ, թէ դու յեղափոխական կազմակերպութեան կողմից ես։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— 11/VII *նամակը ստացանք։ Մի շտապիր, գուցէ դարձեալ հասցէները գտնենք եւ ուղարկենք։*

Ն[ՈՅՆ]

580

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 75-76

յուլ. 12-*ին*

ՎԻՇԱՊ(1)

Հաստատում ենք մեր յուլ. 9-*ի նամակը երկու չէկով միասին։ Նոյն օրը ուղարկուած են եւ* 6 *հատ յայտարարութիւններից։*

Զաւէնը(2), *ինչպէս տեսնում էք, սպասում է պատասխանի։ Մի բան յայտնեցէք, յատկապէս ձեր պատասխանին է սպասում։*

Ստացանք Գրինի(3) *բարեկամի հասցէն, անմիջապէս հաղորդեցինք Յոնանին, որ այն կողմերումն է։ Մի յարմար մարդ չկարողացանք էլի ճարել այդ անցագիրը վիզա անելու պամար։*

Զրահաւորից(4) *օգտւելու հնարաւորութիւն չկար։*

3000-*ից աւել հրացան հէնց իրենք ունէին նաւի վրայ։ Գոնէ այդ բաժանէին նաւահանգիստներում եւ այնպէս գնային անձնատուր լինելու։*

1.- Պոլիս (Վիշապ) Յուցական մարմնին ուղարկուած նամակ:
2.- Մակեդոնացի յեղափոխական ծանօթ գործիչ Լեապով, որ կը գործածէր նաեւ Զաւէն Արշակունի ծածկանունը:
3.- Պոլսոյ մէջ Սուլթանի մահափորձի ձեռնարկին օժանդակող երիտասարդ:
4.- Կ՝ակնարկուի ճափոնցիներուն յանձնուած ռուսական ռազմանաւի մը:

581

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 243-46

12 *յուլ.*

Բանկի հասցէով, ստացած

Մ. Ք.(1)

Այստեղից ճանապարհ ընկած օրիորդը պատրաստ է գնալ Նախիջեւանի կողմերը։ Իր կողմից դնում է 1000 *ր.։ Մեր կողմից կարող ենք նրան ձեզ յանձնարարել ամենայն վստահութեամբ։*

Հեռագիրը (..... *մասին*)(2) *հասկացանք, երբ պաշտօնական տեղեկութիւնը կարդացինք։ Սպասում ենք նամակին շարժառիթը եւայլ մանրամասնութիւններ իմանալու համար։ Որքա՞ն դա նպատակայարմար էր ներկայումս։ Մեզ թւում է, որ կազակների վրայ գցած առաջին ռումբը մերը չէ։ Բագւայ սպանութիւնները — տեռորնե՞ր են ուղղած «հայ կոմիտէների» դէմ, թէ հետեւանք են թիւրք բանւորներին արձակելուն։*

Ստանում ենք կանոնաւոր կերպով Մհերի եւ Շահրիարի(3) *գրութիւնները։ Կարեւոր տեղեկութիւնները քաղւածօրէն հեռագրով հաղորդում ենք թերթերին։ Ձեր կողմից լաւ կը լինի դադարեցնել հեռագիրներ ուղարկելը։ Խառնաշփոթութիւն է դուրս գալիս։*

Զէնքի համար ամէն ճանապարհներ ուսումնասիրւում են, կը հաղորդենք, եթէ դրական մի բան լինի։

Ծրագիր ուղարկել ենք մի երկու հատ։ Մեծ քանակութեամբ գնացել է Վրէժ(4)։ *Կարգադրեցէք այնտեղից շուտով ստանալու։*

Տեղեկութիւն ունէ՞ք դուք լեհացիների միջոցով ուղարկուածների մասին։ Թող Մհերը(5) *գրի մեր այնտեղի ընկերոջ հասցէն։*

Թռուցիկի մասին կը կարգադրենք։

Աթ[*էնք*] *գնացած Լեւոնի ուղարկածի մասին մենք տեղեկութիւն ստացանք Բարսեղեանից*(6)։ *Մհերը լաւ կ՚անի, փոխանակ միջնորդութեան դիմելու, ուղղակի Բարսեղեանին հարցնի։ Դա աւելի շուտ կը լինէր։ Վարդի վերաբերմամբ պէտք է կտրուկ միջոցի դիմել։*

Զէ՞ք ստացել միթէ մեր հեռագիրը, որով խնդրել էինք հեռագրել Վարդին չէկը անմիջապէս յանձնել Պիոնեանին։ Դա մենք ուղարկել ենք ձեզ անմիջապէս, Բարսեղեանի առաջին նամակը ստանալուն պէս։ Եւ իսկոյն նամակով (Եւանգ. ձեռքով) էլ ձեզ խնդրեցինք փութալ կարգադրութիւն անել, որպէսզի դրա գլխին էլ քար չընկնի։ Նոյն բանը մենք կրկնել ենք յետագայ բոլոր նամակներում։ Մեզ գրում են, որ Վարդը այդ դրամը ցոյց է տուել սրան նրան, ասելով թէ դա այն գումարն է, որ իր մօտ մնացել է նախկին կոմիտէի հաշուից, թէ ինքը ոչ մի վստահութիւն չունենալով Դաշնակցութեան արդի կազմի վրայ, պիտի ընդհ. ժողով հրաւիրի, մաքրի Դաշնակցութիւնը եւ ապա յանձնի։

Մասնաւորապէս խնդրենք կրկնել Պիոնեանին հեռագրի տեկստը. ինչո՞ւ, ի՞նչ նպատակով է եղել դրած 400 fr., *փոխանակ* 2.000 *ր.*։

Հէնց հիմա ստացանք Վարդի բացատրական նամակը. ամէն բան այնպէս է դարձնում, որ մենք ենք վերջ ի վերջոյ մեղաւոր դուրս գալիս!... Զնայած, որ նամակի մէջ խօսւում է Ռաչիդի մասին եւ նրա տակին Բարսեղեանի իսկական ստորագրութիւնը կայ, որից կասկած չէր կարող լինել, թէ ումից է գալիս փողը, այնուամենայնիւ նա տրամադիր է հաւատալու, որ ինչ որ իր մի բարեկամը, որին դիմում արած է եղել ամիսներ առաջ, յանկարծ օգնութեան է հասել։

Հասցէներ դուք շատ ունէք, բաւական է։ Դուք ուղարկէք եւ շարունակ փոխարինէք։

Ուղարկւած փողը ստացել ենք եւ ստանալու մասին յայտնել ենք ձեզ յուն[*իս*] 4*-ի նամակով։ Դարձեալ մի անգամ խնդրում ենք յայտնել մեզ, թէ մեր որ նամակներն էք ստանում։ Գուցէ բռնւում են եւ մենք շարունակում ենք նոյն ճանապարհով ուղարկել։ Սպասում ենք նոր գումարի, առնւազը* 40 *հազար ր.*։

Մեր վերջին նամակները գրւած են՝ յունիս 4*-ին,* 16*-ին (բանկի հասց.),* 29*-ին (Մհերի),* 30*-ին եւ* 5 *յուլիսի (օրիորդի ձեռքով*(7))։

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղարկուած նամակ, ստացուած ըլլալու, այսինքն տեղ հասած ըլլալու մակագրութեամբ։

2.- Անընթեռնելի օտար անուն։

3.- Մհերը, ինչպէս ծանօթ է, Համօ Օհանջանեանն է։ Շահրիար երեւի գրուած է Շահրիկեանի համար։

4.- Ատրպատական, Թաւրիզ։

5.- Օհանջանեան Համոն։ Թռուցիկ՝ ծածկանուն Գէորգ Տէր Աբրահամեանի։

6.- Լեւոնը՝ Գիլլումեանն է, Բարսեղեանը՝ բժ. Տէր Դաւթեան Յովսէփ, անդամ Արեւելեան բիւրոյի։

7.- Խօսքը հաւանաբար Օր. Սերիբրեակեանի մասին է։

582

Պատճէններու մատեան No 89, *էջ* 61

1905 *յուլ.* 13

Սուլեանին, Բերլին

Յարգելի ընկեր,

Միքայէլին ուղղած ձեր նամակը ստացանք։ Ձեր տեսած վաճառականը քիչ մեծախօս է երեւում, բայց գուցէ կարողանայ մեզ օգտակար լինել, եթէ իրօք գործ է կատարել Ռուսաստանի հետ եւ եթէ վստահելի մարդ է։ Սպասում ենք ձեր խոստացած մանրամասնութիւններին։ Առայժմ թող յայտնի, թէ քանիով կարող է մեզ տալ մաուզէրեան տասըհարւածեան ատրճանակները Պարիզում եւ թող տայ Պարիզի իր գործակատարի հասցէն։ Եթէ պայմանները ձեռնտու լինին, դրա հետ կարող ենք գործ սկսել։

Այդտեղի ընկերը, որ ուզում է զբաղւել տեղափոխութեան խնդրով, ի՞նչ յարմարութիւններ ունի այդ գործի համար։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

583

Պատճէններու մատեան No 89, *էջ* 62-3

1905 *յուլ.* 13

Պալքան[եան] Կենտր. կոմիտէին

Երէկ ճանապարհ ընկան դէպի ձեզ մեր երկու ընկերները՝ Սարգսեան եւ Հայկազունի։ Սարգսեանը համալսարանաւարտ մի երիտասարդ է, գալիս է այդտեղ յատուկ յանձնարարութեամբ, որի մասին ինքը կը պատմի։ Հայկազունին լաւ, նւիրւած ոյժ է, Բելգրադից(1) *հեռագիր կը տան ձեզ, թող մէկը գնայ կայարան նրանց հանդիպելու [մէկ բառ անընթեռնելի] մի մասնաւոր սենեակում, որովհետեւ երկար պիտի մնան։ Նրանց հասցէի*[?] *մասին խորին գաղտնապահութիւն։*

Գուցէ Գէորգը Սոֆիայից դիմի ձեզ Սարգսեանի հետ ծանօթանալու համար։ Եթէ նամակ ստանաք նրանից, հրաւիրէք ձեզ մօտ եւ թող անելիքները միասին անեն։

Վիշապից(2) *կը ստանաք մի հասցէ, որով փոխադրեցէք* 250 fr., *նամակի մէջ հասկացնելով, թէ դա անում էք Վռամի յանձնարարութեամբ։*

Ստացա՞ք արդեօք Պարիզից վրացու վերցրած պարտքը 300 fr.։ *Ուղարկւած է սխալմամբ՝* Alardjadjian *հասցէով։*

Կարո՞ղ էք արդեօք այդ կողմերում գտնել մի քանի հատ տաճկական մաուզէր հրացանի (վերջին սիստէմի) փամփուշտ։

Գէորգին տրուած ամսականները անցկացրէք մեր հաշուին, Թիֆլիզից մեզ ուղարկելու են դրա փոխարէն։

Վարդը(3) *մեզ գրում է, թէ թիւրիմացութեան պատճառով Թիֆլիզից եկած* 2,000 *ռ*[*ուբլի*] *ընդունել է իբր իր սեփական փողը եւ դրանով իր պարտքերն է վճարել։ Իր տուած բացատրութիւններից ակներեւ պարզ է, որ ինքը այդպէս է ուզել հասկանալ։ Զէկի հետ ստացած նամակից ոչ մի կասկած չպիտի լինի, որ փողը վերաբերում է կազմակերպութեան։ Ուրիշ ոչինչ. նամակի ստորագրութիւնը* (*հակառակի պէս՝ բիւրոյի անդամի իսկական ստորագրութեամբ*) *բաւական էր դրա համար։*

Այսօր մենք ուղարկում ենք նրան հետեւեալ հեռագիրը. Assez de manœuvres. Envoyez immediatement toute somme(4).

Գուցէ շուտով ուղարկենք նամակի ամբողջ պատճէնը ի գիտութիւն։

Գէորգը կարող է եւ նամակ չգրել, այլ ուղղակի գնալ Ֆիլիպէ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Բելգրադ – Սերպիոյ կեդրոնական քաղաք։ Յետագային մայրաքաղաք Եուկոսլաւիոյ։
2.- Վիշապը Պոլիսն է։
3.- Վարդ – Վարդ-Պատրիկեան Յակոբ, ամբաստանուած նիւթական զեղծարարութեան մէջ։
4.- Ֆրանսերէն – Բաւական են աճպարարութիւնները։ Անյապաղ ուղարկեցէք ամբողջ գումարը։

584

Պատճէններու մատեան No 89, *էջ* 65-6

1905 *յուլ.* 15

Վ. Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Նաւահանգստի նամակի մէջ եղած կաւալերսկի(1) *խօսքը նշանակում է հեծելազօրի։ Ուզում են ասել, որ հարկաւոր է ճանապարհել ոչ թէ սովորական երկար հրացաններից, որ կրում են հետեւակները, այլ կարճերից, որ ունի հեծելազօրը։*

Ներփակ ուղարկում ենք Նաւահանգստից(2) *ստացած յանձնարարական նամակները։ Տեսնուեցէք հետները, դրանցից իւրաքանչիւրը կարող է իր հետ ապրանք տանել։*

Իսկ քանի որ դեռ մեծ քանակութեամբ ապրանք չունինք, պէտք է պատւիրել այդտեղ մի գինավաճառի, որ շուտով յանձնի 100 *մաուզէրեան ատրճանակ եւ իւրաքանչիւր ատրճանակին* 300 *փամփուշտ. կարող էք յայտնել որ դա առաջին պատւէրն է եւ եթէ պայմանները ձեռնտու լինին, կը շարունակենք իրեն հետ գործ ունենալ։ Եթէ Բ*[*աթում*]*ի գիծը բացւելու լինի շուտով, նախքան մաուզէրեան ատրճա-*

նակների ստացուիլը, պէտք է գնել ուրիշ ատրճանակներ, օր[ինակ] Nagant*-ի. կը հարցնէք տանողից, թէ ինչ ձեւի, ինչ մեծութեան, ինչ ծանրութեան սնտուկներ պիտի յանձնել եւ քանի հատ կարող է վերցնել, ըստ այնմ էլ կը վարուէք։ Աւելորդ է կրկնելը, որ եթէ ձեր ժամանակը չների, հարկ կը լինի արձակուրդ վերցնել։*

Հարկաւոր ենք համարում աւելացնել նաեւ որ լրտեսութիւնից ազատ մնալու համար ինքը տանողը պէտք է առնի ապրանքը եւ իր ուզած ձեւով մտցնի նաւը։

Վարձատրութիւնը պէտք է այնտեղ տրւի, դուք ոչ մի սանտիմ չէք տալ։

Ուրեմն յանձնարարւած նաւերից որը որ գայ, տեսնուեցէք մարդուն հետ, պայմանաւորուեցէք եւ ըստ այնմ վարուեցէք։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Բնագրին մէջ ռուսատառ։
2.- Պաթումից։

585

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 246-49

Յուլ. 15
.....(1) *հասցէին*

Մ. Ք.(2)

Հաստատում ենք մեր յուլ. 5*-ի եւ* 12*-ի նամակները (առաջինը օրիորդի միջոցով*(3)*, երկրորդը բանկի)։ Խնդրում ենք յիշել ձեր նամակներում, թէ մեր որ նամակներն էք ստանում։*

Աւետիսին(4) *տրւած* 1.000 *ր.ի համար դուք բոլորովին զուր էք խնդիր բացել։ Դուք պէտք է շատ լաւ իմանայիք, որ Աւետիսը զէնքի փողից ոչ մի պայմանով չէր համաձայնի վերցնել, ուրեմն շատ կտրուկ պատասխան պիտի տայիք։ Յաւալին այն է, որ երեւի բերանից բերան պիտի պտտի, թէ Աւետիսը* 1.000 *ր. վերցրել է գնացել։ Հիմա քանի որ դրա խօսքը կայ, յանձնէք խկոյն Համբարձումին* 1.000 *ր., թող նա տանի յանձնի Մ. Ա.-ին ասելով, թէ Ս-ն է վերադարձնում Աւետիսի համար վերցրած գումարը։ Այդ փողը մենք կ՚առնենք Ս-ից, որ արդէն պատրաստ էր տալ բոլորովին ուրիշ աղբիւրից։ Թիւրիմացութեան պատճառը երեւի Ս-ն է, որ չի կատարել իր խոստումը եւ ժամանակին չի վերադարձրել Մ. Ագ[ար]եանին* 3 *օրով փոխ առած փողը։*

Վարդին մենք ուղարկեցինք հետեւեալ հեռագիրը։ Assez de manœuvres, envoyez immédiatement toute somme. *Ստացանք հետեւեալ պատասխանը՝* Pas manœuvres, mais réalité. Retenez votre langue. Je deteste complotistes. Rompe toute relation(5)։

Քանի անգամ ձեզ եւ Նաւահանգիստ գրեցինք, հարցրինք, թէ ինչ ծանրութեամբ, ինչ մեծութեամբ լինեն ուղարկւելիք արկղները, ինչ քանակութեամբ maximum *կարելի է ճանապարհ ձգել ամէն մի նաւով։ Այս հարցերին ոչ մի պատասխան... Հէնց ասում էք՝ ուղարկեցէք։*

Պարոյրին(6) *յիշած ապսպրանքի մասին դեռ եւս որոշ բան չի կարելի գրել, պէտք է դեռ սպասել։*

Մենշեւստվօ-[*ները*](7) *այստեղ էլ մեզանից* 1.000 fr. *պարտք առան։ Վիրաւորականը այն է, որ մեզ դիմում են միայն երբ փողի պէտք ունենում։ Տալը դժւար է, բայց մերժել էլ չի կարելի։*

Այդտեղ կը գայ գուցէ մի վրացի երիտասարդ, Կեռաշիձէ[?] *անունով Սակարտվէլոյի կուսակցութիւնից։ Դա խնդրում էր, որ զէնք տանք Գորու գաւառում գործել ուզող մի խմբի համար, բաղկացած* 20-25 *հոգուց։ Պատասխանեցինք, որ ներկայ պարագաներում այնքան մեծ պահանջ կայ մեր ժողովրդի համար, որ Կովկասի մեր ընկերները չեն համաձայնի նրանց զինել։ Շատ շատ գուցէ տան ռումբեր։ Դրա փոխանակ առաջարկեցինք որ Թիֆլիզի մէջ կազմուելիք կամ արդէն կազմուած հայ-վրացական խմբերի մէջ մտնեն։ Այդ դէպքում, ասացինք, որ դիւրութեամբ զէնք կը ստանան։ Դուք էլ մեզանից անկախ նոյն առաջարկութիւնն արէք, եթէ ձեզ ներկայանալու լինի։ Գրել ենք Պարիզ, որ մի երկու ատրճանակներ տան նրան իբրեւ նպաստ մեր կողմից, նա յոյս ունի հետը սահմանը անցկացնել։ Ուզում էինք նրան էլ մի չէմոտան ատրճանակ եւ փամփուշտ տալ, ինչպէս տուինք Կրպոյին։ Բայց ստանալով սրա նամակը, որով խորհուրդ չէ տալիս այդ միջոցը շարունակել, թողեցինք այդ միտքը։*

Յոնանը(8) *դեռ աշխատում է Բելգիայում։*

Հասցէները սաստիկ չփոթում էք։ Pension-*ներ, անձեր խառնում էք անխնայ։ Այսպէս կարող են եւ կորչել։*

Pension Depuis-*ին պէտք է դնել միայն Ռ-ի անունը, իսկ* Pension Bernard-*ին միայն* Avet-*ի։ Ահա երկու նոր հասցէներ։* 1) Mlle J. Mourier, Marseille, Boulevard des dames, 39 2) Mlle J. Verdan, Rue de Candolle, 11 Genève.

Դուք էլ հասցէներ տուէք, մանաւանդ հեռագրի համար։

Ուղարկեցէք մի լաւ գրաշար։

1.- Ռուսատառ անընթեռնելի անուն:

2.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղարկուած նամակ, «ստացած» նշումով:

3.- Հաւանաբար Ռոստոմի 5 Յուլիսի նամակին մէջ յիշուած օր Սերիբր[եակեանն] է:

4.- Աւետիսը՝ Ահարոնեանն է:

5.- Ֆրանսերէն. «Վերջ տուէք աճպարարութիւններուն. անմիջապէս ուղարկեցէք ամբողջ գումարը»: Ստացուած պատասխանը. «Աճպարարութիւններ չեն, այլ իրականութիւն – Ձսպեցէք ձեր լեզուն – կ՝ատեմ դաւադիրները – կը խզեմ ամէն յարաբերութիւն»:

6.- Հայդուկապետն է՝ Անդրանիկ, որ այդ օրերուն Փարիզ էր ուղարկուած զինական գնումներու համար:

7.- Ռուսատառ՝ փոքրամասնականները: Ռուսատառ է նաեւ վրացի երիտասարդին անունը:

8.- Դաւթեան Յոնան, որ նոյնպէս զէնքի գնումի համար գացած էր Բելգիա (Պելճիքա):

586

Պատճէններու մատեան No 89, *էջ* 67

1905 *յուլ.* 16

Յոնանին, Անվերս
Սիրելի ընկեր,

Ստացանք քո 14/VII *նամակը։ Զարմանում ենք, որ Վիշապում ռուս յեղափոխականների անունն են խառնել եւ մեզ այդ մասին ոչինչ չեն յայտնել։*

Ահա եւ մի նոր հասցէ, որ ստացանք սոց.-ըէվոլիւց.-ներից. Tereshkavitch Constantin 74, Rue de Jupille, Liège Bressour (*որ թաղի անուն պէտք է լինի*)։ *Ցիշւած պարոնը էսէր է, ուրեմն կատարելապէս վստահելի. ինքը զբաղւել է նոյն գործով եւ ունի կապեր։ Եթէ հին կապերը չի կորցրել, կարող է յամենայն դէպս շատ գործնական ցուցմունքներ տալ։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ներփակ կը գտնես եւ յանձնարարականը։
Ն[ՈՅՆ]

587

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 79-80

յուլ. 17

ՎԻՇԱՊ(1)

Երկու չէկը արդէն ուղարկել էինք, երբ ստացանք Ֆիլիպէի հեռագիրը։ Ցուսով ենք ժամանակին հասած լինի։

Գրինի անցագիրը յանձնել ենք մէկին. գուցէ այսօր յաջողի։

Նրա Բրիւսէլի բարեկամի հետ մեր բանակցութիւնները ապարդիւն են առայժմ։ Նա շատ խոշոր ծրագիր է առաջարկում, մինչեւ հիմա հնարաւորութիւն ունենք ստանալու քիչ քիչ քանակութեամբ։ Նաւահանգստում ստանալը դեռ ոչինչ, այնտեղից տանելը շատ դժւար է։

Քանի ժամը աւելի է մօտենում, այնքան աւելի ենք անհանգստանում Նժոյգի(2) *հետեւանքների մասին։ Անաջողութիւնը մեզ կը սպանի։ Զի՞ կարելի արդեօք իբր պահեստ ունենալ մէկին խնձորով*(3), *որը անաջողութեան դէպքում, վրայ հասնի։ Տեղի ունեցած իրարանցումից բոլորը գլուխները կը կորցնեն, եւ նա կարող կը լինի իր գործը կատարել անարգելք, նոյնիսկ ամենահասարակ խնձորով։*

1.- Նամակ ուղղուած Պոլիս (Վիշապ) Ցուցական մարմնին։
2.- Սուլթան Համիտի մահափորձ։
3.- Խնձորը ձեռնառումքն է։ Քր. Միքայէլեանի ծրագրով նախատեսուած եւ Ռոստոմի կողմէ կրկին յիշեցուած այս միջոցին չդիմելը, արդարեւ, գլխաւոր պատճառներէն մէկը պիտի ըլլար Սուլթան Համիտի մահափորձին ձախողութեան։

588

Պատճէններու մատեան No 89, *էջ* 68

1905 *յուլ.* 18

Մէնին, Պարիզ

Սիրելի ընկեր,

Ստացանք Բերլինի զինուորական Kartrich-*ի գործակատարի հասցէն, որ չտապում ենք հաղորդել։*

Michel Medawar, 52, Rue de Chabrol, 52, Paris. *Սրան արդէն յայտնի պիտի լինի Սաղեանի եւ զինավաճառի միջեւ եղած խօսակցութիւնը։ Սաղեանը նրան ներկայացել է* Dr. Nalbandi *անունով։*

Զինավաճառը ուղարկել է իր ունեցած հրացանների ցանկը։ Պէտք է ասել գործակատարին, որ մենք կարող ենք գնել մաուզէրեան հրացանները 7 միլիմետր կալիբրի, ան էլ, երբ փոխադրութեան խնդիրը կարգադրած կը լինենք։ Սա այժմ թող մեզ տայ փոքր պարտիաներով (100-*ական հատ*) *մաուզէրեան ատրճանակներ, տասըհարւածեան* (de dix coups) *իր փամփուշտներով։ Նոյն առաջարկն է, որ պիտի անէինք* Gomant-*ին։*

Այդ պարոնը Բէյրութիցն է։ Գուցէ նա մեզ խոստանայ այն կողմերը յանձնել։ Աւելորդ չէր լինի խօսք գցել այդ մասին անորոշ կերպով։

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ներփակ ուղարկում ենք Շիրազի նամակը եւ հաշիւը։ Մի բան խոստացել ես... Պատասխանիր շուտով։

Ն[*ՈՅՆ*]

589

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 250

18/VII

ՄՈՍԿՎԱ

Արտասահմանից մի քանի ուսանողներ են գալու Մոսկվա։ Նրանք փնտռելու են Վարդանեանին։ Եթէ գտան, ուրեմն նրա միջոցով կը յայտնեն ձեզ իրենց դիտաւորութիւնը, իսկ եթէ Վարդանեանը բացակայ է, դուք հետեւեցէք եւ գտէք եկողներին։ Նրանցից մէկի անունը Տէր-Պողոսեան է, որ արդէն եկած պիտի լինի։

Տեղեկութիւններ գրէք Հայկունու եւ Ֆելիքսի(1) *մասին. նոյնպէս եւ ձեր ընդհանուր դրութեան։*

1.- Հայկունին՝ Չիլինգարեան Յակոբն է, դաշնակցական յայտնի գործիչ Ալեքսանդրապոլի, Կարսի եւ Պաթումի մէջ. այդ օրերուն զբաղած էր Անդրկովկասի համար զէնք հայթայթելու գործով: Ֆելիքսը (Զաւէնեան) նոյնպէս զէնքի մատակարարման գործին նուիրուած գործիչ է: Վերեւ յիշուած Վարդանեանը, հաւանաբար, Վանայ Սարգիսն է, Բարսեղեան, որ այդ անունով կեղծ անցագիր կը գործածէր:

590

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 250-51

18/VII

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ [*ՊԱԹՈՒՄ*]

Ստացանք Կրպոյի առաջին նամակը։

Ամէն կերպ աշխատեցէք փոխադրութեան գործը կարգադրել նաեւ Նովորոսիյսկում։ Սրանից յետոյ գործադուլների, խռովութիւնների պատճառով երթեւեկութիւնը Բ[*աթում*]*ի* [*հետ*] *միշտ ընդհատւելու է։ Պահեստի կէտ պէտք է ունենալ։*

Դուք դարձեալ ոչինչ չէք գրում, թէ ինչ ձեւի, ինչ մեծութեան, ինչ ծանրութեան սնտուկներ կարող էք ընդունել, եւ քանի հատ ամէն մի անգամին։

Չի՞ կարելի արդեօք եկողի հետ ապրանք ուղարկել։ Կրպոն ի՞նչ դժւարութիւններ է կրել, եւ այնպիսի դժւարութիւնն՞ր են, որոնց առաջն առնել չի կարելի։

Պէտք կ՚ունենա՞ք բերդանի եւ մոսինի փամփուշտի։

Տեղեկութիւններ տուէք այդտեղ անցած դարձածի մասին։

591

Պատճէններու մատեան No 89, *էջ* 69

1905 *յուլ.* 19

Յոնանին [*Դաւթեան*], *Անվերս*

Սիրելի ընկեր,

Ներփակ կը գտնես 1,000 fr. *չէկ, որ դու ուզեր էիր։ Ռիսկ արա, առանց դրան ոչ մի գործ սկսել չենք կարող։ Հէնց այժմեանից կարող ես ատրճանակները եւ փամփուշտները գնել. եթէ տանողների հետ համաձայնութիւն չկայացաւ, կարելի է այդտեղ Շահէնին*(1) *յանձնել պահելու։*

Կապոցների մասին դեռ տեղեկութիւն չունինք, չնայած մեր կրկնակի հարցումներին։ Աւելի լաւ է պարկերի մէջ կապել, մի երկու պարկ էլ աւել ունենալ, այնպէս որ տեղ հասած ժամանակը նաւի վրայ, ուզած մեծութեամբ ու ծանրութեամբ կապոցներ անել կարողանան։

Որոշ պայմանախօս չունենք, եւ պէտք էլ չկայ։ Հարկաւոր է միայն իմանալ տանողի անունը եւ պաշտօնը նաւի վրայ։ Նաւը ճանապարհ ընկած օրը մենք կը յայտնենք տեղ, այնտեղ կը սպասեն գալուն եւ եկածին պէս կը գնան, կը հարցնեն անունը եւ կ'առնեն ապրանքը։ Վճարը այնտեղ պէտք է արուի, ապրանքը ստանալուց յետոյ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՕ

1.- Շահէնը մէկ ուրիշ ծածկանունն է հայդուկապետ Անդրանիկ Օզանեանին։

592

Պատճէններու մատեան No 89, *էջ* 72

1905 *յուլ.* 21

Մէնին(1), *Պարիզ*

Ներփակ ուղարկում ենք երկու չէկ, մէկը քո անունի 10,000 fr., *միւսը՝ Քիյառի*(2), *նոյնպէս* 10,000 fr.։

Վ[իշապ]ից գրել են, որ հաւանական է Նժոյգի(3) *խնդիրը այս շաբաթ վերջանայ։ Ի հարկէ, դուք էլ կ'իմանաք։ Խնդրում են առայժմ, մինչեւ իրենց յայտարարութիւնը ոչ ոքի չխօսել։ Ուրեմն դիմումները պէտք է լինեն եւ միջամտութիւն հրաւիրուի անկախ մեր մասնակցութեան խնդրից։*

Ընկեր[ական] բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Մէնի ինքնութիւնը կարելի չեղաւ ստուգել։
2.- Քիյառ – Փրօ-Արմենիայի խմբագրապետ։
3.- Վիշապ – ծածկանուն Պոլսոյ։ Նժոյգը Սուլթան Համիտի մահափորձին տրուած անուն։

593

Պատճէններու մատեան No 89, *էջ* 75-76

1905 *յուլիսի* 24

Մէնին, Պարիզ
Սիրելի ընկեր,

Մեր հեռագրից արդէն իմացած կը լինէք, որ Սաֆոն, Ռուբինան(1) *եւ միւսները արդէն Ֆիլիպէ են։ Հեռագրեցինք, որ Սաֆոն եւ Ռուբինան դան այստեղ։ Առաջար-*

կեցինք նոյնպէս, որ Ոսկեհանքեանը(2) *առայժմ լուռ մնայ։ Մանրամասնութիւնները նրանց գալուց յետոյ։*

Քիյառին գնալը շատ լաւ կը լինի, միայն թէ կառավարութիւնը թոյլ կը տա՞յ արդեօք։ Նրա ամէն մի քաղաք մտնելը մի մի ցոյց դուրս կը տայ։ Կոլէկրի[?] *մասին Աւետիսը այնքան էլ լաւ կարծիքի չէ։*

Զոպանեանին(3) *գրաւոր պատասխան տալ չարժէ։ Նրան պէտք է նկատել, որ Դաշնակցութիւնը այլ եւ այլ թելադրութիւնների, ցուցմունքների պէտքը չի զգում. դաշնակցական գործիչները իրաւունք ունեն իրենց համարելու ոչ նւազ ձեռնհասներ իրենց ստանձնած գործի մէջ, քան թէկուզ վերակազմեալները*(4)*։ Եւ իրենց կենտրոնական կոչւած վարչութիւնը, բնաւ լրջութեան ապացոյց չի տալիս, տարաձայնւած լուրերի վրայ հիմնուած՝ նոյնանման դիմումներ անելով. իսկ ինչ վերաբերում է իր ուզած ոչ-պաշտօնական տեսակցութեան, մեր կարծիքով աւելորդ է քո տեսնուիլը, եթէ նախօրօք յայտնի չլինի, թէ որքան կարեւոր է տեսակցութեան նիւթը։*

Մենք վատ բան ենք կասկածում. չլինի, թէ այդ վերակազմեալ պարոնները դարձեալ իրենց հին տաքտիքն են ուզում վերսկսել Կիլիկիայում, եւ դրա համար հող են պատրաստում, ռումբերի խօսքը հասարակութեան մէջ գցելով։

Շիրինկենի վերաբերեալ ստացւած տեղեկութիւնը ճիշտ է։ Ռուսների ասելով, նա խելքով սահմանափակ, բայց փորձառու ժանտարմ է։

Նապոլէոնի մասին վրդվեցուցիչ տեղեկութիւններ են գալիս։ Վաղը հեռագիր կը պատրաստենք։

Թիւֆէ[ն]*կչիէվի*(5) *հետ տեսնւիր այդտեղ։ Նրա միջոցով պէտք է պատւիրել մօտ* 300 *կ*[*իր*] *փոշի։ Իսկ զէնքի մասին պէտք է խօսել Ռուբանովիչի եւ Դէկանոզովի հետ։ Թող Լորիսը*(6) *կարտ-հեռագրով յայտնի Ռուբանովիչին, թէ երբ կարող է ձեզ հետ տեսնւել։*

Ընկեր. բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Ներփակ վերադարձնում ենք Զոպանեանի նամակը։
***Ն*[*ՈՅՆ*]

1.- Սաֆօ – ծածկանուն Մարգարեան Մարտիրոսի, որ Քրիստափոր Միքայէլեանի եղերական մահէն ետք կը գլխաւորէր Սուլթան Ապտիլ Համիտի «ձախողած» մահափորձը։ Ռուբինան (Արէշեան) նոյն մահափորձին մասնակիցներէն, ձախողութենէն ետք Սաֆոյին հետ, ինչպէս միւս մասնակիցները, յաջողած էին հեռանալ Պոլիսէն։

2.- Ոսկեհանքեան գործածուած է Իզմիրի համար, որ սկզբունքով պէտք է դաւադրական գործողութիւններու դիմէր եւրոպական հաստատութիւններու դէմ։ Սակայն Սուլթանին մահափորձի ձախողութենէն ետք, Բիւրոն պիտի արգիլէր նման փորձեր։

3.- Հանրածանօթ գրագէտ Արշակ Չօպանեանն է։

4.- Հնչակեան մայր կուսակցութենէն բաժանեալներուն տրուած անուն։

5.- Պուլկար վաճառական, հայթայթիչ պայթուցիկ նիւթերու։

6.- Խօսքը Յովհ. Լոռու-Մելիքեանի մասին է։

594

Պատճէններու մատեան No 89, *էջ* 77-78

1905 *յուլիսի* 25

Մէնին, Պարիզ

Սիրելի ընկեր,

Մեր բռնելիք դիրքը որոշելու համար հեռագրով խնդրեցինք, որ Ֆիլիպէից մարմնի անդամներից մի երկուսը այստեղ գան։ Պատասխան ստացանք, թէ արդէն ճանապարհ են ընկել եւ կիւրակի օրը դուրս են եկել Սոֆիայից։ Ուրեմն այսօր կամ վաղը այստեղ կը լինեն, եթէ ճանապարհին չուշանան։ Մենք էլ այն կարծիքին էինք, թէ պէտք է լռել, այդ իմաստով մի ուրիշ հեռագիր էինք ուղարկել Ֆիլիպէ, աւելացնելով դրան եւ այն, որ Ոսկեհանքը պիտի սպասի(1)*։ Բայց արդէն ինչպէս գիտէք, Վ[իշապ]ից*(2) *տրւած են եղել յայտարարութիւններ դեսպաններին։ Այնուամենայնիւ լաւ կը լինի գոնէ մեր կողմից լռութիւն պահպանել։ Գան թէ չէ, մեր խօսակցութեան արդիւնքը անմիջապէս կը հաղորդենք ձեզ։ Հիմա երեւի Յոնանն էլ, Միքայէլն էլ*(3) *այդտեղ են։ Ապրանքը Ղազարեանին ուղարկելիս արդեօք հարցրել են ուղարկելու ձեւը։ Նա մի անգամ գրել էր, թէ ուղղակի իր հասցէին չի կարելի յանձնել։*

Այսօր հեռագրեցինք, որ բաւականանաս առայժմ առաջին 100 *հատը ճանապարհ ձգելով։ Երեւի չես մոռացել, որ Նաւահանգստի*(4) *գիծը դեռ չի բանում, ուրեմն դեռ այդ* 100 *հատն էլ երկար կարող են սպասել։ Մնացածը թող Գոմ[ան]ը*(5) *իր մօտ պահի առայժմ։ Ախր մենք այստեղ խօսեցինք միայն* 100-*ի համար։ Խօսք չկայ, որ մեզ ձեռնտու է թէեւ թանկ գնով, բայց իբրեւ ազատ ապրանք ընդունել. ի միջի այլոց, եթէ այդքան թանկ է նստակ ապրանքը, գուցէ դրա պատճառներից մէկը Պարիզից Մարսէյլ տեղափոխելն է, գուցէ ապագայում աւելի ձեռնտու լինի պատւէրը անել Մարսէյլի մի վաճառականի միջոցով։*

Ի՞նչ է նշանակում «չմոռանաք Լօրիսի հաշւոյն ֆրանքը»։ Աւելի պարզ գրիր։

Կովկասից առանձին նորութիւն չկայ հաղորդելու։ Թիֆլիզի ռումբերը սոցիալ-դէմոկրատներին է եղել։ Ի՞նչ էր նշանակում այդ դէպքում Համոյի հեռագիրը cousin-*ի մասին։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1., Այսինքն Իզմիրի (Ոսկեհանք) ընկերները ծրագրուած դաւադրական գործողութիւններ առայժմ չկատարեն:

2.- Վիշապ – ծածկանուն Պոլսոյ:

3.- Խօսքը Յոնան Դաւթեանի եւ Միքայէլ Վարանդեանի մասին է:

4.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի:

5.- Գոմանը զէնք-զինամթերք վաճառող փարիզեան հաստատութիւն է:

595

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 48-3, *էջ* 80-86

Պէյրութ (Ծոց) Սիմոն Զաւարեանին (Սմբատ) ուղղեալ այս նամակը գրուած է երկու տարբեր անձերու կողմէ: Առաջին մասը, համեմատաբար երկար, կը պատկանի Միք. Տէր Մարտիրոսեանի (Մար) գրչին, իսկ վերջին էջը, որ կը սկսի «Մի քանի խօսք աւելացնենք վերոյիշեալին» խօսքերով, գրուած է Ռոստոմի կողմէ: Ապտիլ Համիտի դէմ գործուած անյաջող մահափորձին (1905 թ. Յուլիս 21) միայն հինգ օր ետք շարադրուած այս գրութիւնը, իր շահեկանութեան համար, կու տանք ամբողջութեամբ:

յուլիս 25

ԾՈՑ
Սմբ[*ատ*]*ին*

Մինչեւ նամակիս հասնիլը անշուշտ լսած կը լինես Վիշապում պատահածի մասին: Առաջին հեռագիրը այդ մասին շատ աղքատ տեղեկութիւն էր տալիս. «Սուլթանի Սէլամլըքի արարողութիւնից դուրս գալու ժամանակ մի ռումբ պայթեց, որին զոհուեցան իբր սպանուած եւ մեռած 80*-ի չափ մարդիկ. նիւթական վնասը ահագին է. Սուլթանը միայն պատահաբար ազատուեցաւ:*

«Նրանից յետոյ եղած հեռագիրները թէպէտ աւելի մանրամասն են տեղեկութիւն տալիս, բայց ինչպէս երեւում է, դեռ չեն կարողացել հասկանալ իսկութիւնը. նրանց բովանդակութիւնը համառօտելով՝ քեզ ենք հաղորդում. դէպքը պատահած ժամանակ, ըստ մի հեռագրի, Սուլթանը մզկիթումն էր, ըստ միւսի, արդէն դուրս եկած սանդուխքի առաջին աստիճանի վրայ էր, ըստ երրորդի, մզկիթի բակից նոր դուրս էր գալիս»:

Պայթիւնը այնչափ ուժեղ է եղել, որ այնտեղ գտնուող իտալացի ծովային նաւապետը յայտնել է, թէ իր բոլոր փորձերի մէջ մի այդպիսի զօրեղ ձայն չէ լսած. նրա ձայնը 10*-աւոր կիլոմետր հեռու է տարածւել: Մեռած են եւ վիրաւորուած մօտ երկու հարիւր մարդ, համարեա բոլորն էլ թիւրքեր, որոնց թւում մի փաշա, մի ներքինի, մի օֆիցեր, մի քանի զինուոր. ամբողջովին փչացել են* 25*-ից աւելի կառքեր եւ սպանուած* 70*-ի չափ ձիեր: Օտարականներից մեռած են մի աւստրիացի կին եւ մի իտալացի կին: Ցնցումը այնչափ մեծ է եղել, որ մզկիթի մօտ գտնուող ժամացոյցի աշտարակը ճեղքւել է: Պալատի մօտ գտնուող օտարներին ու դեսպաններին յատկացուած բալկոնների բոլոր ապակիները, պնակները փշրւել, վայր են թափւել: Խիստ քննութիւն է նշանակւած. ձերբակալւած մարդկանց թիւը* 300*ից անցնում է:*

Թիւրք կառավարութեան կատաղեցնում է այն իրողութիւնը, որ հեղինակների ով լինելը հասկանալ անկարելի է դառնում. կասկածում են թէ բոլղարներին, յետոյ՝ հայերին, յետոյ արաբներին եւ վերջապէս jeune *թիւրքերին. բայց ոչ մի եզրակացութեան չեն հասել. մեծ կասկած կայ եւ պալատականների նկատմամբ, ուստի եւ պալատում խիստ քննութիւն է նշանակւած:*

Մերոնք բոլորն էլ ազատ են եւ վաղը այստեղ կը լինին. մենք մանրամասնութիւնը չգիտենք, ուստի եւ քեզ կը գրենք, երբ մերոնք կը հասնեն: Ըստ երեւոյթին գործի անյաջողութիւնը հետեւանք է այն ցաւալի իրողութեան, որ մերոնք գործը

կատարել են առանց աւելի ուզելու զոհ տալու։ Ենթադրելով թէ՝ «Սէլամ դուր» զինուորական հրամանը տալու պէս՝ Սուլթանը դուրս կը գայ մզկիթից, մերոնք լարել են մեքենան եւ դուրս եկել վտանգի շրջանից։

Բայց այդ անյաջողութեան աւելացրին եւ մի անհեռատեսութիւն. իսկոյն երկրորդ օրը դեսպաններին պաշտօնական թղթեր են ղրկում, որով ցոյց են տալիս, թէ հայի գործ է։ Առ այժմ ջարդի ձայն չկայ. կարծում ենք, որ թիւրք կառավարութիւնը նշանակութիւն չի տալիս այդ թղթերին. լաւ կը լինի, եթէ այդ բանում համոզուին։ Գէթ այս անյաջողութեանը չ՚աւելնար եւ ջարդի սարսափը, որ ներկայ պարագայում խիստ աղիտաբեր կը լինի։

Փարիզում Զօբանեանը դիմել է Լօրիսին(1) եւ յայտնել է թէ ըստ իր լսածների, դաշնակցականները Կիլիկիայում բոմբային ցոյցեր պիտի կատարեն եւ դրա համար էլ խնդրել է, թէ ի սէր ազգի խաղաղութեան՝ այդ բանը չանել։ Մենք կարծում ենք, որ դա մի խորամանկութիւն է, տարածելու համար այդ լուրը, որ բոլորովին սխալ է, որպէսզի ապագայում իրենց անելիք որեւէ կեղտոտութիւն արդարացուի այն փաստաբանութեամբ, թէ ազգը փրկելու համար այդպիսի մի ստորութիւն թոյլ տալ ներելի է։

Հարցրած ես քո հասցէին ղրկուած colis*-ի մասին եւ զարմացած, թէ ինչու են այդ ձեւով ղրկել. մենք տեղեկութիւն չունինք այդ մասին. հաւանական է, որ Վարդանն(2) է ուղարկել. բայց ի՞նչ հասցէով, չգիտենք։ Անպատճառ դու հասցէն գիտես, գրիր մեզ, մենք յետ կը պահանջենք եւ կը ղրկենք որպէս* échantillon*(3)։ Վարդանը այստեղ չէ,նա վաղուց Կովկաս է մեկնած։ Լեռնավայրի համար գնուած զէնքերը մնում են իրենց տեղում։ Պայթուցիկի մի մասը Ոսկեհանք է փոխադրուած։ Ձեր շրջանին յատկացուած գումար չկայ, գրել ենք Կովկաս. յոյս ունինք շուտով կը ստանանք եւ եթէ ձեր շրջանին պէտք է կը ղրկենք։ Բաֆֆիի գրքերից մի-մի օրինակ այստեղ ունինք. եթէ քեզ ղրկենք, այստեղ չի մնալ։ «Հայրենիք»ի(4) մասին կը գրենք խմբագրութեան որ ղրկեն քեզ։*

Ուզածդ գրքերից որը որ գտնել կարելի է, կ՚ուղարկենք, հակառակ դէպքում ղրկել չենք կարող։

Մի քանի խօսք աւելացնենք վերոյիշեալին(5)։

Սաֆոն, օրիորդը եւ Ռուբինան(6) արդէն այստեղ են։ Նրանց բացատրութիւնից երեւում է ուրիշ բան էլ։

Պայթումի հետեւանքը ցոյց տուեց, որ եթէ զոհւելու էլ լինէին մարդիկ, դա չէր օգնել գործին, որովհետեւ նիւթի կործանիչ ուժը 15 *մետրից աւելի չի անցել, մինչդեռ մասնագէտների հաշուով, եղած քանակութիւնը* (123 *կ*[*իլոգրամ*]) *նոյնիսկ* 100 *մետրի վրայ ամէն ինչ պիտի կործանէր եւ աւերէր։ Մեզ համար հիմա երկու մեծ հարց կայ*

1) *Մե՞զ վրայ վերցնել արդեօք այդ գործը հրապարակով (դեսպանները իրենց ստացած պրոկլամացիաներին տրամադրւած են կարեւորութիւն չտալ եւ հայերի գործ չհամարել փորձը), թէ թողնել մթութեան, անորոշութեան մէջ, (հրատարակելու կողմնակից է Սաֆոն. մենք հակառակ ենք, մանաւանդ որ դեռ հնարաւոր ենք համարում վերսկսել գործը մի ուրիշ ձեւով) մանաւանդ որ պալատական ինտրիգներ փնտռելով, սկսել են բանտարկել եւ աքսորել մարդիկ։ Եւ*

2) *Ի՞նչ անի Ոսկեհանքը։ Եթէ անմիջապէս սկսի իր գործը, դա կարող են իսկոյն կապւել Պոլսի գործի հետ եւ միանգամից կը պարզւի, որ առաջինն էլ եղել է հայերի բանը(7)։ Բացի այդ Պոլսի օրինակը ցոյց է տալիս, որ Ոսկ*[*եհանքի*] *պատրաստու-*

թիւնները բաւարար համարել չի կարելի, որ անհրաժեշտ է նորից նստել, ստուգել, նորոգել, մի աշխատանք, որ երկար ժամանակ կը պահանջի։

Երկու օր է խօսում ենք. դեռ մի որոշ համաձայնութեան չենք եկել։ Հաւանական է, կանգ առնենք հետեւեալի վրայ — Ոսկեհանքում գործը սկսել լուրջ պատրաստութիւններից յետոյ միայն եւ միաժամանակ յայտարարենք երկուսի մասին էլ։

Տիրանին նամակ չկարողացանք գրել. Ռ[ոստոմ]ը շատ մեղաւոր է նրա առաջ։ Կ'աշխատենք այս օրերս ուղղել իր սխալը։

Վարդի(8) *խնդիրը շատ է ծանրանում, նա սկսել է իր անամօթ հրատարակութիւնները եւ Պալք. Կետր. Կոմիտէն այսօրւայ նամակով յայտնում է, թէ մտադիր [է] ուժի դիմել, եթէ դրամը չյանձնի։*

Այդ քիմիական գրքերից լաւ կը լինի ձեռք քաշես։ Ոչ մի դրական օգուտ չենք սպասում դրանից։ Ձեռնարկը պատրաստւում է մի մասնագէտի ձեռքով, որ յատկապէս պարապել է այդ խնդրով եւ հիմա Ֆ-ում մի դպրոց է կազմել։ 4-5 հոգի կը պատրաստուին այդտեղ. այնուհետեւ նա կ'անցնի ուրիշ տեղ, Սարուստան եւ այնտեղից Վրէժստան(9)*։ Ձեռնարկը այնուամենայնիւ խամ մարդու ձեռք տալ չի կարելի. նա կարող է օգտակար լինել միայն նրա համար, որ գործնականապէս պարապել է եւ իր աչքով տեսել է։ Դու մի շտապիր, սովորողներից մէկը ձեր շրջանն է գալու։ Ձեռնարկի առաջնորդութեամբ նա գործնականապէս կը պատրաստի այդտեղ բոլոր ցանկացողներուն։*

1.- Յայտնի գրող Արշակ Չօպանեանի մասին է: Լորիսը՝ Յովհաննէս Լոռու-Մելիքեանն է:

2.- Խանասորի Վարդանը (Մեհրաբեան Սարգիս):

3.- Ֆրանսերէն՝ նմոյշ:

4.- «Հայրենիք»ը պաշտօնաթերթն էր Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէին:

5.- Այստեղէն նամակը կը շարունակուի Ռոստոմի ձեռագրով:

6.- Երեքն ալ մասնակից Ապտիլ Համիտի դէմ մահափորձի գործողութեան: Սաֆոն (Մարտիրոս Մարգարեան) կազմակերպիչն ու ղեկավարը: Օրիորդը՝ գերմանուհի Էմիլ, բուն անունով Զէյց Մարիա, որ իբրեւ Սաֆոյի կինը մուտք գործած էր Պոլիս, Ռուբինան (Արէշեան), աւելի ուշ կինը Համօ Օհանջանեանի:

7.- Նախատեսուած էր, որ Սուլթանի մահափորձի յաջողութենէն անմիջապէս ետք Իզմիրի (Ոսկեհանք) մէջ թրքական եւ եւրոպական հաստատութիւններու դէմ խափանարարական քայլեր առնուին:

8.- Վարդ-Պատրիկեան, որ արդարեւ իր դրամական զեղծումներուն եւ բարոյական սայթաքումներուն պատճառաւ ի վերջոյ պիտի արտաքսուէր կուսակցութենէն եւ ահաբեկման ենթարկուէր:

9.- Սարուստանը՝ Կովկասն է, Վրէժստանը՝ Ատրպատականը:

596

Պատճէններու մատեան No 89, *էջ* 79

1905 *յուլ.* 29

Ուս[անող] Սարգսեանին, Հայդէլբերգ

Յարգելի ընկեր,

Ի պատասխան Գ. Մեհրաբեանցի եւ Կ. Թելիթեանի նամակի շտապում ենք յայտարարել, որ Bedros Manoukian *անունով անձը* New York-*ում խաչագողական կազմակերպութեան անդամ է լինելու։ Դաշնակցութիւնը ինչո՞ւ պէտք է նէրներ եւ նպաստներ Ամերիկայի միջոցով ստանայ։ Մենք շատ գոհ կը լինենք, եթէ կարողանաք աջակցել մեզ գտնելու համար այդ պարոնների բոյնը. խնդրենք տեղեկանալ եւ յայտնել մեզ ըստ կարելոյն շուտով այդ Մանուկեանի հասցէն եւ թէ ինչ միջոցներով, ինչ ճանապարհով են նոքա ստանում գումարները։*

Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

597

Պատճէններու մատեան No 89, *էջ* 80

1905 *յուլ.* 29

Արշակ Մեղրեանին, Ցիւրիխ

Յարգելի ընկեր,

Դժբաղդաբար չպիտի կարողանանք օգտուել ձեր պատրաստակամութիւնից՝ ամառս Կովկաս անցնելու եւ գործելու։ Արեւելեան բիւրոն իր վերջին նամակով խնդրում է չուղարկել այլ եւս կազմակերպութեան հաշուով ուսանողներ, որոնք մի քանի ամիս են միայն մնալու գործի մէջ։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

598

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 251-52

29 *յուլիսի*

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ(1)

Ստացել ենք կոմիտէի նամակը փոխադրութեան նոր միջոցի մասին։ Անհամբեր սպասում ենք ձեր դիմումի հետեւանքին։ Բայց մի բան ենք խնդրում, այդ տեսակ նամակները երբեք բաց թանաքով չգրել։ Բաց գրեցէք միայն այն բաները, որ կազմակերպական գաղտնիք չեն պարունակում։

Ստացանք նաեւ Կրպոյի նամակը։ Կ՚օգտուենք ուղարկած լուրից։

Աթէնքից պատրաստւում է գալ ձեզ մօտ Սարհատը(2), *որին մենք առաջարկել ենք զբաղւել փոխադրութեան խնդրով։ Նա բաւական յարմարութիւններ ունի, որովհետեւ կապեր ունի յոյն կոնդրաբանդիստների*(3) *հետ։ Եթէ այս պարագան բաւական է, հրաւիրեցէք նրան ձեզ մօտ գալու եւ խօսելու, իսկ եթէ ոչ, սպասէք նրա նամակին եւ յետոյ ըստ այնմ վարւեցէք։ Մենք նրան գրել ենք, որ մանրամասը տեղեկութիւն տայ ձեզ իր գալու անհրաժեշտութեան մասին եւ առանց ձեր համաձայնութիւնն ստանալու ճանապարհ չընկնի։ Նրա հասցէն* Jean Jacob, Poste Restante, Athènes։

Այդտեղից դուք զինւորներ էք ուղարկել Բուլղարիա. գնացածները այնտեղ չեն մնացել. ուրիշ տեղեր են գնացել։ Դադարեցրէք ուղարկելը, որովհետեւ զուր տեղից ճանապարհածախս է կորչում։

1.- Պաքում ուղարկուած նամակ, կողքին գրուած՝ «Ստացած»։

2.- Սարհատ, աւելի ճիշդ Սահրատ, Ժան-Ժագոպ – ծածկանուն Յակոբեան Յակոբի, Իզմիրի եւ Կիլիկիոյ ծանօթ գործիչներէն, որուն վստահուած էր այժմ զէնքի փոխադրութեան գործը։

3.- Մաքսանենգներու։

599

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 253-58

օգ. 1 [1905]

Մ. Ք.(1)

Եթէ այսքան ժամանակ ձեզ չենք գրել Վ[իշապ]ի գործի մասին, մի նեղանաք, գլուխներս շատ էր խառը հիմնաւոր մի բան գրելու համար։ Նախ եւ առաջ յայտնենք ձեզ, որ բոլորն էլ ողջ եւ առողջ դուրս են եկել, Ռուբինան, Սաֆոն, Օր. Էմիլը եւ Զարեհը այստեղ են։ Թորգոմը եւ Քրիսը(2) *կը լինեն շուտով Բուլղարիա։*

Անաջողութեան պատճառները հետեւեալներն են՝

1) *Սահմանափակւել են միայն մի ձեռնարկով – կառքով։ Մտադրութիւն է եղել երկրորդ կառքը աւելացնել, իբր պահեստի ոյժ, բայց թողնւել է։ Թողել են նոյնպէս խնձորների*(3) *գործածութեան միտքը։ Բոլորովին վստահ են եղել, թէ մի կառքը բաւական է։*

2) Որոշած լինելով մարդկային զոհ բոլորովին չտալ, գործադրում են ժամացոյց, որի միջոցով առաջ պիտի գար պայթումը։ Հաշւած են եղել, որ մզկիթից դուրս գալուց անցնում է 1 ր[ոպէ] 55 վայրկ[եան] հասնելու համար այն կէտին, որ ամենամօտն է կառքին։ Երբ հնչել է փողի ձայնը, մզկիթից դուրս գալը աւետող, կառքում եղածները (Ռուբինան եւ Զարեհը) լարում են ժամացոյցը եւ թողնում հեռանում։ Բայց մզկիթի դրանը մէկը մօտենում է եւ մի բան է ասում. Նժոյգը (4) ուշանում է եւ դեռ մզկիթի աստիճաններից չիջած պայթումը լսւում է։ Եթէ 0.5 րոպէ առաջ պայթէր, հաւանականութիւն կայ, որ զոհ գնար։ Հաւանականութիւն ենք ասում, որովհետեւ կար աւելի հիմնական բացասական պատճառ

3) Պայթումի ուժը։ Մասնագէտների հաշւով գործածւած քանակութիւնը (123 ք[իլօ]) բաւական է եղել 100 մետրի վրայ ամէն ինչ սրբելու, մինչդեռ նրա աւերիչ ուժը տարածւել է միայն 15 մետր շառաւիղով։ Այս պարագային, եթէ Նժոյգը նոյն իսկ գտնւէր ամենամօտ եւ բաց կէտում, նա դիպւածով միայն կարող էր զոհւել։ Նի՞ւթն է եղել կիսափչացած թէ արկղը թերութիւններ է ունեցել, թէ ուրիշ պատճառներ են եղել, դեռ որոշ բան դժւար է ասել։

Զնայած որ միաժամանակ ուղարկւած են դեսպաններին մեր պահանջները, մեր կնիքով, բայց որովհետեւ հետքը չի գտնւել եւ դրա հակառակ գտել են նշաններ, կասկածներ յարուցանող ուրիշների վրայ, ընդհանրապէս տրամադրւած են այդ գործը հայերին չվերագրել,— գուցէ եւ այն պատճառով, որ ձեռնտու չէ վերագրելը — այլ բուլղարներին, երիտասարդ տաճիկներին, եւրոպական անիշխանականներին, մանաւանդ պալատական ինտրիգներին։ Բանտարկւած են արաբներ (կապում են արաբական ապստամբութեան հետ), աքսորւում է գաղտնի պալատական ոստիկանապետը եւ իր պալատի մէջ բանտարկւած է թագաժառանգ Ռեշադը։ Միւս դահաժառանգները խիստ հսկողութեան տակ են առնւած։

Այս պարագաներում մենք զգուշացանք հրատարակել իբրեւ մեր գործը, չաւելացնելու համար ձեռնարկի անաջողութեանը ջարդի հաւանականութիւնը։ Գործի ամէն մանրամասնութիւն կը հրատարակենք յատուկ յաւելւածով։

Աւելի դժւար դրութեան մէջ ենք Ոսկեհանքի վերաբերեալ։ Ի՞նչ անել հիմա։ Խորհրդի որոշմամբ նա պիտի շարժւէր, եթէ Վ[իշապ]ի դէպքից առաջանար ջարդ եւ եւրոպական պետութիւնները չմիջամտէին։ Մենք աչքի առաջ չէինք ունեցել ներկայ պարագան՝ անաջողութիւնը եւ հեղինակների անյայտ մնալը։ Զգիտենք, թէ ինչ խորհուրդ տալ, իսկ նրանք սպասում են։

Եւրոպական մամուլը հարկ եղած ուշադրութիւնը չդարձրեց, մանաւանդ Ֆրանսիականը։ Գերմանացիք աւելի գրեցին։

Վարդի խնդիրը աւելի ծանրանում է։ Նա հիմա իր Շարժումի(5) մէջ սկսել է տպագրել դաշնակցական ընկերների եւ մարմինների այլ եւ այլ նամակներ, գաղտնապահութեան սահմանը անցնելով։ Պալք[անի] Կ. Կոմիտէն ուղարկել է մեզ մի զեկոյց, որ խնդրում են տպագրել Դրօշակի մէջ։ Դրանով նրանք պահանջում են Վարդից անյապաղ վերադարձնել գումարները։ Եւ ինչպէս մեզ գրում են, որոշել են դիմել բռնի ուժի։ Յուլիս 5-ի եւ 12-ի նամակներով խնդրել էինք յայտնել մեզ, թէ ձեր կողմից ինչ դիմումներ էք արել Վարդին ուղարկած դրամի վերաբերեալ, ինչու, ինչ նպատակով Պիոնեանի հեռագրի մէջ փոխանակ իսկական գումարի դրել էք 400 fr. ինչո՞ւ այս հարցերին շուտով չէք պատասխանում. մեզ շատ կարեւոր է իմանալ, թէ ինչ միջոցներ էք ձեռք առել կամ հարկ էք համարում ձեռք առնել դրամը յետ ստանալու համար։ Մասնաւորապէս անհրաժեշտ է իմանալ, Բարսեղեանի առաջին երկու նամակների վրայ գաղտնի թանաքով բան կա՞ր գրուած, թէ ոչ։ Եթէ երկուսի

վրայ էլ եղել են՝ հեռագրեցէք Oui, *եթէ միայն առաջինի վրայ* première, *եթէ միայն երկրորդի վրայ* seconde։ *Եթէ բոլորովին չի եղել —* Non. *Հարկ ենք համարում աւելացնել, որ Բարսեղեանի այն նամակի ետեւը, որ մեր հասցէին էր եկել, կար պատւիրուած իրերի ցանկը, «Սիրելի Վարդ» վերանագրով։ Արդեօք դա Վարդին ուղղած նամակի պատճէնն էր, թէ սխալ է առաջ եկել։ Նրան գրածը մեզ է ուղարկել եւ ընդհակառակը։ Այս կէտն էլ խնդրում ենք պարզել նամակով։ Բայց առաջին հարցերին անպատճառ հեռագրով պատասխանէք։*

Ուղարկել էիք Մարիամի անունով 5.000 *ր.։ Դա ի՞նչ փող է։*

Սէհէնտեանը(6) *գալու է մի քանի օրից յետոյ։*

Զէնքի փոխադրութեան համար դարձեալ մի քանի ծրագիրներ ունենք։ Տեսնենք, թէ որն է յաջողելու։ Փորձում ենք եւ վրացիների հետ։ Սրանց ներկայացուցիչը այստեղ էր. ասում էր, որ ապրանքի ընդունումը ապահովուած է, ինչ քանակութեամբ էլ լինի։ Դժւար են համարում ճանապարհ ձգելու գործը։ Մենք ասացինք, որ Էսէրների հետ միասին այդ գործը մեզ վրայ կ՝առնենք եւ դա շատ դիւրին բան է։ Միայն թէ խնդրում ենք ձեզանից ծանօթանալ մի փորձառու մարդու միջոցով, թէ որքան իսկապէս ապահով է ընդունումը։ Զէ՞ որ վրացիները խամ են այդ գործում, եւ նրանց կարող է թւալ, թէ ամէն ինչ լաւ է։ Միաժամանակ մտածէք այն միջոցների մասին, որոնցով հարկ պիտի լինի մեր բաժինը անցկացնել իր տեղը։

Մենշեւստվօ-*ները*(7) *ները այստեղ էլ մեզանից փոխ առան* 1.000 fr. .....*-ի առիթով. նրանք դիմում արեցին Էսէրներին եւ սրանց միջոցով մեզ՝ միւս սոց. դեմոկրատ կուսակցութիւնների հետ միասին կազմելու միջկուսակցային կոմիսիա օգնութեան հասնելու համար նաւազներին։ Մենք առաջարկեցինք, որ* 1) *կոմիսիան լինի մնայուն, ամէն այդօրինակ դէպքի համար եւ* 2) *որ հրաւիրւեն եւ այն կուսակցութիւնները, որոնք մասնակցում էին մեր կոնֆերանսին, մասնաւորապէս Սակարտվէլոն։ Զընդունեցաւ մեր առաջարկը, մենք էլ չուզենալով տեղիք տալ կարծելու, թէ խոյս ենք տալիս համաձայնութիւնից, յայտարարեցինք, որ մտնում ենք եւ աւելացրինք միաժամանակ, թէ մնայուն կոմիսիայի առաջարկը դնելու ենք կուսակցութիւնների խորհրդակցութեան։ Մի յիմար բան դուրս եկաւ, մեր բացակայութեան ժամանակ Բունդի առաջարկով ընդունւել է կոմիսիայի մէջ եւ հայ սոց. դ*[*եմոկրատ*] *կազմակերպութիւնը։ Սրանց դերը այստեղ անամօթութեան է հասնում, ամենայիմար լուրեր տարածում են մեր մասին, օգտւելով այն հանգամանքից, որ դրանցով զբաղւելու ժամանակ եւ տրամադրութիւն չունենք։*

1.- Ռոստոմի ձեռագրով եւ քովը հաստ մատիտով գրուած «բանկի հաց. – ստացած»:

2.- Բոլորն ալ Ցուցականի մասնակիցներ, որոնք Եըլտըզի կառքին պայթելէն ետք յաջողած էին հեռանալ Պոլիսէն (Վիշապ): Ցիշուած անունները կը վերաբերին Ցուցական մարմնին, որ կազմակերպիչն էր Սուլթան Ապտիլ Համիտի մահափորձին: *Ռուբինան՝* Արէշեան Սոֆիան է: *Սաֆոն՝* Մարգարեան Մարտիրոս, Քրիստափոր Միքայէլեանի եղերական մահէն ետք՝ գլխաւոր կազմակերպիչը մահափորձին: *Օր. Էմիլը՝* գերմանուհի էր, մաս կը կազմէր «կանանց խումբին» եւ Պոլիս մտած էր իբրեւ Սաֆոյի կինը: *Զարեհը՝* (Խաչիկեան) ուժանակով բեռցուած կառքին կառապանն էր: *Թորգոմը՝* Պոլսոյ հին գործիչներէն Սերեմճեան Արտաշէսն է: *Քրիսը՝* (Ֆեներճեան) Պոլիս մտած էր իբրեւ յոյն կամ իտալացի, Սիլվիո Ռիչչի անունով:

3.- Ձեռնառումքերի:

4.- Նժոյգը՝ Սուլթան Համիտի համար գործածուած պարագայական անուն է: Ոսկեհանքը Իզմիրն է:

5.- Շարժումը Վարդ-Պատրիկեանի խմբագրութեամբ հրատարակուող եռօրեայ էր, Վառնա:

6.- Սէհէնտեան՝ ծածկանուններէն մէկն էր Յոնան Դաւթեանի, որ արդարեւ շուտով պիտի մեկնէր Կովկաս:

7.- Ռուսատառ՝ մենշեւիկները. երկրորդ բառը ընթեռնելի չէ:

600

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 259

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Կրկնել Վ.[իշապ]ի դէպքի անաջողութեան մանրամասնութիւնները։

Այդտեղ է գալու Մայիլեանը, նրա հետ անպատճառ տեսնուեցէք։ Նա պէտք է զէնք բերէր իր հետ։ Նա մի առաջարկ էր արել մեզ. մենք խնդրեցինք, որ ինքը զբաղուի դրանով, իբր մի մարդ, որը ծանօթ է քիչ թէ շատ վաճառականական ձեւերին. բայց նա դժբախտաբար արտասահմանից դուրս գնաց։ Խօսեցէք հետը մանրամասը, դրա ձեւը առայժմ աւելի մատչելի է։ Իրեն յայտնէք, որ իր յանձնարարած մարդը դեռ չի երեւացել։

Ստացել ենք Նիթրայի(2) *ուղարկած «Կարմիր խաչի» թղթերը, որ նա կորսուած է կարծում. ստացանք նաեւ* No 213 *նամակը։*

Կնիքը կ'ուղարկենք։ «IV»*-ը «կենտրոնական» խօսքից առաջ դրինք, ահա մտցրած փոփոխութիւնը*(3)*։*

1.- Ռոստոմի ձեռագրով եւ հաստ մատիտով գրուած է թուականը՝ «օգ. 3»:
2.- Յար. Շահրիկեանի:
3.- IV-ը Սարուստան-Ռուսաստանի Հ.Յ.Դ. կազմակերպական ցանցին մէջ կը կազմէր Ոսկանապատ-Պաքուի Կ. կոմիտէութիւնը: Հարցը կը վերաբերի այս վերջինին համար պատրաստուած կնիքի առաքման:

601

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 260-61

3 *օգ.*

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ

Իմերետի նաւով ճանապարհ է ձգուած 10 *մաուզէրական ատրճանակ* 3000 *փամփուշտով*, 2 *կապոց լրագիր ու բրոշիւրներ, բոլորը երկու պայուսակի մէջ։ Ռեստորատոր* Monté*-ին վճարուած է* 300 fr., *որովհետեւ ուրիշ պայմանով չի ուզեցել ընդունել։ Մենք նորից գրելու ենք, որ Մարսէյլ ոչինչ չվճարուի։ Իսկ ինչպէ՞ս վարուենք, եթէ այդ պայմանով տանող չլինի։ Յետոյ աւելի լաւ չէ՞, որ դուք ինքներդ այդտեղ պայմանաւորուէք. գուցէ աւելի արժան կտրէք։ Եթէ նոյն գնով էլ լինի, դարձեալ ձեռնտու է, որ վճարը այդտեղ անուի եւ ոչ Մարսէյլ։*

Այդտեղից դուք մի քանի զինուորներ էք ուղարկել Բուլղարիա։ Գնացողները այնտեղ չեն մնացել, փոխադրուել են ուրիշ տեղ։ Աւելորդ ճանապարհածախսեր էք անում։ Եթէ այսպէս կամ այնպէս հարկաւոր է մէկին ճանապարհ ձգել, ձեռքը տուէք նամակ, ուր նշանակուած լինի, թէ ճանապարհածախս վճարուած է եւ թէ նամակաբերին այլեւս ոչինչ չպիտի տուի կազմակերպութեան սնտուկից։ Շատ պահանջկոտ է Սամսոն անուն մի զինուոր, որը շարունակ ճանապարհորդում է։ Բուլգարիայից գնացել է Եգիպտոս եւ տեղ հասնելով ճանապարհածախս է ուզում Բաթում վերադառնալու համար։

602

Պատճէններու մատեան No 89, *էջ* 85-86

1905 *օգ*[*ոստոս*] 3

Պալք[*անեան*] *կենտր*[*ոնական*] *կոմիտէին, Ֆիլիպէ*

Ընկերներ,

Ընկեր Տիգրանեանի եւ Հայկազունու համար անցագիր յոյս ունինք չուտով հասցնելու։ Տղաները թող հիմնովին սովորեն, բնաւ չաճապարեն։ Ռաչոն թող վերադառնայ այնտեղ, որտեղից իրեն ուղարկել են, իսկ եթէ որեւէ արհեստ գիտէ՝ երկրի մէջ մնալու համար. եթէ աչքը բաց տղայ է, կարող է ուրիշներին սովորեցնել, եթէ մի խօսքով դուք յարմար էք գտնում նրան նախապատրաստական մի գործի համար, գրեցէք, որպէսզի յանձնարարենք նրան Լեռնավայրի մարմին(1)։

Նոյն բանը կ՚ասէինք Կարապետ Տէմիրճեանի մասին, եթէ նա աւելի յարմարութիւններ չունենայ Վասպուրականի շրջանի համար։ Այս դէպքում հարկ կը լինի սպասել Սարգսի նամակին Վրէժից(2)։

Ուրախ ենք ընկեր Զարդարեանի(3) *Բոլգարիա անցնելուն։ Մեր սրտագին ողջոյնները նրան։ Անձնական պարապմունք գտնելուն ի հարկէ կը հոգաք, իսկ մինչ այդ, խնդրենք, եթէ կարիք ունանայ, միջոցներ տաք կազմակերպութեան անտուկից. մի քանի օրից յետոյ նրան առանձին նամակ կը գրենք։*

Ձեր ուղարկած զեկոյցը Վարդի մասին կը տպագրենք որեւէ ձեւով, իսկ ինչ վերաբերում է ձեր որոշմանը՝ դիմել ուժի, այդ մասին որոշ կարծիք յայտնել դեռ չենք կարող։ Մենք սպասում ենք Արեւելեան բիւրոյի նամակին, ուր պիտի լինին մանրամասնութիւններ այն նամակների մասին, որ գրւած են եղել չէկի հետ միասին։

Վ[*իշապ*]*ի մասին չենք յայտատարում մեր կողմից*(4)։ *Յատուկ յաւելւած ենք տալիս գլխաւորաբար դէպքի մանրամասնութիւնները արձանագրող. փափագողները բաւական կան իրենց վրայ առնելու համար «հեղինակի» դերը։ Պարիզում երիտասարդ տաճիկներից մէկը Ջէվէտ բէյ եկել է եւ մերոնց յայտնել, թէ իրենք են անողները, թէ այս ինչ ժամանակ այսքան ռումբ է փոխադրւած եւ այլն։ Մերոնք ի հարկէ զարմացմամբ լսել են այդ բացառիկ պատրաստութիւնների մասին եւ նոյնիսկ յայտնել են մի ինտերվիւ, որ հրատարակւած է* Humanité*-ի էջերում եւ արտացոլում միւս թերթերում։*

Թիւֆէ[*ն*]*կչիէվի հետ տեսնուեցանք։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— Սարգսեանին եւ Հայկազունուն խնդրենցինք դրամ տալ թէ այդտեղի ծախքերի եւ թէ ճանապարհի համար Ռուսաստան անցնելու։

1.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ, ներառեալ Սուրիան եւ Լիբանանը:
2.- Վրէժ – ծածկանուն Ատրպատական-Թաւրիզի: Սարգիսը՝ Բարսեղեանն է, բուն անունով Օտապաշեան Պօղոս:
3.- Ծանօթ գրագէտ Ռուբէն Զարդարեանն է:
4.- Իմա՝ Սուլթան Համիտի դէմ կազմակերպուած ահաբեկչութեան հեղինակութիւնը չենք յայտարարեր:

603

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 262-64

օգ. 10-ին

Մ. Ք.(1)

Ստացանք Բարսեղեանի ձեռքով Ցուլ. 12 գրած նամակը, որով յայտնում էք, թէ մեր վերջին 3 նամակները ստացել են։ Բայց ինչո՞ւ այդ նամակներում չօշափած բազմաթիւ հարցերի մասին ոչինչ չէք գրում։ Կարծես չէր կարելի գործադուլի մասին բաց գրել, իսկ նրա տեղը աւելի կարեւոր հարցերին պատասխանել։

Վլադիկաւկասի ճանապարհին բռնուած մի ֆուրգոն ապրանքը մերը չլինի՛ ...

Մի անգամ եւս խնդրում ենք ըստ կարելոյն մանրամասը գրել, թէ երբ եւ ինչ է գրել Վարդին, Պիոնեանին։ Մասնաւորապէս հարկաւոր է իմանալ թէ Վարդին գրուած առաջին երկու նամակների մէջ գաղտնի թանաքով բան է եղել, թէ ոչ։ Նամակներից առաջինը եղել է Տէր-Դաւթեան ստորագրութեամբ, իսկ երկրորդը Կիրակոսեան։

Երրորդ անգամն ենք յայտնում,— այո՛, Պետրոսի հասցէով ուղարկւած փողը (40) *ստացել է։ Նիթրան էլ Ոսկ[անապատ]ից է հարցնում, պատասխանեցէք, որ այո՛, ստացել է եւ թող ուղարկեն եւս* 40 (2)։

Ստացել է նոյնպէս Մարիամի 5-*ը։*

Շուտով այդտեղ կը լինեն Սէհէնտեանը եւ Լիպարիտը(3)։ *Երկուսն էլ կազմակերպութեան տրամադրութեան տակ են։ Սէհէնտեանը լաւ կը լինի, եթէ մնայ Թիֆլիզ։ Նա փորձւած բիւրոյական ոյժ է։ Ունի մի քանի հին դաշնակցականի պահանջներ եւ հայեացքներ, չխրտնէք այդ ձեւերից։ Ամսական տալիս ի նկատի ունեցէք, որ կին էլ ունի։ Ոչ մի պաշտօն չի առնիլ, որպէսզի ամբողջովին տրւած լինի*(4)։

Լ[իպարիտ]ին մենք աչքի առաջ ունէինք առաջարկելու վրացիների հիմնելիք թերթի համար, որի մասին գրել էր Մհերը։ Այդ պաշտօնի համար նա ունի բոլոր յարմարութիւնները։ Բայց եթէ դա կաշկանդելու է նրան, կամ մասամբ նոյնիսկ կապելու, աւելի լաւ կը լինի, եթէ հրաժարւի մնայուն պաշտօնից, լինի ազատ աշխատակից։ Մի խօսքով այնպէս յարմարեցրէք, որ ապրուստի խնդիրը կամ լեգալ գործունէութիւնը ոչ մի բանով չխանգարի նրա դաշնակցական գործունէութեան, որին նա պատրաստ է տալ իր բոլոր ուժերը։

Վ[իշապ]ի գործը(5) *կարծես բացւելու վրայ է։ Բանկը ուզում է յայտնել տաճիկ կառավարութեանը* Calecjian-*ի եւ Ակնունու անունները, որոնք Ռիպսին*(6) *փող են փոխադրել։ Խիստ բողոքներից յետոյ բանկի վարչութեանը* (*Պարիզի*) *խոստացել է «մտածել», բայց երեւի վերջ ի վերջոյ յայտնելու է, որովհետեւ ֆրանսիական կառավարութեան մատը խառն է երեւում։*

Գուցէ մեզ էլ այս երկու օրս դիմում լինի ոստիկանութեան կողմից։ Տաճիկ կառավարութիւնը պահանջել է յանձնել Զուիցերիայում ապաստան գտնողներին։ Թերթերը արդէն ձայն են բարձրացրել, թէ յանձնելու մասին խօսք էլ չի կարող լինել։ Բայց կարող են երկրից դուրս հանելու խնդիր յարուցանել։ Տեսնենք։

1.- Մեծ Քաղաքին քով թանձր մատիտով գրուած «օգ. 10-ին», ապա ռուսերէն անընթեռնելի կրճատուած երկու բառ։

2.- Երկու պարագաներուն եւս խօսքը 40.000 ռուբլիի մասին է, ինչպէս որ «Մարիամի 5-ը», հինգ հազար է: Պետրոսի (զինագործ) իսկական անունն էր Տէր Յովհաննիսեան Բագրատ (1877-1937): Նիքրա – ծածկանուն Շահրիկեան Յարութիւնի: Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի:

3.- Սէիէնտեանը՝ Յոնան Դաւթեանն է. Լիպարիտը՝ Նազարեանցն է, ծանօթ Լեռնեան ծածկանունով (1874-1947):

4.- Գործածուած է այն իմաստով, որ ամբողջովին կուսակցական-հասարակական գործին նուիրուի:

5.- Վիշապի (Պոլիս) գործ – այսինքն Սուլթանի մահափորձ:

6.- Սոֆի Ռիպս, գերմանուհի, Սուլթան Համիտի մահափորձին օժանդակողներէն:

604

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 265-66

օգ. 11-ին

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ [*Պաթում*]

Յուլ. 18-ից յետոյ ձեզ գրուած է յուլ. 29-ին եւ օգ. 3-ին: Ստացանք ձեր 15/VII *նամակը: Ստացել ենք նաեւ Կրպոյի երկու նամակները, վերջինը* 19/VII *գրուած:*

Մի անգամ եւս խնդրում ենք ապահովութեան համար կազմակերպութեան գաղտնիքները պարունակող նամակները գրել գաղտնի թանաքով: Բաց թանաքով գրէք միայն այն մասը, որ հրատարակութեան համար է սահմանուած, կամ որի յայտնուելուց գործը չի տուժել:

Նաւերի վրայ մարդ գտնելու նպատակով գնացել էր մեր մի ընկերը, բայց յարմար մարդ չի գտել: Աշխատում են դարձեալ: Մարդ գտանք թէ չէ, իսկոյն կ'ուղարկենք ապրանք: Բերդանի ծայրեր(1) *մեզ խոստացել են Գերմանիայում:*

Տեղեկութիւններ մեզ հարկաւոր են ոչ միայն տպագրութեան համար: Ձեր թռուցիկը չենք ստացել:

Սարհատի(2) *մասին գրել էինք յուլ. 29-ի նամակով: Դեռ մեր նամակը չստացած, նա բեռցրել է մի նաւ* 100 *գրա հրացան,* 3 *մանլիխէր,* 60 *մաուզէր (երեւի ատրճանակ)* 30,000 *գրայի եւ* 12,700 *մաուզէրի փամփուշտ: Ինքն էլ ճանապարհ է ընկնում ձեզ մօտ: Մեզ համար դարձեալ հարց է մնում, ձեր համաձայնութիւնը առե՞լ է նախօրօք, թէ ոչ: Ձգիտենք նոյնպէս, որքան յարմարութիւն կ'ունենաք այդ քանակութիւնը մի անգամից ստանալու եւ պահելու:*

Եթէ Սարհատը առանց նախօրօք ձեզ հետ պայմանաւորուելու է այդ քայլը արել, խիստ վարուեցէք հետը: Նա մի առանձին ձգտում ունի ինքնագլուխ բաներ անելու: Մանրամասը հաշիւ կ'ուզէք եւ հաշուի պատճէնը մեզ շուտ կ'ուղարկէք:

Ի՞նչ եղաւ Լեւոնը, որին ուղարկել էիք:

1.- Ծայրը փամփուշտն է:

2.- Սարհատ – աւելի ճիշդ Սահրատ – ծածկանուն Յակոբեան Յարութիւնի:

605

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, *էջ* 267

11-*ին օգ.*

ՎԱՐՇԱՎԱ

Ռուսական փամփուշտներին յարմարեցրած հրացանի մասին սպասում ենք տեղեկութիւնների։ Ստանաք թէ չէ, անմիջապէս ուղարկեցէք։ Ալեքի նամակը համարեա թէ չկարդացւեց, շատ տեղ չոր գրչով էր գրւած(1)։

Զէնքի համար այլ եւ այլ տեղերից եկածները թող ժողովւեն, խորհրդակցեն։ Գուցէ հնարաւոր լինի գործը յանձնել մի երկուսին։

Սպասում ենք նոյնպէս .....-ի(2) *պատասխանին տրանսպորտի վերաբերեալ։*

Շուտով գուցէ անցնի ձեր քաղաքով մեր ընկեր ուսանողներից մէկը։ Նրա միջոցով հաղորդեցէք Ա. Բ. զէնքի խնդրի վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները, գնման եւ փոխադրութեան գործը կանոնաւորելու համար։

Խնդրենք պարզ գրել երկրորդ հասցէն (օրիորդի)։

1.- Այսինքն առանց մելանի. անշուշտ գաղտնի թանաքով գրուած նամակի մասին է:
2.- Ռուսատառ անընթեռնելի անուն:

606

Պատճէններու մատեան No 89, *էջ* 88-89
(*Փաստ.* 46-62)

1905 *օգ.* 12

Թափառիկին(1), *Ալէքսանդրիա*

Յարգելի ընկեր,

Ստացել ենք ձեր յուլիս 31 *եւ* 26 *նամակները։ Այդտեղ եկած Սամսոնին նպաստ այլեւս չպէտք է տալ, ճանապարհածախս նոյնպէս։ Դա Բաթումից եկել է Բուլգարիա, այնտեղից Եգիպտոս, հիմա այդտեղից ուզում է Օդեսա մեկնել. պէտք է վերջ տալ այդ ճանապարհորդութիւններին։ Մի գործ գտէք այդտեղ, թող նրանով պարապի։*

Քանի որ Կարոն եկել է Լեռնավայրի(2) *ընկերների պատճառով, պէտք է ճանապարհածախսը հոգալ մինչեւ Բաթում։ Տուէք նրան եւ իր ընկերոջ մի մի ատրճա-*

նակ, լաւ տեսակից, 200-ական փամփուշտներով։ Ճանապարհելիս խնդրենք յայտնել Բաթումի մարմնին, թէ ինչ է տրուած ձեր կողմից։ Մեր կողմից որեւէ յանձնարարական աւելորդ է, քանի որ հայրենիք են վերադառնում։

Սմբատի մասին մենք շատ երկմիտ ենք։ Մենք էլ վաղուց է, նրանից բան չենք ստացել։ Զլինի թէ մեր նամակները բռնւում են։

Ներփակ ուղարկում ենք Տիկնանց «Կարմիր Խաչին» ուղղած նամակը, որ դուք ուզել էիք։ Եթէ ձեւը անյարմար է, խնդրենք չյանձնել. ի միջի այլոց Խարախանեանը ի՞նչ գործի է հիմա. չի կարելի սպասել, որ քիչ քիչ սկսի իր պարտքը վճարել։

Մանաւեանը գանգատւում է, որ իր եղբօր ազատման գործի համար դուք ոչինչ չէք անում։ Պահանջեցէք նրանից հաստատ երաշխաւորութիւն գործի ապահովութիւն եւ վստահութիւն ձեռք բերելուց յետոյ միայն նպաստը տուէք։ Եթէ չենք սխալւում, առաջին անգամը եւս նոյն բանն էինք ձեզ առաջարկել։

Ներփակ ուղարկում ենք մի նամակ եւս, որ Տիրանի համար է։ Խնդրենք այդտեղ փոստը ձգել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Թափառիկ – Բժ. Կարպիս Փաշայեան, Դաշնակցութեան ներկայացուցիչ Եգիպտոսի մէջ։
2.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ։

607

Պատճէններու մատեան No 89, *էջ* 90

1905 *օգ.* 12

«Կարմիր խաչի» Տիկնանց միութեան վարչութեան, Աղէքսանդրիա

Յարգելի տիկիններ,

Կազմակերպութեան սնտուկից Միսաք Խարախանեանցին տրւած 496 *դհ. ողջ գումարը խնդրենք ընդունել «Կարմիր Խաչի» հաշւին։*

Խորին յարգանքով՝
Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

608

Պատճէններու մատեան No 89, *էջ* 93

1905 *օգ.* 17

Վ. Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր 16 *օգ. նամակը։ Պայուսակները պատրաստել տուէք, առաջիկայ նաւով գնալու են երկու ընկերներ։ Ամէն մի պայուսակի քաշը* 20 *ք[իլո]ից աւել չլի-նի։ Ապագայի համար եւս այժմեանից պատւիրեցէք պայուսակներ։*

Արձակուրդ վերցրէք երկու ամսով։ Ձեր ամսականը, ինչպէս առաջ էլ գրուած է, կը ստանաք կազմակերպութեան սնտուկից։

Պարիզ կը գրենք, որ կարճերից(1) *դարձեալ ուղարկեն։*

Նաւահանգիստ(2) *կը յայտնենք ձեր պատւէրը։ Նաւի համար աչքի առաջ ունինք երկու ընկեր, որոնցից մէկը այստեղ է եւ նաւերի վրայ ծառայել է ժամանակին։ Այս մասին կը գրենք յետոյ։*

Ընկեր Շատիկի(3) *մասին մանրամասը կը յայտնենք վաղը։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ[ԵԱՆ] ԲԻՒՐՕ

1.- Կարճը ատրճանակն է:
2.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի:
3.- Շատիկեան Պօղոս (1874-1951), կուս. գործիչ:

609

Պատճէններու մատեան No 89, *էջ* 94

1905 *օգ.* 18

Յակովբ Արամեանին, Վառնա

Յարգելի ընկեր,

Ստացանք ձեր ուղարկած նամակը եւ Վահանի թուղթը։ Խնդրենք յայտնել ընկեր Թորգոմին, որ տուփը ստացուել է իր ժամանակին։

Նիւթի մասին ապահով եղէք։ Թորգոմը ձեզ կ՚ասի, թէ ինչ պէտք է անել։

Նորերս ստացանք մի քանի լուսանկարներ, պատրաստուած Վառնայում, որոնք ծախւում են կոմիտէի օգտին։ Դա բնաւ ցանկալի բան չէ, որովհետեւ պատկերները կարող են ընկնել եւ այնպիսիների ձեռքը, որոնք ի չարը գործ կը դնեն։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

610

Ռոստոմի այս գրութիւնը վերջին էջն է Պալքանեան Կ. կոմիտէին ուղղուած իր մէկ նամակին: Գրուած է «Դրօշակ»ի խմբագրութեան պաշտօնաթուղթի վրայ. կը կրէ No 35 թիւը եւ կնքուած է Պալքանեան Կ. կոմիտէի դրոշմով: Մեր տպատրութեամբ այս էջը մաս կազմած է այն թղթածրարին, որ յատկացուած պիտի ըլլար նոյն ժողովի կողմէ նիւթական զեղծումներով ամբաստանուած Վարդոյի (Յակոբ Վարդ-Պատրիկեան) հարցի քննութեան:

Շուտով ձեզ կ'ուղարկենք Վարդոյի բացատրական նամակի պատճէն: Իսկ առայժմ հարկ ենք համարում հաղորդել ձեզ Արեւել. բիւրոյի նամակից հետեւեալ կտորը՝

«Մենք արդէն գրել ենք ձեզ Վարդոյի խնդրի մասին. կրկնում ենք՝ Վարդոյին գրել ենք երկու նամակ: Մէկի մէջ գաղտնի թանաքով յայտնել ենք պատւիրած իրերի ցանկը, որի պատճէնը միաժամանակ ձեզ ենք ուղարկել: Երկրորդ նամակով մենք խնդրել ենք, որ նա մեր ուղարկած փողը յանձնի Պիոնեանին(1)*: Երկու հեռագիր ենք տուել նոյն իմաստով:* 400 fr. *չենք մենք գրել, այլ* 5,000 fr.- *կարծում ենք, որ դա հեռագրական սխալ է»:*

Դժբախտաբար նամակագիր ընկերը (*նա է եւ փող ուղարկողը*) *հիմա բանտարկուած լինելով, անկարող պիտի լինինք մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ եւս ստանալ, խնդիրը ամբողջութեամբ պարզելու համար:*

Աւելի լաւ կը լինի, եթէ Կ. կոմիտէն յստակ շրջաբերական հանէր, Վարդոյի խնդիրը պարզաբանող, եւ թերթը չզբաղեցնէր նրանով: Վարդոյի նամակը կ'ուղարկենք, բացատրելով մի քանի կէտերը:

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Կարապետ Պիոնեան, անդամ Պալքանեան Կ. կոմիտէի:

611

Պատճէններու մատեան No 89, *էջ* 96

Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. ժողովի թղթածրարի Վարդոյի (Յ. Վարդ-Պատրիկեան) դատական գործէն No 36:

19 *օգ.* 1905
Ֆիլիպէ

Պալք. Կ. Կոմիտէին

Ընկերներ,

Ստացել ենք ձեր յուլ[իս] 27 *նամակը։*

Ընկեր Տիգրանեանը ստացած կը լինի արդէն իւր անցագիրը։ Նրա անունով եկած դրամը փոստատունը յետ ուղարկեց Կովկաս։

Եթէ եկող լինի, Մարզպետունու(1) *համար կ՝ուղարկենք մի ատրճանակ։*

Վարդոյի հեռացնելու մասին չէր կարելի յայտարարել Դրօշակի մէջ, քանի որ կանոնադրութիւնը արգելում է։ Դեռ եւս չգիտենք, թէ [ինչ] միջոցներ է ուզում ձեռք առնել Արեւել. Բիւրոն յետ ստանալու համար դրամները։ Իսկ մենք հաւանական է առաջիկայ համարում պաշտօնական ազդարարութիւն անենք ձեր ուղարկած զեկոյցի փոխարէն(2)*։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Մարզպետունի ծածկանունն է Ղազարոս Ղազարոսեանի (1878-1918), կուս. գործիչ Պուլկարիոյ, ապա Ատրպատականի մէջ:

2.- Նշուած Արեւմտեան բիւրոյի յայտարարութիւնը պաշտօնական «Ազդ» վերնագրով՝ կը հրաւիրէ «պարոն Վարդոն, որ 15 օրուան միջոցին տայ դրական ապահովութիւն ամբողջովին վերադարձնելու համար վերոյիշեալ գումարները մինչեւ 1/13 հոկտեմբեր 1905 թ.»: Սոյն յայտարարութիւնը լոյս տեսած է «Դրօշակ»ի 1905 թուականի Սեպտեմբերին, No 9 (161) համարին մէջ, էջ 143:

612

Պատճէններու մատեան No 89, *էջ* 97-98

1905 *օգ.* 21

Վ. Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Շատիկի խնդրի մասին ձեր տուած հեռագիրը ստացանք։ Հակառակ մեր խոստման՝ անկարող եղանք ժամանակին որոշ եզրակացութեան գալ նրա մասին եւ ձեզ յայտնել։ Հիմա մեր գլուխը չափազանց շատ է խառը. արտաքին բարդութիւններին սպասում ենք որ աւելանան ներքին բարդութիւնները տեղական կառավարութեան կողմից։ Այսօրւայ մեր հեռագիրը ստացած կը լինէք արդէն։ Շտապում ենք նամակով յայտնել մեր այսօրւայ եզրակացութիւնը։ Շատիկի համար որոշ գործ ի նկատի

չունինք։ Այն յանձնարարութիւնը, որի մասին խօսել էր ընկեր Մէնը չի կարելի մի հաստատ, քիչ թէ շատ երկարատեւ պարապմունք նկատել։ Բացի այդ, այդ գործի համար արդէն պայմանաւորուած էինք մէկի հետ, որը մի քանի այլ պատճառներով հէնց այդ բանին պիտի գնայ։ Իր խնդիրը մանրամասը քննելու հնարաւորութիւն չկայ այն պարզ պատճառով, որ Սմբատը(1) *հեռու է։ Մնում է ուրեմն, որ Շատիկը մի մասնաւոր պարապմունք գտնի։ Մեր խորհուրդն է, որ նա մեկնի Կովկաս։ Եթէ համաձայն է մեր առաջարկին, շուտ խնդրենք յայտնել, որպէսզի ճանապարհածախսը ուղարկենք։*

Առաջիկայ նաւը, ինչպէս իմացանք, Anatolie *է։ Այդ նաւով պիտի երթայ մեր տղաներից մէկը։ Ուրեմն կարելի կը լինի որոշ մաս նրա հետ ուղարկել։*

Նաւահանգստից(2) *լուր առանք թէ չէ, իսկոյն ձեզ կը հաղորդենք։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Սմբատ – ծածկանուններէն մէկը Սիմոն Զաւարեանի:
2.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի:

613

Պատճէններու մատեան No 89, *էջ* 101-102

1905 *օգ.* 22

Վ. Ղազարեանին, Մարսէյլ

Յարգելի ընկեր,

Հաստատում ենք մեր երէկւայ նամակը։ Ստացանք ձեր 21 *օգ.-ինը։*

Տեղեկութիւն ստացանք, որ ձեզ ուղարկւած է դարձեալ 25 *հատ։ Խնդրենք ստանալուն մասին յայտնէք Գ*[*ոման*]*ին։*

Տեղեկացէք նոյնպէս, Նովորոսիրսկ գնացող ճանապարհորդներին որտե՞ղ են խուզարկում, Բաթումի՞ առաջ, թէ Նովորոսիրսկի։ Եթէ Բաթում չեն նայում, կարելի է համարձակ լցնել չանթաները ապրանքով։ Եւ որովհետեւ նաւը բաւական ժամանակ սպասում է Բաթումի առաջ, կարելի է նախքան մեկնիլը ապահով դուրս հանել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Նամակս ուղարկում ենք Զարեհի ձեռքով։ Նաւը նա է նստելու։ Եթէ այդտեղ իմանաք հաստատ, որ Բաթումում չեն խուզարկում Նովորոսիրսկ գնացողների իրերը, այն ժամանակ լցրէք Զարեհի համար մի երկու չանթաներ, իսկ եթէ ոչ, թող տանի չանթաների յատակի տակ յարմարեցրած միայն փամփուշտներ, որովհետեւ ատրճանակները բաւական տեղ կը բռնեն։

Ներփակ անցագրերը փոխել տուէք պարսից հիւպատոսարանում. ինչ ուզեն, վճարէք փոխելու համար։ Նորի վրայ թող աւելացնեն «գնում է Պարսկաստան Ռուսաստանի վրայով»։

Ն[*ՈՅՆ*]

614

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 271-73

օգ. 23-ին

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ

Ձեր ուղարկած յանձնարարականները նաւերի համար այնքան էլ պէտք չեն գալիս։ Ինչպէս երեւում է, դուք պարզ չէք հասկացրել խնդիրը։

Վերջին նաւի մարդը, օրինակ, կարծել է, թէ միայն մէկ հատ պէտք է առնել հետը։ Այս հանգամանքը աչքի առաջ ունեցէք եւ եթէ հնարաւորութիւն ունէք, խնդիրը ամբողջովին պարզելով, նոր համաձայնութեան եկէք։

Անհամբեր սպասում ենք Սարհատի(1) *ուղարկած ապրանքի մասին տեղեկութիւն ձեր կողմից։*

Ուզում ենք գործադրել եւ հետեւեալ միջոցը։ Նաւի վրայ ունենալ մի մարդ, որը շարունակ գնայ գայ։ Ամէն անգամ նա իր հետ կը վերցնի 2-3 *չէմոտան*(2), *որոնց տակը, կրկնակի յատակի տակ, պահւած կը լինի ապրանքը։ Չէմոտանի ծանրութիւնը չի կարող մատնել, որովհետեւ նայողները իրենք չէ, որ բարձրացնում են։ Այս միջոցով կարելի է ամէն անգամին փոխադրել* 20 *հատ իրենց փամփուշտներով։ Եթէ գնալ գալու ծախսը հաշւենք* 300 fr., *մինչեւ իսկ* 400 fr. 20 *հատի համար, դա թանկ չէ։*

Առաջիկայ նաւերով, օգ. 26-*ին* (*Մեսաժ*[*ըրի*]) *եւ* 30-*ին* (*Պակէ*) *այդ ձեւով բերելու են. աչքի առաջ ունեցէք։ Մի հարց։ Նովորոսիյսկ գացող ճանապարհորդների իրերը որտե՞ղ են խուզարկում, Բաթո՞ւմ, թէ Նովորոսիյսկ։ Եթէ Բաթում չէ, ուրեմն կարելի է չէմոտանները պարզապէս լցնել ապրանքով. տոմսակը առնել մինչեւ Նովորոս*[*իյսկ*] *բայց իջնել Բաթում, ապրանքը նաւից դուրս անելուց յետոյ։ Եթէ այս ձեւը գործնական է, խնդրենք հեռագրէք* Oui։ *Հեռագրի հասցէն՝* Edouard, Roseraie, 29(3)։

Եկողներից մէկին Կրպոն ճանաչում է։ Նրան աշխատէք այդտեղ մի յարմար գործ տալ, իսկ եթէ գործ չգտնւի, յանձնարարեցէք ուրիշ տեղեր։ Նա կարող է պէտքական լինել։ Երկրորդին առաջինը կը ծանօթացնի, նա պէտք է լինի գնացող եկողը։ Առաջինը կարելի է ամսիս 26-*ին դուրս գայ, իսկ երկրորդը՝* 30-*ին։*

Ստացանք այսօր Կրպոյի երկտողը։ Շատ ուրախ ենք յաջող դուրս հանելուն, բայց ինչո՞ւ ծայրերը 2000 *են, չգիտենք, մե՞զ են սխալ հաղորդել, դո՞ւք էք սխալւել, թէ բերողն է գլխից վերցրել։ Սովորութիւն արէք ապրանքը յանձնողին ստացական տալ, թւելով մանրամասը ստացած ապրանքի տեսակը եւ քանակը։*

1.- Սարհատի, աւելի ճիշդ Սահրատի (Յակոբեան Յակոբ) մասին տեսնել 29 Յուլիսի նամակի թիւ 2 ծանօթագրութիւնը:

2.- Ճամբորդական պայուսակ:

3.- Ժրնեւ՝ «Դրօշակ»ի հասցէն է:

4.- Ծայրը՝ փամփուշտն է:

615

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 273-76

Ուղարկւում է ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Ոսկեհանքի գործը բացւեցաւ։ Թելը Վիշապինը պէտք է լինի։ Ռիպսը(2) Crédit Lyonnais-*ի միջոցով փոխադրել էր մի մսագործի անունով որոշ գումար։ Երբ* Crédit Lyonnais-*ից իմացանք, որ հարց ու փորձ է եղել իրենց Պոլսոյ ճիւղից, պարզ եղաւ, որ ճիւղը յայտնած պէտք է լինի արդէն ինչ գիտէր, կամ յայտնելու է վերջ ի վերջոյ։ Անմիջապէս գրեցինք երկու ճանապարհներով Իզմիր, որ զգուշանան եւ մսագործին հեռացնեն։ Մեր նամակը երբ հասնում է, գործը արդէն բացւած է լինում, առաջին ձերբակալւողը լինում է մսագործը։*

Գործը գուցէ սահմանափակւէր մասնակի ձերբակալութիւններով, եթէ մի դիպւած վրայ չգար։ Երբ նիւթերը վտանգւած տեղից փոխադրում են մի ապահով բնակարան, այդտեղ տղաներից մէկը խաղալով երկփողանի հրացանի հետ, վիրաւորում է իր ընկերոջ։ Հրացանի ձայնից թափւում են մարդիկ եւ պահեստը բացւում է։ Գտնւած է եւ յատակագիծը(3)։ *Նիւթերի քանակութիւնը եւ յատակագիծը ահռելի սոսկում են առաջ բերել նաեւ դիւանագիտական շրջաններում։ Դրութիւնը լարւած է շատ։* 95-96 *թ. անցքերի նշաններն են տեսնւում։ Որքան դեռ խամ ենք* 15 *տարի գործելուց յետոյ*!...

Դեռ այնտեղից դուրս եկած տղայ չկայ։ Կոնստանդինից(4) *նամակ էինք ստանում առաջին օրերը։ Վերջին նամակով յայտնում էր, որ շատ լուրջ վտանգւած է, այնուհետեւ ոչինչ չունենք նրանից։ Եթէ չի կարողացել դուրս գալ, ուրեմն նա էլ բռնւած է։ Լեւոնի վարմունքը միստերիա մնաց։ Թորգոմի*(5) *գրելով՝ նա առանց ընկերներին յայտնելու փախել է քաղաքից։*

Վարդի մասին դուք չգրեցիք, թէ ինչ միջոցներ էք ուզում ձեռք առնել յետ ստանալու համար ձեր 2000 *ռ.։ Պալք. Կ. Կոմիտէն առաջարկում է յայտարարել թերթի մէջ եւ եթէ չտալու լինի, մտադիր է բռնի ուժի դիմել։ Իրենց յայտարարութիւնը փոխանակ այս համարում* [*տպելու*], *մենք մի ազդարարութիւն կ՚անենք ուղղակի մեր անունից։ Դուք էլ ձեր կողմից մի մարդ ուղարկէք, որ կտրուկ պահանջի. գոնէ ձեր* 2000 *ռ. յետ ստանանք։ Որքան շատ ուշացնէք, այնքան աւելի քիչ շանս կայ ստանալու։ Սպասում ենք ձեր կարգադրութիւններին. եթէ չէք արել մինչեւ հիմա, անպատճառ արէք։ Մեր ազդարարութեան մէջ երկու շաբաթ ժամանակ ենք տալու, որպէսզի նա ապահովութիւն տայ, թէ դրամը յանձնելու է մինչեւ մի ամիս ժամանակ։*

Շվէյցարական կառավարութիւնը մինչեւ հիմա ոչինչ չի արել մեզ վերաբերմամբ, չնայած, որ դիմումներ եղել են։ Հասարակական կարծիքը այժմեանից բողոքում է, բայց կառավարութիւնը գուցէ զիջանի արտաքին ճնշման տակ, մանաւանդ Զմիւռնիայի դէպքից յետոյ։

Ընդհանուր Ժողովի հրաւիրագրեր ցրւում ենք արդէն։ Դուք էլ ձեր շրջանի մարմիններին յայտարարէք։

Ստացել ենք 40 *հ*[*ազար*] *փողը, Նիթրայի եւ Զոփուռեանի*(6) *նամակները, իրենց կնիքը։ Ուղարկեցէք դարձեալ* 40 *հ*[*ազար*]. *հարկաւոր է զէնքի համար։*

1.- Գրութեան վերեւ կայ «Մ. Ք. օգ. 24-ին», բայց ջնջուած է ու տակը, փակագծերու մէջ գրուած է «Ուղարկուած Ոսկանապատ», այսինքն՝ Պաքու: Ոսկեհանքը Իզմիրն է, Վիշապը՝ Պոլիս:

2.- Սոֆի Ռիպս, գերմանուհի, Սուլթան Համիտի մահափորձին օժանդակողներէն:

3.- Յատակագիծը Իզմիրի այն քարտէսն էր, որուն վրայ նշանակուած էին պայթեցուելիք կառավարական եւ եւրոպական հաստատութիւնները:

4.- Կոստի Համբարձումեան, որ ի վերջոյ յաջողած էր ազատիլ եւ ապա անցնիլ արտասահման:

5.- Ցուցականի անդամներէն, իսկական անունը՝ Սերեմճեան Արտաշէս: Լեւոնը՝ Գիլոմեանն է:

6.- Յաջորդաբար՝ Յար. Շահրիկեան եւ Լեւոն Թադէոսեան:

616

Պատճէններու մատեան No 89, *էջ* 104-105

1905 *օգ.* 26

Վ. Ղազարեանին, Մարսէյլ
Յարգելի ընկեր,

Նաւահանգստից գրում են, որ առաջին առաքումը յաջողութեամբ ստացած է. միայն ծայրերի թիւը 2000 *է նշանակւած։ Ընկեր Մէնի ասելով՝ հէնց այդքան է ուղարկւած եղել։ Խօսք չկայ նոյնպէս բրոշիւրների եւ թերթերի կապոցների մասին։ Հարկաւոր է ամէն անգամին ստացական առնել յանձնակատարից, պայմանական խօսքեր նշանակելով, եւ պահանջել, որ ինքն էլ Նաւահանգստից ստացական ներկայացնի յանձնւած ամբողջ ապրանքի համար։*

Նաւի վրայ պէտք է առայժմ բաւականանալ մէկ մարդով։ Եթէ առաջին փորձերը յաջողւեն, այն ժամանակ կարելի է ի հարկէ թիւը աւելացնել, իսկ ինչ վերաբերում է Շատիկին, մենք կ'ուզենայինք համաձայնել ձեզ հետ, եթէ նա իրեն թոյլ չտար գրել մեզ մի անվայել քարտ, ուր նա նոյնիսկ սպառնում է մեզ «մամուլով»։ Համաձայնեցէք, որ այդպիսի մի սպառնալիքից յետոյ մենք ոչ մի գործ չենք կարող ունենալ նրա հետ։

Մնտուկը եւ վալիսները լցրէք, ինչով որ յարմար կը դատէք։ Առաջին անգամին թող քանակութիւնը քիչ լինի, միայն թէ մնտուկները կասկած չյարուցանեն։ Բացւելու պարագային Զարեհը թող յայտարարի, թէ ապրանքը բերել է վաճառելու համար, լսած լինելով, որ այդ ապրանքը սուղ է Կովկասում։

Անցեալ նամակում մեր յիշած Գ[*ոմա*]*նը Պարիզից ապրանք ուղարկողն է։ Ապրանքը ստանալուց յետոյ գրասենեակին ստորագրութիւն տուէք, գրասենեակը ինքը կը հաղորդի Պարիզ։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

617

Պատճէններու մատեան No 89, *էջ* 106

1905 *օգ.* 26

Տիրանին, Ալէքսանդրիա
Յարգելի ընկեր,

Ստացանք քո 12 *օգ. նամակը։ Դուրս գալդ ի հարկէ անխուսափելի էր, քանի որ հանգամանքները այնքան վատ դասաւորուեցին։ Մենք եւս ոչինչ չկարողացանք անել քեզ համար, ինչպէս գրել է քեզ Ռոստոմը իր* 12 *օգ. նամակով, որ դու ստացած չես լինիլ։*

Մենք կարծում ենք, որ դու դուրս գալովդ չպէտք է քեզ հեռացած համարես Լ[եռնավայրի] գործից(1)*։ Ինչպէս դու էլ տեսնում ես, գործը սկզբից սխալ հիմունքների վրայ է եղել դրուած, եւ Սմբատի ու Վարդանի*(2) *աշխատանքը սիստէմի փոփոխման մէջ է կայացել։ Խորհուրդ ենք տալիս մնալ առայժմ այդտեղ, աշխատել մի մասնաւոր պարապմունք գտնել եւ դրսից կարելի եղածին չափով օգնել Լ[եռնավայր]ի գործին։*

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ, ներառեալ Սուրիան եւ Լիբանանը:
2.- Սմբատը Սիմոն Զաւարեանն է, Վարդանը՝ Խանասորի, բուն անունով Մեհրաբեան Սարգիս:

618

Պատճէններու մատեան No 89, *էջ* 107

1905 *օգ.* 26

Մելքոն Վարդանեանին, Թէհրան
Յարգելի ընկեր,

Այստեղ մեզ հարկաւոր են գալիս պարսկական անցագրեր (գաղթականների համար)։ Խնդրենք ուղարկել որքան կարող էք, 5-10 *հատ։ Գերադասելի են ընտանեկան անցագրերը, եւ որքան մեծ ցոյց տրուած լինի ընտանիքը, այնքան լաւ։ Մի մասը թող վիզա արուած լինի Ռուսաստանի վրայով, միւս մասը՝ Բէնդեր-Բուշերի։ Խնդրենք չուշացնել, ծախքը գրէք մեր հաշուին։*

Խնդրենք նաեւ տեղեկութիւններ հաղորդել հայ-պարսկական յարաբերութիւնների մասին Թէհրանում եւ շրջակայքում։ Վտանգի դէպքում ո՞ր աստիճան հայ ազգաբնակութիւնը կարող է պաշտպանուել։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

619

Պատճէններու մատեան No 89, *էջ* 108-109
(*Փաստ.* 46-63)

1905 *օգ.* 27

Ալէքսանդրիոյ ենթակոմիտէին
Յարգելի ընկերներ,

Ձեր օգ. 11-*ի նամակը ստացել ենք։*

Եթէ մինչեւ հիմա չենք պատասխանել Ալէքսանդրիոյ ընկերների գրութիւններին, դրա պատճառը այն էր, որ հեռու լինելով՝ դժուարանում էինք մեր վճռական կարծիքը յայտնել ծագած պառակտումների առթիւ։ Այստեղի գործերն էլ այնքան շատ են, որ հնարաւորութիւն չունինք դժբախտաբար մեր ընկերներից մէկին ձեզ մօտ ուղարկել, իբրեւ այցելու։ Մեզ միայն մի բան է մնում, այն է՝ յանձնարարել նորընտիր ենթակոմիտէի ընկերներուն, որ առանց տարուելու այլ եւ այլ մանր խնդիրներով՝ միշտ աչքի առջեւ ունենալ միայն գործի շահը եւ շրջահայեաց ընթացքով վերջ տալ անախորժ կռիւներին։

Մ. Խարախանեանի վրայ արած ծախսը թող իր վրայ վերցնի «Կարմիր խաչը». պէտք է միայն պարտաւորացնել Պ. Խարախանեանին, եթէ անձնական պարապմունք է գտել, ամսէ ամիս վճարի իր պարտքը։

Կարապետ Ասլանեանի մասին արդէն գրած է ընկեր Թափառիկին(1), *ինչպէս նաեւ Սամսոնի մասին։*

Իսկ ինչ վերաբերում է տեղւոյդ դժգոհ ընկերներին, որոնց վրայ ամբաստանութիւններ են ծանրացած, դրանց վերաբերմամբ պէտք է ղեկավարուել «Կազմակերպական կանոնների» 123-*րդ յօդուածով, որի տրամադրութեան համաձայն չհամակերպող ընկերները պարտաւոր են կամ չէզոքանալ, կամ գործունէութեան ուրիշ վայր ընտրել։ Դուք աւելի լաւ արած կը լինէք, եթէ տեղական շրջանական ժողով կազմէք եւ հիմք ունենալով, «Կազմակերպական կանոնների» կէտերը, ինքներդ մշակէք ներքին կանոնադրութեան մանրամասը ծրագիր։*

Ի դէպ, հարկ ենք համարում պարզել մի խնդիր, որ թիւրիմացութիւնների առիթ է տուել ձեր շրջանում։ «Կազմակերպական կանոնները» տպագրուած էին սակաւաթիւ օրինակներով եւ սահմանուած էին միայն կոմիտէների համար։ Այս պատճառով էր, որ ուղարկելով Ալէքսանդրիայի եւ Գահիրէի նախկին կոմիտէներին միայն մէկ մէկ օրինակ խնդրել էինք մեր կողմից, որ կոմիտէի անդամների շրջանից դուրս չհանեն եւ հաղորդեն խմբերին միայն այն մասերը, որ իրանց են վերաբերում։ Ահա թէ ինչու բոլորովին անտեղի էին խմբերի դժգոհութիւնները այս առթիւ։ «Խորհուրդի» վաւերացումից յետոյ միայն որոշուեցաւ բաժանել բոլոր մարմիններին, ուրեմն եւ խմբերին։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ. Գ.— «Դրօշակ» կ՚ուղարկուի ձեզ այսուհետեւ 100-*ական օրինակ։*

Ն[*ՈՅՆ*]

1.- Թափառիկ – ծածկանուն բժ. Կարապետ Փաշայեանի, Դաշնակցութեան ներկայացուցիչ Եգիպտոսի մէջ:

620

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, էջ 268-70

օգ. 28-ին

Կոմսին Մ. Բ.(1)
Օր. Ադամեանի ձեռքով

Դու մեզ գրել էիր, որ քեզ նամակ ուղարկենք Աւետիքի(2) *հասցէով, բայց չէիր յայտնել նրա ճիշտ հասցէն։*

Գործ քեզ կարելի էր առաջարկել Լեռնավայրի շրջանում, դրա մասին գրուած է մեր ընկեր Ս-ին(3), *սպասում ենք պատասխանի, որը անմիջապէս քեզ կը հաղորդենք։ Բայց աչքի առջեւ ունեցիր այն հանգամանքը, որ ամբողջ կազմակերպութիւնը սկզբից լաւ հողի վրայ չի եղել դրուած։ Հին գործիչներից շատերը հեռացուած են, գործիչներ, որոնք Ս-ի եւ Վ-ի*(4) *վկայութեամբ մօտեցել են գործին, յոյսները դնելով կազմակերպութեան «առատ» եկամուտների վրայ։ Այնպէս որ նախ քան մի դրական գործ սկսելը, անհրաժեշտ է մարմինները ամբողջովին վերակազմել նոր հիմունքների վրայ։*

Մի ուրիշ գործ եւս ի նկատի ունեցիր։ «Խորհրդի» ժողովում որոշուած է ուսումնասիրել Շապին-Գարահիսարի շրջակայքը մինչեւ Ծովափ-Կիրասոն, Օրդու։ Արեւել. Բիւրոն նշանակել է երկու մարդ այդ նպատակի համար։ Եթէ կ'ուզես, ծանօթացիր Բիւրոյից գործի մանրամասնութիւնների հետ եւ իբրեւ ուսումնասիրող ճանապարհ ընկիր այն կողմերը, եթէ յարմար դատես։ Անդրանիկի(5) *եւ այլ աղբիւրներից ստացած տեղեկութիւնների համաձայն այդ անտես թողնուած վայրը լաւ ապագայ է խոստանում։*

Սպասում ենք տեղեկագրիդ, որ շատ կարեւոր է։ Խնդրում ենք, առանց ուշացնելու, պատասխանել մեր հետեւեալ հարցերին՝

1) *Ինչպէ՞ս է Կ. Կոմիտէի կազմը*(6)։ *Որ աստիճանի հիմնական են այդ կազմի մասին եղած կասկածները։ Չի՞ կարելի արդեօք առանց վտանգելու գործը վերակազմել Կ. Կոմիտէն. կա՞ն արդեօք լուրջ ուժեր դուրսը, որոնք ընդունակ են եւ յօժար կազմակերպութեան մէջ մտնելու։ Ի՞նչ են ներկայացնում «ճեմարա[նա]կանները»*(7)։

Կարելի՞ է վստահել նրանց յեղափոխական տրամադրութեան եւ տոկունութեան։

2) *Ինչպէ՞ս է, որ ուղարկւած հաշիւների մէջ պարտքի մասին խօսք չկայ, իսկ այնպէս պնդում են, թէ* 400-500 *ոսկի պարտքի տակ են։*

3) *Ի՞նչ դժւարութիւններ կարող են հանդիպել, եթէ գաւառական մարմինները բաժանւեն քաղաքի մարմնից, եթէ ներկայ Վասպուրականի Կ. Կոմիտէն վերածւի Վանի Կ. Կոմիտէի, իսկ Վասպուրականի Կ. Կոմիտէի համար կազմւի մի նոր մարմին, թէ քաղաքի եւ թէ գաւառների ուժերից*(8)։

1.- Թիֆլիս ուղղուած նամակ՝ Կոմսին (Վահան Փափազեան)։
2.- Հաւանաբար Սահակեանին (Հայր Աբրահամ)։
3.- Ջաւարեան Սիմոնին։
4.- Ջաւարեանի եւ Վարդանի (Խանասորի), երկուքն ալ անդամ Լեռնավայրի (Կիլիկիա) պատասխանատու մարմնին։
5.- Յայտնի հայդուկապետը։ Լեռնավայրը Կիլիկիան է, Ծովափը՝ Տրապիզոն։

6.- Խօսքը կը վերաբերի Վասպուրականի Կ. Կոմիտէին, ուր մինչեւ վերջերս կը գործէր Կոմս-Վ. Փափազեանը: Արամ Մանուկեանի հոն հասնելէն (1905 թ. Փետրուար) ամիս մը ետք անցած էր Կովկաս, ուր կը գտնուէր այդ օրերուն:

7.- Կ՝ակնարկուի Էջմիածնի Գէորգեան Ճեմարանէն աւարտական Համազասպ Բաղէշցեանի (Սալման) եւ իր ընկերներուն, որոնք անցած էին Վան:

8.- Ծրագիր մը՝ որ իրականութիւն դառնալու վրայ էր արդէն: Իշխանի (Միքայէլեան-Պօղոսեան Նիկոլ) ջանքերուն շնորհիւ Վասպուրականի հարաւային Լեռնային գաւառները (Ռշտունիք, Շատախ, Մոկաց աշխարհ) պիտի կազմակերպուէին իբրեւ առանձին Լեռնապարի Կ. Կոմիտէութիւն:

621

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89*ա*-2, *էջ* 276-78

օգ. 31-*ին*

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ

Միամտութեան համար սովորութիւն արէք յայտնել ամէն անգամ, թէ մեր որ նամակներն էք ստացել։

Ձեզ գրած է յուլիս 18-*ին*, 29-*ին*, *օգ.* 3-*ին*, 11-*ին*, 23-*ին*, *եւ մի երկու օր սրանից առաջ Կրպոյի հասցէով։*

Ստացանք երէկ Կրպոյի (*անունը փոխենք Մարկոս*), 21/VII *եւ այսօր* 10/VIII *նամակները։ Անատոլի նաւով ուղարկւած է* 10 *ատրճ*[*անակ*] *եւ* 1200 *փամփուշտ։*

Ինչպէս տեղեկացանք, նախորդ անգամ ուղարկւած ծայրերի թիւը եղել է 2000 *եւ ոչ* 3000, *ինչպէս մեզ էին սխալմամբ հաղորդել։ Մի ճար տեսէք, որ բերողները չգողանան, գուցէ կարելի լինի մարդ դնել ապրանքի հետ, կամ գրաւական վերցնել առաջուց։ Բերդանի մասին դեռ դրական պատասխան չունենք։ Մի հարց. կարո՞ղ էք արդեօք ապրանք հանել ռուսական նաւերից։ Եթէ այո, այդ դէպքում կարելի է Բուլղարիայից Պոլսի առաջով անցնող նաւերից օգտւել։ Եկողներ միշտ լինում են. նրանց միջոցով կարելի է ապրանք ուղարկել։ Եթէ հնարաւորութիւն ունէք, հեռագրէք* Bon։ *Հակառակ դէպքում՝* Non։ *Գուցէ անմիջապէս այդ գծով ձեզ բերդանի փամփուշտ հասցնենք։ Մի երկու մարդ նաւահանգիստը սպասեցնում ենք այնտեղ։ Ուրեմն հեռագիրը չուշացնէք։*

Իմացանք, որ նաւերը նայւում են Բաթումում։ Ձ[*արեհ*]*ը մնաց, չգնաց* 30-*ի նաւով։ Նա սպասելու է Արտ*[*աշէս*]*ին հասնելու լուրին։ Եթէ յաջող լինի, հեռագրեցէք ուղղակի Վրթանէսին*(1) Lettre écrite, *եթէ վտանգւի ինքը եւ ապրանքը՝* écrite, *եթէ միայն ապրանքը վտանգւի —* lettre(2).

Ձէմոտանների կրկնակի պատերի արանքում տեղաւորելը շատ անյարմար է եւ թանկ։ Ձենք կարծում, որ մաքսատնով յաջողութեամբ անցնի։ Մենք համարեա թէ համոզւած ենք, որ եթէ չկարողացաք Արտ.-ի բերած ապրանքը հանել մինչեւ մաքսային գործողութիւնները, Արտաշ-ը անպատճառ կը վտանգւի։ Իսկ եթէ հնարաւորութիւն ունէք ապրանքը հանել նախօրօք, այն ժամանակ ինչ իմաստ կայ պատերի արանքներում թաքցնել, քանի որ կարելի է ուղղակի պարկերի եւ ձէմոտանների մէջ լցնել։ Ուրեմն եթէ Արտ.-ի բերածը յաջողութեամբ հանեցիք եւ եթէ հնարաւոր էք համարում, որ Ձ-ը ուղղակի ձէմոտանները կամ պարկերը լցրած ճանապարհ

ընկնի, lettre écrite *հեռագրին աւելացրէք* directe *խօսքը։*

Ուրեմն սպասում ենք երկու հեռագրի 1) *մեզ՝ ռուսական նաւերի մասին եւ* 2) *Վրթանէսին՝ Զ-ի գալու ձեւը որոշելու համար։*

1.- Վրթանէսը (Ղազարեան) Մարսէյլէն դէպի Կովկաս (Նաւահանգիստ-Պաքում) առաքումներով զբաղող ընկերն է:

2.- Ֆրանսերէն՝ «նամակը գրուած» կամ «գրուած եւ կամ «նամակ»:

622

Փաստ. 402-9

Հայ-թաթարական ընդհարումներու ընթացքին, 1905 թ. Օգոստոսին Շուշիի կռիւներու մէկ նկարագրութեան աւարտին, Ռոստոմ կը գրէ հետեւեալ յաւելուածը: Յայտնենք որ պատումին հեղինակը Արամայիսն է, բուն անունով Միսակ Տէր Դանիէլեան (1874-1954): Թղթակցութիւնը տպուած է «Դրօշակ»ի 1905 թ. No 12-ին մէջ, «Հայ-թուրքական կռիւը Շուշում» խորագրով:

Որքան աշխատեցի, չկարողացայ պատրաստել տալ ամբողջութիւնը, ժամանակ եւ տրամադրութիւն չկայ։ Չկարողացայ հասցնել եւ գաւառների դէպքերի նկարագրութիւնը։ Ահագին գործ է կատարւել։

Այստեղ էր Արամայիսը, որ գործում է Վարանդայում։ Սա լաւ գրող է, սպասում է, որ մուսան գայ։ Թէեւ ուշ, բայց լաւ կը գրի։

Համբոյրներով՝
Ձեր Ռ.

Դուրս գալուցս յետոյ, ձեզանից ոչ մի լուր չունեմ։

ՆՈՅՆ

623

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, *էջ* 279-80

2 *սեպտ.* [1905]

ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Շտապեցէք փող ուղարկել։ Չէնքի երկու խոշոր ձեռնարկներ կան, որ մեծ փող են պահանջելու մի անգամից։

Մինչեւ հիմա չունենք Մ. Ք.-ի(2) *բանտարկութիւնների մանրամասնութիւնները։*

Կոնստանդինը(3) *ազատւել է, հիմա արտասահման է։*

Քաջազնունու մօտ եկող ֆրանսիացին մեր կողմից ուղարկած թղթակիցն է։ Թղթակցութիւնները ընդունելու են Պարիզի մի քանի թերթեր, ի միջի այլոց՝ եւ տարածւած Journal-*ը։ Ուրեմն հարկ եղած միջոցները ձեռք առէք, եւ որ գլխաւորն*

է, գտէք նրա համար մի լաւ թարգման մեր տղաներից, որը միաժամանակ լինի եւ առաջնորդ։

Մեզ հաստատապէս ասում են, որ Կովկասի, Լեհաստանի եւ այլ վայրերի ներկայացուցչութեան ծրագիր մշակողը Coubckai*-ինը*[?] *շատ կաշառակեր մարդ է։ Հաւատացնում են, որ եթէ մի քիչ ուտացնես, կարելի է ձեռնտու ծրագիր ունենալ հայերի շահերի տեսակէտից։*

Կրկնում ենք, մեզ ուղարկեցէք ընկերների նոր կեղծ անունների ցանկ, որպէսզի զի հեռագրով կարողանաք յայտնել, թէ ով է բանտարկւում, խուզարկւում։

Մեր տաքտիկը երեւի քիչ կը փոխւի։ Արդէն հակայեղափոխական ձայները աւելի համարձակ են լսւում։ Աւելորդ չի լինիլ մի Բայոնական ժողով։ Այդտեղ կարելի է եւ կազմել մի գործնական ծրագիր այն ուսուցիչների համար, որոնք հիմա ցրւելու են գաւառներում։ Գիւղական դատարանները պէտք է վերանորոգել, կոմիտէների կազմը մաքրել։ Այն ուժերը, որոնք ներկայումս անհրաժեշտ են, իբրեւ կուսակցներ, բայց կազմակերպութեան նորմալ ընթացքում անպէտք կամ վնասակար են, կարելի է մտցնել յատուկ զինւորական մարմինների մէջ, որոնք գոյութիւն կ'ունենան միմիայն ներկայ տագնապալից շրջանում։

Եկեղեցական վերադարձրած գումարներից պէտք է մաս վերցնել զինման գործի համար։ Կարող են ասել, որ եկեղեցին կամ վանքը պարտք է արած եղել, հիմա վերադարձնում է։

Իրաւունք ունի ժողովուրդը, որովհետեւ իսկապէս իր դառը կոպէկները տուել է նեղ բոպէներին։

1.- Ոսկանապատը Պաքուի կուս. ծածկանունն է։
2.- Մ. Ք.-ը՝ Մեծ Քաղաքն է, Թիֆլիս, այլ խօսքով Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոն։
3.- Կոստանդինը՝ Կոստի Համբարձումեանն է, որ ազատ դուրս եկած էր Իզմիրէն։

624

Պատճէններու մատեան No 89, *էջ* 119-121

1905 *սեպտ.* 5

Պալքանեան Կենտր. կոմիտէին, Ֆիլիպէ
Յարգելի ընկերներ,

Ստացանք ձեր օգ. 14*-ի նամակը։ Զարմանալի է, որ Տ*[*իար*] *Անտոնի գալու խնդրի մասին մինչեւ հիմա պատասխան չստացանք*(1)*։ Զլինի թէ մեր նախընթաց նամակներից մէկը ուշադրութեամբ չէք կարդացել։ Փութացրէք, որովհետեւ կան գործեր, որ ուրիշին յանձնել չի կարելի։*

Բերդանի հրացանների եւ փամփուշտների համար դիմեցէք եղբ. Իվանովներին Սոֆիա։ Շատ մեծ պահանջ կայ, մանաւանդ փամփուշտների։ Աշխատէք ձեռք բերել մի որոշ քանակութիւն վերջիններից, որպէսզի կարելի լինի,— Նաւահանգստից(2) *հրահանգները գալուց յետոյ — գնացողների հետ մաս մաս ճանապարհ ձգել։*

Շուշայ դէպքը բաւական լուրջ է։ Թէեւ նախայարձակները թիւրքերն են եղել, բայց մերոնք, չնորհիւ լաւ պատրաստութեան, կարողացել են պաշտպանողականից

անցնել յարձակողականի եւ հէնց սկզբից զգալի կորուստ պատճառել նրանց։ Առաջին օրւայ սպանուածների թիւն է՝ հայերից 10 *հոգի, թիւրքերից* 34։ *Երկրորդ օրը թիւրքերի սպանուածների թիւը հասնում է* 85-*ի։ Բացի այդ, այդ օրը մերոնք գերի են վերցնում* 100-*ի չափ կռւող թիւրքեր, որոնց մէջ պարագլուխներից մէկին Հիւսէյին բէկ Ջիւանչիրացին իր հետեւորդներով։ Քաղաքը եղել է մերոնց ձեռքում մինչեւ օգ.* 31-*ը, նահանգապետի, կազակներով միասին ներս մտնելու օրը։ Թէ ինչ է եղել դրանից յետոյ, յայտնի չէ մեզ. այդ օրւանից դադարել են մեր հեռագիրները։ Միայն այսօր իմացանք մի մասնաւոր հեռագրից, որ մեր ամենաեռանդոտ ընկերներից մէկը՝ Մարգար Ժամհարեանը, վտանգաւոր վիրաւորուած է։ Պաշտօնական հեռագիրներին նայելով՝ հայերի դրութիւնը վատթարացել է։ Յոյս ունինք, որ դա թիւրիմացութիւն լինի։ Կարող են տուժած լինել գաւառները, ուր թիւրքերը՝ իբրեւ յարձակողներ, ահագին խմբեր են կազմում եւ արշաւում այս կամ այն վայրը, իսկ հայերը ստիպւած են պաշտպանողական դիրք բռնել իւրաքանչիւր գաւառակ առանձին։ Այս քանի օրերս կ՚ունենանք ճիշտ տեղեկութիւններ։*

Ռաշօն, Կարօն եւ Գրիգորը թող անցնին Կովկաս, բայց անցագիր չունինք, որ ուղարկենք։

Վառնայի տղաների խնդիրը դուք կարգադրէք, ինչպէս յարմար դատէք։ Այդ կարգի խնդիրների մասին աւելորդ է մեզ դիմելը։

Վարդոյին ուղղւելու է պաշտօնական ազդ Դրօշակի ներկայ[?] No-*ում, որ արդէն յանձնւած է տպարանին*(3)։

Շուտով ձեզ կ՚ուղարկենք Վարդոյի բացատրական նամակի պատճէնը, իսկ առայժմ հարկ ենք համարում հաղորդել ձեզ արեւելեան բիւրոյի նամակից հետեւեալ կտորը՝

«*Մենք արդէն գրել ենք ձեզ Վարդոյի խնդրի մասին. կրկնում ենք՝ Վարդոյին գրել ենք երկու նամակ։ Մէկի մէջ, գաղտնի թանաքով, յայտնել ենք պատւիրած իրերի ցանկը, որի պատճէն միաժամանակ ձեզ ենք ուղարկել։ Երկրորդ նամակով մենք խնդրել ենք, որ նա մեր ուղարկած փողը յանձնի Պիոնեանին։ Երկու հեռագիր ենք տուել նոյն իմաստով։* 400 fr. *չենք մենք գրել, այլ* 5000 fr.։ *Կարծում ենք, որ դա հեռագրական սխալ է*»։

Դժբախտաբար նամակագիր ընկերը (*նա է եւ փող ուղարկողը*) *հիմա բանտարկւած լինելով, անկարող պիտի լինինք միքանի լրացուցիչ տեղեկութիւններ եւս ստանալ խնդիրը ամբողջութեամբ պարզելու համար։*

Աւելի լաւ կը լինի, եթէ Կ. կոմիտէն յատուկ շրջաբերական հանէր, Վարդոյի խնդիրը պարզաբանող եւ թերթը չը զբաղեցնէր նրանով։ Վարդոյի նամակը կ՚ուղարկենք, բացատրելով մի քանի կէտերը։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1.- Տիար Անտոն, Անտոն Գոշ (Պոյաճեան 1849-1927), հրաւիրուած էր Պուլկարիայէն ստանձնելու համար Ժրնեւի մէջ «Դրօշակ»ի խմբագրատան եւ առհասարակ Արեւմտեան բիւրոյի ներքին գործերու ղեկավարման գործը։

2.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթումի։

3.- Արդարեւ, Վարդ-Պատրիկեան Յակոբի ուղղելի պաշտօնական ազդը տպուած է «Դրօշակ»ի 1905 թ. Սեպտ.ի No 9 (161), էջ 142, ուր կը պահանջուի ենթակայէն մինչեւ 1/13 Հոկտ. 1905 թ. վերադարձնել իր իւրացուցած կազմակերպական գումարները (4673 արծաթ եւ 1339 ոսկի պուլկարական լէվ, առաւել 2000 ռուբլի)։

625

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, No 89ա-2, *էջ* 281

Թիւ 89ա-2 թղթածրարի վերջին փաստաթուղթն է Ռոստոմի ձեռքով գրուած 6 Սեպտեմբեր 1905-ին: Քանի մը օրէն Ռոստոմ Ժընեւէն պիտի մեկնէր Կովկաս, անձամբ հետեւելու համար հայ-թաքարական ընդհարումներու ընթացքին: Սեպտեմբեր 22-ին Ռոստոմ արդէն հասած է Թիֆլիս: Թիւ 89ա-2-ի յաջորդ եւ վերջին 3 նամակները՝ ուղղուած Նաւահանգիստ–Պաքում (1905 թ. Սեպտեմբեր 11, 14 եւ 27) կը պատկանին Յար. Գալֆայեանի գրչին:

6 *սեպտ.*

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ

Մեր ֆրանսիացի բարեկամներից մէկը Gabriel *անունով գալու է Կովկաս։ Օդեսայից դուրս գալու օրը նա հեռագիր է տալու հետեւեալ հասցէով՝* Սարիբէկու Արութինովչու արմեանսկայա ցերկով(1)։ *Հարկ եղած կարգադրութիւնները արէք հեռագիրը ստանալու եւ նրան ընդունելու նաւի վրայից։ Ինքը բարձրահասակ մարդ է, միրուքը թրաշած, ձեռքին գուցէ բռնած ունենայ մի ֆրանսերէն թերթ։ Բացի ֆրանսերէնից ոչ մի ուրիշ լեզու չի հասկանում։*

Սպասում ենք մեր օգ. 31-*ի նամակի պատասխանին։*

Բուլղարիայից եկած պէտք է լինեն երկու երիտասարդներ։ Ընդունեցէք իբրեւ ընկերների եւ յանձնարարեցէք Մ. Ք.։

Անհամբեր սպասում ենք Շուշայ եւ Բագւայ դէպքերի մանրամասնութիւններին. ինչպէս է այդտեղի դրութիւնը։

1.- Ռուսերէն, Սարիբէկ Արութինովին, հայկական եկեղեցի:

626

Փաստ. 32-37

Գաղտնի թանաքով գրուած երկու էջնոց նամակ: Վայրը ճշդուած չէ, բայց այդ թուականին, հայ-թաքարական ընդհարումներու օրերուն, Ռոստոմ անցած էր Կովկաս, ուրկէ Թիֆլիսէն կամ ուղղակի Ղարաբաղէն կը գրէ: Գրութեան մէջ յիշուած Լեւոնը կրնայ Թադէոսեանը ըլլալ (Չոփուռեան):

9/22 *սեպտ.* 1905

Սիրելիս,

Ջնայած որ այսքան մօտեցել եմ, բայց նոյն անորոշ դրութեան մէջ եմ, ոչ մի լուր դեռ չունեմ։ Ճանապարհը բոլորովին կտրւած է, եւ շատ վատ լուրեր են պատում։ Ասում են թէ Շուշուց մի քանի օմնիբուսներ են ճանապարհ ընկել, բայց Եւլախ չեն

հասել. հաւանական են համարում, որ տղամարդկանց սպանած լինեն, իսկ կանանց առեւանգած։ Մի վրացի թէ ռուս, երկու զինուորով ճանապարհ են ընկնում Եւլախից, բայց անհետ կորչում են։

Լսեցի, որ Լեւոնն էլ հիւանդացել է, երեւի դէպքերը շատ վատ են ազդել։ Դժբախտութեան գլխաւոր պատճառը սաստիկ քամին է եղել, որ հրդեհը տարածել է ահագին տեղ։ Երեւակայիր, նոյն քամին Բալախանում(1) նպաստել է թիւրքերին։ Այնպէս որ թիւրքերը հաւատացած են եւ տարածում են, թէ Աստուած իրենց հետ է։

Ինձ նման շատերն են սպասում լուրերի։

Եթէ մի բան իմանամ, կը հաղորդեմ։

Առ այժմ ցտեսութիւն։ *Քո Ռ.[ՈՍՏՈՄ]*

1.- Բալախանի - նաւթարդիւնաբերական աւան Պաքուի շրջանին մէջ։

627

Փաստ. 402-2

1905 թ. հայ-թաթարական ընդհարումներու օրերուն Ռոստոմ անցած էր Կովկաս եւ ուղղակի Արցախէն կարգ մը գրութիւններ կ՚ուղարկէր Ժընեւ՝ տեղւոյն վրայ մղուող կռիւներուն մասին։ Մէկ մասը (օրինակ թիւ 402-1, 402-3 եւ 402-4 տպուած են Հ. Տասնապետեանի խմբագրած «Ռոստոմ – Նամականի»ի մէջ (Պէյրութ, 1999, էջ 396-405)։ Այս մէկը, թիւ 402-2, որ կը պակսի, մաս կը կազմէ անոնց, հետեւաբար նաեւ անսկիզբ ըլլալու տպաւորութիւնը կը թողու։ Գրուած պէտք է ըլլայ 1905 թ. վերջին ամիսներուն։

1905

Դէպի թիւրքերը տածած բնական հակակրութիւնն էր արդեօք պատճառը, թէ մի այլ բան, դա դժուար է որոշել։ Բայց փաստը այն է, որ ոչ միայն զինուորները, այլ եւ կազակները օգնում էին հայ կռուողներին՝ հակառակ իրենց մեծերի խիստ հրամաններին։

……(1)

առաջարկում։ Հայերը ուրախութեամբ ընդունում են այդ լուրը եւ սկսում են անմիջապէս հաշտութեան պայմանները կազմել։ Գաւառապետը նշանակած լինելով իբրեւ տեսակցութեան վայր Խունունցի տունը, հայերը որոշած ժամին չտապում են դէպի այդ տունը, սակայն չափազանց մեծ է լինում նրանց զարմանքը, երբ կէս ճանապարհին գալիս են յայտնում նրանց, որ թիւրքերը ինչ որ պատճառներով այդ ժամին ներկայ գտնուել չեն կարող։ Յետոյ է միայն պարզւում, որ հաշտութեան գործը խանգարել են դրսից թափւած աւազակապետները, որոնք չտապել են քաղաք թալանի, առեւանգումների վարդագոյն երազներով։

Թիւրքական առաջին նենգութիւնն էր այդ։ Քաղաքի վերի դիրքի հայ կամաւորները գրգռուած թիւրքերի խաբէութիւնից, որոշում են ոչնչացնել հայ քաղաքամասի թիւրքական տները, որ մինչեւ այդ ժամանակ բոլորովին ապահով էին։ Անմիջա-

պէս գնդակների մի ամբողջ տարափ են թափում այդ տների վրայ։ Թիւրքերը պաշտպանւում են իրենց բնակարաններից, սակայն երկար չի տեւում նրանց դիմադրութիւնը, եւ մօտ մի ժամ յամառ հրացանաձգութիւնից յետոյ նրանք թողնում են իրենց տները եւ լաց ու շիւանով սկսում են փախչել դէպի զօրանոցը։ Տեղական զօրքի հրամանատար Իվանովը առնում է նրանց իր հովանաւորութեան տակ, ապահով կերպով հասցնում է նրանց մինչեւ զօրանոց։ Հրացանաձգութեան ժամանակ սպանւում են մի քանի թիւրքեր, վիրաւորւում է մի լեհ զինւոր, սպանւում է մի ռուս զինւոր։ Հայերի կողմից ընկնում է ըէալական նախկին աշակերտ 17ամեայ Արտաշէս Տէր Կարապետեանը։ Թիւրքերին քշելուց յետոյ, տղաները հրդեհի են մատնում բոլոր թիւրք տները, մանաւանդ որ թիւրքերը արդէն սկսել էին հրդեհների շարքը, Թամիրեանցի գործարանը կրակ տալով։ Այդպիսով հայոց թաղը ազատւում է երեւանեան ճանապարհը փակող այն փոքրիկ թիւրքական գազանանոցից։

Նոյն օրը իրիկնադէմին Հ. Յ. Դաշն. հրամանատարը որոշում է հրդեհով ոչնչացնել թիւրքերի ամենաուժեղ դիրքերից մէկը՝ Ղօդունց տունը։ Այդ աւազակաբնի հրդեհումը պիտի կատարուէր հրամանատարի ղեկավարութեամբ։ Տասի չափ դաշնակ. կամաւորների հետ նա կուում էր այդ ժամանակ Ղօդունց տնից փոքր ինչ վերեւ գտնուող հայկական դիրքից։ «Ովքեր են ձեր մէջ այն քաջերը որոնք կը կամենային մեր գնդակների տարափի տակ մօտենալ թշնամու դիրքին եւ այրել այն»,— հարցնում է նա։ Կարճատեւ լռութիւն եւ կամաւորների շարքից դուրս է գալիս Իշխանը եւ մանկական ժպիտով յայտնում իւր ցանկութիւնը հրամանատարի ամէն մի հրամանը կատարելու։ Ուժգին հրացանաձգութեան եւ գնդակների տարափի տակ նա իջնում է ուղղակի դէպի թշնամու դիրքը։ Մօտենում է Ղօդունց տան դրան, ողողում է դուռը նաւթով եւ կրակում։ Այդ անելուց յետոյ Իշխանը սխալմամբ դառնում է ոչ թէ դէպի հրամանատարի դիրքը, այլ դէպի մի ուրիշ դիրք։ Այս վերջին դիրքի անշնորհք տասնապետը հրամայում է նորից Իշխանին իջնել դէպի թիւրքերը եւ նորից կրակել տանը — որովհետեւ սա արդէն հանգել էր։ Այս անգամ արդէն առանց գնդակների տարափի։ Թշնամու գնդակը գալիս զարկում է Իշխանին եւ Ղարաբաղի Գողիաթը մեռնում է կէս ճանապարհին։ Իշխանի մահից յետոյ միայն սպառնալիքով յաջողւում է հրամանատարին նոր հրդեհաձիգ գտնել։ Քիչ անցած հուրը արդէն լափում էր թշնամու դիրքը։ Այդ օրը երեկոյեան Շուշի հասաւ փոխ-նահանգապետը։ Մի քանի ժամ հայկական թաղում մնալուց յետոյ այդ պաշտօնեան յարմար համարեց տեղափոխւել թիւրքերի մօտ։ Թիւրք բէկերով եւ խաներով շրջապատւած, շահաւէտ թղթախաղի եւ անուշ խորտիկների ազդեցութեան տակ թիւրք-հայկական հաշտութիւն կայացնելու որոշումը կայացրեց նա։ Սրիկայ գաւառապետին ղրկեց հայերին յայտնելու, որ թիւրքերը համաձայն են հաշտութեան եւ իրենց կողմից մի հրացան անգամ չի պարպւի եթէ հայերը խոստանան նոյնն անել։ Հայ պատւաւորները ցնծութեամբ ընդունեցին այդ լուրը եւ սկսեցին աղաչել ու պաղատել Հ.Յ.Դ. հրամանատարին չթողնել որ այդ գիշեր հայկական դիրքերից հրացան արձակւի։ Հրամանատարը կամեցաւ մի քանի ժամով հաւատալ պ. Նահանգապետի «ազնիւ խօսքին», զիջեց հայ պատւաւորների խնդիրքներին եւ հրամայեց դիրքերից կուող կամաւորներին արթուն լինել, հրացան արձակել միայն այն ժամանակ, երբ թիւրքերը կը վերսկսին։ Հրացանաձգութիւնը իսկապէս դադարեց մի քանի ժամով։

Թիւրքերի եւ նրանց վարձկանների երկրորդ նենգութիւնն էր այդ։

1.- Ձեռագրին մէջ երկու տող բաց ձգուած։

Այստեղ կ՚աւարտին սեւագրութիւններու մատեաններուն մէջ գաղտնի թանաքով գրուած, պատճէններու մատեաններուն եւ առանձին համարակալում ունեցող 1904–1905 թթ. նամակները:

628

Փաստ. 16-22

Կովկասէն գրուած նամակ է, ձեռագիր 4 էջ:

2 *մարտ* 1906

Սիրելիք,

Այսօր ստացայ ...էնի(1) *այսպէս կոչուած երկար նամակը։ Կարճերի*(2) *մասին իմ գրածը միթէ՞ չէք ստացել։ Պէտք է համաձայնութեան գալ տեսակների վերաբերեալ Ոսկանապատի*(3) *հետ։ Ինձ վրայ սառը ջուր թափեցին այստեղ. բանից դուրս եկաւ, որ բոլորովին զուր տեղից էինք իրար անցել։ Կարճերից ունէին մեծ քանակութեամբ, եւ երբեք դժուարութիւն չէին կրում նորերը ձեռք բերելու։ Փողի մեծ պակասութիւն կայ ամէն տեղ. թէ այստեղ եւ թէ Ոսկանապատ պարտքերով են գործ տանում. երեւի նոյնն է ուրիշ տեղերում էլ։ Եկամուտի աղբիւրները համարեա թէ դադարել են տնտեսական քայքայման պատճառով. իսկ ծախքերը մեծ են։ Մ*[*եծ*] *Ք*[*աղաք*](4) *հասնելով խորհուրդ կ՚անենք մի քանի միջոցների մասին։*

Տակայչվիլին(5) *չնորհիւ մի քանի պատճառների, որ դեռ վերջնականապէս չեն պարզուած, փոխեց իր ընթացքը։ Դեռ նոր է, որ հեռագիրներով բանտարկել էր տալիս աջ ու ձախ հայեր։ Քաղաքումս բռնեցին Լեւոն Ա*[*թաբէկեանին*]*, ուզում էին բռնել եւ Ա. Մաշուրեանին*(6)*, բայց չնայած բոլոր խիստ միջոցներին, ձեռք ձգել չկարողացան. բանտարկեցին նաեւ մի քանի արհեստաւորներ։ Առաջանից բռնուած էին Խանքենդի*(7) *ճանապարհի վրայ մի խումբ հայեր, որոնց մէջն էին ուսանող Համբարձում Մելքումեան, ուսանողացու Ռուբէն Իւզբաշեան, Իշխան Միրզաբէկեան։ Նրանք մեղադրւում էին իբրեւ յեղափոխականներ եւ ասպատակային խմբի անդամներ։ Լեւոնին եւ Մաշուրեանին մեղադրում էին իբրեւ թալանչիներ եւ հրձիգներ*(8)*։ Բողոքների ազդեցութեան տակ Լեւոնին եւ նրա հետ միասին Համբարձումին ու Ռուբէնին արձակեցին բանտից։ Պատճառը գուցէ ամնիստիան էր։ Բայց Տակայչվիլին իր կողմից կարգադրել էր* 48 *ժամւայ ընթացքում հեռացնել երեքին էլ նահանգի սահմաններից։ Հազիւ էին տուն հասել, քիչ հանգստացել երբ գիշերը ժամը* 1*-ին յանկարծակի գնում են Ռուբէն Իւզբաշեանին նորից ձերբակալելու, այս անգամ քննիչի կարգադրութեամբ, իբրեւ քրէական յանցաւորի։ Ռուբէնը բարեբախտաբար տանը չի լինում. դրանով ազատւում է, եւ մինչեւ հիմա լոյս աշխարհ չի երեւում։ Այս երկրորդ փորձը չափազանց գրգռեց տեղիս երիտասարդութեանը, որովհետեւ այս բոլորը կատարւում է թիւրքերի անընդհատ դրդումներով։ Սրանց մէջ կազմակերպւել է մի խումբ, որը անվերջ կլաուզներով*(9) *հանգստութիւն չի տալիս հայերին։ Մէկին բռնել են տալիս իբրեւ մարդասպանի, իսկոյն շարւում են ի հարկէ վկաները, որոնք իրենց աչքով տեսել են այս ինչ փողոցից, այս ինչ պատուհանից։ Միւսին իբրեւ հրձիգի, երրորդի ձին են բռնում եւ վկաներով հաստատում, որ ձին այս ինչ թիւրքին է պատկանում, այս ինչ թիւրքից է գնուած եւայլն։ Կաշառուած քննիչը, ձեռքին ունենալով «քաղաքացիների» ցուցմունքները, պարտականութիւն է համարում ձերբակալութիւններ անել եւ այլն։ Թիւրքերը պատրաստել են «հայ կոմիտէի անդամների» մի ամբողջ ցանկ, որ ներկայացնում են ադմինիստրացիային, բռնել են տալիս, վրաները հազար տեսակ ամբաստանութիւններ բար-*

դում (միշտ ի հարկէ վկաներով) եւ գործին քրէական կերպարանք տալիս։ Կազմակերպութիւնը ստիպւած եղաւ մտածել իր միջոցների մասին, բայց այս պատրաստութեան շրջանում յանկարծ մի ինչ որ փսփսուք է տեղի ունենում, Տակայշվիլին հրաւիրում է իր մօտ Լեւոն Աթաբէկեանին, հազար ներողութիւն խնդրում եւ պատրաստակամութիւն ցոյց տալիս կատարել երիտասարդութեան բոլոր պահանջները։ Գլուխներդ ինչ ցաւացնեմ, Լեւոնի ներկայացրած ցանկի հիման վրայ, արձակում են բոլոր բանտարկեալներին։ Տակայշվիլին հիմա ամբողջ մեղքը դնում է թիւրքերի վրայ եւ խոստանում է նրանց վերաբերեալ ձեռք առնել մի շարք ճնշողական միջոցներ։

Ստիպւած եմ վերջ տալ նամակիս, փոստի ժամանակը անցնում է։ Եթէ կանոնաւոր չեմ գրում, դրա պատճառը գրելիք նիւթերի առատութիւնն է։ Ժամանակ չկայ նստելու եւ ամփոփելու։

Գաւառների դրութիւնը գոհացուցիչ է։ Սօսի կռիւը աւելի քան փառաւոր է եղել։ Վարդանը(10) *երէկ վերադարձաւ գաւառից (Վարանդայից) բոլորովին գոհ սրտով։ Հետեւեալ փոստին մանրամասնութիւններ կը հաղորդենք։*

Համբոյրներով՝
Ռ.

Տիզակի կռիւների, Ասկարանի, Աւտալի, Գիւլափլուի նկարագրութիւնները ստացած կը լինէք։
Ռ.

1.- Անընթեռնելի անուն:
2.- Կարճը ատրճանակի իմաստ ունի:
3.- Ոսկանապատը Պաքուն է:
4.- Մեծ Քաղաքը Թիֆլիսն է:
5.- Տակայշվիլի – Գանձակի վրացի նահանգապետը, քրոջորդին Պաքուի տխրահռչակ նահանգապետ Նակաշիձէի: Երկուքն ալ պիտի ահաբեկուէին Դաշնակցութեան կողմէ:
6.- Ալ. Մաշուրեան, որ իբրեւ՝ Այգեստան-Գանձակի պատգամաւոր պիտի մասնակցէր Չորրորդ Ընդհ. ժողովին:
7.- Խանքենդը Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի նախկին անունն է:
8.- Բնագրին մէջ ռուսերէն:
9.- Զրպարտութիւններով:
10.- Վարդանը Խանասորի Վարդանն է, Սարգիս Մեհրաբեան, որ հայ-թաթարական ընդհարումներու շրջանին կը ղեկավարէր Ղարաբաղի կռիւները:

629

Փաստ. 16-21

Կովկասէն գրուած նամակ է, ուղղուած հաւանաբար Արեւմտեան բիւրոյին կամ, նոյնն է, «Դրօշակ»ի խմբագրութեան:

մայիս 1906

Սիրելիք,

Քանի անգամ գրել եմ հրթիռների մասին, ձեզանից ոչ մի պատասխան։ Գրաբերիս միջոցով բացատրել եմ խնդրի էութիւնը։ Շատ խնդրում եմ լուրջ ուշադրութիւն դարձնէք եւ մի երկու փորձուած վարպետներ պատրաստէք եւ ուղարկէք։

Պ. Գ.-ի մասին այս միայն կարող ենք հաղորդել, որ մեղաւորը ինքը զոհն էր։ Նա մերժեց մեր ուղարկած պահապաններին ընդունել, ասելով, որ երբ հարկաւոր լինի, ինքը կը տեղեկացնէ։ Այդ ձեւով կարելի կը լինէր առաջն առնել, իսկ հիմա միայն մի ելք է մնում, այն է սուտ կռիւ յայտարարել զուրնաչիներին(1)*, աւելի հեշտն ասած՝ ընդունել նրանց հրաւէրը, մի բան, որից խուսափում ենք առայժմ։ Դրանք դառել են բացարձակապէս սրիկաների խումբ որ կորցնելու ոչինչ չունի եւ նպատակ է դրել յատկապէս մեզ վնասել։ Աստուած վերջը բարի անի։*

Հարսանիքը(2) *որոշուեցաւ անել Հոկտ. կէսին։ Բայց արդեօք հանգամանքները թոյլ կը տա՞ն։ Շուտով կ՚ուղարկենք հարցերի ցանկը։ Մինչ այդ՝ որոշեցինք որոշ ազատութիւն տալ Պալք[անի] Կ.-ին եւ կապեր հաստատելու Վիշապի*(3) *հետ եւ խմբեր կազմելու։ Պալք.-ից եկել է Երուանդը*(4)*, որը դեռ եւս այս կողմերումն է։*

Վրէժ(5) *ուղարկէք Շամի*(6) *համար նամակների բլանկներ (տպագրուած ընդհանուր ձեւով)։ Քանի անգամ ձեզ գրել են, ուշադրութիւն չէք դարձրել։ Ստիպուած այստեղ պատւիրել էին զինանշանը, իրենց ձեռքով տպագրել տալու համար։ Թոյլ չտուեցինք, խոստանալով, անպատճառ գրել ձեզ, որ անյապաղ ուղարկէք բլանկները։*

Դրօշակի մուտքը Պարսկաստան արգելելու առթիւ կարելի է մի բողոքագիր ուղարկել պարսից եւ բելգիական կառավարութեան։

Ուղարկեցէք մանրամասը հաշիւ, թէ որքան է ուղարկւած Նաւահանգիստ(7)*, նշանակելով ամսաթիւը։*

1.- Զուրնաչիներին – հնչակեաններին:

2.- Հարսանիք – Ակնարկութիւնը Չորրորդ Ընդհ. ժողովի մասին է, որուն գումարումը պայմաններու բերումով պիտի յետաձգուէր 1907 Փետրուարին:

3.- Վիշապը Պոլսոյ կուսակցական ծածկանունն է:

4.- Երուանդ Ալաճաճեան, անդամ Պալքանի Կ. կոմիտէին. Պուլկարիոյ Հ.Յ.Դ. Զինուորական վարժարանի կազմակերպական հարցերով զբաղուած էր Կովկաս:

5.- Վրէժը Ատրպատականն է:

6.- Շամը Վան-Վասպուրականն է:

7.- Նաւահանգիստը Պաթումն է:

630

Փաստ. 798-4

1906 թ.ի Սամսոնի (Բանալի) թղթածրարի մէջ, Ռոստոմի ձեռագրով 2 էջ. ապա (փաստ. 798-2) քարտէս ուրիշ ձեռագրով՝ որուն տակ նշուած է՝ թուականը 26-9-906: Յայտնապէս քարտէսին վրայ նշանակուած վայրերու մասին տրուած բացատրութիւններ են:

Կառավարութեան տունը — 2 յարկանի, վարի մասը տաշած քար, մարդու հասակի բարձրութեամբ: Այնուհետեւ աղիւսի պատ: Վերի յարկը փայտ: Կտուրը թեք տախտակներով: 3 խորը դուռ: Մեծ դուռը արեւմտքից, միւս երկուսը հիւսիսից, հարաւից: 100-ից աւել պատուհաններ, մարդու հասակի բարձրութեամբ: Գետնայարկը նոյնպէս ունի պատուհաններ: Ծովի կողմից կարելի է մօտենալ արեւելեան պատին: Այստեղ կայ գոցուած դուռ:

Բանտ — Ամբողջ քարաշէն, քարերը հասարակ:

Պահականոց — Փայտաշէն, 2 յարկանի:

Ժանդարմերիա եւ ոստիկանատուն — Երկուսն էլ փայտաշէն:

Պելէտիէն — Փայտաշէն:

Զօրանոց — Կառավարական տնից 500-800 մ. հեռու: Արանքում յոյն տներ: Փայտաշէն: Տանիքը թեք, ծածկուած կրամիտով: Մանր եւ շատ պատուհաններ: Կարելի է մօտենալ հիւսիսային կողմից: 200-ի չափ զինուորներ:

Մթերանոց — 2 հատ: Յունաց թաղի արեւմտեան ծայրում, ձորի մէջ: Ամբողջ քարաշէն պատերը: Տանիքը կղմինտր: Հայոց թաղից չէին երեւում: Սեբաստիայի ճանապարհից (Կէճանից) երեւում է ամենաշատը 200 մ. հեռաւորութեան վրայ:

Վառօդարան

Հիւանդանոց — Աւելի բարձր, քան հայոց թաղը, տիրում է ամբողջ քաղաքը. ամուր շէնք, քարաշէն:

Մաքսատուն — Լայն քարաշէնք, չորս պատ, վրան ծածկած կղմինտրով, մէջը ամէն տեսակ ապրանքներ:

Թնդանօթները — 5 հատ պահականոցի բակին մէջ: Այնտեղ են գտնուում նաեւ ռմբերը:

<u>Եւրոպական հաստատութիւններ</u>

1) ***<u>Բանկ Օտոման</u>* — Քարաշէն։**

2) ***<u>Ռէժի</u>*** — 4 *մթերանոց, իւրաքանչիւրը Պոլսոյ* Banque Ottom[ane-*էն*] *մեծ։ Մէկը աշխատանոց է, ուր բանում են* 1,500-*ի չափ յոյն եւ թուրք։*

3) *<u>Հիւպատոսարաններ</u> — ապրում են յունաց թաղի մէջ, մասնաւոր տներում։*

Հայոց տները մեծ մասամբ փայտաշէն։ Մօտ 200 *տուն, վարի յարկը քարաշէն։ Թիւրքերինը նոյնպէս փայտաշէն, ինչպէս նաեւ յոյներինը։*

Հայոց թաղում — <u>ամենաբարձր շէնքը</u> 1) *տիկին Շողակաթի տունը,* 2) *դպրոցը,* 3) *Զաքարեանի տունը։*

Յունաց թաղում — եկեղեցին, լաւ, ամուր շէնք։ Ուրիշ լաւ շէնքեր։

<u>Տիրող կէտերը</u> 1) *Գատը գիւղ* 2) *Հիւանդանոց* 3) *Հայոց թաղ,* 4) *Թիւրքաց թաղը*

Իշխող բլուրներ. առաջինը) Կարա Սամսոն հայոց թաղի եւ երկրորդը) Հիւանդանոցի ետեւը (Թորաման)։

631

Փաստ. 16-41

Յայտնաբար Ատրպատականի (Վրէժ) մարմնին ուղղուած նամակ է. փոքրադիր մէկուկէս էջ, գրուած Կովկասէն, հաւանաբար Թիֆլիսէն: Յիշուած արհեստանոցը Թաւրիզի Հ.Յ.Դ. «Խարիսխ» զինագործարանը կամ զինուորական արհեստանոցն է:

Ընկերներ,

Երէկ եկաւ մեզ մօտ արհեստաւոր Բագրատը, որը նոր է վերադարձել ձեր կողմերից։

Խնդրենք շտապով հաղորդել մեզ նրա չմնալու պատճառները. ինքը բերում է երկու ծիծաղելի հանգամանք. առաջինը՝ որ մենք իրեն չենք յայտնել, թէ արհեստանոցը թիւրքաց մասումն է, երկրորդը՝ որ չի իմացել, թէ արհեստանոցը մասնաւոր պատւէրներ է ընդունում եւ թիւրքերի համար էլ է բաներ շինում։

Ասում է, որ իրեն վերադարձի համար ոչինչ չէք տուել, փող չունենալու պատճառով, եւ պահանջում է մեզանից իր ճանապարհածախսը, որ նա պարտք է արել մի ուրիշից (հեռագրել է Ռուսաստան մէկին եւ ստացել !)։ Պատասխանեցինք, որ մինչեւ ձեր նամակի գալը մենք ոչինչ տալ չենք կարող։

Սպասում ենք ուրեմն ձեր պատասխանին, շտապեցէք հաղորդել, եթէ մինչեւ հիմա չէք արել։

Ցաւում ենք, որ Սարգսեանը մեկնեցաւ առանց մեզ հետ հանգամանօրէն խօսելու։

Ձեր ՌՈՍՏՈՄ

30 / IX / 1906

632

Փաստ. 16-26

Ջրաբերդի ընկերներին(1),

Այստեղ(2) *մի երիտասարդ հայ, խնուսցի Մկրտիչ Քամալեան (բերդ էր մնում), որը երկրում պարապել է զինագործութեամբ, նա ուզում է կատարելագործուել մի հմուտ վարպետի մօտ աշխատելով։ Եթէ տեղդ կայ մի այդպիսի վարպետ, խնդրենք մեզ յայտնել։*

ՌՈՍՏՈՄ

27 / XI / 1906

1.- Ջրաբերդը Կարսն է։
1.- Այստեղը Թիֆլիսն է։

633

Փաստ. 16-27

Ընկերներ,

Ձենք հասկանում, ինչպէս է, որ այստեղից զինուորներ հետզհետէ ուղարկուում են, բայց թիւը աւելանում է։ Մեզ թւում է, որ ներկայումս ձեր 50 զինուորների մէջ կան այնպիսիները, որոնք ուրիշ տեղերից, ծախսեր ստացած, հաշիւները վերջացրած, ձեզ մօտ են եկել։ Պէտք է այդպիսիներին զատել։ Բացի այդ, այն ահագին գումարը, որ պէտք է տալ դրանց հաշիւները փակելու համար, բաւական է որեւէ ձեռնարկ սկսելու համար։ Մուրատը աշխատում է Կաղզւանի ճանապարհի շինելը վերցնել՝ մեր տղաներին համար գործ մատակարարելու։ Եթէ աչքի առաջ ունէք մի ուրիշ ձեռնարկ, յայտնեցէք։ Աւելի լաւ է, փողը ծախսենք այնպէս, որ մեր տղաները պարապ չմնան։

Ընկ. բարեւներով՝
ՌՈՍՏՈՄ

634

Փաստ. 16-24

Հաւանաբար Թիֆլիսէն ուղարկուած երկտող է Ատրպատականի (Վրէժ) մարմնին։ Հարցականով մակագրուած է «յունիս? 1906»։ Համոն՝ Օհանջանեանն է, անդամ Արեւելեան բիւրոյի։

Սիրելիք,

Երէկւայ նամակս Համոն սխալմամբ փոստով է ուղարկել։
Գրաբերս մեր Վրէժի ընկերներից է։ Եթէ պատէրներ տայ այդտեղ, խնդրենք ծախքերը վճարել։

Ձեր ՌՈՍՏՈՄ

635

Փաստ. 16-25

Կովկասէն նախքան Եւրոպա անցնիլը գրուած նամակ է, ուղղուած Ժընեւ՝ Արեւմտեան բիւրոյին:

Սիրելիք,

Շուտով ճանապարհ կ՚ընկնենք դէպի ձեր կողմերը, մանրամասը կը խօսենք։ Շատ խնդրում ենք տեղը գաղտնի պահել։ Մեր հարսանիքը(1) *շատ վատ ժամանակ է տեղի ունենում, ճիշտ ընտրութիւններին։ Եւ դա շատ է խանգարելու մեր գործին, դժուար թէ մեր թեկնածուները անցնեն։ Խօսք կար յետաձգելու մասին, բայց այդ առաջարկը չընդունուեց վերջ ի վերջոյ, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Շամի*(2) *ընկերները սպասել երկար չեն կարող. յետաձգելու դէպքում կարող է որեւէ անակնկալ նորից խանգարել։*

Շտապում ենք ձեր ուշադրութիւնը դարձնել հետեւեալ հանգամանքի վրայ։ Զուրնաչիները(3)*, ինչպէս երեւում է, արտասահմանում համերաշխութեան պրոպագանդ են անում, իսկ այստեղ նրանց ընթացքը միանգամայն պրովո[կա]տորական է։ Գէորգեանի գործի ելքը, նրանց տգեղ դիրքը արդէն ձեզ յայտնի է։ Դրանից յետոյ նոքա շարունակել են աջ ու ձախ դիմումներ անել եւ առանձնապէս խիստ վերաբերուել նրանց հետ, որոնք յայտարարել են իրենց մեզ կողմնակից եւ օժանդակող։ Մեզ մնում է միայն մի ելք, կամ կտրուկ պատասխաններով վերջ տալ այդ դիմումներին, մի բան, որ անհրաժեշտաբար արիւնահեղութեամբ պիտի վերջանար, կամ խոյս տալ եւ լռել, յուսալով, որ գուցէ իրենք կը զգան եւ կանգ կ՚առնեն։ Այս յոյսը ունէինք, հիմնուած նրանց ներկայացուցչի մի խօսքի վրայ, թէ իրենց եթէ թոյլ տանք դիմելու միայն* 10 *անձանց, դրանով խնդիրը կը փակուի։ Բայց ախորժակը ուտելով է գալիս, նրանք սահմանը անցել են, եւ մենք ստիպուած յայտարարեցինք նրանց ստօպ! Եւ Փոթոն*(4) *որոշել է դրականապէս թոյլ չտալ ոչ մի պայմանով դիպչել իր հովանաւորութեան տակ գտնուածներին, հակառակ դէպքում կը դիմի ամենածայրայեղ միջոցների։ Այս բանը յայտարարուած է նրանց թէ բերանացի եւ թէ գրաւոր ամենակտրուկ կերպով։ Եւ եթէ արտասահմանեան դրանց մարմինը իսկապէս մտադիր է համերաշխութիւն հաստատել, թող աչքի առաջ ունենայ այս հանգամանքը եւ զսպի ում հարկն է։*

Թող յայտնի լինի այդտեղի մարմնին, որ երկու կողմն էլ տարիներից ի վեր փոխադարձաբար յարգել են այդ պայմանը, որ խախտել է այս տարի։

Համբոյրներով՝
Ձեր ՌՈՍՏՈՄ

29 XI 1906

1.- Մեր հասանիքը՝ այսինքն Ընդհ. ժողովը (Չորրորդ):
2.- Շամը Վան-Վասպուրականն է:
3.- Զուրնաչիներ – հնչակեաններ:
4.- Փոթոն – «Փոթորիկ»ի հանգանակութեան մարմինը:

636

Փաստ. 17-96

Գաղտնի թանաքով գրուած նամակ, շատ վատ բացուած, որուն հետեւանքով անընթեռնելի մասեր կան: Յաջորդ էջին վրայ կայ դարձեալ անընթեռնելի երկտող մը. կը կարդացուի միայն «ուղարկում եմ Ռոստոմի նամակը»: Յայտնաբար 1906-ի վերջին ամիսներուն նամակ է գրուած Ղարաբաղի մէջ:

Սիրելի Կարապետ

Ստացայ քո ուղարկած գիրքը։ Շատ շնորհակալ եմ, բայց պէտք է խոստովանած, այնքան էլ ինձ դուր չեկաւ [?], *աւելին էի սպասում։*

Թիֆլիս գնալս չյաջողուեց։ Դեռեւս այստեղ պէտք է մնամ եւ լսեմ քաղաքիս անվերջ կրակ-տրաքոցները. կարծես պաշարուած քաղաքում լինես։ ..... բազմաթիւ են թուով. մէկ, երկու ռուբլու համար արդէն մարդ են կանգնեցնում։ Անցեալ օրը մէկին են սպանել 1 ռ. 30 կ.ի համար!

Միքայէլին(1) *ասէք, որ Մարկոսին տեսայ, հիւանդացել է մրսելուց. քիչ հազում էր. բայց երբ ..... շուտ լաւացել են։*

Խնդրում եմ, որ նամակս ստանալուդ պէս ..... հասցէով ինձ հեռագրես։ .....

..... հաւանական է 7-8 օրից յետոյ եւ կը մնամ մի շաբաթ .....

Ուրեմն նամակս ձեզ հասնելուց ես .....

..... Որովհետեւ նամակդ չի հասնիլ. ուրեմն կը սպասենք հեռագրական պատասխանիդ։

Բարեւներս քեզ եւ ընկերներին։

Քո Ռ.

1.- Միք. Վարանդեանին:

637

Փաստ. 17-94

Անթուակիր նամակ, գրուած Թիֆլիսէն, ինչպէս նշուած է ցուցակին մէջ: Կը նշանակէ գրուած է նախքան Ռոստոմի մեկնումը Ընդհ. ժողովին, այսինքն՝ 1906-ի վերջերուն, կամ 1907-ի առաջին օրերուն: Մակագրուած է, այլ ձեռագրով, 1907:

Ֆիլիպէից նամակ եւ հեռագիր ստացանք, որով ուզում էին 5.000 fr. *Բորիսի*(1) *համար։ Թէեւ դժւար էր այդ գումարը յանձնել մարդկանց, որոնք խնայողութիւն ասած բանը չգիտէին, բայց այնուամենայնիւ համաձայնեցինք եւ փոխադրեցինք Սուրէնին*(2) 5000 *Բորիսին յանձնելու համար։* 20 *հատորը*(3) *չկարողացանք դրստել, քիչ յետոյ կ'անենք։ Խուզբաշեանին գուցէ շուտով հրաւիրենք Պիոնեանին ընկեր։ Թող շտապի։ Եթէ բանը փողից է կախւած, քիչ առատաձեռը եղէք։*

Մի շատ կեղտոտ շանտաժ է բացւում Ալէքսանդրանպոլում, որին մասնակից են մեր «ընկերները»։

Օրտանսը(4) *շատ լաւ է։*

Քո Ռ.

1.- Բորիսը՝ Խաչատրեան Սմբատն է, դաշնակցական հին գործիչ, որ կը զբաղէր զինական գնումներով:

2.- Հաւանաբար Արեւմտեան բիւրոյին, որովհետեւ այս վերջինին համար կը գործածուէր Սուրէն ծածկանունը:

3.- 20 հատոր՝ կը նշանակէ 20 հազար, երեւի ռուբլի:

4.- Օրտանսը՝ զուիցերուհի կինն էր Հ. Յ. Դաշնակցութեան առաջին սերունդի ականաւոր գործիչ ու տեսաբան Յոնան Դաւթեանի:

638

Փաստ. 17-93

Փոքրաղիր մէկ էջ, որուն վրայ մակագրուած է Յունուար 1907: Թիֆլիսէն դէպի Վիեննա, ուր կ՚երթար Ռոստոմ մասնակցելու Չորրորդ Ընդհ. ժողովին, ճամբորդութեան ընթացքին գրուած նամակ է, յայտնաբար ուղղուած Թիֆլիս մնացող ընկերներուն:

[*Յունուար* 907]

Սիրելիք,

Ճանապարհին շարունակ մոռացւած բաներ են միտքս գալիս։ Մի մեծ բան եմ մոռացել. ասա Համոյին(1)*, որ Ղարիբին*(2) *պէտք է տալ* 200 *ռ*[*ուբլի*] *յետոյ էժանութեան համար անունների փոխանակ թւեր եմ գործածելու*

1) *Համօ*, 2) *Ղարիբ*, 3) *Վարանդեան*, 4) *Նիկոլ*, 5) *Արամ-Սարգիս*, 6) *Ռուբինա*, 7) *Վարդան*, 8) *Ղարաբեխ*, 9) *Մուրատ*(3)։

Մնացածները իրենց անունով։ Եթէ հէնց գրեմ, օրինակ 52 *ր.*, *դա կը նշանակի, որ Արամը եւ Ղարիբը անպատճառ պէտք է դուրս գան։*

Ճանապարհին տանջւել եմ մենակութիւնից։

Քերմ համբոյրներով՝
Քեր ՌՈՍՏՈՄ

1.- Համոն՝ Օհանջանեանն է:

2.- Ղարիբը՝ Ա. Ահարոնեան:

3.- Նիկոլը՝ Դումանն է, Արամը՝ Մանուկեանը, Սարգիսը՝ Վանայ Սարգիսն է, Բարսեղեան, Ռուբինան՝ Արէշեան, Վարդանը՝ Խանասորի Վարդանն է՝ Սարգիս Մեհրաբեան, Ղարաբեխը անծանօթ է մեզի, իսկ Մուրատը՝ Սեբաստացի Մուրատն է (Խրիմեան):

639

Փաստ. 1149-55

8-7-1907

Սիրելիք,

Այսօր տեղ հասայ. Բժիշկը Ֆիլիպէ է, վաղը կը դայ, որ միասին դպրոց գնանք(1)։ *Փողի համար հեռագրեցի արդէն։ Բժիշկի ասելով*, 10,000 fr. *է հարկաւոր լիկվի-*

դացիայի համար(2)։ *Ասացի, որ գայ խօսենք։*
Զուշացնէք, որ ես էլ չուշանամ։

Ձեր ՌՈՍՏՈՄ

Այստեղի հասցէս՝ Հայկական կաֆէ(3)։

1.- Բժիշկը՝ Տէր Դաւթեան Յովսէփ, անդամ Արեւելեան բիւրոյի։ Դպրոցը՝ Պուլկարիոյ Հ.Յ.Դ. Զինուորական վարժարանն է։ Վիեննայի մէջ 1907 թ. կայացած Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. ժողովի աւարտին, Ռոստոմ եւ բժ. Տէր Դաւթեան քննական այցելութեան պիտի երթային Զին. վարժարան։
2.- Խօսքը կը վերաբերի՝ յիշեալ Զին. վարժարանի միամեայ գոյութենէն ետք, զայն փակելու համար նախատեսուած ծախքին։
3.- Ռուսատառ՝ հայկական սրճարան։ Այդպիսիք գոյութիւն ունէին Պուլկարիոյ տարբեր քաղաքներուն մէջ եւ կը ծառայէին իբրեւ հաւաքատեղի պանդուխտ հայերուն։

640

Փաստ. 17-95

Փոքրադիր 2 էջնոց նամակ յայտնաբար ուղղուած «Դրօշակ»ի խմբագրութեան. մակագրուած է 1907։

Սիրելիք,

Հաւանական է, չորեքշաբթի օր դուրս գնամ։
Ուղարկում եմ մի յօդուած Սարաֆովի(1) *մասին։ Եթէ ժամանակ ունենամ կը շարունակեմ գրել, ամէն կերպ կ՚աշխատեմ։ Եթէ ոչ ինքներդ կը կազմէք։ Հեռագրել եմ, որ ձեզ հաղորդեն մանրամասները եւ ուղարկեն բուլղար թերթերից կարեւոր յօդուածների հայերէն թարգմանութիւնները։*
Համոյին(2) *ասէք, որ Միք*[*այէլի* ?]. *հեռագիրը թիւրիմացութիւն է եղել, որի մէջ ինքս եմ յանցաւոր եւ որին հէնց ես էլ եմ զոհ գնացել։ Ալէքը հիմա, ինչպէս գուցէ արդէն լսած լինէք, շատ լաւ է, ողջ եւ առողջ։ Բժիշկ Խաչատուրի*(3) *գնալը բոլորովին զուր է եղել։ Լաւ է, որ այդտեղ չեմ, թէ չէ Վահաբի*(4) *նոր հայհոյանքներին կ՚արժանանայի։ Մի անգամ արդէն կրել եմ նման դէպքի համար։ Վարդանը*(5) *կը պատմի։ Կը գրեմ տպաւորութիւններս։*

Ձեր Ռ.

2 եւ 9 թերթիկների երկրորդ երեսներում բաներ կան աւելացրած, ուշադրութիւն դարձրէք։

1.- Բորիս Սարաֆով մակեդոնացի յայտնի յեղափոխական գործիչ, Դաշնակցութեան բարեկամ, որ 1907 Նոյեմբեր 12-ին իր ընկերոջ Կարվանովի հետ սպաննուած էր Սոֆիայի մէջ։ Կասկածները բնականաբար կ՚երթային սուլթանական կառավարութեան։ «Դրօշակ»ի 1907 թ. Նոյեմբեր-Դեկտեմբերի միացեալ թիւին մէջ ընդարձակ յօդուած կայ այդ առթիւ։ Եթէ Ռոստոմի գրածը «ուղարկում եմ մի յօդուած Սարաֆովի մասին» նոյնն է, կը նշանակէ այս կարճ նամակը պէտք է թուագրել 1907-ի Հոկտ.-Նոյեմբեր ամիսներուն։
2.- Համոն Օհանջանեանն է։
3.- Խաչատուրը (Մալումեան) Է. Ակնունին է։
4.- Վահաբը՝ Արշակ Վռամեան։
5.- Վարդանը՝ Խանասորի Վարդան (Սարգիս Մեհրաբեան)։

ԾԱՆՕԹ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Արեւմտեան բիւրոյին կողմէ 1906–1907-ին գրուած նամակներու Սեւագրութիւններու 52, No 3 թուահամարը կրող մատեանին մէջ կը գտնուի: Այս նամակներու սեւագրութիւնները սահմանուած էին գաղտնի թանաքով արտագրուելու եւ ուղարկուելու իրենց հասցէներուն:

Ռոստոմի ձեռագրով այս եւ յաջորդ նամակը, երկուքն ալ անստորագիր եւ անթուակիր, գրուած պէտք է ըլլան 1907-ի ամրան ամիսներուն, աւելի ստոյգ՝ Օգոստոսի կէսերուն. «մի քանի օրից յետոյ էլ պիտի կայանայ Շտուտգարտի կոնգրէն», կը գրէ Ռոստոմ եւ կը շարունակէ «Վարանդեանը արդէն գնացել է»: Արդարեւ Շտուտգարտի Միջազգային սոցիալիստական կոնգրէն պիտի սկսէր 1907 թ. Մեպտ. 18-ին: Ռոստոմի այս երկու նամակները ուղղուած են Վանի Կ. կոմիտէին:



641

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, թիւ 52, No 3

ՎԱՆ

Երկրում տեղի ունեցած ընդհարումների լուրերը ամէն անգամ երկիւղ են առաջ բերում արտասահմանեան ընկերների սրտերի մէջ՝ կարծել տալով, թէ կառավարութիւնը ահա սկսում է դիմել վճռողական գործողութիւնների։ Երկիւղը մեծ է լինում մանաւանդ այն պատճառով, որ այդ լուրերը ընդհանրապէս չափազանցրած են մեզ հասնում։ Բացի այդ, ընդհանուր տրամադրութիւն է ստեղծւել ամէն մի դէպք անպատճառ կապել կազմակերպութեան անւան հետ, լինի դա սպանութիւն (մի ինչ որ հնչակեան ուսուցչի), թերթի հրատարակութիւն, աշակերտական մի ըմբոստ քայլ եւ այլն։ Մի հանգամանք, որ գայթակղութիւն է մտցնում նոյն իսկ մեր ընկերների շարքերում։ Այս պատճառով անհրաժեշտ է, որ դուք յաճախակի ստոյգ տեղեկութիւններ տաք անց ու դարձի մասին, ինչպէս նաեւ դէպքերի հեղինակների։

Շամեանին(1)*. հիմա դուք բաւականաչափ հարստացած չէ՞ք համարում։ Ժամանակը չէ՞ արդեօք, որ նրա ամենագլխաւոր ուշադրութիւնը դարձրած լինի ձեռք բե-*

րած հարստութիւնը պահպանելու վերայ։ Զլինի թէ աւելին ձեռք ձգելուն հետամուտ լինելիս, կորցնի իր այժմեան ունեցածի մեծագոյն մասը(2)։

Մեր կարծիքով հիմա առանձնապէս պիտի ուշադրութիւն դարձնել մեր ներքին քաղաքականութեան վրայ, որի նպատակը պիտի լինի ըստ կարելոյն խոյս տալ ընդհարումներից։ Այս խնդրի մասին գուցէ ուղարկւի ձեզ Կովկասի ընկերների հաւաքական կարծիքը։ Մեզ համար առանձնապէս կարեւոր է բուլղար եւ պարսիկ կառավարութիւնների բռնած եւ բռնելիք դիրքը։ Այնքան, որքան մեզ հնարաւոր կը լինի, կ՚աշխատենք ձեզ շարունակ գիտակ պահել դրանց քաղաքականութեան շուրջը։ Առայժմ մի քանի ընդհանուր բաներ կարող ենք հաղորդել Բուլղարիայի մասին։ Բուլղար կառավարութիւնը մեծ պատրաստութիւնների մէջ է, որ յոյս ունին վերջացնել 908 *թ. աշնանը։ Պատերազմը անխուսափելի են համարում եւ ցանկալի իրենց՝ բուլղարների շահերի տեսակէտից։ Պատերազմի հնարաւորութեան մասին շարունակ խօսում են, թշնամական ցոյցեր յաճախ են լինում։ Խմբերը զինւում անցնում են կառավարութեան աջակցութեամբ։ Բայց ամենայն հաւանականութեամբ պատերազմը կը պայթի այն րոպէին, երբ ամէնից քիչ սպասւելիս կը լինի. բուլղար կառավարութիւնը կ՚աշխատի վճռողական քայլեր անելուց առաջ քնացնել թշնամուն, բարեկամանալ հետը, գուցէ նոյնիսկ քաղաքական յանցաւորներ հալածելու կամ յանձնելու գնով։ Եւ որ պատերազմը անխուսափելի է, դա պարզ է նրանից, որ ձեռք են առնւած այնպիսի միջոցներ, դրւած են այնպիսի հարկեր, ուժերը այնպէս են լարւած, որ երկիրը դիմանալու ոչ մի ոյժ չի ունենալ։*

Բնական է, որ դէպի մեզ պիտի լաւ վերաբերին եւ աշխատին մեզ դիւրութիւններ տալ։ Զինուորական դպրոցը(3) *դրա արտայայտութիւններից մէկն է։ Դրա մասին երկար չենք գրում։ Բոլոր մանրամասնութիւնները կը լսէք Մատթէոսից*(4)*, որը դէպի ձեր կողմերն է ճանապարհ ընկել։ Նրան յանձնարարելու առանձնապէս պէտք չունինք, քանի որ Սարգիսը*(5) *նրան լաւ է ճանաչում։ Նա եւ Տիրանը ձեզ կատարելապէս կը գոհացնեն ամէն տեսակէտներով։*

Վրէժի(6) *վրայով կը ստանաք դուք հելիոգրաֆներ (արեգակնային հեռագիր)։ Գործածութիւնը շատ դիւրին է։ Կարող էք կապել Շամը արտասահմանի հետ։ Մանրամասը հրահանգներ գործածութեան վերաբերեալ կը ստանաք հետը։ Բաւական թեթեւ է. ամէն մի խումբ կարող է հետը տանել եւ հարկ եղած դէպքում մի լեռան գագաթից հեռագիրներ տալ։*

Մտածում ենք նաեւ հասցնել ձեզ դարձեալ Վրէժի վրայով մի թեթեւ բենզինի մոտոր. դա կարող էք յարմարացնել նաւակի համար, պակաս մասերը այդտեղ չինելով։

Լահէյի մեր գործը վերջացաւ։ Իբրեւ պատուիրակ կաթողիկոսի կողմից գնացել էր Մանչեստրի եպիսկոպոս Իւթիւջեանը։ Նրա հետ կային Շահնազարը եւ Ղարիբը(7)*։ Եւրոպացիներից ներկայ էին Քիյառը եւ Վիկտոր Բերարը։ Պրեսանսէն եւ Անատոլ Ֆրանսը*(8) *չկարողացան գնալ, հակառակ իրենց տուած խոստումին։ Առաջինը՝ հիւանդութեան պատճառով, երկրորդը՝ անյայտ պատճառով։ Պարզ բան է, որ մերժել են նրանց ընդունել պաշտօնապէս, հայկական եւ նման խնդիրներ դուրս նկատելով համաժողովի պարապմունքների ցանկից։ Բայց եւ այնպէս համաժողովի նախագահը Նելիդովը մասնաւոր կերպով հրաւիրել է իր մօտ պատուիրակութեան ամբողջ կազմը եւ բաւականաչափ զրոյց է արել հետը։ Խօսակցութիւն է տեղի ունեցել նաեւ Դ՚Էտուրնել Կոնստանի հետ (Ֆրանսիացի ներկայացուցիչներից մէկը), որը չի զլացել իր բարեկամական վերաբերմունքը մասնաւոր կերպով հաղորդելու։ Պատուիրակութեան ստացած դոկումենտները տպագրութեան կը յանձնւեն. նրանց մէջ, Ղարիբի գրելով, բաւական բնորոշ կէտեր կան։*

Մի քանի օրից յետոյ էլ պիտի կայանայ Շտուտգարտի կոնգրէն։ Վարանդեանը արդէն գնացել է։ Վաղը առաւօտ գնալու է Խաչատուրը։ Լիպարիտը եկել է Կովկասից. գուցէ Արարատսկին(9) նոյնպէս միանայ։ Առայժմ տրւած է մեզ միայն մի ձայն իբրեւ Ռուսաստանում գործող էսէրական ուղղութեան մի սեկցիայի։ Խնդիրք ենք բարձրացրել, որ մեզ տրւի նաեւ մի ձայն իբրեւ Թիւրքիայում գործող մի կուսակցութիւն։ Այդ դէպքում մենք կը լինենք Հայաստանի ներկայացուցիչը եւ կ՚ունենանք 2 ձայն։ Այդ ժողովի ընթացքում կը պարզւեն մեր յարաբերութիւնները էսէրների հետ. հաւանական է, որ նրանք չարունակեն ընդունել միացած անջատականներին(10) իբրեւ մի առանձին հայկական սեկցիա, ինքնավար։ Այդ դէպքում անխուսափելի կը դառնայ մեր բարեկամական յարաբերութիւնների խզումը էսէրների հետ։ Շտուտգարտի կոնգրէին ներկայացւած մեր տեղեկագիրը լոյս կը տեսնի առանձին հրատարակութեամբ։

Ձեր յունիս 13ի նամակը լաւ չբացւեցաւ. կրկնեցէք այն մասը, որ վերաբերում է մասնագէտի[?] *մասերին։*

Հրատարակութիւնները առատօրէն ուղարկում ենք Պարսկաստան. այնտեղից պահանջեցէք։

Ֆավրի(11) միջոցով ուղարկւած է այդտեղի միսիոներներին 1800 fr. *յօգուտ սովեալների. դա տեղիս ուսանողական կոնցերտի եկամուտն է։*

Ստացել է նաեւ ձեր N*-ի վրայով գրած նամակը։ Աւարայրի վրայով ուղարկւած է 2 կնիք՝ Լեռնապարի եւ Շամի*(12)։

Սալմանի մահը(13), *թղթակցութիւններ միւս տեղերից։ Ծրագրի ընդհ. մասը տպագրւած է։*

1.- Շամեանը կամ Շամը - Վան-Վասպուրականի Կեդր. կոմիտէն է, իսկ «հարստութիւնը», որուն կ՚ակնարկէ Ռոստոմ, շրջանին մէջ ամբարուած զէնք-զինամթերքի պահեստն է:

2.- Ռոստոմի կողմէ մարգարէական գուշակութիւն: Արդարեւ քանի մը ամիս ետք, 1908 թ. Յունուարին, Դիերցի Դաւիթի մատնութեան հետեւանքով Վանի զինապահեստներու կարեւոր մէկ մասը պիտի բռնագրաւուէր թրքական իշխանութեանց կողմէ:

3.- Ակնարկութիւն Պուլկարիոյ Հ.Յ.Դ. զինուորական վարժարանին, որ ստեղծուած էր պուլկար կառավարութեան աջակցութեամբ:

4.- Յեղափոխական արկածալից անցեալ ունեցող փորձուած մարտիկ. ահաբեկիչը մատնիչ Իսահակ Ժամհարեանի. Սիպիր աքսորուած, ապա փախուստ տալով վերստին լծուած ֆետայութեան: Պուլկարիոյ Հ.Յ.Դ. զինուորական դպրոցի միամեայ ընթացքը աւարտելէ ետք Մատթէոսը (Մինասեան) իբրեւ գործի նոր դաշտ պիտի ընտրէր Վան-Վասպուրականը:

5.- Վանայ Սարգիսն է՝ Բարսեղեան-Օտապաշեան Պօղոս (1875-1915):

6.- Ատրպատականի:

7.- Հրապարակագիր Յովհ. Շահնազար եւ Աւետիս Ահարոնեան (Ղարիբ):

8.- Բոլորն ալ, ինչպէս եւ քիչ անդին յիշուած Դ՚Էտուրնէլ Կոնստանը, Դաշնակցութեան եւ հայ դատի ֆրանսացի բարեկամներ, անդամ Պրօ-Արմենիայի խմբագրութեան:

9.- Խաչատուրը (Մալումեան) Է. Ակնունին է. Լիպարիտը՝ (Նազարեանց) ծանօթ էր Լեռնեան ծածկանունով. Արարատսկին՝ Երեւան ծնած, հայրը լեհ, իսկ մայրը երեւանցի հայուհի, ինքը սոցիալ-ռեւոլուցիոնէր, բուն անունն էր Լունկեւիչ Վալերիան (1866-1941), սերտօրէն կապուած Դաշնակցութեան, տեսաբանական յօդուածներով կ՚աշխատակցէր «Դրօշակ»ին:

10.- Անջատական կ՚որակուէին ծայրայեղ ձախակողմեան հակումներ ունեցող եւ Դաշնակցութենէն հեռացած տարրերը, որոնց մէկ մասը միացած էր ռուսական Սոցիալ-ռեւոլուցիոնէր կուսակցութեան:

11.- Լէոպոլդ Ֆավր, զուիցերիացի մարդասէր, հայ դատի պաշտպան անձնաւորութիւն. խնամակալն էր զուիցերիացիներու հիմնած հայկական որբանոցներուն:

12.- Շամը՝ Վան-Վասպուրականն է. Աւարայրը՝ Խոյ քաղաքը: Լեռնապարը բնագրին մէջ թիւրիմացաբար գրուած է Լեռնավայր, որ Կիլիկիոյ եւ շրջակայքի ծածկանունն էր: Ուղղեցինք Լեռնապարի, որ Վասպուրականի (Շամ) հարաւը լեռնային գաւառներէն բաղկացած էր (Մոկս, Շատախ, Կարճկան, եւայլն) եւ կը կազմէր առանձին Կ. կոմիտէութիւն:

13.- Սալմանը՝ Համազասպ Բաղէշցեանն է, երիտասարդ յեղափոխական գործիչ, Վասպուրականի Կ. կոմիտէի անդամ, որ պատգամաւոր ընտրուած էր Չորրորդ Ընդհ. ժողովին համար. ծանրօրէն թոքախտէ վարակուած Եւրոպա հասնելէն ետք, մեռաւ 1907 թ. Յունիսին:

642

Սեւագրութիւններու մատեան, գաղտնի թանաքով գրուած, թիւ 52, No 3

Ռոստոմի ցուցմունքները թնդանօթի, հրթիռի եւ ռումբերու պատրաստութեան եւ գործածութեան մասին: Գրութիւնը՝ գաղտնի թանաքով գրուած՝ արտագրուելէ ետք պէտք է ղրկուէր Վանի ընկերներուն:

Գրիգորին եւ Կարոյին,

Վերջերումս կատարուած մի քանի փորձերի հեւեւանքները հարկ ենք համարում հաղորդել ձեզ։

1) *Մօտ տարածութեան վրայ (միջին թւով* 400-50 *քայլ) չափազանց կարեւոր են վառօդի ուժով նետւող ռումբերը։ Ռումբը չինւում է կարտոնից, թղթից, կամ գնդաձեւ, կամ գլանաձեւ։ Կարտոնի կտորները փակցնում են սօսնձած լաթերով։ Լաթերը մի քանի երես են փակցնում, որպէսզի ըստ կարելոյն ամուր լինի։ Մէջտեղում թողած ծակով լցնում են ռումբի մէջ խմոր*(1)*, որի մէջ տեղաւորում են դետոնատոր-կապսիւլը*(2)*։ Պատրոյգը (բիկֆորդի) անւում է երկար, նայած տարածութեան։ Երկարութեան չափը փորձով պէտք է որոշել։ Պատրոյգի եւ ծակի շուրջը դարձեալ սօսնձով լաթեր են կպցնում, որպէսզի պատրոյգը տեղից չշարժւի։ Ռումբի վարի մասում կապում են վառօդ* 20*-ից* 50 *գրամ, նայած ռումբի մեծութեան։ Վառօդի քանակը եւս պէտք է փորձով գտնել։ Վառօդը ռումբի հետ միասին տեղաւորում են մի պարկում (պարկը կարող է եւ ամուր թղթից լինել)։ Պարկի մէջը անց են կացնում մի երկար, բայց արագ վառւող պատրոյգ, այնպէս որ վերջինս վառւելով կրակը վայրկենաբար հաղորդում է ռումբի պատրոյգին եւ ապա վառօդին։*

Ռումբերը պահում են պատրաստ, վառօդը տակին տեղաւորած։

Նետելու համար գործ են ածում լայնաբերան եւ կարճ թնդանօթներ։ Թնդանօթները անհրաժեշտ չէ, որ լինին մետաղից ձուլւած։ Նոյնիսկ մետաղը բոլորովին աւելորդ է։ Վերցնում են ամուր թուղթ, այն որ գործ է ածւում հրթիռների գիլզաների համար (պատեան) եւ պատրաստում են փողը ճիշտ այնպէս, ինչպէս եւ հրթիռների գիլզաները, միայն ի հարկէ, լայն։ Ամրութեան համար անհրաժեշտ է, որ պատերը հաստ լինեն եւ ըստ կարելոյն ամուր սեղմւած (գիլզաների պատերը սեղմելու համար բացի ձեր տեսած գործիքից, կայ եւ մի ուրիշ տեսակը, որի նկարագրութիւնը յետոյ կ՚ուղարկենք)։ Աւելի վստահ լինելու համար կարելի է եւ մի երկու տակ ամուր կանէփի թելով պատել ամբողջ երկարութեամբը եւ ապա սօսնձել երեսը։ Փողը այդպէս պատրաստելուց յետոյ պէտք է լաւ թողնել չորանայ եւ յետոյ մի կողմը գոցել շատ սըխ կերպով։ Կը ստացւի հետեւեալ ձեւը

Պատրաստի ռումբը (վառօդը հետը) պիտի այնպիսի տրամագիծ ունենայ, որ ազատ մտնի «թնդանօթի» մէջը։ Ռումբը թնդանօթի մէջը գցելուց յետոյ միայն հարկաւոր է վառել պատրոյգը, որը պէտք է այնքան երկար լինի, որ մեծ մասը թնդանօթի բերանից կախւած լինի։ Պատրոյգի կրակը կը հաղորդւի, ինչպէս ասացինք, ռումբի պատրոյգին (բիկֆորդի) եւ իսկոյն եւեթ վառօդին։ Վառօդի ուժը

դուրս կը նետի ռումբը արդէն վառուած պատրոյգով, որը հասնելով կապսիւլին կը պայթեցնի ռումբը։ Վառօդի պայթումից կապսիւլը չի պայթում, որովհետեւ 1) ռումբը դուրս է գալիս առանց ճնշւելու փողի մէջ 2) կապսիւլը փափուկ խմորի մէջ լինելով հարուած չի կրում։

Թնդանօթին հարկաւոր է ի հարկէ որոշ թեքութիւն տալ (աւելի լաւ է 45%) ռումբը ըստ կարելոյն հեռու ձգելու համար։ Այսպիսով կարելի է նետել ռումբեր պարունակող 1.5 ֆ-ից մինչեւ 10-15 ֆունտ խմոր մինչեւ 400-500 քայլ հեռաւորութիւն եւ էլ աւելին։ Աւերումները սոսկալի են։ Գլխաւոր առաւելութիւնը թեթեւութեան մէջ է։ Նա չի պայթում, որովհետեւ բերանը բաց է, բայց որպէսզի չայրւի, չփչանայ, ներսը կարելի է դնել մի թիթեղեայ խողովակ, նոյն տրամագծով։ Կարելի է հէնց առաջուց վերցնել թիթեղեայ փողը եւ վրան փաթաթել թղթերը՝ եթէ ռումբը գլանաձեւ չինէք (դա աւելի հեշտ է)։ այն ժամանակ անհրաժեշտ է, որ առաջի մասը կոնաձեւ լինի։

2) Հրթիռները պէտք է պահել հեռու տարածութիւնների համար։ Գլուխը պէտք է չինել թիթեղից, ինչպէս եւ առաջ։ միայն հաստ թիթեղից, որ ընկնելիս չտափակի։ Փորձեր եղան բրոնզից եւ ալիւմինից։ ենթադրւում էր, որ ահագին բարձրութիւնից ընկնելով՝ բրոնզի ծանր ռումբերը գնդակի ձեւով ճուլւած, խորը կը մտնեն գետնի մէջ եւ խորութեան մէջ պայթելով աւելի մեծ աւերումներ կ՚անեն։ Փորձերը ցոյց տուին, որ ընկնելիս սովորական գետնի վրայ նրանք խորը չեն մտնում եւ աւելի քիչ են քանդում։ Բրոնզը, չուգունը կը մնայ գործածել այն դէպքերում, երբ հարկաւոր է կտորների միջոցով հարուածել ամբոխը։ Դրա համար պէտք է, որ ռումբը ճուլւած լինի, քառակուսիների բաժանւած եւ նա պայթի վայրկենապէս, ուրեմն հարուածից։ Կարոն գիտէ Այգեստանի(3) *ձեւը՝ ծակ խողովակով։*

Հիմա փորձեր են անւում չինելու 1) Խոշոր հրթիռներ (75-80 սանտ. տրամագծով), որոնք կ՚անցնին 2000 մետրից աւել, 5-6 ֆ. ծանրութեամբ 2) Հրթիռներ կարճ պոչով եւ առանց պոչի 3) հրթիռներ՝ ջրի երեսով ձգելու համար, որոնցով ամենայն դիւրութեամբ կարելի էր խորտակել օր[ինակ] Աղթամարի վրայ եկող նաւը, 4) Հրթիռներ ամբոխի դէմ, ձիաներին վախեցնելու համար։ Սրանք պիտի սլանան զիկզակներով եւ պէտք կը գան փողոցները խուժանից մաքրելու համար։

Հետեւանքի մասին մանրամասը կը հաղորդենք։ Յոյս կայ նոյնպէս, որ կարճ ժամանակից յետոյ հնարաւորութիւն կ՚ունենանք Վրէժստանում(4) *հաստատելու մի կանոնաւոր արհեստանոց։*

1.- Խմորը պայթուցիկ նիւթն է, ուժանակ:
2.- Պայթուցիկ պատեան:
3.- Այգեստան – ծածկանուն Գանձակի:
4.- Վրէժստան կամ Վրէժ՝ Ատրպատականն է:

643

Փաստ. 17-195

Մանրատառ 13 էջնոց գրութիւն Ռոստոմի գրչով, անստորագիր եւ առանց թուականի: Կը գտնուի Արեւելեան բիւրոյի թղթածրարին մէջ, ուր նախորդող եւ յաջորդող փաստաթուղթերը կը կրեն 1907 թուականը, Օգոստոսէն–Նոյեմբեր: Նամակը ուղղուած է Վասպուրականի Կեղր. կոմիտէին՝ ի պատասխան այս վերջինի մարտավարական բնոյթի շարք մը առարկութիւններուն, որոնք կատարուած են ըստ երեւոյթին վերոյիշեալ ամիսներուն: Տես «Արամ Մանուկեան – Նամականի», Երեւան, ԵՊՀ հրատարակութիւն, 2018, էջ 477-481 եւ 489-493:

Գրութեան աւելի մօտիկ թուականը ճշդելու համար հիմք պէտք է ընդունիլ, Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. ժողովէն վերադարձին Ռոստոմի եւ Վանայ Իշխանի (Միքայէլեան) երկու հանդիպումները, առաջինը Թիֆլիսի մէջ Սեպտեմբեր ամսուն, երկրորդը Ատրպատական՝ Թադէոս Առաքեալի վանքը՝ Նոյեմբերին, որովհետեւ իր նամակին մէջ Ռոստոմ կը գրէ «Իշխանը կը լրացնէ պակասները»: Արդարեւ Իշխան Նոյ. 9-ին պիտի մեկնէր Ս. Թադէէն Վան վերադառնալու համար, իսկ Ռոստոմ Դեկտ.ի սկիզբը պիտի շարունակէր իր ճամբան դէպի Թեհրան՝ պարսիկ սահմանադրական ղեկավարներու հետ բանակցութիւններ վարելու եւ Դաշնակցութեան անունով համագործակցութեան պայմանագիր կնքելու համար: Ուրեմն, խնդրոյ առարկայ նամակը գրուած կրնայ ըլլալ կամ Թիֆլիսի մէջ Սեպտ.ի վերջերուն, կամ Ատրպատական՝ Նոյեմբերի սկիզբը, եւ կամ, ինչ որ աւելի հաւանական կը թուի մեզի, սկսած ըլլայ Թիֆլիս եւ շարունակուած՝ Ս. Թադէի մէջ: Այս առթիւ յայտնենք, որ առաջին մասէն ետք (աստղանիշերով բաժնուած մեր կողմէ), այլ գրիչով մը կատարուած է յաջորդ էջերու թուագրումը:

Վաղուց է որ պատրաստւում ենք պատասխանել սահմանադրի խնդրի մասին(1) *ձեր գրած կարծիքներին։ Զգում էինք նիւթի կարեւորութիւնը, ինչպէս նաեւ անհրաժեշտութիւնը ցրել մի շարք թիւրիմացութիւններ, որոնք ծագել էին մեր տուած առաջին տեղեկութիւններից։ Բայց ձեր անսպասելի վերաբերմունքը, ձեր պատասխանի ձեւը եւ տոնը, անտեղի սպառնալիքները ու վիրաւորանքները մեզ ախորժելի դրութեան մէջ չէին դրել։ Երկրի ընկերները միշտ արտօնութիւն են ունեցել գրգռւած, վիրաւորական նամակներ գրել, հայհոյել դրսի ընկերներին. մենք սովորել ենք տանել այդ բոլորը, մտնելով երկրի ընկերների հոգեկան դրութեան մէջ։ Իսկ այն, ինչ ցոյց տուեց Վասպ[ուրականի] Կ. Կոմիտէն իր երկու նամակների մէջ, արդարացնել չի կարելի ոչ մի տեսակէտից։ Մեզ համար կատարեալ հանելուկ էր ձեր բոյկոտական սպառնալիքը. դառն նորութիւն, որ իբր թէ «անզգալի եւ անտեսանելի թափով* (!) *հեռանում ենք իրարից». չէինք հասկանում, թէ ինչու ձեր դիակների վրայով պիտի անցնինք մենք, կամ ինչու դուք «գլխարկներդ առած մնաս բարեաւ պիտի ասէք խոր խոցւած եւ տառապեալ ժողովուրդին»։ Անցեալներում էլ եղել են անհամաձայնութիւններ, բայց ոչ մի մարմնի մտքով չի անցել ցոյց տալ այդպիսի մի խրոխտ վճռողականութիւն։*

Կ. կոմիտէիդ յետագայ նամակները թէեւ մեղմացրին առաջինների տպաւորութիւնը, այնուամենայնիւ այս տողերը գրում ենք ձեր «վերաբերմունքի» ճնշումից դեռ եւս չազատուած։

Պատասխանենք կէտ առ կէտ. դրանով մենք չպիտի կարողանանք տալ մեր հայեացքների ամբողջութիւնը. բայց Իշխանը կը լրացնի պակասները։

1) *«Մեր հարցը պիտի վճռել ոչ թէ օտար պետութիւնների միջամտութեամբ, այլ բուն օսմանեան ներքին յեղափոխութեամբ», գրում էք դուք։ Հակադրել այս երկու բաները մենք համարում ենք սխալ։ Նախ որ երբեք չպիտի մոռանանք, որ օտար պետութիւնների միջամտութիւնը մի անհրաժեշտութիւն է, որի հետ ուզենք չուզենք պիտի ստիպւած գործ ունենանք։ Նա տեղի կ՚ունենայ հակառակ մեր, հակառակ օսմանեան ամբողջ ազգաբնակութեան կամքին։ Նա եղել է անցեալում, կայ ներկայումս եւ կը լինի էլ ապագայում, անկախ մեր կամքից։ Թուրքիոյ արդի կացութիւնը, յեղափոխական շարժման ուշանալը, արագանալը, նրա յաղթանակը կամ պարտութիւնը նոյնպէս կախւած կը լինի օտար միջամտութիւնից։ Երկրորդ, սխալ է օտար պետութիւնների միջամտութեան խնդիրը դնել ընդհանրապէս։ Նա ունի այլ եւ այլ ճիւղաւորումներ՝ համաձայն իւրաքանչիւր շահագրգռւած կողմի քաղաքականութեան։ Մեր խնդրի տեսակէտից այդ ճիւղաւորումները բաժանւում են երկու մասի. մի մասի ձգտումները համապատասխան են մեր շահերին. միւս մասինը՝ հակառակ։ Մի մասը ձգտել է եւ պէտք է ձգտի տապալելու կամ թուլացնելու բռնակալական ռեժիմը եթէ ոչ ամբողջ երկրում, գէթ նրա մի մասում, միւսը գործել է եւ գործում է հակառակ ուղղութեամբ։ Երբեմն մէկն է յաջողութիւն ունեցել, երբեմն միւսը։ Հետեւաբար ամէն մի կուսակցութիւն, լինի հայ, լինի օսմանեան, պէտք է հաշտւի այն մտքի հետ, որ գործ պէտք է ունենայ անխուսափելիօրէն օտար միջամտութեան հետ, ուր նա կը գտնի իրեն համար թէ դաշնակիցներ եւ թէ հակառակորդներ։ Նա պարտաւոր է, ուրեմն, շփւել արտաքին քաղաքական հոսանքների հետ, ուսումնասիրել հնարաւորութեան սահմաններում իւրաքանչիւրի ուղղութիւնը, ընտրել իրեն համար որոշ քաղաքական տակտիկա, պարապել, մի խօսքով, ինչպէս դուք արհամարհանքով ասում էք «պոլիտիկայով»։*

Նոյնիսկ ոչ մի միջազգային դաշնագրով չկաշկանդւած Ռուսաստանի յեղափոխական եւ ընդդիմադիր տարրերը դիմում էին արտաքին, օտար պետութիւնների միջամտութեան անուղղակի կերպով՝ հասարակական կարծիքի վրայ ազդելով եւ երբեմն էլ ուղղակի կերպով, օրինակ փոխառնութիւնը խանգարելու համար կամ պոգրոմների առաջն առնելու նպատակով։ Ձենք խօսում Ֆինլանդիայի մասին, որը ահագին գործ կատարեց շնորհիւ իր «արտաքին» քաղաքականութեան։ Իսկ մենք որ գործում ենք օտար խնամակալութեան տակ գտնւող մի երկրում, որը իր գլխի տէրը չէ, ուր ամէն մի քայլը այս կամ այն ուղղութեամբ ազդում է շահագրգռւած կողմերի վրայ, ինչպէ՞ս մենք կարող ենք ասել, թէ մեր հարցը չպիտի վճռւի առանց օտար պետութիւնների միջամտութեան։

Եթէ մենք աչք փակենք իրականութեան վրայ, եթէ ասենք, թէ օտար միջամտութիւն չենք ուզում, դրանով նա չի վերանալ։ Ընդհակառակը մենք պէտք է լարւած ուժերով հետեւենք շահագրգռւած կողմերի ձգտումներին եթէ ոչ լաւագոյն վիճակ ստեղծելու յուսով, գէթ ոտքի տակ չգնալու համար։

Դուք կ՚առարկէք, թէ կուսակցութիւնը դիւրութիւններ չունի, որ նա կարող է խաբւել։ Ընդունում ենք, կարող է պատահել. բայց աւելի լաւ է խաբւել քան թէ կամովին աչքերը խփել եւ թողնել մեր բախտը իրերի հոսանքին։ Այն էլ պէտք է աւելացրած, որ կուսակցութիւնը այդ տեսակէտից անհամեմատ լաւ պայմաններում է

գտնում, քան կարող էինք յուսալ։ Եւ որովհետեւ այդ դիւրութիւնը պարտական ենք կուսակցութեան ձեռք բերած ուժին ու հեղինակութեան, բնականաբար մենք պիտի ձգտէինք աւելի եւ աւելի զօրանալու, դառնալու այն ազդակը, որը հնարաւորութիւն կ՚ունենայ քանդելու հաստատուած status quo-ն. յենուած այդ զօրութեան վրայ, մեզ նպաստաւոր արտաքին հոսանքը, իր շահերի համար «կը միջամտի» ակտիւ կերպով եւ կ՚աշխատի առաջ բերել նոր կարգեր։ Սա պէտք է լինի նաեւ թիւրք յեղափոխականների տակտիկան։

Աւելորդ չենք համարում աւելացնել,— որպէսզի բիւրոկրատ-բուրժուա պետութիւնների ատելի լինելու մասին երկրորդ անգամ մեզ չյիշեցնէք — որ քաղաքական արտաքին հոսանքը նպաստաւոր համարելիս՝ մենք աչքի առաջ ունենք քաղաքական փոփոխութիւնների առաջին էտապը միայն, որից յետոյ յարաբերութիւնները, ի հարկէ, բոլորովին այլ ուղղութիւն կ՚ընդունեն։

Ուրանալ այն հանգամանքը, որ մեր յիշած հոսանքը վճռողական դեր է խաղացել անցեալում շատ ուրիշ դէպքերում եւ որ նա արտայայտւել է եւ արտայայտւում է նաեւ մեր խղճուկ կեանքում,— դա գուցէ հարկաւոր գայ պատանիների եռանդը եւ ինքնավստահութիւնը շարժելու համար, բայց չի կարող ծառայել իբրեւ ճանապարհ՝ մեր իրականութեան դրական եւ բացասական կողմերը ճանաչելու եւ գործնական քայլերին դիմելու տեսակէտից։

Դիպլոմատական բանակցութիւնները վտանգաւոր էին կուսակցութեան համար այն ժամանակ, երբ նա դեռ ձեռք չէր բերել ներքին բաւարար ոյժ եւ արտաքին հեղինակութիւն։ Կուսակցութեան ուժերը կը դրուէին այդ դէպքում ոչ նպատակայարմար ուղղութեամբ։ Իսկ երբ կուսակցութիւնը այսօր համարւում է ամբողջ ազգի ներկայացուցիչը, երբ ուրիշներն են նրան դիմում, նրա աջակցութիւնը փնտռում (ի հարկէ իրենց օգտի տեսակէտից) եւ նա կարող է բանակցութիւնները վարել իր ծրագրի համաձայն, մնալով յեղափոխական հողի վրայ, այսպիսի պարագաներում ոչ մի ըէզոն(2) չկայ խրտնելու «պոլիտիկայից»։

Այս կէտի վրայ աւելորդ ենք համարում աւելի երկար կանգ առնել, որովհետեւ սպասում ենք, որ մօտ ժամանակներում ինքներդ կանոնաւոր «պոլիտիկա» սկսէք օտար պետութիւնների ներկայացուցիչների հետ, գուցէ, ով գիտէ, եւ ներքին թշնամիների հետ։ Այնտեղ, ուր մի կուսակցութիւն իր դէմը ունի բազմաթիւ եւ բազմատեսակ հակառակ տարրեր, հակառակութեան տարբեր աստիճաններով, ուր այդ տարրերը իրենք ունեն իրենց մէջ հակառակութիւններ, նա ստիպւած պէտք է լինի ժամանակաւոր համաձայնութեան գալու երկրորդականների հետ, իր հարւածները գլխաւոր թշնամու դէմ ուղղելու համար։

Ահա մօտաւորապէս ինչպէս ենք մենք հասկանում «պոլիտիկան»։ Պարզ է, ուրեմն, թէ ինչու մենք չենք հակադրում օտար պետութիւնների միջամտութիւնը օսմանեան ընդհանուր յեղափոխութեան, ինչպէս դուք էք անում։ Այդ հակադրութիւնը մասամբ նշանակութիւն կ՚ունենար այն դէպքում, եթէ մենք դիմէինք օտարների միջամտութեան՝ անջատելու համար Տաճկաստանից եւ կազմելու համար քաղաքականապէս անկախ մի մարմին. քանի որ մենք բացարձակապէս եւ որոշակի յայտարարել ենք, որ անջատելու ոչ մի ձգտում չունենք, թիւրք յեղափոխականները վատ աչքով չպիտի նայեն օտար միջամտութեան խնդրին, թէկուզ այդ լինի միայն հայկական նահանգների համար։

Աւելին կ՚ասենք, եթէ մենք մեր շահերին նպաստաւոր համարէինք անջատելը, մենք պիտի պահանջէինք թիւրք յեղափոխականներից, որ նրանք մեզ աջակցեն, ինչպէս աջակցում են, օրինակ, ռուս յեղափոխականները Լեհաստանի անկախու-

թեան։ Դուք կ՚ասէք, որ անբնական է այդքանը պահանջել թիւրք յեղափոխականներից. ընդունում ենք, բայց մենք մեր համակերպութեան մէջ այնքան չխրւենք, որ հրաժարւենք օգտւել օտար միջամտութեան յարմար առիթից, որովհետեւ թիւրք յեղափոխականներին դա դուր չի գալիս։ Համերաշխութիւնը պիտի կայանայ յեղափոխական հողի վրայ. ոչ թէ մենք պէտք է իջնենք դէպի թիւրքերի պահանջները, որոնք հետեւանք են թիւրք շովինիստական հոսանքի, այլ թիւրք կոչւած յեղափոխականներին բարձրացնենք-դնենք յեղափոխական հողի վրայ։

Այստեղ մենք մօտենում ենք երկրորդ կէտին. դրա մասին յաջորդ անգամ։

*

* *

1) «Մեր միակ ուղիղ եւ ճիշտ ճանապարհը օսմանեան ժողովրդի ընդհանուր յեղափոխութիւնն է», աւելացնում էք դուք։ Այս նախադասութիւնը երկու իմաստ կարող է պարունակել։ 1) Ոչ մի շարժում չանենք, մեր բոլոր գործերը կապենք օսմանեան ընդհանուր յեղափոխական շարժման հետ, եւ 2) Առաջին պահանջով դուրս չգանք, դնենք ընդհանուր օսմանեան պահանջներ։ Այս խնդրի մասին նախորդ նամակով խօսել ենք, բայց հարկ ենք համարում մի քիչ էլ կանգ առնել դրա վրայ։

«Մեր ճիշտ ճանապարհը օսմ. ժողովրդի ընդհանուր յեղափոխութիւնն է»։ Բայց ախր այդ ցանկալի ընդհանուր յեղափոխութիւնը դեռ գոյութիւն չունի եւ դժւար թէ մօտիկ ապագայում առաջ գայ։ Դուք ինքներդ աւելացնում էք «ամենահաստատուն ապացոյցներ ունենք, եթէ միայն կարող ենք որոշ երեւոյթներ ընդհանրացնել»։ Քանի որ եթէ կայ, էլ ի՞նչ ամենահաստատուն ապացոյցների մասին կարող է խօսք լինել։ Մենք այդ եթէ-ին մեծ կարեւորութիւն ենք տալիս եւ կարծում ենք, որ դուք աւելի լաւատես էք, քան հարկաւոր է։ Մեր տպաւորութիւնը այն է, որ թիւրքերը յեղափոխական ասպարէզի վրայ դեռեւս չեն կարողանալու դիմացկանութիւն ցոյց տալ, որ փոքրիկ ճնշումների հանդէպ նրանք շուտով ընկճւելու են։ Մենք չխաբւենք Պարսկաստանի օրինակով,— այնտեղ կառավարութիւնը ոյժ չունի, ժողովուրդը, կարելի է ասել, աւելի լաւ է զինւած, քան զօրքը, այնտեղ կառավարական ճնշումները չեն կարող լայն չափեր ընդունել։

2) Յեղափոխական շարժման ուժեղանալը Տաճկաստանում պայմանաւորւած կը լինի ոչ իր ներքին զարգացմամբ։ Ոչ այնքան յեղափոխութեան զօրանալն է թուլացնելու կառավարական ոյժը, որքան կառավարութեան թուլանալն է ասպարէզ բաց անելու յեղափոխականների համար։ Դիւրին պայմաններում գլուխ բարձրացրած «յեղափոխականները» չափազանց քիչ են նմանելու նրանց, որոնք անցնում են կռւի, արիւնի, զոհողութիւնների ճանապարհով։ Իսկ այս տեսակէտից (զոհողութիւնների) ի՞նչ են ներկայացնում նրանցից ամենալաւերը, ձեր աչքի առաջ գործողները։ Շատ բա՞ն են նրանք զոհաբերել, թէկուզ դրամական կամ անձնական վտանգի կողմից։ Իսկական յեղափոխական շարժումը Տաճկաստանում դեռ երկար կարող է սպասել տալ, դեռ չափազանց մեծ ջանքեր պիտի թափւեն յատկապէս մեր կողմից՝ այդ շարժումը կանոնաւոր ընթացքի մէջ դնելու համար... Իսկ մինչ այդ՝ մենք պիտի՞ հրաժարւենք «օտար միջամտութիւնից», մեր առանձին պահանջներից, եթէ քաղաքական նպաստաւոր պայմաններ հանդիսանան։

Դուցէ մենք հեռւից շատ բան չենք տեսնում եւ սխալւում ենք մեր դիտողութիւնների մէջ, դուցէ ըէակցիան չի ճնշելու. ենթադրենք, որ այժմեան թիւրք յեղա-

փոխականները իսկական յեղափոխականներ են եւ որ շատ շուտ ժամանակի մէջ շարժումը ընդհանրանալու է օսմանեան ամբողջ պետութեան սահմաններում։ Ի՞նչ կը լինի այդ ժամանակ.— ամենայայտնի դէպքում՝ այն, ինչ եղաւ Ռուսաստանում, այսինքն խառնաշփոթութեան առաջին օրերն անցնելուց յետոյ տիրապետող տարրերը կը կազմակերպւեն եւ կ՝անցնեն կառավարութեան կողմը. եւ անգիտակից ժողովուրդը, որը սովոր է խոնարհւել նրանց հեղինակութեան առջեւ, կը հետեւի նրանց։ Իսկ մինչ այդ կառավարութիւնը չի յապաղիլ ձեռք առնել իր սեփական միջոցները։ Թէ ինչ կը լինի ուրիշ վայրերում, այդ թողնենք, բայց որ հայկական նահանգներում քիւրդ աշիրէթներից շատերը, չեն հրաժարւիլ խաղալ նոյն դերը, ինչ խաղացին ամբողջ Ռուսաստանում կոզակները, իսկ ժամանակաւորապէս մեզանում՝ թիւրքերը,- դրա մէջ դժւար է կասկածել։ Պէտք չէ՞նք զգալու արդեօք այդ ժամանակ «օտար միջամտութեան», չէ՞ն տեղալու հեռագիրներ եւ այլն... Ինչո՞վ են օգնելու մեզ թուրք յեղափոխականները այդ վտանգի օրերում։

Ձեր ուշադրութիւնն ենք դարձնում եւ մի ուրիշ հանգամանքի վրայ, որ անպայման կերպով պիտի կապւի օսմանեան յեղափոխական շարժման ընդհանրացման հետ։ Ընդունենք, որ ձեզ ծանօթ յեղափոխական դէմքերը կատարեալ են, որ նրանք տարւած են մարդկային ամենալայն իդէալներով։ Երբ ընդհանրանայ շարժումը, ոչ միայն նոյն տեսակ մարդիկ դուք չէք հանդիպիլ շատ ուրիշ շրջաններում, այլեւ նոյնիսկ Շամի(3) *ձեր կատարեալ յեղափոխականները չեն կարողանալու պահել իրենց տրամադրութիւնը, կամ եթէ պահեն, հնարաւորութիւն չեն ունենալու արտայայտել նրան։ Եթէ Ռուսաստանում, ուր գաղափարական վսեմ կռիւը յանուն ամենաբարձր իդէալների կէս դարուց աւել անցեալ ունի, այնքան ուժեղ կերպով արտայայտւեցին ազգայնական տենդենցները նոյնիսկ յեղափոխական բանակի ստւար մասի մէջ — դեռ չենք խօսում առաջւանից դիրք ունեցող շրջանների մասին,— ինչ պէտք է լինի Տաճկաստանում, ուր գաղափարական թիւրքերը, մատներով պիտի համրւեն։ Կապել այս պատճառով մեր բախտը ընդհանուր օսմ. շարժման հետ, միայն նրա մէջ փնտռել մեր փրկութիւնը, նշանակում է խեղդամահ անել մեր գործը ոչ միայն ազգային, այլ ընդհանուր յեղափոխական տեսակէտից։*

Ահա թէ ինչու դեռեւս մենք պարտաւոր ենք շարունակել պնդել մեր պահանջների վրայ, եւ եթէ յարմար առիթ ներկայանայ իրագործւած տեսնելու յեղափոխական պահանջների մի մասը Տաճկաստանի մի մասում, մենք չպիտի բաց թողնենք այդ առիթը։ Մասնակի բարեփոխութիւնը արագացնել միայն կարող է ընդհանուր շարժումը։

Մեր շարժումը ընդհանուրի հետ կապելու ձգտումը հիմք ունի նաեւ այն, որ դրանով, ընկերների կարծիքով, խոյս տւած կը լինենք հայկական սպեցիֆիկ կոտորածներից։ Բայց դա մասամբ միայն, կարելի է նոյնիսկ ասել — շատ քիչ դարման կ՝անի մեր ցաւին։ Վերը մենք խօսեցինք արդէն կառավարութեան հաւանական դերի մասին՝ խուլիգանական շարժումներ առաջ բերելու, պոգրոմներ սարքելու գործի մէջ։ Յիշեցնենք՝ այդ հանգամանքի վրայ մեծ յոյսեր դնող մեր ընկերներին հրեաների օրինակը Ռուսաստանում։ Չնայած նրանց ամէն ձեւի համակերպութեան, ազգայնական ձգտման կատարեալ բացակայութեան անցեալում, իսկ շատ թոյլ արտայայտութեան վերջին տարիներս, հրէական ջարդերը իրենց միօրինակութեան եւ քրոնիք բնաւորութեան շնորհիւ սովորական երեւոյթների շարքն են անցել։ Յեղափոխական կուսակցութիւնների պլատոնական համակրութիւնները, այնքան քիչ մխիթարանք են հրեաների համար!... Եւ ընդհակառակը, ոչ ոք չի լսել լեհական պոգրոմների մասին, չնայած, որ լեհ բոլոր կուսակցութիւնները՝ կղերական-բուրժուական կոլորից, նարոդովցիներից սկսած մինչեւ ծայրայեղ յեղափո-

խականները բացորոշ կերպով ձգտում են կամ քաղաքական կատարեալ անկախութեան կամ լայն աւտոնոմիայի։

Մեր համակերպութիւնը Թիւրքերի տրամադրութեան, կրկնում ենք, շատ քիչ կ՚օգնի մեզ, ինչպէս քիչ է օգնել եւ մեր պապերի համակերպութիւնը։ Երկիւղ կարելի է կրել, որ մեր հաւատը՝ տածած դէպի Թիւրք յեղափոխական շարժման փրկարարութիւնը նոյնպէս վնասի մեր ներքին կազմակերպութիւնը աւելի զօրեղացնելու գաղափարին, ինչպէս վնասում էր մի ժամանակ կոյր հաւատը ընդհանրապէս դէպի դիպլոմատիան։ Իսկ ներքին սեփական ոյժ աւելացնելը մենք համարում ենք հիմք մեր ամէն տեսակ քաղաքականութեան, ներքին թէ արտաքին։

Օսմանեան դաշնակցութեան ծրագիրը, որ արդիւնք է նոյն համակերպման քաղաքականութեան, աններելի սխալ պէտք է համարել մեր շահերի տեսակէտից։ Աւելի մեծ սխալ էր մեր ուրախութիւնը, մեր փառաբանութիւնը, մեր պարծենալը, որ դա կազմւած է մեր ազդեցութեան տակ։ Այդ ծրագրի մէջ մենք դժբախտաբար ոչինչ չտեսանք դաշնակցական-ֆեդերատիւ։

Ո՞վ ենք եւ ո՞ւմ հետ ենք բանակցում, հարցնում էք դուք։ — Յեղափոխականներ ենք եւ բանակցում ենք պարսիկ ժողովրդի ընտրած ներկայացուցիչների հետ։ Ձեր յուզւած բացագանչութիւնից պարզ է, որ դուք աչքի առաջ էք ունեցել Շահի կառավարութիւնը, բայց փաստը այն է, որ Ուրմիոյ, Սալմաստի, Խոյի գրաւումը Շահին էլ անհանգիստ չի անում. բողոքողը ժողովուրդն է, եւ մենք չենք բաժանում ձեր կարծիքը. իբր թէ ոյժ տալով բողոքող ձայնին, մենք վնասած կը լինենք պարսկական յեղափոխական կուսին։ Մենք համոզւած ենք մնում, որ նպաստելու ենք Պարսկաստանի դեմոկրատական շարժման համաձայն Ընդհանուր ժողովի «այնքան խելացի որոշումների»։ Աւելորդ էր բոլորովին այդ առթիւ ձեր արտայայտած վրդովմունքը եւ կարդացած բարոյականը։ Եւ այստեղի ձեր «դիպլոմատ» ու (միւս ածականը անընթեռնելի մնաց) ընկերները բնաւ ցանկութիւն չունեն «բիւրոկրատ-բուրժուա կառավարութիւնների զզւելի եւ անտանելի պատկերը» լաւ գոյներով ներկայացնել։ Նրանք եւս քիչ միչ բան են կարդացել, տեսել եւ լսել։

Մնացած կէտերի վրայ կանգ չենք առնում, առանց այն էլ շատ երկար դուրս եկաւ։ Եթէ մեր գրածների մէջ պատահին աւելորդաբանութիւններ, ակնյայտնի ճշմարտութիւններ, չնեղանաք, յիշեցէք ձեր նամակների մի քանի կէտերը։ Եթէ չհամաձայնէք մեր տեսակէտների հետ, Օֆենբախի Աքիլէսի նման խսկոյն ձեռքը սուրին մի տարէք, սպասէք, տեսակէտները պարզելու եւ համաձայնութեան գալու համար միջոցներ պակաս չեն։ Մոմենտը այնքան լուրջ է, որ պահանջում է աւելի քան առատ քննադատութիւն։ Մի բան չմոռանանք.— այդ այն է, որ հակառակ մեր եւ մեր կամքի կարող ենք ընկնել քաղաքական հոսանքների .....-ի(4) մէջ։

Ռ[ոստոմ]ը մեկնում է Վրէժի կողմերը, որտեղից նա կը տայ նոր տեղեկութիւններ(5)։

*

* *

Ակամայ հարց է ծագում, թէ հապա կուսակցութիւնը ինչո՞ւ կոչւում է Օսմ. դաշնակցութիւն։ Նրա քաղաքական մասը շատ հեռու չէ Միդհատ փաշայի սահմանադրութիւնից(6)։ Նահանգային ինքնավարութիւնը, որքան յիշում ենք, մտնում է այնտեղ նոյն ծաւալով, ինչ ծաւալով նշանակւած է Օսմ. դաշնակցութեան ծրագրի մէջ։ Յամենայն դէպս ռուսական զեմստվօ*-ները(7) ունեն նոյն ֆունկցիաները։ Օսմ. նահանգների օրէնսդրական ֆունկցիաների մասին ոչ մի ակնարկ ծրագրի*

մէջ։ Ամէն ինչ կենտրոնացած պէտք է լինի Պոլսում!... Ռուսաստանում մենք շատ որոշ կերպով պահանջել ենք դաշնակցական կազմ. աշխատել ենք մտցնել տալ եւ միւս կուսակցութիւնների ծրագիրների մէջ,— նոյնիսկ սոցիալ դեմոկրատները ստիպւած եղան ընդունել ազգային ինքնորոշման սկզբունքը, իսկ Տաճկաստանում՝ մենք պիտի այնքան համակերպենք, որ տանք թիւրքերի ձեռքը մի ծրագիր, որով խաչ ենք դնում ամենաէական սկզբունքներից մէկի վրայ։

Թիւրք յեղափոխականների մի մասը հակւած էր ընդունելու դաշնակցական սկզբունքը, մի մասն էլ արդէն ընդունել էր. ընդունւած էր նոյնիսկ մեր առանձին խնդրի օրինական լինելը.ինչո՞ւ չպիտի շարունակէինք պնդել նախկին ճանապարհով.— մի բան, որ անհրաժեշտ էր ոչ միայն մեր շահերի տեսակէտից, այլեւ թուրք «յեղափոխականների» յեղափոխականացման համար։ Կրկնում ենք, համերաշխութեան գործում մեզ չպիտի դրաւի համերաշխութիւնը իբրեւ պրոցես։ Ոչ թէ մենք պիտի իջնենք դէպի թուրքերի պահանջները, որ հետեւանք են մի կողմից մտավախութեան, ձգտումների, հայեացքների անորոշութեան, միւս կողմից թելադրւած են թիւրք շովինիզմի, տիրապետող տարրի ուրոյն հոգեբանութիւնից, այլ նրանց պիտի բարձրացնենք դէպի իսկական յեղափոխական մտածողութիւնը։ Ինչ վերաբերում է մասնաւորապէս դաշնակցական սկզբունքին, մենք ջանք չպիտի խնայենք մտցնել թիւրքերի մէջ նրա անհրաժեշտութեան գիտակցութիւնը։

Պէտք է նրանց հասկացնել, որ միայն ֆեդերատիւ կազմի շնորհիւ հնարաւոր է առաջն առնել սեպարիստական ձգտումների, որոնք ծագել են Մակեդոնիայում, Արաբիայում եւ վաղը կը ծագեն Թիւրքիոյ միւս վայրերում։ Պէտք է յիշեցնել, որ այդ ուղղութեամբ մենք ազդել ենք մակեդոնական խնդրի վրայ դեռ [18]98 թ., երբ մեր միջեւ կայացած համաձայնութիւնից յետոյ մակեդոնական ներքին կազմակերպութիւնը սկսեց գործել՝ «Մակեդոնիան մակեդոնացիների համար» դեվիզը առաջադրելով։ Այդ ճանապարհով հնար եղաւ թուլացնել արտաքին ազդակները (պալքանեան պետութիւնների) եւ կապ հաստատել Մակեդոնիան ընակող ազգերի միջեւ, որոնք մինչ այդ իրար գզգզում էին։ Այդպէս տեւեց մինչեւ 1903 թ. ապստամբական շարժումը, որից յետոյ յեղափոխական շարժումը ընկաւ եւ ներքին երկպառակտումները նորից բորբոքւեցին։ Այդ համաձայնութիւնից դուրս մնացին մահմեդականները։ Իսկ հիմա, վերսկսելով մեր կապը մակեդոնացիների հետ, ձգտում ենք նրանց եւս կապել ընդհանուր շարժման հետ։ Այդ նպատակով է, որ մեր նախաձեռնութեամբ կազմւում է յեղափոխական խորհրդաժողով(8), ուր պիտի առաջին անգամ լինեն մակեդոնացիները տաճիկների հետ։ Այնտեղ յոյս ունենք տեսնել նաեւ արաբներին։

Դուք կարող էք առարկել, որ այլապէս հնար չկայ, որ թուրք ընկերները իրենք ստիպւած են չդնել դաշնակցական կազմի պահանջը, որպէսզի չխրտնեցնեն մահմեդական ամբոխը։ Այդպէս էր, օրինակ, Զերքէզովը, որի հետ բանակցել են այստեղ մեր ընկերները եւ որը աննպատակայարմար է գտել առայժմ պնդել դրա վրայ։ Հաւանական է, որ նոյնը ասած լինեն եւ Շամի թիւրք ընկերները։ Եթէ այդ այդպէս է, մենք՝ մի քայլ առաջ համարելով թիւրք յեղափոխականների ներկայ ծրագիրը, նպաստելով հանդերձ նրանց, գործնական կեանքում, մեր բոլոր հնար եղած միջոցներով, միշտ պէտք է չեշտենք յետագայ քայլերի անհրաժեշտութեան վրայ, ցոյց տանք մեր ծրագրի առաւելութիւնները, պարզենք այն տարածութիւնը, որ բաժանում է նրանց մեզանից։ Իսկ եթէ նրանք համակերպեն մահմեդական տարրերի հոգեբանութեան, մենք էլ համակերպենք նրանց, քիչ ժամանակից յետոյ մենք կը գտնւենք ապայեղափոխութեան վտանգի մէջ։ Գանք այն հարցին թէ ինչում պիտի

կայանայ մեր աջակցութիւնը, թէ որքան զինուած մարդ կը տանք, որքան հրացան եւայլն... Մի կողմն ենք թողնում այն, որ իրականապէս անհամեմատ աւելի շատ կարող ենք անել քան թէ դուք էք կարծում, մենք խնդիրը այլ կերպ ենք դրել։ Արդէն արտասահմանում տեղի ունեցած տեսակցութեան ժամանակ խօսւած է այն բանի մասին, որ մեր աջակցութիւնը պարսկական հողի վրայ առանձնապէս չպիտի ցոյց տրւի։ Այնտեղ մերոնք կը մասնակցեն իբրեւ կամաւորներ, որոնք դուրս են եկել հայրենիքի պաշտպանութեան համար։ Այստեղ էլ, ինչպէս Իշխանից կ'իմանաք, մենք նրանց ուշադրութիւնը հրաւիրել ենք ոչ թէ Պարսկաստանում ցոյց տրուելիք մեր աջակցութեան վրայ, այլ Տաճկաստանի գործունէութեան, ուր մեր ամէն մի քայլը տասնապատիկ աւելի կը վնասի թիւրք կառավարութեան, քան թէ դուրսի գործողութիւնները։ Մասնաւորապէս չեշտել ենք Լիսի(9) *եւ այլ վայրերում տեղի ունենալիք դէպքերի մասին։ Դրա հիման վրայ է, որ մտադիր ենք առաջարկել՝ տալ մեզ դիւրութիւններ երկրի ուժերը զօրեղացնելու համար։ Բացի այդ, մենք պատրաստականութիւն ենք յայտնել օգնել պարսիկ ժողովրդի զինուորական կազմակերպութեան գործին եւ այլն... Այդ պայմանների մասին աւելի մանրամասը կը խօսւի քիչ յետոյ։ Ինչ վերաբերում է սահմանագլխի գործողութիւններին, հարցուփորձից պարզւեց, որ խնդիրը այնքան էլ հեշտ չէ, ինչպէս մեր առաջ ներկայացնում էին։ Լահիջանի բանակի մասին չէին խօսում մինչ մեր տեսակցութիւնը։ Բայց եւ այնպէս դա երկրորդական խնդիր է մեր աչքում. Մենք եւս համաձայն ենք ձեր մի նկատողութեան հետ, որ նոյնիսկ Տաճկաստանի յաղթութիւնը մեզ նպաստաւոր է, թէ ներքին յեղափ. ոյժի զարգացման տեսակէտից, թէ արտաքին յարաբերութիւնները բարդացնելու եւ նոր ազդակներ շարժման մէջ դնելու տեսակէտից։*

1.- Խօսքը կը վերաբերի, Պարսկաստանի յեղափոխական շարժումներու այդ օրերուն, թրքական բանակի ներխուժման եւ Ուրմիոյ շրջանին մէջ կատարած ասպատակութիւններուն:

2.- Ֆրանսերէն՝ իմաստ, պատճառ:

3.- Վան-Վասպուրականի:

4.- Բնագրին մէջ ռուսատառ:

5.- «Ռոստոմը մեկնում է Վրէժի կողմերը», այսինքն Ատրպատական: Այս բաժինը յայտնաբար գրուած է Ռոստոմի Թիֆլիս եղած ժամանակ, նախքան Պարսկաստան մեկնումը (1907 թ. Դեկտեմբեր):

6.- Ապտիլ Համիտ Բ.ի գահակալութեան առթիւ (1876) հռչակուած եւ կարճատեւ կեանք ունեցած սահմանադրութիւն, որուն ընդունման նախաձեռնողը օրուան վարչապետ Միտհատ փաշան էր, որ աննշան փոփոխութիւններով պիտի վերահաստատուէր 1908ին:

7.- Ռուսաստանի մէջ տեղական ինքնակառավարման մարմիններ:

8.- Ակնարկութիւն 1907 թ. Դեկտեմբերի վերջերուն Փարիզի մէջ կայանալիք Թուրքիոյ ընդդիմադիր տարրերու կոնգրէին, ուր պիտի որոշուէր Ապտիլ Համիտի գահընկէցութիւնը եւ Թուրքիոյ մէջ սահմանադրական կարգերու հաստատումը:

9.- Լիսը՝ Կ. Պոլիսն է, որ այլապէս ծանօթ է Վիշապ ծածկանունով:

644

Փաստ. 474-131

«Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած նամակ Պարսկաստանէն: Գրուած է գաղտնի թանաքով: Բացուելու ատեն մելանը տեղ-տեղ տարածուած է:

2 *դեկտ.* 1908

Սիրելիք,

Առաջին նամակս ստացած կը լինէք. խնդրել էի մի բան ուղարկել. ի՞նչ արիք:

Այս անգամ էլ երկար նամակ չեմ գրելու, դեռ թող մնայ. դրութիւնը հիմնովին դեռ պարզուած չէ ինձ համար: Սոցիալ-դեմոկրատները խառնում են, օգտուելով այն ոչ բարեացակամ զգացմունքից, որ մնացել է Դ[աշնակցութեա]ն դէմ հայ-թիւրքական ընդհարումից յետոյ:

Խմբագրութեան մի առաջարկ կայ: Մեր ընկեր Ստեփանը(1) *պատրաստ է իբրեւ լուսանկար անցնել Տաճկաստան եւ յատկապէս հանել այն վայրերի պատկերները, որոնք յայտնի են եղել մեր պատմութեան մէջ: Մեր ծրագրած յեղափոխական ալբոմի համար դա աւելի քան կարեւոր է: Ծախս կը պահանջի մօտ* 500 *ր.*, *եթէ առաջին պտոյտները սահմանափակի Վասպուրականով, կամ Տարօնով: Համաձա՞յն է արդեօք խմբագրութիւնը նրան այդ միսսիայով ուղարկելու: Նա այժմ Ռուսաստան է գնացել ընտանեկան եւ կազմ[ակերպական] գործերով: Ցանկալի է ձեր շուտափոյթ պատասխանը, որպէս զի նա ըստ այնմ կարգաւորի իր ընտանեկան գործերը:*

Մերոնց գործը անաջողութեան էր հանդիպել Սալմաստում..... նահանջից յետոյ, բայց յետոյ Դիլմանի կռւում կարողացել են երեսները պարզ անել: Այդ կռւից յետոյ Սալմաստ է հասել Քեռին 23 *հոգով*(2), *եւ մօտ օրերս Ջուլֆայից Խոյ ճանապարհւեց* 17 *հոգուց մի խումբ: Ասել է, այդ շրջանը արդէն ապահովւած կարելի է համարել:*

Եթէ այդ տափակագլուխ սոցիալ-դեմոկրատ կոչւածները իրենց հպարտութեամբ չմօտենային գործին, ամէն ինչ լաւ կը գնար:

Մանրամասը յետոյ:

Ձեր
Ռ.

2 / XII / 1908

1.- Ստեփան Ստեփանեան (1866-1915) , ծանօթ Բալաջան ծածկանունով: Մասնակցած էր Կուկունեանի արշաւախումբին, աքսորուած Սախալին կղզի, ուրկէ փախուստ տալով հասած էր Թաւրիզ եւ հիմնած լուսանկարչատուն:

2.- Քեռին՝ ծանօթ յեղափոխական մարտիկ Արշակ Գաւաֆեանն է (1858-1916), որ ղեկավարներէն մէկը պիտի հանդիսանար Պարսկաստանի սահմանադրական կռիւներուն մասնակցող հայ զինեալներուն:

645

Փաստ. 18-150

Ռոստոմի այս նամակը կը գտնուի Արեւելեան բիւրոյի թղթածրարին մէջ, բայց աւելի հաւանական կը թուի յղուած ըլլալ Արեւմտեանին. գրուած պէտք է ըլլայ Թեհրանէն. «տխուր տպաւորութիւն է թողնում այս մայրաքաղաքը»: Անթուակիր նամակը մակագրուած է 1908: Ռոստոմ՝ պարսիկ սահմանադրականներու հետ բանակցելու պամար Թեհրան հասած էր Դեկտ. 22-ին: «3-րդ օրն է որ այստեղ եմ» աւելի շօշափելի կերպով կը ճշդէ նամակին թուականը, որ պէտք է ըլլայ 25 Դեկտ. 1907. բանակցութիւնները սկսան 30ին եւ տեւեցին մօտ մէկ շաբաթ:

1908

Սիրելիք,

Թէեւ 3-րդ օրն է, որ այստեղ եմ, բայց միայն այս րոպէիս ձեզ հեռագրեցի իմ ներկայութեան մասին։ Խնդրեցի ձեզ պատասխանել Բագուից գրած նամակիս հարցին, որ վերաբերում է յանձնարարականին։ Ցոյս չունեմ ստանալ, բայց եթէ ստանամ, շատ լաւ կը լինի։ Այնքան, որքան կարողացայ տեղեկանալ, մօտ ապագայում դժւար թէ յաջողւի մեզ մի բան գլուխ բերել։ Դրան պիտի խանգարեն 3 բան 1) սահմանադրականների եւ միապետականների միջեւ կռիւը, որը դեռ շարունակւում է, առայժմ խուլ կերպով, բայց որը անպատճառ մի նոր առթիւ աւելի ուժգին թափով կը յայտարարւի 2) Պարսկաստանի չափազանց թուլութիւնը քաղաքական տեսակէտից, որ ոչ մի յոյս չի ներշնչում քիչ թէ շատ ակտիւ քայլի 3) եւ մասամբ դրա հետեւանք՝ չափազանցրած կարծիքը մեր ուժերի մասին։

Աւելի լաւ է այս խնդրի մասին գրեմ յետոյ, երբ լայն ծանօթութիւններ ձեռք բերած կը լինեմ։ Հիմա մի երկու կարիք ունեմ՝

1) *Պետրոսը*(1) *թող ուղարկի Թաւրիզ երկաթ կպցնելու նիւթից մեծ քանակութեամբ, իսկ 1 կիլոյի չափ հետեւեալ հասցէով՝* [*ռուսատառ*]

2) *Արարատսկին*(2) *եթէ վերջացրել է ծրագրի ռուսերէն թարգմանութիւնը, տպագրէք շուտով եւ ուղարկէք, կամ աւելի լաւ է, ուղարկէք ձեռագիրը Մ. Քաղ. կամ Ոսկանապատ*(3)*, որ այնտեղ տպագրեն։ Եթէ ուշանայ, մի անհամ թարգմանութիւն լոյս կը տեսնէ տեղում։*

3) *Ուղարկեցէք մի համար հետեւեալ հասցէով՝*

Rédaction du journal Kheyrouz Khehan

Rescht (Perse)

Խաչատուրին(4) *շուտով մի առանձին նամակ կը գրեմ. առայժմ յայտնէք նրան, որ մեծ յոյս ունեմ ծրագրի յաջողութեան համար դիւրութիւններ ձեռք բերել։*

Տխուր տպաւորութիւն է թողնում այս մայրաքաղաքը։ Կազմի(5) *վիճակը մխիթարական է։*

Ջերմ համբոյրներով՝ Ձեր Ռ[*ՈՍՏՈՄ*]

1.- Պետրոս՝ Թաւրիզի Դաշնակցութեան «Խարիսխ» զինագործարանի վարպետներէն է. բուն անունով՝ Բագրատ Տէր Յովհաննիսեան:

2.- Արարատսկի – ազգութեամբ լեհ, երեւանցի, սոցիալիստ-յեղափոխական, Դաշնակցութեան ջերմ համակիր. կանոնաւորաբար կ՝աշխատակցէր «Դրօշակ»ին: Իսկական անունը Լունկեւիչ Վալերիան (1866-1941):

3.- Մ. Ք.՝ Մեծ Քաղաք – Թիֆլիս: Ոսկանապատը՝ Բագուն է:

4.- Խաչատուր (Մալումեան) – Է. Ակնունի:

5.- Այսինքն՝ Դաշնակցութեան կազմը:

646

Փաստ. 476-35

Գարեգին (Թադէոսեան Ստեփան) ստորագրութեամբ Վրէժ-Ատրպատականի Կ. կոմիտէին ուղղուած նամակ է, ուր կը յայտնուի Ռոստոմի, Քեռիի ու խումբին ապահով հասնիլը, հաւանաբար, Սալմաստ: Կու տանք միայն նամակին վերջին մասը, որ Ռոստոմի ձեռագրով եւ ստորագրութեամբ է:

Սիրելիք,

Ճանապարհը կատարելապէս ապահով է։ Ամբողջ տարածութեան վրայ միայն մէկ զինուած մարդ տեսանք. այդտեղից կարող են գնալ նոյնիսկ կառքով։ Առաջ գալու էլ պէտք չկայ։ Մեր սուրհանդակը, ինչպէս նաեւ Վանայ հեռագիրը դեռ չեն հասել։

Ապրանքները սկսէք մաս-մաս ուղարկել։

Համբոյրներով՝ ՌՈՍՏՈՄ

4 / V / 1909

647

Փաստ. 98-1

Արեւելեան բիւրոյի հրաւէրը Ե. Ընդհ. ժողովին, խմբագրուած Ռոստոմի կողմէ:

11 *ապրիլի* 1909

Ընկերնե՛ր,

Ուղարկելով շրջանիդ V *ընդհ. ժողովի օրակարգը՝ Արեւել. Բիւրօին փոխարինող ժամանակաւոր մարմինը առաջարկում է՝*

ա. Քննութեան նիւթ դարձնել օրակարգը շրջանիդ լայն մասսաներում.

բ. Եթէ այդ հարցերից դուրս գտնւի ընդհ. ժողովին առաջարկելու այլ կարեւոր հարցեր, մինչեւ մայիսի 15 *անպատճառ հասցնել մեզ.*

գ. Բոլոր որոշումները եւ բանաձեւերը ուղարկել գրաւոր կերպով.

դ. Ուղարկել գրաւոր զեկուցումներ զինական, նիւթական եւ կազմակերպական խնդիրների մասին։

Բոլոր զեկուցումները եւ հաշւեկշիռները հասցնել մինչեւ մայիսի 10 *անպայման.*

Ծանօթ.— Այն շրջանները, որոնք չեն համապատասխանում պահանջւած ցեն-զին, նոյնպէս պիտի ուղարկեն իրանց զեկուցումները։

Ի նկատի ունենալով, որ բանակցութիւններ են սկսած մեր եւ Արեւմ. Բիւրօի մէջ ժամանակի եւ ուր [լինելու] վերաբերեալ եւ կարող է օրակարգում նշանակւած ժամանակը մնալ անփոփոխ, առաջարկւում է շրջանիդ ուղարկել, մանաւանդ, զեկուցումները աւելի շուտ։

ԱՐԵՒԵԼ. ԲԻՒՐՕԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՄԱՐՄԻՆ

P. S.— *ա. Ուղարկւում են նաեւ Արեւել. Բիւրօին փոխ. Ժամ[անակաւոր] Մարմնի կողմից աւելացրած հարցերը։ բ. Եթէ ձեր շրջանում կան անկախ վայրեր, խնդրում ենք նրանց քննութեան համար եւս ուղարկել օրակարգի պատճէնը։*

648

Փաստ. 476-127

Ռոստոմի այս թերաւարտ նամակը հրատարակուած է Հ. Տասնապետեանի կազմած «Ռոստոմ, Նամականի» հատորին մէջ (էջ 450-1) բայց պակասաւոր կերպով: «Վերջին մասը կը պակսի» կը նշէ Հ. Տ.: Արդարեւ մէկ էջ կը պակսի իր օգտագործած պատճէնին մէջ: Կու տանք ձեռագրին ամբողջութիւնը, որ նոյնպէս կը թուի անաւարտ ըլլալ, որովհետեւ 5րդ էջին տակ, ուրիշ ձեռագրով մը՝ Վահան ստորագրութեամբ կայ այս վերջինին (Մատինեան Նիկոլ) գրութիւնը՝ «մինչեւ այս տողերը գրեց Ռոստոմը, շարունակում եմ» բացատրութեամբ:

Նամակը գրուած է հաւանաբար Թաւրիզէն, դէպի Մինարէթ (Սալմաստ) մեկնելու նախօրեակին 1909 թ. Մայիսին, երբ ռուսական բանակը ներխուժեց Ատրպատական, եւ Ռոստոմ, խումբ մը զինակիցներով, դուրս եկաւ Պարսկաստանէն:

1909-ի ամառը, Թաւրիզ

Սիրելիք,

Այս գիշեր մտադիր ենք ճանապարհ ընկնել Մինարէթ(1)*: Յուսով ենք, ապահով տեղ հասնենք, դժւարութիւնը քաղաքից եւ արւարձաններից դուրս գալն է: Մօտ* 12 *հոգի ենք, գուցէ մի երկու վրացիներ էլ մեզ միանան: Տղաների մի մասը գնացել* [է] *Ղարաբաղով, միւսները՝ Ջուլֆայով: Մինարէթ գնացողները գլխաւորապէս տաճկաստանցիներ են: Կը մնան այստեղ* 3-4 *հոգի, որոնք գուցէ նոյնպէս ստիպւած լինեն հեռանալ մի կողմից վտանգի պատճառով, միւս կողմից՝ անգործութեան:*

Այսպէս տխուր եւ վիրաւորիչ վախճան ունեցաւ Թաւրիզի մօտ մի տարւայ կռիւը: Ռուսների ներս գալը այն րոպէին, երբ Սպահանը, Ղազւինը, Ռաշտը սկսել էին սպառնալ եւ Թաւրիզը ոյժ էր զգում դիմադրելու հակառակ սովին, մեզ շատ կոտրեց: Ասել թէ, ռուսների երեւալը անակնկալ էր, ճիշտ չէր լինի. դրա մասին յաճախ խօսւում էր: Սպասում էին միայն այնպիսի մի առիթի, ինչպիսին կարող էր լինել միապետականների յաղթութիւնը, որպէսզի ներս գային իբրեւ փրկարարներ եւ ազատէին ժողովուրդը վայրենի հորդաների վայրագութիւններից: Երբ այդ յոյսը կտրւեց, կպան այն «վտանգին», որը իբր թէ կախւած էր օտարների եւ մասնաւորապէս ռուսների գլխին, եւ այն աստիճան լուրջ կարեւորութիւն տրւեց այդ հանգամանքին, որ մի րոպէ մենք էլ հաւատացինք մի քիչ, որ հիւպատոսը եւ ուրիշները իրօք վախենում են: Մի օր առաջնորդը(2) *շտապով ինձ կանչում է. գնում եմ եւ նրա մօտ գտնում եմ ռուսաց հիւպատոսին, որը յուզւած պատմում է, թէ ինքը հաստատ տեղեկութիւն ունի, որ իրենց եւ առհասարակ եւրոպացիներին լուրջ վտանգ է սպառնում պարսիկների կողմից, որ մոջահիդները*(3) *յոյս ունեն այդ իրենց քայլով ճնշում գործ դնել կառավարութիւնների վրայ եւ այլն: Ես շտապեցի կատէգորիկ կերպով յայտնել, որ իր ստացած տեղեկութիւնները հիմնովին սխալ են, որ յեղափոխականները այդ քայլին հակառակ կը լինեն, աչքի առաջ ունենալով դրան հետեւող ռուսական միջամտութեան անխուսափելիութիւնը. գալով մասնաւորապէս մեզ, ասացի, որ ամէն կերպ արգելք կը հանդիսանանք այդ տեսակ մի յարձակման, թէկուզ այն պատճառով որ դրանից առաւելապէս կը տուժեն հայկական թաղերը: Յամենայն դէպս յանձն առայ գնալ Սաթար խանի մօտ եւ նրա կողմից էլ վստահեցնել, որ բոլորովին հանգիստ մնան: Հետեւեալ օրը Շամ Գազանի կռիւն էր.*

կռւից յետոյ նկատեցինք, որ հիւպատոսարանի տանիքի վրայ պատերը բարձրացնում են եւ դիրքեր են շինում։ Այս կատարելապէս անտեղի պատրաստութիւնները լուրջ մտատանջութեան մէջ ձգեցին բոլորիս։ Անջումանի(4) հաւաստիացումները նոյնպէս ապարդիւն անցան։ Պատրւակ բռնելով ճանապարհների բացման խնդրի առթիւ շահի խուսափողական ընթացքը, անհրաժեշտ դտան ռուսաց զօրք մտցնել եւ «պատժել» շահի կամակորութիւնը։ Մնացածը արդէն ձեզ յայտնի կը լինի։ Կարճ ասեմ,- ռուսները հիմա իրենց կատարեալ տէր են զգում եւ կամաց կամաց ոտները ամրացնում են։

Մեզ մնում է մխիթարւել նրանով, որ այնուամենայնիւ Սահմանադրութիւնը ձեռք բերւեց, որից անպայման կ՝օգտւեն Ատրպատականից դուրս վայրերը եւ գուցէ հեռաւոր ապագայում նաեւ Ատրպատականը։

Նորայայտ 2 էջերը

Քիչ նշանակաութիւն չունի նաեւ այն, որ հնար եղաւ առաջն առնել սպառնացող կոտորածների, ոչ միայն Թաւրիզում, այլ եւ Սալմաստում, Խոյում, Ուրմիայում։

Հիմա որ գործողութիւնը կատարւել վերջացել է, չնայած որ յաճախ պնդում ենք, թէ այս բանը այսպէս լինէր, ռուսները չէին գալ եւ այլն, պարզւում է աւելի եւ աւելի, որ կռւող կողմերը եղել են հին յունական հերոսների վիճակում, որոնց մասին աստուածները վաղօրօք տւել են իրենց վճիռները։ Ռուսները ներս պիտի մտնէին, դա որոշւած է եղել. հարցը միայն ձեւի եւ պարագաների մէջ է եղել... Յանդգնում եմ կարծել երբեմն, որ պարագան ամէնից նւազ ստորացուցիչ էր սահմանադրականների համար։

Մինչեւ այս տողերը գրեց Ռոստոմը, շարունակում եմ։

Էնզելիից նամակ կար ընկերներից, որ իմ հասցէին Ժընեւից գրքեր են ստացել. փոստի կառավարութեան հասցէին գրւեց, որ Էնզէլիում յանձնեն, ուրեմն խնդրում ենք ուղարկել Վրէժի հետ նորից:

Ռուսները ներս գալուց յետ, տէր եւ տիրական են դարձել, կարգադրում են, անում են ամէն ինչ, եւ հեռագրում ըստ իրենց ուզած ձեւի: Ռոստոմի խորհրդով յարմար նկատեցինք որ շատ ստոյգ տեղեկութիւններ շարունակ հաղորդենք ձեզ եւ դուք էլ տարածէք եւրոպական յայտնի թերթերին, ինչպէս այդ արւում էր առաջ ուրիշ վայրերի նկատմամբ: Ձեռագրները խմբագրողները եւ լուրեր հաղորդողները կը լինենք մենք եւ Թաղի-Զադէն(5), որի վրայ կատարեալ վստահանալ կարող ենք, այնպէս որ լուրերը կը լինեն ստոյգ եւ կարող էք վստահութեամբ վերաբերւել:

Իսկ ինչ վերաբերում է այդ ուղղութեամբ արած ձեր ծախսերին, կարծում եմ որ հնարաւորութիւն չի լինի ստանալու եւ ծանր էլ է առաջարկել, կ՝անէք դուք:

Ձեռագրները կը լինեն Ռոստոմի ստորագրութեամբ, չնայելով որ ինքը գնացել է արդէն եւ այժմ Մինարէթ է, բայց այդպէս յարմար նկատեց ինքը:

Ընկ. բարեւներով՝ Ընկ[երների] կողմից՝
ՎԱՀԱՆ

1.- Մինարէթը Սալմատի ծածկանունն է:
2.- Խօսքը Թաւրիզի հայոց թեմի առաջնորդի մասին է:
3.- Պարսիկ յեղափոխականները:
4.- Պարսիկ յեղափոխական կոմիտէ:
5.- Աղա Սէյիդ Հասան Թաղի Զադէ, պարսիկ սահմանադրական շարժումի ազդեցիկ ղեկավարներէն:

649

Չհամարակալուած այս նամակին բնագիրը կը գտնուի Պէյրութի Հ.Յ.Դ. պահոցներուն մէջ: Ռոստոմի այս անթուակիր նամակը ուղղուած է Պարսկաստանի պետական հայ երեսփոխան Յովսէփ Միրզայեանի: Այս մասին իրանահայ ծանօթ հրապարակագիր Յովսէփ Յովհաննիսեան, ծանօթ Էլմար ծածկանունով, կցած է հետեւեալ ծանօթագրութիւնը.– «Ժամանակին ինձ է յանձնուել հանգուցեալ Յովսէփ Միրզայեանի թղթերի մէջ գտնուող Ռոստոմի կողմից նրան գրած սոյն նամակը: Առիթից օգտուելով ուղարկում եմ կենտ. արխիւ» (Թեհրան, Հոկտ. 1973):

Բովանդակութենէն հետեւցնելով՝ Ռոստոմի այս գրութեան թուականը կը տեղադրենք 1909 թ. երկրորդ կիսուն:

Սիրելի Յովսէփ,

Քո թարգմանութեան III *տունը դուրս ձգւած է ոչ թէ խմբագրութեան կամ սրբագրչի յանցանքով, այլ երեւի գրաշարների: Գոնէ խմբագրութիւնը բոլորովին տեղեկութիւն չունէր այդ տունը դուրս ձգւելու մասին:*

Իմ առաջին նամակից էլ տեսած կը լինես, որ դու առհասարակ շատ վատ ես տրամադրւած դէպի Իփէկեանը(1) (*սա է քո թարգմանութիւնը սրբագրողը*), *քան թէ նա դէպի քո ոտանաւորները: Դա շատ հասկանալի է: Բայց եթէ տեսնւես հետը, յուսով եմ, բարեկամանաս: Ինքն էլ քեզ նման սիրահար է բանաստեղծութեան եւ հիմնովին գիտէ անգլիերէն: Նա շատ է ցաւում «փոխան» խօսքի համար, որի կովկասեան իմաստը նա չի իմացել: Խոստանում է այլեւս ձեռք չտալ: Ուղարկիր «Լճի աղջիկը»: Եթէ Իփէկեանը դիտողութիւններ ունենայ, նամակով քեզ կը յայտնենք:*

Զիլինգարեանի(2) *մասին ես էլ էի ուզում գրել: Ամէն կերպ յանձնարարում եմ նրան. լաւ ընկեր կը լինի, լաւ տեսուչ: Միայն թէ լաւ կը լինէր նրա ռոճիկը* 1,500-*ի հասցնել:* (*Շուշւայ թեմական դպրանոցի տեսուչն էր*):

Մի կերպ տղաներին պահեցէք: Վատ կը լինի նրանց վերադարձը: Եթէ տղաների կողմից մի պակասութիւն տեսնես, իմ կողմից խստիւ սաստիր:

Ստորագրութեան խնդիրը շտապեցրու: Լիազօրութիւն ունիս քո ուզած ձեւով վերջացնելու: Փոփոխութիւնների դէպքում, եթէ ոգու դէմ բաներ լինին, այն ժամանակ յայտնիր: Կրճատելուն համաձայնիր, բայց նոր բաներ աւելացնելուն ոչ: Իսկ ամէնից կարեւորն է՝ թող վերջապէս հասցէ տան՝ ապրանքը ուղարկելու համար:

Կարող եմ հաղորդել մի երկու լուր՝ շատ հաստատ աղբիւրից՝ Պարսկաստանի վերաբերեալ:

Գրէյը(3) *վստահեցրել է, որ անգլիական կառավարութիւնը ամէն կերպ կ'աշխատի Մէջլիսի գոյութիւնը ապահովել: Թող այդ կողմից միամիտ մնան:*

Ֆրանսիան կապւած լինելով Ռուսաստանի հետ, դժւար է վստահաբար որոշ բան ասել նրա սեփական տրամադրութեան մասին: Եթէ Պարսկաստանը ինքը ակտիւ քայլեր չանի եւ Ֆրասիայի հետ կապւելու պատրաստականութիւն ցոյց չտայ, Ֆրանսիան կը շարունակի գնալ Ռ[*ուսաստան*]*ի ետեւից: Մի բան սակայն պարզ է դժբախտաբար:*

Ֆրանսիան, երկիւղ կրելով համաեւրոպական պատերազմից, որին իրեն պատրաստ չի գտնում, աշխատում է յետ պահել Ռուսաստանին՝ Պարսկաստանի գործերում աւելի ակտիւ կերպով միջամտելուց։

Բոլգարիան ամէն կերպ պատրաստ է ընդ առաջ գնալու Պարսկաստանի առաջարկին։ Այդ մասին հաւանական է, ինքը առաջին քայլերը արած [կը] լինի արդէն։

Ջումշուտը(4) *սպասում է դաստիարակի գալուն։*

Եթէ նրա գալը ուշանալու է, յայտնեցէք, որ ի զուր տեղը չսպասի։

Համբոյրներով՝
Քո ՌՈՍՏՈՄ

Ներփակ ուղարկում եմ Իփէկեանի անձնական նամակը։
Ն[ՈՅՆ]

1.- Գասպար Իփէկեան (1883-1952):
2.- Արշակ Չիլինգարեան, նախկին տեսուչ Շուշիի թեմական վարժարանին (1906-07):
3.- Եդուարդ Գրէյ (1862-1933), Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար՝ 1905-1916 տարիներուն:
4.- Ջումշուտ – ծածկանուն Մարտիրոս (Մարտին) Տէր Գալստեանի (1882-1952):

650

Փաստ. 1152-148

Ցուցակին մէջ թուականը՝ 31-8-1909: Հաւանաբար Վառնա գումարուած Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. ժողովի նախօրեակին, կամ առաջին օրերուն, գրուած է Ժընեւ գտնուող Մարին (Միք. Տէր Մարտիրոսեանին):

Սիրելի Մար,

Խարախանեանի պարտքի մասին չի կարող Արեւմտ. Բիւրոյի հաշիւների մէջ բան գտնուել։ Ինչպէս գրել էի, պէտք է փնտռել Եգիպտոս գրած մի նամակում. ուրեմն քրքրէք նամակների պատճէններում, իմանալու համար, թէ մօտաւորապէս որ ժամանակն է եղել այդ նամակը, նայէք հաշուետետրի մէջ, մուտքի բաժնում ստացուած պէտք է լինի Խարախանեանից մօտ 300-400 *ր. իր պարտքի դիմաց։ Անպատճառ փնտռէք եւ գտնէք։ Հաստատ գիտեմ, որ պարտ է։*

Սրտագին ողջոյններով
ՌՈՍՏՈՄ

651

Փաստ. 1152-154

Ռոստոմի անթուակիր այս նամակը (2 էջ) կ՚ընկերանայ Արեւմտեան բիւրոյին ուղղուած Յոնան Դաւթեանի մէկ էջնոց գրութեան, որ ունի 5 Սեպտ. (հաւանաբար 1909) ամսաթիւը: Տարօրինակ է որ երկու գրութիւններն ալ կը գտնուին Պալքանի Կ. կոմիտէութեան թղթածրարին մէջ: Երեւի Ե. Ընդհ. ժողովի օրերուն, կամ անկէ անմիջապէս ետք գրուած է: Փաստաթուղթը այդպէս ցոյց կու տայ:

Սիրելիք

Միսակ Բդէյեանի խնդրի վերջնական լուսաբանութեան համար անհրաժեշտ են մի քանի դոկումենտներ։ Երեւի կը յիշէք, որ այդ պարոնը 903 *թ. աշնանը ստացել է իր Պոլսոյ եղբօր միջոցով երկու անգամ* 3000-*ական ր*[*ուբլի*], *ընդհ.* 6000 *ր. Բարձրաւանդակի*(1) *ընկերներին հասցնելու համար, բայց խաբել է ընկերներին, ոչինչ չի տուել, առարկելով, որ իբրեւ թէ ինքը Պոլսոյ իր եղբօրից ոչինչ չի ստացել։ Վերջում պարզւում է, որ դա խաբեբայութիւն է եղել,- Պոլսոյ եղբայրը զուր տեղը պիտի զոհ գնար մեր որոշման համաձայն։ Դրանից յետոյ նա սկսում է պնդել, իբր թէ վճարել է ժամանակին Բարձրաւանդակի ընկերներին, Վահանին*(2) *եւ Հրայրին*(3), *այն էլ ամբողջ գումարը։ Մեր ձեռքին մի քանի ապացոյցներ կան նրա խարդախութեան, բայց օրինական փաստերը աւելացնելու համար,- դա անհրաժեշտ է, որ հիմա վերջին խօսքը ասուի,- պէտք է փնտռէք մի քանի թղթեր եւ շուտով մեզ ուղարկէք։*

1) *Բարձրաւանդակի ընկերների հաշւետետրը, Վահանի կամ Հրայրի ձեռքով գրուած։ Դա պէտք է բերուած լինի կարծեմ Անդրանիկի*(4) *ձեռքով։ Աւելի լաւ է, արտագրէք եւ ուղարկէք. մուտքը Նոյեմբ.* 13-*ից* 1903 *թ. մինչեւ* 1904 *թ. Ապր. վերջը։*

2) *Հրայրի կամ Վահանի նամակներից գոնէ մէկը, ուր ասուած է այդ գումարի չստանալու մասին։ Որքան ես յիշում եմ, ընկերները դառնացած գանգատւում էին Բդէյեանից, մասնաւորապէս Պոլսոյ եղբօրից։*

3) *Միսակ Բդէյեանի մէկ նամակը, ուղարկւած Ռուբէնի*(5) *միջոցով Արեւելեան Բիւրոյին, ուր Բդէյեանը արդարանում է նրանով, որ ոչ մի հաշիւ չի պահել։ Մինչդեռ նա հիմա հաշիւ է ներկայացնում, իր հաշւետետրից հանած, ուր արձանագրւած է մանրամասը, թէ երբ եւ ում միջոցով է մաս մաս յանձնւած ամբողջ գումարը։*

Համբոյրներով՝
ՌՈՍՏՈՄ

1.- Բարձրաւանդակ Սասունի կուս. ծածկանունն է:

2.- Վահան Մանուէլեան՝ Դաշնակցութեան ներկայացուցիչ Սասնոյ մէջ. նահատակուեցաւ 1904-ի ապստամբութեան ընթացքին:

3.- Հրայր Դժոխք, Արմենակ Ղազարեան, որ նոյնպէս նահատակուեցաւ 1904-ի Սասնոյ կռիւներուն ընթացքին:

4.- Անդրանիկ՝ հայդուկապետն է, Սասնոյ ապստամբութեան հրամանատար:

5.- Ռուբէն Տէր Մինասեան, որ 1906-1909 տարիներուն կը ղեկավարէր Տարօն-Սասունի յեղափոխական շարժումները:

652

Փաստ. 1152-158

Սիրելի Մար,

Շնորհակալ եմ քո տւած տեղեկութեան համար։ Նեղութիւն կրէք պաշտօնական նամակով Միսակ Խարախ[անեանի] հաշիւը ուղարկելու Մուշ, մարմնին։

Պտէյեանի գործի վերաբերեալ դոկումենտներն էլ եթէ գտնես, շատ կը պարտաւորեցնես։

ՌՈՍՏՈՄ

11 / IX / 1909

653

Փաստ. 1397-112

Ամերիկայի Կեդր. կոմիտէին

Ընկերներ,

Այս մասնաւոր նամակով գալիս եմ ձեզ խնդրելու, որ գոնէ ժամանակաւորապէս դադարեցնէք ամէն տեսակի դիտողութիւններ «Հայրենիքի» մէջ բոլոր հնչակեանների վերաբերմամբ՝ թէ հին եւ թէ նոր։

Դաշնակցութիւնը անցեալում ամէնից շատ է իրեն զսպել, ամէնից քիչ է մղել կրքոտ բանակռիւ, եւ հիմա, երբ ընդհանուր համաձայնութիւն է կայացել բոլոր կուսակցութիւնների մարմինների միջեւ՝ դադարեցնելու անւանարկիչ եւ խիստ յարձակումները, ամէնից աւելի ճշտապահ մենք պիտի լինէինք։ Սակայն հակառակն է դուրս գալիս։ Մի չեղում արդէն արել էր Ազատամարտը, որ բաւական մեծ գլխացաւանքի պատճառ դարձաւ մեր համաձ[այնական] ժողովում եւ պատրւակ եղաւ Սահմանադիրների(1) *հեռանալուն։*

Հիմա էլ «Հայրենիքն» է, որը Արզուեանի(2) *հասցէին կծու խօսքեր է անում* հէնց նոյն համարում, *ուր արտատպւած էր «Ազատամարտից»*(3) *համերաշխութեան ժողովի որոշումը։*

Եթէ մեր ժողովներից մեծ բան չէք սպասում, բայց չէք կարող ասել, որ բոլորովին անօգուտ կ՚անցնեն։ Շուտով կը հրատարակւի ընդունւած բանաձեւը, կրօնի խնդրի վերաբերմամբ. դրան կը հետեւեն միւսները, յետոյ էլ կամաց կամաց կարելի կը լինի դիմել գործնականին։

Ինչ առարկութիւն էլ անելու լինէք, «Երիտասարդ Հայաստանի» օրինակը մէջտեղ չբերէք։

Ընկերական բարեւներով՝
ՌՈՍՏՈՄ

18 / XI / 1909

Յ. Գ.— Ս. Յակովբեանի(4) *մերժման համար ես առանձնապէս չեմ ցաւում։ Մի-*

եւնոյնն է՝ նա ձեզ գոհ չպիտի ձգէր։

Աշխատում ենք համոզել Մարին(5), *բայց չմոռանաք, որ նա էլ հիւանդ է. շատ էլ խստապահանջ չլինէք։*

ՆՈՅՆ

1.- Սահմանադիր Ռամկավար անունով պոլսական կուսակցութիւն, բաղկացուցիչ կազմակերպութիւններէն մէկը ապագայ Ռամկավար Ազատական կուսակցութեան:

2.- Արզուեան Ալեքսան, Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան ղեկավարներէն:

3.- «Ազատամարտ» – Դաշնակցութեան պաշտօնաթերթ, Պոլիս:

4.- Կ. կոմիտէն նկատի ունեցած էր Ս. Յակոբեանը (Թիֆլիսէն) իբրեւ գործիչ Ամերիկայի: Արեւելեան բիւրոյի վկայութիւնը ենթակայինն մասին եղած է, «Մեր ընկերներէն Սիմոն Յակոբեան, Եւրոպա ուսած եւ այժմ Կովկաս ուսուցիչ, փափաք կը յայտնէ գալ Ամերիկա իբր խմբագիր»:

5.- Մար – ծածկանուն Միք. Տէր Մարտիրոսեանի:

654

Փաստ. 106-21

Այս եւ յաջորդ շարք մը նամակները, միշտ գրուած Ռոստոմի ձեռքով, ստորագրուած են «Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուած»: Այդպէս վերանուանուեցաւ Հինգերորդ Ընդհ. ժողովի կողմէ նախկին «Կ. Պոլսոյ Պատասխանատու մարմինը», մինչ Կարինը նկատուեցաւ կեդրոն Արեւելեան բիւրոյի Թուրքիոյ կամ Հայաստանի հատուածին:

28 *նոյ.* 1909

Բանալիի կոմիտէին(1),

Ընկերներ,

Ընկ. Աստիկեանի գրած նոյ. 9/22 *եւ* 23/6 *դեկտ. նամակները ստացած եմ։*

Լեռնասարի(2) *հարցերը կարգադրեցէք, ինչպէս յարմար կը դատէք։ Դրամը կ՚ուղարկուի։ Աւելի լաւ կը լինի ինչպէս եւ մտածել էք, սկսել* 5-*ով։ Հեռագրէք դրամի քանակը, իսկոյն կը փոխադրենք։ Ցոյս ունինք երեքշաբթի օր դրամ ունենալ տրամադրելի։ Աստիկեանը*(3) *ինքը իր ձեռքով թող կարգաւորի եւ այնպէս մեկնի։ Այլեւս այդ խնդրի մասին նամակագրութիւն չլինի, եթէ ոչ դրամը կը վերադարձընենք տէրերին։*

Ամերիկայից եկած չէկերից մէկը վերադարձնում ենք, միւս թղթերի մէջ չենք գտնում. սպասում ենք Վահագնի(4) *գալուն։*

Լեւոնը մի օր եկել է, հարցրել.— բացակայ ենք եղել, յետոյ այլեւս չի երեւացել։ Ստոյգ տեղեկութիւն չունինք։

Վռամեանից նամակ կար, շուտով երեւի այստեղ կը լինի։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. Բ[ԻՒՐՈՅԻ] ԹԻՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ

1.- Բանալին՝ Սամսոն, Ամասիա եւ շրջակայքն է: Մաս կը կազմէր Կայանի (Մարզուան) Կ. կոմիտէութեան:
2.- Լեռնասար – կուս. ծածկանուն Խարբերդի շրջանի:
3.- Տիգրան Աստիկեան եկած էր Ամերիկայէն պատգամաւոր Հ.Յ.Դ. Ե. Ընդհ. ժողովին, ապա մնաց Հայաստան իբրեւ գործիչ:
4.- Վահագն Տաքեւեան:

655

Փաստ. 106-23

1 *դեկտ.* 1909

Իզմիրի Կ. կոմիտէին,

Ընկերներ,

Ներփակ ուղարկում ենք [Դաշնակցութեան] Խորհրդի որոշումի պատճէնը ձեր դատավճռի մասին. ինչպէս կը տեսնէք, վերջնական վաւերացումը թողնւում է ձեր Շրջանային ժողովին։

Իզմիրից գանգատւում են, որ դուք կանոնաւոր յարաբերութիւն չէք պահում հետները։

Մեր ընկերներին հաղորդեցինք ձեր առաջարկը՝ տեսնուիլ Մուխթար փաշայի հետ, կամ յանձնարարական վերցնել նրա վրայ, եթէ արդէն մեկնել է։

Նախարարութիւնը, ինչպէս արդէն տեղեկացած կը լինէք, չտապալւեց։ Կարող էին լուրջ բարդութիւններ տեղի ունենալ։

Այստեղի տրամադրութիւնը հետզհետէ պարզւում է։

Ընկ. բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. Բ[ԻՒՐՈՅԻ] ԹԻՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ

Ընկ. Սարգսեանով՝
Ազգագր. Ս. Թիւրքեանց Քաղուած.

656

Փաստ. 106-24

4 *դեկտ.* 1909

«Դրօշակի» խմբագրութեան

Սիրելիք,

Հաստատում ենք մեր No 207 *նամակը։*

Տիգրանակերտի նամակը ստացանք եւ պատասխանը գրեցինք։ Մարզպետունին(1) *ուշանում է իր ժառանգութեան խնդրի պատճառով։*

Կովկասի ուսանողի համար եթէ որոշ պաշտօն գտնենք, կը յայտնենք։ Գիտէք, որ կազմակերպական միջոցներից տալ չենք կարող, չնայած որ պէտք ունինք մարդու։

Ներփակ հաշիւը մոռացել ենք ուղարկել։ Դրա սկիզբը ձեզ մօտ է, Վառնայից է ստացուած։ Մուտքը տպագրէք «Դրօշակ»ի մէջ։

Ժողովուրդի տրամադրութիւնը հետզհետէ լաւանում է, միայն թէ լրագրային բանակռիւը չափազանց անախորժ բնաւորութիւն է ստացել։

Համբոյրներով՝
Ա[ՐԵՒՄՏԵԱՆ] Բ[ԻՒՐՈՅԻ] ԹԻՒՐՔԻՈՅ ՀԱՏՈՒԱԾ

Ներփակ ուղարկում ենք նաեւ Գանձակի մեր ընկերներից Ենգիբարեան Մանուէլի լուսանկարը։

Ռ.

Աւելացնում ենք Պատասխանատու մարմնի կնիքը։

Գնացողի հետ կամ մի այլ միջոցով մի որոշ գումար փոխադրէք Բագու, Քաջազնունուն(2) *օրինակ։*

Ռ.

1.- Մարզպետ կամ Մարզպետունի – ծածկանուն Ղազարոսեան Ղազարոսի (1878-1918)։ Նախապէս գործիչ Պուլկարիոյ եւ Ատրպատականի մէջ։

2.- Ծանօթ Յովհ. Քաջազնունին է (1868-1938), Հայաստանի հանրապետութեան առաջին վարչապետը։

657

Փաստ. 106-29

9 *դեկտ.* 1909

Վրէժի Կ. Կոմիտէին(1),

Ընկերներ,

Ներփակ յայտարարութիւնը խնդրենք յայնձնել «Առաւօտ» թերթին՝ տպագրութեան համար(2)։

Ստացանք ձեր Նոյ. 12 *նամակը։ Տրուած տեղեկութիւններից կ՚օգտուենք։*

Վահանը(3) *շատ կարեւոր գործով ճանապարհին դեռ պիտի ուշանայ։*

Շուտով կը ստանաք 1000 fr., *եթէ արդէն չէք ստացել։*

Համաձայն չէ՞ք լինել արդեօք դնել երկրորդ պատգամաւորի(4) *համար Դոկտ. Բազիլի թեկնածութիւնը։ Մահտեսեանը հաւանական է, կը մերժի։*

Եփրեմը(5) *թող շատ զգոյշ մնայ, ինտրիգների զոհ չգնայ։*

Աղաեւը եւ Կարաբէկովը յարաբերութեան մէջ են մեր ընկերների հետ։ Աչքի առաջ ունենալով հանդերձ դրանց վերաբերմամբ եղած կարծիքները, ընկերները գտնում են, որ դրանք կարող են շատ օգտակար լինել, գոնէ որոշ սահմաններում։

Մտադրութիւն կայ ընդհանուր ուժերով մի ամսագիր հրատարակել տաճկերէն լեզուով, բայց այնպէս պարզ, որ կարողանան հասկանալ եւ Կովկասում եւ Պարսկաստանում։ Հրատարակութեան պիտի մասնակցեն նաեւ երիտասարդ թիւրքերից։

Դրա մասին գուցէ շուտով դարձեալ գրենք։ Տեղական կուսակցութիւնների հետ պէտք է շարունակ յարաբերութիւն պահպանել, կտրւելը լաւ հետեւանքներ առաջ չի բերել։

Թեհրանում յատուկ ընկեր պահելու ոչ մի հնարաւորութիւն չունենք։

Խնդրում ենք առանց ուշացնելու ուղարկել մեզ ձեզ մօտ եղած խոշոր լուսանկարները, թէ՛ վայրերի, թէ մեռած ընկերների եւ թէ ողջ մնացածների։ Պէտք է սկսել բրօշիւրներից։ Գրեցէք նաեւ Սալմաստ եւ Խոյ։ Նրանք էլ չուշացնեն։ Նիւթեր բաւականաչափ ունենք։

Համբոյրներով՝
ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՈՅԻ Թ[ՈՒՐՔԻՈՅ] ՀԱՏՈՒԱԾ

Յ. Գ.— Ներփակ կը գտնէք Մարզպետի(6) *կարտը։ Նրա խնդրած գրքերը նոյնպէս չուշացնէք։*

1.- Վրէժը Ատրպատականի Կ. կոմիտէութիւն։
2.- «Առաւօտ» – դաշնակցական շաբաթաթերթ 1909-1911, Թաւրիզ։
3.- Վահան՝ Մատինեան Նիկոլ, որ իբրեւ Վրէժի (Ատրպատական) պատգամաւոր մասնակցած է Ե. Ընդհ. ժողովին։
4.- Խօսքը կը վերաբերի Պարսկաստանի խորհրդարանին երկրորդ պատգամաւոր մը ապահովելու հարցին։
5.- Խօսքը Եփրեմ Խանի մասին է (Դաւթեան)։
6.- Մարզպետ՝ Ղազարոսեան Ղազարոս։

658

Փաստ. 106-31

10 *դեկտ.* 1909

Մշոյ Կենտր. Կոմիտէին,

Ընկերներ,

Թէ ժողովին եւ թէ ուրիշ ընդհանուր բնոյթ կրող խնդիրների կարգաւորման համար նպատակայարմար դատուեց, որ մեր պատգամաւոր ընկերները՝(1) *հրաւիրելով բոլոր հայ պատգամաւորներին, միասին ժողովներ անեն եւ մինիստրութեանը ընդհանուր դիմումներ անեն։ Ներկայացւած է արդէն հարցերի մի ցանկ, որոնցից մի քանիսի մասին ունինք որոշ պատասխան։*

1) *Որոշած լինելով վերադարձնել տէրերին բռնի ուժով գրաւուած հողերը, կարգադրութիւն պիտի արւի, որ թոյլ չտան վերահաստատել քրդերին այն հայ գիւղերում, որտեղից նրանք հեռացւած են եղել։ Իսկ նրանց, որոնք արդէն յետ են եկել եւ բնակութիւն հաստատել հայ գիւղերում, կը հեռացնեն, հաւանական է, միայն գարնանը, տաք օրերը սկսելուն պէս։*

2) *Երկիր եկած հայ պանդուխտներին պէտք է տրւեն նոյն նպաստները, ինչ որ որոշւած եւ գործադրւում է մուհաճիրների*(2) *վերաբերմամբ։*

3) *Ատանայի վնասւածների տուրքերը պիտի ներւեն 2 տարով։*

4) *Նպաստներ պիտի տրւեն որբանոցների եւ աշխատանքի տան համար, եւ սրանք պիտի մնան հայերի հսկողութեան տակ։*

5) *Թէնսիգատով*(3) *հեռացրւած հազարապետին, որը հայերին պաշտպանել է Սիսում, առանձին վարձատրութիւն պիտի տրւի։*

Ձեր միւթէսէրիֆի(4) *մասին այն կարծիքը ունեն, որ ջերմ սահմանադրական է։ Նրա վերջին քայլերը բացատրւում են նրա «քաղաքականութեամբ»։ Նրա մասին դիմումը կը կրկնւի։*

Հաւանական է, Վանից յետոյ, Բաղէշի վիլայէթում սկսեն պաշտօնեաների փոփոխումը մեծ չափերով։ Յամենայն դէպս, ուղարկէք մեզ վատ պաշտօնեաների ցանկը։

Դաշնակցութեան օրինականացման խնդիրը առկախ է։ Իթթիհատի հետ մեր յարաբերութիւնները դեռ չեն կանոնաւորւել, մասամբ երեւի նրա մէջ տիրող անորոշութեան շնորհիւ։

Գրեցինք, որ Դրօշակ ուղարկւի ձեզ Գարմէնի(5) *անունով, առաջնորդարան։ Մեր ձեռքի տակ եղածներից կ՚ուղարկենք մի կապոց։*

Որովհետեւ Սարգիսը(6) *Վան է գնալու, Գարմէնը ազատ է կամ Բաղէշ գնալու, կամ այդտեղ մնալու։*

Ի՞նչ եղան ձեր հաշիւները. ինչո՞ւ էք ուշացնում։

Ներփակ ուղարկում ենք Խորհուրդի որոշումը Ռուբէնի դիմումի առթիւ։ Միսակինը նոյնպէս կ՚ուղարկենք։ Պէտք է պինդ բռնել, նրա բոլոր պատմածները սուտ դուրս եկան։

Մարտիրոս վարժապետը մի քանի խնդիրների համար դիմել էր Ռոստոմին։ Յայտնեցէք իրեն, որ այդ խնդիրների կարգադրութիւնը ձեր մարմնից է կախւած։

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. Բ[ԻԻՐՈՅԻ] ԹԻԻՐՔԻԱՅԻ ՀԱՏՈՒԱԾ

1.- Պատգամաւոր ընկերներ՝ Օսմանեան խորհրդարանի:
2.- Թուրք գաղթականներ, բնակեցուած հայկական շրջաններու մէջ:
3.- Բարեկարգումի օրէնքով:
4.- Կառավարիչին:
5.- Գարմէն՝ Մկրտիչ Մելքոնեան, որ Գեղամ Տէր Կարապետեանի երեսփոխան ընտրուելէ ետք, ինք կը վարէր Մշոյ առաջնորդարանի քարտուղարութիւնը:
6.- Վանայ Սարգիսն է, Բարսեղեան, բուն անունով Օտապաշեան Պօղոս:

659

Փաստ. 106-33

31 *դեկտ.* 1909

Դրօշակի խմբագրութեան,

Սիրելիք:

Հաստատում ենք մեր No 221 *նամակը:*

Ստացանք ձեր անթուակիր նամակը, ուր յայտնում էք 5000 fr. *ուղարկելու մասին:*

Սրանից յետոյ ուղարկէք մեզ Crédit Lyonnais-*ի չէկը. կը դանձենք այստեղի բաժանմունքից. թող չէկի մէջ գրուած լինի՝ վճարել ֆրանկներով:*

Թաւրիզ փոխադրէք 800 fr.. 200 fr. *էլ ուղարկէք այստեղ իմ անւան նրանց հաշւին: Այդպիսով փոխադրած կը լինէք նորից* 1000 fr. - 200 fr.-*ի մասին դուք էլ յայտնեցէք Թաւրիզ:*

Բաժանորդագների մասին կը գրենք, բայց աչքի առաջ ունեցէք, որ Ազատամարտը մօտ 1000 *ոսկու ապառիկներ ունի, որ չի կարողանում դանձել: Աւելի լաւ է, դադարեցնէք այն տեղերը, որտեղից դրամ չեն ուղարկում:*

Մարմինների հասցէները արտագրել կը տանք ու կ՚ուղարկենք:

Ներփակ ուղարկում ենք Նաւահանգստի(1) *հաշիւները, որ խնդրում ենք տպագրել Դրօշակի մէջ:*

Տիգրանակերտ գրեցինք հաշիւների ա. մասին համար: Ձեր ձեռքի տակ եղածը տպագրեցէք:

Պարսկաստանին նւիրած համարի համար ի՞նչ նիւթ ունէք, ի՞նչ լուսանկարներ: Ի՞նչ էք ուզում, որ գրենք:

Հագդը պէյը առանձնապէս չի ազդել մեր յարաբերութիւնների վրայ: Այդպէս են վստահեցնում: Վերջերումս աւելի են մօտեցել:

Ընկ. բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. Բ. ԹԻՒՐՔ. ՀԱՏՈՒԱԾ

1.- Նաւահանգիստը Պաքումն է:

660

Փաստ. 106-34

դեկտ. 1909

Բանալիի Կոմիտէին(1),

Ընկերներ,

Լեւոնի պատճառած վնասը շատ աւելի է, քան կը կարծէինք։

Խնդրենք անյապաղ տեղեկացնել մեզ, թէ որքան է ստացուած, առաջին եւ երկրորդ անգամներին։

Կը հաստատենք մեր No 209 *նամակը։*

Ներփակ նամակը կը խնդրենք յանձնել ընկ. Շահպազին(2)։

Ընկ. բարեւներով՝
ԱՐԵՒՄՏ. Բ. Թ. ՀԱՏՈՒԱԾ

1.- Բանալի՝ Սամսոն, Ամասիա եւ շրջակայք։
2.- Շահպազը՝ Բարսեղ Շահպազն է, շրջանի կուս. գործիչը այդ օրերուն։

661

Փաստ. 99-4

12 / II / 1910

Սիրելի Արտաւազդ(1),

Ստացանք ձեր 27/I *նամակը։*

Իթթիհատականների հետ սկսուած լաւ յարաբերութիւնները ամէն ջանք թափէք պահպանելու։ Այստեղ արդէն սկսուած են խառը ժողովները, որին մասնակցում են նրանց եւ մերոնց կազմից 3-*ական պատգամաւորներ,* 1 *խորհրդականի եւ* 2-*ական անդամներ կազմակերպութիւնների կողմից։ Վերջին ժողովում ի միջի այլոց որոշուած է, որ Իթթիհատը շրջաբերականով հրաւիրի գաւառական մարմինները սերտ կապ հաստատեն Դ*[*աշնակցութեա*]*ն հետ։ Տրամադրութիւնը լաւ է։ Զգտում են իրենց գործունէութեանը տալ ռամկավար ուղղութիւն։ Առաջնակարգ խնդիրներից մէկը լինելու է հողային խնդիրը, որի յաջող լուծումը կը կապի իթթ*[*իհատի*] *հետ ժողովրդական լայն զանգուածները։ Պիտի զբաղուենք նաեւ քրդական կոչուած հարցով։*

Իթթ[*իհատ*]*ից բաժանուածները կարեւոր ոյժ չեն ներկայացնում։ Ջտման տեսակէտից այդ բաժանումը նոյն իսկ ցանկալի է։ Բաժանուողներից մէկը Կարնոյ երեսփոխանն է։ Պէտք է աշխատել, որ ընտրողները պահանջեն դրա հեռացումը, յայտնելով միտինգի կամ մի այլ ձեւով անվստահութիւն դէպի հեռացածը եւ ընտրեն մի նորը։*

Վանի ապրանքի մասին մի անգամ եւս խնդրում ենք չուտափոյթ կարգադրութիւն անէք։

Երզնկայից 50 *ոսկի պիտի ստացուի Տրապիզոնում։ Համաձայն ենք Վահանի*(2)

առաջարկին՝ յատկացնել այդ գումարը Վրէժին պարտքի հաշւին։

Եղիշէի(3) *գրքի տպագրութեան մասին յետոյ կը գրենք։ Մի երկու ամսից յետոյ Ռոստոմը կամ մի ուրիշը կարող կը լինի յանձն առնել բոլոր հոգսերը։*

Համբոյրներով՝
ԱՐԵՒՄ[ՏԵԱՆ] Բ[ԻՒՐՈՅԻ] Թ[ՈՒՐՔԻԱՅԻ] Հ[ԱՏՈՒԱԾ]
ՍՈՒՐԷՆ(4)

1.- Արտաւազդը՝ Արեւելեան բիւրոյին տրուած ծածկանուն է: Այս պարագային՝ անոր Թուրքիոյ (Կարին) հատուածին:

2.- Վահան՝ Մատինեան Նիկոլ, Վրէժը Ատրպատականն է:

3.- Եղիշէ Թոփչեան, Կարնոյ «Յառաջ» թերթի հիմնադիր-խմբագիր, որ Վառնայի Հինգերորդ Ընդհ. ժողովէն վերադարձին սպաննուած էր խմբապետ Միհրանի եղբօր՝ Յաբէթի կողմէ (1909):

4.- Սուրէն – ծածկանուն տրուած Արեւմտեան բիւրոյին. այս պարագային՝ անոր Թուրքիոյ հատուածին:

662

Փաստ. 107-185

Անթուակիր նամակ հաւանաբար «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած: Բովանդակութենէն դատած պէտք է 1910 Մարտի նամակ ըլլայ, քանի 9/22 Մարտի նամակով Ռոստոմ կը գրէ «Վարդանի յիշատակարանը գտանք, այսօր կ՚ուղարկենք Նիկոլի գրուածքի հետ»: «Այսօրը» 9/22 Մարտ 1910-ն է:

[9/22 *մարտ* 1910]

Սիրելիք,

Դումանի ձեռագիրը այսօր ուղարկւեց(1)։
Միայն V *տետրակը չի սրբագրւած լեզւի կողմից։*
Բժիշկը արդէն եկած կը լինի։
Խաչատուրի նամակը ստացանք։ Մեզ անհանգստացնում է Քիյառի(2) *յայտնած կարծիքը։*
Սպասում ենք մանրամասնութիւններին։

Ռ.

1.- Խօսքը կը վերաբերի Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գործին, որ արդարեւ պիտի հրատարակուէր «Դրօշակ»ի մատենաշարով 1910 թուականին, բայց, հաւանաբար Իթթիհատի հետ խնդիր չստեղծելու պատճառով, գրքին տպագրութեան թուականը պիտի նշանակուէր 1907:

2.- Խաչատուրը (Մալումեան) Ակնունին է. Քիյառը՝ Փրօ-Արմենիա-ի ֆրանսացի խմբագրապետը:

663

Փաստ. 99-17

Նամակին վերը մակագրուած է «Արեւել. բիւրոյի Թ[ուրքիոյ] հատուածին»: Ռոստոմի ձեռագրով նամակ, Աբրօ ստորագրութեամբ, որ կը գործածուէր Արեւմըտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածին կողմէ: Կարին գտնուած օրերուն Ռոստոմ կը գրէր Արեւելեան բիւրոյի Թուրքիոյ կամ Երկրի հատուածին անունով, իսկ այժմ որ ժամանակաւորապէս Պոլիս անցած է՝ կը գրէ Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածին անունով: Նշենք որ Արեւմտահայաստանի նահանգները (Երկիր) կ՚իյնային Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի իրաւասութեան ներքեւ, մինչ Օսմ. կայսրութեան մնացեալ շրջանները՝ Արեւմտեան բիւրոյին:

23 / III / 1910, *Կարին*

Արեւել. բիւրոյի Թ. հատուածին

Ընկերներ,

Իթթիհատի կողմից ճանապարհ է ընկնելու դէպի ներքին գաւառները Մուստաֆա Նէջիպը. նա երէկ գնաց դէպի Տրապիզոն: Նրան հրահանգ է տրուած ծանօթանալու իրերի դրութեանը եւ պաշտպանել գիւղական հարստահարեալ տարրը կեղեքիչ վաշխառուների ու աղաների դէմ: Թէեւ որոշուած է, որ նա պտտի մեր ընկերների հետ, բայց գուցէ իրենց ներքին տակտի շարժառիթներով նպատակայարմար չգտնէին ամէն տեղ երեւալ մեր ընկերների հետ միասին: Պէտք է օգտուել հանգամանքից հայ-թիւրք համերաշխութեան մասին պրոպագանդը վերսկսելու:

Տարօնցիք պահանջկոտ են, գիտենք, բայց դժբախտաբար մոռանում են իրենց ամենատարրական պարտականութիւնները: Գոնէ Պտէեանի պարտքը գանձէին:

Ո՞վ է ձեզ տեղեկացրել Մուրատի գնումների մասին, մենք ոչինչ չգիտենք:

Յարութիւն Քէչէջեանին միթէ՞ չէք կարող դիմել ուղղակի Կարս:

Տիգրանակերտի հասցէն՝ Կիրակոս Յովհաննէսեան, գրավաճառ:

Վանի ապրանքի խնդրին, թէ Աստուած սիրէք, վերջ տուէք: Չէք կարող երեւակայել, թէ ինչ մեծ վնաս էք հասցրել ձեր այդ անբացատրելի ձգձգումներով:

Աշխատէք կազմակերպել մի հաւաքական բողոք եկեղեցու դռները փակելու մտադրութեան դէմ(1):

Ընկ. բարեւներով՝
ԱԲՐՕ

1.- «Եկեղեցու դռները փակելու մտադրութիւնը» այդ տարիներուն վէճի առարկայ նիւթ էր: Պէ՞տք էր թէ ոչ եկեղեցիներու բեմը տրամադրել հրապարակային (ոչ զուտ կրօնական) համախմբումներու: Ահա հարց մը, որ «բացի-գոցի» խնդիր կը կոչուէր եւ որ կ՚ալեկոծէր հանրային կարծիքը Պոլիս եւ գաւառները:

664

Փաստ. 99-26

16 / IV / 1910

ՄՈՒՇ

Սիրելիք,

Ստացանք Անտոնի(2) 21 / III *նամակը։ Հաստատում ենք մեր* -------(2)

Հողային խնդրի լուծումը ձգձգւում է։ Երեւում է, որ նախարարը վճռողական քայլ չի ուզում կամ չի կարողանում անել։ Քիւրդ պատգամաւորները նոյնպէս շարունակ դիմումներ են անում ի նպաստ «մահմեդականների»։ Մտածում ենք մի ընդհանուր դիմում յաջողեցնել, որ կը կատարւի երեւի տօներից յետոյ։ Այս աշխարհում մեծ նշանակութիւն ունի տեղական իշխանութիւնը։ Վանայ վալին ձեզ օրինակ։

Վալիների փոփոխութեան հարց չկայ։ Խօսքը միայն ձեր վալիի մասին էր։

Արեւելեան շրջանին տրւելիք օժանդակութիւնը մնում է եւ կը մնայ իրբեւ որոշում, քանի որ ոչ մի տեղից նպաստներ չեն ստացւում։ Ազատամարտի համար ստացւել է միայն Ամերիկայից։ Այստեղի կազմակերպման գործը, որ շատ արագ չէր գնում, հարւած ստացաւ շանտաժի մի ձեռնարկով, որի մէջ մասնակցել են մեր տեղական եւ դրսեցի ընկերները։ Գլխաւոր մեղսակիցները դժբախտաբար կարողացան հետքերը կորցնել։ Հարւածը զգալի էր. կարող էք երեւակայել, թէ ինչ եռանդով ձգտում են այդ արատը կազմակերպութեան վրայ ձգել։

50 *ոսկին պարտքի համար է եղել! Ինչո՞ւ հեռագրով էք ուզել։ Եւ ի՞նչ է նշանակում Անտոնի տողերը. «Կը խնդրեմ տղաներից միւս անգամ մանրամասը բացատրութիւն գրել. դրա բացատրութիւնը մի կողմը մնայ. ի՞նչ եղան հաշիւները։*

ԱՐԵՒՄ. Բ[ԻՒՐՈՅԻ]
Թ[ՈՒՐՔԻԱՅԻ] Հ[ԱՏՈՒԱԾ]

1.- Անտոնը՝ Սիմոն Զաւարեանն է։
2.- Բնագրին մէջ բաց ձգուած է թուականը։

665

Անթուակիր եւ չհամարակալուած նամակ, ուղղուած Ժընեւ Խաչատուր Մալումեանին (Է. Ակնունի), հաւանաբար 1910 թ. կէսերուն:

(Խաչատուրին)
Տղայ,

Բժշկի(1) *նամակից իմացայ։ որ պատրաստւում էք Պարիզ գնալ։ Ցուսով ենք որ Մարտիրոսը աւելի առատաձեռը կը լինի, քան թէ* Mon cher-*ը։ Տպարանի համար տւեց ... ամբողջ* 10 *ոսկի։ Եւ խոստացաւ* 15 *ոսկի էլ վերադարձիդ՝ անձամբ քեզ տալ։*

Վարդանին(2) *գրեցի, որ այստեղ դայ, յոյս դնելով «եօլա գնալու» քաղաքականութեան վրայ։*

Բիւրոյի կարծիքը մեզ անհանգստութիւն պատճառեց, մանաւանդ որ երկրից շատ վատ լուրեր են հասնում քիւրդերի տրամադրութեան մասին։

Պարիզից մի քիչ մանրամասը գրիր։

Քո ՌՈՍՏՈՄ

1.- Խօսքը բժ. Յ. Զաւրեանի մասին է:
2.- Խանասորի Վարդանն է (Մեհրաբեան Սարգիս):

666

Փաստ. 107-58

9/22 *մարտ* 1910

Սիրելիք,

Այստեղ գնել ենք 300 No 11(1), *հատը* 3 *օսմ. ոսկիով* 3 *ամսում վճարելու պայմանով։ Աչքի առաջ ունինք նաեւ մօտ* 250 *հատ, մօտաւորապէս նոյն գնով։ Այդ բանը արինք հակառակ մեր սուղ միջոցներին երկու տեսակէտից՝ մէկ որ ապրանքը շատ արժան էր, եւ երկրորդ՝ որ մարմինների կողմից մեծ պահանջ կայ։ Անձեռնմխելիից*(2) *ստիպւած կը լինինք դարձեալ վերցնել, եթէ մարմիններից ժամանակին չստանանք դրամները։ Ճար չկայ. թող ապրանք ստանան եւ հայհոյեն։ Բացի այդ՝ չէ՞ որ եօթ անգամ չափիր, մէկ անգամ՝ կտրիր*(3)*։*

Զմշկածագի չէքերը յետ ենք ուղարկել Ամերիկա։ Իսկ Ծովք գիւղի համար պատրաստ ապրանք ունինք(4)*։*

Ընկ. բարեւներով՝
ԱԲՐՕ(5)

1.- Խօսքը մոսին հրացաններու մասին է:
2.- Անձեռնմխելին՝ Բիւրոյի մօտ պահ դրուած գումարի մասին է:
3.- Բնագրին մէջ՝ ռուսատառ:
4.- Խօսքը կը վերաբերի Միացեալ Նահանգներ ապրող չմշկածագցիներու Պոլիս ուղարկած չէքին, որ պիտի գործածուէր իրենց ծննդավայրի ինքնապաշտպանութեան կարիքներուն: Նոյնը Ծովք գիւղի համար:
5.- Աբրօ – ծածկանուն տրուած Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ (Պոլիս) հատուածին:

667

Փաստ. 1749-5

Ռոստոմէն Արեւելեան բիւրոյին

30-3-1910

Արեւելեան Բիւրոյին

Իմացած կը լինէք արդէն, որ փոխադրուած է նաեւ Վ.ի միջոցով Գագիկին(1) *յանձնելու համար* 4500 *ֆր.։ Հիմա քանի որ Գագիկը բացակայ է, մէկ ուրիշի միջոցով գանձեցէք դրամը։*

Մասնաւոր կերպով հարցրէք Բագուայ ռուսական Կրեդիտ բանկ*-ի*(2) *բաժանմունքին, ինչո՞ւ չեն փոխադրում Շահրիկեանի դրամը։ Ինքը դիմել եւ խնդրել է փոխադրել իրեն՝* Crédit Lyonnais*-ի միջոցով։ Դա էլ բաւական դումար է։*

Գալով բանտարկ[եալներին] յատկացուած դրամին, բոլորովին զուր է ձեր անհանգստութիւնը։ Դրամը ամբողջովին կը ստանաք։ Միայն թէ բանկային յարմարութիւնների պատճառով պէտք է սպասել մինչեւ մայիս 7*։ Ինչից գիտէ՛ք, որ դատը սկսելու է մայիսին. բա ինչպէս է, որ միւս կողմից պնդում են, որ դատը կը ձգձգուի մինչեւ* 1911 *թուականը։*

Յանձնուա՞ծ են արդեօք մեղադրական ակտերը։

Միւս կողմից երկիւղ ենք կրում, թէ չլինի, թէ այդտեղ փոխադրուած դրամի գլխին մի վտանգ գայ, ո՞վ գիտէ. աւելի լա՞ւ չէ, որ մաս մաս ստանաք, ըստ կարիքի։

.....(3) *պղինձն ու .....*(4) *մեզ էին պատկանում. պղինձը բերել է տրուած Գագիկի նախաձեռնութեամբ, յանձնուած է Եղիազարեանին ծախելու։ Տիկնոջից առանց այլեւայլի պիտի պահանջէք վերցրած դումարները։*

Մանասի(5) *խնդրի մէջ մենք ինչո՛վ ենք մեղաւոր։ Մե՞նք պիտի պարզենք թէ դուք։ Ինչո՞ւ է լռում. ճի՞շտ չէ միթէ, որ Մհերը*(6) *լուր է ուղարկել, թէ Մանասը իրեն ամէն ինչ պարզել է. ինքը գոհացել է, բայց առայժմ անյարմար է համարում պատճառները յայտնել դուրսը։ Եթէ այդպէս է, պէտք է ուրեմն սպասել յարմար րոպէին։*

(*Թղթակից*)

Հասցէն՝ Օննիկ Սրապեանին, Գոյումճեանի մօտ(7)։

1.- Վ.ն՝ հաւանաբար Վռամեանն է, իսկ Գագիկը՝ Տէր Մկրտչեան Ստեփանը:
2.- Բնագրին մէջ ռուսատառ:
3.- Անընթեռնելի բառ:
4.- Անընթեռնելի բառ: Հարկ է ըսել որ Ռոստոմի այս նամակը աւելի սեւագրութեան կը նմանի եւ դժուարաւ կը կարդացուի:
5.- Մանասեան Սարգիս (բանտարկուած) զինական եւ ինքնապաշտպանութեան գործերու պատասխանատու:
6.- Մհեր՝ ծածկանունն է Արեւելեան բիւրոյի անդամ Օհանջանեան Համոյի, որ նոյնպէս բանտ կը գտնուէր:
7.- Բնագրին մէջ ռուսատառ:

668

Փաստ. 107-77

Պոլսէն գրուած երկտող: Մակագրուած է «կարգադրուած է No 9 նամակով»:

Ընկերներ,

Այդտեղ է գալիս մի երիտասարդ, Կարապետ անունով: Մշեցի է: Խնդրեմ աջակցէք նրան գործ գտնելու: Դրամով ոչինչ չպէտք է անել: Ցանձն է առնում ամէն տեսակ աշխատանք կատարել:

ՌՈՍՏՈՄ

11 / V / 1910

669

Փաստ. 107-180

Յոնան Դաւթեանին, Ժընեւ(1)*:*

Սիրելի Յոնան,

Վարդանը(2) *արդէն ճանապարհ ընկաւ: Նա երեւի կը գրի Վիեննայից: Նպաստների համար դիմումներ արել ենք, բայց չպէտք է սպասել դրան:* 1500 fr.*-ի չափ կազմակերպութիւնը ամենայն դիւրութեամբ կարող է յատկացնել նրա բժշկութեան գործին:*

Նիկոլն(3) *էլ վերջնականապէս որոշեց ձեր կողմերը գալ: Դրա պատճառով ես զրկւում եմ ամարանոցից. ստիպւած եմ ուրիշ տեղ փնտռել:*

Բաւականաչափ կազդուրւել եմ, բայց եւ այնպէս երբ գիրք եմ ձեռքս առնում, աչքերս փակւում են:

Մի կարեւոր խնդիրք:

Մամիկոնեան Ալէքսանդրը, «Դրօշակի» յօդւածի հեղինակը եւ Նեպտուն Խաթուն հանողը մտադիր է Ժընեւ անցնել: Ինքը արհեստով պրօվիզօր(4) *է: Գուցէ հնարաւոր լինի այդտեղի դեղարաններում գործ գտնել նրա համար: Խօսիր այդ մասին Ժակ Լեւոնի հետ եւ շուտով մի բան գրիր:*

Հիմա քեզ Խարբերդ են հրաւիրում: Ես էլ եմ շւարել: Ի՞նչ ասեմ:

ՌՈՍՏՈՄ

1.- Պոլսէն ուղարկուած անթուակիր նամակ, 1910 թ.:
2.- Խանասորի Վարդանն է, Մեհրաբեան Սարգիս:
3.- Նիկոլ Դուման (Տէր Յովհաննիսեան Նիկողայոս):
4.- Ֆրանսերէն՝ դպրոցի վերակացու:

670

Փաստ. 107-182

Սիրելիք, Ժընեւ(1)

Խաչատուրը(2) *ի զուր է հիմա գնում Ամերիկա։ «Սէզոնը» սկսում է սեպտեմբերից։ Եթէ երկու ամսով էլ լինի, պէտք է սեպտեմբերին գնալ, երբ հնարաւոր կը լինի մարդիկ համախմբել։*

Բա օպէրացիան(3) *ի՞նչ եղաւ։ Չլինի թէ Խաչատուրը յետաձգել է ուզում։*

Կոպէնհագ(4) *քանի՞ հոգի պէտք է գնան մեր կողմից։ Թիւրքիայից* 2 *հոգի է՞ն, թէ* 4։

Մոռանում եմ գրել, որ Սպանդարեանի մասին Դրօշակի մէջ մի յայտարարութիւն անելը վատ չէր լինիլ։

Ուզում էի գրել, որ Միքայէլը(5) *ուղարկէր ինձ աչքի անցնելու իր գրած պատմութիւնը, բայց երեւի արդէն ուշ է։*

Աչնանը Միքայէլի այստեղ լինելը անհրաժեշտ կը լինի։

Եթէ ուղարկած 2000 fr. *Իզմիրի համար ուզւած գումարն է, նորից ուղարկէք Իզմիր, ուղղակի մարմնի հասցէին։*

Որքան ուրախ եմ, որ Ք. ընտանիքի խնդիրը վերջապէս վերջացաւ։ Մի քար ընկաւ կրծքից։

Միքայէլը թող չվախենայ «սեւ աշխատանքից»։ Դրա համար բաւական ուժեր կան։

Կրկնում ենք, եթէ նոյնիսկ Ամերիկայից համաձայնութիւն տան, որ Խաչատուրը այժմեանից մեկնի, լաւ կը լինի սպասել մինչեւ աշուն, աւելի մեծ արդիւնք ստանալու համար։

Համբոյրներով՝
Ձեր ՌՈՍՏՈՄ

Քանի որ Խաչատուրն այդտեղ է, եւ Յոնանը դեռ չի հեռացել, Դաշն. 20-*ամեակի համար մի քանի բաներ առէք։*

Ն.

1.- 1910 թ. անթուակիր նամակ՝ Պոլսէն ուղարկուած։
2.- Խաչատուր Մալումեան (Է. Ակնունի)։
3.- Խօսքը կը վերաբերի Ակնունիի վիրաբուժական գործողութեան։
4.- Հարցը կը վերաբերի Կոպէնհագնի ընկերվար Միջազգայնականի ժողովին, որ պիտի գումարուէր 1910 թ. Օգոստոսին։
5.- Միք. Վարանդեան։

671

Փաստ. 107-185

Սիրելիք,

Դումանի ձեռագիրը(1) *այսօր ուղարկուեց։*
Միայն V *տետրակը չի սրբագրուած լեզուի կողմից։*
Բժիշկը արդէն եկած կը լինի։
Խաչատուրի նամակը ստացանք։ Մեզ անհանգստացնում է Քիյառի յայտնած կարծիքը։
Սպասում ենք մանրամասնութիւններին։

1.- Խօսքը կը վերաբերի Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» երկի ձեռագրին, որ պիտի հրատարակուէր 1910 թուականին եւ ո՛չ 1907-ին, ինչպէս նշուած է տպագրութեան վրայ:

672

Փաստ. 1279-5

17 / 5 / 1910
Պարիզ

Սիրելի Միքայէլ

Վիկտոր Բերարի(1) *ասելով՝ իրենք հակառակ են եւ չեն էլ ուզում որ հարեւանը*? *մէջ մտնի։ Այս մասին մանրամասը՝ յետոյ։*
Այս պատճառով է, որ դու առանձնապէս պէտք է զբաղուես այդտեղ։ Արդիւնքը նամակով եւ հեռագրով կը հաղորդես poste restante(2) *հասցէով։*
Ողջոյններս Վալիային եւ ..... *Մոխէիվոյին*[?]։
.....(3) *Ռուբէնը լաւ են։*

Քո Ռ.

1.- Ֆրանսացի ծանօթ քաղաքական դէմք:Երկտողը ուղղուած է Ժընեւ՝ Միք. Վարանդեանին:
2.- Ֆրանսերէն՝ նամակատուն ի պահ դրուած իմաստով:
3.- Ռուսերէն անընթեռնելի անուն:

673

Փաստ. 1567*բ*- 14

Առաջին թերթերը չկան, ինչպէս բնագրին վրայ արձանագրուած է Գիլլխանդանեանի ձեռագրով: Կը գտնուի Դաշնակցութեան Խորհուրդի 1909–1912-ի թղթածրարին մէջ: Հաւանաբար ուղղուած է Արեւմտեան բիւրոյին Ժընեւ: Բովանդակութենէն դատելով՝ 1910-ի նամակ է. Ակնունի, որու Ամերիկա երթալու անհրաժեշտութեան վրայ բազմիցս պնդած էր Ռոստոմ, նոյն տարուան Սեպտ. 3-ին ճամբայ ելաւ: Հետեւաբար, այս նամակը գրուած պէտք է ըլլայ ամենաուշը Օգոստոս ամսուն:

[1910 *Օգոստոս*]

..... Թէ մէջը սոցիալիստական բաներ կան եղեր!...

Ծախսերը աւելացել են տպարանի պատճառով: Խաչատուրը(1) *պիտի իմանայ, թէ ինչու թերթի գործը հիմա լաւանում է: Յայտարարութիւններն էլ աւելանում են, «Յաւելուածը» ծախս չի աւելացնում:*

Նամակս վերջացնեմ դարձեալ Խաչատուրի Ամերիկա գնալու խնդրով: Ինքը քիչ յոյս ունի, բայց սխալւում է: Վերջապէս չէ՞ որ միակ միջոցն է այսօր արդի անելանելի վիճակից դուրս գալու համար: Մնացած մեր բոլոր մտածմունքները նիսիա են(2)*:*

Մի քանի նամակ գրել եմ Անդրանիկի(3) *ընկերանալու մասին: Ինքը վերջ ի վերջոյ համաձայնութիւն տուեց: Ինչո՞ւ սրա վերաբերեալ լռութիւն էք պահպանում:*

Եթէ Խաչատուրը ինքը անյարմար է նկատում, թող յայտնի:

Ձեր ***ՌՈՍՏՈՄ***

1.- Խաչատուր Մալումեան – Է. Ակնունի: Խօսքը կը վերաբերի Պոլսոյ «Ազատամարտ» օրաթերթին:

2.- Նիսիա՝ բառացի կը նշանակէ ապառիկ. գործածուած է ենթադրական, թէական իմաստով: «Արդի անընդունելի վիճակից դուրս գալու համար» խօսքերը կը վերաբերին Ակնունիի Ամերիկա մեկնելով նիւթական նպաստ ապահովելու նպատակին:

3.- Անդրանիկը յայտնի հայդուկապետն է. Ռոստոմ կը փափաքէր որ ան ընկերանայ Ակնունիին Ամերիկայի մէջ ձեռնարկուելիք հանգանակութիւնը արդիւնաւորելու համար:

674

Փաստ. 99-53

Սիրելի Վահապ(1)

Ստացայ Ատաբազարից գրած նամակդ։ Համաձայնութիւնը լաւ է եղել. ես էլ այստեղից կը գրեմ Պարսկաստան։ Միայն եթէ Կարաբ[էկով]ը(2) *չնւիրուի այդ գործին, աւելի լաւ կը լինի։ Նա ինձ վրայ թողել է լաւ, բայց ոչ «գործի մարդու» տպաւորութիւն։ Նա շատ է անձնատուր լինում իր կրքերին եւ ժամանակաւոր տրամադրութեանը։*

Արդէն մենք այդ կողմերում պրոպագանդ ենք անում, որ զէնքերը հաւաքեն եւ ուղարկեն Պարսկաստան։ Մարդու պակաս եթէ զգանք, Կովկասից բերել կը տանք։

Դու գիտես, որ Մշեցի Սմբատը զինուորական վարժարանից հեռանալիս(3) *(կիսատ թողած) ինքը իր ձեռքով գրել է աշակերտների համար պատրաստած հարցարանում, «ո՛ր կուսակցութեան է պատկանում» ռուբրիկայի մէջ, իր վերաբերեալ մօտաւորապէս հետեւեալ տողերը. «առա՛ջ, երբեմն դաշնակցական, իսկ այժմ ոչ»։*

Բարդողը(4) *պիտի լաւ յիշի այդ։*

Անցեալ տարի այստեղից անցնելիս՝ յայտնելով այդ փաստը Եղիշին եւ միւս ընկերներին, չեշտեցի, որ անհրաժեշտ է բացատրութիւն պահանջել այդ առթիւ Սմբատից, որը գործում էր մեր շարքերում։

Դժբախտաբար, ոչինչ չեն արել, եւ ես ստիպւած եղայ նորից կրկնել դրա անհրաժեշտութիւնը այս տարի։

Կ. Կոմիտէի դիմումի վրայ, Սմբատը եկաւ ինձ մօտ եւ մի քանի անկապ բացատրութիւններից յետոյ յայտարարեց, թէ ինքը միշտ դաշնակցական է եղել, որ ինքը չէ այդ տողերը գրողը։ Հարկաւոր է, ուրեմն, ստուգել, ինձ են արդեօք սխալ տեղեկութիւն տուել, թէ իրօք Սմբատն է գրողը։ Խնդրեմ դիմէք Պալք[անեան] Կ. Կոմիտէին, որ նա ուղարկի այդ տողերի լուսանկարը։ Թող գրեն նոյնպէս, թէ ինչ բաներ մէջ է մեղադրւել Սմբատը, կամ որեւէ որոշում տրւած է արդեօք նրա մասին։

Կարդացի Միհրանի(5) *սպանութեան պարագաները Ազատամարտում։ Սպասում եմ նամակի. ինչպէ՞ս է եղել, ո՞վ է եղել, ո՞ւմ կարգադրութեամբ, ո՞վ է լուր հաղորդողը։*

Ժընեւ էլ գրեցի, որ Սպանդարեանի շուրջը բարձրացած աղմուկի առթիւ յայտարարեն, որ փաստերը պատրաստ են ցոյց տալ յատուկ ընտրւած յանձնաժողովի՝ կազմւած վստահելի անձերից։ Ի պատասխան, կարելի է հրատարակել մի-երկուսի անուններն էլ։

Քո ՌՈՍՏՈՄ

20 / IX / 1910

1.- Վահապ – ծածկանուն Արշակ Վռամեանի (բուն անունով Դերձակեան Օննիկ), անդամ Արեւմտեան բիւրոյին։

2.- Կովկասի թուրք գործիչ, սերտ յարաբերութիւն պահպանող Պոլսոյ դաշնակցական ընկերներուն հետ, թէեւ իր գործունէութիւնը, որպէս ջերմ կողմնակից թուրք իթթիհատականներուն, վերապահութեամբ կ՚ընդունուէր Պարսկաստանի ընկերներուն կողմէ, որոնք համոզուած էին որ ջերմ «իսլամական» է։

3.- Մշեցի Սմբատ կամ Սմբուլ, իսկական անունը Յակոբեան Սմբատ։ Զինուորական վարժարանը Դաշնակցութեան հիմնած դպրոցն էր Պուլկարիոյ մէջ։

4.- Զօրեան Բարքող (1879-1915), նախապէս Պալքանի, այժմ Պոլսոյ Կ. կոմիտէի անդամ:

5.- Նախկին դաշնակցական խմբապետ Միհրանն է (Քէշիշեան), դարձած պարագլուխ «անջատական» կոչուած շարժումին, Դաշնակցութեան դատի ընթացքին մատնութիւններ կատարելով ցարական գաղտնի ոստիկանութեան գործակալի վերածուած ըլլալով, վտարուած էր կուսակցութենէն եւ մահուան դատապարտուած: Ահաբեկումը տեղի ունեցաւ Դալի Ղազարի ձեռքով (Միք. Բաղալքէօխեան – 1886-1920), 1910 թ. 6 Սեպտ. երեկոյեան, Հիւս. Կովկասի մէջ գնացքով ճամբորդած պահուն:

675

Փաստ. 99-54

Կարինէն գրուած նամակ Արեւմտեան բիւրոյին, Ժընեւ: Տարբեր ձեռագրով աւելցուած է թուականը՝ Կարին, սեպտ. 20:

[*Կարին, սեպտ.* 20, 1910]

Սիրելիք,

Նոր եմ իմանում, որ հեռագիր ուղարկուած չի եղել Գրուզինեանի(1) *համար, իսկ մենք ամէն օր սպասում ենք ձեր պատասխանին: Բայց արդէն նամակս տեղ հասած պիտի լինի. ի՞նչ արիք, ի՞նչ է մտադիր անել ինքը Գ[րուզինեան]ը:*

Շամեանի(2) *հաշիւները չեն մաքրւում, ինչպէս տեղեկացայ այստեղ, Իշխանի անհոգութեան պատճառով: Ստիպողաբար պահանջել ենք նրանց պատգամաւորին, հաշիւներով միասին, բայոնական ժողովի համար, բայց չեն համաձայնւում մարդ ուղարկել: Նոր հեռագիր ենք տուել, սպասում ենք պատասխանի*(3)*: Դուրան*(4) *միայն գնացած է եղել* 4 *հատ, ոչ աւել:*

Ձեր երկրորդ նամակի կէտերի մասին կը գրենք մեր ժողովից յետոյ: Զաւրեանը գայ, սպասում ենք Սիմոնին(5)*, գուցէ միասին գան:*

Տաճատի բռնած դիրքը մեզ համար անհասկանալի է: Խնդիրը կնճռոտւում է, ինչպէս երեւում է Սիմոնի մի նամակից, անձնական հանգամանքներով: Հեռագրով ուզել ենք: Երեւի չի գալ: Խնդրեմ ստուգել Ընդհ. Ժողովի արձանագրութիւնից, ուղարկել են արդեօք թէ ոչ: Որքան ես յիշում եմ, այդպէս բան չի եղել, իսկ Գարմէնը(6) *ասել է Յովսէփին*(7)*, թէ Մարզպետի*(8) *ձեռքով ուղարկուած են:*

Կարելի է հարցնել եւ Մարզպետին:

Քղեցիների դրամը ստացած է: Ինքը մարդը այստեղ էր. ուզում էինք անմիջապէս իրեն յանձնել գումարը, բայց նա յայտնեց, թէ արդէն մի տեղից պարտք են արել եւ իրեն վճարել: Սպասում ենք նոր կարգադրութիւնների Քղիից:

Միհրանի սպանութեան լուրին կասկածանքով ենք վերաբերւում: Վախենում ենք, լուր տւողը թիւրիմացութեան մէջ ընկած լինի(9)*: Մի խաղ չլինի այդտեղ! Երեւի նամակով կը յայտնէք մանրամասնութիւնները: Լաւ կը լինէր առայժմ ոչինչ չգրել:*

Մեր ձեռքն է Յաբէթի(10) *մի նամակը, ուղղած հնչակեաններին: Ներփակ կը գտնէք պատճէնը: Ուղարկէք ուր հարկն է: Եթէ կարող է մի բանի պէտք գալ, կ'ու-*

դարկենք իսկականը, միայն ապապով հասցէով։

Մեր գեօզալ համերաշխական ժողովները քանդուեցան, հա։ Ուրեմն, պատմութիւնը իր ճանապարհով պէտք է գնայ ! Էհ, թող գնայ։

Ձերբակալուել է Երեւանում Սաչա Տէր Յակովբեանը։

Գաւրոչական գրականութիւնը(11) *կարող է թերթի սպառումը աւելացնել, բայց լաւ է երկրորդ անգամ չկրկնել։*

Համբոյրներով՝
ՌՈՍՏՈՄ

1.- Սիմոն Վրացեան: Գրուզինեան իր բուն անունն էր: Ս. Վրացեան այդ օրերուն կը գտնուէր Տրապիզոնի շրջան:

2.- Վան-Վասպուրականի կուս. ծածկանուններէն մէկը: Իշխանը՝ Վանայ Իշխանն է (Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեան):

3.- Հարցը կը վերաբերի «Արեւելեան բիւրոյի Թուրքիոյ հատուած»ի ռայոնական ժողովին, որ պիտի գումարուէր Կարին 1910 թ. Հոկտ. 2-13: Վան-Վասպուրականի պատգամաւորը ժողովատեղի պիտի հասնէր, ինչպէս կը նշուի ատենագրութեան մէջ, «ժողովի ցրուելուն հետեւեալ օրը» իր հետ բերելով իրենց շրջանի տեղեկագիրը նշուած ռայոնական ժողովի մասին (Տես «Նիւթեր Հ.Յ.Դ. պատմութեան համար» Ը. հատոր, էջ 162-174):

4.- Տարօնի կուս. ծածկանունը:

5.- Սիմոն Զաւարեան:

6.- Մելքոնեան Մկրտիչ, ծանօթ Գարմէն ծածկանունով: Նախապէս Տաճատ վարդապետ:

7.- Բժ. Յովսէփ Տէր Դաւթեան, անդամ Արեւելեան Բիւրոյի Կարնոյ հատուածին:

8.- Ղազարոսեան Ղազարոս, դաշնակցական հին գործիչներէն, որ այդ օրերուն կը գտնուէր Բաղէշի շրջան:

9.- Խմբապետ Միհրանի ահաբեկման մասին Ռոստոմի «կասկածանքը» անտեղի էր: Տես այս մասին նախորդ՝ Վահապին ուղղուած նամակագրութեան թիւ 5 ծանօթագրութիւնը:

10.- Խմբապետ Միհրանի (անջատողական) եղբայրը, որ 1909 թ. Հոկտ. 23-ին սպաննած էր Կարնոյ «Յառաջ»ի խմբագիր Եղիշէ Թոփչեանը:

11.- Իմա՝ զաւեշտական գրականութիւնը:

676

Փաստ. 99-57

Ռուսերէն այս նամակը գրուած է Կարին եւ ուղղուած Մուշ գտնուող բժ. Յակոբ Զաւրեանին:

8 / X / 1910

Թանկագին Յակոբ Քրիստափորի

Ստացել եմ ձեր՝ սեպտեմբերի 23-ի նամակը, Ռոստոմը(1) *Սամուէլից պահանջեց իրերի հաշիւը, որոնք Սամուէլը թողել է այստեղ, ինչպէս ինքն է նշում, ձեր համար անպէտքութեան պատճառով, իրերը կ՚ոչնչանան։ Իրերի ցուցակը Սամուէլը ուղարկել է ձեզ։ Ռոստոմին չի ներկայացուել ծախսուած գումարների հաշուետուութիւնը։ Անպիտանների պատճառով մենք եկանք այդ եզրայանգմանը, ինչպէս խոստացել էինք Արամին ձեր մեկնելու օրը։ Մի անհանգստացէք։*

Ձեզանից ոչ մի նամակ չենք ստացել՝ Ռուսաստան ուղարկելու համար։

Բանկային գործերը փոստով դեռ սառեցուած են։ Բաժնետոմսերի արժէքը ոչ բարձրանում է, ոչ՝ իջնում։

Ձեր հեռագիրը ուղարկել են երկուշաբթի Գետափ։ Այստեղից յարմար չէ ուղարկել։

Ռայոնական ժողովին(2) *վանեցիները չէին եկել, մնացածները կային։ Վաղը աւարտւում է։ Այսօր Վարդգէսը*(3) *մեկնեց։ Նրան ճանապարհում էին տասնչորս ֆայտոն, բարձրագոյն զինուորականները ճանապարհեցին մեզ մինչեւ Կէց։ Ինչու Տաճատը*(4) *չի պատասխանում մեր հեռագրին, որով իրեն առաջարկւում էր Տրապիզոնում տեսուչի պաշտօն։*

Այդ պաշտօնը, ինչպէս դուք յիշում էք, առաջարկւել էր Սիմէոնին(5)*։*

Թող Տաճատը հեռագրի, արդեօք նա ընդունում է այդ պաշտօնը։ Ես ձեզ ուղարկել եմ «Յառաջ»ի(6) *մի քանի համարներ, ստացե՞լ էք արդեօք։ Թող Սիմէոնը ժամանի այստեղ եւ ոչ մի պարագայում չհամաձայնի լինել Մուշում։ Երբ ժամանէք այստեղ, միասին կը քննարկենք, կը մտածենք եւ միայն այդ ժամանակ, եթէ գտնեն, որ աւելի լաւ է նա մնայ Մուշում, կ՚որոշենք միասին։*

Կովկասում ոչ մի նոր բան չկայ։

Ցտեսութիւն։

Ձեր Ռոստոմ

Նոյնին կցում եմ երկու նամակ՝ մէկը Սիմէոնին, միւս նամակը Բեռլինից են ուղարկել առանձին։

1.- Ռոստոմ անունը բնագրին մէջ հայատառ է:

2.- Խօսքը կը վերաբերի այդ օրերուն Կարին գումարուած Արեւմտահայաստանի դաշնակցական մարմիններու ներկայացուցած Ռայոնական ժողովին:

3.- Վարդգէսը Օսմ. խորհրդարանի Կարնոյ երեսփոխան Յովհ. Սերենկիւլեանն է, այլապէս ծանօթ Գիսակ ծածկանունով:

4.- Տաճատը (նախկին վարդապետ) Մելքոնեան Մկրտիչն է, այլապէս ծանօթ Գարմէն ծածկանունով:

5.- Խօսքը կը վերաբերի Սիմոն Զաւարեանին:

6., Կարին հրատարակուող դաշնակցական լրագիր:

677

Փաստ. 107-133

Ռուսերէն նամակ

Սիրելի Դոկտոր(1),

Սամուէլին կանչեցի եւ հարցուփորձ արեցի ուշացող իրերի մասին։ Պարզուեց, որ ինչ-ինչ պատճառներով նրանք յարմար չեն գտել չարվադարին(2) *փոխանցել երկու դատարկ ճամպրուկները եւ ճամբորդական անկողինը։ Այժմ այդ իրերը մեզ մօտ են, բնակարանում։ Դուք նրանց կը վերցնէք կրկին անգամ Մուշ ուղեւորուելիս։ Անհրաժեշտ է համաձայն Սամուէլի՝ ձեզ ուղարկած ցուցակի՝ ստուգել արդեօք իր մօտ ինչ-որ «մանրուքներ» չեն մնացել։*

Գալուստի(3) *եւ իր կնոջ մասին արդէն գրուել է Թաւրիզ։ Այսօր կրկին հարցում եմ արել։ Ճանապարհային ծախսերի մասին չեմ յիշել, հաստատ իմանալով, որ Գալուստը ճանապարհի գումար չի ունենայ։ Մի մոռացէք, որ Գալուստը բացի կնոջից նաեւ երեխաներ ունի։*

Քարտուղարի մասին հոգ կը տանենք։ Մի շտապէք, միեւնոյն է .....(4)*։ Դուք շուտով լքելու էք Մուշը եւ վերադառնալու էք, յամենայն դէպս ամսից ոչ շուտ* .....(4) *քարտուղարը անհրաժեշտ չէ։ Մաթեւոսին հեռագրով պահանջելը անյաջող* [*միտք*] *է։ Մոռացել եմ ձեզ ասել, որ նա բաւական կարեւոր թերութիւն ունի՝ անկախ իր կամքից։ Նա յաճախ դիմում է զօրեղ բռունցքների օգնութեանը, որը այնքան ալ յարմար չէ հիւանդանոցային ծառայութեան համար։ Աչքի տակ ունեմ մէկ այլ հիանալի տղայի՝ Տիրանին՝ Հայրիկ*(5) *մականունով։ Նրան այդպէս են կոչել ընկերները իր հոգատար վերաբերմունքի համար։ Նա երիտասարդ է, ծառայել է բուլղարական բանակում։ Նրան գիտեն վասպուրականցիները։ Նա եղել է նաեւ բանտում? Ելիզավետպոլի վերջին դէպքերի ընթացքում։ Կարող եմ երաշխաւորել որպէս ազնիւ եւ գործնական տղայի։ Լուրեր են պտտւում, որ հիւանդ է։ Եթէ հիւանդութիւնը չխանգարի նրան Մուշ գալ, նա ձեզ համար... յայտնութիւն կը լինի։*

Մեզ չի ուրախացնում դպրոցական գործի համար կուսակցութեան օժանդակութեանը դիմելու ժողովի որոշումը։ Բացի այն, որ համատեղ ժողովը արգելել է կուսակցութեան ուղղակի մասնակցութիւնը մշակութային գործերում, համաձայնէք, որ հարկաւաքի դերում յայտնուելն այնքան էլ հաճելի չէ։ Չէ որ նման դէպքերում բոլոր անխուսափելի անախորժութիւնները կը թափուեն կուսակցութեան գլխին։ Յիշէք նախորդ տարուայ պատմութիւնը, Կարապետին ուղղուած մեղադրանքը բռնի դրամահաւաքներ կազմակերպելու մէջ։ Մենք դէմ ենք արտայայտուել կուսակցութեան ուղղակի միջամտութեանը։ Կուսակցութեան անդամները կարող են միայն օժանդակել ժողովին։ Կարծում եմ .....(4) *ճիշտ է, երբ ասում է, որ պէտք է այնքան դպրոց բացել, որքան դրա համար գումար կը լինի։ Իսկ եթէ այս տարո՞ւմ էլ կրկնուի նախորդ տարուայ խայտառակութեանը։ Աստուած սիրէք, այդքան մի վստահէք առաջնորդի եւ այլոց բարեացակամութիւնը։ Պէտք է ենթադրել, որ յամենայն դէպս առաջնորդին եւ* .....(4) *նոյնպէս այդքան էլ հաճելի չէ Սիմէոնի*(6) *ներկայութիւնը։ Միայն թէ այդ կամպանիան թշնամութիւն բորբոքելու պատեհ առիթից չօգտուի։*

Մեզ ուղարկւած զեկոյցից պարզ երեւում է, որ հաշիւները ճիշտ չեն։ Սակայն մենք դրանում գլխաւորապէս Սիմէոնին ենք մեղադրում։ Ինչո՞ւ է նա թոյլ տուել։ Ինչո՞ւ աւելի վաղ չէր պահանջել։ Չէ որ մենք մէկ անգամ չէ, որ գրել էինք հաշիւների մասին։ Մենք դեռ կը քննենք, թէ ինչպէս շտկենք գործերը։ Անհրաժեշտ է, որ Սիմէոնն աւելի գործուն մասնակցութիւն ունենայ գործերի մէջ։

Ձեր առաջարկի մասին կը խօսենք այստեղ։ Աստուած սիրէք, Սիմէոնի հետ եկէք։ Թող նա իր վերջնական համաձայնութիւնը չտայ։ Մենք շատ բանի մասին պէտք է զրուցենք։ Հեռագիրը Կարաուրգանից է ուղարկւելու։ Աւելի լաւ կը լինի, որ երկուսդ էլ հէնց հիմա մեկնէք։ Շտապում եմ, շուտով մեզ մօտ հաւաք է լինելու, արդէն դուռն են թակում։ Պինդ համբուրում եմ երկուսիդ էլ։

Ձեր ՌՈՍՏՈՄ

11 / X / 1910

1.- Ռոստոմի ռուսերէն նամակը բժ. Յակոբ Զաւրեանին՝ Մուշ, ուր բժիշկը հիմնած էր հիւանդանոց տեղւոյն ժողովուրդին համար:

2.- Սուրհանդակ, փոխադրութեան գործով զբաղող ձիապան:

3.- Հաւանաբար խօսքը Գալուստ Ալոյեանի մասին է:

4.- Անընթեռնելի բառերը՝ բազմակէտերով նշուած են:

5.- Տիրան Մինասեան: Տիրան – Հայրիկի կեանքին ու գործունէութեան մասին տեսնել Արամ Մանուկեանի հիւսած յուզիչ կենսագրականը, «Դրօշակ», 1912, թիւ 5, էջ 117-19: Նոյնը՝ «Արամ Մանուկեան – Նամականի», Երեւան,2018, էջ 620-624:

6.- Խօսքը Սիմոն Զաւարեանի մասին է, որ այդ տարիներուն կը վարէր Տարօնի վարժարաններուն ընդհանուր տեսչութիւնը:

678

Փաստ. 99-60

Ռոստոմի այս երկու նամակները ռուսերէն են. առաջինը ուղղուած է Մուշ՝ Սիմոն Զաւարեանին. երկրորդը (փաստ. 99-83) հասցէագրուած է բժ. Յ. Զաւրեանին, որ նոյնպէս այդ օրերուն կը գտնուէր Տարօնի շրջանը: Երկրորդը՝ որ անթուակիր է, պէտք է տեղադրել 1910 թ. Դեկտեմբեր ամսուն:

Սիրելի Սիմէոն,

Ըստ իս, բոլոր անհասկացողութիւնները կարող են հարթւել միայն Շրջ. ժողովով(1)։ *Հարկաւոր է հրաւիրել հնարաւոր մօտ ժամանակներում։ Քո առաջարկած միջոցներն այնքան էլ նպատակայարմար չեն։ Այդ ամէնի մասին կը խօսենք այստեղ։ Անպայման արի դոկտորի*(2) *հետ։*

Մանուկը քեզ կը պատմի մեր որոշումների մասին։ Արձանագրութիւնը կը ստանաք իր ժամանակին։ Քեզ ընտրել են Բիւրոյի անդամ։ Գիտեմ որ դա ծայրայեղօրէն ծանր է լինելու քեզ, բայց դու պէտք է ընդունես, այլ ելք չկար։

Աստուած սիրէք, զգոյշ եղէք։ Վախենում եմ յանկարծ կողմնակի միջամտու-

թիւնը լուրջ պառակտում չառաջացնի ընկերների միջեւ։

Ամուր համբուրում եմ քեզ։

Դոկտորին աւելի մանրամասն նամակ եմ գրել իր չարվադարի(3) *միջոցով։ Ասա նրան, որ արւել է անհրաժեշտը։ Հեռագիրն ուղարկւելու է Կարաուրղանից։ Թող չտապի։ Վանի ընկերները կը լինեն կիրակի օրը։ Դոկտորի նախագծի ճակատագրի մասին կ'իմանաք Մանուկից։*

Քո ՌՈՍՏՈՄ

14 / X / 1910

1.- Շրջ. ժողով բառակապակցութիւնը գրուած է հայերէն։
2.- Դոկտորը՝ բժիշկ Յ. Զաւրեանն է։
3.- Սուրհանդակի։

679

Փաստ. 99-83

Ռուսերէն նամակ բժ. Յ. Զաւրեանին

Սիրելի Դոկտոր,

Ձեր բոլոր նամակները կ'ուղարկւեն երկուշաբթի օրը։ Ոչ մի նոր բան չկայ առայժմ։ Բոլոր բանտարկեալներին, բացառութեամբ .....(1), *Ահարոնեանի, տեղափոխել են Նովոչերկասկ։ Ձեր եղբայրը նոյնպէս տեղափոխւել է։ Լուրեր են պտտւում, թէ իբր Լիժինը հեռանում է։ Դա շատերին ուրախացնում է. դրա մէջ քաղաքականութեան փոփոխութիւն են տեսնում։ Իսկ իմ կարծիքով նա պարզապէս վախենում է պատասխանատուութիւնից, եթէ միայն լուրը ճշմարիտ է։*

Որոշւած է համընդհանուր հանգանակութիւն սկսել՝ ի նպաստ բանտարկեալների։ Պարսկաստանում արդէն ձեռնարկել են այդ գործը։ Այնտեղ յոյս ունեն հաւաքել մինչեւ 10000 *ռուբլի կամ թուման։*

Պարսկաստանում իրավիճակը լաւ չէ։ Թուրքիան նոյնպէս իր ուժերը տեղաշարժում է դէպի պարսկական սահմանները։ Կարաբեկովը մեկնել է Փարիզ՝ դրամական միջոցների համար։ Դա մեր ձեռնարկման համար է։

Սամուէլի վերաբերեալ ձեր կարգադրութիւնները ճշգրիտ չեն կատարւել ձեզ հասկանալի պատճառներով։ Նրա սենեակում բաւականին մեծ քանակութեամբ բամպակ կայ եւ մէկ էլ խաչ՝ լուսարձակող, որն իբր դուք էք նրան նւիրել։ Դա ճի՞շտ է արդեօք։ Հեռադիտակը պիտի լինի ձեզ մօտ՝ ճամպրուկում. մի քիչ լա՛ւ որոնենք։ Սամուէլը սարսափելի սուտասան է։ Բայց ես, ինչպէս ձեզ յայտնի է, նրան չէ, որ մեղադրում եմ։

Բզնունու ասելով՝ դուք մտադիր էք Վան այցելել։ Եթէ դա ճիշտ է, ապա խնդրեմ, զբաղւէ՛ք Իշխանի գործով։ Նրան մեղադրում են չարաշահումների, իւրացման մէջ եւ այլն։ Մեզ ուղարկւած բողոքից պարզ է դառնում, որ այնտեղ

մթնոլորտն այնքան էլ մաքուր չէ։ Երիտասարդութիւնը յուսալի ճանապարհի վրայ չէ։ Հետեւանքները կարող են ողբալի լինել, եթէ ժամանակին խելքի չգան։ Վստահութիւն չեն տածում ե՛ւ Սարգսի, ե՛ւ կոմիտէի հանդէպ։

Ա՛յ քեզ ժամանակներ, ասեմ Ձեզ։

Ձեր ժամանման սպասումով՝
Ձեր ՌՈՍՏՈՄ

1.- Մէկ անընթեռնելի բառ։ Հարցը կը վերաբերի ցարական ոստիկանութեան կողմէ Դաշնակցութեան դէմ բացուած դատին առիթով կատարուած ձերբակալութիւններուն եւ բանտարկեալներու տեղափոխման։ Լիժին կամ Լըժինը՝ ամբաստանեալներու դէմ նիւթեր հաւաքող ռուս գլխաւոր քննիչն էր։

680

Փաստ. 99-84

Ռոստոմի այս նամակը, անթուակիր եւ Արտաւազդ ստորագրութեամբ, գրուած է Կարնոյ Ռայոնական ժողովի (Հոկտ. 2–13) յաջորդող օրերուն։ Գրութիւնը ուղղուած է Դուրան-Բարձրաւանդակի (Տարօն-Սասուն) Կեդր. կոմիտէին։ Արտաւազդը ծածկանունն էր Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյին։

Սիրելիք,

Կը փութանք պատասխանել ձեր Հոկտ. 13-ի նամակին։

Ընկեր Մանուկի(1) *խնդրի վերաբերմամբ դուք մեզ դժուար կացութեան մէջ էիք դրել։ Մի կողմից ստանում ենք Կ. Կոմիտէի կնիքով հաստատուած պաշտօնական ներկայացուցչութեան թուղթը, միւս կողմից՝ Մկրտչի*(2) *հեռագիրը եւ նամակը. ի՞նչ անէինք. եթէ նրան ժողովը չընդունէր, պիտի կարողանայի՞ք ուրիշը հասցնել։ Աւելի լաւ համարեցինք, նրան եւս պահելով՝ հրաւիրել նորից Գ[արմէն]ը*(2)*։ Մկրտչի հեռագիրը մենք նկատեցինք իբրեւ բողոք ոչ այնքան Մանուկի ներկայացուցչութեան դէմ, որքան՝ Գարմէնի չգալու դէմ։*

Մանուկը ներկայացրել է ժողովին ձեր ուղարկած հաշիւները։ Բայց չէ՞ որ դուք եւս թերի էք գտել։ Ռայոնական ժողովը չէր կարող մտնել նրանց մանրամասների քննութեան մէջ,- դա ձեր Շրջանայի ժողովի գործն է։ Ռայոնականը միայն ընդհանուր դիտողութիւններ է արել, որ ձեզ կը հաղորդի շուտով։ Մանուկն էլ բերանացի կը պատմի։ Հարկ ենք համարում սակայն մեր կողմից աւելացնել, որ ժողովների առաջ պատասխանատու պիտի ներկայանան ոչ միայն մենակ ծախսեր առած երկու ընկերները, այլ ամբողջ մարմինը. միւս անդամները շատ լաւ գիտէին սկզբից, թէ ինչպէս են կատարւում ծախսերը. ինչո՞ւ ժամանակին հարկ եղած միջոցները ձեռք չեն առնուած։

Սմբուլի(3) *բերած 17 բրոշիւրները եւ դրանից առաջ եկած 10 գրքերը տրուած են իբրեւ նպաստ Սասունի գրադարաններին։ Խնդրենք յանձնել ըստ պատկանելոյն, հոգ տանելով, որ անհատների ձեռքերում չտրւեն, չփճանան։*

Գարմէնից նոր նամակ ստացանք։ Չի ուզում հեռանալ շրջանից իրեն դէմ յարուցած դատի պատճառով, ինչպէս ինքն է գրում։ Դա արդէն իր անհատական գործն է դուք միայն պիտի հաշիւները պարզէք նրա ներկայութեամբ։ Ձեր որոշումը յայտարարել, թէ նա հեռացած է կազմակերպչական շարքերից, աննպատակայարմար է։ Կարող են կարծել, թէ զեղծումներ են տեղի ունեցել։ Բաւական է միայն յայտնել, թէ նա հեռու է գործերից։

10 *բրոշիւրների հարցը դեռ չի պարզած այստեղ։ Ո՞վ գիտէ, ուղարկւել են արդեօք։*

Մանուկը մոռացել է վերցնել իր հետ հարցերի մի ցանկ, որոնց մասին պիտի խօսէր ձեզ։ Աւելորդ չենք համարում մի քանիսը թւել այստեղ։

1. *Շրջանային ժողովի չուտափոյթ գումարելու գործը, ուր միայն կարող են վերջ ստանալ հաշւական եւ այլ խառը խնդիրները։ Այդտեղ էլ պիտի ձեռնարկել օրինական Կ. Կոմիտէի ընտրութիւնը։*
2. *Հին հաշիւների պատճէնները ուղարկել թէ մեզ եւ թէ Պոլիս։*
3. *Կայքի, գոյքի ցանկ պատրաստել։*
4. *Ս. Կարապետում գտնւած արխիւը ուղարկել Ժընեւ, կցելով նամակների մէջ հանդիպող կարեւոր կեղծ անունների բառարանը։*
5. *Պոէյեանի խնդիրը կարգադրել համաձայն Խորհրդի որոշման։*
6. *Կապւել Նփրկերտի*(4) *հետ։*

Նոր հասան Վահան Փափազեանը եւ Վանի մարմնի պատգամաւորը։ Դեռ կարգին չենք խօսել։

Խնդրում ենք ընկերական շրջանում ծագած տարաձայնութիւններին աշխատէք լայն ծաւալ չտալ։

Ընկ. ողջոյններով՝
ԱՐՏԱՒԱԶԴ(5)

1.- Մանուկը Ռայոնական ժողովին կը մասնակցէր իբրեւ պատգամաւոր Տարօն-Սասունի:
2.- Մելքոնեան Մկրտիչ, նախապէս Տաճատ վարդապետ. ծանօթ էր Գարմէն ծածկանունով:
3.- Սմբուլ, Սմբուլ Մշեցի, իսկական անունը՝ Սմբատ Յակոբեան:
4.- Նփրկերտ – ծածկանուն Ֆարղինի կամ Մուֆարղինի, որ կ՝ենթադրուի ըլլալ Մեծն Տիգրանի կառուցած Տիգրանակերտ մայրաքաղաքի աւերակներուն մօտ գտնուող աւանը:
5.- Ծածկանուն Արեւելեան բիւրոյի:

681

Փաստ. 99-64

Կարինէն՝ Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածին ուղղուած նամակի մը վերջաւորութեան Ռոստոմի կողմէ աւելցուած գրութիւն է:

29 / X / 1910

Ձեր ներփակ նամակի մասին կը գրենք։ Մեր կարծիքով սահմանները աւելի լայն պիտի անել։ Սպասում ենք Անտոնի(1) *գալուն, որ խորհրդակցենք եւ վերջնական մի ձեւ տանք։*

Դուրանի(2)*, Ծովափի*(3) *խնդիրներին աւելացաւ նորը։ Հիմա էլ բողոքներ են սկսել Երեւանի դէմ։ Մանրամասնութիւնները կը պատմի Վ[ահան] Փափազեանը։*

Ստացայ եւ ներփակ էտիկէտը։

Ձերմ ողջոյններով
ՌՈՍՏՈՄ

1.- Անտոն – Ջաւարեան Սիմոն:
2.- Դուրան – Տարօն:
3.- Ծովափ – Տրապիզոն:

682

Փաստ. 1736-8

Միքայէլ Վարանդեանին ուղղուած այս նամակին մէջ Ռոստոմ կ՚արծարծէ յատուկ հարց մը, որ կը վերաբերի «Նոր Դար» լրագրի խմբագիր Սպանդար Սպանդարեանին, ամբաստանուած Դաշնակցութեան կողմէ որպէս գործակալ ցարական ոստիկանութեան գաղտնի բաժանմունքին: Հարցը քննութեան ենթարկուած էր ռուս ընկերվար կուսակցութեանց եւ Դաշնակցութեան ներկայացուցիչներէն կազմուած դատական ատեանի մը կողմէ եւ, ըստ երեւոյթին, չէր գտած ամբողջական պարզաբանում: «Դրօշակ»ի 1911-12 տարիներու թիւերուն մէջ այս խնդրին շուրջ լոյս տեսած են բազմաթիւ վկայութիւններ եւ փաստաթուղթեր, բայց եւ հարցը յայտնապէս մնացած է առկախ, առանց բոլոր կողմերուն համար ընդունելի լուծումի մը:

30 / I / 1911

Սիրելի Միքայէլ,

Ստացայ Պարիզից եւ Ժընեւից գրած նամակներդ։

Սպ[անդարեան]ի գործում, ինչպէս երեւում է, «անաչառ» չես եղել։ Քեզ վրայ երեւի շատ են ազդել տեղի ունեցած տրագիկական տեսարանները։ Ախր ի զուր չէին Աթէնքի դատաւորները միջոցներ ձեռք առնում այդ կարգի տեսարանների տպաւորութիւններից զերծ մնալու համար։

Քանի որ Սպ[անդար] Սպ[անդարեան]ի անունը արձանագրուած կայ ոստ[իկանական] թղթերում, քանի որ հէնց նոյն յունուար ամսին Սպ[անդարեան]ը այն կողմերումն է եղել, պէտք էր մեծ կասկածի ենթարկել նրա անմեղութիւնը։ Զգիտեմ, ինչպէս է հիմա, բայց մեր ռուս բարեկամներն էլ պէտք է յիշեն, որ այն ժամանակները, այն էլ Պլեւէի օրով(1)*, ոչ մի կասկածելի մարդ, քաղաքական տեսակէտով, ոչ մի պայմանով չէր կարող մուտք գործել մայրաքաղաքները։ Ինչպէ՞ս էր որ Սպ[անդարեան]ը բանտից դուրս գալուն պէս կարողացաւ թող[նել] Մոսկուա ընկնել։ Եթէ ենթադրենք, որ բանտում, հարցաքննութեան ժամանակ, նա յաջողեց ցրել իր մասին իբրեւ դաւադիրի, իբրեւ յեղափոխականի եղած կասկածները, բայց չէ որ նա արդէն յայտնի էր իբրեւ թունդ պաշտպան ազգային-եկեղեցական իրաւունքների, բացարձակ կերպով մասնակցում եւ բողոքում էր հրապարակային ցոյցերի ժամանակ։ Ինչո՞ւ մի երկու ամիս մայրաքաղաքում մնալուց յետոյ նա կարողացաւ վերադառնալ Թիֆլիզ, մինչդեռ ուրիշները, աւելի քիչ կասկածւածները, ինչպէս օրին[ակ] բժ. Նաւասարդեանը, Յովհ. Մալխասեանը, Աբրահամեանը, եպիսկոպոսներ, վարդապետներ, վաճառականներ պէտք է աքսորի մէջ մնային։*

Եթէ հարցը դնէք այնպէս, թէ ո՞վ էր ագէնտը, ինքը Սպ[անդար] Սպ[անդարեան]ը, թէ նրա եղբայր Կոնստանդինը, շատ բան մութ կը մնայ։ Իսկ եթէ դնէք երկուսի խնդիրը, երկուսի գործակցութեան հաւանականութիւնը, խնդիրը աւելի շուտ լուծում կը ստանայ։

Դուք այն տպաւորութիւնն էք ստացել, որ երկու եղբայրները իրարու հետ տեսնւած չեն եղել։ Ենթադրենք, որ ճիշտ է, բայց միթէ՞ նրանք չէին կարող նամակներով պայմանաւորուել։

Քննութեան ժամանակ պէտք է պարզել մանրամասը՝

1) *Երբ, ինչպէս, ում միջոցով Կոնստ[անդին] Սպ[անդարեան]ը կապ հաստատեց մեր հետ։*

2) *Ի՞նչ է նրա անցեալը։*

3) *Ինչո՞վ բացատրել Սպ. Սպ.ի Մոսկվա գտնուելը, ազատ վերադարձը Թիֆլիզ եւայլն։*

Համբոյրներով՝
ՌՈՍՏՈՄ

Յ. Գ.— Շատ ուրախ եմ, որ խմբագրութեան տեղափոխութեան խնդիրը փակւել է*(2)*։ Իսկի իմ սրտովը չէր տրւած որոշումը։

1.- Ֆոն Պլեւէ – Ռուսիոյ ներքին գործոց նախարար, ապա վարչապետ, մեծազօր բռնակալ, որ սպաննուեցաւ 1904 Օգոստոսին, ռուս ընկերվարական ահաբեկիչի կողմէ:

2.- Ակնարկութիւն այն իրողութեան, որ կը մտածուէր այդ օրերուն «Դրօշակ»ի խմբագրութիւնը Ժընեւէն Փարիզ տեղափոխել:

683

Չհամարակալուած երկու գրութիւն Ռոստոմէն (Կարին) ուղղուած Սիմոն Զաւարեանին եւ Միքայէլ Վարանդեանին: Նամակները վերցուած են Ռոստոմի կնոջ՝ Եղիսաբէթ Մելիք-Շահնազարեանի (Լիզա) անձնական արխիւէն:

Սիրելի Սիմոն,

Ուղարկում ենք 2 տուփ cacao. *աւելի լաւ չգտանք։*
Գլիցերինի հաշիւը կը ստանաս պ. Մեսրիկեանից։

Համբոյրներով՝
ՌՈՍՏՈՄ

Հանրագրութիւն եթէ տաճկերէն թարգմանած ունէք, ղրկիր: Բժիշկը դեռ հոս է, մինչեւ դրական գրաւական կը ստանայ Պոլսէն:

ՅՈՎՍԷՓ(1)
27-II-1911

Քո հարցը վերջացաւ, այժմ Ռոստոմի հարցն է բարձրացած:
Յակոբ Սարգսեան ուսուցիչը, որ ձեր շրջանն է, վերցրած է Խաչիկ Փաստրմաջեանից 2 արծաթ վերադարձնելու պայմանով, բայց մինչեւ այժմ չէ վերադարձրել:
«Հորիզոն»ի մասին գրիր որ հոս չուղարկեն, այլ ուղղակի քեզ ուղարկեն Մուշ:

ՅՈՎՍԷՓ

1.- Երկրորդ բաժնի տակ (տարբեր գիրով) Յովսէփի ստորագրողը, բժ. Տէր Դաւթեանն է, անդամ Արեւելեան բիւրոյի Կարնոյ հատուածին:

684

Սիրելի Միքայէլ,

Անցեալ փոստին գրած նամակս ստացած կը լինիս։
Ուղարկում եմ 295 fr.*-ի մի չէկ։ Նրա* 1/3 *մասը* (8 *ոսկի*) *դու առ ինձ ուղարկած գրքերի փոխարէն, իսկ մնացածը* (12 *ոսկի*) *տուր Պերճուհուն*(1)*։*
Առաջւայ 6 *եւ* 8, *այսինքն* (*միանգամից* 14 *ոսկին*) *արդէն ստացած կը լինի։*
Պերճուհուն ասա, որ Վահան Գասպարեանը փոխադրել է մօտ մի ամիս առաջ։

Քո Ռ.

23-II-1911

1.- Պերճուհին ծանօթ գրագիտուհի Բարսեղեանն է, կինը Վանայ Սարգիսին (Բարսեղեան-Օտապաշեան). այս օրերուն կը գտնուէր Զուիցերիա ուսանելու համար:

685

Փաստ. 100-24

Ռոստոմի այս ռուսերէն նամակը գրուած է Կարինէն եւ ուղղուած բժ. Յակոբ Զաւրեանին: Նամակին մէջ յիշուած Յովսէփը՝ բժ. Տէր Դաւթեանն է, որ Ռոստոմի հետ անդամ էր Արեւելեան բիւրոյի Թուրքիոյ հատուածին (Կարին):

Թարգմանութիւն.—

Սիրելի դոկտոր,

Ստացայ Ձեր նամակը Բաբերդից եւ նոյն պահին իսկ կատարեցի Ձեր յանձնարարութիւնը (խոստովանեմ, ծայրայեղ դժկամութեամբ)։

Ձեան վրայ թաւալ եկող Յովսէփի խղճալի վիճակի մասին այստեղ պատմեցին ձիապանները։ Կարծեցինք, որ ինչ-որ յատուկ բան է տեղի ունեցել, հեռագիր ուղարկեցինք Բաբերդ, մեզ պատասխանեցին, որ Դուք բարեյաջող հեռացել էք այդտեղից։ Ստիպւած նոր հեռագիր ուղարկեցինք Տրապիզոն։ Ինչո՞ւ Դուք չէիք գլխի ընկնում հեռագրել մեզ Ձեր բարեյաջող ժամանման մասին։

Սպասում ենք Ձեր նամակին Տրապիզոնից։ Յովսէփին եւս ստիպէք, որ գրի։

Ձեր ՌՈՍՏՈՄ

3-IV-1911

686

Փաստ. 108-51

Սիրելիք,

Անցեալ փոստով գրել էի. ստացած կը լինէք։

Սարգսից ստացայ 14 *ոսկու փոխանակագիր Պերճին* [*Պերճուհի*] *հասցնելու համար։ Որովհետեւ* 5 *օր պայմանաժամ կայ, մի* 2-3 *օր էլ ես կ՚ուշացնեմ. խնդրեմ այդտեղ վճարէք այժմեանից այնքան, որքան պէտք կ՚ունենայ։*

Ձեր Ռ.

25 / IV / 1911

687

Փաստ. 100-44

Կարինէն գրուած նամակ է, Պոլիս ուղարկուած: Թուականին համար սեւ մատիտով արձանագրուած է 8 Հոկտ.:

Արեւմտեան Բիւրոյի Թ[*ուրքիոյ*] *հատուածին,*

Սիրելիք,

Անհրաժեշտ են հեռագրական տեղեկութիւններ օրւայ կացութեան մասին։ Կամ դուք, ինքներդ ուղարկէք ամէն օր ստացած լուրերի ամփոփումը 40-50 *խօսքով, կամ պայմանաւորուեցէք* agence-*ներից մէկի հետ, ինչպէս այստեղից գրել են Ազատամարտին։ Աւելի լաւ է առաջինը՝ աւելի վստահ կը լինինք լուրերի ճշտութեանը։*

Ճանապարհին ամէն տեղ յուզում էինք նկատում։ Չափազանցրած լուրեր շատ են պտտում։ Մի բան ցաւալի է, Հակկի փաշայի դէմ ամբարուած դժգոհութիւնը անդրադառնում է,- նոյնիսկ զինուորականների բերանում,— ամբողջ իթթիհատի վրայ։ Սայիդ փաշայի, Քեամիլի եւ միւսների հրապարակ գալը նկատւում է իբրեւ նշան իթթիհատի անզօրութեան, նրա քաղաքական անձեռնհասութեան։ Հակառակ սպասածիս, Իթթիհատի մարմինները հարկ եղած եռանդը եւ նախատեսութիւնը չեն ցոյց տալիս այս տագնապալից օրերում։ Մեզ էլ շատ մօտ չեն թակում։ Պարզ է, արդեօ՞ք իրենց թուլութիւնն է պատճառը, թէ աւանդական վերապահութիւնը։

Ի՞նչ եղաւ Քաջբերունին։ Նրա պայմանները բոլորը ընդունեցին։

Տեղեկութիւն տուէք նաեւ Շաւարշի մասին, մինչեւ նա ճանապարհ չընկնի, դժւար թէ Վրացեանը կարողանայ դուրս գալ այստեղից(1)։

Վարդանի համար գործ գտնւե՞ց։ Արամին(2) *ուղարկեցի՞ք կազդուրւելու։ Ինչո՞վ վերջացաւ Համբարձում Մելքումեանի խնդիրը։*

Ճանապարհից գրածներս ստացած կը լինէք։ Սպասում եմ մոռացած իրերիս ստացւելուն։ Մի անգամ էլ եմ կրկնում,- ամէն օր մի մի ամփոփ հեռագիր ուղարկէք, ծախսը մեր հաշւին անցնելով։

Ձեր Ռ.

1.- Շաւարշը՝ Միսաքեանն է, որ կը սպասուէր Կարնոյ «Յառաջ» թերթի խմբագրութիւնը վարելու:

2.- Վարդանը՝ Խանասորի արշաւանքին հրամանատարն է, բուն անունով Մեհրաբեան Սարգիս: Արամը՝ Մանուկեանն է, որ Եւրոպա պիտի մեկնէր դարմանուելու համար:

688

Փաստ. 100-52

Կարինէն ղրկուած նամակ է Պոլիս՝ Արեւմտեան բիւրոյին: Կ՚արծարծուի թուրք-պարսկական սահմանային շրջանին մէջ տեղի ունեցող անկարգութիւններուն, որոնք կ՚անդրադառնային նոյնպէս Վասպուրականի վրայ:

Սիրելիք,

Սարգիսը(1) *հասաւ երէկ։ Նրա հաղորդած տեղեկութիւնները այնքան էլ վատ չեն։ Պարզ է մի բան.— կառավարական մեխանիզմը քայքայւելու վրայ, կարելի է ասել, նոյնիսկ քայքայւած է...։ Մէկի կարգադրութեանը դիմադրում են միւսները, եւ դրա պատճառով է, որ կառավարութիւնը հնարաւոր չի համարում որեւէ քայլ յաջողեցնել։ Ասպարէզը աւատականներին է շնորհիւ այն հանգամանքի, որ տեղական պաշտօնէութեան մեծագոյն մասը նոյն աւատականութեանն է պատկանում։*

Եթէ ռուսական զօրքերը հաստատւին Խոյ-Սալմաստ գծի վրայ, Սմկոները(2) *դառնալու են մի մի Ռահիմ խաներ։ Արդէն աւատականները չեն ծածկում իրենց համակրութիւնը դէպի ռուսները։*

Մանրամասը յետոյ կը գրենք այս մասին։

Իշխանի(3) *մասին էլ լսեցինք։ Իմ կարծիքով՝ մենք պէտք է չափազանց զգոյշ լինինք նրան մեղադրելու գործի մէջ։*

Զպէտք է թոյլ տալ սանձարձակ ամբաստանութիւնները, մթնոլորտն է փչանում։

Վառնայից մի նամակ ստացայ օր. Լ. Ամիրխանեանից։ Գրում է, որ իմ հասցէով Պոլիս նամակներ են եղել ուղարկւած՝ յանձնելու համար մի ճանապարհորդ ռուսի։ Ի՞նչ են եղել այդ նամակները։ Խնդրեմ յետ ուղարկէք Վառնա օրիորդին, ուզում է։

Համբոյրներով՝

Ռ.

18 / XII / 1911

Բանտարկեալներին համար ագիտացիա մղելու համար անհրաժեշտ չէ, որ բանտարկեալները յայտարարեն իրենց դաշնակցական. թող մղեն կովկասահայ մտաւորականների անունով։

ՆՈՅՆ

1.- Վանայ Սարգիսն է, Բարսեղեան-Օտապաշեան Պօղոս:

2.- Սմկօ – թուրք-պարսկական սահմանգծին վրայ գործող քիւրտ ցեղապետ, ծանօթ իր խռովարարութեամբ:

3.- Վանայ Իշխան, Պօղոսեան-Միքայէլեան Նիկոլ:

689

Փաստ. 101-7

Կարինէն գրուած նամակ է, ուղղուած Արեւմտեան բիւրոյի Պոլսոյ հատուածին:

12-II-1912

Սիրելի ընկերներ,

Իթթիհատի հետ մեր ունեցած տեսակցութեան մասին անցեալ փոստով ձեզ գրել է Յովսէփը(1)։ *Համաձայնել էինք, որ կոնֆէրանսները խառը հայերէն եւ թուրքերէն շարունակուին առաջուայ պէս եւ գիւղերը պտտելու համար մեր եւ նրանց կողմից մի մի ներկայացուցիչ նշանակուին։ Երեքշաբթի օրը պիտի գային ուրիշ մանրամասների մասին խորհրդակցելու համար, բայց չերեւացին, երեւի Իհթիլաֆի*(2) *առթիւ ծագած խռովութիւնների պատճառով։ Քիյառի սգահանդէսին*(3) *հրաւիրել էինք, սակայն մարդ էին ուղարկել յայտարարելու, թէ չպիտի կարողանան ներկայ գտնուիլ։ Երեւի նրանց հանգստացրել է մեր պարզ յայտարարութիւնը, թէ Իհթիլաֆի հետ գործակցել չենք կարող։*

Սպասում ենք ձեր բանակցութիւնների վախճանին։

Ընտրելիների մասին նոյնպէս ձեզ գրուած է. մեզ յայտնի չէ Վարդգէսի(4) *դէմ եղած դժգոհութիւնների բոլոր պատճառները։ Մենք այն կարծիքին ենք մնում, թէ նա այսպէս կամ այնպէս լաւագոյն ընտրելին պիտի մնայ, Գարոյէն*(5) *յետոյ։ Խորհուրդ կը տայինք լուրջ խօսել հետը եւ խօսք առնել, որ իր ընթացքը կը յարմարեցնի կազմ[ակերպական] որոշումներին։*

Գարոն զուր է այդտեղ ժամանակ կորցնում։ Ընդունում ենք, որ Խուլոսի պէյի դէմ պէտք է գրել ու գործել, բայց դա չպիտի արգելք հանդիսանայ նրա այս կողմերը գալուն կարճ ժամանակով։ Գալը լաւ կը լինի նոյն այդ երկաթուղային ծրագրի օգտակարութեան պրոպագանդի տեսակէտից(6)։ *Եթէ գայ այստեղ խօսի, պարզի իր ծրագիրը, ամբողջ վիլայէթի կողմից,* mandat *կարող է ստանալ այդ ծրագիրը առաջ տանելու։*

Գեղամից(7) *էլ այսօր հեռագիր ստացանք, որով խնդրում է պաշտպանել իր թեկնածութիւնը։ Իւր ասելով՝ թեկնածութիւնը դրել է ընդհանրութեան յայտնած փափաքներից մղած։ Առաջուց էլ նա այլ եւ այլ դիմումներ է արած եղել Մուշ։ Որքան մեզ յայտնի է Մշոյ տրամադրութիւնը, դժուար կը լինի ասել, թէ ընդհանրութեան փափաքն է նրան վերընտրել։ Միթէ՞ ձեր տրամադրութիւնը յայտնի չէ նրան։ Մեր խորհրդակցութեան մէջ կանգ էինք առել Մուշախչէնի Գասպարի վրայ։ Նա կը լինի իսկական գիւղացի պատգամաւոր. բացի այդ՝ խելօք, աչքաբաց, թրքագէտ։ Հարց է միայն, կարող կը լինի՞ նա Մուշի համար ընտրական ցէնզ ունենալ։*

Բաղէշում շատ աշխատանք է թափել Սլաքը(8) *ընկերներն էլ (տեղական) նրա համար են աշխատում։*

Մկրտիչը եւ Կարոն մնացին այստեղ մօտ երկու շաբաթ։ Մանրամասը տեղեկութիւններ ստացանք։ Գարնանը կարող են իսկապէս մեծ խռովութիւններ ծագել։ Մտածում ենք այնտեղ հրաւիրել Սամսոնին(9) *կամ Թորոսին*(10), *որոնք այժմ առանձին անելիք չեն ունենալ իրենց վայրերում։ Թաւրիզից լուր առինք, որ Վահա-*

նը, Ստեփանեանը, Աշոտը վտանգուել եւ հեռացել են։ Պէտք է դրանց այս կողմերը քաշել։

Ջէմիլի(11) *թեկնածութիւնը ինչպէ՞ս կարող էի դնել։ Լաւ տղայ է. բայց շատ անփորձ։*

Մկրտիչն էլ գտնում է, որ Գասպարից յետոյ լաւագոյն ընտրելի կարելի է համարել վարդովցի Առաքելին։ Նա այժմ Սուխում է, կարծենք, ուսուցչի պաշտօնով։

Խաչատուրը(12) *ինձ գաղտնի չի ասել, թէ չի ուզում ազատ անդամ ընտրուել.նա բացարձակ կերպով էր յայտարարում ժողովի առաջ։ Բայց չէ՞ որ ինքն էր փափաք յայտնել այս կողմերը գալու. փոխե՞լ է իր մտադրութիւնը։*

Արամը եթէ հեռանալու է Ժլատից(13), *թող Վան գնայ։ Սըվազ-Խարբերդ ուղարկելը շատ էլ նպատակայարմար չէ։*

Աքսորուած ուսուցիչները եւ վարժուհիները ոչ միայն գիւղերում, այլ եւ քաղաքներում կարող էին պաշտօն գտնել։ Թող այս կողմերն անցնեն։

Համբոյրներով՝
Ռ.

1.- Յովսէփ – Բժ. Յովսէփ Տէր Դաւթեան:
2.- Իրքիհատի հակառակորդ թուրք կուսակցութեան:
3.- Փիեռ Քիյար, Փրօ-Արմենիա-ի խմբագրապետ (1864-1912), մահացած ամիս մը առաջ:
4.- Խօսքը Օսմանեան խորհրդարանի ընտրութիւններու մասին է: Վարդգէս – Վարդգէս Սերենկիւլեան, ծանօթ Գիսակ ծածկանունով:
5.- Գարոն – Արմէն Գարոն է, Փաստրմաճեան Գարեգին:
6.- Ակնարկութիւն Արմէն Գարոյի իսկ կողմէ Օսմ. խորհրդարանին ներկայացուցած այն ծրագրին, որ կը նախատեսէր երկաթուղիներու շինութիւնը Արեւելեան Նահանգներուն, իմա Արեւմտահայաստանի մէջ:
7.- Գեղամ Տէր Կարապետեան:
8.- Սլաք – ծածկանուն Արմենակ Օխիկեանի:
9.- Ստեփան Թադէոսեան:
10.- Թորոս – Գալուստ Ալոյեան:
11.- Ջէմիլ – Ֆէրիտ Ջէմիլ, Տիգրան Ծամհուրն է, բուն անունը՝ Ամսէեան Տիգրան (1885-1921):
12.- Խաչատուրը՝ Մալումեանն է (Ակնունի):
13.- Ժլատ – հիւս. Կովկասի կուս. ծածկանունը (Վլադիկաւկաս, Արմաւիր):

690

Փաստ. 101-24

8 / IV / 1912

Սիրելիք(1),

Սանասարեանի տագնապը աւելի ծանրացաւ։ Խնամակալութիւնը նոր կարգադրութիւն է արել, որով լուծել է հոգաբարձութիւնը եւ ժամանակաւորապէս 3 հոգի է նշանակել (... Բարեգործականի անդամներից) իր կողմից։ 3 օրւայ ժամանակամիջոց է տւել որ համակերպին։ Հակառակ դէպքում պիտի փակի վարժարանը։ Երէկ կայացաւ Սան. սաների ժողովը, որը բողոքեց արւած կարգադրութեան դէմ։ Իսկ այսօր տեղի ունեցաւ մի բանախօսութիւն, որը իրերի բնական ընթացքով վերածւեց միտինգի։ Կանչեցին բացատրութեան համար առաջնորդին եւ հոգաբարձութեանը։ Երեւի հետեւանքների մասին կը գրեն Ազատամարտին այս փոստով։

Ինչպէս մեզանից շատերը, դուք էլ ուզէք-չուզէք պիտի խառնւէք, միջամտէք այս գործին։ Պատրիարքը պէտք է տեղափոխւի Պոլիս։ Խնամակալութիւնը կամ բոլորովին մոլորւած է իր ստացած տեղեկութիւններով կամ բոլորովին տարբեր նպատակներ ունի՝ դպրոցական գործի հետ առնչութիւն չունեցող։

Նախ եւ առաջ պէտք է միջոցներ ձեռք առնել յարգել տալու համար կազմւած կանոնադրութեան կէտերը։ Զափազանց շատ եւ յաճախակի են նրանք խախտւում։

Երկրորդ, պէտք է քննել հիմնական հարցը,— ունի՞ արդեօք խնամակալութիւնը իրաւունք այդ չափով միջամտելու դպրոցի գործերի մէջ։ Կարելի է նոյն իսկ հարց դնել — ունի՞ նա արդեօք իրաւունք գոյութիւն ունենալու։ Կտակի զօրութեամբ նա պէտք է որ անվաւեր ճանաչւի (մի օրինակը ուղարկւած է մօտ մի ամիս առաջ ձեզ՝ Զարդարեանի(2) *հասցէով)։*

Թող հմուտ փաստաբանները քննեն ուշադրութեամբ կտակի տրամադրութիւնները, այն դերը, որ յատկացւած է տեղւոյս հոգաբարձութեան։

Դիմէք ձեր միջոցներին, ամէն ջանք թափեցի համոզելու պատրիարքը, որ ճանապարհ չտայ խնամակալութեան կամայականութիւններին։

Եթէ կարելի է կազմեցէք ժողովներ (սաների միջոցով) եւ այդտեղ էլ պահանջներ դրէք։

Որոշւած է այստեղ, հակառակ խնամ[ակալութեան] հրահանգներին շարունակել դասերը մինչեւ արձակուրդները, որպէսզի ամբողջ տարին ապարդիւն անցած չլինի, մանաւանդ աւարտողների համար։ Նիւթական միջոցներ բաւականաչափ պէտք են։ Կամ յատուկ հանգանակութիւն կը լինի, կամ աշակերտներին կը ցրեն տները։ Խօսք եղաւ դիմել ձեզ եւ հարցնել, կարող էք արդեօք տրամադրելի անել ուսանողական ֆոնտի 250 ոսկին, իբր փոխառութիւն մինչեւ խնամակալութեան հետ համաձայնւիլը։ Այս մասին կը խնդրւի շուտով ձեր կարծիքը յայտնէք։

Ձեր ՌՈՍՏՈՄ

1.- Ռոստոմի այս նամակը, Արեւելեան բիւրոյի Թուրքիոյ հատուածին անունով, Կարինէն, ուղղուած է Պոլիս՝ Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածին։

2.- Ռուբէն Զարդարեան, խմբագիր «Ազատամարտ»ի։

691

Փաստ. 101-75

Թուական չունի. գրուած է Կարինէն եւ ուղղուած Սիմոն Զաւարեանին, որ Պոլիս կը գտնուէր: Բովանդակութենէն յայտնի կը դառնայ, որ 1912 Ապրիլ-Մայիս ամիսներու նամակ է – Մուշ այցելելու մասին կը խօսի, որ տեղի ունեցաւ Յունիս 25-էն սկսեալ (1912):

Սիրելի Սիմոն

Մի երկու մասնաւոր խնդիրների համար գրել էի, պատասխան չստացայ։

1. *Այս տարի այլեւս օգտակար չի լինիլ իմ այստեղ մնալս։ Ես էլ շատ եմ յոգնած։ Կ'ուզեմ մի այնպիսի տեղ, ուր աշխատանք շատ չունենամ, օր[ինակ] Սամսոն, Խարբերդ։ Յայտնէք Սամսոն,որ եթէ իրենք տեսչին փոխելու լինին, ինձ ի նկատի ունենան։*

2. *Մտադրութիւն կայ այստեղ մի խմբակ կազմել, որ վերցնի ճանապարհի աշխատանքները։ Դրանով կարելի է մեծ գործ հայթայթել գիւղացիներին եւ քաղաքի արհեստաւորներին։ Անհրաժեշտ է յանձնարարութիւն երկրաչափների գլխաւորին՝* Mr. Nevard-*ին։ Գուցէ Գարոն*(1) *կամ Հալաճեանը*(2) *կարողանան ինձ յանձնարարել։*

Հեռանալուցս առաջ մի պտոյտ պիտի կատարեմ՝ Մուշ, Բաղէշ, Վան...

Քո Ռ.

1.- Արմէն Գարօ – Գարեգին Փաստրմաճեան:
2.- Պետրոս Հալաճեան, երեսփոխան Օսմ. խորհրդարանի:

692

Փաստ. 101-44

9 / VI / 1912
Կարին

Սիրելի Սարգիս եւ ընկերներ(1).

Նամակդ այսօր ստացայ։ Նախ եւ առաջ յայտնեմ, որ յուլիս 1*-ին, ուսուցչական խմբով եւ աշակերտներից մի մասի հետ մտադիր ենք լինել Ս. Կարապետի վանքում։*

Շատ եւ շատ փափաքելի է, որ ձեր կողմերի ուսուցիչներն էլ աշակերտներով միասին կամ առանձին այնտեղ լինեն։ Կարելի է մի լաւ ուսուցչական ժողով կազմել, հրաւիրելով Մուշի եւ Բաղէշի շրջանների ուսուցիչներին էլ։ Մենք էլ առանձին կ'ունենանք մեր խորհրդակցական ժողովները օրւայ հարցերի մասին (ռայոնական)։

Այդ օրը թող անպատճառ ներկայ լինին նաեւ Նիկոլը, Սամսոնը, Թորոսը, Ֆարհատը(2)*։ Այդտեղ էլ կը խօսենք ուժերի դասաւորման մասին։ Միասին կը պտտենք մի քանի տեղեր. երազում ենք նոյնիսկ Նեմրուդ բարձրանալ։*

Կովկասից, ինչպէս լսեցի, պատրաստւում են գալու մօտ 150 *ուխտաւորներ։ Այստեղից ճանապարհ կ՚ընկնենք յունիս* 25-*ին* (24-*ին փակւում են դպրոցները*) *եւ յոյս ունենք* 5 *օրից տեղ հասնել։ Գնալու ենք ոտով։*

Յոյս ունենք, որ վասպուրականցիք կը փութան այդ օրը անպատճառ ներկայ լինել, մանաւանդ Աղթամար գնացածները։ Սրանց համար 3-4 *օրւայ ճանապարհ է միայն։*

Գարմէնից(3) *մի նամակ ստացայ. գանգատւում է իւր վիճակի անորոշութեան մասին. ուզում է գործի մէջ մտնել։ Կարծեմ, որ հիմա ամենալաւ միջոցն է՝ վերջ տալու համար անորոշութեան՝ շտապել գալ Մուշ։ Առաջիկայում* (*յուլիսի* 1-*ի մօտերը*) *նրանք ունենալու են շրջանային ժողով։ Այդտեղ թող տրւեն հարկ եղած բացատրութիւնները, եւ խնդրին վերջ տան։ Ուրեմն, ասէք իրեն, որ* անպատճառ շտապեն ներկայ լինել ժողովի ժամանակները Մուշում:

Ուրիշ աւելի պատեհ առիթ չի ներկայանալ։ Նրա համար պաշտօն գտնելը Քղի կամ ուրիշ տեղ դժւար չէ։ Կինն էլ պաշտօն կարող է ունենալ։

Եթէ Պերճուհու(4) *խնդիրը չլինէր, կ՚ասէի, որ դու էլ գայիր ուխտի։*

Քո ՌՈՍՏՈՄ

Լաւ կը լինէր, եթէ նամակով կամ հեռագրով յայտնէիք ձեր մտադրութեան մասին։

1.- Սարգիսը Վանայ Սարգիսն է, Բարսեղեան, իսկական անունը՝ Օտապաշեան Պօղոս:
2.- Նիկոլը՝ Մատինեան Նիկոլն է, Սամսոնը՝ Թադէոսեան Ստեփան, Թորոսը՝ Գալուստ Ալոյեան, Ֆարհատ՝ Սարգիս Օհանջանեան:
3.- Գարմէն՝ Մելքոնեան Սկրտիչ, նախկին Տաճատ վարդապետ:
4.- Պերճուհի՝ Սարգիս Բարսեղեանի կինը:

693

Փաստ. 101-45

Երկտողը յանձնարարական է, ուղղուած Պոլիս՝ Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածին:

ՊՈԼԻՍ

Ընկերներ,

Տոմսակս ներկայացնողը՝ մեր բարեկամ Իբրահիմ ըէկը գալիս է Պոլիս։ Նա գործել է մերոնց հետ Ատրպատականում, ծանօթացէք հետը։ Կարող էք վստահել նրան։

Ընկ. բարեւներով՝
ՌՈՍՏՈՄ

12 / VI / 1912
Կարին

694

Փաստ. 117-3

Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. ժողովէն ետք (1911 թ.) ստեղծուած էր Զինուորական Կեդր. մարմինը (կը կոչուի նաեւ ինքնապաշտպանութեան բիւրօ), որ 1912 թ.ին, յատկապէս Իթթիհատի հետ խզումի յայտարարութենէն ետք, ձեռնարկեց զինման գործի կազմակերպման: Ստորեւ ներկայացուած գրութիւնը, Ռոստոմի ստորագրութեամբ, այդ դիմումներէն մէկն է: Նամակը գրուած է գաղտնի քանաքով եւ զայն բանալու փորձ կատարուած, ոչ յաջող կերպով: Այսուհանդերձ բովանդակութիւնը ընդհանուր կերպով հասկնալի է: «Չբացուած» մասերը տրուած են կիտաւոր:

Copy *Նոյ.* 3 1912 / *Կարին*

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կ. Կոմիտէին

Ինքնապաշտպանութեան գործին համար դուք միայն 5000 *ֆրանք էք փոխադրել. դա շատ քիչ է. մենք աւելի էինք սպասում։Բանն այն է, որ չորս վերջին տարիների ընթացքում շատ բան չէ արուած։ Կազմակերպութիւնը չէր օժանդակում նիւթով հետեւեալ պատճառներով։*

1) *Կազմակերպութիւնը ինքը .....քիչ ունէր, նրա եկամուտները աւելի էին ծածկում ընթացիկ ծախսերը.* 2) *եթէ կազմակերպութիւնը մատակարարէր զէնք ..... ժողովուրդը իր յոյսը կը ..... վրայ, եւ իր կողմից չէր ....., մտածելով որ Դաշնակցութիւնը ..... բայց այն, որ վերջին ..... քիչ զէնք ....., եղածն էլ ..... նրան մօտ։ Անցեալի դառն փորձերը ցոյց տուին, որ դիւրութեամբ ձեռք բերած զէնքը, դիւրութեամբ էլ ձեռքից գնում է, կամ անխնամ թողնւած՝ փճանում են. կազմակերպութիւնը աւելի նպատակայարմար է նկատել անմիջապէս ընտրւած զինական մարմնի միջոցով դիւրութիւններ ստեղծել զինւել փափաքող ընկերների համար ..... մարմինները դերը եղել է ..... միջնորդի դեր. նա գտել է եւ ցոյց է տուել ..... զէնքի աղբիւրներ, որոշել է զէնքի տեսակները, երաշխաւոր է կանգնել, երբեմն էլ ինքն է գնել եւ իր հաշւին ուղարկել ժողովրդին վաճառելու համար։ Պէտք է ասած, որ այս ձեւով գործը բաւականաչափ դիւրացել է ..... դիմում է ձեզ, յոյս ունենալով, որ ձեր ձեռքից եկածը չէք խնայել նպաստելու համար զինման գործին։*

Թէեւ կացութիւնը խառն է առ այժմ բայց յուսով ենք, որ ամեռը առանձին բաներ չեն ծագիր, մանաւանդ եթէ անցնենք այս վտանգաւոր ամիսը. բայց գարնան խոշոր դէպքեր անխուսափելի կը լինեն։ Քրդերը լուրջ պատրաստութիւնների մէջ են. կառավարութիւնը կամ կրաւորական դերի մէջ կը մնայ կամ բացասական դիրք կը բռնէ մեր հանդէպ, եթէ նոյնիսկ ամբողջովին ....., որ քրդական խնդիրը ծաւալւելով ..... պիտի դառնան պետութեան համար. այնուամենայնիւ նա կորուկ միջոցների ընդունակ չի լինի դիմելու, այնքան քայքայւած է կառավարութեան ամբողջ մեքանիզմը. կը մնայ ուրեմն, որ մեր գլխի [?] *ճարը մենք տեսնենք։ Եւ եթէ մենք .....*

Ներկայացնենք, ոչ միայն կարող կը լինենք զուտ ինքնապաշտպանութեան գործը կատարել [?] .....

Ձեր պատասխանը գրէք զգոյշ ..... նամակները բացւում են։

Ընկերական բարեւներով

Ի դիմաց Զին. [*Մարմնի*] *ՌՈՍՏՈՄ*

695

Փաստ. 766-29

Ռոստոմի այս երկտողը կցուած է Ատրպատական՝ Կարապետ Պիոնեանին ուղղուած նամակի մը եւ սահմանուած է հաւանաբար Վրէժի Կ. կոմիտէին: Քեռին՝ Արշակ Գաւաֆեանն է, Եփրեմ Խանի մահէն ետք հրամանատարը հայ եւ պարսիկ խառն զօրքերուն: Իր «հայրենիքը» Կարինն է:

Սիրելիք,

Երկար նամակ կը գրի Սարգիսը հետեւեալ փոստով։
Այսօր չտապում եմ յայտնել, որ Քեռուն ճանապարհ դնէք իւր հայրենիքը։ Հաղորդէք նրան ուր որ էլ լինի։

Համբոյրներով՝
Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

17 / XII / 1912

696

Փաստ. 102-2

Կարինէն ուղարկուած նամակ Պոլիս՝ Սիմոն Զաւարեանին:

Սիրելի Սիմոն,

Եթէ այս տարի Պետերբուրգի եկեղեցուց նպաստ չգայ, մեր գործը շատ կը դժուարանայ։ Գրիր Աշոտին ու միւսներին, որ գոնէ մի 1000 *ր*[*ուբլու*] *նպաստ տան այս տարուայ համար։ Միւս տարի, եթէ խնամակալութեան հետ համաձայնութիւն կայանայ, գուցէ նպաստի էլ պէտք չմնայ։*

Յայտնիր նաեւ Սիրականին, որ իրեն առանձին նամակ եմ գրել եկեղեցու հաստէով։

Աստուածդ սիրես, յայտնիր վերջապէս որքան է Ֆոնտի ամբողջ գումարը, եւ եթէ կարելի է 50 *ոսկի եւս փոխադրիր։ Տիգրանին տալիս եմ Ֆոնտից մինչեւ Ամերիկայից եւ կամ այլ տեղից նպաստ ստանալը։*

Ստեփանեանին մենք հրաւիրեցինք մեր մօտ։ Վան էլ, այստեղ էլ կարող է լաւ գործ տեսնել։

Ար[*եւ*]*ելեանին*(1) *որոշել էինք ուղարկել* 20 *ոսկի, բայց քանի որ դուք արդէն ուղարկել էք, մերը կը յետաձգենք։*

Վիգէնին(2) *մեր ողջոյնները։ Բարեկամդ ամէն պատահելիս հարցնում է նրա մասին։*

Խաչատուրին(3) *մի խնդիրք ունիմ։ Եթէ տեսնելու լինի Ռոսինին*[?] *թող տեղեկանայ, թէ ինչ եղաւ նպաստի խնդիրը։ Իր պատուէրի համաձայն այստեղ թուղթ ներկայացրինք հիւպատոսին։ Եւ սա էլ դրա հիման վրայ զեկուցում է ուղարկել դեսպանատունը։*

Գիտենք, որ պատերազմի(4) *պատճառով ուսուցիչը կը դժուարանայ գալ Կարին,*

բայց դասախօսական պիտոյքների (քարտէզներ, բնապատմական պատկերներ, ֆիզիք. գործիքներ եւ այլն) համար ինչ արգելք գալու։ Պիտոյքները ուզել էինք Հռիփսիմեան վարժ[արանի] համար(5)։

Ձեր Ռ.

27 / III / 1913

1.- Իմա՝ Արեւելեան բիւրոյին։
2.- Վիզէնը ծածկանուններէն մէկն է բժ. Յ. Ջաւրեանի։
3.- Է. Ակնունիին։
4.- Խօսքը Պալքանեան պատերազմի մասին է։
5.- Աղջկանց վարժարան Կարնոյ մէջ։

697

Փաստ. 102-14

Ժընեւ յղուած գրութիւն է, Կարինէն։

9 / IV / 1913

Սիրելիք

Անցեալ փոստին մանրամասը նամակ է գրուած. ստացած կը լինէք անշուշտ։

Թերթեր այլեւս չեն ստացւում։ Դո՞ւք չէք ուղարկում, թէ փոստատանն է կորչում։

Պատրաստել տուէք եւ ուղարկէք Արեւել. Բիւրոյի կնիքը՝ հետեւեալ ձեւով՝ Արեւել. Բիւրօ Թ[ուրքիոյ] Հ[ատուած]։

Ներփակ carte-*ը հասցրէք ընկ. Սարգիս Շահնազարեանին։*

Ձեր բոլորիդ տօները չնորհաւորում ենք։

Ռ.

698

Փաստ. 103-8

Կարինէն ուղղուած նամակ՝ Արեւմտեան բիւրոյի Պոլսոյ հատուածին։

[*Կարին*] 21 / II / 1914

Սիրելիք,

Ուղղակի չենք հասկանում ձեր բռնած ընթացքը։ Դուք տակն ու վրայ արիք ամէն ինչ։ Քանի դեռ Համերաշխական ժողովը(1) *եւ Պատր[իարքարանը] հետեւում էին մեր Ընդհ. Ժողովի որոշումներին, բնական է, որ մեր ներկայացուցիչները այդ*

ժողովում կարող էին անկախ կերպով տանել բանակցութիւնները, բայց հէնց որ Պատր. դուրս եկաւ, այլ եւ այլ նկատումներով, որոշ սահմանից, մեր ներկայացուցիչները պարտաւոր էին վերապահ դիրք բռնել, եւ Բիւրոն պէտք է հարցնէր պատկանեալ մարմինների կարծիքը, առնէր նրանց համաձայնութիւնը նախ քան այս կամ այն ընթացքի որոշելը։ Կացութիւնը աւելի անբնական է դառնում նրանով, որ, ինչպէս տեղեկանում ենք, Ար[եւելեան] Բիւրոյի մեծամասնութիւնն էլ համակարծիք չէ համերաշխ. ժողովին։ Սա ի՞նչ օյին էր, որ թոյլ տուիք խաղային մեր գլխին։

Կանգ [առնենք] որոշումների էութեանը։ Շրջաբերական նամակի մէջ արդէն այդ մասին խօսել ենք։ Կամ պէտք էր բոլորովին ձեռնպահ մնալ.— եւ դա իսկապէս ամենապատուաբերը եւ օգտակարը կը լինէր, կամ մասնակցել այն չափով, ինչ չափով պայմանները թոյլ են տալիս։ Այդ պարագային,— քանի որ երեսփոխանների հրաժարուելու խնդիր կար բարենորոգումները(2) չգործադրելու դէպքում,— տարրական տակտը պիտի թելադրէր ուղարկել խորհրդարան այնպիսիներին, որոնք ընդունակ են պայքարելու, իրենց դիրքը զոհելու։ Բայց դուք որոշելով կանգ առնել անկուսակցական թեկնածուների վրայ, կարծես դիտմամբ ուզում էք խորհրդարանի հայ ներկայացուցչութիւնը խաղալիք դարձնել կառավարութեան ձեռքին։ Այդ դեռ ոչինչ,— դուք ուզում էք, որ այդ կատարւի կուսակցութիւնների աջակցութեամբ։ Գոնէ որոշէիք, որ կուսակցութիւնները ձեռնպահ մնան։ Մենք մեր ընկերների՝ յեղափոխական կեանքի բովով անցած ընկերների խորհրդարանական ընթացքի պատասխանատուութիւնը դժւարանում ենք մեզ վրայ առնել, ո՞ւր մնաց այսպէս կոչւած չէզոքներին պատասխանատուութիւնը։ Խորհրդարանական դիրքի հրապոյրի առաջ մեր եփւած ընկերներից ո՞րը, ի՞նչ չափով դիմացաւ։

Համերաշխ. ժողովի որոշումը ընդունելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նւիրագործումը մեր կողմից այն տեսակէտի, թէ երեսփոխանական աթոռը ստեղծւած է անհատների փայլի, անդորր կեանքի համար եւ ոչ թէ դա ասպարէզ է հասարակական պայքարի համար, ուր կարող են եւ պէտք է որ վտանգւեն անհատի անձնական շահերը։ Ուրիշ կերպ մենք մեզ վրայ չէինք առնել վեհանձնօրէն կուսակցականների դիրքը ուրիշներին զիջելու դերը։

Այստեղի անկուսակցական թեկնածուներն են առայժմ

1. Մատաթեան, 2. Սմբատ Տէր-Ներսէսեան, 3. Արամ, 4. Գ. Մեծատուրեան (պաշտօնեայ), Պոլսից առաջարկւած 5. Երկանեան եւ Ճ. Խոսրովեան։ Մի երկու երեքն էլ կան, որոնց անունը չեմ յիշում։

Իսկ հակակուսակցականների թեկնածուների մասին չմտածեցի՞ք։ Ազատական կուսակցութեան բանի տեղ չդրի՞ք։

Ահա ձեր սալոնական ջէնդլմէնութեան առաջին պտուղները։

Ձեր Ռ.

1.- Համերաշխական ժողովը բաղկացած էր Պոլսոյ հայ կուսակցութեանց ներկայացուցիչներէն:

2.- Խօսքը կը վերաբերի 1914 թ. Յունուար 26-ին հայկական նահանգներու մասին կնքուած բարենորոգումներու ծրագրին:

699

Փաստ. 103-9

23 / II / 1914

Սիրելիք,

Արդէն իմացած կը լինէք, որ երեսփոխ. ժողովի կողմից ընտրուեցին Գարոն եւ Վարդգէսը իբրեւ թեկնածու(1)։

Ձեր հեռագիրները Մշոյ եւ Վանի ազգ. մարմինների համաձայնութեան մասին սպասում ենք։ Շատ անհրաժեշտ չենք նկատում տեսակէտների միակերպումը։ Նոյնիսկ մի վայրի ձեռնպահութիւնը կարող է նպաստաւոր հանգամանք հանդիսանալ։ Բայց եւ այնպէս մի քանի անգամ դիմել ենք՝ նամակով եւ հեռագրով։ Բանն այն է, որ դուցէ այստեղի գործերն էլ բոյկոտով վերջանան. չչուկներ կան, թէ Իթթիհատը իր հայ թեկնածուներն է առաջ քշելու, առնւազն՝ մէկի՝ Մատաթեանի թեկնածութիւնը։

Ձեր Ռ.

1.- Գարոն՝ Արմէն Գարոն է, Գարեգին Փաստրմաճեան. Վարդգէսը՝ Սերենկիլեան, որոնց թեկնածութիւնը Օսմ. խորհրդարանի համար՝ ընդունուած էր նոյնպէս հայոց ազգային երեսփոխանական ժողովին կողմէ: Կարինէն ուղարկուած Ռոստոմի այս գրութիւնը սահմանուած է Արեւմտեան բիւրոյին, Պոլիս:

700

Փաստ. 103-16

Ռոստոմի այս նամակը կը գտնուի Արեւելեան բիւրոյի Թուրքիոյ հատուածի (Կարին) թղթածրարին մէջ. անթուակիր է, բայց սեւ մատիտով մակագրուած՝ 15 Մարտ 914: Գրութիւնը ուղղուած պիտի ըլլայ Պոլիս՝ Արեւմտեան բիւրոյին:

[*Կարին*] 15-3-1914

Սիրելիք,

Ընդհանուր Ժողովի հրաւէրը(1), *ինչպէս առաջ էլ գրել ենք, վաղաժամ է, Ձէ որ դեռ մեր գլխաւոր հարցերը չեն նշանակւած։ Առայժմ դուք ձեր շրջանում, մենք մեր շրջանում յիշեցնենք որոշումների մասին. հարցերը, պաշտօնական հրաւէրը կ՚ուղարկենք Ձատկին, իսկ մինչ այդ դուք մեզ գրեցէք ձեր հարցերը, մենք կ՚ուղարկենք ձեզ մեր հարցերը։*

Ձենք հասկանում թէ ինչ aberration(2) *է պատել ընկերների միտքը. ինչո՞ւ են շարունակում կարծել եւ ուրիշներին էլ կարծել տալիս, թէ Դաշնակցութիւնը դուրս է եկել ձեռնպահութիւնից եւ մասնակցում է ընտրութիւններին։ Ձէ՛, պնդում ենք, չէ՛. կուսակցութիւնը շարունակում է ձեռնպահ մնալ. միայն թէ աչքի առաջ ունենալով ձեռք բերւած կիսով չափ յաջողութիւնը, մանաւանդ բարեկարգումների*

չուրջը կատարած համաձայնութիւնը(3), *չենք ուզում հակառակել, երբ ազգային մարմինների կողմից դրւում է ընկերների թեկնածութիւնը։ Մանաւանդ որ ազգային մարմիններին թողնելով՝ աւելի ենք մօտենում մեր մի սկզբունքին՝ ընտրութեանը ընդհ. ազգային գոյն տալով։ Մի մոռացէք մի բան։ Երբ նորից դրւի ազգային ընտրութեան եղանակի հարցը — ինչպէս մինչեւ այժմ դրւել է — մենք կ'ունենանք մեր ձեռքին պատրաստի պատասխան. Օսմ. խորհրդարանի հայ երեսփոխանները ընտրւում են ազգային երեսփոխանական ժողովների կողմից։ Չենք ասում, թէ դա գոհացուցիչ կը լինի, բայց դա ճանապարհ կը բանայ իսկական ազգային ընտրութիւնը յաջողեցնելու համար։ Եթէ օրէնքի մէջ էլ մտնի, գոնէ նախընթաց կը դառնայ ապագայի համար, քանի որ արդի կառավարութիւնը պարտաւորւում է ընդունել ազգի ներկայացրած թեկնածուներին.- հոգ չէ, եթէ նոյնիսկ չկատարի իր խոստումը.- պէտք է աշխատել երեսփոխանական ժողովի անդամներին յատկացնել մի տեսակ միւնթէխիպի-սանիների*(4) *դեր։ Այդ տեսակէտից նայելով՝ պատրիարքի բռնած ընթացքը ուղղակի վնասակար է։*

Այստեղ մտադրութիւն կար միտինգ գումարել պատրիարքի բռնած դիրքի առթիւ. մտադրութիւն կար յայտարարել, թէ աչքի առաջ ունենալով կառավարութեան հանած դժւարութիւնների հետ միատեղ պատրիարքի միջամտութիւնը, որոշւում է ձեռնպահ մնալ ընտրութիւններին։ Բայց այս բանը յետաձգւեց, այն յուսով թէ գուցէ պատրիարքը փոխի իր ընթացքը։

Ձեր Ռ.

1.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Ութերորդ Ընդհ. ժողովին, որ պիտի գումարուէր Կարին, 1914 թ. Յուլիսին:

2.- Ֆրանսերէն. շեղում, մոլորանք, սխալ դատում իմաստով:

3.- Ակնարկութիւն նոյն տարուան Յունուար 26 – 8 Փետրուարին հայկական նահանգներու մէջ կատարուելիք բարեկարգութեանց շուրջ ստորագրուած պայմանագրին:

4.- Օրէնքներու գործադրութեան վերահսկիչի դեր:

701

Փաստ. 103-15

Պոլիս՝ Արեւմտեան բիւրոյին հատուածին ուղղուած գրութիւն է, Կարինէն:

19 / III / 1914

Սիրելիք,

Անցեալ անգամ մոռացայ գրել, որ հրաւէրի տակը պիտի ստորագրէ նաեւ Արեւելեանը(1)։ *Ուրեմն այս անգամ 3 ստորագրութեամբ կը լինի։*

Այս մասին գրւած է իրենց, սպասում ենք նրանց հարցերի ցանկին։

Առաջին փոստով փութացէք ուղարկել 2-ական օրինակ Լուսինեանի Ֆրանսահայ բառագրքից (Բ. տպագրութիւն անպատճառ)։

Ձեր Ռ.

Շատ պիտի խնդրէի, որ Սիմոնի(2) *բոլոր թղթերը լաւ ապահով տեղ պահէին։ Մանաւանդ չաւարտած ուսումնասիրութիւնները։*

Այդ բանի մասին ժամանակին խնդրել եմ Հրաչին(3)։

Ն[ՈՅՆ]

1.- Այսինքն՝ Արեւելեան բիւրոն: Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. 8-րդ Ընդհանուր ժողովի հրաւիրագիրներուն, որոնք պէտք է ստորագրուէին Արեւելեան, Արեւմտեան եւ Հայաստանի բիւրոներուն կողմէ: Այս վերջինը ստեղծուած էր 1913 թ. Հ.Յ.Դ. Ընդհ. ժողովին կողմէ եւ կ՚ընդգրկէր արեւմտեան Հայաստանի վեց նահանգները եւ Տրապիզոնի վիլայէթը:

2.- Ս. Զաւարեանի:

3.- Հայկ Թիրեաքեանն է, «Ազատամարտ»ի վարչական պատասխանատու:

702

Փաստ. 97*բ*-48

Սիրելիք,

Խնդրում եմ հոգ տանէք եւ եկող 3 *երիտասարդներին անմիջապէս ճանապարհ ձգէք։ Իսկ իրենց ձեռքի թղթերը վերադարձրէք այստեղ մարդու միջոցով կամ փոստով։*

Ընկ. ողջոյններով՝
Ձեր ՌՈՍՏՈՄ

31 / XII / 1914
Ժընեւ

703

Փաստ. 1279-5

Փարիզէն Ժընեւ՝ Սիք. Վարանդեանին:

17 / 1 / 1915

Սիրելի Միքայէլ,

Վիկտորի(1) *ասելով՝ իրենք հակառակ են եւ չեն էլ ուզում, որ հարեւանը? մէջ մտնի։ Այս մասին մանրամասը յետոյ։*

Այս պատճառով է, որ դու առանձնապէս պէտք է զբաղուես այդտեղ. արդիւնքը նամակով եւ հեռագրով կը հաղորդես իրեն Պեռարին հասցէով։

Ողջոյններս Վալեային եւ Մոխէիվային[?]։

[*Ռուսերէն անընթեռնելի անուն*], *Ռուբէնը լաւ են։*

Քո Ռ.

1.- Վիկտոր Պեռարն է, Դաշնակցութեան բարեկամ ծանօթ քաղաքական անձնաւորութիւնը:

704

Փաստ. 1357-1

Համաշխարհային Ա. պատերազմի առաջին տարին Ռոստոմ, նախքան Կովկաս անցնիլը, Փարիզի եւ Լոնտոնի մէջ պաշտօնական շրջանակներու հետ ունեցաւ հանդիպումներ նպատակ ունենալով դաշնակից պետութեանց աջակցութիւնը ապահովել՝ հայկական հարցի նպաստաւոր լուծման համար: Բանակցութեանց նիւթ պիտի դառնար նոյնպէս հայկական լեգէոնի կազմութեան հարցը: Ռոստոմի առաջարկն էր, որ կազմուէր հայ կամաւորներէ բաղկացած լեգէոն մը, որ պիտի միացուէր Եգիպտոս տեղակայուած անգլիական բանակին, պիտի մարզուէր եւրոպացի սպաներու կողմէ եւ նոյնիսկ մասնակցէր կռիւներու, այն պայմանով, որ Թուրքիոյ դէմ գործողութիւններու, մասնաւորաբար անգլիական զօրքերու Կիլիկիոյ ափերը ցամաքահանումի պարագային, հայ կամաւորները փոխադրուին Կիլիկիա (Տես Ռոստոմ, Նամականի, Պէյրութ, 1999, էջ 625):

Այս եւ յաջորդ շարք մը նամակներ յղուած են Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան, որ թերթին հրատարակութիւնը դադրեցուցած ըլլալով հանդերձ կը շարունակէր օտարալեզու հրատարակութիւններու միջոցաւ եւրոպական մամուլը եւ պետական շրջանակները իրազեկ դարձնել թրքական իշխանութիւններու ձեռնարկած հայաջինջ գործողութիւններուն:

23 / I / 1915, *Պարիզ*

Սիրելիք,

Բերարը(1) *գրի առաւ իր տեսութիւնները մեր ապագայ կազմի մասին. առաջ եմ բերում էական կէտերը: Բնագիրը հետս եմ տանում:*

Հայերի ձգտումը պէտք է լինի

1. *Ստեղծել աշխարհագրական մի ամբողջութիւն քիւրդ-հայկական նահանգներից, որին* Bérard-*ը տալիս է* Anatolie Orientale *անունը: Հակառակել բաժան բաժան անելու, մի քանիսի հովանաւորութեան տակ դնելու ծրագրին:* Anat[olie] Orient[ale-*ի*] *սահմանները պէտք է լինին:*

Հիւսիսից՝ Սինոպ-Ռիզէ-Խոպ(2)*: Արեւմտքից՝ Մերսինից Սինոպ գիծը. Հարաւից՝ Մերսին, Ալեքսանդրէտ, Մոսուլ կամ մի քիչ աւելի դէպի հիւսիս. Արեւելքից՝ ռուս-պարսկական արեւմտեան սահմանագիծը: Այսպիսով երկիրը ելք կ՚ունենայ դէպի Սեւ եւ Միջ*[երկրական] *ծովերը:*

2. *Մտցնել այդ երկրում եւրոպական կարգեր: Կենտրոնական մարմինը, ուրիշ կառավարիչները կը լինեն սկզբում եւրոպացիներից: Ռեֆորմներ 4 կարգի են ա) ժանդարմերիայի բ) դատական գ) ֆինանսական, աւատական սեփականատիրութեան, դ) Հանրային աշխատանքների:*

Այս բոլորը պէտք է լինի par la volonté et le concours des Européens avec la collaboration et les conseils des indigènes.(3)

3. *Թոյլ չտալ որեւէ ձեւով միջամտութիւն թիւրք կառավարութեան, եթէ նա չարունակի գոյութիւն ունենալ: Ղեկավարութիւնը պէտք է պատկանի Երրեակ Համաձայնութեան*(4) *կամ նրա կողմից նշանակւած մի պետութեան:*

Անհրաժեշտ է համարւում որ մենք համակերպենք այն բոլոր արտաքին ձեւե-

ըին, որ օգտակար կը դատի Համաձայնութիւնը. պահանջել պէտք է միայն տարեկան համարատուութիւն։

Առաջնութիւն պէտք է տալ առաջին կէտին, այսինքն աշխարհագրական միութիւն ստեղծելուն։ Միւսները ինքնըստինքեան կը հետեւեն։

Ինչպէս տեսնում էք, ընկերներ, թերի բաներ շատ կան։ Ես գրեթէ առարկութիւն չարի, մտածելով, որ ամբողջական ծրագրի մասին աւելորդ է այժմ խօսք բանալ։ Բացի այդ՝ այս մարդիկ այնքան են զբաղուած, այնքան ծանր հոգսեր ունեն, որ մեղք է սրանց ժամանակը խլել։ Ամէն տեսակցութեանս մտածում էի, թէ ինչպէս անեմ, շուտ վերջացնեմ դուրս գամ։ Տեխնիկական գործերի վերաբերեալ բաւական տեղեկութիւններ ձեռք բերի։ 3 ձեռնհաս անձերի հետ տեսնուեցի։ Էլ ինձ չծաղրէք,— սրանց փորձերն էլ նոյն ուղղութեամբ են։

Յաջողուեց կապ հաստատել Temps*-ի հետ*(5)*, տեղեկութիւններ պիտի ուղարկուեն Պետերգրատի ներկ[այացուցչի] միջոցով։*

Հասցէ եմ վերցրել կապուելու ամերիկական մի գործակալութեան ներկայացուցչի հետ։

Դուրս եմ գնում վաղը առաւօտ։ Ամէն կերպ կ'աշխատեմ մի շաբաթից աւել չմնալ Լոնդոնում։

Համբոյրներով՝
ՌՈՍՏՈՄ

1.- Վ. Բերար – Pro Armenia-ի եւ Pour les Peuples d'Orient-ի պարբերաթերթերու գլխաւոր խմբագիրը:

2.- Խոպը հաւանաբար Խոփան է, ռուս-թրքական սահմանագծի մօտ փոքր նաւահանգիստ:

3.- Ֆրանսերէն՝ «Եւրոպացիներու կամքով ու աջակցութեամբ, եւ գործակցութեամբ ու խորհուրդներով տեղացիներու»:

4.- Երրեակ Համաձայնութիւնը՝ Ֆրանսայի, Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ կնքուած զինակցութիւնն էր:

705

Փաստ. 1279-7

Լոնտոնէն գրուած նամակ Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան:

2 / II / 1915
[*Լոնդոն*]

Սիրելիք,

Ձեր յունուար 27-ի նամակը ստացայ, բայց հեռագրով յայտնած 28-ի նամակը դեռ եւս չկայ։ Թէեւ իմ հաշուով 2 օր առաջ պէտք է ստացած լինէր։

Ամերիկայից եկած հեռագրի մասին ես արդէն յայտնել էի Ահարոնեանին. նա ասաց, որ սպասում է դրամին՝ Կովկաս մեկնելու համար. բնականաբար պիտի անցնէր Պարիզ-Լոնդոնով։ Իսկ Միքայէլը(1) *արդէն մեկնած է եղել Լօզանից. իրեն*

ես տելէֆոնով ուզեցի յայտնել նրան Ամերիկայի հրաւէրը։

Այստեղից դրամ վերցնելը դժուար է։ Ուրիշ կերպ կը կարգադրեմ։ Դրամ կը ստանաք այսպէս կամ այնպէս։ Բայց չէ՞ որ վերջին հաշուով բոլոր պարտքերը վճարելուց, Թաթուլի ճանապարհածախսը տալուց յետոյ 1000 fr.*-ից աւելի պիտի մնար կասսայում։*

Մինչեւ հիմա, դեռ կարելի է ասել գրեթէ ոչինչ չեմ արել։ Տեսնուել եմ միայն 2 *անգամ հայկական կոմիտէի հետ։ Այսօր այցելելու ենք Քլիստոնին։ Երեւի* 4-5 *օր եւս ստիպուած պիտի լինիմ մնալու։ Գուցէ այդ ժամանակի մէջ Ամերիկայի նամակը հասնի։ Մոռացայ ասել, որ այստեղ հեռագիր ստացայ, որով ուզում են իմանալ գալուս նպատակը, առաջարկում են մնալ Լոնդոնում, սպասել իրենց նամակին։ Պատասխանեցի, որ երկար մնալ չեմ կարող. հարցրէք, թէ երբ են նամակ գրել. բայց չգիտեմ թէ ինչու բոլորովին լռեցին։*

Մի երկու օրից դարձեալ կը գրեմ։

Ձեր
ՌՈՍՏՈՄ

Հեռագրի պատասխանը ստացայ։ Ուզում են, որ սպասեմ նամակին, որ փոստին են յանձնել 28*-ին! Ուրեմն առնուազը* 12 *օր։*

Այսօր ստացայ 28*-ի նամակը. կը պատասխանեմ. դեռ այստեղ եմ։*

1.- Միք. Վարանդեանը:

706

Փաստ. 1357-3

Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան:

9 / II / 1915
Լոնդոն

Սիրելիք,

Այսօր լրանում է երկու շաբաթը իմ այստեղ լինելուն, բայց դեռ ոչինչ չի արուած գրեթէ։ Մեծ յիմարութիւն ունեցայ դիմումներ անելու հայկական կոմիտէի միջոցով։ Երեւակայէք մինչեւ հիմա դեռ ոչ ոքի չեմ տեսել։ Անցեալ ուրբաթ օր ժամադրութիւն էր նշանակուած անգլօ-հայկական կոմիտէի նախագահ Վիլեամսին տեսնելու համար, բայց ինչպէս է եղել ինձ չեն գտել, իրենք մենակ են տեսնուել։ Վաղը պիտի միասին գնանք, եթէ Աստուած յաջողի։ 2-3 *մարդու հետ տեսնուել եմ, բայց առանց կոմիտէի միջնորդութեան։ Դրանցից մէկն է Նոէլ Բեկստոնը։ Սրա կարծի-*

քով՝ մեր վիճակը կախուած կը լինի մեր ցոյց տուած եռանդից եւ ուժից։ Վստահ է որ անգլիական բարոյական ազդեցութիւնը չպիտի պակսի։ Տեսնուեցայ նաեւ իրլանդացի հին մարտիկ O'Conner*-ի հետ, բայց դժբախտաբար մեր հարցի մասին շատ թռուցիկ խօսակցութիւն ունեցանք, չնայած, որ ամբողջ մի ժամ կորցրեց մարդը։ Քաղաքավարական պայմանները յարգելու համար նա հարկ համարեց տանել ցոյց տալ պարլամենտը։ Դրա շնորհիւ էր, որ տեսած եղայ լորդերի ժողովի նիստը, յայտնի լորդերին.յետոյ Համայնքների ժողովը, ուր այդ րոպէին հարցապնդում կար Բարդէվի դատապարտութեան մասին, գրադարանը, ընթերցարանը, ճաշարանը (ի միջի այլոց լորդերի ճաշարանը դեռ եւս առանձին է), առանձին կաբինէդները եւ այլն...*

Նա եղել է, ինչպէս ինքն ասաց, անդամ հայանպաստ մի կոմիտէի, սրանից 30 *տարի առաջ։*

Մէկ ուզում եմ թողնեմ գնամ, մէկ էլ դժւար է առանց որոշ արդիւնքի մեկնել։ Սպասում եմ այսպէս կամ այնպէս, մինչեւ 1) *Ամերիկայի նամակի հասնիլը,* 2) *Կարնոյ անգլիական հիւպատոսի գալը, որի միջոցով գուցէ աւելի դիւրին լինի գործը վերջացնել եւ* 3) *կիրակի օրը գումարուելիք սոցիալիստների ժողովին, որի համար պիտի գան Ֆրանսիացի ու բելգիացի ներկայացուցիչները։*

Ահարոնեանին լուր տէք, որ գալուց անպատճառ Պարիզից յանձնարարականներ վերցնի. եթէ նա էլ կարողանար կիրակի օրը հասնել, ինչ լաւ կը լինէր։

Միքայէլը ո՞ւր է։ Եթէ դեռ Բուլղարիա չի հասել, Սարգսի(1) *ուզած տեղեկութիւնները՝ շատ համառօտ եւ զգոյշ, օբիեկտիւ տոնով, հասցրէք իրեն իր ցոյց տուած ճանապարհով։ Իսկ եթէ նա հասել է, ուղարկէք միայն լրացուցիչ տեղեկութիւններ։ Աւելորդ չէ սակայն յիշեցնել Միքայէլին, որ անպատճառ մէկին ճանապարհ ձգի Սարգսի մօտ։*

Ձեր ՌՈՍՏՈՄ

1.- Արարատեան Սարգիս (1886-1943), Ժընեւ՝ Արեւմտեան բիւրոյի գործավար:

707

Փաստ. 1357-2

9 / II / 1915
Լոնդոն

Սիրելի Միսակ(1),

Մոռացայ քեզ ասել, որ քո տուած solution-*ը*(2) *չափազանց թոյլ է. նրանով չի կարելի օգտուել։ Պէտք է ինքդ պատրաստես, անհամեմատ աւելի ուժեղը։ Ամէն անգամին պէտք է փորձել։*

Քո Ռ[*ՈՍՏՈՄ*]

1.- Միսակ Ղազարեան, «Դրօշակ»ի խմբագրութեան գործավար:
2.- Ֆրանսերէն՝ լուծոյթ:

708

Փաստ. 1357-5

Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած նամակ։

17 / II / 1915, *Լոնդոն*

Սիրելիք,

Ամերիկայի Կ. Կոմիտէի նամակը չկայ ու չկայ։ Իսկ այդ նամակից մի օր յետոյ գրուած մի ուրիշ նամակ, մասնաւոր, ստացուեց երէկ։ Բացատրում եմ նրանով, որ Կ. Կոմիտէի նամակը ապահովագրուած է. բայց ինչո՞ւ գէթ այսօր չկայ։ Ուզեմ, չուզեմ, պէտք է սպասեմ դեռ եւս։ Թէեւ շատ լաւ գիտեմ, որ ծով անցնելը աւելի դժւար պիտի լինի գերմանացիների սպառնալիքի պատճառով։ Ա՛խ, եթէ իմանայի, թէ այսքան երկար մնալու եմ։ Որքա՛ն գործ կարելի էր կատարել։

Սոց[իալիստների] կոնգրէսի մասին թերթերից իմանալուց յետոյ տեսնուեցի Մակ-Դոնալդի հետ, բայց սա դժբախտաբար թերի գաղափար տուեց նպատակի մասին։ Նրա ասածին նայելով՝ ժողովում պիտի խօսէր, թէ ինչ եղանակով համաձայնութեան գան գերման սոցիալիստների հետ. հակառակ է միւսներին, որոնք սուր կերպարանք են տալիս փոխադարձ անհամաձայնութիւններին։ Longuet*-ի հետ կարողացայ տեսնուել միայն ժողովից յետոյ։ Ասացի, որ իր հայ բարեկամները չպիտի նեղեն, որ մեր խնդիրը չի դրուել լեհականի կողքին։ Արդարացաւ նրանով, որ չափազանց կարճ ժամանակ ունէին եւ չափազանց կարեւոր անհամաձայնութիւններ. մեր վիճակի մասին մոռացած է եղել։ Խոստացաւ, որ այսուհետեւ ոչ մի առիթ չպիտի բաց թողնի։ Տեսնուեցայ եւ նախարար* Sembat*-ի հետ։ Նա կատարեալ հաւանութիւն տուեց մեր բռնած ընթացքին Թիւրքիայում եւ դուրսը։ Հայկական նահանգների ինքնավարութիւնը անհրաժեշտ է համարում՝ լինի դա Թիւրքիոյ, լինի Ռուսիոյ կազմի մէջ։ Նրա կարծիքով՝ իրերի բերմամբ վերջինը կը լինի։ Կիլիկիայի միացման պահանջը չափազանց է գտնում։ Լաւ տպաւորութիւն թողեց վրաս նրա վերջին խօսքերը. «ես, ասաց նա, միշտ սրտիս մօտ եմ ընդունել ձեր հարցը. եթէ շատ չեմ արտայայտուել, դրա պատճառը այն է եղել, որ դուք ունէիք իբրեւ ձեր դատի պաշտպան, Պրեսանսէի*(1) նման մի ոյժ. բայց հիմա, քանի որ նա չկայ, ինձ վրայ եմ առնում նրա գործը. վստահ եղէք ինձ վրայ, ինչպէս վստահ էիք նրա վրայ»։ Ահարոնեանը թող անպատճառ նրան տեսնի Պարիզով անցնելիս եւ լուրեր տայ մեր կամաւորների գործունէութիւնից։ Տրամադրութիւնները կարող են այս կամ այն կողմը փոխուել. պէտք է միշտ տեսնուել հետները,* au courant*(2) մնալ։*

Մոռացայ ասել, որ Միջազգ. Բիւրոյի քարտուղար Hausmann*-ին էլ տեսայ. բաւական դառնացած էր երեւում, թերեւս Լաբուր պարտիի(3) ընթացքի համար։ Գոհ չէր եւ Ֆրանսիացի ընկերներից, որոնք լրջէն յարմար չեն համարել ընդհ. սոց. կոնգրէսն գումարելուն. եւ այս պատճառով նա վիժել է։ Ինքը՝ միայն իբրեւ «հիւր» է իրեն նկատել այս ժողովին մէջ։*

Մանրամասնութիւնների համար դիմեցէք Ձերնովին կամ Լունկեւիչին, որ այժմ Պարիզ կը լինի։

Ձեր ՌՈՍՏՈՄ

1.- Պրեսանսէ, Սամբատ, Լոնգէ՝ ֆրանսացի ընկերվարականներ, բարեկամ Դաշնակցութեան։
2.- Ֆրանսերէն՝ իրազեկ, տեղեակ մնալ։
3.- Անգլիական Աշխատաւորական կուսակցութեան։

709

Փաստ. 1357-6

Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած նամակ:

19 / II / 1915, *Լոնդոն*

Սիրելիք,

Այսօր պէտք է ճանապարհ ընկնէի, բայց մի տեղ, մնաս բարովի ժամանակ, ինձ յոյս տուին, որ կարող եմ տեսնել մի կարեւոր անձնաւորութիւն եւս: Մնացի այն յուսով, որ այդ տեսակցութիւնը կը պարզի կամ[աւոր]ների խնդիրը:

Բացի այդ՝ մի տեսնեմ, այդ բլոկադը որքան իրական է: Մի գուցէ ես էլ բերան ընկնեմ: Յիմար բան դուրս կը գայ:

Ղազարեանի(1) *նամակից բոլորովին ոչինչ չհասկացայ: Բա այդպէս թղթի վրայ կարելի՞ է այդպէս նամակ գրել: Մի թող մէկ էլ փորձի ինք, տեսնես:*

Պիտի խնդրէի, որ նամակը ղրկուի Թիֆլիզ:Հաւանական է, մնամ մինչեւ երեքշաբթի:

Ձերմ ողջոյններով՝ Ռ.

1.- Միսակ Ղազարեան, «Դրօշակ»ի խմբագրութեան գործավար:

710

Փաստ. 1403-27

Ամերիկայի Կեդր. կոմիտէի ուղղուած գրութիւն: Դժուար ընթեռնելի նամակ, տեղ-տեղ մելանը գունաթափած ըլլալուն հետեւանքով:

Արծարծուած խնդիրը կը վերաբերի հայ կամաւորական լեգէոնի կազմութեան, Լոնտոնի մէջ այդ օրերուն առաջարկուած Ռոստոմի կողմէ անգլիական իշխանութիւններուն:

19 - II - 1915, *Լոնդոն*

Սիրելի Յովհաննէս,

Լոնդոն ստացայ նամակդ, ինչպէս նաեւ Միքայէլի միջոցով ուղարկած դրամը:

Բայց, ինչպէս տեսնում եմ, իմ նախընթաց նամակները ուշադրութեամբ չես կարդացել: Կրկնում [եմ] մի անգամ եւս, նորից կարդա մեր մէջ պայմանաւորուած ուշադրութեամբ: Այնտեղ հարցեր կային, որոնց պատասխանին սպասում եմ Լոնդոն գալուցս ի վեր:

Մտադիր էի այսօր մեկնելու-, բայց մնաս բարովի ժամանակ ինձ յոյս տուին, որ եթէ մնամ Կառափնատի(1) *խնդիրը հնարաւոր կը լինի պարզել աւելի: Որոշեցի մնալ մի երկու օր եւս: Եթէ կարեւոր արդիւնք ստացուի, կը հեռագրեմ:*

Ի՞նչ եղան Պետրոսը եւ Յարութիւնը:

Իմ ջերմ բարեւները բոլորիդ:

Ձեր Ռ[*ՈՍՏՈՄ*]

1.- Կառափնատը՝ մէկն էր Կիլիկիոյ համար գործածուած ծածկանուններէն:Հարցը կը վերաբերի Դաշնակից զօրքերու Կիլիկիա ցամաքահանում կատարելու մէկ ծրագրին:

711

Փաստ. 24-12

Հեռագիր ուղղուած Մատթէոս Յակոբեանին, Սոֆիա, 12 Մայիս 1915-ին:

Կը գտնուի Արեւելեան բիւրոյի (Թիֆլիս) թղթածրարին մէջ: Թիֆլիսի մէջ, ուր հասած է Ռոստոմ, յայտնաբար տեղեակ չէին, որ Գարեգին Խաժակ, Սարգիս Բարսեղեան, հարիւրաւոր ուրիշ մտաւորականներու շարքին, արդէն ձերբակալուած էին ու դէպի մահ ճամբայ հանուած:

Telegraphiez si familles Khajak, Սարգիս, **autres camarades peuvent quitter Constantinople.**

ROSTOM

Թարգմանութիւն.—

Հեռագրեցէք եթէ Խաժակի, Սարգիսի ընտանիքները, ուրիշ ընկերներ կրնան հեռանալ Կոստանդնուպոլսէն։

ՌՈՍՏՈՄ

712

Ստորեւ տրուած Ռոստոմի նամակին պատճէնը կը գտնուի Պալքանի Կեդր. կոմիտէի կողմէ 1915 թ. Յուլիս 23-ին Ամերիկայի Կեդր. կոմիտէին ուղղուած գրութեան մէջ (Փաստ. 1158-85, No 598): Ծանօթ է որ Վանի հերոսամարտի յաղթական աւարտէն ետք Ռոստոմ նոյն թուականի Յունիսին արդէն Վան կը գտնուէր, ուրկէ Յուլիսին անցաւ Թիֆլիս: Յայտնաբար «արտասահմանի մարմիններուն» ուղղուած Ռոստոմի այս նամակը գրուած պիտի ըլլայ վերոյիշեալ Յունիս-Յուլիս ամիսներուն:

Ընկերներ!

Վանի դրաւումով մենք արդէն համարեա մեր բոլոր միջոցներով կլանուած ենք դէպի վերանորոգչական գործը, որ այսօր անհրաժեշտութիւն կը ներկայացնէ մեր գոյութեան տեսակէտէն. ուստի անհրաժեշտ է որ արտասահմանի մեր ընկերները միաժամանակ միջոցներ ձեռք առնեն իրենց վայրերում մասամբ դիւրացնելու մեր աշխատանքները։

Պէտք է ձեռք բերել, բացի հրացաններից եւ փամփուշտներից, գնդացիրներ եւ թնդանօթներ։ Կառավարութիւնը իր վրայ է վերցնում փոխադրութեան գործը։ Ուզել ենք նաեւ Ամերիկայից օդանաւորդներ, սաւառնակներ։ Եթէ այս բոպէիս մեր ձեռքի տակ մի երկու հատ լինէին, կապ հաստատուած կը լինէր զանազան գաւառների միջեւ ու քրդերը զսպուած կը լինէին։

Մեր նպատակն է կազմել մի կանոնաւոր դիվիզիա, իր հեծելազօրքային թնդանօթներով եւ այլ պարագաներով։ Տեղական միլիցիայի հետ միասին, ռուս բանակի վրայ յենուած՝ կարող ենք ապահովել մեր երկիրը եւ պաշտպանել ռուս բանակի թիկունքը։

Մեր դրուժինաների թիւը չի աւելանում, կառավ[արութեան] տեղական շրջանակների կողմից յարուցուող դժուարութիւնների պատճառով. մեր համակիրների ջանքերը յաճախ ի զուր են անցնում. հակառակորդները սկզբում պնդում էին, թէ չպէտք է յոյս դնել կամաւորների վրայ իբր կանոնաւոր զօրքի, բայց երբ փաստերը սպասուածից աւելին ցոյց տուին (240 *վերստ* 12 *օրում, մօտ* 15 *կռիւներով) տիրեց նախանձ եւ ձգտում խանգարելու առաջիկայի յաջողութիւնները։ Թերթերում թոյլ չէին տալիս նպաստաւոր լուրեր տպել։ Պաշտօնական հաղորդագրութեան մէջ յիշուած է ասորիներու աջակցութեան մասին, բայց ոչ մի խօսք ոչ միայն կամաւորների, այլեւ Վանի ապստամբների դերի մասին։ Օգոլին, որ պաշտպան էր մեր գնդերին, հեռացրին Օկանովսկու շտաբից։ Նոր դրուժիններու կազմութեան կարգադրութիւն էր ստացած Նիկոլայ Նիկոլայեւից։ Կառավարութիւնը դեռ Սեպ[տեմբեր] ամսից առաջարկել է ձեռք բերել սեփական զէնքեր. ոչինչ չի արուած. յանցանքը մերն է։ Գոնէ այժմ պէտք է լրջօրէն մտածել. եապոնական հրացանների պատուէրի ձեռնարկ է եղել. գնացել է ընկ. Ք. ձեռք բերելու։*

713

Փաստ. 24-15

Ժընեւ յղուած նամակ Թիֆլիսէն:

29 / VII / 1915, *Թիֆլիզ*

Սիրելիք, Անտոն եւ Միսակ(1)

Ստացայ Յոնանի(2) *նամակը։*

Խոստացել էր երկու օր յետոյ ուրիշ նամակ էլ գրել, բայց դեռ եւս ոչինչ չկայ։ Արդեօք հիւանդացած չլինի։

Մեր կացութիւնը այժմ շատ [*է*] *ծանր։ Ահագին հոսանք կայ գաղթականների։ Որովհետեւ չափազանց անակնկալ էր, ոչինչ չկայ կազմակերպուած։ Ահագին թւով մեռնողներ կան, մեծ մասամբ մանուկներ։ Բոլոր ընկերութիւնները թափւել են, եռանդով գործում են. կառավարութիւնը խոստացել է խոշոր նպաստ, մօտ մէկ միլիոն ռուբլի։*

Այստեղ մի կերպ կը կարգադրւի. բայց ի՞նչ է հիմա ներսի(3) *վիճակը։ Ամբողջ կատաղութեան թոյնը մեր գլխին է թափւում. գոնէ Մշոյ դաշտը ազատւէր. 1-2 օր աւելի ուշ սկսւէր նահանջը, շատ բան փրկւած կը լինէր։ Ի՞նչ է այժմ Սասուն ապաստանածների դրութիւնը։ Ճիշտ է զէնք ունեն, բայց ինչո՞վ պէտք է կերակրւեն։*

Վաղը մեկնելու եմ փախստականների վայրերը։ Եթէ սիրտ լինի, այնտեղից էլ կը գրեմ։

Բարեւներս Գուստաւին, Միշէլին։ Բարեւում են ձեզ Բաղդասարը եւ Օննիկը։

Ձեր Ռ.

1.- Անտոնը՝ Գոշն է (Պոյաճեան), «Դրօշակ»ի դիւանապետը. Միսակը՝ Ղազարեան, գործավար:
2.- Յոնան Դաւթեան:
3.- Ներսը՝ Արեւմտահայաստանի գաւառներուն մասին է:

714

Փաստ. 24-16

Ժընեւ յղուած նամակ Յոնան Դաւթեանին. Օրտանսը այս վերջինի զուիցերուհի կինն է:

30 / VII / 1915
Թիֆլիզ

Սիրելի Յոնան,

Արդէն իմացած կը լինէք, որ շատ վայրերում տղամարդկանց կոտորելուց յետոյ կանանց եւ երեխաներին քշել են, բայց թէ ուր, յայտնի չէ։ Չէ՞ր արժի դիմել շուէյցարական կառավարութեանը, կամ աւելի լաւ՝ Կարմիր Խաչին, որ յանձն առնեն մի իսկական մարդասիրական գործ, այն է՝ մարդիկ ուղարկել, տեղեկանալ, թէ ինչ վիճակի մէջ են քշւածները։ Գոնէ օտար աչքը գուցէ կարողանայ զսպել գազանութիւնը։

Կանգ ենք առնում շուէյցարացիների վրայ, քանի որ նրանք իսկական չէզոքներ են։ Կարելի էր դիմել ի հարկին եւ Միացեալ Նահանգներին։

Այս մասին կը խօսենք նաեւ Երեւանում, գուցէ եւ Էջմիածնում, բայց դուք էլ այդտեղ մի բան մտածէք։ Լսում ենք, որ Կարինն էլ են դատարկել, դա նշանակում է էլ տեղ չմնաց։

Ուրիշ նամակ կը գրեմ Երեւանից։

Ստացայ ես հեռագիրը բժշկի մասին։

Անձամբ սպասում ենք նրա գալուն։

Սաֆրաստեանի հետ ի՞նչ անենք։

Համբոյրներս ձեզ եւ Օրտանսին։

Քո Ռ.

715

Փաստ. 24-23

Ռոստոմի այս նամակը, հաւանաբար գաղտնի թանաքով գրուած, Կովկասէն է եւ ուղղուած է Ամերիկայի Կեդր. կոմիտէին: Լաւ բացուած չէ եւ արտագրութիւնը դժուար ընթեռնելի: Այսուհանդերձ կարելի եղաւ ամբողջութեամբ վերականգնել գրութիւնը: Մակագրուած է «Ընկեր Ռոստոմի նամակ»: Հաւանաբար 1915 թ. Հոկտեմբեր ամսուան վերջերը գրուած նամակ է, նկատի ունենալով Ամերիկայէն Կովկաս ուղարկուած զէնքերուն գրաւուելուն մասին եղած յիշատակութիւնը:

Սիրելի ընկերներ,

Օգտուում եմ առիթից մի երկու խօսք գրել իմ կողմից: Կամաւորական շարժման դէմ հանած խոչընդոտների մասին կը խօսի բերանացի Սարգիսը(1)*: Մենք ամէն ջանք պիտի թափենք ոչ միայն սեղմելու, ընդ հակառակը աւելի ընդարձակելու մեր մասնակցութեան չափը:*

Յոյս ունինք հայկական հրացանաձիգ գումարտակների կից պահել մեր կամաւորական խմբերը, գէթ մի քանիսը:

Բացի այդ ծրագրել ենք մի շարք ձեռնարկներ Երկրի ներսի համար, որը կը լինի իբր արտայայտութիւն տեղական ազգաբնակութեան ապստամբական շարժման: Այդ անհրաժեշտ է, տաճկահայ ժողովրդի ձայնը առանձնաբար չեչտելու համար: Մեր ձգտումն է ըստ կարելոյն շատ զինուած խմբեր ունենալ այլ եւ այլ ձեւերով: Այդ ուժերը պիտի ծառայեն ընդհանուր դատի համար եւ գուցէ Կովկասի, աւելի ճիշտ Արարատեան դաշտի հայ ազգաբնակութեան եւ նրա մէջ ապաստանած տաճկահայերի ինքնապաշտպանութեան համար: Ձեր միջոցները պահեցէք առ այժմ ձեզ մօտ. մի ծախսէք, պէտք պիտի ունենանք երկրի ձեռնարկների համար: Փոխադրեցէք առ այժմ «Կարմիր Խաչի» միջոցները, որ բացառապէս պիտի յատկացուի տաճկահայ ընկերների (նահատակ) ընտանիքներին, մասամբ էլ կենդանի մնացածներին, որոնք թշւառութեան մէջ են:

Այդ նպատակով հանգանակութիւն պիտի կատարուի նաեւ Կովկասի ընկերների շրջաններում:

Ընկերներ կ'ուղարկենք ձեզ. միայն թէ ինքներդ գիտէք, թէ որքան դժւար է այստեղի գործերը թողնել: Վրացեանը չի կարող գալ: Նա շատ գործ ունի այստեղ:

Ինչպէս գիտէք, ձեր ուղարկած զէնքերը գրաւուած են կառավարութեան կողմից: Դեռ եւս քիչ յոյս ունենք ստանալու. որեւէ ձեւով մեզ լուր տուէք, թէ ընդամէնը ինչ է ուղարկուած: Պատճառներ շատ կան. բայց քիչ նշանակութիւն չի ունեցել մեր բարեմիտ հայրենակիցների փսփսուքները կառավարութեան ականջին, թէ ատրճանակները բերուած են այն նպատակով, որ ապագայում ապստամբութիւն յարուցանեն կառավարութեան դէմ:

Ձեր գրութիւնները աշխատէք կուսակցական բնոյթ չկրեն. գրէք հասարակ թղթի վրայ:

Մի քանի անգամ գրել ենք օդանաւերի մասին. թէ Աստուած սիրէք մարգել տուէք մի քանի տասնեակ երիտասարդներ: Դրանք մեծ ծառայութիւն կարող են

մատուցանել մեզ։ Աւելի լաւ էր, որ Ամերիկա մեզ մասնագէտներ աւելի հայթայ-թէր. կամաւորութեան համար եկած ընկերները չեն կարողանում տանել մեր պայ-մանները։

Նրանք շատ լաւ կռուողներ կը լինէին աւելի կուլտուրական միջավայրում։ Պէտք էր նախօրօք ծանօթացնել ընկերներին մեր պայմանների հետ եւ ուղարկել խիստ ընտրութեամբ։ Դուք ինքներդ զգացած կը լինէք թէ որքան բացասական ազդեցու-թիւն են թողնում այստեղից վերադարձողները, որոնք ընդհանրապէս պիտի տրա-մադրուեն իրենց ընթացքը արդարացնել ուրիշ միջոցներով։ Կրկին անգամ չեշտում եմ օդանաւորդների մեծ կարեւորութիւնը։

Չէ՞ք կարող փորձել կամաւորական մի փոքրիկ խումբ, թէկուզ 100 *հոգուց յա-ջողցնել Բաղդադի ճակատի համար, իբրեւ տեղական լեզուների ծանօթ մարդիկ։ Մերոնք գուցէ ընդունուեն անգլիական բանակի մէջ։*

Փորձեցէք։

1.- Սարգիսը՝ Արարատեանն է. այդ օրերուն կը ծրագրուէր իբրեւ գործիչ զինք Ամերիկա ուղարկել:

716

Փաստ. 64-11

Կովկասէն ուղարկուած նամակ, Ժընեւ՝ Յոնան Դաւթեանին:

Սիրելի Յոնան,

Միսակի(1) *նամակներից իմացայ, որ առողջութիւնդ դէպի լաւն է գնում։ Բայց դեռ մի շտապիր այստեղ գալու։ Կազդուրւիր բոլորովին։*

Մեզ շատ հետաքրքիր է, ինչ է արւում Միջագետք տեղահան արւածների մասին։ Որքա՞ն են մօտաւորապէս, ով, ինչ չափով նպաստ է հասցնում։ Չի՞ կարելի աւելի կանոնաւորել, ի՞նչ ձեւով. մենք՝ կովկասցիներս ի՞նչ կարող ենք անել։ Տեսնւո՞ւմ ես Favre-*ի*(2) *եւ միւս շուէյցարացի բարեգործների հետ։ Ի՞նչ է կատարւում Դանիա-յում, ուր մի ժամանակ այնքան բարեկամներ ունէինք, տեսնւիր, հարցրու եւ ման-րամասը գրիր։ Պօղոսի մասին համամիտ եմ քեզ։ Ջերմ բարեւներս բոլորին։*

Քո Ռ.

8 - 2 - 1916

1.- Միսակ Ղազարեան, գործավար «Դրօշակ»ի խմբագրութեան:
2.- Լէոփոլտ Ֆաւռ, նախագահ Միջազգային Կարմիր խաչի Ժընեւի կեդրոնին:

717

Փաստ. 105-2

4 / III / 1916
Կարին

Թագուշ ջան(1),

Մօտ երկու շաբաթ է Կարին եմ։ Մի քանի հայ է մնացել։ Բայց շրջականերից հաւաքւում են քիչ-քիչ. մեծ մասամբ կին-երեխայ։ Տխուր է ընդհանրապէս։ Աննիկ Զիլինկիրեանը, որ քեզ համար ձեռագործ էր ուղարկել նէր, բռնի տարւել է գերման հիւպատոսարանի քարտուղար Karl Werth*-ի ձեռքով։*

Ես լաւ եմ, երեւի քեզանից եւ մայրիկից նամակ կը լինի Թիֆլիզ։

Համբոյրներս ձեզ բոլորիդ
Քո Հայրիկ

1.- Թագուշ, Թագուհի – Ռոստոմի դուստրն է:

718

Փաստ. 64-23

Կովկասէն ուղարկուած գրութիւն է Ժընեւ՝ Յոնան Դաւթեանին: Սաշան եւ Վիգէնը նոյն անձն են – բժ. Յ. Զաւրեան: Լիզը՝ Ռոստոմի կինն է, Թագուշը՝ իրենց աղջիկը:

19 / V / 1916

Սիրելի Յոնան,

Սաշան ասում է, որ քո պարտքը վաղուց է վճարած եղել։ Ենթադրելով, որ քո ձեռքը կարող է հասած չլինել, ուղարկում է նորից, եւ 300 *ր.։ Եթէ առաջւայ ուղարկածը ստացել ես, յայտնիր։ Իմ կողմից աւելացրի* 100 *ր.՝ Լիզին յանձնելու համար։ Ասա, որ* 25 *ր. Յովհաննէսն է ուղարկում Թագուշի համար,* 75 *ր. Մայիս* 4*-ի առթիւ է։*

Քանի այստեղ եմ, կ՚աշխատեմ մի երկար նամակ գրել։ Սպասում եմ Վիգէնին։

Համբոյրներով՝
Քո Ռ.

719

Փաստ. 1405-20

Գաղտնի թանաքով գրութիւն, յայտնաբար ուղղուած Ամերիկայի Կ. կոմիտէին. կը գտնուի այս վերջինի թղթածրարին մէջ:

2 - 3 - 1917, *Թիֆլիզ*

Սիրելի ընկերներ,

Մի հեռագրով խնդրել էի աւելացնել Պոլսից եկած ընտանիքների նպաստը այն գումարին, որը պահանջել էր պ. Խատիսեանը։ Դրամը պէտք է փոխադրել Լոնդոնի վրայով եղը. Կիւլպէնկեանների միջոցով։

Ջերմ բարեւներով՝
ՌՈՍՏՈՄ

720

Փաստ. 1427*գ*-10

Ռոստոմի հեռագիրը Ամերիկայի Կեդր. կոմիտեին

Թիֆլիս, Ապրիլ 28, 1917



CABLEGRAM

"VIA COMMERCIAL"

TELEPHONE MAIN 180

RECEIVED AT 112 STATE BOSTON 23 M. SUBJECT TO TERMS AND CONDITIONS AT BACK HEREOF, WHICH ARE RATIFIED AND AGREED TO

APR 28 1917

CSW 18 TIFLIS 55

SAIRENIK PRESS BOSTON.

BUREAU NATIONAL RECU DEUX CHEQUES DISMILLE DOLLARS STOP CONGRES PARTI RECIONAL CAUCASE CONVOQUE 6 AVRIL CONTINUE TRAVAUX AVED SUCCESS STOP DANS TROIS SEMANINES AURONS ASSEMBLEE CAMMARADES RECEIONS CONQUISES AUTRE ASSAMBLE GENERALE SANS DISTINCTION PARTIS POUR SORT REFUGEES STOP TROUVONS UTILE PARTICIPATION VOS DELEGUES PRIERA DESIGNER POUVONS NOUS INVITER AMATOUNI VOTRE PART

ZORIAN

No inquiry respecting this message can be attended to without the production of this paper. Repetitions of doubtful words should be obtained through the Company's offices, and not by applying directly to the sender.

ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՆ ՍՏԱՅԱՒ ՏԱՍԸ ՀԱԶԱՐԻ ԵՐԿՈՒ ՉԷՔԵՐԸ – ԱՊՐԻԼ 6-ԻՆ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ – ԵՐԵՔ ՇԱԲԱԹ ԵՏՔ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆՔ ՆՈՒԱՃՈՒԱԾ ԵՐԿՐԱՄԱՍԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԱՆԽՏԻՐ ԲՈԼՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒ-ԹԵԱՄԲ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ – ՕԳՏԱԿԱՐ ԿԸ ՀԱՄԱՐԵՆՔ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՁԵՐ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐՈՒՆ – ԽՆԴՐԵՆՔ ՆՇԱՆԱԿԵԼ – ԿԱՐՈ՞Ղ ԵՆՔ ՁԵՐ ԿՈՂՄԷՆ ՀՐԱՒԻՐԵԼ ԱՄԱՏՈՒՆԻՆ։

ԶՕՐԵԱՆ

Հետեւեալ երեք նամակները՝ ուղղուած Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէին, Ժընեւ՝ Արեւմտեան բիւրոյին եւ Միքայէլ Վարանդեանին, գրուած են Ստոկհոլմէն, ուր կը գտնուէր Ռոստոմ մասնակցելու համար ընկերվար Միջազգայնականի խորհրդաժողովին, իբրեւ ներկայացուցիչ Հ. Յ. Դաշնակցութեան: Ստոկհոլմի խորհրդաժողովի ընթացքին Ռոստոմի կատարած աշխատանքները եւ հայկական հարցի շուրջ ներկայացուցած զեկուցագրերը կուտանք առանձինն, այս հատորի Յաւելուածներու բաժնով:

721

Փաստ. 1405-85

2 - VIII - 1917

Chers camarades,

Déjà arrivé à Stockholm je vous ai envoyé un télégramme invitant un des camarades de venir ici. Je n'ai pas encore de réponse. Garo est-il déjà arrivé chez vous? Il est parti via Vladivostok. Tous les renseignements nécessaires vous aurez de lui.

La somme que j'avais versée à la Banque à Petrograd n'est pas encore reçue ici, malgré mes télégrammes et lettres; ayez la bonté de me transférer télégraphiquement 500 dollars que je laisserai à votre disposition[?] après avoir reçu mon argent.

J'attends cam[arade] Varandian pour travailler et profiter de la présence[?] des représentants de différents partis. Si vous avez les publications en anglais concernant les massacres, envoyez à l'adresse du Bureau de comité Hollando-skandinavien, Upplands, Stockholm.

Tout à vous ZORIAN
Hôtel Continental, au poste restante

Թարգմանութիւնը.—

2 - VIII - 1917

Սիրելի ընկերներ,

Ստոկհոլմ հասնելէս անմիջապէս ետք հեռագիր մը ուղարկեցի հրաւիրելով ընկերներէն մէկը որ հոս գայ։ Տակաւին պատասխան չունիմ։ Գարոն(1) *հասա՞ւ արդէն ձեր մօտ։ Մեկնեցաւ Վլադիվոստոկի ճամբով։ Անհրաժեշտ բոլոր տեղեկութիւնները իրմէ կը ստանաք։*

Պետրոգրադի դրամատուն մուծած գումարը դեռ հոս ստացած չեմ, հակառակ հեռագիրներուս եւ նամակներուս. բարի եղէք հեռագրով իմ անունիս փոխադրել 500 *տոլար, զոր ձեր տրամադրութեան*[?] *տակ պիտի ձգեմ իմ դրամս ստանալէ ետք։*

Կը սպասեմ ընկեր Վարանդեանին(2)*, աշխատելու եւ օգտուելու տարբեր կուսակցութեանց պատգամաւորներու ներկայութենէն։ Եթէ ջարդերուն վերաբերող*

անգլերէն լեզուով հրատարակութիւններ ունիք, ուղարկեցէք Ուպլանտս, Հոլանտա-սկանտինաւեան բիւրոյի հասցէին։

Ձեր՝ ՁՕՐԵԱՆ,
Կոնտինանդալ հիւրանոց, նամակատուն ի պահ

1.- Արմէն Գարօ (Գարեգին Փաստրմաճեան), որ իբր յատուկ պատուիրակ Ամենայն հայոց կաթողիկոսի, Ծայրագոյն Արեւելքի՝ Ճափոնական ծովու նաւահանգիստ՝ Վլատիվոստոկի ճամբով կը մեկնէր Ամերիկա Հայ դատի աշխատանքները վարելու համար:

2.- Միք. Վարանդեան, պաշտօնական հրաւէր ստացած ըլլալով հանդերձ համագումարի նախագահութենէն, պիտի չկարենար մեկնիլ Ստոկհոլմ. այդ օրերուն ան կը մնար Փարիզ եւ կ՝աջակցէր Ազգ. պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարի, այլապէս նաեւ ռուսական հիւպատոսարանը մերժեց վիզա տալ: Այսուհանդերձ, հեռագրով մը պահանջեց, որ ընկերվար Միջազգայնականը բանաձեւ ընդունի հայոց ինքնորոշման իրաւունքի մասին եւ Հայաստանը ազատագրուի այլեւս քրքական լուծէն:

722

Փաստ. 1405-86

3 - VIII - 1917, Stockholm

Chers camarades,

J'apprends par une lettre de Genève que Honan a grand besoin d'argent. Il est à peine rétabli de sa longue maladie. Il faut le soutenir jusqu'à ce qu'il puisse, au printemps prochain, quitter Genève pour aller au Caucase.

A la nouvelle de sa maladie, nous avons voulu transférer pour lui, de Tiflis 2000 r., mais la banque n'a pas accepté.

Nous avons alors télégraphié à Mikael, pour qu'il tâche de lui procurer l'argent disponible à cet effet, il y aura toujours des sommes à transférer au Caucase, soit au bureau national, soit aux journaux, soit aux particuliers.

Je vous prie donc d'envoyer à Genève pour Honan, environ 1500 fr. et de télégraphier à Tiflis à Kotcharian pour qu'il verse l'équivalent à qui de droit.

Je vous ai envoyé une lettre en arménien, et un exempl[aire] de la publication du comité organisateur: «Un avant-projet au programme de paix», où vous trouverez la demande de la réunion des délégations de neutres pour l'Arménie.

Salutations frat[ernelles]
ROSTOM

Թարգմանութիւնը.—

3-VIII-1917, ***Ստոկհոլմ***

Սիրելի ընկերներ,

Ժընեւէն եկած նամակէ մը կ՝իմանամ, որ Յոնանը դրամի մեծ կարիք ունի։ Դեռ նոր է կազդուրուած իր երկարատեւ հիւանդութենէն։ Հարկ է օգնել իրեն մինչեւ

որ յառաջիկայ գարնան կարենայ ժընեւէն հեռանալով Կովկաս երթալ։

Իր հիւանդութեան լուրին վրայ, ուզեցինք Թիֆլիսէն իրեն անուան փոխադրել 2000 ռուբլի, բայց դրամատունը չընդունեց։ Հեռագրեցինք ուստի Միքայէլին(1)*, որպէսզի ջանայ հայթայթել անհրաժեշտ գումարը իր ապրուստին եւ դարմանումին համար։*

Եթէ այս նպատակին համար տրամադրելի դրամ չունիք, պէտք է գոյութիւն ունենան Կովկաս փոխադրելիք գումարներ, ըլլա՛յ Ազգ. բիւրոյի, ըլլա՛յ լրագիրներու, ըլլա՛յ մասնաւորներու մօտ։

Կը խնդրեմ, ուրեմն Յոնանի համար ժընեւ ուղարկել չուրջ 1500 *ֆրանկ, եւ հեռագրել Թիֆլիս Քոչարեանին, որպէսզի համարժէք գումարը յանձնէ առ որ անկ է։*

Ձեզի ուղարկեցի հայերէն նամակ մը, եւ օրինակ մը կազմակերպիչ կոմիտէի (2) *«Նախագիծ Խաղաղութեան Յայտագրի», ուր պիտի գտնէք Հայաստանի համար չէզոք [երկիրներու] ժողովի գումարման պահանջ մը*(3)*։*

Ընկերական բարեւներով
ՌՈՍՏՈՄ

1.- Վարանդեանին:
2.- Խօսքը կը վերաբերի Ստոկհոլմի ընկերվար Միջազգայնականի խորհրդաժողովի կազմակերպիչ Հոլանտո-սկանտինաւեան յանձնաժողովին:
3.- Տես փաստ. 1679-21, էջ 556-561:

723

Փաստ. 1405-103

Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդրոնական կոմիտէին

14 / X / 1917, Stockholm

Chers camarades,

Je viens de recevoir 1473 R. que vous m'aviez transférés par la Banque «Skandinaviski».

C'était juste à temps. Etant retenu ici, j'ai été obligé de télégraphier pour l'argent à Petrograde. Dans les circonstances actuelles j'aurais la réponse et l'argent au plus tôt dans un mois.

J'ai immédiatement transféré 1000 fr. à Aleppo, aux familles déportées de nos camarades. Vous savez, peut être aussi, que les familles de Lousparonian, d'Atrouni, de Pastermadjian de même que Marzpet, Tcharek et Khatchatrian et nombre d'autres se trouvent dans ces régions. La plupart sont privés des moyens d'existence. Il faut absolument s'occuper de leur sort. Nous aurons la possibilité de secourir par leur intermédiaire, aussi les familles, qui sont déportées et installées plus loin. D'après ce que j'ai appris à Copenhague, ce n'est pas difficile. Il faut pour la première fois, mettre à la disposition de nos camarades à Genève une somme plus ou moins importante, pour

qu'ils puissent la faire parvenir au fur et à mesure à sa destination. C'est à nous qu'incombe ce devoir jusqu'à ce que la situation en Russie s'améliore un peu. Je m'adresse spécialement à nos sœurs de la Croix Rouge des Etats-Unis.

Avez-vous reçu ma longue lettre en arménien il y'a jusque un mois?

Pourquoi Hanemian n'est-il pas venu? J'avais tant de choses à lui dire!

Le memorandum désigné pour la Conférence est imprimé à la machine. Dans quelques jours je vous enverrai un exemplaire. Comme vous verrez, il n'est pas complet. La partie concernant l'organisation des massacres dans les différentes régions et les actes de défense des Arméniens est abandonnée. Nous avions surtout en vue de démontrer le degré de responsabilité du gouvernement turc dans notre désastre national.

Il nous manque des renseignements des régions occidentales. Ne pourriez-vous pas exposer tout ce que vous savez et l'envoyer à Genève ou à Petrograde?

Le Bureau Hollando-scand[inavien] va lancer un appel à la Paix. Il y a des propositions concrètes pour les principales questions. Pour notre cause est proposé «Le rétablissement territorial de l'Arménie Turque avec garantie de libre développement».

Jusqu'à présent pas une lettre de vous! Pourtant j'attends de vos nouvelles. La présence d'un de vous est indispensable provisoirement au Caucase.

Si les écoles d'aviation acceptent les Arméniens, ne pourriez-vous pas y mettre quelques dizaines – je voudrais même dire – quelques centaines de jeunes gens?

Salutations fraternelles
STEPHAN ZORIAN

Թարգմանութիւնը.—

14 *Սեպտեմբեր* 1917, *Ստոկհոլմ*

Սիրելի ընկերներ,

Նոր ստացայ Սկանտինաւսկայա դրամատան միջոցաւ ձեր փոխադրած 1473 *ռուբլին։*

Ճիշդ ատենին էր։ Հարկադրուած ըլլալով հոս մնալ, ստիպուեցայ դրամին համար հեռագրել Պետրոգրադ։ Ներկայ պայմաններուն մէջ, պատասխանը եւ դրամը ամենաշուտ կրնամ ունենալ մէկ ամիսէն։

Անմիջապէս 1000 *ֆրանկ փոխանցեցի Հալէպ, տարագրեալ մեր ընկերներու ընտանիքներուն։ Դուք ալ գիտէք, թերեւս, որ Լուսպարոնեանի, Ատրունիի, Պաստըրմաճեանի ընտանիքները, ինչպէս նաեւ Մարզպետը, Զարըգը, Խաչատրեանը*(1) *եւ շատ ուրիշներ կը գտնուին այդ շրջաններուն մէջ։ Մեծ մասը զուրկ է ապրուստի միջոցներէ։ Անպայման պէտք է զբաղիլ իրենց ճակատագրով։ Մենք հնարաւորութիւն ունինք իրենց միջոցաւ օգնելու նաեւ ընտանիքներուն, որոնք տարագրուած եւ հաստատուած են աւելի հեռու։ Կոպենհագնի մէջ իմացածէս դատելով՝ դժուար չէ այդ։ Նախ եւ առաջ պէտք է Ժընեւի մեր ընկերներու տրամադրութեան տակ դնել կարեւոր գումար մը, որպէսզի կարենան մաս առ մաս տեղ հասցնել։ Այդ պարտականութիւնը մեզի կ՚իյնայ, մինչեւ որ Ռուսիոյ մէջ կացութիւնը քիչ մը բարելաւուի։ Մասնաւորաբար կը դիմեմ Միացեալ Նահանգներու Կարմիր խաչի մեր քոյրերուն։*

Ստացա՞ք ամիս մը առաջ հայերէնով գրած երկար նամակս։

Ինչո՞ւ համար Հանըմեանը(2) *չեկաւ։ Այնքա՛ն բաներ ունէի իրեն ըսելիք։*

Համագումարին սահմանուած յուշագիրը տպուած է գրամեքենայով։ Քանի մը օրէն օրինակ մը պիտի ղրկեմ ձեզի։ Ինչպէս պիտի տեսնէք, ամբողջական չէ։ Տարբեր շրջաններու մէջ [կատարուած] ջարդերու եւ հայոց դիմադրութեան կազմակերպումը՝ մէկ կողմ ձգուած է։ Նկատի ունէինք ցոյց տալ ազգային մեր աղէտին մէջ մա՛նաւանդ թուրք կառավարութեան պատասխանատուութեան աստիճանը(3)։

Մեզի կը պակսին տեղեկութիւններ արեւմտեան շրջաններէն։ Չէ՞ք կրնար խմբագրել այն ամէնը որ գիտէք եւ ղրկել Ժընեւ կամ Պետրոգրադ։

Հոլանտա-սկանդինաւեան բիւրոն(4) *Խաղաղութեան կոչ մը պիտի ուղղէ։ Գլխաւոր հարցերուն մասին չօշափելի առաջարկներ կան։ Մեր հարցին համար առաջարկուած է «Թրքահայաստանի հողային վերահաստատումը՝ ազատ զարգացման երաշխիքով»։*

Մինչեւ հիմա ձեզմէ ոչ մէկ նամակ... Մինչդեռ ձեր լուրերուն կը սպասեմ։ Ձեզմէ մէկուն ներկայութիւնը անհրաժեշտ է Կովկաս։

Եթէ օդանաւորդային վարժարաններ հայեր կ՚ընդունին, չէ՞ք կրնար հոն զետեղել քանի մը տասնեակ — պիտի ուզէի նոյնիսկ ըսել՝ քանի մը հարիւր երիտասարդներ։

Եղբայրական (ընկերական) բարեւներով՝
ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ

1.- Փրոֆ. Աստուածատուր Խաչատրեան: Յիշուած միւս անձերը, բացի Մարզպետէն, ընդհանրապէս կարնեցի հին ընկերներ են:

2.- Հանըմեան Արտաւազդ – Եգիպտոսի Հ.Յ.Դ. կոմիտէի ներկայացուցիչը, որ այդ օրերուն կը գտնուէր Ամերիկա:

3.- Ստոկհոլմի ընկերվար Միջազգայնականի համագումարին ներկայացուցած յուշագիրն ու յարակից գրութիւնները տեսնել յաջորդող էջերուն:

4.- Հոլանդա-սկանտինաւեան բիւրոն կազմակերպիչ մարմինն էր Ստոկհոլմի համագումարին:

724

Փաստ. 1-1

Ռոստոմի համառօտ այս գրութիւնը հասցէագրուած է Ժընեւ, «Դրօշակ»ի խմբագրութեան «գիւանապետ» Անտոն Գոշին (Պոյաճեան): Հարցը կը վերաբերի Պետերբուրգի գաղտնի ոստիկանութեան արխիւներուն մէջ գտնուող այն փաստաթուղթին, որմով կ՚աւետուէր Հ. Յ. Դաշնակութեան ծնունդը: Ան ծանօթ է Առաջին մանիֆեստ անունով, որ պիտի համարուէր նաեւ իբրեւ «Դրօշակ»ի առաջին համարը (1890 թ.): Օրին տպագրեալ բոլոր օրինակները ցարական իշխանութեանց կողմէ բռնագրաւուած ըլլալով, մանիֆեստը կը մնար անգտանելի, մինչեւ անոր յայտնաբերումը Ռոստոմի կողմէ (1917 թ.): Ինչպէս կը տեսնուի, Պոսքընի Հ.Յ.Դ. արխիւատան մէջ այս փաստաթուղթը կը կրէ 1-1 համարակալումը:



Սիրելի Անտոն,

Զգիտեմ, փոստային այս դժուարութիւններին այս իմ նամակը երբ կը հասնի քո ձեռքը:

Խնդրեմ ներփակ դոկումէնտները, որ ոչ մի տեղ չէին ճարուում, լաւ պահես: Դաշն[ակցութեան] Ա. մանիֆեստը(1) *կպցրու հաւաքածուին: Ուրիշ բաներ էլ կային գաղտնի բաժանմունքի արխիւում, բայց ժամանակ չունեցայ լաւ նայելու:*

Համբոյրներս քեզ ու Միսակին

Քո Ռ.

4 / VIII / 1917
Ստոգհոլմ

1.- Ռոստոմի յայտնաբերած Դաշնակցութեան Ա. Մանիֆեստը (1890 թ.) տեսնել հանդիպակաց էջին:

ROSDOM 2022-Final:ROSDOM 2022-Final.qxd 1/10/2022 6:22 PM Page 653

ՄԱՆԻՖԵՍՏ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1890 թ.

ՀԱՅԵՐ,

Այսօր հայոց հարցը նոր շրջանի մէջ է մտնում։ Դարերից ի վեր սարուկ Թիւրքա–Հայաստանը ազատութիւն է պահանջում։

[illegible] նութիւն էր աղերսում, այսօր համոզվելով, որ օտարի վրայ դրած յոյսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը, ընտանիքը...

Դարերով ճնշվել է հայ ժողովուրդը թուրք բռնապետների լծի տակ։ Դարերի ընթացքում ցանել է, բայց պտուղը երբէք չի վայելել. աւազակ տիրողը յափշտակել է։ Դարերի ընթացքում անարգել են նրա սրբութիւնները. բայց հայը կրել է այս բոլորը, կրել է համբերութեամբ. չարունակելով ողողել հայրենիքի հողը իր քրտինքով... Դարերի ընթացքում հայը կարծէք թէ կամեցաւ ապացուցանել մարդկութեանը թէ կարելի է ազատութիւն ձեռք բերել կուլտուրական ճանապարհով։ Քաղաքակիրթ Եւրոպան խոստացաւ վերջ տալ թուրքերի բարբարոսութիւններին Հայաստանում։ Սակայն անցան տարիներ տարիների յետեւից եւ հայերի դրութիւնը իրանց հայրենիքում ոչ թէ միայն չլաւացաւ, այլ աւելի ծանրացաւ եւ այժմ միանգամայն անտանելի, դժոխային է դարձել։ Հայի պէս համբերող ազգն անգամ անկարող է չարունակել իր գոյութիւնը այդպիսի երկրում։

Բայց համբերութիւնն էլ ունի իւր սահմանը։ Դաղթնակէտին հասցրած հալածանքները վերջապէս ըմբոստացրին հային. այսօր նա վճռել է կամ մեռնել կամ ազատուել։ Եւ ահա էրզրումը եւ ապա Կ.Պոլիսը ծներ-կիւղ բողոքում են անիրաւութիւնների դէմ. հայը այլ եւս չի խնդրում, այլ պահանջում է, եւ պահանջում է զէնքը ձեռքին։

Սուլթանը սարսափահար է. թուրք կառավարութիւնը գլուխը կորցրել է։

Այսօր Եւրոպան իր առաջ տեսնում է մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ ազգ, որ սկսել է պաշտպանել իր մարդկային իրաւունքները։

Այդ ժողովուրդը հասկացել է, որ իր ոյժը իր մէջ է. երէկուայ սարուկ, համբերող հայաստանցին այսօր յեղափոխական է դարձել։

Հայոց հարցի վճռի յետաձգելը այլ եւս անկարելի է։ Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պէտք է զբաղեցնի ամեն մի չուրջ հայրենասէրի այդ բոլոր յեղափոխական ոյժերի միութեան եւ դաշնակցութեան հարցն է։

Այդ յեղափոխական գաղափարի դրօշակիրն է «Հայ յեղափոխականների դաշնակցութիւնը», որ առանով դիմում է բոլոր հայերին եւ հրաւիրում է կանգնել մէջ դրօշ [illegible]։

«Հայ յեղափոխականների դաշնակցութիւնը» թէեւ նոր է հանդէս գալիս երբեւ կազմակերպութիւն, բայց նա վաղուց գործող խմբերի միութիւնն է. խմբերի, որոնք նոյն իսկ հայ ժողովուրդի ձգտումների ծնունդն են։ «Դաշնակցութիւնը» ձգտելու է միացնել բոլոր ոյժերը, կապելով իր հետ բոլոր կենդրոնները։ Նպատակ դնելով Թիւրքաց Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը, «Դաշնակցութիւնը» մտել է այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տասնկաց կառավարութեան դէմ, ուխտելով մինչեւ տրեան վերջին կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար։

Միանգամ ամենքս ժողովրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան դրօշակը. նա, ով այսօր երիսը կը դարձնի ժողովրդից եւ չի հետեւիլ նրան, նա այդ ժողովրդի հակառակորդն է, նրա թշնամին է...

Ուրեմն, եղբայրներ, միանգամ յանուն սուրբ գործի ընդհանուր թշնամու դէմ։

Եւ դուք, երիտասարդներ, միշտ եւ ամեն տեղ վրեժ գաղափարների պաշտպաններ, միացէ՛ք ժողովրդի հետ։

Եւ դուք, ալեզարդ ծերունիներ, ոգեւորեցէ՛ք ձեր որդոց եւ օգնեցէք նոցա ձեր բարոյական փորձառութեամբ։

Եւ դուք, հարուստներ, բաց արէք ձեր քսակները, զէնք հայթայթելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց է արել թշնամու դէմ։

Եւ դու, հայ կին, ողի ներշնչիր սուրբ գործի մէջ։

Եւ դու, հայ հոգեւորական, օրհնիր ազատութեան զինուորներին...

Սպասելու ժամանակ չէ...

Համախմբուենք, հայեր, եւ քաջութեամբ առաջ տանենք հայրենիքի ազատութեան սուրբ գործը։

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»

725

Փաստ. 65-21

Ստոկհոլմէն Ռոստոմի բացիկ ուղղուած Փարիզ՝ Միք. Վարանդեանին, որ իջեւանած էր Մասեհեան խանի գտնուած հիւրանոցը:

28 / VIII / 1917

Mon cher Michel

Je viens de recevoir ta carte du 7/VIII, donc après 21 jours.

Mais il faut absolument, que je te voie ici, avant mon départ. S'il n'était pas trop tard, j'aurais pu passer moi-même à Paris.

Aujourd'hui j'ai vu Mr. Guvsevitch, qui m'a promis de faire tout possible pour faciliter bon départ.

Je suis seul ici. Hamo est toujours à Tiflis.

Toutes mes amitiés à Masséhian Khan. J'ai parlé de lui à Mme Torcom, qui sera sous peu à Paris. Jl faut la voir (adresse: Quai du Bourbon, 21. Chez Mme De Commines de Marsille).

Ton ROSTOM

Թարգմանութիւնը.—

28 / VIII / 1917

Սիրելի Միքայէլ,

Նոր ստացայ 7 Օգոստոսի բացիկդ. ուրեմն 21 օր ետք։

Բայց անհրաժեշտաբար պէտք է քեզ տեսնեմ այստեղ, մեկնումէս առաջ։ Եթէ շատ ուշ չըլլար, կրնայի ես ինքս անցնիլ Փարիզ։

Այսօր տեսայ Պ. Կիւվսեւիչը, որ ինծի խոստացաւ իր կարելին ընել դիւրացնելու համար յաջող մեկնումս։

Հոս առանձին եմ։ Համոն(1) *Թիֆլիս է միշտ։*

Բարեկամական բարեւներս Մասեհեան Խանին։ Իր մասին խօսեցայ տիկին Թորգոմին, որ քիչ ատենէն Փարիզ պիտի ըլլայ։ Պէտք է զինք տեսնել (*հասցէ՝* Quai du Bourbon, 21. Chez Mme De Commines de Marsille).

Քո՝ ՌՈՍՏՈՄ

1.- Համօ Օհանջանեան:

726

Փաստ. 1405-93

1 - IX - 1917
Ստոգհոլմ

Սիրելի ընկերներ,

Ձեր հեռագիրը Հանըմեանի գալու մասին իր ժամանակին ստացել եմ։ Բայց այնուհետեւ ոչ մի լուր նրանից։ Ի՞նչ եղաւ. աչքի առաջ ունեցէք որ նրա գալը անհրաժեշտ է անկախ համագումարից։

Անպատասխան մնացին իմ հեռագիրը դրամի մասին, ինչպէս նաեւ կարտերս։

Դրամը ստացայ Պետրոգրադից։

Օգտւում եմ մեր դեսպանի սիրալիր պատրաստակամութիւնից ուղարկելու համար ձեզ կարճ ճանապարհով մեր պահանջների ամփոփումը Հայաստանի վերաբերեալ։ Առ այժմ հրատարակութեան նիւթ չդարձնել, որովհետեւ դա կարող է փոփոխութիւնների ենթարկւել։ Եթէ որեւէ դիտողութիւն ունէք, խնդրեմ յայտնէք։

Համագումարը կարող է յետաձգւել, կամ խորհրդակցական բնոյթ կրել։ Այնուամենայնիւ մեր աշխատանքը պէտք է շարունակել։

Տեղեկութիւններ Կովկասի մասին կը տայ ձեզ Գարոն, որ հաւանական է արդէն տեղ հասած լինի։ Նա ճանապարհ է ընկել ինձանից առաջ, Լապոնիայի վրայով(1)։

Ընկերական ողջոյններով՝ ՌՈՍ[*ՏՈՄ*]

Պատասխան կարող էք գրել դեսպանատան միջոցով։

ՆՈՅՆ

1.- Լապոնիա կամ Լապլանդիա՝ կը գտնուի Ֆինլանտայի հիւսիսը։ Գարոն՝ Արմէն Գարոն է (Փաստրմաճեան)։

727



25 - IX - 1917

Սիրելի Անտոն,

Ներփակ նամակները խնդրեմ հասցնես ըստ պատկանելոյն. մէկը Աւետիքին, միւսը Միքայէլին(1)։

Քո՝ Ռ.

1.- Անտոնը՝ Գոշն է, «Դրօշակ»ի դիւանապետ, Ժընեւ. Աւետիքը՝ Իսահակեանն է, Միքայէլը՝ Վարանդեան։

728

Ստոկհոլմէն բացիկով Ռոստոմ կը պատասխանէ Փարիզ գտնուող Միք. Վարանդեանին

25 / X / 1917

Cher Michel

Reçu ta carte du 6 Oct. Tu sais que j'attends aussi l'autorisation pour pouvoir rester en Russie. L'ambassadeur a deux fois télégraphié – Il m'assure qu'on aura dans quelques jours la réponse favorable.

A mon retour je parlerai à Etchmiadsine. Mais est-ce nécessaire, ta nomination officielle?

Aujourd'hui j'ai remis à la Légation de France quelques exemplaires de notre memorandum. On en remettra un au président de la Délégation, l'autre à M. Despieux [?].

As-tu lu "Documents sur les atrocités arméno-russes (!) Verlag v.a. Reek, Haaz? Fais venir et envoie deux exemplaires à Tiflis. Il faut suivre le nouveau journal, publié à Berlin "Der Neue Orient". On travaille activement parmi tout les peuples d'Orient.

Il faut organiser notre propagande suisse surtout.

L'adresse de Mme Inga Nalbandian – Birkerod – Danemark.

As-tu vu Roubanovitch? Tâche de voir les représentants russes, qui arriveront à la Conférence de Paris.

Ton ROSTOM

Թարգմանութիւնը.—

Սիրելի Միքայէլ,

Ստացայ 6 *Հոկտ.ի բացիկդ։ Գիտես որ Ռուսիա կարենալ մնալու համար կը սպասեմ արտօնագրի։*

Դեսպանը երկու անգամ հեռագրեց — կ՚ապահովեցնէ որ քանի մը օրէն դրական պատասխանը կ՚ունենանք։

Վերադարձիս պիտի խօսիմ Էջմիածին։ Բայց անհրաժե՞շտ է արդեօք քու նշանակումդ պաշտօնապէս։

Այսօր Ֆրանսայի առաքելութեան [դեսպանատուն] *յանձնեցի մեր Յուշագրէն քանի մը օրինակներ։ Մէկը պիտի յանձնէին Պատուիրակութեան նախագահին, միւսը՝ Պ. Դեսպիոյին։*

Կարդացի՞ր «վաւերագրեր հայ-ռուսական գազանութիւններու մասին»(!)*։ Բերել տուր եւ երկու օրինակ Թիֆլիս ղրկէ։ Պէտք է հետեւիլ Պերլին հրատարակուող նոր օրաթերթին —* «Der Neue Orient»*։ Աշխուժօրէն կ՚աշխատին Արեւելքի բոլոր ժողովուրդներուն մօտ։*

Պէտք է կազմակերպել մանաւա՛նդ մեր զուիցերական քարոզչութիւնը։

Տիկին Ինգա Նալբանդեանի հասցէն — Bikerod — Danemark.

Ռուբանովիչը տեսա՞ր։ Ջանա՛ տեսնել ռուս ներկայացուցիչները, որոնք պիտի գան Փարիզի Համագումարին։

քո՝ ՌՈՍՏՈՄ

729

Փաստ. 65-31

Ժընեւ, Յոնան Դաւթեանին գրուած նամակ: Յիշուած բժիշկը՝ Զաւրեանն է:

10 / XI / 1917, *Ստոկհոլմ*

Սիրելի Յոնան,

Նամակիդ արդէն պատասխանել էի, երբ բացդիրդ ստացայ։

Կովկաս գնալու հարցը առայժմ պէտք է թողնել։ Բացի այն, որ հիւանդութիւնը կարող է նորոգուել ճանապարհին, արտասահմանում ահագին գործ կայ անելիք։ Մեր պրոպագանդի գործը թոյլ է կազմակերպւած։ Զէզոք երկիրների, գերման եւ աւստրիական հասարակական կարծիքի վերաբերեալ շատ քիչ բան է կատարւում։ Հիմա մանաւանդ պէտք է ուժերը լարել։ Ժընեւում բաւական ուժեր կան, որոնք եթէ համախմբւեն, կարող են աշխատանքը տանել։ Դժւարութիւնը նիւթականի մէջն է։ Այդ մասին կարելի էր հոգալ Ռուսաստանից, եթէ արդի խառնակ վիճակը ստեղծւած չլինէր(1)։ *Գուցէ Ամերիկան*(2) *օգնութեան գայ։*

Բացի այդ, աքսորւած ընկերների նպաստի գործը պէտք է կանոնաւորել։ Գրել եմ Ամերիկայի ընկերներին. մտադիր էի Լոնդոնում մի բան անել այդտեղ գալիս, բայց որովհետեւ միտքս փոխել եմ վերջին դէպքերից յետոյ, կը փորձեմ նամակով մի բան յաջողեցնել։

Վերադառնալու եմ Ռուսաստան։ Եթէ խառնակութիւնը անցնի Կովկաս, մեր բաները լաւ չեն լինել[ու]։ *Թուրք*[իոյ] *սահմանը եթէ բացւի,— իսկ դա կարող է պատահել — մեր վիճակը շատ կը ծանրանայ։*

Մի քանի օր էլ կը սպասեմ. եթէ Բժիշկը(3) *չերեւնայ, ինչ որ կասկածում եմ,— ճանապարհ կ՚ընկնեմ։*

Քո Ռ[*ՈՍՏՈՄ*]

1.- Ակնարկութիւն բոլշեւիկեան յեղափոխութեան հետեւանքով Ռուսիոյ տարածքին առաջացած խառնակ վիճակին:

2.- Իմա՝ Ամերիկայի Հ.Յ.Դ. կազմակերպութիւնը:

3.- Խօսքը կը վերաբերի բժ. Յակոբ Զաւրիեւին:

730

Փաստ. 65-30

6 / XI / 1917
Ստոգհոլմ

Սիրելի Յոնան,

Ներփակ նամակը չուտով ուղարկիր Միքայէլին։

Երեւի, մեծ դժուարութեամբ ինձ պիտի թոյլ տան Պարիզով անցնել, Ստոգհոլմի կոնֆերանսի պատճառով(1)։ *Մինչդեռ մի շարք խնդիրներ կան, որոնց համար անհրաժեշտ է Պարիզ լինել։ Եթէ չյաջողուեց գնալս, գրաւոր կերպով մի բան կ՚ուղարկեմ։*

Տիկին Նալբանդեանի գրքի թարգմանութիւնը երբ ստանաք այդտեղ, շատ չուտով ուղարկիր Պարիզ, [*Ազգ.*] *Պատուիրակութեան, ուղղակի կամ Միքայէլի միջոցով։*

Stürmer-*ի գիրքը ստացայ։ Մի օրինակ պէտք է ուղարկել Տիկ. Նալբանդեանին, որ նրանից օգտուի դանիական թերթերի համար.*

2-3 *օրինակ էլ ինձ է պէտք։*

Համբոյրներով
Քո Ռ[*ՈՍՏՈՄ*]

1.- Արդարեւ, դէմ ըլլալով ընկերվար Միջազգայնականի հռչակած «Խաղաղութիւն առանց հողային կցումի» սկզբունքին, դաշնակից պետութիւնները կը մերժէին վիզա տալ Ստոկհոլմ մեկնող պատուիրակներուն: Այդ պատճառով Միք. Վարանդեան չկրցաւ մասնակցիլ Միջազգայնականի համագումարին:

731

Փաստ. 65-32

3 / XII / 1917, Stockholm

Սիրելի Յոնան,

Աղաթոն պէյի ուղարկած գրքերը ստացայ։ Ստացայ նաեւ La Haye-*ից ուղարկուածները։*

Ի նկատի ունեցէք հետեւեալ հասցէները՝ գրքեր ուղարկելու համար

1) Bureau socialiste international - Klara Vestra Kyrkogstras 3 B Stockholm

Մէկ մէկ օրինակ Բիւրոյի համար, աւելը՝ բաժանելու համար մեր հարցով հետաքրքրուող այցելուներին։

2) Madame Inga Nalbandian
Birkeröd – Danemark

3) Mademoiselle Ingeborg Maria Sick. 19, Pile-allée, Copenhague Danemark

4) Age Meyer Benedictsen
Charlottenland (Jutland) Danemark
(Դանիական Հայկ. Կոմիտէի նախագահն է)

5) Colonel Angell
Bygdö Christiania – Norvège

Ինչո՞ւ Լեփսիուսի գիրքը չի հրատարակւում բազմաթիւ օրինակներով։

Առաւելապէս պէտք է տարածել Գերմանիայում եւ չէզոք երկիրներում արաբի, թիւրքերի գրուածքները։

Դու մինչեւ մի գործով չզբաղւես, տրամադրութիւնդ չի փոխւիլ։ Ղոչաղ կաց, շատը անցել է, քիչն է մնացել։ Դրամիդ մասին գրել եմ, յոյս ունեմ, որ անպատճառ կը ստանաս։

Գուցէ, ով գիտէ, կարճ ժամանակից յետոյ հնարաւորութիւն ունենաս հին ճանապարհով Կովկաս հասնել։

Արդէն գիտես, որ ժընեւ գալու մասին չպէտք է մտածեմ առայժմ։ Գնալու եմ այստեղից հինգշաբթի կամ շաբաթ։ Ուրբաթ օրերի համար արգելք կայ Լիգի կողմից։

Համբոյրներով՝
Քո Ռ.

Նամակիս մէջ յիշած հասցէները յանձնէք Աղաթոն պէյին։

ՆՈՅՆ

Երէկ ուղարկեցի քո հասցէով մի քանի օրինակ Un avant projet du programme de paix. *Մեր մասին տես էջ* 8, 22 *եւ* 29։ *Մի օրինակը ուղարկիր Պարիզ, միւսը Աղաթոն պէյին։*

ՆՈՅՆ

732

Փաստ. 65-34

Արտագրութիւն հաւանաբար Ստոկհոլմէն ֆրանսերէն գրուած Ռոստոմի մէկ նամակին, ստորագրուած Ստեֆան, որ Ռոստոմն է անշուշտ: Հասկնալի պատճառով նամակը շարադրուած է այլաբանօրէն: Յիշատակուած անուններէն Մարզպետը՝ Ղազարոս Ղազարոսեանն է, Շահբազը՝ Բարսեղ Շահբազը, Ցայգալոյսը՝ նոյնանուն երկի հեղինակ Ռուբէն Զարդարեանը, Խաչը՝ փրոֆ. Աստուածատուր Խաչատրեանը, Հայկը՝ հաւանաբար Թիրեաքեան Հայկը (Հրաչ), Հուրիկին հայրը՝ Գրիգոր Զօհրապն է, իր «եղբայրները»՝ երեսփոխան Վարդգէսն է (Յովհ. Սերենկիւլեան), որ Գրիգոր Զօհրապի հետ նահատակուեցաւ: Վիշապ՝ ծածկանունն է Կ. Պոլսոյ:

«6 décembre [19]17»

«Chère Mme Antoinette»

«Il y a longtemps que j'ai déjà reçue la carte. Je voudrais savoir si vous avez reçu ma lettre détaillée du 17 octobre*.

Le 7 novembre oncle Rosdom par une lettre me demande des nouvelles précises sur les membres de notre famille. Combien il est difficile de nous écrire sur leurs sorts malheureux! Il faut les considérer tous presque perdus. Les derniers membres de notre famille qui se trouvaient encore à Vichabe ont changé leur demeure il y a une année, depuis lors nous n'avons aucune nouvelle d'eux. Les quelques petits qui sont restés à Vichabe se trouvent à l'hôpital gravement malades et nous demandent toujours des secours. J'ai fait tout mon possible pour les aider mais il est inutile de dire que mes moyens sont insuffisants. Moi et les membres de ma famille aussi avons assez souffert, mais à présent nous nous portons mieux. Nous recevons parfois des nouvelles vagues et même fabuleuses sur Mlle Marzbed, petite Chahbaz et Mme Tzaikalouisse mais nous faisons beaucoup d'efforts pour obtenir des nouvelles exactes. Le père de Hourig est mort avec ses frères près d'Ourfa; nous avons déjà reçu son testament au moyen des amis. Quant aux petits-fils de Haïk ils sont encore à [Ter] Zor et à Damas dans une situation lamentable. Leur oncle doit les aider le plus tôt possible. Mme Khatch est à Konia; nous lui avons envoyé de l'argent. Njdeh est vivant ou non? Salutations de tous les miens».

«Ton dévoué cousin»
«STEPHAN»

*) La lettre en question ne nous est pas parvenue.

Թարգմանութիւնը.—

6 դեկտեմբեր [19]17

Սիրելի տիկին Անտուանէտ,

Երկար ատեն է որ բացիկը ստացած եմ: Պիտի ուզէի գիտնալ թէ արդեօք ստացած էք 27 հոկտեմբերի իմ նամակս:*

Նոյեմբեր 7-ին Ռոստոմ հօրեղբայրը նամակով մը ճշգրիտ տեղեկութիւններ

կ՚ուզէ մեր ընտանիքին մասին։ Որքա՜ն դժուար է գրել ձեզի անոնց դժբախտ ճակատագրին մասին։ Հարկ է բոլորը կորսուած համարել։ Մեր ընտանիքին վերջին անդամները, որ տակաւին Վիշապ կը գտնուէին, տարի մըն է որ իրենց բնակարանը փոխած են. ատկէ ի վեր ոչ մէկ լուր ունինք իրենցմէ։ Քանի մը փոքրիկներ որ Վիշապ մնացած են՝ հիւանդանոց են, ծանրօրէն հիւանդ եւ միշտ օգնութիւն կ՚ուզեն։ Ամէն կարելիս կ՚ընեմ իրենց օգնելու համար, բայց աւելորդ է ըսել որ միջոցներս անբաւարար են։ Ես եւ ընտանիքիս անդամները եւս բաւական տառապեցանք, բայց ներկայիս լաւ ենք։ Երբեմն տարտամ եւ նոյնիսկ անհաւատալի լուրեր կը ստանանք տիկին Մարգպետի, փոքրիկն Շահբազի եւ տիկին Ցայգալոյսի մասին, բայց շատ ջանքեր կը թափենք ճշգրիտ տեղեկութիւններ ունենալու համար։ Հուրիկին հայրը իր եղբայրներուն հետ մեռած է Ուրֆայի մօտ. կտակը ստացանք՝ բարեկամներու միջոցով։ Գալով Հայկի թոռնիկներուն, տակաւին [Տէր] Զօր եւ Դամասկոս են՝ ողբալի վիճակի մը մէջ։ Իրենց հօրեղբայրը կարելի եղածին չափ շուտ պէտք է օգնէ իրենց։ Տիկին Խաչ Գոնիա է. դրամ ղրկեցինք իրեն։ Նժդեհը ո՞ղջ է թէ ոչ։ Բարեւներ բոլոր իմիններուս կողմէ։

«Անձնուէր զարմիկդ»
«ՍՏԵՓԱՆ»

*) *Խնդրոյ առարկայ նամակը չենք ստացած։*

733

Փաստ. 65-33

«Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած նամակ

12 / XII / 1917

Սիրելիք,

Այսօր վերջապէս գնում եմ(1). *ուղարկում եմ ներփակ [Միջազգային ընկերվար] Բիւրոյին ներկայացուած պատասխանիս պատճէնը։ Տուէք սրբագրեն, մի օրինակ ուղարկէք «Հայրենիքին», միւսը Պարիզ, [Ազգ.] պատուիրակութեան, Մասէհեան Խանին, մի օրինակ էլ «Լոնդոնի կոմիտէին»։*

Տեսնուեցի Շէյդեմանի հետ(2)։ *Խօսեցի տարագրեալների եւ մեր քաղաքական պահանջների մասին։ Տարագրեալների համար խոստացաւ աշխատել, որ*

1) *Նոր խստութիւններ գործ չդնեն այլ նաեւ*

2) *Կազմակերպեն օգնութիւնը՝ չէզոք կամ թուրքերին դաշնակից քաղաքացիների միջոցաւ։*

3) *Թոյլ տան սահմանակից վայրերից անցնելու դէպի Կովկաս կամ Եգիպտոս տեղում գտնուող հայերին, գէթ կանանց եւ երեխաներին, որով կը զբաղուին դարձեալ Թիւրքիային ոչ-թշնամի երկրների քաղաքացիները։ Ընդունելու համար նրանց, ցոյց տուի կէտեր՝ Երզնկա, Քղի-Կարին, Մուշ, եւ ծովեզերեայ քաղաքները։*

Խոստացաւ պաշտպանել մեր քաղաքական պահանջները, ազգերի ինքնորոշման տեսակէտի վրայ կանգնած։

Զպէտք է մոռանալ, որ այս բոլորը անհատի եւ ընկերվարականի խոստումներ են, որ հարկաւ դժւարութիւնների պիտի հանդիպեն։

Շատ եմ ափսոսում մի տեսակէտից, որ հիմա եմ ստիպւած գնալ։ Շատ կարեւոր է մէկի ներկայութիւնը Ստոգհոլմում։

Ուղարկէք նրա հասցէին Բերլին, գերմանական աղբիւրներ, մանաւանդ Լեփսիուսի գիրքը։ Այժմ Լեփսիուսը կարող է մեծ դեր խաղալ։ Պէտք է հետը տեսնւել եւ միջոցներ տալ։

Նորից, բոլոր հրատարակութիւններից ուղարկէք միջազգային Բիւրոյին։ Ուզում եմ, որ նրանք մի բաժին ունենան՝ մեր հարցին վերաբերեալ հրատարակութիւններից։

Դէհ, ցտեսութիւն։

Ջերմ համբոյրներով՝
ՌՈՍՏՈՄ

1.- Արդարեւ շուրջ չորսուկէս ամիս Ստոկհոլմ մնալէ ետք, Ռոստոմ պիտի անցնէր Ռուսիա, Պետերբուրգ, ուր արդէն տեղի ունեցած էր ռուսական երկրորդ՝ պոլշեւիկեան յեղափոխութիւնը:
2.- Ֆիլիպ Շէյդեման – սոցիալ դեմոկրատ երեսփոխան՝ Գերմանիոյ խորհրդարանին մէջ:

734

Չհամարակալուած նամակ, որ կը գտնուի Ռոստոմի կնոջ՝ Լիզա Զօրեանի անձնական թղթածրարին մէջ: Թագուշը՝ իրենց աղջիկն է:

1 / III / 1918, *Ցարիցին*

Լիզա ջան,

Գրում եմ Ցարիցինից։ Այս երեկոյ ճանապարհ կ՚ընկնենք։ Ցոյս ունեմ, 4-5 *օրից տեղ հասնենք։ Գնում ենք յատուկ վագոնով։*

Այս կողմերում ամէն ինչ խաղաղ է, հացի եւ այլ մթերքների առատութիւն։

Ջերմ համբոյրներոս քեզ, Թագուշին եւ միւսներին։

Քո ՍՏ.

Ռոստոմէն երեք հակիրճ բայց հետաքրքրական նամակներ գրուած Բագուէն եւ Ղազվինէն եւ ուղղուած Եգիպտոսի եւ Թեհրանի դաշնակցական մարմիններուն: Առաջին երկուքը (մանրատառ շարուած) տպուած են արդէն Հ. Տասնապետեանի խմբագրած ՌՈՍՏՈՄ – ՆԱՄԱԿԱՆԻ հատորին մէջ (էջ 628), բայց 1916 թ. սխալ տարեթիւով, փոխանակ 1918-ի: Երրորդը, նոյնպէս տպուած, բայց ճիշդ տարեթիւով (էջ 649-50) գրուած է Պարսկաստանի Ղազվին քաղաքէն 1918 թ. Նոյեմբեր 5-ին, երբ օսմանեան բանակի ներխուժումով վերջ գտած էր Բագուի հերոսամարտը եւ Ռոստոմ ծովու ճամբով անցած էր Պարսկաստան, ուրկէ կը ծրագրէր վերադառնալ նորանկախ Հայաստան եւ լծուիլ հայրենիքի վերաշինութեան գործին:

Ռոստոմի յանձնարարած անձնաւորութիւնը ծանօթ գրագիտուհի Զապէլ Եսայեանն էր, որ իր հետ կը տանէր Բագուի Կ. կոմիտէի նախաձեռնութեամբ՝ արեւմտահայ գաղթականներու վկայութիւններով հաւաքուած («Վշտապատում») ծաւալուն նիւթեր Հայաստանի մէջ թուրքերու կողմէ գործուած անլուր գազանութիւններու եւ կոտորածներու մասին: Յայտնենք, որ արեւմտահայ վերապրողներու այս վկայութիւնները «Վշտապատում – Հայոց Մեծ եղեռնը ականատեսների աչքերով» եւ «1915 – Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում – Վերապրողների վկայութիւններ, փաստերի ժողովածու» անունով (երեք հատոր), Հայաստանի Ազգային արխիւի հրատարակութեամբ լոյս տեսան Երեւանի մէջ 2005 եւ 2012 թուականներուն:

Փաստ. 339-3

3 / IV / 1918, *Բագու*

Սիրելի ընկերներ,

Վաղուց է կտրուած ենք իրարից։ Տիկին Զապէլը ձեզ կը պատմի մեր վիճակի մասին, թէեւ դա մինչեւ տիկնոջ Եգիպտոս հասնելը պատմական դառած կը լինի։

Տիկինը իր հետ բերում է «Վշտապատումի» նիւթերը։ Պէտք է օգտուել լայն պրոպագանդի համար։ Տիկինը ինքը կ՝աշխատի։ Ցոյս ունեմ որ հարկ եղած դիւրութիւնները չէք զլանալ։

Ձերմ ողջոյններով՝ ՌՈՍՏՈՄ

Փաստ. 339-4

3 / IV / 1918, *Բագու*

Սիրելի ընկերներ,

Թեհրան է գալիս Եւրոպա անցնելու նպատակով տիկ. Զապէլ Եսայեանը։

Նա կը պատմի ձեզ այստեղի վիճակի մասին։ Շատ պիտի խնդրէի չզլանալ նրան ձեր ձեռքից գալիք աջակցութիւնը։

Ձեր՝ ՌՈՍՏՈՄ

Փաստ. 598-69

5 / XI / 1918, *Ղազվին*

Սիրելի ընկերներ,

Տիկ. Զապէլ Եսայեանը կը պատմի մեր վիճակի մասին։ Գիտէք որ մենք միակն էինք մնացել Կովկասում Թիւրքիոյ դէմ կռուելու համար։ 7 ամիս շարունակ անհաւասար կռիւներ մղեցինք, ունեցանք եւ փայլուն յաղթանակներ, բայց վերջ ի վերջոյ մենք եւս ստիպւած եղանք տեղի տալ Բագուում։

Վերջին ճիգերը պատրաստւում էինք անել Պետրովսկում, երբ Բուլղարիոյ դէպքերը յեղաշրջեցին ընդհանուր պատերազմի ընթացքը։

Մի քանի օրից յոյս ունինք մտնել նորից Բագու, բայց բոլորովին այլ պայմանների մէջ։ Այնտեղից դիւրին կը լինի մտնել Հայաստանի սահմանները։ Այժմ մեր առջեւ դրւած է մեծ, պատասխանատու աշխատանք՝ երկրի վերաշինուլթեան գործը։

Մինչեւ նամակս ձեր ձեռքը հասնելը, շատ բան փոխւած կը լինի։ Գուցէ դուք եւս ոտ դրած լինէք հայրենիքի միւս անկիւնում։

Մեզ սպասում է մեծ պայքար, գուցէ եւ նոր կռիւներ։ Մխիթարականը այն է, որ կը կռւենք աւելի ամփոփ ուժերով։

Յոյս ունինք առաջիկայում ունենալ մի մեծ ընդհանուր ժողով, Հայաստանի կենտրոնում, մշակելու համար Հայաստանի վերաշինուլթեան հիմնական ուղիները։

Կ'ուզենայինք ունենալ տեղեկուլթիւններ ձեր շրջանից։

Մի քանի օր Թեհրան մնալուց յետոյ կը վերադառնամ Էնզելի եւ այնտեղից, յուսով եմ, Բագու-Թիֆլիս-Երեւան։

Ընկ[երական] ջերմ ողջոյններով՝
ՌՈՍՏՈՄ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

«Ռոստոմի անտիպ նամակներ»ու այս վերջին ընդարձակ բաժինը կը բովանդակէ 1917 թ. երկրորդ կիսուն Շուէտի մայրաքաղաք Ստոկհոլմի մէջ տարած իր աշխատանքները: Հոլանտա-սկանտինաւեան յանձնաժողովի նախաձեռնութեամբ 1917 թուականի երկրորդ կիսուն հրաւիրուած էր ընկերվար Միջազգայնականի համագումարը՝ նպատակ ունենալով վերջ մը դնել տարիներէ ի վեր մոլեգնող Ընդհ. պատերազմին եւ, միաժամանակ, խաղաղութեան եւ նոր համակարգի մը հաստատման համար ճշդել որոշակի սկզբունքներ:

Խորհրդաժողովը հրաւիրուած էր Յուլիս ամսու 8-ին, բայց պատերազմին ստեղծած դժուարութիւնները եւ այլ խոչընդոտներ պատճառ պիտի ըլլային անոր յետաձգումին մինչեւ Սեպտեմբեր*: Յայտնաբար ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները հաշտ աչքով չէին նայեր այս համագումարին. ուստի մերժեցին անցագիր տալ իրենց քաղաքացի ընկերվար պատգամաւորներուն: Ընկերվար Միջազգայնականի բիւրոյի անդամ Միք. Վարանդեան հրաւիրուած ըլլալով հանդերձ, պիտի չկարենար Ստոկհոլմ մեկնիլ: Ճիշդ է որ այդ օրերուն ան Փարիզ կը մնար ու կը գործակցէր Պօղոս Նուպարի գլխաւորած Ազգ. պատուիրակութեան եւ հեռագրով մը պահանջեց որ խորհրդաժողովին կողմէ ընդունուի հայոց ինքնորոշման իրաւունքը եւ Հայաստանը ազատագրուի այլեւս թրքական լուծէն: Այսուհանդերձ, ի պատասխան Ռոստոմի մէկ հեռագրին, որ իր ներկայութիւնը անհրաժեշտ կը գտնէր Ստոկհոլմ, ան՝ Ամերիկայի Կեդր. կոմիտէին գրած իր 1917 թ. Սեպտ. 25-ի նամակով կ՚ըսէ «Ռոստոմը հեռագրած էր ինձ, որ երթամ զինքը տեսնեմ ու վերադառնամ Պարիզ. ինչպէս կ՚երեւայ կարեւոր բան ունէր ինձ հաղորդելու: Տարաբախտաբար, ոչ մի հնարաւորութիւն չեղաւ մեկնելու. ռուսները բացէ ի բաց կը մերժեն վիզա անել անցագիրս» (փաստ. 1405-96):

Այսպէս թէ այնպէս, իբրեւ լիազօր ներկայացուցիչ Հ. Յ. Դաշնակցութեան, Ռոստոմ առանձինն կը մասնակցի Ստոկհոլմի խորհրդաժողովին եւ ընդհանուր տեղեկագրով մը կը պարզէ Թուրքիոյ տարածքին գործուած հայասպանութիւնը, տեղ-տեղ հայերու ցոյց տուած հերոսական ու յուսահատական դիմադրութիւնը թուրք եւ քիւրտ ջարդարար զօրքերուն: Ռոստոմ կը դնէ ոչ միայն անմիջական հատուցման եւ վերապրողներուն օգնութիւն փութացնելու հարցը, այլեւ անհրաժեշտութիւնը Հայաստանի վերջնական ազատագրութեան թրքական լուծէն եւ միջազգային երաշխաւորութեամբ անոր ինքնավար գոյութեան իրաւունքը: Ռոստոմի այդ ծաւալուն Յիշատակագիրը, հրատարակուած Համագումարին կողմէ լոյս ընծայուած հատորին մէջ (Ed. Tidens Forlag, Stockholm, 1918), պատմական արժէք ներկայացնող փաստա-

*) Ամերիկայի Կեդր. կոմիտէին գրած իր ծայր աստիճան անընթեռնելի մէկ նամակով (փաստ. 1405-93) Ռոստոմ կը գրէ «Համագումարը կարող է յետաձգուել կամ խորհրդակցական բնոյթ կրել»:

թուղթ է եւ կը հանդիսանայ վկայութիւններէն մէկը՝ Ընդհանուր պատերազմի տարիներուն միջազգային բեմերու վրայ հայ դատի հետապնդման ուղղութեամբ թափուած ջանքերուն:

Ռոստոմ Ստոկհոլմ մնացած է երկար, Յուլիսի վերջերէն մինչեւ 12 Դեկտեմբեր: Վերեւ յիշուած դժուարութիւններն ու ճգճգումները պատճառ եղած են, որ նախատեսուած թուականին չգումարուի ու փաստօրէն լիարժէք կերպով չկայանայ ժողովը: Ահա այս ժամանակամիջոցին է, որ ան խմբագրած է իր տեղեկագիրը, աշխոյժ մասնակցութիւն ունեցած խորհրդակցութիւններուն, հանդիպումներ ունեցած քաղաքական անձնաւորութեանց, ապա նաեւ զբաղած այն գլխաւոր հարցով, որ նիւթական օգնութիւն հասցնելն էր տարագրութեան մէջ գտնուող ընկերներուն եւ անոնց ընտանեկան պարագաներուն**:

Այս բաժնին մէջ տրուած գրութիւններուն մեծագոյն մասը ֆրանսերէն է. այդ լեզուով են շարադրուած, բնականաբար, Ռոստոմի Յիշատակագիրը եւ անոր կցուած միւս գրութիւնները: Ֆրանսերէն են նաեւ Ռոստոմի Ստոկհոլմէն գրած նամակները Ամերիկա եւ այլուր. պատճառը այն էր, որ պատերազմի տարիներուն եւրոպական երկիրներու մէջ խիստ գրաքննութիւն հաստատուած ըլլալով, օտարալեզու գրութիւնները վար կը դրուէին եւ կամ մեծ յապաղումով տեղ կը հասնէին:

Ֆրանսերէն բնագիրներու կողքին՝ հանդիպակաց էջերուն կը կցենք անոնց թարգմանութիւնները՝ կատարուած մեր կողմէ:

Ե. Փ.

**) Տես այս մասին «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», ԺԲ. հատոր, էջ 263-308:

Փաստ. 1679-21

Ստոկհոլմի խորհրդաժողովի ընթացքին Ռուսոնի միջամտութիւններէն մէկը՝ պաշտպանելու համար Արեւմտեան Հայաստանի ինքնորոշման իրաւունքը եւ կարելիութիւնը ամայացած երկիրը վերաբնակեցնելու արեւմտահայութեան մնացորդացով :

Les circonstances présentes ne nous permettent pas d'envoyer «L'Avant-projet du programme de la paix» aux organes compétents de notre parti, pour avoir leurs opinions et les communiquer au bureau organisateur de la conférence de la Paix.

Nous voudrions cependant exprimer notre avis personnel sur le partie de l'avant-projet concernant l'Arménie.

L'avant-projet reconnaissait pour l'Arménie russe le droit de s'organiser librement dans le cadre de la République Fédérative, et pour l'Arménie, actuellement Turque, il demandait l'indépendance, la restitution du territoire et la garantie de pouvoir se développer économiquement.

Dans le mémoire explicatif nous trouvons en outre les lignes suivantes (p. 29).

«Après la lecture du mémorandum de la délégation arménienne il n'est personne qui ne reconnaîtra, que la solution de la question arménienne est aussi urgente et nécessaire, que difficile».

Si la solution de notre question est reconnue difficile, cela doit être expliqué par le fait de l'extermination de la population arménienne en Turquie.

En effet, ce qui reste, ou plutôt ce qui restera des arméniens déportés après la guerre, ne pourrait nullement servir d'élément pour constituer un Etat indépendant, même une communauté autonome. Ce fut là le principal mobile des dirigeants turcs, et si aujourd'hui les chefs dirigeants turcs de la Jeune Turquie se vantent d'avoir accompli brillamment leur tâche, cela veut dire, qu'ils n'ont épargné que des débris pitoyables des masses déportées.

Nous devons affirmer cependant, que l'Arménie pourra être reconstituée quand même.

Le coup des Jeunes Turcs fut formidable, inouï dans l'histoire des peuples, mais non mortel pour la cause arménienne, pour la simple raison, qu'il reste encore, hors de leur atteinte, une quantité considérable d'Arméniens de Turquie, qui pourraient facilement repeupler l'Arménie.

1. Signalons d'abord, que les Arméniens de tout le vilayet de Van, de même que de quelques districts des vilayets de Bitlis et d'Erzeroum, échappèrent aux déportations et furent sauvés, grâce à la résistance.

Furent sauvés aussi les Arméniens des districts d'Alaschkert, de Bayazed, de la grande partie de la vallée de Passène, envahis par l'armée russe, les premiers jours de la guerre.

A leur nombre il faut ajouter ceux, qui furent trouvés, après la prise d'Erzeroum, de Mousch, d'Erzindjan, de Trépizonde, chez quelques tribus kurdes, qui les protégeaient,

Թարգմանութիւնը.—

Ներկայ հանգամանքները թոյլ չեն տար մեզի, որ «Խաղաղութեան յայտագրի նախագիծը» ուղարկենք մեր կուսակցութեան իրաւասու մարմիններուն, վերջիններուն տեսակէտները ունենալու համար։ Այսուհանդերձ պիտի ուզէինք մեր անձնական կարծիքը արտայայտել նախագծի Հայաստանին վերաբերող բաժնին մասին։

Նախագիծը կ՚ընդունէր Ռուսահայաստանի համար՝ [ռուս] *Դաշնակցային Հանրապետութեան շրջագծէն ներս ազատօրէն կազմակերպուելու իրաւունք, եւ Հայաստանի համար, այժմ թրքական, կը պահանջէր անկախութիւն,* [նախկին] *հողատարածքի վերահաստատում եւ տնտեսապէս զարգանալու երաշխիք։*

[*Ներկայ*] *յիշատակագրի բացատրականին մէջ կը գտնենք հետեւեալ տողերը* (էջ 29).—

«Հայկական պատուիրակութեան Յուշագրի ընթերցումէն ետք, ամէն մարդ պիտի ընդունի, որ հայկական հարցի լուծումը նոյնքան ստիպողական է եւ անհրաժեշտ որքան՝ դժուար»։

Եթէ մեր հարցին լուծումը կ՚ընդունուի դժուար, ապա այդ մէկը պէտք է բացատրել Թուրքիոյ հայ բնակչութեան բնաջնջման իրողութեամբ։

Արդարեւ, ինչ որ կը մնայ, կամ մանաւանդ ինչ որ պիտի մնայ պատերազմէն ետք տեղահանուած հայերէն, բնաւ հիմք չի կրնար ծառայել անկախ պետութեան մը, նոյնիսկ ինքնավար համայնք մը կազմելու համար։ Այդ եղաւ արդէն գլխաւոր շարժառիթը Թուրք ղեկավարներուն, եւ եթէ այսօր Երիտասարդ Թուրքիոյ վերին ղեկավարները կը պարծենան որ փայլուն եւ լիակատար կերպով ամբողջացուցած են իրենց գործը, ասիկա կը նշանակէ, որ խնայած են տարագրուած զանգուածներու խղճալի բեկորներուն միայն։

Այս բոլորով հանդերձ, մենք պիտի հաստատենք թէ ինչ որ ալ ըլլայ, Հայաստանը պիտի կարենայ վերակազմուիլ։

Երիտասարդ Թուրքերու հարուածը հայկական հարցին համար եղաւ ահաւոր, բայց ո՛չ մահացու, պարզ այն պատճառով, որ իրենց հասողութենէն դուրս կը մնայ տակաւին Թուրքիոյ հայերու նկատառելի բազմութիւն մը, որ կրնայ դիւրութեամբ Հայաստանը վերստին շէնցնել։

1.- *Նշենք նախ եւ առաջ, որ ամբողջ Վանի վիլայէթին, ինչպէս նաեւ Պիթլիսի եւ Էրզրումի կարգ մը գաւառներուն հայերը, շնորհիւ դիմադրութեան, ազատեցան տեղահանութենէն եւ փրկուեցան։*

Փրկուեցան նոյնպէս Ալաշկերտի, Բայազէդի, Բասենի դաշտին մեծագոյն մասի հայերը, գաւառներ՝ որոնք պատերազմի առաջին օրերուն գրաւուեցան ռուսական բանակէն։

Անոնց վրայ պէտք է աւելցնել անոնք, որ Էրզրումի, Մուշի, Երզնկայի եւ Տրապիզոնի գրաւումէն ետք, գտնուեցան կարգ մը քրտական ցեղախումբերու մօտ, որոնք պատսպարած էին զիրենք, կամ լեռներու մէջ՝ ուր դեռ կը շարունակէին դի-

ou dans les montagnes, où ils continuaient encore leur résistance. De nombreux enfants et femmes furent arrachés aux musulmans.

Tous sont établis au Caucase et dans les régions occupées par l'armée russe.

2. Au moment de la déclaration de la guerre, plus de 350.000 jeunes gens, appartenant aux différentes régions de la Turquie, se trouvaient à l'étranger. Ils étaient pour la plupart du nombre d'ouvriers, d'artisans etc. qui quittaient habituellement leurs familles pour gagner de l'argent en Russie, en Amérique, en Egypte, en Bulgarie etc, et retourner chez eux.

350.000 jeunes gens,- cela veut dire presque autant de nouvelles familles restituées en Arménie libre.

3. Il y a outre cela, des centaines de milliers d'émigrés de Turquie, installés en Russie et ailleurs. Cette émigration prit des dimensions tangibles à partir de la guerre de Crimée, surtout dans la période de la domination d'Abdul Hamid.

Pour se faire une idée approximative de leur nombre il suffit de se rapporter à la statistique de M. Oupotchine, faite d'après les données officielles en 1845. M. Oupotchine comptait encore en 1845, en Turquie 2.500.000 Arméniens. En admettant les données, dont se servait Oupotchine, conforme à la réalité (d'après les sources arméniennes le nombre réel d'Arméniens fut supérieur), nous aurions dû trouver en Turquie en 1914, après 70 ans, au moins 6 millions d'Arméniens. Pourtant, à cette époque nous n'avons pu compter que 2.000.000 âmes en tout, et encore ce chiffre fut-il contesté par les turcs.

Cette différence frappante de 4 millions est due non seulement aux massacres, mais aussi aux émigrations susmentionnées, qui prenaient par moments le caractère d'exodes en masses.

En Russie, en particulier au Caucase, nous observons, au contraire, un accroissement extrêmement rapide de la population arménienne. De 350.000 qu'ils étaient en 1830 au Caucase, les arméniens y sont déjà au nombre de 2.000.000. Sans immigration, dans l'espace de 87 ans, ils auraient été 1.200.000, maximum 1.400.000. Il est évident que rien qu'au Caucase 600-800 m[ille] d'Arméniens se rapportent aux ressortissants de la Turquie.

Mais retourneront-ils, nous demande-t-on; l'amour platonique pour la sol natal suffit-il pour les ramener en masse en Arménie libre ?

Nous sommes sûrs, que le rapatriement s'effectuera rapidement. Si les émigrés avaient arrangé leur vie à l'étranger, on aurait pu exprimer des doutes à ce sujet. Mais la plus grande partie d'entre eux souffre de la manque de terres; ils n'attendent que l'heure de liberté sonner pour affluer de tous les coins du monde à leurs anciens foyers.

Une autre difficulté de la solution de notre question est notée dans le mémoire explicatif. La réunion des délégations trouve que «L'Allemagne ne s'opposera pas seulement à toute cession de territoire, mais aussi ... au partage de la Turquie». «De ce point de vue découlent des indications … pour le règlement des affaires turques, indication qu'il importe d'envisager à chaque solution concrète» (p. 22).

մադրել։ Մահմետականներու ձեռքէն խլուեցան բազմաթիւ տղաք եւ կիներ։

Բոլորը հաստատուած են Կովկաս եւ ռուսական բանակի գրաւած շրջաններուն մէջ։

2.- Պատերազմի յայտարարութեան պահուն, աւելի քան 350.000 երիտասարդներ՝ Թուրքիոյ տարբեր շրջաններու պատկանող, կը գտնուէին արտասահման։ Մեծ մասամբ գործաւորներ, արհեստաւորներ եւայլն էին անոնք, որոնք կը հեռանային իրենց ընտանիքներէն՝ Ռուսիա, Ամերիկա, Եգիպտոս, Պուլկարիա եւայլն՝ դրամ շահելու եւ վերադառնալու համար։

350.000 երիտասարդներ,- կը նշանակէ նոյնքան վերականգնած ընտանիքներ ազատ Հայաստանի մէջ։

3.- Ասկէ զատ, հարիւր հազարաւոր գաղթականներ կան Թուրքիայէն, հաստատուած Ռուսիա եւ այլուր։ Այս արտագաղթը չօշափելի չափեր ստացաւ Խրիմի պատերազմէն ետք, մասնաւորաբար Ապտիւլ Համիտի իշխանութեան օրերուն։

Մօտաւոր գաղափար մը կազմելու համար անոնց թուաքանակին մասին, կը բաւէ դիմել պաշտօնական տուեալներու հիման վրայ 1845-ին կազմուած Պ. Ուպոչինի վիճակագրութեան։ Տակաւին 1845ին, Պ. Ուպոչին Թուրքիոյ մէջ կը հաշուէր 2.500.000 հայեր։ Ուպոչինի օգտագործած տուեալները իրականութեան համապատասխան համարելով (ըստ հայկական աղբիւրներուն հայերու իսկական թիւը աւելի մեծ էր), պէտք է որ 1914ին, 70 տարիներ ետք, Թուրքիոյ մէջ գտնէինք առնուազն 6 միլիոն հայեր։ Սակայն այդ օրերուն ընդամէնը 2.000.000 հոգի կը համարուէինք, ու այս թիւն ալ վիճելի համարուեցաւ Թուրքերու կողմէ։

4 միլիոնի այս աչքառու տարբերութեան պատճառը միայն ջարդերը չէն, այլ նաեւ վերոյիշեալ արտագաղթերը, որոնք երբեմն զանգուածային գաղթի բնոյթ կը ստանային։

Ռուսիոյ եւ յատկապէս Կովկասի մէջ, ընդհակառակն կը տեսնենք հայ ազգաբնակչութեան արագ աճ։ Հայերը, որ Կովկասի մէջ 350.000 էին 1830-ին, այժմ 2.000.000 են։ Առանց ներգաղթի, 87 տարուան մէջ անոնք պէտք է ըլլային 1.200.000, առաւելագոյնը 1.400.000։ Բացորոշ է որ [յաւելեալ] 600-800.000ը կը վերաբերի [Ռուսիա եւ Կովկաս գտնուող] Թուրքիոյ հայազգի քաղաքացիներուն։

Բայց պիտի վերադառնա՞ն անոնք, հարց կը տրուի մեզի. հայրենի հողի հանդէպ ունեցած պղատոնական սէրը կը բաւէ՞՝ վերստին բերելու համար զիրենք ազատ Հայաստան։

Վստահ ենք որ շատ արագ տեղի պիտի ունենայ հայրենադարձութիւնը։ Եթէ գաղթականները կարգաւորած ըլլային իրենց կեանքը արտասահմանի մէջ, կարելի էր այդ մասին կասկածներ ունենալ։ Սակայն անոնց մեծագոյն մասը կը տառապի հողի պակասէն. կը սպասեն ազատութեան ժամու հնչելուն, աշխարհի բոլոր անկիւններէն գունդագունդ խուժելու համար իրենց հին օճախները։

Յիշատակագրի բացատրականին մէջ մեր հարցի լուծման համար ուրիշ դժուարութիւն մը եւս նշուած է։ Պատգամաւորական ժողովը կը գտնէ, որ «Գերմանիա պիտի ընդդիմանայ ոչ միայն հողային որեւէ զիջումի, այլ նաեւ... Թուրքիոյ բաժանման»։ «Այս տեսակէտէն կը բխին ցուցմունքներ... Թրքական խնդիրներու կարգաւորման համար, ցուցմունքներ՝ զորս կարեւոր է նկատի ունենալ իւրաքան-

Il en résulte, que notre cause, comme une des «affaires turques» se heurtera à l'opposition de l'Allemagne et que dans les intérêts de la Paix générale, elle pourrait être sacrifiée ou satisfaite à demi.

Cette question se présente à nous un peu autrement.

L'Allemagne, qui tendait à tenir sous son influence toute la Turquie, alors que les puissances d'Entente voulaient la partager, devrait naturellement opposer ses intérêts impérialistes à ceux de l'Entente; et la Réunion des délégations, dans le but d'aboutir à une prompte Paix de conciliation, n'aurait pu favoriser les intérêts d'un côté au détriment de l'autre.

Mais après la révolution russe la situation n'est plus la même. La Russie renonce catégoriquement aux annexions. La France et la Grande Bretagne, qui, en projetant des annexions ou l'extension de leur protectorat, voulaient en partie contrebalancer la domination russe en Asie Mineure, seraient nécessairement amenées à modifier leurs programmes. Ce changement permettra que «les affaires turques» se présentent au monde sous leur vrai aspect. Les Arméniens, les Arabes, Les Syriens, Les Juifs, les Grecs, les Kurdes, les Chaldéens etc. pourront désormais réclamer soit l'indépendance, soit l'autonomie, ou le protectorat, sans être accusés de servir d'instruments des puissances.

Le centre de gravité n'est plus dans les tendances impérialistes des puissances, mais dans celles des peuples, gémissant sous le joug des dirigeants turcs.

Nous ne sommes donc pas en présence du partage de la Turquie, où les intérêts d'une puissance sont en opposition directe à ceux d'une autre, mais du démembrement de la Turquie,– procès naturel, historiquement nécessaire, où les aspirations des peuples à la liberté sont en opposition au régime de feu et de glaive.

En face de ce changement, l'Allemagne perd sa raison de défendre l'intégrité de l'Empire Ottoman. Si elle persiste à le faire et partant à s'opposer à la solution de la question arménienne et d'autres «affaires turques», ce serait une atteinte au principe du droit des peuples à disposer librement de leur sort, principe reconnu déjà pour certains cas par l'Allemagne elle-même.

La démocratie internationale irait contre ses propres principes, si elle considère nécessaire d'envisager les vues impérialistes allemandes, à chaque solution complète… des affaires turques, au lieu de les combattre de toutes ses forces.

չիւր հարցի իսկական լուծման համար (էջ 22)։

Կը հետեւցուի որ մեր դատը, որպէս «թրքական խնդիրներէն» մէկը, պիտի բախի Գերմանիոյ ընդդիմութեան եւ որ ան կրնայ զոհուիլ կամ կիսով գոհացուիլ՝ ընդհանուր Խաղաղութեան շահերուն համար։

Այս հարցը այլապէս կը ներկայանայ մեզի։

Գերմանիան՝ որ կը ջանար իր ազդեցութեան տակ պահել ամբողջ Թուրքիան, մինչ Համաձայնական տէրութիւնները կ՚ուզէին զայն [մասերու] բաժնել, բնականաբար իր կայսերապաշտական շահերը պիտի հակադրէր Համաձայնականներու [շահերուն]. եւ պատգամաւորական ժողովը, Խաղաղութեան համար չուտափոյթ հաշտութեան մը յանգելու նպատակով, չէր կրնար մէկ կողմին շահերը նպաստաւորել ի հեճուկս միւս կողմին։

Բայց ռուսական յեղափոխութենէն ետք կացութիւնը այլեւս նոյնը չէ։ Ռուսիան բացարձակօրէն կը հրաժարի [հողային] *կցումներէն։ Ֆրանսան եւ Մեծն Բրիտանիան, որոնք՝ կցումներու կամ հոգատարութեանց ընդարձակման առաջադրանքով, կ՚ուզէին հակակշռել մասամբ ռուսական տիրապետութիւնը Փոքր Ասիոյ մէջ, անհրաժեշտօրէն պիտի բարեփոխէին իրենց ծրագիրները։ Այս փոփոխութիւնը թոյլ պիտի տայ որ «թրքական հարցերը» աշխարհին ներկայանան իրենց իսկական տեսքով։ Հայերը, արաբները, սուրիացիները, հրեաները, յոյները, քիւրտերը, քաղդէացիները եւայլն այսուհետեւ պիտի կարենան պահանջել ըլլայ անկախութիւն, ըլլայ ինքնավարութիւն կամ հոգատարութիւն՝ առանց տէրութիւններուն գործիք ծառայելու ամբաստանութեան տակ իյնալու։*

Ծանրութեան կեդրոնը այլեւս տէրութիւններու կայսերապաշտական ձգտումներուն մէջ չէ, այլ՝ Թուրք ղեկավարներու լուծին տակ տառապող ժողովուրդներուն։

Հետեւաբար չենք գտնուիր Թուրքիոյ բաժանման [հարցին] *առջեւ, ուր տէրութեան մը շահերը դէմ յանդիման կը գտնուին ուրիշի մը շահերուն, այլ Թուրքիոյ* անդամահատութեան,— *բնական գործընթաց, պատմականօրէն անհրաժեշտ, ուր ժողովուրդներու ազատութեան ձգտումները հակադրուած են կրակի եւ սուրի վարչակարգին։*

Այս փոփոխութեան լոյսին տակ Գերմանիա կը կորսնցնէ Օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնը պաշտպանելու պատճառաբանութիւնը։ Եթէ շարունակէ ընել եւ, հետեւաբար, ընդդիմանալ հայկական հարցի եւ ուրիշ «թրքական խնդիրներու» լուծումին, այդ կը նշանակէ հարուածել *սկզբունքն իսկ, որ [կը դաւանի] ժողովուրդներու իրաւունքը ազատօրէն տնօրինելու իրենց ճակատագիրը. սկզբունք՝ Գերմանիոյ իսկ կողմէ ճանաչում գտած որոշ պարագաներու համար։*

Միջազգային ժողովրդավարութիւնը իր սկզբունքներուն դէմ գործած պիտի ըլլար, եթէ «թրքական խնդիրներու» հիմնական լուծման իւրաքանչիւր պարագային, անհրաժեշտ գտնէր հաշուի առնել գերմանական կայսերապաշտութեան հայեացքները, փոխանակ ամենայն զօրութեամբ պայքարելու անոնց դէմ։

Фшшт. 1685-1

MEMORANDUM DE LA FEDERATION REVOLUTIONNAIRE ARMENIENNE "DACHNAKZOUTIOUN"

La paix immédiate est d'un intérêt primordial pour l'Arménie dévastée.

Elle doit être conclue sur la base de trois principes, énoncés par la démocratie russe. Mais si nous sommes adversaires des *contributions de guerre*, nous trouvons équitable de réclamer des indemnités pour les pays ruinés, surtout par des violations des droits des gens et des conventions internationales. Pareille sanction diminuerait sensiblement les risques des guerres futures.

Nous sommes également, comme nous l'étions avant la guerre, adversaires des annexions violentes. Mais comme ce principe donnait lieu à des interprétations diverses, l'assemblée générale de notre parti, tenue à Tiflis le 6-12 avril 1917, a trouvé nécessaire de souligner qu'elle considérerait comme acte antidémocratique non seulement l'annexion forcée des pays conquis, mais aussi le rattachement forcé des peuples à leurs anciens maîtres. Le principe "pas d'annexions" ne doit pas être traité isolément, mais éclairé à la lumière du principe du "droit des peuples de disposer librement d'eux-mêmes"

Nous joignons donc notre voix à celle des autres partis, qui demandent le rétablissement complet de la Belgique, de la Serbie, du Montenegro, de la Roumanie, de même que de la Pologne, unie et indépendante. Toutes les régions, enlevées à la Russie (sauf la Pologne russe), doivent être restituées à la République qui garantit à ses peuples le droit de disposer librement d'eux-mêmes. L'assemblée constituante de la Russie devra garantir toute liberté à la Finlande, L'Alsace-Lorraine qui a été détachée de force de la France, doit revenir à celle-ci, mais dans l'intérêt de la paix en Europe, il sera peut-être bon qu'un referandum de la population indigène et expatriée détermine finalement le sort de ces provinces. Les intérêts des peuples des Balkans exigent la création de la Confédération Balkanique. La Macédoine aura la liberté de décider de son propre sort, c'est à dire qu'elle pourra faire partie de la Confédération, comme unité indépendante ou se rattacher à l'un des Etats voisins.

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ Ռոստոմի ներկայացուցած Յուշագիրը Ստոկհոլմի Ընկերվար Միջազգայնական Համագումարին (1917)

Թարգմանութիւնը (1).—

Անմիջական խաղաղութեան հաստատումը առաջնակարգ նշանակութիւն ունի աւերեալ Հայաստանի համար։

Ան պէտք է կնքուի ռուսական ժողովրդավարութեան հռչակած երեք սկզբունքներուն հիման վրայ։ Եթէ մենք հակառակ ենք պատերազմական հարկադրանքի *գաղափարին, բայց եւ այնպէս կը գտնենք որ արդար է հատուցում պահանջել մասնաւորաբար այն երկիրներու համար, որոնք աւերուած են՝ մանաւանդ մարդկային իրաւունքներու եւ միջազգային դաշնագիրներու դրժումին հետեւանքով։ Այդպիսի պատժամիջոց մը զգալիօրէն պիտի նուազեցնէր ապագայ պատերազմներու վտանգը։*

Հակառակ ենք նոյնպէս, ինչպէս էինք նախապէս, հողային բռնագրաւումներուն։ Եւ որովհետեւ այս սկզբունքը տարբեր մեկնաբանութիւններու տեղի կու տար, մեր կուսակցութեան ընդհանուր [ռայոնական] *ժողովը* (*գումարուած Թիֆլիս*, 1917 *թ*. 6-12 *Ապրիլին*) *հարկ տեսաւ ընդգծելու որ հակաժողովրդավարական կը նկատէ ոչ միայն նուաճուած երկիրներու բռնագրաւումը, այլ նաեւ ժողովուրդներու ենթարկումը իրենց նախկին բռնակալներուն։ «Ոչ կցումի» սկզբունքը պէտք չէ գործադրել անջատաբար, այլ տեսնել զայն «ժողովուրդներու ազատօրէն ինքնորոշուելու» սկզբունքին լոյսին տակ։*

Հետեւաբար կը միանանք բոլոր անոնց, որոնք կը պահանջեն ամբողջական վերահաստատումը Պելկիոյ, Սերպիոյ, Մոնթենեկրոյի, Ռումանիոյ, ինչպէս նաեւ միացեալ եւ անկախ Լեհաստանի։ Ռուսիայէն գրաւուած բոլոր շրջանները (*բացի ռուսական Լեհաստանէն*) *պէտք է վերադարձուին* [ռուս] *Հանրապետութեան, որ կ՚երաշխաւորէ իր ժողովուրդներուն ազատ ինքնորոշման իրաւունքը։ Ռուսիոյ Սահմանադիր ժողովը պէտք է երաշխաւորէ ամէն ազատութիւն Ֆինլանտային. Ֆրանսայէն խլուած Ալզաս-Լոռէնը պէտք է վերադարձուի իրեն, բայց եւրոպական խաղաղութիւնը պահպանելու համար, թերեւս լաւ է որ բնիկ եւ տարագրեալ ժողովուրդի մասնակցութեամբ հանրաքուէի մը միջոցաւ վճռուի վերջնական ճակատագիրը այս նահանգներուն։ Պալքանեան ժողովուրդներու շահերը կը պահանջեն ստեղծումը Պալքանեան Համադաշնակցութեան մը։ Մակեդոնիան պէտք է իրաւունք ունենայ որոշելու իր ճակատագիրը, այսինքն ան պէտք է կարենայ մաս կազմել Համադաշնակցութեան որպէս անկախ միաւոր եւ կամ միանալ դրացի պետութիւններէն մէկն ու մէկին։*

1.- Ռոստոմի այս ծաւալուն տեղեկագրին ֆրանսերէն բնագիրը հրատարակուած է Միջազգայնականի համագումարի կողմէ կազմուած հատորին մէջ (Ed. Tidens Forlag, Stockholm, 1918):

Nous réclamons pour tous les pays, où il y a des minorités nationales, l'adoption du principe d'autonomie terrioriale ou culturelle.

Pour la Turquie, la Russie et la Perse, où est concentrée l'activité de notre parti, nous soulignons les revendications suivantes:

1. L'Arménie Russe doit être, avec la Géorgie et la Tartarie (de Transcaucasie) autonome au sein de la Russie Fédérative et Républicaine dont la loi fondamentale sera réglée par l'Assemblée Constituante.

2. Le droit de disposer librement d'elle-même ne peut être refusé à la Perse, qui a droit à l'indépendance politique complète. La Grande Bretagne et la Russie doivent enlever toutes les entraves imposées au libre développement de la Perse Constitutionnelle. Le régime féodal et théocratique doit y être supprimé complètement et l'Etat organisé et constitué sur des bases largement démocratiques. Les libertés nationales, culturelles, dont jouissent en fait les Arméniens, doivent être développées et fixées par la loi fondamentale.

3. Nous attirons l'attention de la démocratie internationale sur l'état tout exceptionel de l'Arménie sous la domination des Turcs.

Toute la politique des dirigeants turcs tendait à diminuer le nombre des Arméniens dans leur patrie et à y augmenter la masse musulmane. Si le sultan Abdul Hamid avait encore accentué la politique traditionnelle basée sur l'extermination des Arméniens, les Jeunes Turcs ont suivi des directions identiques et décidé d'achever d'un coup la tâche que le Sultan Selim avait imposée à ses successeurs. Les provinces arméniennes, actuellement sous la domination des Turcs, sont presque vidées d'éléments arméniens et l'application littérale du principe énoncé ci-dessus serait, dans les circonstances présentes, une grande injustice, car ce ne seraient que les occupants qui seraient appelés à donner leur avis.

Nous demandons donc:

1. Que la démocratie internationale fasse son possible pour mettre fin à la tragédie séculaire arménienne, tolérée jusqu'à présent à cause des rivalités des puissances impérialistes; que le territoire de l'Arménie soit rendu aux Arméniens qui ont mérité ce rétablissement par leur passé de luttes et que nos compatriotes expatriés aient la possibilité de revenir pour s'établir dans leurs foyers et se prononcer sur leur destinée nationale. Conformément au vœu énoncé par nos camarades français, il est du devoir de la démocratie internationale de prendre en considération non seulement les voix des survivants, mais aussi celles des victimes des dirigeants turcs, sinon la démocratie socialiste sanctionnerait une politique sanguinaire.

2. L'Arménie libre doit comprendre les 6 vilayets arméniens avec la Cilicie, excepté les régions musulmanes, annexées aux provinces arméniennes après la guerre russo-turque de 1877-1878.

3. L'Arménie devra être déclarée neutre et sa neutralité garantie internationalement.

4. Les régions de Hekkari (kurdes), de Djoulamerik (Chaldéens), de Botan, Ourfa (Kurdes), de Trépizonde (Lazes, Grecs et Arméniens), La Syrie et la Palestine

Ազգային փոքրամասնութիւններ ունեցող բոլոր երկիրներուն համար կը պահանջենք որ որդեգրուի հողային կամ մշակութային ինքնավարութեան սկզբունքը։

Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի համար, ուր կեդրոնացած է մեր կուսակցութեան գործունէութիւնը, կարեւոր կը նկատենք հետեւեալ պահանջները.—

1) *Ռուսահայաստանը, Վրաստանի եւ Կովկասի թաթարներուն հետ, պէտք է ըլլայ ինքնավար՝ Դաշնային եւ Հանրապետական Ռուսիոյ ծիրին մէջ, որուն հիմնական օրէնքը պիտի ճշդուի Սահմանադիր ժողովին կողմէ։*

2) *Ազատ ինքնորոշման իրաւունքը կարելի չէ մերժել Պարսկաստանին, որ քաղաքական ամբողջական անկախութեան իրաւունք ունի։ Մեծն Բրիտանիան եւ Ռուսիան պէտք է վերցնեն Սահմանադրական Պարսկաստանի ազատօրէն զարգացման դէմ պարտադրուած բոլոր խոչընդոտները։ Ամբողջովին պէտք է ջնջուի հոն տիրող աւատատիրական եւ աստուածպետական վարչակարգը, եւ պետութիւնը պէտք է կազմակերպուի լայնօրէն ժողովրդավարական հիմերու վրայ։ Հայերուն՝ իրողապէս վայելած ազգային եւ մշակութային ազատութիւնները պէտք է ընդլայնուին եւ ամրագրուին հիմնական օրէնքով։*

3) *Միջազգային ժողովրդավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք թուրքերու տիրապետութեան տակ գտնուող Հայաստանի բացառիկ կացութեան վրայ։*

Թուրք ղեկավարներու ամբողջ քաղաքականութիւնը կը ձգտէր հայերու թիւը նուազեցնել իրենց հայրենիքին մէջ, եւ հոն աւելցնել մահմետական զանգուածը։ Եթէ սուլթան Ապիւլ Համիտ աւելի եւս չեչտած էր՝ հայերը բնաջնջելու աւանդական քաղաքականութիւնը, Երիտասարդ Թուրքերը, միեւնոյն ուղղութեան հետեւելով, որոշեցին մէկ հարուածով աւարտին հասցնել այն գործը զոր սուլթան Սելիմ պարտադիր դարձուցած էր իր յաջորդներու համար։ Ներկայիս թուրքերու տիրապետութեան տակ գտնուող հայկական նահանգները գրեթէ պարպուած են հայ տարրերէն, եւ այժմու պայմաններուն մէջ յիշեալ սկզբունքին տառացի գործադրութիւնը մեծ անարդարութիւն պիտի ըլլար, որովհետեւ զաւթողներուն միայն կարծիքը պիտի առնուի։

Հետեւաբար, կը պահանջենք՝

1) *Որ միջազգային ժողովրդավարութիւնը իր կարելին ի գործ դնէ վերջ տալու համար հայոց դարաւոր ողբերգութեան՝ հանդուրժուած մինչեւ այսօր կայսերապաշտ պետութիւններու մրցակցութեան պատճառաւ. որ՝ Հայաստանի հողամասը վերադարձուի հայերուն, որոնք արժանի են այդ հատուցման իրենց անցեալի մարտնչումներով, եւ որպէսզի տարագրուած մեր հայրենակիցները կարենան վերադառնալ իրենց օճախները եւ վճռել իրենց ազգային ճակատագիրը։ Մեր Ֆրանսացի ընկերներու արտայայտած բաղձանքին համաձայն, միջազգային ժողովրդավարութեան պարտականութիւնն է հաշուի առնել ոչ միայն վերապրողներու ձայները, այլեւ թուրք ղեկավարներու զոհերուն (ձայնը), այլապէս ընկերվար ժողովրդավարութիւնը ընդունած ու վաւերացուցած պիտի ըլլար արիւնարբու քաղաքականութիւն մը։*

2) *Ազատ Հայաստանը պէտք է բովանդակէ հայկական* 6 *նահանգները եւ Կիլիկիան, բացի մահմետական շրջաններէ, որոնք հայկական նահանգներուն կցուած են* 1877—1878*-ի ռուսեւթուրք պատերազմէն ետք։*

3) *Հայաստանը պիտի յայտարարուի չէզոք եւ իր չէզոքութիւնը երաշխաւորուի միջազգայնօրէն։*

4) *Հեքքարիի (քիւրտ), Ջուլամերիկի (քաղդէացի) Պոհթանի, Ուրֆայի (քիւրտ), Տրապիզոնի (լազ, յոյն եւ հայ շրջանները), [ինչպէս նաեւ] Սուրիան եւ հրէական*

Juive formeront des unités séparées. La constitution de ces unités et leurs relations réciproques et internationales seront réglées après la guerre. La province kurde Dersime jouira de l'autonomie. Constantinople est déclarée ville libre.

5. Comme le souvenir des atrocités passées pourrait donner lieu à des nouveaux conflits, il serait nécessaire de faire des déplacements partiels de différents éléments habitant l'Arménie.

6. Les éléments musulmans installés en Arménie par les dirigeants turcs, dans un but politique, seront ramenés à leurs anciens foyers.

Nous demandons en outre:

1. Que du gouvernement turc soit exigé une indemnité pour les familles des Arméniens exterminés au cours de la guerre, pour toutes les ruines matérielles, qu'on ne saurait même justifier par des raisons d'ordre stratégique, pour l'avoir en argent, en bétail, en marchandises, en meubles, enlevés aux Arméniens, au cours des massacres et des déportations par le Trésor, par les fonctionnaires civils et militaires, par les membres du Comité Jeune Turc, par les bandes "tcheta"s, par les militaires et par la masse musulmane.

2. Que la démocratie internationale, en particulier les partis socialistes des puissances centrales et des Etats neutres agissent auprès de leurs gouvernements respectifs dans le but d'obtenir du gouvernement ottoman qu'il soit porté secours, par l'intermédiaire des pays neutres ou des alliés de la Turquie, aux survivants Arméniens, aux Syriens, Grecs et Juifs de Palestine. L'indifférence des partis socialistes, surtout des pays alliés à la Turquie, équivaut à participer à l'œuvre d'extermination de ce qui reste des Arméniens, pour la plupart femmes et enfants. Cette extermination est poursuivie par la voie lente par la faim, les privations et les maladies.

C'est aux pays neutres qu'incombe le but de poursuivre la conclusion de la paix. Mais comme le nombre de nations augmente [?] avec la marche des évènements, il est nécessaire que les représentants des Neutres fassent tout leur possible pour empêcher leurs pays de s'engager à leur tour dans la guerre actuelle.

La démocratie internationale ne peut compter dans les circonstances présentes, sur le concours du parlement et des partis socialistes en Turquie. Après la perte des provinces d'Europe, il n'est de socialistes en Turquie que parmi les Arméniens. Dans la grande catastrophe nationale arménienne, les Jeunes Turcs n'ont eu aucune raison d'épargner les socialistes. Au contraire, les premières victimes ont été notamment les membres des partis, les rédacteurs, même les membres du parlement ottoman. Parmi les membres de notre organisation, on n'a pu sauver que ceux qui ont pris les armes ou gagné les montagnes. Les rédactions, les clubs du parti, les Maisons du peuple, les riches bibliothèques, les organisations rurales, embrassant presque la totalité des paysans, celle d'ouvriers, les unions professionnelles, les coopérations, les sociétés auxiliaires de gymnastique, de chant, de

Պաղեստինը պիտի կազմեն անջատ միաւորներ։ Այս միաւորներու կազմութիւնը եւ անոնց փոխադարձ ու միջազգային յարաբերութիւնները պիտի որոշուին պատերազմէն ետք։ Տերսիմի քրտական նահանգը պիտի օժտուի ինքնավարութեամբ։ Կոստանդնուպոլիսը հռչակուած է [արդէն] ազատ քաղաք։

5) Որովհետեւ անցեալի սարսափները կրնան տեղի տալ նոր բախումներու, անհրաժեշտ պիտի ըլլայ մասնակի տեղափոխութիւններ կատարել Հայաստանի մէջ բնակող տարբեր տարրերու միջեւ։

6) Թուրք ղեկավարներու կողմէ՝ քաղաքական նպատակներով Հայաստանի մէջ տեղաւորուած մահմետական տարրերը պէտք է վերադարձուին իրենց նախկին վայրերը։

Կը պահանջենք նաեւ՝

1) Որ՝ հատուցում պահանջուի թրքական կառավարութենէն՝ պատերազմի ընթացքին բնաջնջուած հայ ընտանիքներուն՝ այն բոլոր նիւթական վնասներուն համար, զորս կարելի չէ արդարացնել մինչեւ իսկ ռազմավարական նկատումներով. հատուցում՝ այն բոլոր հարստութեանց՝ դրամ, անասուն, ապրանք, կարասի, որ խլուած են հայերէն պատերազմի եւ տարագրութեանց ընթացքին՝ [յօգուտ] պետական գանձին, քաղաքային եւ զինուորական պաշտօնեաներուն, Իթթիհատ կոմիտէի անդամներուն, չեթայական վոհմակներուն, զինուորականներուն եւ մահմետական զանգուածին կողմէ։

2) Որ՝ միջազգային ժողովրդավարութիւնը, մասնաւորապէս Առանցքի պետութեանց ընկերվար կուսակցութիւնները եւ չէզոք պետութիւնները ազդեցութիւն ի գործ դնեն իրենց համապատասխան կառավարութիւններուն վրայ, որպէսզի ստիպեն օսմանեան կառավարութիւնը որ, չէզոք երկիրներու կամ Թուրքիոյ դաշնակիցներու միջոցաւ, օգնութիւն հասցուի հայերուն, սուրիացիներուն, յոյներուն եւ Պաղեստինի հրեաներուն։ Թուրքիոյ դաշնակից երկիրներու ընկերվար կուսակցութիւններու անտարբերութիւնը կը նշանակէ մասնակից ըլլալ՝ մեծ մասամբ կիներէ եւ մանուկներէ բաղկացած ողջ մնացած հայերու բնաջնջումին։ Այս ոչնչացումը կը հետապնդուի [տակաւին] դանդաղօրէն՝ սովի, զրկանքներու եւ հիւանդութեանց ճամբով։

Չէզոք երկիրներու վրայ կ՚իյնայ նաեւ խաղաղութեան կնքումի գործին հետապնդումը։ Եւ սակայն, ինչպէս դէպքերու ընթացքը ցոյց կու տայ, [պատերազմիկ] ազգերու թիւը կ՚աւելնայ. անհրաժեշտ է որ չէզոք պետութիւնները ամէն ինչ ի գործ դնեն որպէսզի արգիլեն իրենց երկիրներուն՝ մասնակից դառնալ ներկայ պատերազմին։

Միջազգային ժողովրդավարութիւնը ներկայ պարագաներուն չի կրնար վստահիլ Թուրքիոյ խորհրդարանին եւ Թուրք ընկերվար կուսակցութիւններու բերելիք նպաստին։ Եւրոպական նահանգները կորսնցնելէ ետք, Թուրքիոյ մէջ, բացի հայերէն, ընկերվարականներ չեն մնացած։ Հայոց ազգային մեծ աղէտին մէջ, Երիտասարդ Թուրքերը ոչ մէկ ողջմտութիւն ունեցան խնայելու ընկերվարականներուն։ Ընդհակառակն, առաջին զոհերը դարձան յատկապէս կուսակցականները՝ խմբագիրներն ու նոյնիսկ օսմանեան խորհրդարանի անդամները։ Մեր կազմակերպութեան անդամներէն կարելի եղաւ փրկել միայն անոնք որ զէնք վերցուցին ու լեռները բարձրացան։ Խմբագրատուները, կուսակցութեան ակումբները, Ժողովրդային Տունները, ճոխ գրադարանները, ամբողջ գիւղացիութիւնը իրենց մէջ ընդգրկող երկրագործական ընկերութիւնները, բանուորական եւ արհեստակցական միու-

musique etc. Tout ce produit de travail obstiné des dizaines d'années d'organisation a été supprimé d'un seul coup par les constitutionnels de la Jeune Turquie.

Quant aux éléments d'opposition, musulmans et autres, parlementaires ou non, ils ne peuvent manifester leur opinion malgré leur nombre. Le régime Constitutionnel Jeune Turc étouffe la moindre opposition. Celle-ci ne pourra agir qu'en cas de victoire des Alliés, ou si le régime démocratique est établi en Allemagne.

La tranquilité dans nos régions et en général en Orient ne sera assurée que quand l'Europe sera reconstituée sur la base de la plus large démocratie. Le triomphe de la démocratie doit aboutir au désarmement général et élargir l'action de l'Internationale.

L'ARMENIE – HISTORIQUE

La Fédération révolutionnaire arménienne "Daschnakzoutioun" était le premier parti politique qui, pour la solution de la question arménienne, n'admettait pas comme condition sine qua non l'indépendance politique de l'Arménie, c'est à dire, la séparation de l'Arménie et de la Turquie. Bien que nous connaissions les tentatives faites par les réformateurs turcs,– des Richad, Ali, Fouad, Midhat paschas et autres,– qui au cours du XIXe siècle, ont travaillé à la régénérescence de la Turquie, et que nous en savions également les résultats stériles et quelquefois funestes, nous croyions que leur idée était féconde.

Nous attribuons les insuccès précédents à ce que les porteurs des idées réformatrices n'étaient que quelques groupes ou individualités, quoique haut placés, tandis que la masse musulmane restait entièrement réfractaire aux nouvelles idées. Nous savions aussi, que les réformateurs eux-mêmes n'étaient pas guidés par des convictions intimes, absolues de la nécessité vitale pour l'avenir de la Turquie, de réaliser toutes les mesures préposées et par conséquent, ils faisaient quelque fois semblant d'introduire des réformes dans le but d'obvier à l'intervention des puissances.

Mais nous pensions que le débâcle de 1877-1878 aurait amené un changement profond dans les esprits des Turcs. De plus, le fort courant des nouvelles idées démocratiques n'aurait pu laisser tout à fait indifférents les éléments musulmans en Turquie. Et le désir ardent de tous les dirigeants turcs d'éviter l'intervention des puissances dans les affaires intérieures de leur patrie aurait dû enfin pousser les futurs représentants de la Jeune Turquie à introduire sincèrement les réformes demandées.

Les mesures cruelles d'Abdul-Hamid envers les Turcs eux-mêmes démontraient suffisamment la présence réelle d'un vaste mécontentement contre l'ancien régime.

Et nous croyions opportun de poursuivre notre but, autant que possible, avec le concours des autres éléments habitant la Turquie.

թիւնները, համագործակցականները, մարմնամարզական, երգչախմբային, երաժշտական յարակից միաւորները եւայլն,— Տասնեակ տարիներու յարատեւ ջանքերու արդիւնք այս կազմակերպութիւնը — մէկ հարուածով ջնջուեցաւ Երիտասարդ եւ Սահմանադրական Թուրքիոյ կողմէ։

Ինչ կը վերաբերի ընդդիմադիր տարրերուն, մահմետական ըլլան անոնք թէ այլ, խորհրդարանական կամ ոչ, հակառակ իրենց մեծ թուին, չեն կրնար անոնք արտայայտել իրենց կարծիքը։ Երիտասարդ Թուրքերու սահմանադրական վարչակարգը կը խեղդէ նուազագոյն ընդդիմութիւնն իսկ։ Ընդդիմադիրները պիտի չկարենան գործել բացի այն պարագայէն երբ Դաշնակիցները յաղթական դուրս գան, կամ եթէ ժողովրդավար վարչակարգ հաստատուի Գերմանիոյ մէջ։

Մեր շրջաններուն եւ առհասարակ Արեւելքի մէջ խաղաղութիւն կրնայ հաստատուիլ միայն այն ժամանակ, երբ Եւրոպան կը վերակազմուի աւելի լայն ժողովրդավարական հիմերու վրայ։ Ժողովրդավարութեան յաղթանակը պէտք է յանգի ընդհանուր ապագինումի եւ միջազգային ընկերվարութեան գործունէութեան ընդլայնումին։

ՀԱՅԱՍՏԱՆ — [ՀԱՐՑԻՆ] ՊԱՏՄԱԿԱՆԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը քաղաքական առաջին կուսակցութիւնն էր, որ հայկական հարցի լուծումին համար նախապայման չդրաւ Հայաստանի քաղաքական անկախութիւնը, այսինքն Հայաստանի եւ Թուրքիոյ բաժանումը։ Թէեւ ծանօթ էինք թուրք բարեկարգիչներ՝ Ռեշատ, Ալի Ֆուատ, Միտհատ փաշաներու փորձերուն, որոնք ԺԹ. դարու ընթացքին ջանքեր թափեցին Թուրքիոյ վերանորոգութեան համար. ծանօթ էինք նոյնպէս անոնց ապարդիւն եւ երբեմն աղէտալի հետեւանքներուն. կը հաւատայինք այսուհանդերձ որ իրենց [վերանորոգչական] գաղափարը արդիւնաւոր կը դառնայ։

Ձախողութիւնը կը վերագրէինք այն իրողութեան որ բարեկարգչական գաղափարներ կրողները քանի մը խմբակներ էին միայն, կամ բարձրաստիճան կարգ մը անհատականութիւններ, մինչ մահմետական զանգուածը ամբողջովին կը հակառակէր նոր գաղափարներուն։ Գիտէինք նոյնպէս որ բարեկարգիչները, իրենք, առաջնորդուած չէին ներքին ու բացարձակ այն համոզումով, որ Թուրքիոյ ապագային համար կենսական նշանակութիւն ունէր առաջադրուած միջոցներու իրագործումը եւ, հետեւաբար, երբեմն կը ձեւացնէին որ բարենորոգումները կ՚ընէին պարզապէս առաջքն առնելու համար [եւրոպական] պետութեանց միջամտութեան։

Կը խորհէինք որ 1877—78-ի [պատերազմին] վերիվայրումները խոր փոփոխութիւն առաջացուցած կ՚ըլլան Թուրքերու մտայնութեան մէջ։ Աւելին, ժողովրդավարական նոր գաղափարներու հոսքը չէր կրնար բոլորովին անտարբեր թողուլ Թուրքիոյ մահմետական տարրերը։ Թուրք բոլոր ղեկավարներու ջերմ փափաքը եւս, որ կը ձգտէր խուսափիլ իրենց հայրենիքի ներքին գործերուն մէջ մեծ պետութիւններու միջամտութիւններէն, պէտք է ի վերջոյ մղէր Երիտասարդ Թուրքիոյ ապագայ ներկայացուցիչները, որ անկեղծօրէն հետամուտ ըլլան պահանջուած բարեկարգումներու իրագործումին։

Ապտիւլ Համիտի գործածած դաժան միջոցները Թուրքերուն իսկ նկատմամբ, բաւարար փաստ էին որ մեծ դժգոհութիւն մը կար հին վարչակարգին դէմ։

Եւ մենք յարմար կը գտնէինք մեր նպատակը հետապնդել, որքան կարելի էր, Թուրքիա ապրող միւս տարրերու գործակցութեամբ։

D'après les décisions de l'assemblée générale en 1892, le parti *Daschnakzoutioun* dans sa lutte acharnée et implacable contre le régime despotique, cherchait à attaquer de préférence les causes du mal dont souffraient non seulement les Arméniens, mais aussi les autres peuples. En propageant l'idée de la solidarité de toutes les nationalités, le parti faisait des efforts spéciaux pour découvrir surtout les éléments d'opposition parmi les Turcs et contribuer à l'organisation des premiers cadres révolutionnaires de la race dominante. L'organe central du parti "Droschak" ne laissait échapper aucune occasion pour souligner la différence que mettait le parti entre le gouvernement turc et le peuple turc, et pour démontrer aussi que notre lutte était dirigée exclusivement contre le gouvernement, même après les évènements sanglants de 1895, lorsque toute la presse vociférait contre les atrocités des Musulmans en général, "Droschak" m'hésita pas à plaider pour la masse musulmane, quoique celle-ci fût dans sa majeure partie impregnée du sang de centaines de milliers d'Arméniens. Nous la regardions comme un instrument inconscient dans les mains du gouvernement du Sultan Abdul-Hamid, seul responsable des horreurs. Nous avons même jugé opportun de déclarer par notre organe "Droschak" de même que le rapport du parti présenté au Congrès International socialiste de Londres (1896), que nous aspirions à l'autonomie de l'Arménie au sein de la Turquie régénérée, démocratique et fédérative.

Des relations immédiates furent établies entre nous et les Jeunes Turcs émigrés en Europe, et grâce aux efforts persévérants du parti, le premier comité révolutionnaire Jeune Turc fut enfin crée en 1897 à Genève. Son manifeste, publié en des milliers d'exemplaires, fut distribué aux musulmans en Turquie comme en Perse par l'intermédiaire de nos organisations. En même temps on projeta une action commune à Constantinople.

Nos liens avec les Jeunes Turcs devinrent plus intimes après l'arrivée à Paris et à Genève de Tamat Mahmoud pascha, de ses fils et d'autres réfugiés aux tendances plus libérales et plus révolutionnaires. Les Jeunes Turcs écrivaient dans notre organe, en développant leurs vues de solidarité. Ils publiaient des brochures, lançaient des proclamations que nous distribuons dans nos régions en grande quantité.

En même temps, les négociations furent engagées (depuis 1897) dans l'intérieur du pays avec les Turcs et les Kurdes. Peu à peu, elles aboutirent à l'action. Les comités mixtes publièrent des journaux et des proclamations en turc (Van, Erzeroum, Mouch), et les actions communes sur le terrain politique, agraire, venaient rompre les entraves imposées par les traditions séculaires. Pour montrer l'importance du changement produit, il suffit de rappeler que lors de la révolte à Erzeroum, en 1906, organisée de commun accord, les chefs turcs défendirent aux camarades arméniens toute participation aux manifestations publiques, et après les arrestations en masse des Turcs, pas un Arménien ne fut dénoncé, malgré les tortures habituelles dans les prisons. A Van, ce fut grâce au large concours des kurdes que notre Comité Central put transporter en 1907 des milliers de fusils et plus d'un million de cartouches. Dans les provinces de Van et de Mouch, les paysans kurdes se mettaient volontiers sous la protection de nos comités pour lut-

1892 տարուան Ընդհ. Ժողովի որոշումներուն համաձայն, Հ. Յ. Դաշնակցութիւնը, բռնատիրական վարչակարգին դէմ իր մղած կատաղի ու անողոք պայքարի ընթացքին, կը ջանար նախընտրաբար թիրախ ընտրել չարիքին այն պատճառները, որոնցմէ կը տառապէին ոչ միայն հայերը, այլ նաեւ միւս ժողովուրդները։ Ջատագով հանդիսանալով բոլոր ազգերու միասնութեան, կուսակցութիւնը յատուկ ճիգ կը թափէր յատկապէս թուրք ընդդիմադիր տարրերուն մէջ, նպատակ ունենալով «տիրող ցեղի» յեղափոխական առաջին շարքերու կազմակերպումը։ Կուսակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»ը ոչ մէկ առիթ կը փախցնէր ընդգծելու համար այն տարբերութիւնը որ կուսակցութիւնը կը դնէր թուրք կառավարութեան եւ թուրք ժողովուրդին միջեւ, փաստելու համար նոյնպէս, որ մեր պայքարը ուղղուած էր բացառապէս կառավարութեան դէմ եւ այս՝ նոյնիսկ 1895-ի արիւնալի դէպքերէն ետք, երբ մամուլը բարձրաղաղակ կը մեղադրէր բոլոր մահմետականները ընդհանրապէս, իսկ «Դրօշակ» չվարանեցաւ պաշտպանելու մահմետական զանգուածը, հակառակ անոր որ մեծամասնութեամբ այս վերջինիս ձեռքերը թաթխուած էին հարիւր հազարաւոր հայերու արեան մէջ։ Մենք կը նկատէինք զայն իբրեւ անգիտակից գործիք սուլթան Ապտիւլ Համիտի կառավարութեան ձեռքին,— միակ պատասխանատուն գործուած գազանութիւններուն։ Յարմար դատեցինք նոյնիսկ յայտարարելու մեր պաշտօնաթերթ «Դրօշակ»ով եւ Լոնտոնի մէջ կայացած Միջազգային ընկերվար համագումարին ներկայացուցած տեղեկագրին մէջ, որ կը ձգտինք Հայաստանի ինքնավարութեան՝ վերանորոգ, ժողովրդավար եւ դաշնակցային Թուրքիոյ շրջագծին մէջ։

Անմիջական յարաբերութիւններ հաստատուեցան մեր եւ Եւրոպա գաղթած Երիտասարդ Թուրքերու հետ եւ շնորհիւ կուսակցութեան հետեւողական ճիգերուն, վերջապէս 1897-ին Ժընեւի մէջ ստեղծուեցաւ Երիտասարդ թուրքերու յեղափոխական առաջին կոմիտէն։ Իր յայտարարութիւնը, հազարաւոր օրինակներով տպուած, մեր կազմակերպութիւններու միջոցաւ բաժնուեցաւ Թուրքիոյ, ինչպէս նաեւ Պարսկաստանի մահմետականներուն։ Միեւնոյն ժամանակ, ձեռնարկուեցաւ համատեղ գործունէութեան մը Կոստանդնուպոլսոյ մէջ։

Մեր կապերը Երիտ. թուրքերուն հետ աւելի սերտացան՝ Տամատ Մահմուտ փաշայի, իր որդիներուն եւ աւելի ազատական ու յեղափոխական ձգտումներ ունեցող այլ գաղթականներու Ժընեւ եւ Փարիզ հասնելէն ետք։ Երիտ. թուրքերը կը գրէին մեր պաշտօնաթերթին մէջ, միասնականութեան տեսակէտներ զարգացնելով։ Կը հրատարակէին պրոշիւրներ եւ յայտարարութիւններ, զորս մեծ քանակութեամբ կը ցրուէինք մեր շրջաններուն մէջ։

Միեւնոյն ատեն, 1897-էն սկսեալ բանակցութիւններ սկսան երկրին ներսը թուրքերուն եւ քիւրտերուն հետ։ Հետզհետէ գործի վերածուեցան անոնք։ Խառն կոմիտէները թուրք լեզուով լրագիրներ եւ յայտարարութիւններ հրատարակեցին Վանի, Էրզրումի եւ Մուշի մէջ. այսպէս, քաղաքական եւ երկրագործական գետնի վրայ տարուած գործունէութիւնը կու գար քանդելու դարաւոր աւանդութեանց պարտադրած արգելքները։ Ցոյց տալու համար տեղի ունեցած փոփոխութեանց կարեւորութիւնը, կը բաւէ յիշել որ միասնաբար կազմակերպուած 1906-ի Էրզրումի ըմբոստութեան ատեն, թուրք ղեկավարները թոյլ չտուին որ հայ ընկերները որեւէ մասնակցութիւն ունենան հրապարակային ցոյցերուն մէջ, եւ մեծ թիւով թուրքերու ձերբակալութենէն ետք, եւ հակառակ բանտերու մէջ ի գործ դրուած սովորական չարչարանքներուն, ո՛չ մէկ հայ մատնուեցաւ։ Վանի մէջ քիւրտերու լայն օժանդակութեան շնորհիւ է որ 1907ին մեր Կեդր. կոմիտէն յաջողեցաւ հազա-

ter contre les vexations des beys féodaux. Le second Congrès (le premier congrès qui eut lieu en 1902, n'eut aucun résultat pratique à cause de l'opposition que fit le groupe d'Ahmed Riza "Union et Progrès" à la tactique révolutionnaire) à Paris des Jeunes Turcs et des révolutionnaires arméniens (décembre 1907), dû à l'initiative de l'assemblée générale de notre parti (mars 1907), pris à Vienne, eut un grand retentissement dans les cercles turcs avancés et à nos yeux il fut le couronnement de nos efforts de 15 ans. C'est dans ce congrès qu'un accord formel fut établi entre le parti *Daschnakzoutioun* et les Jeunes Turcs dans le but de renverser Abdul-Hamid et de rétablir la constitution. C'est là où la méthode révolutionnaire fut adoptée par tous les Jeunes Turcs et que l'on traça une action commune.

La Révolution, survenue en 1908, l'exaltation générale à Constantinople et dans les provinces, les manifestations ininterrompues, les discours ardentes, les appels à la fraternité et à l'union semblaient annoncer,– comme on le rêvait alors,– le commencement d'une nouvelle ère dans l'histoire lugubre de la Turquie.

Il semblait que les idées des Richad, Midhat et autres réformateurs sans succès avaient enfin trouvé dans la personne des Jeunes Turcs de 1908 leurs heureux interprètes. On s'imaginait que le chartes des libertés, proclamées si solennellement en 1839 et en 1856 et restées lettres mortes, étaient déjà en voie de réalisation. Et vraiment, la liberté de la presse, de la parole, l'égalité des peuples fut affirmée. Toutes les restrictions, décrétées contre les Arméniens en qualité de révolutionnaires, furent immédiatement abolies. Condamnés politiques et les émigrés furent amnistiés et reçus avec de grands honneurs. On leur témoigna la plus haute considération et en même temps une confiance entière pour remplir les charges publiques. Tout cela suffisait à fortifier l'espérance que les nouvelles idées étaient pénétrées dans les masses et que la Turquie pouvait cette fois traverser la crise historique sans devoir subir une nouvelle réaction.

Le gouvernement Jeune Turc eut même l'audace d'expulser des régions arméniennes les musulmans qui y avaient été introduits sous l'ancien régime, pour livrer les terres aux propriétaires arméniens qui avaient été forcés d'émigrer au Caucase, en Perse, en Amérique et ailleurs.

La Jeune Turquie gagnait non seulement nos sympathies, mais aussi la confiance de certaines puissances qui pensaient même abolir les capitulations et prêter leur large concours à la consolidation définitive du nouveau régime. A cette dernière circonstance, les Jeunes Turcs accordaient une importance spéciale et si, dans la suite, ils s'abstenaient d'excès manifestes contre les autres nationalités, c'est qu'ils ne voulaient pas perdre les sympathies de l'Europe.

L'entente entre le Parti "Daschnakzoutioun" et le Comité Jeune Turc, établie avant la Révolution pour rétablir la constitution ottomane, fut jugée nécessaire aussi pour la première période de la Constitution – malgré la divergence des vues des deux organisations – dans l'unique but de consolider le nouveau régime et de mener à bout la lutte contre les féodaux dans nos régions, lutte également néces-

բաւոր հրացաններ եւ աւելի քան մէկ միլիոն փամփուշտ փոխադրել։ Վանի եւ Մուշի նահանգներուն մէջ, քիւրտ գիւղացիները կամովին մեր կոմիտէներու պաշտպանութեան կ՚ապաւինէին՝ պայքարելու համար աւատատէր պէյերու հարստահարութեանց դէմ։ Երիտ. Թուրքերու եւ հայ յեղափոխականներու 1902-ի առաջին համագումարը գործնական ոչ մէկ արդիւնք տուած էր՝ Ահմէտ Ռիզայի «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» խմբակին յեղափոխական մարտավարութեան ընդդիմանալուն պատճառաւ։ 1907 թ. Դեկտեմբերին Փարիզի երկրորդ համագումարը, որ կայացած էր մեր կուսակցութեան Վիեննայի Ընդհ. ժողովի նախաձեռնութեամբ (Մարտ 1907), մեծ արձագանգ գտաւ Թուրք առաջաւոր շրջանակներուն մէջ եւ, մեր տեսակէտով, հանդիսացաւ պսակումը 15 տարիներու մեր ջանքերուն։ Այս համագումարին մէջ է որ բացայայտ համաձայնութիւն գոյացաւ Դաշնակցութեան եւ Երիտ. Թուրքերու միջեւ՝ Ապտիւլ Համիտը տապալելու եւ Սահմանադրութիւնը վերահաստատելու նպատակով։ Հո՛ն է որ բոլոր երիտասարդ Թուրքերու կողմէ որդեգրուեցաւ յեղափոխական գործելակերպը եւ գծուեցաւ հասարակաց գործունէութեան մը ծրագիրը։

1908 թ. յեղափոխութիւնը, Կոստանդնուպոլսոյ եւ գաւառներուն մէջ անոր առաջացուցած ընդհանուր խանդավառութիւնը, անընդհատ տեղի ունեցող ցոյցերը, կրակոտ ճառերը, եղբայրակցութեան եւ միութեան ուղղութեամբ արձակուած կոչերը կարծես կ՚աւետէին, ինչպէս կ՚երեւակայէինք այն ատեն — նոր դարաշրջանի մը սկզբնաւորումը՝ Թուրքիոյ եղերական պատմութեան մէջ։

Կը թուէր թէ Ռեչատներու, Միտհատներու եւ միւս բարեկարգիչներու յաջողութիւն չգտած գաղափարները, ի վերջոյ, յանձին 1908-ի Երիտ. Թուրքերուն, գտած էին իրենց երջանիկ կենսագործողները։ Կը թուէր թէ ազատութեան հրովարտակները, այնքա՜ն հանդիսաւոր կերպով հռչակուած 1839-ին եւ 1856-ին եւ մեռեալ տառ մնացած, իրագործման ճամբուն վրայ են արդէն։ Եւ իսկապէս, հաստատուեցան մամլոյ եւ խօսքի ազատութիւնը, ժողովուրդներու հաւասարութիւնը։ Հայերու դէմ (իբրեւ յեղափոխականներու) արձակուած բոլոր հրամանները անմիջապէս ջնջուեցան։ Քաղաքական բանտարկեալներն ու գաղթականները ներումի արժանացան եւ ընդունուեցան մեծ պատիւներով։ Մեծ յարգանք ցոյց տրուեցաւ անոնց եւ միեւնոյն ժամանակ վստահութիւն՝ հանրային գործերը վարելու։ Այս բոլորը բաւ էին ամրապնդելու այն յոյսը, որ նոր գաղափարները թափանցած էին զանգուածներուն մէջ եւ որ Թուրքիան այս անգամ կրնար շրջանցել պատմական տագնապը, զերծ մնալով յետադիմական նոր շարժումի մը ենթարկուելու վտանգէն։

Երիտ. Թուրքերու կառավարութիւնը յանդգնեցաւ նոյնիսկ հայկական շրջաններէն վտարելու նախկին վարչակարգի կողմէ բերուած մահմետականները, եւ հողերը վերադարձնելու հայ սեփականատէրերուն, որոնք պարտադրուած՝ գաղթած էին Կովկաս, Պարսկաստան, Ամերիկա եւ այլուր։

Երիտասարդ Թուրքիան կը շահէր ոչ միայն մեր համակրանքը, այլեւ վստահութիւնը որոշ պետութիւններու, որոնք նոյնիսկ կը խորհէին ջնջել քափիթիւլասիոնները եւ լայնօրէն օժանդակել նոր վարչակարգին վերջնական ամրապնդումին։ Երիտ. Թուրքերը մասնաւոր կարեւորութիւն կ՚ընծայէին այս խնդրին, եւ եթէ հետագային միւս ազգութիւններուն դէմ բացայայտ ծայրայեղութիւններէ խուսափեցան, պատճառը այն էր որ չէին ուզեր կորսնցնել Եւրոպայի համակրանքը։

Յեղափոխութենէն առաջ, եւ օսմանեան սահմանադրութիւնը վերահաստատելու նպատակով՝ Հ. Յ. Դաշնակցութեան եւ Երիտ. Թուրքերու համերաշխութիւնը — հակառակ երկու կազմակերպութեանց միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութեանց

saire aux deux partis. D'ailleurs, le Comité Jeune Turc était seul à fixer ses racines dans les couches démocratiques du peuple turc.

Pourtant la lune de miel de la Révolution Jeune Turque ne fut pas de longue durée, et notre parti eut à subir de nombreuses déceptions, qui devinrent de plus en plus cruelles.

La première eut lieu après le contre-coup des réactionnaires, acolytes d'Abdul Hamid, le 31 mars 1909. Le mouvement fut, il est vrai, vite étouffé. Constantinople fut repris par l'armée constitutionnelle et Abdul Hamid fut déclaré déchu. Mais cette victoire des Jeunes Turcs fut le commencement de la défaite des idées jeunes Turcs. Au lieu de combattre l'esprit réactionnaire, au risque même de perdre provisoirement le pouvoir, les Jeunes Turcs trouvèrent mieux d'aller par la voie de la moindre résistance dans leur lutte contre les réactionnaires. Comme ceux-ci exploitaient le "Chariath" en présentant les Jeunes Turcs comme des athés, comme des instruments des infidèles, comme des guiaours, les "nouveaux réformateurs" commencèrent à se montrer fanatiques de l'Islam, et partant adversaires des Chrétiens.

Le congrès de Salonique des Jeunes Turcs vint démontrer que la politique des Vieux Turcs gagnait de plus en plus de terrain sous le drapeau de la Jeune Turquie.

En analysant, dans ce congrès, la situation du pays, créée après le régime constitutionnel, les dirigeants turcs ne le trouvèrent pas consolante. Mais au lieu d'en chercher les causes dans leur incapacité de réaliser les principes énoncés par eux-mêmes, ils vinrent à la conclusion, que ces principes, n'étaient pas compatibles avec la psychologie des masses musulmanes, étaient contraires aux intérêts de la Turquie, comme Etat musulman et turc par excellence. De cette manière, les bases de l'ottomanisme, au nom duquel les Jeunes Turcs combattaient les tendances séparatistes des divers nationalités, furent ébranlées par eux-mêmes. Et le principe de l'ottomanisme, qui d'après la conception des Jeunes d'avant la Révolution, devait signifier l'égalité de tous les sujets de l'Empire ottoman sans distinction de races et de religions, cessait de correspondre aux vues du Comité après quelque temps de vie constitutionnelle.

Se basant sur des intérêts faussement compris des musulmans, en particulier des Turcs, les Jeunes se prononcèrent contre l'égalité réelle des nationalités, en considérant que les conditions égales favorisent le développement économique et culturel des Chrétiens au détriment de la race dominante.

Dans ce congrès, il fut décidé, entre autres mesures, de peupler de musulmans, surtout de Turcs, les régions où les éléments chrétiens se trouvaient en masse plus ou moins compacte. Le congrès n'avait donc qu'une apparence de nouveauté. Il ne formule et ne concrétise que ce qui depuis longtemps animait les esprits des dirigeants turcs.

Même les mouvements des Albanais, dont la plupart musulmans, des Arabes, de Syriens, provoqués par l'étroite politique de nationalisme, ne purent arrêter les dirigeants Jeunes Turcs dans leur voie funeste.

En poursuivant les intérêts de Turcs, ils ruinaient la Turquie.

— անհրաժեշտ եղաւ շարունակել Սահմանադրութեան առաջին շրջանին եւս, որպէսզի ամրապնդուի նոր վարչակարգը եւ աւարտին հասցուի մեր շրջաններուն մէջ աւատատէրերու դէմ մղուած պայքարը. պայքար մը՝ որ անհրաժեշտ էր երկու կուսակցութիւններուն համար հաւասարապէս։ Այլապէս նաեւ, Երիտ. Թուրքերու կոմիտէն միակն էր որ արմատ կը նետէր Թուրք ժողովուրդի առաջաւոր խաւերուն մէջ։

Այսուհանդերձ, Երիտասարդ Թուրքիոյ մեղրամիսը երկար չտեւեց, եւ մեր կուսակցութիւնը ունեցաւ բազմաթիւ յուսախաբութիւններ, հետզհետէ աւելի ու աւելի չարաղէտ։

Առաջինը տեղի ունեցաւ 1909 թ. Մարտ 31-ին, Ապտիւլ Համիտի արբանեակներու յետադիմական հարուածէն ետք։ Ճիշդ է որ շարժումը արագօրէն խեղդուեցաւ։ Կոստանդնուպոլիսը վերագրաւուեցաւ սահմանադրական բանակին կողմէ, եւ Ապտիւլ Համիտ գահընկէց եղաւ։ Սակայն Երիտ. Թուրքերու այս յաղթանակը սկիզբն եղաւ իրենց գաղափարական պարտութեան։ Փոխանակ յետադիմութեան դէմ մարտնչելու — ի դին նոյնիսկ ժամանակաւորապէս իշխանութիւնը կորսնցնելու վտանգին — Երիտ. Թուրքերը նախընտրեցին մեղմացնել իրենց պայքարը յետադիմականներուն հանդէպ։ Եւ որովհետեւ վերջինները կը շահագործէին Շարիաթը՝ Երիտ. Թուրքերը ներկայացնելով իբրեւ անաստուածներ, իբրեւ անհաւատներու գործիք, իբրեւ կեաւուր,— «Նոր բարեկարգիչները» սկսան իրենք զիրենք ցոյց տալ որպէս մոլեռանդ իսլամներ եւ, հետեւաբար, թշնամի քրիստոնեաներուն։

Երիտ. Թուրքերու Սելանիկի համագումարը եկաւ փաստելու որ Հին Թուրքերու քաղաքականութիւնը հետզհետէ աւելի գետին կը շահէր՝ Երիտասարդ Թուրքիոյ դրօշին ներքեւ։

Այս համագումարին մէջ, սահմանադրական վարչակարգէն ետք Թուրքիոյ մէջ ստեղծուած կացութիւնը քննութեան առնելով, Երիտ. Թուրքերը մխիթարական չգտան զայն։ Սակայն, փոխանակ անոր պատճառները իրենց իսկ հռչակած սկզբունքները կենսագործելու անկարողութեանը մէջ փնտռելու,— յանգեցան այն եզրակացութեան, որ այդ սկզբունքները յարմար չէին մահմետական զանգուածներու հոգեբանութեան, որ՝ անոնք հակառակ էին Թուրքիոյ նման մահմետական եւ գերազանցօրէն Թուրք պետութեան մը շահերուն։ Այս ձեւով, իրենք իսկ խախտեցին հիմերը Օսմանիզմին, որուն անունով Երիտ. Թուրքերը կը հալածէին տարբեր ազգութեանց անջատողական շարժումները. եւ Օսմանիզմի սկզբունքը, որ նախա-յեղափոխական շրջանի Երիտ. Թուրքերու մտայղացումով պէտք է նշանակէր Օսմանեան կայսրութեան բոլոր հպատակներուն հաւասարութիւնը՝ առանց ցեղի եւ կրօնի խտրութեան, կը դադրէր քիչ անց համապատասխան ըլլալէ կոմիտէի տեսակէտներուն։

Մահմետականներու եւ ի մասնաւորի Թուրքերու կողմէ սխալ ըմբռնուած շահերու վրայ հիմնուած, Երիտ. Թուրքերը վճռականօրէն դէմ արտայայտուեցան ազգութեանց իրական հաւասարութեան, նկատի ունենալով որ հաւասար պայմանները կը նպաստեն քրիստոնեաներու տնտեսական եւ մշակութային զարգացումին, ի վնաս իշխող ցեղի [շահերուն]։

Այս համագումարին մէջ, այլեւայլ միջոցառումներու կողքին, որոշուեցաւ մահմետականներով, մասնաւորապէս Թուրքերով բնակեցնել այն շրջանները, ուր քրիստոնեայ տարրերը այս կամ այն չափով հոծ զանգուածով կը գտնուէին։ Համագումարը երեւութապէս միայն նոր էր։ Ան կը բանաձեւէ ու շօշափելի իրողութեան կը վերածէ այն ինչ՝ որ երկար ատենէ ի վեր կ՚ոգեւորէր Թուրք ղեկավարներուն մտայնութիւնը։

Մինչեւ իսկ ալպանացիներու (մեծամասնութեամբ մահմետական), արաբներու, սուրիացիներու շարժումները, որոնք հետեւանք էին ազգայնական այդ նեղմիտ

Les Jeunes Turcs niaient toujours l'adoption des résolutions susmentionnées, mais les évènements ne s'attardèrent pas à dévoiler la vérité. Le gouvernement turc se mit à installer les musulmans en Macédoine et les provinces arméniennes. Il arrêta le retour des terres enlevées aux Arméniens sous l'ancien régime et il protégea de nouveau les beys kurdes etc.

Après une série de vaines protestations contre la tournure des Jeunes Turcs, le parti "Daschnakzoutioun" se trouva la nécessité, au mois de mai 1912, se basant sur la décision de l'assemblée générale du parti en 1911, de rompre l'entente avec le Comité Jeune Turc, en énumérant les causes dans un mémorandum détaillé.

La même politique, commencée à être appliquée en Macédoine, provoqua les vives protestations des Macédoniens. Les "tcheta"s (bandes) reprirent leur activité. Les éléments partisans de la Turquie, hostiles à l'intervention des puissances balkaniques, se jetèrent de nouveau dans les bras du gouvernement bulgare. Des hostilités conduisèrent aux attentats à Ichtib, Kotchana, aux massacres des Chrétiens, jusqu'à la guerre balkanique et la débacle formidable de la Turquie.

On aurait pu croire que les funestes conséquences de l'application de la vieille et toujours nouvelle politique en Macédoine aurait influencé les Jeunes Turcs et les aurait détournés d'une nouvelle aventure périlleuse. Le langage des organes Jeunes Turcs fut un moment changé. On préconisa, après la guerre balkanique, une autre politique en Asie Mineure, la vraie patrie des Turcs. Mais ce ne fut qu'un moment. Après le petit succès à la seconde guerre balkanique, tous les beaux mots furent de nouveau mis dans l'oubli.

Les Jeunes Turcs après le désatre dans les Balkans allèrent plus loin encore, jusqu'à adopter la formule historique du fameux sultan Sélim.

On sait que ce Khalife, qui extermina tous ses frères pour régner tranquillement, et en fit une loi pour ses successeurs, prit aussi la résolution de massacrer en une fois tous ses sujets chrétiens ou de les convertir à l'Islam pour assurer l'avenir des musulmans. *"La Turquie aux Turcs"* tel fut le mot d'ordre, élancé par ce réformateur turc au XVIe siècle.

Le sultan Abdul Hamid en fut l'exécuteur distingué, d'extrême prudence. Il dépeuplait les provinces arméniennes par la voie lente de vexations exceptionnelles, tout en favorisant l'envahissement du territoire arménien par les kurdes et mouhadjirs (émigrés musulmans). Quant aux massacres, il ne les ordonnait qu'après avoir obtenu le consentement des diplomates des puissances intéressées.

Abdul Hamid renversé en pleine activité dans l'accomplissement de son programme, voyait, après quelque temps, son œuvre ressuscitée peu à peu.

A la veille de la guerre européenne, la déportation des Grecs en Asie Mineure était en pleine exécution (d'après les Jeunes, le nombre des déportés dépassait 150.000). Quant aux Arméniens, on se contentait alors d'allusions à ce sujet.

քաղաքականութեան, չյաջողեցան եւ կեցնել Երիտ. Թուրք ղեկավարները իրենց բռնած աղէտալի ուղիէն։

Թուրքերու շահերը հետապնդելով, անոնք կը քանդէին Թուրքիան։

Երիտ. Թուրքերը կ'ուրանային միշտ վերեւ յիշուած որոշումներու որդեգրումը. դէպքերը շատ չուշացան քողազերծելու համար իրականութիւնը։ Թուրք կառավարութիւնը սկսաւ մահմետականներ տեղաւորել Մակեդոնիա եւ հայկական նահանգներ։ Դադրեցուց հին վարչակարգի օրերուն հայերէն խլուած հողերուն վերադարձը, եւ վերստին պաշտպան կանգնեցաւ քիւրտ պէկերուն։

Երիտ. Թուրքերու շրջադարձին դէմ եղած շարք մը ապարդիւն բողոքներէ ետք, 1912 թ. Մայիս ամսուն Հ. Յ. Դաշնակցութիւնը, հիմնուելով 1911 թ. կուսակցութեան Ընդհ. ժողովի որոշման վրայ, անհրաժեշտ գտաւ խզել Երիտ. Թուրքերու կոմիտէին հետ կայացած համերաշխութիւնը՝ մանրամասն Յուշագրով մը իր պատճառաբանութիւնները թուելով։

Միեւնոյն քաղաքականութիւնը սկսաւ գործադրուիլ Մակեդոնիոյ մէջ եւ առաջացուց մակեդոնացիներու բուռն բողոքները։ Զեթայական գունդերը վերսկսան իրենց գործունէութեան։ Թուրքիոյ կողմնակից տարրերը, որոնք հակառակ էին պալքանեան պետութիւններու միջամտութեան, վերստին նետուեցան պուլկար կառավարութեան դիրկը։ Թշնամութիւնները առաջ բերին Իշտիպի, Քոչանայի մահափորձերը, քրիստոնեաներու վրայ ի գործ դրուած ջարդերը, մինչեւ իսկ պալքանեան պատերազմն ու Թուրքիոյ սարսափելի քայքայումը։

Կարելի էր խորհիլ, որ Մակեդոնիոյ մէջ ի գործ դրուած հին — ու միշտ նոր — քաղաքականութեան աղէտալի հետեւանքները որոշ ազդեցութիւն կ'ունենան Երիտ. Թուրքերուն վրայ եւ կը շեղեցնեն զանոնք վտանգալի արկածախնդրութենէ։ Պահ մը Երիտ. Թուրք բանբերներու լեզուն փոխուեցաւ։ Պալքանեան պատերազմէն ետք, ուրիշ քաղաքականութիւն մը ծնունդ առաւ Թուրքիոյ իսկական հայրենիք՝ Փոքր Ասիոյ մէջ. շատ կարճատեւ շրջանի մը համար։ Պալքանեան երկրորդ պատերազմի փոքր յաջողութենէն ետք, կրկին մոռացութեան տրուեցան բոլոր գեղեցիկ խօսքերը։

Պալքանեան աղէտէն ետք, Երիտ. Թուրքերը աւելի հեռու գացին, մինչեւ հռչակաւոր սուլթան Սելիմի պատմական դարձած տարազին որդեգրումը։

Գիտենք որ այս Խալիֆան, որ անխռով իշխելու համար սպաննեց իր բոլոր եղբայրները,— եւ այդ մէկը օրէնք դարձաւ իր յաջորդներուն — վճռեց նոյնպէս միանգամընդմիշտ կոտորել քրիստոնեայ իր բոլոր հպատակները, կամ իսլամացնել զանոնք, որպէսզի ապահովէ մահմետականներու ապագան։ «Թուրքիան՝ թուրքերուն», *այդ էր նշանաբանը, արձակուած ԺԶ. դարու թուրք բարեկարգիչին կողմէ։*

Սուլթան Ապտիւլ Համիտ՝ ծայրայեղ զգուշաւորութեամբ բայց եւ գերազանց վարպետութեամբ՝ հանդիսացաւ այդ նշանաբանը գործի վերածողը։ Դանդաղ բայց եւ անօրինակ հարստահարութիւններու միջոցաւ, ան կ'ամայացնէր Հայաստանը, միաժամանակ սատարելով քիւրտերու եւ մահմետական գաղթականներու հայկական հողեր ներխուժելուն։ Իսկ ջարդերու հրահանգ կ'արձակէր միայն այն ատեն, երբ կը ստանար շահագրգիռ պետութեանց հաւանութիւնը։

Իր ծրագրի գործադրութեան ընթացքին գահընկէց դարձած Ապտիւլ Համիտ, քիչ անց, կը տեսնէր արդէն իր սկսած գործին վերանորոգումը։

Եւրոպական պատերազմի նախօրէին, Փոքր Ասիոյ յոյներուն տարագրումը ընթացքի մէջ էր (ըստ Երիտ. Թուրքերուն տարագրեալներու թիւը 150.000-է աւելի էր)։ Գալով հայերուն, անոնք կը բաւականանային այդ ժամանակ միայն ակնարկութիւններ ընելով այդ մասին։

Après la déclaration de la guerre, l'organe officieux des Jeunes Turcs "Tanine" pouvait déjà déclarer ouvertement, que la formule du sultan Sélim serait pleinement appliqué aux Arméniens.

Ce qui fut fait en 1915.

DASCHNAKZOUTIOUN ET LA GUERRE

Après l'établissement en Turquie du régime constitutionnel, dont la politique créa un nouveau ferment de complications internationales. Le parti socialiste "Fédération Révolutionnaire Arménienne" – "Daschnakzoutioun", fidèle à ses traditions,– manifesta toujours contre la solution des conflits au moyen de la force des armes.

Dès la première nouvelle de la déclaration de la guerre de l'Italie à la Turquie, le parti envoya un télégramme de protestation à Rome et une adresse au Bureau Socialiste International. Ayant appris plus tard qu'un meeting allait être organisé à Vienne, il s'empressa d'y déléguer son représentant pour joindre ses protestations à celle des camarades de différentes fractions du parti socialiste d'Autriche.

Plus tard encore, à la veille de la guerre balkanique, vu les relations extrêmement temdues entre la Turquie et les Etats balkaniques, par suite des évènements sanglants de Ichtib et de Kotchana, notre parti, tout en exprimant son indignation pour les actes barbares du gouvernement Jeune Turc, tout en considérant comme urgente l'application de mesures radicales en Macédoine, protesta vivement contre l'idée de faire la guerre. Comme solution du conflit, le parti recommendait la création de la Confédération balkanique dans laquelle entrerait la Macédoine autonome. En outre, il signa, avec les représentants des organisations socialistes des pays balkaniques une proclamation dans le même sens.

Après la seconde guerre balkanique qui aggrava encore la situation aux Balkans, le parti, en prévoyant la possibilité d'une geurre entre les grandes puissances, vota dans son assemblée générale, à Erzeroum, au mois d'août 1913, la résolution suivante:

"Considérant que le démembrement du peuple arménien est le résultat de la politique impérialiste et aventurière des puissances rivales, dont souffrent économiquement et moralement avec les vaincus les vainqueurs tout à la fois,

"Que dans l'avenir, dans le cas d'une guerre, qui imposera inévitablement d'énormes sacrifices physiques, matériels et moraux,– le changement des frontières des belligérants ne peut guarantir les droits humains, nationaux et économiques des travailleurs arméniens;

"L'assemblée décide:

"Qu'en cas de complications politiques, elle ferait tout son possible, par les moyens légaux et en plein accord avec les autres partis socialistes, pour prévenir la conflagration générale.

"Considérant pourtant que chaque membre du parti, qui, en sa qualité de citoyen, jouit de droits au sein de son Etat, a encore des devoirs à accomplir,

Պատերազմի յայտարարութենէն ետք, Երիտ. թուրքերու պաշտօնաթերթ «Թանին»ը բացորոշ կերպով կը յայտարարէր, որ սուլթան Սելիմի նշանաբանը ամբողջութեամբ պիտի գործադրուի հայերուն վրայ։

Ինչ որ իրագործուեցաւ 1915*-ին։*

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թուրքիոյ մէջ Սահմանադրական վարչակարգի հաստատումէն ետք, այս վերջինին վարած քաղաքականութիւնը միջազգային նոր դրգռութիւններ պատճառեց։ Հ. Յ. Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր աւանդութիւններուն, միշտ հակառակ եղաւ խնդիրները զէնքի ուժով լուծելու միջոցին։

Թուրքիոյ դէմ Իտալիոյ կողմէ պատերազմի յայտարարութենէն անմիջապէս ետք [1911-1912]*, կուսակցութիւնը բողոքի հեռագիր մը ուղարկեց Հռոմ եւ ուղերձ մը՝ Ընկերվար Միջազգայինի գրասենեակին։ Աւելի ուշ, իմանալով որ հաւաք մը կը կազմակերպուի Վիեննայի մէջ, ան փութաց պատգամաւոր մը առաքել, որպէսզի իր ձայնը միացնէ Աւստրիոյ ընկերվար կուսակցութեան տարբեր հատուածներուն պատկանող ընկերներու բողոքին։*

Աւելի ուշ եւս, պալքանեան պատերազմի նախօրէին, ի տես Թուրքիոյ եւ պալքանեան պետութեանց յարաբերութիւններու ծայր աստիճան սրումին, որ հետեւանք էր Իշտիպի եւ Քոչանայի արիւնալի դէպքերուն, մեր կուսակցութիւնը, Երիտ. Թուրք կառավարութեան բարբարոսական արարքներուն դէմ իր բողոքը արտայայտելով եւ Մակեդոնիոյ մէջ արմատական միջոցառումներու գործադրութիւնը անհրաժեշտութիւն նկատելով հանդերձ, բուռն բողոք բարձրացուց պատերազմելու գաղափարին դէմ։ Խնդրի լուծման համար, կուսակցութիւնը կը յանձնարարէր ստեղծումը պալքանեան Համադաշնակցութեան, որուն մաս պէտք է կազմէր ինքնավար Մակեդոնիան։ Այլապէս նաեւ, պալքանեան երկիրներու ընկերվար կուսակցութիւններու հետ ստորագրեց նոյնիմաստ յայտարարութիւն մը։

Պալքանեան երկրորդ պատերազմէն ետք, որ աւելի եւս ծանրացուցած էր Պալքաններու կացութիւնը, մեծ պետութեանց միջեւ ծագելիք պատերազմ մը կանխատեսելով՝ կուսակցութիւնը 1913 *թ. Օգոստոսին Էրզրումի մէջ գումարուած Ընդհ. ժողովին հետեւեալ որոշումը կայացուց.—*

«Նկատի ունենալով որ հայ ժողովուրդի անդամահատութիւնը արդիւնք է մրցակից պետութիւններու կայսերապաշտական եւ արկածախնդրական քաղաքականութեան, որմէ կը տուժեն թէ տնտեսապէս եւ թէ բարոյապէս հաւասարաբար պարտեալներն ու յաղթողները,

«Որ ապագային, պատերազմի պարագային անխուսափելիօրէն պիտի պարտադրուին ֆիզիքական, նիւթական եւ բարոյական հսկայ զոհողութիւններ, պատերազմող երկիրներու սահմաններուն փոփոխութիւնը չի կրնար երաշխաւորել հայ աշխատաւորներու մարդկային, ազգային ու տնտեսական շահերը.

«Ժողովը կ'որոշէ.

«Որ քաղաքական խառնակ կացութիւն ստեղծուելու պարագային, պիտի ընէ կարելին՝ օրինական միջոցներով եւ համաձայնաբար ընկերվար այլ կուսակցութիւններու, որպէսզի կանխարգիլուի համայնջինջ պատերազմը։

«Նկատի ունենալով նոյնպէս, որ կուսակցութեան իւրաքանչիւր անդամ, որ իբրեւ հպատակ իր ապրած երկրին իրաւունքները վայելելով մէկտեղ, ունի նաեւ պարտաւորութիւններ,

"L'assemblée décide:

"En cas de guerre, chaque membre du parti doit remplir ses devoirs civiques envers son Etat respectif".

A l'assemblée de l'année suivante, tenue aussi à Erzeroum, le 10-20 juillet 1914, coïncidant ainsi avec la proclamation de la guerre européenne et la mobilisation immédiatement suivie de la Turquie,– les résolutions de l'assemblée de 1913 furent confirmées à nouveau. On souligna, en particulier, que dans le conflit européen, la Turquie devait garder une stricte neutralité.

LE COMITE JEUNE TURC ET LE PARTI "DASCHNAKZOUTIOUN" A LA VEILLE DE LA GUERRE

Les travaux de l'assemblée générale du parti "Daschnakzoutioun" venaient d'être terminés quand arrivèrent de Constantinople à Erzeroum, les délégués au Comité Jeune Turc Nadji Bey, Hilmi bey et Behaéddine bey. Les deux premiers appartenaient à l'ancien groupe révolutionnaire Jeune Turc avec lequel nous continuions toujours avoir de bonnes plus ou moins intimes relations.

Les délégués exprimèrent leurs vifs regrets de n'avoir pu venir plus tôt pour s'entretenir avec le parti avant la clôture de l'assemblée générale. Ayant résolu de déclarer la guerre à la Russie, le Comité voulait connaître l'orientation du parti arménien. Les mesures préventives dans le but de faciliter les opérations de l'armée turque dans le Caucase étaient déjà prises. L'adhésion du parti arménien aurait contribué sensiblement aux succès des Turcs. Les délégués étalèrent tous les avantages de cette guerre pour la Turquie, qui en sortirait agrandie, puissante, fortifiée intérieurement et extérieurement. Ils promettaient, en récompense, l'autonomie de l'Arménie Turque après la guerre victorieuse.

Les représentants du "Daschnakzoutioun" se basant sur les résolutions des congrès du parti, répondirent qu'ils ne pouvaient donner leur adhésion à la proposition du Comité Jeune Turc. Outre des raisons de caractère général, le parti était contre l'intervention du gouvernement turc dans le conflit européen, parcequ'il était fermement persuadé, que cette tentative amènerait à la catastrophe de la Turquie et sous ses ruines pourrait succomber le peuple arménien. Le parti était toujours partisan de la stricte neutralité de la Turquie, mais si la guerre éclatait quand même, Daschnakzoutioun tout en restant neutre, comme parti, recommanderait à ses membres en Turquie, en Russie et en Perse, de remplir leurs devoirs envers leurs Etats respectifs.

Les échanges de vues de même nature continuèrent à avoir lieu dans les entrevues ultérieures. Majdi bey et Hilmi bey étant partis pour Van les négociations se renouvelèrent avec notre Comité Central de Van. Les résultats furent les mêmes malgré la promesse de Nadji bey, qu'en cas de participation du "Daschnakzoutioun", à l'Arménie autonome turque serait annexée l'Arménie Russe.

«Ժողովը կ՚որոշէ.

«Պատերազմի պարագային, կուսակցութեան իւրաքանչիւր անդամ պէտք է իր քաղաքացիական պարտականութիւնը կատարէ համապատասխան պետութեան հանդէպ»։

1914 թ. Յուլիս 10–14-ին Էրզրումի մէջ գումարուած յաջորդ Ընդհ. ժողովին, որ կը գուգադիպէր եւրոպական պատերազմի յայտարարութեան եւ Թուրքիոյ մէջ անմիջական կերպով անոր յաջորդող զօրակոչին,– 1913 թ.ի որոշումները վերահաստատուեցան։ Յատկապէս ընդգծուեցաւ, որ Թուրքիան պէտք է խիստ կերպով չէզոքութիւն պահէ եւրոպական պատերազմին մէջ։

ԵՐԻՏ. ԹՈՒՐՔԵՐՈՒ ԿՈՄԻՏԷՆ ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. ժողովին աշխատանքները նոր աւարտած էին, երբ Կոստանդնուպոլսէն ժամանեցին Երիտ. Թուրքերու Կոմիտէին պատուիրակները՝ Նաճի պէյ, Հիլմի պէյ եւ Պեհաէտտին պէյ։ Առաջին երկուքը կը պատկանէին Երիտ. Թուրքերու յեղափոխական հին խմբակին, որուն հետ միշտ կը շարունակէինք առաւել կամ նուազ սերտ յարաբերութիւններ ունենալ։

Պատուիրակները խոր ցաւ յայտնեցին, որ չէին կրցած աւելի կանուխ գալ, Ընդհ. ժողովի փակումէն առաջ կուսակցութեան հետ բանակցութիւններ ունենալու համար։ Որոշած ըլլալով Ռուսիոյ դէմ պատերազմ յայտարարել, կոմիտէն [Երիտ. Թուրքերու] կ՚ուզէր իմանալ հայկ. կուսակցութեան դիրքորոշումը։ Կանխարգելիչ միջոցներ ձեռք առնուած էին արդէն՝ Կովկասի մէջ Թրքական բանակի գործողութիւնները դիւրացնելու նպատակով։ Հայկ. կուսակցութեան միացումը զգալապէս պիտի նպաստէր Թրքական յաջողութիւններուն։ Պատգամաւորները թուեցին այն բոլոր առաւելութիւնները Թուրքիոյ համար, որ պատերազմէն դուրս պիտի գար ընդարձակուած, հզօրացած, ներքնապէս ու արտաքնապէս ամրապնդուած։ Իբրեւ վարձատրութիւն, կը խոստանային Թրքահայաստանի ինքնավարութիւնը պատերազմէն ետք։

Դաշնակցութեան ներկայացուցիչները, հիմնուելով Ընդհ. ժողովի որոշումներուն վրայ, պատասխանեցին որ չէին կրնար համաձայնիլ Երիտ. Թուրքերու կոմիտէի առաջարկներուն։ Բացի ընդհանուր կարգի պատճառներէն, կուսակցութիւնը դէմ էր Թուրք կառավարութեան մասնակցութեան ընդհանուր պատերազմին, որովհետեւ հաստատ կերպով համոզուած էր որ նման փորձ պիտի առաջացնէր Թուրքիոյ քայքայումը, եւ անոր աւերակներուն տակ կործանումը հայ ժողովուրդին։ Կուսակցութիւնը կողմնակից էր Թուրքիոյ բացարձակ չէզոքութեան. բայց պատերազմի պարագային, Դաշնակցութիւնը, իբրեւ կուսակցութիւն չէզոք մնալով հանդերձ, պիտի յանձնարարէր Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի իր անդամներուն, որ իրենց պարտականութիւնը կատարեն համապատասխան պետութիւններուն հանդէպ։

Այս կարգի տեսակէտներու փոխանակումներ տեղի ունեցան նաեւ հետագայի հանդիպումներուն ընթացքին։ Նաճի եւ Հիլմի պէյերու Վան մեկնումէն ետք, բանակցութիւնները վերսկսան Վանի մեր Կեդր. կոմիտէին հետ։ Արդիւնքները նոյնն էին, հակառակ Նաճի պէյի այն խոստումին, որ Դաշնակցութեան մասնակցութեան պարագային Ռուսահայաստանը պիտի կցուէր ինքնավար Թրքահայաստանին։

Les préparatifs de guerre se poursuivaient cependant avec un zèle extraordinaire sous la direction des Allemands. Les Jeunes Turcs exploitaient chaque succès allemand pour exciter le peuple Turc qui se montrait plus qu'indifférent. Mais après la défaite de la Marne, la marche victorieuse des Russes en Galicie, la plupart des Jeunes Turcs commencèrent à hésiter. En tout cas, on ne se montrait plus partisan de l'offensive immédiate. On préférait attendre encore la marche des évènements. Notre propagande en faveur de la neutralité trouvait partout un terrain plus favorable.

Après trois mois de préparatifs et d'hésitations, les illusions des Chefs du Comité prédominèrent. Le soulèvement des pays musulmans, de la Perse, de l'Avganistan, du Béloudjistan, des Indes, de l'Egypte etc., la victoire facile à remporter sur la Russie, engagée entièrement dans la lutte contre l'Allemagne et l'Autriche, la conquête du Caucase, du Turkestan, l'anéantissement des éléments chrétiens, enclavés dans les masses musulmanes, la création de cette manière, du monde compact musulman, de la Mer Noire jusqu'aux Indes, sous l'égide du Khalife siégeant à Constantinople, l'hégémonie de la Turquie en Asie, appuyée sur celle de l'Allemagne en Europe, la quatrième part, 20 milliards au moins, revenant à la Turquie de l'énorme contribution de la guerre,– telle fut la perspective séduisant à laquelle ne purent résister les esprits éblouis des chefs de la Jeune Turquie.

Si l'on compare ces rêves de caractère universel et les résultats obtenus jusqu'à présent, on constate qu'après tant de pertes, les Jeunes Turcs ne peuvent se vanter d'autre chose que d'avoir massacré les Arméniens, les Grecs, les Syriens et les Chaldéens.

LES JEUNES TURCS ET LES MASSACRES

Les Jeunes Turcs ne nient plus les déportations et les massacres des Arméniens. Ils les justifient. La cause principale serait la révolte des Arméniens. On ne voulait pas tolérer derrière l'armée une population en état d'insurréction. Les Jeunes Turcs invoquent les mouvements à Van, à Schabine-Karahissar, à Ourfa, etc.

Est-il besoin de dire que les évènements incriminés aux Arméniens ont été provoqués par les Jeunes Turcs eux-mêmes? Ces prétendues "insurrecrions" n'étaient que des tentatives de défense, faites au cours même des déportations et des massacres, avec un faible espoir de succès,– Van, Schatakh, Swedia en Cilicie. C'étaient aussi des actes de pur désespoir de la population, qui préférait la mort les armes à la main, au lieu d'être égorgée ou de servir aux instincts bestiaux des triomphateurs.

Այսուհանդերձ, պատերազմական պատրաստութիւնները՝ գերմանացիներու ղեկավարութեամբ՝ կը շարունակուէին արտասովոր եռանդով։ Երիտ. թուրքերը կը շահագործէին գերմանական իւրաքանչիւր յաջողութիւն՝ գրգռելու համար թուրք ժողովուրդը, որ [այսուհանդերձ] կը մնար անտարբեր։ Սակայն Մառնի պարտութենէն եւ Կալիսիոյ մէջ ռուսական յաղթական առաջխաղացքէն ետք, Երիտ. թուրքերու մեծ մասը սկսաւ տատամսիլ։ Յամենայն դէպս, թուրքերը կողմնակից չէին երեւեր անմիջական յարձակողականի մը. կը նախընտրէին սպասել դէպքերու ընթացքին։ Մեր քարոզչութիւնը ի նպաստ չէզոքութեան՝ նպաստաւոր գետին կը շահէր ամէն տեղ։

Երեք ամիսներ տեւող նախապատրաստութիւններէ եւ տատանումներէ ետք, [Երիտ. թուրք] կոմիտէի ղեկավարներու ցնորքները յաղթանակեցին.—

— Ըմբոստացումը մահմետական երկիրներուն՝ Պարսկաստան, Հնդկաստան, Եգիպտոս եւայլն.

— Դիւրին յաղթանակ Ռուսիոյ վրայ, որ ամբողջովին կլանուած էր Գերմանիոյ եւ Աւստրիոյ դէմ պատերազմով.

— Նուաճումը Կովկասի եւ Թուրքեստանի.

— Բնաջնջումը՝ մահմետական զանգուածներու մէջ կղզիացած քրիստոնեայ տարրերուն.

— Ստեղծումը այս ձեւով — Կոստանդնուպոլիս հաստատուած Խալիֆայի մականին ներքեւ — մահմետական միաձոյլ աշխարհի մը, որ պիտի տարածուէր Սեւ ծովէն մինչեւ Հնդկաստան.

— Ասիոյ մէջ գերակշիռ դիրքը Թուրքիոյ, թիկունքին ունենալով Եւրոպայի մէջ գերիշխանութիւն ձեռք բերած Գերմանիան.

— Մէկ քառորդ մասը, առնուազն 20 միլիառ, զոր պիտի ստանար Թուրքիան որպէս աւարի բաժին իր պատերազմի մասնակցութեան փոխարէն։

Ահա այն շողշողուն հրապոյրը, որուն չկրցան դիմադրել Երիտ. Թուրքիոյ վարիչները։

Եթէ բաղդատենք տիեզերական բնոյթի այս երազները եւ ցարդ ձեռք բերուած արդիւնքները, կարելի է հաստատել որ այդքան կորուստներէ ետք, Երիտ. թուրքերը պարծենալու ոչինչ ունին, բացի հայերը, յոյները, սուրիացիները եւ քաղդէացիները ջարդած ըլլալէ։

ԵՐԻՏ. ԹՈՒՐՔԵՐԸ ԵՒ ՋԱՐԴԵՐԸ

Երիտ. թուրքերը չեն ուրանար այլեւս հայոց տեղահանութիւններն ու ջարդերը։ Կ՚արդարացնեն զանոնք։ Գլխաւոր պատճառը պէտք է նկատել հայոց ըմբոստութիւնը. բանակի կողքին՝ կարելի չէր հանդուրժել ապստամբ վիճակի մէջ գտնուող ժողովուրդ մը։ Երիտ. թուրքերը կը վկայակոչեն Վանի, Շապին Գարահիսարի, Ուրֆայի եւ այլ շարժումները։

Հարկ կա՞յ ըսելու թէ հայերուն վերագրուած դէպքերը թուրքերը իրե՛նք յառաջացուցին։ Կարծեցեալ այդ «ըմբոստութիւնները» պարզապէս ինքնապաշտպանութեան փորձեր էին, կատարուած — Վանի, Շատախի, Սուէտիոյ եւ Կիլիկիոյ մէջ — տեղահանութեանց եւ կոտորածներու իսկ ընթացքին, եւ այն ալ յաջողելու տկար յոյսով մը։ Անոնք յուսահատական փորձերն էին ժողովուրդի մը, որ կը նախընտրէր մեռնիլ զէն ի ձեռին, քան սպաննուիլ եւ կամ ենթարկուիլ յաղթող կողմի անասնական բնազդներուն։

Nous avons déjà parlé de la tactique générale des Jeunes Turcs envers les Chrétiens en Turquie et en particulier, envers les Arméniens. Nous avons vu, que pour la suppréssion des Arméniens de l'Arménie, ils aspiraient à un moment opportun et que la guerre européenne présentait à leurs yeux justement le moment historique si longtemps attendu.

Accuser, en présence de cette circonstance, les Arméniens d'insurrections, ce serait répéter la fable du loup et de l'agneau.

Pour mieux éclaircir la conduite des Jeunes Turcs nous allons énumérer une série des mesures prises à l'égard des Arméniens *dès les débuts du conflit européen*. Le rapprochement de ces actes prouve nettement, que le programme des Jeunes Turcs existait non seulement en théorie, en attendant, pour être mis à élaboration et à exécution, les évènements de Van ou d'Ourfa; mais que le dernier complot contre le peuple arménien se tramait bien avant la guerre turco-russe, alors qu'on ne pourrait citer un seul fait de déloyauté des Arméniens en Turquie.

1. GENDARMERIE.– Les provinces arméniennes furent inondées, surtout après la déclarations de la mobilisation, de gendarmes et de détectives, choisis soigneusement parmis ceux qui étaient restés disponibles après la perte des provinces de Turquie d'Europe; avec eux apparurent nombre de fonctionnaires de même genre. Battus cruellement par les Bulgares, les Serbes et les Grecs, humiliés devant leurs anciens sujets, impuissants dans leur rage contre eux, ces victimes,– comme ils se considèraient – des peuples chrétiens, devraient naturellement chercher à se venger sur n'importe quel autre sujet chrétien, resté encore sous leur domination. Les Arméniens, par les considérations politiques, furent le meilleur objet de leur vengeance.

2. LES "TCHETA"S.– Immédiatement après la mobilisation, c'est-à-dire, 3 mois avant la guerre turco-russe et 9 mois avant la première "insurrection" arménienne, tous les forçats et autres criminels furent mis en liberté; on en forma des détachements, nommés "tcheta"s (en bulgare: bande), y incorporant aussi tous les assassins et les brigands, connus dans le pays. Le commandement fut confié aux plus sanguinaires sous la direction générale des membres influants de la Jeune Turquie.

Le nom bulgare "tcheta", accordé à ces détachements, fut de lui-même symptomatique. Comme les Turcs se plaignaient surtout contre les "tcheta"s bulgares, en les accusant de toutes sortes d'atrocités commises sur la population musulmane, il n'était pas difficile de prévoir le rôle qu'on leur réservait dans les provinces arméniennes.

De fait, nous avons vu, que dans tous les viols et massacres, la part la plus brillante revenait notamment aux "tcheta"s.

3. MILICE MUSULMANE.– Parallèlement aux formations des "tcheta"s se poursuivait l'armement de la population musulmane, dans les villes, comme dans les villages. Les agents de police et les membres du Comité distribuaient en a-

Խօսած ենք արդէն Թուրքիոյ քրիստոնեաներուն եւ ի մասնաւորի հայերուն նկատմամբ Երիտ. Թուրքերուն հետեւած ընդհանուր մարտավարութեան մասին։ Տեսանք որ Հայաստանի հայերուն բնաջնջումին համար անոնք կը սպասէին պատեհ առիթին եւ որ եւրոպական պատերազմը իրենց տեսակէտով կը ներկայացնէր արդարեւ երկար ատենէ ի վեր սպասուած պատմական այդ պահը։

Հայերը ամբաստանել ապստամբութեան մեղքով, այս պարագային, կը նշանակէ կրկնել գայլին ու գառան [ծանօթ] առակը։

Լաւագոյնս լուսաբանելու համար Երիտ. Թուրքերու վարմունքը, պիտի թուենք այն միջոցները որ ձեռք առնուեցան հայերու նկատմամբ եւրոպական պատերազմի առաջին օրերէն սկսեալ։ Այդ արարքներու համակարգումը յստակօրէն կը փաստէ որ Երիտ. Թուրքերու ծրագիրը գոյութիւն ունէր ոչ միայն իբր տեսութիւն որ գործադրութեան պիտի դրուէր Վանի կամ Ուրֆայի դէպքերուն առիթով, այլ որ հայ ժողովուրդին դէմ դաւ կը նիւթուէր ռուս-թրքական պատերազմէն շատ առաջ, այն ժամանակներէն, երբ Թուրքիոյ նկատմամբ հայոց անհաւատարմութեան ո՛չ իսկ մէկ արարք» կարելի է յիշատակել։

1.- *<u>Ոստիկան գօրքերը</u>.— Զօրակոչի յայտարարութենէն ետք մանաւանդ, հայկական նահանգները ողողուեցան ժանտարմներով եւ գաղտնի ոստիկաններով, խնամքով ընտրուած եւրոպական Թուրքիոյ նահանգներէն բերուած տարրերէն, այդ նահանգներու կորուստէն ետք։ Անոնց հետ միասին երեւցան նոյն կարգի շատ մը պաշտօնեաներ։ Սոսկալիօրէն պարտուած պուլկարներէն, սերպերէն եւ յոյներէն, նուաստացած իրենց երբեմնի հպատակներու աչքին, անկարողութեան մատնուած անոնց առջեւ,— քրիստոնեայ ժողովուրդներուն զոհերը նկատուող այս մարդիկը, բնականաբար, պիտի ջանային վրէժ լուծել իրենց տիրապետութեան տակ գտնուող ոեւէ քրիստոնեայ հպատակէ։ Քաղաքական նկատումներով՝ հայերը լաւագոյն առարկան հանդիսացան իրենց վրէժխնդրութեան համար։*

<u>2.- «Չեթաները»</u>.— Զօրակոչէն անմիջապէս ետք, այսինքն երեք ամիս առաջ ռուսեւթուրք պատերազմէն եւ նախ քան 9 ամիս հայկական առաջին «ըմբոստութենէն», բոլոր յանցագործներն ու ոճրագործները ազատ արձակուեցան. անոնցմէ կազմուեցան «չեթա» կոչուած ջոկատները (պուլկարերէն՝ խումբ), որոնց միացուեցան երկրին մէջ քաջածանօթ բոլոր մարդասպաններն ու աւազակները։ Հրամանատարութիւնը վստահուեցաւ ամէնէն արիւնարբուներուն՝ ընդհանուր ղեկավարութեամբ Երիտ. Թուրքիոյ ամէնէն ազդեցիկ անդամներուն։

Այս ջոկատներուն «չեթա» անուանակոչումը ինքնին ախտանշանական էր։ Եւ որովհետեւ Թուրքերը կը գանգատէին պուլկար «չեթա»ներու դէմ՝ զանոնք մեղադրելով մահմետական ժողովուրդի դէմ գործուած ամէն կարգի վայրագութեանց համար, դժուար չէր, հետեւաբար, նախատեսել թէ ի՛նչ դեր վերապահուած էր անոնց հայկական նահանգներուն մէջ։

Իրապէս ալ մենք տեսանք, որ բոլոր բռնաբարումներու եւ կոտորածներու պարագային, «ամէնէն փայլուն» բաժինը վերապահուած էր մասնաւորաբար «չեթա»ներուն։

<u>3.- Մահմետական քաղաքագօրը</u>.— Չեթայական ջոկատներուն զուգահեռաբար, քաղաքներու եւ գիւղերու մէջ տեղի կ՚ունենար մահմետական բնակչութեան զինումը։ Ոստիկանական գործակալներն ու [Երիտ. Թուրք] կոմիտէի անդամները,

bondance les fusils et les munitions *aux premiers jours de la mobilisation*. Aux inquiétudes des Arméniens, les Turcs répondaient, qu'ils créaient "la milice nationale", qui devrait surveiller la sécurité du pays, de même qu'aller contre l'ennemi extérieur. On ne pensait pas pourtant à admettre un seul chrétien dans cette organisation nationale. Il va sans dire que le seul fait de l'élimination de l'élément chrétien, [la formation] de la milice suffisait pour discerner le vrai caractère de cette mesure et pour mettre en évidence l'état réel d'esprit des Jeunes Turcs, bien avant les "insurrections arméniennes". C'était aussi aux yeux de la population musulmane tant qu'arménienne, une démonstration manifeste du retour des jours d'Abdul Hamid.

Les militionnaires n'eurent pas, certes, l'occasion de déranger l'ennemi extérieur. Mais ils remplirent leur tâche quant à "l'ennemi intérieur", en guettant les caravanes des déportés, en violant les mères et en noyant les nourissons.

4. Parler des massacres des Arméniens, c'est penser aux Kurdes. En créant les "régiments hamidié"s en 1894, Abdul Hamid visait justement les Arméniens. Dans tous les massacres précédents les "hamidié"s justifièrent les espérances d'Abdul Hamid. Depuis la Constitution, cependant, les kurdes devinrent l'élément le plus déloyal dans nos régions. Les chefs kurdes, quelque fois même avec leurs hommes, se retiraient en Perse, engageaient des négociations avec les agents du gouvernement du tzar et armés par eux, agitaient le pays. A la veille de la guerre, une vraie insurrection fut organisée. S'il y avait un élément déloyal en Turquie, c'étaient justement les kurdes. Mais les suprêmes intérêts de l'Islam demandaient la réconciliation avec les musulmans malgré l'insurrection.

Les délégations composées des chefs des plus éminents de la Jeune Turquie et parmi eux, les députés du parlement ottoman, Seyfoulah Ilias et autres furent chargés de cette mission. Elles partirent munies de plans d'action élaborés par le Comité. Pour la réconciliation, il fallait séduire les kurdes par des promesses. On leur accorda la liberté d'agir contre les Arméniens, de même le partage des terres et des biens arméniens après les massacres et les déportations.

Nous ne nous arrêterons pas à retracer le rôle des tribus kurdes. Il n'est que trop connu.

5. "Kassap tabouri". Un peu plus tard, on organisa des bataillons d'élite, "kassap tabouri" (bataillons de bouchers), placés sous le commandement des militaires du Comité. Ces bataillons se conduisèrent en vrais bouchers, sutout dans la vallée de Mousch, où 100.000 Arméniens furent exterminés.

Les Jeunes Turcs entreprirent d'un autre côté, une série d'autres attaques qui s'aggravèrent de jour en jour et prirent des proportions désastreuses:

1. Arrestations.– On commença à arrêter sous de vagues prétextes, des individualités en vue. Quand on parvenait à démontrer toute la futilité des faits incriminés aux détenus, les Jeunes Turcs n'hésitaient pas à les accuser d'espionnage à la solde des Alliés. Dans les provinces orientales, ils devenaient les espions du gou-

զօրակոչի առաջին օրերէն, *առատօրէն հրացաններ ու զինամթերք կը բաժնէին։ Հայոց մտահոգութեան ի պատասխան, թուրքերը կ՚ըսէին թէ կը ստեղծէին «ազգային աշխարհազօր», որ պիտի հսկէր երկրի ապահովութեան, ու նաեւ կռուէր արտաքին թշնամիին դէմ։ Այսուհանդերձ, ազգային այս կազմակերպութեան մէջ մէկ քրիստոնեայ իսկ չէր մտածուեր ընդունիլ։ Հասկնալի է որ քրիստոնեայ տարրին բացառումը աշխարհազօրային այս կազմաւորումէն կը բաւէր՝ նշմարելու համար այս միջոցառման իսկական բնոյթը եւ ակներեւ դարձնելու, «հայկական ըմբոստութիւններէն» շատ առաջ, Երիտ. թուրքերու իսկական մտայնութիւնը։ Ասիկա բացայայտ ցուցադրութիւն մըն էր նաեւ թէ՛ թուրք եւ թէ հայ ժողովուրդին համար Ապտիւլ Համիտի օրերուն վերադարձի մասին։*

Աշխարհազօրայինները արտաքին թշնամին անհանգըստացնելու առիթը չունեցան անշուշտ։ Սակայն իրենց պարտականութիւնը լիուլի կատարեցին «ներքին թշնամի»ին նկատմամբ, դարանակալ սպասելով տարագրեալներու կարաւաններուն, բռնաբարելով մայրերն ու խեղդելով ծծկեր մանուկները։

4.- *Խօսիլ հայկական ջարդերու մասին՝ կը նշանակէ մտաբերել քիւրտերը։* 1894 *թ. «Համիտիէ գունդերը» ստեղծելով, Ապտիւլ Համիտի թիրախը հայերն էին։ Սահմանադրութենէն ի վեր, այսուհանդերձ, քիւրտերը հանդիսացան ամէնէն անհաւատարիմ տարրը շրջաններուն մէջ։ Քիւրտ ցեղապետները, երբեմն իրենց մարդոցմով, կը քաշուէին Պարսկաստան, բանակցութիւններ կը վարէին ցարի կառավարութեան գործակալներուն հետ, եւ անոնց կողմէ զինուած, կը խռովէին երկիրը։ Պատերազմի նախօրէին, կազմակերպուեցաւ իսկական ապստամբութիւն մը։ Եթէ անհաւատարիմ տարր մը կար Թուրքիոյ մէջ, արդարեւ քիւրտերն էին։ Սակայն, հակառակ ապստամբութեան, Իսլամի գերագոյն շահերուն համար անհրաժեշտ էր հաշտուիլ մահմետականներուն հետ։*

Երիտ. Թուրքիոյ ամէնէն երեւելի ղեկավարներէն, ներառեալ օսմանեան երեսփոխաններէն Սէյֆուլլահ Իլիասի եւ ուրիշներու, կազմուեցան պատուիրակութիւններ եւ անոնց վստահուեցաւ այդ առաքելութիւնը։ Մեկնեցան անոնք ի ձեռին ունենալով [*Երիտ. թուրք*] *կոմիտէին կազմած ծրագիրները։ Հաշտութիւնը իրագործելու համար, պէտք էր խոստումներով հրապուրել քիւրտերը։* Անոնց շնորհուեցաւ հայերու դէմ ազատօրէն գործելու եւ, կոտորածներէն ու տեղահանութենէն ետք, հայերու հողերուն ու ինչքերուն տիրանալու իրաւունքը:

Կանգ պիտի չառնենք քիւրտ ցեղերու խաղացած դերի նկարագրութեան վրայ։ Այդ մէկը շատ ծանօթ է։

<u>5.- «*Քասսապ թապուրի*»</u>.— *Քիչ մը աւելի ուշ, կազմակերպուեցան ընտրանիներէ բաղկացեալ ջոկատները,—* «*Քասսապ թապուրի*» (*մսագործներու ջոկատներ*), [*Երիտ. թուրք*] *կոմիտէի զինուորականներու հրամանատարութեամբ։ Այս ջոկատները գործեցին որպէս իսկական մսագործներ, մանաւանդ Մշոյ դաշտին մէջ, ուր* 100.000 *հայեր բնաջնջուեցան։*

Երիտ. թուրքերը ձեռնարկեցին նաեւ շարք մը յարձակումներու, որոնք հետզհետէ խստանալով հասան աղէտալի չափերու.—

ա.— <u>Ձերբակալութիւններ</u>.— Ճղճիմ պատրուակներով սկսան ձերբակալել աչքի զարնող անձնաւորութիւններ։ Երբ կը փաստուէր կալանաւորներուն վերագրուած մեղադրանքներուն ոչնչութիւնը, Երիտ. թուրքերը չէին վարաներ ամբաստանելու զանոնք Դաշնակիցներու օգտին լրտեսելու յանցանքով։ Արեւելեան նահանգներու

vernement russe, en Cilicie – des espions anglais. Et on les traita comme tels.

Quelques-uns d'entre eux expirèrent à la suite des tortures. Un des notables et des héros de Zeitoun – Nazareth Tchavouch fut une des premières victimes.

2. Perquisitions.– Le plan des Jeunes Turcs exigeait, qu'il y eut encore outre les espions, des rebelles, des dépôts d'armes, de munitions, de bombes et autres indices de révolte sur le point d'éclater. Les perquisitions en masse dans les villes, comme dans les villages, dans le but de découvrir des dépôts imaginaires, surprirent toute la population.

Après avoir cerné le village, on séparait les hommes des femmes et des enfants, pour "interroger" les deux groupes séparément. Les perquisitions s'opéraient par les soins des gendarmes de Roumélie et de Macédoine, assistée par les "tcheta"s.

Aux protestations des Arméniens, les Turcs "amis" répondaient, que la participation de "tcheta"s ne serait qu'occasionnelle. Les perquisitions elles-mêmes seraient provoquées par les dénonciations des ennemis des Arméniens. Une fois la fausseté des bruits au sujet des dépôts d'armes, transportés par les agents du gouvernement russe, prouvée, par les les perquisitions minutieuses, la loyauté des Arméniens serait reconnue définitivement, et toutes les mesures exceptionnelles cesseraient à leur égard…

Les perquisitions ne découvrirent *pas une seule arme de provenance russe*. On n'y trouva que quelques fusils de vieux système "gras" dont l'existence était connue d'avance – achetés pour la plupart chez les Jeunes Turcs eux-mêmes, les premières années de la liberté constitutionnelle. Néanmoins, les Arméniens, arrêtés, furent conduite en grande pompe et enfermés dans les prisons; car il fallait absolument avoir des rebelles.

3. Réquisitions.– Rien ne fut si efficace pour pousser à bout le désespoir de la masse arménienne, que le système de réquisition, adopté envers elle, dès la déclaration de la mobilisation.

La situation devenait insupportable surtout dans les villages. Les troupes, installées presque exclusivement chez les Arméniens, prenaient tout gratis: pain, blé, avoine, chevaux, chariots, beurre, fromage, linge. Elles prenaient plus qu'elles n'avaient besoin. Ce fut aussi une bonne occasion pour ne pas ménager l'honneur des familles. Les plaintes, les lamentations furent rejetées dédaigneusement. Les réquisitions s'opéraient non seulement par les troupes, mais aussi, et avec plus de cruauté par les gendarmes et des "tcheta"s. Ce fut pis que les dragonnades.

4. Réserviste sans armes.– Lors de la mobilisation, on appela tous les chrétiens de 20 à 43 ans (plus tard de 18 à 48 ans). Ceux qui avaient plus de 27 ans auraient dû être exemptés. Car le service militaire des chrétiens ne date que de la promulgation de la Constitution.

Les Turcs "amis" interprétaient cette illégalité comme favorable aux intérêts arméniens. "Plus d'Arméniens sous les armes, affirment-ils, plus de sécurité pour la nation arménienne, moins de danger de massacres".

մէջ անոնք կը դառնային ռուսերու լրտես, Կիլիկիոյ մէջ՝ անգլիացիներու լրտես։

Իբրեւ այդպիսին ալ կը վարուէին անոնց հետ։

Անոնցմէ ոմանք չարչարանքներու տակ մահացան։ Զէյթունի երեւելիներէն եւ հերոսներէն՝ Նազարէթ Չաւուշ առաջին զոհերէն մէկը եղաւ։

բ.— Խուզարկութիւններ.— Երիտ. թուրքերու ծրագիրը կը պահանջէր որ բացի լրտեսներէն, ըլլային ապստամբներ, զինապահեստներ, ռումբեր եւ պայթելու վրայ գտնուող ապստամբական ուրիշ փաստեր։ Երեւակայական պահեստներ երեւան հանելու նպատակով կատարուած խուզարկութիւնները, քաղաքներու թէ գիւղերու մէջ, զարմանք պատճառեցին ամբողջ բնակչութեան։ Գիւղը պաշարելէ ետք, տղամարդիկը կը բաժնէին կիներէն եւ մանուկներէն, որպէսզի երկու խմբակները անջատաբար «հարցաքննեն»։ Խուզարկութիւնները կը կատարուէին Ռումելիի եւ Մակեդոնիոյ ժանտարմներուն կողմէ, «չեթա»ներու ներկայութեան։

Հայերու բողոքներուն՝ «բարեկամ» թուրքեր կը պատասխանէին որ «չեթա»ներու մասնակցութիւնը դիպուածով է։ Խուզարկութիւններ տեղի կ՚ունենան հայոց թշնամիներու մատնութեամբ։ Անգամ մը որ, մանրակրկիտ խուզարկութիւններէն ետք, փաստուի թէ սուտ են՝ ռուս կառավարութեան գործակալներուն կողմէ փոխադրուած զինապահեստներու մասին շրջան ընող զրոյցները, վերջնական կերպով յայտնի պիտի դառնայ հայոց հաւատարմութիւնը, եւ պիտի դադրին իրենց հանդէպ առնուած բոլոր արտակարգ միջոցառումները...

Խուզարկութիւնները ռուսական աղբիւրէ եկած ոչ մէկ զէնք ի յայտ բերին։ Գտնուածները «կրա» սիստեմի քանի մը հրացաններ էին, որոնց գոյութիւնը նախօրօք ալ յայտնի էր,— գնուած էին անոնք Երիտ. թուրքերէն սահմանադրական ազատութեան առաջին տարիներուն։ Ասով մէկտեղ, ձերբակալուած հայերը մեծ աղմուկով տարուեցան ու բանտ նետուեցան, որովհետեւ ի գին ամէն բանի պէտք էր ապստամբներ ունենալ։

գ.— Բռնագրաւումներ.— Ոչ մէկ բան այնքան ազդու եղաւ հայ զանգուածները ծայր աստիճանի յուսահատութեան մղելու որքան բռնագրաւումներու դրութիւնը, որդեգրուած զօրակոչի յայտարարութենէն անմիջապէս ետք։

Դրութիւնը անտանելի կը դառնար մանաւանդ գիւղերուն մէջ։ Գրեթէ բացառաբար հայ տուներու մէջ հաստատուած զօրքերը ամէն ինչ կը վերցնէին ձրիօրէն.— հաց, ցորեն, յարդ, ձիեր, սայլեր, կարագ, պանիր, ճերմակեղէն։ Կ՚առնէին աւելի քան պէտք ունէին։ Այս եւս լաւ առիթ ծառայեց չինայելու համար ընտանեկան պատիւին։ Գանգատներն ու աղերսանքները ետ մղուեցան արհամարհանքով։ Բռնագրաւումները կը կատարուէին ոչ միայն զօրքին կողմէ այլ նաեւ, ու աւելի դաժանօրէն, ժանտարմներու եւ «չեթա»ներու կողմէ։ Կատարուածը աւելի քան ասպատակութիւններ էին։

դ.— Պահեստի զինուոր առանց զէնքի.— Զօրակոչի ժամանակ [բանակ] կանչեցին 20-43 տարիքի բոլոր քրիստոնեաները (աւելի ուշ 18-48 տարու)։ Անոնք, որոնք 27 տարեկանէն վեր էին պէտք է ազատ ձգուէին, որովհետեւ քրիստոնեաներու զինուորական ծառայութիւնը սկիզբ առաւ Սահմանադրութեան հռչակումէն ետք։

«Բարեկամ» թուրքերը այս ապօրինութիւնը կը բացատրէին՝ թէ հայերու օգտին է. «Որքան շատ ըլլան բանակ կանչուած հայերը, կ՚ըսէին անոնք, այնքան աւելի ապահովութիւն կ՚ըլլայ հայոց ազգին եւ նուազ՝ կոտորածի վտանգը»։

Cependant, les réservistes arméniens, appelés sous les armes, ne reçurent point d'armes. On les priva même du droit de porter le pistolet ou le couteau et ils furent envoyés aux travaux de terrassement, à la réparation et à la construction des routes.

C'était une procédure ingénieuse pour arracher à la masse populaire tous les hommes valides, capables de résister en cas de danger.

Ils seraient tenus comme des ôtages, à la disposition des exécuteurs des massacres.

5. Désarmement des soldats.– Plus que cela. On commença à désarmer les soldats arméniens de l'armée active et à les affecter aux mêmes travaux.

La désarmement ne prit pas d'extension alors grâce à l'intervention de quelques militaires supérieurs, qui appréciaient les qualités du soldat arménien. Mais la première pierre était jetée. Les vraies tendances Jeunes-turques, manifestées au moment où personne ne pensait aux insurrections, exercèrent leur influence néfaste sur les milieux des soldats. Les Arméniens furent qualifiés de suspects, de traîtres. On aurait pu et on aurait dû, par conséquent, les maltraîter, leur infliger toutes sortes d'outrages jusqu'à les considérer tous hors la loi. Pour donner une idée de l'atmosphère créée, il suffit de rappeler qu'aux premiers jours des hostilités, 60 soldats arméniens furent dépouillés, égorgés et mis en pièces par leurs compagnons d'armes, dans le village de Eghan (vallée de Passène).

Les Jeunes Turcs créaient des conditions insupportables et voulaient qu'il n'y eut pas de déserteurs parmi les soldats arméniens.

Ces cas de désertation, d'ailleurs beaucoup moins fréquents que chez les musulmans, donnaient aux Jeunes Turcs un chef d'accusation contre le peuple arménien.

6. Corvée.– Les hommes exempts du service militaire furent contraints aux corvées. Il ne s'agissait pas d'une corvée habituelle, plus ou moins supportable par endroits. On forçait les hommes à coup de fouets, à transporter les munitions, sur le dos, pendant des centaines de kilomètres. Dans une seule vallée de Mouch, il périt 3.000 hommes de faim, d'exténuation, de maladies, en faisant leur service de bête de somme entre Erzeroum et Mouch.

7. Assassinats.– Pour comble de malheur, les terroristes de la Jeune Turquie entreprirent une série d'assassinats de personnages en vue, dans les différentes régions de l'Arménie. Citons, entre autres, l'assassinat d'un notable à Diarbekir, K. Aloyan, un des vétérans du parti "Daschnakzoutioun" à Bayazed; du prêtre Aristakess (vil. Odzni, vallée d'Erzeroum), qui exerçait une grande influence sur la population rurale; de l'évêque Odabachian, qui se rendait de Constantinople à Erzindjan, pour reprendre son poste; de Setrak Pastermadjian, vice-directeur de la Banque Ottomane à Erzeroum; de l'inspecteur de la Dette Publique Khosrov Beylikjian noyés avec sa femme et son enfant dans la Mer Noire.

Այսուհանդերձ, բանակ կանչուած հայ պահեստիները բնաւ զէնք չստացան։ Զրկուեցան մինչեւ իսկ ատրճանակ կամ դանակ կրելու իրաւունքէն, եւ ղրկուեցան հող փորելու, ճամբաներու շինութեան ու նորոգութեան աշխատանքներուն։

Ասիկա ճարտար հնարք մըն էր ժողովուրդէն խլելու բոլոր զօրեղ տղամարդիկը, որոնք վտանգի պարագային ի վիճակի կրնային ըլլալ դիմադրելու։

Անոնք պիտի պահուէին որպէս պատանդ՝ ջարդերը գործադրողներու տրամադրութեան ներքեւ։

Ե.— Զինուորներու զինաթափումը.— Աւելին. սկսան զինաթափ ընել բանակի հայ զինուորները եւ զանոնք յատկացնել միեւնոյն աշխատանքներուն։

Զինաթափութիւնը այն ատեն մեծ համեմատութիւններու չհասաւ, չնորհիւ բարձրաստիճան կարգ մը զինուորականներու, որոնք կը գնահատէին հայ զինուորին յատկութիւնները։ Սակայն առաջին քարը նետուած էր։ Երիտ. թուրքերու իսկական նպատակները իրենց ուղղակի ազդեցութիւնը գործեցին զինուորական շրջանակներուն վրայ ճիշդ այն պահուն, երբ ոչ ոք կը մտածէր ըմբոստացումի մասին։ Հայերը որակուեցան կասկածելի, դաւաճան։ Կարելի էր եւ, հետեւաբար, պէտք էր չարաչար վարուիլ անոնց հետ, ենթարկել զանոնք ամէն կարգի նախատինքի, մինչեւ իսկ բոլորը օրէնքէ դուրս հռչակել։ Գաղափար մը տալու համար ստեղծուած մթնոլորտի մասին, կը բաւէ յիշել որ պատերազմի առաջին օրերուն Եղան գիւղին մէջ (Բասենի դաշտ) 60 հայ զինուորներ մերկացուելով, սպաննուեցան եւ կտոր-կտոր եղան *իրենց զէնքի ընկերներուն կողմէ։*

Երիտ. թուրքերը անտանելի պայմաններ կը ստեղծէին ու կ՚ուզէին որ դասալիքներ չըլլան հայ զինուորներու շարքերուն մէջ։

Դասալքման այս պարագաները,— այլապէս նուազ յաճախադէպ քան մահմետականներու մօտ—, Երիտ. թուրքերու ձեռքը զէնք էր հայ ժողովուրդը ամբաստանելու համար։

Զ.— Կոռը [բռնի աշխատանք].— Զինուորական ծառայութենէ զերծ մնացած տղամարդոց պարտադրուեցաւ կոռը։ Խօսքը տեղ-տեղ տանելի, սովորական պարտադիր աշխատանքի մասին չէ։ Մտրակի հարուածներու տակ կը ստիպէին որ մարդիկ հարիւրաւոր քիլոմեթրեր քալելով զինամթերք փոխադրէին իրենց կռնակին վրայ։ Միայն Մշոյ դաշտի մէկ ձորին մէջ 3.000 մարդ, գրաստի աշխատանքին լծուած, մեռան անօթութեան, ուժասպառութեան եւ հիւանդութեան պատճառով։

Է.— Սպանութիւններ.— Ի լրումն դժբախտութեանց, Երիտ. Թուրքիոյ ահաբեկիչները ձեռնարկեցին սպանութեանը, Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ, շարք մը աչքի զարնող անձնաւորութեանց։ Ցիշենք, այլոց կարգին, երեւելիի մը սպանութիւնը Տիարպեքիրի մէջ. Պայազէտի մէջ դաշնակցական վեթերաններէն Գ[ալուստ] Ալոյեան. Արիստակէս քահանան (Օձնի գիւղ, Կարնոյ դաշտ), որ ազդեցիկ անձնաւորութիւն էր գաւառական բնակչութեան մէջ. Օտապաշեան եպիսկոպոս, որ Կոստանդնուպոլսէն կ՚ուղեւորուէր իր պաշտօնատեղին՝ Երզնկա. Սեդրակ Պաստրմաճեան, փոխ-տնօրէնը Էրզրումի Օսմանեան դրամատան. Հանրային պարտուց վերակացու Խոսրով Պէյլիքճեան, որ իր կնոջ եւ զաւկին հետ խեղդամահ եղաւ Սեւ ծովուն մէջ։

D'après des lettres de nos camarades, morts maintenant et les témoignages des survivants, les Jeunes Turcs tendaient, par la cruauté de leurs actes de terreur, à provoquer des réactions de la part des Arméniens pour pouvoir justifier leurs représailles ultérieures.

Nous avons encore à mentionner deux mesures, qui eurent une importance fatale pour la destinée des Arméniens. C'étaient l'annulation des capitulations et la proclamation de le Guerre Sainte.

8. A l'origine du conflit européen (9 sept. 1914), il fut annoncé, qu'à partir du 1 octobre 1914 les capitulations cesseraient de fonctionner. Le 1 octobre fut proclamé et fêté à grand tapage par les chefs des Jeunes Turcs "l'acte de l'affranchissement de la Jeune Turquie du joug séculaire de l'Europe".

On sait que les capitulations garantissaient non seulement les intérêts des sujets des puissances étrangères, qui jouissaient en Turquie des droits d'exterritorialité. Grâce aux capitulations, la France et après elle les autres puissances réussirent à étendre leur protection à tous les Chrétiens de la Turquie. Dans tous leurs actes concernant leurs sujets chrétiens, les Sultans furent tenus à prendre en considération les vues des puissances intéressées, de l'opinion publique du monde civilisé. Si le programme du Sultan Selim d'exterminer tous les Chrétiens de l'Empire ne s'accomplissait pas librement et exactement, il faut en chercher la cause en partie dans l'existence des capitulations. Tous les Turcs de bon sens comprenaient bien qu'au point de vue de la politique générale l'annulation des capitulations n'apporterait rien à la Turquie. En cas de victoire des alliés, les capitulations seraient rétablies probablement même avec plus de restrictions pour le gouvernement turc; quant à la victoire de l'Allemagne, elle amènerait la dépendance complète de la Turquie. Au lieu de 6 tutelles, elle n'en aurait plus qu'une, mais elle serait importante.

Le seul avantage réel, que les Jeunes Turcs pouvaient tirer de l'acte de l'annulation, c'était de continuer à leur aise leur œuvre d'extermination des Chrétiens.

Les Turcs eurent raison. Quand les Turcs massacraient et déportaient les Arméniens, les Alliés se bornèrent à faire entendre des protestations et de vaines menaces. Les neutres gardèrent un silence prudent. Les hauts représentants des puissances centrales non seulement *furent forcés* de ne pas intervenir,– eux, qui dirigeaient toute la politique extérieure et intérieure de la Turquie,– mais ils défendirent même à leurs agents et à leurs nationaux dans le pays de s'occuper du sort des Arméniens. Les diplomates de Berlin et de Vienne, qui avaient garanti, en apposant leurs signatures au traité de Berlin, la sécurité des Arméniens contre les Circassiens et les Kurdes, qui s'étaient engagés à surveiller l'application des réformes dans les provinces arméniennes, préférèrent assister impassibles, dans les mêmes provinces à des massacres et à des déportations.

9. La Guerre Sainte fut proclamée par le Scheik-ul-Islam, une créature des Jeunes Turcs le 8/21 novembre 1914. Si les initiateurs rêvaient de soulever les pays musulmans contre les Guiaours en général, personne ne doutait de l'objet

Մեր ընկերներու (այժմ մահացած) նամակներուն, ինչպէս նաեւ վերապրողներու վկայութեանց համաձայն, ահաբեկչական այս արարքներու միջոցաւ Երիտ. Թուրքերը կը ձգտէին մղել հայերը ընդդիմութեան, որպէսզի արդարացնեն իրենց ապագայ խստութիւնները։

Պիտի յիշատակենք նոյնպէս երկու միջոցառումներ, որոնք վճռական կարեւորութիւն ունեցան հայոց ճակատագրին համար. քափիթիւլասիոններու ջնջումը եւ Սրբազան պատերազմի հռչակումը։

ը.— Եւրոպական պատերազմի սկիզբը (9 *Սեպտ.* 1914), *ծանուցուեցաւ որ* 1 *Հոկտեմբերէն սկսեալ քափիթիւլասիոնները պիտի դադրէին ի գօրու ըլլալէ։ Հոկտեմբեր* 1-*ը հռչակուեցաւ եւ Երիտ. Թուրքերու կողմէ «տօնուեցաւ իբրեւ Երիտ. Թուրքիոյ ազատագրումի օր Եւրոպայի դարաւոր լուծէն»։*

Ծանօթ է որ քափիթիւլասիոնները չէին երաշխաւորեր միայն օտար երկիրներու հպատակներուն շահերը՝ որոնք Թուրքիոյ մէջ արտերկրային իրաւունքներ կը վայելէին։ Քափիթիւլասիոններու շնորհիւ, Ֆրանսա, ապա նաեւ միւս պետութիւնները յաջողեցան իրենց հովանաւորութիւնը տարածել Թուրքիոյ բոլոր քրիստոնեաներուն վրայ։ Քրիստոնեայ հպատակներուն վերաբերեալ բոլոր վճիռներուն համար, սուլթանները ստիպուած էին նկատի առնել շահագրգիռ պետութեանց տեսակէտներն ու քաղաքակիրթ աշխարհի հանրային կարծիքը։ Եթէ բոլոր քրիստոնեաները բնաջնջելու սուլթան Սելիմի ծրագիրը ազատօրէն եւ ճշգրտօրէն չէր գործադրուեր, պատճառը մասամբ պէտք է փնտռել քափիթիւլասիոններու գոյութեան մէջ։ Բոլոր ողջմիտ Թուրքերը լաւ կ՚ըմբռնէին որ, ընդհանուր քաղաքականութեան տեսակէտով, քափիթիւլասիոններու ջնջումէն Թուրքիան ոչինչ պիտի շահէր։ Դաշնակիցներու յաղթանակին պարագային, քափիթիւլասիոնները պիտի վերահաստատուէին, հաւանաբար աւելի մեծ խստութեամբ Թուրքիոյ համար։ Իսկ Գերմանիոյ յաղթանակը [*պիտի նշանակէր*] *Թուրքիոյ ամբողջական կախումը անկէ.* 6-*ի փոխարէն* [*Թուրքիա*] *պիտի ունենար մէկ խնամակալութիւն, բայց շատ կարեւոր։*

Իրական միակ առաւելութիւնը, զոր Երիտ. Թուրքերը կրնային ունենալ այս ջնջումէն, հանգիստ կերպով շարունակելն էր քրիստոնեաներու ոչնչացման իրենց գործը։

Թուրքերը իրաւացի ելան։ Երբ Թուրքերը կը ջարդէին ու կը տարագրէին հայերը, Դաշնակիցները գոհացան բողոքներով եւ ունայն սպառնալիքներով։ Զէգոք երկիրները խոհեմ լռութիւն պահեցին։ Կեդրոնական պետութեանց բարձրագոյն ներկայացուցիչներուն պարտադրուեցաւ *չմիջամտել.— ներկայացուցիչներ, որոնք կը ղեկավարէին Թուրքիոյ արտաքին եւ ներքին քաղաքականութիւնը. բայց եւ այնպէս անոնք մինչեւ իսկ արգիլեցին իրենց գործակալներուն եւ ազգակիցներուն հայոց վիճակուած ճակատագրով զբաղիլ։ Պերլինի եւ Վիեննայի դիւանագէտները, որ Պերլինի դաշնագիրը ստորագրելով՝ երաշխաւորած էին հայոց ապահովութիւնը չերքէզներու եւ քիւրտերու դէմ, որ՝ յանձն առած էին հսկել հայկական նահանգներու բարեկարգութեանց, նախընտրեցին անտարբեր վկաները հանդիսանալ միեւնոյն նահանգներու կոտորածներուն եւ տեղահանութեանց։*

թ.— Սրբազան պատերազմը հռչակուեցաւ 1914 *թ.* 8/21 *Նոյեմբերին Երիտ. Թուրքերու սպասարկուն՝ Շէյխ-իւլ-Իսլամի կողմէ։ Նախաձեռնողները կ՚երազէին մահմետական աշխարհը ոտքի հանել կեաւուրներուն դէմ ընդհանրապէս. ոչ ոք կը կասկածէր յայտարարութեան անմիջական նպատակին մասին.—*

immédiat de la déclaration: attaquer les guiaours les plus proches: les Arméniens.

L'histoire de la Turquie démontre que dans toutes les guerres avec les puissances d'Europe, ce sont les sujets chrétiens de l'Empire ottoman qui ont payé de leur vie et de leurs biens tous les insuccès des fidèles et qui étaient considérés, en général, comme des parties intégrantes des forces ennemies.

Certains éléments de la population musulmane en Turquie se jetaient sur leurs voisins chrétiens, aux premières nouvelles des hostilités commencées entre la Turquie et n'importe quel Etat chrétien. Sans attendre la proclamation de Guerre Sainte.

*

* *

La guerre débuta par deux immenses incendies. L'un à Diarbékir, l'autre à Adrianople. Des milliers d'ateliers, de maisons, appartenant aux Arméniens, furent ravagés par le feu.

Ces incendies ne furent que les manifestations spontanées de l'impatience des fidèles. En présence de cet état d'esprit de la grande masse musulmane et des dispositions connues des dirigeants turcs, la proclamation de la guerre sainte signifiait pour les Arméniens une sentence de mort, prononcée par l'autorité la plus haute du monde musulman en Turquie.

Par là, tout accaparement des biens des Chrétiens devenait légitime. Les viols, les massacres se transformaient en actes approuvés par Allah. Le vieillard qui égorgerait de ses mains tremblantes les victimes, étendues au seuil de sa demeure; la femme, qui achèverait les blessés, l'enfant qui poignarderait ses camarades de jeu et les précipiterait dans le fleuve ou dans le ravin,– tous ils commettraient des actes de piété, leur assurant une place au paradis.

Ceux des musulmans qui, guidés soit par les sentiments humanitaires soit par les considérations de leurs propres intérêts lointains, auraient voulu sauver quelques Arméniens, étaient détournés de cette possibilité par la peur d'être proclamés ennemis de l'Islam et punis sévèrement.

Par l'annulation des capitulations, on visait l'extérieur; par la proclamation de la Guerre Sainte, l'intérieur.

L'extermination des Arméniens, le peuple le plus loyal de Turquie, fut donc préméditée. Le programme de cette politique de mort fut élaboré avec une prévoyance exceptionnelle par les dirigeants turcs. Leurs mesures avaient eu pour but de mobiliser toutes les forces musulmanes contre les Arméniens,– de provoquer des réactions pour pouvoir aggraver la situation et taxer les Arméniens de rébellion; écarter tous les obstacles à l'accomplissement de leur programme d'ordre extérieur ou intérieur; de mettre la population arménienne hors d'état de se défendre. La population aménienne s'est-elle vue un jour encerclée dans un immense abattoir, où les bouchers mobilisés ont la pleine possibilité d'atteindre des victimes, en nombre voulu et au moment voulu.

Յարձակում գործել ամէնէն մօտիկ գտնուող կեաւուրներուն՝ հայերուն վրայ։

Թուրքիոյ պատմութիւնը կը փաստէ, որ եւրոպական մեծ պետութեանց հետ մղուած բոլոր պատերազմներուն ընթացքին, Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ հպատակները, անբաժան մասնիկ նկատուելով թշնամի ուժերուն, տուժած են իրենց կեանքովն ու ինչքերով։ Թուրքիոյ եւ քրիստոնեայ ոեւէ պետութեան միջեւ պատերազմ սկսելուն պէս, Թուրքիոյ մէջ մահմետական ժողովուրդի որոշ տարրեր, առանց սպասելու Սրբազան պատերազմի յայտարարութեան, կը յարձակէին իսկոյն իրենց դրացի քրիստոնեաներուն վրայ։

*

* *

Պատերազմին սկիզբը տեղի ունեցաւ հսկայական երկու հրդեհ, մէկը Տիարպեքիրի, միւսը Ատրիանապոլսոյ մէջ։ Հրոյ ճարակ դարձան հայապատկան հազարաւոր գործատեղիներ եւ բնակարաններ։

Ասիկա ինքնաբուխ ցոյց մըն էր հաւատացեալներու անհամբերութեան։ Նկատի ունենալով Մահմետական մեծ զանգուածի մտայնութիւնը եւ Թուրք ղեկավարներու ծանօթ տրամադրութիւնները, Սրբազան պատերազմի *յայտարարութիւնը հայերուն համար մահավճիռ էր, արձակուած մահմետական աշխարհի բարձրագոյն իշխանութեան կողմէ։*

Ատով՝ օրինական կը դառնար քրիստոնեաներու պատկանող բոլոր հարստութեանց յափշտակումը։ Բռնաբարումներն ու կոտորածները կը վերածուէին Ալլահի կողմէ հաւանութիւն գտած արարքներու։ Այն ծերունին, որ իր դողդոջուն ձեռքերով պիտի խեղդէր իր զոհերը ու փռէր զանոնք իրենց տան սեմին, այն կինը, որ պիտի սպաննէր վիրաւորեալները, այն երեխան, որ պիտի դաշունահարէր իր խաղընկերները ու գլորէր զանոնք գետին կամ ձորին մէջ,— բոլորը կատարած պիտի ըլլային բարեպաշտական այնպիսի արարքներ, որ զիրենք պիտի արժանացնէ դրախտին մէջ տեղ մը ունենալու իրաւունքին։

Մահմետականներէն անոնք որ՝ առաջնորդուած իրենց մարդկային զգացումներէն կամ հեռաւոր ապագայի շահերու նկատումներէն, պիտի ուզէին փրկել քանի մը հայեր, կը հրաժարէին այդ միտքէն, վախնալով որ Իսլամի թշնամի կը նկատուին ու խստօրէն կը պատժուին։

Քափիթիւլասիոններու ջնջումով թիրախ կ՚ընտրուէր արտաքին աշխարհը, Սրբազան պատերազմի յայտարարութեամբ՝ ներքին աշխարհը։

Թուրքիոյ ամէնէն հաւատարիմ ժողովուրդի՝ հայերու բնաջնջումը, ուրեմն, կանխամտածուած էր։ Այս մահաբեր քաղաքականութեան ծրագիրը Երիտ. Թուրքերու կողմէ ծրագրուած էր բացառիկ հեռատեսութեամբ։ Միջոցառումները նպատակ ունէին՝ հայերուն դէմ զօրաշարժի ենթարկել մահմետական բոլոր ուժերը, գրգռել [հայերու] հակազդեցութիւնները՝ կացութիւնը աւելի ծանրացնելու եւ ապստամբութեան մեղադրանքով ամբաստանելու համար հայերը, չէզոքացնել՝ իրենց ծրագրի գործադրութեան արգելք հանդիսացող արտաքին եւ ներքին բոլոր խոչընդոտները, պաշտպանութեան միջոցներէ զրկել հայ բնակչութիւնը։ Այսպէս, օրին մէկը հայ բնակչութիւնը ինքզինք պաշարուած գտաւ հսկայական սպանդանոցի մը մէջ, ուր գործի լծուած մսագործները հնարաւորութիւն ունէին հարուած հասցնելու իրենց զոհերուն, որքան եւ երբ կը բաղձային։

LE PRELUDE DES MASSACRES

La débacle des visées des Jeunes Turcs sur la Caucase à Sarikamische, à Ardahan (décembre 1914), précipita les évènements.

L'évêque d'Erzeroum Sembat fut invité au Kanak après le retour des vaincus à Erzeroum, avec quelques notables arméniens. L'inspecteur de l'armée lui déclara en présence du gouverneur Tahsin bey, de l'évêque catholique et des notables turcs, que la responsabilités du désastre de l'armée turque à la frontière russe retombait entièrement sur les Arméniens, et que le gouvernement Impérial s'en souviendrait!

Le 10 janvier 1915 on effectua le recensement général de tous les Arméniens à Erzeroum. Le 26 janvier eut lieu l'assassinat de S. Pastermadjian, dont nous venons de parler. On n'osait plus sortir le soir. Tous les villages étaient frappés de terreur. Les jours de carnaval se passèrent en un deuil général. Le chef de police Khouloussi bey étendit son activité sur les districts de Mamakhatoun-Keghi où il sévit avec la dernière rigueur. Le 4 février les paysans de la vallée d'Erzeroum affluèrent en ville, affolés. Des nouvelles arrestations eurent lieu en masse. Un des Allemands prévint l'évêque du danger des massacres. C'était la période, où tous les Jeunes Turcs, depuis les députés jusqu'au dernier forçat n'avaient qu'un seul souçi, celui d'estorquer de l'argent aux morituri.

Kossav pacha (un autrichien), commendant de la forteresse d'Erzeroum, fut rappelé à cause de son opposition aux projets Jeunes Turcs. Les Kurdes et les gendarmes impatients provoquèrent des agressions prématurées dans la vallée de Mouch. Koriun, un de nos camarades, après avoir puni les agresseurs, fut obligé de gagner les montagnes. Le gouvernement central blâma la conduite des gendarmes. Mais peu de temps après d'autres camarades furent forcés de rejoindre Koriun et notamment Rouben, Tigran, Medjo, Avedis, Vahan Papazian (député de Van au parlement ottoman) etc. Des rencontres ont lieu aussi à Kartchkan, Karkar (vil. De Bitlis), à Schatakh (vil. De Van). Le 2 mars, grande agitation parmi les Turcs D'Erzeroum. Des réunions publiques ont lieu. On parle des massacres en ville. Le gouverneur rétablit l'ordre. Il rassure les Arméniens et il leur fait dire par l'évêque que jamais il n'y aura des massacres à Erzeroum. Il tint parole car les massacres eurent lieu loin de la ville.

Mêmes agressions à Sivas, à Kharpout, à Diarbekir, en Cilicie. Elles s'aggravèrent de plus en plus, en dépit des communications rassurantes du pouvoir central. Tous ces incidents n'étaient qu'un prélude aux grands massacres, dont l'ère s'ouvrit au mois d'avril 1915.

Ni la loyauté, manifestée par les partis politiques, dès le début du conflit européen, ni les déclarations réitérées du patriarcat arménien, ni les fondations d'hôpitaux aux frais des communautés arméniennes, ni les dons en argent et autres sacrifices matériels, ni la sublime résignation des chefs et des groupes des partis, qui s'exposaient au risque de perdre leur crédit à l'extérieur, ni les supplications des victimes, rien ne put arrêter les dirigeants turcs.

Pour définir la tactique des Jeunes Turcs dans la première période des mas-

ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Կովկասի մէջ Երիտ. Թուրքերու հետապնդած նպատակը ճախողեցաւ Սարիգամիշի եւ Արտահանի պարտութեամբ (Դեկտեմբեր 1914), եւ արագացուց դէպքերու ընթացքը։

Պարտեալներու Էրզրում վերադարձէն ետք, Կարնոյ եպիսկոպոս Սմբատ [Սաատէթեան] քանի մը երեւելի հայերու հետ հրաւիրուեցաւ նահանգապետարան։ Բանակին վերատեսուչը, ի ներկայութեան կառավարիչ Թահսին պէյի, կաթողիկէ եպիսկոպոսին ու թուրք երեւելիներու, յայտարարեց իրենց որ ռուսական ճակատին վրայ թրքական բանակին կրած աղէտին պատասխանատուութիւնը ամբողջովին կ՚իյնար հայերուն վրայ եւ որ կայսերական կառավարութիւնը պիտի չմոռնար այդ պարագան...

1915 *թ. Յունուար* 15-*ին, կատարուեցաւ Էրզրումի հայերուն ցուցակագրումը։ Յունուար* 26*ին, տեղի ունեցաւ Մ*[*եղրակ*] *Պաստրմաճեանի սպանութիւնը, որուն մասին խօսք եղաւ արդէն։ Երեկոյեան մարդ դուրս չէր ելլեր։ Բոլոր գիւղերը սարսափի մատնուած էին։ Բարեկենդանի օրերուն ընդհանուր սուգ էր։ Ոստիկանապետ Խուլուսի պէյ իր գործունէութիւնը տարածեց Մամախաթուն-Քղի գաւառներուն վրայ, ուր ի գործ դրաւ ծայր աստիճան խստութիւններ։ Փետրուար 4ին, Կարնոյ դաշտի գիւղացիները, սարսափահար, քաղաք խուժեցին։ Տեղի ունեցան զանգուածային նոր ձերբակալութիւններ։ Գերմանացի մը զգուշացուց եպիսկոպոսը ջարդերու վտանգին մասին։ Այս շրջանին է որ բոլոր Երիտ. Թուրքերը, երեսփոխաններէն սկսեալ մինչեւ յետին կալանաւորը, մէկ հոգ ունէին միայն,— դրամ կորզել մահապարտներէն։*

Էրզրումի միջնաբերդին հրամանատարը՝ Քոսաւ փաշա (աւստրիացի) պաշտօնանկ եղաւ՝ Երիտ. Թուրքերու ծրագրին հակառակ ըլլալուն համար։ Անհամբեր դարձած քիւրտերն ու ժանտարմները վաղահաս յարձակումներ գործեցին Մշոյ մէջ։ Մեր ընկերներէն մէկը՝ Կորիւն, նախայարձակները պատժելէ ետք, ստիպուեցաւ լեռ բարձրանալ։ Կեդրոնական կառավարութիւնը մեղադրեց ժանտարմներու վարմունքը։ Սակայն քիչ ատեն ետք ուրիշ ընկերներ միացան Կորիւնին, յատկապէս Ռուբէնը, Տիգրանը, Մճոն, Աւետիսը, Վահան Փափազեան (Վանի երեսփոխան Օսմանեան խորհրդարանի մէջ) եւայլն։ Բախումներ տեղի ունեցան նաեւ Կարճկան, Կարկառ (Պիթլիսի վիլայէթ), Շատախ (Վանի վիլայէթ)։ Մարտ 2*ին, մեծ գրգռութիւն Էրզրումի թուրքերու շարքին։ Տեղի կ՚ունենան հանրահաւաքներ։ Քաղաքին մէջ կը խօսին ջարդերու մասին։ Կառավարիչը կը վերահաստատէ կարգն ու կանոնը։ Կը վստահեցնէ հայերը եւ, եպիսկոպոսին բերնով, իրենց կ՚ըսէ որ Էրզրումի մէջ ջարդեր տեղի պիտի չունենան։ Խոստումը յարգեց, որովհետեւ ջարդերը տեղի ունեցան քաղաքէն հեռու վայրեր։*

Նոյն կարգի նախայարձակումներ Սըվազ, Խարբերդ, Տիարպէքիր, Կիլիկիա։ Լուրջ համեմատութիւններու հասան անոնք, հակառակ կեդրոնական իշխանութեան հանդարտեցուցիչ հաղորդումներուն։ Բոլոր այս միջադէպերը կը կազմէին նախերգանքը միայն այն մեծ կոտորածներուն, որոնք սկսան 1915 *թ. Ապրիլ ամսուն։*

Ո՛չ օրինապահութիւնը՝ քաղաքական կուսակցութեանց կողմէ ցոյց տրուած եւրոպական պատերազմի սկիզբը, ո՛չ հայոց պատրիարքարանի կրկնակի յայտարարութիւնները, ո՛չ հայ համայնքի ծախսերով հիմնուած հիւանդանոցները, ո՛չ դրամական նուիրատուութիւնները եւ այլ նիւթական զոհողութիւններ, ո՛չ վեհանձն համակերպումը կուսակցութեանց եւ խմբաւորումներու ղեկավարներուն, որոնք խնդրոյ առարկայ կը դարձնէին իրենց վարկը արտաքին աշխարհի աչքին, ո՛չ զոհե-

sacres et pour montrer toute la valeur de leurs accusations, il est nécessaire de dire quelques mots sur l'origine de la prétendue révolte de Van.

Le 1 avril, notre camarade Ischkhan Mikaélian fur prié par le gouverneur de Van Djevdet bey de se rendre en mission à Schatakh pour exercer son influence sur les Kurdes et sur les Arméniens, et rétablir l'ordre troublé par les Kurdes. Ischkhan consentit volontiers et se mit en route, accompagné de 3 camarades. Au village de Hertch, *il fur traitreusement tué avec ses compagnons*, par une bande embusquée à cet effet par le gouverneur lui-même.

Après le départ d'Ischkhan, le gouverneur invita chez lui deux autres camarades influents, Vramian, député à la Chambre ottomane et Aram "pour délibérer sur les questions du jour". Vramian,– député et légalement inviolable, répondit à l'invitation, fut *aussitôt arrêté*, amené au bateau, conduit à Datvan, de là à Bitlis, où *il fut tué*. Aram, retenu ailleurs par les affaires du parti, échappa à la mort.

L'indignation fut grande, mais le gouverneur, encouragé par la réussite de sa première manœuvre, réclama un certain contingent d'homme "pour besoins de guerre". Les habitants refusèrent. Ils avaient compris les machinations de Djevdet bey, connu depuis Abdul Hamid par ses cruautés et persuadés que tous les Arméniens, tombés dans ses griffes, seront anéantis. Le gouverneur menaça de sa vengeance toute la population. Deux soldats arméniens furent assassinés par les soldats turcs et en même temps arrivèrent les nouvelles d'un commencement de massacres dans les provinces.

Les Arméniens se mirent en état de défense. La ville de Van, de même que le district de Schatakh luttèrent glorieusement durant un mois, jusqu'à l'arrivée des troupes russes et des volontaires arméniens du Caucase.

Leur crime consistait en ce qu'ils ne se laissèrent pas massacrer et, par leur résistance acharnée ils contribuèrent à la défense des autres Arméniens, dispersés dans les provinces.

Il est superflu de prouver que ceux qui résistèrent à Schabine-Karahissar, à Angora, à Ourfa, villes éloignées de la zone d'opération de guerre d'au moins 500, à 800 et à 1000 kilomètres, dans un pays coupé de montagnes infranchissables, ne pouvaient avoir d'autre but que de mourir avec honneur, les armes à la main. Leur attitude leur fut imposée par les massacres des déportés d'Erzeroum, d'Erzindjan etc., qui n'avaient même pas manifesté la moindre désobéissance, durant toute la période de déportation.

RESPONSABILITE

Si nous nous sommes arrêtés à des détails, c'était pour mieux démontrer le degré de responsabilité de la Turquie dans le désastre de l'Arménie.

Notre parti était l'ennemi le plus acharné du régime d'Abdul Hamid et il était devenu le partisan le plus loyal de la Jeune Turquie. Nous avons toujours été adver-

րուն աղերսանքները, ոչ մէկ բան կրցաւ կասեցնել թուրք ղեկավարները։

Գաղափար մը տալու համար, թէ ի՛նչ մարտավարութեան կը հետեւէին Երիտ. թուրքերը ջարդերու առաջին շրջանին, եւ ցոյց տալու համար իրենց ամբաստանութեան արժէքը, անհրաժեշտ է քանի մը խօսք ըսել Վանի կարծեցեալ ապստամբութեան ծագման մասին։

Ապրիլ 1-*ին* [1915], *Վանի կառավարիչ Ճեւտէթ պէյ խնդրեց մեր ընկեր Իշխան Միքայէլեանէն որ Շատախ մեկնի, յատուկ առաքելութիւն տալով քիւրտերուն եւ հայերուն վրայ ազդեցութիւն բանեցնել եւ վերահաստատել քիւրտերու կողմէ խանգարուած կարգն ու կանոնը։ Իշխան համաձայնեցաւ եւ ճամբայ ելաւ երեք ընկերներու հետ։ Հիրճ գիւղին մէջ,* սպաննուեցաւ ան դաւադրաբար իր ընկերակիցներուն հետ միասին՝ *խմբակի մը կողմէ, որ դարան մտած էր հոն անձամբ կառավարիչին կարգադրութեամբ։*

Իշխանին մեկնումէն ետք, կառավարիչը իր մօտ հրաւիրեց ազդեցիկ երկու ուրիշ ընկերներ,— Օսմանեան խորհրդարանի անդամ Վռամեանն ու Արամը՝ [*Մանուկեան*] *«օրուան խնդիրներուն շուրջ խորհրդակցելու համար»։ Վռամեանը — երեսփոխան եւ անձեռնմխելի ըստ օրինի — ընդունեց հրաւէրը.* անմիջապէս ձերբակալուեցաւ *եւ նաւակով տարուեցաւ Դատուան, ուր* սպաննուեցաւ։ *Արամը, կուսակցութեան գործերով զբաղած ըլլալուն բերումով, մահէ փրկուեցաւ։*

Մեծ եղաւ ընվզումը. բայց կառավարիչը, քաջալերուած իր առաջին յաջողութենէն, պահանջեց որոշ թիւով մարդիկ՝ «պատերազմական կարիքներու համար»։ Բնակիչները մերժեցին։ Հասկցած էին անոնք դաւադիր ընթացքը Ճեւտէթ պէյի, ծանօթ իր գազանութիւններով Ապտիւլ Համիտի օրերէն, եւ համոզուած՝ որ անոր ճիրաններուն մէջ ինկած բոլոր հայերը պիտի ոչնչացուին։ Կառավարիչը սպառնաց վրէժ լուծել ամբողջ բնակչութենէն։ Երկու հայ զինուորներ սպաննուեցան թուրք զինուորներու կողմէ եւ միեւնոյն ժամանակ լուրեր հասան գաւառներու մէջ կոտորածներ սկսելու մասին։

Հայերը պաշտպանողականի անցան։ Վան քաղաքը, ինչպէս նաեւ Շատախ գաւառը փառաւորապէս պայքարեցան ամիս մը ամբողջ, մինչեւ ժամանումը ռուսական զօրքերուն եւ Կովկասի հայ կամաւորներուն։

[*Հայերուն գործած*] *ոճիրը կը կայանար այն բանին մէջ, որ չջարդուեցան եւ իրենց կատաղի դիմադրութեամբ նպաստեցին գաւառներու մէջ ցրուած միւս հայերու ինքնապաշտպանութեան։*

Հարկ չկայ ապացուցանելու որ պատերազմական գործողութիւններէն 500, 800 *եւ* 1000 *քիլոմեթր հեռու գտնուող եւ անանցանելի լեռներով կտրատուած երկրի մը մէջ, Շապին Գարահիսարի, Անգարայի եւ Ուրֆայի մէջ դիմադրական կռիւ մղողները այլ նպատակ չէին կրնար ունենալ քան զէն ի ձեռին մեռնիլ պատուով։*

Ստիպուած էին այս կեցուածքը բռնել իբր հետեւանք Էրզրումի, Երզնկայի եւ այլ վայրերու մէջ տարագրուածներու ջարդուելուն. այս վերջինները անհնազանդութեան ոչ մէկ նշան ցոյց տուած էին տարագրութեան ժամանակ։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ

Եթէ մանրամասնութիւններու վրայ կանգ առինք, այդ այն նպատակով էր որ աւելի յստակ կերպով ցոյց տանք Թուրքիոյ պատասխանատուութեան բաժինը Հայաստանի կործանման մէջ։

Մեր կուսակցութիւնը ամէնէն կատաղի թշնամին էր Ապտիւլ Համիտի վարչա-

saires des guerres, et toute atteinte à l'intégrité de la Turquie Constitutionnelle. Nous nous sommes prononcés contre la participation de la Turquie au conflit européen. Quand la guerre fut néanmoins déclarée par la Turquie, le peuple arménien décida de remplir ses devoirs civiques. Mais la guerre aux Alliés fut complétée d'une guerre intérieure contre le peuple arménien. Parallèlement aux préparatifs de guerre générale, on mobilisa des troupes spéciales (gendarmes, Kurdes, "Tcheta"s, etc.) contre nous et on se livra à des provocations contre notre population.

Les Turcs nient ces actes de provocation. Mais n'ont-ils pas agi de même envers les puissances alliées? N'ont-ils pas provoqué celles-ci en pleine paix, en concentrant les forces à la frontière du Caucase et de l'Egypte, en s'appropriant le "Goeben" et le "Breslau",– en forçant les Anglais à quitter la flotte,– en infligeant des outrages aux représentants de la Russie et de la France à Erzeroum, à Trébizonde, à Smyrne,– en créant l'incident du paquebot Sakhalien ,– en attaquant les postes russes à la frontière du Caucase,– et enfin en bombardant les navires et les ports russes? Voudraient-ils dès lors ménager les Arméniens?

Le lendemain du bombardement dans la Mer Noire, ils se mirent à crier à l'offensive des Alliés. Hésiteraient-ils à ne pas taxer de rebellion les Arméniens après avoir commencé à les massacrer?

Même s'il y avait des rebelles parmi les Arméniens, rien ne peut justifier le crime envers toute une nation.

La Turquie aura à répondre du sort des victimes de sa provocation; du sort d'un million et demi des déportés, qui, sans la moindre apparence de résistance s'étaient livrés à la merci du gouvernement; du sort d'au moins d'un million de femmes et d'enfants, qui en aucune manière ne pouvaient être qualifiés d'insurgés.

կարգին, եւ դարձած էր ամէնէն հաւատարիմ կուսակիցը Երիտ. Թուրքիոյ։ Մենք միշտ հակառակ եղած ենք պատերազմներուն, եւ Սահմանադրական Թուրքիոյ ամբողջականութեան դէմ առնուած որեւէ քայլի։ Դէմ ենք արտայայտուած Թուրքիոյ մասնակցութեան եւրոպական պատերազմին։ Այսուհանդերձ, երբ Թուրքիոյ կողմէ պատերազմ յայտարարուեցաւ, հայ ժողովուրդը որոշեց իր քաղաքացիական պարտականութիւնները լիուլի կատարել։ Սակայն Դաշնակիցներուն դէմ մղուած պատերազմին վրայ աւելցաւ ներքին պատերազմ մը՝ հայ ժողովուրդին դէմ ուղղուած։ Ընդհանուր պատերազմի պատրաստութիւններուն զուգահեռ, զօրաշարժի ենթարկուեցան յատուկ գունդեր (ժանտարմներ, քիւրտեր, «չեթա»ներ եւայլն) մեզի դէմ, եւ սկսան գրգռութիւններ մեր ժողովուրդին դէմ։

Թուրքերը կ՚ուրանան այդ գրգռիչ արարքները։ Բայց արդեօ՞ք նոյն ձեւով չչարժեցան դաշնակից պետութիւններուն հանդէպ։ Խաղաղութեան օրերուն չգրգռեցի՞ն արդեօք այս վերջինները՝ զօրքերը կեդրոնացնելով Կովկասի եւ Եգիպտոսի ռազմաճակատներուն վրայ, սեփականացնելով Կէօպէն եւ Պրեսլաու [ռազմանաւերը], ստիպելով որ անգլիացիները հեռացնեն նաւատորմիղը, նախատելով Էրզրում, Տրապիզոնի, Զմիւռնիոյ, Ռուսիոյ եւ Ֆրանսայի ներկայացուցիչները, ստեղծելով Սախալեան նաւու միջադէպը, յարձակելով ռուսական պահականոցներուն վրայ Կովկասի սահմանին, եւ, վերջապէս, ռմբակոծելով ռուսական նաւերն ու նաւահանգիստները։ Այս ամէնէն ետք, պիտի ուզէի՞ն խնայել հայերուն։

Սեւ ծովու ռմբակոծման վաղորդայնին, սկսան պոռչտալ Դաշնակիցներու յարձակման մասին։ Պիտի ուզէի՞ն արդեօք տատամսիլ, հայերը ջարդել սկսելէ ետք, զանոնք ապստամբութեամբ մեղադրելէ։

Եթէ մինչեւ իսկ ըմբոստներ կային հայերուն մէջ, ոչ մէկ բան կ՚արդարացնէ ամբողջ ազգի մը դէմ գործուած ոճիրը։

Թուրքիան պարտաւոր է պատասխան տալ իր գրգռութեան զոհ դարձած մարդոց ճակատագրին մասին. ճակատագրին մասին մէկ ու կէս միլիոն տարագրեալներու, որոնք, առանց ոչ մէկ ակնյայտ դիմադրութեան, ապաւինած էին կառավարութեան գթութեան. ճակատագրին մասին առնուազն մէկ միլիոն կիներու եւ երեխաներու, որոնք ոչ մէկ կերպով ըմբոստներ կրնային համարուիլ։

Φшшт. 1685-2

SUITE DU MEMORANDUM DE M. ZORIAN

**(Partie du rapport de M. Zorian,
présentée au comité Hollandais Scandinave,
et qui a été supprimée par M. Huysmans, Secrétaire dudit Comité,
et qui ne sera pas imprimée)**

MASSACRES, DEPORTATIONS ET RESISTANCE DES ARMENIENS

Les massacres commencèrent par le vilayet de Van, limitrophe du Caucase.

D'après le plan, tout le vilayet de Van fut partagé en régions; pour chaque région furent désignés des détachements spéciaux de Kurdes, de gendarmes et de tchetas, assistés par les troupes. Ils avaient pour tâche de commencer les opérations simultanément avec celles qui auraient lieu en ville.

Pour la réussite, le Comité Jeune-Turc avait décidé de s'emparer tout d'abord des chefs. Comme tels furent désignés de nos camarades: Ischkhan, député, Vramian et Aram.

Ischkhan, Président de l'assemblée Nationale à Van, rédacteur en chef du journal Aschkhatank (Travail, organe de notre parti à Van), connu surtout depuis les temps d'Abdul Hamid par sa bravoure et ses capacités militaires, fut pris le premier.

Chargé par le Gouverneur Djevdet bey de se rendre en mission à Schatakh, pour rétablir l'ordre troublé, en exerçant son influence sur les Kurdes et sur les Arméniens, il se mit en route avec ses quatre camarades, accompagnés de gendarmes.

Dans le village de Hertch, Ischkhan et ses quatres camarades, pendant qu'ils prenaient leur repos, tout tranquilles, furent brusquement assaillis par une nombreuse bande de tchetas embusqués. Ils tombèrent tous criblés de balles, sans pouvoir saisir leurs armes.

Vramian, député de Van au parlement ottoman, connu dans le journalisme et le monde politique, exerçant une grande autorité sur la population, écouté même par les adversaires politiques, fut invité chez le gouverneur avec le camarade Aram, aussitôt après le départ d'Ischkhan de Van. Aram, retenu par les affaires du parti, ajourna sa visite et échappa ainsi à la mort. Vramian,– notons, en sa qualité de député inviolable,– fut saisi, amené sur le champ au bateau, conduit à Datvan, de là à Bitlis, où il fut, dit-on, sous peu, étranglé et pendu.

A la nouvelle de l'ignoble assassinat d'Ischkhan, apportée à Van par les exécuteurs eux-mêmes, et celle de la disparition de Vramian, la ville fut alarmée. En même temps arrivèrent les nouvelles inquiétantes des provinces. Le Gouverneur, encouragé par son

ՊԱՐՈՆ ՁՕՐԵԱՆԻ ՅՈՒՇԱԳՐԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

(Հոլանտա-Սկանտինաւեան կոմիտէին ներկայացուած Պր. Ձօրեանի Յիշատակագրին այն բաժինը, որ յիշեալ կոմիտէի քարտուղար Պր. Հիւսմանզի կողմէ հանուեցաւ եւ պիտի չտպագրուի)

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ, ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՈՑ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Թարգմանութիւնը.—

Կոտորածները սկսան Կովկասի սահմանակից Վան նահանգէն։

Ծրագրուածին համաձայն, Վանի ամբողջ նահանգը բաժնուեցաւ շրջաններու, իւրաքանչիւր շրջանի համար ճշդուեցան քիւրտերէ, ժանտարմներէ եւ չեթաներէ բաղկացած յատուկ ջոկատներ, իրենց կողքին ունենալով բանակային զօրագունդեր։ Անոնց պարտականութիւնն էր՝ քաղաքին մէջ գործողութիւններու սկսելէն անմիջապէս ետք գործի անցնիլ գաւառներուն մէջ։

Յաջողութեամբ գործելու համար, Երիտ. թուրքերու կոմիտէն որոշած էր նախ եւ առաջ ձեռք անցընել [հայ] ղեկավարները։ Իբրեւ այդպիսին նշուեցան մեր ընկերներէն Իշխանը, երեսփոխան Վռամեանը եւ Արամը։

Իշխանը, նախագահ Ազգային ժողովի, գլխաւոր խմբագիր մեր կուսակցութեան պաշտօնաթերթ «Աշխատանք»ի, ծանօթ Ապտիւլ Համիտի ժամանակներէն իր քաջութեամբ եւ զինուորական կարողութեամբ, առաջին զոհը դարձաւ։

Կառավարիչ Ճեւտէթ պէյի կողմէ յատուկ առաքելութեամբ Շատախ ղրկուեցաւ ան՝ որպէսզի քիւրտերու եւ հայերու վրայ իր ազդեցութիւնը ի գործ դնելով խանգարուած կարգը վերահաստատէ. ժանտարմներու ընկերակցութեամբ, ան ճամբայ ելաւ չորս ընկերներով։

Հիրճ գիւղին մէջ, ուր Իշխան եւ իր չորս ընկերները կը հանգստանային, յանկարծ յարձակման ենթարկուեցան դարանակալ չեթայական բազմամարդ խումբի մը կողմէ։ Բոլորը գնդակահար սպաննուեցան, առանց որ կարենան զէնքի դիմել։

Վռամեան, օսմանեան խորհրդարանի երեսփոխան, ծանօթ հրապարակագրութեան եւ քաղաքական շրջանակներու մէջ, հեղինակաւոր անձնաւորութիւն ժողովուրդին մէջ, իր խօսքը լսելի նոյնիսկ իր քաղաքական հակառակորդներուն կողմէ, Իշխանի մեկնումէն անմիջապէս ետք, ընկեր Արամի հետ հրաւիրուեցաւ կառավարիչին մօտ։ Արամ, կուսակցութեան գործերով զբաղած ըլլալով, յետաձգեց իր այցելութիւնը եւ այդպէս փրկուեցաւ մահուընէ։ Վռամեանը — նշենք որպէս երեսփոխան իր անձեռնմխելիութիւնը — կալանաւորուեցաւ տեղւոյն վրայ, առաջնորդուեցաւ նաւ, տարուեցաւ Դատուան, անկէ Պիթլիս, ուր կ՚ըսուի թէ քիչ ետք խոշտանգուած ու կախաղան հանուած է։

Իմանալով Իշխանի անարգ սպանութեան լուրը, որ Վան բերած էին իրենք՝ ոճրագործները, եւ Վռամեանի անհետացումին մասին, քաղաքը ահազանգի մատնուեցաւ։ Միեւնոյն ատեն մտահոգիչ լուրեր հասան գաւառներէն։ Կառավա-

premier succès, procéda à l'accomplissement du second point du programme élaboré. Il exigea en certain contingent d'hommes "pour les besoins de guerre", en menaçant, en cas de refus, de représailles. Les Arméniens refusèrent, persuadés, à juste titre, que tous les Arméniens tombés dans la main du Gouvernement seraient anéantis.

L'assassinat, en plein jour, par les soldats turcs, de deux soldats arméniens accourus aux cris d'une femme qu'on voulait violer, forçait les Arméniens à prendre des précautions et à se mettre en état de défense.

Dès ce jour, des coups de fusil commencent à partir des deux côtés. C'est ainsi que surgit la soi-disant insurrection de Van.

La défense.– Un gouvernement provisioire est vite constitué des représentants des trois partis politiques. Aram, celui qui était échappé par un hasard qux griffes du Gouverneur, dirige la défense. On se mit à l'œuvre. Différentes commissions sont organisées. Hommes, femmes, adolescants, tous ont leur part de trvail.

Relativement mal armés, manquant surtout de munitions, coupés en deux parties en ville et au faubourg "Aïkestan", on n'eut pas le temps de se réunir, attaqués par des forces supérieures de 6000 soldats turcs et kurdes, bombardés sans cesse, les Arméniens sont obligés de se tenir sur la plus stricte défensive.

Dans de nombreuses positions fortifiées, dans les tranchées creusées, ils repoussent les attaques des assaillants. Mais peu après, ils réussissent à fondre leurs petits canons, à fabriquer des obus de la poudre, des matières explosives, des balles et même des douilles. Repris de force, ils passent peu à peu à l'offensive, s'emparant des casernes et des positions turques hors la ville. Les assiégés sont presque maîtres de la situation, lorsque des troupes russes, avec les volontaires arméniens, passent la frontière et s'approchent de Van. Les Turcs, qui attendaient à leur tour les forces de Khalil bey, pour écraser la ville, se retirent, en massacrant, en dernier lieu, les 150 jeunes hommes détenus dans la prison et en incendiant les églises et d'autres édifices.

Les clefs de la ville sont remises au Général russe par le Gouvernement provisoire. Aram est désigné gouverneur du vilayet. L'administration, la justice, la milice sont créées d'éléments arméniens.

La Défense de Schatakh.– Non moins glorieuse fut la défense du district montagnard de Schatakh. Aux premières tentatives des Kurdes, le Arméniens de cette région répondirent par des coups décisifs, ils les chassèrent, de même que le Kaïmakam, occupèrent tous les défilés et tinrent à toutes les attaques des hamidiés kurdes, jusqu'à l'arrivée, après la délivrance de Van, des volontaires arméniens du Caucase.

Dans les autres districts du vilayet de Van, les Arméniens malheureusement se laissèrent surprendre. Après avoir isolé et massacré les chefs d'abord, ensuite les hommes

րիչը, քաջալերուած իր առաջին յաջողութենէն, ձեռնարկեց կազմուած ծրագրի երկրորդ կէտին գործադրութեան։ Պահանջեց որոշ թիւով մարդիկ «պատերազմի կարիքներուն համար», սպառնալով, մերժումի պարագային, ծայրայեղ միջոցներու դիմելու։ Հայերը, մերժեցին, համոզուած յիրաւի, որ կառավարիչին ձեռքը անցած բոլոր հայերը պիտի ոչնչացուէին։

Թուրք զինուորներու կողմէ օր ցերեկով սպանութիւնը երկու հայ զինուորներու, որոնք փութացած էին օգնութեան հասնելու բռնաբարուելու վտանգին ենթակայ կնոջ մը,— կը հարկադրէր հայերը, որ կանխազգուշական միջոցներ ձեռք առնեն եւ անցնին պաշտպանողականի։

Այդ օրուընէ սկսեալ, հրացանները կ'որոտան երկուստեք։ Այսպէս է որ պայթեցաւ Վանի կարծեցեալ ըմբոստութիւնը։

[Ինքնա]պաշտպանութիւնը.— Ժամանակաւոր կառավարութիւն մը կազմուեցաւ, բաղկացած քաղաքական երեք կուսակցութեանց ներկայացուցիչներէն։ Արամ, ան որ դիպուածով ազատած էր կառավարիչին ճիրաններէն, կը ղեկավարէ պաշտպանութիւնը։ Գործի անցնելով կը կազմակերպուին տարբեր յանձնախումբեր։ Տղամարդիկը, կիները, պատանիները, բոլորին աշխատանքի բաժին կայ։

Յարաբերաբար դէշ զինուած, մանաւանդ անբաւարար ռազմամթերքով, հաղորդակցական կապի բացակայութեամբ քաղաքի եւ Այգեստան թաղամասի, որոնց միջեւ կապ ստեղծելու ժամանակ չէր եղած, այլապէս ենթարկուած 6000-ը անցնող թուրք եւ քիւրտ զինուորներու գերակշիռ ուժի մը կողմէ եւ անընդհատ տեղացող ռումբերու տարափին տակ,— ստիպուած էին հայերը բացառաբար պաշտպանողական դիրք բռնել։

Ամրացեալ բազմաթիւ դիրքերու վրայ, փորուած խրամներու մէջ, անոնք ետ կը մղեն նախայարձակները։ Քիչ անց, սակայն, կը յաջողին ձուլել իրենց փոքրիկ թընդանօթները, շինել վառօդէ ռումբեր, պայթուցիկ նիւթեր, փամփուշտներ եւ մինչեւ իսկ պարկուճներ։ Ուժերը հաւաքած՝ հետզհետէ կ'անցնին յարձակողականի եւ կը գրաւեն զօրանոցներ եւ քաղաքէն դուրս գտնուող թրքական դիրքերը։ Պաշարուածները կացութեան տէրն են դրեթէ, երբ ռուսական զօրքերը եւ հայ կամաւորները սահմանը կ'անցնին ու կը մօտենան Վանին։ Թուրքերը, որ իրենց կարգին կը սպասէին Խալիլ պէյի ուժերուն որպէսզի ճզմեն [ընդդիմութիւնը], կը նահանջեն, վերջին պահուն կոտորելով 150 գերի երիտասարդներ եւ կրակի տալով եկեղեցիներն ու այլ շէնքեր։

Ժամանակաւոր կառավարութեան կողմէ քաղաքին բանալիները կը յանձնուին ռուս զօրավարին։ Արամ կը նշանակուի նահանգին կառավարիչ։ Հայերով կը կազմըւի վարչութիւնը, արդարադատութիւնը եւ աշխարհազօրը։

Շատախի պաշտպանութիւնը.— Նուազ փառաւոր չեղաւ Լեռնային Շատախ գաւառակի պաշտպանութիւնը։ Քիւրտերու առաջին փորձերուն դէմ, այս շրջանի հայերը վճռական հարուածներով հակադարձեցին, փախուստի մատնեցին զանոնք ինչպէս եւ գայմագամը, գրաւեցին բոլոր կիրճերը եւ դիմադրեցին համիտիէ քիւրտերու բոլոր յարձակումներուն, մինչեւ որ, Վանի ազատագրումէն ետք,հասան Կովկասի հայ կամաւորները։

Վանի նահանգին միւս գաւառներուն մէջ, դժբախտաբար, անակնկալի եկան հայերը։ Նախ եւ առաջ [թուրքերը] կը մեկուսացնէին ու կը սպաննէին ղեկավարնե-

plus ou moins valides, on les isolait, sous prétexte de les envoyer à la construction des routes, on y procédait aux massacres généraux. Une partie des Arméniens réussit à se sauver au Caucase. D'autres se réfugièrent dans les îlots du lac de Van, ou, partagés par groupes, traqués par les kurdes et les tchetas, ils se cachaient ou se défendaient dans les montagnes et dans les forêts.

Les volontaires arméniens s'étant répartis dans les districts, combattaient les Turcs et délivraient les Arméniens, en grandes partie femmes et enfants.

Environ 200.000 Arméniens en tout furent sauvés dans les régions conquises en été 1915.

Les massacres et la résistance à Mousch.– Les troupes russes et les volontaires se dirigèrent vers Bitlis et la vallée de Mousch où les massacres commencés, les Arméniens, par endroits, luttaient désespérément. Là aussi le Gouvernement Jeune-Turc avait réussi à arrêter, par ruse, quelques notables de la ville, à les enfermer avec le supérieur du couvent S. Karapet, Vartan Vartapet, très influent dans le pays, et ils furent brûlés vifs, après de longues tortures et profanations.

Le quartier arménien de Mousch, après trois jours de résistance acharnée, bombardé sans arrêt, fut détruit et pris. Plusieurs familles mirent le feu, à la dernière minute à leurs maisons, et furent la proie des flammes avec tous leurs biens.

Femmes, filles, enfants, se jetèrent dans le fleuve. Le reste des femmes et des filles furent partagées comme butin de guerre. Quelques hommes seulement purent rompre la chaîne des troupes et des kurdes pour gagner les hauteurs de Sassoun. Parmi les défenseurs tombés fut un des vieux combattants Hadji Agop.

La lutte inégale continuait dans les montagnes. Plusieurs fois les Turcs et les Kurdes furent battus. Mais les munitions manquaient aux Arméniens. Les chefs Koriun, Tigran, Medjo et autres tombèrent. Rouben et Vahan Papazian (député) dirigeaient la défense encore quelque temps.

En même temps les troupes russes avec les détachements de volontaires arméniens avançaient vers la vallée de Mousch, des deux côtés. On espérait sauver la plus grande partie de la population. Mais à peine pénétrées dans la vallée, les troupes russes reçurent l'ordre de se retirer sur toute la ligne. 100.000 Arméniens environ furent abandonnés à la merci des kurdes et des "kassab tabouri" (bataillon des bouchers) de Kiasim bey. Cette retraite précipitée, imprévue, qui, de plus, ne put être justifiée par des raisons stratégiques, coûta la vie non seulement des Arméniens abandonnés à Mousch, à Sassoun, mais aussi celle de dizaines de mille qui périrent dans l'émigration en masse de toutes les régions conquises. Elle eut, en outre, pour conséquences, la dévastation complète de Van et des autres districts et … la substitution du régime de gouvernement arménien, établi dans le vilayet après la retraite des Turcs, par le régime russe.

La résistance ne cessait quand même pas, après la retraite des Russes. Les chefs Rouben et Papazian, en tête d'un petit détachement armé, mais presque sans cartouches, réussissent à se frayer passage jusqu'aux lignes russes. D'autres groupes

ը, ապա՝ առաւել կամ նուազ ամբակազմ տղամարդիկը. ճամբաներու չինութեան ղրկելու պատրուակին տակ, կ՚առանձնացնէին զանոնք ու կը սպաննէին։ Հայերուն մէկ մասը յաջողեցաւ փախուստ տալ Կովկաս։ Ուրիշներ ապաստանեցան Վանայ լճի կղզեակներուն մէջ, ուր, քիւրտերուն եւ չեթաներուն կողմէ հետապնդուած, կը թաքնուէին անոնք, կամ պաշտպանողական կռիւ կը մղէին լեռներու եւ անտառներու մէջ։

Հայ կամաւորները, գաւառները մեկնելով կը կռուէին թուրքերուն դէմ եւ կ՚ազատէին հայերը, մեծաւ մասամբ կիներ ու երեխաներ։

1915 թ. ամրան, վերագրաւուած շրջաններուն մէջ շուրջ 200.000 հայեր փրկուեցան։

Կոտորածներն ու դիմադրութիւնը Մուշի մէջ.— Ռուսական զօրքերն ու կամաւորները ուղղուեցան դէպի Պիթլիս եւ Մշոյ դաշտ, ուր ջարդերը սկսած էին եւ հայերը տեղ-տեղ կը պայքարէին յուսահատօրէն։ Հոս եւս Երիտ. թուրքերու կառավարութիւնը յաջողած էր խորամանկութեամբ ձերբակալել քաղաքին կարգ մը երեւելի անձնաւորութիւնները, բանտարկել զանոնք, իրենց հետ միասին նաեւ երկրին մէջ մեծ հեղինակութիւն վայելող Ս. Կարապետ վանքի վանահայր Վարդան վարդապետը. բազում չարչարանքներու եւ պղծագործութիւններու ենթարկուելէ ետք, բոլորը հրկիզուեցան ողջամբ։

Մուշի հայկական թաղամասը, երեք օր կատաղօրէն դիմադրելէ ետք, անընդհատ ռմբակոծումի ենթարկուելով քանդուեցաւ եւ գրաւուեցաւ։ Բազմաթիւ ընտանիքներ վերջին պահուն կրակի տուին իրենց բնակարանները եւ իրենց ունեցածքով միասին զոհ գացին բոցերուն։

Կիները, աղջիկներն ու մանուկները իրենք զիրենք նետեցին գետ։ Մնացեալ մասը կիներուն եւ աղջիկներուն, իբրեւ պատերազմական աւար, [թուրքերը] բաժնեցին իրենց միջեւ։ Քանի մը տղամարդիկ միայն յաջողեցան ճեղքել զօրքին ու քիւրտերուն [պաշարման] շղթաները եւ անցնիլ Սասնոյ բարձունքները։ Զոհուողներու շարքին մէջ կը գտնուէր հին մարտիկ Հաճի Յակոբը։

Անհաւասար կռիւը կը շարունակուէր լեռներուն մէջ։ Շատ անգամ թուրքերն ու քիւրտերը պարտութիւն կրեցին։ Սակայն հայերու զինապաշարը կը սպառէր։ Խմբապետներ Կորիւնը, Տիգրանը, Մճոն եւ ուրիշներ ինկան։ Ռուբէնն ու Վահան Փափազեանը (երեսփոխան) ատեն մը եւս շարունակեցին ինքնապաշտպանութեան պայքարը։

Միեւնոյն ատեն, ռուսական զօրքերն ու հայ կամաւորական գունդերը երկու թեւով կը յառաջանային Մշոյ դաշտին ուղղութեամբ։ Յոյս կար փրկելու ժողովուրդին մեծագոյն մասը։ Բայց հազիւ [Մշոյ] դաշտ մուտք գործած, ռուսական զօրքերը հրաման ստացան նահանջելու ամբողջ ռազմաճակատի գծի երկայնքին։ Շուրջ 100.000 հայեր մատնուեցան վրէժխնդրութեանը քիւրտերուն եւ Քեազիմ պէյի «Քասապ թապուրիին» (մսագործներու ջոկատ)։ Զնախատեսուած եւ հապշտապօրէն կատարուած այս նահանջը, որ այլապէս նաեւ կարելի չեղաւ արդարացնել ռազմավարական նկատումներով, արժեց կեանքը ոչ միայն Մշոյ եւ Սասունի լքեալ հայերուն, այլ նաեւ տասնեակ հազարաւոր ուրիշներու, որոնք մահացան ազատագրուած բոլոր շրջաններէն զանգուածային գաղթի ժամանակ։ Այլապէս նաեւ այս նահանջի հետեւանքներէն պէտք է համարել Վանի եւ իր գաւառներուն ամբողջական ամայացումը, ինչպէս նաեւ թուրքերու նահանջէն ետք հաստատուած հայկական կառավարութեան փոխարինումը ռուսական վարչակարգով։

encore le suivirent avec succès. A la seconde invasion des troupes russes dans la région de Mousch, apparurent encore environ 1500 Arméniens. Ils étaient du nombre de ceux qui se tenaient dans les montagnes, durant de longs mois, au prix d'incroyables privations, étant obligés d'attaquer parfois les kurdes ou les gendarmes pour se procurer des vivres et des cartouches.

En outre, environ 5000 Arméniens furent livrés aux volontaires et aux Comités arméniens par quelques tribus kurdes, qui les gardaient en dépit de toutes les menaces des Jeunes-Turcs.

Les massacres de Khniss commencèrent le 4 Mai. Les Arméniens déportés de cette région furent massacrés à Vartar [?]. Ceux qui évitèrent la caravane des déportés, en se groupant les armes à la main, purent se sauver en grande partie.

Le gros de la population arménienne à Kap [?], à Boulanik, à Melezkerd put battre les Kurdes et passer dans la zone occupée par les troupes russes.

Les déportations dans les régions d'Erzeroum, Keghi, Mamakhatoun, Baïbourt s'accomplirent sans le moindre désagrément pour le Gouvernement. Le Gouverneur Tahsin bey, connu comme diplomate le plus fin, avec les autres chefs des Jeunes Turcs d'Erzeroum agissaient avec l'habileté et la fermeté exemplaires. Leur premier acte fut l'arrestation et l'assassinat près d'Erzindjian des chefs en vue de notre parti:

1.- Pilos, du Comité Central, rédacteur de notre organe "Haratch" (En Avant), un des fervants de la cause Jeune Turque de jadis, comptant parmi les Jeunes Turcs nombre d'amis intimes.

2.- Atrouni, rédacteur responsable du même journal.

3.- Stéphanian, de l'Arménie russe, exilé en Sibérie en 1891, évadé en Perse, échappé en 1911 à Tauris à l'échafaud russe, pour agitation anti-russe en Perse et condamné par les Turcs comme agent du Gouvernement russe! Avec eux périrent Herant Keossayan et Kegham Palassanian. Le crime de celui-ci consistait en ce que son frère se battait en France dans la Légion Etrangère.

Le 2 mai, commence la déportation de la vallée d'Erzeroum. A peine cette déportation terminée, est proclamé le 22 mai, l'ordre général de déportation de la ville d'Erzeroum et de tous les autres districts. Cet ordre émanait de Constantinople où, avant la proclamation de l'acte officiel de déportation (20 mai) le Gouvernement avait arrêté et exilé (20 avril) tous les membres de tous les partis politiques, tous les intellectuels plus ou moins en vue. Parmi eux se trouvaient de nos camarades: Maloumian-Aknouni publiciste connu, Vartkess (député à la chambre ottomane), Zartarian (rédacteur en chef de notre organe "Azadamart", écrivain très célèbre), Khajak (publiciste, professeur), Sarkis Parseghian, Tiriakian, Docteur Pashayan, Minassian, journaliste, Barsegh

Այսուհանդերձ դիմադրութիւնը չէր դադրեր ռուսերու նահանջէն ետք եւս։ Ռուբէն եւ Փափազեան, գլուխը անցած փոքր ջոկատի մը — որ զինուած էր թէեւ բայց առանց փամփուշտի գրեթէ — յաջողեցան ճամբայ հարթել մինչեւ ռուսական գիծերը։ Ուրիշ խումբեր ալ հետեւեցան անոնց յաջող կերպով։ Ռուսական զօրքերու Մշոյ շրջան երկրորդ ներխուժման ատեն, շուրջ 1500 հայեր երեւան եկան։ Անոնցմէ էին ասոնք, որոնք երկար ամիսներու ընթացքին, ի դին անհաւատալի զրկանքներու, կը դիմադրէին լեռներուն մէջ, ստիպուած ըլլալով երբեմն յարձակիլ քիւրտերու եւ ժանտարմներու վրայ որպէսզի ուտեստեղէն կամ փամփուշտ ձեռք բերեն։

Ասկէ զատ, շուրջ 5000 հայեր յանձնուեցան կամաւորներուն եւ հայկական կոմիտէներուն՝ կարգ մը քիւրտ ցեղապետներու կողմէ, որոնք կը պահէին զանոնք, հակառակ Երիտ. թուրքերու բոլոր սպառնալիքներուն։

Խնուսի ջարդերը սկսան Մայիս 4-ին։ Այս շրջանէն տարագրուած հայերը կոտորուեցան Վարտարի [?] մէջ։ Անոնք որ խոյս տուին տարագիրներու կարաւաններէն, զինեալ խումբեր կազմեցին ու յաջողեցան մեծ մասամբ փրկուիլ։

Կապի [?] Պուլանըխի եւ Մանազկերտի հայ բնակչութեան մեծագոյն մասը յաջողեցաւ յաղթել քիւրտերուն եւ անցնիլ ռուսական զօրքերու կողմէ գրաւուած շրջանները։

Կառավարութիւնը դժուարութիւն չունեցաւ տարագրելու Էրզրումի շրջանները,— Քղի, Մամախաթուն, Բաբերդ։ Կառավարիչ Թահսին պէյ, ծանօթ իբրեւ ճկուն դիւանագէտ, Էրզրումի Երիտ. թուրքերու միւս ղեկավարներուն հետ միասին կը վարուէին թէ՛ ճարպիկութեամբ եւ թէ խստութեամբ. իրենց առաջին գործը եղաւ ձերբակալումն ու սպանութիւնը Երզնկայի մէջ մեր կուսակցութեան յայտնի ղեկավարներուն։

ա- Փիլոսը, անդամ Կեդր. կոմիտէի, խմբագիր մեր պաշտօնաթերթ «Յառաջ»ի, ջատագովներէն մէկը երբեմնի Երիտ. թուրքերու դատին, որ բազմաթիւ բարեկամներ ունէր Երիտ. թուրքերու շարքերուն մէջ։

բ- Ատրունի, պատասխանատու խմբագիր միեւնոյն լրագրին։

գ- Ստեփանեան, ռուսահայ, 1891-ին Սիպերիա աքսորուած, փախուստ տուած Պարսկաստան, 1911-ին փրկուած ռուսական կախաղանէ՝ հակառուս խռովութեան մեղադրանքով, իսկ թուրքերու կողմէ ամբաստանուած որպէս ռուս կառավարութեան գործակալ...

Ասոնց հետ կորստեան մատնուեցան Հրանտ Քէօսէեանն ու Գեղամ Պալասանեանը։ Այս վերջինին մեղքը այն էր որ իր եղբայրը Ֆրանսայի մէջ զինուոր էր Լեժիոն Էթրանժէի մէջ։

Մայիս 2-ին կը սկսի Կարնոյ դաշտին տարագրութիւնը։ Հազիւ աւարտած այս տարագրումը, Մայիս 22ին ընդհանուր հրաման կ՚արձակուի Էրզրում քաղաքի եւ միւս բոլոր գաւառներու տարագրութեան։ Հրամանը կու գար Կոստանդնուպոլսէն. այս հրամանը հասնելէն առաջ (20 Մայիս), կառավարութիւնը ձերբակալած եւ աքսորած էր (20 Ապրիլ) քաղաքական բոլոր կուսակցութեանց պատկանող առաւել կամ նուազ չափով աչքի զարնող բոլոր մտաւորականները։ Անոնց մէջ կը գտնուէին մեր ընկերներէն՝ ծանօթ հրապարակագիր Մալումեան Ակնունին, Վարդգէսը (Օսմ. խորհրդարանի անդամ), Զարդարեանը (մեր պաշտօնաթերթ «Ազատամարտ»ի խմբագրապետ եւ անուանի գրող), Խաժակը (հրապարակագիր, ուսուցիչ), Սարգիս Բարսեղեանը, Թիրեաքեանը, Տոքթ. Փաշայեանը, Մինասեանը, Բարսեղ Շահպազը, Գալֆայեանը, Սիմանթոն (բանաստեղծ), Վարուժանը (բանաստեղծ),

Chahbaz, Kalfayan, Siamanto (poète), Varoujan (poète), Noradounkian et nombre d'autres.

Leur fin demeure inconnue. Vartkess, avec Zohrap (écrivain, publiciste distingué) auraient été tués près d'Ourfa. Zartarian, pendu à Konia, Barsegh Schahbaz à Kharpout.

Le groupe de Hentchakistes, avec Hamparzoum Boyadjian (député à la Chambre), furent pendus en même temps. Ce fut aussi l'une des mesures préventives. Tous les organes centraux furent d'un coup supprimés. Les provinces [ne] pouvaient attendre les nouvelles et les directives du centre; les relations entre les différentes régions entretenues par l'intermédiaire des organes centraux furent par cela même interrompues: ce qui se passerait dans un coin de la Turquie, ne serait pas connu dans l'autre.

On fait tout pour ne pas provoquer les soupçons: les déportés n'iraient pas trop loin, ils s'arrêteraient à Erzindjian, le plus à Diarbékir. Ce ne serait que pour la période aiguë de la guerre, après quoi ils pourraient revenir. Le Gouverneur lui-même accompagne la caravane des déportés. Il leur tient des discours encourageants, fait distribuer à Baïbourt 2000 kilos de pain. Un gendarme est sévèrement puni pour une insulte infligée à l'un des déportés. Les Allemands aussi secourent les nécessiteux. On prend de nombreuses photographies pour avoir le souvenir historique d'un peuple qui avait dans le temps habité la Turquie. C'est à Erzindjian que les déportés apprennent les premières nouvelles sinistres et à Kamach Haghas [?], étape préférée des bourreaux jeunes turcs, devenus désormais historique, qu'ils subissent les premiers massacres.

La même tactique d'extrême prudence est suivie à Trépizonde, Erzindjian, Kerassonde, Samson, Sivas, Kharpout, Malatia, etc. Cependant, dans ces régions, on ne tourmente pas les déportés en leur faisant parcourir des centaines de kilomètres. On commence à les massacrer après une seule journée de traversée, ou on profite de la présence de la Mer Noire, pour y noyer les victimes.– hommes, femmes, enfants. Là aussi les chefs sont saisis et exterminés en premier lieu. Nos camarades à Kharpout, emprisonnés, parmi eux Karo, Astikian, mettent eux-mêmes le feu dans la prison et périssent dans les flammes.

Résistance.– Quelques milliers d'Arméniens se retirent quand même dans les fôrets et dans les montagnes; la plupart sont tombés dans la lutte; une partie s'est tenue jusqu'à l'arrivée des troupes russes ou des volontaires arméniens. Quelques groupes frayent eux-mêmes leur passage jusqu'aux lignes russes. Le premier arrive le groupe de Kaïkarouni [?], de la région de Trépizonde. La plus longue et difficile Odyssée est celle de Mourad. Invité aussi chez le Gouverneur de Sivas, il faillit être arrêté, mais prévenu à temps par un gendarme turc, il se cacha. Les massacres commencés à Sivas, il organise un groupe et se met à attaquer à son tour les gendarmes. Dans une longue série de combats, il réussit à atteindre Samsoun; là il s'empare dans le port d'un voilier turc, fait provision de vivres et d'eau, aux yeux des gendarmes abrités dans les postes et s'embarque pour Batoum. Sur la mer il soutient deux attaques des canots automobiles turcs, où il perd un de nos anciens camarades Egho. Vartan Chahbaz avec son groupe passe dans les environs de Tivrig près de deux ans. On le croyait depuis

[Սերովբէ] Նորատունկեանը եւ բազմաթիւ ուրիշներ։

Ասոնց ճակատագիրը կը մնայ անյայտ։ Վարդգէս եւ Զօհրապ (գրող, նշանաւոր հրապարակագիր) սպաննուած պէտք է ըլլան Ուրֆայի մերձակայքը. Զարդարեանը՝ կախաղան հանուած Գոնիայի մէջ. Բարսեղ Շահպազը՝ Խարբերդ։

Հնչակեաններու խումբը, Համբարձում Պոյաճեանի հետ մէկտեղ (խորհրդարանի անդամ), կախուեցան միեւնոյն օրերուն։ Այս ալ նախագուշական միջոցներէն մէկն էր։ Բոլոր կեդրոնական մարմինները խափանուեցան։ Գաւառները ցուցմունք չէին կրնար ստանալ կեդրոնէն. այսպիսով խզուեցան այն յարաբերութիւնները որ տեղի կ՚ունենային կեդրոնական մարմիններու խողովակով.— Թուրքիոյ մէջ շրջանին տեղի ունեցող անցուդարձերը պէտք չէ գիտցուէին միւսներէն։

Ամէն ինչ կը կատարուի կասկածներ չարթնցնելու նպատակով։ Տարագրեալները պէտք չէ տարուէին շատ հեռուները, պէտք է կանգ առնէին Երզնկա, շատ-շատ Տիարպէքիր։ Իբր թէ ասիկա պատերազմի նեղ օրերուն համար էր. յետոյ պիտի վերադառնային։ Կառավարիչը անձամբ կ՚ընկերանայ տարագիրներներու կարաւանին։ Քաջալերական ճառեր կը խօսի անոնց, Բաբերդի մէջ 2000 քիլօ հաց բաժնել կու տայ։ Ժանտարմ մը խստօրէն կը պատժուի՝ տարագրեալներէն մէկը անարգած ըլլալուն համար։ Գերմանացիները եւս օգնութիւն կը փութացնեն կարիքաւորներուն։ Կը լուսանկարեն զանոնք բազմիցս, որպէսզի պատմական յիշատակ ունենան ժողովուրդէ մը, որ ատենօք ապրած է Թուրքիոյ մէջ։

Երզնկայի մէջ է որ տարագիրները կ՚իմանան առաջին չարաշուք լուրերը, իսկ Կամախի մէջ, որ դահիճներու նախընտրած հանգրուանն է, անոնք կ՚ենթարկուին առաջին կոտորածներուն։

Ծայրայեղ զգուշաւորութեան միեւնոյն մարտավարութիւնն է որ ի գործ կը դրուի Տրապիզոն, Երզնկա, Կիրասոն, Սամսոն, Սըվազ, Խարբերդ, Մալաթիա եւ այլ վայրերու մէջ։ Այսուհանդերձ, այս շրջաններուն մէջ տարագիրները չեն չարչարեր՝ հարիւրաւոր քիլոմեթրեր քալել տալով անոնց։ Զարդել կը սկսին միայն մէկ օրուան ճամբորդութենէ ետք, կամ Սեւ ծովու մօտիկութենէն օգտուելով՝ խեղդամահ կ՚ընեն իրենց զոհերը՝ տղամարդ, կին ու երեխայ։ Հոն եւս նախ եւ առաջ կը վերցուին ու կը սպաննուին ղեկավար դէմքերը։ Խարբերդի մէջ, կալանաւոր մեր ընկերները, անոնց մէջ Կարոն, Աստիկեանը, իրե՛նք կրակի կու տան բանտը եւ կը մահանան բոցերուն մէջ հրկիզուած։

<u>Դիմադրութիւն</u>.— Այսուհանդերձ, քանի մը հազար հայեր կը քաշուին անտառներու մէջ եւ լեռները. մեծ մասը կը մահանայ կռիւներու մէջ. մէկ մասը կը տոկայ մինչեւ ռուս զօրքի կամ հայ կամաւորներու ժամանումը։ Քանի մը խումբեր՝ իրե՛նք ճամբայ կը հարթեն մինչեւ ռուսական գիծերը։ Առաջինը կը հասնի Տրապիզոնէն Գայգարունիի [?] խումբը։ Ամէնէն երկար ոդիսականը Մուրատի ճամբորդութիւնն է։ Սեբաստիոյ կառավարիչը իր մօտ հրաւիրած ըլլալով, քիչ կը մնար որ ան ձերբակալուէր. բայց նախապէս թուրք ժանտարմի մը կողմէ զգուշացուած ըլլալով, թաքստոց կը մտնէ։ Սեբաստիոյ ջարդերը սկսելուն պէս, խումբ մը կը կազմէ եւ կը սկսի իր կարգին յարձակիլ ժանտարմներուն վրայ։ Շարք մը երկարատեւ կռիւներէ ետք, կը յաջողի հասնիլ Սամսոն. հոն, նաւահանգիստին մէջ կը գրաւէ առագաստանաւ մը, ուտեստեղէնի եւ ջուրի պաշար կը հաւաքէ եւ, պահականոցներու մէջ ծուարած ժանտարմներու աչքին առջեւ, կը նաւարկէ դէպի Պաթում։ Ծովուն վրայ կը դիմադրէ թրքական երկու մակոյկներու յարձակումներուն, որոնց ընթացքին կը զոհուի մեր հին ընկերներէն Եղոն։ Վարդան Շահպազը իր խումբով

longtemps perdu, comme son camarade Bidza, pendu. Dans une des attaques, obligé de se retirer vers l'est, il traverse les lignes russes et vient à Erzindjian.

Citons ici le grand service rendu par les tribus kurdes Kizilbachi, surtout dans le district de Dersime, près d'Erzindjian. Ils ont protégé non seulement les Arméniens de leur région, mais donnèrent aussi toute aide et protection à tous ceux qui, échappés aux massacres, se réfugiaient chez eux. Environ 7000 Arméniens furent livrés par eux aux comités arméniens après la prise d'Erzindjian.

Toute autre fut l'attitude des Arméniens de Schabine-Karahissar, au sud de Kerassonde. Ils étaient connus comme de bons artisans, industriels, attachés passionnément à la culture; ils faisaient tous les sacrifices pour maintenir en état florissant leurs écoles. Pas d'illetrés chez eux.

A la nouvelle des déportations, toute la population résolut unanimement de ne pas obéir à l'ordre. C'était bien après les déportations d'Erzeroum et d'Erzindjian.

La rencontre avec les gendarmes, pénétrés dans une maison arménienne, avec une sale intention, fut pour eux le premier avertissement. Après la tentative du Gouvernement d'arrêter deux jeunes hommes, attirés par ruse au Konak, tentative terminée par la fusillade des Arméniens, sentant leur heure sonnée, ils brûlèrent eux-mêmes leurs maisons avec toutes leurs richesses et gagnèrent la vieille forteresse située sur la hauteur (juin 1915).

Isolés du monde, sans aucun espoir de salut, les "morituri" de Schabine-Karahissar attendaient la fin, comme les premiers chrétiens, ou plutôt comme les gladiateurs dans les arènes de Rome.

En la personne d'un vieux révolutionnaire, Ghoukass, ils avaient un commandant ferme et expérimenté. Après de nombreuses attaques et des sommations vaines de se rendre, les Turcs furent forcés de faire venir les canons modernes et les mitrailleuses. Les assiégés, repoussaient quand même toutes les attaques. Un mois passé, le moral était excellent. Sous la grêle de balles et d'obus, les chœurs des jeunes gens, des vieillards, des jeunes filles faisaient retentir des chants religieux ou révolutionnaires.

Ghoukass cependant fut tué; les vivres s'épuisèrent et il restait très peu de munitions. Les assiégés décidèrent la sortie desespérée. Un grand nombre de jeunes filles et de femmes demandèrent la mort pour éviter les harems turcs. Toute la provision de poison fut mise en disponibilité. Plus de 300 personnes purent obtenir leurs doses. Celles qui hésitaient, qui tremblaient au dernier moment furent aidées par leurs mères et sœurs. Leurs derniers adieux dans les bras des leurs furent l'épisode le plus tragique dans l'épopée de Schabine-Karahissar. Le reste des femmes et des filles résolurent de suivre leurs maris et leurs frères. L'attaque eut lieu pendant la nuit. Dans ce corps à corps inégal 800 hommes et femmes à peine purent traverser la chaîne des soldats et gagner les montagnes environnantes. Là ils se dispersèrent par groupes, traqués sans trève. On ne sait plus rien de leur sort. Jusqu'à présent deux seulement de la fournaise

կ՚անցնի Տիվրիկի շրջանները, ուր կը մնայ մօտ երկու տարի։ Վաղուց կը կարծուէր որ մեռած է, ինչպէս որ կախաղան հանուած էր ընկերը՝ Բիճան։ Յարձակումներէն մէկուն ընթացքին ստիպուած ըլլալով նահանջել դէպի արեւելք, ռուսական գիծերու մէջէն անցնելով հասաւ Երզնկա։

Յիշատակենք այստեղ քրտական Գզըլպաշի ցեղախումբին մատուցած ծառայութիւնները, մանաւանդ Տերսիմ գաւառակին մէջ, Երզնկայի մօտ։ Անոնք ոչ միայն պաշտպան կանգնեցան իրենց շրջանի հայերուն, այլ նաեւ ամէն կարգի պաշտպանութիւն եւ օգնութիւն ցոյց տուին բոլոր անոնց, որ ջարդերէն ազատելով իրենց մօտ կ՚ապաստանէին։ Երզնկայի առումէն ետք, անոնք շուրջ 7000 հայեր յանձնեցին հայկական կոմիտէներուն։

Բոլորովին այլ եղաւ կեցուածքը Կիրասոնի հարաւը գտնուող Շապին Գարահիսարի հայերուն։ Ճանչցուած էին անոնք իբրեւ լաւ արհեստաւորներ ու արուեստաւորներ, ջերմօրէն կապուած մշակոյթի. ամէն զոհողութիւն յանձն կ՚առնէին ծաղկուն վիճակի մէջ պահելու համար իրենց վարժարանները։ Անգրագէտ չկար իրենց մէջ։

Տարագրուելու լուրը իմանալով, ամբողջ բնակչութիւնը միաձայն վճռեց չենթարկուիլ հրամանին։ Ասիկա տեղի կ՚ունենար Էրզրումի եւ Երզնկայի հայութեան տարագրուելէն ետք։

Բախումը ժանտարմներուն հետ, որոնք կեղտոտ նպատակով հայու մը տունը մտած էին, հանդիսացաւ առաջին ազդարարութիւն իրենց համար։ Վճռական պահը հասած նկատեցին անոնք երբ կառավարութիւնը փորձեց ձերբակալել նենգօրէն քաղաքապետարան տարուած երկու երիտասարդներ. փորձը վերջացաւ հրացանաձգութեամբ եւ հայեր կրակի տալով իրենց տուներն ու ունեցուածքը՝ բարձրացան հին միջնաբերդը (Յունիս 1915)։

Աչխարհէն կտրուած, առանց փրկութեան որեւէ յոյսի, Շապին Գարահիսարի մահապարտները կը սպասէին իրենց վախճանին, նման առաջին դարերու քրիստոնեաներուն կամ, աւելի ճիշդ, հռոմէական կրկէսներու սուսերամարտիկներուն։

Յանձինս հին յեղափոխականի մը, Ղուկասին, անոնք ունէին անվեհեր եւ փորձառու հրամանատար մը։ Բազմաթիւ յարձակումներէ եւ յանձնուելու անօգուտ ազդարարութիւններէ ետք, թուրքերը ստիպուեցան բերել տալ արդիական թնդանօթներ եւ գնդացիրներ։ Պաշարեալները, այսուհանդերձ, բոլոր յարձակումները ետ կը մղէին։ Ամիս մը անց, բարոյականը սքանչելի էր տակաւին։ Գնդակներու եւ ռումբերու կարկուտին տակ, երիտասարդները, ծերունիներն ու աղջիկները միաձայն կը թնդացնէին կրօնական եւ յեղափոխական երգեր։

Այս բոլորով մէկտեղ, Ղուկաս սպաննուեցաւ. ուտեստեղէնը սպառեցաւ եւ շատ քիչ ռազմամթերք կը մնար։ Պաշարեալները որոշեցին [պաշարման օղակը] ճեղքելու յուսահատական փորձ մը։ Մեծ թիւով աղջիկներ ու կիներ, թրքական հարէմներ չիյնալու համար, նախընտրեցին մահը։ Ամբողջ թոյնի պաշարը տրամադրուեցաւ իրենց։ Աւելի քան 300 հոգի օգտուեցաւ այդ դեղաչափէն։ Վերջին պահուն տատամսողներուն, դողդղացողներուն օգնութեան հասան իրենց մայրերն ու քոյրերը։ Իրենց հարազատներու գրկին մէջ տրուած վերջին հրաժեշտը՝ Շապին Գարահիսարի դիւցազներգութեան ամէնէն ողբերգական դրուագներէն մէկը հանդիսացաւ։ Մնացեալ կիներն ու աղջիկները վճռեցին հետեւիլ իրենց ամուսիններուն եւ եղբայրներուն։

Յարձակումը տեղի ունեցաւ գիշերը։ Այս անհաւասար գիրկընդխառնումին մէջ հազիւ 800 տղամարդ ու կին յաջողեցան ճեղքել զինուորներու շղթան եւ բարձրա-

de Schabine-Karahissar purent arriver l'un à Trépizonde, l'autre à Erzindjian, après avoir erré durant des mois pour apporter au monde les détails de leur lutte unique.

Ourfa.– La défense d'Ourfa (septembre 1915) rappelle dans ses traits généraux celle de Schabine-Karahissar. La même psychologie de la population. Cependant, les victimes de cette ville coururent trop tard aux armes, après que leurs notables et une partie des jeunes gens avaient été pris et exécutés par les Turcs. Résolus à mourir avec honneur, ils se retranchèrent dans les différents points de la ville. Aux sommations des Turcs de se rendre, à leurs assertions qu'aucun danger ne les menaçait, les Arméniens réclamèrent le retour des notables déportés.Les filles prenaient part également dans les combats. Après une lutte d'un mois, le quartier arménien fut pris. Le coup de grâce aux positions arméniennes fut porté par l'officier allemand qui dirigeait le feu d'artillerie!

Une victoire de plus pour l'armée allemande.

Zeitoun.– Célèbre par son héroïsme séculaire et, de nos jours, par sa défense de 1915. Lors des massacres généraux, Zeitoun fut naturellement l'objet de l'attention exceptionnelle des jeunes-turcs. Les premières persécutions commencèrent à Zeitoun avant la déclaration de la guerre. Les notables et nombre de jeunes gens furent arrêtés et affreusement maltraités. Nous avons déjà mentionné la mort de Nazareth Tchavouch, l'un des héros de 1895. A la veille des grandes déportations, des forces considérables furent dirigées contre Zeitoun. Les habitants, après quelques rencontres, se retirèrent dans les montagnes. Cependant l'intervention du Catholicos arménien de Sis, qui agissait sous l'incitation des Turcs et des Allemands, força les zeitouniotes à se livrer. Ils furent tous immédiatement exterminés. Le reste des zeitouniotes finirent leurs jours dans le désert de Mésopotamie.

Le Gouvernement Jeune-Turc exerçait, dans de pareils cas, la pratique favorite d'Abdul Hamid, pour obliger les Arméniens à ne pas courir aux armes, ou à déposer les armes. Il menaçait, en cas de refus et de résistance, de se venger sur la masse populaire sans défense.

Nous venons de voir, dans notre exposé que les Jeunes-Turcs, dans cette guerre, provoquaient eux-mêmes les Arméniens à quelque contrecoup, pour avoir dans les mains des preuves de la révolte des Arméniens. En face de cette attitude des Turcs, les Arméniens en général, et parmi eux les membres des partis politiques furent forcés de faire toutes sortes de concessions, jusqu'au sacrifice de leur vie, dans le faible espoir de détourner le coup prêt à s'abattre sur la tête de la grande masse populaire.

C'était là la plus grande tragédie de nombre de nos camarades à Erzeroum, à Trépizonde, à Kerassonde, à Kharpout, etc. qui se joignaient aux caravanes de déportés, persuadés que leur perte était imminente et le salut de la masse très douteux.

նալ մօտակայ լեռները։ Հոն, խիստ հետապնդումի տակ, անոնք ցրուեցան խումբերով։ Ոչինչ գիտենք իրենց ճակատագրին մասին։ Շապին Գարահիսարի դժոխքէն ցարդ երկու հոգի միայն կրցան հասնիլ՝ մէկը Տրապիզոն, միւսը Երզնկա, որպէսզի երկու ամիս թափառելէ ետք, պատմեն աշխարհին իրենց եզակի պայքարին մանրամասնութիւնները։

Ուրֆա.— Ուրֆայի ինքնապաշտպանութիւնը (Սեպտեմբեր, 1915) իր ընդհանուր գիծերուն մէջ կը յիշեցնէ Շապին Գարահիսարի հերոսամարտը։ Միեւնոյն հոգեվիճակը ժողովուրդին։ Այսուհանդերձ, այս քաղաքին զոհերը շատ ուշ դիմեցին զէնքի, երբ արդէն իրենց երեւելի դէմքերը եւ երիտասարդներուն մէկ մասը բռնուած ու սպաննուած էին Թուրքերուն կողմէ։ Պատուով մեռնելու վճռականութեամբ, անոնք քաշուեցան քաղաքի տարբեր կէտերուն վրայ։ Թուրքերու կողմէ եղած յանձնուելու ազդարարութեանց, անոնց տուած հաւաստիացումներուն թէ ոչ մէկ վտանգ կը սպառնայ իրենց, հայերը պահանջեցին որ վերադարձուին տարագրեալ երեւելիները։ Աղջիկները եւս մասնակից էին կռիւներուն։ Մէկ ամսուան պայքարէն ետք, հայկական թաղամասը գրաւուեցաւ։ Հայկական դիրքերուն հասցուած մահացու հարուածը տուաւ հրետանիի հրամանատար գերմանացի սպան...

Գերմանական բանակին համար եւս մէկ յաղթանակ։

Զէյթուն.— Հռչակաւոր իր բազմադարեան հերոսութեամբ եւ մեր օրերուն՝ 1915-ի դիմադրութեամբ։ Ընդհանուր կոտորածներու ատեն, Զէյթունի մէջ առաջին հալածանքները սկսան պատերազմէն առաջ։ Երեւելիներն ու շատ մը երիտասարդներ ձերբակալուեցան ու չարաչար խոշտանգուեցան։ Յիշեցինք արդէն 1895-ի հերոսներէն Նազարէթ Զաւուշի մահը։ Մեծ տարագրութեանց նախօրէին, Զէյթունի դէմ առաքուեցան մեծաթիւ ուժեր։ Քանի մը բախումներէ ետք, բնակիչները քաշուեցան լեռները։ Այսուհանդերձ, Թուրքերու եւ գերմանացիներու թելադրանքով շարժող Սիսի հայոց կաթողիկոսին միջամտութիւնը զէյթունցիները ստիպեց յանձնուելու։ Անմիջապէս սպաննուեցան բոլորը։ Մնացեալ զէյթունցիները մահացան Միջագետքի անապատին մէջ։

Նման պարագաներուն, եւ ստիպելու համար որ հայերը զէնքի չդիմեն եւ կամ զէնքերը վար դնեն, կառավարութիւնը ի գործ կը դնէր Ապտիւլ Համիտի նախընտրած վարքագիծը.— մերժումի պարագային՝ կը սպառնար վրէժ լուծել անպաշտպան ժողովուրդէն։

Մեր զեկուցագրէն ի յայտ կու գայ, որ այս պատերազմի ընթացքին Երիտ. Թուրքերը, իրենք, կը մղէին հայերը որեւէ հակադարձումի, որպէսզի հայերու ապստամբութեան մասին փաստեր ունենան ի ձեռին։ Թուրքերու այս կեցուածքին դիմաց, հայերը ընդհանրապէս, եւ անոնց կարգին քաղաքական կուսակցութեանց անդամները, ստիպուեցան կատարել ամէն կարգի զիջումներ, մինչեւ իսկ զոհաբերումը իրենց կեանքին, այն աղօտ յոյսով որ այդ ձեւով կը յաջողին հեռացնել ժողովուրդի մեծ զանգուածին վրայ պատրաստուած հարուածը։

Ասիկա եղաւ Էրզրումի, Տրապիզոնի, Կիրասոնի, Խարբերդի եւ ուրիշ վայրերու մեր ընկերներէն շատերուն մեծ ողբերգութիւնը. անոնք կը միանային տարագրեալներու կարաւանին, համոզուած որ վերահաս է իրենց կորուստը եւ կասկածելի՝ զանգուածին փրկութիւնը։

Փաստ. 65-42

ՌՈՍՏՈՍԻ ՄԷԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
(Ստոկհոլմի ընկերվար համագումարին)

Le délégué du parti socialiste "Daschnagtzoutioun" vient de recevoir des informations d'après lesquelles le gouvernement turc aurait l'intention de déporter une seconde fois les Arméniens installés actuellement à Konia, Aleppo et environs et de les conduire dans les déserts de Mésopotamie.

Pareille mesure ne signifierait pas autre chose qu'un arrêt de mort pour des milliers de femmes et d'enfants et la misère pour les survivants.

Les Arméniens, dont il s'agit, ont vécu à Aleppo et Konia une vie très difficile, et on les a même forcés d'embrasser l'Islam. Mais quelques-uns ont pu trouver du travail et d'autres ont pu recevoir des secours de leurs parents habitant Constantinople et l'étranger.

Le délégué du "Daschnagtzoutioun" fait appel aux parties socialistes des pays centraux pour qu'ils interviennent auprès de leurs gouvernements respectifs en faveur de la population arménienne tant pour arrêter l'exécution de nouvelles déportations que pour l'organisation de secours, qui doivent sauver les débris d'une nation que l'on veut faire mourir dans les déserts de Mésopotamie. Si les Arméniens sont suspects au gouvernement turc, il suffit de les envoyer soit en Egypte, soit dans les provinces arméniennes, occupées par la Russie.

Թարգմանութիւնը.—

Ընկերվարական «Դաշնակցութիւն» կուսակցութեան պատուիրակի նոր ստացած տեղեկութիւններու համաձայն, թրքական կառավարութիւնը կը նպատակադրէ երկրորդ անգամ տարագրել ներկայիս Գոնիա, Հալէպ եւ շրջակայքը հաստատուած հայերը եւ փոխադրել զանոնք Միջագետքի անապատները։

Նման միջոցառում մը ուրիշ բան պիտի չնշանակէր եթէ ոչ մահավճիռ՝ հազարաւոր կիներու եւ մանուկներու, եւ թշուառութիւն՝ վերապրողներուն համար։

Խնդրոյ առարկայ հայերը Հալէպի եւ Գոնիայի մէջ ապրած են շատ դժուարին կեանք մը. նոյնիսկ անոնց պարտադրուած է մահմետականութիւն ընդունիլ։ Այսուհանդերձ անոնցմէ ոմանք կրցած են աշխատանք ճարել, իսկ ուրիշներ՝ օգնութիւն ստանալ Կ. Պոլսոյ եւ արտասահմանի իրենց ազգականներէն։

«Դաշնակցութիւն» կուսակցութեան պատուիրակը կոչ կ՚ուղղէ Առանցքի երկիրներու ընկերվար կուսակցութիւններուն, որպէսզի միջամտեն իրենց պետութեանց մօտ ի նպաստ հայ ազգաբնակչութեան թէ՛ օգնութեանց կազմակերպումին համար, եւ թէ դադրեցնել տալու համար նոր տեղահանութեանց գործադրութիւնը, որպէսզի փրկուի մնացորդացը ազգի մը, զոր կ՚ուզեն մեռցնել Միջագետքի անապատներուն մէջ։ Եթէ հայերը կասկածելի են թուրք կառավարութեան համար, կը բաւէ զանոնք ղրկել կամ Եգիպտոս եւ կամ ռուսերու կողմէ գրաւուած հայկական նահանգները։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռոստոմի «Նամականի»ի ամբողջացումը – *Գէորգ Խուդինեան* ---------- 4

Բացատրութիւններ հատորի կազմութեան մասին – *Ե. Փ.* ----------12

Ռոստոմի դիմումը Պետրովսկի ակադեմիայի տնօրէնութեան ----------14

1895 – 1896-ի նամակներ ----------17-31

Ծանօթ խմբագրութեան ---------- 32

Պատճէններու Մատեան No 82 (1897) ---------- 33-173

Պատճէններու Մատեան No 83 (1897-1898) ---------- 174-238

Պատճէններու Մատեան No 84 (1898-1899) ---------- 239-245

1901-ի, 1902-ի եւ1903-ի նամակներ ----------246-251

Ծանօթ խմբագրութեան ---------- 252

1903-ի եւ1904-ի նամակներ ----------253-263

Հ.Յ.Դ. Կեդր. արխիւի «Սեւագրութեանց»
եւ նամակներու պատճէններու մասին – *Ե.Փ.* ---------- 264

Սեւագրութիւններու Մատեան No 89ա-1 (1904-1905)
No 89ա-2 (1905) եւ No 48-3 (1905)
Պատճէններու Մատեան No 88 (1904-1905) եւ No 89 (1905-1906)
---------- 267-557

1906-ի եւ 1907-ի նամակներ ---------- 558-567

Ծանօթ խմբագրութեան ---------- 568

Սեւագրութիւններու Մատեան No 52-3 (1907) ---------- 568-572

1907 – 1918-ի նամակներ ---------- 573-664

ՅԱՒԵԼՈՒԱԾ – *Ե. Փ.* ---------- 666

Ստոկհոլմի ընկերվար Միջազգայնականի վեհաժողով (1917)
Յիշատակագիր եւ տեղեկագիր հայկական հարցի մասին՝
ներկայացուած Ռոստոմի կողմէ ---------- 668-728

ՌՈՍՏՈՄԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն
եւ ծանօթագրութիւններ՝

ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆԻ

Համակարգչային շարուածք եւ ձեւաւորում՝

ԹԱՄԱՐ ՄՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ

Ստորագրուած է տպագրութեան՝ 04.01.2022:
Չափսը՝ 70x100 1/16:
Տպագրութիւնը՝ օֆսէթ: 45,75 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 1000:

«ԳԷՈՐԳ – ՀՐԱՅՐ» ՍՊԸ

հրատարակչութիւն
Երեւան, Գրիգոր Լուսաւորչի 6
Հեռ. (011) 52-79-74, 055-52-79-74
Էլ. փոստ՝ lusakn@rambler.ru

«Վէմ» մատենաշարի բոլոր հատորները տեղադրուած են www.arfd.am կայքէջին վրայ: